

УДМУРТСКОЕ ПРАВОСЛАВНОЕ  
УЧЕБНОЕ ЗАВЕЩАНИЕ

  
УДМУРТИ,  
РАСПОСЛАВЛЕНА,  
УЧЕБНО-МЕТОДИЧЕСКАЯ  
КОМИССИЯ



2013



**ՄԵԿԵՆՈՂ ԻՆԵՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆՆԵՐԻ  
ՆԱԽՆԱԿՆԵՐԻ ԳՐԱԿԱՆԱԿՆԵՐԻ**





ՀՐԱՄԱՆԱԻ  
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ  
Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ  
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

61(47.925)  
Գ-93

ԳՐ-ԱԳ

0225 089  
14.06.13  
019

495

**ՔՐԻՍՏՈՍԻ  
ՀՐԱՇԿՆԵՐԻ ԵՎ,  
ՌԻՇԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ  
ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇԻՆ  
2013



ՀՏԴ 23/28  
ԳՄԴ 86.37  
Բ 935

Տպագրվում է երաշխավորությամբ  
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի  
Նրատարակչական խորհրդի

Կազմող՝ Նահրա Թամանյան  
Խմբագիր՝ Գևորգ Տեր-Վարդանյան

ԲՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇՔՆԵՐԻ ԵՎ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
Բ 935 ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ/ Կազմ.՝ Ն. Թա-  
մանյան; Խմբ.՝ Գ. Տեր Վարդանյան.- Էջմիածին: Մայր Աթոռ  
Սուրբ Էջմիածին, 2013. - 608 էջ.- (Մեկնողական գրականու-  
թյան թրեստմատիա):

Ներկա բնագիրը կազմված է ըստ է ձեռագիր և տպագիր աղբյուրնե-  
րի: Առաջին դեպքում հարկ ենք համարել օգտվել լավագույն համարվող  
մեկ ձեռագրից, իսկ երկրորդ դեպքում՝ ըստ վերջին հրատարակության:  
Ծաղկաքաղ այս բնագրում բժշկությունների կամ հրաշքների մեկնությու-  
նը տրված են ըստ Ավետարանների հերթագայության, ապա մեկնիչների  
ժամանակագրական կարգով: Տերունական հրաշքների մեկնության ներ-  
կայացվող բնագիրը հնարավորություն է տալիս մեկնողական գրական  
ավանդույթի մեջ ավելի տեսանելի դարձնել ավանդական ու փոխանցվո-  
ղը, ամեն առանձին հեղինակի անհատական-ինքնուրույն շերտերի դրսևո-  
րումները:

Գիրքը նախատեսված է Հոգևոր ճեմարանների, Աստվածաբանության  
ֆակուլտետի ուսանողների և ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 23/28  
ԳՄԴ 86.37

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՄ

ԳԱՐԲԻԵԼ ՉԵՄՊԵՐՃՅԱՆԻ

ISBN 978-9939-59-121-6 © Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2013

## ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇՔՆԵՐԻ ԵՎ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայ իրականության մեջ սուրբգրային մեկնողական գրականու-  
թյունն ունի ավանդույթային բավական հարուստ պատմություն, որի  
հիմքը դրվել է Աստվածաշնչի թարգմանությունից անմիջապես հե-  
տո: Ավետարանական մեկնության առաջին մեզ հայտնի օրինակն  
է Ստեփանոս Սյունեցու Քառավետարանի մեկնությունը: Հետագա-  
յում գրական այս տեսակը բուռն ծաղկում է ապրել Ժ.-ԺԲ. դարերից  
սկսած: Գիտնական մեկնիչներն իրենց աշխատասիրություններում  
խոսել են նաև մեկնության եղանակների մասին (Ներսես Շնորհա-  
լի, Մատթեոս Ջուղայեցի): Մեկնողական գրականության տեսակ է  
լուծմունքը՝ առավել դժվարընկալելի բառերի կամ արտահայտու-  
թյունների բացատրությունը: Դրա լավագույն օրինակ են Գրիգոր Տա-  
թևացու երկերը: Լուծմունքի ներկայությունը նաև երբեմն տեսնում  
ենք Մատթեոս Ջուղայեցու՝ Դուկասի և Հովհաննեսի Ավետարան-  
ների ընդարձակ մեկնություններին կից: Արիստակեսի, ապա Եփրե-  
մի (որոնք, ինչպես Հովհաննես Ծործորեցին շարունակել են Ներսես  
Շնորհալուն) և Սարգիս Կունդի գործերում կիրառված են նաև մեկ-  
նության քաղվածո-շարքի եղանակը:

Սույն հատորը ծաղկաքաղ է հայ միջնադարյան մատենագրության  
մեջ առկա ավետարանական մեկնությունների այն մասերի, որոնք  
առնչվում են Քրիստոսի կատարած հրաշքներին և բժշկություննե-  
րին: Այդ մեկնությունն են Ստեփանոս Սյունեցու (Ը. դ.) Քառավետա-  
րանի, Անանիա Սանահնեցու (ԺԱ. դ.), Ներսես Շնորհալու (ԺԲ. դ.),  
Արիստակեսի և Եփրեմի (ԺԲ. դ.), Հովհաննես Ծործորեցու (ԺԳ.-ԺԴ.  
դդ.), ս. Գրիգոր Տաթևացու (ԺԴ.-ԺԵ. դդ.)՝ Մատթեոսի Ավետարանի,  
Բարսեղ Մաշկևորցու (ԺԳ.-ԺԴ. դդ.)՝ Մարկոսի Ավետարանի<sup>1</sup>, Իգնա-

<sup>1</sup> Մարկոսի Ավետարանի մեզ հայտնի միակ մեկնությունն է, որը մասամբ է պահ-  
պանվել (Թ.-ԺԲ. գլուխների մեկնությունները միայն):



տիոս Սևեռնեցու (ԺԱ.-ԺԲ. դդ.), Սարգիս Կուճղի (ԺԲ. դ.), Մատթեոս Ջուղայեցու (ԺԴ.-ԺԵ. դդ.)՝ Դուկասի Ավետարանի, Սարգիս Կուճղի, ս. Գրիգոր Տաթևացու, Մատթեոս Ջուղայեցու՝ Զովհաննեսի Ավետարանի մեկնություններ<sup>1</sup>:

Բնագիրը կազմելիս զերծ ենք մնացել ճառերում, քարոզներում և այլուր հանդիպող մեկնություններն ու մեկնական հատվածներն ընդգրկելուց:

Հարկ է նշել, որ տարբեր հեղինակներ տարբեր կերպ են մոտեցել հրաշքների և բժշկությունների մեկնությանը՝ կարևորություն տալով որոշների, որոշներն ընդհանրապես անտեսելով: Ըստ այդմ էլ այս կամ այն դրվագների մեկնությունները երբեմն խմբավորված են հանդես եկել, ինչպես Ջուղայեցու մոտ՝ Դուկասի Ավետարանի դեպքում՝ անդամալուծի բժշկության, Նայինի պատանու հարության հատվածները և այլն:

Որոշ հրաշքներ, ինչպես ասենք, միայն Զովհաննեսի Ավետարանում առկա՝ Կանայի հարսանիքի ընթացքում ջրի՝ զինու վերածելը կամ Ղազարի հարությունը համեմատաբար ծավալուն կերպով են մեկնված, քանի որ Կանայի հարսանիքի ժամանակ կատարվածը համարվում է առաջին հրաշագործությունը (այս հրաշքի առաջինը լինելու մասին խոսում է Մատթեոս Ջուղայեցին Զովհաննեսի Ավետարանի մեկնության մեջ): Իսկ Ղազարոսի հարությունն անառարկելիորեն համարվում է հրաշագործություն, մինչդեռ Նայինի պատանու կամ հազարապետի աղջկա հարությունը երբեմն դիտվում է բժշկությունը, քանզի, ի տարբերությունը Ղազարի, որ չորսօրյա մեռած էր և հուղարկավորված, սրանք դեռ տանն էին:

Երբեմն կարող է տպավորություն ստեղծվել, թե մեկնությունների որոշ հատվածներ չեն առնչվում այս կամ այն բժշկության կամ հրաշքի հետ: Դրա պատճառն այն է, որ մեկնիչը հարկ է համարել խոսել միայն սակավ դրվագների մասին, կամ, ցավոք, չեն պահպանվել բնագրային ամբողջական օրինակները: Վերջինիս ապացույց կարող է լինել այն, որ, օրինակ, Ստեփանոս Սյունեցուն հաջորդող հեղինակներն օգտվել են նրա աշխատանքից, բարեխղճորեն նշելով այդ մասին, սակայն «Կարճառատ մեկնութիւն չորից աւետարանչացն

<sup>1</sup> Գրիգոր Խլաքեցու (ԺԴ.-ԺԵ. դդ.) «Մեկնութիւն Աւետարանին Յովհաննու» գործի (1400 թ.) միակ ինքնագիր օրինակը Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի մատենադարանի Գ<sup>ո</sup> 2521 (էջ 1-530) ձեռագիրն է, որը մեզ հասու չէրավ:

Քրիստոսի Աստուծոյ» խորագրով մեզ հասած գործում այդ մասերը չկան: Սարգիս Կուճղի՝ Դուկասի և Զովհաննեսի Ավետարանների մեկնություններում կան քաղվածո հատվածներ Ստեփանոս Սյունեցու համապատասխան Ավետարանների ընդարձակ մեկնություններից<sup>1</sup>, որոնցից, ինչպես և Մատթեոսի Ավետարանի մեկնությունից միայն պատահական են մեզ հասել<sup>2</sup>: Հայ մեկնիչների երկերում կան ուղղակի և անուղղակի մեջբերումներ, որոնց այլալեզու բնագրերն առ այսօր անհայտ են, ինչպես ասենք, Իգնատիոս Սևեռնցու՝ Դուկասի Ավետարանի մեկնության մեջ առկա՝ Զովհան Ոսկեբերանի մեկնության հատվածները<sup>3</sup> և այլն:

\*\*\*

Բնագիրը կազմել ենք ըստ ձեռագիր և տպագիր աղբյուրների: Առաջին դեպքում հարկ ենք համարել օգտվել լավագույն համարվող մեկ ձեռագրից, իսկ երկրորդ դեպքում՝ ըստ վերջին հրատարակության: Սակայն հարկ եղած դեպքում կատարվել են ճշգրտումներ գրչագիր և տպագիր այլ օրինակներից<sup>4</sup>: Ստորև ներկայացնում ենք աղբյուրների՝ նախ ձեռագրերի ժամանակագրական, ապա տպագրերի ցանկը.

Ա. Մաշտոցյան Մատենադարան (ՄՄ) ձեռ. Զ<sup>ո</sup> 5448 (30ա-289բ), ժողովածու ԺԳ. դար, Վանական վարդապետի վանք, գրիչ Մարտիրոս քահանայ, ստացող՝ Մովսես վարդապետ, միասյուն բոլորգիր. «Պատճառ սուրբ Աւետարանին Յովհաննու, որ վարդապետաց ասացեալ»: Սարգիս Կուճղի մեկնության այս ընդօրինակությունը, ինչպես և մյուսները լուսանցներում ունի հեղինականիչ հղումներ: Առկա են լուսանցային և տողամիջյան սրբագրումներ, որոնք

<sup>1</sup> Տե՛ս Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 715:

<sup>2</sup> Տե՛ս Մատենագիրք Հայոց, Զ. հատոր, Ը. դար (Յաւելուած), Անթիլիաս-Լիբանան, 2007: Ստեփանոս Սյունեցին Մարկոսի Ավետարանը չի մեկնել՝ այն համարելով Մատթեոսի Ավետարանի մանողություն: Տե՛ս Ստեփանոս Սյունեցի. Մեկնութիւն չորից աւետարանչացն, աշխատասիրությամբ Գարեգին Հովսեփյանի, Համամ Արեւելցի. Մեկնութիւն առակաց, աշխատասիրությամբ Մխիթար քին. Սարիբեկյանի, Երեւան, 1994, էջ 111:

<sup>3</sup> Տե՛ս Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, էջ 715:

<sup>4</sup> Ձեռագիր եւ տպագիր աղբյուրները տե՛ս նաեւ՝ Ե. Եպս. Պետրոսյան, Ա. Տեր-Ստեփանյան. Սուրբ գրքի հայերեն մեկնությունների մատենագիտություն, Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, Երեւան, 2002, էջ 80-85, 88, 90-96:



անպայմանորեն հաշվի ենք առել, կան նաև չլրացրած տեղիներ (մեկ կամ երկու բառի չափով, երբեմն ավելի): Լուսանցներում կան նշաններ՝ գլխահամարներին փոխարինող<sup>1</sup>: Այս և մյուս ձեռագրերում ընդունված կարգով (լուսանցային կամ մեջբերման սկզբում, վերջում դրված չակերտներով) առանձնացված են սուրբգրային տեղիներից կատարված մեջբերումները:

Բ. ՄՄ ձեռ. Գ<sup>օ</sup> 2519 (4ա-82բ), ժողովածու, 1391 թ., Երնջակի Ապրակունյաց վանք, գրիչ՝ Մատթեոս Ջուղայեցի, միասյուն, բոլորգիր. «Նուաստ և յետին աշակերտի Մաթեոս եռամեծացն Յովհաննու և Գրիգորի աշխատասիրեաց Հաւաքումն բանից յԱւետարանին Ղուկասու և քարոզ յոլովք ի վայելումն մանկանց Հայաստանեայց»: Ինքնագիր համարվող այս օրինակն ունի ցանկ, կարմրագիր խորագրեր, սակայն գրադաշտը տեղ-տեղ վնասված է (հիմնականում արտաքին անկյունները), կան թափված թերթեր: Բնագրի անընթեռնելի մասերը վերականգնելի են սրանից ընդօրինակված մեկ այլ ձեռագրով՝ ՄՄ Գ<sup>օ</sup> 2518:

Գ. ՄՄ ձեռ. Գ<sup>օ</sup> 5871 (13ա- 57բ), ԺԴ. դ., ժողովածու, գրիչ՝ Կարապետ արեղայ, երկսյուն, բոլորգիր. «Յոհաննու Որոտնեց[ւ]ոյ տիեզերայլոյս ըրաբունապետի, արարեալ բան յԱւետարանէն Յոհաննու»<sup>2</sup>: «Ի մի տփի» երկու ձեռագրերից առաջինն է սա: Խորագրերը, լուսանցային նշումները կարմիր են: Ունի նաև լուսանցային թվակարգում: Սուրբգրային տեղիները գրեթե ամենուր համառոտված են:

Դ. ՄՄ ձեռ. Գ<sup>օ</sup> 1264 (3ա-336բ), 1416 թ., Տաթև, գրիչներ՝ Յունան, Մովսես արեղա, ստացող՝ Յովաննես արեղա, միասյուն, բոլորգիր. «Գրիգոր աշակերտի եռամեծի և տիեզերալոյս վարդապետի Յովհաննու Որոտնեցւոյ հաւաքեալ քաղուածոյ մեկնութիւն սրբոյ Աւետարանին Մաթեոսի»: Բաժանված է հինգ հատորի, որոնք էլ իրենց հերթին՝ գլուխների: Ամեն հատորի սկզբում կա ցանկ: Խորագրերը,

<sup>1</sup> Հարկ չենք համարում ուղղագրական դիտողություններ կատարել յուրաքանչյուր ձեռագրի համար, քանի, որ պահպանել ենք ուղղագրությունը՝ նշելով կանոնից շեղումները միայն: Այս մասին կասվի ստորեւ՝ համապատասխան տեղում:  
<sup>2</sup> Վերնագրի նախնական տարբերակը հավանաբար ունեցել է «Մատթեոսի աշակերտի» կամ նման արտահայտություն (ինչպես նույն թվականին գրած Ղուկասի Ավետարանի մեկնության խորագիրը), որի ընդօրինակված չլինելու պարագան երկը Հովհան Որոտնեցուն վերագրելու առիթ է եղել: Տե՛ս նաև Ե. եպս. Պետրոսյան, Ա. Տեր-Ստեփանյան. Սուրբ Գրքի հայերեն մեկնությունների մատենագիտություն, Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, Երևան, 2002, էջ 95:

ենթախորագրերը, լուսանցային գլխահամարները կարմիր են: Ունի նաև լուսանցային թվակարգում:

Ե. ՄՄ ձեռ. Գ<sup>օ</sup> 1253 (134ա-353ա), 1590 թ., Մալաթիա, գրիչ՝ Մարտիրոս եպիսկոպոս, ստացող՝ Դանիել վարդապետ, կազմող՝ Յոհանես, նոտրգրի տարեր ունեցող բոլորգիր, միասյուն. «Ներսէս Շնորհալի, Մեկնութիւն Մատթէի» (լրացված Արիստակեսի և նրա աշակերտի՝ Եփրեմի կողմից): Խորագրերը կարմիր են: Լուսանցներում կան հեղինականիշ հղումներ:

**1. Ստեփանոս Սիւնեցի (+735)**

ա. Ստեփանոս Սիւնեցի. Մեկնութիւն չորից Աւետարանչացն, Պատճառք և թելադրութիւն Ստեփաննոսի իմաստասիրի առաջի տեսլեանն Եզեկիէլի, Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի խմբագրությամբ, [Բեյրութ, 1958]:

բ. Ստեփանոս Սիւնեցի. Մեկնութիւն չորից Աւետարանչացն, Համամ Արևելցի, Մեկնութիւն առակաց, Աշխատասիրությամբ Գարեգին կաթողիկոս Հովսեփյանի, խմբագրությամբ Եզնիկ Ժ. վրդ. Պետրոսյանի և Արմեն Տեր-Ստեփանյանի, Աստվածաշնչյան մեկնություններ, Երևան, 1994:

գ. Ստեփանոս Սիւնեցի. Մեկնութիւն չորից Աւետարանչացն, Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի խմբագրությամբ, Աթենք, 1988, նույնը՝ նաև 1991:

դ. Ստեփանոս Սիւնեցի. Չորս ավետարանների համառոտ մեկնությունը, աշխարհաբարի վերածեց Վիգեն դպիր Ղազարյանը, Երևան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1998:

**2. Անանիա Սանահնեցի (1000°-1070)**

*Անանիա Սանահնեցի (ԺԱ դ.). Մեկնութիւն Մատթէի Աւետարանին, աշխատասիրությամբ Գ. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 2007:*

**3. Իգնատիոսի Սելւեռնցի (1090°-1160°)**

ա. Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին, որ ըստ Ղուկասու արարեալ սուրբ վարդապետին Իգնատիոսի, ի խնդրոյ տեառն Գրիգորիսի Հայոց կաթողիկոսի, Կ. Պօլիս, տպարան Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու, 1735:



բ. Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին, որ ըստ Ղուկասու, արարեալ սուրբ վարդապետին Իգնատիոսի ի խնդրոյ տեառն Գրիգորիսի Դայոց կաթողիկոսի, Կ. Պոլիս, 1824:

գ. Գրամանաւ տեառն Գրիգորի Դայոց կաթողիկոսի, արարեալ մեկնութիւն Ղուկասու Աւետարանին սուրբ վարդապետի Իգնատիոսի. համացանցային կայք՝ [http://www.shiraksec.am/general\\_links/gradaran/electronayin\\_grarumner/electronayin\\_grarumner.html](http://www.shiraksec.am/general_links/gradaran/electronayin_grarumner/electronayin_grarumner.html)

#### 4. Սարգիս Կուլնդ (1100°-1185°)

ա. Սարգիս Կուլնդ (ԺԲ դ.). Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու, աշխատասիրութեամբ Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2005:

#### 5. Բարսեղ Շնորհալի [Մաշկեւորցի] (1280°-1345°)

ա. Մեկնութիւն սրբոյ Աւետարանին որ ըստ Մարկոսի, արարեալ երանելոյն Բարսեղի Շնորհալի վարդապետի ճոն կոչեցելոյ ըստ մակադրական անուանն, լուսաւոր մտօք եւ իմաստալի յորդորակօք, Դատոր երկրորդ, աշխատասիրութեամբ տ. Անդրեաս վարդապետի Նարինեան Ակնեցոյ, Կ. Պոլիս, 1826:

#### 6. Յովհաննէս Ծործորեցի (1260°-1335°)

ա. Մեկնութիւն սուրբ Աւետարանին, որ ըստ Մատթեոսի, արարեալ ի սրբոյն Ներսիս Շնորհալոյ մինչ ի համարն 17 հինգերորդ գլխոյն եւ անտի աւարտեալ յերանելոյն Յօհաննու Երզնկացոյ, որ եւ կոչի Ծործորեցի, Կ. Պոլիս, 1825:

բ. Յովհաննէս Ծործորեցի (ԺԳ-ԺԴ դդ.). Մեկնութիւն Աւետարանին որ ըստ Մատթեի (Ե. 18 - ԻԸ. 20), աշխատասիրութեամբ Գոհար Ղազարյանի, Սեդա Ստամբուլցյանի, Գայանե Ներսիսյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2009:

7. Սուրբ Գրիգոր Տաթևացի (1344°-1409), Մեկնութիւն Յօհաննու Աւետարանին, աշխատասիրութեամբ Ղուկաս արեղա Ջաքարյանի, խմբագիր՝ Արշավիր Գաբուջյան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2002:

\*\*\*

Ծաղկաքաղ այս բնագրում բժշկությունների կամ հրաշքների մեկնությունը տրված են ըստ Ավետարանների հերթագայության, ապա մեկնիչների ժամանակագրական կարգով. այսպես՝ «Առաջին բազմացումն նկանաց և ձկանց. Կերակրումն հնգի հազարի» միակն հրաշքն է, որի մասին չորս ավետարանիչներն էլ վկայում են: Նախ տրվում է Մատթեոսի ավետարանի մեկնությունների համապատասխան հատվածները, հետո Ղուկասի (Մարկոսի ավետարանի մեկնության այդ մասը չի պահպանվել), ապա՝ Դովհաննեսի և ըստ այսմ: Կան մասեր, որոնք անմիջապես որևէ կոնկրետ հրաշքի և բուժման չեն առնչվում, սակայն մեկնում են դրանց հետ կապված երևույթներ, ինչպես, օրինակ, Գրիգոր Տաթևացին խոսում է հիվանդության մասին ընդհանրապես: Նման հատվածները չենք հավաքել ի մի տեղի, այլ թողել ենք իրենց տեղում, բայց առանձին խորագրով:

Բժշկություններն ու հրաշքները խորագրելիս առաջնորդվել ենք Սուրբգրային և Մաղաքիա Օրմանյանի «Համապատում» աշխատության վերջում տեղ գտած ցանկից<sup>1</sup> (երկու դեպքում էլ աշխարհաբարից գրաբարի վերածումը մերն է), ինչպես նաև մեկնիչների հեղինակային վերնագրերով: Երբեմն նույն բժշկությունը կամ հրաշքը տարբեր ավետարանիչների մոտ տարբեր կերպ է ներկայացված, ուստի և տարբեր վերնագրերով: Նման դեպքերում դրանք զետեղել ենք նույն հերթական թվահամարի տակ, ասենք, Մատթեոս ավետարանիչը վկայաբերում է Գերգեսայում երկու դիվահարի բժշկությունը, իսկ Մարկոս և Ղուկաս ավետարանիչները՝ մեկ, ուստի 7. թվահամարի տակ ներկայացրել ենք Մատթեոսի ավետարանի մեկնությունը («7. Բժշկութիւնն դիւահարաց ի Գերգեսա»), իսկ Ղուկասի ավետարանիչը<sup>2</sup> առանց թվահամարի («Բժշկութիւնն դիւահարին ի Գերգեսա»), համարելով, որ երկուսն էլ նույն բժշկության տարբերակներն են: Իսկ եթե Մատթեոսի և Ղուկասի ավետարաններում են նման բժշկություններն ու հրաշքները, իսկ Մարկոսի ավետարանում՝ այլ, առաջին երկու մեկնությունների դեպքում խորագիրը կրկնվել

<sup>1</sup> Մաղաքիա արք. Օրմանյան, Համապատում չորս Ավետարանների պարունակությունը շարադրելով, բաղդատելով, բացատրելով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1997:

<sup>2</sup> Մարկոսի ավետարանի մեկնության մեզ հասած թերի տարբերակում (որի մասին արդեն վերն ասվել է) այս բժշկությանը վերաբերող հատվածը չկա:



է. ինչպես, ասենք «26. Բժշկութիւնն կուրից յերիքով» (Մատթեոս) , «Բժշկութիւնն Բարտիմէոս կուրին» (Մարկոս) և «Բժշկութիւնն կուրից յերիքով» (Ղուկաս): Հարկ չենք համարել ամեն անգամ նշել մեկնության ամբողջական խորագիրը (դա արդեն արել ենք մեկ անգամ սկզբում): Նշել ենք հատորների համարները (Գրիգոր Տաթևացու մեկնությունների դեպքում) և գլխահամարները կոր փակագծերում և ենթախորագրերը, եթե այդպիսիք առկա են: Ստորև ներկայացնում ենք հրաշքների ու բժշկությունների խորագրերը՝ ավետարանական համապատասխան հատվածներով: Ընդգծված են (շղա) այն հատվածները, որոնց մեկնությունները սույն բնագրում չկան.

1. Բժշկութիւնք Ի ԳԱԼԻԼԵԱ Մապթ. Դ. 23 -25, Ղուկ. Զ. 17-19
2. Բժշկութիւնն ԲՈՐՈՏԻՆ Ի ԳԱԼԻԼԻԱ Մապթ. Ը. 1-4, Մարկ. Ա. 40-45, Ղուկ. Ե. 12-16
3. Բժշկութիւնն ԾԱՌԱՅԻՆ ԶԱՐԻՐԱՊԵՏԻՆ Մապթ. Ը. 5-13, Ղուկ. Ե. 1-10
4. Բժշկութիւնն ԶՈՔԱՆՉԻՆ ՊԵՏՐՈՍԻ Մապթ. Ը. 14-15, Մարկ. Ա. 29-31, Ղուկ. Դ. 38-40
5. Բժշկութիւնք Ի ԿՓՓԱՌՆԱՌԻՄ Մապթ. Ը. 16-18, Մարկ. Ա. 32-34, Ղուկ. Դ. 41-42,
6. ՀԱՆԴԱՐՏՈՒՄՆ ԱԼԵԿՈՃՈՒԹԵԱՆ Մապթ. Ը. 23-27, Մարկ. Դ. 35-41, Ղուկ. Ը. 22-25
7. Բժշկութիւնն ԴԻՒՅԱՐԱՅ Ի ԳԵՐԳԵՍԱ Մապթ. Ը. 28-34, Մարկ. Ե. 1-20, Ղուկ. Ը. 26-39
8. Բժշկութիւնն ԱՆԴԱՄԱԼՈՅԾԻՆ Ի ԿՓՓԱՌՆԱՌԻՄ Մապթ. Թ. 1-8, Մարկ. Բ. 1-12, Ղուկ. Ե. 17-26
9. ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ԴՍՏԵՐՆ ՅԱՅՐՈՍԻ Մապթ. Թ. 18-20, 23-26, Մարկ. Ե. 21-24, 35-43, Ղուկ. Ը. 40-42, 49-56
10. Բժշկութիւնն ՏԵՌԱՏԵՍ ԿՆՈՋՆ Մապթ. Թ. 20-22, Մարկ. Ե. 25-34, Ղուկ. Ը. 43-48
11. Բժշկութիւնն ԵՐԿՈՒՑ ԿՈՒՐԻՑ Մապթ. Թ. 27-31
12. Բժշկութիւնն ՀԱՍԵՐ ԴԻՒՅԱՐԱՐԻՆ Մապթ. Թ. 32-34,
13. Բժշկութիւնք ԶԱՆԱԶԱՆՔ Մապթ. Թ. 35-38, Մարկ. Զ. 53-56
14. Բժշկութիւնն ԳՈՍԱՑԵԱԼԻՆ Ի ԿՓՓԱՌՆԱՅՈՒՄ Մապթ. ԺԲ. 9-16, Մարկ. Գ. 1-6, Ղուկ. Զ. 6-12
15. Բժշկութիւնն ՀԱՍԵՐ ԿՈՒՐԻ ԴԻՒՅԱՐԱՐԻՆ Մապթ. ԺԲ. 22-30, ՅԻՍՈՒՄ ԵՒ ԲԷԵՂԶԵՐՈՒՂ Մարկ. 3. 22-30, Ղուկ. ԺԱ. 14-23
16. ԱՌԱՋԻՆ ԲԱԶՄԱՑՈՒՄՆ ՆԿԱՆԱԿԱՑ ԵՒ ԶԿԱՆՑ. ԿԵՐԱԿՐՈՒՄՆ ՀԻՆԳ ՀԱԶԱՐԻ Մապթ. ԺԴ. 13-21, Մարկ. Զ. 30-44, Ղուկ. Թ. 10-17, Յովհ. Զ. 1-14

17. ՆԱԲԱԳՆԱՑՈՒԹԻՒՆՆ ԱՌԱՔԵԼՈՑ Մապթ. ԺԴ. 22-33, Մարկ. Զ. 45-52, Յովհ. Զ. 16-21
18. Բժշկութիւնք Ի ԳԵՆՆԵՍԱՐԷԹ Մապթ. ԺԴ. 34-36, Մարկ. Զ. 53-56
19. ՀԱԲԱՏՔ ԿՆՈՋՆ ՔԱՆԱՆԱՑԻՈՅ ԵՒ Բժշկութիւնն ԴՍՏԵՐ ՆՈՐԻՆ Մապթ. ԺԵ. 21-28, Մարկ. Է. 24-30
20. Բժշկութիւնք Ի ԴԵԿԱՊՈԼԻՍ Մապթ. ԺԵ. 29-31, Մարկ. Է. 31-37
21. ԵՐԿՐՈՐԴ ԲԱԶՄԱՑՈՒՄՆ ՆԿԱՆԱԿԱՑ ԵՒ ԶԿԱՆՑ. ԿԵՐԱԿՐՈՒՄՆ ՉՈՐՍ ՀԱԶԱՐԻ Մապթ. ԺԵ. 32-39, Մարկ. Ը. 1-9
22. ՀԱՅՑՈՒՄՆ ՆՇԱՆԻՑ Մապթ. ԺԶ 1-4 Մարկ. 8. 11-13, Ղուկ. ԺԲ. 54-56
23. ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆ ՅԻՍՈՒՄԻ Մապթ. ԺԷ. 1-13, Մարկ. Թ. 1-12, Ղուկ. Թ. 28-36
24. Բժշկութիւնն ԼՈՒՍՆՈՑ ԴԻՒՅԱՐԱՐԻՆ Մապթ. ԺԷ. 14-21, Մարկ. Թ. 13-28, Ղուկ. Թ. 37-44
25. ՍԱՏԵՐ Ի ԲԵՐԱՆ ԶԿԱՆ Մապթ. ԺԷ. 23-26
26. Բժշկութիւնն ԿՈՒՐԻՑ Ի ԵՐԻՔՈՎ Մապթ. Ի. 29-34, Ղուկ. ԺԸ. 35-43 Բժշկութիւնն ԲԱՐՏԻՄԵՈՍ ԿՈՒՐԻՆ Մարկոս Ժ. 46-52
27. Բժշկութիւնք Ի ՏԱԵԱՐԻՆ Մապթ. ԻԱ. 14-16
28. ԱՆԻԾԵԱԼ ԹՁԵՆԻՆ Մապթ. ԻԱ. 18-22, Մարկ. ԺԱ. 12-14
29. Բժշկութիւնն ԴԻՒՅԱՐԱՐԻՆ Ի ԿՓՓԱՌՆԱՌԻՄ Մարկ. Ա. 21-28, Ղուկ. Դ. 31-37
30. ՀՐԱՇԱԼԻ ԶԿՆՈՐՍՈՒԹԻՒՆ Ղուկ. Ե. 1-11
31. ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՊԱՏԱՆԻՈՅՆ Ի ՆԱՅԻՆ Ղուկ. Է. 11-17
32. Բժշկութիւնն ԿՆՈՋՆ ԿԱՐԿԱՄԵԱԼ Ղուկ. ԺԳ. 10-17
33. Բժշկութիւնն ՋՐԳՈՂԵԼՈՅՆ Ղուկ. ԺԴ. 1-6
34. ՍԱՔՐԻԼՆ ՏԱՍԻՑ ԲՈՐՈՏԻՑ Ղուկ. ԺԷ. 11-19
35. Բժշկութիւնն ՈՒՆԿԱՆ ԾԱՌԱՅԻՆ ՔԱՅԱՆԱՅԱՊԵՏԻ Ղուկ. ԻԲ. 49-51
36. ՀԱՐՍԱՆԻՔՆ Ի ԿԱՆԱ Յովհ. Բ. 1-11
37. Բժշկութիւնն ՈՐԴՈՅՆ ԹԱԳԱՒՈՐԱԶՆԻՆ Յովհ. Դ. 43-54
38. Բժշկութիւնն ԱՆԴԱՄԱԼՈՅԾԻՆ ՊՐՈՔԱՏԻԿԵՒ ԱԲԱԶԱՆԻՆ Յովհ. Ե. 1-18
39. Բժշկութիւնն Ի ԾՆԷ ԿՈՒՐԻՆ Յովհ. Թ. 1-41
40. ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ԴԱԶԱՐՈՒ Յովհ. ԺԱ. 1-44
41. ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՇԱԼԻ ԶԿՆՈՐՍՈՒԹԻՒՆՆ Յովհ. ԻԱ. 1-14
42. Բժշկութիւնն ԿՈՒՐԻՆ Ի ԲԵՐԹՍԱՅԻԴԱ. Մարկ. Ը. 22-26



\*\*\*

Բնագրերում, որոնք հրատարակվում են ըստ ձեռագրերի, փակագծերում տրված են էջերը: Պահպանել ենք ուղղագրությունը՝ ընդգծելով ընդհանուր կանոնից շեղումները, իսկ ենթադրվող գրերը լրացրել ենք՝ անկյունավոր ([ ]), իսկ կրկնությունները վերցրել ենք սուր (< >) փակագծերում: Բացել ենք բոլոր համառոտումները:

Արիստակեսի և Եփրեմի՝ Մատթեոսի, Կունդի Ղուկասի և Հովհաննեսի ավետարանների մեկնության քաղվածո հատվածների հեղինականիշ հղումներն են՝ ԵՓ, ԵՓՐ= Եփրեմ Ասորի, ԻԳ=Իգնատիոս Սկեռնցի, Կ, ԿԴ = Կյուրեղ Ալեքսանդրացի, ՄԱՄԲ = Մամբրե Վերծանող, Ոկ., Ոսկ = Հովհան Ոսկեբերան, ՍՏ = Ստեփանոս Սյունեցի:

Շնորհակալություն ենք հայտնում Գևորգ Տեր-Վարդանյանին, Տիգրան Բաղումյանին, Հովհաննես Բեյլերյանին, Վահան Չաքարյանին՝ սիրահոժար օգնության ու աջակցության համար:

<sup>1</sup> Մանրամասն տես Ե. Պետրոսյան. Երկու խոսք Սարգիս վրդ. Կունդի «Մեկնութիւն Ղուկասու» աշխատության մասին. «Էջմիածին», 1982, Ը.-Թ. էջ 45-48: Սարգիս Կունդ (ԺԲ. դ.), Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու, էջ 7:

# ՎՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇՅԻՆԵՐԻ ԵՎ, ԲԺՇ ԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅ ՄԻՋՆԵԱԴԱՐՅԱՆ ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԳՐԱՇԵՆԵՐԸ,

**1. ԲԺՇԿՈՒԹԻՒՆՔ Ի ԳԱԼԻԼԵԱ**

Մարթոս Դ. 23-25

**ՍՏԵՓԱՆՈՍ ՄԻՒՆԵՅԻ**

(Գլուխ Դ)

Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն կողմն գալիլէացոց. ուսուցանէր ի ժողովուրդս նոցա՝ [եւ քարոզէր զաւեփարանն արքայութեան, եւ բժշկէր զամենայն հիւանդութիւնս՝ եւ զամենայն ախարս ի ժողովրդեանն: Եւ ել լուր նորա ընդ ամենայն երկիրն ասորոց, եւ մաքուցին առ նա զամենայն հիւանդս՝ որ նեղեալ էին ի պէսպէս ցաւս եւ ի տանջանս, եւ զղիւահարս եւ զլուսնոփս եւ զանդամալոյծս. եւ բժշկեաց զնոսա] (տես Մարթ. Դ. 23-24):

Գալիլիա բարբառդ թարգմանի յերբա[յ]եցւոցն ի հայ լեզու՝ փոփոխումն բնակութեան, զի փոփոխէր զամպարիշտ գործս մարդկան ի բարեպաշտութիւն, անցանելով եւ քարոզելով եւ բժշկելով ոչ միայն զերեւելի ախտաժէտս եւ դիւահարս եւ զլուսնոտս, այլ առաւել զոգւոյն աւագականութիւնս, զդիւահարութիւնս եւ զլուսնոտութիւն. յաղագս այսորիկ, ասի, շրջել ի Գալիլէա, այսինքն՝ ի փոփոխման բնակութեանս: Լուսնահարութիւն, որպէս ոմանք ի բժշկաց ասացին, ախտ է ի մարմնի մաղձական, որ հանդիպի ի բարձրանալոյ լուսնին առ արեգակն ի շրջագայութեան իւրում, եւ զի ձեւանալ դորա ձեւով իւրով, զանազան ազդեցութիւն լինի ի մարմինս կենդանեաց ու բուսոց բազմաց, ոչ անգիտելի է, զի բազումք լինին որպէս դիւահարք ի լնուլ եւ ի պակասել լուսնիդ, եւ է որ դե՛ւ իսկ է, որ հրճուի եւ ուրախանա[յ] ընդ լուսոյդ եւ յայտնի ի մարդն:

**ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ**

(Գլուխ Դ)

Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն կողմն գալիլէացոց (Մարթ. Դ. 23):

Յորժամ որսաց զորսորդսն ձկանց, առեալ շրջեցուցանէր ընդ ինքեան, զի ուսուցէ նոցա զհանգամանս որսալոյն զմարդիկ:

2- ԲՐԻՍՏՈՍԻ ՅՐԱՇԵՆԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԵՐ



4855



Եւ վասն է՞ր առ գալիլեացւոյքն շրջէր ի սկիզբն յայտնելոյն աշխարհի եւ ոչ ի Հրէաստանի:

Նախ՝ զի զմարգարէութիւնն լցցէ զԵսայեայ, զոր վերագոյնն ասաց աւետարանիչս: Եւ զարձեալ, զի անմարթ էր ի սկզբանն շրջել ի մէջ դպրացն եւ փարիսեցւոցն եւ ուսուցանել, զի թէ յետոյ յորժամ վասն սքանչելեացն իբրեւ զմարգարէ պատուէին զնա ժողովուրդն, նոքա այնքան լցան նախանձու, զի՞նչ ինչ ո՛չ գործէին, մինչդեռ անձանօթ էր ժողովրդեանն եւ ո՛չ թէ վայրապար շրջէր, այլ լի օգտութեամբ, վասն որոյ ասէ. «Ուսուցանէր ի ժողովուրդս լոցա՛ւ եւ քարոզէր զաւետարանն արքայութեան» (Մաթթ. Դ. 23): Եւ ու՞ր ուսուցանէր, երբեմն ի տունս ուսուցանէր եւ երբեմն արտաքոյ: Իսկ աստ զի ասէ, թէ ի ժողովուրդս նոցա, զժողովրդանոցացն ասէ, յորում սովոր էին անդր հաւաքել ի շաբաթս եւ ընթեռնուլ զմարգարէսն: Զոր եւ Ղուկաս, պատմէ զգալն ի Նազարէթ, եւ զմտանելն ի ժողովարանն եւ ընթեռնել զգիրսն Եսայեայ (Խմմբ. Ղուկ. Դ. 16-17): «Եւ բժշկէր (ասէ) զամենայն հիւանդութիւնս՝ եւ զամենայն ախարս ի ժողովրդեանն» (Մաթթ. Դ. 23): Նախ՝ հրէիցն տայ զպարգեւս բժշկութեանն, որպէս ասէր առ քանանացին, թէ նախ յագեսցին մանկունքն, զի մի՛ կարացեն ամբաստանել զնմանէ, յորոց ո՛չ պահանջէր հաւատս ի բժշկելոցն, որպէս յետոյ ոմանց, այլ ճրի բժշկէր եւ շնորհէր նոցա: Քանզի յայնժամ ոչ եւս զիւրոյ զօրութեանն ցուցեալ էր զհանդէս եւ ի լրոյ սքանչելեացն, որ առ հրէայսն եւ հեթանոսք եւս մերձեանային առ նա հաւատովք, ըստ որում պատմէ ըստ կարգի:

Եւ ել լուր նորա ընդ ամենայն երկիրն ասորիւոց, եւ մաքրոցին առ նա զամենայն հիւանդս, որ նեղեալ էին ի պէսպէս ցաւս եւ ի փանջանս, եւ զղիւսիս եւ զլուսնոսս եւ զանդամալոյծս. եւ բժշկեաց զնոսա (Մաթթ. Դ. 24):

Զհաւատոց նոցա քաջութիւն բացարձակ տեղեաց գալն նշանակէ, վասն որոյ եւ ճրի ընդունէին զբժշկութիւն: Եւ դու տե՛ս զաւետարանչին զանփառասէր միտս, մանաւանդ զհոգւոյն, որ ի նմա, զի ո՛չ մի ըստ միջոց գրէ զբժշկեալսն, այլ զբազումս միով բանիւ նշանակէ՝ հիւանդութիւնս կոչելով եւ պէսպէս ցաւս, զոր ի մարմնոյ խառնուածոյ անհաւասարութենէ կրել զիտէ բնութիւնս, ուստի եւ տանջանք եւ նեղութիւնք՝ ըստ առաւելութեան եւ նուազութեան: Իսկ զմեծագոյնսն ի նեղութեանցն անուամբ

դնէ: Զղիւսահարս, ասէ, եւ զլուսնոսս եւ զանդամալոյծս: Որ ի դիւացն են տանջանք՝ յայտնի է տեսողաց եւ լուսնոտն եւս յայնցանէ է, բայց ո՛չ անսահման առ ըմբռնումն, այլ ըստ նորոյ եւ կամ հնոյ լուսնին, յորմէ եւ զանունն իսկ ընկալաւ: Իսկ անդամալոյծն դժուարին քան զամենայն ինքեան եւ տեսողացն, զի իբրեւ զմեռեալ՝ անկեալ ի տան, եւ իբրեւ զկենդանի՝ ուտէ եւ ընպէ, որ եւ զամենայն եկեալսն միով հրամանաւ բժշկեաց: Եւ որքան համբաւ սքանչելեացն ածէր, ժողովրդոցն գալ յամենայն կողմանց եւս քան զեւս յաճախէր, ըստ որում ասէ.

Եւ երթային զհեփ նորա ժողովուրդք բազումք ի Գալիլէ, եւ ի Դեկապոլեայ, եւ յԵրուսաղէմ եւ ի Նրեսափանէ, եւ յայնկոյս Յորդանանու, եւ բժշկեաց զնոսա (Մաթթ. Դ. 25):

Թէպէտ եւ ի սկիզբն յայտնութեան իւրոյ ո՛չ դնաց ի Հրէաստան եւ յԵրուսաղէմ, վասն նախասացեալ պատճառին, սակայն սքանչելիքն եւ վարդապետութիւնն ինքնայօժար կամօք ձգէր զնոսա առ ինքն, ուր եւ շրջէր: Ոչ զախտացեալսն նախանձու, այլ զպարզամիտ ժողովուրդն զայնոսիկ, որ կանխաւ էին ի Յօհաննէ մկրտեալք եւ վարդապետեալք եւ լսողք էին վկայութեանցն, որ զնմանէ: Որք յորժամ տեսին՝ զի մատնեցաւ նա, եւ Յիսուս յայտնի եղեւ սքանչելիօքն, ծանեան, թէ նա է, զորմէ վկայեացն: «Եւ զային ամենեքեան առ լսա» (Կրնս Դ. 24): Որով ընոյր ասացեալն Յովհաննու, թէ նմա աճել պարտ է, եւ ինձ մեղմանալ, որ եւ բաշխէր առատապէս նոցա զհոգւոց եւ զմարմնոց բժշկութիւն, նախ զերեւելին եւ ապա զաներեւոյթն, զի ի ձեռն գործոցն եւ բանքն հաւատարիմ եղիցին, ըստ գրեցելումն, թէ սկսաւ Յիսուս առնել եւ ուսուցանել: Քանզի սովորութիւն է Աստուծոյ, յորժամ նոր օրէնս դնէ մարդկան՝ նախ մեծամեծ սքանչելիս ցուցանել, զի հաւատարիմ լիցին ասացեալքն, որպէս առաջին մարդոյն, նախ յանգոյից արար զարարածս եւ ապա ետ նմա զպտղոյն պատուիրան: Եւ Նոյի յետ համաշխարհական ջրհեղեղին եւ զինքն եւ զայլսն ապրեցուցանելոյն՝ դնէր զօրէնս փոխանակ արեան՝ հեղուլ զարիւն եւ ոչ ուտել զմիս արեամբ շնչոյ: Եւ Աբրահամու, յետ յաղթութեան թագաւորացն եւ հարուածելոյն զփարաւօն, վասն նորին եւ զայլս տայր՝ զուխտ թլփատութեանն: Եւ հրէիցն, յետ ազատութեանն ի ծառայութեանէն եւ անցանելոյն ընդ ծովն եւ յետ բազում սքանչելեացն, որ յե-



զիպտոս եւ յանապատին, ետ զգրաւորական օրէնսն ի տախտակսն: Նոյնպէս եւ աստ, քանզի հանդերձեալ էր բարձրագոյն առաքի- նութիւնս մուծանել յաշխարհ, զոր ո՛չ ուրուք լուեալ էր, պիտոյ էր նշանաց ընծայութիւն, զի զբանսն նշանօքն հաստատիցի: Եւ զի զարքայութիւնն երկնից խոստանալոց էր գործողաց պատուի- րանին, որ ոչ էր այժմուս աչաց տեսնելի, վասն այնորիկ երեւելի նշանօքն զաներեւոյթ խոստումնն հաւատարիմ առնէր: Որում եւ մեք հետեւեսցուք զկնի նորա, որպէս եւ ժողովուրդն յայնժամ եւ ելցուք ընդ նմա յաստուածային լեառն՝ հայցելով ի նմանէ բժշկու- թիւն, որ փոքր է եւ անցաւոր, այլ զհոգւոց զառողջութիւն ի մե- ղաց ցաւոց ապաքինիլ:

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՅԻ**  
(Երկրորդ հատոր, Գլուխ Գ)

**ՎԱՍՆ ՆԻՒԱՆԳՈՒԹԵԱՆՅ**

Հարց. Ուստի՞ լինի հիւանդութիւն մարմնոյ եւ հոգւոյ:

Պատասխանի. Ասեն վարդապետք՝ հինգ պատճառ է հիւանդու- թեան, եւ հինգ՝ առողջութեան: Նախ՝ ներքին խառնումն տարերց հաւասարութիւնն առողջութիւն է մարմնոյ, ջերմ եւ ցուրտ, չոր եւ գէջ. այլ առաւել եւ նուազն՝ հիւանդութիւն առնէ: Երկրորդ՝ արտաքին օդոց բարեսնունդն առողջութիւն առնէ եւ ստահակնու- թիւնն՝ հիւանդութիւն: Երրորդ՝ կերակրոյ շահեկանն եւ չափա- ւորն առողջութիւնն է, իսկ անչափն եւ վնասակարն՝ հիւանդու- թիւն: Չորրորդ՝ կենդանական զօրութիւն հոգ[ւ]ոյն յորժամ թու- լանայ, հիւանդութիւն է, եւ պակասիլն՝ մահ: Իսկ զօրութիւն նո- րին առողջութիւն է մարմնոյ: Հինգերորդ՝ ի խնամոցն Աստուծոյ վասն զանազան պատճառի հիւանդանայ մարդ եւ առողջանայ:

Արդ՝ առաջին երեքն բժշկական դեղով լինի առողջութիւն, իսկ վերջին երկուքն՝ ոչ: Նոյնպէս եւ հինգ պատճառս այսոքիկ հի- ւանդութեան եւ առողջութեան հոգ[ւ]ոյն տեսանին: Նախ՝ չորից առաքինութեանց մասանց հոգ[ւ]ոյն չափաւորն առողջութիւն է, իսկ առաւել եւ նուազ՝ հիւանդութիւն հոգւոյ: Երկրորդ՝ արտա- քին զգայութեանց եւ յայտոց չարից հիւանանայ հոգին, եւ ի նոյն

զգայութեանց եւ կրից բարուց՝ առողջանայ: Երրորդ՝ նոյնպէս չա- փաւոր կերակուր եւ պահք առողջութիւն է հոգւոյ: Ըստ այնմ՝ յորժամ տկարանամ, յայնժամ զօրանամ, եւ շուայտութիւնն հի- ւանդութիւն գործէ, որպէս ի մարմնի: Չորրորդ՝ եւ կենդանական զօրութիւնքն Դ. են, այսինքն՝ գիտութիւնն եւ հաւատն եւ յոյս եւ սէր: Թուլութիւն սոցա հիւանդութիւն է հոգոյ եւ պակասեալն՝ մահ: Իսկ զօրութիւն սոցա առողջութիւն եւ կեանք է հոգւոյ: Հին- գերորդ՝ ի խնամոցն Աստուծոյ զոմանս պահէ առանց գայթակղու- թեան եւ զթիւրեալսն ուղղէ որպէս զընտրեալսն ի սկզբանէ: Եւ զոմանս թոյլ տայ եւ կորնչին որպէս զխոտեալսն, որ յԱստուծոյ գիտեալ է պատճառն եւ ի մէնջ լուի: Արդ՝ առաջին երեքն հիւան- դութիւնք հոգւոյն բժշկի ի ձեռս մեր եւ այլոց բժշկաց: Իսկ չոր- րորդն միայն Աստուծոյ է կարելի, որ տայ զգիտութիւն եւ զհաւատ եւ զյոյս եւ զսէր: Իսկ հինգերորդն անջնջելի ունի զպատճառն: Եւ որպէս բազում եւ զանազան է հիւանդութիւն մարմնոյ, ուստի յայտ է, զի բազմազան է նիւթ բժշկական դեղոց, որ յարմատս եւ ի Տէր եւս, եւ ի զանազան ծաղիկս: Նոյնպէս բազում է եւ ազգի ազգի ախտ հոգւոց եւ զանազան է բժշկութիւն նոցին, որ ի սուրբ գրոց հաւաքի:

Հարց. Զի՞նչ է հիւանդութիւն եւ զի՞նչ տկարութիւն, եւ նեղու- թիւն, եւ ցաւ եւ տանջանք:

Պատասխանի. Հիւանդութիւն է պակասութիւն առողջութեան: Եւ տկարութիւնն՝ պակասութիւն զօրութեան: Նեղութիւն ընդդէմ հեշտութեան, իսկ ցաւն ներքին կիրք: Եւ տանջանք եւ չարչա- րանք՝ արտաքին: Դարձեալ ցաւն է նուազ նեղութիւն եւ տան- ջանքն առաւել: Կամ այսպէս տանջանք է մարմնոյն եւ ցաւ ի զգայական ջիւքն եւ նեղի հոգին կրակից գոլով մարմնոյն եւ տկա- րութիւն տնկականին եւ հիւանդութիւն տարերցն անչափութիւնն:

**ՎԱՍՆ ԼՈՒՄՆՈՏԱՅ**

Հարց. Զի՞նչ է լուսնոտն:


Պատասխանի. Կրկին է. մին դեւ է, որ ի նորիլ կամ ի հնանալ լուսնին, լլկէ, զի գիտասցեն մարդիկ, թէ ի լուսնէն է եւ հայհո- յեսցեն: Երկրորդ, որ ի նորիլ լուսնին ամենայն ինչ աճէ՝ հեր եւ եղունկն. նոյնպէս եւ ըզեղ գլխոյն աճէ, թափի ընդ քիթն եւ ընդ



բերանն, եւ երեւի թէ լուսնոտ է եւ ոչ է: Իսկ հոգեպէս: Դիւայհար է, որ մոլին է մեղօք, այսինքն՝ ամբարտաւանն, նախանձոտն, բարկացող, վաւաշոտն եւ այլն: Եւ այս առնուլ դիւահարէ, զի մեղօք զհոգին կորուսնէ, եւ միւսն զմարմինն լլկէ, զի թէ պահէ եւ աղօթէ, նահատակութիւն է նմա, որ թշնամին չարչարէ զմարմինն: Իսկ լուսնոտն այն է, որ երբեմն զղջանայ եւ դառնայ ի մեղս, որպէս խոզ լուացեալ ասի եւ շուն ի փսխածն: Իսկ անդամալոյժ է, որ ծոյլն է ի բարուց, <ի> յուսմանէ, ի գործոց եւ յայլն: Եւ այնպիսին լուծեալ անդամ է ի գլխոյն Քրիստոսի:

Հարց. Վասն է՞ր զմահականացաւ մարմինս բժշկէր:

Պատասխանի. Վասն ժ. պատճառի. նախ՝ զմարմինս բժշկելով, հաւատասցեն թեեւ զհոգիս բժշկէ: Երկրորդ՝ զի հաւատարիմ լիցի բան քարոզութեանն, ըստ որում հաստատէ տես աչաց, քան զլուր: Երրորդ՝ զմարմինս բժշկէր եւ զհոգին՝ ի մեղաց եւ զմիտս՝ ի տգիտութեանց, ըստ որում բոլոր մարդ եղեւ: Չորրորդ՝ կամէր նոր օրէնս դնել. նախ սքանչելիս գործեաց, զի ամուր պահեսցեն, որպէս առ Մովսէս, սքանչելեօք եհան զժողովուրդն եւ բերեալ յանապատն, ապա եդ զգրաւոր օրէնս: Հինգերորդ խոստմունս օրինացն աներեւոյթն հաստատէր: Վեցերորդ՝ բժշկէր զմարմին եւ հոգին, զի ցուցցէ, թէ նա է մարմնոյ եւ հոգւոյ արարիչ, որ գերկուսն խնամէ: Եւ թներորդ՝ բժշկեաց, զի առողջացեալ մարմնով պաշտեսցեն: Ութերորդ՝ բժշկեաց զմարմինս զի զպտուղ հաւատոյ նոցա, յայտնեցէ: Իններորդ՝ բժշկեաց զհիւանդս զի եւ առողջքն փառաւորեսցեն: Տասներորդ՝ նշանս ոչ արար Յովհաննէս եւ Տէրն բժշկէր զի ծնիցեն զմեծութիւն նորա: Այսքան առ այս:



## 2. ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ ԲՈՐՈՏԻՆ Ի ԳԱԼԻԼԻԱ

Մաթթէոս Ը. 1-4

### ՍՏԵՓԱՆՈՍ ՄԻԲՆԵՅԻ

(Գլուխ Ը.)

Եւ իբրեւ էջ նա ի լեռնէ անպի, գնացին զկնի նորա ժողովուրդը բազումք: Եւ ահա մաքրուցեալ բորոպ մի, երկիր պագանէր նմա եւ ասէր. «Տէ՛ր եթէ կամիս կարող ես զիս սրբել» (պնս Մաթթ. Ը. 1-2):

Զբորոպն իմանալի է ոչ միայն մարմնով, այլ եւ հոգւով բորոտեալ. վասն այնորիկ ոչ հանդուրժէր ելանել ի լեռոն եւ լսել վեհագոյն վարդապետութեանն, իսկ յիջանելն Յիսուսի ի լեռնէն, այսինքն՝ զաղարել ի բարձր վարդապետութենէն, ապա մատուցեալ եւ սրբեալ ի հոգ[ւ]ոյն բորոտութենէ ի հաւատալն, եթէ կամի, կարող է զիս սրբել, սրբեցաւ եւ ի մարմնոյն բորոտութենէ բանիւն աստուածայնուով. եւ վասն է՞ր արդեւք հրամայեալ մի ումէք ասել, այլ ցուցանել զանձն քահանայապետին, կարծեմ վասն այսորիկ պատուիրել զի մի ելցէ համբաւ նորա ի Հրէաստանի, թէ Աստուած իցէ. քանզի բանիւ սրբել զբորոտութիւն Աստուծոյ գործ է եւ աստուածա[յ]ին զաւրութեանն. իսկ Յիսուս դեռ եւս ոչ կամէր յայտնել զինքն եթե Որդի Աստուծոյ է եւ մարդացաւ:

### ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՆՆԵՅԻ

(Գլուխ Ը)

Երթային զհետ նորա ժողովուրդը բազումք (Մաթթ. Ը. 1):

Ոչ յիշխանաց ոք եւ ոչ ի դպրաց, այլ՝ որք ի չարեացն ազատ էին եւ միտս անխորամանկս ունեին: Եւ յամենայն ժամ զայնպիսիսն տեսանես յԱւետա[րա]նին երթեալ զհետ նորա: Եւ, մինչդեռ խաւսէր նա, անսալով ունկն դնէին եւ ոչ ինչ խափանէին եւ ոչ զկարգն ընդ մէջ խափանէին եւ ոչ ի հարց եւ փորձ արկանէին եւ ոչ պատճառս խնդրէին, որպէս դպիրքն եւ փարիսեցիքն, այլ եւ յետ հրապարակաւ վարդապետութեանն դարձեալ զհետ երթային եւ զարմանա[յ]ին: Եւ դու միտ դիր իմաստութեանն Տեառն,



զիարդ պէսպէս շահս հաճախէ մերձաւորաց, զի ի նշանացն բանս շրջի եւ դարձեալ [ի բանից]ն վարդապետութենէ ի նշանսն մինչեւ ել[եալ ի լեռոն] զբազումս բժշկեաց, զի յառաջագոյն [ճանա] պարհ բանիցն հորդիցէ: Եւ, յետ կատարելոյ զանչափ հրապարակախաւս վրդապետութիւն, դարձեալ ի նշանսն գայ, զի ուսուցանէր, զի մի կարծիցի ինչ, թէ անձնյարգութեամբ եւ պարծանաց իցէ վարդապետութիւնն: Վասն այնորիկ եւ արդեամբք եւս ցուցանէր զիշխանութիւնն ի բժշկել հիւանդացն, զի մի՛ ինչ խոռովիցին յորժամ տեսանիցեն զնա իշխանութեամբ ուսուցանել:

Եւ իբրեւ էջ, ասէ, ի լեռոնէ անփի, զհեփ չոգան նորա ժողովորդք բազումք: Եւ ահաւասիկ մերձեցաւ առ նա բորոպ մի, աղաչէր եւ ասէր. «Տէր, եթէ կամիս կարող ես զիս սրբել» (հմմտ. Մարթ. Ը. 1-2):

Բազում իմաստութեան եւ մեծ հաւատք էին առնն, զի ոչ խափանեաց զվարդապետութիւնն, այլ մնաց ի դէպ ժամանակի: Եւ իբրեւ էջ ի լեռնէն, ապա մերձեցաւ եւ ոչ վայրապար, այլ՝ բազում ջերմութեամբ եւ ի գուճ եւս անկանէր: Որպէս միւս աւետարանիչն յայտ առնէ սերտ հաւատովք եւ պատշաճ կարծեւք, զի ոչ ասաց: Թէ՛ Յաղաթս կայցէք եւ խնդրիցես յԱստուծոյ, այլ՝ «Թէ կամիս, կարող ես սրբել» (Մարթ. Ը. 2): Եւ ոչ ասաց թէ՛ Տէր սրբեա՛լք զիս, այլ ի նա ապաստան արար զիշխանութիւնն: Եւ եթէ յանդէպ ինչ էին կարծիք բորոտին, ապա խոտել աւրէն էր զսուտ կարծիսն եւ սաստիւ ածել յուղղութիւն: Նա աւանիկ հաստատէ զբանն, զի ոչ ասաց թէ՛ սրբեաց, այլ թէ՛ «Կամիմ՝ սրբեաց» (Մարթ. Ը. 3), զի ըստ նորա կարծնացն եւ զհրամանս ետ: Իսկ առաքելոցն ոչ այնպէս, այլ թէ՛ «Ձի՛ պշուցեալ հայիք ընդ մեզ, իբր թէ անձանց իշխանութեամբ փուսք դմայ զգնալն» (Գործ. Գ. 12): Իսկ Տէրն թէպէտ եւ բազում անգամ խոնարհագոյնս խաւսեցաւ, որ չէր նմա արժան, մինչ զի զհրամանսն հաստատիցէ, այլ աստ մինչդեռ [զարմանայ]ին ընդ իշխանութիւն նորա: Եւ զայս եւս յաւել, [թէ]՛ «Կամիմ, սրբեաց» (Մարթ. Ը. 3): Ձի թէպէտ բազում նշանս արար ոչ [երեւ]ի զուամիկսն եւ զբորոտին կարծիս. «Կամիմ, ասէ, սրբեաց»: Եւ ոչ սոսկ, այլ եւ արդեամբք եցոյց, եւ հնազանդ եղեւ բնութիւնն հրամանին: Վասն որոյ եւ վաղվազակին, եւ ոչ լոկ ասաց, թէ՛ «Կամիմ», այլ եւ զձեռն եւս մերձեցոյց ի նա, ոչ վասն այլ իրիք, այլ զի ցուցցէ, թէ ոչ հնազանդ, այլ Տէր

է աւրինացն: Եւ թէ սրբոյ չէ ինչ, որ անսուրբ իցէ, իսկ Եղիշա եւ ոչ տեսանել կամեցաւ զՆեեման բորոտ, այլ եւ զայթակղեցոյց, զի ոչ ել եւ տես զնա: Այլ առաքէ Յորդանան լուանալ (հմմտ. Դ. Թագ. Ե. 10-14): Իսկ Տէրն ոչ իբրեւ զձառա, այլ իբրեւ զՏէր բժշկէր: Մերձենայր. ոչ զի զբորոտն պղծիր, այլ սրբէր զպղծութիւն բորոտին, զի ոչ եթէ զմարմինս եւեթ եկն բժշկել, այլ եւ զհոգիս ածել ի յաստուածութիւն: Եւ որպէս անլուա ձեռաւք ոչ արգել հաց ուտել, զի զխտրութիւն կերակրոցն նոր աւրինաւքս լուծցէ, նոյնպէս եւ աստ խրատէ, թէ ոգւոցն պարտ է դարման տանել եւ արտաքին սրբութեանցն ոչ այնպէս պատկառ կալ, այլ զներքինն սրբել եւ ի նորին բորոտութենէն կասկածել, որ են մեղք. զի բորոտութիւն ոչ է խափան առաքինութեան, յայն սակս մեծենայր: Եւ ոչ ոք մեղադիր լինէր, զի չեւ էր ատեանն խանգարեալ եւ ոչ տեսանողքն ի նախանձու են վնասեալք: Վասն որոյ ոչ միայն չաղարտին, այլ եւ զարմանային եւս ընդ նշանսն եւ ընդ բանիցն եւ ընդ գործոցն տային նորա զաւրութեանն յաղթութիւնն եւ երկրպագէին նմա:

Իբրեւ բժշկեաց զմարմին բորոտին, ապա հրաման տայ չասել ումեք, այլ ցուցանել զանձն քահանայապետին եւ մատուցանել [պատարագս] որպէս հրամա[յ]եաց Մովսէս ի վկ[ա]յութիւնն [նոցա: Յայն] սակս հրամա[յ]է, չասել ումեք, զի զան[մեծարգութիւն] ուսուցանէ մեզ: Եւ թէպէտ եւ պիտէր, եթէ ոչ թաք[ուցանիցէ]. զերախտիսն, սակայն նա զիւրն արար: Եւ [զիս՞րդ այլուր] հրամա[յ]է պատմել ոչ զանձին պատիւ, այլ [Աստուծոյ Հաւր] տալ զփառս, իսկ բորոտաւս անհպարտս լինել մեզ, եւ շնո[ր]հակալս լինել երախտաւորին եւ ընդ ամենայն գործոցն տալ գովութիւնս եւ ի հիւանդութեան եւ յառողջութեան ընդ Տեառն Հայել եւ զնա փառաւորել: Եւ ընդէ՞ր հրամա[յ]է ցուցանել քահանա[յ]ին եւ մատուցանել պատարագ. զի եւ այսու եւս կատարեսցէ զաւրէնսն եւ ոչ ամենայն ուրէք պահէր զաւրէնս եւ ոչ ամենայն ուրէք լուծանէր եւ այնու զանամաւթ լեզուս հրէիցն կարճէր, եւ ըստ նոցա տկարութեանն զիջանէր: Եւ մի՛ զարմանար, թէ ի սկզբանն այսպէս առնէր, ուր եւ առաքեալքն յետ հրամայելոյն ի հեթանոսս երթալ, եւ զհինսն ամենայն լուծանել եւ զնորն հաստատել: Երեւի, զի մերթ լուծանէին եւ մերթ պահէին: Եւ ընդէ՞ր հրամա[յ]էր զանձն քահանա[յ]ին ցուցանել, այլ զի հրաման էր աւրինացն ոչ անձամբ քննութիւն առնել սրբութեանն, այլ քահանա[յ]ին ցու-



ցանել եւ նա ընդ[ր]էր եւ եթէ ասէր, եթէ սրբեալ է, խառնէին, եւ եթէ երկմտութիւն ինչ լինէր, այլ եւս արտաքոյ բանակին նստէր: Վասն այնորիկ ասէ.

Երթ ցոյց քահանային եւ մարոյ պարարագ որպէս հրամայեաց Մովսէս (Մարթ. Ը. 4)

Եւ ոչ ասէ, թէ՛ Ես հրամա[յ]եցից, այլ առ արէնսն առաքէ. Ոչ զի քննեցից, որ ի սուրբ ձեռանէն մաքրեցաւ: Այլ զի այնու եւս կարկեսցէ զբերան նոցա, զի մի՛ ասիցեն, թէ զաշտիճան քահանա[յ]իցն յափշտակեաց եւ զգործս նոցա նա կատարէ. զնոսա առնէ քննիչ իւրոյ սքանչելեացն: Այնչափ հեռի եմ հակառակութենէ, զի որք յինէն բժշկեն, [ի նոցա հն]ազանդութիւն առաքեմ: Եւ զի՞նչ իչէ թէ՛ «ի վկայութիւն» նոցա»: Այն իսկ է, զի ի կշտամբութիւն, եւ յամբա[ստանու]թիւն նոցին լինիցին իրքն, թէ[ե]լ ի նմին ապախտաւորութեան կայցեն, զի ասէին, թէ զմոլորեցուցիչ եւ զ[խաբեբայ] հալածեմք եւ զհակառակ Աստուծոյ եւ զաւրինացն [դու], ասէ, լինիցիս ինձ վկա ի ժամանակին յայնմիկ, զի չեմ արէնս զանց, քանզի առաքեմ զքեզ առ արէնսն, զոր եսդ բժշկեցի եւ ի քահանայիցն քննութիւն: Եւ այս պատուելոյ եւ ոչ հակառակելոյ կրաւնիցն իցէ: Թէպէտ եւ նոքա ոչ ինչ աւգտէին, այլ նա պատուէր զարէնսն թէպէտ եւ զիտէր, թէ չեն ինչ աւգտելոց: Վասն որոյ յառաջագոյն գաւշակեաց, զի ոչ ասաց, թէ՛ Յուդղութիւն ինչ, այլ թէ՛ «ի վկա[յ]ութիւն նոցա», այսինքն՝ յամբաստանութիւն եւ ի կշ[տ]ամբութիւն նոցա լինիցին, այլ եւ ի վկա[յ]ութիւն իսկ թէ՛ Յինէն ամենայն ինչ եղեւ եւ կատարեցաւ: Թէպէտ եւ յառաջագոյն զիտէի, թէ չեք ինչ ուղղելոց, այլ ոչ իւրիք պակասեցուցի, զոր պարտ էր ինձ առնել ձեզ: Այլ նոքա եւս առաւել պահէին յիսս ի մտի, բայց զայս եւ այլուր իսկ ասէ, թէ «Քարոզեցի Անարարանս ընդ բնաւ աշխարհս ի վկա[յ]ութիւն ամենայն հեթանոսաց» (հմմտ. Մարթ. ԻԴ. 14), որք ոչն կամին հնազանդել, զի մի՛ ոք ասիցէ, թէ ընդէր քարոզիցես, թէ չիցեն ամենեքեան հաւատացելոց, այլ ես զիմն, ասէ, արարից, զի մի՛ ոք մեղադիր լիցի, թէ չեմ լուեալ: Վկա[յ]եացէ եւ ընբերանեաց զնոսա քարոզութիւնն, զի մի՛ յետոյ պատճառիցեն, թէ՛ ոչ լուաք, քանզի ընդ ամենայն ծագս տիեզերաց տարածեցաւ բան աստուածապաշտութեանն, եւ որք ընկալան զնա կամաւորութեամբ յաւել ի նոսա եւ շնորհս իւր: «Որ ունիցի, ասէ, րացի նմա եւ յաւելցի, եւ որ

ոչ ունիցի եւ որ ակն ունիցի թէ գուցէ նորա, եւ զայն ես հանցն ի [նմանէ]» (հմմտ. Մարթ. ԺԳ. 12, Մարկ. Դ. 25): Իբրեւ զայն, զի ասէ. «Որ ունիցի ակա[ն]ջս լսելոյ, լուիցէ» (Մարկ. Դ. 23). [այսին]քն՝ որոց էին ականջք հոգւոյ ի մէջ մարմն[աւոր ական]ջաց՝ լսել զհոգեւոր բանս նորա, յաւելոյր եւ [տայց նոցա] զուսումն վարդապետութեան աւելի քան զոր [ունէին]: Եւ այն ոք, որ կարծէին, թէ ունիցին եւ զայն [ինչ] որ ունէին, հանէ ի նոցանէ յայնմիկ, զի ասէ. «Տեսանելով րեսիցն եւ մի՛ րեսցն» (Մարթ. ԺԳ. 14): Իսկ այն, որ ոչն է արժանի այնմիկ, զոր ինքն ունի, զիարդ ունի ակն առնուլ զայն ինչ, ոչ ունիցի: Իսկ որ մարդ արժանի լինի այնմիկ, զոր ինքն ունի, յաւելցի նմա, եւ այն ինչ, զոր ոչն ունի, ապա թէ չիցէ արժանի եւ զայն, զոր ունիցին ի նմանէ: Որչափ եւ կարէ մարդ ընդունել, տուեալ լինի նմա շնորհքն, որպէսզի հանգիցեն ընդունիչք խոստացելովն, որ նման է նմա: «Որ ունի, յաւելու նմա», որպեսզի ինքնին գլխովին անձամբ իւրով մեծասցի նովաւ: Արդ, առայժմ ինչ որ նման է մեզ, յաւելեալ լինի մեզ, ապա թէ ոչ, եթէ յաւելով յաւելու: Սոյնպէս եւ հոգին իմաստութեան ոչ տուեալ լինի մարդոյ, որ յիմար խորհրդով, զի մի՛ նուազեցէ նա այնու լուսաւորան, այլ տուեալ լինի Հոգին Սուրբ՝ յայտնիչն խորհրդոց, որ խորհրդոց հասու է, զի ծաղկեացէ ի նմա իմաստութիւնն զուարճացուցիչ եւ զեղիցի նմա բանն ուրախարար: Եղեաք փոխառուք, լիցուք հատուցիչք: Եւ եթէ խոստովան լինիմք այնմիկ, որ փոխն ետ մեզ, յաւելցի մեզ ի վերա այնր, զոր առաքն, եթէ զլացողք լինիմք: Մի՛ երկմտեցուք, թէ չիցեն առ նմա, զոր առաքն ինչ, զոր առաք, թէ զլանամք թէպէտ եւ առ մեզէ առ նմանէ եթէ գոհանամք եւ հաւատամք այն ինչ որ առ նմա եւ առ մեզ է: «Որ ունիցի, ասէ, րացի նմա»: Պաւղոս, որ ունէր զարդարութիւն աւրինացն, յաւելան նմա հաւատքն կենարարին: Իսկ այն, որ ոչն ունի եւ ոչն զարդարութիւն, զի՞ գործիցէ նա աւրինացն, եւ զայն, զոր ունիցի [հանցն ի նմանէ], քանզի մինչ ի Յովհաննէս Մկրտիչ կան գն[ացք աւրինացն]: Եւ դարձեալ, որ ունիցի զկարծիս թուլութեան [մեղաց]:

«Մի՛ փայք զսրբութիւն շանց» (Մարթ. Է. 6): Զոր աւրինակ որ ոչն [աւ]ետար[անէն] զԱւետարանն Նորա, մեղանչէ, զի ոչ [պահէ] զպատուիրանն: Այսպէս է այն, որ տայ զսրբութիւն շա[նց]: Թէ՛ պէտ եւ շունք զսրբութիւնն ոչ ուտեն ու խոզից մարգարիտն չէին



պիտոյ: Սակայն Հաղորդ եւ կցորդ է նա այնմիկ, որ թաքոյց զարծաթ Տեառն իւրոյ: Մինն ոչ աճեցոյց եւ միւսն ոչ պահեաց:

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՂՈՎՈՐԵՅԻ  
(Գլուխ Ը.)**

Այլ իբրեւ էջ լեռնէ անտի, գնացին զկնի Նորա ժողովուրդ բազումք (Մաթթ. Ը. 1):

Յորժամ սկիզբն վարդապետութեանս արար, ի լեառն ել յաղագս երկից պատճառաց. մի՛ զի յապահով եղեալ ականջք լսողացն՝ դիւրաւ տպաւորեսցեն ի միտս զասացեալ վարդապետութիւնն. եւ երկրորդ՝ զի գիտացեան, թէ՛ Նա նոյն ինքն է, որ զօրէնսն ի Սինէական լեռինն ետ՝ գրեալ մատամբ Նորին ի տախտակս քարեղէնս (տնս Ելից ԻԴ.), որ այժմ զՆոր Կտակս գրէ բանիւ ի սիրտս նոցա. եւ երրորդ՝ զի բարձրութեամբ լեռինն զիմաստիցն բարձրութիւնն նշանակէ, որով զմիտս նոցա յերկինս ձգէ: Իսկ այժմ իջանելով՝ Հանգիստ նոցա գործէ, քանզի ոչ կարեն միտք միշտ աստուածային բանիցն ընդունակ լինել՝ լծեալ ընդ մարմնոյ հողեղինի, վասն որոյ թոյլ տայ զուսեալսն որոճալ խոկմամբ ի շահեկանութիւն անձանց: Իսկ զի ասէ. «Գնացին զկնի Նորա ժողովուրդք բազ[ումք]» (Մաթթ. Ը. 1):, ո՛չ ի դպրացն եւ ի փարիսեցւոցն, այլ նոքա, որք անսացին ճշմարիտ վարդապետութեանն եւ վառեցան ի սէր բանից Նորա մտացն Հաւանութեամբ, զի կրկին եւս շահեցին՝ կա՛մ ի բանից եւ կա՛մ ի հրաշից:

Իսկ առ ի միտս՝ «լեռն» իմանամք զերկինս վասն բարձր եւ անվանելի գոլոյն, ուստի էջ Բանն Հօր ի յարգանդ Կուսին՝ առնլով մարմին՝ ըստ այնմ. «Ոչ ոք ել յերկինս, եթէ ոչ որ էջն յերկնից Որդին Մարդոյ» (Յովհ. Գ. 13). ո՛չ տեղական փոփոխումն, այլ ի բարձրութենէ ի նուաստութիւն՝ ըստ առաքելոյ. «Ոչինչ յափշտակութիւն համարեցաւ զինելն հաւասար Աստուծոյ, այլ զանձն ունայնացոյց» (Փիլիպ. Բ. 6-7). ա՛յս է «էջ»-ն, որոյ գնացին զկնի ժողովուրդք բազումք: Նախ՝ երկնային ժողովուրդքն ի ծննդեանն, որք «Փառք ի բարձունս» երգէին եւ իջեալ սպասաւորէին տնօրէնութեան Նորին (տնս Դուկ. Բ. 13-14), եւ ապա յետ յարութեանն որք ի դժոխոց եւ ի գերեզմանաց յարեան, յորժամ էջ ի ստորին կողմն երկրի (հմմտ. Մաթթ. ԻԷ. 52-53, Եփես. Դ. 9), եւ ե՛ւս առաւել բազումք, որ գնացին եւ գնան այժմ զհետ Նորա՛ Հա-

ւատով եւ յուսով եւ սիրով խաչակից եղեալ Փրկչին, զորոց բազմութիւն ետես Յովհաննէս ի յայտնութեանն, որք կային առաջի Աստուծոյ եւ Գառինն, արկեալ արկանելիս սպիտակ[ս] եւ եկեալ ի վշտաց մեծաց (հմմտ. Յայր. Է. 14):

Եւ ահա մաքուցեալ բորոպ մի՛ երկիր պագանէր Նմա եւ ասէր. «Տէ՛ր, եթէ կամիս, կարօ՛ղ ես զիս սրբել» (Մաթթ. Ը. 2):

Մի՛տ դիր աստանօր իմաստութեանն Տեառն, թէ՛ զիա՛րդ պէս-պէս շահս յաճախէր մերձաւորացն, զի ի նշանացն ի բանսն դայր եւ դարձեալ ի բանիցն ի նշանսն շրջի, որպէս զի նշանօք զբանն Հաւատարիմ առնէ եւ բանիւն զնշանսն Հաստատեսցէ, միանգամայն եւ Հաւանեցուցէ զիշխանութեամբ վարդապետութիւնն: Բայց դու տե՛ս զառն ճարտարութիւն եւ զՀաւատս, զի ո՛չ խափանեաց զվարդապետութիւնն, այլ մնաց դիպօղ ժամանակի՝ պատրաստելոյ զանձն փրկութեան պարգեւին: Նա՛ զի եւ իշխա՛ր իսկ ոչ ի մէջ ամբոխին մտանել, այլ յորժամ էջ ի լեռնէն, մատուցեալ ջերմ Հաւատով եւ սերտ սիրով երկիրպագանէր եւ զմտացն աներկեւանութիւնն մարմնոյն խոնարհութեամբ Հաստատէր, այլեւ բանիւն զնոյն կնքէր: Զի ո՛չ ասաց. «Կաց յաղօթս, զի սրբեցայց», եւ ո՛չ թէ՛ «Տէ՛ր, սրբեա՛ զիս», այլ ի Նա՛ զիշխանութիւնն ապաստան արար, որպէս զի ասել թէ՛ կարողութեանդ տեղեակ եմ, բայց կամացդ՝ ոչ, զի ցուցցէ, թէ՛ իշխանութիւն՝ կամա՛ց է գործ: Եւ զի Հաճոյ թուեցաւ Տեառն, յայտ է, զի ո՛չ խոտեաց, այլ ըստ նորայն կարծեա՛ց զպատասխանն կազմեաց թէ՛ «Կամի՛մ, սրբեա՛ց», քանզի ո՛չ այսպէս Պօղոս, այլ ասէր. «Զի՛ պշուցեալ հայիք ընդ մեզ» (հմմտ. Գործ. Գ. 12): Այլ քննելի է, թէ՛ վասն է՞ր ասաց. «Թէ՛ կամիս, կարօղ ես»: Նախ՝ ինձ թուի, թէ՛ հրէայ էր այրն եւ ստուգեալ նորա ի քահանայից անտի զՅիսուսէ, թէ՛ Հակառակ է Օրինացն եւ թշնամի Գրոց, վասն այնորիկ կարծեաց, թէ՛ ոչ կամի Նա զբժշկութիւն հրէից. եւ երկրորդ՝ զի գիտէր նա, թէ՛ ո՛չ զամենայն մեռեալս կեցուցանէ եւ ո՛չ զամենայն ախտածէտս բժշկէ, այլ զոր կամի՛ զայն բժշկէ. արդ՝ ես թէ՛պէտ չեմ արժանի, այլ կամքդ միայն բաւական է ի սրբութիւն ինձ:

Զգեաց զձեռն Իւր եւ հասոյց ի նա Յիսուս եւ ասէ. «Կամի՛մ, սրբեա՛ց»: Եւ վաղվաղակի սրբեցաւ ի նմանէ բորոպութիւնն (Մաթթ. Ը. 3):



Բորոտին այնպէս թուեցաւ թէ որպէս Եղիսէոս, ա՛յնպէս պահէ Նա զՕրէնսն, զի ո՛չ ել արտաքս առ Նէեման (հմմտ. Դ. Թագ. Ե. 8-12). վասն որոյ լուծանէ զայս կարծիս՝ մերձենալովն ի նա, զի յայտ արասցէ, թէ Օրէնսդրի օրէնք ո՛չ ինչ մեղանչեն եւ թէ չէ՛ Նա հնազանդ Օրինացն, այլ տէ՛ր, որ ոչ միայն չվնասի ի պղծոյն, այլ եւ սրբէ՛ եւս զպիղծսն: Դարձեալ՝ զի թէ ոչ էր ձգեալ զձեռն, կարծիք Նմին լինէր, թէ երկեալ ի բորոտութենէն, եւ թէ մերձենայր՝ արտաքոյ Օրինացն լինէր, եւ այնու բժշկեալն մարմնով վիրաւորէր հոգւով: Վասն այսորիկ ձգմամբ ձեռինն բժշկեաց զմարմինն՝ ծանուցանելով զաստուածութիւն Իւր, թէ հալածիչ է Նա պղծութեան, եւ ասելով բանիւ թէ՛ «կամիմ, սրբեաց», բժշկեաց եւ զհոգին, որով եցոյց առ Օրէնսն զընտանութիւն: Եւ դարձեալ՝ զի բորոտն առ Տէր մեր զերկոսին եցոյց՝ խնդիրք եւ խիթումն, զի «կարօղ ես» զխնդիրն ծանոյց, իսկ «թէ կամիս» զխիթալն յայտնեաց, վասն որոյ Տէրն երկոցունց փոխանակեաց. սաստ՝ խիթացելոյն, եւ ողորմութիւն՝ ազաչողին, «ձգեաց զձեռն»՝ ողորմութիւն, եւ թէ «կամիմ, սրբեաց»՝ սաստութիւն: Եւ դարձեալ՝ ձգմամբ ձեռինն զկարողութիւն յայտնեաց, եւ «կամիմ, սրբեաց» զքաղցրութիւն կամացն նշանակեաց: Ուստի արագ ի հրամանէն արդիւնքն ցուցաւ, որպէս զի ցուցցի, թէ Նա՛ է, որ զանզարդ տեսակս աշխարհի զարդարեաց ձեւով անաշխատ բանիւ՝ ըստ այնմ. «Ասաց, եւ եղն, հրամայեաց, եւ հասարարեցան» (Մաղմ. ԼԲ. 9):

Եւ ասէ ցնա Յիսուս. «Զգո՛յ՞ լեր, մի՛ ումէք ասիցես (Մաթթ. Ը. 4):

Ոմանք ասացին, թէ զի մի՛ զլասցին ի քահանայիցն քննութիւն բորոտին՝ ասաց ծածկել, բայց յոյժ ստեն, քանզի ասէ զկնի. «Երթ ցոյց զանձն քո քահանային» (Մաթթ. Ը. 4): Այլ ճշմարտապէս յաղագս երկուց պատճառաց արգել. մի՛ զի մի՛ խրոխտասցի բորոտն պարծանս յանձին բերել, թէ ըստ արժանաւորութեան եզիտ զմաքրութիւն, եւ երկրորդ՝ անմեծարգի կամեցաւ զանձն պահել յաշխարհի՛ ըստ այնմ. «Ոչ խնդրեմ զփառս Իմ, այլ զփառս Այնորիկ, որ առաքեացն գԻս» (Հմմտ. Յովհ. Է. 18), եւ թէպէտ նա ոչ առնոյր յանձն թաքուցանել զիրան, սակայն Նա յԻւր կողմանէն զգուշութիւն արար յօրինակ եւ ի վարդապետութիւն մեզ:

Այլ երթ ցոյց զանձն քո քահանային եւ մաքր զպարարագն, զոր հրամայեաց Մովսէս ի վկայութիւն նոցա» (Մաթթ. Ը. 4):

Թէպէտ անխտիր վարի Գիրք, զի երբեմն զբոլոր մարդն «անձն» կոչէ եւ երբեմն զընաւն մարմին, բայց աստ ո՛չ առանց խորհրդոյ ասէ՛ «Երթ ցոյց զանձն քո». որպէս զի ցուցցէ, թէ վասն մտաց յանցանաց պալար վիրին վերերեւ էր ի մարմինն, վասն այնորիկ ասաց, թէ տեսանելով զմարմնոյ սրբութիւն՝ գիտասցես եւ զմտացդ մաքրութիւն, միանգամայն եւ զգուշացուցանելով զբորոտն, զի մի՛ ի նմանապէս մեղանսն անկանիցի՛ ըստ այնմ. «Ահաասիկ ողջացար, այլ մի՛ ես մեղանչեր» (Յովհ. Ե. 14): Բայց առաքելն առ քահանայն եռակի իմաստս աւանդէ: Նախ՝ զի նոցին ընտրութեամբ հաստատէր այնպիսեացն առողջութիւն ի ձեռն պատարագին մատուցման եւ արեանն սրսկման: Եւ երկրորդ՝ զՕրէնսն կատարէ, զի ո՛չ ամենայն ուրեք լուծանէր, այլ մերթ զա՛յն առնէր եւ մերթ զա՛յս, զի լուծանելովն զգուշութեամբ ճանապարհ յաւետարանն կազմէր եւ կատարելովն՝ զանամօթ հրէիցն լեզուս պապանձեցուցանէր: Եւ երրորդ՝ զի մի՛ ասիցեն քահանայքն, թէ որպէս զվարդապետութիւնն, այսպէս եւ զքահանայութիւնս յափշտակեաց եւ ինքնաձեռն առանց տաճարի կատարէ, վասն որոյ առաքէ առ նոսա թէ՛ դո՛ւք քննեցէք զսքանչելիս գործոց Իմոց, թէ չեմ կուօղ ընդ Մոսէս եւ կամ ընդ քահանայսդ:

Իսկ զի՞նչ այն թէ՛ «հրամայեաց Մոսէս ի վկայութիւն»: Կամ «վկայութիւն» զօրէնսն կոչեաց՝ ըստ այնմ. «Վկայութիւնք Տառն ճշմարիտ են» (հմմտ. Մաղմ. ԺԸ. 8-10), զի անդ գրեցաւ օրէնքն բորոտին զննել քահանային եւ պղծել եւ կամ սրբել պատարագաւ եւ քաւել (հմմտ. Ղևր. ԺԳ. 9), կամ թէ՛ օրէնքն իսկ վկայ լինէին բորոտին սրբութեան կամ պղծութեան, զի մի՛ այլ ժողովուրդն խղճիցի յետ օրինացն ընդունելութեան: Կամ՝ առ ի վկայութիւն եւ ի յանդիմանութիւն դատապարտութեան հրէիցն եւ յամբաստանութիւն կշտամբութեան, զի զայնքան սքանչելիսն տեսեալ՝ ոչ հաւատացին. արդ եղիցի վկայ, թէ յինէ՛ն ամենայն ինչ եղեալ կատարեցաւ, թէպէտ ոչ են նոքա ուղղելոց:

Իսկ առ ի միտս՝ բորոտ էր բնութիւնս, որ խայտաբղէտ եղեւ յետ յանցանացն, որոց բնութիւնն ազաչէր զԱրարիչն իւր՝ կամօք Նորին սրբիլ ի յանցանաց: Իսկ հասուցանել ձեռինն զՈրդւոյ զմարմնառութիւնն նշանակէ, զի ձեռն Որդի է Հօր, որ խոնարհեալ



եհաս յօգնականութիւն մեզ վշտացելոցս մարմնով իւրով՝ կամօք գործելով զսրբութիւն մեր խաչին իւրով: Եւ «զգոյշ լեր» ասելն՝ զի մի՛ յետ սրբութեան Աւագանին ապականեսցէ զկնիք շնորհին մեղօք կամ խրոխտանօք: Եւ ցուցանել զանձն, այսինքն՝ զմիտս, քահանային Քրիստոսի՝ մերկ եւ առանց ծածկութի՛ ըստ առաքելոյ թէ՛ «Բացաւ զլիտով րեսանեմք զփառս Տեառն՝ նորոգեալք իրբու [ի] Տեառն Հոգւոյ» (հմմտ. Բ. Կոր. Գ. 18), մատուցանելով զմարմինս մեր պատարագ Տեառն, որոյ Մոսիսին օրինակ էր եւ ստուերագրութիւն առ ի վկայութիւն մտացն մաքրութեան:

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԲԱՅԻ**

(Երկրորդ հատոր. գլուխ Լ)

**ՎԱՍՆ ԲՈՐՈՏԻՆ**

// Եկն առ նա բորոպ մի: Երկիր պագաներ եւ ասեր. [«Տէր եթէ կամիս կարաւոյ ես զիս սրբել»] (րեն Մարթ. Ը. 2):

Չորս գովութիւն երեւի բորոտին: Նախ՝ իմաստութիւն, զի դադարեաց մինչ ի քարոզութեանն էր: Երկրորդ՝ հաւատ, զի եկն առ Քրիստոս հաւատով: Երրորդ՝ խոնարհութիւն, զի երկիր պագանէր նմա: Չորրորդ՝ խոստովանութիւն, որ ասէր՝ Տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել: Հոգեպէս բորոտութիւն զմեղս նշանակէ: Եւ չորս ինչ պիտոյ է խոստովան որդոյն: Նախ՝ իմաստութիւն, որ ի միտ անէ զամենայն մեղսն: Երկրորդ՝ որ հաւատայ թողութեան: Երրորդ՝ զի հնազանդի ապաշխարութեան: Չորրորդ՝ զի խոստովանի զմեղսն առաջի քահանային, իսկ ասելն «Տէր եթէ կամիս, կարող ես զիս սրբել» վեցիւք իմանի: Նախ՝ զի կամեցող եւ կարող հաւատաց, եւ ոչ այլ ինչ չկամութեան կարծիս: Եւ յայտ է, ի պատասխանոյն: Զի՞ ասէ՛ // «Կամիս՝ սրբեաց» (Մարթ. Ը. 3): Իսկ զ«եթէ»ն, վասն իւրոյ անարժանութեան գոլոյ ասէ: Երկրորդ՝ կարծեաց թէ որպէս Եղիսէոս պահէ զօրէնս եւ բանիւ միայն սրբէ (հմմտ. Դ. Թագ. Ե. 8-12): Ելոյժ զայս, զի մերձեցաւ առ ի նա: Երրորդ՝ կարծեաց, թէ օտար է յօրինացն, զի բարձրագոյն քարոզէր, վասն որոյ բժշկեաց զնա մարմնապէս եւ հոգեպէս: Չորրորդ՝ հրեայ էր բորոտն, եւ հրեայքն զնա հակառակ օրինաց եւ գրոց ասէին: Կար-

ծէր, թէ ոչ կամի զբժշկութիւն հրէից: Հինգերորդ՝ դէմքն խնդրողի է, եւ պատգամքն կասկածողի: Զի զգօրութիւնն գիտէր ի բժշկելոցն եւ կամացն չէր տեղեակ: Վասն որոյ ըստ միոյն սաստեաց եւ ըստ միոյն բժշկեաց: Վեցերորդ՝ կարծեաց, թէ զամենայն մեռեալս ոչ յարուցանէ եւ ոչ զամենայն հիւանդս բժշկէ, այլ զորս կամի: Վասն այն ասէ՛ «Տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել»: Եւ նա որ ամենայն ուրեք զխոնարհագոյնս խօսէր, աստ վասն ժողովրդեանն եւ զկարծիս բորոտին հաստատելոյ, ասէ՛ «Կամիս՝ սրբեաց»: Եւ վաղվաղակի արդիւնացաւ բանն: Յորժամ կամօք եւ բանիւ բժշկեաց ըստ էր ձգեաց զձեռն վասն բազում պատճառի: Նախ՝ զի ձեռօք զմարմինն սրբեաց եւ բանիւ զհոգին, եւ կամօք՝ զկարծիս մտացն: Երկրորդ՝ եցոյց զի գոչեր ընդ հարկիւ օրինացն մարմնապէս, այլ փոխելոց էր զնա հոգեպէս: Երրորդ՝ եցոյց զի ամենայն ինչ սրբէ սրբոյն: Եւ յորս մերձեան սրբէ զպիղծ եւ ոչ որպէս նոքա զի սուրբն պղծէր ի պղծոյն: Չորրորդ՝ փորձէին հրեայքն, թէ ոչ մերձեացի. երկեաւ ի ցաւոցն: Եւ թէ մերձեացի արհամարհէ զօրէնքս: Վասն որոյ եղ զձեռն եւ ոչ երկեաւ եւ սրբելովն պահեաց զօրէնս: Հինգերորդ՝ Եղիսէ զի ծառայէր օրինացն ոչ մերձեցաւ այլ բանիւ զնէեման առաքեց ի Յորդանան եւ սրբեաց (հմմտ. Դ. Թագ. Ե. 10): Եւ Քրիստոս, զի Տէր էր, մերձեցաւ սուրբ ձեռօք եւ սրբեաց զփորոտ մարմինն: Վեցերորդ՝ եցոյց, թէ օրէնքն օրինադրին ոչ մեղանչեն, այլ որոց ընդ օրինօքն: Եւ թնկերորդ՝ ձգեաց զձեռն զի ցուցցէ, թէ ճիշտ մարմին է//առ եւ ոչ առ աչօք: Ութերորդ՝ զի ցուցցէ, թէ ոչ է պարտ դարչիլ ի հիւանդաց, այլ խնամել զնոսա: Իններորդ՝ հեշտ է Քրիստոսի բանիւ բժշկել, այլ առաւել հեշտացաւ բորոտն ի ձեռին հասուցանելն: Տասներորդ՝ զի ցուցցէ, թէ այսպէս պարտ է քահանային դնել զձեռս ի գլուխ մեղաւորին եւ արձակել զնա բանիւ: Եւ ասէ՛ «Երթ, մարտ՝ զպարարագն» (րեն Մարթ. Ը. 4): Այն է՝ յորժամ սրբէ զմեղս, ապաշխարութիւն կարգէ: Եւ զի ասաց՝ «Մի ումեք ասիցես» (Մարթ. Ը. 4): Ոչ թէ վասն երկիւղի ինչ, այլ վասն խոնարհութեան, զի զմեզ ուսուցցէ, մի սնապարծ լինել եւ անձնայարգու՝ վասն փոքր ինչ շահի:

Հարց. Վասն է՞ր առաքեաց առ քահանայսն տալ պատարագ: Պատասխանի. Գիտելի է, զի մինչ ի մկրտութիւն զամենայն օրէնսն պահեաց: Եւ անդի մինչ ի խաչն, երբեմն պահէր, եւ երբեմն լուծանէր: Եւ յետ խաչին ամենեւին ելոյժ: Եւ նոր պատարագն



զառն Աստուծոյ դեռ չէր պատարագեալ ի վերա խաչին, հին պատարագն զօրութիւն ունէր: Իսկ աստ, որ առաքեաց առ քահանայսն, վասն վեց իմն պատճառի: Նախ՝ զի զանամօթ բերանս նոցա ունիցի: Երկրորդ՝ զի մի ասիցեն, թէ զգործս մեր եւ զփառս յափշտակէ: Երրորդ՝ ի վկայութիւն նոցա, զի վկայք լիցին սքանչելեացն, զի շնորհօքն Քրիստոսի բժշկեցաւ եւ ոչ հին օրինօքն: Չորրորդ՝ զի պատիւ եղ կարգի քահանայութեանն: Հինգերորդ՝ զի բորոտն ոչ մտանէր ի տաճարն թէպէտ սրբեալ լինէր, առանց վկայութեան քահանային: Վեցերորդ՝ զի ուսուցէ՝ մեղաւորն թէպէտ զղջացեալ լինի ի մեղաց եւ ուխտել այլ ոչ առնել, սակայն պարտ է նմա առ քահանայն երթալ եւ խոտովանել: Դարձեալ ասելն «[գոր հրամայեաց Մովսէս] ի վկայութիւն նոցա» (տէն Մատթ. Ը. 4): Այսինքն՝ սքանչելիքս իմ վկայ լիցի եւ ամբաստանող յաւուր զատաստանի զամենայն սքանչելիս տեսին եւ՝ լսիցին եւ՝ կրիցին յինքեանս եւ՝ ոչ հաւատացին: Իսկ մեք ո՛չ տեսեալ եւ հաւատացաք սքանչելեաց եւ վկայութեանն Քրիստոսի եւ ընդ բժշկելոցն ընկալցուք զառողջութիւն եւ զթողութիւն մեղաց մերոց. ամէն. եղիցի:

Մինչեւ ցայս առաջին գիրքն մեկնութիւն Ոսկեբերանին: Եւ աստի մինչեւ ի Կեսարիայն միւս եւս: Եւ անտի ի խաչն: Զի չորս հատոր է արարեալ զՄաթէոս գլուխն:

**Ղուկաս Ե. 12-16**

**ԻԳՆԱՏԻՈՍ ՍԵԻԼԵՌՆՅԻ**

(Գլուխ Ե)

Եւ ի գնալն նոցա ի քաղաք անդր, բորոտին յառաջ եկեալ՝ անկաւ յերկիր՝ խնդրէր, զի սրբեսցի (տէն Ղուկ. Ե. 12):

Եւ նա մերձեցուցեալ ի նա՝ զձեռն սրբիչ, որ ո՛չ գարչի եւ ո՛չ առնու ի պղծութեանց եւ ասէ. «սրբեաց» եւ՝ զոյգ ընդ հրամանին, անյապաղ գնաց ի նմանէ բորոտութիւնն: Եւ նա տայ նմա առնել զաւրինացն կատարումն, զի ամաչեսցեն, որք օրինացն հակառակ զնա համբաւեն: Ապա սկսանի ուսուցանել, զի պարտ էր նմա ոչ միայն զմարմինս բժշկել, այլ՝ եւ զհոգիսն, վասն որոյ եւ եկեալ իսկ էր:

**ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆՂ**

(Գլուխ Ե)

Ի գնալն ի քաղաք անդր, եւ բորոտն իրրեւ ետես զՅիսուս, անկաւ ի վերայ երեսաց իւրոց եւ աղաչեաց զնա. Տէ՛ր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել (տէն Ղուկ. Ե. 12):

Յ՛Ն Ո՛չ վայրապար, այլ բազում ջերմութեամբ եւ սերտ հաւատով: Քանզի ո՛չ ասաց, եթէ յաղաւթս կաց, եւ խնդրէ յԱստուծոյ, այլ եթէ՝ «կամիս, կարող ես»: Ի նա ապաստան արար զիշխանութիւնն:

ԵՓ Բորոտին թուեցաւ, թէ որպէս Եղիայ պահէ զաւրէնսն:

Զգեաց զձեռն իւր, հասոյց ի նա, Յիսուս եւ ասէ. Կամի՛մ, սրբեա՛ց (տէն Ղուկ. Ե. 13):

Ընդէ՞ր կամաւք եւ բանիւ սրբեաց եւ զձեռն իսկ մատուցանէր: Թուի ինձ, եթէ ցուցցէ, թէ չէ հնազանդ աւրինացն, այլ Տէ՛ր է աւրինացն: Եւ ելոյժ զաւրէնս[ն]՝ մերձենալով առ նա, զի յայտ արացցէ, թէ՛ աւրէնսդրչի աւրէնքն ո՛չ մեղանչեն: Եւ, որ բնութեամբ սուրբ է, չէ ինչ, որ զնա անսրբիցէ: Զի ո՛չ պղծի նա ի պղծոյ անտի, այլ փախչի ի նմանէ պղծութիւնն:

Եւ վաղվաղակի գնաց ի նմանէ բորոտութիւնն (տէն Ղուկ. Ե. 13):

ՍՏ Հաւատով սրբեցաւ հոգւոյն բորոտութիւնն, սրբեաց զմարմինն, եւ զհոգին աժ ի ցածութիւն:

Պապուիրեաց նմա մի՛ ումէք ասել (տէն Ղուկ. Ե. 14):

Յ՛Ն Այլ զի անպարծութիւն ուսուցանէ եւ գիտէր, զի չառնու յանձն թագուցանել:

Երթ ցոյց զանձն քո քահանային (տէն Ղուկ. Ե. 14):

Վասն այսորիկ առաքէ առ քահանայսն, զի մի՛ ասիցեն, թէ զքահանայիցն զփառսն յափշտակեաց, զգործս նոցա կատարէ, կամ զի քննիչ արացցէ սքանչելեացն:

Կարծէր, զի մի՛ ելցէ համբաւ նորա ի Հրէաստան, թէ Աստուած իցէ:



**ՍԿ.** Քանզի բանիւ սրբել զբորոտութիւնն՝ Աստուծոյ գործ է: Իսկ Յիսուս դեռեւս ո՛չ կամէր յայտնել զինքն քահանայիցն, թէ Աստուծոյ Որդի է եւ մարդացաւ:

Եւ մաքոյ զպարարագն վասն սրբութեան քո, զոր հրամայեաց Մովսէս (Կրն՝ Ամկ. Ե. 14):

**ՅՆ** Այսու զաւրէնսն կատարեաց, զի ո՛չ ամենայն ուրեք լուծանէ, այլ մերթ զայն առ[ն]է եւ մերթ զայս, եւ զանամաւթութեան լեզուս հրէիցն խնուցու

Ի վկայութիւն նոցա (Կրն՝ Ամկ. Ե. 14):

**ՅԻ.** Ո՛չ յուղղութիւն նոցա կամ ի վարդապետութիւն, այլ յամբաստանութիւն եւ ի կշտամբութիւն, թէ յինէն եղեւ ամենայն ինչ եւ կատարեցաւ: Թէպէտեւ զուք չէիք ուղղելոց, այլ ես զիմն կատարեցի:



### 3. ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ ԾԱՌԱՅԻՆ ՆԱՐԻՐԱՊԵՏԻՆ

Մաքթնու Ը. 5-13

#### ՍՍԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՅԻ

(Գլուխ Ը)

Եւ մտնալ ի Կափառնաւում, մաքեաւ հարիւրապետ մի, աղաչէր զնա եւ ասէր (Մաքթ. Ը. 5) եւ որ ինչ ի կարգին է:

Այս երկրորդ նշանաւք ըստ Մատթէոսի գորդի Հարիւրապետին բժշկեաց զմեկուսացեալ ի նմանէն. վասն զի ասաց, եթէ չեմ արժանի, զի մտանիցես ընդ յարկաւ իմով, զարմացաւ ընդ Հաւատս Հարիւրապետին. եւ ի յասելն, եթէ «եւ ես այր մի եմ կարգեալ ընդ իշխանութեամբ, ասեմ սմա, երթ, եւ երթայ, եւ միտումն թէ եկ, եւ գայ, եւ ծառայի իմոյ, թէ արայ զայս, եւ ատնէ» (Կրն՝ Մաքթ. Ը. 9), որպէս կատարէն, ասէ, զհրամանս իմ ամենքեան, ընդ իմով իշխանութեամբ, նոյնպէս եւ ամենայն զաւրութիւնք եւ դասք հրեշտակաց եւ այլոց աներեւութից արարածոց, կարգեալ են եւ Հնազանդին քում իշխանութեանդ. առաքեսցես հրամայեալ միում ի ծառայից քոց ի հրեշտակաց, եւ եկեալ բժշկիցէ զմանուկ իմ: Արդ ոչ միայն յասել Հարիւրապետին, եթէ չեմ արժանի զի մտցես ընդ յարկաւ իմով՝ զարմանայր ընդ Հաւատսն նորա, այլ վասն զի ծանեաւ զնա արարիչ եւ տէր ամենայն արարածոց երեւելեաց եւ աներեւութից, որպէս զինքն տէր եւ իշխան ամենայն ծառայից իւրոց. յաղագս այնորիկ ճշմարտապէս ասացաւ ոչ գտանել յամենայն Իսրայելի այնպիսի Հաւատս ի Քրիստոսէ վկայեալ:

Բայց ասեմ ձեզ՝ բազումք յարեւելից եւ յարեւմտից եկեսցեն՝ եւ բազմեսցին յարքայութեանն երկնից ընդ Արրահամու եւ ընդ Մահակայ եւ ընդ Յակովբա [յ]: Եւ որդիքն արքայութեանն ելցեն ի խաւարն արփաքին (Կրն՝ Մաքթ. Ը. 11-12):

Գտեալ ի Հարիւրապետին յառն Հեթանոսի այնպիսի Հաւատս, զոր ոչ եզիտ յԻսրայելի, բազումք, ասէ, ի Հեթանոսաց մտցեն յարքայու-



թիւնն, իսկ որդիքն արքայութեանն ելցեն. որդիք արքայութեանն իսրայելացիքն էին, իսկ ի նոցանէ որք ոչն հաւատացին ի Քրիստոս յՈրդին Աստուծոյ, ելանեն ի խաւարն արտաքին:

**ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՆՆԵՅԻ**

(Գլոխ Ը)

Եւ իբրեւ եմուք նա ի Կափառնաումն (Մարթ. Ը. 5):

Բորոտն, յորժամ էջ ի լեռնէն Յիսուս, յայնժամ մատեալ, իսկ Հարիւրապետ՝ յորժամ եմուտ ի Կափառնաումն: Եւ վասն է՞ր արդեւք ոչ սա եւ ոչ նա ելին ի լեռնն ոչ առ ծուղութեան ինչ, քանզի երկոցունց ջերմ էին հաւատքն, այլ զի մի՛ խափան լիցին վարդապետութեանն:

Մարուցեալ հարիւրապետն ասէ. Մանուկ իմ անկեալ դնի չարաչար փանջեալ (հմմտ. Մարթ. Ը. 5-6):

Ոմանք ասեն, թէ աղերսիւ զպատճառն իսկ ասաց: Վասն որոյ ոչ ած զնա առ նա, զի չէր մարթ զլուծեալն բառնալ բերել առ նա, զի մերձ էր զոգիսն հանել: Ղուկաս յայտ առնէ, թէ՛ մերձ էր ի մեռանել: Բայց զի մեծ հաւատս ունեւ առաւել քան զայնոցիկ, որք ի ձեռուանէն կախեցին զանդամալոյծն (հմմտ. Ղուկ. Ե. 18-21), զի գիտէր ստոյգ, թէ հրամանաւ միայն բաւական է յարուցանել զանկեալն, աւելորդ համարեր զածելն առ նա: Եւ արդ, ընդէ՞ր Յիսուս, զոր ոչ երբէք արար, նախ աստ առնէ. զի ամենայն ուրէք կամաց աղաչաւ զացն ուչ դնէր: Իսկ աստ ընդ առաջ եւս երթա, եւ ոչ միայն ողջացուցանել խոստանա եւ ի տունն երթա, զի ուսցուք զառաքինութիւն Հարիւրապետին, թէ այդպէս չէր խոստացեալ, այլ ասացեալ էր, թէ՛ երթ եւ բժշկեցի մանուկ քո: Ոչ ինչ յայտնի լինէր հաւատք նորա փիւնիկ ասոր[ւ]ոյն հակառակ սմին արար իսկ աստ ինքնակամ յաւ[ժարէր երթալ ի] տուն, զի ուսիցիս զհարիւրապետէն հաւատս, [եւ] բազում խոնարհութիւն փիւնիկեցւոյն: [Եւ չառնոյր իսկ յանձն] տալ զբժշկութիւն, զի թէպէտ եւ գժտ[էր՝ չանսայր: Քանզի] Հնարագէտ եւ իմաստուն է բժիշկն՝ Հա[կառակորդոյ] քն զնորին հակառակ կազմել զիտէ. աստ վասն ինքնակամ երթին եւ անդ վասն յաճախութան [յապաղելոյ]ն յայտնէ զհաւատս

կնոջն: Սոյնպէս եւ Աբրահամու ասէր. «Միթէ՞ թաքուսք ինչ իցէ յԱբրահամու ծառայէ իմմէ» (Կեն Ծննդ. ԺԸ. 17). զի ուսանիցեն զնորա գութն եւ զխնաման առ սողոմա[յ]եցիսն եւ ի տունն Ղովթա: Չանսային մտանել առ նա առաքեալքն, զի ուսանիցիս զարդարւոյն զաւտարսիրութեանն զառաւելութիւն:

Եւ արդ, զի՞նչ ասիցէ հարիւրապետն.

Չեմ, ասէ, բաւական եթէ ընդ [յ]արկաւ իմով փան իցես (Մարթ. Ը. 8):

Լուիցեն եւ որ այժմ զՔրիստոս ընդունելոց ե[ն] եւ նախանձաւոր նորին փութոյն լինիցին, զի որք զքաղցեալն եւ զաղքատն ընդունիցին, զնա ընդունին եւ կերակրեն: «Ասա՛ւ>, ասէ, բանիւ եւ բժշկեցի մանուկ իմ»: Տե՛ս եւ զսա ըստ բորոտին բանի, զոր զպատշաճ կարծիսն ունեւ զնմանէ, քանզի ոչ ասաց թէ՛ աղաչեա՛ւ> զԱստուած, այլ թէ՛ միայն հրամայեա՛ւ>: Կասկածէր, թէ զուցէ փոքունս ինչ իմանայցէ զնմանէ: Վասն այնորիկ ասէր, թէ՛ «Ասա՛ միայն բանի»: Եւ զի բարւոք կասկած առին զնմանէ ժողովուրդն ի լերինն, եւ զարմանային ընդ վարդապետութիւնն, զի իբրեւ իշխանութեամբ ուսուցանէր, կամեցաւ հաստատել զկարծիս նոցա գործով ի ձեռն բորոտին: Եւ հարիւրապետ [.....]<sup>1</sup> թէ՛ ուսարուք ի բորոտէն, զի ոչ միայն իշխանութեամբ [առ]նեմ, այլ եւ իշխանութեամբ զբորոտութիւնն սրբեմ, որպէս եւ ասաց բորոտն. «Թէ՛ կամիս կարող ես զիս սրբել»: Եւ կա[մէր]. իշխանութեամբ սրբեաց զնա: Եւ զարձեալ ի ձեռն Հարիւրապետին այլազգւոյ [.....]<sup>2</sup> այս զբորոտութիւն սրբէ իշխանութեամբ [.....]<sup>3</sup> [իշխ]անութեամբ հալածէ: Որպէս ասաց [.....]<sup>4</sup> «[Աս]ա՛ բանի, եւ բժշկեցի մանուկն իմ [.....կար]գեալ<sup>5</sup> ընդ իշխանութեամբ, ունիմ ընդ ինեւ զինուորս, եւ [աս]եմ սմա երթ, եւ երթա»: Եւ զոր աւրինակ բորոտի [ասէ՞ր]. «Կամիմ, սրբեաց», զի հաստատեցէ զկարծիս նորա: Սոյ[ն]պէս եւ աստ արար, զի ասել հարիւրապետին, թէ՛ այսչափ ինչ իշխանութիւն ունիմ՝ ոչ միայն չխոտեաց, այլ եւ

<sup>1</sup> 1 բառ անընթեռնելի կամ եղծված. այս եւ նման հետագա ծանոթագրումները՝ բնագիրը հրատարակողի  
<sup>2</sup> 2-3 բառ  
<sup>3</sup> 2-3 բառ  
<sup>4</sup> 2 բառ  
<sup>5</sup> 2 բառ



յանձ[ն առ]աւ եւ արդեամբք կատարեաց, զի ոչ ասաց աւետարանին, թէ՛ գովեաց միայն, այլ թէ՛ եւ զարմացաւ եւս ոչ վայրապար, այլ մինչդեռ ամենայն ժողովուրդն մաւտ կային, ետ աւրինակ, զի նմանող նորին լինիցին: Տեսանե՞ս որպէս իւրաքանչիւր ոք ի վկայից նորա զարմանա[յ]ին ընդ իշխանութիւն նորա, զարմանա[յ]ին, ասէ, ժողովուրդն ընդ վարդապետութիւն նորա: Եւ ոչ միայն չեղեւ մեղադիր, այլ եւ առա[ւել եւս զնոսա] իջուցանէր ընդ իւր: Եւ, սրբելով զբորոտն, Հաստատէր զմիտս նոցա յասելն. «Թէ կամիս, կարող ես սրբել»: Եւ ոչ միայն չսաստեաց նմա, այլ եւ սրբեաց եւս որպէս խնդրեացն: Սոյնպէս եւ Հարիւրապետն ասէր, թէ՛ «Ասա բանիւ եւ բժշկեցի մանուկ իմ»: Եւ նա զարմացեալ ասէր, թէ՛

Եւ ոչ յիսարայէղի այսչափ հաւարս գտի (տես Մատթ. Ը. 10)

Այլ եւ ի Հակոբակորդացն եւս ուսանիցիս զսոյն, քանզի Մարթայ այսպիսի ինչ չասաց, այլէ զսորին Հակոբակն՝ թէ՛ «Զինչ ես խնդրեցես յԱստուծոյ, փացել քեզ» (Յովհ. ԺԱ. 22): Եւ ոչ միայն գրվեցաւ, այլ եւ սաստեցաւ եւ ուղղեցաւ ի նման է: Եւ զի ոչ բարիոք ասաց յանդիմանեցաւ ի նմանէ ասելովն «[Ո՛չ, ասէ, ասացի քեզ, թէ հաւարացես՝ տես]ցես եւ զփառսն Աստուծոյ» (Յովհ. ԺԱ. 40): Եւ իբրեւ չէր երբէք [Հաւատացեալ, այնպէ՛ս իմն մեղադիր լինէր: [Եւ դարձեալ յայնպիսի եւս կարծիքն մերժէ եւ ուսուցանէ, եթէ ոչ յայլ ումեքէ կարաւտէ առնուլ, այլ ինքն է աղբիւր բարեաց:

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՒ ԵՓՐԵՄ

ՆՈՐԻՆ ՅՈՆԱՆՆՈՒԲ [ՈՍԿԵՐԵՐԱՆԻ] Ի ԿԱՊԵՌՆԱԲՈՒՄ (ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ)

Իբրեւ եմուտ Յիսուս ի Կապեռնաւում, մաքեաւ առ նայ հարիւրապետն մի (տես Մատթ. Ը. 5):

Բորոտն, յորժամ էջ Յիսուս ի լեառնէ անտի, յորժամ մերձեացաւ, իսկ ձ. (Հարիւր)ապետն յորժամ եմուտ ի Կապեռնաւում եւ ընդէր արդեւք ո՛չ սա<յ> եւ ո՛չ նա ի լեառն ոչ ելին. ոչ առ ծուլութեան ինչ, քանզի երկո<ւ>ցու[ն]ցն ջերմ էին Հաւատքն, այլ զի մի խափանին չլինիցի վարդապետութեան: Իսկ Ղուկաս ասէ., թէ՛ զծերս

Հրէիցն առաքեաց (հմմտ. Ղուկ. Է. 2) եւ Մատթեոս, թէ ինքն չողաւ (հմմտ. Մատթ. Ը. 5): Ոչ եթէ Հակոբակ ինչ են միմեանց, այլ կարիքաջ միաբան: Եւ քանզի կամեցաւ երթալ, արգելին զնա Հրէայքն բարէմարդիկք. մեք, ասէ, երթամք եւ ածեմք, Ղուկաս զայն ասէ: Եւ դու տե՛ս եւ յաղաչելն պաշտաւն իմն առնելով, յաւժարեցուցանէին: Սիրէ, ասէ, / զազգս մեր. եւ չգիտէին զիարդ գովիցեն զայրն, պարտ էր ասել, թէ ինքն կամեցաւ. գալ, աղաչել, եւ մեք իբրեւ տեսաք զվիշտս նորա եւ զտանն լլուկ արգելաք եւ այնպէս մարթէր ցուցանել զնորայ Հաւատոցն զառաւելութիւն, այլ չիկամէին առ նախանձու, թէ յայտնեսցին Հաւատք առնն: «Եւ մինչդեռ չէր կարի հեռի ի փանէն, յղեաց առ նայ բարեկամս եւ ասէ. Տէր, մի այդպես կարծերս թէ առ դանդաղել ինչ չեկի, այլ զանձն անարժան համարեցայ ամէլ զքեզ փուն» (հմմտ. Ղուկ. Է. 6-7): Եւ զայս յորժամ զերծաւ ի թաղանձանաց նոցա, ապա յառաքեաց: Իսկ թէ Մատթէոս ասէ, թէ ինքն անձամբ ասաց, զի յետ զբարեկամսն առաքելոյ եւ ապա եւ ինքն իսկ չողաւ: Եւ ասէ. «Տէր, Մանուկ իմ անգեալ կայ ի փան մերձ ի մահ» (հմմտ. Մատթ. Ը. 6): Ոմանք ասեն, թէ աղբերսիւ պատճառսն եւս յաւել, վասն որոյ ոչ ած զմանուկն, զի չէ ի մարթ զանդամալոյծն եւ զտանջեալն, որ մազակուիչ մերձիմահն էր, բառնալ բերել, բայց տես զի մեծ Հաւատս ունէր, այնմ նշանակաւ եմ, թէ եւս առաւել քան զայնուիկ, որք զձեզ տանէն կախեցին զանդամալոյծն, վասն զի ստոյգ գիտէր եթէ Հրամանաւ միայն բաւական է յարուցանել զանգեալն: Աւելորդ Համարէր զածեալն առ նա: Ասէ՛

«Ես եկից եւ բժշկեցից զնա» (Մատթ. Ը. 7): Եւ ընդէ՞ր զոր ոչ ուրէք արար, նախ աստ արար: Ամենայն ուրէք կամաց աղաչելեացն ոչ ունէր, բայց աստ ոչ միայն ողջացուցանել խոստանայ, այլեւ ի տունն երթալ: Եւ զայն յայն սակս առնէր, զի ուսանիցի զառաքելութիւն ձ. (Հարիւր)ապետին, զի թե ասացեալ էր՝ երթ բժշկեսցի մանուկն քո, ոչ ինչ յորոց իմացաք, իմանայաք զմեծ Հաւատն եւ զխոնարհութիւն ձ. (Հարիւր)ապետին: Չեմ բաւական ասէ, թէ ընդ յարկաւ իմով մտանիցես: Լուիցուք այժմ որ զՔրիստոս ընդունելոց եմք, լուիցուք եւ նախանձաւորք եղիցուք, քանզի մարթի եւ արդ ունել զնա:

Ասայ, ասէ, բանիւ, եւ բժշկեցի մանուկն իմ (Մատթ. Ը. 8):



Տե՛ս եւ զսայ ընդ բորոտին բանիցն, որ զպատշաճ կարծիսն ունէր զնմանէ: Քանզի ոչ ասաց, թէ՛ աղաչեա՛յ եւ կամ յաղաւթս կաց, այլ միայն, թէ՛ հրամայեա՛յ: Կասկածես ինչ եթէ փոքունս ինչ իմանայցէ զնմանէ: Վասն այնորիկ ասէ, թէ՛ ակնարկեա՛յ միայն:

Քանզի եւ ես այր մի եմ ընդ իշխանութեամբ, ունիմ ընդ ին(եւ) եւ զինուորս, ասեմ սմա՛ երթ, եւ երթայ եւ այլն եւս (Կրէն Մարթ. Ը. 9):

Թուի ինձ, թէ՛ զերկնից զաւրացն իմն ամ զմտաւ. եթէ ախտ եւ մահ | եւ այլ ամենայն ինչ այնպեա հնազանդ են նմայ, որպէս իւր զինուորքն կային ի հնազանդութեան, քանզի եւ ասէ իսկ եթէ՛ ես այր մի եմ կարգեալ ընդ իշխանութեամբ, այլ դու ոչ ընդ իշխանութեամբ իցէս, զի թէ՛ ես, որ մարդս եմ եւ ընդ իշխանութեամբ, այնչափ ձեռն հասեմ որչափ եւս առաւել դու որ Տէրդ ես եւ Աստուած եւ չես ընդ իշխանութեամբ, ոչ եթէ ըստ համեմատութեան ինչ բերեալ այսպիսի աւրինակս ի մէջ, այլ զկարի յոյժ առաւելագոյնն, զի թէ՛ ես, որ հանգիստապատիւս եմ հրամանաւ միայն, եւ ընդ իշխանութեամբ եմ, սակայն վասն սակաւ իշխանութեանն առաւելութեան, զոր հրամայեմն, այն լինի. քանզի՝ «ասեմ սմայ երթ, եւ երթայ եւ այլում, թէ՛ եկ, եւ գայ» (Մարթ. Ը. 9): Որչափ դու կարող ես եւ ձեռն հասնես: Տեսանես զիարդ եցոյց եթէ մահու իշխսէ իբրեւ ծառայի եւ հրաման տայ իբրեւ զտէր, զայս ասէր, թէ՛ ոչ հրամայեսցես վաղջանին գա, ոչ եկեսցէ: Տեսանես որչափ ինչ էին հաւատք առն, զի որ ինչ յայտնի ամենեցուն լինելոց էր յետոյ, զայն անդէն առժամայն յայտնէ, թէ՛ իշխանութիւն ունի կենաց եւ մահու, եւ իջուցանել ի դրունս դժոխոց եւ հանել. եւ ոչ [զ]զինուորաց միայն ճառէ, այլեւ՝ զ/ծառայից, որ մեծ հնազանդութեան նշանակէ: Սակայն որչափ հաւատս ունէր, տակաւին զանձն անարժան համարէր, իսկ Քրիստոս ցուցանէր, թէ՛ արժանի է, եւ ի տունն յաւժարեաց երթալ, եւ զեւս առաւելագոյնսն արար, զի զարմանայր ընդ հաւատս առնն, եւ յայտնի ամենեցուն քարոզէր եւ մեծ եւս, քան զոր խնդրեացն արար:

ԵՓ Եկն մարմնաւոր առողջութիւն խնդրել մանկանն, զերկնից արքայութիւնն եւ չոք<sup>ք</sup>աւ:

Կ Իբրեւ լուաւ ասէ Յիսուս զարմացաւ: Աստուած զարմացաւ վասն մարդոյ եւ ոչ վայրապար զարմացաւ: Այլ մինչդեռ ամենայն

ժողովուրդքն մաւտ կային, եւ այլոց եւս աւրինակ, զի նմանող լինիցին: Եւ ոչ Իսրայելի այսչափ հաւատս գտի երբեք:

ԵՓ Զի զնոսա յամալթ արասցէ, զի ոչ հաւատացին ի նայ, իբրեւ զաւտարն, քանզի չէր ձ.(հարիւր)ապետն հրէայ, եւ զի ձ.(հարիւր)ապետ իսկ էր, անդ ի յայտ է, թէ՛ եւ ոչ յԻսրայելի այսպիսի հաւատս գտի:

Կ Եւ կարի իսկ մեծ էր առն միում որ ոչ էր ի հրէից ազգէն, այնպիսի ի միտս իմանալ:

ԵՓ Առ ամ զնոսա զի եղիցին բարեխաւսք նորա եւ գտան կշտամբեալք, զի ոչ էին ի նոսա հաւատք նորա, վասն այնորիկ ելցին ի խաւարն արտաքին: Իսկ ոմանք | ի կարի յոյժ իմաստնոցն, զԻսրայէլդ ոչ ի ժողովուրդն, այլ՝ ի նահապետսն ասեն:

Բագումք, ասէ, յարեւելից եւ յարեւմտից եկեսցեն եւ բազմեսցին ընդ Աբրահամու (Մարթ. Ը. 11):

Եւ քանզի բագում սքանչելիս եցոյց, ապայ եւ մեծաւ համարձակութեամբ բարբառի, եւ զհեթանոսաց զուշակէ եւ զգիրգսն Աբրահամու՝ փոխանակ արքայութեանն ասէ: Առ ի կսկծեցուցանել զնոսա՝ զԱբրայամ բերեալ ի մէջ: Որպես Յովհաննէս ի քարանցն ասէ, յառնել որդի Աբրահամու (հմմտ. Ղուկ. Գ. 8):

Եւ որդիքն արքայութեան ելցեն ի խաւարն արքաքին (Մարթ. Ը. 12):

Եւ այսու առաւել մորմոքեցուցանէ զնոսա. եթէ որոց առաջագոյն պատրաստեալ էր արքայութիւնն զնոսա հանէ անտի, եւ զի վճիռ էր բանն, հաւատարմացուցանէ նշանաւքն, զոր արար, եւ զի մի՛ ոք կարծեսցէ, թէ՛ պաշտաւն առնելոյ վասն էին բանքն ձ.(հարիւր)ապետին եւ ո՛չ ի սէր եւ ի հաստատուն բարուց, զի ամենեքեան իսկ իմանայցեն զմիտս ձ.(հարիւր)ապետին ասէ. «Երթ եւ որպէս հաւատացերդ՝ եղիցի քեզ» (Մարթ. Ը. 13): Եւ վաղվաղակի բանքն արդիւնք լինէին եւ վկայք՝ առնն հաւատոցն: Եւ բժշկեցաւ, ասէ, / մանուկն իմ ի նմին ժամու (հմմտ. Մարթ. Ը. 13), որպէս Փիլնիկն Ասոր[ւ]ո[յ] դուստրն քանզի եւ նմայ ասաց, ո՛վ կին դու, մեծ են հաւատարմութիւնք քո, եղիցի քեզ որպէս եւ կամիս, եւ բժշկեաց դուստրն ի նմին ժամու (հմմտ. Մարթ. ԺԵ. 28): Կամ որպէս զբորոտն ասէ, թէ՛ վաղվաղակի սրբացաւ (հմմտ. Մարթ. Ը. 3): Ոչ միայն բժշկելն



են զարմանք, այլ նորա նշանն եւ յանկարծակի ցուցանել զաւրու-  
թիւն:

**ՅՈՎՆԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ**

(Գլուխ Ը)

Եւ մտեալ ի Կափառնաում մտաբաւ առ Նա հարիւրապետ մի,  
աղաչէր զՆա եւ ասէր. «Տէ՛ր, մանուկ իմ անկեալ կայ ի փան անդա-  
մալոյ՞՝ չարաչար փանջեալ» (Մատթ. Ը. 5-6):

Յամենայն տեղիս շրջէր, զի զյոյս արքայութեանն ամենայն  
ուրեք տարածեսցէ, բայց տե՛ս, զի յորժամ էջ ի լեռնէն, ընդ առաջ  
եղեւ բորոտն, եւ յորժամ ի Կափառնաում եմուտ, մատեաւ Հարիւ-  
րապետն, եւ ոչ ոք ի սոցանէ ի լեռն ել, ո՛չ առ ծուլութեան,  
քանզի ջերմ էին ի Հաւատս, այլ զի մի՛ խափան լիցին վարդապե-  
տութեան նորա: Այլ Ղուկաս ասէ, «թէ՛ զծերս եւ բարեկամս առաքեաց,  
որք երթեալ պաշտօնս իմն առնէին թէ՛ Սիրէ զագգս մեր» (հմմտ. Ղուկ. Է. 3-5),  
եւ ոչ զիտէին, թէ՛ զիա՛րդ գովէին, քանզի պարտ էր ասել, թէ՛ ինքն  
կամեցաւ զալ եւ աղաչել, բայց ոչ Համարձակեցաւ, մանաւանդ թէ՛  
մեք իսկ արգելաք, զի տեսաք զշշուկ վշտի նորա. բայց զայս ոչ  
ասէին, զի առ նախանձու չկամէին յայտնել զՀաւատ առնն, իսկ  
Մատթէոս ասէ, թէ՛ ինքն չոգաւ: Արդ՝ կամ թէ՛ զանազանք են Հա-  
րիւրապետքս, կամ թէ՛ նախ զծերսն առաքեաց եւ յորժամ ծանեաւ,  
թէ՛ զայ ի տուն նորա, ինքն չոգաւ ընդ առաջ եւ աղերսիւ զբանն  
կազմեաց. «Տէ՛ր, մանուկ իմ անկեալ կայ [ի փան անդամալոյ՞]» (տես Մատթ.  
Ը. 6): Ոմանք ասեն, թէ՛ զպատճառ ոչ տանելոյն զմանուկն յայտնէ,  
թէ՛ զիա՛րդ էր Հնար գտածանեալն մերձ ի մահ՝ բառնալ բերել.  
բայց ես մեծ Հաւատոյ նշանակ ասեմ զայս՝ առաւել քան զայնո-  
ցիկ, որք ի ձեռուանէն կախեցին, զի ստոյգ գիտէր, թէ՛ Հրամանն  
միայն բաւական է կանգնել զվշտացեալն, եւ աւելորդ էր ածել առ  
Նա: Դարձեալ՝ զչարիս պատմելով մանկանն՝ զգութ նորա ի տունն  
խոնարհեցուցանել մաղթէ. յայտ ի պատասխանէս է:

Աւէ ցնա Յիսուս. «Ես եկից եւ բժշկեցից զնա» (Մատթ. Ը. 7):

Յիրաւի ասաց Սողոմոն, թէ՛ «Տայ շնորիս խոնարհաց» (Առակ. Գ. 34),  
քանզի զոր ոչ այլ ուրեք արար, աստ երեւի արարեալ, քանզի յայ-  
լում տեղուջ Հաւատս միայն պահանջէր, իսկ աստ ոչ միայն բժշկել

խոստանայ, այլեւ ի տուն նորա երթալ: Ինձ թուի, թէ՛ զառաքի-  
նութիւն եւ զՀաւատ առնն Հրատարակել կամի, միանգամայն ու-  
սուցանէ եւ զայն, թէ՛ ո՛չ այլ ինչ զԱստուած ի մարդ խոնարհե-  
ցուցանել կարէ, քան թէ՛ գործք մաքուրք Հանդերձ անկեղծաւոր  
Հաւատով: Իսկ առ ի միտս՝ «Կափառնաում»-ն թարգմանի ազարակ  
պանդխտութեան կամ սպանութեան, որ է աշխարհս՝ ըստ Դաւ-  
թի թէ՛ «Պանդխտութիւն իմ ընդերկարեաց» (հմմտ. Սաղմ. ԾԺԹ. 5), եւ թէ՛  
«Պանդուխտ եւ նժդեհ» (հմմտ. Սաղմ. ԼԸ. 13): Արդ՝ յորժամ եմուտ Բանն  
յաշխարհս, մատեան գումարք արդարոցն կատարելոց, որոց Հա-  
րիւրապետն է ապացոյց, որք մաղթանօք պաղատէին առ Տէ՛ր վասն  
բնութեանս: Զի օրինակ իմն արդարքն Հարք են մարդկայնոցս՝  
զգութ առաջի արկանելով, թէ՛ չարչարեալ մտօք տանջին եւ մարմ-  
նով լուծանին մահուամբ, վասն որոյ ասէ. «Ես եկից եւ բժշկեցից [զնա]»  
(Մատթ. Ը. 7): Եւ զայս յիրաւի՛. նախ՝ զի «զկամս երկիւղածաց Իրոց առնէ  
Տէր, աղօթից [նոցա յսէ]» (տես Սաղմ. ԾԽԴ. 19), եւ երկրորդ՝ զի զհիւան-  
դացեալ մեղօք եւ զչարեօք նեղեալ բնութիւնս ո՛չ այլ ոք կարաց  
բժշկել, քան թէ՛ Ինքն գալստեամբն Իւրով՝ ըստ այնմ. «Ո՛չ պարգա-  
մատր ոք եւ ո՛չ հրեշտակ, այլ Ինքն Տէր եկեաց եւ փրկեաց» (տես Եսայի ԿԳ. 9):

Պապասխանի եր հարիւրապետն եւ ասէ. «Տէ՛ր, չե՛մ բաւա-  
կան, եթէ ընդ յարկաւ իմով մտցես, այլ ասա՛՛ բանիւ, եւ բժշկեցի՛  
մանուկն իմ (Մատթ. Ը. 8):

Ի բանից աստի յայտնի է, թէ՛ ո՛չ փոքրագոյն վասն նորա էած  
զմտաւ, այլ յոյժ մեծագոյն՝ առաւել քան զբորոտին, զի նա ասաց.  
«Թէ՛ կամիս, կարօղ ես» (հմմտ. Մատթ. Ը. 2), իսկ սա ազատ բարուք թէ՛  
«Ասա՛՛ բանիւ, եւ բժշկեցի՛ մանուկն իմ» (Մատթ. Ը. 8), քանզի գիտեմ զՔեզ  
ճշմարտապէս Տէ՛ր, որ անաշխատ բանիւ զերկին եւ զերկիր արարեր  
եւ մարդասիրեալ խոնարհութեամբ ի յերկիր իջեր. չիշխեմ ես զՀո-  
ղեղէն յարկ զբանց իմոց բանալ Քեզ, որ ի բնաւքս չեն կարօղ տա-  
նել զանտանելի մեծութիւն Քո, իսկ բան Հրամանաց Քոց արդիւնս  
գործոց վճարէ, որ եւ յի՛ս ցողեսցես զբժշկութեանդ աղբիւր՝ զցօղ  
բժշկութեան Քո: Ուսցուք եւ մե՛ք զայնպիսի խոնարհութիւն զգե-  
նուլ, յորժամ տակաւին Հարիւրապետ իցեմք եւ զինուորեալ կայ-  
սեր աշխարհակալիս եւ մեծագոյն շնորհաց կամ աստիճանի պա-  
տահեալ, ասացուք, թէ՛ ո՛չ եմք արժանի մսեղէն յարկաւ ծառայել



Քեզ, զի այնու թերեւս զՔրիստոս ընդունիցիմք, որ դարձուցէ ի մեզ զյարկն արդարութեան:

Քանզի եւ ե՛ս այր մի եմ ընդ իշխանութեամբ, ունիմ ընդ ինեւ զինուորս. ասեմ սմա՛ ե՛րթ, եւ երթայ, եւ այլում թե՛ ե՛կ, եւ գայ, եւ ծառայի իմում թե՛ արա՛ գայս, եւ առնե՛» (Մաթթ. Ը. 9):

Թէպէտ անհանգէտ եմ բախտիւ միայն, սակայն բնութեամբ հանգիտապատիւ եմ մարդկան եւ ի ներքոյ այլոյ ումեմն զօրավարի կարգեալ, բայց զոր հրամայեմ սակաւ իշխանութեամբս, անվրէպ կատարի, քանի՞ առաւել Դու, որ ոչ ես ընդ իշխանութեամբ ումեք եւ կամ հաւասար մարդկան, այլ տէր եւ արարիչ սոցա առանց աշխատանաց, այլ միայն բանիւ հնազանդին Քեզ ախտք եւ հիւանդութիւնք, նաեւ մահ եւս, զի թէ հրամայիցես, եւ վախճա՛ն անգամ ոչ իշխէ մերձենալ ի մարմին, այլ ի կենացդ խոյս տուեալ փախչի, որպէս ծառայ ի տեառնէ իւրմէ: Տե՛ս աստանօր զհաւատս առնն, թէ ո՛րպէս մարգարէաբար զոր ինչ լինելոց էր յետոյ՝ այժմ յայտնի ծանուցանէ, թէ իշխան է մահու եւ կենաց եւ իջուցանէ ի դժոխս եւ հանէ ի դժոխոց (հմմտ. Իմաստ. ԺԶ. 13): Նաեւ զինուորացն համեմատութեամբ Տէր զնա երկնային զօրացն առակեաց, որ ըստ հրամանի Նորա վճարեն զամենայն ինչ:

Իսկ առ ի միտս՝ նշանակ կատարեալ հոգւոյ է իմաստս, վասն զի ո՛չ զնոյն զինուորս, զոր ի բաց առաքէ, վերստին կոչէ, այլ զա՛յլ ոք, քանզի հաճեալ միտք ընդ օրէնս Աստուծոյ ըստ ներքին մարդոյ եւ տեսանէ այլ օրէնս յանգամս զինեալ հակառակ օրինաց մտաց եւ գերեալ յօրէնս մեղաց (հմմտ. Նոմ. Է. 23), ոչ ներէ երկոցունց ի միում վայրի առնուլ բնակութիւն, զի եւ ո՛չ մի հաղորդութիւն է հակառակամարտիցն առ միմեանս՝ ըստ առաքելոյ (հմմտ. Բ. Կոր. Զ. 14): Վասն որոյ զօտարսն ի բաց վարելով, զհարութեանն ասեմ սպասաւորս, բերելով ի ներքս զիմաստութեանն տարփօղս. քանզի ի բաց կալ ի խաւարէ՛ ի հարկէ ի լոյս է, ըստ որում՝ «վառեալ զօրութիւն հոգւոյն գրահիւք արդարութեան եւ վահանաւ յուսոյն գուսեր Նոգւոյն, որ է բանն Աստուծոյ» (հմմտ. Եփես. Զ. 14), ի ձեռին ունելով՝ հերքէ զընդդիմամարտսն, որպէս երջանիկն այն հարսնացեալ հոգին, որ ի բաց մղէր զհիւսիսայինն եւ կոչէր զհարաւայինն (հմմտ. Երգ Դ. 16): Զոր տեսեալ ծառայ մարմինն եւ յայնպիսի մտաց երկուցեալ իբր ի տեառնէ՛ նուաճի ընդ իշխանութեամբ հոգւոյն՝ սպասաւոր

բելով առաքինութեան գործոց, որպէս եւ նա ընդ իշխանութեամբ մտաց եւ բոլորովին ընդ վերնոյն կարգեալ իշխանութեամբ, ընդ որս զարմացեալ գովէ Աստուած՝ ըստ այնմ. «Նայեցա՛ր սիրօք ընդ ծառայ Իմ ընդ Յոր, զի ոչ գոյ իբրեւ գնա մարդ ի վերայ երկրի» (Կրն Յոր Ա.8), որպէս ասէ:

Իբրեւ լուաւ Յիսուս, զարմացաւ (Մաթթ. Ը. 10):

Մեծ գովութիւն է այս հարիւրապետին՝ առաւելագոյն հաւատոց նորա նշանակութիւն, քանզի եկն մարմնաւոր խնդրել առողջութիւն, ընկալաւ ի զարմացմանէ Տեառն եւ զհոգեւորն փարթամութիւն: Նաեւ այնու զմերձաւոր ժողովուրդն ի նորա առաքինութեանն նախանձ ձգեալ յորդորէ:

Եւ ասէ ցայնոսիկ, որ զհետն երթային. «Ամէ՛ն ասեմ ձեզ, եւ ոչ յիսրայելի՛ այսպիսի հաւաքս գրի երբէք (Մաթթ. Ը. 10):

Զնոսս, որք բարեխօս հարիւրապետին էին, կշտամբեալ ամաչեցուցանէ, զի ո՛չ հաւատացին ի Նա իբրեւ զօտարն, քանզի չէր իսկ հրէայ եւ ոչ տեղեակ Օրինացն հարիւրապետն, սակայն այնպիսի իրս էած զմտաւ, իսկ նոքա ընթերցողք Օրինացն եւ ծանօթք Մարգարէիցն՝ նոյնգունակ ոչ կարացին առ Նա հաւատ ցուցանել: Բայց ասելովն թէ՛ «ոչ գտի երբէք», յոյժ ձաղէ, թէ յելիցն Եգիպտոսէ մինչեւ ցայսօր միշտ հետեալ կացին ի տեառնակոյս կողմանէ եւ ոչ երբէք կատարեալ հաւատս բերին յանձինս: Այլ են ոմանք, որ զիսրայելի ո՛չ ի ժողովուրդն, այլ ի նահապետն Յակոբ հանեն, որ ընդ Աստուծոյ մարտուցեալ՝ ո՛չ հաւաստեալ ի վնասէն գերծաւ, այլ զախտ կաղութեան յազդերն ընկալաւ (հմմտ. Ծննդ. ԼԲ. 24-32): Նաեւ աստանօր բացափայլագոյն յայտնեաց ի ձեռն հարիւրապետին զմուտս հեթանոսաց, որք հաւատով արդարանալոց էին, եւ զտարագրութիւն ազգին հրէից, որք ի գործսն պարծէին:

Բայց ասեմ ձեզ, զի բազումք յարեւելից եւ յարեւմտից եկեցեն եւ բազմեցին ընդ Արրահամու եւ ընդ Սահակայ եւ ընդ Յակովբու յարքայութեան երկնից եւ որդիքն արքայութեան ելցեն ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ եւ կրճել արամանց» (Մաթթ. Ը. 11-12):

Յետ սքանչելեացն բազում համարձակութեամբ բարբառի եւ տէ՛ր զինքն արքայութեանն գուշակէ եւ զգոգն Աբրահամու փոխանակ արքայութեանն գրէ (հմմտ. Դուկ. ԺԶ. 22). յուովք «յարեւե-



լից եւ յարեւմտից» ասէ, այսինքն՝ ի բնական եւ ի գրաւոր օրինաց լուսոյ արդարացելոց, նաեւ ի մեղաւորաց եւ յամբարշտաց, փոխանակ հաւատալոյն ի նա, ժառանգորդք նահապետացն լիցին: Եւ զԱբրահամ յիշելով մորմոքեցուցանէ զնոսա, զի վասն առ հաւասար հաւատովք արդարանալոյն՝ զօտարսն ժողովէ՝ ըստ Մկրտչին ձայնի թէ՛ «Կարող է Աստուած ի քարանցս յայցսանէ յարուցանել որդիս Աբրահամ» (Մապթ. Գ. 9), իսկ որդիքն Աբրահամու յաղագս անհաւատութեանն ելցեն ի խաւարն արտաքին: Կրկին միանգամայն եւ երեք-կի՛ն վիշտ. մի՛ զի օտարք ժառանգեսցեն զնոցայն, եւ երկրորդ՝ զի ինքեանք զրկիցին, որոց նախագոյն պատրաստեալ էր փառքն, եւ երրորդ՝ զի ի խաւարն արտաքին առաքին: Արտաքնովն ցուցանէ, զի եւ ներքին գոյ, եւ կամ զի ծանր եւ շօշափելի է խաւարն՝ արտաքոյ մարմնական խաւարիս, զի բնաւին ոչ լուսաւորի լուսով. կամ թէ՛ յեզր արտաքոյ աշխարհիս ժողովեալ մրուրն հրոյ՝ առանց լուսոյ տեղի տանջանաց սատանայի եւ իւրոցն՝ ըստ այնմ թէ՛ «Զի՛նչ Կեղի խաւարի. Կանխիցս զիս ի սահմանս նոցա» (հմմտ. Յոր ԼԸ. 19-20):

«Անդ եղիցի լալ եւ կրճել արամ[անց]» (Մապթ. Ը. 12): Յիրաւի՛ այսոքիւք վտանգին, զի սառուցեալք էին ի սիրոյն Աստուծոյ եւ ընկերացն եւ բորբոքեալք չարութեամբ լան ի ծխոյն եւ կափկափին ի ցրտոյն, որք լինին ի տարերացս անարգագոյնքն ժողովեալ ի մի վայր ի տանջանսն մեղաւորացն, քանզի ջերմութիւն հրոյ բաժանեալ ի լուսոյ՝ ձայնիւ Տեառն ըստ մարդարէին (Մաղմ. ԻԸ. 7), եւ ցրտութիւն ի ջրոյ եւ խաւարն յօդոյ եւ տիղմ յերկրէ չարչարեն զնոսա, որպէս ասացեալ է նախ: Նաեւ կրճտելով զատամուռնս իւրեանց ի վերայ սրբոցն՝ կրճի[ն] եւ ատամուռնք նոցա ի հուրն անշէջ վասն այսաբնակ լինելոյն:

Եւ ասէ Յիսուս ցհարիւրապեպն. «Ե՛րթ, եւ որպէս հաւաքացերդ՝ եղիցի քեզ» (Մապթ. Ը. 13):

Նախ՝ քանզի վճիռ եհատ հրէիցն, հաւատարմացուցանէ զայն նշանօք, եւ երկրորդ՝ զի մի՛ կարծիցէ ոք, թէ՛ պաշտօն առնելոյ վասն էին բանք հարիւրապետին եւ ո՛չ ի սերտ եւ ի հաստատուն բարուց, ամենեցունց յայտնէ զմիտս նորա թէ՛ «Ե՛րթ, եւ որպէս հաւատացերդ» բանիւ ողջանալ մանկանն քո՝ «եղիցի քեզ», եւ վաղվաղակի բանքն արդիւնք լինէին՝ վկայք առն հաւատոցն: Եւ երրորդ՝

ցուցանէ զհաւատս նորա կցորդ բժշկութեան իւրոյ, քանզի զայս յայտնէ թէ՛ «Ե՛րթ, եւ որպէս հաւաքացերդ՝ եղիցի քեզ»:

Եւ ողջացաւ մանուկն նորա յաւուր յայնմիկ (Մապթ. Ը. 13):

Որպէս դուստր քանանուհւոյն, զի ասաց ցնա. «Կի՛ն դու, մեծ եմ հաւաքք քո, եղիցի քեզ որպէս եւ կամիս» (Մապթ. ԺԵ. 28), եւ բժշկեցաւ դուստր նորա ի նմին ժամու, այսպէս եւ հարիւրապետին ոչ միայն բժշկեցաւ, այլեւ «յաւուր յայնմիկ», որպէս զի զժամն եւս եհարց, թէ՛ յորո՛ւմ ժամու ապաքինեաց. «Երէկ, — ասեն, — յեթններորդ ժամն եթող զնա ցերմն» (Յովի. Դ. 52), յորում հաւատաց վասն նորանշան իրացն՝ ինքն եւ ամենայն տուն իւր:

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՅԻ  
(Երրորդ հապոր. գլուխ Ա)

Եւ մտեալ ի Կափառնաւում, մաքեաւ [առ նա] հար[իւրապետ] մի, աղաչէր զնա, 6 եւ ասէր. Տէր՝ մանուկ իմ անկեալ կայ ի քան անդամալոյ՞՝ չարաչար քանջեալ (Մապթ. Ը. 5-6):

Հարց. Վասն էր աստ սկիզբն առնէ Մեկնութեան:

Պատասխանի. Զի Առաջին ի հեթանոսաց ճ.(հարիւր)ապետն էր որ հաւատաց եւ մեծ եւ զարմանալի ունէր զհաւատն:

Հարց. Հարիւրապետս եւ թագաւորացն մի՞ է ի Կափառնաւումս:

Պատասխանի. Ոչ է մի: Եւ յայտ է ի բազմաց: Նախ, զի անդ ասէ, զայս երկրորդ նշանս արար Քրիստոս: Եւ աստ բազում է եղեալ: Դարձեալ աստ ծառայ ասէ եւ անդ՝ որդի: Եւ դարձեալ անդ ստիպէ իջանել, եւ աստ մի ինչ աշխատ լինիր: Եւ անդ ոչ գնաց եւ աստ եկն առ նա:

Հարց. Վասն է՞ր ոչ ճ.(հարիւր)ապետն եւ ոչ բորտոն ի լեռն ոչ ելին:

Պատասխանի. Նախ՝ զի մի խափան լիցի ի վարդապետութեանն Քրիստոսի: Երկրորդ՝ զի հոգեւոր բժշկութիւն առաւել էր, քան զմարմնաւորն: Երրորդ՝ զի հասարակաց օգուտն մեծ է, քան զառանձին:

Հարց. Ղուկաս ասէ, թէ՛ զծերս առաքեց (հմմտ. Ղուկ. Է. 2) եւ Մատթէոս, թէ՛ ինքն չոգաւ (հմմտ. Մապթ. Ը. 5):



Պատասխանի. Չեն հակառակ: Ձի նախ՝ ինքն կամեցաւ զնալ, եւ ծերքն արգելին եւ ինքնեանք զնացին: Եւ յետոյ այլ բարեկամս առաքեաց: Ապա եւ ինքն զնաց:

Հարց. «Մանուկն անկեալ ի փան»:

Պատասխանի. կամ աղերսիւ զպատճառ ցուցանէ, թէ մերձ ի մահ, վասն այն չկարաց բերել եւ կամ մեծ հաւատոյ նորա էր ցոյցը: / Ձի զիտէր թէ ի հեռաւորն բանիւ միայն կարէր յարուցանել:

Հարց. «Ես եկից եւ բժշկեցից»:

Պատասխանի. Երեք առաքինութիւն ունէր: Նախ՝ կատարեալ սէր, զի առաքեց զծերսն եւ յետոյ ինքն զնաց: Երկրորդ՝ առաւել խոնարհութիւն. «չեմ բաւական», - ասէր: Երրորդ՝ մեծ հաւատք. «ասա բանիւ եւ բժշկեցի»: Արդ վասն սիրոյ եւ խոնարհութեան զնաց առ նա, զի ես ի հեզս հանգչիմ, ասէ, եւ սիրեմ: Եւ վասն մեծ հաւատոյն բժշկեաց եւ զովեցաւ: Այսպէս եւ մեզ սէր եւ ի խոնարհութիւն եւ հաւատք պարտ է ստանալ, յորժամ զՔրիստոս ի մեզ ընդ ունիմք ճաշակմամբ մարմնոյն: Եւ կամ յորժամ հաւատով եւ յոյսով եւ սիրով ի մեզ ընդունիմք: Կամ ի ձեռն աղօթից ի մեզ գայ Քրիստոս: Ձի որքան խոնարհիմք՝ խոնարհի առ մեզ, եւ որքան սիրեմք եւ հաւատամք՝ բժշկէ զմեզ:

Եւ ես այր մի եմ ընդ իշխանութեամբ (Մարթ. Ը. 9):

Աստ զառաւել խոնարհութիւն ցուցանէ օրինակաւ: Նախ՝ զի ես հանգիտապատիւ սոցա մարդ եմ, իսկ դու Աստուած ես: Երկրորդ՝ մի ինչ իշխանութիւն ունիմ սոցա: Իսկ դու՝ որպէս Աբարիչ արարածոյ, իշխես: Երրորդ՝ ես ընդ իշխանութեամբ եմ կարգեալ: Եւ դու չես ընդ իշխանութեամբ ումեք: Չորրորդ՝ ես այնչափ կարող եմ իմ հանգանդեցելոց, որչափ դու, որ ամենակարող ես:

Ունիմ զինուորս[ընդ ինել], ասեմ [սմա] երթ՝ [եւ երթայ], եւ այլ-լում [թէ] եկ՝ եւ [գայ, եւ] ծառայի [իմում թէ արա գայս՝ եւ առնէ] (տես Մարթ. Ը. 9):

Արդ՝ նախ զվերին զօրացն երկնից ածէ զմտաւ: Եւ այս եռակի, այսինքն՝ ըստ թուոյ, ըստ շարժման, ըստ ներգործութեան: Նախ՝ ըստ թուոյ, զի աստ հարիւրապետ ասէ. եւ զառակս ոչխարաց հարիւր ասաց: Եւ յայլում տեղոջ, երկոտասան գունդս հրեշտակաց: Ուստի յայտ է ՂԹ. (99) զոյ ամենայն դասուց, Թ. (9) թիւ պակաս

վասն անկելոցն դասուց: Երկրորդ ըստ շարժումն, զի անգելոցն ասացեալ՝ ե՛րթ, եւ այլումն՝ ե՛կ. այսինքն՝ մարդոյն զտեղի անկելոցն լնուլ: Երրորդ՝ ըստ ներգործութեան ծառայ, զի հոգիք են հարկաւորք, որ առնեն զբան նորա լսել ձայն պատարագաց նորա: Դարձեալ, նախ՝ ախտ հիւանդութեանն եւ մահն է ծառայ Քրիստոսի, կեանք եւ առողջութիւնն՝ զինուոր եւ ում հրամայէ՝ գայ, եւ ում / հրամայէ՝ երթայ: Չայս խնդրէ, եթէ հրամայէ հիւանդութեանն երթալ եւ առողջութեանն գալ: Երկրորդ՝ յետոյ ի վախճանի հասարակաց մահն երթ եւ յարութեամբն առ հասարակ կեանք գայ: Երրորդ՝ որ ասէ մեղաւորացն՝ երթայք ի դժոխս, եւ արդարոցն՝ եկայք յարքայութիւնն: Եւ այս ի ձեռն սպասաւոր հրեշտակացն կատարի, զոր ծառայ կոչէ: Եւ դարձեալ այլ տեսութիւն. Ծ.(Հարիւր)ապետ եւ իշխան է միտքս մեր: Եւ հակառակ զօրութեանն, որ զինուորին ընդդէմ մտացս մարմնոյ է՝ ի բաց երթալ եւ զմիւս զինուորն, որ սպառազինեալ է զօրութեամբն Աստուծոյ, հրամայէ գալ: Եւ մարմինն ծառայ է մտացն, հրամայէ զպատշաճն առնել: Որպէս եւ յԵրգան ասէ՝ «Արի հիսիսոյ եւ եկ հարաւ, եւ շնչեա՛ ի պարտեզս իմ» (Երգ Դ. 16): «Նիսիս» զչար ոգիսն ասէ, որ ի բաց վարէ զնա, եւ հողմն «հարաւոյ»՝ զհոգին կոչէ ի յօգնութիւն իւր: Այսպէս մեծ է հաւատ հարիւրապետին, եւ զանձն անարժան համարէր, վասն որոյ Տէրն արժանաւորեաց զնա ի տունն երթալ յօժարէր եւ զովեաց զհաւատ նորա:

Ոչ յԻսրայէլի այսչափ հաւաք գրի (տես Մարթ. Ը. 5): Ի ծննդենէն մինչեւ ցայժմ մեծ էր հաւատք նորա: Նախ՝ զի օտարազգի էր, ե՛ւ Ծ.(Հարիւր)ապետ էր, ե՛ւ զօրէնս ո՛չ զիտէր. եւ նոցա ո՛չ քարոզէր: Եւս քանզի իւրք էին ե՛ւ ռամիկք, ե՛ւ օրէնսգէտք. եւ նոցա քարոզէր միշտ, եւ ոչ հաւատային, վասն որոյ յարքայութենէն զրկեցան: Եւ աստուծաբանն Գրիգոր Իսրայէլ զանհաւատսն ասէ: Եւ յոյժ յիրաւի, զի սորա մեծ էին, քան զնոցա, զի նոքա զխոստմունքն լուան յԱստուծոյ եւ տեսիլն տեսին: Իսկ սա ոչինչ յայսցանէ, այլ ի կերպարանս մարդոյ, հաւատաց զնա ճշմարիտ Աստուած: Վասն որոյ ընդ նոսա բազմեցաւ յարքայութիւնն Աստուծոյ:

Բազումք յարեւելից եւ յարեւմտից եկեցեան[եւ բազմեցին ընդ Արրահամու՝ եւ ընդ Սահակայ՝ եւ ընդ Յակովբու յարքայութեան



**Երկնից:** Եւ որդիք[ն արքայութեան] ելց[են ի խաւարն արփաքին. անդ եղիցի լալ եւ կրճել արամանց] (տե՛ս Մաթթ. Ը. 11-12):

Կրկին իմն մորմոք է զանհաւատ հրեայս: Նախ՝ զհեթանոսս բազմեալ ընդ Աբրահամու: Երկրորդ՝ եւ զնոսա հանեալ ի խաւարն: Իսկ «յարեւելից եւ յարեւմտից» Դ. է իմացումն: Նախ՝ զչորս կողմն աշխարհիս ցուցանէ, զի ընդ յարեւելս զհարաւն յիշէ եւ ընդ յարեւմուտս՝ զհիւսիս: Երկրորդ՝ որք զերկնաւորսն պաշտեն եւ որք զերկրաւոր պատկերս, ի նոցանէ ասէ: Երրորդ, ոմանք ի լոյս են եւ երեւելի, / եւ ոմանք նուազք եւ ծածուկ: Չորրորդ՝ որք յառաջին ժամանակս էին նախքան զօրէնս, եւ ի վերջին՝ մինչ ի Նեոն եւ ի կատարած յայցանէ, ասէ, ընտրեսցին ժառանգք արքայութեանն, եւ դուք զրկիք: Եւ արքայութիւն աստ չորիւք իմանի: Նախ՝ զբժշկութիւնն, երկրորդ զԱւետարանն, երրորդ՝ գՔրիստոս, չորրորդ զժառանգութիւնն երկնից, յորմէ զրկեցան անհաւատաւորք: Տե՛ս զգորութիւն հաւատոյն, որ որդի Աստուծոյ առնէ, եւ ժառանգ արքայութեան: Եւ այլն որպէս ցուցաւ յառաջագոյն: Եւ տե՛ս, թէ որպէս չար է անհաւատութիւնն:

**Որպէս հաւաքացերդ՝ եղիցի [քեզ]** (տե՛ս Մաթթ. Ը. 13):

Նախ ցուցանէ զբանն արդիւնացեալ, որով յայտ է զի ամենայն բանքն այսպէս կատարին: Երկրորդ, զի վկայ լիցի մեծութեան հաւատոյ ճարտարապետին, զի այլքն նմանեսցին: Երրորդ զի սքանչելեացն պիտոյ է բանք արդիւնաւոր եւ կատարեալ հաւատք, որպէս եղեւն իսկ եւ առողջացաւ մանուկն:

**Ղուկաս Է. 1-10**

**ԻԳՆԱՏԻՈՍ ՍԵՒԼԵՌՆՅԻ**

(Գլուխ Է)

Եւ եղև, ասէ, իբրև կափարեաց զամենայն զբանս իւր ի լսելիս ժողովրդեանն՝ Եմուփ ի Կափառնաւում (տե՛ս Ղուկ. Է. 1):

Հարիւրապետն նախ զծերսն առաքէ՝ աղաչել, զի տացէ առողջութիւն Խիսուս, զի ամենեցուն ցուցցէ զհաւատս նորա՝ զնաց ընդ նոսա: Իբրև ետես Հարիւրապետն, թէ գայ ի տուն նորա, երկեալ ի մեծութենէ պատուոյ. նորա, վասն

զի ծանեալ եւ հաւատաց, թէ Տէր է մահու եւ կենաց եւ իշխանութեամբ եւ հրամանաւ զորս կամի ածէ եւ զոր ոչ՝ ի բաց վարէ: Վասն որոյ փութացաւ, անկաւ առ ոտս Տեառն եւ ընծայեաց հաւատս կատարեալս, ընդ որս սքանչացեալ հիանայ Փրկիչն, զի եւ ամենեքեան ծանիցեն եւ նախանձաւոր լինիցին այնպիսի ունիլ հաւատս, յաղագս որոյ նախ գովէ զնա եւ ցուցանէ արժանաւոր այնմ շնորհին եւ ապա տայ զառողջութիւն Խիսուսացելոյ մանկանն:

**ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ**

(Գլուխ Է)

Իբրև կափարեաց զամենայն բանս իւր ի լսելիս ժողովրդեանն (Ղուկ. Է. 1):

Ոկ. Թէպէտ տաղտկալ պարտ էր ընդ ծանրագոյն հրամանսն, նա աւանիկ այնպէս իմն էր զաւրութիւն վարդապետին, մինչ ախորժիկ զբանս առնել: Եւ զբազմաց միտս գրաւել եւ ի մեծամեծ զարմանս ածել, զի ո՛չ կամէին բնաւ, եթէ լռեսցէ ի խաւսելոյ: Եւ դու միտ դիր իմաստութեան Տեառն, զի պէսպէս շահս յաճախէր մերձաւորացն: Զի մինչչեւ ելեալ էին ի լեառնն՝ զբազումս բժշկեաց, զի յառաջագոյն ճանապարհ հորդեսցէ բանիցն: Եւ յետ այնչափ վարդապետութեան դարձեալ ի նշանս գայ, զի հաստատեսցէ արդեամբք զբանն:

Եւ Եմուփ ի Կափառնաւում: Հարիւրապետի ուրում ծառայ չարաչար հիւանդացեալ՝ մերձ էր ի վախճանել, [որ էր նմա պափուկան] ( տե՛ս Ղուկ. Է. 1-2):

ՈՎ Բայց ո՛չ վախճանեցաւ յաղագս Տեառն: Մերձ էր ի մեռանել, վասնզի մարդ էր, այլ ո՛չ մեռաւ յաղագս աղաչաւորին, վասնզի աստուածասէր էր, բնութիւնն զպարտսն պահանջէր, այլ բնութեան Տէրն զստացուածն ստացողին ի ձեռն հաւատոցն պարգեւէր: Մահ զբնութիւնն հարկէր՝ առ վախճանն բռնադատելով: Այլ յինքն ձգէր հաւատն՝ ընդ մահուն մարտնչելով եւ զՆոր արէնսն լուծանելով: Մի՛ թերահաւատէր, թէ հաւատքն այնքան զաւրացան մինչեւ զմահուն կապանս խզել եւ ի վհից սանդարամետաց զոգին ի վեր կորզել: Հաւատք զգժոխոց դրունս բանայ եւ զերկինս փակէ: Զբնութեան զաւրէնսն փոփոխէ եւ զզաւրութիւն հրոյ շիջուցանէ: Զբուն ցաւ դործէ, զմահու աչս կուրացուցանէ: Ի գրոց



Հաւանեցուցանեմ: Երանելին Պետրոս բանիւ զգրուես զժոխոցն երաց եւ զՏարիթայն ի խորոցն ի վեր ած, քանզի ասաց. «Տարիթայ արի կաց» (Գործք Թ. 40), եւ վաղվաղակի դրուես զժոխոց բացան եւ նիզք տարտարոսին ի բաց անկան:

Մեռեալն քան զկենդանի արագագոյն լուաւ: Եղիայ մարգարէն Հաւատովք վստահացաւ ասել. «Ո՛չ եղիցի անձրեւ ի վերայ երկրի, բայց եթէ բանիւ բերանոյ իմոյ» (հմմտ. Գ. Թագ. ԺԷ. 1): Եւ երկինք պղնձացան, եւ փակեցան երկինք զերիս ամս եւ զվեց ամիս: Երկիր եղեւ իբրեւ զերկաթ՝ զբնութեան սոփորութեան պտուղ ո՛չ տալով: Գիտացեր, ո՞րքան զաւրաւոր է Հաւատ: Մարդ յերկրի Հրամայէր եւ Աստուած յերկինս Հաստատէր զիրսն: Մահկանացու բերան[ն] բարբառէր, եւ Աստուծոյ կամքն Հաւանէին՝ գործովքն Հաստատել զԲանն: Ապա ուրեմն երկնից փական են մահկանացու բերան[ն]՝ բարեպաշտ Հաւատով զարդարել: Եւ ի Հրեղէն կառս Համարձակեցաւ ելանել: Իբրեւ զթռչուն յերկնային կեանսն վերացաւ, եւ մինչեւ ցայժմ ո՛չ ճաշակեաց զմահ: Ո՛չ բնութեամբ աւրինաւք, այլ՝ շնորհաւք Միածնին եւ զաւրութեամբ Հաւատոցն: Եւ Ենոք անխոնարհելի պահեցաւ կենաց ի կեանս, մարմնով ամբարձեալ, մահու եւ ծերութեան Հաւատով յաղթեաց:

Որ էր պապուական ծառայ (Ղուկ. Է. 2):

Թէպէտեւ աւելաստացութիւն կենցաղոյս ծառայ արար, այլ բարեմիտ տէրն զազգակցութիւն բնութեանն ո՛չ ուրացաւ: Ո՛չ արհամարեաց իբրեւ զծառայ, այլ իբրեւ զհամազգիս իւր սիրէր: Մարդասիրութիւն զծառայութեան լուծն թեթեւացոյց: Ուսարուք ծառայակից տեարք, մի՛ իբրեւ զաւտար ի բնութենէս զծառայութիւն Համարիք եւ մի՛ իբրեւ ի թշնամիս յազգակիցն ո՛չ խնայէք: Հաւանեցարուք Պաւղոսի, որ ասէ. «Տարք, զհաւասարութիւն ծառայից քուք, յապաղելով զսպասնալիս. զիպելով, եթէ ձեր եւ նոցա Տէր գոյ յերկինս» (հմմտ. Կողոս. Դ. 1):

Ներեաց Աստուած ծառայ լինել, զի դու ուսանիցիս Աստուծոյ ծառայել: Բարեմիտ պահանջես զստրո՞ւկն, բարեմիտ դու առ Տէրն քո լիբ: Տանջես զմեղուցեալն եւ դու մի՛ մեղիցես, զի մի՛ տանջեսցիս յԱստուծոյ: Ո՛չ տաս թողութիւն Համազգոյն, եւ դու մի՛ խնդրէր թողութիւն ի Տեառնէ: Ուսարու՛ք եւ դուք մարդասիրա-

բար ծառայել Աստուծոյ: Որպէս դուք յԱստուծոյ Հայցէք մարդասիրութիւն, մարդասիրութեան մասն տո՛ւք ազգակիցին:

Իբրեւ լուա զՅիսուսէ (Ղուկ. Է. 3):

Զի՞նչ լուաւ. եթէ բանիւ բժշկէ, բանիւ սքանչելագործէ, բանիւ զմեռեալս կենդանացուցանէ եւ զդեւս Հանէ: Բանիւ զամենայն վճարէ, զի կենդանի է Բանն Աստուծոյ, զաւրաւոր եւ Հատու քան զամենայն սուր երկսարի: Ո՛չ բանջար դեղս մերձեցուցանէ, այլ բան ի նմանէ առաքի եւ գործն կատարի: Տե՛ս, որքա՞ն էր ի մէջ Հարիւրապետին եւ Հրէիցն զանազանութիւն: Քանզի ի սոսկ լսելոյն Հաւատաց եւ աղաչէր իբրեւ զԱստուած: Իսկ նոքա առաջի աչաց տեսանէին զսքանչագործն եւ ուրանային: Թէպէտ աչք քան զլսելիս Հզաւրագոյն է, այլ զչարութեան ախտ նախանձուն վարդապետ ունէին: Յաղագս այնորիկ կոյր դատաստանաւն զԱստուած ուրանային:

Առաքեաց զձերսն ի հրէից եւ աղաչեաց զնա (Ղուկ. Է. 3):

Կամեցաւ Հարիւրապետն երթալ, եւ արդելին զնա Հրէայքն բարեմարդիկ՝ ասելով. «Մեք երթամք եւ ամենք»:

Զի եկեսցէ ապրեցուցէ զծառայ նորա (Ղուկ. Է. 3):

Ո՛չ յաղագս արհամարհանաց ինչ հրաժարէր երթալ, այլ ինքն դանդաղէր յաղագս ինքեան պաղատել վասն մեծ պատուոյն Քրիստոսի: Գիտէր զինքն մարդ մահկանացու եւ զՅիսուս Աստուած յԱստուծոյ, Միածին, որ յանձնէ Հաւրէ, յերկեղածութենէ զիրիցունսն առաքէր: Զառաքելական հրամանսն նախքան զառաքեալսն կատարէր: Զարչարեսցի ոք՝ աղաւթեսցէ, բարեմտեսցի, սողմոս ասացէ: Հիւանդասցի ոք՝ կոչեսցէ զերիցունս եկեղեցոյն եւ աղաւթեսցեն ի վերայ նորա: Դու ընդ ախտակցութիւն առն սքանչացիր, զի զհիւանդ ծառայն ո՛չ արհամարհեաց, եւ որպէս վասն անձին ցաւոց ջանայ: Տեսանե՛ս, որքա՞ն առնէ փոյթ. բարեխաւս առաքէ վասն բժշկութեանն, զի գիտէր զԱստուած Տէր ինքեան եւ անձին նորա:



Եւ նորա եկեալ առ Յիսուս՝ աղաչէին զնա ստեպ եւ ասէին, թէ արժանի է, որում շնորհս զայս առնես, զի սիրէ զազգս մեր (Ղուկ. Է. 4-5):

Ո՛չ գիտէին գովել զայրն: Պարտ էր ասել ինքն կամեցաւ զալ եւ աղաչել: Եւ մեք իբրեւ տեսաք զվիշտս նորա, արգելաք զնա: Եւ այնպէս մարթ էր ցուցանել զնորա հաւատոցն առաքինութիւն, այլ ո՛չ կամէին վասն նախանձու յայտնել զհաւատս առն ճշմարիտ հաւատոցն, մտաց բարեաց նշանակ եւ աստուածապաշտութեան սէրն, որ առ Աստուած եւ առ մարդիկ՝ հարազատ խնամք: Վասնզի լրումն աւրինացն սէր է, զոր ունէր հարիւրապետն:

Եւ զժողովրդանոցս նա շինեաց մեզ (Ղուկ. Է. 5):

Որ առ Աստուած զբարեմտութիւն նշանակէ: Քանզի, որ զԱստուծոյ տունն կազմէ իբրեւ գերեւելի իմն արձան, եւ վասն Աստուծոյ սիրոյն զտաճարն զայն շինէ: Տե՛ս, զիա՞րդ բարեգործք ի կարեաց ժամու յիշատակին բազում համարձակութեամբ: Բարեգործութիւն ընձեռեն, վասնզի ամենայն ուրեք գեղեցիկ գործք բաւական են թախանձել: Եւ նոքա այսպէս աղաչէին: Իսկ Յիսուս ընդունէր զպաղատանսն՝ ո՛չ պատկառելով յիրիցանցն, այլ զհարիւրապետին զհաւատսն ընդունելով:

Եւ Յիսուս զնաց ընդ նոսա (Ղուկ. Է. 6):

Թերեւս հեղգագոյնս զնայր: Հանդարտութեամբ առնէր զգնացսն՝ ո՛չ յամելով ի բարեգործութիւն, այլ ժամանակ տալով, զի զհարիւրապետին զծածկեալ սէրն յայտնեսցէ՝ հրապարակատես առնելով զանհաւասարելի հաւատն ի յանդիմանութիւն անհաւատիցն, զի զպայծառ եւ զմաքուր եւ զյստակ բան նորա տարածեսցէ:

Եւ իբրեւ ոչինչ կարի հետի էր ի փանէն, յղեաց առ նա հարիւրապետն բարեկամս եւ ասէ. Տէ՛ր, մի՛ ինչ աշխար լինիր (Ղուկ. Է. 6):

Յառաջագոյն յուժարութեամբ առաքէր զիրիցունսն զայն առնելով, եւ ինքն կայր, մնայր եւ ներէր: Ի ներքս ի տանն զմտաւ անէր զորչափութիւն զանազան պատուոյն Յիսուսի եւ զծառայան առաքէր:

Չեմ բաւական, թէ ընդ հարկաւ իմով մտցես (Ղուկ. Է. 6):

Ո՛վ իմաստութիւն, ո՛վ արթուն միտք հարիւրապետին, ո՛չ զանխլացաւ ի նմանէ Աստուած ի մարմնի ծածկեալ: Տեսանէր զտաճարն եւ իմանայր զբնակիչն, ո՛չ անդիտացաւ զտէրն ի ծառայի կերպի, զթագաւորն՝ գերոյ զիմաւք, զփոքրն՝ անսահմանելի մեծութեամբ: Ընկալաւ միւս եւս յառաջագիմութիւն եւ զբարձրագոյն հոգւոյն մտածութիւն, որով ասէ.

Տէ՛ր, ո՛չ եմ բաւական (Ղուկ. Է. 6):

Որպիսի ոք էր եւ Պետրոս: Յորսոյ ձկանցն հիացաւ եւ ի միտէառ զմեծութիւն զաւրութեանն Քրիստոսի: Աղաչէր զնա եւ ասէր. «Ի բաց երթ յինէն, զի այր մեղաւոր եմ » (Ղուկ. Ե. 8): Եւ, որ յաղագս Պետրոսի է բանս, թողից այժմ եւ զղեւտացոցն ասացից զբորոտութիւն ախտին երգիւն եւ այրածք եւ պաղպաղմունք: Դժուարաւ բարձանելի են ախտքս այսոքիկ բազմաց, մանաւանդ ի սկզբան ախտին, որք կամէին քահանայիցն տեղեակ լինել: Ածէին արէնքն զքահանայն ի յորման տեղին, եւ անդ քննէր: Եթէ բորոտութիւն էր, ամենայն որ ի տանն կայր՝ պիղծ երեւէր: Յաղագս որոյ բազումք յառաջագոյն ի բաց հանէին զկարասին եւ ապա կոչէին զքահանայն: Զայն մտածութիւնն առեալ հարիւրապետին՝ հրաժարէր զմերձենալ նորա:

Ո՛չ եմ բաւական, թէ ընդ յարկաւ իմով մտանիցես (Ղուկ. Է. 6):

Յոլով ընդ յարկաւս ընդ այսմիկ գիտեմ զիմ մեղսն, հրաժարեմ ի դատաւորի գալստենէ: Նախքան ի բաց մաքրել, գիտեմ զքեզ ամենայն քահանայից առաջնորդ եւ Հաւր քահանայապետ: Եւ վասն այնորիկ ասացի. «Չեմ բաւական, թէ ընդ յարկաւ իմով մտցես»: Երկինք աթոռ են քո, երկիրս՝ պատուանդան ոտից քոց: Ո՞ր տուն տանի զանբովանդակելիդ: Ո՛չ ունիմ յարկ գերկինս, ո՛չ ունիմ թագաւորական ապարանս, եթէ զթագաւորդ երկնից ընկալայց: Զիա՞րդ ընդ ձեզուամբ իմով ընդունիմ, որ ի վերայ ջուրցն հարկ զվերնայարկս իւր: Զիա՞րդ աղքատ աւթեվանքս իմ տաղաւարակից ընկալցի, որ թզաւ գերկինս չափես (հմմտ. Ես. Խ 12), ո՞ր տեղի տանի, ո՞ր գերկինս եւ գերկիր լնուս: Որպէս ի բարեգործ ի մուտ փափագիմ, իբրեւ ի դատաւորի գալստենէ զարհուրիմ: Այցելու ես հոգոց, քննիչ ես իրիկամանց, դատաւոր ես մեղաւորաց: Երկեայ յինէն:



Լուարո՛ւք այժմ, որ զՔրիստոս ընդունելոց եմք: Լուիցուք եւ նախանձաւորք լիցուք, քանզի մարթի եւ այժմ ընդունել զնա:

Ասա՛ բանիւ, եւ բժշկեսցի մանուկս իմ (Ղուկ. Է. 7):

Բանիւ միայն ասաց, եւ գործքն կատարին: Յայտնապէս գիտաց, եթէ բանիւ Տեառն երկինք Հաստատեցան եւ Հոգով բերանոյ նորա ամենայն զաւրութիւնք նոցա: Եւ ամենայն եղեալք բանիւ նորա յարմարեալ լինին, վասնզի աստուածային ծանաւթութեամբն լուսաւորեալ էր այրն: ԶՅիսուս ի մարմնի տեսանելով՝ զնոյն եւ Որդի Աստուծոյ ճանաչէր: Գիտաց, զոր ինչ յառաջագոյն ասաց Սողոմոն յաղագս Քրիստոսի. «Ոչ բանջար եւ այլ դեղ բժշկեաց ժողովորդս քո, այլ բանք քո Տէր, որ զամենայն բժշկէ» (Իմաստ. ԺԶ. 12): Գիտեմ, զո՞ր բան խաւսիս եւ զորքա՞ն ստացեալ ես զաւրութիւն: Զի բանք քո զամենայն՝ արարեալ կատարեաց: Ո՛չ վշտացաւ Հայր ի ծնանելն զքեզ, ո՛չ վտանգիս առնելով, ո՛չ աշխատիս գործելով: Վասնզի բանք քո առ ամենայնն զիւրազնար գտանի: Ո՛չ զաւղ հնչեցուցանէ, այլ զքո կամսդ յայտնէ: Տո՛ւր նշանակ Հաւանութեան լսողաց: Տե՛ս զիմաստութիւնն, զերթալն աղաչել յապաղէր: Գիտութիւն նորա վկայէր եւ ի մտանելոյն հրաժարէր:

Զի ես այր մի եմ՝ ընդ իշխանութեամբ կարգեալ (Ղուկ. Է. 8):

Զի եթէ ես, որ մարդս եմ եւ ընդ իշխանութեամբ այնչափ ձեռնահաս եմ, որչա՞փ դու, որ Տէրդ ես եւ Աստուած եւ չես ընդ իշխանութեամբ: Զի թէ ես, որ հանգիտապատիւս եմ եւ ընդ իշխանութեամբ եմ, սակայն վասն սակաւ իշխանութեան առաքելութեանս, զոր հրամայեմ, այն լինի: Զայնպիսի իմաստութիւնն մտածութիւն փոխեաց յայլ մեծագոյնս, զի ի զաւրութիւն յառաջանայր եւ աղբիւրանայր ի նմանէ իմաստութիւնն: Մանկանայ ի տեսութեանցն յաճմունսն: Գիտեմ, զի քան զամենեցուն իշխանութիւնս գերազանցեալ ես զհրեշտակաց եւ այլոց աներեւութից, եւ իբրեւ զմի ի բազմաց եկիր առ մեզ մերով բնութեամբս, եւ զամենեցուն ունիս զիշխանութիւն: Ըստ մարգարէին. «Նրամանի քում մնայ փիւ, զի ամենեքին ծառայ քո են» (Սաղմ. ԸԺԸ. 91): Ննջես եւ ծով ամբոխի յառնես՝ եւ խաղաղանայ ալիք, սաստես՝ եւ խաղաղանան հողմք: Զմեռեալս կոչես, եւ արագագոյն լսեն քեզ քան զկենդանիս:

Ունիմ ընդ ինեւ զինուորս կարգեալ (Ղուկ. Է. 8):

Թուի, թէ զերկնից զաւրացն ասէ առաքեալ զմի ի հրեշտակացն: Ասէ. «Եւ բժշկեա՛ զմանուկս իմ» (Է. 7): Զի եթէ ախտ եւ մահ եւ այլն ամենայն ինչ այսպէս հնազանդին նմա, որպէ՞ս իւր զինուորքն, որ կան ի հնազանդութեան նմա զիւրաքանչիւր ումեք: Զանձնիշխանական յարձակումն նշանակէ ի լաւագոյնսն եւ ի վատթարագոյնսն: Զփոփոխումնն յայտնէ, որք ի մարդկանէ զանազանք, եւ որջացեալ խորհուրդս: Ըստ Պաւղոսի. «Նաճեալ եմ ընդ աւրեւնսն Աստուծոյ, ըստ ներքին մարդոյն: Տեսանեմ միս արեւս ընդդէմ զինուորեալ արիւնաց իմոց եւ գերեալ զիմսն արին արն մեղաց» (Տոմ. Է. 22-23): Որպէս յիրաւի, ուրեմն, ասէր զինուորս ո՛չ Հակառակ ինձ, այլ՝ ընդ ինեւ: «Ասեմ սմա երթ՝ եւ երթայ, եւ այլում թէ եկ՝ եւ գայ» (Ղուկ. Է. 8): Տե՛ս, զիա՞րդ եցոյց, եթէ մահու իշխէ իբրեւ ծառայի եւ հրաման տայ իբրեւ զՏէր: Տեսանե՛ս որչա՞փ էին հաւատք առն, զոր ինչ յետոյ ամենեցունց յայտնի լինելոց էր: Զայն անդէն առժամայն ասէր, եթէ իշխանութիւն ունի կենաց եւ մահու իջուցանել ի դժոխս եւ հանել յերկինս: Բայց ես ո՛չ իշխիմ, այլ իշխեմ խորհրդոցս: Թուի, թէ Հարիւրապետն վասն այնորիկ կոչեցեալ էր իբրեւ իշխան եւ ինքնակալ խորհրդոցս. զոմանս ի բաց խլեմ, ոմանց ի տեղին կարգել հրամայեմ, արտաքս հանեմ զվատթարսն, ի ներքս կոչեմ զբարիսն, մերժեմ զչարութիւն, մուծանեմ զառաքինութիւն: Որպէս Դաւիթ ասէ. «Խոտորեա՛ ի ջարէ եւ արա՛ զբարի» (Սաղմ. ԼԳ. 15): Զի թէ ո՛չ փոխես զչար խորհուրդս, ո՛չ կարես ի ներքս մուծանել զառաքինութիւն: Քանզի ո՛չ կարէ հարազատ ամուսին ընդ հարձին բնակել:

Ծառայի իմում թէ արա՛ զայս՝ եւ առնէ (Ղուկ. Է. 8):

Ո՛չ զինուորաց միայն ճառէ, այլեւ զծառայից, որ մեծ հնազանդութեան նշանակ է: Սակայն, որ այնչափ հաւատս ունէր, զանձն անարժան համարէր: Իսկ Քրիստոս ցուցանէ, թէ արժանի է, եւ ի տունն յուժարեաց երթալ: Եւ զառաւելագոյնսն արար, զի զարմանայր ընդ հաւատս առն: Զի ասէր, թէ ո՛չ մարմնական ախտից ծառայեմ, ո՛չ որովայնի ծառայեմ, ո՛չ հեշտութեան հաւանիմ, ո՛չ մոլորեցուցանէ զիս արբեցութիւն, ո՛չ յաղթիմ յանաւրէն սիրոյն: Աւրինաւք Աստուծոյ յարգարեմ զխորհուրդս: Որպէս քաջ երեսանակակալ ո՛չ թողում արտաքոյ զանարժան խորհուրդս, այլ բարեպաշտութեամբ վարեմ զ[ը]նթացս:



Հուարո՛ւք այժմ, որ Վրիստոս ընդունելոց եմք: Հուիցուք եւ նախանձաւորք լիցուք, քանզի մարթի եւ այժմ ընդունել զնա:

Ասա՛րանիւ, եւ բժշկեսցի մանուկս իմ (Ղուկ. Է. 7):

Բանիւ միայն ասաց, եւ գործքն կատարին: Յայտնապէս գիտաց, եթէ բանիւ Տեառն երկինք հաստատեցան եւ Հոգով բերանոյ նորա ամենայն զաւրութիւնք նոցա: Եւ ամենայն եղեալք բանիւ նորա յարմարեալ լինին, վասնզի աստուածային ծանաւթութեամբն լուսաւորեալ էր այրն: Ձօրսուս ի մարմնի տեսանելով՝ զնոյն եւ Որդի Աստուծոյ ճանաչէր: Գիտաց, զոր ինչ յառաջագոյն ասաց Սողոմոն յաղագս Վրիստոսի. «Ո՛չ բանջար եւ այլ դեղ բժշկեաց ժողովորդս քո, այլ բանք քո Տէր, որ զամենայն բժշկի» (Իմաստ. ԺԶ. 12): Գիտեմ, զո՞ր բան խաւսիս եւ զորքա՞ն ստացեալ ես զաւրութիւն: Ձի բանք քո զամենայն՝ արարեալ կատարեաց: Ո՛չ վշտացաւ Հայր ի ծնանելն զքեզ, ո՛չ վտանգիս առնելով, ո՛չ աշխատիս գործելով: Վասնզի բանք քո առ ամենայն զիւրահնար գտանի: Ո՛չ զաւղ հնչեցուցանէ, այլ զքո կամսդ յայտնէ: Տո՛ւր նշանակ հաւանութեան լսողաց: Տե՛ս զիմաստութիւնն, զերթալն աղաչել յապաղէր: Գիտութիւն նորա վկայէր եւ ի մտանելոյն հրաժարէր:

Ձի ես այր մի եմ՝ ընդ իշխանութեամբ կարգեալ (Ղուկ. Է. 8):

Ձի եթէ ես, որ մարդս եմ եւ ընդ իշխանութեամբ այնչափ ձեռնահաս եմ, որչա՞փ դու, որ Տէրդ ես եւ Աստուած եւ չես ընդ իշխանութեամբ: Ձի թէ ես, որ հանգիտապատիւս եմ եւ ընդ իշխանութեամբ եմ, սակայն վասն սակաւ իշխանութեան առաքելութեանս, զոր հրամայեմ, այն լինի: Ձայնպիսի իմաստութիւնն մտածութիւն փոխեաց յայլ մեծագոյնս, զի ի զաւրութիւն յառաջանայր եւ աղբիւրանայր ի նմանէ իմաստութիւնն: Մանկանայ ի տեսութեանցն յաճմունսն: Գիտեմ, զի քան զամենեցուն իշխանութիւնս գերազանցեալ ես զհրեշտակաց եւ այլոց աներեւութից, եւ իբրեւ զմի ի բազմաց եկիր առ մեզ մերով բնութեամբս, եւ զամենեցուն ունիս զիշխանութիւն: Ըստ մարգարէին. «Նրամանի քում մնայ քիւ, զի ամենեքին ծառայ քո են» (Սաղմ. ԸԺԸ. 91): Ննջես եւ ծով ամբոխի յառնես՝ եւ խաղաղանայ ալիք, սաստես՝ եւ խաղաղանան հողմք: Ձմեռեալս կոչես, եւ արագագոյն լսեն քեզ քան զկենդանիս:

Ունիմ ընդ ինեւ զինուորս կարգեալ (Ղուկ. Է. 8):

Թուի, թէ զերկնից զաւրացն ասէ առաքեայ զմի ի հրեշտակացն: Ասէ. «Եւ բժշկեա՛ր զմանուկս իմ» (Է. 7): Ձի եթէ ախտ եւ մահ եւ այլն ամենայն ինչ յայսպէս հնազանդին նմա, որպէ՞ս իւր զինուորքն, որ կան ի հնազանդութեան նմա զիւրաքանչիւր ումեք: Ձանձնիշխանական յարձակումն նշանակէ ի լաւագոյնսն եւ ի վատթարագոյնսն: Ձփոփոխումնն յայտնէ, որք ի մարդկանէ զանազանք, եւ որջացեալ խորհուրդս: Ըստ Պաւղոսի. «Նաճեալ եմ ընդ ալբէնիսն Աստուծոյ, ըսք ներքին մարդոյն: Տեսանեմ միս արեւս ընդդէմ զինուորեալ արինաց իմոց եւ գերեալ զիմսն արին արն մեղաց» (Ղոմ. Է. 22-23): Որպէս յիրաւի, ուրեմն, ասէր զինուորս ո՛չ հակառակ ինձ, այլ՝ ընդ ինեւ: «Ասեմ սմա երթ՝ եւ երթայ, եւ այլում թէ եկ՝ եւ գայ» (Ղուկ. Է. 8): Տե՛ս, զիա՞րդ եցոյց, եթէ մահու իշխէ իբրեւ ծառայի եւ հրաման տայ իբրեւ զՏէր: Տեսանե՛ս որչա՞փ էին հաւատք առն, զոր ինչ յետոյ ամենեցունց յայտնի լինելոց էր: Ձայն անդէն առժամայն ասէր, եթէ իշխանութիւն ունի կենաց եւ մահու իջուցանել ի դժոխս եւ հանել յերկինս: Բայց ես ո՛չ իշխիմ, այլ իշխեմ խորհրդոցս: Թուի, թէ հարիւրապետն վասն այնորիկ կոչեցեալ էր իբրեւ իշխան եւ ինքնակալ խորհրդոցս. զոմանս ի բաց խլեմ, ոմանց ի տեղին կարգել հրամայեմ, արտաքս հանեմ զվատթարսն, ի ներքս կոչեմ զբարիսն, մերժեմ զչարութիւն, մուծանեմ զառաքինութիւն: Որպէս Դաւիթ ասէ. «Խոսորեա՛ր ի չարէ եւ արա՛ զբարի» (Սաղմ. ԼԳ. 15): Ձի թէ ո՛չ փոխես զչար խորհուրդս, ո՛չ կարես ի ներքս մուծանել զառաքինութիւն: Քանզի ո՛չ կարէ հարազատ ամուսինն ընդ հարձին բնակել:

Ծառայի իմում թէ արա՛ գայս՝ եւ առնէ (Ղուկ. Է. 8):

Ո՛չ զինուորաց միայն ճառէ, այլեւ զծառայից, որ մեծ հնազանդութեան նշանակ է: Սակայն, որ այնչափ հաւատս ունէր, զանձն անարժան համարէր: Իսկ Վրիստոս ցուցանէ, թէ արժանի է, եւ ի տունն յուժարեաց երթալ: Եւ զառաւելագոյնսն արար, զի զարմանայր ընդ հաւատս առն: Ձի ասէր, թէ ո՛չ մարմնական ախտից ծառայեմ, ո՛չ որովայնի ծառայեմ, ո՛չ հեշտութեան հաւանիմ, ո՛չ մոլորեցուցանէ զիս արբեցութիւն, ո՛չ յաղթիմ յանաւրէն սիրոյն: Աւրինաւք Աստուծոյ յարգարեմ զխորհուրդս: Որպէս քաջ երեսանակակալ ո՛չ թողում արտաքոյ զանարժան խորհուրդս, այլ բարեպաշտութեամբ վարեմ զ[ը]նթացս:



**Իրրեւ լուաւ Յիսուս, զարմացաւ** (Ղուկ. Է. 9):

Յիսուս զարմացաւ վաղվաղակի ընդ հաւատս առն, եւ յայտնի ամենեցուն քարոզէր, եւ մեծ եւս քան զոր խնդրեաց՝ արար: Եկն մարմնաւոր առողջութիւն մանկանն, առ զերկնից արքայութիւնն եւ չոգաւ:

**ԵՓ Աստուած զարմացաւ վասն մարդոյն, մինչդեռ ամենայն ժողովուրդն մաւտ կայր, յաւրինակ այլոցն, զի նմանող լինիցին:**


**Զի ո՛չ յիսրայէղ այսպիսի հաւաքս գրի: Եւ դարձան անդրէն պարզամաւորքն եւ գրին զծառայն հիւանդ բժշկեալ** (Ղուկ. Է. 9-10):

**ՈՎ Զի զհրէայսն յամաւթ արասցէ, զի ո՛չ հաւատային ի նա իբր ատար, քանզի հարիւրապետն չէր ի նոցանէ:** Եւ մեծ իսկ է առն հեթանոսի այնպէս իմաստանալ, որում տերունական Բանն վկայեաց ծայրագոյն հաւատոց նորա: Քանզի զքաջութիւն հոգոյ նորա տեսանելով, որ ցաւակից երեւեցաւ ծառային, հաւատաց անախտի Փրկիչն: Հրէայքն տաղտկային ընդունել զՔրիստոս Աստուած, եւ սա ճանաչէր զբարեգործն, գիտաց զզաւրութիւն նորա, որով պայծառացան զուարթունք: Գիտաց զԱստուծոյ Բանն, զանձնին Հաւր զՄիածին Որդին Յիսուս:

**ԵՓ Առ ամ զնոսա, զի լինիցին բարեխաւսք նորա, եւ զտին կշտամբեալք, զի ո՛չ էր ի նոսա հաւատք նորա:**

**ԿՐ Որոց պարտ էր ըստ աւրինաց[ն] եւ մարգարէիցն, որք վասն իմ գուշակեցին փութալ ձեզ ի հաւատս.** «Ո՛չ գրի այսքան հաւաքս յիսրայէղ»:

**Ոկ. Ոմանք ի նահապետացն ասեն:** Տե՛ս, զիա՞րդ զիւրաքանչիւր ոք զմեր հաւատոցն կշռէ զսէրն: Համեմատելով փորձէ զբարեմտութեան զչափն, զի հր[է]այքն ասէին, թէ ժանդացուցէր զհայրենի ճոխութիւն[ն]: Իսկ հարիւրապետն խոստովանէր զՅիսուսի զիշխանութիւն եւ զամենաճոխութիւն, ո՛չ ուրանայր առ ծառայն ախտակից եղեալ, եւ առատ ընկալաւ զԱստուծոյ գիտութիւն եւ զերկնի վայելումն:



#### 4. ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆՆ ԶՈՔԱՆՉԻՆ ՊԵՏՐՈՍԻ Մաթթէոս Ը. 14-15

#### ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՒ ԵՓՐԵՍ

Իրրեւ եկն Յիսուս ի փուն Պետրոսի, երես, զի զոքանչ Պետրոսի փազնապեալ դնէր փապացեալ շերմամբ (սմսր. Մաթթ. Ը. 14):

Մարկոս զվաղվակին յաւել կամի եւզժամանակն ցուցանել (փնս Մարկ. Ա. 29-30), իսկ սայ զնշանացն միայն եղ, եւ զժամանակն ոչինչ նշանակեաց: Բայց այլքն ասեն, թէ աղաչեաց զՆա ախտացեալն: Այլ սայ եւ զայն եւս լռեաց: Այս ոչ եթէ երկբանութիւն ինչ է, այլ մին համառաւտ եւ միւսն ճշմարիտ պատմէ:

Եւ զի եմուտ տունն Պետրոսի, թուի ինչք, թէ վասն կերակուր ճաշակելոյ, քանզի եւ այն իմն յայտ առնէ ասելով, թէ յոտն եկաց եւ պաշտէր զնայ: Բայց դուս աստ միտ դիր Պետրոսի, զիա՞րդ ակնածէր ի նմանէ հիւանդ այսպիսի ջերմացեալ ի տան ունէր եւ ոչ իշխէր ստիպել տանել զնայ ի տուն, այլ կայր մնայր մինչեւ վարդապետութիւնն կատարեսցէ եւ զայլսն զամենեսեանն բժշկեսցէ եւ ապա յորժամ եմուտ Նայ անդր, յայնժամ աղաչեաց, ի սկզբանէ իսկ այնպէս խրատեալ էր. զի մի զանձն մեծար, զի քան զայլսն առնիցէ, ապայ ուրեմն որ նա զՆայ իտուն ամ, այլ ինքն իւրովին եկն: Եւ դու մի՛տ դիր, որպիսի ինչ յարկք էին որսորդացն, բայց սակայն չգարչէր երթալ ի խուղն մտանել, զի զքեզ խրատեսցէ կոխել զմարդեղէն հպարտութիւնս, արդ մերձեալ ի մարմինն ոչ միայն զջերմն ցածուցաներ, այլ եւ կատարեալ առողջութիւն շնորհէր:

Նորայ նշան բժշկութեամբն զզաւրութիւնն ցուցանէր, զիտէք իսկ, զի եւ յետ թողլոյ ջերմանն, բազում ժամանակք ծախին ախտացելոյն մինչեւ յառաջին առողջութիւնն կազուրեցսցին, այլ անդ ամենայնն միանգամայն լինէր:



**ՅՈՎՆԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ**

(Գլուխ Ը)

Եւ եկեալ Յիսուս ի փուն Պեփրոսի՝ երես, զի զորանց նորա անկեալ դներ փապացեալ: Կալաւ զձեռանէ նորա, եւ եթող զնա ջերմն. յօրն եկաց եւ պաշտէր զՆա (Մարթ. Ը. 14-15):

Սովորութիւն էր Տեառն մերոյ երբեմն զաստուածութիւնն ծանուցանել եւ երբեմն զմարդկութիւնն, զոր ունէր աննիազաբար: Արդ ոչ գնալով ի տուն Հարիւրապետին՝ յայտնապէս աստուածութեանն է ցոյց, որ ամենայն ուրեք է եւ զՀանդէս գործոց վճարէ: Իսկ այժմ ի տուն Պետրոսի եկեալ եւ զտապացելոյն ձեռանէ կալեալ իբր զմարդասէր բժիշկ՝ զմարդկային խոնարհութիւնն նշանակէ, որպէս երբեմն ի վերայ ալեաց ընթանայր եւ երբեմն նաւու վարէր, զի ցուցանէր, թէ ճշմարիտ Աստուած է եւ ճշմարիտ մարդ: Բայց Մարկոս յաւելու ի յասացեալս, թէ վաղվաղակի եկն ի տուն Սիմոնի եւ թէ աղաչեցին զՆա վասն նորա (փն՝ Մարկ. Ա. 29), իսկ Մատթէոս Համառօտ ասէ, քանզի նա զժամանակն եւս կամի պատմել, իսկ սա՝ զնշանսն միայն: Բայց ի տուն նորա մտանել ինձ թուի վասն կերակուր իմն ընդունելոյ. յայտ յայնմանէ է, զի ասէ. «Յոտն եկաց եւ պաշտէր զՆա». այլ նախ ի Տեառն վայելեցին պարգեւս եւ ապա զՊարգեւատուն կերակրեցին: Իմա ինձ եւ զՊետրոսի ակնածելն, թէ ո՛րպիսի Հիւանդ ունէր ի տան, բայց ո՛չ իշխէր մուծանել զՆա ի տուն, այլ կայր մնայր մինչ զվարդապետութիւնն կատարեսցէ եւ զայլսն բժշկեսցէ, քանզի այսպէս խրատեալ էր ի սկզբանէ՝ մի՛ զանձն մեծարգի քան զբազմաց փրկութիւն Համարել: Իսկ յորժամ եմուտ ի տուն Իւրովի, աղաչեցին վասն նորա, եւ բժշկեաց: Նախ՝ զմարդկութիւնն եւ ապա զխոնարհութիւնն ծանոյց, քանզի թէ ո՛րպիսի յարկք էին որսորդացն, սակայն ո՛չ զարշէր երթալ, որպէս զի զքեզ խրատեսցէ կոխօղ լինել մարդկեղէն փառաց: Եւ երկրորդ՝ զգօրութիւն աստուածութեանն ցուցանէ՝ ոչ միայն բժշկութեամբն, այլեւ նորանշան առողջութեամբն, մինչ զի զօրացեալ պաշտէր զնոսա: Քանզի գիտէ ամենայն ոք, զի յետ թողլոյ ջերմանն բազում ժամանակք ծախին ախտացելոցն, մինչեւ յառաջինն ելանէ զօրութիւնն, իսկ անդ ամենայնն միանգամայն լինէր: Իսկ զձեռանէ ըմբռնելն՝ զի մի՛ յայլ ումեքէ, այլ ի Նմանէ՛ ծանիցի բժշկութիւնն:

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՅԻ**

(Երրորդ հապոր. գլուխ Բ)

/ «Ջոքանց Պեփրոսի»: Յերկոյտասանիցն երեքն կոյսք էին: Յոհաննէս եւ Յակովբոս՝ եղբայր նորին, եւ Թովմաս, իսկ այլքն՝ ամուսնացեալք: Անուն ասեն կնոջն Պետրոսի՝ Սոփի եւ Անդրէի՝ Անատոլիայ:

«Ջերմացաւ»: Շարժումն է մաղձին, որ ի մարմինն զզո՞ղումն տայ, եւ ի գլուխն՝ տենդ: Եւ մասն ինչ դիւական է եւ յայտ է ի չորից: Նախ՝ զի՞ զողաց: Բ. երրորդ՝ զի՞ ժամ առնի: Գ. երրորդ՝ զի՞ կապի, եթէ սրբոյ անուամբ կամ դիւաց: Դ. երրորդ՝ զի ասէ Նարեկացին. «Սաստեա՛ դիւական փենդիս» (Տե՛ս Գրիգոր Նարեկացի. Մարտան ողբերգութեան, Բան ԻԸ, Է):

Հարց. Վասն է՞ր եմուտ ի տունս Պետրոսի:

Պատասխանի. Նախ՝ վասն սքանչելեաց: Երկրորդ՝ վասն կերակրոյ, զի յոտն եկաց եւ պաշտէր, ասէ: Եւ տե՛ս, զի ընդ երեկս ճաշակէին:

**Ղուկաս Դ. 38-40**

**ԻԳՆԱՏԻՈՍ**

(Գլուխ Դ)

Գայ այնուհետեւ խոնարհութեամբ ազանել յանարգ տունն Սիմոնի եւ զջերմամբ տազնապեալ կինն յարուցանէ՝ սպասաւորել նոցա:

**ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ**

(Գլուխ Դ)

Յարուցեալ ի ժողովրդենէն՝ եմուտ ի փուն Սիմոնի: Եւ զորանցն Սիմոնի փագնապէր ջերմամբ (Ղուկ. Դ. 38-39):

ՅՆ Բայց դու միտ դիր Պետրոսի, զիա՞րդ ակնածէր ի Յիսուսէ: Այսպիսի Հիւանդ ունելով՝ չիշխէր ստիպել տանել զնա ի տուն, այլ կայր մինչեւ զվարդապետութիւնն կատարեսցէ եւ զայլս բժշկեսցէ:



**Աղաչեաց զնա վասն նորա** (Ղուկ. Դ. 39):

Յորժամ ի տունն եմուտ Յիսուս, ապա աղաչեաց, զի ի սկզբանէ այնպէս խրատեալ էր Պետրոս զանձն ո՛չ մեծ համարել, քան զայլսն: Ապա ուրեմն ինքն Յիսուս իւրովի եկն: Տե՛ս, որպիսի՞ յարկք էին որսորդացն, բայց սակայն Յիսուս ո՛չ գարշեցաւ երթալ ի խուղն, զի զմեզ խրատեսցէ կոխել զհպարտութիւն[ն]:

Մատթէոս ասէ. «Կալալ զձեռանէ նորա եւ եթող զնա քերմն» (Մատթ. Ը. 15):

**Իսկ Ղուկաս.** «Սաստեաց, եւ վաղվաղակի պաշտէր զնա» (Ղուկ. Դ. 40):

Կատարեալ առողջութիւն շնորհէր նմա: Նորանշան բժշկութեամբ զգաւրութիւն իւր ցուցանէր: Գիտէք, զի յետ թողոյ ջերմանն բազում ժամանակաւ զայ ի կատարեալ առողջութիւն, իսկ անդ փոյթ ընդ փոյթ լինէր:



### 5. ԲԺՇԿՈՒԹԻՒՆՔ Ի ԿԱՓԱՌՆԱՅՈՒՄ

Մատթ. Ը. 16-18

#### ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՎ ԵՓՐԵՄ

Իբրեւ եղև երեկոյ, մաքուցեն առ նայ դիւահարս բազումս եւ եկան զայսն բանիւ (Մատթ. Ը. 16):

Տեսանե՞ս զի բազումք այնուհետեւ աճէին ի հաւատոս, եւ զի ոչ յայնժամու անսային թափել ի նմանէ: Եւ դու միտ դիր, որչափ զբազում բժշկելովքն զանց առնեն աւետարանիչքն, զի որ մի ըստ մի/ոջէ պատմեն, այլ միով բանիւ զբազում սքանչելեաւքն վազեն: Եւ զի մի բազմութիւն սքանչելեացն ի թերահաւատութիւն զոք ածիցեն, ածէ զմարգարէն Եսայի վկայ թէ՛ նայ զդոյն ասաց: Նայ, ասէ, զհիւանդութիւնս մեր էառ եւ զցաւս մեր վերացոյց: Զոր վասն մեղաց թուի ինձ, ասաց մարգարէն, որում եւ Յովհաննէս միաբան բարբառի, թէ՛ «Ահաասիկ գառն Աստուծոյ, որ բառնայ զմեզ աշխարհի» (Յովհ. Ա. 29): Բայց թէ աւետարանիչն աստ վասն ցաւոց ճառեաց, կամ ըստ իրացն զվկայութիւն ընթեռնու եւ կամ յայտ առնէ, թէ բազում ցաւք ի մեղաց ոգոցն լինին:

[Հարց.] Ընդէ՞ր զժողովուրդն հրամայէ երթալ յանկոյս ծովուն:

[Պատասխանի.] Զայս այսպէս առնելով խրատէ՛ զմեզ խոնարհել եւ զհրէիցն նախանձն ցածուցանել: Եւ զի մի ի ցոյցս ինչ գործիցեմք, ոչ զմարմինսն եւեթ բժշկէր, այլեւ զհոգին ածէր յուղղութիւն, զի երկոքումք ցուցանիցէ զանձն, թէեւ զցաւս բժշկէ եւ ի ցոյց ինչ ոչ գործէ, քանզի էին բազումք բեւեռել ընդ սէր նորա, զի եւ տեսանել կարաւտէին, եւ լսել ցանկային եւ զի ով ոք ոչ կարաւտէր, գոնեայ զերեսս նորա տեսանել եւ զբերանն, որ այնպէս քաղցր բարբառէր, զի ոչ ը/միայն նշանաւքն էր զարմանալի, այլ այլազգ իմն ունէր շնորհս: Եւ զայս եւ մարգարէն յայտ արարեալ ասէր, թէ վայելուչ է զեղով քան զորդիս մարդկան (հմմտ. Մաղմ. ԽԴ. 3-5), թէպէտ եւ Եսայի ասաց, թէ ոչ գոյր նորա տեսիլ եւ ոչ զեղ, ըստ աստուածութեանն անճառ եւ անպատում փառացն, ասաց, եւ կամի չարչարանսն հայեցեալ պատմէ զանարգութիւնն, զոր կրեաց



ի խաչելութեան ժամուն (հմմտ. Եսայի ԾԳ. 1-3) եւ կամ՝ վասն աղքատութեան կերպարանացն զոր եցոյց աւելի քան զամենեսան: Եւ ոչ նախ հրամայեաց երթալ յայնկոյս ծովուն, յառաջ քան զբժշկելն, նայ եւ առնուին ոչ յանձն, զոր աւրինակ եւ ի լերինն, այլ միայն յորժամ հրապարակախաւս լինէր կային մաւտ առ Նայ, այլ մինչ լուռն կայր, անսա[յ]ին, նոյնպէս եւ աստ՝ ոչ միայն յորժամ սքանչելիսն գործէր, յամէին առ նմայ, այլ՝ յորժամ եւ զաղարէր:

Եւ ի տեսլենէ երեսացն աւելի իմն շահէին, զի թէ Մովսիսի երեսքն փառաւորեցան (հմմտ. Ելից ԾԾԲ. 29) եւ Ստեփաննոսին ի հրեշտակի դէմս փոխեցան (հմմտ. Գործք Է. 55), ապայ ի միտ առ զհասարակաց Տէրն, որպիսի զիմաւք պատշաճ երեւեալ:

**ՅՈՎՀԱՆՆԵՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ**

(Գլուխ Ը)

Իբրեւ երեկոյ եղեւ, մաքրուցին առ Նա դիւահարս բազումս, եւ եհան զայսն բանիւ եւ զամենայն հիւանդսն բժշկեաց: Զի լցցի բանն, որ ասացաւ ի ձեռն Եսայեայ մարգարէի. «Նա զհիւանդութիւնս մեր վերացոյց եւ զցաւս մեր երարծ» (Մատթ. Ը. 16-17):

Ի սքանչելեացն յաճախութենէ բազումք անէին ի հաւատս, մինչ զի եւ տարածամ ժամուն անցանել ոչ անսային: Այլ հայեաց դու ընդ այն, թէ ո՛րպէս աւետարանիչքն զբազմօք սքանչելեացն զանց առնեն եւ միոյն պատմութեամբ զյոլովս պարունակեն՝ ըստ այնմ. «Ո՛չ կարէ աշխարհս րանել զգիրսն, որ թէ գրեալ էին» (հմմտ. Յովհ. ԻԱ. 25), եւ զի մի՛ ոք երկմտիցի, ածէ զմարգարէն վկայ, թէ ի վաղնջուց այս ասացեալ է. «Նա զհիւանդութիւնս մեր վերացոյց եւ զցաւս մեր երարծ» (հմմտ. Ես. ԾԳ. 4): Արդ՝ զայս վասն մեղաց ինձ թուի ասացեալ մարգարէին, որպէս վկայէ եւ Յովհաննէս թէ՛ «Դա է Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեզս աշխարհի» (Յովհ. Ա. 29): Իսկ թէ աւետարանիչս վասն ցաւոցն ճառեաց՝ կամ թէ ըստ իրացն զվկայութիւնն ի մէջ բերեալ ընթեռնու, կամ թէ յայտ առնէ, թէ բազում ցաւք ի մեղաց ողբոց պատահին:

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՅԻ**

(Երրորդ հարոր. գլուխ Բ)

/Հարց. Զի՞նչ է նորա նշան զօրութիւն:

Պատասխանի. Առողջութիւն կամ հիւանդութիւն մարմնոյն, մասն մասն զաւրանան ի մարդն: Որպէս լոյս լուսնին, որ մասամբ ածէ եւ նուազէ: Որպէս լոյս արեւուն համանգամայն փարատէ զխաւար եւ լուսաւորէ: Այսպէս եւ շնորհքն ի նոյն ժամն //սրբէ զմեզս եւ արդարացուցանէ զհոգին:

**Ղուկաս Դ. 41-42**

**ԻԳՆԱՏԻՈՍ ՍԵԲԵՆԵՌՆՅԻ**

(Գլուխ Դ)

Եւ ի տարածամ ժամուն յայնմիկ ամենայն բազմութիւնն, որ չարչարեալք էին, զորս զիւրաքանչիւր ոք աւետարանիչք անկարացան զրել՝ մատեան եւ ամենակատար զաւրութիւն, ամենեցուն միանգամայն տայ զփրկութիւն՝ այնքան զաւրացեալ, զի եւ դեւք ի բազմաց ելեալք, խոստովանէին, թէ Որդի է Աստուծոյ:

**ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ**

(Գլուխ Դ)

Եւ ընդ արեւուն մտանելն, հիւանդք ի պեսպես ցաւս, դներ ձեռն եւ բժշկէր (Ղուկ. Դ. 41):

Տեսանե՞ս, զի բազումք գային ի հաւատս, զի ո՛չ յայնմ ժամու մեկնէին ի նմանէ: Եւ միտ դիր, որպէ՞ս [զ]բազում սքանչելեաւքն վազեն աւետարանիչքն, զի ո՛չ մի ըստ միոջէ պատմեն:

Ելանէին դերսն եւ աղաղակէին. Դո՛ւ ես Որդի Աստուծոյ (Ղուկ. Դ. 42):

ԻԳ Այնքան զաւրութիւն եցոյց՝ տանջելով զդեւս, մինչ [եւ յ]ակամայ խոստովանէին զնա գոլ Որդի Աստուծոյ: Զի լուեալ էր եւ նոցա, թէ՛ «Գալոց է, որ զցաւս մարդկան բժշկէ» (հմմտ. Եսայի ԾԳ. 4)՝ ըստ Եսայեայ:





## 6. ՀԱՆՐԱՐՏՈՒՄ ԱԼԵԿՍԱՆԴՐՈՍԻ

Մաթթ. Ը. 23-27

### ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՆԵՅԻ

(Գլուխ Զ)

Եւ մտնալ ի նաւ, գնացին զհետ նորա աշակերտքն նորայ: Եւ ահա շարժումն մեծ եղեւ ի ծովուն՝ որպէս նաւին ծածկել յալեացն եւ ինքն ննջէր (հմմտ Մաթթ. Ը. 23-24):

Սաստեալ երեւելի հողմոց ծովուն աներեւոյթ աստուածութեամբն եւ արարեալ խաղաղութիւն մեծ՝ որպէս Արարիչ եւ Տէր ամենեցուն: Եւ նշանակէ շարժումնն եւ խռովութիւնն զհողմոց խռովութիւնն եւ զալեկոծութիւնն, որ լինի ի սատանայէ, յայնպիսեաց հոգիս ննջել ասի Քրիստոս եւ ոչ ներգործել եւ ազգել, մինչեւ ի գալ աշակերտացն եւ քարոզութեամբն ազանաւք զարթուցանեն զՔրիստոս ի փրկութիւն ազգի մարդկան, որ եկեալ իւրով մարդասիրութեամբն յերեւելի աշխարհս յայս, ի ծովս ալեկոծեալ եւ շարժեալ ամպարչտութեամբ եւ կռապաշտութեամբ, դադարեցոյց զմոլորութիւն եւ զալեկոծութիւն անաստուածութեանն:

### ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՎ ԵՓՐԵՄ

Եւ իբրեւ եմուտք ի նաւ աշակերտարն, շարժումն մեծ եղեւ ի ծովուն (Մաթթ. Ը. 23):

Ղուկաս [աս]է զանձն ի պահանջելոյ զկարգ ժամանակին, քանզի այսպէս ասաց. «Եթէ եղեւ միում ատուրց ինքն [ե] ի նաւ՝ եւ աշակերտք նորա» (տնն Ղուկ. Ը. 22):

Եւ Մարկոս նոյնպէս (տնն Մարկ. Դ. 35), իսկ սայ թէպէտ եւ ոչ նոյնպէս, այլ կարի իմն պահէ յայս վայրի, քանզի ոչ ամենեքեան զամենայն ինչ գրեցին: Զժողովուրդսն յուղարկեաց եւ զաշակերտսն ընդ Իւր տարաւ, թոյլ ետ ծովուն ամբոխել, զի այնու կրթիցէ զնոսա տանել առաքինութեամբ պատերազմաց: Վասն այնորիկ միայն ընդ Իւր առնու զաշակերտսն առ ի կրթել զնահա-

տակսն ամենայն տիեզերաց: Մատթեոս ասէ, թէ ննջեր (տնն Մաթթ. Ը. 24), իսկ Մարկոս՝ թէ բարձ մի դոյզն ընդ զլիսովն ունէր (հմմտ Մարկ. Դ. 38), զի ցուցցէ զխոնարհութիւնն եւ զմեզ ուսուցցէ խոնարհել այնու բազում անգամ: Իսկ յորժամ մրրիկն յուզէր, զարթուցանէին զնայ եւ ասէին՝ ապրեցոյց զմեզ, կորնչիմք աւասիկ:

Բայց նայ նախ ի նոսայ սաստէր, քան ի ծովն, որպէս ասացաւ իսկ, թէ վասն կրթութեան նոցա թոյլ ետ ծովուն // յուզել: Եւ յաւերինակ հանդերձելոց փորձութեանցն, որ հասանելոց էին նոցա, քանզի յետ այնորիկ բազում դժնդակ իրա թոյլ ետ նոցա փորձել, երկայնամիտ լինել առ ժամանակ մի, քանզի եւ խռովելն ծովուն նոցա աւագուտ լինէր, զի եւ առաւել նշանն երեւեսցի, եւ հանապաղ ունիցին զյիշատակն ի մտի, վասն այնորիկ իսկ ի քուն եմուտ, զի թէ մինչ արթունն էր, յուզեալ էր ծովն, ոչ ինչ երկնչէին եւ ոչ կարծէին, թէ այնպիսի զաւրուութիւն կարիցէ առնել, վասն այնորիկ ի քուն մտանէր, զի երկնչելոյ ժամանակ տայցէ եւ յայտնագոյն զիրան առնիցէ:

Թոյլ տայ յուզել մրրիկն, զի յորժամ գերծանիցին ի վշտացն, յայտնագոյն առնուցուն զասդումն բարերարութեանն այն, որ ննջեացն նայ զարթեալ եւ ննջեցոյց զծովն, զի զուարթութեամբ ծովուն, որ ննջեացն յայտ արասցէ զզաւրութիւն աստուածութեան իւրոյ, որ ոչ ննջէ: Սաստեաց հողմոյն եւ դադարեաց, որ իշխանութիւն է այս, կամ զինչ բարերարութիւն է այս, յայսմ վայրի, զի ահաւասիկ բռնութեամբ հնազանդէ, որ ոչ իւրքն են արդ հողմովն եւ ծովն, եւ դիւաւքն զոր լո/եցոյց Տէր յայտ արար, թէ Որդի է նայ Արարչին: Վասն այնորիկ մինչ մաւտ էին ժողովուրդն, ոչ առնէր զայն, զի մի ըստ գտանիցի թերահաւատութիւն նոցա, այլ զնոսա միայն առեալ ընդ իւր յարդար էր, զի յառաջ քան ջրոյն յոյզս զմտացն նոցա յոյզս ցածուցանէ: Սաստէ եւ ասէ. «Ձի այդչափ վաստասիրութեք եւ թերահաւատութեք» (տնն Մաթթ. Ը. 26): Եւ իսրատէ միայնդամայն, եթէ զերկեւղ ոչ փորձութեան ինչ գալուստ առնէ, այլ մտացն տկարութիւն:

Մաթթեան, ասէ, եւ յարուցին զնայ (տնն Մաթթ. Ը. 25):

Այն իսկ մեծ նշանակ է, զի ոչ պատշաճ կարծիս կարծէին զնամանէ, զի յառնել եւ սաստել լաւ գիտէին, բայց թէ մինչ ննջէրն եւ կարող է սաստել զայն ոչ գիտէին:



Զարմանային, ասէ, եւ ասէին, թէ որպիսի ոք է սայ, զի եւ՛ ծով եւ՛ հողմ հնազանդին սմայ (տնն Մարթ. Ը. 27):

Բայց Քրիստոս ոչինչ զչարացաւ, զի մարդ կոչ էին զնայ, այլ անսաց, զի նշանաւքն ուսուցանիցէ զնոսա, թէ վրիպակ են կարծիք նոցա եւ ուստի կարծէին զնայ մարդ յերեսացն ի քնոյն, ի նաւ մտելոյն: Վասն այնորիկ, յանհնարին տարակոյսս մտեալ, ասէին, թէ ո՞վ ոք է սայ, զի քունն եւ տեսիլն, որ երեւի, մարդ ցուցանեն: Բայց ծովն յանկարծ//ակի խաղացեալ, յալեացն Աստուած ցուցանէ, քանզի ոչ գաւազան կարկառ որպէս Մովսէսն (հմմտ. Ելից ԺԴ. 15-22), եւ ոչ ձեռս ընդ երկինս տարածեաց եւ ոչ աղաւթից կարաւտացաւ, այլ որպէս Տեառն վայելէ աղախնոյս սա[ս]տել եւ արարչի իւրում արարածոց, այնպէս նահանջէ զնոսայ եւ սանձէր բանիւ եւ Հրամանաւ միայն եւ որպէս մրրիկն յանդարծակի դադարէր եւ ոչ Հետք ամենեւին խռովութիւն ի հողմոցն ի ծովուն գտանէին, քանզի եւ զայն իսկ յայտ առնէ աւետարանիչն ասելովն, թէ «եղև խաղաղութիւն մեծ» (Մարթ. Ը. 26): Եւ որ զհաւրէ մեծ իմն ասէ մարգարէն. թէ ասաց եւ դադարեաց Հողմն եւ մրրիկն (հմմտ. Մաղմ. ՃԶ. 25-29): Նոյնպէս եւ աստ. արդեամբք նոյն եցոյց զի ասաց եւ արար խաղաղութիւն մեծ որդին Աստուծոյ:

**ՅՈՎՏԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՅԻ**  
(Գլուխ Ը)

Եւ իբրեւ եմուր ի նաւն, գնացին զկնի Նորա աշակերտքն Նորա (Մարթ. Ը. 23):

Ղուկաս ոչինչ փոյթ ժամանակին առնէր, այլ միայն թէ՛ «Եղև ի միում ատուրց» (Ղուկ. Ը. 22), նմանապէս եւ Մարկոս (հմմտ. Մարկ. Դ. 35), իսկ Մատթէոս՝ թէպէտ ո՛չ նոյնպէս, սակայն պահս յայսմ վայրի յարմարէ թէ՛ «իբրեւ եմուր ի նաւ»: Զժողովուրդն նախ առաքեաց յայնկոյս եւ զաշակերտսն այժմ զկնի տանելով՝ թոյլ տայ ամբոխել ծովուն, զի այնու զվարդապետսն տիեզերաց կրթէ ի ժուժկալութիւն՝ Համբերողս լինել փորձանաց: Իմա եւ աստ զաշակերտացն մտերմութիւն, թէ ո՛րպէս ամենայն ուրեք ընթանային, մինչ զի եւ ծովուն երկիւղ ոչ նահանջէր զնոսին:

Եւ ահա շարժումն մեծ եղև ի ծովուն, մինչև նաւին ծածկել յալեաց անրի, եւ Ինքն ննջէր (Մարթ. Ը. 24):

Յանկարծակի, ասէ, մինչ ոչ գոյր ամպային վրդովմունք, Հրաման ետ Հողմոյն ի ներքուստ կողմանէն եռալ եւ յորձանօք կոհակացն շարժել զերեսս ծովուն, յորմէ նաւն վտանգեալ եւ յալեաց յուզմանէն տատանէր ուժգին. զի յորժամ սաստեցէ, մոլեպէս մրմռեալ գազանութիւնք ծովուն Հնազանդին, ի միտ առցեն, թէ՛ Նա՛ է արարիչ նորա, որ Հրաման ետ ծփալ եւ դարձեալ կակղանալ: Նաեւ յորժամ ի վտանգ փորձութեան մտանիցեն, զյիշատակն ի մտի ունելով ի Նա՛ ապաւինեսցին, զի թէպէտ առ ժամանակ մի ներէ, սակայն ելք փորձութեան առնելոց է, զի յորժամ զերծանիցին ի վշտաց ծովուն կամ ի փորձութեանցն, իմասցին զազդումն բարերարութեան Նորա: «Եւ ինքն ննջէր»: Մարկոս յաւել թէ՛ «ի վերայ բարձի» (Մարկ. Դ. 38), զի ճշմարիտ զմարդկութիւնն Իւր յայտ առնիցէ եւ զիտնարհութիւնն ցուցանիցէ եւ զնոյն մեզ օրինակ տացէ: Եւ դարձեալ՝ զի նոքա առաւել երկնչիցին, զի եթէ ոչ էր ննջեալ, թէպէտ յոյժ ամբոխեալ էր ծովն, աշակերտքն ոչ զարհուրէին: Եւ դարձեալ՝ ննջելով Նորին զգարթնուլն ծովուն իմանայցեն եւ յառնելովն զննջումն ծովուն ծանիցեն, եւ ի միտ առցեն զգորութիւն Այնմ, որ ոչ ննջէ (հմմտ. Մաղմ. ՃԻ 4)

Եւ մաքուցեալ աշակերտքն յարուցին զՆա եւ ասեն. «Տէ՛ր, փրկեա՛ զմեզ, զի կորնչիմք» (Մարթ. Ը. 25):

Զայն իսկ նշանակէ, թէ ո՛չ պատշաճ կարծիս զՆմանէ ունէին, զի յառնել եւ սաստել կարի քաջ գիտէին, բայց թէ ննջէր եւ սաստէր՝ զայն ո՛չ իմանային, այլ յիրաւի ի Նա դիմեցին՝ ըստ այնմ. «Տէ՛ր, ի նեղութեան յիշեցաք զՔեզ» (Ես. ԻԶ. 16): Նաեւ զվստահութիւնն եւս յայտ առնէ, թէ ո՛րպէս ի քուն գոլով՝ զարթուցանել զՆա իշխեսցին այնք, որ յազազս սամարացի կնոջն Հարցանել զՆա ոչ իշխէին (հմմտ. Յովհ. Դ. 27). Ինձ թուի, թէ յաւելուած կատարելութեան ընկալեալ էին:

Եւ ասէ ցնոսա. «Ընդէ՛ր վաքասիրոք էք, սակաւահաւա՛րք» (Մարթ. Ը. 26):

Ի սաստէ աստի յայտնի եղև, թէ յազազս այսորիկ առանձնացոյց զաշակերտսն, զի մի՛ թերահաւատութիւն նոցա առաջի ժողովրդեանն յայտնեսցի, վասն որոյ նախ քան զսաստել ջրոյն՝



զմտաց նոցա յոյզս ցածուցանէ, որպէս զի Հաստատեսցին եւ մի՛ ի սակաւ ամբոխական կրից տրտմեսցին: Միանգամայն եւ ուսուցանէ, թէ զերկիւղ ո՛չ փորձութեանց ինչ գալուստ առնէ, այլ մտացն տկարութիւն:

Յայնժամ յարուցեալ սաստեաց հողմոյն եւ ծովուն, եւ եղև խաղաղութիւն մեծ (Մատթ. Ը. 26):

Յետ զերկիւղ խռովութեան ի մտաց աշակերտացն փարատելոյ ի ձեռն սաստին, յայնժամ ի ծովն դարձուցանէ եւ իբր արարածոյ Արարչի Հնազանդել հրամայէ, եւ իսկոյն մրրիկն յանկարծակի դադարէ, եւ Հետք խռովութեան ի ծովն բնաւին ոչ երեւէր: Եւ զայս ո՛չ գաւազանաւ, որպէս Մոսէս, եւ ո՛չ տարածամբ ձեռաց ի յերկինս, այլ միայն բանիւ գտաւհակ ծովու բռնութիւն խաղաղութեան օրինիւ սանձակոծէր, եւ այն ինչ բարեխառն եւ ջերին օդով զծովն զեղուցանէր, քանզի զա՛յս յայտնէ աւետարանիչն թէ՛ «Եղև խաղաղութիւն մեծ»:

Եւ մարդիկն զարմացան եւ ասէին. «Ո՞րպիսի ոք իցէ Սա, զի եւ հողմք եւ ծով հնազանդին Սմա» (Մատթ. Ը. 27):

Ոչինչ է այլ զարմացումն, քան թէ նորագոյն եւ անսովոր իրաց տեսութիւն: Արդ՝ զի՞նչ այլ հրաշափառագոյն իր, քան թէ բանիւ զծով սանձել, վասն որոյ ոչ միայն մտօք զարմացան, այլեւ հարցմամբ բանի հիացան՝ ըստ այնմ. «Ո՞րպիսի զօրութիւն, քանի՛ նշանս» (Նանգիստ Յովհ. Ա): Այսպէս եւ սոքա թէ՛ «Ո՞րպիսի ոք իցէ Սա», այսինքն՝ ո՞ր իշխանութիւն է այս կամ զի՞նչ բարեբարութիւն, զի բռնութիւն մեծագոյն տարերց ընդ Հնազանդութեամբ Սորին նուաճին. միթէ Ա՞յն իցէ, որ զանդնդական ջրոցն բազմութիւն ի խորշ եւ ի գոգս երկրի ժողովեալ խաղաղացոյց (հմմտ. Ծննդ. Ա. 6-7), կամ առ Նոյիւ զհամատարած յուզմունս ալեացն ծփանաց՝ հողմով զնստեալ ցամաքեցոյց (հմմտ. Ծննդ. Ը. 1), կամ որ ի Կարմիր ծովուն զշաշումն ջրոյն եռացման՝ իբրեւ զպարիսպ քարեայ ձուլեալ արձանացոյց (հմմտ. Ելից ԺԴ. 29): Եւ զի մարդ տեսանէին, վասն որոյ տարակուսէին, թէ ո՞վ է Սա, զի տեսիլ դիմացն եւ ընկողմանումն մարմնոյն՝ մարդ ցուցանեն, եւ յանկարծակի զալիս լուեցուցանել՝ Աստուած երեւեցուցանեն. ո՞րպիսի ոք է, ասէին, Սա, զի որպէս աղախին՝ տեսան, այնպէս ծով եւ հողմն Սմա Հնազանդեցան: Իսկ

Նա յայնպիսի վրիպակ կարծեաց ոչինչ զչարէր, այլ ի ձեռն նշանացն զինքն Աստուած գոյ նոցա վարդապետէր՝ լնլով զմարգարէականն բան, որ ի դէմս Հօր թէ՛ «Ասաց, եւ յարեաւ հողմ, եւ դադարեցին ալիք նորա, եւ դարձոյց գմրիկն յօր» (հմմտ. Մաղմ. ՃԶ. 25, 29), եւ այլուր թէ՛ «Զօրութեամբ Իրով հանդարտեցոյց զծով» (հմմտ. Յոք ԻԶ. 12):

Իսկ առ ի միտս՝ «ծով» է կենցաղս՝ ըստ մարգարէին թէ՛ «Այս ծով մեծ» (Մաղմ. ՃԳ. 25), եւ այլուր թէ՛ «Նողմք երկնից բախեն զծովս զայս մեծ», իսկ շարժումն՝ զանկումն Ադամայ զահագին եւ զմեծն, մինչ զի ի բազում դարս լսի, նաեւ զկրօնից ի կրօնս փոփոխումն, որպէս զի նաւելոցս ի սմա մարդկան՝ պէսպէս ալեկոծութեամբ փորձիլ եւ մտօք յազգի ազգի աւանդութիւնս տատանիլ: Իսկ «քուն»՝ զերկայնմտութիւնն եւ զներողութիւնն Աստուծոյ բազում ժամանակս, յորս մատուցեալ արդարոցն, որ աշակերտեցան օրինացն Աստուծոյ բնականացն եւ զբաւորականացն, եւ զԱստուծոյ երկայնմտութիւնն մեծաւ ըզմամբ զարթուցին ի փրկութիւն մարդկան՝ ըստ այնմ. «Զարթիր, ընդէ՛ր ննջես, Տէր» (Մաղմ. ԽԳ. 23), եւ թէ՛ «Արի՛, Տէր, եւ փրկեա՛ զիս, Աստուած իմ» (Մաղմ. Գ. 7): Ուստի ի հայրական գլխոյն յարուցեալ ծոցածին Մնունդն Հօր եմուտ մարմնով ի ծով կենցաղոյս եւ սաստեաց նախ մարդկայինս բնութեան, թէ ո՛չ այնպիսի ստեղծուած ընկալայք ի բնութեանն կազմածի՛ ալեկոծիլ մեղօք եւ ծփիլ մահուն երկիւղիւ եւ այլատարազ աւանդութեանն օրինօք՝ ըստ այնմ. «Աստուած զմահ ոչ արար» (Իմաստ. Ա. 13), այլ անհաւանութիւն ստունգանելոյ պատուիրանին Աստուծոյ առնէ զձեզ վտարանդիս: Եւ ապա յետ այտորիկ սաստէ եւ «հողմոցն»՝ օգական այտոցն, որպէս ի փորձութեանն, ո՛չ միայն բանիւ, այլեւ արդարութեանն կրիւք՝ որ ի ծննդենէն մինչեւ ի յարութիւնն, վասն որոյ ցրուեցան եւ յոչինչ եղեն՝ ըստ այնմ. «Յարեաւ Աստուած, եւ ցրուեցան եւ յոչինչ եղև թշնամիք Նորա» (հմմտ. Մաղմ. ԿԷ. 2):

«Եւ եղև խաղաղութիւն մեծ»՝ արեամբ խաչին ի յերկինս եւ ի յերկրի, ո՛չ միայն մարմնոյ, այլեւ հոգւոյ, զի զա՛յս յայտնէ «մեծ»-ն, որպէս հրեշտակքն երգէին (հմմտ. Ղուկ. Բ. 14), քանզի հաշտեցաւ Հայր մահուամբ Որդւոյն ընդ արարածս Իւր, որ «գմիջնորմն ցանկոյն բալկեաց եւ արար զերկոսեանս մի» (Եփես. Բ. 14), ընդ որս հիացեալ դասք ճշմարիտ բանականացն վերնոցն ի կատարել տնօրէնութեան մեծի խորհրդոյն՝ ասէին. «Իսկ այս ո՞վ է, որ դիմեալ զայ յեղոմայ... գեղեցիկ պարմունճաւօք եւ բուն զօրութեամբ» (հմմտ. Ես. ԿԳ. 1), սաստեալ իշխա-



նին սանդարամետաց եւ դադարեցուցեալ զծով կենցաղոյս իրաց եւ զբոլոր բնութիւն մարդկան ընդ Իւրեաւ Հնազանդեցուցեալ: Ուստի լուեալ ի նմանէ զարժանաւորն պատասխանի՝ լուեցին՝ ուսեալք յԵկեղեցւոյ՝ մարմնոյ Նորա, զբազմապատիկ իմաստութիւնն Աստուծոյ, որ ննջեաց զքուն մահուն եւ յարուցեալ՝ «խաղաղութիւն կենաց աւարարանեաց հեռաւորաց եւ մերձաւորաց» (հմմտ. Եփես. Բ. 17):

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՅԻ**

(Երրորդ հարոր, գլուխ Գ)

**ՎԱՍՆ ԾՈՎՈՒՆ**

//Հարց. Վասն է՞ր միայն զաշակերտսն տարաւ ի նաւ:

Պատասխանի. Վասն Դ. պատճառի: Նախ՝ որպէս ի լերինն կրթեաց ի քարոզութիւն, սոյնպէս ի մեջ ծովուն կրթէ ի պատեւրազմ որպէս մենամա[ր]տիկք: Երկրորդ՝ զի նոքա նահատակք եւ նախամարտիկք էին ամենայն աշխարհի ընդդէմ չարեաց եւ սատանայի եւ այլոց: Երրորդ՝ զի մի՛ յանդիմանեսցէ զթերահաւատ ժողովուրդն: Չորրորդ՝ զմեծ աքանչելիսն պարտ էր մեծացն ցուցանել:

Հարց. Հոգմ որպէ՞ս խոովէ զծով:

Պատասխանի. Զերեսս ծովուն շարժէ Հոգմ եւ մասն մասն շարժեալ լինի ալիք եւ խոովութիւն: Դարձեալ թափանցէ բնութիւն ջուրց, որպէս զջերմ եւ զցուրտ: Նույնպէս եւ զՀոգմ կրէ յինքն եւ շարժի:

Հարց. Վասն է՞ր շարժեցաւ ծովն:

Պատասխանի. Վասն Զ. պատճառի: Նախ ի կրթութիւնն նոցա, որպէս ցուցաւ: Երկրորդ՝ զի //յօրինակ ծովուն բազում փորձութիւնք կրելոց էին: Երրորդ՝ զի երկնչիցեն: Չորրորդ՝ զի նոր նշանս գործեսցէ: Հինգերորդ՝ եւ հանապազ յիշատակն ի միտս պահեսցեն: Վեցերորդ՝ զխոյս լիցի փրկութեան նոցա:

Հարց. Վասն է՞ր ննջեաց ի նաւին:

Պատասխանի. վասն Դ. պատճառի: Նախ՝ զի աշակերտքն երկիցեն: Երկրորդ՝ զի ծովն խոովեսցի: Երրորդ՝ զի յարթնացեալ զօրութիւնն ի նմանէ յայտնեսցի: Չորրորդ՝ ննջեաց եւ զարթոյց զծովն: Զի յայտ լիցի զօրութիւն աստուածութեանն որ ոչ ննջէ:

Հարց. Վասն է՞ր ի վերա բարձի:

Պատասխանի. Վասն չորից: Նախ՝ զի մեզ զխոնարհութիւն ուսուցէ դոյզն բարձ: Երկրորդ՝ զի բարձր լիցի գլուխ նորա: Երրորդ՝ զի բարձն եղեւ տեղի գլխոյն եւ ոչ Հպարտն դպիր: Չորրորդ՝ որ զամենայն բարձեալ ունի, ի բարձէն բարձրացաւ: [Դ]արձեալ՝ եմուտ Յունան ի նաւն եւ խորդայր (հմմտ. Յովնան, Ա. 5) եւ Տէր մեր ննջեաց: Անդ վասն Յունանու խոովեցաւ ծով եւ աստ՝ վասն Տեառն: Նաւավարքն զարթուցին զՅունան, եւ աշակերտքն՝ զՏէր: Հասեալ Յովնանի ծովն եւ դադարեաց (հմմտ. Յովնան, Ա. 15), եւ Հասեալ բան Տեառն ի ծովն՝ լուեցոյց:

Հարց. Վասն է՞ր նախ սաստեաց աշակերտացն:

Պատասխանի. Վասն չորից: Նախ՝ սաստեաց իմանալի Հոգմոյն որ խոովեաց զմիտս նոցա: Երկրորդ՝ նախ իւրոցն սաստեց եւ ապա՝ օտարացն: Երրորդ՝ զբանականսն նախ ուղղեաց: Չորրորդ՝ զի եւ ծովուն սաստելն վասն նոցա էր:

Հարց. Վասն է՞ր սաստեաց այսոց եւ ծովուն:

Պատասխանի. Ոչ այլ ինչ, քան թէ յայտ լիցի, թէ Որդի է Արարչին: Անդ զՀոգմն ցածոյց եւ աստ <ի> յօդ փոխեաց: Նախ՝ զծովսն ժողովեաց եւ սա դադարեցոյց: Նա զխոովարարն ի հրեշտակաց զատոյց: Եւ սա ի մարդկանէ:

Հարց. «Վարասիրտ էք, թերահաւարք» (հմմտ. Մարթ. Ը. 26):

Պատասխանի. Նախ՝ ցուցանէ, թէ զերկիւղն ո՛չ փորձութիւնք առնէ, այլ մտացն տկարութիւն, զոր վատասիրտ ասէ: Եւ յերեք դէմ թերահաւատ էին: Նախ՝ ի Քրիստոս, թէ Արարիչ է: Երկրորդ՝ փրկութեան իւրոց: Երրորդ՝ դադարման ծովուն:

Հարց. «Ո՞վ որ է սա» (հմմտ. Մարթ. Ը. 27):

Պատասխանի. Նախ՝ տարակուսանաց է, զի կերպարանն եւ ննջելն ի նաւ մտանելն մարդոյ: Իսկ գործն՝ Աստուծոյ: Դարձեալ հիացական է, որպէս որ Արարիչդ ես ջրոց: Վասն չորից հիացեալ. Աստուած խոստովանեցան: Նախ՝ վասն սքանչելեացն: Երկրորդ՝ զի բանիւ եւ ո՛չ աղօթիւք, որպէս Մովսէս (հմմտ. Ելից, Գ. 4 - Դ18): Երրորդ՝ զի յանկարծակի: Չորրորդ՝ զի մեծ եղեւ խաղաղութիւն, որ ամենեւին հետք խոովութեան ո՛չ մնաց ի ծովուն:

Հարց. Զի՞նչ է «յանկարծակի»:

Պատասխանի. Սուղ է քան վայրկեան որպէս նա, քան ժամանակ: Զի ի ժամանակի գործէ մարդ, եւ ի վայրկեանի՝ հրեշտակք, եւ յանկարծակի՝ Աստուած:



Ղուկաս Ը. 22-25

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻԲՆԵՅԻ

(Գլուխ ԺԶ)

Եւ ասէ ցնոսայ. Եկայք անցցուք յայնկոյս ծովակիդ (տես Ղուկ. Ը. 22) եւ այլն:

Ծովակ՝ ալիք կենցաղոյս մերոյ, մրրիկ՝ որք ալեկոծին ամենայն բանիւ սուտանուն գիտութեան:

ԻԳՆԱՏԻՈՍ ՍԵԻԼԵՌՆՅԻ

(Գլուխ Ը)

Յեք այսարիկ մտանէ ի նաւ՝ աշակերտաւքն միայն (հմմտ. Ղուկ. Ը. 22):

Զի կրթեսցէ զնոսա նեղութեամբ, զի մի՛ մոռասցին զգաւրութիւն Նորա: Վասն որոյ Հրաման տայ՝ ամբոխիլ ծովուն՝ Իւր ի քուն կալով: Եւ նոքա առ երկիւղին մատեան, զարթուցին զՆա՝ աւզնել նոցա: Եւ Նա, յարուցեալ, դադարեցոյց զյուզեալ ալիսն: Նկարեցաւ աստ ժամանակ մարգարէիցն, որ ի խաղաղանալն Աստուծոյ ամբարձան ի ծովու աշխարհիս մրրկեալ սատանայական ալիքն: Վասն որոյ, մարգարէիցն, մատուցեալ մաղթէին Աստուծոյ. «Զարթիր, ընդէ՛ր ննջես, Տէ՛ր, արի, Տէ՛ր, աւզնեա՛ մեզ եւ փրկեա՛ զմեզ» (Մաղմ ԽԳ. 23):

Արդ, զայս խորհուրդ, որով Հանդարտեցուցանելոց էր զսատանայական ամբարձեալ ալիսն առաջի առաքելոցն, յորժամ միջամուխ լինէին նոքա ի Հեթանոսս՝ եցոյց ի ծովու աստ, զի որք տեսին՝ ծանեան զչափ գաւրութեան Նորա՝ Որդւոյ Աստուծոյ գոլ:

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

(Գլուխ Ը)

Եւ եղև ի միսում աւուր ինքն ել ի նաւ եւ աշակերտք նորա (տես Ղուկ. Ը. 22):

Զնոյն եւ Մարկոս այսպէս ասէ. «Զի ո՛չ զկարգ ժամանակին ամենեքին ասացին եւ ո՛չ զամենայն ինչ գրեցին» (տես Մարկ. Դ. 35-40):

Եկայք անցցուք յայն կոյս ծովակիդ (տես Ղուկ. Ը. 22):

ՍՏ Ծով եւ ալիք կենցաղոյս մերոյ մրրիկ, եւ ոյք ալէկոծէին ամենայն բանիւ՝ սուտանուն գիտութեամբ:

Եւ մինչդեռ նաւին, ի քուն եմուտ: Էջ մրրիկ հողմոյ ի ծովակն (տես Ղուկ. Ը. 22):

Եփ. Արդ՝ այն, որ ն[ն]ջեաց, զարթեալ եւ ննջեցոյց զծովն: Զի խռովութիւն ծովուն, որ ննջեաց, յայտ արասցէ զգաւրութիւն աստուածութեան նորա, որ ո՛չ ննջէ:

Սաստեաց հողմոյն եւ ջրոյն, եւ եղև խաղաղութիւն (տես Ղուկ. Ը. 24):

Զի ահաւասիկ իշխանութեամբ Հնազանդեցուցանէ: Արդ՝ Հողմովն եւ ծովովն եւ այս[ոք]իւքն, զոր լուեցոյց Տէ՛ր մեր, յայտ արար, թէ Որդի է Աստուծոյ եւ արարչակից:

Սփ. Դարձեալ. զՀոգոց խռովութիւն եւ զալէկոծութիւն նշանակէ, որ լինին ի սատանայէ: Զայնպիսեացն Հողին ննջեալ ասէ եւ ո՛չ ազգեալ, մինչեւ ի գալուստ աշակերտացն եւ աղաչանաւք մարգարէիցն զարթուցանէին զՔրիստոս ի փրկութիւն ազգի մարդկան: Եւ զփքացումն ամբարշտութեան եւ զՀպարտութիւն մոլորութեանն դադարեցոյց աստուածածանալութեամբն:

Ո՞ արդեաւք սա իցէ, զի հողմոց եւ ծովու հրաման փայ, եւ հնազանդին սմա (տես Ղուկ. Ը. 25):

Ո՛՛ Զի քունն եւ տես մարմնոյն մարդ ցուցանէին, բայց ծովն յանկարծակի Հանդարտեալ՝ Աստուած ցուցանէր զնա: Քանզի ո՛չ գաւազանաւ պատառէր, որպէս Մովսէս, եւ ո՛չ ձեռս ընդ երկին տարածեալ: Եւ ո՛չ աղաւթից կարաւտացաւ, այլ որպէս Տեառն վայել է սաստել աղախնոյ, եւ Արարչի՝ իւրում արարածոց: Այնպէս սանձէր բանիւ միայն, զի ո՛չ Հետք խռովութեան ծովուն գտանէին:





7. ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ԴԻՒՅԱՐԱՑ Ի ԳԵՐԳԵՍԱ

Մաթթեոս Ը. 28-34

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

(Գլուխ Զ)

Եւ իբրեւ անցին յայնկոյս յերկիրն Գերգեսացոց, պափահեցին նմա դիւահարք երկու՝ ելեալք ի գերեզմանացն, չարաչարք յոյժ. որպէս զի ոչ էր հնար անցանել ումեք ընդ այն ճանապարհ, եւ ահա՛ աղաղակեցին եւ ասեն. զի՞ կա[յ] մեր եւ քո՝ Յիսուս որդի Աստուծոյ, եկիր փարաժամ փանջել զմեզ (Մաթթ. Ը. 28-29):

Ի գերեզմանս, ասին, բնակել դեւքն չարաչարք. վասն զի ոչ միայն ի կենդանեացն մարմինս շատանա[յ]ին բնակիլ, այլ յաւրժարէին եւ ի մեռեալսն. իսկ ի հանդիպելն Քրիստոսի ելեալք ի մեռելոցն եւ աղաչեցին, զի թէպէտ եւ ոչ թողացուցանէ ի բանականացն մարմինս բնակել, գոնե յանբանիցն եւ ի վատթար կենդանեացն հրամա[յ]եսցէ, զի հոսեալք ի դարէն եւ հեղձեալք ի ջուրսն ազատեսցին ի խոզութենէն. եւ յաղագս այնորիկ մտանեն ի խոզսն, եւ ոչ յոչխարս եւ յաղաւնիս եւ կամ յայլ ի սուրբ կենդանիս: Որդի Աստուծոյ կոչեցին զՅիսուս որպէս պարտեալք ի նորա գաւրութենէն, եւ սքանչացեալք ընդ վարդապետութեանն նորա որպէս Որդւոյ Աստուծոյ, բայց ոչ որ ասէինն, եթէ զի՞ երկիր տարածամու կորուսանել զմեզ. անգիտանա[յ]ին յաղագս ժամու գալստեան նորա, որպէս անկեալք ի հրեշտակաց փառաց եւ ի մեծութենէ: Բայց կարծեմ ես, եթէ ժամանակ գալստեան նորայ եւ ի հրեշտակաց անգիտացաւ:

ԱՐԻՍԱՎԿԷՍ ԵՒ ԵՓՐԵՄ

/ Իբրեւ ելանէր ի ծովէն այլ նշանք ահագինք լինէին. դիւահարացն պատահումն, որք տեսեալ զՏէրն բողոք հարկանէին, թէ «զի՞ կա[յ] մեր եւ քո՝ որդի Աստուծոյ» (Մաթթ. Ը. 29) Քանզի ժողովուրդն մարդ համարեցան զնայ, եկին դեւքն եւ Աստուած քարոզէին եւ

որք զծովն տեսին յուզեալ եւ դարձեալ դադարեալ, եւ ոչ առին ի միտ, լուան զբողոք դիւացն եւ հիացան, / զի նայ խաղաղութեամբ զնայ Աստուած քարոզէր եւ սոքայ՝ առ ասի:

Եկիր, ասէ, փարաժամ փանջել զմեզ (Մաթթ. Ը. 29): Զի մի կարծիք ինչ աղաչանքն կարծիցին զի եւ տանջէին իսկ ի ծածուկ խոցեալք եւ անհնարին ցաւս առեալք ի գալստենէն Քրիստոսի: Քանզի կարէին ասել, թէ չմեղաք ինչ: Վասն այնորիկ աղաչէին, մի առաջ քան զժամանակն մտանել ի տանջանս, ժամանեաց կալաւ զնոսա յանաւրէն գործսն, զի զստեղծուածս նորա պէսպէս կապանաւք կտտէին, վասն առաւել անաւրէնութեանն համարէին, թէ չմնա ժամանակին դատաստանին, վասն այսորիկ աղաչէին:

Իսկ թէ ընդէր Մատթէոս Բ. ասէ (տես Ը. 28) եւ Ղուկասն մի (տես Ը. 27), ոչ երկրնութիւն ինչ է, այլ Ղուկաս զմի կարի դրնդակն ասաց, քանզի անհնարին իմն պատմէ զկապանսն, ասէ, եւ զչխթայսն խզէր եւ ընդ անապատս մոլորել շրջեր (հմմտ. Ղուկ. Ը. 29): Իսկ Մարկոս, թէ քարամբք եւս կոծէր զանձն եւ որք զայլս արգելուին եւ չտային անցանել ընդ ճանապարհն՝ ինքեանք պաշարեալք, իբրեւ տեսին զՏէր անգանէին ի բուռն (հմմտ. Մարկ. Ե. 2-6):

Եւ ընդէ՞ր ի գերեզմանս բնակել սիրեցին, զի ապականիչ կրաւնս կամէին արկանել ի միտս բազմաց: / Ոգիք, ասէ վաղջանելոցն, դեւք լինէին զոր մի լիցի մեզ զմտաւ ածել զայնպիսի բարբաջանս, եւ «զի՞նչ խաւսիս,- ասեն,- բազումք ի կախարդաց մանկունս իսկ [փողոտ]են, զի ոգիքն յետ վաղճանին ընդ նոսա շրջիցին, եւ նոցին գործակից լինիցին»: Եւ ուստի՞ յայտ իցէ, զի ապականէին զմանկունսն, բազումք ասեն: Բայց թէ ոգիք սպանելոցն ընդ նոսայ իցեն, զայն ուստի՞ իմացար. «ասեն դեւքն, թէ՛ «ես այսանուն ուր[ո]ւական եմ», խաբէութիւն եւ մոլորութիւն սատանայական է այն, զի ոչ թէ ոգի վաղջանելոյն աղաղակէ, այլ դեւ կեղծաւորել յայսպիսի կերպարանս առ ի մոլորեցուցանել զայնոսիկ ոչք ունկն դնիցեն նմայ, զի թէ յայլ մարմին մարթէր մտանել շնչելոյն եւս առաւել յիւ՛ր մարմին:

Եւ այլազգ չէ ինչ ի դէպ, թէ շունչն որ վնասեցաւ իւրում վնասողին գործակից լինել, եւ կամ թէ մարդ կարիցէ զանմարմնական գաւրութիւնն յայլ ինչ բնութիւն <բնութիւն> փոխել, զի թէ առ մարմին այսպիսի ինչ անհնարին իցէ, որչափ եւս առաւել զանե-



ընկոյթ հոգիսն անհնարին զնոսա ի դիւի բնութիւն փոխել: Քանզի չէ // մարթ շնչոյ որ ի մարմնոյ քակիցի, աստէն տակաւին շրջել, զի արդարոցն ոգիք ասէ զիր ի ձեռս Աստուծոյ են, իսկ եթէ արդարոցն եւ առաւել մանկանց տղայոցն, քանզի ոչ նոցա ոգիքն գիտեն զփորձ չարութեան եւ մեղաւորացն սոյնպէս աստի անդր վար ատէ:

Եւ յայտ է Ղազարու եւ ի մեծատանն ոգւոցն է (հմմտ Ղուկ. ԺԶ. 19-25), եւ այլուր ասէ Քրիստոս, եթէ զոգիտ պահանջիցեն ի քէն, քանզի եւ Ստեփաննոս ասէր՝ «Ընգալ զոգի իմ» (Գործք Է. 58) եւ Պաւղոս անդրէն դառնալ եւ ընդ Քրիստոս լինել առաւել լաւ համարէր, եւ յայտնի զնահապետէն ասեն զիրք, եթէ յաւելաւ առ հարս իւր, անեալ եւ հաստատեալ ի ծերութեանն բարութեան, զի եւ ոչ մեղաւորաց ոգիք կարեն աստէն դադարել: Լուր մեծատանն, որ աղաչէր, զի թերեւս հնար ինչ լինիցի, երթալ եւ պատմել զամենայն ինչ, որ անդն գործեցաւ, ուստի յայտ իսկ է, թէ յետ աստի մեկնելոյն ի տեղի ուրէք երթեալ, դադարեն ոգիքն եւ ոչ են իշխան դառնալ այսրէն, այլ ահագին աւուրն կան եւ սպասեն:

Ապայ թէ ասիցէ ոք՝ վասն է՞ր աղաղակեցին դեւքն եւ հրամայեաց Քրիստոս մտանել յերամակս խոզիցն: Չայս ասեմք, եթէ ոչ զի զնոցա կամսն կատարիցէ, մի զի գերծանեալք ի չար // բռնաւորացն, ուսանիցին, թէ որպիսի ինչ չարիս խորհել էին զնոցանէ եւ միւեւս զի իմանայցեն ամենեքեան, թէ ոչ խոզից անգամ իշխեն, թէ ոչ նայ թողուցու ի ձեռաց, երրորդ անգամ, թէ եւ չար անքք, քան ընդ խոզն ընդ նոսայ անցուցանէին, թէ ոչ յայնպիսի տանջանսն եւ բազումս վայելէին յԱստուծոյ խնամոցն եւ զի զմեզ եւս չար քան զանասունս ատեն: Ամենայն ուրէք յայտ է, թէ ի խոզսն չի խնայեցին, այլ ի միում վայրկենի արարին զամենեսեան քարավէժս, որչափ եւս առաւել զարսն որ միշտ ընդ նոսա էին եւ ընդ անապատն տանէին անէին, եթէ ոչ բազում Աստուծոյ տեսչութիւնն, որ էր եւ կարճէր զնոցա բռնութիւն: Հանդերձ ասացելովքս եւ այլ իմն ուսանիմք աստի, զի ոչ միայն հասարակաց տեսուչ լինի, այլ իւրաքանչիւր ումեք առանձինն, զոր եւ առ աշակերտսն յայտ արար ասելովն, թէ ձեր իսկ ամենայն հեր զլիսոյ թուեալ է, եւ ի դիւահարաց անդի, եթէ միտ ոք դնիցէ եւս առաւել իմանայ, որք ի վաղուց հետէ ընկղմեալք էին, եթէ ոչ՝ ի բազում Աստուծոյ տեսչութեանն էին վայելել: Վասն այնորիկ յերամակ խոզ/իցն հրամայեաց մտանել, զի որք յաշխարհին բնակել իցեն, ուսանի-

ցեն զգաւրութիւն արարչին, զի ուր յայտն էր, անուն նորա, ոչ ինչ կարի ցուցանէր նշանս: Իսկ որք ոչն գիտէին զնա եւ տակաւին յանմտութեան կէին, անդ առաւել լուսաւորէր նշանս, զի յիւր աստուածածանաւթութիւնն ձգիցէ զնոսա: Եւ զի կարի անմիտք էին գերգեսացիքն, որք սահման եղին ինքեանց՝ ոչ ելանել տեսանել զնշանս Տեառն մերոյ: Վասն այնորիկ հեղձուցանէ զխոզերամակն նոցա, զի ելցեն յակամա կամս:

Ա Եւ զի պարտ էր նոցա երկիր պագանել ընդ գաւրութեան նորա, նոքա յարտաքո մղէին եւ աղաչէին զնալ ի սահմանաց նոցա:

ԵՓ Հալածեցին գերգեսացիքն ի սահմանաց անտի իւրեանց զայն որ կարողն էր հալածել զդեւս յաշխարհէ նոցա: Եւ զի՞ երկեան բնակիչք աշխարհին այնորիկ, զի մի՛ տացէ հրաման դիւացն մտանել ի նոսա: Արձակեաց զայրն, թէ՛ ե՛րթ. քարոզեա՛յ: Թէ՛ վայ իցէ նոցա, զի արդէն իսկ մտեալ էին ի նոսա դեւքն, որ հալածեալն էին յամենայն տեղեաց, զի հալածչին դիւաց ոչ հտուռն մտանել առ ինքեանս: Առաւել եւս / բազմանան ցաւք նոցա, զի բժշկին ոչ հտուռն մտանել առ ինքեանս:

Ա Եւ թէ ընդ որ կոտորեցին զխոզսն դեւքն: Քանզի ամենայն ուրէք տրտմութիւն փութան անել ի վերա[յ] եւ կարի իմն խնդան ընդ կորուստ մարդկան, որպէս զի աստ հակառակն. մի զոր ինչ կամէին դեւքն՝ լինէր: Զի եւ Քրիստոս, ի գաւրութիւնն լուսաւորեալ քարոզէր, եւ զի[լ]ացն չարութիւն յամաւթ լինէր: Եւ յայտ արար թէ ի խոզսն անգամ ոչ իշխէին մտանել որչափ եւս ի պատկեր Աստուծոյ:

ԵՓ Ընդ սատանայի մարտեաւ ի լերին անդ եւ ընդ լեզէոնի զաւ[ր]ոյգլիսի նորա, իբրեւ մտին ի խոզանն եւ հեղձուցին զնոսա, զի յայտնի լիցի թէ ողորմած բնութիւնն էր որ պահէր զայրն զայն: Բայց այն զի աղաչեցին զնալ ի սահմանաց նոցա, վասն պատկառանաց եւ երկեւղածութեան ասեն, որպէս Պետրոսն ասէր՝ «ի բաց գնա յինէն, Տէ՛ր, զի այր մեղաոր են» (Ղուկ. Ե. 8):

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ  
(Գլուխ Ը)

Եւ իբրեւ անց յայնկոյս՝ յերկիրն գերգեսացուց, պապահեցին Նմա դիւահարք երկու՝ ելեալք ի գերեզմանացն, չարաչարք յոյժ,



որպես զի չէր հնար անցանել ումեր ընդ այն ճանապարհ (Մաթթ. Ը. 28):

Յոյժ խնամ տանի աւետարանիչս կարգին եւ ժամանակին եւ սքանչելիս ընդ սքանչելիս խառնէ, զի այնու ցուցանէ զհամբաւ Նորա ամենայն ուրեք տարածեալ, եւ ի հրաշիցն իրաց՝ յոլով ժողովուրդ ի Տէր յաւելեալ ի հեթանոսաց: Բայց թէ ընդէ՞ր Ղուկաս եւ Մարկոս մի ասեն զգերգեսացի դիւահարս (տեսն Ղուկ. Ը. 27, Մարկ. Ե. 2), իսկ Մատթէոս՝ երկու. յայտ է, թէ երկու էին, իսկ մինն՝ կարի դժնդակագոյն, զորոյ Ղուկաս պատմէ, թէ զշղթայսն կոտորէր եւ զտոնակապսն խզէր, զի թէ զայն բժշկեաց, կարի՛ քաջ զթեթեւագոյնն. կամ երկիցս անգամ եղեւ: Իսկ ի գերեզմանս զբնակութիւն առնելն կրկին իմաստս ունի. մի՛ զի ապականիչ կրօնս ի միտս մարդկան մուծանիցեն, զոր ուսեալ ասեն, թէ ոգիք վախճանեցելոցն դեւք լինին, զոր մի՛ լիցի զմտաւ ածել զայսպիսի բարբանջմուսս, քանզի «զի՞նչ խօսիս, — ասեն, — բազումք ի կախարդաց մանկունս փողոտեն, զի ոգիքն յետ վախճանին ընդ նոսա չըջիցին եւ նոցին գործակից լինիցին»: Եւ ուստի՞ այս. յայտ է, թէ զբազումս սպանանեն՝ բազումք ասեն: Իսկ թէ ոգիք սպանանելոցն ընդ նոսա իցեն, զայն ուստի՞ իմացար. «Դե՛ւք, — ասեն, — պատմեն թէ՛ ես այս անուան ուրուական եմ», որ է յոյժ խաբէութիւն եւ սատանայական մոլորութիւն: Զի ո՛չ եթէ ոգի վախճանելոցն աղաղակէ, այլ դեւ կեղծաւորեալ յայնպիսի կերպարանս՝ առ ի սովորեցուցանել զայնոսիկ, որ ունկն դնեն նոցա. զի թէ յայլ մարմին մարթէր մտանել շնչոյն, եւս առաւել յի՛ւր մարմինն: Նաեւ ա՛յլ ազգ. զի շունչն, որ վնասեցաւ, իւրում վնասողին գործակից ոչ լինի, եւ դարձեալ՝ անհնար է, թէ կարիցէ մարդ զանմարմին զօրութիւնն յայլ բնութիւն փոխել, զի թէ առ մարմին այս ոչ լինիցի, ո՛րչափ անհնարին է զոգւոյ բնութիւնն դիւի առնել:

Եւ դարձեալ՝ զի հոգիք, որ ի մարմնոյ քակտիցին, աստէն ո՛չ մնայցեն, զի թէ արդարք իցեն, ի ձեռին Աստուծոյ են՝ ըստ այնմ. «Տէր Յիսուս, ընկալ զոգի իմ» (Գործ. Է. 58), եւ՝ «Աբրահամ յստեղաւ առ հարս իր» (հմմտ. Ծննդ. ԻԵ. 8), եւ զՂազարոս ի գոգն Աբրահամու հանգուցին (հմմտ. Ղուկ. ԺԶ. 22), մանաւանդ տղայոցն, յորժամ մկրտեալք իցեն՝ ըստ մարգարէին թէ՛ «Իբրեւ զաղաւնիս ձագախառն երամովին գան առ Իս» (Ես. Կ 8): Իսկ թէ մեղաւորք՝ եւ նոքա՛ նոյնպէս ի տեղւոջ ուրեք արգելեալք կան, որպէս ասաց Տէր թէ՛ «Յայսմ գիշերի

զոգիդ ի քէն ի բաց պահանջն» (Ղուկ. ԺԲ. 20), եւ որպէս մեծատունն, զի մեծագոյն աղաչէր, թէ թերեւս հնար լիցի երթալ եւ պատմել զամենայն ինչ, որ անդն գործեցաւ, եւ ո՛չ եղեւ հնար (հմմտ. Ղուկ. ԺԶ. 27), այլ կան անդր եւ ահագին Աւուրն սպասեն ի հանգիստս կամ ի տանջանս գոլով: Արդ՝ զի զայսպիսի չարագոյն աղանդս ուսուցանէին մարդկան դեւքն, յաղագս այսորիկ ի գերեզմանս արգելեալք կային՝ պաշարելով զճանապարհս անցաւորաց, զորս խափանել կամեցաւ Տէր, ընդ այն կազմեաց ճանապարհ, որում պատահեալ աղաղակեցին: Եւ երկրորդ՝ նշանակ իսկ էր, թէ որպէս մեռեալ մարմին[ք] ի գերեզմանի դնին, այսպէս եւ հոգիք նոցա մեռեալք էին մեղօք, վասն այնորիկ եւ մարմինք նոցա գերեզմանք եղեն դիւաց՝ ըստ այնմ թէ՛ «Նման էք գերեզմանաց բռնոց» (Մաթթ. ԻԳ. 27), կորուսեալ զբանին իմաստ՝ զշարժումն միայն ի դիւաց ունելով, որ ըստ բնական ատելութեանն յիմարեցուցեալ զոգին՝ քարամբք կոծել տային եւ զմարմինն, որպէս ասէ Մարկոս (հմմտ. Մարկ. Ե. 5), վասն որոյ եկն Տէր այց առնել ստեղծուածոց Իւրոց՝ հոգւոց եւ մարմնոց:

Եւ ահա աղաղակեցին եւ ասեն. «Զի՞ կայ մեր եւ Քո, Յիսուս, Որդի՛ Աստուծոյ, եկիր փարածամ փանջն՝ լ զմեզ» (Մաթթ. Ը. 29):

Աղաղակն ցուցանէ տանջանս ինչ կսկծագոյնս կրել ի ծածուկ յաստուածայինն զօրութենէ: Եւ դարձեալ՝ զոր նաւորդքն մարդ խոստովանէին, դեւքն աղաղակելով Որդի Աստուծոյ դաւանեցին, եւ որք ի ծովուն իրաց ոչ իմացան, ի դիւացն լուեալ զարհուրեցան, որք առ երկիւղի բողոքէին. «Զի՞ կայ մեր եւ Քո», այսինքն՝ ո՞ անհնազանդ է ի մէնջ Քում աստուածութեանդ հրամանաց, մինչ զի ընդ տանջանօք արկանես: Եւ դարձեալ՝ վճիռ հատեալ է մեզ տանջանս կրել ի հանդերձեալն օր, իսկ Դու յառաջի՛նդ գալուստ տարածամ տանջես. որպէս զի ասել. զի տանջելոց եմք, ստոյգ գիտեմք, սակայն այս ո՛չ է ժամանակ: Քանզի յաղագս անօրէնութեանցն ո՛չ կարացին ասել թէ՛ ո՛չ մեղաք, զի զստեղծուածս Նորա պէսպէս կտտանօք կտտէին եւ ի գողօնս իւրեանց ըմբռնեցան. համարեցան, թէ չմնայ դատաստանի ժամանակին, վասն այնորիկ աղաչէին: Բայց յասելոցս յայտնի եղեւ, թէ յառաջինն միայն ի փառաց անկաւ, իսկ ի Քրիստոսի գալստեանն բնաւին ի զօրութենէ խափանեցաւ, եւ յերկրորդումն ըստ արդար իրաւանցն վրէժ նմին հատուցաւ: Իմանամք եւ ա՛յլ ազգ զասացեալս. քանզի յաղագս



լրբութեանն կագ իմն դնէ ընդ Ստեղծողին իւրոյ թէ՛ «Զի՞ կայ մեր եւ Քո, Յիսո՛ւս, Որդի՛ Աստուծոյ», այսինքն թէ՛ զի՞նչ կայ ի Քոյոցն առ մեզ, զի զստեղին եւ զչնորհս եւ զփառս առեր, եւ մեք բնութեամբ միայն մնացեալ, յաղագս այնորիկ ապստամբեցաք ի Քէն, զի ո՛չ տանջիցիմք. զի հնազանդի՛ցն իւր ունի ոք իշխանութիւն տանջել եւ ո՛չ ապստամբիցն, որով յայտ արարին, թէ կամա՛ւ յիշխանութենէն Աստուծոյ արտաքսելին, թէպէտ այնու ո՛չ զերծանին ի տանջանացն:

Եւ էր հեռագոյն ի նոցանէ երամակ մի խոզից արօքական: Եւ դերն աղաչէին զՆա եւ ասէին. «Եթէ հանես զմեզ աստի, հրաման փոք մեզ երթալ յերամակ խոզիցն» (Մարթ. Ը. 30-31):

Ընդէ՞ր աղաչէին. ինձ թուի, թէ զփորձ առին զօրութեան Նորա, զի մի՛ առաքեսցէ յանդուհու՛ պաղատէին. զի թէ հրամայեալ էր, ո՛չ այլ ուրեք քան անդ[ր] ընթանային: Եւ երկրորդ՝ վասն այսորիկ ի խոզսն մտանել աղաչէին, զի ի դառնալն նոցա առ տեարս իւրեանց՝ մտցեն ի նոսա, եւ կամ ճաշակելով ի մտոյ նոցա՝ բնակեսցեն ի նոսա: Եւ երրորդ՝ ցուցանեն, թէ յոյժ փոյթ ունին մենամարտիլ ընդ մարդկան եւ տանջել զնոսա, ո՛չ միայն ընդ արգարս, որպէս առ Յոք, այլեւ ընդ մեղաւորս, որպէս եւ այժմ խնդրեն: Եւ չորրորդ՝ թէ չունին իշխանութիւն առանց հրամանին Աստուծոյ ի խոզսն անգամ մտանել, թող թէ մարդկան բանականաց տիրել՝ ըստ այնմ. «Զանասունս նորս օրհնեցեր... աղէ արկ զձեռն Քո ի վերայ սպացուածոց նորս» (հմմտ. Յոք Ա.10-11), բայց թէ տիրեն՝ անողորմաբար չարչարեն որպէս զխոզսն: Հինգերորդ՝ զբարս իւրեանց յայտ արարին, թէ տղմասէրք են եւ ապականագործք եւ միշտ մեղօք զմայլին՝ ըստ այնմ թէ՛ «Ուրեն գկերակուր ամբարշտութեան եւ գինեաւ անօրէնութեան արբենան» (Առակ. Դ. 17):

Եւ ասէ ցնոսա՝ երթա՛յք: Եւ նոքա ելեալ գնացին յերամակն խոզից, եւ դիմեաց ամենայն երամակն ի դարէ անտի ի ծովն, եւ մեռան ի ջուրսն (Ը. 32):

Հրամայելովն ո՛չ եթէ զցանկութիւն կամաց նոցա կատարեաց, այլ զի անտի յովով իրս մատակարարիցէ: Նախ՝ զի մի՛ ստոյգ զխտացեն զաստուածութիւն Նորա, որպէս եւ ոչ ի փորձութեանն ծանոյց զօրագլխի նոցա եւ ընկղմեաց յաղթութեամբ, այսպէս

եւ ոչ զօրաց նորա, զոր հեղձոյց ի ջուրն, վասն այսորիկ ասաց՝ երթա՛յք, զի ի տարակոյս մատնելովն չարչարեսցին: Եւ երկրորդ՝ ընդդէմ եղեւ նոցա իրն, քանզի թոյլ տալովն ի խոզսն մտանել յանդուհուս ծովու եղեն հեղձեալք, զոր ոչ կամէին: Եւ երրորդ՝ զի զերծեալք ի չար բռնաւորացն՝ ուսանիցին, թէ ո՛րպիսի չարիս խորհէին զնոցանէ, զի չար անցս ընդ նոսա քան ընդ խոզսն անցուցանէին, եթէ ոչ ի խնամոցն Աստուծոյ արգելեալք էին. որք ի միում նուազի զբնաւն ջրասոյգ արարին, նոյնպէս եւ զմարդիկ կամին, թէ զօրէին: Եւ չորրորդ՝ ի յառն զգաստութիւն, զի ո՛չ միայն հասարակաց խնամէ Աստուած, այլեւ առանձինն՝ ըստ այնմ թէ՛ «Զեր եւ ամենայն իսկ հեր զիւոյ թուեալ է» (Մարթ. Ժ. 30), որպէս զի ի միտ առնուցու, եթէ ընդ խոզսն զայն գործեցին, ընդ նա, որ բազում ժամանակս յանապատի շրջեցուցանէին, զի՞նչ հանդերձեալ էին առնել, եթէ ոչ ի տեսչութենէն Աստուծոյ պահպանեալ լինէր: Եւ հինգերորդ՝ զի այնու բնակիչք աշխարհին ուսանիցին զզօրութիւն Արարչին, զի ուր յայտնի էր անուն Նորա, ոչինչ կարի ցուցանէր նշանս, իսկ որք ոչն զիտէին եւ տակաւին յանմտութեան կային, անդ լուսաւորագոյնս եւս փայլէր: Վեցերորդ՝ հեղձուցին զխոզսն ի ծովն, զի ամենայն ուրեք փութան տրտմութիւն ածել ի վերայ եւ խնդան ընդ կորուստ մարդկան, որպէս զի այնու զայրացեալ բնակիչք աշխարհին՝ ելցեն եւ հալածեսցեն զՆա ի սահմանաց իւրեանց, որ ընդ հակառակն եղեւ նոցա, զի Քրիստոսի վարդապետութիւնն պայծառացաւ, եւ դիւաց չարութիւնն խայտառակեցաւ: Եւ եօթներորդ՝ քանզի օտարատեաց գոլով գերգեսացուցն՝ ոչ ելին ընդ առաջ Նորա, հեղձոյց զերամակ խոզից նոցա՝ զզեւս ի նոսա առաքելով, որպէս զի յակամայ կամս ելցեն արտաքս եւ երկիրպագցեն զօրութեան Նորա, եւ լսիցեն զվարդապետութիւն Նորա:

Եւ խոզարածքն փախեան եւ երթեալ ի քաղաքն՝ պապմեցին զամենայն եւ զիրս դիւահարացն: Եւ ահա ամենայն քաղաքն ել ընդ առաջ Յիսուսի (Մարթ. Ը. 33):

Խոզարածքն յաղագս այնորիկ փախեան, զի մի՛ եւ ի նոսա՝ մտցեն դեւքն եւ ծովասոյգ արասցեն: Իսկ գերգեսացիքն թէպէտ ոչ կամէին զգալուստ Նորա, սակայն ի հարկէ իրացն բռնադատեալք եւ ի պատմութենէ հրաշիցն ըմբռնեալք՝ գրոհ տուեալ բոլոր բնակիչք քաղաքին՝ ելին մեծապէս պատուով ընդ առաջ Նորա:



Իբրև փեսին զՆա, աղաչեցին, զի զնասցէ ի սահմանաց նոցա (Մարթ. Ը. 34):

Իբրև հասին ստուգութեամբ ի վերայ իրացն, մանաւանդ թէ որպէս լուան ի խոզարածիցն, այնպէս եւ տեսին, հալածեցին ի գաւառէ իւրեանց զԱյն, որ կարող էր հալածել զդեւս յաշխարհէ անտի նոցա, քանզի պակեան բնակիչք երկրին այնորիկ, զի մի՛ երբեմն եւ զնոսա տանջեալ զիւօքն ի ծով ամայեսցէ: Եւ դարձեալ՝ զի հեշտասէրք էին եւ փափկակեացք, խորշէին ի նմանէ, զի մի՛ վարդապետութեամբն եւ սքանչելին հրաշիւք՝ զնոսին աշակերտեսցէ եւ ի չարեացն ի բաց մերժեսցէ՝ ըստ այնմ թէ՛ «Անզգամն ո՛չ լիւնի խօսակից իմաստնոցն» (հմմտ. Առակ. ԺԵ. 12): Եւ դարձեալ՝ ոմանք վասն երկիւղածութեան ասեն աղաչել զնալ ի սահմանաց նոցա՝ ոչ արժանի համարելով զանձինս մեծամեծ շնորհացն այնոցիկ, որպէս Պետրոս ասէր. «Ի բաց գնա յինէն, Տէ՛ր, զի այր մեղաոր եմ ես» (Ղուկ. Ե. 7), եւ հարիւրապետն. «Չե՛մ արժանի, եթէ ընդ յարկալ իմով մտցես» (Մարթ. Ը. 8):

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՅԻ**

(Երրորդ հարոր, գլուխ Դ)

**ՅԱՂԱԳՍ ԴԻԻԱՏԱՐԻՆ**

Ելեալք ի ծովէն այլ ահագին նշանք լինէին: Նախ՝ զի ճչեցին յայնմ. «զի՞ կա մեր եւ քո»: Երկրորդ՝ զի Աստուած քարոզեցին՝ Որդի Աստուծոյ ես: Երրորդ՝ զի աղաչէին՝ «մի՛ տանջեր զմեզ»: Եւ ըստ միտս: Անց Բրիստոս ընդ ծով մեղաց աշխարհիս, զի ոչ արար մեղս, ըստ առաքելոց, կամ վերին ջրեղէն կամարն: Աշխարհ գերգեւսաց[ւոց] ցուցանէ զայս աշխարհս: Երկու զիււահարք՝ հրեայք եւ հեթանոսք, ելեալք ի գերեզմանաց՝ ի գբոյ մեղաց: Դեւքն ցանկութեան՝ դեւքն ախտիւն մոլեկան, զոր հանդերձ բղջախոհ աղտեղութեամբն կործանեաց Տէրն: Իսկ ոչ ընդունել գերգեւսացւոցն, որպէս ասէ Յովհաննէս, «յիւրսն եկն եւ ոչ ընկալան» (Տէն Յովհ., Ա. 11): Եւ առաքելոցն ասէր, թէ «զիս հալածեցին, նոյնպէս զձեզ» (Տէն Յովհ., ԺԵ. 20), զի աշխարհ զիւրն սիրէ:

Հարց. Չի՞նչ է ասելն՝ «զի՞ կա[յ] մեր եւ քո»:

Պատասխանի. Վեց իմն նշանակէ: Նախ՝ կեղծաւոր խոնարհութիւն՝ «Դու որդի ես Աստուծոյ, եւ մեք՝ ստեղծուած»: Երկրորդ՝

յերկնէ հաներ եւ յերկիր իջուցէր: Երրորդ՝ ի հրեշտակաց որոշեցէր եւ այժմ ի մարդկանէ որոշես: Չորրորդ՝ բարիքն ի մարդկանէ քո են եւ չարիքն՝ իմ: Հինգերորդ՝ հոգին որ Աստուծոյ է պատկեր, քո է, եւ մարմինն մեր ի տարերացս: Վեցերորդ՝ ընդէ՞ր ի ժամանակի տանջես, զի յաւիտեան տանջելոց եմք: Չայս ունի իմացումն. «զի կա[յ] մեր եւ քո եւ ամենայն ստութիւն է խառնեալ»:

/Հարց. Որդի Աստուծոյ:

Պատասխանի. Հաւատ իսկապէս ոչ ունին դեւք, որպէս ցուցեալ է ի հարցմունս Գէորգեայ: Այլ ի սրութենէ իմացման եւ ի կրից տանջանաց քարոզէին զնա որդի Աստուծոյ: Եւ այս է ասելն առաքելոյ, դեւք հաւատան եւ սարսեն: Նախ՝ զի հաւատաց գոլ որդի Աստուծոյ: Իսկ անահաւատք ուրանան զորդին: Երկրորդ՝ զՅիսուս ասաց որդի Աստուծոյ, այլ հրեայքն քարկոծէին: Երրորդ՝ գիտեմք զքեզ որդի Աստուծոյ, այլ հերետիկոսք բաժանեն զմիութիւն որդ[ւ]ոյն: Չորրորդ՝ որք զբժշկութիւնն ընդունէին, մարդ համարէին: Իսկ տանջեալն Աստուած քարոզէր: Հինգերորդ՝ առաքեալքն ի նաւին ահիւ զարհուրեալ՝ ո՞վ ոք է ասէին, եւ դեւն խաղաղութեամբ որդի Աստուծոյ ասէր: Վեցերորդ՝ երեսնամեայ ի մէջ նոցա կացեալ: Ոմն զեղիայ կամ այլ մարգարէ ասէին: Իսկ դեւք ի նոյն ժամն Աստուած քարոզէին:

Հարց. Մի՛ առաջ տանջէր:

Պատասխանի. Նախ՝ զի ծածկապէս անհնարին խոցէր եւ տանջէր զնոսա: Երկրորդ՝ զի ի մէջ անօրէնութեանն կալաւ զնոսա, որ զստեղծուածս նորա պէսպէս կտտէին, ոչ կարէին ասել թէ չմեղաք ինչ վասն այն աղաչեն: Երրորդ՝ զի գիտէին ի կատարածին զտանջանս իւրեանց, այլ համարէին թէ չմնայ դատաստանին: Իսկ թէ Մատթէոս երկու ասէ զիււահարս, եւ այլքն՝ մի (Վեն Ղուկ. Ը. 27, Մարկ. Ե. 2): Վասն զի մինն առաւել խստագոյն եւ դժընդակ էր, յիշեն:

Հարց. Չանուն ընդէ՞ր եհարց:

Պատասխանի. Նախ՝ զի լեզեոնն զօրաց պետն էր սատանայի, որպէս անդ ի լեառն զսատանայ յաղոթից եւ աստ՝ զզօրապետ նորին: Երկրորդ՝ զի ցուցցէ թէ բազումք էին բանկեալ, այսինքն՝ թուով՝ երկու հազար, որպէս յայտ է ի խոզիցն:



## ՎԱՍՆ ՈԳԻՈՑ ՄԵՌԵԼՈՅ

Հարց. Վասն էր ի գերեզմանս բնակէին դիւահարքն:

Պատասխանի. Զի կամէին դեւք նոր աղանդս ուսուցանել: Նախ՝ թէ հոգիք վախճանելոց ի գերեզմանս մնան: Երկրորդ՝ թէ հոգիք մարդկան դեւք լինին: Երրորդ՝ թէ ի յայլ մարմին մտանեն, որպէս դիւահարքն: Եւ այսմ աղանդոյ: Վեց իր օգնական երեւի: Նախ՝ մարմնափոխութիւնքն Պղատոնի: Երկրորդ կախարդք, որք մանկունս փողատեն, զի ոգիք սպանելոցն նոցա գործակից լինիցին: Երրորդ՝ «դեւքն, որ երեւեալ ասեն, ես այս անուն եմ ուրուական» որպէս Սամուէլ երեւեցաւ Սաւուղի (հմմտ. Ա. Թագ. Թ. 17): Չորրորդ՝ որպէս այժմ երեւին ի գերեզմանս այլազգեաց զանազան կենդանիք: Հինգերորդ, որ զմարմին մեռելոց շարժեն եւ խօսին: Վեցերորդ՝ «Գերեզմանք տունք նոցա եղիցին», ասէ մարգարէն (Մաղմ. ԽԸ. 12): Եւ այս ամենայն սուտ է եւ խաբէութիւն դիւական, որ ունկն դնիցեն սոցա, զոր մի լիցի քրիստոնէից զմտաւ ածել: Զի այլքն ամենայն, որ ասացաք, դեւք են որ երեւին եւ շարժեն զմեռեալ մարմինս: Եւ մարգարէն մարմնոցն ասէ զգերեզմանս տուն յաւիտենից եւ՝ ոչ հոգոց: Եւ զի ոգիք վախճանելոց ոչ մտանէ ի մարմին եւ ոչ երեւի յայտ է ի չորից: Նախ՝ թէ հոգին ի մարմին մտանէր, պարտ էր յիւր մարմին մտանել: Երկրորդ՝ ոչ էր պարտ զի վնասեալ հոգին, սպանողին գործակից լիցի: Երրորդ՝ զի կախարդք զգոյացութիւն մարմնոյ ոչ կարեն փոխել: Թէպէտ այլայլեն զպատահմունք, ապա եւ ոչ զոգին կարեն ի դեւ փոխել, զի մարմին է: Չորրորդ՝ ասէ մարգարէն՝ հոգի որ ելանէ այլ ոչ դառնայ եւ թէ հոգին երթայ առ Աստուած, որ ետ զնա: Եւ որպէս հոգիք արդարոց ի ձեռին Աստուծոյ են, առաւել հոգիք տղայոց, որ անփորձ են ի մեղաց եւ ի նոցանէ սպաննեալք: Նոյնպէս եւ մեղաւորին ոչ մնա ի գերեզմանս, այլ որոշեալ հեռացեալ են ի կայեանս հոգ[ւ]ոց եւ ոչ կարեն աստ դառնալ, որպէս մեծատունն աղաչէր զԱբրահամ երթալ առ եղբարս, եւ ոչ ետ թոյլ եւ ոչ զՂազար առաքեաց (հմմտ. Ղուկ. ԺԶ. 27-30): Այլ կան եւ մնան ամենայն հոգիք ի կայեանս իւրեանց, ոգիք սրբոց եւ անդրանկաց յերկինս եւ առ երկինս ի խորանս աջակողմեանս՝ ի տեղւոջ լուսոյ եւ հանգստեան, իսկ մեղաւորացն ոգիք ի ներքոյ երկնից ի ձախակողմեան խորանս ժողովեալ կան եւ սպասեն ահանգին ատենին եւ հրամանին Քրիստոսի՝

զի միաւորին ի մարմինս իւրեանց: Եւ այլն ասացեալ է ի Գիրս հարցմանց, անդ տեսցես: Այսքան առ այս:

## ՎԱՍՆ ԽՈԶԻՑՆ

Հարց. Վասն է՞ր աղաչեն ի խոզս մտանել:

Պատասխանի. Զի խոզն զնմանութիւն դիւաց ունի եւ նոցա հետեւողացն Դ. կերպիւ: Նախ՝ զի ոչ կարէ յերկինս նայել, այլ միշտ յերկիր, որպէս դեւքն եւ մեղսասէրքն ո՛չ յիմանալի կեանս: Երկրորդ՝ զի գիշակեր է, եւ ախորժելի է սատանայի մեղք: Երրորդ՝ զի գիշասէր է՝ ի տիղմն թաւալի եւ բեհմօթ ննջէ ի գիշային տեղիս, այսինքն՝ ի սիրտս բղջախոհաց: Չորրորդ՝ պատրանօք խնդրեցին, զի մտացեն ի խոզիցն հեղձնուլ, զի մի դարձցին ի բնակութիւնս իւրեանց:

Հարց. Վասն է՞ր հարմայեաց Քրիստոս մտանել ի խոզս:

Պատասխանի. Ասեն վարդապետք Ժ. պատճառս: Նախ՝ զի ցուցցէ դիւահարացն, թէ յորպիսի ի տանջանաց գերծան: Երկրորդ՝ զի ցուցցէ, թէ ոչ էր խնամքն Աստուծոյ պահեալ զնոսա եւս չարագոյն գահավէժ էին արարեալ: Երրորդ՝ զի ծանիցէ դիւահարն, թէ ոչ բռնութեամբ եմուտ ի նա, որպէս եւ ոչ ի խոզսն, այլ իւրն կամակցեալ ի մեղս ընկալաւ զնա ի մարմինն: Չորրորդ՝ զի ծանիցուք թէպէտ վասն մեղաց թոյլ ետ լիկել, բայց ոչ իսպառ կորուսանել, որպէս զխոզսն, այլ աջովն իւր պահեաց ի կորուստենէն: Հինգերորդ՝ զի ցուցցէ զպահպանութիւնն Աստուծոյ առ ամենայն մարդ յամենայն ժամանակս եւ այս մի այն զհասարակ: Այլ եւ զիւրաքանչիւր մարդ որպէս ասէր ձեր իսկ եւ ամենայն հեր գլխոյ թուեալ է: Վեցերորդ՝ զի աշխարհն այն անծանօթ էր Քրիստոսի, վասն որոյ արար սքանչելիս դիւահարացն եւ զկորուստ խոզիցն, զի ծանիցեն զգորութիւն Աստուածութեան նորա: Եւ թներորդ՝ սահմանեցին գերգեսացիք ոչ տեսանել զնշանսն Քրիստոսի, թոյլ ետ դիւաց կորուսանել զխոզսն, զի յակամայ ելցեն առ Քրիստոս: Ութերորդ՝ զի ցուցցէ գերգեսացւոցն թէ որք ի ձեռանէ իմմէ մերժեալ են կորնչին որպէս խոզքն ի դիւաց: Դուք զիա՞րդ որ ընդունիք զհալածողս դիւաց: Իններորդ՝ ցուցանէ զտկարութիւն դիւաց, զի ոչ ի խոզսն կարեն մտանել որչափ եւս ի պատկերն Աստուծոյ, առանց թոյլ տալոյ: Տասներորդ՝ յոյս տայ ամենայն մեղաւորաց,



յորժամ դառնան եւ աղաչեն, լսէ նոցա, թերեւս չիցեն քան զդեւս յանցաւորք:

Հարց. Վասն է՞ր աղաչեն գնալ ի սահմանաց նոցա:

Պատասխանի. Վասն Դ. պատճառի: Նախ՝ վասն անմտութեանց իւրեանց մերժեցին զլոյսն եւ զբժիշկն ինքեանց: Երկրորդ՝ զի չար փոխանակ բար[ւ]ոյ հատուցան, որ զհալածողն դիւաց հալածեցան: Երրորդ՝ երկեան, զի մի զայրացեալ հրաման տացէ դիւաց մտանել ի նոսա, որպէս ի խոզսն:

Հարց. Դեւքն վասն էր կոտորեցին զխոզսն:

Պատասխանի. Զի ամենայն ուրեք կամին զկորուստ մարդկան: Երբեմն մեղօք կորուսանեն զհոգին: Երբեմն զմարմինն կորուսանեն: Երբեմն զինչսն, զի տրտմեացին եւ յուսահատին:

Հարց. Որպէս գիտէին դեւքն, թէ նայ է Քրիստոս, ըստ այնմ, զոր աղաչեն, թէ գիտեմք զքեզ սուրբն Աստուծոյ, եւ թէ որդի Աստուծոյ:

Պատասխանի. Գիտութիւն նոցա յաղագս Քրիստոսի, ոչ էր լուսաւոր գիտութիւն, որպէս հրեշտակաց եւ մերս, այլ փորձիւ գիտութեամբ, զի ոչ ոք ի մարդկանէ կամ հրեշտակաց ինքնիշխան զօրութեամբ չարչարէր զնոսա, որպէս յայնժամ տագնապէին զի թէ մարգարէքն հալածէին զդեւս, աստուածային էր զօրութիւնն եւ ոչ նոցա: Նա եւ ոչ հրեշտակք իւրեանց զօրութեամբն, եթէ ոչ կարողութեամբն Աստուծոյ: Ըստ այնմն որ վիճէր ընդ Միքայէլի սատանայի վասն մովսիսեան մարմնոյն ասաց հրեշտակն, սաստեացէ ի քեզ, Տէր, այսպէս եւ յամենայն ուրեք գտցես:

Ղուկաս Ը. 26-39

ԻԳՆԱՏԻՈՍ ՍԵՒԼԵՈՆՅԻ

(Գլուխ Ը)

Ապա անցեալ առ Գերգեսացիսն զչար եւ զստամբակ ծառայսն ըմբռնէ ի չարագործութեան իւրեանց, զի իբրեւ զաւազակս ըմբռնեալ չարչարէին զծառայակիցսն իւրեանց: Վասն որոյ նեղէ, չարչարէ զնոսա՝ ծածուկ զաւրութեամբ, եւ նոքա աղաչէին զՆա, զի մի վրէժինդրութիւն նոցա նախքան ժամանակն լիցի:

Խնդրեն անարգքն եւ տղմասէրքն՝ մտանել ի խոզսն, եւ Նա թոյլ տայ, սակայն խոզիւքն հանդերձ ի խորս ծովուն պահէ զնոսա: Վասն զի խորհեցան խոզիւքն դառնալ ի տունս նոցա: Զայս տեսեալ գերգեսացւոցն՝ երկեան, թէ գուցէ զնոյն կրեն ամենեքեան նոքա: Եւ յայտնի էր նոցա, զի ոչ էին բաւական բնակելոյ առ նոսա՝ մեծութեան Նորա: Վասն այնորիկ աղաչէին, զի գնացէ ի սահմանաց նոցա: Իսկ բժշկեալն երկեաւ մնալ անդէն, այլ կամեցաւ գնալ ընդ Նմա: Իսկ Յիսուս ասաց նմա՝ մնալ ի նմին եւ քարոզել զգաւրութիւն Նորա եւ Ինքն, մտեալ ի նաւ, դառնայ անդրէն: Եւ ժողովուրդն ակն ունէին Նմա, որ ոչ էին նախանձու չարութեամբ ընդ Նմա:

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

(Գլուխ Ը.)

Իջին յաշխարհն Գերգեսացոց, որ է յայնկոյս հանդէպ Գալիլիայ (Ղուկ. Ը. 26):

ՈՎ Եւ ընդ ելանել նոցա ի ցամաքն, պատահեաց նոցա այր մի դիւահար: Ընդէ՞ր Մատթէոս երկուս եւ Ղուկաս մի ասէ: Զի մինն դժնդակ էր, զի զկապանսն եւ զշղթայսն խզէր եւ ընդ անապատսն մոլորեալ շրջէր: Իսկ Մարկոս ասէ, թէ՝ «Քարամբք կոծէր զանձն» (Մարկ. Ե. 5):

ԻԳ Արդ՝ զծառայակիցն իւրեանց ըմբռնեալ չարչարեցին, վասն որոյ նեղեալ չարչարէ զնոսա Քրիստոսի ծածուկ զաւրութիւնն:

Եւ ո՛չ ի փան բնակէր, այլ ի գերեզմանս (տես Ղուկ. Ը. 27):

ԱՍՐ. Քանզի ի գերեզմանս բնակէին դեւքն չարաչար: Նաեւ, զի ո՛չ միայն ի կենդանեաց մարմին բնակին, այլեւ ի մեռելոց: Իսկ ի հանդիպել[ն] Յիսուսի՝ ելեալ ի մեռելոցն, եւ աղաչէին:

Զի՞ կայ իմ եւ քո՝ Որդի Աստուծոյ (Ղուկ. Ը. 28):

Արդ՝ Որդի Աստուծոյ կոչէին զՅիսուս, որպէս պարտեալ ի նորա զաւրութեան են եւ սքանչացեալք ի վարդապետութիւն նորա, որպէս Որդոյ Աստուծոյ, քանզի ժողովուրդքն մարդ համարէին զնա: Եկին դեւքն եւ Աստուած քարոզեցին զնա:



Աղաչեմք զքեզ, մի՛ փանջեր զմեզ փարաժամ (հմմտ. Ղուկ. Ը. 28):

**Եփ.** Տէր մեր ժամանեաց, կալաւ զնոսա յանաւրէն գործս, զի զստեղծուած նորա պէսպէս կտտանաւք կտտէին: Եւ վասն առաւելութեան անաւրէնութեան իւրեանց համարէին, թէ ո՛չ մնայ ժամանակին պատասխանի, կամ վասն այնորիկ ազաչէին, զի մի՛ առաքեացէ զնոսա յանդունդս: Զի թէ հրամայեալ էր զայն, ո՛չ կարէին ա՛յլ ուրեք լինել, վասնզի զփորձ առին զաւրութեան նորա, եւ որպէս ո՛չ յայտնեաց զանձն ի փորձութեան անապատին՝ եւ ո՛չ աստ:

Եւ անդ էր երամակ մի խոզից արաւփական: Աղաչեցին զՅիսուս, զի հրամայեսցէ նոցա մտանել ի նոսա (տե՛ս Ղուկ. Ը. 32):

**ՍՏ** Աստ յայտ արար, թէ ո՛չ ի խոզսն իշխեն մտանել, որչա՞փ եւս ի պատկեր[ն] Աստուծոյ: Եւ զի հեղձեալ ի ջուրսն ազատեսցեն ի խոռվութեանց նոցա, զի եւ խորհեցան դեւքն դառնալ ի տունս նոցա:

Ելին դեւքն եւ մտին ի խոզսն, եւ դիմեցին ի ծովն եւ հեղձան (տե՛ս Ղուկ. Ը. 33):

**Ոկ.** Ընդէ՞ր կոտորեցին դեւքն զխոզսն: Քանզի ամենայն ուրեք տրտմութիւնն փութան ածել ի վերայ: Նաեւ կարի իմն խնդան ընդ կորուստն եւ չար անցս, քան զխոզսն ընդ նոսա անցուցանէին: Եւ եթէ ո՛չ՝ [յ] Աստուծոյ խնամոցն արգելեալ էր զմեզ, չար քան զանասունսն սատակէին:

Իսկ խոզարածքն փախեան եւ պապմեցին ի քաղաքն (տե՛ս Ղուկ. Ը. 34):

Քանզի զոր ինչ ո՛չ կամէին դեւքն լինէր: Զի Քրիստոսի զաւրութիւնն լուսաւորեալ քարոզէր եւ դիւացն զաւրութիւնն յամալթ լինէր, որպէս յանապատին եւ յաստուածածանաւթութիւն ձգէր զմարդիկքն:

Եւ ելին փեսանել զգործսն, եւ եկին առ Յիսուս (հմմտ. Ղուկ. Ը. 35):

Զի կարի անմիտք էին գերգեսացիքն, որք սահման եղին ինքեանց ո՛չ ելանել եւ տեսանել զնշանսն Տեառն, եւ զի ազա՛ք եւ վաճառասէ՛րք էին: Վասն այնորիկ հեղձուցանէր գերամակս խոզից նոցա, զի ակամայ ելցեն, տեսցեն զնա:

Աղաչէր զնա ամենայն բազմութիւն գերգեսացոց զնալ ի սահմանաց նոցա (տե՛ս Ղուկ. Ը. 37):

**ԵՓ** Հալածեցին գերգեսացիքն ի դաւառէ իւրեանց զայն, որ կարող էր հալածել զդեւս ի սահմանաց նոցա: Զի երկեան բնակիչք երկրին այնորիկ, զի մի՛ հրաման տայցէ դիւացն մտանել ի նոսա: Վա՛յ է նոցա, զի դեւք մտանելոց են ի նոսա, որք հալածեալ են յամենայն տեղիս: Առաւել բազմանան ցաւք նոցա, զի բժշկին ո՛չ հտուեն մտանել յինքեանս:





**8. ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ ԱՆՂԱՄԱԼՈՅԻՆ Ի ԿՎՓԱՌԱՅՈՒՄ**

**Մաքթեոս Թ. 1-8**

**ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՅԻ**

(Գլուխ Զ)

**Եւ մտնալ ի նաւ եկն ի քաղաք իւր** (հմմտ. Մաքթ. Թ. 1):

Իրաւապէս մեկուսանալը յիւր գաւառէն, ուր ասացեալ խոզքդ արածէին, եւ գայր ի պատշաճեալ տեղին, յորում բժշ[կ]եալ զանդամալոյծն, ասաց. «Թողեալ լիցին քեզ մեղք քո» (Մաքթ. Թ. 3), քաջալերեաց, որդեա՛կ, եւ նշանակէ, զի է ինչ ախտաժեւոթիւն մարմնոյ, որ յաղագս յանցանաց հոգւոյն լինի, եւ վասն զի հաւատաց ախտաժեւոթ հոգւով եւ մարմնով յորդին Աստուծոյ՝ բոլորով սրտիւ, թողան մեղք նորայ եւ մարմինն առողջացաւ որպէս ցուցանէ պատմագիր աւետարանիչդ, թէ ասաց նմա Յիսուս՝ «Առ զմահիճս քո եւ շրջեաց» (տե՛ս Մաքթ. Թ. 6) եւ կամ ըստ միւսոյ աւետարանչին, որ ասէ. «Առ զմահիճս քո եւ երթ ի քուն քո» (Ղուկ. Ե. 24, Մարկ. Բ. 11). «մահիճք» եւ «տախտ» մարմինդ լսի, զոր առեալ հոգւոյդ ի վեր ունի, արդ ասէ զհոգին Բանն Աստուծոյ. «Առ զմահիճս քո զմարմինդ առողջացեալ՝ եւ ե՛րթ ի տ[ո]ւն քո», այսինքն՝ յառաքինութիւն, որ է բնակութիւն հոգւոյ ազատելոյ ի մեղաց, եւ նա ազատեցաւ ըստ առակի վերաբերութեանդ:

**ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՎ ԵՓՐԵՄ**

**Իբրեւ անց յայնկոյս, եկն ի քաղաք իւր** (հմմտ. Մաքթ. Թ. 1):

Իւր քաղաք զԿապեռնաւում կոչէ, զի ծնաւ զնա Բեթղեէմ եւ սնոյց նազարէթ եւ բնակութիւնն միշտ Կապեռնաւում էր:

**Բերէին առաջի նորա, անդ(ամալոյծ մի)** (հմմտ. Մաքթ. Թ. 1):

Անդամալոյծս այս այլ եթող զայն, որ ի Յոհանն կայ, զի նայ առ աւագանին անգեալ դնէր յերուսաղէմ (հմմտ. Յովհ. Ե. 1-18), եւ սա ի

Կապեռնաւում էր եւ նորա Լ. (30) եւ Ը. (8) ամ էր ախտին, եւ զսմանէ ոչ այնպէս ինչ ասէ, եւ նմայ ոչ ոք էր, եւ սմայ գոյին խնամակալք, քանզի եւ բարձեալ իսկ մահճաւնք բերեն: Իսկ այլքն ասեն, թէ զձեղուն եւս բացին եւ իջուին առաջի նորա (հմմտ. Մարկ Բ. 4, Ղուկ. Ե. 19): Եւ քանզի բազում իսկ տեսողքն շուրջ կային, զի եւ զմուտն փակեալ, վասն այնորիկ ի վերուստ ի վայր կախեցին: Բայց խաւսեցան ոչինչ ընդ նմայ, զի ամենայն ինչ ի նայ ապաստան առնէին: Իսկ Յիսուսի տեսեալ զհաւատսն նոցա, ասէ ցանդամալոյծն. «Թողեալ լինիցին քեզ մեղք քո»:

**ԵՓ Տն՛ս դու հաւատք այլոց այլս զինչ գործեցին եւ զի ոչ չպահանջեաց նայ ի նմանէ հաւատս, զի շինուած էրն նայ խախուտ, զոր աւրինակ ոչ ի միամաւրէ անտի պահանջեաց, այլ ի հաւրէ նորա:** Եւ ոչ յաղջկանէ անտի, այլ ի մաւրէ նորա: Բայց առ այն եւ ախտացելոյն էին հաւատք:

**Ա Քանզի ոչ առնոյր յանձն կախիլ, թէ չէր հաւատացեալ եւ քանզի այնպիսի հաւատս եցոյց, ցուցանէ եւ նայ զիւր զաւրութիւնն, զի իշխանութեամբ զմեղսն թողոյր (ք) եւ զանդամսն հաստատէր.** աստ յայտ արարեալ ամենեւին եթէ հանգիտապատիւ է ծնաւդին:

**ԵՓ Եւ զի ի մեղս իւր լուծաւ նայ:** էհաս ի սկզբանն Տէրն ամենայնի եւ քաւեաց եւ բժշկեաց զնայ: Քաւեաց զծածուկ մեղս նորա եւ բժշկեաց զյայտն ի մարմին նորա: Եւ հաւատարիմ եղեւ նայ յայտնեաւն եւ վասն ծածկելոյն, թէ Աստուած է նայ ի ծածուկ եւ մարդ՝ յայտնի: Զի վասն արտաքին մարդկութեան նորա յայտ եղեւ, թէ մարդ եղեւ, վասն ներքին մեծութեան նորա՝ թէ Աստուած է:

«Թողեալ լիցին, ասէ, քեզ մեղք քո»: Զոր մեղս թողոյրն նայ, զայն որ նմայ մեղաւ: Եւ զի արդ էր աւրինացն, զինչ պարտ էին նմայ մարդիկք կամ նմայ, կամ հաւր նորա, այնքիկ որ ոչ ընդունէին զնայ ի գործ ինչ, զաւրութեան, որ արգարութեամբ եւ ոչ աւրէնսդրութեամբ: Իսկ մեղս այս որ պարտեալ լինէին աւրինացն, զիա՞րդ թողոյր Յիսուս, թէ ոչ էր ազգակից նորա կամ յայտ է այս, թէ ծնունդ է նորա: Զինչ ասեն պիտոյ էր այն, զի ասաց՝ «Թողեալ լիցին քեզ մեղք քո», եթէ ո՞՞ վասն մեղաց հիւանդացեալ եւ լուծեալ էր նայ: Եւ զի արդ թողոյր զնոսա, թէ չէր նմա պարտական անդամալոյծն: Բայց նոքայ, քանզի չարեւք զգածեալք էին, ոչ



կամէին զիրսն ի վեր հանել: Եւ թէպէտ ոչ կամէին սակայն զնոյն կազմէին ակամա, քանզի ամենահնար, ամենագէտ է, Զնախանձն նոցա ի յայտնութիւն նշանակի ի կիր արկանէր եւ քանզի աղմկեալ եւ խռովեալ ասէին, թէ հայհոյէ՝ ո՞ր կարէ թողուլ զմեզս, բայց միայն մի Աստուած: Եւ քանզի այնպէս կարծէր լսողացն, թէ ինքն ինչ զիւր անձն յարգիցէ, վասն այնորիկ այլովքն զիւրն հաստատէր եւ, այն էին զարմանք, զի ոչ բարեկամաւք, այլ թշնամաւք: Եւ այն իսկ էր նորա իմաստութեան առաւելութիւն. բարեկամաւքն յորժամ ասիցէ՝ «կամիմ սրբեաց», իսկ թշնամեաւքն, քանզի ասէին, թէ ոչ ոք կարէ թողուլ զմեզս եւ նայ ի նոյն յարէ: Զի զիտասջիք եթէ որդի մարդոյ իշխանութիւն ունի յերկրի, թողուլ զմեզս: Աստ եւ միւս եւս նշանակ՝ ոչ փոքր զիւրոյ աստուածութեանն յայտ առնէ: Եւ քանզի հանգիտապատիւ է Հաւր, զի նոքայ ասէին, եթէ զմեզս թողուլ միայն Աստուծոյ է: Եւ նայ ոչ միայն զմեզս, այլ նախ եւ իմն ցուցանէ, որ յԱստուծոյ միայն էր, զսրտիցն ծածուկսն ի չէր հանել:

«Ոմանք, ասէ, ի դպրացն խորիէին ընդ միքս, եւ նայ ասէ զի խորիք չարիս ի սիրտս ձեր» (հմմտ. Մարթ. Ե. 8-9):

Որ Աստուծոյ միայն է զծածուկսն ճանաչէ, որպէս եւ մարգարէն ասէ, թէ դու միայն իմանաս զսիրտս (հմմտ. Բ. Մնաց. Զ. 30): Եւ դարձեալ թէ, որ քննէ զսիրտս եւ զերիկամունս, Աստուած է (հմմտ. Երեմ. Ի. 12): Եւ Երեմիայ ասէ. «Ծանր է եւ սիրտ քան զամենայն, մարդ է՝ եւ ո՞ր ծանիցէ զնայ» (հմմտ. Երեմ. ԺԷ. 9), Բագում եւ այլ իրաւք իմանալ, թէ Աստուծոյ միայն է ճանաչել զսիրտս: Եւ արդ, իբրեւ եցոյց, թէ Աստուած է եւ զուգական ծնաւորին, այնու, զի ծանեալ, որ ինչ նոքայ խորհել էին, ասէ՝ «զի՞նչ զիւրին է ասել զանդամալոյծն՝ թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ ասել՝ արի՛ եւ գնա՛յ» (հմմտ. Ղուկ. Ե. 23): Եւ զոր ասէն այսպիսի ինչ է: Զեզ, ասէ զմարմին լուծեալ, պնդեալ զիւրին է տեսանել եւ ո՛չ զոգւոյ մեղսն թողուլ: Այլ որպէս ոգի քան զմարմին լաւագոյն է, նոյնպէս եւ մեղացն թողութիւն մեծ է քան զմարմնոյ պնտել. այլ մինն աներեւոյթ է, եւ միւսն յայտնի: Յաւելումն զփոքրն եւ զյայտնին, զի նովաւ մեծն եւ աներեւելին առնուցու զիւրոյ արդեանցն զհանդէս: Տեսեալ, ասէ, ժողովրդոյն փառաւոր առնէին զԱստուած զտուրիչն այնպիսի իշխանութեան մարդկան (հմմտ. Մարթ. Թ. 1): Նայեւ այն իսկ առ ժամանակն ոչ փոքր էր, քան զամենայն մարդիկ զնայ մեծ կարծեալ եւ

յԱստուծոյ եկեալ, զի թէ յայն բարուոք էին հաւատացեալ, ապա եւ ոտն ոտն յառաջ գային ճանաչել, թէ որդի է Աստուծոյ:

### ՅՈՎՆԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ

(Գլուխ Թ):

Եւ մտեալ ի նաւ՝ անց յայնկոյս եւ եկն ի քաղաք Իւր (Մարթ. Թ. 1):

Ո՛չ ի հեթանոսս միշտ առնէր զընթացս Իւր, այլ այնչափ միայն, զի նախանձ արկցէ նոցա՝ ըստ այնմ. «Անմիտ ազգաւ զկծեցուցից զնոսա» (Նոոմ. Ժ. 19): Իսկ «քաղաք Իւր» զԿափառնառում կոչէ, զի ծնաւ ի Բեթլեհեմ եւ սնաւ ի Նազարեթ եւ զընակութիւն Իւր միշտ ի Կափառնառում առնէր:

Եւ ահա մաքուցին առ Նա անդամալոյծ մի, որ դներ ի մահիճս (Մարթ. Թ. 2):

Անդամալոյծս ա՛յլ է, թո՛ղ գայն, որ Յովհաննէս ասէ, զի նա առ աւագանաւն անկեալ դնէր յԵրուսաղէմ (հմմտ. Յովհ. Ե. 2-15), եւ սա ի Կափառնառումն էր. եւ նորա երեսուն եւ ութ ամ էր հիւանդութեանն, իսկ զսմանէ ոչինչ այնպէս ճառէ. եւ նա ոչ ունէր զոք օգնական, եւ սորա գոյին խնամակալք, քանզի եւ բարձեալ իսկ մահճօք բերէին, որպէս եւ Մարկոս ասէ, թէ քակեցին զառաստաղն եւ իջուցին առաջի Նորա (հմմտ. Մարկ. Բ. 4): Քանզի բազում իսկ տեսողք շուրջ կային, վասն այնորիկ ի վերուստ ի վայր կախեցին, բայց խօսեցան ոչինչ ընդ Նմա, զի զամենայն ինչ ի Նա ապաստան արարին:

Եւ րեսեալ Յիսուսի զհաւաքս նոցա՝ ասէ ցանդամալոյծն. «Թողեա՛լ լիցին քեզ մեղք քո» (Մարթ. Թ. 2):

Տե՛ս աստ, թէ հաւատք այլոց ի յայլս զի՛նչ զործեն, քանզի ի նմանէ ոչ պահանջեաց հաւատս, զի շինուած էր նա խախուտ, որպէս եւ ո՛չ ի միամօրէ անտի խնդրեաց, այլ ի հօրէ նորա (հմմտ. Մարթ. ԺԷ. 14-21, Թ. 14-29, Ղուկ. Թ. 37-43), եւ ո՛չ յաղջկանէն, այլ ի մօրէն, զի ասաց թէ՛ «Շունք յագին ի փշրանաց [անկեղոց ի սեղանոյ րեստն իրեանց]» (հմմտ. Մարթ. ԺԵ. 27). այսպէս եւ աստ: Նաեւ առ այս իւր իսկ ինքեա՛ն գոյին հաւատք, ապա թէ ոչ՝ զիա՞րդ յանձն առնոյր կախել զճեղուանէն, վասն այսորիկ ասէ. «Թողեա՛լ լիցին քեզ



մեղք քո»: Նախ՝ զաստուածական զօրութիւնն իւր ծանուցանէ, թէ եւ անյայտիցն է գիտակ, որպէս եւ յաջորդաւ զսոյն հաստատէ: Եւ երկրորդ՝ թէ ի պատճառս մեղաց ունին ցաւք զմարմին նորա, վասն այտորիկ նախ զմեղան թողու, զի եւ մարմինն առողջացի: Եւ երրորդ՝ հանգիտապատիւ ցուցանէ զինքն Մնողին Իւրում՝ թողլով զմեղս: Եւ չորրորդ՝ զի քաւեաց եւ բժշկեաց զնա, քաւեաց զծածուկ մեղս նորա եւ բժշկեաց զյայտնի մարմին նորա, եւ հաւատարիմ եղեւ վասն ծածկելոյ մեղաց նորա, թէ Աստուած է ի ծածուկ եւ մարդ է յայտնի՝ վասն արտաքին մարմնոյ նորա, զի առողջացոյց: Եւ հինգերորդ՝ զի ցուցցէ, թէ չէ՛ նա օտար Օրինացն, քանզի զի՞նչ պարտ էր նա, եւ կամ զո՞ր մեղս նմա թողոյր, եթէ ոչ՝ զՕրինացն, զի պարտական էր նորա:

Եւ ահա ոմանք ի դպրացն ասեն ընդ միքս. «Նայիոյէ՛ Դա» (Մարթ. Թ. 3):

Ո՛չ ամենեքեան, այլ որք նախանձու վառեալ էին՝ խռովէին, բայց պակուցեալք ի բազում հրաշիցն՝ ոչ յայտնի, այլ ի միտս իւրեանց տրտնջէին եւ զիրն հայհոյութիւն կոչէին եթէ՛ «Ո՞ կարէ թողուլ զմեղս, բայց Աստուած», – ասէին, քանզի այնպէս կարծէին լսողքն, թէ ինքն զիւր անձն յարգիցէ. վասն որոյ զայս կարծիս ոչ լուծանէ, այլ իմաստութեամբ հաստատէ, թէ յաղագս այնորիկ թողու, զի Աստուած է:

Եւ ծանուցեալ Յիսուսի զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա. «Ընդէ՞ր խորհիք դուք չարիս ի սիրքս ձեր (Մարթ. Թ. 4):

Յոյժ ծանօթութիւն տայ ճշմարիտ աստուածութեանն՝ ճանաչելով զսիրտս նոցա՝ ըստ մարգարէին եթէ՛ «Դո՛ւ միայն իմանաս զսիրքս մարդկան» (հմմր. Գ. Թագ. Ը. 39), եւ՝ «Որ քննէ զսիրքս եւ գերիկամունս՝ Աստուած է» (Մաղմ. Է. 10), եւ երեմիաս թէ՛ «Ծանր է սիրք [քան] զամենայն, եւ... մարդ է, եւ ո՞ ծանիցէ զնա» (հմմր. Երեմ. ԺԷ. 9), որով եցոյց, թէ Աստուած է: Ապա եւ այլով իւրիք զսոյն հաստատէ եւ ի ձեռն նշանին զնոսին յանդիմանէ, եթէ յայտնի զօրութեամբք եւ ծածուկ թողութեանն հաւատայցէք, զի նոյն իշխանութիւն, որ զախտսն բուժէ, նաեւ զմեղսն հալածէ: Իսկ ասելն թէ՛ «Զի՞ խորհիք չարիս ի սիրտս ձեր», նախ՝ ցուցանէ զչարութիւնն կամացն զոյ, վասն որոյ եւ ընդ դատաստանաւ է, եւ երկրորդ՝ չարութիւն զտրտունջն ասէ եւ կամ զայն, զի հայհոյեցին

թէ՛ «Ո՞ է Դա», զի որ զԱստուած յաստուածութենէն զրկէ, յոյժ չար է, հաւասար այնմ, որ զքարն աստուածացուցանէ:

Զի՞նչ դիւրին է ասել՝ «Թողեալ լիցին քեզ մե՞ղք քո», թե՛ ասել՝ «Արի՛ եւ շրջեա՛ց» (Մարթ. Թ. 5):

Արդ՝ վասն զի չարեօք զգածեալ էին եւ ոչ կամէին զիրան ի վեր հանել, եւ թէպէտ չկամէին, սակայն զնոյն կազմէին, իսկ Ամենագէտն զնախանձ նոցա հարցմամբս ի կիր արկանէ թէ՛ «Զի՞նչ դիւրին է», այսինքն՝ ձեզ դիւրին է զմարմին լուծեալ՝ պնդեալ տեսանել եւ ոչ զոգւոյ մեղսն թողուլ: Այդ նախանձ իսկ է երկակողմանի. մի՛ առ այրն՝ զի ոչ կամիք փրկութեան նմին հասանել եւ ազատիլ ի պատճառէ իրացն, վասն որոյ հիւանդացեալն է, եւ երկրորդ՝ առ Իս՝ զի մի՛ աստուածութիւնս Իմ հրատարակիցի: Բայց ես երկոցունց ընդդէմ առնելոց եմ. նախ զոգւոյ զմեղսն թողուլ ախորժեմ, որպէս զի լաւագոյն է քան զմարմին, նոյնպէս եւ մեղացն թողութիւն գերագոյն է մարմնոյն պնդութեան, եւ ապա զմարմինն, զի երեւելի մարմնոյն առողջութեամբ եւ աներեւոյթ հոգի՛ն առցէ զիւր արդեանցն հանդէս, որով եւ իշխանութիւն աստուածութեանս Իմոյ ծանիցի: Եւ ա՛յլ ազգ. մարմնոյ բժշկութիւնն, ասէ, ինձ յոյժ դիւրին է քան զմեղաց թողութիւնն, որ է հոգեկան առողջութիւն, բայց զի զմարմինն եւ ներհմուտ բժիշկք բժշկեն եւ բազումք ի սրբոց արանց առողջացուցանեն, այլ ես զհոգին բժշկել խնդրեմ: Է՞ր վասն:

Այլ զի գիտասօրիք, եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս» (Մարթ. Թ. 6):

Միթէ՛ յերկինս ո՞չ ունիցի. ո՛չ զայս ասէ, այլ թէ՛ յերկինս քաջայայտ է հրեշտակացն առնել զոր կամիմն իշխանաբար, իսկ ազգաց երկրաւորաց, առ ի չճանաչելոյ զԻս, տակաւին ոչ է յայտնի, եւ կամիմ, թէ եւ սոցա՛ ծանիցի, թէ Որդի մարդոյ, յոր գայթաղիքս ի ձեզ մարմնոյս, Որդի Աստուծոյ է՝ թողող մեղաց պարտաւորաց: Բայց դու տե՛ս զիմաստսն, զի ո՛չ ասաց՝ իշխանութիւն ունի Որդին Աստուծոյ յերկրի թողուլ զմեղս, այլ թէ՛ Որդի մարդո՛յ, որով զանքակ եւ զանորոշ մարդն, որ ընդ Աստուած Բանն էր միաւորեալ անշփոթաբար, նշանակեաց, զի որ էառ մարմին, ո՛չ հրաժարեաց ի մարդոյն եւ «Որդի մարդոյ» ասաց զինքն վասն Աղամայ եւ Կուսին, այլ եւ զբոլոր մարդկութիւնն զգեցնով՝ զբոլորն սրբեսցէ:



**Յայնժամ ասէ ցանդամալոյծն.** «Արի ա՛ն զմահիճս քո եւ ե՛րթ ի փուն քո» (Մարթ. Թ. 6):

Որպէս ասացաւ, առ ի Հաստատութիւն Հոգեկան առողջութեանն կազդուրեաց եւ զմարմին, որով եցոյց, թէ Նա՛ է, որ զթոյլ եւ զծանր բնութիւն Հոգոյ ստեղծեաց խօսուեն բանական եւ եզ ի յերկրի եւ կենդանաստեղծէ զլուծեալ սերման զօրութիւն նախախնամական բանիւ յարգանդ կնոջ Հրաշալի իմն գոյացութեամբ, եւ զՀոգացեալ բնութիւնս կրկին ձուլմամբ ձուլեաց եւ «նորոգելոց է յարութեանն շնորհիւ զխոնարհութիւն մարմնոյ մերոյ՝ կերպարանակից առնել աստուածութեան փառաց Իրոց» (հմմտ. Փիլա. Գ. 21)՝ ըստ այնմ թէ՛ «Մշակօքնատր է՝ Որ լուծանելոց է զիս յերկրի՝ յարուցանել զմորթ իմ, որ կրեաց զայս ամենայն» (Յոր ԺԹ. 25-26) բանիւ միայնոյ, որպէս ասէ թէ՛՝

**Եւ յարուցեալ գնաց ի փուն իւր** (Մարթ. Թ. 7):

(ի փառս դրախտին)

Իսկ առ ի միտս՝ Հոգի մաշեալ ի մեղաց՝ լուծանի ի պնդութենէ արիականն մասինն եւ հեշտացեալ ի յօրացմունս մարմնականս իբր ի մահիճս, որ բարձեալ է ի չորից հիւթոց, իսկ եթէ պատահեսցի բանի խրատու աւետարանական վարդապետութեան՝ եւ հաւատացեալ Ասողին թէ՛ «Ասա զմեղս քո, զի արդարացիս» (Ես. ԽԳ. 26), եւ կամ բանին առաքինութեամբ խոհականն մասամբ զգաստացի, յայնժամ յարուցեալ կանգնի ապաշխարութեամբ ի մեղաց ախտից՝ ի մահճէ մարմնոյ իւրոյ, եւ երթիցէ ի տուն իւր՝ յիմաստութիւն եւ յարիւրութիւն, յողջախոհութիւն եւ յարդարութիւն՝ ընդ իւր տանելով եւ զմարմինն՝ ի պէսպէս գործս առաքինութեան արձանացուցանել:

Իբրեւ փեսին ժողովուրդքն, զարմացան եւ փառաւոր առնէին զԱստուած զՏուիչն այնպիսի իշխանութեան՝ մարդկան (Մարթ. Թ. 8):

Տես, թէ ո՛րպիսի իրօք հաստատէ զիրսն՝ ոչ միայն բարեկամօք, այլեւ թշնամեօք. բարեկամօք՝ որպէս բորոտիւն եւ հարիւրապետիւն, եւ թշնամեօք՝ Հայհոյջօքն, որք տեսեալ զնշանսն՝ ի զարմացումն եկին՝ քննելով ի միտս իւրեանց, թէ գուցէ որ զայս առնիցէ, Աստուած իցէ, զոր նախ ասէաք՝ Հայհոյէ: Եւ այսպէս փառաւոր առնէին զԱստուած, զի թէպէտ ոչ կատարելապէս ծանեան, սակայն առ սակաւ սակաւ յառաջ գային ի հաւատս՝ այժմ կարծելով յԱստուծոյ գոլ զՆա եւ գեր քան զամենայն մարդիկ ընկալեալ իշ-

խանութիւն ի վերայ մարդկան ախտից, եւ փոքր ինչ յետոյ՝ Որդի Աստուծոյ:

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՅԻ**

(Երրորդ հապոր, գլուխ Ե)

**Բերին անդամալոյծ մի մահճօք** (Մատթ. Թ. 2):

Ոչ է անդամալոյծն այն զոր Յովհաննէս պատմէ, զի այն յերուսաղէմ էր (հմմտ. Յովհ. Ե. 2-15) եւ այս ի Կափառնաւուժ, որպէս ասէ մեկնիչն: Եւ տե՛ս զի ի ձեռն հաւատոց ընտանեաց զնա բժշկեաց: Եւ զգուտոր միամօրն յարոյց վասն հաւատոյ Հօրն: Եւ այլ բազումս: Յուցանէ թէ վասն հիւանդաց կամ մեռելոց կամ կենդանեաց աղաչէ ոք, լսէ Աստուած, թէ եւ կարի իսկ մեղաւոր իցէ, զի յոյժ զօրաւոր են աղօթք արդարոց յօգնութիւն, ասէ Յակոբոս:

Հարց. Վասն է՞ր, ասէ, թողեալ լիցին մեղք:

Պատասխանի. Վասն Զ. պատճառի: Նախ՝ զի ցուցցէ, թէ ախն այն վասն մեղաց հանդիպեցաւ: Երկրորդ՝ թէ ոչ որպէս այլ բժիշկք, որք զմարմինն բժշկեն: Իսկ նորա այն գերազանցէ, զի զՀոգի եւ զմարմին բժշկէ: Երրորդ՝ զի ցուցցէ, թէ ոչ վասն մարմնոյ ինչ առողջութեան եկն եւ մարդացաւ, այլ Հոգւոյ, զի Հոգին է առաւել քան զմարմին եւ պատկեր Աստուծոյ: Չորրորդ՝ ծածուկ եւ յայտն ի բժշկաց, այսինքն՝ զՀոգի եւ զմարմին, զի զծածուկ՝ աստուածութիւն իւր եւ յայտնի՝ զմարդկութիւնն: Հինգերորդ՝ ի ցուցցէ, թէ ի՛ւր է պատկերն եւ ի՛ւր է օրէնքն, զոր նա յանցեալ եւ այժմ թողու նմա: Վեցերորդ՝ զի ցուցցէ, թէ Աստուած է հաւասար Հօր եւ իշխանութիւն ունի թողուլ զմեղս յերկրի, զի միայն է թողուլ զմեղս, որպէս ասէին. «Ո՞վ կարէ թողուլ զմեղս, բայց մի Աստուած»:

Թշնամիքն վկայեն աստուածութեանն Քրիստոսի եւ հաստատէ թշնամեաց վկայութիւնն: Նա եւ բարեկամքն վկայեցին, որպէս բորոտն ասէր, «կարող ես զիս սրբել» (Մարթ. Լ. 1-4,) եւ հարիւրապետն՝ «ասա բանիւ եւ բժշկեցի» (Մարթ. Լ. 14-15):

Հարց. Վասն է՞ր միայն Աստուած թողու:

Պատասխանի. Նախ՝ զի նորա հրամանացն լինիմք պարտական, վասն որոյ նա միայն թողու: Երկրորդ՝ զի թողութիւնն լինի շնորհօք եւ նորա է շնորհք եւ պարգեւք եւ ոչ՝ հրեշտակաց եւ մարդկան: Իսկ թէ քահանան թողու՝ իշխանութեանն Քրիստոսի է:



**Զի՞ խորհիք ի սիրտս ձեր** (հմմտ. Մատթ. Թ. 4):

Եւ այս միայն Աստուծոյ է, որ ճանաչէ զսիրտս մարդկան, ըստ նմա, որ քննէ զսիրտս եւ զերիկամունս, Աստուած է:

Հարց. Վասն է՞ր միայն Աստուած ճանաչէ, ոչ՝ հրեշտակ կամ մարդ:

Պատասխանի. Նախ՝ զի նա միայն է ստեղծող եւ ճանաչէ զստեղծուածն իւր, ըստ այնմ ո՛ւ ստեղծ առանձին զմիտս նոցա: Երկրորդ՝ զի նորա եմք պատկեր եւ նախատիպն ճանաչէ, որպէս մեք ի հայելւոջն տեսանեմք: Եւ զայս կրկին յատկութիւնս տուեալ է քահանայից, զի զծածուկս խոստովանութեամբ գիտէ եւ թողուլ զմեղս:

Հարց. Զի՞նչ դիւրին է:

Պատասխանի. Նախ՝ թէ զինչ դիւրին է եւ փոքր, կամ դժուարին եւ մեծ, թողութիւն մեղաց, թէ բժշկութիւն մարմնոցն: Երկրորդ՝ զինչ դիւրին է, այսինքն՝ մարմնոյն բժշկութիւն ձեզ դիւրին եւ քաղցր է քան զթողութիւն հոգւոյն: Այլ որպէս հոգին մեծ է, քան զմարմին, նոյնպէս եւ թողութիւն մեղաց՝ քան զբժշկութիւն մարմնոյն, վասն այն զփոքր եւ զյայտնին առնեմ զբժշկութիւն մարմնոյն, որ նուազ. մեծն, իմանայք, զթողութիւն հոգւոյն:

**Փառաւորէին զԱստուած՝ զպուիչն իշխան** (հմմտ. Մատթ. Թ. 8):

Այսու քան զամենայն մարդ մեծ կարծէին զՔրիստոս: Եւ դարձեալ նա միայն Աստուած եկեալ իշխանութիւն ամենայն մարդկան: Գիտելի է, զի վեց վկայութեամբ ցուցանէ զաստուածութիւնն իւր: Նախ՝ որ ասէ թողեալ լիցին քեզ մեղք քո: Երկրորդ՝ որ ասեն միայն Աստուած թողու զմեղս: Երրորդ՝ իշխանութիւն ունիմ յերկրի: Չորրորդ՝ զի խորհիք ի սիրտս ձեր: Հինգերորդ՝ որ բժշկեաց զանդամալոյծն: Վեցերորդ՝ փառս ետուն զտուիչն իշխանութեան մարդկան: Այլ ի միտս: Անցեալ ընդ ծովն, եկն ի քաղաքն իւր, այսինքն՝ զոր ինքն արար, որպէս ասէ՝ «ձեռն իմ արար» (Գործք. Է. 50) եւ տեսանէ երկիր լրիւ: Դարձեալ քաղաք իւր, այսինքն՝ հոգիք խոնարհաց եւ հեզոցն, որ ընկալան զնա:

**Բանալ եւ քակել հարկին** (տնս Մարկ. Բ. 4):

Զխոցումն տէրունական մարմնոյն՝ որպէս քակեցէք զտաճարս: Անդամալոյծն՝ զԱդամ իւրայովքն լուծեալ հոգեկան եւ մարմնա-

կան մասամբ: Բնութեամբ չորեքնիւթեայ: Զոր տեսեալ Յիսուսի փորձիւ զկսկիծ մարդոյս, զթացաւ, կալաւ զձեռանէ նորա, յարոյց ըստ այնմ՝ «Կալար զաջոյ ձեռանէ իմմէ, ի խորիւրդս քո առաջ[տորդեցեր]» (Մաղմ. ՆԲ. 24): Եւ զայս յետ անցանելոյ ընդ ծովն: Զի յորժամ անցանիմք ընդ ջուր աւազանին ապա ողջանամք: Եւ փառաւոր առնէին զԱստուած՝ զտուիչն այնպիսի իշխանութեան մարդկան, այսինքն՝ զՔրիստոս, որ ետ իշխանութիւն կապելոյ եւ թողլոյ զմեղս, որպէս ասէր՝ «Զուրուք թողուք թողեալ լիցի» (հմմտ. Յովն. Ի. 23): Եւ անցեալ ընդ այն Յիսուսի, այսինքն՝ ընդ կիրք ան<ան>զոսնելի մարդկային բնութեանս: Այսքան առ այս:

**Կոչումն Մաթեոսի<sup>1</sup>**

Հարց. ԶՄատթէոս ընդէ՞ր ոչ ընդ այլսն կոչեաց:

Պատասխանի. Նախ՝ զի ամենագէտ է ի պատշաճ ժամանակի կոչեաց: Եւ դարձեալ զօրութեանն Աստուծոյ է յայտնիչ այս, զի մինչ նստէր, այսինքն՝ մինչ առնէր զմաքսաւորութիւնն, կորզեաց ի մեղաց, որպէս զՊօղոս յամենայնեւիմք մոլեալ եւ կատաղ ի ժամանակին, որ վասն հաւատացելոց Քրիստոսի: Ետես զհնազանդութիւն կոչեցելոյն, զի պիտոյ է կամքն Աստուծոյ եւ մեր հաւանելն՝ եւ ապա դառնամք ի լաւութիւն:

Հարց. Յո՞ր տանէին բազմեալ:

Պատասխանի. Ոմանք ի Զաքէոսին ասեն այլ նա յԵրիքով եւ մերձ խաչին: Եւ սայ ի Կափառնայում եւ յառաջ: Եւ ոմանք զՂեւի Ալփեայ, որ է Յակոբ Ալփեայ ըստ Մարկոսի եւ Ղուկասու: Եւ կէսք զնոյն ինքն զՄատթէոս ասեն, յիւրում տան ընդունել եւ սեղանակից եղեալ Քրիստոսի:

Հարց. Ընդէ՞ր ընդ մաքսաւորս եկեր:

Պատասխանի. Նախ՝ զի որ խոնարհեցաւ վասն մեր, ոչ մասնաւոր այլ կատարեալ եւ զյետինն խոնարհութիւն էառ յանձն, զի ոչ միայն արդարոց այլեւ մաքսաւորաց եղեւ սեղանակից: Երկրորդ՝ զի զնոսա զմաքսաւորսն եւ զմեղաւորսն յորդորիցէ: Երրորդ՝ զի բժիշկ էր հոգոց ի հիւանդն մերձիլ պարտ էր եւ ոչ գարշիլ, որ-

<sup>1</sup> Այս հատվածը թեպետ չի առնչվում հենց Անդամալոյծի բժշկության հետ, սակայն ընդհանուր առմամբ թեմայից դուրս չէ, ուստի նպատակահարմար տեսանք որպես շարունակություն նախորդի թողնել տեղում:



պէս ասէր՝ ոչ է պիտոյ բժիշկ ողջաց այլ հիւանդաց եւ ոչ եկի կոչել զարդարս, այլ զմոլորեալս յապաշխարութիւն: Չորրորդ՝ զմեզ յուսադրէ, որպէս առ մաքսաւորս, զի թէ մեք դառնամք առ նա՝ բնակէ առ մեզ, եւ օթեւանս արասցէ եւ լինիմք սեղանակիցք նմա ի միւսանգամ գալստեանն:

Հարց. Վասն է՞ր զմաքսաւորսն մեղաւոր կոչէ:

Պատասխանի. Վասն չորից: Նախ՝ զի զրկող եւ յափշտակող է, յայտնի է: Երկրորդ՝ իրաւունք համարի գանիրաւութիւնն: Երրորդ՝ զմաքս ի մեղաւորաց առնու, իբր զմեղաւորաց, մեղս զի ի վաճառոց եւ ի գնոց ժողովէ: Չորրորդ՝ զի գործակից արբեցողաց եւ պոռնկաց է հանապազ:

«Ուտարութ՝ զի՛նչ է [զողորմութիւն կամիմ, եւ ոչ զգոհ]» (Մաւրթ. Թ. 13)

Այսինքն՝ չէ՛ք տեղեակ գրոց եւ օրինաց ուսարուք, զինչ ասէ մարգարէն Յովսէփ: Եւ դարձեալ, թէ զինչ է կամքն հօր իմ: Եւ դարձեալ թէ զինչ է գործս իմ ըստ կամաց հօր: «Չողորմութիւն կամիմ եւ ոչ զպարարագ» (հմմտ. Մաւրթ. Թ. 13): Չորիւք է իմացումն: Նախ՝ զի ողորմութիւնն բնական է, որպէս գթայ հայր ի վերա սորա եւ զոհն կարողացն: Երկրորդ՝ ողորմութիւնն սէր ընկերին է լաւ համարի քան զպատարագն իւր: Երրորդ՝ ողորմութիւնն նորոյս է, որ է շնորհօք եւ թողութիւն, զոր կամի Աստուած քան զհին արդարութիւնն: Չորրորդ՝ զի Աստուած հոգի է եւ զհոգեւոր պատարագն կամի եւ ոչ զմարմնաւոր զոհդ ձեր, զոր անարգեաց, ոչ ընդունիմ ի ձէնջ գուարակս եւ նոխազս: Դարձեալ ողորմութիւնն կրկին է՝ այսինքն՝ հոգեւոր եւ մարմնաւոր: Եւ հոգւոյն է թողուլ յանցաւորաց եւ մեղաւորաց:

Եւ զի՞ բժիշկ կոչէ զինքն:

Եւ Գ. է յատկութիւնն: Նախ՝ զի գիտէ զբժշկութիւն: Երկրորդ՝ ունի զգեղ: Երրորդ՝ ոչ մերժի առ հիւանդն եւ բժշկէ: Այսպէս արար Քրիստոս:

Ղուկաս Ե. 17-26

ԻԳՆԱՏԻՈՍ ՍԵՒԼԵՌՆՅԻ

Եւ յուսուցանելն Նորա՝ բազում վարդապետք՝ արիւնացն մերձ էին՝ լսել զբան վարդապետութեան Նորա (հմմտ. Ղուկ. Ե.):

Ահաւասիկ եւ այս ասացեալ ի Տեառնէ բանք՝ ոչ գրեցան: Նա՛ զի եւ օրինացն վարդապետք մերձ էին՝ տն՛ս թէ որպիսի՞ ինչ պարտ էր խաւսել նմա ըստ աստուածեղէն իմաստութեանն:

Արդ, ի խաւսելն Նորա՝ բերեն անդամալոյծ մի եւ, ընդ ցուոցն կախեալ, իջուցին գնա առաջի նորա (հմմտ. Ղուկ. Ե. 18):

Այս եղեւ, զի սքանչելիքն վկայ եղեալ բանիցն՝ հաւատարիմ լիցին ամենայն ասացեալքն ի նմանէ եւ իջուցին, ասէ, առաջի Նորա: Իսկ Նա նախ զախտին պատճառսն բառնայ. թողեալ լիցին, ասէ, քեզ մեղք քո: Զի ի մեղաց անտի եղեւ անդամալուծութիւնն նորա:

Իսկ զպիրքն ասեն՝ ո՞ կարէ թողուլ զմեղս, բայց միայն Աստուած (հմմտ. Ղուկ. Ե. 21)

Եւ արդ, զի՞նչ առնէ Յիսուս: Լուծանէ՞ զկարծիս նոցա, եւ ոչ երբեք, այլ եւ հաստատէ եւս: Նախ, զոր ի միտս իւրեանց երկնէին, իբրեւ զծածկագէտ յանդիմանէ եւ ապա՝ վկայ երեւելի տայ աներեւոյթ աստուածային զաւրութեանն, որով զմեղս ելոյծ, նովին զաւրութեամբն եւ զլուծեալ անդամն պնդեալ՝ հաստատեաց, զի զիտասցեն, թէ յամենայնի բաւական է: Վասն որոյ սքանչացեալ՝ սկսան ասել. տեսաք այսաւր նոր նշան:

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

(Գլուխ Ե.)

Եւ ուսուցանէր, եւ փարիսեցիքն եւ արիւնացն վարդապետքն նսպէին (Ղուկ. Ե. 17):

ԻԳ Ահաւասիկ ի Տեառնէ ասացեալ բանքն ո՛չ գրեցան: Տն՛ս, որպիսի՞ ինչ պարտ էր նմա խաւսել ըստ աստուածեղէն իմաստութեանն: Ի խաւսել նորա՝

Արք բերէին մահճաւք զայր մի անդամալոյծ, ընդ ցուոցն կախեցին առաջի նորա (հմմտ. Ե. 18-19):

ԵՓ Տն՛ս դու, զի հաւատք այլոց յայլս զինչ գործեցին: Զի ո՛չ պահանջեաց ի նմանէ հաւատս, զի շինուած էր նա քակուտ: Որպէս ի միամաւրէն ո՛չ պահանջեաց ի նմանէ հաւատս, այլ ի հաւրէ նորա, զի՞նչ պարտ էր նմա կամ Հաւր նորա:



պէս ասէր՝ ոչ է պիտոյ բժիշկ ողջաց այլ հիւանդաց եւ ոչ եկի կոչել զարդարս, այլ զմոլորեալս յապաշխարութիւն: Չորրորդ՝ զմեզ յուսադրէ, որպէս առ մաքսաւորս, զի թէ մեք դառնամք առ նա՝ բնակէ առ մեզ, եւ օթեւանս արասցէ եւ լինիմք սեղանակիցք նմա ի միւսանգամ գալստեանն:

Հարց. Վասն է՞ր զմաքսաւորսն մեղաւոր կոչէ:

Պատասխանի. Վասն չորից: Նախ՝ զի զրկող եւ յափշտակող է, յայտնի է: Երկրորդ՝ իրաւունք համարի զանիրաւութիւնն: Երրորդ՝ զմաքս ի մեղաւորաց առնու, իբր զմեղաւորաց, մեզս զի ի վաճառոց եւ ի գնոց ժողովէ: Չորրորդ՝ զի գործակից արբեցողաց եւ պոռնկաց է հանապազ:

«Ուսարոյք՝ զի՞նչ է [զողորմութիւն կամիմ, եւ ոչ զգոհ]» (Մարթ. Թ. 13)

Այսինքն՝ չէ՛ք տեղեակ գրոց եւ օրինաց ուսարուք, զի՞նչ ասէ մարգարէն Յովսէէ: Եւ դարձեալ, թէ զի՞նչ է կամքն հօր իմ: Եւ դարձեալ թէ զի՞նչ է գործս իմ ըստ կամաց հօր: «Չողորմութիւն կամիմ եւ ոչ զպարարագ» (հմմտ. Մարթ. Թ. 13): Չորիւք է իմացումն: Նախ՝ զի ողորմութիւնն բնական է, որպէս գթայ հայր ի վերա սորա եւ զոհն կարողացն: Երկրորդ՝ ողորմութիւնն սէր ընկերին է լաւ համարի քան զպատարագն իւր: Երրորդ՝ ողորմութիւնն նորոյս է, որ է շնորհօք եւ թողութիւն, զոր կամի Աստուած քան զհին արդարութիւնն: Չորրորդ՝ զի Աստուած հոգի է եւ զհոգեւոր պատարագն կամի եւ ոչ զմարմնաւոր զոհդ ձեր, զոր անարգեաց, ոչ ընդունիմ ի ձէնջ գուարակս եւ նոխագս: Դարձեալ ողորմութիւնն կրկին է՝ այսինքն՝ հոգեւոր եւ մարմնաւոր: Եւ հոգւոյն է թողուլ յանցաւորաց եւ մեղաւորաց:

Եւ զի՞ բժիշկ կոչէ զինքն:

Եւ Գ. է յատկութիւնն: Նախ՝ զի գիտէ զբժշկութիւն: Երկրորդ՝ ունի զգեղ: Երրորդ՝ ոչ մերձի առ հիւանդն եւ բժշկէ: Այսպէս արար Քրիստոս:

Ղուկաս Ե. 17-26

### ԻԳՆԱՏԻՈՍ ՍԵԻԼԵՌՆՅԻ

Եւ յուսուցանելն Նորա՝ բազում վարդապետք՝ արինացն մերձ էին՝ լսել զբան վարդապետութեան Նորա (հմմտ. Ղուկ. Ե.):

Ահաւասիկ եւ այս ասացեալ ի Տեառնէ բանք՝ ոչ գրեցան: Նա՛ զի եւ օրինացն վարդապետք մերձ էին՝ տե՛ս թէ որպիսի՞ ինչ պարտ էր խաւսել Նմա ըստ աստուածեղէն իմաստութեանն:

Արդ, ի խաւսելն Նորա՝ բերեն անդամալոյժ մի եւ, ընդ ցուոցն կախեալ, իջուցին զնա առաջի նորա (հմմտ. Ղուկ. Ե. 18):

Այս եղեւ, զի սքանչելիքն վկայ եղեալ բանիցն՝ հաւատարիմ լիցին ամենայն ասացեալքն ի Նմանէ եւ իջուցին, ասէ, առաջի Նորա: Իսկ Նա նախ զախտին պատճառսն բառնայ. թողեալ լիցին, ասէ, քեզ մեզք քո: Զի ի մեղաց անտի եղեւ անդամալուծութիւնն նորա:

Իսկ դպիրքն ասեն՝ ո՞ կարէ թողուլ զմեղս, բայց միայն Աստուած (հմմտ. Ղուկ. Ե. 21)

Եւ արդ, զի՞նչ առնէ Յիսուս: Լուծանէ՞ զկարծիս նոցա, եւ ոչ երբեք, այլ եւ հաստատէ եւս: Նախ, զոր ի միտս իւրեանց երկնէին, իբրեւ զծածկազէտ յանդիմանէ եւ ապա՝ վկայ երեւելի տայ աներեւոյթ աստուածային զաւրութեանն, որով զմեղս ելոյժ, նովին զաւրութեամբն եւ զլուծեալ անդամն պնդեալ՝ հաստատեաց, զի գիտասցեն, թէ յամենայնի բաւական է: Վասն որոյ սքանչացեալ՝ սկսան ասել. տեսաք այսաւր նոր նշան:

### ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

(Գլուխ Ե.)

Եւ ուսուցանէր, եւ փարիսեցիքն եւ արինացն վարդապետքն նսրէին (Ղուկ. Ե. 17):

ԻԳ Ահաւասիկ ի Տեառնէ ասացեալ բանքն ո՛չ գրեցան: Տե՛ս, որպիսի՞ ինչ պարտ էր նմա խաւսել ըստ աստուածեղէն իմաստութեանն: Ի խաւսել նորա՛

Արք բերէին մահճաւք զայր մի անդամալոյժ, ընդ ցուոցն կախեցին առաջի նորա (հմմտ. Ե. 18-19):

ԵՓ Տե՛ս դու, զի հաւատք այլոց յայլս զինչ գործեցին: Զի ո՛չ պահանջեաց ի նմանէ հաւատս, զի շինուած էր նա քակուտ: Որպէս ի միամաւրէն ո՛չ պահանջեաց ի նմանէ հաւատս, այլ ի հաւրէ նորա, զի՞նչ պարտ էր նմա կամ Հաւր նորա:



**Թողեալ լիցին քեզ մեղք քո** (Ե. 20):

**ԿՐ** Զիա՞րդ թողոյր Յիսուս, եթէ ո՛չ էր զուգակից Հաւրն, զի վասն մեղաց էր հիւանդութիւն նորա: Զի [ի] յանցանաց հոգւոյն լինի ախտաժէտութիւն մարմնոյն: Վասնզի հաւատաց հոգով եւ մարմնով յորդին Աստուծոյ, վասն այսորիկ թողան մեղք հոգւոյն, եւ մարմնոյն առողջութիւն եղեւ:

Եւ ասնն ոմանք ի դպրաց[ն] եւ ի փարիսացոցն. Նայիոյէ դա: Ո՞ կարէ թողուլ զմեղս, բայց միայն Աստուած: Գիտաց Յիսուս զխորհուրդս նոցա, ասէ. Զի՞ խորհիք չարիս ի սիրտս ձեր (հմմտ. Ղուկ. Ե. 21-22):

**ՅԻ.** Բայց նոքա չարեաւք ի սիրտս իւրեանց ծածկեալ էին եւ ո՛չ կարէին զիրան ի վեր հանել: Սակայն զնոյն կազմէին ակամայ: Իսկ Յիսուս ամենագէտն զնշան իւրոյ աստուածութեանն յայտ առնէ, քանզի հանգիտապատիւ է Հաւր, եւ Աստուծոյ միայն է զսրտին ծածուկն ի վեր հանել: Որպէս մարգարէն ասէ. «Որ քննէ զսիրտս եւ զիրիկամունս Աստուած» (Սաղմ. Է. 10, Երեմ. Ի. 12):

**Այլ զի գիտասցիք, զի իշխանութիւն ունի Որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս** (տնն Ղուկ. Ե. 24):

**ԿՐ.** Մի՞թէ յերկինս: Ո՛չ: Այլ զի ցուցցէ, թէ յերկինս քաջայայտ է հրեշտակացն առնել, զոր ինչ եւ կամի իշխանաբար, այլ երկրաւորացս դեռեւս՝ զիս ո՛չ ճանաչելով: Այլ զի եւ սոցա յայտնի լիցի, թէ Որդիս մարդոյ, որ գայթաղիք ի ձեռն մարմնոյս, Որդի Աստուծոյ է, որ զնոյն իշխանութիւն եւ յերկրի ունի որպէս յերկինս: Այլ ի դէպ էր, ասէ. «Իշխանութիւն ունի Որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս»: Այլ վասն անորիչ եւ անքակ գոլով մարդկութիւնն յաստուածութենէն, ըստ որում տեսանէին: Վասն այսորիկ ասաց «Որդի մարդոյ» եւ ո՛չ հրաժարէր ի մարդկային կարգաց:

**Ասէ ցանդամալոյձն. Առ զմահիճս քո եւ երթ ի փուն քո: Եւ առաջի ամենեցուն զնաց ի փուն իւր** (հմմտ. Ղուկ. Ե. 24-25):

**ԵՓ** Զի վասն մեղաց իւրոց լուծաւ նա: Եհաս Բանն Տեառն ամենակալ[ի], քաւեաց զծածուկ մեղս նորա եւ բժշկեաց զյայտնի մարմինս նորա: Զի Աստուած էր նա ծածուկ՝ միացեալ ի մարմնի յայտնի:

**Առ զմահիճս քո** (Ղուկ. Ե. 24):

**ՄՏ** Մահիճս տախտ մարմինն լսի, որ զհոգին ի վեր ունի: Արդ՝ ասէ Բանն Աստուծոյ ցշոգին առ զմարմին քո առողջացեալ եւ «երթ ի տուն քո» (Ղուկ. Ե. 24), այսինքն է՝ [յ]առաքինութիւնն, որ է բնակութիւն հոգւոյ՝ ազատեալ ի մեղաց:

Իբրեւ փեսին ժողովուրդքն, փառաւոր առնէին զԱստուած եւ ասէին. Թէ փեսաք այսաւր նոր նշանս (հմմտ. Ղուկ. Ե. 26):

**ԻԳ** Մեծ քան զամենայն մարդ զնա կարծելով եւ յԱստուծոյ եկեալ: Զի թէ յայն բարիոք էին հաւատացեալ, ապա եւ ոտն ոտն յառաջ գային ճանաչել, թէ Որդի է Աստուծոյ:

Յետ այնորիկ ել անտի եւ ետես մաքսաւոր մի Ղեւի անուն, եւ ասէ ցնա. Ե՛կ զկնի իմ (Ղուկ. Ե. 27):

**ՈՎ** Զի յայտնի արասցէ զգաւրութիւն այնորիկ, որ կոչեաց զնա: Զի ո՛չ եթէ ցածութիւն ինչ էր յայնպիսի յոռութեանց, այլ անդէն ի միջոյ չարութեանցն կորգեաց, որպէս զերանելին Պաւղոս զմոլեգին եւ զկատաղին, որ հուր հնչեցուցանէր, ցածոյց:

**Թողեալ զամենայնն՝ յարեալ զնաց զհետ նորա** (Ե. 28):

Որպէս տեսէր զկոչողին զգաւրութիւնն, նոյնպէս ուսիր զկոչեցելոյն հնազանդութիւնն: Վաղվաղակի թողեալ զմաքսաւորութիւնն եւ զշահն՝ եւ ո՛չ արժանի համարեցաւ երթալ ի տուն առ ընտանիսն, որպէս ձկնորսքն զուռկանսն եւ զնաւն:

Եւ արար ընդունելութիւն ի փան իւրում (Ղուկ. Ե. 29):

Իբրեւ կոչեաց զնա մեծամեծ պատուով, պատուեաց եւ վանակից եղեւ ի տան նորա: Այսու հանդերձելոցն վստահ առնէր զնա:

Եւ էր ժողով բազում մաքսաւորաց, որ էին բազմեալ ընդ նմա (Ղուկ. Ե. 29):

Քանզի նա կոչեաց զամենեսին եւ Քրիստոս զամենայն աւրինակս բժշկութեանն եցոյց:

**ԵՓ** Այս է տեսիլ սքանչելի, հրեշտակք դողան եւ բազմեալ են մաքսաւորքն, ուրախ լինէին: Զուարթունք զահի հարեալ էին ի մեծութենէ նորա, եւ մաքսաւորք ուտեն ընդ նմա:



**Փարիսացիք եւ դպիրքն փրփնջէին զնմանէ** (Ղուկ. Ե. 30):

*Փարիսացիքն եւ դպիրքն՝ Հերձեալ նախանձու, եւ մաքսաւորք՝ ցնձան ուրախութեամբ: Տեսին վերինք[ն] եւ զարմացան, եւ ներքինք[ն]՝ յիմարեցան: Սատանայ մաշեցաւ, մահ վատթարացաւ:*

**Առ աշակերտսն ասէին. Ընդէ՞ր ընդ մաքսաւորսն ուրէք** (Ղուկ. Ե. 30):

*Ոսկ. Առ աշակերտսն քրթմնջէին: Եւ այսպէս մեղմեխանաւք կամէին քակել զգուրթ վարդապետին յաշակերտացն:*

**Եւ Յիսուս ասէ ցնոսա. Ո՛չ է պիտոյ բժիշկ ողջաց, այլ հիւանդաց** (Կրն Ղուկ. Ե. 31):

*Ոս. Տեսանե՛ս, զիա՞րդ ընդդէմ նոցա դարձուցանէ զԲանն, թէ ո՛չ է արժան նորա մարդասիրութեանն անտես առնել զվիրաւորսն մեղաւք, զի ո՛չ է վնաս, այլ ուղղութիւն եւ բազմութիւն արժանի գովութեան:*

**Ասեն. Ընդէ՞ր աշակերտքն Յովհաննու պահեն** (Ղուկ. Ե. 33):

*Ուստի՞ էին ուսեալ. ի Յովհաննու պահոցն աշակերտքն նորա:*

**Եւ փարիսացիքն** (Ղուկ. Ե. 33):

*Յաւրինացն ուսան փարիսացիքն, որպէս ասէր փարիսացին. «Պահեմ երկիրցս ի շաբաթու» (Ղուկ. ԺԸ. 12):*

**Եւ քոյղ ուրեն** (Ղուկ. Ե. 33):

*Գրեսջիր, թէ դու իբրեւ զբժիշկ առնես զայդ, իսկ աշակերտքն ընդէ՞ր թողեալ զպահս՝ առ սեղանն ջերանին:*

**Ասէ ցնոսա Յիսուս. Մի՞թէ կարող [ից]էք մանկանց առագաստի, մինչ փեսայն ընդ նոսա իցէ** (Ղուկ. Ե. 34):

*Եփ. Տէր մեր զամենայն ժամանակս, որ եղեւ յաշխարհի, առագաստ անուանեաց զնա եւ զինքն փեսայ: Ո՛չ է մարթ փեսաւիրացն պահել: Նախ՝ բժիշկ եւ ապա՝ փեսայ, զի զանճառ խորհուրդսն այնպիսի անուամբ յայտնեաց: Յուշ առնելով զՅովհաննուն, թէ՛ «Որ ունի Հարսն, նա է փեսայ» (Յովհ. Գ. 29):*

**Եկեացեն աւուրք, յորժամ վերացի նոցանէ փեսայն եւ ապա պահեսցեն** (Ղուկ. Ե. 35):

*ՅՆ Ո՛չ որկ[ո]րստութեան իրք էին, այլ սքանչելի տեսութեան, քանզի Յովհաննու չարչարանաւքն պարծէին նորա: Յածուցանէ զհպարտութիւն նոցա՝ զիւր չարչարանս[ն] ճառելով եւ զյարութիւնն: Ո՛չ էր ժամանակ, ասէ, զի յարութիւնն ի վեր քան զբնութիւնս է:*

**Ո՛չ որ արկանէ [ի] նոր հանդերձ[է] ի վերայ հնացեալ ձորձոյ** (Կրն Ղուկ. Ե. 36):

*Ոկ. Զփարիսաց[ւ]ոցն եւ զդպրացն սիրտն ասէ, որք Հին աւրինաւքն ներկեալ էին այլ հնացեալ անհաւատութեամբ: Ո՛չ ժուկալեն, այլ ցնդեն զշնորհն, քանզի իմաստութիւն յանձն չար արուեստ ո՛չ մտանէ:*

**Նոր գինի պայթեցուցանէ գրիկս հինս** (Ղուկ. Ե. 37):

*ՄՏ Նոր եւ սքանչելի վարդապետութեանս ո՛չ Հանդուրժեն ոգիք հնացեալք ախտիւք հրէական եւ հեթանոսական: Ո՛չ կարեն Հանդուրժել իմ վարդապետութեանս, այլ՝ Հերձնուն:*

*«Մի փայթ գարբութիւն ձեր շանց» (Մարթ. Է. 6):*

**Գինի նոր ի փիկս նորս արկանելի է** (Ղուկ. Ե. 38):

*Միայն ուսանել զիմ նոր վարդապետութիւնս, նոր սիրտ իմ աշակերտացն, քանզի ո՛չ էին մաշեալ հրէական վարդապետութեամբն:*

**ՄԱՏԹԷՈՍ ԶՈՒՂԱՅԵՑԻ**

*Յանդամալոյծին բժշկութիւնն եցոյց Գ. երեք կերպիւ զգորութիւն իւր: Նախ ասաց անդամալոյծին՝ թողեալ լիցին քեզ մեղք քո. այնու զծածուկ գիտութիւնն իւր յայտնեաց: Երկրորդ՝ զի զմեղսն եթող, որ է յատուկ Աստուծոյ: Երրորդ, զի առողջացոյց զանդամալոյծն, եցոյց թէ յամենայնի կարող է: Իսկ այլքն ամենքն զրեալ են ի Մաթեոսէ գլխոյն մեկնիչ:*





## 9. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԴՍԵՐՆ ՅԱՅՐՈՍԻ

Մաթթեոս Թ. 18-20, 23-26

### ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՅԻ

(Գլուխ 9)

Եւ փեսեալ զժողովուրդսն՝ գթացաւ ի նոսա. զի էին աշխափեալք եւ ցրուեալս (!) որպէս զոչխարս, որոց ոչ իցէ հովիւ: Յայնժամ ասէ ցաշակերփսն իւր. Նունձք բազում են՝ եւ մշակք սակաւ (Կրն Թ. 36-37)<sup>1</sup>:

Յորդորեալ ի հաւատոց իշխանին երթալը զհետ նորա յարուցանել զգուստը նորա ի մեռելոց, յառաջեաց տեռատեսն որ ունէր զհոսուան արեանն զերկոյտասան ամ եւ էր անսուրբ ի մովսէսական արիւնին որպէս եւ գրեալ է, տեռատեսն եւ սերմանակաթն, ասէ, մի մտցի ի տաճարն Աստուծոյ, վասն զի արիւնակ էին հոգւոց անդադար հոսաւղաց զաղտեղի եւ զգարչելի ցանկութիւնս, իսկ ի հանդիպելն տեռատեսին Քրիստոսի, վասն զի նախկին զհոգւոյն զհաւատ իւր սրբեաց զգարչելի հոսումնն, վասն այսորիկ արժանաւորեցաւ ի Քրիստոսէ եւ մարմնոյն հոսուման դադարել եւ գտանել բժշկութիւն:

Յետ սորա բժշկութեան եկեալ ի տուն իշխանին յարուցանել զգուստը նորա ի մեռելոց. բժշկէր եւ զաչս կուրացն բժշկեալ յառաջագոյն զլուսաւորիչս հոգւոց նոցա, նոյնպէս եւ զհամրն եւ զխուլն. եւ այժմ տեսեալ զժողովուրդսն աշխատեալս, ասէ ցաշակերտսն իւր. «Նունձք բազում են եւ հնձաւորք սակաւք». հունձս անուանեաց յորս անկանէր սերմ վար[դ]ապետութեան, որպէս յերկիր բարի, եւ քանզի բազումք էին եւ ի հեթանոսաց, որք ընդունելոց էին զայնպիսի սերմանաւղի սերմ, եւ վասն այնորիկ ասաց՝ զհնձաւորսն սակաւս, զի դեռ եւս միայն առաքեալքն էին:

<sup>1</sup> Ստեփաննոս Սիւնեցու մեկնութեան այս հատվածը ընդգրկում է եւ՝ «Յայրոսի դստեր», եւ՝ «Տեռատես կնոջ», եւ՝ զանազան բժշկությունները, ուստի նպատակահարմար տեսանք չմասնատել այն, այլ՝ զտեղել առաջին խորագրի ներքո:

## ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՎ ԵՓՐԵՄ

Մինդեռ նայ զայս խաւեր, եկեալ իշխան մի երկիր պագաներ եւ ասէր. դուստր իմ արդ եւս վաղճանեցաւ» (Կրն Մաթթ. Թ. 18): Ժամանեցին արդիւնքն բանիցն: Քանզի որ եկեալ աղաչէր, գլուխ էր ժողովրդեանն. եւ սուգն անհնարին, զի միամաւր էր մանուկն եւ երկոտասանամեայ, գեղածաղիկ փթթեալ ի մատաղ հասակի, վասն որոյ եւ վազվազակի իսկ յարուցանէր: Բայց եթէ Ղուկաս ասէ, թէ եկին ոմանք եւ ասէն, մի՛ աշխատ առնէր զդայ, զի մեռաւ մանուկն (հմմտ. Ղուկ. Ե. 49), ասեմք, թէ ի ժամանակէն եւ յերկայն ճանապարհէն, թէ արդարեւ մեռեալ իսկ էր, կամ թէ զվիշտսն աճեցուցանէին, զի սովորութիւն իսկ է վշտացելոց զկարիսն մեծացուցանել, զի այնպէս հաւանեցուցանիցեն, զորս աղաչիցենն: Եւ դու միտ դիր թանձրամտութեան առնն, երթալ ի տունն, աղաչէր, եւ ձեռն եւս դնել ի վերա, որ նշանակ իսկ է, թէ տակաւին իսկ ոգով եթող զմանուկն:

Եւ Մարկոս ասէ, եթէ երիս աշակերտս միայն տարաւ ընդ իւր (Կրն Մարկ. Ե. 37) եւ Ղուկաս նոյնպէս (Կրն Ղուկ. Ը. 51), իսկ սայ՝ զաշակերտսն ասէ խառնիխուռ (Կրն Մաթթ. Թ. 19): Եւ ընդէ՞ր ոչ զՄատթէոս առ ընդ իւր, քանզի որ եկեալ էր եւ յառաւել ցանդութիւնս յորդորէր զնայ այն, զի դեռ ախմար էր եւ թերակատար, վասն այնորիկ զնոսա միայն պատուէ, զի սոքայ ասէ նմանող նոցա լինիցին:

Յարուցեալ բազումք երթալին տեսանել զսքանչելիսն (հմմտ. Մաթթ. Թ. 26): Մի վասն առն մեծարանաց, որ եկն աղաչել եւ զի բազումք ի նոցանէ զի դեռ թանձրամիտք էին, ոչ այնպէս զոգւոցն դարմանս, որպէս զմարմնոցն զբժշկութիւնն խնդրէին, եւ դուրս թալի: Կէսք վասն իւրեանց ցաւոցն ստիպեալք եւ այլոց բժշկութեանցն լինել տեսողք: Այլ ոչ ետ թոյլ ի տունն ումէք մտանել, բաց աշակերտացն միայն:

// Եւ քանզի եկին ոմանք եւ ասեն՝ «Մի՛ աշխատ առնէր զվարդապետդ, զի մեռաւ» (հմմտ. Ղուկ. Ե. 49) եւ յորժամ ի տունն չոգաւ, որ ի տանն էին, ծաղր առնէին, մանաւանդ զի ասաց, թէ ննջէ: Ի դէպ էր եւ հաւրն՝ այնպիսի ինչ ախտանալ: Վասն այնորիկ առ ուղղելով այնպիսի տկարութիւն՝ ածէ յառաջագոյն զկինն ի մէջ:



/Իբրեւ եկն Յիսուս ի տունն, որ դիակ մանկանն դնէր, եւ դարձ-վանաց ժողովապետին նշանակ այն էր, զի կոծողք եւ փողարք մտեալ էին ի տունն, այլ Քրիստոս զայլսն զամենեսեան ի բաց ետ հանել ի տանէն: Եւ զհայրն եւ զմայրն եթող, զի մի ասիցեն, թէ այլազգ ինչ յարոյց զմանուկն եւ ո՛չ հրամանաւ: Նայել յառաջ քան զկանգնելն յարոյց բանիւն, յորժամ ասաց, թէ ո՛չ է մեռեալ, եւ ո՛չ այլ շունչ արկանի մանուկն, այլ զնոյն անդրէն դարձուցանէր, եւ իբրեւ ի քնոյ զարթուցեալ, ունէր զձեռանէ եւ տայր ցհայրն, զի հաստատուն ցուցանիցէ զիրսն տեսողացն: Վասն այնորիկ եւ կե-րակուր հրամայէ տալ, զի մի առ աչաւք կարծիցին:

### ՅՈՎՀԱՆՆԵՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ

(Գլուխ Թ)

Մինչդեռ Նա զայս խօսէր ընդ նոսա, ահա իշխան մի մաքու-ցեալ երկիր պագանէր Նմա եւ ասէր. «Դուստր իմ արդ եւս վախ-ճանեցաւ. այլ եկեալ դիցես զձեռն Քո ի վերայ նորա, եւ կեցցէ» (Մարթ. Թ. 18):

Դարձեալ ժամանեցին արդիւնքն բանիցն առ ի հաստատութիւն յառաջագոյն ասացելոցն: Բայց իշխանս այս ի ժողովրդապետացն էր՝ Յայրոս անուն, որ մատուցեալ երկրպագութեամբ աղերսէր, որով Տէր եւ Աստուած զՆա ցուցանէր, զի գրեալ էր յՕրէնսն թէ՛ «Տեսուն Աստուծոյ քո միայն երկիրպագանիցես» (հմմտ. Բ. Օր. 2. 13), որոյ մա-նուկ միամօր էր երկոտասանամեայ գեղեցիկ յոյժ: Իսկ ասելն թէ՛ «Արդ եւս վախճանեցաւ», եւ Ղուկաս թէ՛ «Եկին ոմանք եւ ասեն մի՛ ինչ աշխար առներ զԴ-ա, զի մեռաւ մանուկն» (հմմտ. Ղուկ. Ը. 49), եւ Մարկոս թէ՛ «Մերձ ի մահ» (Մարկ. Ե. 23), ո՛չ երկբանութիւն ինչ է ի սոսա, այլ յոր-ժամ եկն հայրն, մերձ էր ի մահ, եւ վասն ժամանակին յամելոյ եւ երկարութեան ճանապարհին կարծեաց, թէ մեռաւ, որ եւ զկարծիքս զայս եկեալ ոմանք հաստատեցին: Եւ կամ որպէս սովորութիւն է վշտացելոց զկարիսն մեծացուցանել եւ զվիրտս աճեցուցանել, զի հաւանեցուցանեն զաղաչեցեալն, ասաց թէ՛ «Արդ եւս վախճանե-ցաւ»: Այլ դու տե՛ս զթանձրամտութիւն առն, երթալ իսկ ի տունն աղաչէ եւ ձեռն եւս ի վերայ դնել, եւ ո՛չ որպէս հարիւրապետն, զի ասէր. «Ասա՛ բանիւ, եւ բժշկեսցի մանուկն իմ»: Իսկ Տէր, աճեցու-

ցանել կամելով զսքանչելիսն եւ բարձրացուցանել զնշանսն, յա-րեաւ եւ գնաց, որպէս եւ ասէ:

Յարեաւ Յիսուս եւ գնաց զկնի նորա աշակերտօքն հանդերձ (Մարթ. Թ. 19):

Բժիշկն հոգւոց եւ մարմնոց առանց ծանրանալոյ չոգաւ զկնի, զի զմեռեալն յարուցանէ եւ այնու զկիսակատար սիրտ առն ի կա-տարելութիւն ածցէ, զի ամենայն ուրեք զփրկութիւն մարդկան հնարէր: Իսկ զաշակերտսն զկնի տանել յաղագս վարժելոյ զնոսա ի բանս եւ ի գործս, բայց Ղուկաս գերիս միայն ասէ (հմմտ. Ղուկ. Ը. 51), նմանապէս եւ Մարկոս (հմմտ. Մարկ. Ե. 37), իսկ սա խառնիխուռն աշակերտօքն ասէ. կամ զնոսա միայն տարաւ, զի Մատթէոս նոր եկեալ իսկ էր, այսպէս եւ այլքն, վասն այսորիկ զնոսա պատուէր, զի եւ սոքա ցանկութեամբ յորդորեալք նմանօղք լիցին առաքի-նութեանց նոցա, որով եւ պատուոյն հաղորդիցին: Եւ կամ զհաւա-տացեալսն աշակերտս ասէ յայսմ վայրի, որք յարուցեալ գնացին ի տես սքանչելեացն. ոմանք վասն մեծարանաց առն, որ եկն աղաչել, եւ կէսք ի նոցանէ, զի դեռ թանձրամիտք էին, ո՛չ այնպէս զոգ-ւոյն դարմանս, որպէս զմարմնոյն բժշկութիւն խնդրէին, եւ այլք վասն ինքեանց ցաւոցն ստիպեալք՝ զկնի աշակերտացն ընթանա-լին, զոր եւ զամենեսեան «աշակերտս» անուանէ, բայց յորժամ ի տունն եմուտ, երիւքն միայն առանձնացաւ՝ ըստ Ղուկայ:

Իսկ առ ի միտս՝ մինչ պատուիրեաց Տէր Աստուած Աղամայ եւ ասէ. «Յամենայն ծառոցդ, որ են ի դրախտի այդր, կերիցես, բայց ի միոյն մի՛ ուրիցես» (հմմտ. Ծննդ. Բ. 16–17), եւ իսկոյն անձնիշխանութեամբ պեր-ճացեալն Աղամ կերեալ ի պտղոյն եւ մերկացեալ եւ լուեալ զձայն գնալոյ Տեառն թէ՛ «Ո՛ւր ես», նորա մատուցեալ երկրպագութեամբ՝ ասէր. «Լուայ զձայն Քո եւ երկեայ»:

Եւ Նա ասէ. «Վասն է՞ր մերկ ես»: Ասէ. «Կինս, զոր ետուր ինձ, ետ ինձ ի ծառոյ անտի եւ կերայ» (տես Ծննդ. Գ. 9–12), զոր աստ «դուստր» ասաց յիրաւի, քանզի ի կողիցն ստեղծեալ՝ օրինակ իմն դուստր էր Աղամայ՝ խնամ տանելով իբր հօր նորա, եւ նա հնա-զանդ լինելով իբր դուստր նմա, զոր ասէ. «Արդ եւս վախճանե-ցաւ» ճշմարտապէս, զի ասացաւ. «Յորում ատր ուրիցես ի նմանէ, մահու մեռանիցիս» (հմմտ. Ծննդ. Բ. 17): Որում աղերսեալ ասէ. «Եկեալ դիցես զձեռն Քո ի վերայ նորա, եւ կեցցէ»: «Ձեռն» իմանամք Հօր՝ զՈր-



դին միածին՝ ըստ այնմ. «Աջ Քո եւ քազուկ Քո» (Մաղմ. ԽԳ. 4), եւ թէ՛ «Առաքեալ զձեռն Քո եւ փրկեա՛ զիս» (հմմտ. Մաղմ. ՃԽԳ. 7), եւ թէ՛ «Եղբորորդի իմ յառեաց զձեռն ընդ պարտիանսն» (Երգ Ե. 4), որ եւ յարեաւ յերկայնմտութենէն եւ եկն եղ ի վերայ Աղամայ եւ Եւայի զմարմինն Իւր մահուամբ, որով եկեաց զյաւիտենական կենդանութիւնն, որպէս ասաց. «Եկի, զի զկեանս ունիցիր» (հմմտ. Յովհ. Ժ. 10), եւ թէ՛ «Ես եմ յարութիւն եւ կեանք» (Յովհ. ԺԱ. 25): Իսկ «աշակերտ» յայսմ վայրի զհրեշտակն իմա, որք սպասաւորք եղեն ի ծննդեանն եւ ի խաչելութեանն:

Իբրեւ եկն Յիսուս ի փուն իշխանին եւ ետես զփողարսն եւ ամբոխ յոյժ, ասէ ցնոսա. «Ի բա՛ց գնացէք, զի ո՛չ եթէ մեռեալ է աղջիկդ, այլ ննջէ» (Մաթթ. Թ. 23-24):

Այս եպերանք ժողովրդապետին, զի ո՛չ ունէր կատարեալ հաւատս առ Նա, որպէս կինն, վասն այսորիկ կոծողք եւ լալականք մտեալ էին ի տուն նորա: Իսկ ասելն «ի բա՛ց գնացէք» երկդիմի իմանի. կամ թէ՛ ի բա՛ց թողէք զայդպիսի հեթանոսական անյուսաբար սովորութիւնդ, եւ կամ թէ՛ արտա՛քս ելէք: Է՞ր վասն. զի անփառունակ էր կեանք նորա յաշխարհի, զի մի՛ ասիցեն՝ առաջի բազմութեանն արարեալ, թէ փառս ի նոցանէ խնդրիցէ: «Զի ո՛չ եթէ մեռեալ է աղջիկդ»: Նախ՝ բանիւ յարուցանէ ի մեղաց զհոգին եւ ասպարհեամբք՝ ի մահուանէ զմարմինն: Եւ երկրորդ՝ նշանակէ ո՛չ այլ շունչ արտաբոյ ածել ի մարմինն, այլ զի՛ւրն, զի որպէս ննջեալն իւր հոգևովն յառնէ, այսպէս եւ սա: Եւ երրորդ՝ զթեթեւութիւն եւ զդիւրութիւն իրացն ծանուցանէ, զի որպէս ոք զննջեալ զարթուցանէ, այսպէս եւ Ես զմեռեալդ յարուցանեմ: Եւ չորրորդ՝ վասն զի մահ մեղաց է ծնունդ, իսկ նա երկոտասան ամաց գոլով տակաւին անմեղ էր, վասն այսորիկ ո՛չ ասաց, թէ մեռեալ է, այլ՝ «ննջէ»: Եւ հինգերորդ՝ զի ասացին, թէ մեռաւ, եւ Նա ասաց թէ՛ ո՛չ, այլ ննջէ՛, զգորութիւնն միանգամայն եւ զամենատես բնութիւնն ծանոյց. զի կամ զգորութիւնն խոստովանին, յորժամ յառնէ, զի ինքեանք ասացին, թէ մեռաւ. իսկ թէ ժխտեն զմահն, զգիտութիւնն յանձն առցեն, զի նոքա մերձ գոլով ասէին, թէ մեռաւ, իսկ Նա ի հեռի ասէ թէ՛ ո՛չ, այլ ննջէ՛, զի ստուգապէս մեռեալ էր. այլ զի Կեանքն առ ընթեր էր, ննջել ասէ նմա:

Եւ ծաղր առնէին զՆա (Մաթթ. Թ. 25):

Յիրաւի՛. զի ամենայն, որ զճշմարտութիւնն բարբառի, ի տգիտացն առ վայր մի կատակեալ լինի, որպէս Ղովտ, յորժամ զկիզումն քաղաքին ազդէր, ի փեսայիցն ծաղր լինէր (հմմտ. Ծննդ. ԺԹ. 14), եւ որպէս մեք յորժամ վասն հրեշտակահաւասար կենացն ճառեմք, յանհաւատիցն ըստգտեալ այպանիմք, քանզի պատրուակ առեալ զնիւթոյն թանձրութիւն եւ անհաւատութեանն վարագուրաւ կաշկանդեալ՝ ո՛չ հաւատան անտեսիցն՝ ըստ այնմ թէ՛ «Խոսքան ես բանք ճշմարտի» (Յոր Զ. 25), եւ թէ՛ «Այր արդար եղիւ ի կարականս» (հմմտ. Յոր Թ. 23), բայց ի ճշմարտութենէ իրացն յետոյ կշտամբեալ յանդիմանին, որպէս բարեկամքն Յորայ (հմմտ. Յոր ԽԲ. 7-8): Նաեւ ա՛յլ իմն ընդ միտ ածելով աւետարանիչս՝ գրեաց զայս. որպէս զի ստուգապէս մեռեալ էր աղջիկն, ինքեանք իսկ անհաւատ լինէին վասն յարութեանն, զի յորժամ յարիցէ, ըմբերանեսցին եւ մի՛ բարուրս պատճառանաց ի Նա հպեցուցեն:

Եւ իբրեւ ել ամբոխն ի բաց, եմուր, կալաւ զձեռանէ նորա, եւ յառեաւ աղջիկն (Մաթթ. Թ. 25):

Թէպէտ զամբոխն արտաքս եհան վասն ասացեալ պատճառին, սակայն զհայր մանկանն եւ զմայր առ ինքեան պահեաց, զի մի՛ ասիցեն՝ այլ ազգ ինչ յարոյց զմանուկն եւ ո՛չ հրամանաւ միայն: Վասն որոյ, ասէ, «կալաւ զձեռանէ նորա», իբրեւ ի քնոյ զարթուցեալ յարոյց եւ ետ ցհայրն եւ ասաց տալ նմա ուտել: Ո՛չ միայն յարոյց, այլեւ առողջացո՛յց միանգամայն. զի մի՛ առաջօք զյարութիւնն կարծիցեն, կերակրոյն տալով հաստատեաց:

Եւ ել համբաւս այս ընդ ամենայն երկիրն ընդ այն (Մաթթ. Թ. 26):

Հրամայեաց ինքն ոչ ումեք ասել, բայց համբաւ հրաշիցն ո՛չ առնոյր զտեղի, այլ տարածէր՝ ըստ այնմ. «Ո՛չ կարէ քաղաք թագել, որ ի վերայ լերինն կայցէ» (Մաթթ. Ե. 14): Բայց ինձ հիանալ գայ ընդ կարգ այլաբանութեան յեղանակիս, քանզի յորժամ եկն Յիսուս ի տուն իշխանին աշխարհիս այսորիկ մարմնով, ետես զյուսահաւատութիւն որ վասն յարութեան սերմանեալ յաշխարհս, որ մեծագոյն կոծովք զանձինս ցտէին եւ զհերս խզէին՝ վարժեալք ի չարէն, քարոզեաց զյարութիւնն բազմիմաստ եւ յոգնատեսակ բանիւ եւ իրօք՝ ասելով թէ՛ «Որ հաւարայ յԻս, թէպէտ եւ մեռանի՝ կեցցէ» (Յովհ. ԺԱ. 25): Մահ քուն է



Համարեալ յԱռաջին գալստենէն մինչեւ յերկրորդն գալուստ՝ ըստ այնմ. «Ննջեցին եւ ի բուն մարին» (հմմտ. Մատթ. ԻԵ. 5):

Իսկ ոմանք անուպայք ոչ լուան վարդապետութեան Աւետարանին, զորոց առաքեալ գրէ. «Զիա՛րդ ասեն ոմանք ի ձեւց, եթէ յարութիւն մեռելոց չիք... միթէ որ ննջեցին ի Քրիստոս՝ կորեա՛ն արդեօք» (Ա. Կոր. ԺԵ. 12, 18), եւ թէ՛ «Ո՛չ կամիմ վասն ննջեցելոցն թէ փրկմեսցիք, որպէս եւ այլքն, որոց ոչ գոյ յոյս» (Ա. Թես. Դ. 12), որք քամահեալ ծիծաղէին, բայց «յորժամ ել ամբոխն ի բաց», այսինքն՝ լրումն աղամածին բնութեանս, ըստ թուոյ սահմանի Արարչին մարդկութեանս յանկ ելեալ կատարի, տղայօք եւ երիտասարդօք, արամբք եւ կանամբք, ըստ ամբոխի օրինի, յայնժամ միւսանգամ մտանէ Անդրանիկն յաշխարհ՝ ըստ առաքելոյ. «Բնքնին Տէր ի ձայն հրեշտակապետին ի փող յեպին, եւ մեռեալք ի Քրիստոս յարիցեն յառաջագոյն» (հմմտ. Ա. Թես. Դ. 15): Եւ «ամենեքեան», զորս գերեզմանն կրեալ է, զօրէն աղջկան «լուիցեն ձայնի Ռրդոյն Աստուծոյ եւ եկեացն արարաքս» (Յովի. Ե. 28–29)՝ ներգործութեամբ իբր ձեռօք: Եւ ցնդեալքն ի հող եւ յանկերպութիւն նիւթոյ տարածեալք՝ յարուցեալ կանգնեսցին եւ զարթուցեալ ցնծասցեն, ուստի Համբաւն ճշմարտի առ ամենայն ոք, մանաւանդ յերկիրն յայն, որ հեզոց է ժառանգութիւն (հմմտ. Մաղմ. ԼԶ. 11, Մատթ. Ե. 5), որով խառնեալք հողեղէնքս ընդ հրեղէնսն՝ «յամենայն ժամ ընդ Տառն լինելով» (հմմտ. Ա. Թես. Դ. 16): Իսկ ցՀայրն տալն է զթագաւորութիւնն ի ձեռս Աստուծոյ եւ Հօր (հմմտ. Ա. Կոր. ԺԵ. 24), եւ՝ «Ախաապիկ ես եւ մանկունք իմ, գոր եպ ինձ» (Վրն Ես. Ը. 18), որոց տայ ուտել ի սեղանն Հօր զնոր գիտութիւնն յետ յարութեանն, որք օրհնեն զՓրկիչն Հանդերձ Հարբ եւ Հոգւով յաւիտեանս յաւիտենից. ամէն:

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԲԱՅԻ**  
(Երրորդ հապոր, գլուխ Է)  
**ՎԱՍՆ ԻՇԽԱՆԻՆ**

/Իշխանն, որ աղաչէր վասն դստերն, Յայրոս էր անունն եւ քահանայապետ ժողովրդեանն: Եւ վասն Զ. պատճառի յարոյց զգուստրն: Նախ՝ զի ասաց՝ ես եմ բժիշկ եւ արդեամբք կատարէր զբանն: Երկրորդ՝ զի աղաչողն պետ էր ժողովրդեանն: Երրորդ՝ զի սուգն մեծ եւ անհնարին էր: Չորրորդ՝ զի միամաւր էր: Հինգե-

րորդ՝ երկոտասանամեայ էր եւ կոյս անմեղ: Վեցերորդ՝ զի մատաղ էր հասակաւ եւ վայելչագեղ:

Հարց. Ընդէ՞ր Գ. աշակերտացն տարաւ:  
Պատասխանի. Առաջին՝ զի նախապատիւք էին քան զայլսն, որպէս եւ ի Թաբօր արար: Երկրորդ՝ զի եւ այլքն ցանկասցին եւ նոցա նմանողք լիցին: Երրորդ՝ որպէս <ի> յերկինս Գ. դասք անընդմիջաբար տեսանեն զխորհուրդն Աստուծոյ, այսպէս եւ յերկրի արար, զի նոյն Աստուածն է: Այլ ի միտս: Եկն իշխանն քահանայապետ առ Յիսուս: Որ նշանակէ զքահանայսն գոլ յայնժամ: Եւ ասէ՛ Դուստր զի տկար էր եւ ո՛չ կարէր արդարացուցանել: Եւ Յիսուս ասէ՛ «Ո՛չ է մեռեալ, այլ՝ ննջեալ է. հիւանդ է եւ ո՛չ մեռեալ»: Զի ոչ իսպառ խափանեաց զօրէնքն: Եւ գնաց ի տունն: Զի եղեւ ի կնոջէ եւ եմուտ ընդ օրինօք: Կալաւ զձեռանէ, յարոյց գնա, ըստ այմն՝ «Կալար զաջոյ ձեռանէ իմմէ, ի խորհուրդս առաջնորդ[նորդեցեր] եւ փառօք ընկալար զիս» (Մաղմ. ՆԲ. 24): Եւ ասաց տալ ուտել, որ էր քաղցր պակաս, յասելն՝ ո՛չ եկի լուծանել, այլ՝ լնուլ:

/ Հարց. Լալականք եւ փողարք:  
Պատասխանի. Լալականք են, որ զբանք ասեն աղետից: Եւ փողարքն զհնչումն ձայնի յերկարեն: Եւ ոմանք փող ասեն, զոր այժմ այլազգիք նային անուանեն:

Զամենեսեան արարաքս եհան (հմմտ. Մարկ. Ե. 40):  
Զի ծածուկ լիցի սքանչելիքն:  
Հարց. Վասն է՞ր զՀայր եւ զմայր մանկանն եթող ի ներքս:  
Պատասխանի. Նախ՝ զի մի կարծիցեն, թէ առ աչօք ինչ առնէ, վասն այն ունէր զձեռանէն եւ տայր ի Հայրն:

Եւ ասաց րալ ուրել (Մարկ. Ե. 43): Զի առ աչօքն ոչ ըմբռնի եւ ոչ կերակրի: Եւ դարձեալ տեսցեն զի բանիւք յարոյց եւ ոչ որպէս Եղիայ, եւ Եղիսէ կծկելով եւ աղաչելով:

Այլ աստ Հարցանելի է չորս ինչ. Նախ, թէ վասն էր ասէ ոչ է մեռեալ, այլ ննջեալ:

Պատասխանի. Ոչ սուտ ասաց եւ ոք քամահ[ը]ելով, այլ վասն չորից: Նախ՝ յորժամ ասաց ոչ է մեռեալ, յա[յ]նժամ կենդանացոյց եւ յորժամ կալաւ զձեռանէն՝ իբր ի քնոյ զարթոյց: Երկրորդ՝ մեռեալ կոչէ զայն, որ մինչ ի կատարած ոչ յառնէ, այլ այս որ Բ.



կամ Գ. Ժամս էր անցեալ, որպէս քուն կոչէ: Երրորդ՝ մեռեալ է, որ հանդերձ մեղօք մեռանին եւ այնպիսիքն թէպէտ կենդանիք են, մեռեալ կոչին, ըստ նմա՝ «Թող զմեռեալն ի մեռեալսն» (հմմտ. Մարթ. Ը. 22): Իսկ արդարոց մահն հանգիստ է, որպէս նինջ, ըստ նմա՝ «Ղազարոս բարեկամ [մեր] ննջեաց» (հմմտ. Յովհ. ԺԱ. 11): Չորրորդ՝ որպէս զննջելն զիւրաւ զարթուցանեմք, այսպէս եւ Քրիստոս՝ զմեռեալսն: Վասն այն ասաց՝ «Ո՛չ է մեռեալ, այլ ննջէ»:

Երկրորդ հարցանելի է՝ Վասն է՞ր ի տան յարուցանէ: Պատասխանի. Մեռեալն երկոտասանամեայ օրինակ է զմեռեալն հոգևով, երկոտասան անդամօք: Իսկ այս առաջին յարութիւնս նշանակէ զզղջումն, որ ի ծածուկ սրտին եւ ի դեմս հնգից տեսողացն: Հինգ զգայութիւնքն ներքին եւ ի պատկեր Քրիստոսի անձնիշխան կամքն, որ յարուցանէ զհոգին մեռեալ:

Երրորդ հարցանելի է՝ Վասն է՞ր առաջին զկոյսն յարոյց: Պատասխանի. Վասն չորից: Նախ՝ զի առաջին կոյսն մեռաւ մեղօք: Երկրորդ՝ զի ի կուսէ ծնաւ: Երրորդ՝ եւ կոյս է հարսնացեալ եկեղեցի սուրբ: Չորրորդ՝ զի կուսանք կոչին առ հասարակ յարուցեալքն:

Չորրորդ հարցումն է՝ Վասն է՞ր ետ ցհայրն եւ ո՛չ ի մայրն: Պատասխանի. Նախ՝ զի հայրն խնդրեաց զկենդանութիւն դստերն, զայն ցուցանէ, թէ որ ոք եւ խնդրէ, նա՛ առցէ եւ զինչ եւ խնդրէ զնոյնն: Դարձեալ ցուցանէ զայն, որ առաջին յարութեամբն աւանդեաց զհոգին ի ձեռս հօր, եւ վերջին յարութեանն յարուցանէ զամենայն եւ տացէ ի ձեռս Աստուծոյ Հօր, որում փառք յաւիտեանս. ամէն:

**Ղուկաս Ը. 40-42, 49-56**

**ԻԳՆԱՏԻՈՍ ՍԵՒԼԵՌՆՅԻ**  
(Գլուխ Ը)

Ի նմին ժամու գայ իշխան ժողովրդեանն եւ, առ վրանգի փրփմութեանն, անկանի առաջի եւ աղաչէ վասն բժշկութեան ախտացելոյ մանկանն (հմմտ. Ղուկ. Ը. 41)

Այս եղեւ, զի յամալթ լիցին ժպիրհքն, որք լրբութեամբ հակառակէին ընդ Նմա: Արդ, թէպէտ եւ ոչ կատարեալ ինչ հաւատս ըն-

ծայեցոյց ժողովրդապետն, սակայն Յիսուս, չառնէ անտես զաղաչանս, գնայ՝ տալ զպարգեւս, ըստ խնդրողին մտաց: Եւ ի գնալն Նորա՝ այն, որ ունէր հաւատս կատարեալս եւ վասն ամալթալի ախտին, չհամարձակէր կալ առաջի Նորա, ի ծածուկ հնարեցաւ գողանալ զպարգեւս նորա եւ մերձեցեալ ի քղանցս՝ եհաս շնորհին: Իսկ Յիսուս, զի մի վնասեսցի ոգևով այն, որ առողջացաւ մարմնով՝ կարծել, թէ անգիտացաւ Նա զգաղտնի գործս նորա: Վասն որոյ, իբրեւ ամենեքեան մերձեցեալ նեղէին զՆա մարմնով՝ խնդրեաց զմինն, որ մերձեցաւ ի Նա հաւատով:

Եւ յասելն բազմաց, թէ մեռաւ՝ ասէ. ոչ է մեռեալ, այլ ննջէ (հմմտ. Ղուկ. Ը. 52):

Երկրորդ քաջալ Նորայն քարոզեալ լինի զաւրութիւն, զի թէ յետ յարութեանն խոստովանին զմահն՝ խոստովանին եւ զայն, թէ յարոյց զնա: Ապա թէ սկսանին ուրանալ, ի պատճառս անհաւատութեան, վկայեն ամենատես բնութեանն, զի ինքեանք մերձ գոլով գիտացին, թէ մեռաւ: Եւ Նա, ի բացեայ գոլով, գիտէր, թէ ոչ մեռաւ, այլ ննջէ: Այսպիսեալք յարուցանէ իմաստիւք եւ հրամանաւ զմեռեալն՝ ի հաւատ ամենեցուն յարութեանն:

**ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ**  
(Գլուխ Ը)

Եւ եկն այր մի, որում անուն Յայրոս, իշխան ժողովրդեանն, անկեալ առ ուրսն Յիսուսի աղաչէր զնա մտանել ի փուն նորա եւ բժշկել զդուստր նորա երկոտասան ամեայ, որ էր մերձ ի մահ (տես Ղուկ. Ը. 41-42):

Ժամանեցին արդիւնքն բանիցն, զի սուգ անհնարինք: Ով. եւ միամաւր էր մանուկն երկոտասանամեայ: Այն եղեւ, զի յամալթ լիցին ժպիրհքն, որք լրբութեամբ հակառակէին ընդ Նմա:

Գա՛ ոմն ի փանէն ժողովրդապետին եւ ասէ. Մեռաւ դուստրն քո (Ղուկ. Ը. 49):

Զի մի՛ կարծիք ինչ լիցի յարութեանն: Վասն այնորիկ մեղմով երթայր եւ խաւսէր ընդ նոսա:



Իսկ Յիսուս իբրև լուսա՝ ասէ. Մի՛ երկնցիք, այլ հաւաքայ (տե՛ս Ղուկ. Ը. 50):

**Իգ. Զի ուսցիս, թէ որպիսի՞ հաւատս արժանի է ընձեռել:**

Եւ մտնալ ի քունն՝ ո՛չ զոք եթող, բայց միայն զՊետրոս եւ զՅակորոս եւ զՅովհաննէս եւ զհայր մանկանն եւ զմայր (Ղուկ.Ը. 51):

**Ոկ.(իգ.) Զի մի՛ ասիցեն, եթէ այլազգ յարոյց զմանուկն եւ ո՛չ հրամանաւ:**

**Լային եւ կոծէին զնա** (տե՛ս Ղուկ.Ը. 52):

**Զի կոծողք եւ փողահարք մտեալ էին ի տունն եւ ամբոխք բազումք:**

**Յիսուս ասէ. Ո՛չ է մեռեալ, այլ ն[ն]ջէ** (տե՛ս Ղուկ.Ը. 52):

**Յառաջ քան զգնալն յարոյց Բանիւ՝ եւ ասելով. «Ո՛չ է մեռեալ»: Դարձեալ. զի իբրեւ ի քնոյ զարթուցանելոց էր զնա:**

**Կալաւ զձեռանէ նորա եւ յարոյց զնա եւ ասէ. Արի՛ կաց, մանո՛ւկ դու: Եւ դարձաւ ոգի նորա ի նմա** (տե՛ս Ղուկ. Ը. 55-56):

**ՍՏ Ո՛չ այլ հոգի արկ ի մարմինն, այլ զնոյն անդրէն դարձուցանէր:**

**Եւ հրամայեաց տալ նմա ուրել** (Ղուկ. Ը. 56):

**Զի հաստատուն լիցի իրան տեսողացն: Վասն այնորիկ կերակուր հրամայէր տալ նմա, զի մի՛ առաջաւք ինչ կարծիցի[ն]:**



### 10. ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ ՏԵՌԱՏԵՍ ԿՆՈՋՆ

Մաթթէոս Թ. 20-22

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՎ ԵՓՐԵՄ

/ Եւ ահայ կին մի տեսաքես երկոքասանամեայ, մերձեցաւ յետոյ ի դրաւշակս հանդերձի նորա (տե՛ս Մաթթ. Թ. 20):

Ընդէ՞ր ոչ յայտնի եւ համարձակութեամբ մերձեցաւ առ նայ: Ամաչէր վասն ախտին, քանզի պեղծ իմն համարէր զանձն, զի թէ որ զամսաւրեայ աղտեղութիւնն կրէր յանձինն. պիղծ համարէր, որչափ եւ առաւել նայ, որ զայնչափ ժամանակս ջերանէր: Վասն այնորիկ գաղտ լուեւացն մերձենայր, քանզի լուեալ էր թէ եւ զկանայս բժշկէ: Եւ զի ետես իսկ թէ որպէս ի տան ի մաքսաւորաց եկն, եւ զոքանչն Պետրոսի բժշկեաց, եւ թէ որպիսի մաքսաւորք եւ մեղաւորք երթան զհետ նորա, եւ թէ երթայ՝ զժողովրդապետին դուստրն յարուցանել, այն ամենայն աւելի եւս խրախոյսս եւ քաջալերս տային նմայ: Ի տունն չիշխեաց կոչել զնայ, թէպէտ եւ մեծատուն էր, այլ լուեւացն հաւատով մերձենայր:

ՓՐ Բայց Քրիստոս ոչ ետ նմայ թաքչել, այլ ի մէջ ածէր եւ յայտնի առնէր, զի զամենիսեան միովն ուսուցանէ: Թէ զիւրաքանչիւր ի նոցանէ զիարդ կամ որպէս մերձենայր ի նայ, գիտեր նայ: Որ մերձենայր ի նայ մարմնապէս, մարմնապէս շաւշափումն տեսանէր եւ որ մերձենայր ի նայ հոգեպէս, ի ձեռն շաւշափելի մարդկութեանն, զանշաւշափելի աստուածութիւնն շաւշափէր: Որ մերձենայր ի նայ մարդկապէս զգանձս առողջութեան ցաւոցն գտանէր, զի թէ էր բժշկեալ տանձեցել, տանջեցելոյն, եւ զնացեալ գաղտ՝ հանդերձ այնու: Զի ի բազմաց սքանչելիքն ծածկեալ լինէին: Սակայն նայ ինքն գլխովին, որ բժշկեցաւն մարմնապէս, հիւանդացեալ լինէր հոգեպէս: Զի թէ վասն զի բժշկեաց զնայ մարգարէ, սակայն վասն զի ոչ գիտացն, երկմտեալ լինէր նայ ի նմանէ՝ թէ չէ Աստուած: Եւ թէ ընդէ՞ր ոչ յայտնեաց Տէրն, ով մերձեցաւ ի նայ, զի վկայեսցէ այն, որ բժշկեցաւն, յայտնապէս զգաւրութիւնս այնմիկ: Որ բժշկեաց զնայ ի ծածուկ, ո՛չ փութացաւ նայ, թէ ինքն



վկայեսցէ վասն անձին իւրոյ: Իբրու ինքն ի մէջ թշնամեաց իւրոց կայր, այլ եկաց մնաց զի գործն եղիցի իւր քարոզ:

Կ Քանզի կացուցանել զաղբեր արեանն, ոչինչ սակաւ նշանակ, ասացի, ցուցանել, թէ ամենագէտ է եւ քանի ի ժողովրդապետի տունն երթալոց էր, հաւատովք կնոջն եւ զայլ եւս զեղծս կամէր ածել յուղղութիւն:

ՓՐ Այլ իբրեւ լուաւ տեռատեսն, զի ասաց նայ զքահանայապետն՝ հաւատայ եւ կեցցէ դուստրն քո, ած զմտաւ, թէ այն որ կարող է զհոգիս աղջկանն դարձուցանել ի մարմինն՝ երկոտասանամեայ, կարող է նայել զհարուածն երկոտասանամեայ հատանել ընկենուլ ի մարմնոյ անտի:

Ո՞յ մերձեցաւ ի հանդերձս իմ (Մարկ. Ե. 31, հմմտ. Ղուկ Ը. 45-46): Ձի գիտացցէ այն որ գիտաց զբժկութիւն իւր. թէ եւ նայ գիտաց զհաւատս նորա: Արդ վասն առողջութեան իւրոյ գիտաց նայ, թէ նայ է բժիշկ ամենայնի: Եւ վասն հարցանելոյ նորա, գիտաց զնայ քննիչ ամենայնի, նայել մահուն:

Իսկ ի դէպ համարեցաւ գալ նախ եւ ապայ ինքն չոգաւ անդ: Ձի յայտնի լինիցի զաւրութեանն հանդէս, վասն այնորիկ մեղմով երթայր եւ խաւսէր յաճախագոյն ընդ կնոջն: Ձի՞ թոյլ տացցէ մեռանել մանկանն: Նաեւ ասելոյն, եթէ մեռաւ դուստրն քո, զի մի կարծեւք ինչ լինիցի յարութիւնն: Վասն այսր ամենայնի ած զկինն ի մէջ եւ ասէ. Քաջալերեա՛ց, դուստր, որպէս ցանդամալոյծն, թէ՛ քաջալերեա՛, որդեակ եւ քանզի զարհուրեալ էր կինն. վասն այնորիկ քաջալերս տայ նմայ եւ դուստր եւս կոչէ զնայ, յարգէ զնայ եւ գովէ՝ «Նաւարք քո կեցուցին զքեզ» (Մարթ. Թ. 22):

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ**

(Գլոխ Թ.)

Եւ ահա կին մի՝ փռեալու երկոտասանամեայ, մաքուցեալ յեփոյ, մերձեցաւ ի դրօշակ հանդերձի Նորա, քանզի ասէր ի մտի իւրում. «Թէ միայն մերձենամ ի հանդերձս Նորա, փրկի՛մ» (Մարթ. Թ. 20-21):

Մարկոս ընդարձակս յաղագս կնոջս ճառէ (Մարկ. Ե. 25-26), թէ վաճառեալ զամենայն ինչս իւր՝ եւ ո՛չ էր գտեալ յումեքէ հնար

բժշկութեան, այլ մանաւանդ զայրացեալ, զի որ եհարն, նա առողջացուցանէր, վասն որոյ թողեալ զամենայն՝ ի վերջինն ապաւինի բժիշկ: Բայց ընդէ՞ր յետոյ մերձեցաւ ի դրօշակս եւ ո՛չ համարձակութեամբ յառաջ եկն. թուի վասն ախտին ամօթի, զի թէ որ զամսօրեայ աղտեղութիւն կրէր յանձինս, պիղծ համարեալ էր ըստ Օրինացն (Ղեպ. ԺԵ. 19-30), ո՞րչափ եւս առաւել նա, որ զայնքան ժամանակս զագրութեամբ արեանն ջերանէր: Եւ դու տե՛ս զհաւատս կնոջն, զի ի տունն ո՛չ կոչեաց, թէպէտ մեծատուն էր, այլ լուրեայն հաւատովն խիզախեալ մերձենայր եւ ոչինչ երկմտեաց վասն առողջութեանն թէ՛ զերծանի՞մ թէ ոչ, այլ բաւական համարեալ փրկութեանն պատճառ զհաւառութիւն հանդերձի Նորա՝ ընդ միտ ածելով, թէ Որ զերկոտասանամեայ վախճանելոյն զհոգին երթայ յետս դարձուցանել, կարօղ է եւ զերկոտասանամեայ ցաւս ընկենուլ ի մարմնոյս աստի եւ ի բաց հատանել:

Իսկ նշանակաւ՝ «կին» է աղամական բնութիւնս վասն առ ի նիւթն միտելոյ եւ իզական ախտիւ վարակելոյ: Իսկ «տեռատես» վասն ապաժոյժ արեան գալոյ, ըստ մարգարէին, անօրէն սպանութեամբ եւ անբիծ արեանն մանկանցն հեղմամբ (հմմտ. Սաղմ. ճԵ. 37-38), եւ ճենճերօք դիւաց զոհիցն խառնակութեամբ, եւ այս՝ երկոտասանամեայ ծառայելով պարբերութեան կենդանակերպիցդ, յորոց ամք գոյանան: Նաեւ երկոտասան անդամօք մարմնոյ եւ զուգաթիւ ամսոց աւուրբք յողուածովք ոսկերաց զկազմութիւն ընդունելոյ՝ զառածելով ի մեղս, որ եւ ծախեալ ի պէտս ցանկութեան զաստուածապաշտութեանն ինչս՝ եղեն չքաւորեալ ըստ անառակին (հմմտ. Ղուկ. ԺԵ. 14) եւ յումեքէ բժշկութիւնն ոչ գտին: Եւ կամ թէ ի պէտս աստուածապաշտութեանն մաշեցան՝ ելանելով յերկինս եւ իջանելով յանդունդս (հմմտ. Սաղմ. ճԶ. 26), եւ զԱստուած ոչ գտին, որով բժշկեալ էին, մինչեւ եկն Բանն, յորոյ սքանչելեացն եւ ի վարդապետութեան բանիցն լրոյ՝ մերձեցեալ ի քղանց հանդերձի մարմնոյ Նորին հաղորդութեամբ յետոյ, այսինքն՝ ի լրման ժամանակի (հմմտ. Գաղատ. Դ. 4), եւ կամ յետ խորհրդոյն կատարման՝ վստահացեալ սրտի հաւատով երկիւղիւ մատչիմք ի խորհուրդ մարմնոյ Նորա, որով փրկիմք յառաջին յանցանաց հնոյն Աղամայ եւ յանիծից Օրինացն մեղաց եւ ի կռապաշտութեանն արեանցն բղխմանց:



Իսկ Յիսուս իբրև դարձաւ եւ երես զնա, ասէ. «Քաջալերեա՛ց, դո՛ւսար, հաւարք քո կեցուցին զքեզ» (Մարթ. Թ. 22):

Համառօտ գրէ Մատթէոս զկնոջն պատմութիւնն, իսկ Ղուկաս ասէ թէ՛ «Ո՞վ մերձեցաւ յիս»: Է՞ր վասն զայն արար: Նախ՝ զի միովն զամենեսեան խրատէ, թէ ո՛րպէս կամ զիս՝ զմերձեցնայր ոք ի նա մարմնապէս կամ հոգեպէս՝ զիտէ՛ր նա, որպէս եւ ասաց Պետրոս. «Ժողովուրդդ նեղեն զՔեզ», իսկ նա ասէ թէ՛ «Ոմն մերձեցաւ յիս» (Մարկ. Ե. 31, հմմտ. Ղուկ Ը. 45-46), զի այլ է մարմնոյ մերձաւորութիւն, եւ այլ հաւատոյ, զի մարդ՝ ի մարդ, իսկ հաւատ յԱստուած մերձենայ, որով եցոյց, թէ մարդ է եւ Աստուած: Եւ երկրորդ՝ զի մի՛ սքանչելիքն ի բազմաց ծածկեալ լինիցի, այլ ամենեցունց յայտնեսցի: Եւ երրորդ՝ նա ինքն զլիսովին, որ բժշկեցաւն մարմնապէս, մի՛ վիրաւորեսցի հոգեպէս, զի թէ բժշկեաց զնա, մարգարէ զիտացէ, բայց զի ոչ զիտաց նա, երկմտիցի ի նմանէ, թէ Աստուած ոչ է: Եւ չորրորդ՝ յամելով անդր հարցմամբն եւ յաճախ ընդ կնոջն խօսելով՝ կամեցաւ իսկ մահուն տեղի տալ եւ ապա ընթանալ ի տուն աղջկանն, զի յայտնի լիցի յարութեանն հանդէս: Եւ ընդէ՛ր Ինքն ոչ յայտնեաց, թէ ո մերձեցաւ. զի վկայեսցէ այն, որ բժշկեցաւ յայտնապէս, զօրութեան Այնմիկ, որ բժշկեաց զնա ծածկապէս: Միանգամայն եւ ոչ փութացաւ Ինքն վկայ լինել անձին Իւրոյ, իբրու զի ի մէջ թշնամեաց կայր, այլ եկաց մնաց, զի լինիցի[ն] գո՛րծք Նորա քարոզ աստուածութեան Նորա, թէ ամենազէտ է: Վասն որոյ յորժամ յառաջ եկն դողութեամբ, ասէ. «Քաջալերեա՛ց, դո՛ւսարք». զի զարհուրեցաւ կինն ի հարցմանէն՝ զերկիւղ սրտին փարատէ եւ «զուստր» ասելովն յարգէ եւ գովէ եւ զխնամս Իւր առ նա ցուցանէ, միանգամայն եւ զհնազանդութիւն ի ձեռն հաւատոյ ի նմանէ պահանջէ. «Նաւարք քո կեցուցին [զքեզ]»: Զի որպէս բժշկութեանն հաւատաց, այսպէս եւ զիտութեանն, վասն որոյ ասէ՛ ի հաւա՛տ[ս]դ վստահացիր, զի դոքա՛ կեցուցին զքեզ ի ցաւոցդ եւ ի գայթակղութեանցդ: Նաեւ այսու զգեղծ միտս յուղղութիւն ածիցէ, որք եկեալ ասէին. «Մի՛ ինչ աշխար առներ զՎարդապետդ, զի մեռաւ դուստրն քո» (հմմտ. Մարկ. Ե. 35). Եւ յորժամ ի տունն չոգաւ, ծաղր առնէին, ի դէպ էր եւ հօրն ախտանալ, ուսուցանէ, թէ հաւա՛տք պիտոյ են առ ի կեալ մանկանն քո:

Եւ փրկեցաւ կինն ի ժամն յայնմանէ (Մարթ. Թ. 22):

Զայս թէպէտ վասն ստոյգ բժշկութեանն եղ աւետարանիչս, սակայն յայտնապէս ծանուցանէ, թէ ո՛չ հաւատք առանց զօրութեան եւ ո՛չ զօրութիւն առանց հաւատոյ կարօղ է ներգործել հրաշս կամ բժշկութիւն ցաւոց ընդունել, զի զոր օրինակ լոյս աչաց ընդ լոյս արեգական խառնեալ՝ բախէ ի վերայ իրաց, որով ճշգրիտ տիպ նիւթոյն երեւի ի միում ժամու ի թարթափել ական, այսպէս ընդ զօրութիւնն Տեառն միաբանեալ հաւատք կնոջն, որ ակն է մտացն, փրկութիւն եղեւ հրաշալի եւ դուն ամանակի: Իսկ ըստ մտաւոր տեսութեանն՝ յորժամ կատարեաց զտնօրէնութիւնն եւ դարձաւ առ Հայր, ասաց ցեկեղեցի. «Քաջալերացարո՛ւք, զի Ես յաղթեցի աշխարհի» (Յովն. ԺԶ. 33), եւ՝ «Տուաւ Ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի...», երթայք մկրտեցէք զամենայն հեթանոսս յանուն Նոր եւ Ռդոյ եւ Նոգոյն Սրբոյ» (հմմտ. Մարթ. ԻԸ. 18-19): Եւ նոյն հաւատովն որ ի Քրիստոս՝ կեայ ցեկեղեցի հաստատեալ ի վերայ վիմի, զուստր վերնոյն Սիոնի՝ «ճնանելով զամենեսեան ի յոյսն կենդանի» (հմմտ. Ա. Պետ. Ա. 3)՝ յարգանդէ մօր Աւագանին երկամբք՝ ըստ առաքելոյ. «Զի ի Յիսուս Քրիստոս անպարանաւ եւ ճնայ զձեզ» (Ա. Կոր. Դ. 15), եւ թէ՛ «Որդեակք իմ, զորս վերստին երկնեմ, մինչեւ նկարեցի ի ձեզ Քրիստոս» (Գաղատ. Դ. 19):

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՅԻ**

(Երրորդ հարոր, գլուխ Է.)

**ՎԱՍՆ ՏԵՌԱՏԵՍԻՆ**

Գիտելի է, զի էր ամօթխած վասն գարշ ախտին: Եւ երկիւղած, զի ոչ իշխեաց ի տունն կանչել, թէպէտ մեծատուն էր եւ հաւատարիմ, վասն որոյ յետոյ ի ծածուկ եւ լուեալ ի ստորոտս մերձեցաւ:

Հարց. Ուստի՞ համարձակէր մերձենալ:

Պատասխանի. Ի չորից: Նախ՝ զի լուեալ էր, թեեւ զկանայս բժշկէ անախտաբար, որպէս զգօքանչն Պետրոսի: Երկրորդ՝ զի ի տնէ մաքսաւորաց եկն: Երրորդ՝ զի մեղաւորք երթալին զհետ նորա: Զորրորդ՝ զի երթայր զզուստր իշխանին յարուցանել, ասաց, թէ՛ որ զերկոտասանամեայ աղջիկն յարուցանէ եւ զիս զԲԺ. (երկոտաս)ան ամօք ցաւագնեալս բժշկէ:

Հարց. Վասն է՞ր վաղվազակի բժշկեցաւ:



Պատասխանի. Նախ. զի յուսացեալն Հաւատով՝ մի՛ ամաչեսցէ: Երկրորդ՝ զի յետոյ իշխանին Համբաւեցին, թէ դուստրն մեռաւ, մի՛ երկմտիցէ, թէ ոչ յարուցանէ: Երրորդ, զի եւ այլ բազում կեղծաւորք կային եւ վասն բժշկութեան եկեալ, զի մի՛ եւ նոքա երկմտիցեն: Չորրորդ, զի եւ մաքսաւորք՝ ընկերակիցք Մատթէոսի, Հաւատասցին:

Հարց. Վասն է՞ր զգաղտ բժշկութիւնն յայտնեաց Քրիստոս ասելով՝ Ով մերձաւ յիս (Մարկ. Ե. 31, հմմտ. Ղուկ Ը. 45-46):

Պատասխանի. Ասեն վարդապետք Ժ. պատճառ: Նախ՝ այսու ուսուցանէ, թէ զամենայն մերձեցեալսն առ նա գիտէր, թէ Հաւատով, թէ նենգութեամբ: Երկրորդ՝ ցուցանէ, թէ որ մարմնապէս մերձենայր, ոչ ինչ օգտէր, որպէս ամբոխն, որ նեղէր: Իսկ որ մերձենայր հոգով, զանշօշափելի աստուածութիւնն ի շօշափելի մարմինն տեսանէր: Ըստ նմա՝ «Ձեռք մեր շօշափեցին զբանն կենաց» (հմմտ. Ա. Յովհ. Ա. 1): Երրորդ՝ զայն ցուցանէր, թէ որ մերձենայր ի մարմինն, զառողջութիւն մարմնոյ գտանէր: Եւ որ մերձենայր ի հոգին՝ զվարդապետութիւն հոգւոյ: Չորրորդ՝ թե ծածկեալ էր զսքանչելիքն բազմաց թերութիւն լինէր, որք սքանչելեօքն Հաստատեցան: Հինգերորդ՝ եւ նոյն ինքն, որ բժշկեցաւ մարմնապէս, հիւանդացեալ լինէր հոգեպէս, զի գիտէր թէ մարդարէ է, այլ ոչ գիտէր, թէ Աստուած է: Վեցերորդ՝ զի Հաւատովք կնոջն բազումք ուղղեցան, որ ի տանէն քահանայապետի տկարացան վասն մեռեալ մանկանն: Եւ թներորդ՝ զի գիտացէ կինն թէ որ գիտաց զբժշկութիւնն իւր, գիտաց եւ զծածուկ Հաւատս նորա: Ութերորդ՝ նա, որ վասն առողջութեան գիտաց զնա բժիշկ ամենայնի, վասն հարցանելոյն գիտացէ զնա քննիչ ամենայնի եւ դատաւոր: Իններորդ՝ յամեաց ի ճանապարհին զի մեռցի մանուկն եւ մի կարծեօք լիցի յարութիւնն, վասն այնորիկ հարցանէր զկինն եւ պատասխանէր, որպէս վասն Ղազարու յամեաց՝ Բ. օր անդրէն, զի չորեքօրեայ լիցի մեռեալն (հմմտ. Յովհ. ԺԱ. 39): Տասներորդ՝ եհարց զի կարծիքն նորա Հաստատեցէ եւ զհաւատն գովեսցէ, եւ դուստր կոչեսցէ Հաւատովն:

Եւ ի միտս: Տեռատես կինն, որ յետոյ կուսէ մերձեցաւ ի հանդերձս եւ բժշկեցաւ, նշանակ է զհեթանոսաց եկեղեցիս, որ պղծալից արեամբ զոհիցն աղտեղեալ էր եւ ախտացեալ: Եւ բազում ինչս վատնեաց ի կուռսն, եւ ոչ ողջացաւ, այլ Հաւատով մերձեցաւ ի

Քրիստոս եւ ի մարդեղութիւն բանին, որ է յետոյք նմա, որպէս ասէր առ Մովսէս, թէ «զյետոյս իմ տեսցես» (Ելից ԼԳ. 23), այսինքն՝ ի ծածկոյթ աստուածութեանն: Եւ ապա սրբեցաւ եւ ողջացաւ: Եւ եղեւ դուստր վերնոյն Սիոնի:

Ղուկաս Ը. 43-48

ԻԳՆԱՏԻՈՍ ՍԵԻԼԵՌՆՅԻ (Գլուխ Ը)

Իսկ նա դողալով եկն, անկաւ առաջի Նորա եւ ամենեցուն ուսոյց այնպիսի Հաւատով մերձենալ ի Նա: Գովեաց եւ Տէրն զքաջութիւն Հաւատոց նորա. «Նաւարք քո կեցուցին զքեզ»: Գան, ասեն ժողովրդապետին՝ մեռաւ դուստրն քո, եւ Յիսուս ասէ. «Մի՛ երկնչիր, այլ միայն հաւարա»: Զի ուսցի Հաւատս՝ որպէս արժան է, այնպէս ընծայել:

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ (Գլուխ Ը)

Եւ ընդ երթալ նորա կին մի փեռափես երկոտասան ամեայ, մաքուրեցալ յեփոյ՝ մերձեցաւ ի հանդերձս նո[րա] (հմմտ. Ղուկ. Ը. 42-44):

ԵՓ Արդ՝ կինս այս ած զմտաւ, թէ այն, որ կարող է զհոգի[ն] երկոտասան ամեայ դստերն դարձուցանել ի մարմինն, կարող է եւ զերկոտասան ամեայ զհարուածս բժշկել: Արդ՝ որ մերձենայր ի նա մարմնապէս, շաւշափումն մարմնոյ տեսանէր: Եւ որ մերձենայր ի նա հոգեպէս, զանշաւշափելի աստուածութիւնն տեսանէր ի ձեռն մարմնոյն: Անսուրբ էր ըստ աւրինացն տեռատեսն եւ սերմնակաթն, եւ ո՛չ մտանէր ի տաճարն:

ՍՏ Այլ զի աւրինակ էր, որոց անդադար զգարչելի ցանկութիւնն հոսէ: Իսկ ի մերձենալն ի Քրիստոս՝ զգարչելի հոսումն ախտիւքն ցամաքեցոյց: Նախ՝ զհոգւոյն ախտն Հաւատովն սրբեաց եւ ապա՝ մարմնոյն հոսումն բժշկեցաւ:

Ասէ Յիսուս. Ո՞ մերձեցաւ յիս (հմմտ. Ղուկ. Ը. 45):

Ընդէ՞ր ո՛չ յայտնեաց Տէր մեր, թէ ո՞վ մերձեցաւ ի նա, զի վկայ լիցի այն, որ բժշկեցաւն:



**Զի գաւրութիւն ել յինէն** (տրնս Ղուկ. Ը. 46):

*Յայտնեաց Յիսուս զզաւրութիւն իւր, որ բժշկեաց զնա ի ծածուկ: Ո՛չ ինքն վկայեաց վասն անձին իւրոյ, զի ի մէջ թշնամեաց կայր: Մնաց, զի գործքն եղիցին իւր քարոզ:*

**Իբրեւ երես կինն, եթէ ո՛չ ծածկեցաւ ի նմանէ, եկն դողալով, պապմեաց առաջի ամենեցուն** (հմմտ. Ղուկ. Ը. 47):

*ԿՐ Որպէս բժշկութեանն հաւատաց, զոր ծածկաբար խորհեցաւ, այսպէս եւ՝ գիտութիւնն Քրիստոսի:*

**Քաջալերեաց, դո՛ւստր** (Ղուկ. Ը. 48):

*Որպէս յայնժամ ցանդամալոյծն ասէր. «Քաջալերեաց, որդեա՛կ» (հմմտ. Մարկ. Ժ. 49): Քանզի զարհուրեալ էր կինն, վասն այնորիկ քաջալերեաց զնա ի հաւատս:*

**Նաւաքք քո կեցուց[ին] զքեզ** (տրնս Ղուկ. Ը. 48):

*Կր.(ոսկի.) Գովէր զհաւատս կնոջն եւ այնու խրատէ՝ տալով համարձակութիւն ախտաժէտացն եւ մեղաւորացն մերձենալ ի նա հաւատով որպէս կինն:*

**Գա՛ ոմն ի փանէն ժողովրդապետին եւ ասէ. Մեռաւ դուստրն քո** (տրնս Ղուկ. Ը. 49):

*Զի մի՛ կարծիք ինչ լիցի յարութեանն: Վասն այնորիկ մեղմով երթայր եւ խաւսէր ընդ նոսա:*

**Իսկ Յիսուս իբրեւ լուա՛ւ ասէ. Մի՛ երկնչիր, այլ հաւաքայ** (հմմտ. Ղուկ. Ը. 50):

*Իգ. Զի ուսցիս, թէ որպիսի՞ հաւատս արժանի է ընձեռել:*



## 11. ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ ԵՐԿՈՒՅ ԿՈՒՐԻՑ

Մապթէոս Թ. 27-31

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՎ ԵՓՐԵՄ

Եւ մինչդեռ անցանէր Յիսուս զհետ եղեն նմայ կոյրք երկու աղաղակէին եւ ասէին՝ ողորմեաց մեզ որդի Դաւթի (տրնս Մապթ. Թ. 27):

Եւ ընդէ՞ր արդեւք ձգեալ տանէր զնոսա եւ ստէպ-ստէպ աղաղակել տայր:

Դարձեալ եւ այսու եւս ուսուցանէ զմեզ ի բաց առնել յանձանց, զառ ի բազմաց փառաւորութիւնն: Քանզի մաւտ ի տունն էին, տանի զնոսա ի ներքս եւ առանձինն բժշկէ: Եւ այս ի պատուիրելոյն յայտ է, մի՛ ումէք ասէ ի վեր հանիցէք: Որ ոչ սակաւ ինչ ամբաստանութիւն էր հրէիցն, զի սոքա, աչաւք կափուցելովք, ի լսելոյ եւ եթէ հաւատային եւ նոքա, աչաւք բացաւք, որ գործոց վկայէին, զՆայ եւ զսքանչելիսն տեսանէին եւ դամենայն ինչ ընդհակառակս նմա գործէին:

Եւ արդ տես զյաւժարութիւն նոցա, զի ոչ վայրապար մերձեցան, այլ մեծաձայն աղաղակէին, ոչ այլ ինչ, այլ՝ զողորմութիւնն եղեալ առաջի, աղերսիւ որդի Դաւթի կոչելին: Զի՞ պատուական իսկ համարեալ էր նոցա անունն, զի բազում ուրէք եւ մարգարէքն իսկ յորժամ զթաղաւորսն պատուել եւ մեծս երեւցուցանել կամէին, յայն անուն կոչելին զնոսա: Եւ իբրեւ հրամայեաց կոչել զնոսա կրկին զնոյն հարցանէ: Ամենայն ուրէք աղաչանաց մնայ, ապա բժշկէ: Զի մի կարծիցի թէ առ պարծանս ընդյառաջ երթայցէ սքանչելեացն, զի ցուցցէ, թէ արժանի էին բժշկութեանն: Եւ զի՞ Դաւթա որդի կոչէին, հանէ ի բարձրագոյնսն զնմանէ:

Հաւատա՞յք, ասէ, թէ կարող եմ առնել ձեզ զայդ: Եւ ոչ ասաց՝ եթէ հաւատայք եթէ կարաւզ եմ բարեխաւսել առ Հայր իմ կամ աղաչել, այլ՝ թէ՞ ես իսկ կարող եմ առնել: Եւ նոքա ասեն՝ այո, Տէր: Եւ ոչ եւս որդի Դաւթի, միայն կոչէին զնայ, այլ ի բարձրագոյնսն վերացեալք զտէրութիւնն, իսկ խոստովանէին, այնուհետեւ եւ նայ զնչ ձեռն եւ ասէ՝ «Ըստ հաւաքապոց ձերոց եղիցի ձեզ»:



Ձայս այսպէս առնելով եւ զհաւատս նոցա հաստատէ եւ ցուցանէ, զնոսա բաժանորդս լինել բժշկութեանն եւ վկայս, թէ ոչ պաշտաւն ինչ առնելոյ վասն էին բանքն:

Ապա յետ բժշկութեանն հրաման տայ՝ մի՛ ումէք հանել ի վեր: Բայց նոքա ոչ անսային, այլ քարոզք եւ աւետարանիչք լինէին: Իսկ թէ այլուստ ասէ՝ երթ պատմեայ զփառս Աստուծոյ, չէ ինչ այս այնմ հակառակ: Խրատէ այսուիկ, զի մեք՝ անձամբ, զանձինս մեր մի՛ յարգեսցուք: Եւ եթէ այլ յարգիցեն, մի՛ առցուք յանձն: Ապա եթէ յԱստուծոյ փառս ինչ իցեն իրքն, այլ ստիպել եւ ի նոյն յորդորել արժանի է:

### ՅՈՎՀԱՆՆԵՍ ԾՈՐԾՈՐԵՅԻ

(Գլուխ Թ)

Եւ միջդեռ անցանէր ընդ այն Յիսուս, զհետ եղեն Նորա կոյրք երկու, աղաղակէին եւ ասէին. «Ողորմեաց մեզ, Որդի՛ Դաւթի» (Մաթթ. Թ. 27):

Նշան ընդ նշանս խառնէ, զի հաւատք աճեսցին առ մարդիկ: Բայց թէ ընդէ՞ր զհետ Իւր յապաղէ աղաղակել. առ ի խրատ մեզ՝ ի բաց առնել յանձանց զառ ի բազմաց փառաւորութիւնն, որպէս ինքն: Քանզի մօտ ի տունն իսկ էին, յորում ամբողջն էր, հեռացոյց եւ առանձնացոյց ի տան ուրեք եւ ապա՛ բժշկեաց, եւ այս յայտ ի պատուիրելոյն է թէ՛ «Մի՛ ոք գիրասցէ» (Մաթթ. Թ. 30): Նաեւ այսու զիղձ հաւատոց նոցա բաղձացուցանէ, որով վառեալ կոյր կենօք առանց ձանձրանալոյ զկնի ընթանային՝ ի յանդիմանութիւն հրէիցն, զի սոքա աչօք կափուցելովք ի լսելոյ եւեթ հաւատային, եւ նոքա աչօք բացօք զսքանչելիսն տեսալ՝ ընդ հակառակս ելանէին: Տես եւ զա՛յն, զի ո՛չ վայրապար մերձեցան, այլեւ մեծաւ ձայնիւ աղաղակէին, եւ ո՛չ զայլ ինչ, այլ զողորմութիւն յՈրդւոյն Դաւթէ պահանջէին. «Ողորմեաց մեզ, Որդի՛ Դաւթի»: Արդ՝ կամ աղերսիւ «Որդի Դաւթի» կոչէին, զի պատուական իսկ համարեալ էր նոցա անունն, որպէս եւ այլ մարգարէքն, յորժամ զթագաւոր զոք պատուել կամէին, յայն անուն կոչէին, եւ կամ զողորմութիւն Դաւթի հօր Նորին որ առ կոյրսն եւ կաղսն (հմմտ. Բ. Թագ. Թ)՝ յՈրդւոյ Նորին խնդրէին:

Եւ իբրեւ եկն ի քուն, մաքեան առ Նա կոյրքն (Մաթթ. Թ. 28):

Առանց յետս դառնալոյ զայնքան յերկարութիւն ճանապարհին մինչ ի տունն երթային եւ նովին պաղատանօք մատեան առաջի:

Եւ ասէ ցնոսա Յիսուս. «Նաւարա՞յք, եթէ կարող եմ առնել ձեզ զայդ» (Մաթթ. Թ. 28):

Հարցմամբս աղաչանաց մնայ եւ ապա՛ բժշկէ, զի մի՛ կարծիցի, թէ առ պարծանս ընդ առաջ երթայցէ սքանչելեօքն: Նաեւ ա՛յլ ազգ. զի ցուցցէ, թէ արժանի էին բժշկութեան, որպէս եւ առ ընթեր չարչարանացն դարձեալ հրաշագործէր՝ ի կորանս հրէիցն եւ ի հաստատութիւն առաքելոցն: Եւ դարձեալ՝ զի «Որդի Դաւթի» կոչէին, հանէ ի բարձրագոյն ուսումն, եթէ զի՛նչ պարտ է իմանալ զՆմանէ, հաւատա՞յք, ասէ, որպէս յԱստուած եւ ո՛չ թէ հաւատա՞յք, թէ կարող եմ բարեխօսել առ Հայր եւ կամ աղաչել զԱստուած, այլ թէ Ե՛ս իսկ կարող եմ իբրեւ զԱրարիչ բանալ զաչս ձեր:

Ասեն ցՆա. «Այո՛, Տէ՛ր» (Մաթթ. Թ. 29):

Տես, զի ո՛չ «Որդի Դաւթի» կոչեցին, այլ ի հարցմանէն զօրացեալք՝ ի բարձրագոյնսն վերացան եւ Տէ՛ր զՆա Դաւթի խոստովանեցին:

Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա եւ ասէ. «Ըստ հաւատոց ձերոց կոչեցի ձեզ» (Մաթթ. Թ. 29):

Մերձենալովն զինքն գոլ բժիշկ ցուցանէ, իսկ «ըստ հաւատոց ձերոց եղիցի»՝ կցորդս զնոսա բժշկութեանն առնէ, նաեւ վկայս, թէ ո՛չ պաշտօն ինչ առնելոյ վասն բանքն էին, այլ հաւատոյ խնդրուածք ի սրտէ:

Եւ բացան աչք նոցա (Մաթթ. Թ. 30):

Ոչ միայն մարմնոյն հրճուիլ ի լոյս զգալեացս, այլեւ մտացն ցնծալ ի լոյս իմանալեացն՝ ըստ այնմ. «Ի դապաստան եկի յաշխարհս յայս, զի որք ոչն րեսանեն՝ րեսցեն, եւ որք րեսանեն՝ կուրասցին» (Յովհ. Թ. 39):

Եւ սասրեաց նոցա Յիսուս եւ ասէ. «Ձգո՛յ՛ կացէք, մի՛ ոք գիրասցէ» (Մաթթ. Թ. 30):



Չանմեծարգութիւնն անձինն պատուէ այսու: Նաեւ զնոսա խրատէ սաստիւն մի՛ պանծալ յանձին արժանաւորութիւնն, որով հպարտացեալ՝ գիտակակից լիցի սատանայ, եւ վերստին կործանիք յանհաւատութեանն կուրութիւն, զի որպէս խոնարհութիւն զգուշութեամբ բարձրացուցանէ, այսպէս եւ մեծամտութիւն զբարձրացեալն կործանէ:

Եւ նորա ելեալ՝ համբաւեցին զՆա ընդ ամենայն երկիրն ընդ այն (Մաթթ. Թ. 31):

Տես, թէ ո՛րպէս ի սաստէն զգաստացան, քանզի ո՛չ զանձինս, այլ զՆա՛ իսկ աւետարանէին եւ սքանչելեացն հռչակիչք լինէին. եւ զի՞նչ ասէին, քան թէ զայս, թէ Յիսուս Քրիստոս Որդի Դաւթի՝ փրկիչ Իսրայէլի, եկեալ է յաշխարհ: Եւ դարձեալ՝ սոցա ասաց թէ՛ «Մի՛ ոք գիտասցէ», իսկ այլուք թէ՛ «Երթ պարմեա՛ գլխոս Ասարոծոյ» (հմմտ. Ղուկ. Թ. 60). Էջ՛ ինչ հակառակ, այլ խրատէ, զի մեք զանձինս մի՛ յարգեսցուք, եւ թէ այլք յարգեսցեն, մի՛ յանձն առցուք, ապա թէ ի փառս Աստուծոյ իցեն իրքն, ստիպեալ զամենեսեան ի նո՛յն յորդորեսցուք:

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՅԻ**

(Երրորդ հարոր, գլուխ Ը.)

**ՎԱՍՆ ԿՈՒՐԻՅՆ**

Մինչդեռ անցանէր զհետ երթ(ան) կոյրք երկու աղաղակէին

(Մաթթ. Թ. 27):

Գիտել պարտ է, զի կարգաւ կատարէ զնշանսն՝ փոքունցն ի մեծագոյնն ելեալ, որպէս բորոտն, ջերմն, հիւանդն, անզամալոյծն եւ ապա զմեռեալն յարուցանել: Ուսանիմք յայսմանէ, զի կարգաւ կատարելի է զառաքինութիւնն: Նոյնպէս եւ ամենայն տնօրէնութեանց կատարումն յարութիւնն է: Այսպէս եւ ի կատարածի հասարակաց յարութիւնն: Ուսանիմք յայսցանէ. ամենայն գործոց գլուխ եւ կատարումն գոլ, որ ի մահ ու մեղաց զհոգիս կեցուցանեմք՝ եթէ՛ զմերս եւ եթէ՛ զայլոցս:

Դարձեալ գիտելի է, զի յետ յարութեանն զկոյրսն լուսաւորեաց, ցուցանէ, թէ յետ առաքինութեան գործնականին, պարտ է տեսա-

կանաւն զարդարեալ զմեզ, եւ ապա հալածին չարք: Նա եւ յետ յարութեանն ծանեան զաստուածութիւնն Քրիստոսի առաքեալքն եւ զպաշտօն դիւացն հալածեցին: Այսպէս եւ յետ յարութեանն, պայծառացեալք հոգևով եւ մարմնով, դէմ յանդիման տեսանեմք զԱստուած, որպէս կոյրքն լուսաւորեցան եւ յանժամ խափանեացի ամենայն մոլորութիւնք չարին: Այսքան հոգեպէս տեսութիւնն կարգի սքանչելեաց:

Դարձեալ մինչդեռ անցանէր ընդ այն Քրիստոս, նախասացեալն է, զհետ եղեն կոյրք Բ., այսինքն՝ հրեայքն եւ հեթանոսքն: Կուրացեալք անահաւատութեամբ, անգիտութեամբ եւ մեղօք, զոր լուսաւորաց Քրիստոս հաւատով, ճշմարիտ գիտութեամբ եւ արդարութեամբ:

Հարց. Վասն է՞ր [հ]ապաղեաց բժշկութիւն կուրացն, որ աղաղակէին:

Պատասխանի. Վասն Զ. պատճառի: Նախ՝ զի մի ի ժողովրդեան մէջն լիցի, որով ուսուցանէ մեզ, ոչ առնել զգործս ի ցոյցս եւ ի փառս անձին: Երկրորդ՝ ի յանդիմանութիւն հրէիցն, զի կոյրքն ի լրոյ հաւատացին: Իսկ նոքա տեսանելով զսքանչելիսն, ոչ հաւատային: Երրորդ՝ զի ցուցցէ արժանի գոլ նոցա այսպիսի շնորհաց, զի յօժարութեամբ աղաղակէին: Չորրորդ՝ զի վասն աղաղակի նոցա եւ խնդրոյն լիցի բժշկութիւնն եւ մի կարծեսցեն, թէ ի պարծանս իւր առնէ զսքանչելիս: Հինգերորդ՝ զի յարգեսցեն եւ մեծարեսցեն գովելի անուամբն, վասն հրէիցն, զի որդի Դաւթի ասէին: Վեցերորդ՝ զի ի մեծ աստիճանն ելցեն գիտութեան, թողլով զԴաւթին, այսինքն՝ տէրութեան, զոր դաւանեցին ապա ընկալան զբժշկութիւն:

Հարց. Զի՞նչ զանագանի. «Ողորմեաց» եւ «ողորմեայ»:

Պատասխանի. Երկուքն խնդիրք են աղաչանօք: Այլ զանագանին երիւք: Նախ՝ Ողորմեացն բազմաւորակի է, զի ողորմեաց մեզ ասէ: Եւ Ողորմեա՛ առանձին: Երկրորդ՝ ողորմեացն՝ ներկայի եւ միւսն՝ ապագայի: Երրորդ՝ մինն դիմացն խնդիր է, եւ մինն՝ զայլ ինչ իրաց:

Որդի Դաւթի (Մաթթ. Թ. 27)

Նախ՝ (1)աղերս է գովութեամբ: Երկրորդ՝ յիշումն զգութն Դաւթի առ կոյրս եւ կաղս եբուսացոց, որ արար զողորմութիւնն:



**Ըստ հաւաքոց ձեր եղեն ձեզ** (Մաթթ. Թ. 29):

Նախ՝ զհաւատս նոցա հաստատէ: Երկրորդ՝ ժառանգորդ ցուցանէ զհաւատն սքանչելեաց, զի ի զօրութենէ եւ ի հաւատոցն լինի սքանչելիք: Երրորդ՝ վկայ ցուցանէ զարդիւնքն բանից նոցա, որ աղաղակէին:

Հարց. Վասն է՞ր երբեմն հրամայէ ծածկեալ եւ երբ յայտնեալ սքանչելիս:

Պատասխանի. Յորժամ գործն ի մեր փառս լինի, զայն հրամայէ ծածկել, այլ ի փառս Աստուծոյ, յայտնել եւ յորդորել պարտ է:



**12. ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ ՆԱՄԵՐ ԴԻՒԱՆԱՐԻՆ**

Մաթթէոս Թ. 32-34

**ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՎ ԵՓՐԵՄ**

Եւ իբրեւ եկին նորա անփի, մաքրուցին առ նայ այր մի խուլ եւ համր եւ դիւահար (տես Մաթթ. Թ. 32):

Ոչ թէ ի բնէ ինչ էր ախտն, այլ ի դիւին վնասակարութենէ, վասն որոյ եւ այլք իսկ մատուցանէին, զի չէր կարող անձամբ աղաչել, քանզի համ<ա>ր էր եւ ոչ զայլս աղաչել կարէր, զի դիւին կապեալ էր զլեզու նորա եւ զմիտսն ընդ լեզուին: Վասն այնորիկ եւ ոչ պահանջէր ի նմանէ հաւատս, այլ վաղվաղակի բժշկէր: Եւ ելանել դիւին, ասէ, խաւսեցաւ համրն:

Իսկ ժողովուրդն առ զարմանս ասէին՝ թէ ոչ երբէք երևեցաւ այսպիսի ինչ յԻսրայելի (հմմտ. Մաթթ. Թ. 32):

Որ կարի զայրացուցանէր զփարսացիսն, զի առաւել քան զամենիսեան զՆայ յարգէին ոչ քան զնոսայ եւեթ: Որ յայնժամն էին, այլ քան զառաջինսն, ոչ զի բժշկէրն համարէին զՆա մեծ, այլ զի վաղվաղակի դիւրաւ: Եւ այն զանհնարինսն, որում ակն ոչ ոք ունէր, թէ բժշկելոց իցէ, եւ ժողովուրդքն այնպէս զարմանային, բայց փարիսեցիքն, առ չարութեան, շնորհին հակառակն ասէին եւ ոչ ամաչէին:

Իշխանաւն դիւաց, ասէ, հանէ դայ զղեւս (տես Մաթթ. Թ. 34):

Քանզի որ զինչ կացէ անմտութիւն, մանաւանդ զորս յառաջ մատուցեալ ասէ, եթէ չէ հնար դիւի զղեւս հանել, զի ժողովեալ սովորէ զիւրս եւ ոչ աւցտել: Իսկ Նայ ոչ միայն զղեւս հանէր, այլեւ զբորոտս սրբէր, եւ զմեռեալս յարուցանէր, զոր ոչ երբէք ախորժեն դեւք եւ ոչ յաւժարին, իսկ զայն առնել: Զի դեւք յԱստուծոյ հանէն եւ առ կուռս մերձեցուցանեն եւ հանդերձեալ կենացն ջանան (առնել թերահաւատս: Դեւք թշնամանեալ բարի ինչ ումեք առնէ, իսկ սայ զհակառակն նորին առնէ յետ այնչափ, ասէ, թշնամացն:



**ՅՈՎՆԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ**

(Գլուխ Թ)

Եւ յելանելն նոցա արքարս՝ ահա մաքրուցին առ Նա այր մի համր դիւահար: Եւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն (Մաքթ. Թ. 32-33):

Յայնժամ Համբաւ սքանչելեացն տարածեցաւ, եւ յամենայն կողմանց ի բժշկութիւնն առ Նա փութային, իսկ Նա ո՛չ միայն զմարմին, այլեւ վարդապետական բանիւ զոգիսն ապաքինէր, որպէս կոյրքն, զի առողջացեալք մարմնով եւ զօրացեալք հոգևով ելին արտաքս, եւ ահա զայլ ոմն մատուցին՝ Համր եւ դիւահար: Ո՛չ եթէ ի բնէ էր ախտն այն, այլ ի դիւին վնասակարութենէ, որպէս զի մի՛ լուիցէ եւ կամ խօսեսցի եւ հաւատասցէ, քանզի կապեալ էր զլեզու նորա, վասն որոյ եւ այլք իսկ մատուցին, քանզի չէր կարող անձամբ աղաչել: Ուստի ո՛չ պահանջեաց հաւատս, այլ վաղվաղակի բժշկեաց, եւ նա սկսաւ խօսել եւ օրհնել զԱստուած եւ զՏուօղն պարգեւաց, որով յայտնի եղեւ, թէ Նա ինքն է արարիչ մարդկան, որ ստեղծեալ ի հոգոյ՝ եղ զնա յերկրի խօսուէն բանական:

Եւ զարմացան ժողովորդքն եւ ասեն թէ՝ «Եւ ո՛չ երբէք երեւեցաւ այսպիսի ինչ յԻսրայէլի» (Մաքթ. Թ. 33):

Պարզամիտքն վասն անյաղթ հրաշիցն ի զարմանս եկին եւ զարժանաւոր գովութիւնն Նմա մատուցին, եւ ի մարդկան հաւասարութենէ զՆա ի բաց տարեալ՝ Աստուած ուրեմն կարծեցին: Յայտ յայնմանէ է, զի ասացին, թէ «ո՛չ երբէք երեւեցաւ այսպիսի ինչ յԻսրայէլի», այսինքն՝ ոչ միայն քան զնոսա, որ յայնժամ էին, այլ իբր հմուտ գոլով պատմութեանցն՝ քան զառաջին հրաշսն մեծ համարէին՝ զՄովսիսին եւ զԵղիային, զի ո՛չ միայն բժշկէր, այլեւ զանհնարինսն, որում ակն ոչ ոք ունէր, եւ վաղվաղակի եւ դիւրաւ վասն այնորիկ հիանային:

Իսկ փարիսեցիքն ասէին թէ՝ «Իշխանան դիւաց հանձ Դա զդեւս» (Մաքթ. Թ. 34):

Թէպէտ կարի յոյժ անմտաբար ասացին, սակայն խարդաւանեալ նենգութեամբ զզարմանս ժողովրդեանն յայլ կողմն դարձուցին, առ որս ասելի է, թէ ո՛վ յիմարք, զիա՞րդ հնար է դիւի զղեւս հա-

նել, զի նա ժողովել սովոր է զիւրսն եւ ո՛չ օցտել: Նաեւ ա՛յլ ազգ-զի սա ոչ միայն զղեւս հանէ, այլեւ զբորոտս սրբէ, եւ զմեռեալս յարուցանէ, եւ զծով սանձէ, եւ զմեղս թողու, եւ զարքայութիւնն աւետարանէ, եւ առ Հայր մերձեցուցանէ, զոր ոչ երբէք ախորժեն դեւք առնել, այլ զնորին հակառակն: Զի յԱստուծոյ հանեն եւ ի կուռսն մերձեցուցանեն, եւ ի կենաց մերժեն եւ առ մահ ածեն, եւ բարի բնաւին ումք ոչ առնեն, այլ ի չարն յօժարեցուցանեն: Բայց զի նոքա նախանձու լցեալք եւ չարութեամբ բորբոքեալք՝ զհակառակն ասէին եւ ոչ ամաչէին:

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՅԻ**

(Նապոյր Գ. գլուխ Ը)

Հարց. Զի՞նչ է խուլ ու համր:

Պատասխանի. է ի բնական ախտից. յորժամ խուլ լինի ի բնէ, ի հարկէ եւ համր լինի, զի ո՛չ լսէ ինչ, եւ ո՛չ խօսի: Իսկ այս ո՛չ է բնական ախտ, այլ ի չարութեանն է դիւին: Եւ յայտ է, զի յորժամ ել դեւն, եւ խօսեցաւ համրն: Եւ գիտեալ է, զի սմանէ հաւատ ո՛չ խնդրեաց որպէս ի կուրիցն, այլ բժշկեաց: Եւ յայսմանէ ուսանիմք, յորժամ բնական խուլ եւ համր լինի, պարտ է տալ զմկրտութիւն եւ զսուրբ խորհուրդն, թէպէտ ո՛չ կարէ խոստովանել, զի ի միտս ունի զզղջումն:

Հարց. վասն էր զարմանային ժողովուրդքն, թէ երբէք յԻսրայէլ այսպիսի ոք ոչ եղեւ:

Պատասխանի. Զի չորիւք զանազանի նշանք մարգարէից եւ Տեառն: Նախ՝ զի Քրիստոս փոյթ առնէր զբժշկութիւնն, զի ընդ ասելն եւ գործն կատարեր, եւ մարգարէքն՝ յապաղելով: Երկրորդ՝ զի մարգարէքն դեղօք առնէին, որպէս Եսայի՝ պաղատիտ թզոյ: Երրորդ՝ զի Քրիստոս ի վեր քան զբնութիւն առնէր գործ մեծամեծ: Չորրորդ՝ զի անուամբն Աստուծոյ եւ աղօթիւք որպէս Մովսէս, իսկ Քրիստոս բանիւ միայն եւ կամօք:

**ՎԱՍՆ ՓԱՐԻՍԵՅ[Ի]ՈՅՆ**

Իսկ բեր, տեսցուք զփարիսեցւոցն բաջադմուք: Գիտելի է, զի երկոտ<ն>ասան են գլխաւորազոյն սքանչելիքն Քրիստոսի, որ կատարեալ էր: Նախ՝ զարտաքինս մարմնոյն բժիշկ էր, որպէս



բորն, պիսակն եւ այլն: Երկրորդ՝ զներսին ախտ հիւանդութեանն, որ յաւելմանց եւ ի պակասութեանն է տարերց: Երրորդ՝ զմասունք մարմնոյն, որպէս անդամալոյծն, կազն կոյրն: Չորրորդ՝ զմեռեալս յարուցանէր: Հինգերորդ՝ զգեւս հանէր: Վեցերորդ՝ զհոգիսն եւս բժշկէր՝ թողութիւն տալով: Եւթներորդ՝ զխոստովանութիւն ուսուցանէր: Ութերորդ՝ յառաքինութիւն եւ ի սրբութիւն հրաւիրէր: Իններորդ՝ զերկնից արքայութիւնն քարոզէր: Տասներորդ՝ զի առ Աստուած մերձեցուցանէր, ի չարեաց հրաժարել: Տասներորդ՝ զի զխոնարհութիւն լուսացուցանէր, թողուլ զհպարտութիւն: Երկոտասաներորդ՝ զի չարեաց փոխարէն, բարիս առնել հրամայէր եւ ատելոյն՝ զսէրն:

Արդ՝ այսոքիկ ամենեքեան հակառակ են գործոց սատանայի եւ ոչ զայս առնեն նոքա, այլ զդիմակն, այսինքն՝ զի ցաւք հիւանդութեան տան եւ մեռուցանեն եւ լլկեն եւ զմեղս ուսուցանեն եւ յԱստուծոյ եւ յարքայութենէն հեռացուցանեն եւ առ կուռսն կապեն եւ ի սէր աշխարհի, զհպարտութիւն, զատելութիւն, ուսուցանեն եւ զամենայն չարս: Ապա եւ սնտոի բարբաջերն եւ առ նախանձու, զի Քրիստոս մատամբն Աստուծոյ հանէր եւ զամենայն բժշկութիւնս կատարէր:

Տե՛ս, զի խոնարհութիւնն Քրիստոսի, թէպէտ թշնամանէին զիւհար կոչելով, այլ նա ոչ պատժէր եւ ոչ բանիւ սաստէր, այլ քարոզէր եւ բարի առնէր յամենայն քաղաքս եւ ի գեւղս: Ուսուցանէ՛ թէպէտ չարախօս են, չէ պարտ բարկանալ այլ բարի առնել ըստ այնմ, «Բարի արարէ՛ք արելեաց ձերոց» (Մաթթ. Ե. 44):



### 13. ԲԺՇԿՈՒԹԻՒՆՔ ԶԱՆԱԶԱՆՔ

Մաթթեոս Թ. 35-38

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

(Գլուխ Զ)

Արդ՝ աղաչեցէք զՏէր հնձոց՝ զի հանցէ մշակս ի հունձս իւր (Մաթթ. Թ. 38):

Յորդորէ զառաքեալսն աղաւթել առ հայր, զի բազմացին հնձաւղբն, այսինքն՝ վարդապետք, որ ուղղապէս հատանեն եւ հնձեն զբանն ճշմարտութեան: Եւ զայս ասացեալ կոչէ զերկոյտասան աշակերտսն եւ անուանէ նոցա անուանս որպէս գրեալ ի աւետարանչիդ: Եւ անուանք երկոյտասանիցն ըստ Մատթէոսի են այսպէս «Սիմովն՝ Պետրոս, եւ Անդրէաս, Յակովբոս եւ Յովհաննէս, Փիլիպպոս եւ Բարթողոմէոս, Թովմաս եւ Մատթէոս մաքսաւոր. Յակովբոս Աղփեան եւ Ղեբէոս՝ որ եւ Թադէոս, Սիմովն կաննանացի եւ Յուդա սկարիովտացի» (տես Մաթթ. Ժ. 2-4): Նախանձահոյզ, Յուդայ Յակովբեան ասաց Ղուկաս. եւ է խնդրելի վասն է՞ր արդեւք յաղազս երոկուց անուանց առքելոցն զանազանեցան [ի] միմեանց բանք երկուց աւետարանչացն. մի՞ գուցէ երկանունք էին. եր զի էր Յուդա Յակովբեան մի յառաքելոցն, Յովհաննէս աւետարանիչ ուսուցանէ այսպէս ասելով. «Ասէ զնա Յուդա ոչ սկարիովտացին. Տէր, զի՞ եղու, զի մեզ յայտնելոց եւ զքեզ եւ ոչ աշխարհի» (Յովհ. ԺԴ. 22):

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՎ ԵՓՐԵՄ

Շրջէր, ասէ, ընդ քաղաքս եւ ընդ գեղս ուսուցանէր զնոսա (տես Մաթթ. Թ. 35):

Եւ ոչ միայն չպատժէր զանհաւատս, այլեւ ոչ դոյզն ինչ սաստիւ սաստէր, զի զմեզ ուսուցանիցէ, չարախաւսացն ոչ չարութեամբք, այլ մեծաւ երախտեաւք պատահել, որչափ բամբասիցեն, սակայն դու, ի բարի առնելոց, մի՛ կասիր: Վասն այնորիկ խրատէ զմեզ Քրիստոս, եթէ առ բարեբարութեանն եկն յայն եւ երթալովն



երկու բարութիւնս խոստացեալ պարգեւէր. մի՝ զարքայութեանն աւետիսն խոստանայր եւ միւս եւս զպէսպէս ցաւսն բժշկէր: Ոչ զգեւղս թողոյր եւ ոչ զքաղաքաւ զանց առնէր, այլ յամենայն տեղիս երթայր:

Երես, ասէ, զնոսա իրրեւ զոչխարս վարարեալս եւ ցրուեալս անվերու(ն)չս զոլով (հմմտ. Մարթ. Թ. 36): Եւ այս զիշխանաց հրէից ամբաստանութիւն, զի հովիւք էին եւ զգայլոց գործ գործէն, ոչ միայն ուղղութիւն ինչ ցուցանէին այլեւ այլոց յառաջադիմութիւնն եւս ապականէին, մինչդեռ ժողովուրդքն զարմանային եւ ասէին թէ ոչ երեւեցաւ այսպիսի ինչ յիսրայէլի: Նոքա ընդնդէմ դարձեալ բամբասէին, թէ իշխանաւն դիւաց հանէ դայ զդեւս:

Նունճք բազում են եւ մշակք սակաւ (Մարթ. Թ. 37): Ոչ ի սերմանելն ինչ առաքեմ զձեզ, ասէ, այլ ի հնձել, զոր եւ Յովհաննէս ասէ, այլք մշակեցին եւ դուք ի վաստակս նոցա մտէք (հմմտ. Յովհ. Դ. 38): Զայս ասելով եւ զմտացն հպարտութիւնն ցածուցանէր եւ խրախոյս իմն աւելի տայ եւ ցուցանէ, թէ մեծ ջանն անցեալ է, իսկ մշակս աստ զերկոտասանսն կոչէ: Միթէ յաւել զոք ի նոսա ոչ այլ զնոսա միայն առաքեաց վասն որոյ ասէ. «Աղաչէք զտէր հնձոց, զի հանցէ մշակս ի հունձս իւր»: Եւ յաւելած ինչ ի նոսա ոչ արար, զի զերկոտասանսն իսկ բազումս արար, ոչ թուոյ ինչ յաւելուածով, այլ զաւրութիւնս շնորհելով: «Աղաչեցէ՛ք, ասէ, զՏէր հնձոց: Եւ մինչեւ նոցա յաղաւթս կացեալ էր եւ ոչ խնդրել ինքն իսկ տայր նոցա զձեռնադրութիւնն եւ յուշ առնէն նոցա զՅովհաննու կալոյն եւ զհոսողին եւ զյարդին եւ զցորենոյն ընդրութիւնն, ուստի յայտ իսկ է, թէ ինքն մշակն եւ ինքն է տէր հնձոցն եւ մարգարէիցն ինքն հրաման տայր, զի ի հնձել առաքեաց, յայտ առնէ, թէ ոչ զաւտարի ինչ այլ զոր ինքն մարգարէիւքն սերմանեաց: Թէպէտ եւ չեւ եւս էր զհոգին տուեալ, չեւ ես հոգի:

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՅԻ**

(Գլուխ Թ)

Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն քաղաքս եւ ընդ գեօղս, ուսուցանէր ի ժողովուրդս նոցա եւ քարոզէր զաւետարանն արքայու-

թեան, եւ բժշկէր զամենայն ախարս եւ զամենայն հիւանդութիւնս ի ժողովրդեանն (Մարթ. Թ. 35):

Տե՛ս աստ զհեղութիւն Տեառն մերոյ, զի ոչ միայն չպատեաց զանհաւատսն, այլեւ ոչ դոյզն բանիւ սաստեաց՝ առ ի խրատ եւ ի յուսումն մեզ, թէ պարտ է զչարախօսն ո՛չ գանիւք տանջել, այլ երախտեօք պատուել եւ ի բարի առնելոյ ո՛չ դադարել, վասն որոյ ասէ. «Շրջէր ընդ քաղաքս»: Քանզի վասն ամենեցուն փրկութեան եկեալ էր յաշխարհ, յամենայն տեղիս երթայր, ո՛չ ի քաղաքաց վասն բազմապատիկ մեղաց նոցա խորշէր եւ կամ ի փափուկ կենացն պատրեալ լինէր, եւ ո՛չ ի փոքրկութեանէ գիւղից վասն մեծամտութեան զինքն ի բաց որոշէր, այլ «ընդ ամենայնի ամենայն լինէր, զի գրազումս շահէր» (հմմտ. Ա. Կոր. Թ. 19, 22): Եւ այն հետիոտս, որպէս ասէ, շրջէր, ո՛չ վասն պատուոյ կամ ազահութեան, որպէս այժմու քաղաքս, այլ ուսուցանելոյ աղազաւ, զի ի ժողովրդանոցսն մտեալ՝ մեկնէր զՕրէնսն եւ յեղափոխելով ի նորս շրջէր, յորոյ վերայ յաւելոյր զարքայութիւնն երկնից աւետարանել եւ ի մարմնական փառաց եւ ի ժառանգութեանց երկրաւոր իրաց ուսուցանէր ի բաց հրաժարել: Եւ այսմ կնիք հաստատութեան՝ զսքանչելիսն յաճախէր եւ զբժշկութիւնսն առատացուցանէր, զոր աւետարանիչս ոչ բաւականացաւ առ ի պատմել զքարոզութիւն բանիցն եւ կամ զզանազանութիւն բժշկութեան ախտիցն, այլ միայն թէ՛ «ուսուցանէր զաւետարանն արքայութեան», որով զհոգիս նոցա բուժէր եւ նշանօքն զմարմինս առողջացուցանէր եւ այսպէս տէ՛ր զինքն հոգւոց եւ մարմնոց գոլ քարոզէր:

Եւ փեսեալ զժողովուրդսն՝ գթացաւ ի նոսա, զի էին աշխարեալք եւ ցրուեալք իրրեւ զոչխարս, որոց ոչ իցէ հովիւ (Մարթ. Թ. 36):

Աստ յատուկ զիշխանսն հրէից ամբաստանէ՝ զդպիրսն եւ զփարիսեցիսն, զի հովիւք էին եւ զգայլոց գործս գործէին, զի ոչ միայն ուղղութիւն չցուցանէին, այլեւ զայլոց եւս յառաջադիմութիւն խանգարէին: Քանզի յորժամ նոքա վասն նշանին զարմանային, սոքա ընդդէմ դարձեալ՝ «Իշխանան դիւաց հանէ Դա գղես» բամբասէին (Մարթ. Թ. 34) եւ զկորուստ ժողովրդեանն ոչ ցաւէին, զորոց եւ Ամովս պախարակէ՛: Վասն որոյ Հովիւն քաջ տեսեալ զհօտս

<sup>1</sup> Այստեղ հեղինակը հավանաբար շփոթմամբ է տալիս Ամովսի անունը, որի գրքում



Իւր ոչ այժմ, այլ նախքան զյաւիտեանս աստուածեղէն զօրութեամբն՝ գթացաւ արարչական կամօք եւ վասն նոցա իսկ մարմին զգեցաւ, որպէս ասէ. «Ոչ ուրեք առաքեցայ, եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս քանն Իսրայելի» (Մաթթ. ԺԵ. 24): «Զի էին, — ասէ, — աշխատեալք եւ ցրուեալք»: Երկակի է իմաստ բանիս. կամ յանուղղայ գնացից հովուացն վշտացեալ մտօք որպէս Ղովտ՝ զիւր սուրբ հոգին նոցա անօրէն գնացիւքն տանջէր, եւ այսպէս ի բաց կացեալք ի նոցանէ՝ անտերունջ շրջէին եւ կամ «աշխատեալ» մեղօք իբր բեռամբ իմն ծանու դատեալ լինէին ի մտացն խղճէ եւ «ցրուեալք» յաստուածապաշտութեանն լրմանց, զի թէ արդարութիւն ժողովիչ է առ Աստուած եւ միացուցիչ, ապա ուրեմն մեղքն՝ ցրուիչ եւ որոշիչ՝ ըստ այնմ. «Մե՛ղք ձեր որոշեն ի մէջ իմ եւ ի մէջ ձեր» (Ես. ԾԹ. 2), վասն որոյ ասէ՝ ցրուեալք յայրս եւ ի ծերպս վիմաց՝ տառապէին եւ բաժինք գայլոց եւ աղուեսուց լինէին (հմմտ. Սաղմ. ԿԲ. 11): «Իբրեւ զոչխարս, որոց ոչ իցէ հովիւ». ցուցանէ, թէ բնութեամբ անմեղք էին, այլ յառաջնորդաց ոչ վարժեալք գայն կրէին, յորս գթացեալ՝ առաջնորդս կարգէ:

**Յայնժամ ասէ ցաշակերպոսն Իւր. «Նունձք բազում են, եւ մշակք՝ սակաւ: Արդ աղաչեցէ՛ք զՏէր հնձոց, զի հանցէ մշակս ի հունձս Իւր»** (Մաթթ. Թ. 37-38):

Որպէս անդ ի ստեղծմանն նախ զթագաւորութեանն ճոխութիւն պատրաստեաց եւ ապա զմարդն թագաւոր ի ներքս կացոյց, այսպէս եւ աստ յերկրորդ արարչութեանս զնոյն տնօրինէ, որպէս զի ցուցցէ, թէ Նա, որ զաշխարհս արար, նոյն Ինքն է, որ այժմ կրկին նորոգէ, քանզի նախ զգօնացոյց զմարդիկ վարդապետութեամբ Իւրով եւ սքանչելեօք եւ այժմ զթագաւորեալսն ի Սաղիմ հովիւս եւ վերակացուս նոցին կարգէ: «Հունձք բազում են, — ասէ, — եւ մշակք՝ սակաւ»: Զարքայութեան որդիս ասէ «հունձս», որպէս եւ այլուր ասաց. «Ամբարձէք գաշս ձեր եւ քեսէք զարքորայս, զի սպիտակացեալ են եւ ի հունձս հասեալ» (Յովհ. Դ. 35), որք բազմապատկեցեալ որայք հաւատովք եւ գործովք՝ յշտեմարանս վերին հաւաքին, իսկ «մշակք»՝

հոգևոր հովիվներին ուղղված պախարակումներ չկան Ամովսի փոխարեն պիտի հիշատակվեր թերևս Եգեկիել մարգարեն (Եգեկ. ԼԴ. 1-6) կամ Երեմիան (Երեմ. ԻԳ. 1-4): Ծնթ.՝ Յովհաննես Ծործորեցու հատորը կազմողի:

զերկոտասան առաքեալսն, որպէս յայլու՛մ տեղու՞ջ «փոքրիկ» անուանէր «հօտ» (հմմտ. Ղուկ. ԺԲ. 32):

Բայց զի՞նչ է այս. ոչխարին հովի՛ւ է պիտոյ եւ ո՛չ հնձօղ: Ա՛յսպէս իմա. զի հովիւն եւ առաջնորդն օրինակ իմն մշակ է ժողովրդեանն եւ տածող եւ դարմանող, յորժամ յԱստուծոյ կարգեալ իցէ, եւ մշակ ո՛չ այլ աղբ, այլ հնձօղ. քանզի պիտոյանայ երբեմն եւ ա՛յսմ, յորժամ զչարութեան գործս հատանէ բանին մանգաղաւ եւ երկեցուցանող սպառնալեօք: Եւ դարձեալ՝ զի ծանր իմն է գործ վերակացութեան, զի մի՛ մեծամտեալ հպարտացին բոլորովին զինքեանս կարծել պատճառ փրկութեան, վասն այսորիկ գայս դնէ, զի զաշակերտսն յօժարեցուցանէ թէ՛ ո՛չ ի սերմանել առաքեմ զձեզ, այլ ի հնձել՝ ըստ այնմ թէ՛ «Այլք վաստակեցին, եւ դուք ի վաստակս նոցա մտէք» (Յովհ. Դ. 38), այսինքն թէ՛ մեծ ջանն եւ դժուարութիւնն անցեալ իսկ է, յորս արտասուէին սերմանողքն, եւ այժմ հեշտալին կայ առաջի՛ ցնծութեամբ ժողովեալն, ո՛չ զօտարին, այլ զիմ ինքեան սերմանեալն:

«Արդ աղաչեցէ՛ք զՏէր հնձոցն». կամ՝ աղաչեցին, եւ ոչ գրեցաւ: Բայց ընդէ՞ր ասէ աղաչել զոր Ինքն տալոց էր. զի ցուցցէ, եթէ առանց մաղթանաց ո՛չ ոք պարգեւս առնու յԱստուծոյ, զի մի՛ կորուսցէ, քանզի դիւրաւ գտանելին դիւրաւ արհամարհելի է, իսկ աշխատութեամբ ստացեալն եւ պահի՛ եւս, միանգամայն եւ վարձուք պատուի, զի վասն մեր է աղաչելն եւ ո՛չ վասն Նորա, որպէս եւ զսիրելն ասաց: Եւ կամ՝ զի սկիզբն էր իրացն, նախ քան զմաղթելն նոցա ետ, որպէս զի յուշ ածիցէ զՅովհաննու վարդապետութիւնն՝ զհեծանոցին եւ զկալին եւ զցորենին եւ զյարդին (հմմտ. Մաթթ. Գ. 12), թէ Ինքն է մշակ եւ տէր հնձոցն: «Զի հանցէ մշակս ի հունձս Իւր», այսինքն՝ չափ հնձոցն մշակս բազմացուցէ՛ կա՛մ թուով, կա՛մ զօրութեամբ եւ շնորհօք, եւ զի Ինքն է տուող, տացէ զձեռնադրութիւն ըստ յաջորդիդ:

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՅԻ**  
(Երրորդ հապոր. գլուխ Թ)

**Գթացաւ զի էին աշխարեալք եւ ցրուեալք որպէս զոչխարս** (Մաթթ. Թ. 36):

(Մաթթ. Թ. 36):



Եւ զի մի՛ ունիցին պատճառ յանդգնութեան եւ դարձեալ ի մեղադրութիւն աւրինազանցութեանն զրգռիցին: Յաճուցանէ զնոսա աւրինակաւս այսուիկ: Եւ դու միտ դիր, զիա՞րդ ստէպ եւ յաճախագոյնս ամենայն ուստէք կուտէ պատասխանիս վասն շաբաթուն լուծելոյ: Երբեմն իբրեւ զմարդ եւ երբեմն իբրեւ զԱստուած տայ պատասխանի: Իբրեւ մարդ յորժամ ասիցէ, թէ թլփատութիւն առնու մարդ ի շաբաթու, զի մի աւրէնքն լուծին եւ ոչ ասաց թէ աւգտեսցի մարդ: «Ինձ, ասէ, ցասուցեալ էք, զի ողջոյն իսկ մարդ բժշկեցի ի շաբաթու»: Իսկ իբրեւ զԱստուած՝ յորժամ ասիցէ «Նայր իմ, մինչէ ցայժմ գործէ եւ ես գործեմ» Յովի. Ե. 17), եւ քանզի զիտէր զընչասիրութիւն նոցա, զի առաւել այնպիսիք էին եւ ոչ մարդասէրք: Նայեւ միտս աւետարանիչն ասէ, թէ հայեցաւ շուրջ յորժամ զայս բանս հարցանէր, զի եւ այնու ձգեսցէ զնոսա առ ինքն, սակայն եւ ոչ այնպէս եղեն ազնուագոյնք: Եւ քանզի զանբժշկական ախտնն ջերանա[յ]ին, այնուհետեւ ի գործն իսկ մխեցաւ:

Յայնժամ ասէ ցայրն. «ձգեաց զձեռն քո եւ ձգեաց եւ (1բ) եղև ողջ իբրև զմիւսն» (Կրն. Մարթ. ԺԲ. 11): Եւ նոքա զինչ ելեալ, ասէ, խորհուրդ առնէին զի սպանեցեն զնայ (հմմտ. Մարթ. ԺԲ. 14): Ո՛չ ինչ զնայ ասեալ ի նմանէ եւ սպանանել մտաբերէին: Այնչափ ինչ անհարին չարիք են քէնն եւ նախանձն, զի ոչ ընդ յաւտարս միայն, այլեւ ընդ ընտանիս միշտ մարտնչի: Եւ զի՞նչ արդեւք հեզն եւ խոնարհն տեղի ետ: Իբրեւ իմացաւ, ասէ, Յիսուս խոյս ետ (հմմտ. Մարթ. ԺԲ. 15): Եւ արդ, ուր իցեն, որ ասեն, թէ նշանաց պարտ է լինել: Զի այսու իսկ յայտ արար, թէ անհնազանդ միտք եւ ո՛չ այնու ինչ աւգտին եւ եցոյց, թէ աշակերտացն զուր մեղադիր լինէին: Եւ դու մի՛տ դիր, զիարդ ոչ ի հիւանդացն դարմանոց լուէ եւ զնոցա նախանձն մխիթարէր: Սաստեաց, ասէ, ի բժշկեալսն, զի մի յայտնի առնիցեն զնայ: Եւ ժողովուրդքն ամենայն ուրէք զարմանային եւ զհետ երթային նորա, եւ նոքա ոչ երբէք դադարէին ի չարեաց:

**ՅՈՎՆԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՅԻ**  
(Գլուխ ԺԲ)

Եւ գնացեալ անպի Յիսուս՝ եկն ի ժողովուրդսն նոցա: Եւ անդ էր այր մի, որոյ ձեռն իւր գօսացեալ էր (Մարթ. ԺԲ. 9- 10):

Յայտ է՝ ի յանդատանացն ի ժողովրդանոցն չողաւ ի Կափառնաու մ քաղաքի՝ կամ նոյն օրին, կամ յայլու մ շաբաթու ըստ Ղուկայ (հմմտ. Ղուկ. Զ. 6), որպէս զի հրաշիւք բժշկութեան վշտացելոյն զասացեալ վարդապետութիւնսն հաստատեսցէ, եւ զիրաւունս աշակերտացն ի գլուխ հանցէ, ուստի եւ զայրն տնօրինեաց անդ: Բայց այլ աւետարանիչքն ասեն թէ՛ «կացոյց զայրն ի մէջ» (հմմտ. Մարկ. Գ. 3, Ղուկ. Զ. 8), որպէս զի տեսեամբ երեսացն ակն ածիցեն եւ ի չարեաց իւրեանց ցածնուցուն: Այլ քանզի մարդատեսք էին, միանգամայն եւ աստուածատեսք, լաւ համարէին փառացն Քրիստոսի պակասել, քան զայրն բժշկեալ տեսանել, ընդ Քրիստոսի հակառակել եւ ընդ այլոց բարիս դժկամակ լինել:

Նարցին ցՆա եւ ասեն, եթէ պա՞րպ իցէ ի շաբաթու բժշկել, զի չարախօսեսցեն զՆմանէ (Մարթ. ԺԲ. 10):

Հարցին ո՛չ թէ ուսցին, այլ զի մեղմեխանօք հարցուածոյն ի բժշկութենէն արգելցեն, եւ կամ՝ թէ բժշկէ, չարախօսեսցեն լուծիչ գոլ օրինացն, ոչ միայն աշակերտքն, այլեւ ինքն իսկ գլխովին: Իսկ Մարդասէրն եւ Ներօղն զգործն կատարէր եւ հարցուածոյն պատասխանի առնէր, զի ցուցցէ զիւր հեզութիւնն եւ զնոցա անմարդութիւնն:

Եւ Նա ասէ ցնոսա. «Ո՞վ իցէ ի ձեռք մարդ, որոյ իցէ ոչխար մի եւ անկանիցի այն ի խորխորապ ի շաբաթու, միթէ ո՞չ ունիցի եւ յարուցանիցէ զնա (Մարթ. ԺԲ. 11):

Նախ զյանդգնութիւն նոցա օրինակաւս յանդիմանէ թէ՛ զոր դուք առնիցէք, ընդէ՞ր զայլս բամբասիցէք, որպէս զի մի՛ ի մեղադրութիւն օրինազանցութեանն զրգռիցեն: Եւ երկրորդ՝ զազահութիւն բարուց նոցա խայտառակէ, զի ընչասէ՛րք առաւել էին քան մարդասէրք, զի վասն միոյ ոչխարի անկելոյ հոգս տանէին ի շաբաթու եւ ողջոյն իսկ մարդ բժշկել ո՛չ կամէին: Եւ երրորդ՝ զինքն հովիւ գոլ ցուցանէ բարի, եւ [ի] բազմացն, որ անդ կային ընկղմեալք ի խորխորատ մեղաց, զմինն միայն պատահել առողջութեան եւ հանգստեան, իսկ զայլսն՝ կորստեան եւ դատապարտութեան:



Իսկ արդ՝ ո՞րչափ եւս առաւել է մարդ քան զոչխար. ապա ուրեմն պարտ է ի շարաթու բարիս գործել» (Մաթթ. ԺԲ. 12):

Ջանազանութիւն բանականի եւ անբանի ուսուցանէ, որպէս զի զներգործութիւն բարեաց առ բանականսն գեր ի վերոյ անբանիցն կացուցանէ եւ ի ձեռն պատկերին եղեալ մարդասիրութիւնն առ Սկզբնատիպն վերացուցանէ, վասն որոյ ի վերայ բերէ թէ՛ «պարտ է ի շարաթու բարիս գործել», եւ մանաւանդ առ բանականս: Բայց դու միտ դիր, թէ զիս՝ որ յաճախ կուտէ պատասխանիս վասն շարաթուն լուծանելոյ, երբեմն իբրեւ զմարդ թէ՛ «Թւիպարութիւն առնու մարդ ի շարաթու» (Յովհ. Է. 23), եւ երբեմն իբրեւ զԱստուած թէ՛ «Նայր Իմ գործէ փալով արեւ եւ անձրեւ, եւ Ես գործեմ» (հմմտ. Յովհ. Ե. 17, Մաթթ. Ե. 45), որպէս զի յօժարեցուցանէ ի չարեաց դադար առնուլ եւ ո՛չ ի բարեաց, վասն զի «չարաթ» հանգիստ լսի, իսկ բարին է հանգուցիչ մտաց եւ խորհրդոց, հոգւոց եւ մարմնոց, զորս պարտ է գործել:

Յայնժամ ասէ ցայրն. «Ձգեա՛ զձեռն քո», եւ սա ձգեաց, եւ եղև ողջ իբրև զմիւսն (Մաթթ. ԺԲ. 13):

Մարկոս ասէ թէ՛ «Նայեցաւ զնորք լի ցասմամբ» (Մարկ. Գ. 5), որպէս զի այնու ձգեսցէ զնոսա առ Ինքն, եւ ո՛չ եղեն այնպէս ազնուականք, որոց զայրացեալ վասն կուրութեան սրտից նոցա՝ մխեցաւ ի գործն եւ ասէ. «Ձգեա՛ զձեռն քո», եւ նա «ձգեաց, եւ եղև ողջ իբրև զմիւսն»: Ձգմամբ ձեռին վշտացելոյն՝ հաղորդս էառ սքանչելեացն, որով արագ ի բանէն ընկալաւ զառողջութիւնն ի ձեռն հաւատոյն. բայց նոքա ո՛չ զգաստացան, այլ սպանանել խորհէին, որպէս ասէ:

Իսկ առ ի միտս՝ «ձեռն» իմանամք զմարդկային բանականացս դասս՝ ձեռք Աստուծոյ ստեղծեալ ըստ Յորայ (հմմտ. Յոր Ժ. 8), եւ դօսացեալ պատրանօք չարին՝ մարմնոյ մեռելութեամբ եւ հոգւոյ մեղաց մահուամբ, յորս եկեալ Փրկիչն աշխարհաց բժշկել, ընդ որ զչարեալ Բանսարկուն դիւօք իւրովք զչարաթս պատճառելով՝ զմեղս եւ զանօրէնութիւն հանգիստ ինքեան եւ մարդկան գրելով: Որում սաստեաց եւ ուսոյց մարդկան ձգել զձեռն առ Աստուած՝ ըստ այնմ. «Ձգեմ զձեռն իմ յԱստուած բարձրեալ» (Ծննդ. ԺԴ. 22), յԱբրահամէ սկսեալ աստուածապաշտութիւն եւ մինչ ի լրումն տնօրէնութեան Որդւոյն Աստուծոյ կատարեալ, որով ողջացեալ եղև իբրև զմիւսն: Կամ իբր զհրեշտակս զԱրարիչն ճանաչելով եւ զօրհնու-

թիւնս աղօթից տարածմամբ ձեռաց Նմա ընծայելով, վասն որոյ եւ ոչխար անուանեցաւ անկեալ, որ ելեալ խառնեցաւ յանմոլարիցն հօտս: Եւ կամ անմահացեալ մարմնով՝ յուսով յարութեանն, որպէս զհոգի, զոր ձեռն «միւս» ասէ, քանզի երկրքին արարողք են եւ կրողք բարեաց՝ հոգի եւ մարմին, մանաւանդ յորժամ Բրիստոսիւ առողջացան:

Իսկ փարիսեցիքն ելեալ արարաքս՝ խորհուրդ արարին զՆմանէ, թէ ո՞րպէս կորուցեն զՆա (Մաթթ. ԺԲ. 14):

Ոչինչ վնասեալք ի Նմանէ՝ մահ Նմին մտաբերէին, քանզի այնպիսի իմն չար է քէնն եւ նախանձն, զի ոչ միայն ընդ օտարսն, այլեւ ընդ ընտանիս մարտնչի: Իսկ զի ասէ, թէ արտաքս ելին՝ յաղագս պարզամտացն, զի որք հաւանեալք էին նշանաց եւ վարդապետութեան Նորա, ոչ միայն չառնուին յանձն զխորհրդակցութիւն նոցին, այլեւ հակառակէին եւս: Եւ դարձեալ՝ ելանելովն արտաքս զառանց Օրինաց գործն նոցա յայտ առնէ, քանզի գրեալ էր. «Յարին անպարտ զձեռն քո մի՛ մխեցես» (հմմտ. Բ. Օր. ԺԹ. 10), որով եւ արտաքսեցան ինքեանք յՕրինացն եւ ի շնորհացն Աստուծոյ:

Եւ Յիսուս իբրև զիպաց, մեկնեցաւ անտի (Մաթթ. ԺԲ. 15):

Նախ՝ զամենատես զօրութիւնն Տեառն յայտ առնէ, եւ ապա՝ զհեղութիւնն եւ զխոնարհութիւնն, զի խոյս տալովն հոգի ետ կլանել նոցա եւ զնախանձն շիջուցանել. եւ երրորդ՝ զի ոչ էր տակաւին ժամանակ մեռանելոյ, որպէս զի յորժամ մեռանիցի, կամաւոր զմահն Նորա ուսանիցիմք եւ ո՛չ բռնադատեալ ի հարկէ: Բայց ամաչեսցեն յայսմ վայրի այնոքիկ, որք ասեն, թէ պարտ է նշանս առնել, զի հաւատացեն, քանզի յայտ եղև, թէ զանհաւան միտս եւ ոչ նշանք կակղացուցանել կարեն, որպէս եւ ոչ զփարաւոնին՝ Մոսէս (Ելից Է. ԺԴ.), ապա ուրեմն զո՛ւր մեղադիր աշակերտացն լինէին:

Եւ գնացին զհեպ Նորա ժողովորդք բազումք, եւ բժշկեաց զամենեսեան (Մաթթ. ԺԲ. 16):

Թէպէտ նոքա զչարէին, բայց Նա ի ժողովորդեանն դարմանոյ ո՛չ երբէք դադարէր, այլ միշտ խնամով բժշկէր, զի լաւ համարէր զբազմաց օգուտ, քան զնոցա ռիսերիմսն: Բայց դու զբժշկութիւնն



կրկի՛ն իմա՛ բանիւ եւ գործով, թէ՛պէտ աւետարանիչն զանց արարեալ ո՛չ պատմեաց:

Եւ սաստեաց նոցա Յիսուս, զի մի՛ յայտնեսցեն զՆմանէ ումեր (Մարթ. ԺԲ. 16):

Ոչ միայն առանց շահուց զբարիս նոցա առթէր, այլեւ զանձին գովութիւնն ի բաց մերժէր, քանզի են բազումք, թէ՛պէտ ոչ վասն ազահուլթեան, այլ գոնեայ զի փառաւորեսցին ի մարդկանէ՝ առնեն զբարիս. իսկ Նա յերկոցունցն հրաժարէր, միանգամայն եւ զնախանձ փարիսեցւոցն այնու մխիթարէր, զի զանձն ի ծածուկ պահէր. առ ի խրատ վարդապետութեան մեզ, զի զառաքինութեան ոստս մի՛ կոծոպեսցուք սնափառ ախտիւ մարդկան գովութեամբ եւ համբաւուն տարածմամբ:

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՅԻ**

(Չորրորդ հարոր. գլուխ Գ.)

Տե՛ս՝ զի՞ առաւել ի շաբաթու բժշկէ:

Նախ՝ զի շաբաթ ի օրն ժողովէին: Երկրորդ՝ զի շաբաթն լուծցէ, ցուցանէ, թէ պարտ է վարդապետաց ի կիւրակին քարոզել, թէ հանապազօր ոչ լիցի, մեխմեխանքն, որ երկդիմի էր հարցումն, կամ խափանեսցեն զբժշկութիւնն, կամ թէ ոչ չարախօսեսցեն:

Ոչխար մի անկեալ ի խորխորապ շաբաթու հանել (Մարթ. ԺԲ. 11): Յուցանէ, թէ ի մեղաց խորխորատ էր անկեալ այրն: Պարտ էր առողջութիւն տալ: Այլ «ոչխար մի» մարդկային բնութիւնս ի խորս դժոխոց անկեալ ի շաբաթու էջ ի նոսա: Եւ եհան եւ Ղուկաս՝ եզն եւ էչ ասէ արձակիցէ եւ տայ ջուր: Այսինքն՝ հրեայք, որ զլուծ օրինաց ունէին եւ հեթանոսք անսուրբք կապեալ յօրէնս եւ ի կուռս, արձակեաց եւ ետ զջուրն կենդանի:

Ղուկաս Զ. 6-12

**ԻԳՆԱՏԻՈՍ ՍԵԲԷՍՏՆՅԻ**

(Գլուխ Զ)

Դարձեալ ի շաբաթու մտանէ ի ժողովս նոցա (հմմտ. Ղուկ. Զ. 6):

Եւ նոքա, անագորոյն մտաւք, զկարկամեալն ձեռամբ տեսեալ՝ սպասեն, թէ բժշկեսցէ, զի չարախաւսութեան պատճառս առցեն զայն: Իսկ Նա, որ գծածուկսն տեսանէ, նախ հարցանէ զպատճառսն շաբաթուն, թէ վասն է՞ր եղաւ դատարկանալ, վասն բարեա՞ց, եթէ վասն չարեաց: Եւ իբրեւ պապանձեցոյց զնոսա, ապա ասէ ցայրն. «ծգեա՛ր գծեմք քո», եւ այնպէս հաստատեաց զգաւսացեալն եւ նոքա, յիմարեալք տակաւին եւս չարանան:

Այլ Նա խոյս տայ յամբոխից անտի: Միայն լինի ի լերինն, զի մաքուր ընդ Աստուծոյ խաւսեսցի եւ ոչ թէ կարաւտ ինչ էր, կամ իցէ ինչ տեղի, յորում ամփոփիցէ էնն Աստուած, այլ՝ զի մեզ լիցի ուսումն վարդապետութեան: Դարձեալ՝ վասն զի ասաց յուսուցանելն իւրում «մի՛ լինիք շաբախաւք իբրև զհեթանոսս», եւ զի մի կարծիցեն, թէ երկայն աղաւթելն անշնորհ ինչ է՝ հանէ Ինքն իսկ անկարաւտն աղաւթից զգիշերն ի գլուխ յաղաւթսն Աստուծոյ, զի ուսցուք, թէ շատ խաւսութիւն ոչ է բազում մաղթանքն, այլ՝ վայրապար եւ անճահս բարբառելն:

**ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ**

(Գլուխ Զ)

Ի միւս շաբաթն մտանէր ի ժողովուրդն, անդ էր այր մի, որոյ ձեռն գաւսացել էր: Սպասէին դպիրքն եւ փարիսացիքն, զի շաբաթու բժշկեցէ, զի չարախաւսեսցեն զնմանէ (Ղուկ. Զ. 6-7):

Ո՛հ Հարցանելովն զրաւել փութային՝ մեղմեխանաւք արգելել զբժշկութիւնն: Ո՛չ կամէին ուսանել, այլ չարախաւսել: Մարկոս ասէ. «Եւ զայրն կացոյց ի մէջ» (հմմտ. Մարկ. Գ. 3):

ՍՏ Ողորմութիւն զնոսա յորդորելով, զի երեսաւքն փոքր մի խոնարհեցուցանէ զնոսա: Զի յորժամ զիջանիցեն տեսեամբն, ապա ի չարեացն ցածնուցուն, եւ յառնէն ակնածեալ՝ դադարեսցեն ի վայրենական մտացն:

Նայեցաւ շուրջ զամեներում[ք]ք (Ղուկ. Զ. 10):

Զի այնու ձգիցէ զնոսա առ ինքն, սակայն այնպէս եղեն անմտագոյնք, քանզի զանբժշկական ախտ ջերանային:



**Ասէ ցայրն. Չգեա՛ զձեռն քո: Եւ ձգեաց, եւ հասարարեցաւ** (Ղուկ. Զ. 10):

**ԵՓ Դարձեալ. Ի շաբաթուն բժշկէ, զի իրաւունս կամի տալ, որ ինչ յաշակերտսն գործեցան, եւ ցածուցանէ զնոսա այսպիսի աւրինակաւք:** Եւ ամենայն ուստեք կուտէ պատասխանիս վասն շաբաթուն լուծանելոյ իբրեւ զմարդ, զի ի շաբաթու թլփատութիւն առնու, եւ երբեմն իբրեւ զԱստուած. «Հայր իմ մինչեւ ցայժմ գործէ, եւ ես գործեմ» (Յովհ. Ե. 17):

**Լցան յիմարութեամբ եւ խնդրէին, թէ զի՞նչ արասցեն Յիսուսի** (Ղուկ. Զ. 11):

*Ո՛չինչ վնասեալք ի նմանէ՝ սպանանել մտաբերէին, զի այնչափ անհնարին չարիք են նախանձն: Զի ո՛չ միայն ընդ աւտարսն, այլեւ ընդ ընտանիս մարտնչի:*

**Ել ի լեառնն կալ յաղաւթս** (Ղուկ. Զ. 12):

**ԻԳ Խոյս տայր յամբոխէ անտ[ի], միայն զի ի լինել ի լերինն՝ ընդ Հաւր իսաւեսցի, եւ ո՛չ կարաւտ ինչ էր:** Եւ կամ ո՞ր իցէ տեղի, յորում ամփոփի Աստուած: Այլ զի մեզ լիցի յուսումն վարդապետութեան:

**Նանէր զգիշերն յաղաւթս Աստուծոյ** (Ղուկ. Զ. 12):

**ՍԳ. Առ ի մեր խրատ առնելով: Թուի ինձ, եթէ ի նմին միաշաբաթու զայն կատարեաց:** Քանզի ո՛չ ասաց ծունր կամ երկրպագութիւն, որպէս գրեալ է ի մատնութեան գիշերին, թէ սակաւիկ մի յառաջ մատուցեալ յաշակերտացն՝ «եղ ծունր եւ կայր յաղաւթս» (ԻԲ. 41): Անդ յետ աղաւթիցն հրամայեաց, թէ՛ «ննջեցէք այսուհետեւ եւ հանգերուք» (Մարկ. ԺԴ. 41): Իսկ յաստուածային գիշերիս ո՛չ գտանեմք այնպիսի ինչ ասացեալ, այլ եթէ՛ «Հանէր զգիշերն ի գլուխ յաղաւթսն Աստուծոյ»: Յակոբայ՝ [յ]եղբաւրէն Տեառն, հրամայեցաւ երուսաղեմացոցն զնոյնն կատարել, մինչեւ ցայսաւր զմիաշաբաթն պայծառացուցանեն գիշերապաշտութեան:



### 15. ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ ՆԱՄԵՐ ԿՈՒՐԻ ԴԻԲՆԱՐԻՆ

Մաթթեոս ԺԲ. 22-30

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՅԻ  
(Գլուխ Է)

**Կամ որպէ՛ս կարիցէ որ մտանել ի փուն հզարի՛ եւ զգէն նորա յափշտակել. եթէ ոչ նախ կապիցէ զհզարն** (Մաթթ. ԺԲ. 29):

*«Հզար» զ[ը]նդգիմակացն Աստուծոյ ասէ, զոր նոքա «բեեղզերուղ» կոչէին՝ իշխան գիւաց, եւ զէն նորայ եւ տուն, զպաշտաւնեայս նորա, յորս բնակեն, որպէս տուն Քրիստոսի եւ տաճար զայնոսիկ, յորս բնակէն Քրիստոս. «Բնակեցայց ի նոսա եւ զնացից ի նոսայ» (Բ. Կորնթ. Զ. 16) ասացաւ. եւ երանելին Պաւղոս, որոյ տունն «մե՛ք իսկ եմք», ասէ, եթէ ոչ նախ կապեալ էր իմ զբեեղզերուղ, ոչ կարէի զգէնն նորայ եւ տուն յափշտակել եւ աւար առնուլ:*

**Եւ որ ոչ է ընդ իս, հակառակ իմ է. եւ որ ոչ ժողովէ ընդ իս, ցրուէ** (սին Մաթթ. ԺԲ. 30):

*Որ ոք ժողովէ բանիւ եւ ճշմարտութեամբ եւ զաւրութեամբ եւ լուսով, որ է Քրիստոս, այնպիսին ոչ կորուսանէ, իսկ որ առանց բանի եւ լուսոյ եւ իմաստութեան ժողովէ, այնպիսին իրաւայպէս ցրուէ:*

### ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՎ ԵՓՐԵՄ

**Յայնժամ մաքուցին առ նա դիւահար կոյր եւ համր** (Մաթթ. ԺԲ. 22):

*Ով անհնարին չարիք դժնդակութեան դիւին զերկոսի մուտս նէխից, որով հաւատալ մարթէր: Այլ՝ սակայն զերկոսինն Քրիստոս: Եւ զարմանային ժողովուրդքն եւ ասէին՝ մի՞թէ սայ է որդին Դաւթի:*



Իսկ փարիսացիքն ասէին, թէ Բէեղզբբուղաւ՝ իշխանաւ զիւաց հանէ դայ դեւս: Թէպէտ եւ մեծամեծս բարբառեցաւ, սակայն եւ այնմ ոչ հանդարտեցին, որպէս յառաջագոյն ասացի<sup>1</sup>: Այնպէս միշտ ընդ այլոց բարիսն կսկծէին: Եւ ո՛չ ինչ այնպէս տրտմեցուցանէր զնոսա, որպէս մարդկութեան փրկութիւն: Եւ ընդ այնմ մե՛րթ սպանանել, մե՛րթ բամբասել մտաբերէին: Զի այնպէս իսկ է հեռ նախանձու, որո[յ] չիք այլ ինչ համեմատ. զի նախանձոտն յառաջ քան ընդ որում նախանձին զանձն տանջէ եւ ոչ երբէք դադարէ ի մեղաց: Այլ միշտ ընդ նոյնն թաթաւի, որպէս խոզ ի տղմի: Եւ եւս չար, քան զդեւսն, խնդայ ընդ վնաս եւ ընդ ընկերին բարիս: Յորժամ ի վիշտս ինչ զոք տեսանէ, յայնժամ հանգչի եւ ոգի առնու, եւ զայլոց թշվառութիւնսն իւր փառաւորութիւն համարի, եւ զբարիս ընդերացն՝ հինգութիւն: Եւ ոչ ինչ թուի նմայ հեշտ, բայց միայն ընկերին տրտմութիւնն: Վասն որոյ զայնպիսիսն իբրեւ զշունս կատաղիս պարտ է քար կոշկոճ առնել եւ իբրեւ զ(ա)դեւս հալածել: Զի որպէս կուարնդոռնք, որ աղբով պարարին, նոյնպէս եւ նոքայ՝ այլոց չարեաւքն եւ վշտաւքն, հասարակաց իմն թշնամիք եւ պատերազմողք ամենայն բնութեանս են:

Դարձեալ զիւսահարն խորհուրդ ժողովրդեանն կատարէր, որպէս եւ Եսայի ասաց. «Թանձրացաւ սիրտ ժողովրդեանս այսորիկ, զլսելիս իւրեանց ծանրացուցին եւ զաչս իւրեանց կափուցին, զի մի տեսցեն աչաւք իւրեանց եւ լուիցեն ականջաւք» եւ այլն (հմմտ. Եսայի Զ. 10): Խորհուրդ է այնոցիկ, որ հաւատացին ի նայ:

Գիտաց Յիսուս զխորհուրդս նոցա եւ ասէ. «Ամենայն թագաւորութիւն, բաժանեալ յանձն, աւերի» (հմմտ. Մատթ. ԺԲ. 25):

Նաեւ յառաջագոյնն իսկ բամբասէին, եթէ Բէեղզբբուղաւ հանէ, այլ յայնժամ ինչ ո՛չ սաստեաց, զի տացէ նոցա պատճառս ի բազում նշանացն, իմանալ զգաւրութիւն նորա: Եւ ի վարդապետութենէն ուսանել զմեծութիւնն, բայց քանզի զնոյն յաճախէին ասել, ապայ սաստէ եւս: Նախ՝ այն իսկ զաստուածութիւն իւր ցուցանէր, զի զծածուկն սրտից նոցա ի մէջ բերէր: Ապայ եւ այն եւս երկրորդ՝ զի զիւրեաւ զդեւս հանէր վաղվաղակի, թէպէտ եւ չարախաւսութիւնն կարի յանդգնութեամբ էր, որպէս ասացաւ՝ թէ նախանձ ո՛չ զայն ինչ խնդրէ, եթէ զի՛նչ բամբասիցէ, այլ զի՛ բամբասիցէ: Սա-

<sup>1</sup> Նկատի ունի համր դիվահարի բժշկութիւնը (Մատթ. Թ. 32-34):

կայն եւ ո՛չ այնպէս ինչ արհամարհից զնոսա Քրիստոս՝ առ զմեզ խրատելոյ լինել զգաւնագոյնս առ թշնամիսն: Թէպէտ եւ այնպէս ինչ բամբասիցեն, որ ոչ ինչ գտանեմք զանձանց, սակայն մի ինչ խռովել եւ մի աղմկել, այլ ամենայն երկայնամտութեամբ տալ իրաւունս, զոր մանաւանդ յայնժամ առնէր: Յայտ արարեալ, թէ ամենեւին ստութեամբ լինէին բամբասանքն, զի չէր զիւսահար ի գործ այնպիսի հեզութիւն ցուցանել եւ զծածուկս մտացն ճանաչել: Եւ քանզի յանդգնութեամբ էին իրքն եւ զի բազմաց երկնչէին չիշխէին հրապարակաւս առնել զբամբասանսն, այլ ի միտսն յանիծէին եւ նորա յայտ արարեալ նոցա, թէ զայն եւս ճանաչէ:

«Թագաւորութիւն, ասէ, բաժանեալ յանձնէ ոչ հաստատեցի»: Ի ծանաւթիցն բերէ աւերինակս: Թէպէտ եւ չկայցէ ինչ յերկրի զաւրագոյն քան զթագաւորութիւն, սակայն կորնչելոց է յորժամ անձամբ անձին հարկանիցի: Եւ թէ յայնպիսի մեծութեան պատճառք իրացն անձին կործանումն են, ապայ զի՞ եւս զտանէ կամ զքաղաքէ ճառիցէս: Թէպէտ եւ փոքր եւ կամ բնաւ մեծ ոք իցէ եւ ընդ անձին կովիցի, կորնչելոց է: Եթէ ես, ասէ, դեւս ունիցիմ եւ այնու զդեւս հանիցեմ, ապա մարտ եւ պատերազմ ի մէջ զիւսացն կայցէ, ընդ միմեանս անկե(ա)ալք, միմեանք աւձտիցին: Կորեաւ, ուրեմն, եւ եղծաւ զաւրութիւն նոցա:

Եթէ սափանայ զսափանայ հանիցէ (տե՛ս Մատթ. ԺԲ. 26):

Եւ չասաց թէ դեւս յայտ արարեալ զկարի միաբանութիւն նոցա: Եւ եթէ անձամբ յանձնէ ինչ բաժանեցի, ապա տկարացաւ իսկ եւ կորստական եղեւ: Եւ զիա՞րդ իցէ զի զայլս հանիցէ: Տեսանես՝ որչափ ծաղու եւ ծաղանաց էին բամբասանքն:

Իսկ եթէ հոգուով Աստուծոյ հանեմ զդեւս, ուրեմն հասեալ է ի ձեր արքայութիւնն Աստուծոյ եւ զի՞նչ իցէ արքայութիւնն Աստուծոյ (տե՛ս Մատթ. ԺԲ. 28):

Գալուստն իմ է, ասէ, տե՛ս՝ զիա՞րդ միւսնագամ բժշկէ զնոսա եւ ձգէ ածէ զնոսա յիւր գիտութիւն: Եւ յայտ առնէ, թէ ընդ իւրեանց բարիսն մարտնչին: Զի որք ի մարգարէիցն գուշակեցան, յառաջագոյն եկին հասին եւ ժամանակ ձերո բարութեանն ժամանեալ կայ առ դուրս եւ դուք զհակառակն նորին գործէք, ոչ միայն չընդունիք այլեւ բամբասէք եւս: Իսկ Ղուկաս ասէ, թէ «մատամբ



Աստուծոյ Հանեմ զդեւս» (հմմր. Ղուկ. ԺԱ. 20): Յայտ արարեալ եթէ մեծի զաւրութենէ Հանել զդեւս եւ ո՛չ դոյզն ինչ շնորհաց եւ կամի այնու զՀանգամանս ցուցանել նոցա, եթէ այդ այդպէս իցէ, ապա որդին Աստուծոյ եկն, զի ցուցցի, թէ իւր զալուստն Աստուծոյ զալուստ է: Զիարդ ո՞ք կարիցէ մտանել ի տուն Հզաւրի եւ զկազմած նորա յափշտակել, թէ ոչ նախ զՀզաւրն կապիցէ: Եւ չէ՛ մարթ եւ սատան ի զսատանայ Հանել յայտ ի բանիցն ասացելոց է: Եւ չէ՛ այլազգ ինչ Հանելոյն, եթէ ո՛չ նմա իսկ յաղթիցէ: Եւ ամենեցուն իսկ յայտ է եւ յայցանէ իսկ մեծաւ առաւելութեամբ զառաջինսն իսկ Հաստատէ: Այնչափ, ասէ, չէ մաւտ զաւրաւիզն առնուլ զսատանայ, զի եւ պատերազմ եւս տամ ընդ նմայ եւ կապեմ: Եւ նշանակ նորին, զկազմած նորին, յափշտակէ: Եւ զի նոքա կամէին յայտ առնել, ո՛չ իւրո զինչ զաւրութեամբ Հանէ զդեւս: Եւ նայ ցուցանէ, թէ ոչ միայն զդեւս, այլեւ զաւրագլուխն եւս մեծաւ իշխանութեամբ ունի կապել: Բայց աստ եւ մարգարէութիւն ինձ բանն, զի ոչ միայն դեւքն էին կազմած եւ գործիք սատանայի, այլեւ՝ մարդիք, որ գործէին զնորին: Գործս եցոյց այսու, թէ ոչ միայն զդեւս Հանէր, այլ զբնաւ իսկ զամենայն տիեզերաց զմոլորութիւն փարատէր:

Որ ոչ ժողովէ ընդ իս՝ ցուէ (Մարթ. ԺԲ. 30):

Ես, ասէ, կամիմ առ Աստուած մերձեցուցանել եւ առաքինութիւն ուսուցանել եւ զարքայութիւնն խոստանալ, ե՛ւ սատանայ ե՛ւ դեւք զնոցին Հակառակն: Եւ զիա՞րդ որ ոչ ընդ իս ժողովիցէ եւ ընդ իս իցէ իմ գործակից, իցէ եւ զինչ ասացից գործակից զինեւ: Հրահանգ եւս լինի զիմ ժողովեալս ցրուել:

### ՅՈՎՆԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՅԻ

(Գլուխ ԺԲ)

Յայնժամ մաքուցաւ առ Նա դիւահար մի կոյր եւ համր, եւ բժշկեաց զնա, որպէս զի համրն եւ կոյրն խօսիցի եւ փեսանիցէ (Մարթ. ԺԲ. 22):

Միշտ զսքանչելիսն բանիցն Հետեւեցուցանէ, որպէս զի միմեամբք զիրեարս Հաստատէ, որպէս ասացեալ է: Բայց դու տես զզժնդակութիւն չարին, զի զերկոսեան մուտսն խցեալ իսկ էր, որ-

պէս զի մի՛ տեսանիցէ եւ Հաւատասցէ, զորս երաց Քրիստոս, որով ետես եւ Հաւատաց ի Նա: Դարձեալ՝ իրք զիւհաւարին առակ էր Հնոյ ժողովարանին՝ ըստ մարգարէին թէ՛ «Թանձրացաւ սիրպ ժողովրդեանս այսորիկ, եւ ականջօք իրեանց ծանունս լուան, եւ զաչս իրեանց կափուցին, զի մի՛ փեսցեն աչօք...», եւ դարձցին, եւ բժշկեցից զնոս» (Ես. Զ. 10): Ապա ուրեմն մոլեղնեալք էին ինքեա՛նք եւ ո՛չ Նա, ծանրագո՛յն քան զախտածէտս զայս, որք ոչ ընկալան զՀոգեւոր բժշկութիւն, որպէս սա՛ զմարմնաւորն՝ յօրինակ Հաւատացելոց Հեթանոսաց, որք կոյրք էին ի ճշմարտութենէն, զի տեսին եւ Հաւատացին:

Զարմացան ամենայն ժողովուրդքն եւ ասէին. «Միթէ Սա՞ իցէ Քրիստոսն՝ Որդի Դաւթի» (Մարթ. ԺԲ. 23):

Ընդ հրաշիցն իրս պակուցեալ՝ կարծեցին ի գլուխ ելեալ զմարգարէիցն պիտառութիւնս վասն Քրիստոսի, որ ծնանելոց էր յազգէ Դաւթի, քանզի զիտէին զՆա ի ցեղէն Դաւթի ծնեալ, եւ ի ձեռն սքանչիցն ի միտս եկեալ՝ «Քրիստոսն» ասացին, որ է օծեալ: Ապա ուրեմն մի՛ պատճառեցէ հրէայն ոչ ծանուցեալ, քանզի աւանիկ ինքեա՛նք իսկ վկայեցին Քրիստոս զՆա գու:

Բայց փարիսեցիքն իրրեւ լուան, ասեն. «Ո՛չ իւրք հանէ Դա զդեւս, եթէ ոչ Բեեղզերուդաւ իշխանաւն դիւաց» (Մարթ. ԺԲ. 24):

Թէպէտ զմարգարէն վկայ ած, թէ Հայր եզ զՈգի Իւր ի վերայ Նորա, սակայն ո՛չ զգաստացան, այլ որպէս յառաջագոյն ասացաւ, իբր զդեւս չարս՝ միշտ ընդ մարդկան փրկութիւն խանդային եւ ընդ ընկերին բարիս կսկծէին, քանզի այնպիսի իմն է նախանձն, զի յորժամ զոք ի վիշտս տեսանէ, յանգչի եւ զայլոց թշուառութիւն փա՛ռս իւր Համարի, իսկ զբարիս ընկերացն հիքութիւն անձին վարկանի, որպէս այժմու փարիսեցիքս: Զի զոր ժողովուրդն «Քրիստոս» եւ «Որդի Դաւթի» ասէին, նոքա բամբասէին. բայց [զի] ո՛չ կարէին աղարտել զսքանչելիսն, յայտնապէս անազդակելով՝ ի Սքանչելագործն զպարսաւն դարձուցանէին, թէ դիւաւ Հանէ Դա զդեւս, քանզի Բեեղզերուդն իշխան դիւաց ասի կամ Հայր ճանճից, զորս ճշմարտութեան բանիւն յանդիմանեալ կոչուծէ՝ իբր քարիւ զմոլեղին եւ զկատաղի զազանս սաստիւ իմն վարելով:



Իբրև գիպաց Յիսուս զխորհուրդս նոցա, ասէ ցնոսա. «Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝ աւերի, եւ ամենայն քաղաք կամ փուն բաժանեալ յանձն իւր՝ ոչ կացցէ (ԺԲ. 25):

Է՞ր վասն Հանգոյն այսմ բամբասանաց եւ յառաջագոյն բամբասեցին, սակայն ոչինչ պատասխանեաց, եւ աստ սաստեալ իմն երեւի. զի տացէ նոցա պատճառս՝ ի բազում նշանաց իմանալ զգորութիւն Նորա եւ ուսանել զմեծութիւն վարդապետութեան Նորա. իսկ յորժամ ի նոյն յաճախեցին, ապա սաստէ: Եւ նախ զաստուածութիւնն Իւր ցուցանէ, որով զժածուկս սրտից նոցա ի մէջ բերէ, զի ո՛չ հրապարակախօս լինէին, այլ ի միտս իւրեանց յաճէին, եւ նա յայտ արար, թէ ո՛չ է այս գործ զիւսհարի զդեւս Հանել եւ զմիտս ճանաչել: Եւ երկրորդ՝ Հեղութիւն մեզ ուսուցանէ, թէ ո՛չ է պարտ զանձին վրէժ առնուլ, թէպէտ ասացեալքն այնպիսի լինիցին, զորս ոչ գտանեմք յանձինս մեր, քանզի նախանձն ո՛չ զայն ինչ խնդրէ, թէ զինչ բամբասիցէ, այլ զի բամբասէ՛. վասն որոյ ո՛չ է պարտ խռովել, այլ միայն բանիւ յանդիմանել եւ յուղղութիւն ածել, որպէս Տէրն: Քանզի ասէ. «Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝ աւերի»: Ի ծանօթ իրաց բերէ օրինակս, քանզի թագաւորութիւն, որ զօրագոյն է քան զամենայն մարդկան իրս, սակայն յորժամ ընդ անձին կռուիցի, կորնչիցի, ապա զի՞ ասես զքաղաքէ կամ գտանէ, զի ո՛չ այնչափ ինչ արտաքին պատերազմունք կարեն վնասս գործել, որպէս զընտանեացն, յորոց Դաւիթ ազօթէր զերծանիլ. «Փրկեա՛ զանձն իմ ի մերձաւորաց» (Խմբ. Սաղմ. ԾԴ. 19), քանզի յոյժ ծանրագոյն է կռիւն ընդ ազգական[ի] եւ կործանիչ եւ քակտիչ լինի թագաւորութեանց եւ տանց, եւ քաղաքաց: Նաեւ օրինակաւ՝ զիշխանութիւն Գոռոզին ծանոյց, եւ «քաղաք» նմին՝ զկենցաղս, եւ «տուն» նորա՝ զկամարարս անուանեաց, որք քակտեալ բաժանեցան եւ այլ ո՛չ կարիցեն կեալ ի կարգի իւրեանց:

Եւ թէ սաքանայ զսաքանայ հանէ, յանձն իւր բաժանեցաւ. արդ զիա՛րդ կացցէ թագաւորութիւն նորա (Մաւրթ. ԺԲ. 26):

Եթէ Ես դեւս ունիմ, ասէ, եւ այնու զդեւս Հանեմ, որպէս դուք բաջաղէք, ուրեմն մարտ պատերազմի է ի մէջ զիւսացն, ապա կորեալ եւ եղծալ զօրութիւն նորա: Եւ տես, զի ո՛չ ասաց, թէ սատանայ զդեւս Հանէ, այլ թէ սատանայ՝ զսատանայ՝ յայտ արարեալ զկարի միաբանութիւն նոցա ի կորուստ մարդկան: Արդ՝ եթէ իբրև

զմի անձն գոյով բաժանեցաւ յանձնէ իւրմէ, ապա տկարացաւ եւ կորստական եղեւ, զիա՛րդ կարիցէ զայլս Հանել. յոյժ ուրեմն ծաղու արժանի են բանքդ ձեր:

Եւ եթէ Ես Բեղզերուղաւ հանեմ զդեւս, որդիքն ձեր ի՛նչ հանիցեն. վասն այնորիկ նորա՛ եղիցին ձեր դաքաւորք (Մաւրթ. ԺԲ. 27):

Հայեա՛ց աստ ընդ Հեղութիւն Նորա, զի ո՛չ ասաց՝ «աշակերտքն Իմ» կամ «առաքեալքն», այլ «որդիքն ձեր», եւ զոր ասէն՝ այսպիսի՛ ինչ է: Եթէ կամիցիք դառնալ առ որդիս ձեր, բազում գտանէք պատճառս ի բանից աստի օգտութեան ընտրութեամբ մտաց ձերոց, ապա թէ Հաստեալ կայցէք, չգտանէք ինչ պատճառս զրպարտութեան, քանզի թէ իշխանն զիւսաց յիս է, որպէս ասէք, նոքա որո՞վ Հանեն զդեւս. ապա ուրեմն յայտ է, թէ ստէք ի նոցանէ յանդիմանեալ, զի ո՛չ ունին զիշխանն զիւսաց եւ Հանեն զդեւս: Նաեւ ա՛յլ ազգ. քանզի ահա որդիքն ձեր զնոյն առնեն՝ անուամբ Իմով Հանելով զդեւս. եթէ այդպէս է, որպէս ասէք, ապա զորդիսն ձեր ընդէ՞ր ոչ նոյնգունակ բամբասէք, քանզի առաւել նոքա՛, որք յինէն առին զիշխանութիւն, այդպիսի լինիցին: Արդ՝ եթէ զնոսա թողեալ՝ Ինձ մեղադրէք, յայտ է, թէ նախանձու աղազաւ բամբասէք, քանզի ո՛չ ընդ իրս, այլ ընդ դէ՛մս կռուիք, վասն այդորիկ նոքա՛ իսկ դատելոց են զձեզ, յորժամ ի ձէնջ իցեն առաքեալքն եւ զդոյն զմտաւ ոչ ածիցեն: Կամ զնոցանէ ասէ, որք որդիք էին նոցա եւ զիւօք Հանէին, որպիսիք էին որդիքն Սկեւեայ, որպէս ոմանք ասեն:

Ապա եթէ Ղոզուով Ասքուծոյ հանեմ Ես զդեւս, ուրեմն հասեալ է ի վերայ ձեր արքայութիւն Ասքուծոյ (Մաւրթ. ԺԲ. 28):

Ղուկաս ասէ եթէ՛ «մաքամբ Ասքուծոյ» (Ղուկ. ԺԱ. 20)՝ յայտ արարեալ նախ՝ թէ ի նոյն էութենէ է Հոգին, եւ ապա՛՝ եթէ մեծի զօրութեան պէտք են Հանել զդեւս եւ ո՛չ դոյզն ինչ շնորհաց: Իսկ «արքայութիւն» զԻւր առաջին գալուստն ասէ, որ եբարձ զթագաւորութիւն մահու, այսինքն՝ թէ պարտ էր ձեզ ցնծալ, զի մեծամեծքն, որք ի մարգարէիցն գուշակեցան թէ՛ «Եղից զՈգի Իմ ի վերայ նորա» (Ես. ԽԲ. 1), եւ այլն եւս, եկին Հասին, իսկ դուք զհակառակն գործէք. ո՛չ միայն չընդունիք զհասեալ բարիս, այլ բամբասէ՛ք եւս եւ բիծս կարկատէք եւ դժկամակ լինիք ընդ ձեր փրկութիւնդ, քանզի Որ-



զին Աստուծոյ եկն եհաս, որպէս ասէ թէ՛ «Հասեալ է ի վերայ ձեր արքայութիւնն Աստուծոյ»: Կամ թէ՛ «արքայութիւնն» զգատողական իշխանութիւնն Աստուծոյ ասէ, քանզի թէ Հոգևով հանեմ, ապա ի ներքոյ բարկութեանն Աստուծոյ անհրաժեշտ մատնեալ էք, զի զՀոգւոյն գործս թշնամւո՛յն շնորհէք, որում յոյժ ընդել էք մարգարէիւքն հոգւոյն. վասն որոյ ինքն իսկ բոլոր թագաւորութիւնն Հօր վրէժխնդիր է այդորիկ:

Կամ զԻա՛րդ կարէ որ մտնել ի փուն հզօրի եւ զգործիսն նորա յափշտակել, եթէ ոչ նախ կապիցէ զհզօրն եւ ապա զփունն նորա յափշտակիցէ (Մաւրթ. ԺԲ. 29):

Ամենայն իրօք զբանն հաստատէ, զի թերեւս զնոսա որսասցէ, քանզի այսպիսի՛ ինչ ասէ, թէ չէ՛ մարթ սատանայի զսատանայ հանել, որպէս ասացաւ, եւ չէ՛ հնար այլ ազգ զնա հանել, եթէ ոչ նախ նորա իսկ յաղթիցէ, քանզի այնչափ ինչ ասէ չառնում զօրավիզն զսատանայ, մինչ զի պատերազմ եւս տամ ընդ նմա եւ կապեմ եւ ապա զկազմած նորին յափշտակեմ: Բայց «հզօր» զսատանայ անուանէ կամ յաղագս անմարմին գոլոյն՝ ըստ այնմ թէ՛ «Թշնամիք իմ հզօրացեալք են» (հմմտ. Սաղմ. ԿԸ. 5), եւ կամ թէ ի ծուլութենէ մերմէ զառաջինն զօրացաւ նա, զոր եւ կապեաց իսաչիւն՝ ոչ միայն զդեւս, այլեւ զզօրագլուխն՝ զիշխանն դիւսաց: Քանզի մարգարէութիւն իմն է բանս, որ ոչ միայն զդեւս հանէ, այլեւ զամենայն տիեզերաց զմոլորութիւնս փարատէ: Իսկ «գործիք» եւ «տուն» զզիւթս ի մարդկանէ եւ զկախարդասարս եւ զչարս ասէ, յորմէ յափշտակեաց Քրիստոս իշխանութեամբ Իւրով ի ձեռն հաւատոցն՝ ըստ այնմ թէ՛ «Ջարքայութիւնն բռունք յափշտակեն» (Մաւրթ. ԺԱ. 12), քանզի զոր օրինակ իմաստուն բժիշկ զարմատս ցաւոցն կտրէ, զի մարմինքն առողջասցին, այսպէս նա զպատճառս չարեացն նախ կապեաց՝ զիշխանն զուռնափայ՝ բանիւ, եւ ապա զմարդիկ տուն եւ տաճար բնակութեան Իւրոյ պատրաստեաց՝ ըստ առաքելոյ. «Որոյ փունն մնք իսկ ենք» (Եբր. Գ. 6):

Որ ո՛չ ընդ Իս է, հակառա՛կ Իմ է, եւ որ ո՛չ ժողովէ ընդ Իս, ցրուէ (Մաւրթ. ԺԲ. 30):

Ջամենեւին անմիաբանութիւնն եւ զթշնամութիւնն, որ ընդ սատանայ ունէր, զրէ բանիւս, քանզի ես կամիմ, ասէ, առ Աստուած

մերձեցուցանել եւ առաքինութիւնն ուսուցանել եւ արքայութիւնն ընձեռել, իսկ սատանայ եւ դեւք՝ զնորին հակառակն: Արդ «որ ոչ ժողովէ ընդ Իս» զմարդիկ, զիա՛րդ ընդ Իս իցէ եւ կամ Ինձ գործակից լինել կարիցէ, որ ոչ միայն ոչ ժողովէ, այլեւ զժողովեալսն ցրուէ: Քանզի ես եկի զցրուեալ որդիսն Աղամայ ժողովել ի մի կրօնս աստուածպաշտութեան, իսկ նա ցրուէ ի զանազան պաշտօնս կռամոլութեան, ապա ուրեմն հակառակ Իմ է եւ ո՛չ է ընդ Իս: Դարձեալ՝ որ ոք ժողովէ բանիւ ճշմարտութեամբ Քրիստոսի, նա ո՛չ կորուսանէ, այլ առ Տէր ածէ, իսկ որ առանց բանի եւ իմաստութեան լուսոյ ժողովէ, այնպիսին ո՛չ է ընդ Տեառն, այլ ցրող վարդապետութեան նորա: Դարձեալ՝ որ ոչ միանայ ընդ Իս հաւատովք, նա ինքն սատանայ է, եւ որ ոչ ժողովէ ընդ Իս գործովք, ցրուէ նա ընդ դեւս զանձն իւր, քանզի կոչի եւ սատանայ Դիապօլուս, որ է «ցրուեալ»:

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՅԻ**

(Չորրորդ հարոր. գլուխ Գ)

«Կոյր եւ համր եւ խուլ դիւահարն» նշանակէ զժողովուրդս հրէից, որպէս ասէ Եսայի, թանճրացաւ սիրտ ժողովրդեանս եւ զաչս իւրոց կափուցին եւ զլսելիս ծանրացուցին առ Քրիստոս: Իսկ այնորիկ բժշկեաց եւ ետ նմա խօսել եւ լսել եւ տեսանել նոքա են որք ի հրէիցն հաւատացին ի Քրիստոս:

**ՎԱՍՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԴԻԲՅՑ**

Թագաւորութիւնն բաժանեալ յանձն [իւր]՝ աւերի (տես Մաւրթ. ԺԲ. 25):

Վասն սատանայի ասէ: Նախ՝ որ ի հրեշտակաց դասէն անկաւ: Երկրորդ, թագաւորեալ էր կռապաշտութեամբն եւ կործանեցաւ: Երրորդ՝ հոգւոցն, որ ի դժոխս բռնացեալ էր: Նոյն է քաղաք եւ տուն նորա: Դժոխքն եւ կուռք եւ մարդիկ, յորս բնակէր: Տե՛ս ընդդէմ երկաթնակաց, որք զմի թագաւորութիւնն Քրիստոսի, յերկուս բաժանեն բնութիւնս եւ կամս եւ գործս հակառակ, որ եւ բաժանին նոքա ի միութեանն Քրիստոսի եւ ի շնորհաց նորին:



**Որդիքն ձեր ի՞նչ հանիցեն** (տե՛ս Մաթթ. ԺԲ. 25):

Ձառաքեալսն ասէ, որ անուամբքն Քրիստոսի հանէին. Ասէ՛ վասն այդր հայհոյութեան: Նոքա դատեսցեն զձեզ, յորժամ նստցին յերկոտասան աթոռս:

**Հասեալ է ի վերա ձեր արքայութիւն Աստուծոյ** (Մաթթ. ԺԲ. 25):

Նախ՝ բժշկէ զնոսա, որ ասաց դատապարտել յառաքելոցն: Երկրորդ՝ զոր գուշակեցին մարգարէքն վասն իմ հասեալ եկի: Երրորդ՝ ձեր է արքայութիւնն եւ զուր մարտնչիք: Չորրորդ՝ ես եմ արքայութիւն եւ որդի Աստուծոյ: Իսկ որ ասէ Ղուկաս՝ «Մատամբն Աստուծոյ հանեմ» (Ղուկաս, ԺԱ. 20):

Նախ ցուցանէ զմեծ զօրութիւնն Աստուծոյ, որպէս ասէին զէտքն եգիպտացոց, թէ մատն Աստուծոյ է այս: Երկրորդ՝ զմի անձնաւորութիւն հողոյն ցուցանէ: Երրորդ, զի էակից է հօր եւ որդւոյ որպէս մատն յէութենէ մարմնոյն: Չորրորդ, զի զամենայն ինչ մատեամբ առնեմք եւ Քրիստոս զամենայն զործս հոգովն առնէր:

Հարց. Վասն է՞ր հզօր կոչէ զնա: Որ վասն տկարութեան խոզիցն ոչ իշխէր:

Պատասխանի. Տկարացաւ նա անկեալ յերկնից, այլ մարդիկ կամաւ զօրացուցին ի վերա ինքեանց, վասն որոյ երբեմն իշխան, եւ երբեմն թագաւոր ասեն:

Հարց. Ու՞ր կապեաց զհզօրն:

Պատասխանի. Նախ՝ յորժամ ի մարդկանէ հալածէր: Երկրորդ ի վերա խաչին բեւեռեաց զնա, ասէ առաքեալ: Երրորդ՝ կապեաց ի դժոխս հազար ամ, որպէս ասէ տեսիլն:

Հարց. Զի՞նչ է գործ ի նորա:

Պատասխանի. Նախ՝ դեւք իւր: Երկրորդ՝ չարիք ի մարդկանէ, կախարդք, պոռնիկք եւ աւազակք:

Հարց. Զի՞նչ է աւարն:

Պատասխանի. Նախ՝ զորս ազատ էր ի դիւաց: Երկրորդ՝ զորս ի կռօցն ի հաւատ էած: Երրորդ՝ զհանգիստն ի դժոխոց ազատեաց:

**Որ ոչ ժողովէ ընդ իս, ցրուէ** (Մաթթ. ԺԲ. 25):

Ես, ասէ, առ Աստուած մերձաւոր եմ զմարդիկ եւ յառաքինութիւնն եւ յարքայութիւնն ժողովեմ: Իսկ սատանայ այսմ հակառակ

յԱստուծոյ եւ յառաքինութեանցն հանէ եւ ի դժոխս ցրուէ, զիարդ լինի գործակից իմ: Եւ դարձեալ զիմ ժողովեալսն նա ցրուէ: Նոյնպէս եւ մեզ ասէ: Եթէ զխորհուրդս մեր կամ զգործս կամ զինչս առ նայ ոչ ժողովեմք, ցրուեմք ի կեանս եւ ի դժոխս: Եւ գիտելի է, Զի Դ. բանիւ[ք] պատասխանեաց վասն դիւին: Նախ՝ թէ դեւ զդեւ՝ հանէ, ինքն բաժանմամբն տկարացաւ, զիս՞րդ զայլս հանէ: Երկրորդ՝ զի որդիքն ձեր իմ անուամբս հանեն: Ես վասն է՞ր զիւրով հանէմ: Երրորդ՝ թէ պատերազմ ունիմ ընդ նմա եւ կապեմ զհզօրն, որպէ՞ս լինի ինձ աւգնական: (1) Չորրորդ՝ զոր ես ժողովեմ, նա ցրուէ հակառակութեամբ:

**ՅԻՍՈՒԲՍ ԵՒ ԲԷԵՂՁԵՐՈՒՂ**

Ղուկաս ԺԱ. 14-23

**ԻԳՆԱՏԻՈՍ ՍԵՒԼԵՌՆՅԻ**

**Յեք այսորիկ մաքուցին դիւահար մի** (հմմտ. Մաթթ. ԺԲ. 22):

Չոր համրացոյց դեւն, զի մի տացէ հաւատս եւ առցէ փրկութիւն: Իսկ Յիսուս, որոյ ամենայն ինչ յայտնի է, ոչ խնդրէ հաւատս, քանզի ոչ ունէր, որով տայր: Վասն այնորիկ բժշկէ առանց հաւատոց, եւ ապա սկսաւ խաւսել եւ ընծայել նմա հաւատս: Իսկ այնք, որ վարկեալ էին թերահաւատութեամբ, ասեն.

**Գործակից է նմա իշխանն դիւաց եւ նովաւ հանէ զդեւս** (հմմտ. Ղուկ. ԺԱ. 15)

Տարակուսեալ առ այս ոմանք ասեն. դեւք յերկինս հասանիլ ոչ զաւրեն՝ ցուցանել մեզ անտի նշանս, այսինքն՝ զարեգակն պաշարել, կամ անդրէն յետս ձգել: Իսկ Տէրն մեր ասէ առ այնոսիկ, որ զիշխանն զիւաց ասէին ունել. սատանայ ընդ անձին պատերազմ ոչ տայր՝ ցրուել զիւրսն, այլ ժողովէ՝ զաւրանալ, զի մի տկարացի: Եւ եթէ Ես գործակցութեամբ նորա զաւրանամ յաղթել, ապա աշակերտացն զի՞նչ ունիք ասել, զի Անուամբ Իմով եւ նոքա զնոյն գործն: Եւ ասէ. նոքա դատեսցեն զձեզ, զի որդիք ձեր են եւ ոչ ախտացան զձերդ:



Իսկ եթէ մաքն Աստուծոյ է (հմմտ. Ղուկ. ԺԱ. 20)

ՁՀոգին անուանէ մատն, վասն նոյն էութեանն՝ ըստ Մատթէոսի. «Եթէ Հոգւովն Աստուծոյ Հանեմ զդեւս, ապա եհաս Աստուծոյ թագաւորութիւնն՝ բառնալ զմահու թագաւորութիւն, եւ զձեզ կամ՝ հաւատաւք ազատել եւ ժողովել, կամ անհաւատութեամբ ընդ դեւս պատժել եւ ցրուել» (Մաթթ ԺԲ. 28): Դարձեալ խրատէ զնոսա ի միտ առնուլ զայս, թէ բարձաւ թագաւորութիւնն սատանայի: Ասէ, թէ՛

Ջաւրագլուխն դիւաց կայր ի հաստատութեան եւ վառեալ էր զինու պատրաստութեամբ, ի խաղաղութեան էին ապստամբ զաւրութիւնքն, որք ընդ նովաւ սպառազէնք կացեալք, եւ չէր ոք, որ հալածէր զնոսա (հմմտ. Ղուկ. ԺԱ. 21-22): Իսկ, արդ, ուստի՞ է այս, զի ձկնորսք եւ մաքսաւորք իշխեն ի վերայ դիւաց եւ բազում տկարք ի մարդկանէ՝ սաստեն եւ անուամբ Նորա հալածեն զդեւս: Եւ նոքա, զահի հարեալք, չկան հակառակ, այլ, փախստեայ եղեալ, սարսին եւ կազմածք նորա յափշտակին: Ջայս արար վերին իշխանութիւնն, որ զամենայն ինչ հաստատութեամբ ընդ ձեռամբ ունի: Իսկ որք հակառակ աստուածային իշխանութեանն ժողովեն՝ ցրուեալ կորուսանեն: Դարձեալ ահ արկանէ նոցա եւ դնէ զնոսա իբրեւ զայսահար ոք, վասն զի ամենայն չարութեամբ ըմբռնեալ էին զնոսա դեւքն եւ եկեալ Ինքնին հալածեաց ի նոցանէ, եւ փախստեայ գնացին ի հեթանոսս, ուր ոչ հոսեցաւ ջուր շնորհաց հոգւոյն, այլ ոչ գտին հանդիստ: Վասն զի բղխեաց ի հեթանոսս ջուրն կենդանի Աւետարանին շնորհաց եւ գնացին գետք ընդ անջրդիս: Եւ եղեւ անապատն ի ճահիճս եւ երկիրն ծարաւուտ եւ ի վտակս ջուրց, եւ ոչ գտաւ տեղի չար այսոցն: Իսկ Հրէայքն, մնացեալ թափուր յաստուածային շնորհացն, դարձան ի նոսա եւ լցին եւթն չար այսաւք եւ յետինս այս կարի անբերելի չար եղեւ նոցա, քան զամենայն առաջինսն զայն:

**ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ**

(Գլուխ ԺԱ.)

Եւ հանէր դեւ մի համբ, եւ յելանել դիւին՝ խաւսեցաւ համբն (Ղուկ. ԺԱ. 14):

Ոկ. Ո՛վ անհնարին չարիք գծնդակ դիւին, զի գերկոսեան զմուտսն եխեց՝ զաչսն եւ զբերանն, որով հաւատալ մարթէր:

ԵՓ Արդ՝ ի դիւահարն զխորհուրդ ժողովրդեանն առակէր մարգարէն. «Թանձրացաւ սիրտ ժողովրդեանս այսորիկ, զլըսելիս իւրեանց ծանրացուցին եւ զաչս իւրեանց կափուցին, զի մի՛ տեսցեն աչաւք եւ լուիցեն ահանջաւք» (Կրն Ես. Զ. 10, հմմտ. Մաթթ. ԺԳ. 15, Գործք ԻԸ. 27) եւ այլն եւս:

Եւ զարմացան ամենայն ժողովուրդ[քն] (Ղուկ. ԺԱ. 14):

ԵՓ Ետ նմա խաւսել եւ լսել եւ տեսանել: Խորհուրդ է այնոցիկ, որք հաւատացին ի նա, այսինքն է՝ հեթանոսաց, որք կուրացեալ էին ի ճշմարտութենէն եւ խցեալ լսելիք ի բանից նորա:

Եւ ոմանք ի նոցանէ ասեն. Բեղզերեղաւ իշխանաւն դիւաց հանէ զդեւս (Ղուկ. ԺԱ. 15):

ԻԳ Իսկ այնոցիկ, որ վարակեալ էին անհաւատութեամբ, ասեն. «Գործակից է նորա իշխանն դիւաց, եւ նովաւ հանէ զդեւս»:

Եւ այլք փորձէին եւ նշան յերկնից խնդրէին (Ղուկ. ԺԱ. 16):

ՍՏ Նշան լսի յաստուածային գիրս, որպէս լեալ է եւ պատմի ի Հին Կտակարանս հանդերձելոց իրաց:

ԵՓ Ջոր Մովսէս արար յանապատին, զի զհաց երկնից ետ նոցա:

Ոկ. Ջի՞նչ զարմանք իցեն, եթէ առ ինեւ զայսպիսի գործս ցուցանէք, որ անծանաւթս եմ ձեզ, որ եւ առ հարբն այնչափ զփորձ առեալ զաւրութեանց:

Նշան յերկնից (Ղուկ. ԺԱ. 16):

ԻԳ Այսինքն՝ զարեգակն պաշարել կամ անդրէն յետս ձգել: Կամ տարակուսեալ ոմանք առ այս ասէին. «Դեւք յերկինս հանել ո՛չ կարեն, ցոյց մեզ անտի նշան»:

Իբրեւ գիտաց զխորհուրդս նոցա (Ղուկ. ԺԱ. 17):

Ոկ Ջայս յառաջագոյն բամբասեցին: Այլ յայնժամ ո՛չ սաստեաց, զի տացէ նոցա ի նշանացն իմանալ զզաւրութիւն նորա, բայց նոքա ի նոյն յաճախէին: Ապա սաստէ եւս եւ զաստուածութիւնն իւր ցուցանէ, որով զծածուկս սրտից նոցա ի մէջ բերէ:



Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ աւերի (Ղուկ. ԺԱ. 17):

Ի ծանաւթից բերէ աւրինակս: Թէպէտեւ յերկրի զաւրագոյն քան զթագաւորութիւնն ո՛չ գոյ, սակայն կորնչելոց է, յորժամ անձամ[բ] ընդ անձին հարկանիցի:

Տուն բարժանել յանձն՝ կործանի (Ղուկ. ԺԱ. 17):

Ապա զի՞ եւս զտանէ կամ զքաղաքէ ճառիցես:

Ոկ. Թէպէտեւ փոքր կամ բնաւ մեծ ոք իցէ եւ ընդ անձինն կռուիցի, կորնչելոց է:

Ապա թէ սաքանայ բաժանեցաւ յայնձնէ, զիա՞րդ կա[յ]ցէ թագաւորութիւն նորա (Ղուկ. ԺԱ. 18):

ԻԳ. Սատանայ ընդ անձին պատերազմող ո՛չ տայ ցրուել զիւրան, այլ ժողովէ զաւրանալ, զի մի՛ տկարասցի:

Որդիքն ձեր ի՞նչ հանիցեն (Ղուկ. ԺԱ. 19):

Ապա յաշակերտացն զի՞նչ ունիք ասել, զի նոքա անուամբ իմով զնոյն գործեն:

Նոքա եղիցին ձեզ դաքաւորք (Ղուկ. ԺԱ. 19):

Զի որդիք ձեր են եւ ո՛չ ախտացան զձերդ:

Իսկ եթէ մաքամքն Աստուծոյ հանեմ զդուս (Ղուկ. ԺԱ. 20):

ՈԿ. Յայտ արարեալ, եթէ մեծի զաւրութեան է հանել զդուս եւ ո՛չ գոյզն ինչ շնորհաց:

ԻԳ. Զհոգին անուանեաց մատն, զոր Մատթէոս «Հոգևովն Աստուծոյ» (Մաթթ. ԺԲ. 28) ասէ, եւ վասն նոյն էութեանն միութեան եցոյց:

Ապա հասեալ է ի վերայ ձեր արքայութիւն] Աստուծոյ (Ղուկ. ԺԱ. 20):

Ոկ. Տե՛ս, զիա՞րդ միւս անգամ բժշկէ զնոսա եւ անէ յիւր զիտութիւնն: Յայտ առնէ, թէ ընդ իւրեանց բարիսն մարտնչէին: Զի զոր մարգարէքն յառաջագոյն գուշակէին, եկն եհաս ժամանակ բարութեան ձեր: Եւ կայ առ դուրս Որդին Աստուծոյ, եւ դուք հակառակ նորին գործէք: Ո՛չ միայն ո՛չ ընդունիք, այլեւ ընդդէմ բախէք եւս:

ԻԳ. Եհաս Աստուծոյ թագաւորութիւն բառնալ զմահու իշխանութիւն, եւ զձեզ կամի հաւատով ժողովել յազատութիւն կամ անհաւատութեամբ ցրուել եւ ընդ դուսն պատժել:

Նգար վառեալ պահիցէ զպուն իւր (Ղուկ. ԺԱ. 21):

ՍՏ. Հզաւր զ[ը]նդդիմակացսն Աստուծոյ ասաց, զոր նոքա Բեւղզեբեղ կոչէին իշխան դիւացն զէն նորա եւ տուն՝ զպաշտանեայս նորա, յորս բնակէ: Զի որպէս տուն եւ տաճար Քրիստոսի, զայն, որ բնակէ Քրիստոս, ասէ: «Բնակեցայց ի նոսա եւ գնացից» (Բ. Կորնթ. Զ. 16)՝ ասէ եւ երանելին Պաւղոս, որոյ տունն մեք եմք:

Եթէ հզարագոյն քան զնա եկեալ յաղթիցէ զսպառազ[ինութիւնն] (Ղուկ. ԺԱ. 22):

ՈԿ. Եւ չէ հնար այլ ինչ հանելոյն, եթէ ո՛չ նախ նմա յաղթիցէ: Եւ այս ամենեցուն իսկ յայտ է, եւ այսու մեծ առաւելութեամբ եւ զառաջինսն իսկ հաստատէ: «Այնչափ, ասէ, ո՛չ զաւրավիզն առնում զսատանայ, այլեւ կապեմ իմով իշխանութեամբ եւ զկազմած նորա յափշտակեմ»:

Որ ո՛չ ընդ իս է, հակառակ իմ է (Ղուկ. ԺԱ. 23):

Ես, ասէ, կամիմ առ Աստուած մերձեցուցանել եւ առաքինութիւն ուսուցանել եւ արքայութիւն խոստանալ: Եւ սատանայ եւ դեւք՝ զհակառակ նորին: Եւ զիա՞րդ, որ ո՛չ ընդ իս ժողովիցէ, ընդ իս իցէ, կամ իմ գործակից լինելոց իցէ, զի նա զրահանք եւս լինի եւ զիմ միաբանեալսն ցրուէ:

Եւ որ ո՛չ ժողովէ ընդ իս՝ ցր[ուէ] (տես Ղուկ. ԺԱ. 23):

ՍԳ. Որ ոք ժողովէ բանիւ եւ ճշմարտութեամբ եւ զաւրութեամբ եւ լուսով, որ է Քրիստոս, այնպիսին ո՛չ կորուսանէ: Իսկ որ առանց բանի եւ լուսոյ եւ իմաստութեան ժողովէ, այնպիսին իրաւապէս ցրուէ:

ԻԳ. Իսկ որ հակառակ աստուածային իշխանութեանն ժողովէ՝ կորուսանէ:





16. ԱՌԱՋԻՆ ԲԱԶՄԱՅՈՒՄՆ ՆԿԱՆԱԿԱՅ ԵՒ ԶԿԱՆՑ.

ԿԵՐԱԿՐՈՒՄՆ ՏԻՆԳ ՎԱԶԱՐԻ

Մապթէոս ԺԴ. 13-21

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՍԻՒՆԵՅԻ

(Գլուխ Թ)

Եւ լուեալ Յիսուս գնաց նաւու անրի յանապապ փեղիս առանձինն (Մապթ. ԺԴ. 13):

Յետ սպանանելոյ մարգարէին, բանն զնայ ի հեթանոսս, որք զհետ նորա երթան. յորս գթաց եւ բժշկեաց զհիւանդս նոցա, իրաւապէս նախ բժշկեաց զհիւանդս ամբոխին եւ ապա կերակրեաց հացիւ եւ ձկամբ, զի մի լուծցին ի ճանապարհի:

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՎ ԵՓՐԵՄ

Եւ իբրեւ լուալ Յիսուս գնաց յանապապ փեղի առանձինն (Մապթ. ԺԴ. 13):

Տե՛ս զիա՞րդ ամենուրէք թողու զբազմութիւնն եւ խոյս տայ, յորժամ յատնեցաւ Յովհաննէս եւ յորժամ սպանաւ եւ յորժամ հրէայքն լսան, թէ զբազումս աշակերտէ: Քանզի բազում ինչ մարդկաւրէն կամի մատակարարել, զի չեւ եւս էր ժամանակ մերկանալ յայտնի զԱստուածութիւնն: Նաեւ աշակերտացն պատուիրէր մի՛ ումէք ասել, թէ նայ իցէ Քրիստոսն, քանզի յետ յարութեանն կամէր յայտնել զայն: «Խոյս ետ, ասէ, անրի» (հմմտ. Մապթ. ԺԴ. 13): Ոչ ի քաղաք ուրեք, այլ յանապատ տեղին: Եւ ի նաւ մտանէ, զի մի ոք թախանձիցէ երթալ զհետ նորա: Եւ դու մի՛տ դիր, զի արդ եւ Յովհաննու աշակերտքն տակաւ ընդանեցան նմայ: Քանզի զիրան, որ գործեցան, ինքեանք պատմեցին եւ զամենայն թողին եւ առ նա զիմեցին եւ այն ի վշտացն եւ յառաջին պատասխանեացն յարդար էր:

Եւ ընդէ՞ր ո՛չ նախ քան զպատմելն խոյս ետ տեղւոջն: Թէպէտ եւ զիտէր իսկ յառաջագոյն մինչեւ նոցա պատմեալ էր, այլ զի ամենայնիւք զտնտեսութիւնն զճշմարտութիւն հաստատիցէ: Բայց

ժողովուրդքն իբրեւ բեւեռեալք ընդ նմայ երթային զհետ նորա: Զի այնպիսի իսկ է գութն, նոյնպիսի (բ) սէրն ամենայնի յաղթէ եւ զամենայն դանդաղանս ի բաց փարատէ, վասն որոյ եւ զհատուցումն վաղվաղակի անտէն առնուին:

Եւ, ասէ, Յիսուս եւ երես ժողովուրդս բազումս գթացաւ ի նոսա եւ բժշկեաց զհիւանդս նոցա (հմմտ. Մապթ. ԺԴ. 14): Զի թէպէտ բազում էր փոյթն հանապազորդ մարդկանն, այլ նորա երախտիքն անցանէին քան զամենայն, վասն որոյ եւ պատճառս այնպիսի բժշկութեան զողորմութիւնն զնէ, բժշկէր բազումս եւ զհաւատս ինչ ոչ պահանջէր անդ: Քանզի զհետն երթալ եւ զքաղաքսն թողուլ զհաւատսն յայտ առնեն: Կամէր եւ կերակրել զնոսա: Եւ ոչ անձամբ ինչ առնէ, այլ անսաց եւ աղաչելոյ որպէս յառաջագոյնն ասացի: Ամենայն ուրէք եւ այնմ եւէթ ուշ ունի, զի մի կարծիցի եթէ ընդյառաջ ինչ երթայցէ սքանչելեացն, այլ յորժամ կոչիցի:

Եւ իբրեւ երեկոյ եղեւ մաքեան ասէ աշակերտքն եւ ասեն, փեղիս անապապ է եւ ժամս՝ փարաժամեալ, արձակեաց զժողովուրդ (հմմտ. Մապթ. ԺԴ. 15):

Քանզի մինչեւ ցերեկոյն վարդապետութեամբ զհոգիս նոցա բժշկեաց: Իսկ մարմնաւոր առողջութեանց ոչ ինչ արար պետ, քանզի իւրաքանչիւր ոք յախտաժետացն զկարիս ցաւ(ոց իւրոց ընդ անձին ունէր, զի թէ բժշկեալ էին, ինքեանք իսկ խնդրէին զտեղի աւթեւանացն: Իսկ աշակերտքն որ աղաչէին, թէ արձակեաց, թէպէտ վասն հացի յուշ արարին, այլ զբժշկութիւն ախտաժետացն խնդրէին:

Դուք, ասէ, փուք դոցա ուրել (Մապթ. ԺԴ. 15):

Եւ ո՛չ ասաց, եթէ ես տաց, այլ, թէ՛ դուք: Քանզի դեռես իբրեւ ընդ մարդ հայէին ընդ նայ: Բայց նոքա եւ առ այն, ոչ ինչ ընդոստեան, այլ տակաւին իբրեւ ընդ մարդ խաւսէին:

Չունինք ինչ, ասէին, բայց հինգ նկանակ միայն, եւ երկուս ձկունս (տնս Մապթ. ԺԴ. 15):

Քանզի ափեալ էին սիրտք նոցա եւ դեռ ընդ երկիր քարչէին, ապա այնուհետեւ զիւր զաւրութիւնն յայտ արարեալ, առ ժամայն



զամենայն կարիս հիւանդացն բժշկէր: Եւ աշակերտացն հրամայէ բերել զնկանակսն: «Թէպէտ տեղիս, ասէ, անապատ է» (Իմմար. Մարթ. ԺԴ. 13), այլ որ զամենայն աշխարհս կերակրէ աստէ եւ թէ ժամս տարածամեալ է, այլ չէ ընդ ժամանակաւ որ ընդ ձեզդ խաւսի: Իսկ Յովհաննէս եւ զարեղէն ասէ զնկանակսն (Կրն՝ Յովհ. Զ. 9): Եւ ոչ դատարկ ինչ, այլ զի յաճախութիւն բազում խորտկացն ուսուցանէ արհամարհել մեզ այսպիսի ինչ եւ մարգարէիցն սեղանքն էին: Եւ հրամայեաց զմարդիքն բազմեցուցանել ի վերա խոտոյ եւ առեալ զհինգ նկանակսն հայեցաւ յերկինս աւրհնեաց: Եւ յական թաւթափել բազմացոյց զնա: Զի զայն ինչ զոր առնեն եւ շրջին Ժ. ամիսք՝ վաստակաւ եւ աշխատութեամբ, Ժ. մատուցն նորա վաղվաղակի արարին: Եղ զձեռս իւր ի ներքոյ հացին, իբրեւ զերկիր եւ խաւսեցաւ ի վերա նորա իբրեւ զորոտումն եւ շարժեալ շրթանցն ցանեաց ի վերա նոցա իբրեւ զանձրեւ եւ շոգի բերանոյ նորա ի տեղի արեւու եւ պսակեալ կատարեաց սրբութեամբ սուրբ ժամուն, զոր ինչ ընդ երկար ամառն առնէ:

[Հարց.] Եւ ընդէ՞ր հայեցաւ յերկինս ապայ աւրհնեաց:

[Պատասխանի] Զի պարտ էր նմա հաւատարիմ լինել, թէ ի Հաւրէ է եւ զուգական Նորին: Ի փորքուն ընդ երկինս նայի եւ զմեծամեծսն ամենայն իշխանութեամբ առնէ, զի ուսուցիս, եթէ ի փորքունս ոչ եթէ զաւրութիւն ինչ առնուցու, զայն առնէ, այլ զի զձնողն պատուեցցէ, որպէս որդ[ւ]ոյ պատշաճ է պատուել:

Յորժամ զմեղսն եթող եւ զդրախտ եբաց եւ զաւազակն եմոյժ եւ բազում յաճախութեամբ զհին աւրհնսն ելոյժ եւ զանչափ մեռեալս յարոյց եւ զծով կարկեաց եւ զծածուկս փարիսացւոցն յայտնեաց եւ զաչս կուրին ստեղծ, որ Աստուծոյ միայն գործ է եւ ոչ այլ ումէք. ո՛չ երբեք երեւի թէ աղաչաւք առնէր: Եւ յորժամ զնկանակսն աճեցուցանել կամէր, որ կարի փոքր էին, քան զայս, ամենայն յայժամ ընդ յերկինս նայէր, զի եւ զոր յառաջագոյնն ասացի արդար էր միանգամայն, եւ ուսուցանէր իսկ զմեզ մի մատչելի սեղանն, եթէ ոչ նախ ընդ երկինս նայեցեալ, գոհանայցեմք զԱստուծոյ, որ զկերակուրն շնորհէ մեզ: Եւ ընդէ՞ր ո՛չ յոչնչէ արար զի զՄարկիոն եւ զնմանէ այն կարկեացէ զբերանս, որք աւտար իմն ի նմանէ համարին զարարածս, զի գործովքն յայտ առնիցի, թէ ամենայն երեւելիքս Նորին արարածք եւ գործք են: Արդ, հացն զսակաւութիւնն իւր մոռանայր եւ ի միջոյ սակաւութեանն բազմութիւնն

ծնանէր, զի նմանեցէ այնմ, որ աւրհնեաց զառաջինն եւ ասէ՝ աճեցէ՛ք եւ բա[զմացարուք] (Կրն՝ Ծնող. Ա. 22), զի նկանակքն՝ իբրեւ զամուլս եւ զանորդիս, աճեցին աւրհնութեամբ Նորա եւ բազմացան նշանաւք, որ ի նոցանէ ծնան: Զի այնու նշանակ իցէ, թէ ծովու եւ ցամաքի նա է Տէր, եւ որ ինչ յանապատին զարմանալի թւէր հրէիցն եւ ասէին, թէ մի՞թէ հաց կարիցէ տալ եւ պատրաստել սեղան յանապատիս: Զայն եկեալ Տէրն աստ ցուցանէր արդեամբ: Վասն այնորիկ իսկ եւ յանապատսն հանէր, զի առանց բազում կարծեաց նայիցին սքանչելիքն, եւ մի ոք համարիցի եթէ մաւտաւոր գեւղիցն բերէին կարգէին զայն ամենայն սեղանսն: Վասն այնորիկ ո՛չ միայն զտեղիսն այլեւ զժամանակն նշանակէ: Եւ այլ իմն զգաստութիւն զաշակերտացն ուսանիմք, եթէ ոչինչ համարէին այնուհետեւ զկերակուր, զի երկոտասան այր յանապատին հինգ եւ եւթն նկանակ (Կրն՝ Մարթ. ԺԵ. 34) եւ երկու ձկունս ունելով շատանային: Զի այնպէս ոչ պետս առնէին մարմնականացս եւ միայն հոգեւորացն կային պատկա[ն]: Նաեւ ի սակաւն ոչ խնա[յ]էին, զի յորժամ խնդրեաց վաղվաղակի բերին ի մէնջ:

Այլոց նշանացն ունէին բազում նշանակս. բայց զաւր հանդէս չեւ եւս էին առեալ, վասն այնորիկ յորժամ եհատ զնկանակսն աշակերտասացն բաշխել, զի այնու եւս պատ[ո]ւեցցէ զնոսս եւ ոչ միայն վասն պատուելոյ: Այլ եւ յորժամ նշանն լինիցի եւ անցանիցէ, մի՛ մոռանայցեն: Երեկ եւ ետ ցաշակերտսն, եւ նոքա արկին ժողովրդոցն:

Զհինգ նկանակսն երեկ եւ ետ: Եւ Ե.(Հինգ)ն ի նոցա ձեռսն բխէին եւ աճէին եւ ոչ այնչափ միայն, այլեւ յաւելուածս: Եւ սատարեցոյց զարձեալ զզաւրութիւն բանին իւրոյ առ հրամայեցեալսն եւ զարագութիւն պարգեւաց իւրոց առ առողս նորա, այլ ո՛չ որչափ ի կարող էր բազմացուցանել զհացն: Այնպէս բազմացոյց այլ որչափ բաւական էր կերողացն յազ ուտել:

Զի՞ կշռեց աննշանքն ընդ քաղցի Ռ.(Հազար)ացն եւ յաղթեցին նմայ թիւ ԲԺ.(երկոտաս)ան սակառաց: Առ ամենայն արուեստագէտս ցանկութիւն կարաւտելոցն բազմագոյն է, քան զաւրութիւն արուեստագիտացն, զի ոչ թէ որպէս կարաւտեալքն ցանկան, այնչափ կարեն առնել արուեսագէտքն, բայց Աստուծոյ, առաւելագոյն է արարչութիւնն նորա, քան զկարաւտելոցն փափագ եւ արդ որով բանիւ ոք կարէ զհանգամանս իրացն ցուցանել, զիա՞րդ աճէր



Հացն եւ բխէր յայնչափ բազմութիւն յանապատին եւ կամ զիւրօր լինէր այչափ մարդիկ բաւական, քանզի հինգ հարիւր այր էին թող զկանայս եւ մանկտի եւ մեծ գոփութիւն ժողովրդոցն այն էին, զի կանամբք եւ մանկամբք եկեալ պարապէին առ նայ: Եւ իբրեւ մատեաւ Շմաւոն առնուլ, կարծեաց, թէ իւր եւեթ բաւականիցէ: Անթքն լի բազկաւք իւրովք տանէր: Եւ ի ձեռաց նորա, ո՛չ պակասէր, ո՛չ միայն ԲԺ.(երկոտաս)անքն կրէին զնշխարս աւրհնեալ Հացին, այլեւ Հ.(եւթանասո)ւնքն, ի ձեռան նոցա ածէր եւ ի մէջ բազմականաց բազմանայր: Եւ ի բանէ Որդւոյ աւծելո[յ], որ ասէր, թէ քանի ածէր, անոյչ էր Հաց անապատին, քան զմանանայ անապատին: Մանանայն այգւոյն ապականէր եւ նայ, որքան ընդ երկայրէր, անուշանայր: Ո՛չ ունէին որովայնք նոցա, որչափ ունէին շալակք նոցա, չափով ունէին որովայնքն եւ առանց չափոյ բարձեալ էին ի շալակս իւրեանց: Եւ զի կերան եւ յազեցան եւ նշխարեցին եւ զնպարակս բարձին: Եւ զի ասէ ամփոփեցէք զնշխարս սեղանոյն զի մի ինչ ամենեւին կորիցէ անտի: Վասն զի մի կարծիցեն թէ առ աշաւք արար, այլ յորժամ պահեսցին նշխարքն զմի աւր եւ զգերկուս հաւատասցեն եթէ ճշմարտութեամբ արար եւ ոչ է եւս տեսիլ ընդունայն: Եւ երկոտասան սակառի յաւել զնշխարսն: Զի եւ Յուդայ ընդ նոսա բառնայցէ: Եւ զկնի նշանացն ստիպեաց վաղվաղակի զաշակերտսն մտանել ի նաւ եւ երթեալ յայնկոյս, մինչ ինք զժողովուրդսն արձակիցէ:

Յորժամ մեծ ինչ գործս գործէր մեկուսի առնէր զանձն ի ժողովրդեանէն եւ յաշակերտացն, զի զմեզ ուսուցանիցէ, մի ի բազմաց փառս ինչ խնդրել եւ մի զայլս զհետ ձգել երթալ: Եւ ասելովն, թէ ստիպեաց զաշակերտսն, զկարի հպատակութիւն աշակերտացն յայտ առնէ: Եւ ինքն ի լեառն կամեցաւ ելանել: Զի այնու եւս խրատեսցէ, մի միշտ ընդ ժողովուրդսն խառնել եւ ցանդ ի բազմութեանէն փաղչել, այլ երկոքումք ի դէպն վարիլ ուսուցուք այսուհետեւ մեք միշտ պատկառ կալ Քրիստոսի մի միայն վասն երեւելի պարգեւացն, զի մի եւ մեք եւս նախատիցիմք իբրեւ զհրեայսն: Եւ իբրեւ արձակեաց զժողովուրդն, ել ի լեառն, կալ յաղոթս:

[Հարց.] Վասն է՞ր ել ի լեառն:

[Պատասխանի.] Զի զմեզ ուսուցանիցէ, թէ բարւոք է անապատ եւ միայնութիւն յորժամ յաղաւթս կամիցիմք մատուցանել, վասն այնորիկ ստէպ յանապատսն երթայր եւ անդ հանէր բազում ան-

գամ զգլիչերն ի գլուխ յաղաւթս, առ զմեզ խրատելոյ ժամանակաւ եւ տեղեաւ, որսալ յաղաւթս զանխոտովութիւնս, քանզի մայր խաղաղութեան անապատն է եւ հանդարտութիւն ալեաց եւ նաւահանգիստ զերծուցիչ յամենայն ծփանաց: Նա վասն զայնպիսի զիրսն ուսուցանելոյ ել ի լեառն:

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՅԻ**  
(Գլուխ ԺԴ)

Եւ իբրեւ լուաւ Յիսուս, գնաց անփի նաու յանապատ փեղի առանձինն (Մարթ. ԺԴ. 13):

Ընդէ՞ր նախ քան զպատմելն ոչ գնաց ի տեղւոջէն, թէպէտեւ գիտէր յառաջագոյն: Քանզի ամենայն իրօք զտնտեսութիւնն ճշմարտել կամէր, վասն այնորիկ յորժամ մատնեցաւ Յովհաննէս եւ յորժամ սպանաւ, եւ յորժամ լուան հրէայքն, թէ զբազումս աշակերտէ, խոյս տայ, քանզի բազում ինչ մարդկօրէն կամի մատակարարել. զի չեւ էր ժամանակ մերկանալ զաստուածութեանն փառս: Վասն զի գիտէր զհնարսն սատանայի, որ ջանայր զմարդեղութեանն խորհուրդ Նորա խափանել, ուստի եւ աշակերտացն պատուիրէր մի՛ ումեք ասել, թէ Նա է Քրիստոսն, մինչեւ Որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ (հմմտ. Մարթ. ԺԶ. 20, ԺԷ. 9): Վասն այսորիկ ո՛չ ի քաղաք ուրեք, ասէ, գնաց, այլ յանապատ տեղիս. եւ ի նաւ մտանէ, զի մի՛ ոք թախանձիցէ երթալ զհետ Նորա: Իսկ առ ի միտս՝ յետ մահուանն Յովհաննու, որ է ի սպառել մարգարէիցն, գնաց Բանն ի Հեթանոսս, որք անապատ էին ի բարեաց, եւ աշակերտեաց զբազումս նաւու մարմնոյ Իւրոյ:

Իբրեւ լուան ժողովուրդքն, գնացին զհեպ Նորա հեփի ի քաղաքաց անփի (Մարթ. ԺԴ. 13):

Քանզի բեւեռեալ էին ի սէր Նորա, ընդ Նմա երթային հետիոտս, ուստի եւ ո՛չ ի մահուանէն Յովհաննու երկիւղս կրեցին, քանզի այնպիսի է գութն եւ սէրն, զի ամենայնի յաղթէ եւ զամենայն զանդաղանս ի բաց փարատէ. վասն որոյ եւ զհատուցումն անդէն առնուին, որպէս ասէ:

Եւ իբրեւ ել, երես ժողովուրդ քազում, գթացաւ ի նոսա եւ բժշկեաց զհիւանդս նոցա (Մարթ. ԺԴ. 14):



Հացն եւ բխէր յայնչափ բազմութիւն յանապատին եւ կամ զիա՞րդ լինէր այչափ մարդիկ բաւական, քանզի հինգ հարիւր այր էին թող զկանայս եւ մանկտի եւ մեծ գովութիւն ժողովրդոցն այն էին, զի կանամբք եւ մանկամբք եկեալ պարապէին առ նայ: Եւ իբրեւ մատեաւ Շմաւոն առնուլ, կարծեաց, թէ իւր եւեթ բաւականիցէ: Անթքն լի բազկաւք իւրովք տանէր: Եւ ի ձեռաց նորա, ո՛չ պակասէր, ո՛չ միայն ԲԺ. (երկոտաս) անքն կրէին զնշխարս աւրհնեալ հացին, այլեւ Հ. (եւթանասո) ւնքն, ի ձեռսն նոցա ածէր եւ ի մէջ բազմականաց բազմանայր: Եւ ի բանէ Որդւոյ աւծելո[յ], որ ասէր, թէ քանի ածէր, անոյշ էր հաց անապատին, քան զմանանայ անապատին: Մանանայն այգւոյն ապականէր եւ նայ, որքան ընդ երկայրէր, անուշանայր: Ո՛չ ունէին որովայնք նոցա, որչափ ունէին շալակք նոցա, չափով ունէին որովայնքն եւ առանց չափոյ բարձեալ էին ի շալակս իւրեանց: Եւ զի կերան եւ յագեցան եւ նշխարեցին եւ զնպարակս բարձին: Եւ զի ասէ ամփոփեցէք զնշխարս սեղանոյն զի մի ինչ ամենեւին կորիցէ անտի: Վասն զի մի կարծիցեն թէ առ աչաւք արար, այլ յորժամ պահեսցին նշխարքն զմի աւր եւ զգերկուս հաւատասցեն եթէ ճշմարտութեամբ արար եւ ոչ է եւս տեսիլ ընդունայն: Եւ երկոտասան սակաւի յաւել զնշխարսն: Զի եւ Յուդայ ընդ նոսա բառնայցէ: Եւ զկնի նշանացն ստիպեաց վաղվաղակի զաշակերտսն մտանել ի նաւ եւ երթեալ յայնկոյս, մինչ ինք զժողովուրդսն արձակիցէ:

Յորժամ մեծ ինչ գործս գործէր մեկուսի առնէր զանձն ի ժողովրդենէն եւ յաշակերտացն, զի զմեզ ուսուցանիցէ, մի ի բազմաց փառս ինչ խնդրել եւ մի զայլս զհետ ձգել երթալ: Եւ ասելովն, թէ ստիպեաց զաշակերտսն, զկարի հպատակութիւն աշակերտացն յայտ առնէ: Եւ ինքն ի լեառն կամեցաւ ելանել: Զի այնու եւս խրատեսցէ, մի միշտ ընդ ժողովուրդսն խառնել եւ ցանգ ի բազմութենէն փաղչել, այլ երկոքումք ի գէպն վարիլ ուսուցուք այսուհետեւ մեք միշտ պատկառ կալ Քրիստոսի մի միայն վասն երեւելի պարգեւացն, զի մի եւ մեք եւս նախատիցիմք իբրեւ զհրեայն: Եւ իբրեւ արձակեաց զժողովուրդն, ել ի լեառն, կալ յաղոթս:

[Հարց.] Վասն է՞ր ել ի լեառն:

[Պատասխանի.] Զի զմեզ ուսուցանիցէ, թէ բարւոք է անապատ եւ միայնութիւն յորժամ յաղաթս կամիցիմք մատուցանել, վասն այնորիկ ստէպ յանապատսն երթայր եւ անդ հանէր բազում ան-

գամ զգիշերն ի գլուխ յաղաթս, առ զմեզ խրատելոյ ժամանակաւ եւ տեղեալ, որսալ յաղաթս զանխոռովութիւնս, քանզի մայր խաղաղութեան անապատն է եւ հանդարտութիւն ալեաց եւ նաւահանգիստ զերծուցիչ յամենայն ծփանաց: Նա վասն զայնպիսի զիրսն ուսուցանելոյ ել ի լեառն:

### ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ

(Գլոխ ԺԴ)

Եւ իբրեւ լուա Յիսուս, գնաց անփի նաու յանապատ փեղի առանձինն (Մաթթ. ԺԴ. 13):

Ընդէ՞ր նախ քան զպատմելն ոչ գնաց ի տեղւոջէն, թէպէտեւ գիտէր յառաջագոյն: Քանզի ամենայն իրօք զտնտեսութիւնն ճշմարտել կամէր, վասն այնորիկ յորժամ մատնեցաւ Յովհաննէս եւ յորժամ սպանաւ, եւ յորժամ լուան հրէայքն, թէ զբազումս աշակերտէ, խոյս տայ, քանզի բազում ինչ մարդկօրէն կամի մատակարարել. զի չեւ էր ժամանակ մերկանալ զատուածութեանն փառս: Վասն զի գիտէր զհնարսն սատանայի, որ ջանայր զմարդեղութեանն խորհուրդ Նորա խափանել, ուստի եւ աշակերտացն պատուիրէր մի՛ ումեք ասել, թէ Նա է Քրիստոսն, մինչեւ Որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ (հմմտ. Մաթթ. ԺԶ. 20, ԺԷ. 9): Վասն այսորիկ ո՛չ ի քաղաք ուրեք, ասէ, գնաց, այլ յանապատ տեղիս. եւ ի նաւ մտանէ, զի մի՛ ոք թախանձիցէ երթալ զհետ Նորա: Իսկ առ ի միտս՝ յետ մահուանն Յովհաննու, որ է ի սպառել մարգարէիցն, գնաց Բանն ի Հեթանոսս, որք անապատ էին ի բարեաց, եւ աշակերտեաց զբազումս նաւու մարմնոյ Իւրոյ:

Իբրեւ լուան ժողովուրդքն, գնացին զհեպ Նորա հեփի ի քաղաքաց անփի (Մաթթ. ԺԴ. 13):

Քանզի բեւեռեալ էին ի սէր Նորա, ընդ Նմա երթային հետիոտս, ուստի եւ ո՛չ ի մահուանէն Յովհաննու երկիւղս կրեցին, քանզի այնպիսի է գութն եւ սէրն, զի ամենայնի յաղթէ եւ զամենայն զանգաղանս ի բաց փարատէ. վասն որոյ եւ զհատուցումն անդէն առնուին, որպէս ասէ.

Եւ իբրեւ ել, երես ժողովուրդ քազում, գթացաւ ի նոսա եւ բժշկեաց զհիւանդս նոցա (Մաթթ. ԺԴ. 14):



Յայտ է՝ ի նաւէ անտի, քանզի յառաջեցին քան զՆա ժողովուրդըն ցամաքան, վասն որոյ գլխացաւ ըստ բնական բարերարութեանն, քանզի թէպէտ բազում էր փոյթ հպատակութեան նոցա եւ սիրոյ, սակայն երախտիք Նորա զանցուցանէին զամենեքումբք: Վասն որոյ եւ պատճառ այսպիսի բժշկութեան զողորմութիւնն ղնէ՝ բժշկելով զբազումս եւ հաւատս ոչ պահանջելով, քանզի զհետ երթալն եւ զքաղաքսն թողուլն հաւատո՛ց նոցա էր գուշակ, վասն որոյ «բժշկեաց,- ասէ,- զհիւանդս նոցա» ըստ մտացն տգիտութեան եւ ըստ մարմնոցն տկարութեան՝ բանիւ եւ արդեամբք:

Իբրև ընդ երեկս եղև, մաքեան առ Նա աշակերտքն եւ ասեն. «Տեղիս անապար է, եւ օրս՝ փարաժամեալ, արձակեա՛ գժողովորդդ, զի երթիցեն շուրջ ի շէսնս, գնեսցեն իւրեանց կերակուրս» (Մարթ. ԺԴ. 15):

Կամք էր Տեառն մերոյ կերակրել զնոսա. որպէս զհոգիս նոցա՝ բանիւ, այսպէս եւ զմարմինսն՝ հացիւ: Բայց ո՛չ անձամբ ինչ առնէ, այլ անսայ աղաչելոյ, զի մի՛ կարծիցեն, թէ ընդ առաջ երթայցէ սքանչելեացն. այլ յորժամ կոչիցի՛. քանզի ամենայն ուրեք զայս առնէր: Վասն որոյ իբրև երեկոյ եղև, մատեան աշակերտքն: Որպէս ասացի, մինչեւ ցերեկոյն վարդապետութեամբն զհոգիս նոցա բժշկեաց, իսկ մարմնաւոր առողջութեան նոցա ոչինչ արար փոյթ, քանզի իւրաքանչիւր ոք յախտաժէտացն կարիս ցաւոց ըստ անձին ունէր, եւ թէ բժշկեալ էին, ինքեանք իսկ խնդրէին զտեղի օթեւ-վանացն: Իսկ աշակերտքն թէպէտ վասն հացի յուշ արարին թէ՛ «Արձակեա զժողովուրդսդ», այլեւ զբժշկութիւն ցաւոցն հայցէին, վասն որոյ ըստ հարցմանց նոցա տայ զպատասխանին:

Եւ ասէ Յիսուս. «Ոչինչ պիտոյ է դոցա երթալ, դո՛ւք փութ դոցա ուրեւլ» (Մարթ. ԺԴ. 16):

Ո՛վ մեծի մարդասիրութեանն. ասէ. «Ոչինչ է պիտոյ դոցա երթալ», որպէս թէ ասել՝ զբարձրագոյնն ջամբեցաք, յաղագս նուաստագունիցն ոչինչ է պէտք այլ ուրեք առաքել, «դո՛ւք տուք դոցա ուտել»: Ո՛չ ասաց եթէ՛ Ե՛ս տաց, այլ թէ՛ դո՛ւք, քանզի դեռեւս իբր ընդ մարդ հայէին. բայց նոքա առ այն ոչինչ ընդոստնուին, այլ տակաւին իբրև ընդ մարդ խօսէին:

Եւ նոքա ասեն ց՛նա. «Ոչինչ ունիմք ասար, բայց հինգ նկանակ եւ երկուս ձկունս» (Մարթ. ԺԴ. 17):

Յաղագս այսորիկ ասաց թէ՛ «Դուք տուք դոցա ուտել», զի նոքա բերանօք իւրեանց վկայէին թէ՛ «Ոչինչ ունիմք աստ». որպէս զի մեծասցի հրաշքն, եւ ոչ միայն ժողովուրդըն, այլեւ աշակերտքն օգտիցին: Եւ դարձեալ՝ թէպէտ նշանակէ, թէ ապշեալ էին սիրտք նոցա եւ ընդ երկիր քարշէին եւ յասացելոցն ոչինչ իմանային, այլ զի զյաճախութիւն խորտկացն արհամարհեալ էին, զի երկոտասան այր յանապատին հինգ նկանակ եւ երկու ձկունս ունէին, զի այնպէս անփոյթ արարեալ էին զմարմնականացն եւ հոգեւորին եւեթ պատկառ կային, վասն որոյ եւ յայն ոչ խնայեցին, զոր եւ Յովհաննէս «գարեղէն» ասէ (հմմտ. Յովհ. Զ. 9), առ ի յուսումն մեղ, թէ առաքելոցն եւ մարգարէիցն սեղանքն այսպիսիք էին: Ապա այնուհետեւ զիւր զօրութիւնն յայտ առնէ. առ ժամայն զամենայն հիւանդսն բժշկէր եւ աշակերտացն բերել հրամայէր զնկանակսն, զի յետ բժշկութեանն կերակուր պիտոյ էր, զի մի՛ լուծցին ի ճանապարհի:

Եւ ասէ ցնոսա. «Բերէ՛ք այսր զայն» (Մարթ. ԺԴ. 18):

Զի թէպէտ տեղիս անապատ է, սակայն Որ զամենայն կերակրէ՛ աստ է, եւ թէ տարածամ է օրս, այլ չէ՛ ընդ ժամանակաւ որ ընդ սոսա խօսի:

Եւ հրամայեաց բազմեցուցանել զժողովուրդն ի վերայ խտրոյ (Մարթ. ԺԴ. 19):

Նախ զօրութեամբ զհրաշսն եցոյց եւ ապա՝ արդեամբք, քանզի նստուցանելն իբրև ի սեղանի՝ յակճիոս ետ կալ ամենեցուն, եթէ կերակրելոց է զնոսա: Եւ երկրորդ՝ ի վերայ խտտոյ բազմեցուցանելովն վարժեաց, թէ ո՛չ երկնառաք մանանայիւ որպէս զհին ժողովուրդն յանապատին կերակրէ, այլ հացիւ, որ յերկրէ ելանէ եւ ի խտտոյ գոյանայ: Եւ երրորդ՝ զառօրեայ կեանսն կերողացն ուսոյց, թէ որք մարմնական հացի միայն են կարօտք, իբրև զխոտ ցամաքելոց են՝ ըստ երգոյն թէ՛ «Մարդոյ որպէս խտրոյ են ատորք իր» (Մաղմ. ճԲ. 15), եւ թէ՛ «Յամաքեցաւ խտրն» (Ես. Խ 7), սակայն «բան Տեառն մնայ յախրեան» (հմմտ. Մաղմ. ԼԲ. 11), որպէս զի ոչ միայն հացի, այլեւ բանի լինիցին փափագող:



Եւ առեալ զհինգ նկանակն եւ զերկուս ձկունս՝ հայեցաւ յերկինս, օրհնեաց եւ երեկ (Մատթ. ԺԴ. 19):

Ընդէ՞ր հայեցաւ յերկինս՝ ասիցէ ոք: Նախ՝ զի պարտ էր Նմա հաւատարիմ լինել, թէ Հօր զուգական է եւ ի Նմանէ է ծնեալ. վասն այսորիկ ի փոքունսն ընդ երկինս նայի եւ զմեծամեծսն իշխանութեամբ առնէ, զի ուսանիցիս, թէ զԾնօղն պատուեսցէ, որպէս որդւոյ է պատշաճ: Քանզի յորժամ զմեղսն եթող եւ զզրախտն եբաց աւագակին եւ բազում անգամ զհին օրէնսն ելոյծ եւ զայնչափ մեռեալս յարոյց, եւ զծովն կապեաց եւ զծածուկս փարիսեցւոցն յայտնեաց, եւ զաչս կուրին ստեղծ, որ Աստուծոյ միայն է գործ, ո՛չ երբէք երեւի, թէ ազօթիւք առնէր: Եւ յորժամ զնկանակն անեցուցանէր, որ փոքր էր քան զամենայն, ընդ երկինս նայէր. զի՞նչ այլ ինչ քան զայս ուսուցանէ, թէ համազոյգ Ծնողին իցէ: Եւ երկրորդ՝ խրատէ մի՛ մատչել ի սեղանն, այլ նախ յերկինս հայել եւ զոհանալ զԱստուծոյ, որ զկերակուրն շնորհեաց, եւ ապա՛ ճաշակել՝ բեկանելով զհացն: Բայց տարակուսելի է, թէ ընդէ՞ր ոչ յօչնչէ արար. զի զՄարկիոնի եւ զայլոց բերանսն կապեսցէ, որք օտար համարէին ի Նմանէ զարարածս, գործով յայտ առնէ, թէ ամենայն երեւելիքս Նորա ստեղծուածք են:

Եւ դարձեալ՝ զի մի՛ առաջօք կարծիցեն զհրաշսն, ի սակաւ հացի՛ցն զբազումսն անեցոյց եւ ո՛չ յօչնչէ գոյացոյց, զի յական թօթափել զայն ինչ, զոր տասն ամիսք հազիւհազ վաստակօք եւ աշխատութեամբ ծնանին, տասն մատունքն Նորա վաղվաղակի արարին: Քանզի եզ զձեռն Իւր ի ներքոյ հացին իբրեւ զերկիր եւ խօսեցաւ ի վերայ իբրեւ զորոտումն եւ ի շարժել շրթանցն ցանեաց իբր զանձրեւ, եւ շոգ ի բերանոյ Նորա եղեւ ի տեղի արեւու: Եւ պսակեալ կատարեաց սրբութեամբ նուրբ ժամուն եւ ետ կերակուր ըղձալի ամենեցուն, վասն որոյ ի ստուգութիւն իրացն օրհնեաց, ասէ, եւ երեկ, զի իմասցիս, թէ յօրհնելոյն սակաւն զբազմութիւն ծնանէր ըստ օրհնութեանն առաջնոյ, զի ասէր. «Աճեցէք եւ բազմացարուք եւ լցէք գերկիր» (Ծննդ. Ա. 28)՝ որ ի ծով եւ ի ցամաք: Որպէս զի մի՛ կարծիցէ ոք, թէ ի մօտաւոր գիւղիցն բերին կարգեցին զսեղանն, այլ յօրհնութենէ Նորա անեցան անդ յանապատի, որպէս զամուլ կանայս, եւ զի որք ասէին. «Միթէ կարիցե՞ պարբասարել սեղան յանապատի» (Մատթ. ՆԷ. 19), զայն եկեալ ցուցանէր արդեամբք:

Եւ ետ ցաշակերփսն զնկանակսն, եւ աշակերփսն՝ ժողովրդոցն (Մատթ. ԺԴ. 19):

Նախ սպասաւորօք վարեցաւ, որպէս օրէն է թագաւորաց: Եւ երկրորդ՝ յայսպիսի սքանչելեաց ետ իշխանութիւն, զոր ոչ տեսալ էին երբէք եւ ոչ արարեալ, հրամայեաց եւ նոցա առնել, թէ տեղի եւ ժամանակ պահանջեսցէ: Եւ երրորդ՝ տալով ցաշակերտսն զնկանակսն՝ հաղորդս արար զնոսա սքանչելեացն՝ պատուելով զնոսա, քանզի զայս հանդէս չեւ էին առեալ, թէպէտ յայլոց նշանաց ունէին զօրինակ: Եւ չորրորդ՝ [զի] մի՛ մոռասցին զհրաշսն, որոյ անձամբ իւրեանց սպասաւորեցին: Եւ հինգերորդ՝ զի ի բարեացն փոյթ մի՛ միայն յօժարեցին, այլ եւ գործով վճարեալ կատարեսցեն: Վեցերորդ՝ սակաւապիտութեան լինել ընկեր ուսուցանէ՛ տալ զհացն միայն ի նոսա, որպէս եւ Ռեբեկա ետ զհացն ի ձեռն Յակոբայ (հմմտ. Ծննդ. ԻԴ. 33), եւ Ինքն Տէր «զհաց մեր տուր մեզ» հրամայեաց ազօթել:

Եօթներորդ՝ առ ի միտսն՝ Ինքն է հացն կենդանի յերկնից իջեալ (հմմտ. Յովհ. Զ. 35-51), զոր աւանդեաց աշակերտացն եւ նոքօք՝ հաւատացելոցն՝ կատարել զյիշատակ Նորա մինչեւ ի կատարած աշխարհի՛ ըստ այնմ. «Զայս արարէք առ Իմոյ յիշարակի» (Ղուկ. ԻԲ. 19), եւ՝ «Քանիցս անգամ զհացս զայս ուրիցէք, զմահ Տեառն պարմնցէք, մինչեւ եկեսցէ Նա» (հմմտ. Ա. Կոր. ԺԱ. 26): Բայց քանզի զհինգ նկանակն ետ ցաշակերտսն, եւ այլն ի ձեռս նոցա անեաց, որչափ որ պիտոյ էր բազմութեանն, քանզի իբրեւ մատեաւ Շմաւոն առնուլ, կարծեաց, թէ իւր բաւական իցէ, եւ անթքն լի բազկօք իւրովք տանէր, եւ ի ձեռաց իւրոց ոչ պակասէր. նոյնպէս եւ այլոցն, որպէս զի մի՛ հեռ ի մէջ նոցա անկանիցի. քանզի ամենեքեա՛ն բաշխէին ժողովրդոցն, ո՛չ միայն երկոտասանքն, այլեւ եօթանասունքն:

Կերան ամենեքեան եւ յագեցան, եւ բարձին զնշխարս կոտորոցն երկոտասան սակաօի լի (Մատթ. ԺԴ. 20):

Ոչ այնքան ունէին որովայնք նոցա, որչափ էին ի շալակս նոցա, քանզի չափով ունէին որովայնք նոցա, եւ առանց չափոյ էին բարձեալ շալակք նոցա, վասն զի անոյշ էր հացն քան զմանանայն յանապատին: Վասն այնորիկ կերան յագ եւ բարձին եւս, նա՛ քանզի եւ մանանայն այգուց այգուց անապական (հմմտ. Ելից ԺԶ), եւ նա որքան յերկարէր, անուշանայր: Իսկ զմնացեալ կոտորսն բարձին



երկոտասան սակառի, քանզի կշռեաց Արուեստաւորն զքաղց հինգ հազարացն, եւ յաղթեցին նմա թիւ երկոտասան սակառացն: Առ ամենայն արուեստագէտս ցանկութիւն կարօտելոցն բազմագոյն է քան զգորութիւն արուեստագիտացն, զի ո՛չ ըստ տենչանաց նոցա կարեն վճարել արուեստագէտքն. բայց Աստուծոյն առաւելագոյն է արարչութիւն Նորա քան զկարօտելոցն ցանկութիւն, որպէս ամենայն ուրեք, նոյնպէս եւ աստ:

Եւ դարձեալ՝ երկոտասան սակառի յաւել զնշխարն, զի եւ Յուդա ընդ նոսա բառնայցէ: Դարձեալ՝ եւ ա՛յս ի ճշմարտութիւն նշանին, զի մի՛ առաջօք կարծեսցեն, յորժամ զմի կամ զերկու օր զնշխարեալ կոտորան պահեսցեն, հաւատասցեն, թէ ո՛չ է նա տեսիլ ընդունայն: Իսկ սակառիքն, ոմանք ասեն, թէ պաշար բարձեալ էին, իսկ այլք թէ՛ որով զհիւանդսն էին բերեալ, եւ ողջացան, նոքօք եւ զմնացորդ հացին բարձին. որ է նշանակ սա կառուցեալ մարմնոյ՝ գոյացեալ յերկոտասան անդամոց, եւ ըստանձնեալ բառնայ զգործս առաքինութեան: Ո՛չ զամենայնն, քանզի հոգւոյն է գորութիւն զկատարեալն գործել, այլ զնշխարս մնացորդաց հոգւոյն վարուց. միանգամայն եւ հաղորդի կենդանարարն հացի:

Եւ որք կերանն՝ էին արք իբրեւ հինգ հազար, թող զկանայս եւ զմանկտի (Մատթ. ԺԴ. 21):

Զարմացմամբ զթիւ հազարացն զրէ աւետարանիչս, թէ ի հինգ հացիցն հինգ հազար արքն կերան եւ յագեցան, եւ յաւելաւ եւս: Բայց մեծ գովութիւն էր այս ժողովրդեանն, զի կանամբք եւ մանկտեօք եկեալ դեգերէին առ Նմա:

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՅԻ**

(Չորրորդ հապոր, գլուխ ԺԱ.)

**ՎԱՍՆ ԿՐԻՍՏՈՍ ԵՎ ԵՎԵՆՏԻՆ**

Իբրեւ ընդ երեկս եղեւ, մատեան առ նա աշակերտքն՝ եւ ասեն. «Տեղիս անապատ է եւ օրս տարածամեալ, արձակեայ զժողովուրդսդ» (տե՛ն Մատթ. ԺԴ. 15):

Մինչ եւ ցայն քարոզութեամբ զհոգիս նոցա բժշկեաց, ապա՝ զմարմինսն: Նախ, զի դժուարին էր բժշկել զհոգին: Երկրորդ՝ զի պատուական է հոգին քան զմարմինն եւ առաքեալքն իբր ի մարդ

հայէին եւ խօսէին: Եւ ոչ զիտէին, թէ նա է, որ զամենայն աշխարհս կերակրէ եւ ինքն է արարիչ ժամանակաց, ոչ տեղոյ կարօտի եւ ոչ ժամանակաց: Իսկ Յովհաննէս ասէ. «Է՛ պարանեակ մի եւ ունի Ե. գարնդէն նկանակ» (տե՛ս Յովհ. Զ. 9: Պատանեակն, որ ունէր զնականակն եւ զձկունս, ցուցանէ, թէ որ արի եւ առոյգ են հոգւով: Նոքա ունին զԵ. զգայարանս սուրբ եւ զհոգի եւ զմարմին ցամաք ի գիծութեանց կոնդացոյ:

Հարց. Վասն է՞ր գարեղէն:

Պատասխանի. Վեց իմն ցուցանէ: Նախ՝ թէ ոչ էր ժողովեալ այնչափ բազմութիւն գարեղէն հացի: Երկրորդէ ցուցանէ մեզ, թէ պարտ է զամենայն խորտիկս արհամարհել: Երրորդ՝ զի եւ մարգարէին սեղանքն նոյն լին էր, որպէս Եղային եւ այլոց: Չորրորդ՝ զի գարին սխալական է եւ թերի ի լինել ցորեան, որպէս արծաթ թերի ունի զեփիլն ի գոլ ոսկոյ, ցուցանէ զթերութիւն հրէիցն, վասն որոյ ետ նոցա: Հինգերորդ՝ գարին երկպառակ է՝ մերթ մարդոյ եւ մերթ անասնոյ լինի կերակուր, ցուցանէ զհրեայսն: Երբեմնի տես սքանչելեացն բարէմիտ լինէին առ Քրիստոս եւ յետ այնորիկ անբան եւ չար խորհրդով զգածեալք: Վեցերորդ՝ աղքատաց ու սովելոց է կերակուր, ցուցանէ, թէ սովիլ կամէին յաստուածային իմաստից եւ զրկիլ՝ ի պատուական մարմնոյ Տեառն:

Հարց. Վասն է՞ր առ ի ձեռն:

Պատասխանի. Այս եւս վասն Զ. պատճառի, Քրիստոս իւր ձեռամբն էառ հացն: Առաջին առ ի ցուցանել, զի իւրով գորութեամբն լինէր սքանչելիքս այս: Երկրորդ՝ առ ի յայտնել, զի յոյժ էր ունէր առ աշակերտս իւր եւ առ ժողովուրդս: Երրորդ՝ առ ի տալ օրինակ խոնարհութեան: Չորրորդ՝ առ ի ցուցանել, զի ինքն էր աղբիւր բարեաց, շնորհաբաշխ լինէր զպարգեւ Աստուծոյ: Հինգերորդ՝ զի ցուցցէ զկարգաւորութիւն քահանայական աստիճանաց: Զի նախ լինի շնորհաբաշխութիւն յեպիսկոպոսս, ու ապա ի քահանայն եւ ըստ կարգին: Վեցերորդ՝ փոխանակ Ժ. ամսոց վաստակոցն Ժ. մատուց նորա եւ ձեռն ի ներքոյ հացին իբրեւ զերկիր եւ խօսքն ի վերայ իբր եւ զորոտումն եւ շարժումն շրթանցն իբրեւ զանձրՆւ ու շոգի բերանոյն իբրեւ զարեւ: Եւ առանց ապականութեան անեցոյց զհացն:



## ՎԱՍՆ ԱՃԵԼՈՅ ՆԱՅԻՆ

Հարց. Վասն է՞ր ոչ նոր հաց ստեղծ, այլ զհինն աճեցոյց:

Պատասխանի. Նախ՝ առ յայտնութիւն այսմ սքանչելեաց, զի թէ նոր էր ստեղծեալ. կարէին ասել թէ ունէր ի ծածուկ: Երկրորդ՝ առ ի յանդիմանել զմոլութիւն Մարկիոնի եւ նմանեաց նորա, որ զամենայն մարմնական իրս չար ասէին եւ ի սատանայէ եղեալ: Իսկ Քրիստոս յաճեցուցանելն եցոյց զբնութիւն նորա բարի գոյ: Երրորդ՝ առ ի ցուցանել զի յիշխանութիւն իւր ի վերա արարածոցս: Չորրորդ՝ առ ի ցուցանել զի ոչ էր եկեալ նոր իրս ստեղծնուլ, այլ կատարել եւ նորոգել զառաջին գլուխ լինելութեան աշխարհի: Հինգերորդ՝ ցուցանէ, թէ նոյն Աստուածն է, որ աւրհնեաց զառաջինն եւ ասաց. «Աճեցէ՛ք եւ բազմացարու՛ք եւ [19էք զօրսդ որ ի ծովս. եւ թռչունքդ բազմացին ի վերայ երկրի]» (տե՛ս Ծննդ. Ա. 22): Վեցերորդ՝ նկանակն ցուցանէ զամենայն ուլսն, որպէս Սառայ, Աննայ եւ Եղիսաբէթ, որ օրհնութեամբ աճեցին, եւ ծնունդք նոցա բազմացան զանազան շնորհօք: Եւթներորդ՝ ցուցանէ, թէ ամենագոր Տէր՝ ծովու եւ ցամաքի: Եւ նոքա յերկար ժամանակաւ, իսկ Նա յականթօթափելն բազմացոյց: Ութերորդ՝ զի այսու ցուցանիցէ զաճումն քրիստոնէական իմաստութեան եւ վարդապետութեան եւ շնորհաց, զոր ի մէջ եկեղեցոյ արար եւ առնէ միշտ քանզի ի սակաւ գրոց եւ ի խորհրդոց անբաւ շնորհ եւ իմաստութիւն աճեցոյց: Իններորդ՝ առ ի ցուցանել, զի ի միոյ աղբերէ աստուածային պարզեւք ելանեն եւ իբր բեկանելով բաժանին յայլս: Եւ վասն այն յորժամ զմարմինն իւր ետ աշակերտացն, զհացն <զ>այն երեկ եւ զկնի յարութեանն ետ ծանօթս ի բեկանել հացին: Տասներորդ՝ առ ի ցուցանել, զի սեռ մարդկային ի գործ շնորհաց, որ զմեզ կերակրէ իբրեւ նիւթականաբար գործակցէ՝ տալով սրտի մեր եւ մարմնոյ: Ե. զգայարանք իբր զհինգ հացս եւ զհանճար եւ զկամս իբր Բ. ձկունս, յորոց ձեւացուցանէ եւ առնէ պէսպէս պարզեւս ի գործս առաքինութեան: Եւ առ ի զայս ցուցանել վայելչաբար: Զի մի ոմն ժողովրդեանէն զայս Ե. նկանակ եւ Բ. ձկունս ետ Քրիստոսի, եւ ապա Քրիստոս աճեցայց:

Հարց. Վասն է՞ր յերկինս նայելով զոհացաւ եւ ապա օրհնեաց:

Պատասխանի. Վասն Դ. պատճառի: Նախ՝ ցուցանէ եթէ պատճառ ունի զՀայր եւ հաւասար է Նմա: Վասն որոյ պատուէ զծնողն եւ զսքանչելիսն գործէ: Երկրորդ՝ ցուցանէ, թէ հնազանդ եւ համակամ է ընդ հօր եւ ոչ, որպէս նոքա կարծէին, հակառակ Աստու-

ծոյ: Երրորդ՝ զի թողցէ մեզ օրինակ, յորժամ կերակրիցիմք. նախ զոհացուք զտուողէն պարզեւաց եւ ապա ճաշակեսցուք: Չորրորդ՝ <ի> յօրինակ մեզ. զամենայն գործ զոր առնեմք, մանաւանդ զհոգեւոր, որն պարտիմք զոհութեամբ եւ օգնութեամբն Աստուծոյ կատարեալ: Իսկ օրհնելն վասն հասարակաց պարզեւաց է, եւ զոհանալն՝ վասն նոր եւ առանձնակի շնորհաց: Եւ տե՛ս ի մեծամեծ սքանչելիսն ո՛չ աղաւթէ, որպէս յորժամ զմեզսն եթող եւ զմեռեալսն յարոյց եւ կուրին աչս եստեղծ եւ ծովուն սաստեաց եւ այլն: Իսկ աստ՝ փոքրէ, աղօթէ, զի մի գիտացես, թէ զօրութիւն ինչ առնուցու, այլ զի պատուէ զԾնողն որպէս ասացաք:

Հարց. Վասն է՞ր է այս փոքր:

Պատասխանի. Զի եւ արուեստաւորք կարեն զգործս աճեցուցանել: Նոյնպէս եւ բնութիւնն: Այլ բազում նիւթ խնդրէն եւ բազում ժամանակս, այլ այս սակաւ հացս ի սուղ ժամանակի աճեաց:

Հարց. Վասն է՞ր յանապատս աճեցոյց եւ ոչ ի քաղաքի:

Պատասխանի. Վասն Զ. պատճառի: Նախ՝ թէ ի քաղաքի էր եղեալ, կարէին ասել, թէ ծածկաբար ի տանէ ունէին զհացն: Երկրորդ՝ վասն պիտոյից ժողովրդեանն, զի ի քաղաքս հաց կարէին գտանել: Երրորդ՝ ի բառնալ զկարծիս փառասիրութեան ախտի: Չորրորդ՝ առ ի փորձել զհաւատս եւ զընթրմութիւն ժողովրդեանն, զի որ վասն սիրոյն Քրիստոսի չժամանեցին կերակուր առնուլ եւ զնացին զկնի Քրիստոսի յանապատ: Վասն այն արժանի եղեն ի նմանէ կերակրիլ: Հինգերորդ՝ զառ ի համեմատութիւն այսմ սքանչելեաց Հնոյն: Որ յանապատին մանանայիւն կերակրեաց եւ ասէին՝ մի՞թէ կարիցէ հաց պատրաստել մեզ, աստ եցոյց արդեամբ: Վեցերորդ՝ առ ի ցուցանել, թէ որք փախչին յաշխարհի եւ հետեւին Քրիստոսի կամաւոր աղքատութեամբ, ամենայն պիտոյք նոցա պարզեւեալ լինի:

Հարց. Վասն է՞ր նստեցոյց զնոսա ըստ կարգի:

Պատասխանի. Վասն Դ. պատճառի: Նախ՝ զի մի խառնեցին զմիմեամբք, այլ նստցին եւ համեստութեամբ տեսցեն զսքանչելիսն: Երկրորդ՝ զի իմացին, թէ վասն կերակրոյ նստուցանէ եւ ապա՝ յուսով եւ ակնկալութեամբ կերակրեսցին: Երրորդ՝ ուսուցանէ, թէ զամենայն բան կարգաւորութեամբ պարտ է առնել: Չորրորդ՝ ուսուցանէ, թէ պարտ է մեզ նստել եւ ապա ուտել հաց: Իւրաքանչիւր առաքեալ մին զաս յիսնոց կերակրէր, որպէս ասէ



մեկնիչն: Եւ թէ միայն ԲԺ. (երկոտասան)քն էին, մին առաքեալն Թ. (9) դաս յիսնից բաշխէր:

Հարց. Վասն է՞ր ի վերա խոտոյ:

Պատասխանի. Վասն Զ. պատճառի զդալար խոտն յիշէ: Նախ՝ զի ցուցցէ զխոնարհութիւն, զի ի վերայ խոտոյ եւ ոչ յայլ ինչ կարասոյ նստան: Երկրորդ՝ զի յայսմանէ ուսցիմք, որ յայսպիսի տեղս ի դեմս Քրիստոսի, այսինքն՝ ի ժամ պատարագին յեկեղեցին կամ ի ժամատեղ եւ կամ վարդապետ ի քարոզութեան եւ յայլ հոգեւոր գործ ոչ է պարտ ի վերա ոստայնի կանգնել կամ նստել: Երրորդ՝ զի ուսուցցէ առաքելոցն, թէ որպէս խոտն ի ջրոյն դալարի եւ կանաչի եւ ծաղկի, սոյնպէս պարտ է ձեզ ուղղանել զհոգիս մարդկան աւետարանաւն եւ ծաղկին առաքինութեամբ: Չորրորդ՝ զի որպէս խոտն յետոյ անցանէր փութով եւ չորանայր, նոյնպէս ազգն հրէից մին Քրիստոս էր ի մէջ նոցա, զուարճացեալ էին եւ դալարեալ: Իսկ յորժամ ոչ հաւատացին Քրիստոսի, չորացան ի հաւատոցն նորա: Հինգերորդ՝ նշանակէ զչորս ի մարդկանէ, թէ պատառ ժամանակ մի վայելեն, ուտելով եւ ըմպելով այլ փութով անցանին որպէս խոտ, ըստ այնմ՝ որպէս զխոտ վաղվաղակի չարքն կորցեն եւ լինին ճարակ հրոյն յաւիտենից: Վեցերորդ՝ ուսուցանէ զամենայն կեանս մեր որպէս զխոտոյ, ըստ նմա՝ մարդոյ որպէս խոտոյ] են աւուրք:

Հարց. Զի՞նչ նշանակէ Ե. նկանակն եւ Բ. ձկունք:

Պատասխանի. Նախ՝ զպարկեշտութիւն առաքելոցն, որ Ե. կամ է. նկանակաւ շատանային եւ սակաւ ձկամբ ԲԺ. (երկոտասան)ն այր, զի միայն հոգեւորին էին պարապեալ: Դարձեալ առ մեզ Ե. նկանակն նշանակէ զԵ. զգայութիւնս եւ որպէս նոքա աճելովն եղեն կերակուր սովեցելոցն, սոյնպես որ աճեն Ե. զգայութեամբն <ի> յառաքինութիւն, նոքա զքաղցեալ հոգիս մարդկան կերակրեն բարութեամբ: Եւ որպէս Բ. ձուկն ցամաքեալ եւ մեռեալ, ի ջրոյն եղեն կերակուրք, այսպէս՝ որք զամաքեալ եւ մեռեալ լինին ի զիջական ախտէ, նոքա լինին բանաւորաց կերակուր եւ այլն ասացաւ նախ:

Հարց. Վասն է՞ր առաքեալքն բերին:

Պատասխանի. Նախ՝ զի պատուէ զնա: Երկրորդ՝ զի մի՛ մոռացին զնշանն:

Հարց. Յո՞յր ձեռս աճէր Հացն:

Պատասխանի. Ոմանք ասեն՝ ի ձեռս առաքելոցն, որպէս այժմ սարկաւագունք զնշխարն բաժանեն: Այլ այս սուտ է, զի Քրիստոսի էր նշանքն: Ոմանք ասեն՝ միայն ի ձեռն Քրիստոսի: Այլ որ ճիշտն է՝ ասէ սուրբն Եփրեմ, թէ ի ձեռն Քրիստոսի աճէր եւ ի ձեռս առաքելոցն եւ ի մէջ բազմականացն բազմանայր: Եւ յորժամ ի ձեռս ժողովրդեանն հասանէր, դադարէր աճումն. կա՛մ որպէս սերմն ցորենոյ դադարի յաղալն կա՛մ որպէս մանանայն ի պուտուկն:

Հարց. Որպէ՞ս աճէր՝ քանակա՞ւ, թէ՞ թուով:

Պատասխանի. Յորժամ էառ Քրիստոս զԵ. նականակն ի ձեռն եւ երեկ եւ ետ յառաքեալսն, բոլոր հինգն ի ձեռս Քրիստոսի աճէր եւ բոլոր Ե. ի ձեռս մի առաքելոյ, այսպէս եւ այլոցն: Նոյնպէս եւ ձուկն, այլ նոյն քանակաւն աճէր, որ ի ձեռս Քրիստոսի: Եւ նոյն տեսակաւն գարեղէն՝ ըստ օրինակի սերման ցորենոյ:

Հարց. Որպէ՞ս աւրհնեալ Հաց մարմնոյ եւ Հաց նկանակին:

Պատասխանի. Ընդդէմ: Նախ՝ զի Հաց մարմնոյն փոխեցաւ ի մարմինն Քրիստոսի: Եւ նկանակն ի մարմին Հացի: Երկրորդ, անդ զոյացութիւն աճեաց եւ տեսակն մնաց: Եւ աստ տեսակն աճեաց եւ զոյացութիւնն մնաց. նոյն նկանակ: Այլ բոլոր բաշխելով համեմատի: Այլ Դ. զարմանալիք էին: Նախ՝ որ ի ձեռս Քրիստոսի բղխէր: Նոյն եւ ի ձեռս առաքելոցն աճէր: Երկրորդ՝ զօրութիւն բանին մերձեալ ի Հացն ու արագապէս յառողս Հացին: Երրորդ՝ ոչ թէ որ քան զօրութիւնն էր աճեցոյց Հաց, այլ նշանն եւ քաղց նոցա կշռեցաւ եւ ԲԺ. (երկոտասան) սակառն աւելաւ: Չորրորդ՝ ամենայն արուեստ եւ բնութիւն տկարանայ քան զցանկութիւն խնդրողաց, այլ զօրութիւնն Աստուծոյ է, քան զփափագ մեր եւ զգիտութիւն: Զի աճչափ աճեաց Հացն, որ ձեռք եւ անդք եւ զիրկք առաքելոցն ոչ տանէր: Եւ առաջի ի սեղանս եւ յետոյ ի թիկանց կուսէ լցեալ լինէր նշխար կոտորոցն:

Հարց. Վասն է՞ր աստ հրամայէ ժողովեալ նշխարսն: Եւ այլ ուր, ասէ թէ վաղուեանն մի հոգայք:

Պատասխանի. Ոչ են հակառակ սոքա: Զի անդ, որ ասէ, թէ զվաղուեանն մի հոգայք զանձին պիտոյիցն ասէ: Եւ աստ ժողովել տայ վասն Դ. պատճառի: Նախ, զի օրհնեալ էր Հացն, ոչ էր պարտ մնալ: Երկրորդ՝ զի տարցեն ի շէնս եւ բաշխեցեն ի յայտնութիւն հրաշիցն: Երրորդ՝ զի մի՛ առ աչօք թուիցի գործն, տարեալ ընդ ին-



քեանս, տեսցեն բազում աւուրս: Չորրորդ՝ ուսուցանէ առաքելոցն եւ մեզ, զի յորժամ բաշխեսցեն քարոզելով մի՛ անփոյթ լիցին, այլ ի նոյն քարոզութեանց հաւաքեսցեն ի կերակուր անձանց իւրոց:

Հարց. Ուստի՞ էին սակառիքն:

Պատասխանի. Ոմանք ասեն, թէ ճանապարհին նորոգեցին: Եւ այլք, թէ գնացին ի շէնս եւ խնդրեցին: Եւ այս սուտ է, զի չէին տեղեակ սքանչելեացն եւ տեղին անապատ էր: Ապա՛ յայտ է, որ զհիււանդ եւ զանդամալոյծս բերէին սակառօք եւ ողջացան: Եւ ըստ թուոյ ԲԺ. (Երկոտասան)իցն լցին ԲԺ. սակառս:

Հարց. Վասն է՞ր ասէ, թէ կերողքն էին, իբրեւ հինգ հազար որպէս երկբայութեամբ:

Պատասխանի. Նախ, զի գիտացես, թէ Ա. կամ Բ. պակաս գոլով, ոչ խախանեն զգլխաւորագոյն թիւսն, զՃ. կամ զԲ. կամ զԲԻ. կամ զԲԵ. Երկրորդ՝ զի ասէ իբր զբազմութիւն նշանակէ որպէս Մովսէս թուեաց զՃԲ. այրս ելեալ յԵգիպտոսէ: (ա) ի Կ. ամենից ի վայր եւ ի Ի. ամենից ի վեր: Թող զայլսն զծեր եւ զտղայ զկին եւ զմանուկ: Սոյնպէս աստ. զՆԲ. սն ի թիւ արկանէ եւ զայլ բազմութիւնս նշանակէ իբր ասելովն թող զկանայս եւ զմանկտի: Եւ տե՛ս զՋերմ սերն, զի կանամբ եւ մանկամբ զհետ Քրիստոսի պարապէին: Այսինքն՝ վասն նկանակին:

**Սփիպեաց գաշակերպսն (Մարթ. ԺԴ. 22):**

Նախ՝ ցուցանէ զհանգանդութիւն աշակերտացն, որ ոչ ընդդիմացան այլ յերեկոյի ի նաւ մտին: Երկրորդ՝ ինքն մեկուսացաւ յետ սքանչելեացն, զի մի փառաւորեսցի եւ մեզ ուսուցանէ, մի փառս խնդրել ի մարդկանէ:

Հարց. Վասն է՞ր գնաց աղօթել:

Պատասխանի. Վասն Զ. պատճառի: Նախ՝ ուսուցանէ թէ յառաջ քան զկերակուրս եւ յետոյ պարտ է գոհանալ զԱստուծոյ եւ աղօթել, որպէս ի Վերնատունն. աւրհնեցին եւ ելին ի լեառն Ձիթենեաց: Երկրորդ՝ ուսուցանէ, թէ յորժամ քարոզեմք եւ առնեմք հասարակաց փրկութիւն զառ անձին փրկութիւնն մեր չէ՛ պարտ անփոյթ առնել: Երրորդ՝ ուսուցանէ վարդապետաց, թէ չէ՛ պարտ միշտ ի մէջ ժողովրդեանն խառնիլ եւ ո՛չ միշտ փախչել, այլ երբեմն քարոզեալ եւ երբեմն յանապատս երթալ: Չորրորդ՝ ուսուցանէ յորժամ զմարմնաւորն հոգամք, պարտ է եւ զհոգեւորն կատարել: Հինգե-

րորդ՝ ուսուցանէ, թէ զսէր ընկերին եւ զսէրն Աստուծոյ պարտ է հատուցանել: Վեցերորդ՝ յորժամ ընդ մարդոյ խօսիմք, դառնալ պարտ է եւ ընդ Աստուծոյ խօսել աղօթիւք:

**ՎԱՍՆ ԱՌԱՋԻՆ ԱՂՕԹԻՅ**

Հարց. Վասն է՞ր ի լեառն աղօթէր:

Պատասխանի. Ուսուցանէ, թէ ի ժամ աղօթիցն պարտ է ի լեառն ելանել եւ յանապատս առանձնակի լինել: Եւ այս յայտ է ի Ժ. իմն օրինակաց: Նախ՝ զի Արարիչն Աստուած առանձնացեալ ի յանմատոյց խորանս յերկնից եւ մեզ պարտ է առանձինն լինել յանապատս եւ աղօթել: Երկրորդ՝ զի յանապատ տեղիս միտք մեր եւ զգայութիւնք ո՛չ ցրուին ընդ երեւելիս: Երրորդ՝ որպէս հրեշտակք առանձնացեալ յերկինս եւ փառաբանեն: Չորրորդ՝ որպէս ի դրախտին խօսէր ընդ Աստուծոյ եւ յերկրիս ո՛չ: Հինգերորդ՝ Մովսէս եւ Եղիայ ի լեառն տեսին զԱստուած եւ յանապատս բնակէին: Վեցերորդ՝ որպէս Տէր մեր ել ի լեառն եւ հանէր զգիշերն ի գլուխ յաղթան կալով: Եւթներորդ՝ որպէս ժողովուրդն զհետ Քրիստոսի յանապատն ելին, վասն որոյ կերակրեցան: Ութերորդ՝ որպէս Տէրն ի լեռինն ի հանդարտութեան էր եւ աշակերտքն ի մէջ ծովուն ծփէին: Իններորդ՝ որպէս տղայն ի գիրկս մօրս, սոյնպէս մայր խաղաղութեան մեր անապատն է: Տասներորդ՝ որպէս նաւահանգիստն զերծուցանէ յալեաց, սոյնպէս նաւահանգիստ կենաց անապատն է:

**Ղուկաս Թ. 10-17**

**ԻԳՆԱՏԻՈՍ ՍԵԻԼԵՌՆՅԻ**

(Գլուխ Թ.)

Յետ այսաւրիկ լցեալ զայս պատուէր առաքելոցն՝ դարձան առ Նա:

Եւ առեալ զնոսա՝ խոյս եր նորաւք՝ լինիլ ի Բեդսայիդա (հմմտ. Ղուկ. Թ. 10):



Արդ, թէպէտ եւ Նա կամեցաւ յանապատի անդ կալ, սակայն ժողովուրդն, որ ուրախացան ի բանս Նորա եւ Հիացեալ էին՝ վասն սքանչելեացն եւ զաւրութեանցն, զոր առնէր, ոչ կամէին բնաւ բաժանիլ ի Նմանէ: Վասն որոյ եկեալ ամենայն ուստեք՝ ժողովեցան առ Նա: Եւ այնչափ ժուժկալեցին կալ առ Նա, մինչեւ պակասեցին կերակուրքն, զոր բարձեալ բերին: Եւ ետես Յիսուս, որ զանյայտսն տեսանէ, թէ նեղին ի սովոյ եւ վասն սիրոյ Նորա յամառեալ կան առ Նաեւ չգրեն ինչ զկարաւտութիւն կերակրոցն, ապա եւ Ինքն գլխացաւ ի նոսա՝ Այն, որ ոչ երբեք պակասէ գութ Նորա: Չկամիմ, ասէ, արձակել զոսա նաթիս, գուցէ նրթեսցին ի ճանապարհին: Եւ ապա հրամայեաց բազմել նոցա եւ եցոյց զՀանդէս զաւրութեան Իւրոյ՝ ի վերայ Հացին, եւ անցուցանել զսակաւութիւն նորա՝ մինչեւ բաւել յագեցուցանել զբազմութիւնն զայն: Տայ եւ ժողովել զնշխարս կոտորոցն, զի ունիցին զայն՝ ի յիշատակ սքանչելեացն: Եցոյց զայս զաւրութիւն՝ ի դարովումն չարին, որ Հայցէր զքարինսն Հաց լինել եւ՝ զի մի ոք տկարացի, զի ոչ ետ զցանգութիւն մեղաւորին: Արդ, Հաւանեցուցանէ աստ Հացիւն եւ ի Կանայ գալիլեացւոց՝ Չրովն, զոր փոխեաց ի գինի ի մէջ թակուկացն: Անցանէ անտի ի կողմանս Կեսարու, Հարցանէ զաշակերտսն ի կալն Իւրում յաղաւթս, եթէ զո՞ ոք կարծեն զՆա պարզամիտ ժողովուրդն: Իսկ նոքա, վասն մկրտութեանն, Յովաննէս զՆա կարծէին եւ վասն նախանձուն՝ Եղիա, նա՞ եւ զի ալին ունէին, թէ զայ Եղիա առ նոսա, եւ վասն սրբութեանն ասէին՝ Երեմիաս է Նա: Չայս լուեալ՝ եւ զսոյն ամենեքեան պատասխանի ետուն: Դարձուցանէ զբանն ի նոսա՝ յայտ արարեալ, թէ մեծ իմաստութիւն եւ գիտութիւն խնդրէ ի նոցանէ, իսկ նոքա լուեցին:

**ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԳ**

(Գլուխ Թ.)

Յեր այսորիկ առաքելովքն գայ ի Բեդսայիդա: Եւ ժողովուրդքն գնային զհետ նորա, եւ խաւսէր ընդ նոսա վասն արքայութեանն [Ասորուծոյ] (հմմտ. Ղուկ. Թ. 10-11):

ԻԳ ժողովուրդքն ուրախացան ի բանս նորա եւ Հիացեալ էին վասն սքանչելեացն եւ զաւրութեանցն, զոր առնէր:

ՅՆ Բայց ժողովուրդն իբրեւ բեւեռեալ էին ընդ նմա եւ երթային զՀետ նորա: Զի սէրն ամենայնի յաղթէ եւ զամենայն դանդաւնաւանդսն ի բաց փարատէ: Վասն որոյ եւ զՀատուցումն անդրէն առնուին:

Եւ արն սկսաւ փարաժամել, մաքեան երկոքասանքն եւ ասեն. «Արձակեա՛ գժողովուրդդ» (տե՛ս Ղուկ. Թ. 12):

Զի մինչեւ ցերեկոյն վարդապետութեամբ զՀոգիս նոցա կերակրեաց, իսկ մարմնաւոր առողջութեան նոցա ոչինչ արար փոյթ: Քանզի իւրաքանչիւր ոք յախտածէտացն ո՛չ էին բժշկեալ, զի թէ բժշկեալ էին, ինքեանք խնդրէին զաւթեմանն:

Արձակեայ գժողովուրդդ, զի երթիցեն շուրջ ի գելոս եւ յագարակս, եւ գրցեն կերակուր (տե՛ս Ղուկ. Թ. 12):

Իսկ աշակերտքն, թէպէտեւ վասն Հացի յուշ արարին, այլեւ զբժշկութիւն խտածէտացն խնդրէին:

Զի յանապար փեղոջ եմք (տե՛ս Ղուկ. Թ. 12):

Թէպէտ եւ տեղիս անապատ է, այլ, որ զամենայն աշխարհս կերակրէ, աստ է: Վասն այնորիկ յանապատն Հանէր, զի առանց կարծեաց լինիցին սքանչելիքն:

Ասէ ցնոսա Յիսուս. Դուք փուր նոցա ուրել (տե՛ս Ղուկ. Թ. 13):

Կամէր կերակրել զնոսա: Եւ ո՛չ անձամբ ինչ առնէր, այլ անսայ աղաչել: Զի մի՛ կարծեսցին, եթէ յառաջ երթայ սքանչելեացն: Զի դեռեւս իբր ի մարդ Հայէին ի նա եւ իբրեւ ընդ մարդ խաւսէին ընդ նա եւ ո՛չ ընդոստնուին:

Եւ նորա ասեն. Ոչինչ ունիմք քան զհինգ նկանակ եւ զերկուս ձկունս (հմմտ. Ղուկ. Թ. 13):

ՍՏ Քանզի ափշեալ էին միտք նոցա եւ ընդ երկիր քարշէին: Իսկ Յովհաննէս գարեղէն ասէ զնկանակն (տե՛ս Յովհ. Զ. 9, 13): Այնպիսի էին եւ մարգարէիցն սեղանքն: Եւ աստ ուսուցանէ զմեզ արհամ[արհ]ել զբազում խորտիկս:



Ասէ. Բազմեցուցէ՛ք զղոսա դասս դասս: Եւ առեալ զնկանակսն եւ զերկուս ձկունսն՝ հայեցաւ յերկինս (տրնս Ղուկ. Թ. 14, 16):

Ձի պարտ էր նմա հաւատարիմ լինել, թէ Հաւր զուգական է եւ ի նմանէ ծնեալ, եւ զծնաւղն պատուեսցէ:

ԵՓ եւ յական թաւթափելն՝ զհացն բազմացոյց, զի զոր տասն ամիսք աշխատութեամբք առնեն, տասն մատունքն նորա արարին վաղվաղակի: Եղ զձեռն իւր ի ներքոյ հացին որպէս զերկիր, եւ խաւսեցաւ ի վերայ նորա որպէս զորոտումն: Եւ ի շարժել շրթանցն՝ ցանեաց ի վերայ նորա իբրեւ անձրեւ: Եւ շոգ ի բերանոյ նորա՝ ի տեղիս արեւոյ, եւ պսակեալ կատարեաց սրբութեամբ:

**Յովհաննէս Զ. 1-14**

**ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ**

(Գլուխ Զ.)

Յեք այսորիկ գնաց Յիսուս յայնկոյս ծովուն Տիրերեա Գալիլեա (տրնս Յովհ. Զ. 1):

Յուցանէ աւետարանիչն երկրորդ անգամ գնալ ի Գալիլեա եւ յերուսաղէմ ելանէ անտի եւ յաճախագոյն զնշանս եւ զաւրութիւնս առնել անդ:

Չհեք երթայր նորա ժողովուրդ բազում (Յովհ. Զ. 2):

Ոչ վասն հաւատոց, այլ ի տեսութիւն նշանացն զոր սովորեն մարդիկ, ճեպիլ յորժամ նորա ձեւս լսեն:

Ել ի լեառն եւ անդ նստէր աշակերտաւքն [հանդերձ] (տրնս Յովհ. Զ. 3):

Ձի մեք յորժամ վասն բազում ողորմութեանց փոյթ առնիցեմք զի ամենայն տնաւրինականքն վասն մեր աւագտի է:

Եւ էր մերձ Զարիկ քաւանն հրէից: Եւ Յիսուս ետես զի ժողովուրդ բազում գայր: Ասէ ցՓիլիպպոս. «Ուստի՞ գնեսցուք հաց՝ զի կերիցեն»: Ասէ Փիլիպպոս. «Երկերիւր դահեկանի հաց՝ չէ դոցա բաւական» (հմմտ. Յովհ. Զ. 4-5, 7):

Է՞ր զփիլիպպոս հարցանէր: Վասն նորա ուղղութեան, զի յոյժ պետս առնէր ուղղութեան: Եւ յայտ է յայնմ, որ ասէր ցՏէրն. «Յոյց մեզ զհայր եւ շատ է մեզ» (հմմտ. Ղուկ. ԺԴ. 8), քանզի խորհէր զհայր բարձրագոյն քան զորդի եւ ոչ անգիտութեամբ հարցանէր, այլ ի զարթուցանել զմիտս նորա առ ի զաւրութիւն մեծաաքանչ նշանին զոր հանդերձեալ էր գործել, որպես զՄովսէս ասէր. «"Ձի՛նչ է այդ որ ի ձեռին քում", նա ասէ. "գաւազան" եւ ի փոխելն յաւձ զարհուրեցաւ (հմմտ. Ելից Դ. 2-3), նոյնպէս եւ աստ՝ հարցանէր, զի եւ յասելն Փիլիպպոսի՝ երկերիւր դահեկանի հաց չէ դոցա բաւական, առաւել սքանչասցի եւ զարհուրեսցի, յայնքան բազմութեանն յագուրդ կերակրելն: Ասէ Անդրեաս՝

«Է աստ պարանեակ մի, որ ունի հինգ նկանակ եւ երկուս ձկունս» (տրնս Յովհ. Զ. 9):

Ձի ոչ կարէին ծածկել ի վարդապետէն, որ է անագահութեան նշանակ: Ասէ Յիսուս.

«Բազմեցուցէ՛ք զժողովուրդդ» (տրնս Յովհ. Զ. 10):

Ընդդէ՞ր նախ բազմել հրամայէ:

Ձի խորհրդածէ այնու գիտել զհաւատարմութիւն նշանին ի միտս իւրեանց առ ի կարող լինել Յիսուսի այնու կերակրել զնոսա: Ձի գիտէին ոչ ումեք լինել կերակուր եւ սպասելով կերակրոցն առաւել հաւատարմացի նշանին եւ զհաւատս ընդ անձին բերցեն:

«Առ զհացն Յիսուս, եւ զոհացաւ. եւ բաշխեաց բազմութեանն» (տրնս Յովհ. Զ. 11):

Պարտ է գիտել, թէ ընդ է՞ր գոհացաւ, զի ոչ ուրեք գտանի այնպէս արարեալ ոչ առ ծովուն եւ ոչ կուրին, եւ ոչ անդամալուծին, առ ի զմեզ խրատելոյ եւ զաշակերտսն նախքան զմատչելն կերակուրն, աղաւթել եւ գոհանալ եւ ապա մատչել յուտել, այնքան ժողովուրդ մերձ կայր եւ նա գոհանայր զհաւրէ, յայտ արար հրէիցն թէ ոչ է հակառակ հաւր, որպէս նոքա կարծէն:

«Իբրեւ յագեցան, ասէ, ցաշակերտսն ժողովեցէ՛ք զնշխարս կողորոցն եւ ժողովեալ լցին երկոյրասան սակաօի» (տրնս Յովհ. Զ. 12-13):



**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԲԱՅԻ**

(Երկրորդ գլուխ երկրորդ հարորիս)

Բան. «Յեք այսորիկ գնաց Յիսուս» (Յովհ. Զ. 1):

Մեկնութիւն. Այս վեցերորդ գլուխ է ըստ կարգի եւ երկրորդ՝ ըստ հատորի: Նախ ճառեաց աւետարանիչս վասն կենդանական պարգեւացն Աստուծոյ, աստ ճառէ վասն հոգեւոր սննդեան եւ կերակրոյ, եւ նախ ճառէ վասն մարմնաւոր կերակրոյն, որ աճեցոյց զհացն, եւ ապա քարշէ ի գիտութիւն հոգեւոր կերակրոյ՝ հացի մարմնոյ իւրոյ: Եւ զի որ յառաջ քան զայս գլուխն եցոյց ի ներգործութենէն, զի Աստուած է Քրիստոս չորս կերպիւ, աստ ցուցանէ ի կերակրելոյն, զի որ ոք հաւասարի Աստուծոյ կերակրելով եւ սնուցանելով, Աստուած է, իսկ Քրիստոս եւ այսու հաւասարի Աստուծոյ, ապա ուրեմն Աստուած է Քրիստոս:

Եւ զՔրիստոսի կերակրելն եւ սնուցանելն ցուցանէ չորս կերպիւ. նախ՝ սքանչելեալք աճմամբ նկանակացն, եւ երկրորդ՝ ձկանցն: Երկրորդ. մխիթարութեամբ աշակերտացն ի վերայ ծովուն, որ եւ ասացն. «Ես եմ, մի՛ երկնցիք» (Յովհ. Զ. 20): Երրորդ. քարոզութեամբն, որով եցոյց զինքն Հաց Կենաց: Չորրորդ. խոստմամբ Պատարագին, յորժամ ասաց. «Մարմին իմ ճշմարիտ կերակուր է, եւ արիւն իմ ճշմարիտ ըմպելի» (Յովհ. Զ. 56) եւ այլն:

Իսկ այժմ սկիզբն դնէ վասն առաջնոյն՝ ասելով.

Բան. «Յեք այսորիկ գնաց Յիսուս» (Յովհ. Զ. 1):

Եւ գիտելի է, զի խնդրէին հրէայքն սպանանել զՅիսուս, եւ դեռեւս ոչ էր հասեալ ժամ Նորա, վասն որոյ ել ի Հրէաստանէ եւ գնաց աւրինակ տալով մեղ, զի տեղի տացուք ի ժամանակի փորձութեան, զի մարթ է խոյս տալ հաւատացելոցն Քրիստոսի առ ժամանակ մի: Եւ ծովն գալիլեացոց Տիրերեայ ասի, զի յերկիրն գալիլեացոց քաղաք մի անուն Սեներէթ, ի վիճակն Նեփթաղիմա շինեաց Հերովդէս եւ մեծացոյց զնա յանուն Տիրերեայ կայսեր: Եւ այս երկրորդ անգամ գնալն է յԵրուսաղէմ ի Գալիլեայ, զի առաջին այն է, որ գնաց ի Սամարիայ եւ ի Գալիլեայ:

Բան. «Եւ զհեք երթայր նորա ժողովուրդ բազում» (Յովհ. Զ. 2):

Ընդէ՞ր երկոյտասան սակառի:

Ըստ աշակերտացն թուոց, զի նոքա, ընդունելով ի կենարար ձեռացն, բաշխէին: Զնոսա ցուցանէ հաղորդս իւրոյ զաւրութեանն, առ ի ցուցանել թէ ոչ այլ ուստեք բերեցաւ ելուած, այլ զնոյն աճեցուցանէ:

ՍՏ Արար տէր մեր յանապատին հաց եւ բարձին զնծարեալ կոտորան երկոյտասան սակառ ի լի, զի հրամայեաց ժողովել զկոտորան, զի թէպէտ առ վաղիւն ասիցեն առ աչաւք արար, որք զնշխարս կոտորելոցն ունէին ցուցանելովն յանդիմանեցեն զուրացողսն աստուածահրաշ սքանչելեացն:

«Իսկ մարդիկն իբրեւ փեսին ասեն՝ սա է ճշմարիտ մարգարէն» (Վրն Յովհ. Զ. 14):

Տե՛ս որքա՞ն յանդիմանեն զինքեանս եւ դարձեալ ուրանան, յորժամ ըստ իւրեանց աւգտի տեսանէին զնշանսն ոչ գողանային, զոր գիտէին եւ որ իցէ մարգարէն՝ յատուկ եւ որիչ յայլոց մարգարէիցն, ասէն՝ Մովսէս պատուիրեաց. «Մարգարէ յարուսցէ ձեզ տէր Աստուած յեղբարց ձերոց իբրեւ զիս» (Խմմր. Բ Օր. ԺԸ. 15):

Վասն է՞ր զմիոյ յատուկ գուշակեաց, եւ ահա բազումք էին գոլով զկնի Մովսէսի, ուրեմն զՔրիստոսէ ասէ, որ զաստուածագործ նշանս եւ զհրաշալի սէր վարդապետելոց: Ընդէ՞ր մարգարէի անուամբ յորջորջէ վասն ազգին անհաւատութեան, զի մի՛ ջնջեսցեն զգիրս եւ մարգարէական անուամբ ըստ սովորութեան յարիսցեն ի նա եւ ի նշանացն կատարելն հայցեն գիտութեան, իսկ «Որ ոչ լուիցէ մարգարէին, սարակեսցի» (Խմմր. Բ Օր. ԺԸ. 19), որպէս եղեւ առ խաչահանունսն յետոյ համբառնալոյն մաշեցաւ ազգն յԵրուսաղէմէ ի հռովմայեցւոցն, աւելի քան Յ. բիւր մարդիկ դասու:

Յիսուս իբրեւ գիտաց, թէ գալոց են յափշտակել, զի արասցեն գնա թագաւոր (Վրն Յովհ. Զ. 15): Այնքան տեսին նշանս եւ ոչ հաւատացին, եւ յորժամ յագեցոյց կամեցան առնել թագաւոր որովայնի գոլով ծառայք եւ ո՛չ ճշմարտութեամբ, ( ո՛չ հաւատովք ի նա: Իբրեւ տեսին հրէայքն թէ բազում հարց արար յանապատին, կամեցան ունել զՆա եւ առնել զթագաւոր, զի ըստ աւուր աւուրց եւ յամենայն ժամ արարացէ հաց, որպէս զի մի աշխատեսցին ի հունձս:



Մեկնութիւն. Վասն չորից. նախ՝ ոմանք նենգութեամբ, որպէս փարիսեցիքն, որ կամէին զՆա որսալ բանիւք: Երկրորդ. ոմանք ի սիրոյ, այսինքն՝ հաւատացեալքն: Երրորդ. ոմանք ի լսել զբանն փափագանաւք: Չորրորդ. ոմանք վասն սքանչելեաց տեսութեան միայն, այլ ոչ վասն հաւատոցն ճշմարտութեան:

Բան. «Զի փեսանէին զնշանսն, զոր առնէր ի վերայ հիւանդաց» (Յովհ. Զ. 2):

Մեկնութիւն. Առ ի ցուցանել, զի սքանչելիքն այն լինէին աստուածահրաշ զաւրութեամբն Քրիստոսի, զի կատարելապէս առողջանային, որպէս թէ չէր բնաւ հիւանդացեալ զորս բժշկէր

Քրիստոս, քանզի կախարդութեամբ լինի երբեմն զարմանալի բան, սակայն անաւգուտ, որպէս զխաւսիլ պատկերաց եւ այլ սոյն-պիսիք:

**ԹԷ Ի ԼԵԱՌՆ ԵՒ ԶՐԻՍՏՈՍ**

Բան. «Ել ի լեառն Յիսուս եւ անդ նստելր աշակերտաւքն հանդերձ» (Յովհ. Զ. 3):

Մեկնութիւն. Ի լեառն ել նախ վասն աղաւթելոյ: Երկրորդ. մեղմով զաշակերտսն ուսուցանելոյ, որպէս թէ դաս ասել:

Եւ չորս ինչ ուսուցանէ մեզ. նախ՝ յետ ժողովրդեանն քարոզելոյ պարտ է եւ զաշակերտսն ուսուցանել: Երկրորդ. նախ աղաւթել հասարակ եւ ապա առանձին: Երրորդ. հասարակաց պահել եւ յետոյ՝ առանձնակի: Չորրորդ. զգործս մարմնաւոր եւ հոգեւոր. նախ՝ պարտ է հասարակաց գործել միաբանից եւ ապա՝ զառանձնականն, թէ չիցէ բաւական, զի ընդհանուրն պատուական է, քան զմասնաւորն:

**ՎԱՍՆ ԶԱՏԿԱՅ**

Բան. «Եւ էր մերձ Զափիկ՝ փաւնն հրէից» (Յովհ. Զ. 4):

Մեկնութիւն. Այս երկրորդ Զատիկն է, զոր յիշէ Աւետարանն, զի առաջին խարազանաւ եհան ի տաճարէն, իսկ որ ի Պրոպատիկէն զհիւանդն ողջացոյց, տաւն էր Պենտէկոստէն կամ Տաղաւարահարացն: Այլ ոմանք ասեն, թէ այս է Տաղաւարահարացն ըստ կարգին իմացեալ, այլ ոչ է, զի Զատիկ ասէ: Եւ յայսմ Զատիկի Յիսուս

ոչ գնաց յԵրուսաղէմ վասն կրկին պատճառի. նախ՝ զի զրեալ էր յաւրէնսն վասն այնոցիկ, որ յայտնապէս թշնամիք ունիցին, ոչ երթալ ի տաւնն, զի մի նենգեսցին ի ճանապարհին: Եւ Քրիստոս յայտնի թշնամիս ունէր զհրէայսն, որ խնդրէին սպանանել զՆա: Դարձեալ՝ որպէս Քրիստոս երբեմն պահելով զաւրէնսն ցուցանէր զինքն մարդ գոլ ճշմարտապէս ծնեալ յիսրայէլացւոցն ըստ մարմնոյ, նոյնպէս երբեմն ոչ պահելով զաւրէնսն զինքն Աստուած ցուցանէր եւ ի վեր քան զաւրէնսն:

**ՎԱՍՆ ՆԿԱՆԱԿԱՅՆ**

Բան. «Բարձ ի վեր զաչս իւր Յիսուս» (Յովհ. Զ. 5):

Մեկնութիւն. Նախ՝ մարմնոյ աչաւք, երկրորդ՝ զգայութեամբ նայիլն ասէ:

Բան. «Եւ երես, զի ժողովուրդ բազում գայր առ նա» (Յովհ. Զ. 5):

Մեկնութիւն. Քանզի այնչափ ցանկային լսել զքարոզութիւն Յիսուսի եւ տեսանել զսքանչելիս նորա, մինչ զի մոռացեալ էին հաց տանել ընդ ինքեանս:

Բան. «Ասէ ցՓիլիպպոս. “Ուսփի՞ գնեսցուք հաց, զի կերիցեն ղոքա”» (Յովհ. Զ. 5):

Մեկնութիւն. Եւ բանն այն, որ ի Մատթէոս ասէ. «Մարեան [առ նա] աշակերտքն եւ ասեն. “Տեղիս անապարտ [եւ արս փարսժամեալ], արձակեա՛ գժողովուրդդ» (Մատթ. ԺԴ. 15): Եւ այլն, չեն ընդգէմ միմեանց, զի նախ աշակերտքն ասացին. «Արձակեա՛ գժողովուրդդ», եւ ապա Քրիստոս զՓիլիպպոս եհարց, զոր աստ ասէ:

Իսկ վասն է՞ր զՓիլիպպոս եհարց, ասէ մեկնիչն, զի նմա ուղղութեան պէտք էր սքանչելեաւք, զի ունէր ինչ թերութիւն, որպէս անդ ասաց. «Յոյց մեզ զՆայր, եւ շափ է մեզ» (Յովհ. ԺԴ. 8):

Բան. «Պարասխանի եփ Փիլիպպոս. “Երկերիւր դահեկանի հաց չէ դոցա բաւական”» (Յովհ. Զ. 7):

Մեկնութիւն. Որպէս թէ ասել՝ եւ առ մեզ եւ ոչ մի դրամ ոչգոյ: Դարձեալ ցուցանէ, թէ թանձրամիտ էր Փիլիպպոս, եւ ոչ հայէր



ի զաւրութիւն Քրիստոսի, որ զջուրն ի գինի դարձոյց, եւ զայլ նշանսն:

Բան. «Ջայս ասէր փորձելով զնա» (Յովհ. Զ. 6):

Մեկնութիւն. Փորձէր զնա Քրիստոս. նախ՝ զի այնու պակասութիւն զնոջն յայտնի լինէր: Երկրորդ. որպէս փորձեաց Աստուած զԱբրահամ, զի Հնազանդութիւն նորա եւ Հաւատք յաշխարհի յայտնի լինէր, եւ սորայս պատասխանին:

Բան. «Այլ ինքն գիտէր զինչ առնելոց էր» (Յովհ. Զ. 6):

Մեկնութիւն. Ոչ թէ Հարցանէ վասն ինքեան գիտելոյ, զի չորս ինչ գիտէր աստ. նախ՝ գիտէր զպակասութիւն զնոջն: Երկրորդ. գիտէր զտեղիքն անապատ: Երրորդ. գիտէր զպատասխանին Փիլիպպոսի: Չորրորդ. գիտէր զսքանչելիքն, որ առնէր:

Բան. «Ասէ ցնա մի յաշակերտացն [նորա] Անդրեաս» (Յովհ. Զ. 8):

Մեկնութիւն. Մատթէոս գրեալ է, թէ աշակերտքն ասացին, եւ ոչ՝ մի ոմն (հմմտ. Մարթ. ԺԴ. 17): Ասեն վարդապետք, թէ ոչ են ընդդէմ միմեանց. նախ՝ թէ անդ բազմաւորական վասն եզականին ասէ, զի յորժամ ոմն ի յամբոխէն իր ինչ գործեաց, ասեն սովորաբար, թէ ամբոխն արար: Երկրորդ. լինի թէ առանձին բազումքն ասացին զբանն, իսկ յայտնի՝ միմն ասաց: Եւ Անդրէաս ներհուն երեւի քան զՓիլիպպոս, որ թանձրամիտ էր:

#### ԵՒ ԶԻՆՉ Է ԹԱՆՉՐԱՄԻՏՆ

Եւ նախ տեսցուք, թէ զի՞նչ է թանձրամիտն.

Գիտելի է, զի երեքն են սոքա, այսինքն. Անմիտ, Թանձրամիտ եւ Նրբամիտ: Անմիտ է, որ զբանն ի միտ ոչ առնու, իսկ թանձրամիտ է, որ միայն զնոյնն իմանայ, եւ նրբամիտ է, որ զբանն Համեմատէ առ այլս եւ իմանայ, որպէս աստ Փիլիպպոս թանձրամիտ էր, որ բազում նշանս տեսեալ էր, այլ ի վերայ Հացի՝ ոչ, եւ Անդրէաս նրբամիտ էր, զի ի միտ էած զՀացն, զոր աճեցոյց Եղիսէէ (հմմտ. Դ. Թագ. Դ. 42-44), վասն այն ասէ.

Բան. «Է աստ պապանեակ մի, որ ունի հինգ զարեղէն նկանակեւ երկուս ձկունս, այլ այն զի՞նչ է առ այդչափ մարդիկ» (տես Յովհ. Զ. 9):

Մեկնութիւն. Իբրու ասել՝ թէպէտ Եղիսէէ աճեցոյց զՀացն, այլ այն քսան նկանակ էր, եւ կերողքն՝ Հարիւր մարդ: Եւ մեկնիչդ յայտնէ, զի ոչ ինչ ծածկէին աշակերտքն ի Տեառնէ: Եւ թէպէտ Քրիստոս կամաւ արար սքանչելիքն, այլ Հարկ էր վասն երեք պատճառի. նախ՝ վասն բազում ժողովրդեանն, զի քաղցեալ էին, եւ վասն փափագման բանին եւ սքանչելեացն Հաց մոռացան տանիլ ընդ ինքեանս: Երկրորդ պատճառ. զի յայտնի լինէր պակասութիւն զնոջն, զի ոչ ինչ ունէին որով զնէին, որպէս ասէ Մատթէոս. «Այլ ոչինչ ունիմք, բայց Հինգ նկանակ միայն եւ երկուս ձկունս» (հմմտ. Մարթ. ԺԴ. 17): Երրորդ պատճառ. վասն սակաւութեան կերակրոյն, որպէս ասէ. «Նինգ նկանակ եւ երկուս ձկունս»:

#### ՎԱՄՆ ԱՂՔԱՏՈՒԹԵԱՆ

Եւ տես զաղքատութիւն աշակերտացն, որ զմարգարէական կատարելութիւն յանձինս ստացեալ ունէին, որով անփոյթ առն էին վասն կերակրոյ, զի երկոտասանք էին եւ Հինգ Հաց միայն ունէին, եւ տակաւին այն ոչ էր նոցա, այլ միոյ պատանեկի սիրելոյ իւրեանց եւ բարեկամի, ապա յայտ է, զի մարգարէքն աղքատութեամբ կեցին եւ Տէր մեր եւ աշակերտքն աղքատութեամբ շրջեցան, եւ երանի ետ աղքատաց Հոգւով (հմմտ. Մարթ. Ե. 3): Եւ վայ ասաց մեծատանց (հմմտ. Ղուկ. Զ. 24): Յայտ ուրեմն է, զի քրիստոնէից զաղքատութիւն կամի Քրիստոս, եւ առաւել ազգիս մերոյ զաղքատութիւն է շնորհեալ:

Բան. «Ասէ Յիսուս. “Բազմեցուցէք զմարդիկ”» (Յովհ. Զ. 10):

Մեկնութիւն. Կարգաւ եւ սահմանաւ նստան, ուր Հարիւր-Հարիւր եւ ուր Հիցուն-Հիցուն վասն կրկին պատճառի. նախ՝ զի ամենայն գործք մեր կարգաւ եւ սահմանաւ լիցի: Երկրորդ. զի առաւել յայտնեցի թիւ բազմելոցն եւ լինելութիւն սքանչելեացն: Իսկ մեկնիչն ասէ վասն երեք պատճառի. նախ՝ զի ի միտ ածցեն զկարողութիւն սքանչելեացն: Երկրորդ. զի աճեցին ի Հաւատն: Երրորդ.



զի հաստատուն մնասցէ առ նոսա: Առաջինն սկիզբն է հաւատոյն, միջինն՝ աճումն, վերջինն՝ կատարումն:

**ՎԱՍՆ ԽՐԱՏՈՅՆ**

Բան. «Եւ էր խոսք յոյժ ի փեղտօցն» (Յովհ. Զ. 10):

Մեկնութիւն. Վասն չորից յիշէ զխոտն. նախ՝ զի ցուցցէ զտեղին պատշաճ առ ի նստել եւ յուտել: Երկրորդ. զի խոտն փոխանակ սեղանոյ լիցի: Երրորդ. զի խոտն անասնոց է կերակուր, եւ զլուխն՝ մարդկան, որ զլիսաւորն է: Չորրորդ. խոտն զհին աւրէնս նշանակէ, ուր նստան ի վերայ, եւ կերակուրն՝ զչնորհս, որ ի Քրիստոսէ ընկալան:

**ՋԻՆՉ Է «ԻՔՐԵԻ»-Ն**

Բան. «Եւ բազմեցան մարդիկն թուով իրրեւ հինգ հազար» (Յովհ. Զ. 10):

Մեկնութիւն. Ըստ սովորութեան երբայեցւոցն թուին միայն որք ի քսան՝ ամենիցն ի վեր, եւ ոչ թուին աստ կանայք եւ մանկտիքն, որպէս ասէ Մատթէոս (հմմտ. Մաւրթ. ԺԴ. 21):

Իրրեւ չորս նշանակութիւն ունի. նախ՝ է տեղիք ստուգութեան, որպէս այն. «Իրրեւ, զի բարի է Աստուած Իսրայելի» (Մաղմ. ՆԲ 1): Երկրորդ. է տեղիք աւրինակի, զի «իրրեւն» եւ «որպէսն» գնոյն ցուցանեն: Երրորդ. է ժամանակի ցուցակն, ըստ այնմ. «Իրրեւ նոքա գնացին» (Մաւրթ. ԻԵ. 10), այսինքն՝ յորժամ գնացին նոքա: Չորրորդ. է տեղի սովորութեան, զի զմեծ մասն յիշելով զաւելին կամ զպակասն զանց առնեն մարդիկ, սոյնպէս եւ չորս աւետարանիչքն իրրեւ ասելով ըստ սովորութեան մարդկան զգուշութեամբ խաւսեցան:

Եւ այս վասն կրկին պատճառի. նախ՝ զի գրէին որպէս պատգամաբանքն եւ հետեւէին հասարակ համբաւոյն, որպէս եւ նոցա յիշողականին պատահէր: Երկրորդ. ուսուցանէին, թէ պարտ է ամենայն ումեք զգուշութեամբ խաւսել:

Բան. «Էառ զհացն Յիսուս, արինեաց եւ բաշխեաց» (Յովհ. Զ. 11):

Մեկնութիւն. Ինքն էառ զհացն եւ բաշխեաց վասն չորս պատճառի. նախ՝ զի իւրով զաւրութեամբն լինէր սքանչելիքն այն: Երկ-

րորդ. զի ցուցանէր զիւր սէրն առ ժողովուրդն: Երրորդ. զի տացէ աւրինակ խոնարհութեան մեզ: Չորրորդ. զի ինքն է աղբիւր շնորհաբաշխութեան, որ տայ արժանաւորացն զամենայն պարգեւս աստ եւ ի հանդերձեալն, որպէս ասէր. «Ի սեղան Նար իմոյ բազմեցուցից եւ անցաւ» (հմմտ. Ղուկ. ԻԲ 30):

**ՎԱՍՆ ԱԻՐՆՈՒԹԵԱՆ ՆԱՅԻՆ**

Եւ զիտելի է, զի Քրիստոս իսկիզբն նշանացն, զոր առնէր, գոհանայր զԱստուծոյ վասն չորս պատճառի. նախ՝ զի ցուցցէ, թէ պարտ է զամենայն ինչ յԱստուծոյ խնդրել: Երկրորդ. զի զամենայն պատիւ առ Հայր վերաբերէր: Երրորդ. ցուցանէր զինքն ի Հաւրէ, զի զամենայն ինչ, զոր առնէր, կամաւ եւ զաւրութեամբ Հաւր առնէր: Չորրորդ. առ ի յուսումն մեզ, որ զամենայն գործս մեր ի պատիւ եւ ի փառս Աստուծոյ արասցուք եւ մի՛ ի գովութիւն անձանց մեր:

Իսկ որ ասէ Մատթէոս, թէ Քրիստոս հայեցաւ ի վեր յերկինս (հմմտ. Մաւրթ. ԺԴ. 19), եւ այն վասն երեք պատճառի. նախ՝ առի ցուցանել, թէ զմիտս ունէր առ Աստուած վերացեալ: Երկրորդ. ի յուսուցանել զմեզ ի յաղալթելոյն ժամն արտաքին նշան համեստութեան ստանալ եւ մի յայս կոյս եւ յայն կոյս նայիլ: Երրորդ. զի այնպէս վայել էր Քրիստոսի պատուել զՀայր մտաւք, որպէս եւ ցուցանէ հայեցուածք աչացն եւ համբարձումն ձեռաց ամբառն ալ ի վեր ընդ մտացն:

Դարձեալ՝ ըստ Մատթէոսի Քրիստոս աւրհնեաց, այսինքն՝ զԱստուած եւ զհացն, բայց այլ եւ այլ կերպիւ, զի զԱստուած աւրհնեաց շնորհակալ լինելով եւ զհացն աւրհնեաց՝ սրբելով եւ աճողական զաւրութիւն տալով:

Բան. «Առ զհացն [Յիսուս, եւ] զոհացաւ եւ բաշխեաց բազմակաւնացն, նոյնպէս եւ ի ձկանցն որչափ եւ կամեցան» (Յովհ. Զ. 11):

Եւ աստ լինի երեք հարց.

Առաջին. Թէ վասն է՞ր գոհացաւ ի վերայ հացին միայն, եւ ոչ ի ծովուն սաստելն, եւ ոչ յանդամալուծին, եւ ոչ ի կուրին բժշկելն:

Պատասխանի. Ասէ այսմ Ոսկերեբանն երեք պատճառ. նախ՝ զի ուսուցցէ զմեզ յամենայն ժամ աղաւթել եւ գոհանալ եւ ապա ճաշակել: Երկրորդ. զի ցուցցէ, թէ ոչ է հակառակ Հաւր, որպէս



հրէայքն կարծէին, այլ միշտ միակամ եւ միազաւր ընդ Հաւր: Երրորդ. գոհացաւ, զի մի՛ կարծեսցի չար արուեստիւ եւ սատանայիւ լինել, այսինքն՝ կախարդութեամբ, այլ ի զաւրութենէն Աստուծոյ:

Դարձեալ՝ վասն չորս պատճառի պարտ է մեզ աղաթել եւ գոհութեամբ ճաշակել. նախ՝ զի աղաթքն հոգւոյն է կերակուր, որպէս հացն մարմնոյն, վասն այն պարտ է նախ զհոգին կերակրել եւ ապա՝ զմարմինն: Երկրորդ. զի պարտ է աւրհնել զպարգեւատուն եւ ապա զպարգեւն ընդունել, զի մի ապերախտ լիցուք: Երրորդ. զի գոհութիւն կրկին աւգտութիւն ունի, այսինքն՝ զի առաւել պարգեւացն հատուցումն է եւ վերստին պարտական առն է: Չորրորդ. զի որոշեսցին կերակուրք քրիստոնէից ի յայլ ազգեաց, ե՛ւ ի կռապաշտիցն, ե՛ւ ի հրէիցն, այլ եւ յանասնոց եւ ի գազանաց, որք միայն կերակուր ուտեն առանց աղաթից եւ գոհութեան, ապա պարտ է ի ճաշակել զսուրբ Խորհուրդ մարմնոյն եւ արեանն Քրիստոսի «զ Գոհանամքն» ասել, այլ եւ ընդունելով զնշխարքն սուրբ զսաղմոսն երգել. «Արինցից զՏէր յամենայն ժամ» (Մաղմ. ԼԳ. 2), եւ ի մարմնաւոր սեղանն. «Ձբարձր առնամն» երգել: Եւ որպէս Տէրն մեր եւ աշակերտքն կանգնեալ գոհացան, նոյնպէս եւ մեզ պարտ է կանգնել, աւրհնել եւ նստել ճաշակել, եւ վերստին կանգնել եւ գոհանալ:

#### ԹԷ ՅԱՆԱԳԱՏՆ ԵՏ ԶՆԱՅՆ

Երկրորդ հարց. Վասն է՞ր յանապատն եւ ոչ ի քաղաքի աճեցոյց զհացն: Պատասխանի. Ասեն վարդապետք՝ վասն վեց պատճառի. նախ՝ զի թէ ի քաղաքի էր, կարծէին հրէայքն, թէ ծածկաբար ի տանէ հաց առին եւ բաշխեցին, այլ յանապատի արար, յորժամ յայտնեցաւ քաղց ժողովրդեանն եւ աղքատութիւն աշակերտացն: Երկրորդ. վասն պիտոյից ժողովրդեանն, զի թէ ի շինագահս էին, հաց առնուլ կարէին իւրեանց: Երրորդ. զի բարձցէ զկարծիս փառասիրութեան ախտի, զի թէ ի քաղաքի էր եղեալ, սնափառութիւն լինել կարծէին: Չորրորդ. ի ցուցանել զՋերմ սէր ժողովրդեանն եւ զհաւատս, որ անփոյթ արարեալ էին զամենայն հոգս մարմնական եւ զնացեալ յանապատ ընդ Քրիստոսի: Հինգերորդ. առ ի համեմատութիւն այսմ սքանչելեացս առ հին սքանչելիքն, որ մանանայիւ կերակրեցան յանապատին: Վեցերորդ. առ ի ցուցանել, թէ

այնոցիկ, որ փախչին յաշխարհէ եւ հետեւին Քրիստոսի կամաւոր աղքատութեամբ, ամենայն պիտոյք նոցա պարգեւեալ լինէին:

#### ԹԷ ԱԶ ՆՈՐ ՍՏԵՂԾ

Երրորդ հարց. Վասն է՞ր ոչ ստեղծեացնոր հաց, այլ զհինն աճեցոյց:

Պատասխանի. Եւ այս վասն վեց պատճառի. Առաջին. ի յայտնութիւն այնմ սքանչելեացն, զի թէ նոր հաց էր ստեղծեալ, ասէին հակառակքն, թէ ծածուկ ունէր եւ յայտնեաց:

Երկրորդ. ի յանդիմանութիւն չար հերձուածողաց մանիքեցւոցն, որ զամենայն մարմնական իրս չար ասէին եւ ի սատանայէ եղեալ, իսկ Քրիստոս աճեցոյց զհացն՝ եցոյց զնա բարի գոյ:

Երրորդ. եցոյց զնոր կարգ գործելոյն եւ զիւր իշխանութիւն ի վերայ աշխարհի, զի ոչ էր եկեալ նոր իր ստեղծանել ի յոչնչէ, այլ զհինն նորոգել եւ ի կատարելութիւն ածել:

Չորրորդ. ցուցանէ յայտու զաճումն քրիստոնէական իմաստութեանց, այսինքն՝ վարդապետութեան եւ շնորհաց, զոր ի մէջ եկեղեցւոյ արար եւ առնէ միշտ, զի ի սակաւ գրոց եւ խորհրդոց անբաւ իմաստութիւն եւ շնորհ աճեցոյց:

Հինգերորդ. զայն ցուցանէ, որ ի մի աղբերէ շնորհացն Քրիստոսի զանազան պարգեւք ելանեն յազգս մարդկան, եւ որպէս բեկանելով բաժանին առ մեզ, վասն այն աստ զնկանական երեկ, եւ յորժամ զմարմինն իւր ետ աշակերտացն, զհացն զայն երեկ: Եւ զկնի յարութեան ետ ծանաւթս ի բեկանել հացին:

Վեցերորդ. զայն ցուցանէ, զի ազգս մարդկան ի գործ շնորհացն Աստուծոյ, որ զմեզ կերակրէ, որպէս նիւթական գործակից լինի հինգ զգայութիւն մարմնոյս, որպէս հինգ նկանակն, եւ հանճար եւ կամս մեր որպէս զերկու ձկունս, եւ ի սոցանէ զանազան գործ առաքինութեան աճէ: Իսկ թէ հացն եւ ձուկն յուճ ձեռս աճէին, ոմանք ասեն՝ միայն ի ձեռս Քրիստոսի աճէր, եւ առաքեալքն բաշխէին, զի սքանչելիքն միայն ի ձեռս Քրիստոսի լիցի, եւ Ոսկերբրանն ասէ, թէ ի ձեռն Քրիստոսի աճէր եւ բաշխէր, այլ եւ ի ձեռս առաքելոցն եւս աճէին, առ ի ցուցանել, թէ զամենայն շնորհս, որ տայ Քրիստոս եւ մարդիկ աճեցուցանեն յինքեանս, որպէս ցուցաւ: Եւ զիտելի է, զի Քրիստոս ոչ աճեցոյց ի միոյ հացէ բազումս



առնելով, այլ զնշխարս ամեցուցանելով, զի առաւել զգալի յայտնեսցի սքանչելիքն, զի ոչ կարէին հակառակ ասել, թէ ծածկաբար բերէին: Եւ տե՛ս, զի Քրիստոս միապէս ետ ամենեցուն, եւ ի հասարակ տեղիք նստոյց ի վերայ դալար խոտոյ: Ասէ Ոսկերբերանն, զի ցուցցէ այնու զխոնարհութիւն եւ զեղբայրսիրութիւն եւ զպարկեշտութիւն, զի ամենայն ինչ հասարակ լիցի աստուածապաշտիցն: Դարձեալ՝ զի աստ բաշխեաց եւ ետ զնշխարսն, նոյնպէս եւ մեզ պարտ է զնշխարսն բաշխել եւ տալ ժողովրդեանն: Եւ որպէս զհաց մարմնոյն բաշխեաց ի Վերնատունն եւ ետ, պարտ է եւ մեզ մասն տալ զհազորդութիւն, եւ ոչ՝ բոլոր: Եւ որպէս յետ յարութեան խաչանման երեկ եւ ետ ծանաւթս ի բեկանել հացին, որ սոյնպէս սովոր էր նախ քան զխաչն առնել, նոյնպէս եւ մեզ պարտ է ի սեղանն զաղուհացն կտրել խաչանման:

**ՎԱՍՆ ԴՈՆԻ**

Դարձեալ զիտելի է, որ ի վանորայս եփեն զհացն եւ կոչեն «դոն», այսինքն՝ դուն նուազ եւ փոքր ի ձեւ ձկան, եւ բեկեալ նկանակացն նմանեցուցեալ:

**ՎԱՍՆ ԺՈՂՈՎԵԼՈՅ ԶՆՇԽԱՐՍ**

Բան. «Եւ իբրեւ յագեցան, ասէ Յիսուս ցաշակերփսն. “Ժողովեցէք զնշխարեալ կոփորսդ”» (Յովհ. Զ. 12):

Մեկնութիւն. Եւ աստ լինի երեք հարց.

Առաջին. Վասն է՞ր հրամայէ ժողովել զնշխարս:

Պատասխանի. Ասեն վարդապետք՝ վասն երեք պատճառի.

Նախ՝ ցուցանէ, թէ պարտ է առաջնորդաց հոգ տանել վասն աղքատաց, եւ աշակերտքն եպիսկոպոսք եւ առաջնորդք լինելոց էին, վասն այն նոցա հրամայեաց:

Երկրորդ. ի յայտնութիւն սքանչելեացն, զի թէ ուրուական էր, նշխար մնացուածոց ոչ երեւէր, զի տարան զնշխարսն առ այլս, որք ոչ էին տեսեալ, եւ նոցա ուտելովն զիտացին, զի ստոյգ հաց էր, եւ հաւատացին:

Երրորդ. ցուցանէ, թէ պարտ է վարդապետաց ժողովել զբանս ի սուրբ Գրոց, զի զմեծագոյն խորհուրդս, զոր թանձրամիտ ժողովուրդն ոչ կարէ իմանալ, չէ պարտ անփոյթ առնել, այլ պարտ

է վարդապետաց քննել զԳիրս եւ կերակրել բանիւ զժողովուրդն: Այլ զիտելի է, զի որպէս Քրիստոս զհացն ի նոցանէ էառ եւ բազմացոյց, եւ ոչ թէ նոր ստեղծեաց, սոյնպէս պարտին վարդապետք զհոգելից եւ ուղղափառ առաջնորդաց իւրոց զբանս քննել եւ ժողովել եւ ոչ թէ նորաձեւ կարգս ի յեկեղեցիս մուծանել, եւ անտի զանկարգութիւն եւ զկոխիւ շահել: Այլ եւ Քրիստոս որքան յերկրի էր զհին աւրէնս եւ զմարգարէից բանս ուսուցանէր եւ զմեկնութիւնս նոցա:

**ԶՎԱԳԻՒՆ ՄԻ՝ ՀՈԳԱՅՔ**

Երկրորդ հարց. Վասն է՞ր այլ ուրեք հրամայեաց Քրիստոս զվաղուեանն մի հոգալ եւ մի ստանալ պարկ եւ մի հաց եւ աստ հրամայեաց ժողովել զկոտորսն:

Պատասխանի. Նախ՝ անդ ասաց վասն անձին մի հոգալ, աստ ասաց վասն աղքատաց ժողովել:

Երկրորդ. թէ պէտք կարեացն այլ ուստեք լինի հնար, ոչ է պարտ զվաղիւն հոգալ, իսկ յորժամ ոչ լինի հնար, պարտին զվաղիւն հոգալ:

Երրորդ. զի չհոգալ զվաղիւն ոչ է ամենեցուն կանոնք, այլ միայն նոցա է, որ ի վարս առաքինութեան չըջին, իսկ հասարակ տանց եւ գեւղից պարտ է զվաղիւն հոգալ վարելով եւ սերմանելով եւ այլն:

Չորրորդ. զվաղիւն չհոգալ վասն մարմնոյ եւ ժամանակիս ասաց, իսկ վասն հոգեւոր իմաստից եւ հանդերձեալ կենացն, որ վաղիւն է, պարտ է այսաւր հոգալ, որպէս աստ ասէ.

**ՎԱՍՆ ՍԱԿԱՌԱՅՆ**

Բան. «Ժողովեցին եւ լցին երկոփասան սակառի զկոփորոցն» (Յովհ. Զ. 13):

Մեկնութիւն. Եւ այս ոչ պատահամբ, այլ աստուածային նախախնամութեամբն, ըստ թուոյ առաքելոցն առ ի բառնալ զնոսա, զի այնու նշանակեցաւ, որ առաքեալքն կրելոց էին զնշխարս բանին Քրիստոսի ընդ ամենայն աշխարհս:

Երրորդ հարց. Թէ ուստի՞ էին սակառիքն:



Պատասխանի. Չորս է իմացումն. նախ՝ ոմանք ասեն, թէ ի մեր-  
ձաւոր գեղջէ առին: Երկրորդ. ասեն ոմանք, թէ բերեալ էին առ  
ի վաճառել ժողովրդեանն: Երրորդ. ոմանք ասեն, թէ զհիւանդքն  
բերէին սակառաւքն եւ բժշկեցան, յայնցանէ էր: Չորրորդ. ասեն  
ոմանք, թէ տարան զկոտորան ընդ ինքեան ի գիւղ մի եւ անդ լցին  
ի սակառի եւ այնու կատարելապէս յայտնեցան սքանչելիքն, զի  
վերջին մնացորդն առաւել էր, քան զառաջին սկիզբն:

Բան. «Իսկ մարդիկն իբրեւ փեսին զնշանսն, զոր արար Յիսուս»  
(Յովհ. Զ. 14):

Մեկնութիւն. Եւ այսու երեք պտուղ ցուցանէ. նախ՝ զի հաւա-  
տացին ի Քրիստոս: Երկրորդ. զի պատուեցին զՔրիստոս: Երրորդ.  
զի խնդրեցին զՔրիստոս ի վերայ ինքեանց թագաւոր կացուցանել:

ՎԱՍՆ ՄԱՐԳԱՐԷԻՆ

Բան. «Եւ նա է ճշմարիտ մարգարէն, որ գալոց էր յաշխարհ»  
(Յովհ. Զ. 14):

Մեկնութիւն. Տե՛ս, զի գիտէին ի Գրոց եւ գողանային: Այն, զոր  
Մովսէս ասաց յերկրորդ Աւրէնքն. «Մարգարէ յարուցէ ձեզ Տէր» (հմմտ. Բ Օր. ԺԸ. 15), եւ յորժամ տեսին ժողովուրդն զսքանչելիսն Յիսուսի,  
խոստովանեցան զնա նոյն եզական մարգարէ, եւ ասացին. «Սա է  
ճշմարիտ Քրիստոսն, որ գալոցն էր» (Յովհ. Զ. 14), զի այլ մարգարէքն ոչ  
եկին յայսանուն, այլ եկին ի պատմել զգալուստն Քրիստոսի:

Եւ թէ Մովսէս վասն էր մարգարէ կոչեցաւ, ասէ մեկնիչդ. վասն  
երեք պատճառի. նախ՝ վասն մեծամեծ սքանչելեացն: Երկրորդ.  
վասն տկար հաւատոց ժողովրդեանն, որպէս եւ այժմ այլ ազգիք  
վասն անհաւատութեան փեղամբար ասեն: Երրորդ. զի մարգարէ  
անուամբ յարեցին ի նա եւ ի նշանացն ի կատարեալ գիտութիւն  
հասցեն նմա:

ՎԱՍՆ ԵՐԵՔԿԻՆ ԳԱՍՏԵԱՆ ՀՈՌՄԱՅԵՑԻՈՅՆ

Եւ տե՛ս, զի ասէ. «Որ ոչ լուիցէ մարգարէին, սափակեցի յԻսրայել»  
(հմմտ. Բ Օր. ԺԸ. 19), որպէս եղեւ. նախ՝ առ խաչահանուէքն յետ քա-  
ռասուն ամի ի ձեռն Տիտոսի եւ Վէսպիանոսի ի նոյն Զատկի տաւ-

նին ժողովեցան ի վերայ Երուսաղէմի, եւ հաւատացեալքն ցրուե-  
ցան յերկիրս հեռաւորս եւ պաշարեալ առին զԵրուսաղէմ, եւ երե-  
սուն եւ վեց բիւր ի սուր արկին եւ յիսուն բիւր գերի վարեցին եւ  
վաճառեցին հինգ-հինգ դահեկանի զգլուխն մարդոյ:

Այս առաջին կոտորումն հրէից:

Երկրորդ եղեւ յետոյ. հինգ հարիւր քառասուն եւ եւթ թուին  
հռոմայեցոց եկին ի վերայ քաղաքին ի չորս կողմանց եւ առին  
զԵրուսաղէմ եւ զայլազգիսն կոտորեցին սրով քառասուն եւ հինգ  
հազար ոգիս, եւ ոչ մնաց ի նոցանէ եւ ոչ մի, մինչ կաթողիկոսին,  
զոր «Պապ» կոչեն, բուռն ձեռաց մածեալ արեամբ ընդ սուրն, եւ  
լուացեալ տաք ջրով, ասաց զսաղմոսն. «Եւ զձեռս իւր լուացէ յարեան  
մեղաւորի» (Սաղմ. ԾԷ. 11) եւ պատարագ մատոյց ի Սուրբ Յարութիւն:

Երրորդ. Դարձեալ գալոց են հռոմայեցիքն ամենայն եւ զկարա-  
պետս նեոխնն բարձցեն ի քրիստոնէից ըստ պատմութեան Ագաղ-  
րոնի, յորժամ թագաւորութիւն Հայոց վերստին նորոգեցի եւ  
քահանայք եւ եկեղեցիք ազատեցին, եւ ապա երեւեցի մարդն  
անաւրէնութեան եւ որդին կորստեան՝ նեռն, մերձ ի կատարած  
աշխարհի:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՅԼԱԲԱՆՈՒԹԵԱՄԲ

Եւ զսքանչելիքս Հացին այլաբանութեամբ մեկնեն վարդա-  
պետք չորս կերպիւ.

Նախ՝ ի յերեկոյացեալ ժամուն հինգ Հաց երեկ Քրիստոս եւ եր-  
կու ձկունս, սոյնպէս եւ ի կատարած հրէիցն զհինգ Գիրսն Մով-  
սիսի, որպէս զհինգ նկանակսն երեկ, այսինքն՝ երաց եւ աճեցոյց  
ի խորհրդական միտս հաւատացելոց, եւ երկու ձկունս, այսինքն՝  
այլ մարգարէականք եւ պատմութեան բանք աստուածային Սուրբ  
Գրոց:

Երկրորդ. որպէս ասացաւ հինգ նկանակն հինգ զգալութիւնս  
մեր, եւ երկու ձկունք իմացումն եւ կամքն, որով աճեմք ի հաւատս  
եւ ի գործս զանազան առաքինութեանց:

Երրորդ. հինգ գարեղէն նկանակն եւ երկու ձկունս, զի նախ քան  
զՔրիստոս գործ մեր անբանից էին կերակուր, եւ հոգւով եւ մարմ-  
նով ի ծով մեղաց շրջաք, իսկ գալստեամբն Քրիստոսի պատանիք



եղաք բանական հրեշտակաց եւ Աստուծոյ, զկամս կատարելով, յորժամ ի ծովէ մեղաց ի ցամաք արդարութեան վերածեաց զմեզ:

Չորրորդ. նկանակն է յաւրինակ խոնարհաց եւ անմեղաց, որք ոչ ունին զխմոր չարութեան եւ զփքացումն հպարտութեան, եւ ձկունք, որ ջերմացեալ սիրովն Աստուծոյ պիտանիք եղեն, զի ոչ միայն զի մերձ էր ի Զատիկն նկանակ էր հացն, զի ահա չորս նկանակն, որ յեւթ հազարսն բաշխեաց, հեռագոյն էր ի Զատիկէն, այլ զի վասն յանապատ տեղիս շրջէին, նկանակ ուտէին:

**ԹԷ ՈՉ Ի ՊԱՏՔՆ ՈՒՏԵԼԻ Է ՉՈՒԿՆ**

Եւ վա՛յ ասեմ որովայնամոլ ազգին Ֆռանկաց, որ զամենայն պահք լուծանեն ի ձուկն անխտիր, որոց աստուած որովայնք իւրեանց է եւ փառք՝ ամալթն մեղաց, եւ պատճառեն զպատճառս մեղաց գործողքն անաւրէնութեանց:

Նախ՝ թէ՛ Քրիստոս յորժամ զնկանակն եւ զձուկն անցոյց, մերձ էր Զատիկն: Ասեմք առ այս, թէ՛ հրէից նախ Զատիկն էր եւ ապա բաղարջակեր պահքն: Եւ յայտ է, զի ուտիք էր, որ բաժանեաց զձուկն: Եւ դարձեալ՝ ի քառասունս իւր ոչ եկեր ձուկն, եւ մեք զքառասունսն Քրիստոսի պահեմք եւ ոչ՝ զհրէիցն:

Երկրորդ. ասեն, թէ ի Վերնատունն Քրիստոս ձուկն եկեր, պարտ է ի նմին աւուր ձուկն ուտել: Ասեմք, թէ ի Վերնատունն զհինն կատարեաց մինչ զմարմինն բաշխեաց, եւ նոր աւրէնս եղ եւ հնոյն ոչ եմք պարտական, ապա թէ՛ ոչ, եւ գառն կերաւ ի Վերնատունն, կե՛ր եւ դու ի պահոցն:

Երրորդ. ասեն, թէ յետ յարութեան ձուկն եկեր ընդ աշակերտսն, յորում կրակեալ կայծականց տեսին եւ ձուկն խորովեալ եւ հաց, եւ աւրն էր չորեքշաբթի, եւ ի հինգշաբթի համբարձաւ:

Ասեմք, թէ կրկին սուտ եւ նոր աւետարան. նախ՝ զի յետ յարութեան ոչ էր պահք, այլ Զատիկ, մինչ փեսայն էր ընդ նոսա, որպէս ինքն հրամայեաց (Մարթ. Թ. 15): Եւ կրկին սուտ, զի ուր զձուկն կերան ի Գալիլեա, յեզր Տիբերական ծովուն էր, չորս աւուր ճանապարհաւ հեռի յերուսաղէմէ եւ ի լեառնէն Զիթենեաց, ուստի համբարձաւ Քրիստոս: Ապա յայտ է, զի ոչ ի չորեքշաբթի եկեր զձուկն, այլ յանցեալ կիրակէն: Եւ զայլն վասն ձկանց եւ նկանա-

կաց՝ գտցես ի Հարցմունքն, յութներորդ հատորն եւ ի քսան եւ իններորդ համարն:

Այսքան առ այս:

Բան. «Յիսուս իբրեւ զիփաց, եթէ գալոց են յափշտակել զնա» (Յովհ. Զ. 15):

Մեկնութիւն. Այսու Քրիստոս կրկին աւրինակ տայ մեզ. նախ՝ փախչել ի ժամանակաւոր պատուոց, որպէս եւ զինքն տալով ի չարչարանս աւրինակ ետ մեզ զչարչարանս ընդունել: Երկրորդ. աւրինակ տայ, զի ոչ մնաց այնչափ, զի առ Նա հասանէին, այլ յառաջագոյն փախեաւ, ցուցանելով այնու, զի որ ոք կամիցի պահել զանձն ի պատճառէ մեղաց, նախքան զգալ փորձութեան, պարտ է, զի տեղի տացէ: Իսկ Դարձեալ (Յովհ. Զ. 15) ասելն ցուցանէ, զի նախ ի գլուխ լերինն էր եւ էջ ի դաշտ եւ կերակրեաց զժողովուրդն, եւ յորժամ կամեցան<sup>2</sup> թագաւորացուցանել, եւ դարձեալ ի գլուխ լերինն, կալ յաղաւթս, որպէս Մատթէոս ասէ. «Թէ՛ Քրիստոս ոչ կամեցաւ թագաւորել»:

Աստ լինի կրկին հարց.

Առաջին. Թէ՛ Քրիստոս ընդ է՞ր ոչ կամեցաւ զթագաւորութիւն, եւ այն, զի սեպհական ունէր զթագաւորութիւն, որպէս ասաց առ Պիղատոս. «Ի յայդ իսկ ծնեալ եմ եւ ի դոյն եկեալ յաշխարհս» (Կեն Յովհ. ԺԸ. 37):

Պատասխանի. Ասեն վարդապետք՝ վասն ութ պատճառի.

Նախ՝ զի նա Աստուած էր եւ Տէր ամենայնի, ոչ վայել էր լինել թագաւոր միոյ ազգի, որպէս զկայսր ոմն առնել թագաւոր միոյ գաւառի:

Երկրորդ. ըստ որակի թագաւորութեան Քրիստոսի, զի թագաւորութիւն Նորա հոգեւոր էր եւ յաւիտենական, ոչ վայել էր նմա լինել մարմնաւոր եւ անցաւոր թագաւոր:

Երրորդ. վասն կարծեաց հրէիցն, զի վասն հացին կամեցան թագաւորեցուցանել եւ ոչ ճշմարիտ հաւատով, զի որովայնամոլք էին, կամէին զի անաշխատ կերիցեն: Եւ յայտ է, յորժամ յագեցան, ոչ ասէին նմա անցաւոր շաքաթուն կամ հակառակ Մովսիսի, վասն որոյ ոչ վայել էր նմա այնպիսի թագաւոր լինել, որ ի պատճառս որկորստութեան էր, որպէս ասէ. «Երթայք գործեցէ՛ մի՛ գկորստական կերակուրն» (Յովհ. Զ. 27):



**Չորրորդ.** վասն խաղաղութեան ոչ թագաւորեաց, զի մի խոռովութիւն լիցի աշխարհի, զի կայսր եւ Հերովդէս եւ քահանայապետքն ամենայն ի բարկութիւն շարժէին:

**Հինգերորդ.** Ջի մի աղարտեսցին գրեալքն մարգարէից, որ զՆա հեզ եւ խոնարհ թագաւոր գուշակեցին եւ ոչ՝ բռնաւոր (հմմտ. Ջաւար. Թ. 9, Առակ. ԻԹ. 22):

**Վեցերորդ.** զի մի աւրէնք քրիստոնէութեան մերոյ արհամարհեսցի յայլ ազգեաց, թէ բռնութեամբ եւ իշխանութեամբ ունին եւ ոչ՝ անձնիշխան կամաւք, որպէս Մահմէտի աւրէնքն, որ սրով սկսաւ եւ սրով մնայ եւ աճէ:

**Եւթներորդ.** զի ինքն եկեալ էր ուսուցանել մեզ աղքատութիւն եւ հեզութիւն եւ խոնարհութիւն, որպէս ասէր. «Թէ ամիցեն քեզ ապրակ» (Մաթթ. Ե. 39) եւ այլն: Ապա ոչ էր պարտ մարմնական փարթամութիւն ընդունել:

**Ութերորդ.** միտք կարէ ասիլ, զի Քրիստոս խաչիւ եւ չարչարանաւք կամէր ազատել զազգս մարդկան, եւ թէ թագաւորեալ էր ըստ մարմնոյ, երկնչէին հրէայքն զրպարտել կամ ձեռս ի Նա արկանել:

**Այսքան յառաջինն:**

**Երկրորդ հարց.** Ապա վասն է՞ր մարգարէքն զՆա թագաւոր ասացին, որպէս ասաց Դաւթի. «Ի պողոյ որովայնի քո նստուցից յաթոռ քո» (տն՝ Սաղմ. ՃԼԱ. 11), եւ թէ. «Խնդրեա՛ յինէն եւ փաց քեզ զհեթանոսս ի ժառանգութիւն» (Սաղմ. Բ. 8), եւ **Երեմիա ասէ.** «Յարուցից Դաւթի ծագումն արդարութեան եւ թագաւորեսցէ իրաւամբք ի վերայ ամենայն երկրի» (Երգ ԻԳ. 5):

**Պատասխանի.** Ասեմք, թէ բազում են վկայութիւնք վասն թագաւորութեան Քրիստոսի ի Գիրս մարգարէից, այլ հոգեւոր եւ ոչ մարմնաւոր: Ասաց՝ հրեշտակն տացէ նմա զաթոռն Դաւթի եւ թագաւորեսցէ ի վերայ տանն Յակովբայ անվախճան: Եւ զայս ոչ գիտէին յառաջն, որպէս Սողոմէ խնդրէր վասն որդւոցն յաջմէ եւ յահեկէ նստուցանել ի թագաւորութիւն: Նաեւ առաքեալքն ոչ գիտէին, յորժամ հարցին. «Տէր, եթէ ի ժամանակի՞ ասք հասուցանես զարքայութիւն Իսրայելի: Ասէ ցնոսա. “Ոչ է ձեզ զիպել զժամս եւ զժամանակս, զոր Նայր եղ յիրում իշխանութեան”» (Գործք Ա. 6-7):



## 17. ՆԱԲԱԳՆԱՅՈՒԹԻՒՆՆ ԱՌԱՔԵԼՈՑ

Մաթթեոս ԺԴ. 22-33

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՒ ԵՓՐԵՄ

Եւ աշակերտքն դարձեալ ծովածովի ալեկոծ իմ էջ ծովուն լինէին, իբրեւ զառաջինն, այլ յայնժամ մինչդեռ ընդ նոսա էր, ինեւ ին վշտանային եւ այժմ ինքեանք միայն առանձինն, զի առ սակաւ սակաւ մեղմով ի մեծամեծս հանէր զնոսա: Եւ կրթէր տակաւ տանել նեղութեանցն: Ի բաց գնաց եւ նոցա ի մէջ ծովուն տայ կոծել, քանզի փնքն իսկ հրամանել հողմոցն յուզել, զի մի եւս ուստէք ունիցին ակն յուսոյ փրկութեան:

Եւ ի չորրորդ պահու գիշերոյն ասէ եկն առ նոսա (տն՝ Մաթթ. ԺԴ. 25):

Վասն այնորիկ ոչ վաղվաղակի գայր առ նոսա, զի խրատեսցէ, մի վաղվաղակի դիւրութիւն խնդրել վշտացն, այլ յամել եւ տանել առաքինութեամբ ճգանցն:

**ԵՓ Արդ.** մինչդեռ նստէին նոքա ի նաւի անդ եւ հողմակոծ էին եւ ծովն խոռովեալ էր ի վերա նոցա, եկն Տէր մեր եւ երեւեցաւ նոցա:

Եւ նոցա այսպէս թեցաւ, եթէ դեւ իցէ այն, որ երեւեցաւ նոցա զի հաստատեալ գիտէին նոքայ, թէ զձանրութիւն մարմնոյ զգեցեալ է նայ եւ վասն այնորիկ կարծեցին նոքայ, թէ ձանրութիւն մարմնոյ զգեցեալ է նայ եւ վասն այնորիկ կարծեցին նոքա, թէ ձանրութիւն մարմնոյ դ<ի>ժուարին է ի վերա[յ] ջուրց գնալ:

Եւ թէ այս այսպէս իցէ, ապա ոչ անմտութեամբ զարհուրեցան, զի թէ առանց մարմնոյ գիտէին զնա, անմտութեամբ զարհուրեցան եւ բարձին զաղաղակ: Եւ եթէ մարմնաւոր բարուք զարհուրեցան, զի իրս նորա տեսին մարմնաւոր, զի գնայր ի վերա ալեաց ծովուն եւ ոչ ընդդէր եւ քանզի գիտաց Տէր մեր, թէ բարուք զարհուրեցան, քաջալերեաց զնոսա, եւ ասէ՝

«Ես եմ, մի երկնչիք» (Մաթթ. ԺԴ. 27):



Այսինքն՝ «ես եմ այն մարմնաւորն, զոր դուքն իսկ զիտէք»: Եւ քանզի յերեսացն չի ճանաչէին եւ ոչ ի նորա նշան զնացիցն եւ ի ժամանակէն քանզի զիչեր էր, բարբառովն յայտ առնէ զանձն: Իսկ Շմաւոն Հասու եղեւ, թէ վասն մարմնոյ իւրոյ ասաց, թէ՛ «ես եմ»: Պատասխանի ետ նմա եւ ասէ, թէ այդպէս իցէ եւ ես մարմին զգեցեալ եմ եւ թէ զնացից եւ ես ի վերայ ջուրս, ապա զիտացից, թէ դու նովին մարմնով զոր եսն զիտեմք գնացեր:

«Նրամայեայ ինձ,- ասէ, -գալ առ քեզ» (Մարթ. ԺԴ. 28):

Եւ ոչ ասաց, թէ յաղալթս կաց, կամ աղաչեայ, այլ՝ հրամայեայ: Տեսանես՝ որչափ ինչ էր ջերմութիւնն, որ(ք)պիսի ինչ հաւատքն եւ այս ո՛չ ի ցոյցս ինչ, կամ առ պարծանս, այլ վասն սիրոյ միայն: Յայնժամ իջեալ ի նաւէն, երթայր առ նա, ո՛չ այնչափ ինչ խնդայր, զի ի վերայ ջուրցն գնայր, որչափ այն, զի առ Տէրն գնայր: Մեծին յաղթեաց եւ ի փոք[ո]ւէն դեռ զեղծէր: Ի հողմոյն սաստկութենէն ասեմ եւ ոչ ի ծովէն, զի այնպիսի իսկ է մարդկային բնութիւնս. բազում անգամ ի մեծամեծս ինչ առաքիւնանայ եւ ի փոքուն զեղծի, որպէս Եղիայ Եզարելայ եւ Մովսէս եգիպտացւոցն եւ Դաւիթ ի Բերսարէէ: Նոյնպէս եւ սայ. մինչ սաստկացէր խիզախեաց ի վերայ ջուրցն գնալ եւ հողմոյն ընդդէմ չկարաց ինչ զաւրել. եւ այն՝ զի մաւտ իսկ էր Քրիստոս: Այնպէս եւ չէ ինչ աւգուտ մաւտ լինել ի Քրիստոս, եթէ հաւատովք ոչ իցէ մաւտ: Բայց այնու իսկ դարձեալ ընդ էր ի մէջ վարդապէտին եւ աշակերտին, եւ այլոց եւս աշակերտացն ի մխիթարութիւն լինէր: Եթէ ընդ երկուցն ըմբոստացան, որչափ եւս առաւել անդ, զի չեւ եւս էին լեալ արժանաւորք հողւոյն: Եւ ընդէ՞ր արդեւք հողմոցն չսաստեաց դարարել, այլ ինքնին ձեռն ձգեաց եւ բուռն եհար զնմանէ: Զի նորա հաւատոց պետք էին: Եւ յորժամ մերն կասիցիս այն ի թիկունս հասանիցէ, ցուցանէ, ոչ հողմոյն ինչ բռնութիւն, այլ նորա թերահաւատութիւնն առնել զընկղմելն: Ընդէ՞ր ասէ՛ երկմտեցէր, թերահաւատ: Զի թէ ի հաւատոցն չէր տկարացեալ եւ հողմոյն դիւրեաւ ընդդէմ կարէր կալ: Վասն այսորիկ, թէպէտ եւ բուռն եհար զնմանէ, հողմոցն տակաւին շնչել տայր, զի յայտ արասցէ, թէ չկարէ հողմն վնասել, յորժամ հաւատն հաստատ ունիցէ:

ԵՓ Եւ զի բարձր կալաւ ի վեր ծովն զՏէր մեր վասն ճանապարհին, զոր հնազանդեաց առաքելոց իւրոց զաշխարհս, աստ ծովովս

յայտ արար եւ անդ կատարեցաւ: Անդ այն զի ասէ, «Դու փրեալ գարութեանց ծովու եւ զխռովութիւն պլեացն ցածուցանես» (Կրն Սաղմ. ԶԼ. 10):

Եւ յորժամ ելին ի նաւն, ապա դադարեաց հողմն (հմմտ. Մարթ. ԺԴ. 32):

Յառաջնումն ասէին՝ «Ո՞րք իցէ այրս այս զի եւ՛ հողմք եւ՛ ծով հնազանդի սմա» (հմմտ. Մարթ. Ը. 27), իսկ աստ ո՛չ նոյնպիսի ինչ, այլ թէ արդարեւ որդի աստուծոյ ես դու, այն որ գրեալ էր վասն նորա: «Տեսին զքեզ, ասէ, ջորք Ասրուած եւ երկեան եւ խորք խռովեցան եւ շախդք քո ի ջորս բազումս» (հմմտ. Սաղմ. ՆՁ. 17-18): /Հետք քո ոչ եւս երեւին եւ խոստովանի եղեւ բանիւ իւրեանց, թէ արդար եւ որդի Աստուծոյ է նայ, այն որ այս ամենայն վասն նոր եղեն խաւսեցեալ: Դսրովեալ լինի եւ Արիոս, զի հակառակ լինի ծննդեան բանի:

Տեսանես՝ զիա՞րդ առ սակաւ սակաւ ի բարձրագոյնսն տարաւ եհան զնոսա եւ ի գնալոյն ի վերայ ծովուն եւ այլում հրամայելով զնոյն առնել եւ առ ի զտագնապեալն ապրեցուցանելոյ, յաճախէին այնուհետեւ հաւատքն:

### ՅՈՎՆԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ

(Գլուխ ԺԴ.)

Եւ սփիպեաց վաղվաղակի զաշակերտսն մտանել ի նաւ եւ յառաջել յայնկոյս, մինչ Ինքն զժողովուրդսն արձակիցէ (Մարթ. ԺԴ. 22):

Յորժամ մեծ ինչ գործս գործէր, մեկուսի առնէր զանձն ի ժողովրդեանէն եւ յաշակերտացն, զի զմեզ ուսուցանիցէ մի՛ ի բազմաց փառս ինչ խնդրել անձանց եւ մի՛ այնր զհետ երթալ: Այլ ասելովն թէ՛ «ստիպեաց զաշակերտսն»՝ զհպատակութիւն աշակերտացն յայտ առնէ, յորմէ եւ մեք ուսանիցիմք պատկառ կալ Քրիստոսի, ո՛չ միայն վասն երեւելի պարզեւացն, զի մի՛ նախատիցիմք, որպէս հրէայքն, եթէ՛ «Խնդրէք զիս՝ ոչ զի նշանս ինչ տեսէք, այլ զի կերայք ի հացէ անփի եւ յագեցարուք» (Յովհ. Զ. 26), այլեւ հողեւորացն, որպէս աշակերտքն Տեառն: «Յառաջել յայնկոյս, մինչ Ինքն զժողովուրդսն արձակիցէ». քանզի ժողովուրդքն անքակ կամէին լինել ի նմանէ, վասն այնորիկ զնոսա պատճառանօք ժողովոյն արձակեաց յառաջագոյն, որպէս զի նոքա երթիցեն:



Եւ իբրեւ արձակեաց զժողովորդսն, ել ի լեառն առանձինն կալ յաղօթս (Մապթ. ԺԴ. 22):

Դարձեալ՝ եւ այսու զմեզ խրատէ մի՛ միշտ ընդ ժողովուրդն խառնիլ եւ մի՛ ցանկ ի բազմութենէն փախչիլ, այլ երկոքումբք ի դէպ ժամանակի վարիլ օգտակար է անձին եւ բազմաց: Բայց քննելի է եւ այն, թէ է՞ր վասն ի լեառն ելանէ. որպէս զի զմեզ ուսուսցէ, եթէ բարւոք է անապատն եւ միայնութիւնն, յորժամ աղօթս կամիցիմք մատուցանել, վասն այսորիկ յանապատ երթայր եւ ի լեառն ելանէր եւ զգիշերն ի գլուխ յաղօթս հանէր, զի ժամանակաւն եւ տեղեաւն զանխռովութեան միտս ստասցուք եւ ի ծփանաց ալեաց կենցաղոյս իրաց զանձինս մեր արտաքս կացուսցուք եւ մտօք յերկինս, զոր «լեառն» նշանակէ, ելցուք: Գիտելի է եւ այն, զի որք զՔրիստոս յերկուս բաժանեն, որք են նեստորականքն եւ համախոհք նոցին, ասեն, թէ արարածական բնութիւնն աղօթէր. զի թէ այս, ապա ուրեմն եւ որդիք երկուք եւ երկու անձն, զորս նզովէ Կաթուղիկէ Եկեղեցի: Այլ Բանն մարմին եղեւ եւ միաւորեալ ի մարմնի անշփոթաբար, որ զնոյն պատիւ եւ զզօրութիւն կանխագիտութեան ընկալաւ ի Բանէն՝ վասն հաղորդութեան ընդ աստուածային անձնաւորութեան, նորա են բարձրագոյնքն եւ նուաստագոյնքն, զոր թոմաս «Տէր եւ Աստուած» կոչէր (հմմտ. Յովհ. Ի 28): Քանզի զաստուածայինն մարդկաբար եւ զմարդկայինն աստուածաբար կատարէր, յորոց մի է եւ աղօթելն, որոյ էր եւ մարմինն՝ յաղագս անձառ միաւորութեանն եւ անշփոթ խառնմանն:

Եւ իբրեւ ընդ երեկս եղեւ, անդ էր միայն: Եւ նաւն մեկնեալ էր ի ցամաքէն բազում ասպարիսօք՝ ծփեալ յալեացն, քանզի ընդդէմ էր հողմն (Մապթ. ԺԴ. 23-24):

Զի Աստուծոյ բարի է միայնութիւնն, քանզի ոչ է ի բազմաց բարդեալ, ըստ որում այլայլմամբ ամբոխեն զմիմեանս, այլ մի եւ քան զամենայն միակ բարձրագոյն. եւ թէպէտ մարդացաւ, սակայն մի է եւ յետ մարդեղութեանն՝ ըստ այնմ. «Միայնն, միինն», եւ զայս ասեմ ըստ բնութեանն եւ ըստ անձնաւորութեանն: Եւ նաւն, ասէ, մեկնեալ ի ցամաքէն՝ ծփէին յալեացն իբրեւ զառաջինն. այլ յայնժամ թէպէտ վշտանային, ընդ նոսա էր ի նաւին, իսկ այժմ առանձինն ինքեանք միայն, զի առ սակաւ սակաւ մեղմով

ի մեծամեծսն կրթէր զնոսա՝ ժուժկալ լինել նեղութեանց: Քանզի ինքն ի բաց զնաց եւ նոցա ի մէջ ծովուն ետ ծփիլ, մանաւանդ թէ ինքն իսկ հրաման ետ հողմոյն յուզիլ, զի մի՛ այլ ուստեք ակն ունիցին յուսոյ փրկութեան: Նաեւ հողմն նշանակ էր ընդդիմակ զօրութեանցն, որք ի ծովու աշխարհիս փորձելոց էին զնոսա:

Եւ ի չորրորդում պահու գիշերոյն եկն առ նոսա Յիսուս՝ գնալով ի վերայ ծովուն (Մապթ. ԺԴ. 25):

Ընդէ՞ր ոչ վաղվաղակի. զի խրատեսցէ զնոսա մի՛ արագ խնդրել զիւրութիւն ի վշտացն, այլ յամել եւ տանել առաքինութեամբ փորձանացն: Իսկ զի՞ զթիւ պահուցն ասէ. քանզի արուեստիւ ցուցական ժամուց զիտակ լինին նաւավարքն, մանաւանդ Հոգւոյն յայտնութեամբ: Բայց զի «պահ» ասէ եւ ոչ «ժամ», յորմէ առեալ ոմանք ասեն, թէ երեք ժամքն պահ մի ասին, եւ լինի երկոտասան ժամ գիշերոյն չորս պահ: Ուստի յայտ է, թէ յառաւօտու պահուն երեւեցաւ նոցա Յիսուս՝ գնալով ի վերայ ծովուն նովին մարմնովն, որով աղօթէրն:

Իբրեւ փեսին գ՛նա աշակերտքն, զի գնայր ի վերայ ծովուն, խռովեցան եւ ասեւ, թէ առաջօք ինչ իցէ, եւ առ ահին աղաղակեցին (Մապթ. ԺԴ. 26):

Մինչդեռ նստէին նոքա ի նաւի անդ հողմակոծեալք ի ծովէն, կրկին խռովեցան եւ ի Տեառն երեւմանէն, զի առ աչս երեւոյթ կարծեցին: Եւ զի հաստատ գիտէին զՆմանէ, թէ ծանրութիւն մարմնոյ է զգեցեալ, որ դժուար է գնալ ի վերայ ջուրց, ապա ուրեմն ո՛չ անմտութեամբ զարհուրեցան ընդ իրսն, որ տեսին մարմնոյ գնալ ի վերայ ալեաց ծովու: Սակայն ո՛չ զանձն յայտնեաց, մինչեւ զաղաղակ բարձին թէ՛ ո՞րք ես, եւ կամ զՅիսուս կարգալով յօգնականութիւն անձանց. զի յաճախութեամբ զարհուրանացն խրատեսցին ժուժկալս լինել եւ ցանկասցին գալստեան նորա:

Եւ վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա Յիսուս եւ ասէ. «Քաջալերացարո՛ւք, Ես եմ, մի՛ երկնչիք» (Մապթ. ԺԴ. 27):

Այսինքն՝ մարմնաւորն, զոր դուք իսկ տեսէք. եւ քանզի յերեսացն չճանաչէին, զի գիշեր էր, եւ ոչ ի նորանշան զնացիցն արագապէս բարբառովն յայտնէ զանձն, որով զերկիւղն կազդուրեաց,



որպէս զի ի ծով աշխարհիս ի Նա վստահանալով՝ ո՛չ յուժեքէ երկիցեն՝ ըստ այնմ. «Տէր է իմ օգնական, եւ ես ոչ երկեայց, զի՛ արասցէ ինձ մարդ» (Մաղմ. ՃԺԷ. 6):

**Պատրասխանի եր Եմա Պետրոս եւ ասէ.** «Տէ՛ր, եթէ Դու ես, հրամայեա ինձ գալ առ Քեզ ի վերայ ջրոյս»: Եւ Նա ասէ՛ եկ (Մապթ. ԺԴ. 28-29):

Պետրոս Հասու եղեւ, թէ վասն մարմնոյն ասաց թէ՛ Ես եմ, ասէ՛ թէ՛ այդպէս իցէ, եւ ե՛ս մարմին զգեցեալ եմ, եթէ՛ գնացից եւ ես ի վերայ ջուրցս, գիտացից, թէ՛ եւ Դո՛ւ նովին մարմնովն, զոր եսն գիտեմ, գնացեր: Բայց դու տես զՋերմութիւն սիրոյն, զոր ունէր առ Նա, զի ո՛չ ասաց՝ աղաչեա կամ յաղօթս կաց, այլ թէ՛ Հրամայեա՛, ուստի իմանամք, թէ՛ ո՛չ ի ցոյց կամ ի պարծանս, այլ վասն սիրոյ միայն եւ ի ստուգութիւն իրացն յայտնութեան: Իսկ ասելն թէ՛ «գալ առ Քեզ», ոչ այնչափ խնդրէր, զի ի վերայ ջուրցն գնայր, քան թէ՛ առ Նա ընթանայր, խնդալից լինէր: «Եւ Նա ասէ՛ եկ». բանիւ միայն, որ զերկինս ձգեաց, եւ զծով յատակընթացս Պետրոսի գործեաց. բայց զարմացիր ընդ Հաւատս Պետրոսի, զի յանձն առեալ գնաց, որպէս ասէ:

**Եւ իջեալ ի նաւն Պետրոս՝ գնաց ի վերայ ջուրցն եւ եկն առ Յիսուս** (Մապթ. ԺԴ. 29):

Ձյոյժ զօրութիւն Տեառն նկարագրէ, զի ոչ միայն Ինքն ընթանայր, այլեւ այլոց գնալ Հրամայէր, նաեւ զխիզախելն Պետրոսի գուշակէ եւ զցանկութիւն սիրոյն, զոր առ Նա ունէր՝ նշանակէ: Իսկ առ ի միտս՝ ո՛չ ոք մերձաւոր լինի Քրիստոսի, եթէ՛ ոչ ի մարմնային եւ յախտաւոր ծննդեանէն, զոր «նաւ» ասաց, իջեալ խոնարհի առ Հոգեւոր ջրոյն ծնունդն, որով յերկինս գրի եւ արքայութեանն ժառանգ լինի:

**Եւ փեսեալ զհողմն սասփիկ՝ երկեալ** (Մապթ. ԺԴ. 30):

Մեծին յաղթեաց, զի գնաց ի վերայ, իսկ ի Հողմոյն երկեալ, քանզի այնպիսի է մարդկային բնութիւնս. բազում անգամ ի մեծամեծս առաքինանայ եւ ի փոքունս զեղծանի, որպէս Եղիա՝ ի Յեզաբելէ (հմմտ. Գ. Թագ. ԺԹ. 1-4), եւ Մոսէս՝ յեգիպտացւոյն (հմմտ. Ելք Բ), եւ Դաւիթ՝ ի Բերսաբէէ (հմմտ. Բ. Թագ. ԺԱ): Նոյնպէս եւ սա, մինչ

սաստկացեալ էր ալիքն, էջ եւ ընդդէմ Հողմոյն չկարաց զօրել, եւ այն զի մօտ էր Քրիստոս. յորմէ ուսանիմք, թէ՛ չէ՛ ինչ օգուտ մօտ լինել Քրիստոսի, եթէ՛ Հաւատով չիցէ ոք մօտ: Եւ դարձեալ՝ զի զանազանութիւն լիցի ի մէջ Վարդապետին եւ աշակերտին եւ այլոց աշակերտացն մխիթարութիւն, զի թէ՛ յերկուցն վերայ ըմբոստացան, ո՞րչափ եւս առաւել անդ, զի չե՛ւ եւս առեալ էին զՀողմն:

**Եւ իբրեւ սկսաւ ընկղմել, աղաղակեաց եւ ասէ.** «Տէ՛ր, փրկեա՛ զիս» (Մապթ. ԺԴ. 30):

Ձի առաջինն փորձ առեալ էր զՆորա զօրութիւնն, զի լուցոյց զալիսն, վասն այնորիկ եւ էջ իսկ, ուստի յորժամ սկսաւ ընկղմիլ, զաղաղակ եբարձ եթէ՛ փրկեա՛ ի յընկղմանէ աստի: Բայց գովութիւն է այս առաքելոյն, զի ի սկիզբն փորձութեանն առ Նա դիմեաց:

**Եւ վաղվաղակի Յիսուս ձգեաց զձեռն Իւր, կալաւ զնա եւ ասէ.** «Թերահաւա՛ր, ընդէ՛ր երկմպեցեր» (Մապթ. ԺԴ. 31):

Ընդէ՞ր արդեօք Հողմոյն ոչ սաստեաց դադարել, այլ Ինքնին ձեռն ձգեաց եւ բուռն եհար զնմանէ. զի Պետրոսի Հաւատո՛ց պէտք էին, զի յորժամ մերն կասիցի, Աստուծոյն ի թիկունս Հասանիցէ: Եւ ցուցանէ, թէ՛ ո՛չ Հողմոյն ինչ բռնութիւն, այլ նորա թերահաւատութի՛ւնն առնէր զընկղմիլն, զի թէ՛ ի Հաւատոցն չէր տկարացեալ, եւ Հողմո՛յն կարէր դիւրաւ ընդդիմանալ: Վասն այնորիկ թէպէտ բուռն եհար զնմանէ, Հողմոյն տակաւին շնչել տայր, զի յայտ արասցէ, թէ՛ չկարէ ինչ Հողմն վնասել, յորժամ Հաւատքն Հաստատուն իցեն: Իսկ երկմտելն Պետրոսի ոչ այլ ինչ էր, քան թէ՛ կարծելն ո՛չ ի Նորա զօրութեանէն, այլ յանձին առաքինութեանէ վճարէ զիրն, վասն որոյ զսաստն ընկալաւ, կամ թէ՛ ո՛չ իցէ Նա, այլ երեւոյթ ինչ առաջօք երեւեալ:

**Եւ իբրեւ ելին ի նաւն, հանդարտեաց հողմն** (Մապթ. ԺԴ. 32):

Ձի լցցի ասացեալն ի մարգարէէն թէ՛ «Դու փրկես զօրութեանց ծովու եւ զխոլութիւնս ալեաց նորա Դո՛ւ ցածուցանես» (Մաղմ. ՁԸ. 10), եւ թէ՛ «Տեսին գՔեզ ջորք եւ երկեան, եւ խորք խոլիցան» (Մաղմ. ՂԶ. 17), եւ՝ «Շաիդք Քո ի ջորս բազումս, եւ հեպք Քո ոչ ես երեւին» (Մաղմ. ՂԶ. 20): Իսկ առ ի միտս՝ ծովն աշխարհս էր, որ Հանդարտելոց էր քարոզութեամբ առաքե-



լոցն, յորմէհետէ մուտ եւ ել արար Տէր մեր Յիսուս Քրիստոս: Եւ դադարելոց էին հողմոցն յուզմունք՝ Բանսարկուին փորձութիւնք եւ վարդապետութիւնք:

Եւ որ ի նաւին էին, մաքեան երկիրպագին Նմա եւ ասեն. «Արդարեւ Որդի Աստուծոյ ես Դու» (Մաթթ. ԺԴ. 33):

Յառաջնումն ասէին. «Ո՛րք իցէ այրս այս, զի եւ հողմք եւ ծով հնազանդին Սմա» (հմմտ. Մաթթ. Ը. 27), իսկ աստ՝ ո՛չ այսպէս, այլ խոստովան եղեն բանիւ իւրեանց, թէ արդարեւ Որդի Աստուծոյ է Նա. եւ ո՛չ միայն բանիւ, այլեւ իրօք զերկրպագութիւնն, որ Աստուծոյ էր անկ, Նմա մատուցին: Եւ այսպէս մեղմով ի բարձրագոյնս հանէ զնոսա՝ գնալով ի վերայ ծովուն եւ այլում հրամայելով զնոյն առնել, եւ զտագնապեալն ապրեցուցանել, եւ զհողմն դադարեցուցանել, յաճախէին այնուհետեւ հաւատքն Որդի Աստուծոյ զՆա դաւանել: Յորոց դարովեալ լինի Արիոս, զի հակառակ եղեւ աստուածային ծննդեանն:

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՅԻ**  
(Չորրորդ հապտոր, գլուխ ԺԱ.)

**ՎԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ ՊԱՆՈՒՆ**

Հարց. Զի՞նչ է «[ի] չորրորդում պահու գիշերոյն եկն առ նոսա Յիսուս (տնն Մաթթ. ԺԴ. 25):

Պատասխանի. Որպէս օրն Դ. բաժին է, նոյնպէս գիշերն. երեկոյ, մէջ գիշեր, հաւախօս, առաւօտ: Այն է Դ. (չորրորդ) պահն: Վեց իմն նշանակէ: Նախ՝ խրատէ, թէ ոչ է պարտ վաղվաղակի ի վշտացն դիւրութիւն խնդրեալ, այլ նախ կրել զվիշտն: Երկրորդ՝ համբերել: Երրորդ՝ յաղ[օ]թել: Չորրորդ, ապա փրկութիւն խնդրել, այլ զամենայն օգնութեամբն Աստուծոյ առնել: Երկրորդ՝ ցուցանէ, որ ի գիշեր կենդացոյս: Նախ՝ ետ զբնական օրէնս եւ ապա զբանականս եւ ապա զգրաւորն եւ ի չորրորդն ետ զչնորհս աւետարանին: Երրորդ՝ ցուցանէ զայն, որ յետ երից աւուրցն ընդ արշալուսն երեւեցաւ եւ մխիթարեաց զնոսա: Չորրորդ՝ մէք ի Դ. հասակս փոփոխելով ապա զերծանիմք ի ծովէ կենդացոյս: Հինգերորդ՝ յետ զղջման եւ խոստովանութեան եւ հատուցման. ապա հանգչիմք ի գործոյ մե-

ղաց: Վեցերորդ՝ յետ երեք որպիսութեանն մարդկան, որ նախ ի դրախտին եւ այժմ ի յերկրի եւ յետ մահու, ապա ի չորրորդին գայ Քրիստոս եւ յարուցանէ զմեզ: Բարիոք զարհուրեցան եւ ոչ անմտութեամբ եւ յայտ է յերկուց: Նախ՝ զի գիտէին զՏէրն ծանրութեամբ մարմնով եւ այժմ թեթեւացեալ ի վերայ ջրոյն: Երկրորդ՝ զի ոչ սաստեց թերահաւատ կանչելով, որպէս առաջնումն:

Հարց. Վասն է՞ր ասաց՝ ես եմ:

Պատասխանի. Նախ՝ քաջալերեաց զնոսա, զի մի երկիցեն: Երկրորդ, զի ճանաչի ի մարդն յերից, այսինքն՝ ի դիմաց ի յընթացից ի ձայնէն: Եւ զի գիշեր էր եւ դէմքն ո՛չ երեւէր եւ ընթացքն նոր ի վերայ ծովու վասն այն ձայնիւ յայտնեաց զանձն իւր: Երրորդ՝ ես եմ՝ այսինքն՝ զօրութիւնն որ ժողովրդեանն արարի եւ դուք մի՛ երկնչիք: Չորրորդ՝ ե՛ս եմ, թանձր մարմնովն որ ի ցամաքին եւ այժմ եկի ի վերա ծովուս: Ապա պատասխանի ետ Պետրոս, եթէ դու ես թանձրացեալ մարմնով ի վերա ջրոյդ եւ ես եմ թանձրացեալ մարմնով հրամայեաց ինձ գալ առ քեզ եւ գիտացից ստուգապէս: Տե՛ս հրամայեայ, ասէ, եւ ոչ թէ աղօթեա՛: Նախ՝ զջերմն սէրն նշանակէ առաքելոյն: Երկրորդ՝ զհաստատուն հաւատն եւ ո՛չ սնապարծութիւն ինչ: Դարձեալ Բ. (երկ) խնդրութիւն էր Պետրոսի. Ա.՝ ի վերա ծովու գնալն, Բ.՝ որ առ Տէրն երթայր:

Հարց. Զու՞րն պնտացաւ, թէ՞ ոտքն զօրացաւ:

Պատասխանի. Զուրն ո՛չ կարծրացաւ որպէս կարմիր ծովուն ու յայտ է, զի ալեկոծէր, այլ Քրիստոս զօրացոյց զընթացք առաքելոյն, որպէս մանկունք ձգեն զքար ի վերայ երեսաց ջրոց:

Հարց. Ո՞ր կողմանէ գայր Քրիստոս:

Պատասխանի. Յառաջուստ եւ յայտ է յերկուց: Նախ՝ զի ընդ դէմ հողմոյն գնայր, որ առ աչօք կարծէին: Երկրորդ՝ եւ Պետրոս գնայր եւ ընդդէմ էր հողմն: Եւ տես կրկին զարմացումն: Նախ՝ ի ծովէն զերծեալ հողմն ընբռնէր: Երկրորդ՝ ի հեռուն փրկեալ մերձ Քրիստոսի ընբռնէր: Եւ այս է պատճառ, զի ի ծովուն սոցա փրկել եւ գալ եւ ոչ ի հողմոյն:

Հարց. Վասն է՞ր ընկղմէր:

Պատասխանի. Վասն չորից պատճառից: Նախ՝ վասն երկիւղի, զի սովորութիւն է բնութեանս որ զմեծն գործէ եւ ի փոքունս երկնչի, որպէս Եղիայ զբազում մարգարէքն. ու զյիսնապետքն պատճեց եւ յեզաբելէ երկեաւ Տեառն, Մովսէս վասն եգիպտացոյն



փախչէր: Եւ Դավիթ վասն Բերնաբէի երկնչէր: Երկրորդ՝ վասն թե-  
րութեան մինչ արմատացեալ էր հաւատն, վստահ ընթանայր եւ  
թուլացեալ ընկղմէր: Եւ այն զի մօտ էր Քրիստոս ցուցանէ, թէ  
հաւատովն պարտի մօտիլ եւ ոչ մարմնով: Երրորդ՝ ընտրութիւն  
էր զօրութեանն Քրիստոսի եւ տկարութեան առաքելոյն, որպէս  
ասեն վարդապետք՝ հրամայեցաւ զնալ Պետրոսի ի վերայ ջրոյն,  
զի յայտնեսցի զօրութիւնն Աստուծոյ: Եւ թոյլ տուեալ ընկղմել զի  
յայտնեսցի տկարութիւն մարդոյս: Չորրորդ՝ մխիթարութիւն էր  
աշակերտացն, զի միայն խիզախեաց Պետրոս եւ այլքն զարացան,  
որպէս յայն ժամի վերայ երկուց եղբարցն: Եւ այս էր պատճառ, զի  
չէին արժանացեալ շնորհաց հոգոյն:

Հարց. Վասն է՞ր բուռն եհար եւ ոչ հողմոյն սաստեաց:

Պատասխանի. Վասն Դ.(չոր)ից: Նախ՝ զի ցուցցէ, յորժամ հա-  
ւատք մեր պակասին, նա ի թիկունս հասանէ: Երկրորդ՝ զի ոչ թէ  
հողմ, այլ թերութիւն ընկղմէր: Երրորդ՝ զի թէ պինտ էր հաւատն,  
կարէր հողմոյն ընդդէմ կալ: Չորրորդ՝ զի հաստատն ի հաւատս,  
ոչ ընկղմէ հողմն: Ուստի յայտ է, զի բուռն հարեալ դեռեւս շնչէր  
հողմն:

«Թերահաւապ [ընդէ՞ր] երկմտեցեր (տես՝ Մարթ. ԺԴ. 31):

Թերի, այսինքն՝ պակաս կամ տկար, եւ երկմիտ, այսինքն՝ բա-  
ժան կամ երկեւան: Զի Դ. ինչ պիտոյ է հաւատոյն, այսինքն՝ կա-  
տարեալ եւ զօրաւոր եւ բոլոր եւ հաստատ: Դարձեալ ասէ սուրբն  
Եփրեմ ի վերայ ծովուն զնալն Քրիստոսի: Նախ՝ հաստատ է զառա-  
քեալքսն ի ծով աշխարհի ընթանալ: Երկրորդ՝ անդ կատարեալ, որ-  
պէս ասէ մարգարէն՝ դու տիրէս զօրութեանց ծովու: Արդարեւ որդի  
Ասրուծոյ ես դու: Չորս ինչ նշանակէ: Նախ՝ այն ճշմարիտ Աստու-  
ծոյն, որ ասէ մարգարէն տեսին զքեզ ջուրք Աստուած տեսի՞՞ եւ  
խորք խռովեցան: Երկրորդ՝ ճշմարիտ որդի ես, զի զգործ Հօր ցու-  
ցէր զնալով ի շաւիղս ջուրց եւ հետ քո ոչ երեւին: Երրորդ՝ ընդդէմ  
Արիօսի, որ զծնունդ Բանին ուրանայ: Չորրորդ՝ ընդդէմ Նեստորի,  
որ զմարդկութիւնն որոչէ: Տեսեալ զնա թանձր մարմնով եւ բարձ-  
րացեալ մտօք եւ զնոյն միաւորեալ եւ երեւեալ մարմնովն խոստո-  
վանեցան. «Դու ես ճշմարիտ որդին Ասրուծոյ»: Եւ ոչ ստութեամբ կամ  
կոչմամբ կամ բաժանմամբ: Կարկեսցին երկարնակ քաղկեդոնիկք,  
որ զմիութիւնն բաժանեն բանին եւ մարմնոյ: Եւ գիտելի է յայնմ

աւուր Զ. նոր նշանք: Նախ՝ հացին աճել: Բ. ի ծովուն զնալ. Գ. եւ  
Պետրոսի երթալ: Դ. փրկելն զնա: Ե. հանդարտել ծովուն: Զ. դաւա-  
նելն Որդի Աստուծոյ: Այսքան առ այս:

Յովհաննէս Զ. 16-21

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

(Իբրեւ երեկոյ եղև, իջին աշակերտքն ի ծովուն եզրն: Եւ մփին  
ի նաւ եւ զնացին յայնկոյս ծովուն ի Կափառնաւում: Եւ իբրեւ նսե-  
մացաւ եւ չէւ եւս եկեալ էր առ նոսա Յիսուս (հմմտ. Յովհ. Զ. 16-17):

ՈՍԿ Ոմանք ասացին զնոյն գոլ, որպէս Մատթէոս ասաց (հմմտ.  
Մարթ. ԺԴ. 26), այլ ոչ իմացան, ուստի թէ իմացան յայտ է, զի անդ  
Պետրոս խնդրէր գալ առ նա: Եւ աստ յուզէր ծովն լի խռովութեամբ  
եւ աստ քաջալերէր Տէրն զնոսա: Իսկ սքանչելեացն հետեւեսցուք,  
վասն զի ուղղութիւն էր նախ զնայր ի վերայ ծովուն, երկրորդ՝  
սաստելովն զաւղէր բանին, երրորդ՝ որ ասաց՝ մի երկնչիջիք, չոր-  
րորդ՝ երազ ի տեղին յոր կամէին երթալ հասուցանէր զնաւն:

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԲԱՅԻ

(Երկրորդ գլուխ երկրորդ հապորիս)

Բան. «Եւ իբրեւ երեկոյ եղև, մփին աշակերտքն ի նաւ» (Յովհ. Զ.  
16):

Մեկնութիւն. Այսու յայտնէ զսէր աշակերտացն առ Քրիստոս,  
զի ի գիշերի մտին ի նաւ եւ խնդրէին զՆա, զի յորժամ նսեմացաւ  
եւ ոչ եկն առ նոսա, վասն այն կամեցան անցանել ընդ ծովն:

Բան. «Եւ ծովն ի սաստիկ հողմոյ [շնչելոյ] յուզէր» (Յովհ. Զ. 18):

Մեկնութիւն. Եւ այս եւս ցուցանէ զսէր աշակերտացն, զի ոչ  
գիշերն եւ ոչ խռովութիւն ծովուն ոչ արգել զնոսա:

ՎԱՍՆ ԱՍՊԱՐԵՉԻՆ

Բան. «Եւ վարեալ իբրեւ ասպարէզս քսան եւ հինգ կամ երե-  
սուն» (Յովհ. Զ. 19):



Մեկնութիւն. Վասն խորշ եւ խուժ եզերաց ծովուն ասէ քսան-  
հինգ կամ երեսուն, ըստ երկրաչափական արհեստին զհինգ ոտն մի  
քայլ առնեն եւ հարիւր քսան եւ հինգ քայլն՝ ասպ արէզ մի, եւ ութ  
ասպարէզն՝ միլ մի, եւ երկու միլն է Ֆրսանկ մի: Եւ այսու յայտնի  
է, զի քսան եւ հինգ ասպարէզն երեք միլ է եւ ասպարէզ մի:

Բան. «Եւ փեսանէին զՅիսուս, զի գայրի վերայ ծովուն» (Յովհ. Զ.  
19):

Մեկնութիւն. Ոմանք այլ եւ այլ ասեն զայս եւ որ ի Մատթէոսն  
պատմի, բայց նոյն էր եւ ի՛ ժամանակէն եւ ի տեղոյն եւ ի ժո-  
ղովրդենէն, զի ի նոյն աւրն յորում զհացն կերան եւ գիշերն մտին  
աշակերտքն ի նաւ եւ չորրորդում պահու գիշերոյն եկն առ նոսա  
Յիսուս:

Եւ առաքեալքն զարհուրեցան վասն կրկին պատճառի. նախ՝ զի  
կարծէին զՔրիստոս առ աչաւք իր ինչ լինել, զի զնայր ի վերայ  
ծովուն: Երկրորդ. երկնչէին վասն ալեկոծութեան, իսկ Քրիստոս  
զկրկին երկիւզն երարձ ի նոցանէ:

Բան. «Ես եմ, մի՛ երկնչիք» (Յովհ. Զ. 20):

Մեկնութիւն. Յորժամ ասաց՝ Ես եմ, զկարծիս նոցա երարձ,  
որք առ աչաւք իմն համարէին, եւ ասելովն՝ «մի՛ երկնչիք», բառնայ  
զերկիւղ ալեկոծութեան: Եւ այս երկրորդ բանն է, որ կերակրելովն  
եւ սնուցիչ լինելովն ցուցանի, թէ Աստուած է Քրիստոս: Առաջին.  
ածամաբ նկանակացն, եւ երկրորդ՝ ձկանցն: Երկրորդ. երթալով ի  
վերայ ծովուն եւ մխիթարելով բանիւ զաշակերտսն, թէ՛ «Ես եմ, մի՛  
երկնչիք»:

Եւ զարձեալ գիտելի է, զոր յետ յարութեան հասարակ մարդկան  
չորս փոփոխումն լինելոց է ի մարմինն.

Առաջին. թափանցութիւն, եւ զայս եցոյց Քրիստոս, յորժամ  
ծնաւ ի Կուսէն:

Երկրորդ. թեթեւութիւն, եւ զայս եցոյց Քրիստոս՝ զնալով ի վե-  
րայ ծովուն:

Երրորդ. պայծառութիւն, եւ զայս եցոյց Քրիստոս ի լեռն Թա-  
բաւր:

Չորրորդ. անապական մարմինն, եւ զայս եցոյց Քրիստոս ի  
Վերնատունն, յորժամ զանապական մարմինն իւր բաշխեաց առա-

քելոցն, զի թէ ապականացու էր մարմինն, զի՞նչ աւգուտ էր կերո-  
ղացն:

Եւ զչորսս զայս եցոյց նախ քան զխաչն, զի մի ասիցեն չարա-  
փառքն, թէ յետ յարութեան փոխեցաւ մարմինն Փրկչին, այլ զոր  
յառաջն ի կէտ յղութեան յարգանդի ունէր ծածկապէս ի մարմինն,  
յետ յարութեան յայտնի երեւեցոյց մարմնովն:

ՎԱՍՆ ԱՔԱՆԶԵԼԵԱՅ

Եւ գիտելի է, զի սքանչելիքն է գործ ի վեր քան զընութիւն,  
իսկ առ մեզ ի վեր քան զմիտս մեր, զի որպէս սքանչելի է գործն,  
սքանչանամք ի միտս մեր: Եւ դարձեալ՝ որպէս նոքա, որք տեսին  
զսքանչելիսն, աւգտեցան ի տեսանելն, եւ մեք յորժամ սքանչա-  
նամք ի միտս, շահիմք ի սքանչելեացն, ապա ուրեմն ճշմարիտ  
Աստուած է Քրիստոս եւ Միածին Որդի եւ Բան, միացեալ մարմ-  
նովն, որ առնէր զմեծամեծ սքանչելիսն:

Եւ աստ երեք ասեն սքանչելիք, այլ ես ասեմ հինգ եղեալ սքան-  
չելիք ի միում վայրկենի. նախ՝ զի Քրիստոս ի վերայ ծովուն  
զնայր, ըստ մարգարէին. «Ի ծովու են ճանապարհք [քո], շախրք [քո ի ջուրս  
բազումս]» (Մաղմ. ՉԶ. 20): Երկրորդ. զի ալիք ծովու հանդարտեաց:  
Երրորդ. զի սաստիկ հողմ զաղարեաց: Չորրորդ. զի վաղվաղակի  
եւ նաւն ի ցամաքն: Հինգերորդ. զի Պետրոսի շնորհեաց ի վերայ  
ալեացն կոխել ըստ Մատթէոսի (հմմտ. Մապրթ. ԺԴ. 22-23):





**18. ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ Ի ԳԵՆՆԵՍԱՐԷԹ**

Մաթթեոս ԺԴ. 34-36

**ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՎ ԵՓՐԵՄ**

Եւ իբրեւ ծանեան զՆայ արք փեղոյն առաքեցին եւ բերին առ նա հիւանդս եւ ախարածէպս (հմմտ. Մաթթ. ԺԴ. 35):

Ո՛չ իբրեւ զառաջինն զային եւ ի տունսն ձգէին տանել հրամանս բանից խնդրել, այլ կարի բարձրագոյնս իմն եւ զգաստագոյնս եւ մեծաւ հաւատովք յափշտակէին զբժշկութիւնն, քանզի տեռատեսն ուսոյց զամենիսեան ցածնուլ եւ իմաստնանալ եւ կամի մի յայտ առնել աւետարանիչն. եթէ յետ բազում ժամանակաց եկն ի կողմանսն յայնոսիկ, զի ասելն եթէ ծանեան զՆա եւ ածին առ Նա զհիւանդս, զայն յայտ առնէ, այլ ժամանակն ոչ միայն ո՛չ ջրեաց զհաւատսն, այլ եւ յաճախագոյն նորոգ եւ աստուջ պահեաց:

Յայնժամ մարեան ոմանք առ Յիսուս յերուսաղեմացոց դպիրք եւ փարիսացիք (հմմտ. Մաթթ. ԺԵ. 1):

Յայնժամ՝ ե՞րբ: Յորժամ բիւրոց բիւրս նշանս գործեաց, յորժամ զհիւանդսն բժշկեաց, մերձենալով միայն ի քղանցս հանդերձիցն, նշանակէ աւետարանիչն միայն զժամանակն, զի ցուցանիցէ զանչափ զաւրութիւնն նորա:

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՅԻ**

(Գլուխ ԺԴ.)

Եւ անցեալ եկին ի ցամաք ի Գեննեսարէթ: Եւ իբրեւ ծանեան զՆա արք փեղոյն այնորիկ, առաքեցին ընդ ամենայն զաւառն եւ ածին առ Նա զամենայն հիւանդս: Եւ աղաչէին զՆա, զի զոնէ միայն ի քղանցս հանդերձի Նորա մերձեսցին. եւ որք միանգամ մերձեսցան՝ փրկեցան (տես Մաթթ. ԺԴ. 34-36):

Ո՛չ իբրեւ զառաջինն զային եւ ի տունս ձգէին եւ հրամանս բանից խնդրէին, այլ կարի ի բարձրագոյնսն ելին եւ մեծ հաւատովք յափշտակեցին զբժշկութիւնն, քանզի տեռատեսն ուսոյց զամեն-

սեան ցածնուլ (հմմտ. Մաթթ. Թ. 20-22): *Բայց ասելն՝ «Իբրեւ ծանեան զՆա արք փեղոյն»՝ ցուցանէ, թէ յետ բազում ժամանակաց եկն անդր, եւ ժամանակին յերկարութիւնն ոչ միայն ո՛չ ջրեաց զհաւատն, այլ եւ յաճախութիւնն եւ նորոգս գործեաց, որպէս զի մերձենալով ի ստորոտ հանդերձի Նորա՝ փրկեալք լինէին յիւրաքանչիւր ցաւոց իւրեանց: Իսկ տեղին, յորում այս եղեւ, Գեննեսարէթ է, որ թարգմանի պարտէզ իշխանաց՝ յերկիրն Հրէաստանի:*





## 19. ՆԱԲԱՏՔ ԿՆՈՋՆ ՔԱՆԱՆԱՑՒՈՅ ԵՒ ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ ԴՍՏԵՐ ՆՈՐԻՆ

Մաքթես ԺԵ. 21-28

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՅԻ

(Գլուխ Թ.)

Եւ ելեալ անքի Յիսուս[ի] գնաց ի սահմանս Տիւրոսի եւ Սիդոնի, եւ ահա՝ կին մի քանանացի ի սահմանացն այնոցիկ՝ ելեալ, աղաղակէր (տես Մաքթ. ԺԵ. 21-22):

Յիսուս գայր ոչ ի սահմանս Տիւրոսի, այլ ի կողմանս Տիւրոսի եւ Սիդոնի, իսկ քանանացին ելանէր ի սահմանացն, զի եթէ մնացեալ էր ի սահմանսն, ոչ կարէր աղաղակել առ տէրն:

Ոչ ուրեք առաքեցա[յ]՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս փանն Իսրայէլի (Մաքթ. ԺԵ. 24):

Խնդրեցեն արդեւք ըստ մարմնոյ, եւ վասն է՞ր ի սփիւռս Հեթանոսաց տարածեցաւ փրկութիւնն, ապա ուրեմն առ մոլորեալ Հոգիս Իսրայէլի տեսողի զԱստուած:

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՎ ԵՓՐԵՄ

Իբրեւ ել Յիսուս անքի, գնաց ի կողմանս Տիւրոսի եւ Սիդոնի (տես Մաքթ. ԺԵ. 21):

Մարկոս ասէ. «Չկարաց ( թագչել, թեպէր եւ կամեցաւ մտնել ի փուն եւ ոչ կամէր եթէ ոք գիրասցէ զնա» (հմմտ. Մարկ. Թ. 27-29): Եւ եթէ այնպէս ինչ ի դէպ էր, բնաւ զի երթայր ի կողմանս յայնոսիկ եւ զի ոչ քարոզել չոգաւ անդր ումէք, որպէս Մարկոս յայտ արար ասելովն, եթէ թագուցանել կամեցաւ զանձն եւ ոչ կարաց ծածկել, քանզի անարժանս Համարէր զնոսա մարդասիրութեանն:

Եւ ահայ կին մի քանանացի աղաղակէր՝ ողորմեայ ինձ: Եւ տե՛ս՝ զիա՞րդ ամենեւին երախտեաց արժանի էր կինն. ո՛չ իշխեաց յերուսաղէմ ելանել, քանզի կասկածէր եւ չհամարէր զանձն արժանի: Եւ

եթէ ոչ այնպիսի ինչ ունէր ի սիրտս եւ այս յիսկ եւ յիսկ փութոյ նորա եւ զի ի սահմանաց անտի իւրոց ել, յայտ է, բացեն ոմանք որ եւ յայլ ասացիկ ինչ իրս շրջեն եթէ յորժամ ել ի հրէայս տանէ Քրիստոս, յայնժամ իշխեաց զալ մերձենալ ի նա եկեղեցի: Քանզի եւ նա իւրոց սահմանաց ել ըստ այնմն, եթէ «մոռանալ գտողովորդ քո եւ զփուն հար քո» (Մաղմ. ԽԴ. 11):

Ամբաստան լինի ի կնոջն աւետարանիչս, զի սքանչելիքն յայտ լիցին եւ նա եւս առաւել բարձրագոյն քարոզ իցէ: Եւ յորժամ լսիցես զքանանացւոյն, յիշեսջիր եւ զազ(բ)զ անաւրինացն, որ զաւրէնս բնութեանն ի հիմանէ տապալեցին: Եւ յորժամ զնոսա յիշեսցես եւ ի միտ առնուցուս եւ զՔրիստոսի գալստեանն զզաւրութիւնն, զի որք ընկեցիկ եղեն յերկրէն, զի մի զհրէայսն խոտորեցուցեն, նոքին այնչափ երեւեցան, զգաստացեալք քան զհրէայսն, մինչեւ ի սահմանացն Համարձակ ելանել եւ առ Քրիստոս մերձենալ, եւ նորա գալստեանն արժանի լինել:

Եւ արդ ելեալ կնոջն ի սահմանացն, ոչ այլ ինչ ասէր, այլ թէ՛ ողորմեաց ինձ: Եւ զբազումս աղաղակաւ կուտէր ի տեսիլ: Եւ անտի տեսանել ողորմելի զկինն, զի կարի իմն թաղծեալ, սրտիւ աղաղակ եղեալ երթայր զկինի եւ չասէր թէ ողորմեայ դատերն իմոյ ա[յլ] ինձ: Նա անզգայեալ է ի ցաւէն եւ ամենայն արկածք եւ վարանք զինեւ են, որ իմանամս եւ այնպիսի երկիւղածութիւն ցուցանէր եւ պատասխանի անգամ չարնէր: Եւ զո՞վ ոք ոչ խոնարհեցուցանէին վիշտք կնոջն ե՛ւ աղերս ե՛ւ խորովանքն ե՛ւ պաղատանքն, զի վասն դատեր միամաւրս Հարելոյ եւ Հայելոց ի ցաւս աղաչէր՝ ոչ եթէ արժանի ինչ զանձն Համարէր, այլ ողորմութիւն միայն ժտէր գտանել եւ պատասխանւոյ արժանի չի լինէր: Թերեւս բազումք իսկ ի լսողացն գայթակղէին, բայց սակայն նա ոչ ինչ գայթակղէր եւ զինչ ասացից, թէ ի լսողացն այլ թերեւս աշակերտքն իսկ ածէին զմտաւ այնպիսի ինչ: Բայց թէպէտ եւ խոովեցան չիշխէին յայտ ածել, թէ՛ «արայ՝ նմա զխնդրածսն, փոքր գոր ինչ հայցեն», այլ մատեան եւ ասեն. «Արձակեա՛ զնա, զի այնչափ աղաղակաւ գայ զհետ մեր» (տես Մաքթ. ԺԵ. 23), նաեւ մէք կամիցեմք զոք ի հաւան ածել, այլ ընդ այլոյ բազում անգամ բանս խաւսիմք, նոյնպէս եւ Քրիստոս:

«Ոչ առաքեցայ, թէ ոչ առ կորուսեալ փունն Իսրայէլի» (հմմտ. Մաքթ. ԺԵ. 24):



Արդ, իբրեւ զայս լուաւ՝ զինչ գործիցէ կինն. լուեաց ինչ եւ կասեաց ի յաւթարութիսն, ոչ այլեւս քան զեւս ժտէր: Եւ զո՞յր ուրուք ոչ հատանէին զՂիլս այնպիսի բանք. ե՛ւ զՆա ե՛ւ զբարեխաւսան, յորժամ լսէին, թէ չէ հնար իրացն լինելոց: Բայց սակայն չվհատէր իսկ կինն, յորժամ իմացաւ, թէ ո՛չ ինչ կարէին գամագիտ լինել բարեխաւսքն, գամաւթն յետ ընկեցեալ, լրբէր զգեղեցիկ լրբութիւնն գառաջինն: Եւ առաջի չիշխէր գալ, բաց աղաղակէր միայն, եւ յորժամ ի դէպ էր նմայ հեռանալ, զի անյոյս եղեւ յայնժամ մաւտ էր եւ գայր հուպ:

**Երկիր պագաներ [նմա] եւ ասեր. «Տէր աւգնե՛ա ինձ»** (տե՛ս Մարթ. ԺԵ. 25):

«Զի՞նչ գործես, ո՛վ կին դու, մի՞թէ աւելի ինչ համարձակութիւն ունիցիս եւ մեզ զաւրութիւն համարձակութիւն ինչ եւ զաւրութիւն չունիմ,- ասէ,- այլ ամաւթով լի եմ, բայց սակայն զլրբութիւնս փոխանակ խնդրուածոց առաջի եղից, զի թերեւս խոնարհեցի ի ժողովիւնս եւ այդ զի՞նչ աւգուտ իցէ, չլւար իսկ քեզէն, զոր ասէր. «Ոչ [ուրեք] առաքեցայ [ե]թէ ոչ առ ոչխարս կորուսեալս քանն Իսրայէլի» (տե՛ս Մարթ. ԺԵ. 24):

Զայդ լուայ, ասէ՛ բայց նա Տէր է: Վասն որոյ չասաց թէ «աղաչեա՛» եւ «խնդրեա՛», այլ թէ «աւգնեա՛» ինձ: Բայց Քրիստոս եւ զայն բաւական չի համարեցաւ, այլ տակաւին ի ձիգս արկանէր զտարակուսանսն:

«Չէ, -ասէ, - բարուք առնուլ զհաց մանկանց՝ եւ արկանել շանց» (տե՛ս Մարթ. ԺԵ. 26): Եւ յորժամ արժանի արար զնայ պատասխանոյ, յայնժամ կինն ի նորա բանիցն, յաւզէ զճատագոյնութիւնն: «Եթէ շուն իցեմ, ասէ, ապա չեմ աւտար»: Եւ յիրաւի իսկասէր էր Քրիստոս հրէիցն, թէ ի դատաստան իսկ եկի յաշխարհս յայս: Կինն զգաստացեալ, իմասնացեալ ի համբերութիւն յենոյր, եւ հաւատս ցուցանէր: (ա) Եւ այն, զի թշնամեցաւն եւս եւ նոքա բժշկեալք եւ պատուեալք ի նմանէ, անուղ[ղ]ա[յ] փոխարէնս հատուցանէին: «Զի կարեւոր պէտք են մանկանց կերակրելոյ զայն եւ ես ճարտար գիտեմ,- ասէ,- բայց եւ ինձ՝ շանս չէին չարգել զփշրանսն քաղել: Զի թէ չիցէ արժան առնուլ, ապայ եւ ոչ ի փշրանացն վայելել: Իսկ եթէ գոնեայ սակաւ միոյ, ինչ պարտ է հաղորդել, ապա եւ ինձ՝

շանս չէ՛ ինչ արգել» (հմմտ. Մարթ. ԺԵ. 27): Բայց դու ընդ հաւատոցն եւ խոնարհութեան միտ դիր, զի նա մանկունս կոչէր զհրէայսն եւ սատեարս, քանզի եւ այնպէս իսկ չցաւէին նմայ այլոյն յարգանք:

**«Շունք,- ասէ,- կերակրին ի փշրանանաց սեղանոյ փերանցն»** (հմմտ. Մարթ. ԺԵ. 27):

Տեսանես զկնոջն իմաստութիւն եւ ժուժկալութիւն ժողովեան: Նա ասէ՛ չէ բարուք, սա ասէ՛ այո՛, Տէ՛ր: Նա մանկունս կոչեաց եւ սատեարս: Նա շունս անուանեաց եւ սա զբարս շանց առաջի եղ:

Տեսէր զսորա խոնարհութիւնս, տե՛ս եւ զհրէիցն մեծամտութիւն. «Զաւակ Աբրահամու եմք», - ասէին եւ ոչ ումէք ծառայեցաք եւ յԱստուծոյ ծնեալ եմք, ո՛չ այնպիսի ինչ եւ սա, այլ շուն կոչէ զանձն եւ զնոսա՝ տեարս: Յայն սակս եւ վաղվաղակի լինէր որդի: (2բ) Եւ այնուհետեւ զինչ ասիցէ Քրիստոս.

**«Ո՛վ կին դու,- ասէ,- մեծ են հաւաքք քո»** (Մարթ. ԺԵ. 28):

Տեսցուք զմեծ հաւատս կնոջն աղաղակէր եւ գայր զկնի նորա եւ ասէր՝ որորմեա՛ ինձ: Եւ նա բնաւ ոչ ետ պատասխանի: Անարգեաց զնա լուութեամբն, եւ նայ ոչ մնաց թշնամանեաց զնայ խաւսիւք, եւ նա ոչ արգելաւ, յարգեաց զԻսրայէլ թշնամանող եւ ոչ նախանձեցաւ: Դարձաւ կինն, փոքր կացոյց զանձն իւր եւ մեծացոյց զԻսրայէլ, յայնմիկ զի ասաց. «Եւ շունք ի փշրանաց փերանցն կերակրին» (հմմտ. Մարթ. ԺԵ. 27). որպէս զի եղիցին հրէայքն տէրք հեթանոսաց:

**Մարեան աշակերտքն եւ սկսան աղաչել եւ խնդրել ի նմանէ, զի արձակեսցէ զնայ** (հմմտ. Մարթ. ԺԵ. 23):

Ետ նոցա ժողովեան եւ սիրո հեթանոսաց կոչեաց զնոսա շունս եւ զԻսրայէլ՝ որդիս, զսէր եւ զլրբութիւն շանց ստացան հեթանոսք՝ առակեալք ի շունս եւ զկատաղութիւն շանց, հրեայք՝ առակեալք յորդիս: «Ոչ,- ասէ,- բարուք էառնուլ զհաց մանկանց՝ եւ արկանել [շանց]» (տե՛ս Մարթ. ԺԲ. 26): Առ արկ ի յականջս նորա զայն փոյթ մեծ, զի հաւատք նորա յայտնեցին լուր որդու զբարբառ նորա՝ այո՛, Տէ՛ր: Եւ ոչ ամաչեաց վասն աւգնութեան իւրոյ կոչիլ շուն: Վասն այնորիկ ասէ. «Մեծ են հաւաքք քո» (Մարթ. ԺԵ. 28):

Վասն այսմ յերկարեաց զի զայսպիսի բանս խաւտեցի եւ պսակեցէ զնայ:



«Եղիցի քեզ, - ասէ, - որպէս կամիս» (Մապթ. ԺԵ. 28): «Նաւարք քո, - ասէ, - եւ այլես մեծամեծս, կարեն վճարել, բայց եղիցի քեզ որպէս եւ կամի» (հմմտ. Մապթ. ԺԵ. 28):

Այս բարբառ այն բարբառոյ զուգական է, որ ասէ, թէ «Եղիցին երկինք եւ եղեն» (Ծննդ. Ա. 3): Եւ բժշկեցաւ զուստրն ի նմին ժամու: Տեսանես, զի ո՛չ սակաւ նպաստ եւ նա եղեւ ի բժշկութեան դասերն: Վասն այնորիկ ոչ ասաց Քրիստոս, թէ «բժշկեսցի դուստրն քո» (հմմտ. Մապթ. ԺԵ. 28): Այլ թէ ոչ վայրապար ողորջանաց ինչ բանք էին, այլ բազում հաւատոց զաւրութիւն:

### ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՅԻ

(Գլուխ ԺԵ.)

Եւ ելեալ անրի Յիսուսի՝ գնաց ի կողմանս Տիրոսի եւ Սիդոնի (Մապթ. ԺԵ. 21):

Սովորութիւն էր այս Տեսան, զի յորժամ գմեծամեծս խօսէր եւ զկատարեալ օրէնս, խոյս տայր ի տեղւոջէն, զի մի՛ հակառակութիւն ինչ լինիցի: Եւ դարձեալ՝ ի կողմանս յայտոսիկ գնալով՝ դուռն բանայ հեթանոսաց հաւատոյ, զի ո՛չ եթէ հրէից միայն իցէ Աստուած, այլեւ հեթանոսաց: Բայց զի մի՛ ինքն լիցի պատճառ, այլ հրէիցն անընդունակութիւնն եւ հաւատքն հեթանոսաց, վասն որոյ ասէ Մարկոս, եթէ «եմուք ի քուն եւ ոչ կամէր յայտնել զանձն, եւ ո՛չ կարաց ծածկել» (հմմտ. Մարկ. Ե. 24), քանզի անարժան համարէր զնոսա Իւրոյ մարդասիրութեանն. բայց յորժամ ետես զհաւատս նոցա, ընկալաւ: Դարձեալ՝ ի հաստատութիւն Իւրոյ բանիցն չողաւ անդ, զի ասաց թէ՛ «Դիւրագոյն լիցի Տիրոսի եւ Սիդոնի յԱտրն դաբաստանի, քան ձեզ» (Մապթ. ԺԱ. 22), եւ միանգամ ի կողմանս յայտոսիկ գնալով՝ զքանանացիին աշակերտեաց: Իսկ զայնքան ժամանակս ի միջի նոցա լինելով՝ եւ ո՛չ երբէք շահեցան:

Եւ ահա կին մի քանանացի, ի սահմանաց անրի նոցա ելեալ, աղաղակէր եւ ասէր. «Ողորմեա՛ց ինձ, Տէ՛ր, Որդի՛ Դաւթի, դուստր իմ չարաչար այսահարի» (Մապթ. ԺԵ. 22):

Ամբաստան լինի զկնոջէն աւետարանիչս նախ, որպէս զի սքանչելիքն յայտնի լիցի, եւ նա եւս քան զեւս բարձրագոյն քարոզեսցի. «Ահա կին մի, - ասէ, - քանանացի»: Զքանանացիին յիշելով՝ զազգն անօրինաց ի մէջ ածէ, որ զօրէնս բնութեանն ի հիմանէ տա-

պալեցին, որով զգորութիւն զալստեանն Քրիստոսի ծանուցանէ: Եւ դարձեալ՝ զի որք ընկեցիկ եղեն յերկրէն, զի մի՛ զհրէայսն խոտորեցուցանեն, նոքա այնչափ զգաստացեալ՝ քան զհրէայսն ի հաւատս գեր ի վերոյ եղեն: «Ի սահմանաց անտի նոցա ելեալ». տե՛ս զհաւատս նորա, զի ո՛չ իշխեսաց յԵրուսաղէմ ելանել, քանզի կասկածէր եւ չհամարէր զանձն արժանի. եւ յայտ ի փութոյ անտի է, զի յորժամ ի կողմանս յայտոսիկ եկն Տէ՛րն, ելեալ աղաղակէր. «Ողորմեա՛ց ինձ, Տէ՛ր, Որդի՛ Դաւթի»: Քանզի նա սաղմոսանուագ երգովք զայսն ի Սաւուղայ ի բաց հալածէր (հմմտ. Ա. Թագ. ԺԶ. 23), զնոյն ողորմութիւն եւ յՈրդւոյ նորին պահանջեմ. ինձ, ասէ, ողորմեա՛ց, «դուստր իմ չարաչար այսահարի»: Այսինքն՝ նա անզգայացեալ է ի ցաւոցն, եւ ամենայն վարանք զինեւ են, որ իմանամս. եւ այսպիսի երկիւղածութեամբ աղաղակէր զկնի թախծեալ սրտիւ, մինչ զի զբազումս յաղաղակն կուտէր:

Բայց են ոմանք, որ յայլասացի կիրս շրջեն զասացեալս, թէ յորժամ ել ի Հօրէ Բանն եւ եկն յաշխարհ, ապա եւ Եկեղեցի հեթանոսաց ել ի սահմանաց իւրոց եւ իշխեսաց զալ եւ մերձենալ ի նա՛ ըստ այնմ. «Մոռա՛ գոհովորդ քո եւ գրուն հօր քո, զի ցանկացաւ թագաւոր գեղոյ քո» (Մաղմ. ԽԳ. 11-12): Զի թէ մնացեալ էր ի սահմանս իւր, ո՛չ կարէր աղաղակել առ Տէ՛ր եւ ողորմութիւն խնդրել, քանզի վասն ողորմութեան հեթանոսք փառաւոր առնեն զԱստուած, որոց ծնունդն ի ճենճերս դիւացն մոլելով՝ չարաչար այսահարէր եւ ի ձեռն Բանին զալստեան՝ ողորմութիւն գտանէր:

Եւ նա ո՛չ եր նմա պապասխանի (Մապթ. ԺԵ. 23):

Զո՞ որ ոչ խոնարհեցուցանէին վիշտք կնոջն եւ պաղատանքն, զի վասն միոյ դատեր միամօր եղելոյ եւ մատնելոյ ի ցաւս՝ աղաղակէր եւ ո՛չ արժանի զանձն համարէր, այլ ողորմութիւն միայն գտանել ժտէր եւ պատասխանւոյ անգամ արժանի ոչ լինէր: Բայց ներէր Տէ՛ր, զի զփափագ նորին յորդորէր եւ իրաւամբք փրկութիւն հեթանոսաց յարդարէր, զի որոց յաճախ տայր զչնորհս, արհամարհէին, եւ յորոց արգելոյր, խնամով խնդրէին. եւ զի այս այսպէս է, յաջորդս ցուցանէ, զի եւ աշակերտքն իսկ յաղաչանս մատեան:

Եւ մաքուցեալ աշակերտքն Նորա՝ աղաչէին զՆա եւ ասէին. «Արձակեա՛ զնա, զի աղաղակէ զհեր մեր» (Մապթ. ԺԵ. 23):



Թերեւս բազումք ի լսողացն գայթաղէին, սակայն կինն ոչ գայթաղէր: Եւ զի՞նչ ասացից ի լսողացն. այլեւ աշակերտքն ածին այսպիսի զմտաւ, այլ թէպէտեւ խռովեցան, բայց ո՛չ իշխէին յայտնել, այլ միայն աղաչանօք ասէին թէ՛ արձակեա՛, այսինքն՝ արա՛ զխնդրուածս նորա, զի ո՛չ զկնի այլ ուրուք, այլ մե՛ր զաղաղակ թախանձանացն առնէ:

Նա պարասխանի եր էւ ասէ. «Ո՛չ ուրեք առաքեցայ, եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս փանն Իսրայէլի» (Մաթթ. ԺԵ. 24):

Նախ ցուցանէ, թէ Ինքն է հովիւն առաջին, որ հովուէրն զԻսրայէլ անքուն ակամբ (հմմտ. Մաթթ. ՆԹ. 2, ՃԻ. 4), որ եւ այժմ եկն՝ այց առնել մոլորելոցն: Եւ երկրորդ՝ զսէրն որ առ Իսրայէլ է՝ ուսուցանէ եւ զլրումն ուխտից հարցն յիշեցուցանէ, զի մի՛ ասիցեն, թէ վասն այնորիկ ոչ հաւատացաք, զի նախ առ մեզ ոչ եկն: Եւ երրորդ՝ զկինն յորդորագոյնս գործէ, զի որպէս մեր սովորութիւն է, յորժամ կամիցիմք զոք ի հաւանութիւն ածել, այլ ընդ այլոյ զբանն խօսիմք, նոյնպէս եւ Քրիստոս արար: Քանզի զո՞յր ուրուք զՂիլս ոչ հատանէին այնպիսի բանքն, որ եւ բարեխօսքն յորժամ լսէին զայն, չէ՛ հնար իրացդ լինելոյ՝ ասէին. իսկ նա լռեա՞ց կամ կասեցա՞ւ երբէք ի յօժարութենէն. ո՛չ, այլ ե՛ւս քան զեւս ժտէր եւ ընդ բանին ժտանսն եւ զարդիւնսն խառնէր: Իսկ առ ի միտս՝ տուն Իսրայէլի ո՛չ ըստ մարմնոյ արդեօք, այլ ըստ հոգւոյ, վասն որոյ ի սփիւռս հեթանոսաց տարածեաց զփրկութիւնն առ մոլորեալ հոգիս Իսրայէլի՝ տեսողի զԱստուած:

Եւ նա մարուցեալ երկիր պագանէր Նմա էւ ասէր. «Տէ՛ր, օգնեա՛ ինձ» (Մաթթ. ԺԵ. 25):

Յորժամ իմացաւ, թէ ոչինչ կարեն գամագիւտ լինել բարեխօսքն, զամօթն յետ ընկեաց եւ լրբէր զգեղեցիկ լրբութիւնն. յառաջագոյն ոչ իշխէր առաջի կալ, բայց միայն աղաղակէր, եւ յորժամ ի դէպ էր նմա հեռանալ, քանզի անյոյս եղեւ, յայնժամ հուպ գայր եւ երկիր պագանէր եւ ասէր. «Տէ՛ր, օգնեա՛ ինձ»: Զի՞նչ գործես, ո՛վ կին, մի-թէ աւելի՞ համարձակութիւն ունիցիս եւ մեծ զօրութիւն. ո՛չ, ասէ, այլ ամօթովս լի եմ, սակայն զլրբութիւնս փոխանակ խնդրուածոց առաջի եղից, զի թերեւս խոնարհեսցի ի ժտութիւնս իմ: Եւ այդ զի՞նչ օգուտ իցէ. ո՞չ լուար քեզէն, զի ասէր. «Ո՛չ ուրեք առա-

քեցայ, եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի»: Զայդ լուայ, ասէ, բայց Նա Տէր է. վասն որոյ չասաց թէ՛ «աղաչեա» կամ «խնդրեա», այլ թէ՛ «օգնեա՛ ինձ»: Իսկ Քրիստոս եւ ոչ զայն բաւական համարեցաւ, այլ տակաւին ձիգս արկեալ զտարակուսանսն՝

Պարասխանի եր նմա էւ ասէ. «Ո՛չ է բարուք առնուլ զհաց մանկանց էւ արկանել շանց» (Մաթթ. ԺԵ. 26):

«Հաց» զվարդապետութիւնն եւ զբժշկութիւնն կոչեաց եւ «մանկունս»՝ զԻսրայէլ՝ ըստ այնմ. «Տղայ էր Իսրայէլ, եւ Ես սիրեցի զնա» (Ովսէ ԺԱ. 1), որ քան զշունս կատաղիք եղեն յետոյ: Իսկ «շունս»՝ զհեթանոսս յաղագս լրբութեանն, միանգամայն եւ զօրինաւոր աստուածպաշտութեամբն զանց առնելոյ եւ ի կուռսն մոլելոյ զօրէն շանց՝ ըստ այնմ. «Շնայր ընդ քարի եւ ընդ փայտի» (Երեմ. Գ. 9): Եւ երրորդ՝ զայս ասելով՝ տիրասէրս կամի զնոսա լինել, որպէս շան է սովորութիւն: Զոր եւ իմացեալ կնոջն զառակաւոր բանսն՝ յորդորագոյն եղեւ՝ ասելով.

Եւ նա ասէ. «Այո՛, Տէր, քանզի եւ շունք կերակրին ի փշրանաց անկերոց ի սեղանոյ փեռոն իւրեանց» (Մաթթ. ԺԵ. 27):

Յորժամ արժանի արար պատասխանւոյն, յայնժամ իբր Տեառն բանիցն յօդէ զՂատագովութիւնն: Եթէ շուն իցեմ, ապա չեմ օտար, զի մանկանցն կարեւոր պէտք են կերակրելոյ, զայն ճարտար գիտեմ, բայց եւ ինձ՝ շանս, զփշրանս քաղել, այսինքն՝ հաղորդել նշխարաց նոցա, չէ՛ ինչ արգել: Բայց դու ընդ հաւատս կնոջն եւ ընդ խոնարհութիւնն, միանգամայն եւ ընդ իմաստութիւնն զարմացիր, զի Յիսուս ասէր՝ չէ՛ բարուք, եւ նա ասէ՛ այո՛, Տէր. որպէս զի լցցի բանն Տեառն թէ՛ «Բոռնք յափշրակն զնա» (Մաթթ. ԺԱ. 12), որ հաւատոյ է գործ: Եւ Տէրն «շունս» կոչէր, եւ նա զբարս շանց առաջի դնէր, որ է յոյժ խոնարհութիւն, եւ Քրիստոս «մանկունս» զհրէյասն անուանէր, եւ նա տեսարս յորժորջէր, որ է իմաստութիւն, տարացոյց եւ աննախանձ բարուց, զի այնպէս ոչ ցաւ էին նմա այլոց յարգանքն, զի չէր մեծամիտ իբր զհրէյասն, զի ասէին. «Զաւակ Արրահամու եմք եւ ոչ ումեք ծառայեցաք» (Յովհ. Ը. 33), վասն որոյ յիրաւի՛ ասէր Քրիստոս թէ՛ «Ի դարաստան եկի յաշխարհս յայս» (Յովհ. Թ. 39): Զի կինն իմաստութիւն ստացաւ, եւ հաւատս եւ խոնարհութիւն, որպէս ասացաւ, եւ այն զի թշնամանեցաւ, եւ նոքա



պատուեալք եւ բժշկեալք՝ օտարք եղեն ի հաւատոցն Արրահամու, եւ սա եմուտ ընդ որդիութեամբ Հօրն մերոյ, որպէս ասէ:

Յայնժամ պապասխանի եպ նմա Յիսուս եւ ասէ. «Ո՛վ կին դու, մեծ են հաւաքք քո. եղիցի քեզ, որպէս եւ կամիս» (Մապթ. ԺԵ. 28):

Զոր մեք ասացաք ի տեսութեան, զնոյն յայտնէ Տէրն վկայութեամբ, ուստի եւ հիացականս զնէ թէ՛ «Ո՛վ կին դու, մեծ են հաւատք քո». քանզի աղաղակէր զկնի, եւ նա ո՛չ ետ նմա պատասխանի. թշնամանեաց խօսիւք, եւ նա ոչ արգելաւ. յարգեաց զիսրայէլ, եւ նա ոչ նախանձեցաւ, որով յայտնի եղեւ հաւատք նորա, եւ այսպիսի բանիւքս պատկեցաւ թէ՛ «Մեծ են հաւատք քո. եղիցի քեզ, որպէս եւ կամիս». քանզի այդպիսի հաւատք ա՛յլ եւս մեծամեծ գործ կարօղ է վճարել, թող թէ զմանուկ քո բժշկել: Եւ դարձեալ՝ հաղորդ էաւ զկամս նորա բժշկութեան դատեր նորա, որպէս թէ ասել՝ ո՛չ Ես միայն, այլեւ հաւատք կամաց քոց ապաքինէ զնա: Բայց «եղիցին» այս հանգոյն է այնմ բանի, որ ասաց. «Եղիցի լոյս, եւ եղեւ լոյս» (Ծննդ. Ա. 3)՝ ըստ յաջորդիս, որ ասէ.

Եւ բժշկեցաւ դուստրն նորա ի նմին ժամու (Մապթ. ԺԵ. 28):

Յոյժ զօրաւոր են իրք հաւատոյն, զի մերձ յաստուածական զօրութիւնն հանէ զստացօղն, քանզի ասաց թէ՛ «Եղիցի քեզ, որպէս եւ կամիս», եւ կամք նորա էր դատերն բժշկութիւն, եւ այն առ ժամայն արդիւնք եղեւ, որով ցուցաւ, թէ ո՛չ ողորջանաց բանք էին, այլ հաւատոցն պայծառութիւն:

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՅԻ**

(Զորրորդ հապոր Գլուխ ԺԴ.)

**ՎԱՍՆ ՔԱՆԱՆԱՅԻՈՅՆ**

Հարց. Վասն է՞ր ընթացաւ յերկիրն Տիրոսի, յորժամ ոչ կամէր յայտնել զինքն, քարոզութեամբ եւ նշանօք:

Պատասխանի. Վասն կնոջ քանանացւոյ: Եւ տե՛ս զմեծ մարդասիրութիւնն Քրիստոսի որ վասն միոյ մեղաւոր եւ այլազգի կնոջ այնչափ ճանապարհ ընթացաւ: Եւ մեք վասն փրկութեան հոգւոյ ի սակաւ տեղիս ոչ աշխատիմք: Քանանացի կինն օրինակ է եկեղեցւոյ՝ վասն չորից: Նախ՝ որպէս այլազգի էր նա, եւ հեթանոսք

օտար ի նմանէ: Երկրորդ՝ ել ի Հրեաստանէ Քրիստոս եւ ապա եկն առ նա: Եւ խաչիւն ել յԵրուսաղէմէ, եւ ապա հաւատացաք մեք: Երրորդ՝ ել ի սահմանաց իւրոց եւ եկն առ Քրիստոս: Եւ եկեղեցի ել ի գարշութեանց իւրոց: Եւ եկն առ Քրիստոս ըստ որում մոռա՛յ զժողովուրդ քո եւ այլն: Զորրորդ, զի մեծ եղեւ հաւատով եւ սիրովն Քրիստոսի, որպէս վկայեաց Տէրն:

Աղաղակէր. «Ողորմեա՛ ինձ» (հմմտ. Մապթ. ԺԵ. 21):

Աղաղակէր նեղեալ սրտիւ եւ ողորմութեամբ խնդրէր եւ ոչ արժանապէս: Զիւք մտաց յոժարութիւնն ե՛ւ յոյսն ե՛ւ արիութիւնն ե՛ւ զօրութիւն հոգւոյ: Լրբութիւն ի չարն վատթար է: Եւ լրբութիւն ի բարին բարի է: Նոյնպէս ամաչելի չարն բարի է եւ ամաչել ի բարին չարէ: «Ազնեա՛ ինձ Տէ՛ր»: Տէ՛ր ես եւ ոչ որպէս հովիւ, որ միայն զքո ոչխարսն պահես, տէ՛ր ես եւ ոչ որպէս մարդ, որ դժուարաւ լսես: Տէ՛ր ես եւ կարող օգնել եւ ո՛չ տկար որպէս մարդ, վան որոյ ասէ՝ օգնեա՛յ. եւ ոչ թէ աղաչէ կամ խնդրէ եւ օգնութիւն ի հաւատն խնդրէ:

«Ոչ է բարիոր առնուլ զհաց մանկանց եւ արկանել շանց» (Մապթ. ԺԵ. 26):

Զքարոզն եւ զնշանն ասէ: «Մանկունք» զհրէասն ասէ հաւատովք եւ օրինօք արիացեալք: Իսկ շուն կոչէ զկինն վասն չորից: Նախ՝ վասն անարգութեան, երկրորդ՝ վասն պղծութեան: Երրորդ՝ զի այլազգի էր: Զորրորդ՝ զի շուն եւ մեղաւոր էր: Իսկ զգաստ եւ իմաստուն կինն ի պատասխանոյն իմացեալ զգութն Դ. կերպիւ: Նախ՝ զի ընդանի է շուն: Երկրորդ՝ զի տէր ունի: Երրորդ՝ զինամս ընդունի: Զորրորդ՝ մերձ է ոչխարացն: Ապա պատասխանեալ ասէ: «Այո, Տէր, գիտեմ, զի մանկունքն ի սեղան նստին»: «Այլու շունք ի փշրանաց կերակրին» (Մապթ. ԺԵ. 27): «Այո, Տէր, գիտեմ, զի մանկունքն փեսարք են մեր»: «Այո, Տէր, շուն եմք, այլ ոչ կապաղի, որ գՏեարդ վիրատրեմք:

**ՎԱՍՆ ՇԱՆՑ**

Եւ զի շուն կոչեցաւ եցոյց յանձն իւրում զբարս շանց Ժ. կերպիւ: Նախ՝ զի լիրբ է եւ սայ լրբեցաւ առաջի Տեառն: Երկրորդ՝ համբերող, յորժամ պատասխանի ոչ լսեր: Երրորդ՝ զգաստացաւ ի



պատասխանոյն Քրիստոսի: Չորրորդ՝ խոնարհ, որ զնա շուն կոչեցաւ եւ զհրեայսն ոչխարս եւ մանկունք: Հինգերորդ՝ շողոքորթ եւ նա թախածէր: Վեցերորդ՝ հոտող, որ զհետ Քրիստոսի ընթանայր: Եւթներորդ՝ հաջող, որ ազաղակէր սրտիւ: Ութերորդ՝ որսող, որսաց հաւատով զՔրիստոս: Իններորդ՝ ըմբռնող, յուսով ըմբռնեաց զոր խնդրէր: Տասներորդ՝ տիրասէր եւ նա կատարեալ սիրեաց եւ գովեացաւ ի Տեառնէ:

### ՎԱՍՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ՆԱԲԱՏՈՅ

«Մեծ են հաւարք քո» (Մարթ. ԺԵ. 28):

Բազում իրօք տեսանի մեծութիւն հաւատոյ կնոջն: Նախ՝ զի բազում ազաղակէր, եւ նա ոչ պատասխանէր: Երկրորդ՝ զի լուելովն անարգէր զնա եւ նա ոչ լռէր: Յայտ է՝ յորժամ բազում ազաղակեմք եւ ոչ առնումք, չէ պարտ լռել: Երրորդ՝ խօսիւք անարգէր զնա, եւ նա փառաւոր էր: Չորրորդ՝ անհնար ասաց զիրն, եւ նա վստահացեալ երկիր պագանէր: Հինգերորդ՝ նա հեռանայր եւ նայ զօգնութիւն խնդրէր: Վեցերորդ՝ պատուէր զԻսրայէլ թշնամանող եւ ոչ նախանձէր: Եւթներորդ՝ փոքր կացոյց զինքն եւ զհրեայսն տէր կոչէր հեթանոսաց: Ութերորդ՝ աղաչեցին աշակերտքն զՏէր եւ ոչ լուաւ եւ նա ոչ երկմտեցաւ: Իններորդ՝ զնոսա շուն կոչեցեաց եւ զԻսրայէլ՝ որդիս: Հեթանոսք տիրասէր եղեն իբրեւ զշուն եւ իսրայէլացիքն զկատարումն շանց ստացան: Տասներորդ՝ զի խոնարհեցաւ եւ ասաց. «Այո, շուն եմ ես», վան որոյ վկայեաց՝ «Մեծ են հաւարք քո»:

Հարց. Վասն է՞ր այնչափ յերկարեաց:

Պատասխանի. Վասն չորից: Նախ՝ զի որքան յերկարի հաւատն այնքան պարզի եւ նորոզի: Երկրորդ՝ որքան համբերէ, աճէ վարձքն: Երրորդ՝ զի խոնարհութեամբն պսակեցէ: Չորրորդ՝ զի մէք գիտասցուք զմեծութիւն հաւատոյ նորա եւ օրինակ առցուք:

«Եղիցի քեզ որպէս եւ կամիս» (Մարթ. ԺԵ. 28):

Երեք բանէ: Նախ՝ որ ասէ՝ «եղիցի», այնմ բարբառաց հանգոյն է, որ ասաց՝ եղեւ. հրամայեաց եւ հաստատեցան (հմմտ. Ծննդ. Ա. 3): Երկրորդն՝ «քեզ», այսինքն՝ հաւատք զամենայն մեծ գործս կատարէ, զյարութիւն մեռելոց եւ ազատութիւն դժոխոց եւ արքա-

յութիւն երկնից եւ այլն զորս թուէ առաքեալն ի հերբայեցւոցն, այլ զոր կամիս այժմ լիցի քեզ եւ յետոյ այլքն ամենայն: Երրորդ՝ «որպէս կամիս», նախ ցուցանէ երկուց կամացն համաձայնիլ: Երկրորդ՝ զօրութիւն հոգւոյն եւ զօրութիւն բանին: Երրորդ՝ զի բանն Քրիստոսի հաւատաց նորա հետեւեցաւ: Եւ յայսցանէ բժշկութիւն եղեւ դստերն: Եւ տես զի հարիւրապետն, որ հեթանոս էր, եւ կինն քանանացի: Սոցա միայն վկայեաց մեծ եւ զարմանալի հաւատս ունել: Այսքան առ այս:





**20. ԲԺՇԿՈՒԹԻՒՆՔ Ի ԴԵԿԱՊՈԼԻՍ**

**Մաթթեոս ԺԵ. 29-31**

**ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՒ ԵՓՐԵՍ**

Յեպ այսորիկ գնաց ի լեառն եւ նստաւ անդ: Մաթեան առ նա կոյրք եւ կաղք, համերք եւ այլ բազումք եւ բժշկէ (հմմտ. Մաթթ.ժԵ. 29-30):

Երբեմն շրջէր եւ երբեմն մնացեալ նստէր եւ ակն ունէր կուրաց եւ կաղաց ի լերինն: Եւ այնուհետեւ ի հանդերձս չմերձենային, այլ ի բարձրագոյնսն ելեալ բերէին առ ոտսն ընկենուին եւ անդ էր բազում զարմանս տեսանել, զի զորս բառնալով տանէին իւրեանց ոտիւքն իջանէին, եւ կոյրքն առանց առաջնորդի գնացին, եւ բազում բժշկելոյն յանկարծակի առողջութիւնն զամենիսեան հիացուցանէր: Տեսանես զկնի կնոջն յետ այնչափ պաղատելոյ եւ զսոսա վաղվաղակի բժշկէր, ոչ զի սոքայ լաւ էին քան զնայ, այլ նա կարի հաւատացեալ էր քան զնոսա:

**ՅՈՎՆԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՅԻ**

Եւ գնացեալ անրի Յիսուսի՝ եկն ի ծովեզրն գալիլեացոց եւ ելեալ ի լեառն՝ նստէր անդ (Մաթթ. ժԵ. 29):

Ո՛չ միշտ զհեթանոսօքն գայր, զի մի՛ տայցէ պատճառս այնոցիկ, որ զպատճառս կամիցին, այլ սուղ ինչ յայտնէր նոցա, զի նախանձ արկցէ ժողովրդեանն հրէից: Վասն այնորիկ գնացեալ անտի եկն ի Գալիլեա եւ ելեալ առանձինն նստէր ի լեառն, որպէս զի առ Նա հաւաքեսցին. քանզի երբեմն ինքն շրջէր եւ երբեմն մնացեալ նստէր, զի առ Նա եկեսցեն, զի բարեպաշտութիւնն նոցա ո՛չ ի հարկէ, այլ կամաւ լինիցի: Եւ կամ վասն աղօթից առանձնանայր ի լեառն, որպէս յայլում ժամանակի, քանզի առաքինութիւնն կրկին է՝ աստուածսիրութիւն եւ մարդասիրութիւն, որ եւ յօրինակ եւ յուսումն մեզ՝ զերկոսին միշտ ի կիր արկանէր Տէրն. ի ձեռն աղօթից՝ զաստուածսիրութիւնն, եւ ի ձեռն վարդապետութեանն եւ բժշկութեանն՝ զմարդասիրութիւնն:

Մաթեան առ Նա ժողովուրդք բազումք, որ ունէին ընդ իւրեանս կաղս, կոյրս, համերս, միակողմանիս եւ այլս բազումս, եւ ընկեցին զնոսա առ ոքս Նորա, եւ բժշկեաց զնոսա (Մաթթ. ժԵ. 30):

Ոչ այնքան ի սիրոյ Նորա ստիպեալք գային, որքան ի բազմատեսակ ցաւոցն զրդեալք յօժարէին, քանզի զբազում մարմինս թոնձս եւ կիսամեռս բերեալ՝ ընկեցին զնոսա առաջի Նորա իբր առ կենաց տուող եւ ցաւոց լուծող: Վասն որոյ ո՛չ ի հանդերձս ետ մերձենալ եւ ո՛չ հաւատս ինչ պահանջեաց, այլ ի լեառն տանելն եւ առ ոտսն ընկենուլն բաւական համարեցաւ ի բժշկութեան իրս: Բայց թէ ասիցէ ոք, թէ զքանանացին ընդէ՞ր ոչ այնպէս արագ բժշկեաց, այլ բազում թախանձանօք թախանձեաց, միթէ սոքա լա՞ւք էին քան զնա, ասասցուք՝ ո՛չ, այլ զի նա կարի հաւատացեալ էր, կամեցաւ զհաւատս նորա յայտնել, քանզի հեթանոս էր փիւնիկ յազգէ ասորի, իսկ սոքա հրէայք էին, յիւր կողմանէն շնորհս բժշկութեան ետ նոցա:

Մինչեւ զարմանալ ժողովրդոցն, որ փեսանէին, զի համերքն խօսէին, կաղքն գնային, միակողմանիքն բժշկէին, կոյրք փեսանէին եւ փառաւոր առնէին զԱստուած Իսրայէլի (Մաթթ. ժԵ. 31):

Զարմանալ ժողովրդոցն ո՛չ վասն հրաշիցն միայն էր, այլեւ վասն բանիւ բժշկութեանն, զի իշխանութեամբ առնէր, որպէս զվարդապետութիւնն. եւ ոչ այս միայն, այլ զի եւ զիւրաքանչիւր զանկսն յարմար շնորհէր եւ զփառս առ Հայր վերաբերէր, զոր տեսալ եւ լուեալ՝ ի փառս Աստուծոյն Իսրայէլի վերաբերէին զեղեալն: Եւ կամ թէ՛ կարծէին զՆա Աստուած գոլ Իսրայէլի, զոր եւ փառաւորէին իսկ, քանզի Աստուծո՛յ միայն է զայնպիսիսն վճարել:

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՅԻ**

(Չորրորդ հապոր, գլուխ ԺԴ.)

**ՎԱՄՆ ԲԺՇԿԵԼՈՅՆ**

Յեպ այսորիկ գնաց ի լեառն եւ նստաւ [անդ] (հմմտ. Մաթթ. ժԵ. 29):

Նախ՝ շրջելով զհեռաւորսն բժշկէր եւ նստելով՝ զմերձաւորս: Երկրորդ՝ գնայր զհաւատացեալսն գտանէր եւ նստէր, զի նոքա



գտցեն զհաւատսն: Երրորդ՝ շրջէր առ նոսա, որ չիշխէին գնալ եւ նստէր, զի կաղք եւ կոյրքն կարասցեն գնալ:

Եւ Դ. կերպիւ բժշկէր: Առաջին՝ ձեռամբ հանապազ: Երկրորդ՝ բանիւ ասէր: Երրորդ՝ ի հանդերձն մերձեալ: Չորրորդ՝ առաջի անդեալ եւ ստուերաւն բժշկէին որպէս աստ: Եւ այս կա՛մ ըստ փոքու եւ մեծ հաւատոցն նոցա եւ կա՛մ ըստ կարգի ի բարձունս հանէ զմիտս նոցա:

Հարց. Վասն է՞ր զքանանացին այնչափ յապաղեաց եւ զսոսա փուլթով բժշկէր:

Պատասխանի. Ոչ թէ սոքա լաւ են, քան գնա, այլ որպէս ասացաք, նորա հաւատն մեծ էր. որքան յամ էր՝ մեծանայր ի վարձս: Իսկ սոցայն փոքր էր: Նուազ էր ի յապաղիլն, որպէս սակաւ կայծն շիջանի փչելովն եւ հուրն բորբոքի: Նոյնպէս եւ այժմ. բազում սրբութիւնք զայլ ազգիս փուլթով բժշկեն եւ զքրիստոնեայս յապաղեն:



## 21. ԵՐԿՐՈՐԴ ԲԱԶՄԱՅՈՒՄՆ ՆԿԱՆԱԿԱՅ ԵՒ ՉԿԱՆՑ

ԿԵՐԱԿՐՈՒՄՆ ՉՈՐՍ ՀԱԶԱՐԻ

Մաքթեոս ԺԵ. 32-39

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՅԻ

(Գուլի Թ)

Եւ Յիսուսի կոչեցեալ զաշակերփսն՝ ասէ ցնոսայ. Ողորմիմ ամբոխիդ, զի այս երեք աւուրք են՝ որ մնան առ իս, եւ ոչ ունին զինչ կերակուր (տես՝ Մաքթ. ԺԵ. 32):

Յառաջագոյն յաղագս հինգ հազարացն աշակե[ր]տքն աղաչէին գնայ, իսկ այժմ վասն չորից հազարացս յինքենէ առանց ուրուք աղաչելոյ, եւ նոքա մի աւր կացեալ երեկունն (s!) կերակրին, իսկ սոքա վկա[յ]եցան երիս աւուրս ունել. եւ զի մի լուծցին խնամաւորին (!) եւ անդ հինգ հաց եւ երկուս ձկունս ասացին ունել աշակերտքն, աստ հարցեալ պատասխանեցին եւթն հաց ունել եւ սակաւիկ ձկունս, եւ անդ ի վերա[յ] խոտոյ բազմէին, իսկ աստ ի վերայ երկրի անկանեին:

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՎ ԵՓՐԵՍ

Կոչեաց Յիսուս զաշակերփսն եւ ասէ. «Գթամ ի ժողովուրդս, զի երեք աւրեայ աստ են եւ ոչ ունին ինչ ուրել» (հմմտ. Մաքթ. ԺԵ. 32):

Վերագոյնն մինդեռ զայն նշանս առնէր, նախ բժշկեաց զկոյրսն: Նոյնպէս եւ աստ՝ ի կաղացն եւ ի կուրացն բժշկութենէ եկն յայս:

Եւ զի՞ արդ իցէ, զի՞ անդ աշակերտքն ասացին, թէ արձակեա՛ զժողովուրդսդ եւ աստ չասացին, եւ մանաւանդ, զի՞ երեք աւուրք անցեալ էին, կամ ինքեանք այնուհետեւ ազնուագոյնք էին կամ գնոսա տեսանէին, ոչ կարի զգացեալս քաղցին, քանզի եւ փառաւոր առնէին զԱստուած ի վերայ իրացն գործելոց եւ զի՞ ի բժշկու-



Թիւն եկեալ էին, չիշխէին հաց խնդրել, իսկ մարդասէրն եւ դարմանիչն թէպէտ չխնդրէին, տայր: Ասէ զաշակերտսն.

«Գթամ ես ի նոսա եւ արձակեալ նաւթիս չկամիմ» (տե՛ս Մատթ. ԺԵ. 32): *Զի մի ասիցեն, թէ պաշարաւ իսկ կազմ եկեալ էին, ասէ. «Այս երեք աուրք են զի կան առ իս»* (տե՛ս Մատթ. ԺԵ. 32): *Որպէս թէ ասիցէ, թէ ունէին ինչ անդ, ծախեալ էր: Վասն այնորիկ եւ ինքն ոչ յառաջագոյն արար, զի յորժամ նախ պետքն պահանջիցեն, կարի յաւժարութեամբ ընդունիցին զերախտիսն, նաեւ ասելովն, թէ «գուցէ նքթիցեն ի ճանապարհայն»* (Մատթ. ԺԵ. 32): *Յայտ առնէ, թէ եւ ի բացարձակ վայրաց եկեալ էին եւ չկայր ինչ այնուհետեւ, որով զպետսն վճարիցին, եւ ասելովն, թէ*

«Արձակել զդոսա նաւթիս ոչ կամիմ» (տե՛ս Մատթ. ԺԵ. 32), *զիշխանութիւնն յայտ առնէ եւ քանզի ընդ բազմութիւնն նայեցան եւ ի զարմանս մտին, թէ ուստի կարիցեն, յազեցուցանել զայնչափ ժողովուրդ: Այնուհետեւ զիրն իսկ ի մէջ բերէ:*

«Քանի՞ նկանակ ունիր», - ասէ, եւ ասեն «Եւթն, եւ սակաւ ձկունս» (Մատթ. ԺԵ. 34): *Եւ հարցուածովն յիշեցուցանէ նոցա զվաղուց գործելոց նշանացն:*

«Եւ հրամայեաց ժողովրդեանն բազմել ի վերա գեփնոյ: Եւ, առեալ զնկանակսն, աւրինեաց եւ եփ ցաշակերփսն եւ նոքա ժողովրդեանն (տե՛ս Մատթ. ԺԵ. 35-36): Այլ զրաւն ո՛չ հանգոյն առաջնոյն լինէր:

«Կերան, - ասէ, - ամենիքեան եւ բարձին գնշխարսն եւթն սփիրիդս» (տե՛ս Մատթ. ԺԵ. 37): *Թէպէտ եւ չէին այնչափ մարդիկ, որ կերանն, կամ զայն իցէ ասել, եթէ սփիրիդքն եւս մեծագոյն էին քան զսակառինսն, (2բ) եւ կամ թէ զի մի յորժամ հասարակ նշանքն գործիցեն ի մոռացաւնս ինչ զիրսն ածիցեն, այլագունակ կերպարանաւք զարթուցանէ յիշել նոցա: Վասն այնորիկ անդ ըստ աշակերտացն թւէր զթիւ սակառացն եւ աստ ըստ նկանակացն զսփիրիդսն, զի եւ այսու զանբաւ զաւրութիւնն եւ զդիւրագործ իշխա-*

նութիւնն յայտ առնիցէ: Եթէ կարող է այնպէս եւ այլազգ ինչ առնիցէ:

Իբրեւ արձակեաց զժողովուրդսն եւ եմուտ ի նաւ եւ այժմ քանզի եւ Յովհաննէս զսոյն յայտ առնէ (հմմտ. Յովհ. Զ. 14), *զի ոչ այնչափ ինչ ստիպէր զնոսա զհետ երթալ նորա, որպէս հացին նշանն եւ ո՛չ միայն երթալ զհետ, այլ եւ թագաւոր եւս կամէին առնել զնա, եւ զի մի ապստամբութեան ինչ կարծիցիս տայցէ, յորժամ զհացին նշանն յաճախիցէ: Թողու զնոսա եւ ի բաց գնաց:*

### ՅՈՎՀԱՆՆԵՍ ԾՈՐԾՈՐԵՅԻ

(Գլոխ ԺԵ.)

Եւ կոչեցեալ առ Ինքն Յիսուսի զաշակերփսն՝ ասէ. «Գթամ ի ժողովուրդդ, զի արդ երեք աուրք են, զի կան առ Իս եւ ո՛չ ունին զինչ ուփիցեն. եւ արձակել զդոսա նոթիս չկամիմ, գուցէ նքթիցեն զճանապարհայն» (Մատթ. ԺԵ. 32):

Ա՛յլ է այս նշան, թող զառաջինն, քանզի յառաջագոյն յաղագս հինգ հազարացն աշակերտքն աղաչէին զՆա, իսկ այժմ յաղագս չորս հազարացն յինքենէ առնէ առանց ուրուք աղաչելոյ: Եւ անդ աշակերտքն ասացին թէ՛ «Արձակեա՛ զժողովուրդդ», եւ աստ՝ ոչ, այլ Ի՛նքն կոչեցեալ զաշակերտսն՝ ասէ. «Գթամ ի ժողովուրդդ, զի արդ երեք աուրք են, եւ կան առ Իս»: Կամ թէ ինքեանք ազնուագոյնք էին քան զառաջինն եւ կամ զնոսա տեսանէին ոչինչ կարի զգածեալս վասն քաղցին, քանզի ի բժշկութիւն եկեալ էին եւ ո՛չ իշխէին հաց խնդրել: Բայց Նա զթութեամբն դարմանէ. «Եւ ո՛չ ունին զինչ ուփիցեն», զի մի՛ ոք ասիցէ, թէ պաշարաւ իսկ կազմ եկեալ էին, որպէս զի ասիցէ, եթէ ունէին, եւ ա՛յն ծախեալ էր այժմ զերիս աւուրս առ նոսա լինելովն: Վասն այնորիկ եւ Ի՛նքն ոչ յառաջագոյն արար, այլ յորժամ պէտքն պահանջէին, զի յոժարութեամբ ընդունիցին զերախտիսն: Իսկ ասելն՝ «Արձակել զդոսա նոթիս չկամիմ, գուցէ նքթիցեն զճանապարհայն». «չկամիմ» ասելովն զիշխանութիւն Իւր յայտ առնէ, եթէ կարող էր կերակրել զնոսա. եւ «նքթելովն զճանապարհայն» ցուցանէ, թէ ի հեռի վայրաց եկեալ էին առ Նա, եւ չկայր ինչ այնուհետեւ, որով զպէտսն վճարէին, եթէ լուծեալք ի խնամողէն էին:



Ասեն ցՆա աշակերպրն. «Իսկ արդ մեզ յանապարի ասար ուսարի՞ իցե այնչափ հաց, մինչ յագեցուցանել զայսչափ ժողովուրդ» (Մապթ. ԺԵ. 33):

Նախ քան զառումն Հոգւոյն թերակատարք էին աշակերտքն. յայտ յայսմանէ է, քանզի վասն այնորիկ ասաց թէ՛ «Արձակել զդոսա նօթիս չկամիմ», զի մտադիւրս առնիցէ զնոսա եւ մատչել ուսուցանէ՛ աղաչել թէ՛ արա՛ Հաց եւ տո՛ւր դոցա յուտել, որպէս եւ յայնժամ: Այլ ո՛չ այնպէս ինչ զմտաւ ածէին, քանզի մոռացեալք էին զառաջին սքանչելիսն, եւ ա՛յն, զի զնոսա սպասաւորս արար Հացին եւ նոցա բառնալ ետ զսակառիսն: Յաղագս այսորիկ որպէս անդ զանապատն, յայսպէս եւ աստ պատճառէին եւ ի բազմութիւն ժողովրդեանն Հայէին եւ ի վարանս մտանէին թէ՛ «Ուսարի՞ իցե այսչափ հաց, մինչ յագեցուցանել զայսչափ ժողովուրդ»: Իսկ զի՞նչ Տէրն:

Եւ ասէ ցնոսա Յիսուս. «Քանի՞ նկանակ ունիք»: Եւ նոքա ասեն. «Եօթն, եւ սակաւ ձկունս» (Մապթ. ԺԵ. 34):

Ձայս Հարցուած յաղագս այնորիկ ի մէջ բերէ, զի զառաջին նշանսն յիշեցուցանէ, որով սակաւ ինչ զգաստացան: Քանզի թէպէտ ասացին թէ՛ «Եօթն նկանակ եւ սակաւ ձկունս», սակայն ո՛չ յաւելին որպէս անդ, թէ զի՞նչ իցէ այն առ այսչափ մարդիկս, զի թէպէտ ո՛չ ամենեւին ի կատարեալ բարձրագոյնսն Հասանէին, սակայն առ սակաւ սակաւ յառաջադէմ լինէին: Եւ տես զմի՛ւս եւս զգաստութիւնն, թէ ո՛րչափ ի վերոյ էին քան զպէտս որովայնի, զի զերիս աւուրս յանապատին դեզերեալք՝ Եօթն նկանակս ունէին եւ սեղանոյ բնաւ փոյթ ոչ առնէին:

Եւ հրամայեաց ժողովրդեանն բազմել ի վերայ գեպնոյ (Մապթ. ԺԵ. 35):

Ձի կերակրոյ պատրաստիցեն զանձինս եւ զի զկերակրիչն ճանաչիցեն կարօղ զոլ Հաւասար առաջնոյն կերակրել զնոսա: Իսկ ի վերայ գետնոյ բազմիլն՝ նախ՝ զի զանազան է յառաջնոյն տեղեալն եւ ժամանակաւն, զի տեղին գետին էր, եւ ժամանակն՝ աշուն, իսկ անդ՝ խոտ եւ գարուն: Եւ երկրորդ՝ զի «զիբասցեն զսրեղծուածս իրեանց եւ յիշեն, թէ հող ենք» (հմմտ. Մաղմ. ՃԲ 14):

Եւ առեալ գեօթն նկանակսն եւ զձկունսն՝ զոհացաւ եւ երեկ եւ եր ցաշակերպսն, եւ նոքա՝ ժողովրդեանն (Մապթ. ԺԵ. 36):

Ձեղանակ առաջնոյն եւ յայսմ սքանչելւոջ պահէ, զի ի միտ առցեն առանց կարծեաց, թէ նոյն Նա է, որ զառաջինն արար եւ զերկրորդս Հրաշագործէ: Եւ դարձեալ՝ ուսուցանէ, թէ աղօթք եւ օրհնութիւնք են, որ կերակրեն զմարդ, եւ ո՛չ բազմութիւնք մթերեալ արմտեաց՝ ըստ այնմ. «Ո՛չ եթէ արարք արմրեաց կերակրեն, այլ Քոբանդ, Տէր» (Իմաստ. ԺԶ. 26), եւ թէ՛ «Օրհնեցից զհաց քո եւ զջուր քո» (Ելից ԻԳ. 25), քանզի որք զօրհնութիւնն Աստուծոյ ոչ ունին, ուտեն եւ ոչ յագին, եւ որք նովաւ վարին, ի սակաւուցն յագին, որպէս ասէ:

Կերան ամենքեան եւ յագեցան եւ բարձին զնշխարս կոպորոցն եօթն զամբիւղ լի (Մապթ. ԺԵ. 37):

Հաւասարապէս կերան եւ կշիռ ամենքեան յագեցան, բայց զրաւն ո՛չ Հանգոյն առաջնոյն լինէր, զի անդ ի Հինգ Հազարացն երկոտասան սակառի յաւելաւ, եւ աստ ի չորից Հազարացն՝ Եօթն զամբիւղ: Կամ զայն իցէ ասել, թէ զամբիւղքն մեծագոյնք էին քան զսակառիսն, եւ կամ զի մի՛ յորժամ Հասարակ նշխարքն լինիցին, ի մոռացօնս եկեսցեն Հրաշիցն, այլագունակ կերպարանօք զարթուցանէ յիշել զնոսա: Վասն այնորիկ անդ ըստ աշակերտացն կշռէ զթիւ սակառացն, եւ աստ՝ ըստ նկանակացն զփիւրբիդայսն, զի եւ այսո՛ւ զանբաւ զօրութիւնն եւ զդիւրագործ իշխանութիւնն յայտ առնիցէ, եթէ կարօղ է Նա յամենայնի, որպէս եւ կամի:

Եւ որք կերանն, էին իբրեւ արք չորք հազարք, թող զկանայս եւ զամանկարի (Մապթ. ԺԵ. 38):

Դարձեալ՝ եւ զթիւն զնէ աւետարանիչս, որպէս զի եւ ամենեւին զատուցանէ յառաջին սքանչելեացն, զի անդ ի Հինգ նկանակացն Հինգ Հազարքն յագեցան, եւ աստ յեօթանցն՝ չորք Հազարքն Հանդերձ կանամբք եւ մանկտօք:

Իբրեւ արձակեաց զժողովուրդսն, ել ի նաւ եւ եկն ի սահմանս Մագդաղեայ (Մապթ. ԺԵ. 39):

Ձի ո՛չ այլ ինչ ի նշանացն այնչափ ստիպէր զնոսա զՀետ երթալ Նորա, որպէս Հացին նշանն, եւ ո՛չ զՀետ երթալ միայն, այլ եւ յափշտակել եւս եւ թագաւոր առնել: Եւ անդ զի մի՛ ապստամբութեան կարծիս տացէ, յորժամ զՀացին նշանն յաճախիցէ, թողու



զնոսա եւ ի բաց գնայ. ո՛չ հետիոտս ուրեք, զի մի՛ զկնի երթայցեն, ալ ի նաւ մտանէ, որպէս զի ի հարկէ հեռասցի ի ժողովրդենէն:

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՅԻ**

(Չորրորդ հապոր գլուխ ԺԵ.)

**ԳԱՐՁԵԱԼ ՎԱՍՆ ԱԾԵԼՈՅ ՀԱՅԻՆ**

Հարց. Զո՞րն յառաջ արար. զքարոզն թէ զբժշկելն, թէ զհացին անելն:

Պատասխանի. Ոմանք ասեն՝ զերկու օրն քարոզեաց եւ յերրորդ օրն մինչ ի ԺԱ. ժամն: Եւ ապա բժշկեաց: Եւ ապա զհացն անեցոյց: Եւ ոմանք՝ եթէ յառաջին օրն քարոզեաց եւ յերկրորդն բժշկեաց: Եւ այս վասն Դ. պատճառի: Նախ՝ վասն պատուոյ, զի հոգին պատուական է, քարոզութեամբ բժշկեաց եւ ապա՝ զմարմինն եւ ապա՝ զհացն: Երկրորդ՝ դժուարին է բժշկութիւն հոգւոյն վասն որոյ յերկար քարոզեաց եւ մարմինք յորժամ գային բժշկէին եւ հացն ի նոյն ժամն անէր: Երրորդ՝ նախ քարոզեաց եւ ապա նշանօքն հաստատեաց որպէս բազում ուրեք: Չորրորդ՝ պարտ էր նախ ուսուցանել եւ ապա բժշկել զի տեսցեն զսքանչելիսն եւ ուրախութեամբ կերիցեն եւ գնասցեն ի տեղիս իւրոց:

Հարց. Վասն է՞ր ոչ խնդրեցին աշակերտքն զյարձակումն որպէս յառաջն:

Պատասխանի. Նախ, զի ազնուացման մտօք յառաջին նշանն: Երկրորդ՝ զի ոչ զգացին նոքա զքաղցն վասն ուրախութեան նշանացն: Իսկ ժողովուրդն որ խնդրէր: Նախ՝ ի փառաւորութիւնն: Աստուծոյ էին պարապեալ: Երկրորդ՝ զբժշկութիւն խնդրէին եւ ոչ հաց, վասն որոյ ինքն զթութեամբ կերակրեաց վասն չորից: Նախ՝ զի մարդասէր է: Երկրորդ՝ զի ամենայն կերակրէ: Երրորդ՝ զի ողորմութեամբ լիցի եւ ոչ խնդրելով: Չորրորդ՝ զի բժշկութիւնն մնասցէ եւ նոքա թուլացեալ ի ճանապարհին ոչ տեսանել կարեն եւ ոչ գնալ:

«Երեք ատրք» ասէ. Նախ՝ զի պաշար ամենեցուն պակասեալ էր: Երկրորդ՝ զի զքաղցն եցոյց, զի պետտունէին հացի:

«Նօթի չկամիմ արձակել»: Նախ՝ ցուցանէ թէ հեռի էր բնակութիւնն նոցա: Երկրորդ՝ զի նորա իշխանութեամբն անակէին յորժամ հրամայէր:

«Քանի նկանակ ունի՞ք»: Ոչ թէ տգետ էր նկանակացն նա, որ զսիրտն գիտէ: Նախ՝ եհարց, զի զտարակոյս նոցա լուծանէ: Երկրորդ՝ զառաջին նշանն յիշումն անէ նոցա: Եւ ամենայն նոյնպես լինէր ըստ առաջին կերպին, բայց զրաւն ալ զի անդ ԲԺ. սակառի եւ աստ է. սփիւրիթ:

Հարց. Վասն է՞ր:

Պատասխանի. Նախ. սոյնպէս ասեն, թէ մեծ էր է. սփիւրիթն, որպէս սակառին: Երկրորդ, թէ հաւասար լինէր, մոռանային զշանն, վասն որոյ ալ եւ ալ արար: Երրորդ՝ զի ամենազօր է կարէ սուլնպէս առնել եւ կերակրէ այլապէս:

Հարց. Որպէ՞ս ալ եւ ալ:

Պատասխանի. Երիւք: Նախ՝ նկանակքն, որ Ե. եւ է. էին Բդ. կերակրողքն. ԵՄ. եւ ԴՄ.ք էին, Գդ նշխարքն, ԲԺ. սակառի եւ է. զամբիւղէին: Իսկ բաղդատին Զ. իրօք: նախ՝ զի է. էր նկանակ սերմն եւ է. զամբիւղ յաւելաւ: Երկրորդ՝ Ե. նկանակ էր եւ ԵՄ. կերակրողք: Երրորդ՝ ԲԺ. առաքեալք եւ ԲԺ. սակառի: Չորրորդ՝ Հ. աշակերտք եւ է. զամբիւղ: Հինգերորդ՝ Երկրորդն նկանակ եւ ձուկն: Վեցերորդ՝ զնշխար նկանակացն մնաց, եւ ձկանցն ո՛չ, զի բաւական կերողացն յաւելաւ:

Հարց. Զի՞նչ է պատճառ:

Պատասխանի. Ասեն վարդապետք Դ. պատճառ: Նախ՝ զի ձուկն ի լոյծ ջրոյ է եւ հաց՝ յերկրէ եւ հետք, որ է նշանք ծովու, ոչ երեւի ասէ մարգարէն, եւ նշանք երկրաւոր հաստատուն մնայ, զի հաց հաստատէ զսիրտ մարդոյ: Երկրորդ՝ ձուկն յօրինակ բղջախոհաց որ ոչ մնան եւ նկանակն սուրբ եւ զամաքեալ առաքինութեամբ մնան յաւիտեանս: Երրորդ՝ նկանակն մտանէ ի խորհուրդ անպական հացին եւ ձուկն ո՛չ: Չորրորդ ի հինն մանանայն պահեցաւ եւ ոչ լորամարզն: Սոյնպէս ի նորս նկանակն պահեցաւ եւ ոչ ձուկն:

Հարց. Վասն է՞ր նկանակ եւ ձուկն:

Պատասխանի. Նախ՝ ցուցանէ զսակաւապետութիւն աշակերտացն, զի ո՛չ պարապէին մարմնաւոր իրաց, ալ՝ հոգեւորաց: Երկրորդ՝ անդ յանապատին մանանայ եւ միս յագեցան եւ սատակե-



ցան, աստ անապատի փոխեաց ի Հաց եւ ի ձուկն, զի մի սատակեցին: Երրորդ՝ ուսոյց աշակերտաց իւրոց եւ որք յանապատս բնակին մի՛ միս կամ փափուկ կերակուր, այլ սուրբ Հացով եւ ձկամբ շատասցին: Զի որպէս զգեստիւ եւ բնակութեամբ որոշեալք են, նոյնպէս եւ կերակրով լիցին:

Հարց. Որպէ՞ս ուտեն ի պահոց զձուկն եւ ասեն, թէ յաւուրս բաղարջակերացն ետ ուտելոյ: Ըստ Յովհաննու, թէ մերձ էր տաւն զատկին եւ ամբարձ զաչս իւր յաշակերտսն (հմմտ. Յովհ. Զ. 4-5):

Պատասխանի. Ասեմք, եթէ պատճառ են զպատճառս մեղաց գործողքն անօրէնութեանց: Ուստի ի յորժամ ասաց կերակուր ոչ պղծէ զմարդ չարաչար իմացեալք, զամենայն պիղծ եւ զգարչելիս ուտեն ըստ նմանութեան հեթանոսաց եւ ի պահոց զձուկն թէ յայնմ աւուր անեցոյց: Եւ ասեմք թէ սուտ են վասն Զ. պատճառի: Նախ՝ զի ոչ էր բաղարձակերք: Զի թէ առաջին նկանակ ի խորհուրդ բաղարձին էր, երկրորդն՝ վասն է՞ր նկանակ, որ բազում աւուրք յետոյ եղեւ: Երկրորդ՝ պատճառ, զի պահք հրէիցն միայն բաղարձ եւ եղեգն ուտէին, զէ. օր եւ ոչ այլ ինչ: Արդ, եթէ Քրիստոս նոցա ձուկն տայր ուտել, յայտնապէս անցանէր զօրէնքն եւ մոլորէր ժողովուրդն: Երրորդ՝ զի յայն ժամանակին ոչ հրամայէր աշակերտացն պահել մինչ վերաս[ց]ի ի նոցանէ փեսայն, որպէս պատմէ Աւետարանն: Ապա յուտիքն ուտէին զձուկն եւ ոչ ի պահքն: Չորրորդ՝ եւս յայտնի, զի թէ պահոց ուտելի էր ձուկն, որպէս եւ Հաց[ն], մնացեալ էր նշխար ձկանցն որպէս նկանակացն. եւ զի ոչ մնաց, ոչ է ուտելի: Հինգերորդ՝ հրէիցն նախ զատիկն լինէր գառին խորովեալ եւ ապա պահք բաղարձակերք: Արդ, եթէ մերձ էր զատիկն, արպէս ասէ Աւետարանն, ապա ուտիք էր եւ ոչ պահք, յորժամ զձուկն բաշխեաց: Վեցերորդ՝ ասեմք, թէ մինչ ի Վերնատունն Քրիստոս զհինն կատարեաց, մինչ զմարմինն բաշխեաց նորօրէնք Հաստատեաց եւ մեք Հնոյն ոչ եմք պարտական: Ապա՝ թէ զառն եկեր ի հին զատիկն, կե՛ր եւ դու զգառն յայնմ աւուր, որ սիրօղդ ես օրինաց Հնոյն եւ ատեցող նորոյս շնորհաց եւ կանոնաց սուրբ Հարց: Եւ այսպէս ասացաւ մեզ վասն ձկանց ի գիրս Հարցմանց, որ յաղագս նաւակատեաց շաբաթուն: Այսքան առ այս:

## 22. ՆԱՅՅՈՒՄՆ ՆՇԱՆԻՑ

Մաթթէոս ԺԶ. 1-4

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՅԻ

(Գլուխ Թ.)

Եւ մաքուցեալ փարիսացիքն եւ սադուկեցիքն փորձելով հարցին զնա զնշան ինչ յերկնից ցուցանել նոցա (հմմտ. Մաթթ. ԺԶ. 1):

Փարիսացիքն եւ սադուկեցիքն զանազանին եւ հակառակեն միմեանց աղանդաւ, այժմ միաւորեցան փորձել զՔրիստոս: Միաբանեցան բազում անգամ եւ հեթանոսաց իմաստունքն հակառակ ինքեանց ունելով հերձուած, միաբանին ի փորձել եւ ի պարզել զոմանս նոյնպէս եւ հակառակ ինքեանց զաւրութիւնք միաբանին յաղագս աւժելոյ նորայ:

Եւ թողեալ զնոսա՝ զնաց (հմմտ. Մաթթ. ԺԶ. 4):

Զփորձողսն ազգ չար եւ շնացող ասացեալ, զնաց թողեալ որպէս փեսայ զեղեալն պոռնիկ զքաղաքն Հաւատարիմ Սիովն զհրէիցն ժողովարան:

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՒ ԵՓՐԵՄ

Եւ մաքուցեալ սադուկեցիք եւ փարիսեցիքն նշան յերկնից խնդրէին ի նմանէ: Եւ նա ասէ. Յորժամ երեկոյ լինի ասէք, թէ ջեր լինի, զի կարմրացան երկինք եւ ընդ յայգն յորժամ նոյնպէս երեւի, ասէք՝ անձրեւ եւ ձմեռն լինի, զի երեսս երկնից գիտէք փորձեալ եւ զնշանս ժամանակաց ո՛չ կարացէք: Ազգ չար եւ շնացող նշան խնդրէ (հմմտ. Մաթթ. ԺԶ. 1-4):

Եւ զինչ նշան յերկնից խնդրէին: Եթէ ո՛չ կամ զարեգակ ընթացից կացուցանել, կամ զլուսին պաշարել, կամ փայլատակունս երկնից իջուցանել, կամ աւղոյ փոփոխել, կամ այլ ինչ նոյնպիսիս: Եւ առա այն զի՞նչ տացէ պատասխանի: «Զերեսս երկնից, -ասէ, -գիտէք փորձեալ»



ծնյ էլ զնշանս ժամանակաց չկարացիր»։ *Զոր աւրինակ, յերկինս այլ նշան ձմերայնոյ է եւ այլ ջերոյ, եւ ոչ ոք տեսանէ զձմերայնոյ նշանն, վերոյ ակն ունիցի եւ ո՛չ ի ջերմ ժամանակի ձմերանի*: Նոյնպէս, ասէ, եւ առ իս պարտիք իմանալ, թէ այլ ժամանակ է այժմու գալստեանս եւ այլ Հանդերձելոյն, այժմ երկրաւոր նշանաց են պետք եւ երկնիցն այլում ժամանակի են պահեալ: Այլ իբրեւ զբժիշկ եկի եւ ապա իբրեւ զդատաւոր: Այժմ խնդրել զմոլորեալն եւ ապա զվրէժ իսկ պահանջել: Այժմ լուելայն եկի եւ ապա բազում աշխարհատես ամբօխիւ յայտնութեամբ, զի զերկինս գալարիցեմ եւ զարեգակն կորուսանիցեմ, եւ լուսնի չտամ ծագիլ, ապա եւ զաւրութիւնք եւս երկնից շարժեսին եւ փայլակն յանկարծակի երեւեսցի գալստեանն եւ յայտնութեանն նման, այլ չեւ եւս իցէ, այնք նշանաց ժամանակ, քանզի եկի ի մեռանել եւ անհնարին տանջանս կրել: Եւ դու նախաց ընդ տկարութիւն սրտից նոցա, զի արդ յորժամ լուսնն եթէ նշանն Յունանու մարգարէի ոչ ինչ Հարիցին, թէպէտ եւ զմարգարէն ճարտար գիտէին, եւ պարտ էր հարցանել եւ ուսանել թէ զինչ իցէ բանն, զոր ասաց, այլ որպէս վերագոյնն ասացի, ոչ եթէ ուսանելոյ ինչ ցանկութեամբ խնդրէին զայն, վասն այնորիկ եւ նա թողուր զնոսա եւ գնայր:

### ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՅԻ

Եւ մաքուցեալ փարիսեցիքն եւ սաղուկեցիք՝ փորձելով խնդրէին ի Նմանէ նշան յերկնից ցուցանել նոցա (Մաթթ. ԺԶ. 1):

Սոքա թէպէտ հակառակ միմեանց էին աղանդով, զի փարիսեցիքն առանձնականք էին եւ հրեշտակ եւ հոգի եւ յարութիւն խոստովանէին, իսկ սաղուկեցիքն զմի ի սոցանէ ոչ ընդունէին, բայց ի փորձել զՏէրն միաբանեցան, որպէս եւ այժմ հեթանոսաց մանկունք եւ հերձուածողաց՝ հակառակ ունին հերձուածս, բայց միաբանին պատրել զուղղափառս՝ ըստ այնմ թէ՛ «Ժողովեցան վասն Տեառն եւ վասն օծելոյ Նորա» (Մաղմ. Բ. 2): Արդ՝ մատեան խնդրել նշան յերկնից ցուցանել նոցա, քանզի զոր յերկրի առնէր, որպէս զհացին եւ զայլսն, այնմ ո՛չ հաւատացին, այլ առաջօք կարծէին, վասն որոյ յերկնից խնդրէին՝ ո՛չ սակս հաւատալոյ, այլ փորձելոյ: Եւ զարձեալ՝ նշան յերկնից խնդրէին, զի զհամբաւն լսէին, թէ Քրիստոսն է, իսկ զգալուստ Նորա ի Դանիէլէ ծանուցեալ թէ՛ «Ընդ ամպս

երկնից իբրև Որդի մարդոյ գայ» (Դան. Է. 13), *վասն որոյ զառաջինս երկրորդ գալուստ կարծէին, որք մատուցեալ՝ զերկրորդին նշանն, յորժամ յերկնից եկեսցէ, այժմ հայցէին: Եւ զի՞նչ էր այն. կամ զարեգակն յընթացից կասեցուցանել, կամ զլուսին պաշարել, կամ փայլատակունս յերկնից իջուցանել, կամ օդոց փոփոխել, եւ կամ այլ ինչ նոյնպիսի. եւ առ այն զի՞նչ Տէրն*:

Նա պապասխանի եր եւ ասէ ցնոսա. «Ազգ չար եւ շնացող նշան խնդրէ, եւ նշան մի՛ փացի նմա, բայց նշանն Յովնանու մարգարէի»: Եւ եթող զնոսա եւ գնաց (Մաթթ. ԺԶ. 2-4):

Յերկնից խնդրէք նշան, բայց ես յերկրէ առնեմ զայն, որպէս այն, զի ասէր. «Կեղծատրք, զերեսս երկնի եւ երկրի գիտէք փորձել, իսկ զժամանակս գայս ընդէր ոչ փորձէք» (Լուկ. ԺԲ. 56), *զի զոր օրինակ յերկինս այլ նշան ձմերայնոյ է եւ այլ՝ ջերոյ, եւ ոչ ոք իցէ, որ տեսանիցէ զնշան ձմերայնոյ, ջերոյ ակն ունիցի, եւ ոչ ի ջերմն ժամանակի՝ ձմերայնոյ: Նոյնպէս եւ առ իս պարտիք իմանալ, եթէ այլ ժամանակ է այժմու գալստեանս, եւ այլ՝ հանդերձելոյն. այժմ երկրաւոր նշանաց են պէտք, վասն զի յերկրիս եմ, եւ երկնիցն այլում ժամանակի են պահեալ: Այժմ իբր զբժիշկ եկի եւ յետոյ իբր զդատաւոր, այժմ լուելայն եւ յայնժամ՝ աշխարհատեսիլ յայտնութեամբ, զի զերկինս գալարիցեմ եւ զարեգակն խաւարեցուցանեմ, եւ լուսնի չտամ ծագիլ, եւ ապա զօրութիւնք երկնից շարժիցին, եւ փայլակն յանկարծակի երեւեսցի ի գալստեանն: Այլ այժմ չե՛ւ եւս իցէ այնց նշանաց ժամանակ, քանզի եկի մեռանել եւ ի սիրտ երկրի մտանել, որպէս զՅունան մարգարէ (հմմտ. Յովն. Բ. 1):*

«Եւ եթող, – ասէ, – զնոսա եւ գնաց»: *Տես զխորամանկութիւն բարուց նոցա, զի ոչինչ հարցին, թէպէտեւ զմարգարէն ճարտար գիտէին: Պարտ էր հարցանել, թէ զի՞նչ իցէ բանն, զոր ասաց. այլ որպէս վերագոյն ասացի, ոչ եթէ ուսանելոյ ինչ ցանկութեամբ, այլ փորձութեամբ խնդրէին զայն, վասն այնորիկ եւ Նա թողոյր զնոսա եւ գնայր, որպէս փեսայ, զի տեսանէ զհարսն շնացեալ, նոյնպէս եւ Նա զքաղաքն հաւատարիմ զՍիոն պոռնիկ եղեալ (հմմտ. Եսայի Ա. 21)՝ թողու ի խնամոց Իւրոց ի բաց*:



ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՅԻ

ՎԱՍՆ ԳԱՍՏԵԱՆ ԵՒ ՆՇԱՆԱՑ

Հարց. Վասն է՞ր ասէ. «Նշան մի՛ փացի»: Զի խաչելութեամբն եղեւ նշան ի լուսաւորս եւ յօղս:

Պատասխանի. Որպէս այն յորժամ զհացն խնդրէին նշան, ասաց. «Մի՛ տացի»: Եւ աճեցոյց զհացն, ոչ վասն նոցա, այլ վասն հեթանոսաց: Այսպէս առ խաչին եղեն նշանք եւ նոքա ոչ հաւատացին:

Հարց. Զի՞նչ է պատճառն, որ միայն յառաւօտն եւ յերկոյն կարմրանայ երկինք:

Պատասխանի. Զի՞ յայնմ ժամու արեգակն զլոյսն ի ներքին երեսն տայ ամպոց, եւ զտիւն ի վերոյ լինի:

Հարց. Վասն է՞ր միեւնոյն կարմրութիւնն անձրեւոյ եւ ջերոյ է նշան:

Պատասխանի. Ոմանք ասեն՝ յորժամ արեգակն ծովուն ելեալ զգիծութիւնն ցուց//անէ յամպն եւ յարեւմուտս խոնարհեալ զչորութիւն, եւ ոմանք՝ թէ ամպն ի գիշերի գիջացեալ առնու զջերմութիւն արեւուն եւ կարմրի: Զայս ասէ, որպէս նշան կայ անձրեւոյ եւ այլ՝ երաշտի, այլ՝ ամարան եւ այլ՝ ձմերան: Նոյնպէս այլ նշան է այժմու գալստեանս եւ այլ հանդերձելոյն: Եւ այս ժ. յեղանակաւ: Նախ՝ զի այս գալուտս ի ժամանակի եւ այն՝ յաւիտենին: Երկրորդ՝ այս՝ ամառն եւ այն՝ ձմեռն: Երրորդ՝ աժմ երկրաւոր նշան լինի եւ այնժամ՝ երկ<ր>նաւոր: Չորրորդ՝ այժմ բժիշկ եկի հոգւոց եւ մարմնոց եւ յայնժամ դատաւոր: Հինգերորդ՝ այժմ եկին խնդրել զմոլորեալն եւ հաւատովք եւ գործովք, եւ յայնժամ վրէժ խնդրեմ յանհաւատից եւ ի չարեաց: Վեցերորդ՝ այժմ լուելայն եկի եւ յայնժամ՝ աշխարհատես եւ յայտնի: Եւթներորդ՝ այժմ ի չարչարանս եւ ի մահ եկի, եւ յայնժամ ի փառս եւ յանմահութիւն: Ութերորդ՝ այժմ սիրելեաց իմոց զչարչարանս տամ եւ յայնժամ՝ զհանգիստ: Իններորդ՝ այժմ յերկրէ եւ ի մօրէ եկի եւ յայնժամ՝ յերկնից եւ ի հօրէ: Տասներորդ՝ այժմ մարդկաբար եւ աշակերտօք եկի եւ յայնժամ՝ աստուծապէս եւ երկնաւոր զօրօք, զի զօրութիւնք երկնից շարժեցին եւ աստեղք ծածկին եւ որպէս փայլակն ելանէ եւ այլն:

Հարց. Վասն է՞ր ոչ հարցին զնշանն Յունանու:

Պատասխանի. Նախ՝ փորձել եկին եւ ոչ յուսանել: Երկրորդ՝ նշանն Յունանու զյարութիւնն հաստատէ եւ սաղուկեցիքն չհաւատային յարութեան նաեւ ոչ հրեշտակաց եւ ոչ անմարմինն իրաց՝ ի Սաղովկ քահանայէ խմորեալ:

Ղուկաս ԺԲ. 54-56

ԻԳՆԱՏԻՈՍ ՍԵԻԼԵՈՆՅԻ

(Գլուխ ԺԲ.)

Ասէ, յորժամ ամպ ծագէ յարեւմտից՝ ասէք եթէ՝ անձրեւ գայ, եւ լինի այնպէս. եւ թէ հարաւ հնչէ, ասէք թէ՝ խորշակ լինի. եւ լինի այնպէս: Կեղծաւորք, գերեսս երկնի եւ երկրի փորձէք եւ ժամանակս զիա՞րդ ոչ փորձէք» (հմմտ. Ղուկ. ԺԲ. 54-56):

Արդ, զայս աւրինակս եղ առաջի՞ յայտ արարեալ, թէ ժամանակք, որ ի մարգարէիցն ասացան վասն Նորա գալստեան՝ լցեալ են, եւ զոր ինչ պարտ էր Նմա գործել եւ զոր գուշակեցին մարգարէքն՝ ամենայնն եղեւ: Եւ զիա՞րդ ոչ ճանաչէք ժամանակս զայս, եթէ՛ մերձ է փրկութիւն ձեր, զի ահաւասիկ յարեւմտից կուսէ եւ մերձ ձեզ կացեալ ծովուն յորժամ ամպ ծագէ ի նմա, գիտէք եթէ՛ անձրեւ գայ, եւ՝ հարաւային կողմ ջերմին է վասն արեգականն միշտ ընդ նա անցանելոյ, եւ զի խոնարհեն վայրքն՝ անտի ուսայք, եթէ ի հնչել հարաւային հողմոյն՝ խորշակ առնէ: Եւ զիա՞րդ ոչ նովին խորհրդով հոգեւորացն եւ աստուածայնոցն հասանէք գիտութեան: Արդ, վասն զի ասաց. «ոչ եկի արկանել խաղաղութիւն, այլ՝ սուր»: Եւ զի մի ոք կարծեսցէ եթէ ի Նմանէ է խոռովութիւնն, այլ՝ Նա եկն երկնային խաղաղութեամբն՝ ըստ այնմ աւետարանեաց խաղաղութիւն՝ հեռաւորաց եւ մերձաւորաց (հմմտ. Եփես Բ. 20): Իսկ երկրաւոր չարութիւնքս ընդդէմ ամբարձան երկնային խաղաղութեանն՝ պատերազմ առնել, եւ զայս աւրինակաւ եցոյց. ամպոյ զինքն նմանեցուցանէ, եւ՝ զնոսա, որք առաքեցան ի Նմանէ յաշխարհ: Զի ամենայն ուրեք ամպոյ նմանեցան այնոքիկ, որ զբանն սերմանեցին յաշխարհս՝ ըստ ասելոյն Յսայեայ. «Պատուէր փաց ամպոց Իմոց, զի մի փեղացեն յայգի Իմ» (Եսայի Ե. 6): Արդ, Յիսուս ամպով մարմնոյն ծագեալ ի մեզ՝ յարեւմտեայքս՝ հոսեաց ի մեզ զանձրեւն կենաց եւ ընդդէմ այս անձրեւոյ, որ բուսուցանէ ի մեզ զգեղեցիկ բոյսս



ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՅԻ

ՎԱՍՆ ԳԱՍՏԵԱՆ ԵՒ ՆՇԱՆԱՅ

Հարց. Վասն է՞ր ասէ. «Նշան մի՛ փացի»: Զի խաչելութեամբն եղեւ նշան ի լուսաւորս եւ յօդս:

Պատասխանի. Որպէս այն յորժամ զհացն խնդրէին նշան, ասաց. «Մի՛ տացի»: Եւ աճեցոյց զհացն, ոչ վասն նոցա, այլ վասն հեթանոսաց: Այսպէս առ խաչին եղեն նշանք եւ նոքա ոչ հաւատացին:

Հարց. Զի՞նչ է պատճառն, որ միայն յառաւօտն եւ յերիկոյն կարմրանայ երկինք:

Պատասխանի. Զի՞ յայնմ ժամու արեգակն զլոյսն ի ներքին երեսն տայ ամպոց, եւ զտիւն ի վերոյ լինի:

Հարց. Վասն է՞ր միեւնոյն կարմրութիւնն անձրեւոյ եւ ջերոյ է նշան:

Պատասխանի. Ոմանք ասեն՝ յորժամ արեգակն ծովուն ելեալ զգիճութիւնն ցուց//անէ յամպն եւ յարեւմուտս խոնարհեալ զչորութիւն, եւ ոմանք՝ թէ ամպն ի գիշերի գիջացեալ առնու զջերմութիւն արեւուն եւ կարմրի: Զայս ասէ, որպէս նշան կայ անձրեւոյ եւ այլ՝ երաշտի, այլ՝ ամարան եւ այլ՝ ձմեռան: Նոյնպէս այլ նշան է այժմու գալստեանս եւ այլ հանդերձելոյն: Եւ այս ժ. յեղանակաւ: Նախ՝ զի այս գալուստ ի ժամանակի եւ այն՝ յաւիտենին: Երկրորդ՝ այս՝ ամառն եւ այն՝ ձմեռն: Երրորդ՝ աժմ երկրաւոր նշան լինի եւ այնժամ՝ երկ<ր>նաւոր: Չորրորդ՝ այժմ բժիշկ եկի հոգւոց եւ մարմնոց եւ յայնժամ դատաւոր: Հինգերորդ՝ այժմ եկին խնդրել զմոլորեալն եւ հաւատովք եւ գործովք, եւ յայնժամ վրէժ խնդրեմ յանհաւատից եւ ի չարեաց: Վեցերորդ՝ այժմ լուելայն եկի եւ յայնժամ՝ աշխարհատես եւ յայտնի: Եւթներորդ՝ այժմ ի չարչարանս եւ ի մահ եկի, եւ յայնժամ ի փառս եւ յանմահութիւն: Ութերորդ՝ այժմ սիրելեաց իմոց զչարչարանս տամ եւ յայնժամ՝ զհանգիստ: Իններորդ՝ այժմ յերկրէ եւ ի մօրէ եկի եւ յայնժամ՝ յերկնից եւ ի հօրէ: Տասներորդ՝ այժմ մարդկաբար եւ աշակերտօք եկի եւ յայնժամ՝ աստուծապէս եւ երկնաւոր զօրօք, զի զօրութիւնք երկնից շարժեցին եւ աստեղք ծածկին եւ որպէս փայլակն ելանէ եւ այլն:

Հարց. Վասն է՞ր ոչ հարցին զնշանն Յունանու:

Պատասխանի. Նախ՝ փորձել եկին եւ ոչ յուսանել: Երկրորդ՝ նշանն Յունանու զյարութիւնն հաստատէ եւ սաղուկեցիքն չհաւատային յարութեան նաեւ ոչ հրեշտակաց եւ ոչ անմարմինն իրաց՝ ի Սաղովկ քահանայէ խմորեալ:

Ղուկաս ԺԲ. 54-56

ԻԳՆԱՏԻՈՍ ՍԵԻԼԵՌՆՅԻ

(Գլուխ ԺԲ.)

Ասէ, յորժամ ամպ ծագէ յարեւմտից՝ ասէք թա՛ւ՝ անձրեւ գայ, եւ լինի այնպէս. եւ թէ հարաւ հնչէ, ասէք թա՛ւ՝ խորշակ լինի. եւ լինի այնպէս: Կեղծաւորք, զերեսս երկնի եւ երկրի փորձէք եւ ժամանակս զիա՛րդ ոչ փորձէք» (հմմտ. Ղուկ. ԺԲ. 54-56):

Արդ, զայս աւրինակս եղ առաջի՛ յայտ արարեալ, թէ ժամանակք, որ ի մարգարէիցն ասացան վասն Նորա գալստեան՝ լցեալ են, եւ զոր ինչ պարտ էր Նմա գործել եւ զոր գուշակեցին մարգարէքն՝ ամենայնն եղեւ: Եւ զիա՛րդ ոչ ճանաչէք ժամանակս զայս, եթէ՛ մերձ է փրկութիւն ձեր, զի ահաւասիկ յարեւմտից կուսէ եւ մերձ ձեզ կացեալ ծովուն յորժամ ամպ ծագէ ի նմա, գիտէք եթէ՛ անձրեւ գայ, եւ՝ հարաւային կողմ ջերմին է վասն արեգականն միշտ ընդ նա անցանելոյ, եւ զի խոնարհեն վայրքն՝ անտի ուսայք, եթէ ի հնչել հարաւային հողմոյն՝ խորշակ առնէ: Եւ զիա՛րդ ոչ նովին խորհրդով հոգեւորացն եւ աստուածայնոցն հասանէք զիտութեան: Արդ, վասն զի ասաց. «ոչ եկի արկանել խաղաղութիւն, այլ՝ սուր»: Եւ զի մի ոք կարծեսցէ եթէ ի նմանէ է խռովութիւնն, այլ՝ Նա եկն երկնային խաղաղութեամբն՝ ըստ այնմ աւետարանեաց խաղաղութիւն՝ հեռաւորաց եւ մերձաւորաց (հմմտ. Եփես Բ. 20): Իսկ երկրաւոր չարութիւնքս ընդդէմ ամբարձան երկնային խաղաղութեանն՝ պատերազմ առնել, եւ զայս աւրինակաւ եցոյց. ամպոյ զինքն նմանեցուցանէ, եւ՝ զնոսա, որք առաքեցան ի նմանէ յաշխարհ: Զի ամենայն ուրեք ամպոյ նմանեցան այնոքիկ, որ զբանն սերմանեցին յաշխարհս՝ ըստ ասելոյն Եսայեայ. «Պապուէր փաց ամպոց Իմոց, զի մի փեղացեն յայգի Իմ» (Եսայի Ե. 6): Արդ, Յիսուս ամպով մարմնոյն ծագեալ ի մեզ՝ յարեւմտեայքս՝ հոսեաց ի մեզ զանձրեւն կենաց եւ ընդդէմ այս անձրեւոյ, որ բուսուցանէ ի մեզ զգեղեցիկ բոյսս



առաքինութեան, սովորեցաւ չարն շնչել զամենայն փորձութիւն, զի զոր անձրեւն սնոյց՝ խորշակաւն հնձեցէ: Եւ այս ահա յայտնի է, զի իբրեւ սկսաւ Աւետարանին շնորհն ցաւդել ի մարդիկ, ընդդէմ յարոյց սատանայ զչարս ի բռնաւորաց՝ պատերազմել ընդ հաւատոյն ճշմարտութեան եւ աւրինաւք ախտիցն մեղաց, որ յանդամս մեր, պատերազմել ընդ գործս բարեաց (Խմբ. Կոմ Է. 23): Արդ, ոչ եթէ յամպոյ անտի էր վնասն, այլ ի հարաւային հնչեալ խորշակախառն հողմոյն: Նմանապէս՝ եւ ոչ Տէրն մեր արկ սուր յերկիր, այլ որք ի սատանայէ գրգռեցան՝ սուր ի գործ արկանել՝ ընդդէմ բարեպաշտիցն: Իսկ Յիսուս ուսոյց՝ մի կալ հակառակ չարին եւ՝ զոր հարկանէ՝ առաջի ունել գերեսս, եւ որ մերկացուցանէ՝ յաւժարութեամբ մերկանալ: Եւ առաքեալ նորուն ուսուցանէ՝ հատուցանել ամենեցուն զհարկն (Կոմ. ԺԳ. 7), եւ՝ «Ծառայ ի Տէրն չէ պարս կոռիլ» (Բ. Տիմ. Բ. 24): «Եթէ որ կամիցի հակառակաւ լինիլ մեք այսպիսի սովորութիւն ոչ ունիմք եւ ոչ եկեղեցիքն Աստուծոյ» (Ա. Կորնթ. ԺԱ. 16): Արդ, թէպէտ եւ զանձն պարտ առնէ յասելն. ոչ եկի արկանել խաղաղութիւն, այլ սուր, սակայն այսու ամենայնիւ եւ աւրինակաւ, զոր եղ առաջի՝ եցոյց թէ անպարտ է, զի ոչ թէ ամպոյն եւ անձրեւոյն էր վնասն, այլ՝ հարաւային խորշակին: Եւ մի ոք ընդդէմ զիցէ բանիս, եթէ ի բարեաց մասին առեալ է ի գիրս հողմ հարաւոյ, որպէս այն զի ասէ. «Արի հիսիս եւ եկ հարաւ, շնչեա ի պարսպս իմ եւ բուրեցիս խունկս իմ» (Երգ Դ. 16): Արդ, զայս գիտասցեն, զի երեսք են աւրինակին եւ որպէս զուգին առաջի կացեալ զաւրութիւն բանին, որպէս ի խմորէ փարիսեցւոցն, յորմէ պարտէ պահել զանձինս: Խմորոյ է նման եւ արքայութիւնն, յոր պարտ է խառնել զանձինս, եւ ահա ուսաք, եթէ՝ «Զհոսանուր եւ զլոյժ բնութիւն ջուրց, բարոք պնդեաց» (Ելից ԺԴ. 22), եւ՝ «Զկարծր եւ զվիմեղէն բնութիւն բարոք հոսեաց» (Եսայի Զ. 20), զի՞նչ եւ ինքն՝ արեգակն երեւեալ ի բարձանց մեղ, ըստ Զաքարիայ՝ հաւրն Յովաննու: «Եւ արեգակն փապով փորձութեանցն, չորացոյց գտերմանս, որ ի վերայ վիմացն անկան»: Արդ, յայսպէս փոփոխին առակք, վասն զի անդ ընդդէմ հիւսիսային խստութեանն պիտանացու է հարաւային ջերմութիւնն լուծանել զսառնն, եւ աստ՝ ընդդէմ անձրեւաց, որ ծաղկեալ պսակէ զերկիր՝ ապականագործէ հարաւային խորշակն: Եւ զայս աւրինակ բանից ասացեալ՝ յաւելու:

**ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ**  
(Գլուխ ԺԲ.)

**Յորժամ րեսանիցէք ամպ ծագեալ յարեւմտից, ասէ՛ք, թէ անձրեւ գայ: Եւ լինի այնպէս** (րեն Դուկ. ԺԲ. 54):

Աւրինակաւ յայտ առնէ, թէ ժամանակք, որ ի մարգարէիցն ասացան վասն Քրիստոսի գալստեանն, լցան, եւ զոր ինչ պարտ էր նմա գործել՝ գուշակեցին: Զիա՞րդ ո՛չ ճանաչէք, եթէ մերձ է փրկութիւն ձեր: Զի յարեւմտից կուսէ, յորժամ մերձ առ ծովն ամպ ծագէ, գիտէք, եթէ անձրեւ գայ: Զի ամպոյն նմանեցան, որք զԲանն Աստուծոյ յաշխարհս սերմանեցին: Եւ հրաման տայց ամպոց իմոց, զի մի՛ տեղացեն յայգի իմ: Եւ Յիսուս, ամպով ծածկեալ մարմնովն, ծագեաց ի մեզ յարեւմտեայս՝ հոսելով զանձրեւ կենաց: Եւ ցաւդն, որ ի քէն ցաւդէ, բժշկութիւն է նոցա, որ բուսոյց ի մեզ զգեղեցիկ առաքինութիւնն:

**Յորժամ հարաւ շնչէ, ասէ՛ք, եթէ խորշակ լինի: Եւ լինի այնպէս** (րեն Դուկ. ԺԲ. 55):

Հարաւային կողմն ջերմային է վասն արեգականն միշտ ընդ այն անցանելոյն, եւ խոնարհ են վայրքն: Անդի ուսաք, եթէ շնչել հարաւոյն խորշակ առնէ: Զիա՞րդ ո՛չ նովին խորհրդովք աստուածայնոցն եւ հոգեւորացն հասանէք գիտութեան: Ո՛չ Տէր մեր արկ սուր յերկիր, այլ որք ի սատանայէ գրգռեցան: Սուր ի գործ արկանել ընդդէմ բարեպաշտիցն՝ ո՛չ ամպոյն էր վնասն, այլ հարաւային խորշակին: Եւ արեգակն տապով փորձութեամբ չորացոյց գտերմն, որ ի վերայ վիմացն անկաւ (րեն Մարթ. ԺԳ. 6, Մարկ. Դ. 6): Այսպէս փոխին առակք, որ ինչ ի նմա իրք: Ի դէպ գոյ տեղոյն:

**Կեղծաւորք զերեսս երկնի եւ երկրի փորձէք, իսկ զժամանակս զիա՞րդ ո՛չ փորձէք** (րեն Դուկ. ԺԲ. 56):

Ո՛վ որ աւրինակ յերկինս ա՛յլ ժամանակ է ձմերանոյ եւ ա՛յլ ջերմոյ: Եւ ո՛չ ոք տեսանիցէ զձմերանոյ նշանս եւ ջերմոյ ակն ունիցի: Նոյնպէս եւ առ իս պարտիք իմանալ. ա՛յլ ժամանակ է այժմու գալստեանս եւ ա՛յլ հանդերձելոյն: Այժմ երկրաւոր նշանացս պէտք են, եւ զերկնիցն յայլուժ ժամանակի պահեալ եմ: Այժմ իբրեւ զբժիշկ եկի եւ ապա՝ իբրեւ զղատաւոր: Այժմ՝ ի խնդիր մոլո-



րելոցն, եւ ապա՝ զվրէժն խնդրեմ: Այժմ լուել[ե]այն եկի եւ ապա՝ բազում աշխարհատեսութեամբ: Ջի զերկինս գալարիցեմ եւ զարեգակն կորուսանեմ եւ լուսնի ո՛չ տամ ծագել: Ապա եւ զաւրութիւնք երկնից շարժեսցին եւ փայլակն երեւեսցի ի գալստեանն: Իսկ այժմ ո՛չ է այնր նշանաց ժամանակ, քանզի եկի մեռանել եւ անհնարին չարչարանս չարչարել:

### ՄԱՏԹԷՈՍ ԶՈՒՂԱՅԵՅԻ

(Հարց. Ջի՞նչ է, որ ասէ. «Յորժամ փեսանիցէք ամբ ծագեալ յարեւմտից ասեք անձրեւ գայ եւ լինի այնպէս» (Կրն՝ Դուկ. ԺԲ. 54):

Պատասխանի. Ամպ զի՞նքն կոչէ եւ զառաքեալսն եւ այս վասն բազում պատճառի:

Նախ՝ զի ամպն ի յարեւմտից բնաւորեցաւ լինել, այսպէս եւ Տէրն յարեւմտից ծագեալ լուսաւորեաց զտիեզերս, ըստ այնմ. «Ճանապարհ արարէք այնմ, որ նստի ընդ արեւմուտս եւ Տէր է [անուն նորա]» (Կրն՝ Սաղմ. ԿԷ. 5): Եւ կամ դարձեալ ամպ ծագեալ Տէր մեր ի մեզ յարեւմուտս, զի արեւմուտ եղաք ի ձեռն մեղացն: Երկրորդ՝ զի ամպն հովանի առնէ ի վերայ ամենայն երկրի, այսպէս Տէր մեր պարածածկեալ զմեզ ամենակարող աստուածութեամբն իւրով, ըստ որում գոչէ մարգարէն. «Ամենակալ Աստուած» (Երեմիա ԼԲ. 15), եւ թե. «Նովանի գլխոյ իմոյ յաւ[ուր պատերազմի]» (Կրն՝ Սաղմ. ԸԼԹ. 8): Երրորդ՝ զի ամպ ի վերայ հողմոց շրջի, եւ Տէր մեր ի վերայ հողմոց ընթացաւ արտեւան լերինն, ըստ այնմ. «Ո՞ դնէ յամպս զգնացս իւր, եւ շրջի նա ի վերայ թեւոց հողմոց]» (Կրն՝ Սաղմ. ԸԳ. 3): Չորրորդ՝ երբեմն ցածանայ ամպն եւ երբեմն բարձրանայ, նմանապէս եւ Տէրն մեր երբեմն զբարձրագոյն զգործսն առնէր, այսինքն՝ զաստուածայինս եւ երբեմն՝ խոնարհեալ զմեր նուաստականսն զքաղց եւ զժարաւ, զերկիւղ եւ զտրտմութիւն եւ զայն, որպէս պատմի յԱւետարանին: Հինգերորդ՝ զի զտապ արեգական զովացուցանէ բարեխառնելով: Այսպէս Տէր մեր՝ զտապ չարին յոգոց մարդկան եհան աստուածային զօրութեամբն եւ զովացուց մկրտութեամբ աւագանին, ըստ այնմ. «Եթե՞ն ոք ծարաի իցէ, եկեսցէ առ իս՝ եւ արբցէ» (Յովհ. Է. 37): Վեցերորդ՝ զի ամպ կազմի յաւոյն եւ ի գոլորշոյ երկրի եւ Տէր մեր աստուածային բնութիւնենէն եւ ի մարդկային մի՛ Քրիստոս եղեալ, ըստ որում. «Բանն մարմին եղեւ, եւ բնակեաց [ի մեզ]» (Յովհ. Ա. 14): Եւ յերրորդ՝

զի յորժամ քակի գոլորշոյն, ոչ եւս է ամպ, այլ պարզ օդ, այսպէս, ըստ ոմանց, որք քակեն զբանն ի մարմնոյ, ոչ եւս մնա Քրիստոս, այլ՝ մերկ բան, կամ սոսկ մարդ: Ութերորդ՝ զի յանկասկած ժամու երեւի ամպն, եւ բանն յանկասկած ժամանակի եկն ի բնութիւնս առնուլ մարմին, այլեւ յանկարծակի երեւեցաւ մարմնովն աշակերտացն յետ յարութեանն, որք զարհուրեալ համարէին ոգի ինչ տեսանել: Իններորդ՝ զի երբեմն քաղցր խաղաղ անձրեւ է, եւ երբեմն փայլատակմամբ եւ որոտմամբ եւ այլն, նմանապէս Տէր քաղցրութեամբ ի յերկրի շրջեցաւ եւ հեղաբար, ըստ որում ասէր. «Նեզ եմ եւ խոնարհ սրբի» (Մաւրթ. ԺԱ. 29): Իսկ ի միւս անգամ գալստեանն ո՛չ, այսպէս այլ ասէ. «Ջի, որպէս փայլակն, որ ելանէ յարեւելից՝ [եւ երեւի մինչեւ յարեւմուտս, այնպէս եղիցի գալուստն որդոյ մարդոյ]» (Մաւրթ. ԻԴ. 27), թե. «Գալարին երկիր, որպէս մագաղաթ, եւ լերինք հալեսցին առաջի Տաւոն» (հմմտ. Եսայի ԼԴ. 4): Տասներորդ՝ յանձրեւոյ ամբոյն բուսանին ամենայն սերմանիք, այսպէս եւ զբանն // կենաց Տեառն մերոյ ընկալեալ <ի> յոգիս յառաջ բերել պարտիմք զպտուղ առաքինութեան, որպէս սերմանիք ի յանձրեւոյն զբազմապատիկ արդիւնս տալով պտուղ ձ. (Հարիւր)աւոր, նմանապէս եւ առաքեալքն կոչին ամպ, վասն որոյ եւ նոցա սերմանելոյն յոգիս բանաւորաց:

Արդ, դեմ այսմ զեղեցկաբար անձրեւացս սովորեցաւ չարն շնչել զամենայն փորձութիւնս նման խորշակի, զի զոր անձրեւն բուսոյց՝ խորշակաւն հնձեսցէ: Եւ այս ահա յայտնի է, զի իբրեւ սկսաւ Աւետարանին շնորհն ցօղել ի մարդիկ ընդդէմ յարոյց սատանայ զչարսն ի բռնաւորաց պատերազմել ընդ հաւատոյն թշնամութեամբ եւ օրինօք ախտից մեղացն, որ յանգամս մեր ընդ գործս բարեաց: Արդ՝ ոչ եթե՞ յամբոյ անտի է վնասն, այլ ի հարաւային շնչմանէն խորշակախառը հողմոյն, նմանապէս եւ Տէր մեր, ոչ արկս ուր ի յերկիր, այլ որք ի սատանայէ զոգոնեցան սուր ի գործ արկանել ընդդէմ բարեպաշտիցն:





## 23. ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆ ՅԻՍՈՒՍԻ

Մաթթեոս ԺԷ. 1-13

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

(Գլուխ Ժ.)

Եւ յետ վեց աւուր առնու Յիսուս զՊետրոս եւ զՅակովբոս եւ զՅովիաննէս՝ զեղբայր նորայ, եւ հանէ զնոսայ ի լեառն մի բարձր առանձինն եւ այլակերպեցաւ առաջի նոցա (տեսն Մաթթ. ԺԷ. 1-2):

Յետ ասելոյ զբանդ, եթէ ամէն ամէն ասեմ ձեզ, են ոմանք որ աստ կան, որք ոչ ճաշակեն զմահ, վեց աւր անցանէ, եւ վեց աւուրն ելանէ ի լեառն այլակերպի առաջի նոցայ. պատմութիւնդ ճշմարիտ մնալով վերաբերի այսպէս առական. ի վեց աւուրն եղեւ աշխարհս, եւ վասն զի Պետրոս եւ Յակովբոս եւ Յովհաննէս արհամարհէին զերեւելիսս, անցեալ զաշխարհաւս ընդ Քրիստոսի ելանեն ի լեառն, եւ հրաշափառագոյն եւ պատուականագոյն տեսանէին զԲանն:

Այլակերպեցաւ առաջի նոցա (Մաթթ. ԺԷ. 2):

Յոչս ունելոյ տեսիլ եւ գեղեցկութիւն, յաճաւոր ի փառաւոր տեսիլն եւ սոսկալի:

Եւ փայլեցին երեսք նորա իբրեւ զարեգակն (Մաթթ. ԺԷ. 2):

Երեսքն փայլեն որպէս զարեգակն արդարութեան, այրել զգործս խաւարի եւ զիշերւոյ եւ լուսաւորել զգործս աստուածայինս:

Վանդերձն նորա [եղեն] սպիտակ իբրեւ զլոյս (տեսն Մաթթ. ԺԷ. 2):

«Վանդերձ»ն նշանակէ զաւետարանական եւ զառաքելական գիրսն աստուածաբանաւորին (!) եւ մեկնողին զմիտս բառից նոցայ:

Երեւելցան նոցայ Մովսէս եւ Եղիայ (Մաթթ. ԺԷ. 3)

Մովսէս՝ աւրէնքն, Եղիայ՝ մարգարէքն, տես գուցէ յաղագս ասելոյն զորդիսն Զերեզեայ, եթէ «որոց պարասպետալն ի հարւ իմմէ»

(Մաթթ. Ի. 23). վասն այսորիկ երեւեցան Մովսէս եւ Եղիաս. Մովսէս՝ յաջմէ, եւ Եղիաս՝ յաճեկէ:

Պարասպետանի եր Պետրոս եւ ասաց. բարիոք է մեզ աստ լինել. արասցուք երիս փաղաւարս (Մաթթ. ԺԷ. 4):

Անգոսնեն ոմանք զՊետրոս, որ ասաց. բարիոք է մեզ աստ լինել, զի եթէ բարիոք էր այդր լինել, բայց եթէ առնէր զբարին Յիսուս. եւ դարձեալ վասն է՞ր ասաց «երիս փաղաւարս». զայդ ասելով մեկուսացուցանել կարծի զնոսա ի միմեանց. մի եթէ ո՞չ էր մի տաղաւարն բաւական երեցուն. զայս ելոյծ Մարկոս, եթէ ի զարհուրեալն (!) ոչ գիտէր զինչ խաւսէր:

Եւ մինչդեռ խաւսէր, ահա ամպ լուսաւոր հովանի եղեւ նոցա (Մաթթ. ԺԷ. 5):

Փոխանակ երից տաղաւարացն ամպ լուսաւոր հովանի եղեւ նոցա, զի հանգուցէ որ հայէին ի նայ զաւետարանն, զաւրէնս եւ զմարգարէս:

Եւ ահա ձայն յամպոյն (հմմտ. Մաթթ. ԺԷ. 5):

Ձայն եղեւ յամպոյն առ Մովսէս եւ Եղիաս, եւ մանաւանդ առ աշակերտսն, զի հաստատապէս գիտացեն թէ նա է իսկապէս Որդին Աստուծոյ. եւ էր ամպն որպէս կարծեմ հոգեւոր. եւ բանն Տեառն եղեւ նովաւ որպէս առ մարգարէսն, եւ որպէս լսեմք յԵսայիայ, եթէ «Որդիս ծնայ եւ բարձրացուցի» (Եսայի Ա. 2):

Վամբարձեալ զաչս իւրեանց, տեսին միայն զՅիսուս (տեսն Մաթթ. ԺԷ. 8):

Այսինքն՝ աւետարանս եւ զաւրէնս եւ զմարգարէս միաբանեալ եւ մի եղեալ:

Եւ յիջանելն նոցա ի լեռնէն, պարուիրեաց նոցա Յիսուս՝ «Մի՛ ասիցէք ումէք զտեսիլդ, մինչեւ որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ» (տեսն Մաթթ. ԺԷ. 9):

Որպէս յառաջինսն ոչ կամի զի գիտացէ ամբոխն զհրաշափառագոյնն, զի մի վնասեալ զայթազղե[ս]ցին ի ժամանակի չարչարանացն. քանզի այդ ամենայն յետ յարութեանն գիտացեալ աւգտակար են:



ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՒ ԵՓՐԵՄ

Եւ յեփ վեց աւուր առնու զՊետրոս եւ զՅակոբոս եւ զՅովհաննէս (Մարթ. ԺԷ. 1):

Միւս աւետարանիչն ասէ «յեփ ութ աւուր» (հմմտ. Ղուկ. Թ. 28): Ոչ իբրեւ հակառակ ինչ ամաց, այլ կարի իսկ քաջ միաբան, զի մին եւ զայն աւր, յորում զբանն ասաց եւ որում եհան ի լեառն թւէ, իսկ միւսն զվեց աւրն, որ ի միջոցին էր միայն ասաց: Եւ դու այնմ եւէթ միտ դիր, զի՞ արդ Մատթէոս ճարտարամտէ առ խոնարհագոյնսն չթագուցանելով զայնոսիկ որքան զնայն նախամեծարք եղեն, զսոյն եւ զՅովհաննու յայտ արարեալ ընդ բազում տեղիս, առաւելագոյն զՊետրոս յարգէ եւ գովէ եւ բազում ճշմարտութեամբ զարդարն գրէ, զի այնպէս իսկ ի նախանձու է եւ յանձնգովութենէ եւ ի սնապարծիկս փառաց ազատ եւ անարատ էր գունդ սրբոցն: Արդ առեալ զգլխաւորսն «եհան ի լեառն մի բարձր եւ այլ եւ այլակերպս եղև առաջի լոցա» (հմմտ. Մարթ ԺԷ. 2):

Ընդէր՞ զնոսա միայն առնուցու: Զի նոքա քան զայլսն առաւելագոյնք էին: Պետրոս ի սիրելոյն զնայ յայտ առնէր զառաւելութիւնն: Եւ Յովհաննէս այնու, զի ի նմանէ կարի իսկ սիրիւր: Եւ Յակովբոսի պատասխանւոյն զոր ետ հանդերձ եղբարբն, թէ կարող եմք ըմպել զբաժակն եւ ոչ միայն ի պատասխան[ւ]ոյն, այլ եւ այլովք եւս գործովք, որովք կատարեցաւ իսկ որպէս յառաջագոյն կալաւ յանձին: Զի այնպէս սաստիկ եւ ծանր թուէր հրէիցն, մինչ զի երգմամբ իսկ հաւանեցուցանէին զՀերո[վ]դէս՝ շնորհել զնա նոցա սպանանել վաղվաղակի, հանիցէ զնոսա ի լեառնն, զի մի մարդ կաւրէն ինչ ախտ ախտանայցեն, այլեւս աշակերտքն: Վասն այնորիկ եւ ոչ յանուանէ ինչ յայտ առնէ, զայնոսիկ, որ ելանելոց էին ընդ նմա ի լեառն: Քանզի կարի իսկ ցանկային եւ այլքն երթալ զհետ, տեսանել զաւրինակ այնպիսի փառաւորութեան, որ երեւելոց էին նմայ: Եւ դժկամակ եւս լինէին իբրեւ զքամահրեալք, զի թէպէտ եւ մարմնաւորական իմն թուէր, այլ կարի ցանկալի իրք էին: Եւ հիմ իսկ յառաջագոյն ասիցէ, զի տեղեկագոյնք եւ կիրթք տեսեանն լինիցին, այնու զի կանուխն ասիցէ եւ թուով եւս աւուրցն յաճախագոյն կարաւտանայցեն եւ արթուն լինիցեն:

[Հարց.] Եւ էրու՞մ զՄովսէս եւ զԵղիայ ածիցէ ի մէջ:

[Պատասխանի.] Բազում ինչ պատճառք կան ի միջի ասելոյ: Նախ այն իսկ, զի ի ժողովրդոցն ոմանք ասէին զՔրիստո՞ս է, թէ՞ Եղիայ է, ոմանք, թէ՞ Երեմիայ, եւ ոմանք, թէ՞ մի ոք ի մարգարէիցն: Զգլխաւորսն հանէ լեառնն, զի գէթ անտ տեսանիցեն որչափի է ընդ ծառայան եւ ընդ տէրն: Եւ թէ յիրաւի գովեցաւ Պետրոս, զի խոստովանեցաւ որդի Աստուծոյ: Յետ այնր եւ այլ պատճառք է ասել:

Քանզի բամբասէին զնա, թէ զաւրինաւք ինչ զանցանիցէ եւ հա[յ]հոյիչս կոչէին եւ կարծէին, թէ փառս հաւր, որ չէին նմայ անկ յանձն խորիցէ եւ շուք ինքեան աւելի զնիցէ: Եւ ասէին, թէ չէ դա Աստուած, զի ի շաքաթս ո՛չ պահէ եւ դարձեալ թէ վասն բարեաց գործոց մեք զքեզ կարկո՞ծ ոչ առնեմք, այլ վասն հայհոյութեան, զի մարդ ես եւ զանձն քո Աստուած առնես, զի ցուցցէ թէ առ նախանձու էին երկոսեան բանբասանքն եւ ինքն ազատէ յերկոցուց, զի ոչ զաւրինաւք ինչ էին իրքն անցելոց: Իրքն որ գործէին եւ ո՛չ փառս ինչ որ չիցեն նմա անգ խորելոյ: Այնու՞ զի հաւասար առնէ զանձն հօր զնոսա երկուք կարեւորաւք պայծառագոյնք, որքան զայլսն էին, ածէ ի մէջ, զի զաւրէնսն Մովսէս ետ եւ մարթէր իմանալ հրէին, թէ չառնու յանձն Մովսէս զաւրինացն արհամարհանս, որպէս ինքեանք կարծէին եւ ոչ զայր մի զաւրինագանց եւ զհակառակ հարցն կրաւնից, որ յԱստուծոյ տուաւ նոցա, եկեալ այնպէս ողորքէր, եթէ ոչ ստոյգ գիտէր, եթէ արդար եւ Աստուծոյ որդի էր նայ: Եւ Եղիայ իսկ որ այնչափ նախանձ ունէր վասն նոցա փառացն, եթէ հակառակ ինչ էր Աստուծոյ, եւ զիւր անձն Աստուած կոչէր եւ հաւասար հաւր համարէր զինքն, եթէ չէր ինչ նմայ այն անկ, ոչ եկեալ կայր առ նմա այնպիսին նախանձախնդիրն եւ հնազանդ լինել, եթէ ոչ եւ նա ստոյգ գիտէր, թէ արդարեւ Աստուծոյ որդի է: Եւ հանդերձ սոքաւք որ ասացանս եւ միւս եւս պատճառ է ասել, զի ուսուցիս եթէ մահու եւ կենաց Տէր է, զվերինս եւ զներքինս առ հասարակ ունի ընդ իշխանութեամբ, վասն այնորիկ զմին վաղջանեալ, եւ զմիւսն չեւ եւս այնպիսի չարչարեալ ածէ ի մէջ: Եւ զհինգերորդ պատճառսն եւս աւետարանիչն իսկ յայտնէ, զխաչին փառատրութիւնն, զի մխիթարեսցէ զՊետրոս եւ զայլսն, որք ի չարչարանացն զանդետ էին եւ զարթուցէ զմիտս նոցա: Եւ եկեալ Մովսիսեանցն չկային լուռ: Այլ խաւսէին, ասէ, վասն փառացն, որ կատարելոց էին յերուսաղէմ: Այսինքն՝ զչարչարանսն եւ զխաչն,



զոր միշտ փառս կոչեն, եւ ոչ այնու միայն կրթէր զնոսա, այլ առաքինութիւն ինչ ի նոցանէ իբրեւ յարանց պահանէր, որպէս Մովսէս եւ Եղիայ իւրեանց աստիսն ցուցին, քանզի ասաց թէ, որ կամի գալ զկնի իմ, առցէ խաչ իւր եւ եկեսցէ զհետ իմ, զնոսա, որ բիւրապատիկ մեռան, վասն Հաճոյիցն Աստուծոյ, որոց եւ ժողովուրդքն հաւատացան անհալ ի մէջս, քանզի նոքայ իւրաքանչիւր ոք եւ կորուսին զանձինս եւ գտին եւ առաջի բռնաւոր իշխանացն համարձակեցան մին առ եգիպտացիսն եւ միւսն առ աքար, եւ ի վերա ապախտաւոր եւ անհնազանդ մարդկան եւ յայնցանէ, որ նովաւ ապրեալք իսկ էին յայնպիսի վշտաց, որ կարի իսկ մաւտ ի վաղջան նոցա էին: Եւ երկոքին ի կռապաշտութենէ կամէին ապրեցուցանել զժողովրդեանն եւ իւրաքանչիւր տգետք երկոքին, զի մին ծանրալեզու եւ նրբաձայն էր, միւսն՝ շինականագոյն, քան զբազումս: Եւ ինչս յանձն հուպ չառնելոյ երկոցունց փոյթ կարի յանձին կայր, զի Մովսէս առանց ընչից էր եւ Եղիայ ինչ աւելի քան զմաշկեակն ո՛չ ունէր: Եւ այն զի ի հնումն եւս էին եւ շնորհս այնպիսի ինչ ոչ ունէին նշանաց, զի թէպէտ եւ զծովն եհերձ Մովսէս, եւ Պետրոս ի վերա խոնաւական մկանցն գնայր, եւ զլերինս փոփոխել բաւական էր, եւ զախտս մարմնոց բժշկէր, զազգի ազգիս զգեւս հանէր, զգազանամիտս նաեւ ստուեր եւս մարմնոյն մեծամեծ եւս նշանագործութիւնս ցուցանէր եւ զտիեզերս ամենայն ի կրաւնից ի կրաւնս փոխէր: Թէպէտ Եղիայ մեռեալս յարոյց, այլ սոքա բիւրս բիւրուց եւ այն մինչ է եւ արժանի լեալ էին Սրբոյ Հոգւոյն: (2ա) Նայեւ վասն այնորիկ ամ զնոսա ի մէջ, զի եւ զաւրավարութեան նոցա զսոսա կամէր առնել նախանձաւորս եւ զժուժկալութեան եւ զայս անտր չծնանելոյ: Եւ լինել հեզս իբրեւ զՄովսէս, եւ նախանձայոյս իբրեւ զԵղիայ եւ սաստիկս եւ խնամակալս: Զի մին գերեամ սոված ի վերայ ազգին հրէից եւ միւսն եւս ասէր, «Եթէ թողոս դոցա զմեզս, թող ապայ, թէ ո՛չ եւ զիս եւս ջնջեաց ի դպրութենէդ բումմէ, յորում գրեցեր» (հմմտ. Ելից ԼԲ. 32): Զայս ամենայն յիշեցուցանէր նոցա ցուցանելովն զտեսիլն. նաեւ փառաւք իսկ է ամ երեւեցոյց զնոսա, զի ցուցցէ թէ ոչ միշտ ի վիշտս կայցեն, այլ անցանեն պատերազմունքն:

Յորժամ ասացին աշակերտքն՝ ասեմք, ասեն, զի իջցէ հուր յերկնից: Եւ զայն յիշեցին զոր Եղիային էր արարեալ, ասէ, ոչ գիտէք որո՞ հոգ[ւ]ոյ էք, զի յանոխակալութիւն կրթէր զնոսա, վասն

այլագունակ շնորհացն կերպարանաց: Եւ մի ոք զմէնջ կարծիցէ, թէ պարսաւիցեմք ինչ զԵղիայ իբրեւ զթերակատար, այլ զայն ինչ ասեմք, քանզի կարի կատարեալ էր, այլ յիւրում ժամանակսն, մինչդեռ տղայն էին միտք մարդիկ եւ այնպիսի դաստիարակութեան պէտք: Նայեւ Մովսէս կատարեալ (2բ) էր ի յիւրումն, բայց սոքա քան զնոսա, առ աւելի պահանջին: Եթէ ոչ, ասէ, լինիցի աւելի արդարութիւնն ձեր, քան զգալացն եւ զփարիսացուցն. ո՛չ մտանէք յարքայութիւնն երկնից: Զի ոչ յեգիպտոս միայն մտին, այլ եւ յամենայն տիեզերս միեցան, որ եւ չար յախտի կային, քան զԵգիպտոս: Եւ ոչ ընդ փարաւոնի վիճէին, այլ ընդ սատանայի ոգորէին, ուստի եւ բռնութեան ստահակութեան եմուտ յաշխարհս: Եւ մարտ ընդ այն էր, զի զնա կապիցեն եւ զկազմած նորա զամենայն աւար հարկանիցեն: Եւ զայսպիսի գործ ի ձեռն առեալ ո՛չ զծով պատանէին, այլ զխորս ամբարշտութեան, որ սաստիկ յածէր ծփանաւք, գաւազանաւն, որ բխեաց յեսսէ ցածուցանէին (հմմտ. Եսայի ԺԱ. 1): Տե՛ս որպիսի ահիւ ահաբեկէ, զարեան մահուամբ, աղքատութեամբ, անարգութեամբ, բիւրապատիկ չարչարանաւք զի եւս առաւել սոքա յայսմ ամենայնէ երկնչէին, քանզի ի ծովէն յայնժամ հրեայքն, բայց սակայն զամենայն առ ոչինչ հաւանեցոյց համարեալ: Եւ զի այս ամենայն կրթէլոց էր զնոսա, յայնսակս էած, եցոյց նոցա զնոսա, որք ի հնումն պայծառագոյնք էին: Արդ զի՞նչ ասիցէ Պետրոս ջերմն. բարւոք է ասէ մեզ աստ լինել: Քանզի լուաւ, թէ պարտ էր նմայ երթալ եւ չարչարել, դեռեւս կասկածն ի մտի կայր: Զի հոգայր եւ երկնչէր վասն նորա: Եւ յետ սաստելոյն, չիշխէր մատչել եւ զնոյն բանս ասել, թէ քաւ լիցի քեզ, բայց յերկեղէն զնոյն ակնարկէ այլովք բանիւք: Քանզի ետես զլեառն կարի բաց է, եւ զանապատն ոչ մաւտիչեն, բազում իմն զգուշութիւն ի տեղոջէն համարէր, եւ ո՛չ միայն ի տեղոջէն, այլ զի բան չերթայցեն յերուսաղէմ կամէր զիանդ, եւ եթ լինիցին հանապազ:

ԵՓ Զի ետես նա, զի լեառն զի հանգուցեալ էր՝ ի հակառակութենէ անտի դպրացն, եւ հաճոյ եղեւ նմայ եւ բուրեաց հոտ ի հոտոտելիս նորա, հոտ անուշութեան արքայութեանն եւ քաղցրացաւ նմայ: Եւ ետես նայ զփառս նորա, փոխանակ անարգանաց նորայ եւ ուրախ եղեւ ընդ բնակել իւրոց՝ ընդ Մովսէսի եւ ընդ Եղիայի: Եւ ցնծացան, զի հեռացան ի Կայիփայ եւ ի Հերովդեէ: Եւ իբրեւ



արգահատէր նմայ իբրեւ զառաջինն, քանզի եւ զտաղաւարաց իսկ յիշէ, զի թէ այս լինիցի ասէ, ապայ ոչ երթամք եւ ոչ սմա մեռանել հասնիցէ, քանզի անդ ասաց, թէ նենգելոց են զնայ դպիրքն եւ յայտնի ինչ չիշխէր ասել, բաց այնպէս իմն կամէր հայթայթել:

**Բարոք Է,- ասէ, -մեզ ասար լինել (Մարթ. ԺԷ. 4):**

Ձի Մովսէս առ մեզ մաւտ է եւ Եղիայս առ մեզ հուպ: Եղիայ, որ ի լեբրինն նստէր եւ հուր իջոյց յերկնից, Եւ Մովսէս, որ յամպն հմուտ եւ ընդ Աստուծոյ խաւսէր: Եւ չիմանա ոք, թէ աստ իցէմք: Տե՛ս զՋերմն սիրելին Քրիստոսի, քանզի ո՛չ թէ այն ինչ խնդրիցի, թէ չէին ինչ յարդարեալ կերպարանք ազանացն, այլ թէ զիարդ ջերմ էր: Կամ զիա՞րդ խորովէր վասն Քրիստոսի, զի ոչ վասն անձին ինչ զանգիտել զայն ասէր, յորժամ զմահն, որով մեռանելոց էր, նմա գուշակեաց: Լու՛ր՝ զինչ, ասէր, զանձն եւս եղից ի վերա քո, եւ թէ ընդ քեզ իսկ լինիցի մեռանել՝ մեռայց: Եւ սակայն զքեզ ոչ ուրացայց, դու տե՛ս զիա՞րդ ի մէջ ճգանցն զանձն ի մահ մատնէր. այնչափ ժողովրդոց շուրջ զնոքաւք փակեալ, ոչ միայն չի փախէր, այլ եւ սուսեր եւս ձգէր եւ զուսկն ծառային քահանայապետին կտրէր: Ձի այնպէս ոչ անձինն ինչ սպաս ունէր, այլ ի վերայ վարդապետին դողայր, եւ քանզի յայտնի է իսկ վճիռ ետ, խիթացեալ ընդ միտս կասկածէր, թէ գուցէ դարձեալ պատուհասակո՞ծ լինիցի զպատճառիկն ակնարկէ:

**Թէ կամիս, ասէ, արասցուք երիս տաղաւարս, մի քեզ, մի Մովսիսի եւ մի Եղիայի (Մարթ. ԺԷ. 4):**

Ձի՞նչ խաւսիս Պետրէ. ոչ յառաջ քան զսակաւ ինչ, զատէր մեկնեցեր զզայ ի ծառայիցն: Արդ, զիա՞րդ միւսանգամ ընդ ծառայս համարիս տեսեր, զիա՞րդ անկատարք էին յառաջ, քան զխաչն: Ձի թէպէտ եւ յայնեացն նմայ Հայր, այլ ոչ միշտ առ իւր առնէր զյայտնութիւնն: Ձի յահէն տազնապէր, ոչ յայնմանէ, զոր ասացին, այլ առաւել եւս ի տեսլէն, զոր ետես: Իսկ այլ աւետարանիչքն ասեն, թէ ոչ առողջ մտաւք ինչ խաւսեցաւ, զոր խաւսեցաւն, քանզի յահէն թմրեալ էր: Մարկոս ասէ. թէ չգիտէր զինչ խաւսեցաւն, քանզի զարհուրեցան (հմմտ. Մարկ. Թ. 6): Եւ Ղուկաս յետ ասելոյն, թէ արասցուք երիս տաղաւարս (Ղուկ. Թ. 33): Ի նոյն յարէ, թէ չգի-

տէր, զինչ խաւսէր եւ յայտ առնէ, թէ կարի զահի հարեալ էր: Նայել ալքն ասէ ծանրացեալք էին քնով, եւ իբրեւ զարդեան տեսին զփառս նորա:

Քուն զծանրութիւնն, որի ի տեսլէնն եղեւ նոցա, կոչէ, զոր աւրինակ աչք ի բազում լուսոյ այլայլին, նոյնպիսի ինչ եւ նոքայ անդ կրէին: Ձի ոչ եթէ գիշեր էր, այլ տիւ եւ լուսոյն առաւելութիւնն ծանրացուցեալ նուազեցուցանէր զաչս զտկարութիւնն:

Եւ ինքն ո՛չ խաւսէր, եւ ո՛չ Մովսէս, (2) եւ ո՛չ Եղիայ:

Իսկ մեծն քան զամենանիսեան եւ արժանի հաւատարմութեան Հայր բարբառ արձակէր, յամբոյն վկայեալ: Եւ ընդէ՞ր արդեւք յամբոյ: Քանզի այնպիսի միշտ էր եւ ի յԱստուած ըստ այնմ, թէ ամպ եւ մէգ շուրջ զնովաւ եւ այլուր թէ նստի ի վերա թեթեւ ամպոյ: Եւ դարձեալ, թէ որ եղ յամպս զճգնացս իւր, եւ այլ ուր, թէ՛ ամպն անջրպետեաց զնայ յաչացն նոցա եւ այլ ուր, թէ՛ տեսանէի, զի գայր իբրեւ զորդի մարդոյ ի վերա ամբոց, զի հաւատասցեն, թէ յԱստուծոյ գայ բարբառն, վասն այնորիկ անտի գայր եւ ամպն էր լուսաւոր:

**Մինչդեռ, ասէ, նա խաւսէր, ահաւասիկ ամպ մի լուսաւոր, հովանի եղև ի վերա նոցա, ձայն եղև յամպոյն (տես Մարթ. ԺԷ. 5)**

Յորժամ սպառնալիս ինչ բարբառիցի, խաւարին ամպ երեւի որպէս ի լեբրինն սիւնեաց, հմուտ, ասէ, ամպն եւ ի մէգն Մովսէս: Եւ իբրեւ զմրրիկ ասէ, այնպէս պատէր ծուխն եւ մարգարէն, յորժամ վասն Աստուծոյ սպառնալեացն ճառէ, խաւարային ջուրս ասէ, յամպս աւղոց, իսկ անդ քանզի ոչ երկուցանել կամէր, այլ լուսացուցանել ամպ լուսաւոր երեւէր:

Պետրոս, ասէ, արասցուք երիս տաղաւարս եւ նայ զանձեռագործ խորանն եցոյց վասն այնորիկ, անդ ծուխ եւ մրրիկ հնոցի եւ աստ լոյս սաստիկ եւ բարբառ հեշտական: Եւ զի յայտ լիցի թէ ոչ վասն միոյ ուրուք յերիցն եկն բարբառն այն, այլ «Դայ, ասէ, որդի իմ սիրելի», այլ բարբառն: «Դայ է որդի իմ սիրելի»: Եւ թէ սիրելի իցէ, զի այդչափ զայն գիտես Պետրէ, պարտ եւ պատշաճ էր քեզ յանձնէ իսկ վաղուցհետէ եւ զաւրութեանն գիտակ լինել, եւ առ ի յարութիւնն հաստատուն, բայց քանզի չառէր ի միտ, գոնեայ ի հաւր բարբառոյն, քաջալերեաց, զի թէ զաւրաւոր իցէ Աստուած, որպէս եւ զաւրաւոր իսկ է, կարի իսկ յայտ է, թէ եւ որդի նոյնպիսի է, եւ



արդ մի ինչ զանգիտիցես ի չարչարանացն, ապա թէ չեւ եւս ինչ վստահ լինիցիս, գեթ զայն անջիր զմտաւ, զի որդի է եւ սիրելի որդի:

Դա է, ասէ, որդի իմ սիրելի: Թէ սիրելի իցէ, ապայ չէ պարտ զանգիտել, քանզի ոչ ոք զորս սիրիցեն, պարտ բաշխի տացէ եւ արդ մի ինչ խոռովիցիս, զի թեպէտ եւ բիւրապատիկ սիրեսցես, ոչ այնչափ սիրիցես, որչափ ծնաւոյն սիրիցէ ընդ որ հաճեցայ ասէ, ոչ միայն զի ծնաւոյն սիրէ, այլ զի եւ հաւասար նորին է ամենայնիւ եւ՛ համակամ, եւ՛ համամիտ: Եւ այնու երեւի կրկին սէրն, զի եւ՛ որդի էր, եւ՛ սիրելի՛ որդի, եւ՛ ընդ նմայ եւեթ լիով հաճել: Որպէս զի ասիցէ, թէ ի նմայ հանգուցեալ եմ, վասն այնորիկ ամենայնիւ նորին զուգական եւ նորին համեմատ եւ ընդ նմին միաբան: Եւ մի կամք նորա եւ հաւր. եւ նմա մշտնջենաւոր. մի որդի ընդ միում ծնաւոյն:

«Դմայ լուիջիք» (հմմտ. Մատթ. ԺԷ. 5) ասէ. որպէս թէ ի խաչ կամիցի ելանիցի, մի ինչ ընդ դէմ դառնայցէ:

«Իբրեւ լուան,- ասէ,- զայն անկան ի վերա երեսաց իւրեանց եւ երկեան յոյժ» (Մատթ. ԺԷ. 6):

Զի՞ արդ իբրեւ լուան զբարբառն զարհուրեցան յոյժ: Զի ահաւասիկ եւ յառաջագոյն եկեալ ասէր զայնպիսի բարբառ ի վերա Յորդանան գետոյն, եւ ժողովուրդն մաւտէին եւ ոչ ոք այնպիսի ինչ թմբրեցաւ: Եւ յետոյ դարձեալ մինչ ասէին, թէ որոտումն եղեւ եւ ոչ յայնժամ այնպիսի ինչ ոք լլկեցաւ: Եւ զիա՞րդ նոքայ ի լերինն անգան յաճէն: Քանզի յանապատ էին, եւ ի բարձու եւ յանխուլ տեղուջ եւ յայլակերպս լինելոյ արհաւիրէ էին. եւ լոյսն սեռն իմն անխառն եւ ամպն ի վերա տարածեալ, որ ամենեւին իսկ զամենայն ահն յաճախէր եւ ամենայն կողմանց արհաւիրք յաճախէին եւ անգանէին միանգամայն եւ երկիր պագանէին, զի մի յորժամ կարի ահն պախեցուցանիցէ եւ յիշատակ եւս իրացն ի մտացն մերժեցին, վասն այնորիկ վաղվաղակի փարատէր գերկեւոյն: ...<sup>1</sup> եւ էր ինքն միայն:

Եւ պապուէր փայր մի՛ ումէր ասել մինչեւ ի մեռելոց յարիցէ (հմմտ. Մատթ. ԺԷ. 9):

<sup>1</sup> Գաղափար օրինակը, հավանաբար, եղծված է եղել, համաձայն գրչի իրշատակագրութեան. «Ով եղբարքի միջոցս այս գատ պակաս է եւ մեզ չէ ձեռնահաս»:

Զի որչափ մեծամեծս ինչ ոք իմանայր կամ պատմէր զնմանէ, նոյնչափ եւս աւելի դժուարընգալ լինէր յայնժամ բազմաց եւ գայթակղութիւն խաչին եւս քան զեւս յոլովէր անտի, վասն այնորիկ լուել հրամայէ եւ ո՛չ վայրապար ինչ, այլ դեռ զչարչարանացն յիշեցուցանէր եւ գրէթէ զպատճառսն իսկ ասէ, վասն որոյ եւ լուելն հրամայեաց: Քանզի ոչ եթէ ցանգ պատուիրէր մի ումէք ի վերահանել, այլ թէ մինչեւ ի մեռելոց յարիցէ եւ զդժուարինն լուեաց, բայց զհեշտականսն միայն յայտնէր, զի խնդիր այն էր յառաջ քան զխաչելութիւնն լուել:

Յետ այնորիկ եւ հոգւոյն արժանի եղեն եւ զնշանսն ունէին ջատագով ընդ իւրեանց եւ խաւսել իսկ զամենայն ինչ զոր ասէին ընդունելի լինէր եւ քան զփողոյ հնչիւն եւ առաւել իրքն աղաղակէին եւ գուշակէին զգաւրութիւն նորա: Եւ չէր ինչ գայթակղութիւն, որի միջի կայր իրացն գործելոց:

Եւ զի՞ արդ գիտացին աշակերտքն զՄովսէս եւ զԵղիայ, որպէս Յովհաննէս գիտաց Հոգւովն զՏէր մեր ի ժամանակին՝ իբրեւ եկն առ նայ, որպէս եւ ասաց իսկ, թէ՛ ես ոչ գիտէի զնայ: Եւ զի՞ փոխեաց զկերպարանս երեսաց իւրոց: Յետ յարութեանն եւ զի գիտացեն, թէ այն որ փոխեաց զհանդերձս նոր զգեցեալն էր զի այն, որ ետ զահագին զանմատոյց փառսն կարող է կենդանացուցանել զնայ մահուանէ անտի, զի ամենայն մարդ ճաշակէ զնայ:

«Եւ զի եր վեց ատուր առ եհան զնոսս ի լեառնն», խորհուրդ վեցերորդ Ռիս: Եւ ընդ է՞ր ո՛չ զամենայն աշակերտսն առ տարաւ ընդ իւր: Այլ վասն զի ընդ նոսս էր Յուդայ, աւտարացեալն արքայութեանն եւ տանել ոչ էր արժանի եւ թողուլ զնայ միայն չէր աւրէն: Զի մարդիկ նայ իբրեւ կատարեալ համարեալ էր, վասն զի ընդրութեանն այնորիկ, որ ընդրեաց զնա: Զի չեւ եւս յայտնեալ էին գողութիւնք նորա, բայց Տէր մեր գիտէր, թէ նայ ինքն է մատնիչ նորա, իբրեւ ասէր Նայ. «մի ոմն ի ձէնջ մաքսելոց է զիս» (Մարկ. ԺԴ. 18, Յովհ. ԺԳ. 21), զի մի ասիցեն անտի իւրոց: Եւ ընդ է՞ր պատուիրէր նոցայ մի ումէք ասել զտեսիլն մինչեւ ի մեռելոց յարիցէ: (Քանզի գիտէր, թէ ոչ հաւատսն նոցա, այլ իբրեւ զմոլեկան համարէին զնոսս, եթէ զԵղիայ դուք ուստի գիտէիք եւ ահաւասիկ Մովսէս թաղեալ կայ եւ ոք ի վերայ գերեզմանի նորա ո՛չ եկաց եւ լինէր այնուհետեւ հայհոյութիւն եւ գայթակղութիւն յայսմիկ ասէ՛ կացէ՛ք մնացէ՛ք դուք, մինչեւ ընդունելիցիք դուք զգաւրութիւն, զի



յորժամ պատմիցէ, եւ ոչ հաւատասցեն, կեցուցիք զմեռեալս վասն նոցա դպրութեանն եւ վասն ձերո փառաց եւ դարձեալ կացէ՛ք, մնացե՛ք մինչեւ պատառեսցին գերեզմանք եւ ելցեն արդարքն որք եւ հինք եւ եկեսցեն յԵրուսաղէմ ի քաղաք թագաւորին մեծի եւ ապա այնուհետեւ հաւատան նոքայ եթէ այն որ յարոյց զնոսա: Նոյն եւ յարոյց զՄովսէս եւ տեսցուք ասեն թէ գայ Եղիայ իջուցանել զգայ:

Եկին արդարք բազում ի ձայն նորա ի ներքուստ ի դժոխոց, փոխանակ միոյն ելին արդարք բազումք եւ է մեռեալք լ[ո]ւան նմա եւ եկին, որչափ եւս առաւել Եղիայ կենդանին:

ԿՂ Ապայ ուրեմն զոք ոք երանելի քան զառաքեալսն եւ մանաւանդ քան զերիսն որ ընդ ամպովն արժանի եղեն յարակից լինել Տեառն:

Այս թէ կամիմք եւ մեք տեսանեմք զՔրիստոս ոչ որպէս նոքա ձայն ժամ այլեւս առաւել լուսաւորագոյն: Քանզի ոչ թէ այնպէս գայցէ ի վաղջանի, յայնժամ աշակերտսն զընդացեալ թերակամ կիսաբաց եւեթ արար զլուսաւորութիւնն որչափ ինչ նոքայ հանդարտել կարէին: Բայց յետոյ փառաւքն իսկ Հաւր եկեսցէ, ոչ միայն Մովսիսիւ եւ Եղիայիւ, այլ անեղր զաւրութեամբ հրեշտակացն հրեշտակապետք եւ քերովբէիւք եւ անահամար գնտաւք, ոչ թէ ամպ հովանի ի վերայ գլխոյ ունիցի այլեւ երկինք եւս ինքեանս ամփոփեսցին: Զոր աւրինակ դատաւորք յորժամ հրապարակաւ ատեան առնեն, սպասաւորքն զսրահակսն ի բաց ձգեն յերեսացն, զի ամենիցուն ցուցանիցեն զնայ: Սոյնպէս եւ նայ, յորժամ նստիցի, ամենիքեան տեսանիցեն, եւ ամենայն բնութիւն մարդկան առաջի կայցէ: Եւ ինքն անձամբ առնիցէ նոցա պատասխանի, զկէսն ասէ, թէ եկայք աւրհնեալք հաւր իմոյ ժառանգեցէք զարքայութիւնն եւ զայլսն ասիցէ ազնիւ ծառայ բարի եւ հաւատարիմ, որովհետեւ ի սակաւուտ հաւատարիմ գտար, «մութ յուրախութիւն փնտն քո» (Մաթթ. ԻԵ. 21) եւ սոցին բանից հակառակ վճիռ առնիցէ եւ այլոց պատասխանի տացէ, թէ երթայք ի հուրն, որ պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա: Եւ ցայլսն ասիցէ ծառայ չար եւ վատ եւ զայլսն ընդմէջ կտրեսցէ եւ մատնեսցէ տանջանաւորաց եւ զորում զձեռս հրամայիցէ կապել եւ ի խաւարն արտաքին հանել եւ յետ տապարին հնոցն առնուցու եւ որ յուռկանէն ընկեցեալ իցեն, անդր անգանիցին:

Յայնմ ժամանակի արդարքն իբրեւ զարեգակն ծագեսցեն, մանաւանդ թէ եւս լուսաւորագոյնք քան զարեգակն, այնչափ է ասացեալ, այլ ոչ եթէ այնչափ միայն իցէ լոյսն, բայց քան զայն ասող մեք ինչ պայծառագոյն չգիտեմք, ի ծանալթէն ստուգել կամեցաւ մեզ զհանդերձեալ լուսաւորութիւն սրբոցն նայել ի լերինն, ասէ, թէ ծագեաց իբրեւ զարեգակն վասն նորին պայծառանաց ասէ զայն այնպէս, այլ զի առաւել քան զաւրինակն է լոյսն աշակերտքն անկանելով յայտ արարին, զի թէ չէր սեռն ինչ լոյսն այլ հանգոյն արեգական: Ապայ եւ անգանէին իսկ ոչ, այլ դիւրաւ հանդարտէին յայնժամ արդարքն ծագեսցեն իբրեւ զարեգակն եւ առաւել քան զարեգակն եւ մեղաւորքն զանհնարին չարչարանսն կրիցեն, զի ոչ յիշատակաց պետք լիցին եւ ոչ յանդիմանչաց եւ ոչ վկայից, քանզի ամենայն ինչ ինքն է եւ դատաւոր եւ վկայ եւ յանդիմանիչ եւ զամենայն ինչ ճարտար գիտէ եւ ամենայն ինչ մերկապարանոց կայ առաջի աչաց նորա: Ո՛չ մեծատուն եւ ո՛չ աղքատ, ո՛չ հզար եւ ո՛չ տկար, ո՛չ իմաստուն եւ ո՛չ անիմաստ, ո՛չ ծառայ եւ ո՛չ ազատ երեւեսցի անդ, այլ յեղծանել այնպիսի իրաց գործոցն քննութիւն միայն լինի:

Հարցին ցՆայ աշակերտքն եւ ասեն, զի արդ ասեն դպիրքն թէ Եղիային նախ պարտ է գալ (Մաթթ. ԺԷ. 10):

Ոչ եթէ ի գրոց ինչ գիտէին զայն, այլ դպիրքն ասէին եւ տարածեալ էր բանն ի մէջ բազում ժողովրդոց որպէս եւ Քրիստոսի գալըստեանն համբաւ: Վասն որոյ շամրտացին ասէր, թէմեսիա գալոց է, յորժամ եկեսցէ պատմեսցէ զամենայն: Եւ նոքայ իսկ զՅովհաննէս հարցանէին, մի՞թէ Եղիայ իցես դու կամ մարգարէն: Որպէս ասաց իսկ, ելեալ տարածեալ էր համբաւն, որ վասն Քրիստոսի Բ. գալուստն ասեն գիրք Քրիստոսի. մի զառաջինն եւ միւս զհանդերձեալն: Եւ զերկուսեանն Պօղոսի յայտ արարեալ ասէ, թէ երեւեցաւ շնորհն Աստուծոյ փրկչին, որ խրատէ զմեզ եւ որ ի կարգին զայս զառաջին գալստեանն ասէ:

Եւ արդ, լուր, զիա՞րդ եւ զմիւսմէն յայտ առնէ: Ակն ունիցիմք, ասէ, երանելի յուսոյն եւ յայտնութեան մեծին Աստուծոյ եւ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի: Եւ մարգարէքն զերկուց գալստեանցս նշանակէին: Եւ երկրորդ գալստեանն կարապետ զԵղիա ասեն լինել եւ առաջնումն՝ զՅովհաննէս: Զոր եւ Քրիստոս իսկ



Եղիա կոչէ, ո՛չ զի Եղիա իսկ էր, այլ զի զնոյն սպասաւորութիւն Եղիային ընդ, զի որպէս նայ լինելոց է կարապետս երկրորդ գալստեանն: Նոյնպէս եւ սայ առաջնոցն եղու ալ դպրութեան: Չայս ընդ միմեանս խառնակէին եւ զժողովուրդսն թիւրէին զերկրորդ գալստենէն յուշ առնէին ժողովրդոցն եւ ասէին թէ սա էր Քրիստոսն, ապա Եղիայի նախ պարտ էր գալ, արդ զինչ լուծումն իցէ բանիս, զոր Քրիստոսն իսկ ամ նովիմք, թէ գայցէ Եղիայ յառաջ քան զերկրորդ գալուստն իմ եւ արդեհն իսկ եկեալ է Եղիայ, գայս զՅովհաննէս ասէ. այս Եղիայ եկն, ապա Թեղբացին խնդրես, գալոց է եւ նայ: Վասն որոյ եւ ասաց իսկ, թէ Եղիայ գայ եւ յարգարեսցէ զամենայն, զոր ինչ մարգարէն Մաղաքիայ ասէ, թէ «Առաքեցից զձեզ զԵղիայ Թեղբացին, որ հասարարեսցէ զսիրտս հարց յորդիս զի մի եկեալ հարկանիցեմ միանգամայն զերկիր» (հմմտ. Մաղաք. Դ. 5-6): Տեսանես զհաստատութիւն մարգարէական բարբառոյն, քանզի զՅովհաննէս Քրիստոս կոչեաց Եղիայ, վասն հաղորդութեան սպասաւորութեանն, զի մի կարծիցես թէ զնմանէ ասացեալ է մարգարէն, զքաղաքին անունն յաւելու, թէ զԹեղբացին ասէ, քանզի Յովհաննէս չէր Թեղբացի, միւս եւս խտրոց ի մի միջէ դնէ: Գուցէ եկեալ հարկանիցեմ զերկիր եւ այսու զերկրորդ յահագին գալստենէն յայտ առնէ, զի յառաջնումն ո՛չ թէ ի հարկանել զերկիր եկն: Արդ յայտ է, թէ յառաջ քան զվերջինն գալոց է Թեղբացին, յորում դատաստանն լինելոց է, միանգամայն եւ զպատճառսն իսկ ուսուցանէ, վասն որոյ գալոցն է, զի եկեալ հաւանեցուցէ զհրեայսն հաւատալ Քրիստոսի, զոր եւ ինքն յուշ առնէ նոցա: Յարդարեսցէ, ասէ, զամենայն, այսինքն՝ ամցէ ի հաւան զանհաւանութիւն հրէիցն, որ ի ժամանակին գտանիցին, որպէս եւ յաջորդն յայտ առնէ: Հաստատեսցէ զսիրտս հարց յորդիս: Այսինքն՝ յառաքելոցն միտս զսիրտս հարց. այն իսկ է, զմիտս ազգին հրէից: Բայց ես ասեմ ձեզ, եթէ Եղիա եկեալ իսկ է: Այլ մի ինչ խռովիցիս եւ մոլորական զբանն հաշ[ո]ւիցիս, վասն մերթ ասելով թէ գալոց է եւ մերթ ասելոցն թէ եկն: Քանզի երկրքին իսկ ճշմարիտ են, յորժամ ասիցէ, թէ Եղիա գայ եւ յարգարեսցէ զամենայն: ԶԵղիայէ իսկ ասէ, եւ դարձէն եւ յորժամ ասիցէ, թէ եկեալ է զՅովհաննէս կոչէ Եղիայ, զի ցուցցէ զնա համարձակութեամբն եւս կարի միաբան Եղիայի: Ըստ մարգարէութեանն համարի եւ զգալուստն, վասն որոյ եւ ասէ իսկ թէ եկն եւ ոչ ծանեան զնայ, այլ արարին ընդ նմայ զինչ եւ կամեցան,

Զինչ իցէ, զոր կամեցանն ի բանդ արկին, թշնամեցին, սպանեցին բերին զգլուխն առաջի սկտեղբ: Նոյնպէս եւ որդի մարդոյ չարչարելոց է ի նոցանէն: Յորժամ ասաց զՅովհաննուսն յարէ եւ ի նոյն զիւրն եւ կարի իսկ առիթ միսթարութիւն առնէ զբանն եւ ոչ այնու միայն միսթարէ զնոսա, այլեւ իմացուցանելովն թէ յանիրաւս չարչարին, զոր ինչ չարչարիցեն ի նոցանէն: Ապայ ի միտ առին թէ վասն Յովհաննուսն ասաց զնոսա: Թէպէտ ոչ դպիրքն ինչ ասացին զայս եւ ոչ զիրք, այլ քանզի տակաւ եւս արագագոյնք եւ մտադիրք ասացելոցն եղին, վաղվաղակի առին ի միտ եւ ուստի արդեւք իմացան աշակերտքն: Յայնմանէ զի վաղուց հետէ լ[ո]ւեալ էր, թէ նա է Եղիա, որ գոալոցն է եւ աստ թէ եկն:

### ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՅԻ

(Գլուխ ԺԷ.)

Եւ յեթ վեց աւուր առնու ընդ Իւր Յիսուս զՊետրոս եւ զՅակովրոս եւ զՅովհաննէս զեղբայր նորա (Մաղթ. ԺԷ. 1):

Հարցաքննելի է, զի թէ յետ վեց աւուր հանդերձեալ էր զփառսն ցուցանելոց, ապա ընդէ՞ր յառաջագոյն ասաց թէ՝ «Են ոմանք ի սոցանէ, որք մի՛ ճաշակեսցեն զմահ, մինչեւ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ»։ զի տեղեկագոյնք եւ կիրթք տեսլեանն լինիցին այնու, զի կանուխն ասիցէ, եւ թուով աւուրցն յաճախագոյնս կարօտանայցեն եւ զհոգն ի մտի ունիցին: Իսկ անդստին յառաջնումն աւուրն ոչ եհան, զի մի՛ մարդկորէն ինչ ախտանայցեն այլ աշակերտքն, քանզի ամենեքեան իսկ ցանկային երթալ զհետ՝ տեսանել զօրինակ փառացն, վասն այսորիկ անսաց զվեց օր, զի հանդարտութիւն ստացան այլքն: Եւ ապա «յետ վեց աւուր առնու ընդ Իւր Յիսուս զՊետրոս եւ զՅակովրոս եւ զՅովհաննէս»։ Միւս աւետարանիչն յետ ութ աւուր ասէ (հմմտ. Ղուկ. Թ. 28), ո՛չ իբր հակառակ սմա, այլ կարի՛ միաբան, զի մին՝ զայն օր, յորում զբանն ասաց եւ յորում եհան զնոսա ի լեառն, թուէ, իսկ միւսն՝ զվեց օրն, որ ի միջի իցէ երկուցն, միայն ասէ: Եւ արդ՝ թէպէտ այս այսպէս է, սակայն ո՛չ առանց խորհրդոյ՝ ոմն վեց եւ ոմն ութ զրէ զաւուրսն, այլ զի վեցիւն զվեց դարու խորհուրդ զառաջին գալստեան նշանակէ, յորում զվեցօրեայ եղեալ մարդկայինս բնութիւն ի տիպ տիրական, եւ վեց շարժամբ յանգուցեալ՝ դարձեալ նորոգեաց այցելութեամբ



Իւրով ի վեցերորդ աւուրն ի վեց ժամուն: Իսկ ութն՝ զօրինակ ութերորդի դարուն, յորում հանգուցանելոց է զամենայն վաստակաւորս յաւիտենական միաշաքաթուն, յորում եւ Ինքն յարեալ:

«Եւ յետ վեց ատուր առնու ընդ Էւր Յիսուս զՊետրոս եւ զՅովհաննէս զեղբայր նորա»: Մի՛տ դիր աւետարանչիս խոնարհութեան, թէ զիա՛րդ ոչ թազուցանէ զայնոսիկ, որ քան զնա նախամեծարք եղեն ի Քրիստոսէ ի բազում տեղիս՝ Պետրոս եւ Յակոբոս եւ Յովհաննէս, զի այնպիսի ազատ էին ի նախանձուէ եւ ի սնապարծ փառաց գունդն սրբոց: Բայց թէ ընդէ՞ր զնոսա միայն առնուցու. զի թէ զամենեսեան առնոյր, եւ Յուդա՛ս ընդ նոսա գտանէր՝ օտարացեալն ի շնորհացն Աստուծոյ եւ ի փառաց Նորա, որ եւ չէր իսկ արժան վայելիլ յարքայութեան Նորա: Եւ թէ ասիցէ ոք՝ տակաւին չէր մատնիչ եղեալ, արդ՝ թէպէտ յամենեցունց ծածուկ էր, սակայն Տեառն յայտնի էր չարութիւն սրտի նորա, վասն այսորիկ զերկոտասանսն ոչ տարաւ ընդ Իւր, իսկ թէ զայլսն առեալ էր եւ զսա վասն անարժանութեանն թողոյր, բաւական պատճառ լինէր նմա առ ի մատնութիւնն, զորս թողեալ զայլսն պահապան նմին՝ իբր գազանի, «առնու ընդ Իւր Յիսուս զՊետրոս եւ զՅովհաննէս»:

Եւ զսոսա ո՛չ վարկպարազի, այլ զի քան զայլսն առաւելագոյնք էին. Պետրոս՝ ի սիրելոյն զՆա եւ ի ջերմ հաւատոյն, յայտ է ի բազում տեղիս, եւ Յովհաննէս՝ զի ի Նմանէ կարի իսկ սիրիւր, որ եւ զլանջօքն իսկ անկաւ (հմմտ. Յովհ. ԺԳ. 25), եւ Յակոբոս՝ ի պատասխանւոյն թէ՛ «Կարող եմք ըմպել զբաժակն» (հմմտ. Մարթ. Ի. 22), որք ո՛չ միայն բանիւ, այլեւ գործով իսկ կատարեցին, զոր յառաջագոյն կալան ի յանձին: Քանզի վասն այսորիկ եւ մերձ առ խաչին սոքա լինէին, յորժամ առանձնացեալ ազօթէր, զի մի՛ զայթազղեսցին ի չարչարանս Նորա, որք տեսողք եղեալ էին փառաց Նորա, այլեւ ի միտ առցեն զյորդորումն մարգարէիցն, որք վասն ելիցն յԵրուսաղէմ խօսէին, եւ իմասցին, թէ կամաւորաբա՛ր եկն ի չարչարանս եւ ո՛չ ի հարկէ:

Եւ զարձեալ՝ զերիսն միայն հանէ, զի ցուցցէ, թէ Նա Ինքն է, որ մինչ յերկինս՝ զալոց զարարչութեանն խորհուրդս եւ զանճառ նախախնամութեանն պարզեւս ի ձեռն երից դասապետութեանցն առաջին քահանայապետութեանցն՝ սերորէից եւ քերորէից եւ աթոռոց, որք անընդմիջաբար հաղորդին լուսափայլութեան բղխմանց

եւ բարետրապէս շարժմամբ անցուցանեն ի ներքինս եւ նոքօք՝ յամենայն արարածս: Այսպէս եւ յորժամ յերկրի մարմին զգեցաւ, զնոյն սահման անյեղափոխ պահեաց՝ զմարդեղութեանն խորհուրդ եւ զերկրորդ զալստեանն օրինակ նոցա յայտնելով իբր յոյժ մերձաւորաց եւ հուպ եղելոց առ վերնոցն մաքրութիւնս՝ Պետրոսի եւ Յովհաննու եւ Յակոբայ, եւ նոքօք՝ հետեւողաց նոցին եւ սրբազան հաւատացելոց ի Քրիստոս:

Եւ հանէ զնոսա ի լեառն մի բարձր առանձինն (Մարթ. ԺԷ. 1):

«Լեառն բարձր» ոմանք զգրախտն ասեն, քանզի բարձր է քան զաշխարհ՝ հաւասար լուսնական գնդին եւ առանձին պատեալ քերորէիւք եւ բոցեղէն սրով զատեալ ի հողեղինացս բնութենէ, որում եւ ե՛ս դաշնակից գոմ: Քանզի յարութեանն էր տեսիլն ապացոյց, եւ յարութեանն ո՛չ այլ ինչ է, քան թէ առաջին փառացն կանգնումն, վասն որոյ անդ տարեալ՝ եցոյց աշակերտացն զխորհուրդ յարութեանն: Իսկ ոմանք զՍիոն ասեն «լեառն», յորում Դաւիթ զամրոցն շինեաց, զոր եւ Պետրոս ի սոյն տեսութեան պատմութիւն՝ «սուրբ լեառն» անուանէ, թէ՛ «Ընդ Նմա իսկ էար ի սուրբ լերինն» (Բ. Պետ. Ա. 18) ըստ Դաւթի թէ՛ «Տիմուր Նորա ի լեառն սուրբ Նորա» (Մաղմ. 2Ձ. 2), յորում հիմնարկելոց էր զխորհուրդ Վերին Սիոնին: Իսկ կէսք զՍիոնէականն ասեն անուանէ գազաթն, որ է բարձր եւ առանձինն, յորում զՕրէնսն ընկալան եւ երեսքն Մովսիսի պայծառացան (հմմտ. Ելից ԼԴ. 29), որ յայտնապէս զայսր պայծառութեան խորհուրդ նկարէր, նաեւ յայնմ վայրի թաղեցաւ իսկ Մովսէս (հմմտ. Բ. Օր. ԼԴ. 6), եւ անդր փախստական չոգաւ Հեղիաս (հմմտ. Գ. Թագ. ԺԹ. 3-8), զորս կոչեաց դարձեալ եւ եցոյց զփառս Աստուածութեանն: Բայց հասարակաց բանն զԹաբոր ասեն, եւ վկայ առեալ զբան մարգարէին թէ՛ «Թաբոր եւ Ներսն յանուն Քն ցնծացեն» (Մաղմ. 2Ը. 13)՝ ասէ եւ Պետրոս թէ՛ «Ունիմք հասարակագոյն զբանս մարգարէական, որում եթէ անսայցէք, բարոք առնէք» (Բ. Պետ. Ա. 19):

Արդ՝ հանէ զնոսա մարմնով ի լեառն եւ մտօք յանճառ իմաստս գիտութեան բարձրացուցանէ. է՞ր վասն. նախ՝ զի աներկիւղս ի հրէիցն արացցէ, զի մի՛ տեսութեանցն ի մոռացօնս եկեսցեն՝ առանձնացուցանէ յապահով տեղի: Եւ երկրորդ՝ զի զոր վերին ազգմամբն Պետրոս դաւանեաց, եւ Որդի յայտնեաց թէ՛ «Ոչ մարմին եւ արիւն, այլ Նայր Իմ որ յերկինս՝ ի քեզ ազդեաց» (հմմտ. Մարթ. ԺԶ. 17), հանէ ի լեառն,



զի եւ ականջօք իւրովք լուիցէ ի Հօրէ, զոր ինչ բերանով իւրով վկայեաց: Եւ երրորդ՝ զի ցուցցէ զփառս աստուածութեան Իւրոյ յառաջ քան զյարութիւնն, զի յորժամ ի մեռելոց յարիցէ, ծանիցեն, թէ ո՛չ վասն վաստակոց էառ զփառս, այսինքն՝ վասն խաչին, այլ ունէր զնա յառաջ քան զխաչն՝ ըստ այնմ. «Նայր, փառաւորեա՛ գիւտ առ ի Քէն փառօք, զոր ունէի յառաջ քան զլինելն աշխարհի» (Յովհ. ԺԷ. 5): Եւ չորրորդ՝ զի տեսցեն զվկայելչութիւն փառացն, վասն որոյ հրամայեաց նոցա Հանդիսանալ: Եւ հինգերորդ՝ Մոսիսի հաւասարէ, զի որպէս զնա եհան ի լեառն Սինէական եւ ետ զՕրէնսն գրաւորական ի տախտակս քարեղէնս՝ զպատժականն, սոյն օրինակ զՆորոյ կտակիս պաշտօնեայսն ի լեառն Թաբորական ո՛չ միգով պատեալ, այլ փառօք երեւեալ՝ գրելով զօրէնս Հոգւոյն ի սիրտս նոցա՝ զչնորհականն: Իսկ «առանձինն»՝ կամ զտեղին ասէ անքոյթ, յորում ուշ ունէին տեսեանն, կամ զնոսա առանձինն յայլոցն:

Եւ այլակերպեցաւ առաջի նոցա, եւ լուսաւորեցան երեսք Նորա իբրեւ զարեգակն, եւ հանդերձ[ք] Նորա եղեն սպիտակ իբրեւ զլոյս (Մարթ. ԺԷ. 2):

Փոխեաց զկերպարանս յերեսաց Իւրոց, մինչչեւ մեռեալ իսկ էր, զի տեսցեն զգեղ երեսաց Նորա՝ ըստ Դաւթայ (հմմտ. Սաղմ. ԼԵ. 10), եւ մի՛ երկմտեսցեն յետ փոխելոյ յերեսաց Նորա՝ ի մահու Նորա նուազեալ՝ ըստ Եսայիայ (հմմտ. Ես. ԾԳ. 2): Եւ զարձեալ՝ զի որք խաչակից լինին Հանդիսի Նորա, փոխելոց են ի կերպարանս լուսոյ երեսաց՝ ըստ առաքելոյ՝ «կերպարանակից առնել զմարմին խոնարհութեան մերոյ՝ ըստ նմանութեան մարմնոյ փառաց Իւրոց» (հմմտ. Փիլպ. Գ. 21), եւ ըստ Յովհաննու թէ՛ «Նման Նմա լինելոց ենք» (Ա. Յովհ. Գ. 2), քանզի «քեսաք զփառս Նորա՝ զփառս իբրեւ զՄիամնի առ ի Նօրէ՛ լի շնորհօք եւ ճշմարտութեամբ» (Յովհ. Ա. 14): «Եւ այլակերպեցաւ, — ասէ, — առաջի նոցա, եւ լուսաւորեցան երեսք Նորա իբրեւ զարեգակն»՝ առաւել քան զՄոսէսին, զի նորայն՝ արտաքուստ, իսկ Տեառն ի ներքուստ յաստուածութեանէն էր արտափայլումն:

Բայց «իբրեւ զարեգակն» ասելն՝ ոչ այնչափ միայն, այլ ե՛ւս առաւել, մինչ զի յաղթել զէր զլոյս արեգականն՝ պայծառութիւն երեսաց Նորա, բայց զի ոչ գոյ յէքս այլ իմն մեծագոյն լուսոյ սաստկութիւն, յաղագս այսորիկ արեգականն բաղդատէ: Նաեւ ո՛չ վայրապար երեսք Նորա իբրեւ զարեգակն լուսաւորեալ, զի Արդա-

րութեան Արեգակն գոլով՝ այրէր զգործս խաւարին եւ փարատէր զմութ գիշեր տգիտութեան եւ կռապաշտութեան, եւ պայծառացուցանելով զմարդիկ ի գործս աստուածային: Եւ զարձեալ՝ զաստուածութեան երեսն եցոյց, զի ծանիցեն, թէ ի վեր է քան զչարհարանս եւ կամաւորաբար կրէ վասն մերոյ փրկութեան: Դարձեալ՝ խնդրէին ուսանել, թէ ո՛րպէս գայ յերկնից, եցոյց զօրինակն: Այլեւ յետ յարութեանն հանդերձեալ էին տեսանել զՆա, աստ եցոյց, զի գիտասցեն, թէ Նա է, որ յարեաւ, եւ ո՛չ այլ ոք, եւ հաւատասցեն, թէ եւ «արդարն ծագելոց են իբրեւ զարեգակն յարքայութեան» (Մարթ. ԺԳ. 43): Դարձեալ՝ եցոյց զփառս Աղամայ անմեղութեանն ի դէմս Իւր, զի իբր զարեգակն փայլէր ի դրախտին:

«Եւ Հանդերձ[ք] Նորա եղեն սպիտակ իբրեւ զլոյս»: Մարկոս ասէ թէ՛ «Թափիչք երկրի ոչ կարեն այնպէս սպիտակա[ցուցանել]» (Մարկ. Թ. 2), այսինքն՝ թէպէտ ոմանք զանձինս թափեն ի մեղաց, սակայն ոչ կարեն կենդանացուցանել, որպէս զի գիտասցեն, թէ Նա, որ փոխեաց զհանդերձս Իւր, նոյն է, որ կենդանացուցանէ զմարմին Իւր, զոր զգեցեալն էր, եւ ապա զմերս ի յարութեանն, զի որ ետ նմա զհոգին եւ զփառս անմատոյց, կարող է կեցուցանել զնա ի մահու անդ, որպէս մարմին ճաշակէ զնա: Իսկ նշանակաբար՝ այլակերպելն Տեառն զՕրինացն փոխումն ցուցանէր՝ զհինն ի նորս եւ զստուերն ի լոյս ածելով, եւ երեսացն Նորա պայծառութիւն իբր զարեգակն՝ զաւետարանին վարդապետութիւն եւ զառաքելական աստուածաբանութիւնն գուշակէր, յորում մեկնին միտք բառիցն լուսապայծառ վերլուծութեամբ: Իսկ Հանդերձք իբր զլոյս լինելն՝ զնորածնելոց Աւագանին մկրտութեամբ զմաքրութիւնն, որով սպիտակացեալ պայծառացան յառաջին աղտեղութեանցն եւ եղեն Հանդերձք Տեառն մերոյ՝ ըստ մարգարէին. «Կենդանի եմ Ես, — ասէ Տէր, — թէ զձեզ զամենեսեան իբրեւ զհանդերձ մի զգեցայց» (հմմտ. Ես. ԽԹ. 18), զորս ետես Յովհանն՝ արկեալ զինքեամբ արկանելիս սպիտակս (հմմտ. Յայր. Զ. 11):

Եւ ահա երեւեցան նոցա Մոսէս եւ Եղիա, որ խօսէին ընդ Նմա (Մարթ. ԺԷ. 3):

«Ահա» ասելն յանկարծութեան նշանակ է, զի ի փառաւորել երեսաց Նորա յերեւել մարգարէիցն՝ իսկոյն վկայեցին, թէ սա է, որ ի Սինայ լուսոյ փայլատակմամբ երեւեցաւ (հմմտ. Ելից ԺԹ) եւ



առ Եղիայիւ ի սիք նուրբ ծանուցաւ (հմմտ. Գ. Թագ. ԺԹ. 12), նոյնպէս եւ այժմ առաջի առաքելոցն այլակերպեցաւ, եւ ոչ սոսկ երեւումն, որպէս Սամուելին առաջի Սաւուղին (հմմտ. Ա. Թագ. ԻԸ), այլ ստուգութեամբ եկաւորութիւն՝ ի հրամանէ Տեառն անդր ժամանեալք: Այլ ընդէ՞ր յետ փառաւորելոյն երեւեցան Մոսէս եւ Եղիա եւ ոչ նախ քան զփառսն, եւ կամ է՞ր վասն երեւեցան յետ փառացն. զի ցուցցէ, թէ ի հանդերձեալն է յայտնելոց վայելչութիւնք արդարոց՝ ըստ այնմ թէ՛ «Յորժամ Քրիստոս յայտնեսցի՝ կեանքն ձեր, յայնժամ եւ դուք ընդ նմին յայտնեսցիք փառօք» (Կոր. Գ. 4):

Բայց թէ ընդէ՞ր ած զՄոսէս եւ զԵղիաս՝ խօսակից լինել Ինքեան, բազումս ունիմք ասել պատճառս: Նախ այն իսկ՝ զի ի ժողովրդոցն ոմանք ասէին զՔրիստոսէ, թէ Եղիա է, եւ ոմանք թէ՛ Երեմիա կամ մի ոք ի մարգարէիցն (հմմտ. Մարթ. ԺԶ. 13-14), ած կացոյց զմարգարէսն ի լեառնն զգլխաւորսն, զի տեսանիցեն ո՛րչափ միջոցն է ընդ ծառայսն եւ ընդ Տէրն, ուստի ծանիցեն, թէ յիրաւի գովեցաւ Պետրոս: Եւ երկրորդ՝ զի բամբասէին զՆա, թէ զՕրինօքն անցանիցէ, եւ կարծէին, թէ զփառս Հօր, որ չէ նմա անկ, յանձն խորիցէ, եւ թէ՛ «Դու մարդ ես եւ զանձն Քո աստուած անես» (Յովհ. Ժ. 33), եցոյց Մոսիսիւ եւ Եղիայիւ, թէ առ նախանձու են բամբասանքն: Զի թէ զՕրէնսն անցանէր եւ կամ զփառս Հօր յափշտակէր, Մոսէս, որ զՕրէնսն ետ, եւ Եղիա, որ վրէժխնդիր Աստուծոյ փառացն լինէր, չառնուին յանձն ողորել զայր մի օրինագանց եւ հակառակ հարցն կրօնից, եւ կամ վկայել զնմանէ, եթէ ոչ ստոյգ զիտէին, եթէ Որդի Աստուծոյ է Նա: Եւ երրորդ՝ զի ուսանիցիս, թէ Տէր է Նա կենդանեաց եւ մեռելոց եւ զվերինս եւ զներքինս առ հասարակ ընդ իշխանութեամբ ունի, ուստի զմինն ի կենդանեաց եւ զմիւսն ի մեռելոց ածէ ի մէջ: Եւ չորրորդ՝ զի եկն ոչ միայն զկենդանիս փրկել, այլեւ զգոծխային հոգիսն ազատել, արդ՝ Եղիայիւ վերնոց եւ ներքնոց բանականաց ետ աւետիս փրկել զմարդիկ գալստեամբ Իւրով, որոց փրկութիւնն խնդութիւն էր վերնոցն, եւ աւերել զգոծխս մահուամբ Իւրով, զոր Մոսիսիւ ծանոյց՝ վերբերելով ի գոծխոց:

Եւ հինգերորդ՝ զի խրատեսցէ զաշակերտսն լինել հեզ իբրեւ զՄոսէս, զի ասէր. «Եթէ թողուս նոցա՝ թո՛ղ, ապա թէ ոչ՝ եւ զի՛ս ջնջեա ի դպրութենէդ, յոր գրեցեր» (Ելից ԼԲ. 32), եւ դարձեալ՝ նախանձայոյց լինել իբրեւ զԵղիա եւ սաստիկ, զի զերիս ամս սովով տանջեաց զանարժան ժողովուրդն (հմմտ. Գ. Թագ. ԺԷ. 1, ԺԸ. 1-2): Եւ

վեցերորդ՝ առաքինութիւն ի նոցանէ պահանջէր, որպէս Մոսէս եւ Եղիա յիւրեանց ժամանակն ցուցին, քանզի ասաց թէ՛ «Որ կամիցի գալ զկնի Իմ, առցէ զիս չն եւ եկեսցէ զհետ Իմ» (հմմտ. Մարթ. ԺԶ. 24): Արդ զի մի՛ վհատիցին, մխիթարութիւն մատուցանէ մարգարէիւքն եւ ցուցանէ զնոսա փառօք, թէ ոչ միշտ ի վիշտս կայցեն, այլ անցանելոց են պատերազմունքն, եւ յետ չարչարանացն ի փառս եւ ի հանգիստս ժամանելոց, որպէս մարգարէքն, որ թէպէտ չարչարեցան, ոմն ի փարաւունէ եւ ոմն յԱքաաբէ, այլ չարչարանքն այնոցիկ՝ փառաց եղեն պատճառք: Եւ եօթներորդ՝ զի անստացուածութիւն նոցա քարոզեաց. զի մի՛ ծանր համարիցին, եբեր զՄոսէս, զի լաւ համարէր զնախատինսն Քրիստոսի, քան զբազմութիւն գանձուցն եգիպտացւոց, եւ զոսկերս արդարոյն միայն կրէր (հմմտ. Ելք ԺԳ. 19) եւ Հեղիաս մաշկեկաւ բաւականանայր (հմմտ. Գ. Թագ. ԺԹ. 13, 19, Դ. Թագ. Բ), եւ այն զի ի հնումն էին: Եւ ութերորդ՝ յայտնեաց Եկեղեցւոյ, թէ ո՛չ Որդւոյ միայն են փառք յարքայութեան Իւրում, այլեւ կուսից եւ ողջախոհ ամուսնացելոց ուրախանալ ետ ի փառս աստուածութեան Իւրոյ՝ ի խորհուրդ Եկեղեցւոյ, որ ունի զկոյսս եւ զպարկեշտ ամուսնացեալ, որպէս անդ Մոսէս եւ Պետրոս, եւ Եղիա եւ որդիքն Զերեղեայ:

Եւ իններորդ՝ վերածէ զՄոսէս զօրավար բանակին եբրայեցւոց եւ զԵղիա անապատաբնակ, զի ծանիցուք, թէ արուեստք աշխարհականք ոչ կարեն զմեզ տարագիր առնել յԱստուծոյ, միայն թէ ըստ կամաց Նորա զընթացս մեր կատարեսցուք: Տասներորդ՝ զՄոսէս եւ զԵղիա միաբանեաց ընդ առաքեալսն, զի Հնոյն եւ Նորոյս միաբանութիւն արասցէ՛ փառաւորս զու զերկոքեանն՝ ըստ առաքելոյ, զի թէ «պաշտօն դատապարտութեանն փառօք, ո՛րչափ եւս առաւել պաշտօն արդարութեանն եղիցի փառօք» (Բ. Կոր. Գ. 9): Մետասաներորդ՝ զի խնդրեցին Մոսէս եւ Եղիա տեսանել զՆա, եւ զի ոչ էր ժամանակ, զի արասցէ զայս նոցա, պահեաց զխնդիրն ժամանակի գալստեան Իւրոյ, զի յորժամ տեսցեն զՆա մարմնով, վկայեսցեն եթէ Աստուած է. զի զոր ոչ բաւէին տեսանել առանց մարմնոյ, տեսին մարմնով, եւ լցաւ իղձ բաղձանաց նոցա, զոր ցանկային տեսանել զՆա՝ ըստ այնմ. «Զկամս երկիւղածաց Իւրոց առնէ» (Մաղմ. ճեմ. 19): Եւ երկոտասաներորդ՝ զի ուսուցէ զնոսա, թէ ո՛չ է այլ, Նա է, որ զՄոսէս յեգիպտոս առաքեաց եւ հրաման ետ Եղիայի, նոյն սա է, որ այժմ հրամանօք Իւրովք կոչեաց, զորս



լուեալ ի մարգարէիցն՝ մի Աստուած տուիչ օրինաց Հնոյն եւ Նորոյս խոստովանեցի:

Երեքտասաներորդ՝ զի տեսիլն խորհուրդ էր յարութեանն, ամ զերկոսին, զի հաւատարիմ լիցի յարութիւնն եւ վախճան կատարածին, թէ որք մեռեալք են՝ իբրեւ զՄոսէս յառնեն, եւ որք կենդանիք են՝ իբրեւ զԵղիա թուչին: Զորեքտասաներորդ՝ զի Մոսէս Օրինացն էր խորհուրդ եւ Եղիա՝ մարգարէիցն, որք տեսին զփառս Նորա, որով հաւատամք, թէ Օրինօք եւ մարգարէիւք քարոզեցաւ խորհուրդ խաչի Նորա, որ փառք է Եկեղեցւոյ սրբոյ: Հնգետասաներորդ՝ զի խնդրեցին որդիքն Զերեղեայ փառս՝ մի յաջմէ եւ մի յազեկէ, եւ Նա ասաց. «Ոչ է Իմ փալ, այլ որոց փութալ է ի Նորե» (Մարթ. Բ. 23), վասն այսորիկ երեւեցաւ Մոսէս յաջմէ եւ Եղիա յազեկէ, զի տեսցեն թէ նախ չարչարանացն հաղորդիլ պարտ է որպէս նոքա եւ ապա՝ փառացն: Վեշտասաներորդ՝ զի գիտացցէ Պետրոս, թէ յերկնէ հրեշտակք եւ յերկրէ արդարք սպասեն եւ ակն ունին մահուան Նորա, վասն այսորիկ Եղիա յերկնից եւ Մոսէս յերկրէ: Եւ եօթնեւտասաներորդ՝ զի յերկուց եւ յերկից վկայից հաստատ է ամենայն բան (հմմտ. Բ. Օր. ԺԷ. 6, ԺԹ. 15), որպէս վկայեցին երեք ի ներքուստ եւ երկու ի վերուստ, որք վկայեցին աստուածութեան Նորա:

Քննելի է եւ այն, թէ ուստի՞ ճանաչեցին առաքեալքն զմարգարէսն. ոմանք ասեն, թէ զպատկերս նոցա ունէին գործեալ ի տախտակի, եւ այլք թէ՛ վասն զի գիտէին, թէ Մոսէս թոթովախօս էր եւ ծանրալեզու, եւ Եղիա այր թաւ եւ գիսաւոր՝ հանդերձ մաշկեկաւ, որոյ օրինակաւ տեսեալ ճանաչեցին. եւ կէսք թէ՛ գիտացին աշակերտքն զՄոսէս եւ զԵղիա, որպէս գիտաց Յովհաննէս զՏէր մեր՝ ասելով. «Ահա Գառն Աստուծոյ» (Յովհ. Ա. 29), յայտ է՝ Հոգւով: Բայց ինձ թուի, թէ յարութեան էր օրինակ իրն, եւ ի յարութեանն հանդերձեալ եմք ճանաչել զմիմեանս, որպէս մեծատունն զԱբրահամ՝ զայր մի, որ ի վաղնջուց իսկ մեռեալ էր:

«Եւ ահա երեւեցան, — ասէ, — նոցա Մոսէս եւ Եղիա, որ խօսէին ընդ Նմա»: Զի՞նչ խօսէին. յայտ է՝ զելիցն, զոր կատարելոց էր յերուսաղէմ, այսինքն՝ զչարչարանացն եւ զխաչէն, զոր փառս միշտ կոչեն գիրք, որք եկեալ մարգարէքն յորդորէին, որում առաքեալքն կազէին: Վասն որոյ եւ ինքն ասէր թէ՛ «Հոգիս յօժար է»՝ մարգարէքն, քանզի Հոգւովն խօսեցան, «եւ մարմինս՝ տկար» (Մարթ. ԻԶ. 41)՝ առաքեալքն, զի «չեւ էր Նոզի, քանզի Յիսուս չեւ էր փառա-

տրեալ» (Յովհ. Է. 39): Վասն որոյ մարգարէքն աղերս արկանէին Նմա՝ կատարել զփրկութիւնն ամենայն մարդկան, որով պատառելոց էր զգիր պարտեացն Ադամայ, զոր լուեալ հաւանեցան առաքեալքն, եւ եղեւ այնուհետեւ մարգարէիցն եւ առաքելոցն միաւորութիւն, որպէս այժմ յեկեղեցի համաձայնին մարգարէիցն մարգարէութիւնք եւ առաքելոցն վարդապետութիւնք, քանզի երկոքին դասք ընդ Նմա խօսէին եւ զՆորայն վարդապետեն:

Պատասխանի եպ Պեպրոս եւ ասէ ցՅիսուս. «Տէ՛ր, բարտ՛ք է մեզ ասար լինել (Մարթ. ԺԷ. 4):

Քանզի լուաւ ի մարգարէիցն, որք վասն էլիցն յերուսաղէմ խօսէին, մանաւանդ ի Տեառնէ, զի էլցէ անդ եւ չարչարեցի, տակաւին կասկածն ի մտի կայր եւ հոգայր եւ երկնչէր վասն Նորա, այլ յետ ազատելոյն ոչ իշխէր հակառակել, բայց այլովք բանիւք յերկիւղէն գրեթէ զնոյն ակնարկէր, վասն որոյ ասէ. «Բարտք է մեզ ասար լինել»: Եւ դարձեալ՝ զի գիտէր զնախանձ դպրացն եւ փարիսեցւոցն եւ զխուճապ հրէիցն, եւ անդ ի զգուշութեան կայր յաղագս հեռաւորութեան վայրացն եւ ամբութեան տեղւոջն, կամէր զի հանապազ անդ լինիցին, եւ թէ յանդգնիցին, ասէ, հրէայքն եւ աստցուցանել զհակառակութիւն իւրեանց, Մոսէս առ մեզ է եւ Եղիա՝ հուպ, ոմն յեզիպտոս տանջեաց զխստասիրտսն, եւ ոմն հուր իջոյց եւ զյիսուսն այրեաց (հմմտ. Ելք Է-ԺԴ, Դ. Թագ. Ա. 9-10), չարչարեցն եւ զնոսա: Եւ զայս ոչ այնքան յաղագս անձին զանգիտութեան քան թէ յաղագս Վարդապետին սիրոյ: Եւ զի այս այսպէս է, յայտ է ի մահուան ժամանակին, զի ասէր. «Ընդ Քեզ պարբասար եմ ի մտանել» (հմմտ. Ղուկ. ԻԲ. 33), եւ ի մէջ այնքան ամբոխիցն զանձն ի մահ մատնէր եւ զուսկն ծառային ի բաց հատանէր, զի այնպէս ոչ անձինն սպաս ունէր, այլ ի վերայ Տեառն իւրոյ դողայր:

«Բարուք է, — ասէ, — մեզ աստ լինել»: Դարձեալ՝ հաճոյ թուեցաւ ընդ Մոսիսի եւ ընդ Եղիայի բնակել, քանզի բուրեաց հոտ դրախտին անմահութեան ի քիմս նորա, եւ ետես զփառս Նորա՝ փոխանակ անարգանաց Նորա, յոյժ ուրախ եղեալ՝ ասէր ըղձմամբ. «Բարուք է մեզ աստ լինել»: Իսկ նշանակաւ՝ այսպիսի է. զի ոմանք ասացին ոչ լինել յարութիւն, իսկ յորժամ ի ճշմարտիցն յանդիմանեցան, որք հաստատեցին ի բնական քննութենէ, թէ մարդոյս բնութիւն փոփոխական, քանզի յանէից ի յէութիւն եկաք եւ անտի-



անձնիշխան կամօք ի չարն խոտորնցաք, նոյնպէս եւ փոփոխմամբ դարձեալ ի բարին ելցուք, առ որս ասեն՝ թէ այդպիսի է, ապա եւ անտի դարձեալ ի չարն թաւալեսցուք, զորս ըմբերանէ այժմ առաքեալս թէ՛ «Բարևոք է մեզ աստ լինել», այսինքն՝ թէ զչարին փորձ առաք, այժմ զայն ախորժեմք, զի ի բարին յաւելուցուք եւ մի՛ դարձեալ ի չարն թեւակոխեսցուք:

Եթէ կամիս, արասցուք երիս փաղաւարս. մի՛ Քեզ, եւ մի՛ Մոսիսի, եւ մի՛ Եղիայի» (Մաթթ. ԺԷ. 4):

Զառաջինն ի մտի ունէր, զի մի՛ դարձեալ պատուհասակոծ լիցի ընդդիմանալովն. ասէ. «Եթէ կամիս, արասցուք երիս տաղաւարս»: Զի՞նչ խօսիս, ո՛վ Պետրէ, ո՞չ սակաւ ինչ յառաջ մեկնեցեր զԴա ի ծառայիցն, արդ զիս՞րդ միւսանգամ ընդ ծառայս Համարիս, եթէ՛ երեցունց ձեզ կազմեսցուք երիս տաղաւարս, եւ երեքին մեք սպասաւորեսցուք վեհիցդ: Բայց քանզի անկատարք էին յառաջ քան զխաչն, զի թէպէտ յայտնեաց նմա Հայր, այլ ո՛չ միշտ առ իւր ունէր զյայտնութիւնն, զի յաճէն տազնապեալ էր. ո՛չ միայն յայնմանէ, զոր ասացին, այլեւ յաճագին տեսնէն եւ ի սաստիկ լուսոյ ճառագայթիցն: Վասն որոյ Մարկոս եւ Ղուկաս ասեն թէ՛ «Ոչ գիտէր զինչ խօսէր» (Մարկ. Թ. 5, Ղուկ. Թ. 33): Արդ՝ թէպէտ այս այսպէս էր, սակայն գիտութիւն նա մեծ բարբառեցաւ ի տգիտութեան իւրում, զի երկից տաղաւարացն յօրինմամբ՝ զերկից Անձնաւորութեանցն ծանոյց զխորհուրդ, քանզի Երրորդութիւնն անդ յայտնեցաւ. Հայր՝ վկայութեամբն, եւ Որդի՝ պայծառակերպութեամբն, եւ Հոգի՝ ամպեղէն Հովանաւորութեամբն, որպէս զի ծանեան երեքն զերիս անձինս Աստուածութեանն, եւ պատմեսցեն զգալուստ Նորա, թէ վասն է՛ր եղեւ, միանգամայն եւ տաղաւար յարդարեսցեն Երրորդութեանն՝ զՀոգի, զմիտս եւ զմարմին: Իսկ այլք տաղաւար զերիս խորհուրդսն ասեն, զոր աւանդութեամբ պահեմք. զմին՝ յանուն Տեառն՝ զՄանդեանն, եւ զմինն՝ ի Մոսիսի՝ զԱղուհացսն, եւ զմինն՝ յԵղիայի՝ զԱյլակերպութեանն:

Եւ մինչդեռ նա խօսէր, ահա ամպ լուսաւոր հովանի եղեւ ի վերայ նոցա (Մաթթ. ԺԷ. 5):

Պետրոս ձեռագործ տաղաւար յօրինէր, իսկ Հայր ի վերուստ զանձեռագործն տնօրինէր, զի զիտասցէ, թէ ոչ ունի պէտս մարմ-

նական տաղաւարի: Բայց թէ ընդէ՞ր ամպօք երեւէր, եւ զի՞նչ լուսաւոր ամպն: Սովորութիւն է Աստուծոյ ամենայն ուրեք ամպօք երեւել՝ ըստ այնմ. «Ամպ եւ մեզ շուրջ է գ՛նովա» (Մաղմ. ՂԶ. 2), եւ՝ «Եղ յամպս զգնացս Իր» (հմմտ. Մաղմ. ՃԳ. 3), եւ՝ «Նարեայ ի վերայ թեթեւ ամպոյ» (Եւ. ԺԹ. 1). եւ ամպ մեծ ի կառսն ետես Եզեկիէլ (հմմտ. Եզեկ. Ա. 4), եւ Որդի մարդոյ գայ ընդ ամպս երկնից (հմմտ. Մաթթ. ԻԶ. 64), եթէ յաղագս անճառութեանն եւ թէ վասն ծննդական եւ սննդական գոլոյն, եւ զիմանալի անձրեւ իբրեւ զցօղ բժշկական շնորհելոյ, եւ եթէ յաղագս երազութեանն ամենայն ուրեք ժամանելոյ: Իսկ աստ լուսաւոր, զի յորժամ սպառնալիս ինչ բարբառէր, խաւարային ամպօք երեւէր՝ ըստ Դաւթի. «Նաւարային ջուրք միկեւ յամպս օրոց» (Մաղմ. ԺԷ. 12), եւ եմուտ Մոսէս յամպն եւ ի մէջն: Այլ աստ ոչ երկեցուցանել կամէր, այլ ուսուցանել, վասն այսորիկ ամպն՝ լուսաւոր, եւ ձայնն՝ ոչ սպառնական, այլ հեշտական: Եւ դարձեալ՝ ամպ լուսաւոր, որպէս ասացի, զՀոգին Սուրբ նշանակէ՛ առ ի լուսաւորել զմիտս նոցա եւ ծանուցանել, թէ՛ «Նա է լոյսն ճշմարիտ, որ լուսաւորէ զամենայն մարդ, որ գալոց է յաշխարհ» (հմմտ. Յովհ. Ա. 9), կամ զմարմինն Տեառն ամպ լուսաւոր՝ պայծառացեալ աստուածութեանն լուսով՝ ըստ երգոյն թէ՛ «Առ մահիճս մեր հովանաւոր» (հմմտ. Երգ Ա. 15), որ Հանգոյց եւ զովացոյց ի տապոյ մեղաց եւ ի ծանրութեանց բեռանց, որ գան յՕրէնս եւ ի Մարգարէս եւ յԱւետարանս:

Չայն եղեւ յամպոյն եւ ասէ. «Դա է Որդի Իմ սիրելի, ընդ որ հաճեցայ. Դմա՛ լուարուք» (Մաթթ. ԺԷ. 5):

Պէտքէս տեսութիւնս եւ ձայնի վկայութիւնս յաղագս Պետրոսի եղեւ, որ ընդ հակառակս չարչարանացն Տնառն ելանէր, վասն այսորիկ նախ ինքն փառաւորեցաւ, զի մի՛ կարծեսցեն զմահն ի հարկէ, կամ պակասութիւն լինել փառաց Նորին, եւ ապա մարգարէքն եկեալ՝ ի նոյն յորդորեցին, եւ այժմ մեծն քան զամենեսին եւ արժանին հաւատարմութեան վկայն Հայր ի վերուստ յամպոյն բարբառ արձակէր: Եւ թէ է՞ր «յամպոյն» ասացեալ է. քանզի ոչ ինքն խօսէր եւ ոչ Մոսէս եւ ոչ Եղիա, այլ Հայր յամպոյն, որպէս ասէ: Եւ թէ զի՞նչ էր բարբառն. «Դա է Որդի Իմ սիրելի...»: Նախ՝ զի հաւատասցեն աշակերտքն, թէ Նա է իսկապէս Որդին Աստուծոյ, մանաւանդ Պետրոս, զի զոր նախ դաւանեաց Հօր յայտնութեամբ, յետոյ ընդ երկրաւորացս զիջանէր թէ՛ «Բա՛ւ լիցի Քեզ,



Տէ՛ր» (Մաթթ. ԺԶ. 22), եւ զՏէրն ընդ ծառայան կարգէր ի համար տաղաւարացն, վասն որոյ խորհրդակից առնէ Հայր զխորհրդակիցսն Որդւոյ, զի ուսցին ի Հօրէ եւ մի՛ մոռացին զոր ցանկ լսէին յՈրդւոյ եւ մոռանային: Եւ երկրորդ՝ լսեցին զայս ձայն առաքեալքն, զի յորժամ քահանայապետն երգամաբ ուսանել կամէր թէ՛ «Դո՛ւ եւ Որդի Օրհնելոյն» (հմմտ. Մաթթ. ԺԴ. 61), եւ Պիղատոս հարցանէր թէ՛ «Դո՛ւ եւ թագաւորն» (Մաթթ. ԻԷ. 11), հաւանեցուցանէին առաքեալքն զժողովուրդն թէ՛ զայս բարբառ մեք իսկ լուաք, որ ընդ Նմա իսկ էաք ի սուրբ լերինն, թէ՛ դա է Որդի Իմ սիրելի ընտրեալ՝ սերտ եւ ստոյգ Որդի, ընդ որ հաճեցայ: Ոչ միայն որդի եւ սիրելի, այլեւ հաճեալ եմ ամենայնիւ ընդ գործս Նորա եւ հանգուցեալ եմ ի բանս Նորա յաղագս գուգական եւ համեմատ եւ միաբան գոլոյն, եւ զկամս Իմ առնելոյն: «Դմա՛ լուարուք». այսինքն՝ թէ ի խաչ կամի ելանել եւ թէ զինչ եւ արասցէ, մի՛ ինչ ընդդէմ դառնայցէք, զի որ Որդւոյ լսէ, զՀայր պատուէ:

«Դա է Որդի Իմ սիրելի, ընդ որ հաճեցայ. Դմա՛ լուարուք»: Դարձեալ՝ զսոյն վկայութիւն եւ երբեմն ի Յորդանիս հայրականն ձայն դաւանեաց (հմմտ. Մաթթ. Գ. 17, Մաթթ. Ա. 11), քանզի մինչեւ ցայն ժամ ծածուկ էր ի մարդկանէ, եւ հանդերձեալ էր յետ մկրտութեանն նշանս կատարել, վայելչաբար Հայր տայր զվկայութիւնն առ յապա խորհրդոյն Տեառն, թէ՛ հաճութեամբ Նորա եւ սիրով կատարի: Նաեւ յաղագս Յովհաննու եւս, զի զնա մեծ կարծէին՝ որդի գոլով քահանայապետի, հրաշիւք ծնեալ, առ որս առաքեցին. «Դո՛ւ եւ, որ գալոցն եւ, թէ այլում ակն կայցուք» (Մաթթ. ԺԱ. 3): Արդ՝ եկն բարբառն եւ էջ Հոգին, զի զՈրդին Իւր հռչակելի արասցէ. այսոցիկ աղագաւ անդր վկայեաց: Իսկ աստ զի կրկնեաց վասն դաւանութեանն Պետրոսի՝ ի հաստատութիւն եւ ընդդիմութեան խորհրդոց նորա ի լուծումն, որ հակաճառէր ի ճառս խաչին, իբրու թէ ասել առ նա՛ մի՛ հակառակիր, ո՛վ Պետրէ, ընդդէմ աշխարհի փրկութեան, եւ մի՛ ներհակ լինիր մահկանացու ազգիդ մարդկան կենդանութեան, քանզի ո՛չ դա առաւել քո իցէ սիրելի, քան թէ Իմ, զի Իմոյ ծոցոյս է ծնունդ եւ հայրական սրտիս է բղխումն: Եւ մի՛ զԻս նո՛ւաստ քան զԱբրահամ եւ առանց զթոյ ցուցանել, զի աւանիկ նա ի միածինն իւր եւ ի միամօր սիրելին եւ յաւետեացն ծնունդ ոչ խնայեաց վասն Իմ (հմմտ. Ծննդ. ԻԲ. 1-14). արդ՝ մի՛ յետնեցայց ի սիրոյ նորա, որ յառաջեաց պարտական արար զԻս. այդ ոչ է մտերմութիւն Իմ, այլ

թշնամութիւն: Եւ այլ սոյնպիսիս միով ձայնիւս բարբառեցաւ առ նա՛ արգելուլ զնա, որ խափանել խորհէր զհամաշխարհական փրկութիւնն:

Բայց դու տե՛ս ինձ աստանօր զճշմարիտ աստուածաբանութիւնս, զի յորժամ Հայր լիցի աստուածաբանօղ եւ յաղագս Որդւոյ աստուածաբանէ, զի՞նչ պարտ իցէ ասել. զի որպէս Որդի զՀայր յայտնեաց, այսպէս եւ զՈրդի՛ Հայր՝ ասելով. «Դա՛ է Որդի Իմ սիրելի», եւ ո՛չ «որ ի դմա». զաստուածութիւնն հանդերձ մարմնովն մի Որդի Իւր դաւանեաց եւ Որդի ասէ յաղագս համագոյութեանն, զի ի բնութեանէ Հօր է եւ սիրելի. քանզի սիրոյն է ծնունդ, յիրաւի սիրելի լինի, որպէս թէ ասէ՛ սիրեմ զԲանդ Իմ մարմնացեալ, որ է հաւատարիմ Որդի Իմ եւ Աստուած, «ընդ որ հաճեցայ»: Զի բազում եղեն որդիք սիրելիք շնորհօք կոչեցեալ՝ ըստ այնմ. «Որդի անդրանիկ է Իմ Իսրայել» (Ելից Դ. 22), եւ՝ «Ես սիրեցի զնա» (Ովսէ ԺԱ. 1), բայց յետոյ ասպտամբ գտան, եւ ոչ հաճեցաւ ի նոսա, իսկ ընդ սա, ասէ, հաճեցայ, այսինքն՝ ընդ կատարումն խորհրդոյն, որ ի Դմանէ փրկագործի ազգի մարդկան, մանաւանդ թէ ի Դա հաճեցաւ կամք Իմ, որ ի սկզբանն բարկացաւ յաղագս յանցանացն Ադամայ: «Դա է Որդի Իմ սիրելի»: Դարձեալ՝ զի բազում անգամ Ինքն զանձն Որդի Աստուծոյ ասաց, եւ հրէայքն վէմս առեալ քարկոծէին թէ՛ «Դու մարդ ես լուծից օրինացն եւ զանձն քո Աստուած առնես» (հմմտ. Յովհ. Ժ. 33), եկն ձայնն եւ վկայեաց թէ՛ Որդի է Իմ սիրելի եւ ո՛չ հակառակ, որպէս դուք կարծէք:

Իբրեւ լուան աշակերտքն, անկան ի վերայ երեսաց իւրեանց եւ երկեան յոյժ (Մաթթ. ԺԷ. 6):

Զիա՞րդ իբրեւ լուան զբարբառն, զարհուրեցան, քանզի աւանիկ եւ յառաջագոյն եկեալ էր այնպիսի բարբառ ի Յորդանան, որպէս ասացի: Եւ մերձ առ խաչին, յորժամ ժողովուրդքն ասէին, թէ որոտումն եղեւ, եւ ոչ ոք թմբբեցաւ, եւ աստ թէ՛ «անկան»: Նախ՝ զի յանապատին էին եւ յանկոխ տեղւոջ, եւ յամենայն կողմանց յաճախէին փոխումն երեսացն Տեառն եւ աստիկ լոյսն եւ ամպոյն տարածումն եւ ձայնն եւս, վասն որոյ անկան յերկիր, իսկ անդ ոչ այսչափ երկիւղ, այլ միայն ձայն, համայն եւ ժողովուրդքն առ ընթեր էին: Եւ երկրորդ՝ երկրպագութիւն տեսեանն եւ ձայնին մատուցին: Եւ երրորդ՝ զի մարմնական եւ եղական բնութիւնս ոչ



տանի գանձարմին եւ զարարչական դէմս Հօրն, զի թէ Դանիէլ ի տեսիլ հրեշտակին գուճատէր, եւ Եղեկիէլ ի վերայ երեսաց անկանէր (հմմտր Դան. Է. 28, Եզեկ. Բ. 1, Գ. 23), զի՞նչ ասես այժմ, քանզի Հայր հանդերձ Հոգւով եւ Որդւով անդ յայտնեալ երեւէր: Եւ չորրորդ՝ զի անկատարք էին՝ տունկք եղեալ ծննդեանն Յիսուսի Քրիստոսի, ի ձայնէն, որ յերկնից գայր օդոյ նման, զարհուրէին: Իսկ յորժամ ուռք եղեն որթոյ յարութեանն Տեառն, ոչ կրէին գայս, յորժամ ուժգին սաստիկ՝ հողմոյ նման հնչեաց ի վերնատունն Հոգին Սուրբ:

Եւ մաքուցեալ Յիսուս բուռն եհար զնոցանէ եւ ասէ. «Յոսրն կացէք եւ մի՛ երկնչիք» (Մաթթ. ԺԷ. 7):

Ձի մի՛ կարի ահն զարհուրեցուցանիցէ, եւ յիշատակ իրացն ի մտացն շարժեսցին, վասն այնորիկ փարատէ գերկիւղն արդեամբք եւ բանիւ, քանզի զոր ձայն Հօր ընկէց ի խոնարհ, ձեռն Որդւոյ կանգնեաց կացոյց ի հաստատութեան: Իսկ Ղուկաս ասէ, թէ Պետրոս եւ որ ընդ նմայն էին՝ ծանրացեալք իբր ի քնոյ (հմմտր. Ղուկ. Թ. 32) կամ ի քաղցր եւ յանուշահոտ բուրմանէն զմայլեալք կամ ի տեսլենէն պակուցեալք եղեն, զի յորում ժամու պարտ էր հսկել, նոքա պակեան, որով յայտ եղեւ, թէ ոչ կարեն հանդարտել տեսութեանն նախքան զչարչարանօք կրթելն իբր խեցեղէն անօթ քրայիւ, զի չարչարանացն կցորդ եւ ապա փառացն հաղորդ լիցին, վասն այսորիկ ասաց թէ՛ «մի՛ երկնչիք»: Իսկ նշանակաւ՝ անկումն նոցա զանկումն Ազամայ ցուցանէ, որ ի Հօր ձայնէն անկաւ թէ՛ «Յորում ատր ուրիցէք, մահու մեռալիցիք» (Ծննդ. Բ. 17), իսկ Որդի՛ Ձեռն Հօր, բուռն հարեալ զմարմին նորա, դարձեալ վերստին կանգնեաց:

Ամբարձին գազս իւրեանց եւ ոչ զոք րեսին, բայց միայն զՅիսուս (Մաթթ. ԺԷ. 8):

Ձի որպէս ի Յորդանան զատեաց որոշեաց զՆա ի Յովհաննէ՛ աղաւնակերպ Հոգւոյն իջումն, այսպէս եւ աստ՝ միայնութիւնն, զի յայտ լիցի, թէ ոչ վասն միոյ ուրուք յերկնից եկն բարբառն, այլ վասն միոյն Քրիստոսի: Եւ դարձեալ՝ անհետ եղեն Մոսէս եւ Եղիա, զի Հոգին, որ ած զԵղիա եւ կանգնեաց կացոյց զՄոսէս, յետ վճարելոյ բանից նոցա յափշտակեաց զնոսա ի նոյն տեղի, զի ոչ էր պիտոյ, թէ ուսցին վասն Որդւոյ՝ զոր կանխաւ ստուգեալ էին, այլ զի ուսցին աշակերտքն, որ ոչ գիտէին, թէ վասն է՛ր եղեւ զայլուստ

Նորա: Եւ դարձեալ՝ զնացին նոքա, զի մի՛ զբաղնուցուն ի բանս ճառից նոցա, այլ ուշ ունիցին բարբառոյն Հօր, եւ մի՛ խառնեսցին խօսք Տեառն ընդ ծառայիցն եւ պղտորեսցին միտք նոցա, եւ մոռացին որ վասն ելիցն յերուսաղէմ ի Հօրէ եւ ի մարգարէիցն ասացան, վասն այսորիկ մնաց միայն Յիսուս, զի լցցէ զասացեալն նոցա:

Եւ մինչդեռ իջանէին ի լեռնէ անփի, պափուիրեաց նոցա Յիսուս եւ ասէ. «Մի՛ ումեք ասիցէք զրեսիլդ գայդ, մինչեւ Որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ» (Մաթթ. ԺԷ. 9):

Ձի թէ սաստեաց աշակերտացն թէ՛ մի՛ ումեք ասիցէք թէ նա է Քրիստոսն, զի՞նչ ասիցես զայնպիսի չքնաղ երեւումն առ այն ժամ ոչ յայտնել: Ձի որչափ մեծամեծս ոք իմանայր կամ պատմէր զՆմանէ, այնչափ առաւել դժուարընկալ լինէր յայնժամ բազմաց յաղագս խաչին զայթաղողութեան, իսկ յորժամ յարիցէ եւ Հոգւոյն արժանաւորեսցին, այնուհետեւ ընդունելի լինէր եւ քան զհնչիւն փողոյ՝ իրքն աղաղակէին: Եւ դարձեալ՝ գիտէր, թէ ոչ հաւատան նոցա, այլ իբրեւ զմոլեկան համարին թէ՛ ուստի՞ գիտէք դուք զԵղիա, եւ ոք ի վերայ գերեզմանին Մոսիսի ոչ եկաց, եւ լինէր այնուհետեւ հայհոյութիւն, վասն այնորիկ ասաց՝ մնացէք դուք մինչեւ ընդունիցիք զօրութիւն կացուցանել զմեռեալս, եւ պատահեսցին գերեզմանք, եւ ելցեն արտաքս արդարքն հին եւ նոր եւ եկեսցեն յերուսաղէմ քաղաք Թագաւորին մեծի, ապա այնուհետեւ հաւատան եւ նոքա, թէ Այն, որ յարոյց զնոսա, նոյն յարոյց եւ զՄոսէս. եւ թէ մեռեալք լուան եւ եկին, ո՛րչափ կենդանին Եղիա: Ձորս խրատէ պահել ո՛չ միշտ, այլ իւրում ժամանակին յայտնութեանն եւ մի՛ տարածամ քարոզել զանուն Նորա, զի այս ժամանակ չարչարանաց է, եւ ապա՛ յայտնի տէրութիւն Նորա յարութեամբն, որով եւ յարութեան խորհրդոյն դիւրաւ հաւատասցեն:

Արդ՝ երանելի են առաքեալքն, մանաւանդ երեքին, որք այսպիսի գեղապանծ լուսոյն մաքրութեամբ վայելչացան եւ ընդ ամպովն մտեալ յարկակիցք եղեն Տեառն, եւ զհամօրէն յարութեանն խորհուրդ աստէն վարժեցան: Այլ թէ կամիմք, եւ մե՛ք տեսանեմք զՔրիստոս. ո՛չ որպէս նոքա յայնժամ, այլ ե՛ւս լուսաւորագոյն, զի անդ թերաքամ եւ կիսաբաց արար զպայծառութիւնն՝ խնայելով ի նոսա, իսկ յետոյ ակներեւ յայտնի եկեսցէ, ո՛չ միայն Մոսիսի եւ



Եղիայի, այլեւ անեղրական փառօքն Հօր եւ Հրեշտակօք բազմօք, ո՛չ հովանաւոր ամպով զլխածածկեալ երեւիցի, այլ երկինք իսկ բոլորովին գալարին: Զոր օրինակ դատաւորք, յորժամ հրապարակաւ ատեան առնիցեն սպասաւորօքն, զսրահակսն ի բաց ձգեն յերեսացն, զի ամենեքեան տեսցեն, նոյնպէս եւ Նա յորժամ յաթոռ դատողական նստցի, ամենայն բնութիւնք մարդկան ի Նա հայեացին, եւ ինքն անձամբ առնէ պատասխանի նոցին՝ ցոմանս ասելով. «Եկայք, օրինեալք Հօր Իմոյ, ժառանգե[ցեք]...», եւ կիտոցն թէ՛ «Երթայք ի հուրն, որ պարբասրեալ է սաբանայի եւ հրեշտակաց նորա» (Մաթթ. ԻԵ. 34, 41), յորմէ փրկեսցէ զհաւատացեալս անուան Իւրոյ Քրիստոսն մեր եւ Աստուած եւ արժանացուցէ աջակողմեան դասուն վայելել ի ճշմարիտ երեւումն փառաց աստուածութեան Իւրոյ, որում վայել է ամենայն փառք այժմ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Նարցին ցՆա աշակերտքն եւ ասեն. «Զիա՛րդ դպիրքն ասեն, եթէ Եղիայի նախ պարտ է զալ» (Մաթթ. ԺԷ. 10):

Զայս ոչ թէ ի Գրոց գիտէին, այլ տարածեալ էր բանն ի մէջ ժողովրդեանն, որպէս եւ Քրիստոսի զալստեանն համբաւ, վասն որոյ եւ սամարացին ասէր թէ՛ «Մեսիա գալոց է. յորժամ եկեսցէ նա, պարմեսցէ մեզ զամենայն» (Յովհ. Դ. 25), եւ նոքա զՅովհաննէս հարցանէին. «Միթէ դու Եղիա՛ ես, կամ մարգարէն» (հմմտ. Յովհ. Ա. 21). քանզի համբաւն երկոցուցս գոյր, եւ մեկնութիւնն ոչ ի դէպ ինչ ելանէր: Վասն զի Գիրք երկու գալուստ զՔրիստոսի ասեն, մի՛ զառաջինն, եւ միւս՝ զերկրորդն, որպէս Պօղոս ասէ զառաջնոյն թէ՛ «Երեսցաւ շնորհն Աստուծոյ փրկիչ ամենայն մարդկան» (Տիմ. Բ. 11)՝ որ խրատէն զմեզ, եւ զերկրորդն թէ՛ «Ակն կայցոք երանելի յուսոյն եւ յայրնութեան փառաց Միածնին Աստուծոյ եւ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Տիմ. Բ. 13): Նմանապէս եւ մարգարէքն գուշակէին, որպէս Դաւիթ զառաջին գալստենէն թէ՛ «Իջցէ որպէս զանձրեւ ի վերայ գեղման» (Սաղմ. ՆԱ. 6), իսկ զերկրորդն՝ «Աստուած աստուծոց Տէր խօսեցաւ», «կոչեաց զերկինս ի վերուստ եւ զերկիր՝ ի դարել գծողովորդ Իւր», եւ «հուր առաջի բորբոքեսցի, եւ լերինք որպէս մոմ հալեսցին» (հմմտ. Սաղմ. ԽԹ. 1, 4, 3): Այսպէս եւ Դանիէլ զտնտեսութեանն թէ՛ «Վէմն հաւրաւ առանց ձեռին եւ փշրեաց զպարկերն, եւ եղեւ լեռն մեծ եւ ելից ամենայն երկիր» (հմմտ. Դան. Բ. 34–35), իսկ զդատաստանին թէ՛ «Իբր Որդի մարդոյ գայր ընդ ամպս երկնից», եւ «գեպք հրոյ յորդեալ ելանեն առաջի Նորա» (Դան. Է. 13, 10):

Եւ յարմարեալ ընդ ասացեալս՝ ասեն զՅովհաննէս առաջնոյն կարապետ, որպէս Եսայի ասէ. «Զայն բարբառոյ յանապարհ, պարբասր արարէք զճանապարհս Տեառն եւ ուղիղ արարէք զշաւիղս նորա» (Ես. Խ 3), իսկ զԵղիա՛ երկրորդին՝ ըստ Մաղաքիայ թէ՛ «Ահա առաքեմ առ ձեզ զԵղիա Թեգրացի..., զուցէ եկեալ հարկանիցեմ զերկիր միանգամայն» (Մաղաք. Դ. 5–6): Արդ՝ զայս ընդ միմեանս խառնեալ դպիրքն՝ թիւրէին զմիտս ժողովրդեանն, զի զերկրորդ գալստենէն յուշ առնէին եւ ասէին, եթէ սա է Քրիստոսն, ապա՝ «Եղիայի նախ պարտ է զալ»: Յայս սակս յորժամ իջանէին ի լեռնէն՝ տեսեալ զփառսն Տեառն եւ զԵղիա ընդ Նմին երեւեալ փառօք, ի միտս եկեալ դպրացն բանից՝ հարցին, զի ուսցին, թէ սուտ ուսուցանեն զժողովուրդն եւ թակարդ յօդեն ոչ հաւատալ ի Քրիստոս, եթէ ճշմարիտ այնպէս իցէ իրն:

Պարասխանի եպ Յիսուս եւ ասէ ցնոսա. «Եղիա գա՛յ եւ հաստատեսցէ զամենայն (Մաթթ. ԺԷ. 11):

Ո՛չ ասաց, թէ սուտ ասեն դպիրքն, քանզի մարգարէն զգալուստ նորա ասացեալ էր, այլ թէ՛ զայ յիւրում ժամանակին՝ նախ քան զերկրորդ գալուստն, եւ հաստատեսցէ զամենայն ասացեալս ի մարգարէէն, «զսիրտս հարց առ որդիս» (Մաղ. Դ. 6), այսինքն՝ զմիտս հրէից հարց՝ առ քարոզութիւնս որդւոց առաքելոցն՝ հաւատալ ի Քրիստոս, զի մի՛ հարկանիցին ի գալստենէ նորա, որպէս ետես Յովհաննէս զհարիւր եւ զքառասուն եւ չորս հազարսն յազգէն հրէից կնքեալս վասն Քրիստոսի (հմմտ. Յայր. Է. 4, ԺԴ. 1-5)՝ վարդապետութեամբն Եղիայի, կամ որք ի սուտ նշանաց դերաքրիստոսին դրդուեալք՝ գալստեամբն Եղիայի դարձեալ հաստատին:

Այլ ասեմ ձեզ, զի Եղիա եկեա՛լ իսկ է (Մաթթ. ԺԷ. 12):

Զի՞նչ է այս, զի ասաց թէ «գայ», եւ այժմ թէ՛ «եկեալ իսկ է»: Ոչինչ գոյ աստ ընդդիմութիւն, քանզի «գայ»՝ զմարգարէին ասաց, իսկ թէ՛ «եկեալ է»՝ զԻւրն, որպէս թէ ասէ՛ ըստ գալստեանս կարգի եւ գալուստ մարգարէիցն եղիցի. զի թէ զառաջին գալստեանս սպասաւորն խնդրես, նա եկեալ իսկ է, այս է՝ Յովհաննէս, իսկ թէ զերկրորդին, յորժամ այն գալուստն մերձի, եւ Թեգրացին եկեսցէ: Բայց թէ ընդէ՞ր զՅովհաննէս Եղիա ասաց, թէ եկեալ իսկ է: Նախ՝ զի զնոյն վարս ունէր յանապատի բնակելով եւ մաշկեկաւ շատանալով որպէս Եղիա: Եւ երկրորդ՝ զի զնոյն գործ ունէր սպասա-



ւորութեան, զի որպէս նա երկրորդին լինելոց է կարապետ, նոյնպէս եւ սա առաջնոյն եղեւ՝ համարձակ գոլով իբրեւ զնա: Վասն այսորիկ Եղիա կոչեաց եւ միաբան նմին ծանոյց՝ ըստ հրեշտակին թէ՛ «Եկեսցէ զօրութեամբ հոգևով Եղիայի» (Ղուկ. Ա. 17), այսինքն՝ ո՛չ բնութեամբ Եղիայի, այլ զօրութեամբ՝ շնորհաց նորին ընդունակութեամբ, վասն այսորիկ ասաց թէ՛ «Եղիա եկեալ իսկ է», եւ կամ յաղագս մերձաւոր գոլոյ երկրորդի գալստեանն, յորում Եղիա գայցէ, ասաց զայս:

Եւ ո՛չ ծանեան զնա, այլ արարին ընդ նա՝ զոր ինչ կամեցան (Մաթթ. ԺԷ. 12):

Արդ՝ եթէ ոչ ծանեան, ապա ուրեմն ոչ են մեղադրելիք, քանզի թէպէտ ոչ ծանեան զնա Եղիա գոլ եւ հաւասար նորին սպասաւոր առաջին գալստեան Փրկչին, սակայն գիտէին իսկ, զի աւետեաց էր ծնունդ եւ անդատին յորովայնէ Հոգևով լցեալ եւ յանապատի սնեալ եւ ի փափկութեանց կենցաղոյս ամենեւին հրաժարեալ, զոր պարտ էր ըստ այսմ պատուել: Իսկ նոքա ոչ միայն ոչ պատուեցին, այլ արարին ընդ նմա զոր ինչ կամեցան, որպէս եւ ասէ. վասն այսորիկ են աններելիք: Եւ զի՞նչ արարին ընդ նմա. ի բանդ արկին, թշնամանեցին, սպանին, բերին զգլուխն սկտեղք առաջի ի բազմականսն, քանզի զայս կամէին՝ բառնալ զյանդիմանիչն, որպէս Աքաաբ եւ Եզաբէլ՝ զԵղիա, զոր խանգարիչ կոչէին (հմմտ. Գ. Թագ. ԺԸ. 17):

Նոյնպէս եւ Որդի մարդոյ չարչարելոց է ի նոցանէ (Մաթթ. ԺԷ. 12):

Յորժամ ասաց զՅովհաննուսն, յարէ ի նոյն եւ զԻւրն, զի ցուցցէ, թէ յանիրաւս չարչարի՝ զոր ինչ կրէ ի հրէից, որպէս Յովհաննէս, որպէս զի մխիթարեսցին. միանգամայն եւ զկամաւորն ցուցանէ, զի ոչ ասաց թէ՛ զոր ինչ արարին ընդ նմա՝ առնեն եւ ընդ Իս, այլ թէ՛ չարչարելոց է ի նոցանէ: Դարձեալ՝ ուսուցանէ զնոսա մի՛ վճատիլ յորժամ վշտաց պատահեսցին, զի թէ Յովհաննէս սպանաւ եւ Տէրն Յովհաննուսն ի նոցանէ չարչարելոց է, ապա ուրեմն ոչինչ մեծ են իրքդ, յորժամ մեզ հաւասար վշտանայցէք: Նաեւ այսու զխակամտութիւն եւ զխստասրտութիւն ազգին նշանակէ, զի այնպիսի ժպիրճք էին, մինչ զի զարդարսն առանց վնասու բազում մահուց պարտաւորս առնէին՝ ըստ մարգարէին (հմմտ. Մաղմ. ՂԳ. 21):

Յայնժամ ի միտ առին աշակերպրն, թէ վասն Յովհաննու Մկրտչի՝ ասաց ցնոսա (Մաթթ. ԺԷ. 13):

Թէպէտ դպիրքն ոչ ասէին զայս, եւ ոչ Գիրք յայտնապէս, այլ քանզի մտադիրք ասացելոցն եղեն, վաղվաղակի ի միտ առին, քանզի ի վաղուց հետէ լուեալ էին, թէ Եղիա գալոց է, եւ Քրիստոս ասաց, թէ եկն: Նոքա հաւանեալք յելից իրացն՝ ծանեան եւ ի միտ առին, այսինքն է՝ հաւատացին, թէ ճշմարիտ այնպէս է, որպէս ասէ, քանզի կարի իմն հաւանական միտս ունէին առաքեալքն: Զի անհաւանութիւնն յերկուց իրաց զոյանայ՝ կամ ի տգիտութենէ, կամ ի վէս եւ յամբարտաւան բարուց, զոր շնորհօքն Աստուծոյ ուղղեալ էին զայս. ընդդէմ հպարտութեանն զհեզութիւնն եւ զխոնարհութիւնն՝ ի Տեառնէ վարժեալք, եւ զտգիտութիւնն՝ ճշմարիտ ուսմանն հպատակութեամբ: Վասն այսորիկ յորժամ լուան զուղիղն, աշակերտեցան յօժարութեամբ՝ ի յանդիմանութիւն եւ յամօթ հակառակողացն ուղիղ վարդապետութեան:

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՅԻ**

(Տինգերորդ հապոր, գլուխ Դ.)

Եւ յեւր վեց աւուր առնու Յիսուս (Մաթթ. ԺԷ. 1)

Ղուկաս յետ Ը. աւուր ասէ (հմմտ. Ղուկ. Թ. 28) եւ չեն հակառակ այլ յոյժ միաբան: Ղուկաս զԲ. պատկեր օրն յորում խոստացաւ բանիւ եւ յորում ի լեառն եհան, ի թիւ առնու՝ լինի Ը. օր: Եւ Մատթէոս եւ Մարկոս զԲ. օրն չառնուն ի համար, այլ զմիջոցի Զ.ն: Դարձեալ Մատթէոս զառաջին գալուստն նշանակէ, որ ի վեց դարուն եւ Ղուկաս զերկրորդն, որ ի Ը. դարուն: Դարձեալ Ադամ ստեղծաւ ի պատկերն Աստուծոյ ի վեցերորդ աւուրն ուրբաթու եւ ի նոյն օրին ի Զ. ժամն կորոյս զփառս խաբէութեամբ չարին իսկ Տէր մեր ի վեց դարուն առնու զմարմինն Ադամայ եւ ի Զ. աւուր ուրբաթուն եւ ի Զ. ժամուն ի խաչ բարձրանայ վասն փառացն Ադամայ: Իսկ այսօր եցոյց միայն զփառս նորա, թէ զայս կորոյս Ադամ: Եւ ես եկեալ վերստին տամ ծննդոց նորա որք պահեն զպատուականս իմ: Իսկ Ը. աւուրն, որ ասէ Ղուկաս. նախ՝ ցուցանէ զօրն ի կիրակէ յորում ել ի Թարօր: Երկրորդ՝ Ը. օրն է յարութիւնն, որ ի կիրակէն եղեւ: Երրորդ՝ միւսանգամ գալուստն եւ յարութիւնն մեր՝ այսինքն՝ Ը. դարն է լինելոց: Չորրորդ՝ զի



հինն եւթամբ վարէր: Է. շաբաթու եւ է. տօնիւ եւ է. պատարագաւ: Իսկ Տէր մեր փոխեաց <ի> յութ. զխորհուրդ եւթանցն, զի Ը. օրն տօն եմք տերունի, որպէս Մննդեան եւ Յարութեան: Եւ ութերորդ դար ունակն ունիմք: Ըստ Սողոմոնի տուր բաժինս է. անցս այլ եւ Ը.իցս: Իսկ թէ ոք հարցանէ վասն է՞ր առաջին գալուստն ի վեց դարն եղեւ եւ երկրորդն՝ <ի> յութն: Ասեմք եթէ պատճառս վեց դարուն աստ ցուցաւ: Այլ <ի> յութն գայ: Նախ ըստ կարգի, զի Զ. աւուրբք ստեղծ զարարածս եւ յէ. հանգեաւ եւ յութն նորոգեցէ: Երկրորդ՝ ըստ թուոյ զի Դ. են տարերք եւ չորիւք ապականեցան, վասն որոյ յութերորդին ազատէ յապականութեանց: Երրորդ՝ ըստ պատուոց եւ զմարմինս երկրորդ գալատեամբն:

Հարց. Վասն է՞ր միայն զերեք առաքեալս զՊետրոս եւ զՅակոբոս եւ զՅովհաննէս հանէ ի լեառն:

Պատասխանի. Այսմ դնեն Ը. պատճառս: Նախ՝ զի նոքա ազնիւ եւ պայծառ էին տեսութեամբ քան զայլս: Որպէս քան զաչք առնուլ տեսանէ: Վասն այն զպայծառն տեսին: Երկրորդ՝ զի Պետրոս գլուխ էր առաքելոցն եւ Յակոբոս գլուխ եղեւ մարտիրոսութեամբ եւ Յովհաննէս գլուխ էր յաւետարանիչսն, վասն այն գլխաւորացն ցուցանէ: Երրորդ՝ Պետրոս առաւել սիրէր զՔրիստոս եւ Յովհաննէս սիրելի աշակերտ կոչեցաւ եւ Յակոբոս ի պատասխանոյն յայտնէ, որ զբաժակ ընպել խոստացաւ եւ զործով կատարեաց: Չորրորդ՝ ասէ սուրբն Եփրեմ. «Անարժան» էր Յուդայ արքայութեանն Աստուծոյ եւ թէ զնայ միայն էր թաղեալ, յիրաւի լինէր մատնիչ, վասն նորա եւ զայլսն եթող: Եւ յայսմանէ ուսանիմք, զի առաջնոցն պարտ է զառաջին խորհուրդս զիտել եւ այլոցն նուազ, եւ յանարժանիցն ծածկեալ: Հինգերորդ՝ սոքա են երեք սիւնք եկեղեցւոյ, յորոյ վերա հանգչի սուրբ երրորդութիւն: Եհան ի լեառն, զի վկայեցեն սուրբ երրորդութեանն: Վեցերորդ՝ երեքեան սոքա առանձնաբար տեսանելոյ էին զխոնարհութեամբ աղօթելն ի գիշերի ուրբաթին, այժմ տեսին զպայծառութիւնն, զի մի տկարացին յայնժամ: Եւթներորդ՝ Պետրոս սրտիւն հաւատաց եւ լեզուաւ դաւանեաց, պարտ էր աչօք տեսանել եւ ականջով լսել, զի մեզ վկայեցէ: Եւ Յովհաննէս ասէ. «Տեսայք զփառս նորա, զփառս իբրեւ զմիաձնի»: Եւ Յակոբոս արեամբ վկայեաց, թէ Աստուած է Քրիստոս, վասն որոյ մեռաւ: Ութերորդ՝ Տէր մեր ի յերկրէ կամեցաւ զերկնաւոր կարգն յօրինել: Զի անդ Գ. դասքն առաջին, անընդմիջաբար առնուեն յԱստուծոյ

զկոյս զիտութեանն եւ տան ի միջինս եւ նոքա ի վերջինս: Այսպէս երեք յաշակերտացն ականատես եղեն եւ այլոցն ուսուցին: Պետրոս վէմն եւ հիմն եկեղեցւոյ որպէս աթոռքն: Յակոբոս հանձարեղ, որպէս Քերովբէքն եւ սիրելի աշակերտն ըստ Աերովբէից դասուն: Ըստ չափաւ իւրեանց տեսողք են խորոցն Աստուծոյ:

Հարց. Վասն է՞ր ի լեառն հանէ եւ ցուցանէ զփառս իւր:

Պատասխանի. Վասն Ժ. պատճառի. Նախ՝ զի բարձացեալ էին մտօք եւ զաչս ի լերինս համբարձեալ ըստ մարգարէին՝ պարտ էր եւ մարմնով ի լեառն տանիլ (Խմմյր Սաղմ. ԽԲ. 3, Զաք. Գ. 9): Երկրորդ՝ զի հարքն առաջին ի լերին տեսանէին զԱստուած, որպէս Աբրահամ, Մովսէս, Եղիայ, Սողոմոն եւ այլք: Եւ ասի ի լեառն ցուցանէ, թէ նոյն Աստուածն է: Երրորդ՝ զՄովսէս ի լեառն եհան եւ գրեաց զօրէնս հին: Պարտ էր եւ զառաքեալսն ի լեառն հանել եւ գրել զօրէնս ոչ ի տախտակս, քարեղէն այլ ի բանական սրտի ըստ նմա, տաց զօրէնս իմ ի սիրտ նոցա եւ ի միտս նոցա գրեցից: Չորրորդ՝ ի լեառն եհան, զի ճշմարտեցէ զմեկնութիւն քարին, որ ի լեռնէ առաւ եւ եղաւ հիմն եկեղեցւոյ: Հինգերորդ՝ լեառն բարձր նշանակէ զնորոյս բարձրութիւն ի վերայ հնոյն, զի անդ մարմնական օրէնք եւ աստ հոգեկան, անդ Մովսիսիւ, աստ՝ Քրիստոսիւ, այն անցաւոր եւ այս մշտնջենաւոր, անդ՝ ամպ ու ծուխ, եւ աստ՝ ամպ լուսաւոր, անդ երեսքն Մովսիսի լուսաւորեալ յայլմէ եւ աստ յինքենք յԱստուածութեանէն իւրմէ: Վեցերորդ՝ եհան ի լեառն եւ եցոյց նոցա առանձին եւ չքնաղ տեսութիւն այսինքն՝ զարքայութիւնն երկնից, զի չէին տեսեալ մարդիկ, յորմէ հետէ զրկեցաւ Ադամ, վասն որոյն բարձր եւ առանձին ասէ: Եւթներորդ՝ ցուցանէ առ մեզ, թէ արքայութիւնն ոչ է յերկրի, այլ՝ յերկինս: Ութերորդ՝ թէ ի կեանս մարմնոյ ոչ է յերկրի, այլ յետ մահու ի հանդերձեալն: Իններորդ՝ ընտրէ զաշակերտս եւ յընտրեալ լեառն հանէ, զի ցուցցէ, թէ առաքինութիւնն ոչ է խոտելոցն, այլ ընտրելոցն, որք բարձրանան հոգւովք եւ գործովք: Տասներորդ՝ ցուցանէ որպէս Ադամաւ ի բարձ գրախտէն անկաք: Սոյնպէս Քրիստոսիւ բարձրացաք ոչ ի դրախտն Ադամայ, այլ ի վերին արքայութիւնն երկնից:

Հարց. Որ է լեառն բարձր:

Պատասխանի. Ոմանք սուրբ լեառն զՍիոն ասեն, զի Թաբօրն ընտրեալ եւ սուրբ թարքմանի եւ ոմանք՝ զՍինեայ եւ ոմանք՝ զդրախտն: Եւ ոչ է ընդունելի: Նախ՝ զի դրախտն խաչիւն բացաւ



աւագակին: Երկրորդ՝ զի հին օրէնքն ի Սինեայ տուաւ: Երրորդ՝ զի յարութիւն Քրիստոսի ի Սիոն եղեւ: Իսկ այս ի Թաբօր, վասն Դ. պատճառի: Նախ՝ ըստ վկայութեանն Դաւթի՝ «Թաբօր եւ Հերմոն յանուն քո ցնծասցեն» (սին Սաղմ. 2Ը. 13): Երկրորդ՝ զի Մելքիսէթ ի յօրինակին աստ քահանայացաւ: Երրորդ՝ զի Մովսէս երկրին աւետեաց ցանկացաւ: Չորրորդ՝ զարագութիւնն ի վերայ ծովու եւ զանչարչարութիւնն յարտ եւ անլերինն արար, պարտ էր եւ պայծառութիւնն աստ ցուցանել:

Հարց. Զի՞նչ է բարձր եւ առածինն:

Պատասխանի. Կամ վասն լերինն ասէ, կամ վասն առաքելոցն, որք առանձնացան:

ՎԱՍՆ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆՆ

Հարց. Վասն է՞ր ասէ. «Այլակերպեալ», զի առաջօ՞ք երեւի:

Պատասխանի. Ո՛չ է առ աչօք, այլ գոյութեամբ: Եւ յայտ է ի Զ. իրաց: Նախ՝ զի որ յառաջն ճշմարիտ եւ թանձր մարմինն էր, այժմ ոչ լինի առ աչօք: Երկրորդ՝ զի յետ յարութեանն նոյնպէս երեւէր միշտ: Երրորդ՝ Մովսէս պայծառացաւ եւ ոչ էր առ աչօք: Չորրորդ՝ օրն պայծառանայ լուսով եւ չէ՛ առ աչօք: Վեցերորդ՝ առաքեալ ասէ. «Ոչ թէ պաճուճեալ ինչ առասպելաց ցուցաք ձեզ» (սինս. Բ. Պետր. Ա. 16) եւ այլն:

Հարց. Վասն է՞ր պայծառացաւ:

Պատասխանի. Ասեն վարդապետք Ժ. պատճառս: Նախ՝ զի զարքայութիւնն խոստացաւ տեսանել նոցա, եւ թէ թողեալ էր յուսով՝ տրտմութիւն էր նոցա: Այլ ի մերձակայս եցոյց եւ լցոյց զնոսա ուրախութեամբ: Երկրորդ՝ ասաց վասն չարչարանաց իւրոց եւ երկեան առաքեալքն այժմ եցոյց զաստուածութիւնն իւր, թէ Աստուած է ի վեր քան զչարաչարանս, այլ կամաւ վասն փրկութեան մարդկան մեռանի: Երրորդ՝ խոստացաւ թէ զալոց է որդի մարդոյ փառօք հօր իւրոյ այժմ եցոյց զփառս հայրենի, թէ այսու կերպարանօք գամ: Չորրորդ՝ դաւանեաց զՆայ Պետրոս՝ որդի Աստուծոյ, այժմ եցոյց, զի տեսցեն եւ լուիցեն զվկայութիւնն հօր: Հինգերորդ՝ ասաց նախ՝ Ես լոյս յաշխարհի եկի այժմ պայծառանայ լուսով, զի ցուցցէ թէ նա է հալածիչ խաւարի անգիտութեան մեղաց եւ կռապաշտութեան: Վեցերորդ՝ ասաց, որ ետես

զիս՝ ետես զՀայր, այժմ թէ այսու տեսեամբս միաւորեմ ընդ Հօր եւ հաւասար Նմա: Եւ թներորդ՝ այժմ զեղեցկացաւ տեսեամբ քան զամենայն որդիս մարդկան, ըստ Դաւթայ (սինս. Սաղմ. ԽԴ. 3), զի յորժամ ի խաչին նուազեսցի, մի երկմտեսցեն ըստ Եսայեայ: Ու թերորդ՝ զի եւ յետ յարութեանն այսպէս տեսանելոց էին, եցոյց աստ զի գիտասցեն, թէ ստոյգ նա՛ է եւ ո՛չ այլ ոք: Վասն որոյ որք ոչ էին տեսեալ, ասէ, ոմանք յերկուցան: Իններորդ՝ ասաց փայլեսցեն արդարքն իբրեւ եւ զարեգակն յարքայութեանն, այժմ զօրինակն եցոյց թէ սոյնպէս լինելոց են: Տասներորդ՝ տարակոյս էր բնութիւնս վասն փառացն Ադամայ, թէ զիարդ զգեհումք, եցոյց յինքեան, թէ այս էր առաջին փառքն Ադամայ, զոր կորոյս մեղօք եւ ես որդի նորա զպարտսն վճարեցի եւ զգեցուցի բնութեանս, որպէս առակին ասաց՝ «Նանէք ի դմանէ զպարսմուճանն եւ զառաջինն զգեցուցէք» (սինս Դով. ԺԵ. 22): Եւ յայտ է բանս ընդդէմ նոցա, որք յետ յարութեանն ասեն՝ փոփոխել զմարմին Փրկչին եւ եղեալ անապական եւ լուսաւոր եւ փառաւոր: Վասն զի մեր մարմինս, որ ապականացու է, փոխիմք եւ առնումք զԴ. օժիտք յարութեանն: Նախ անկրական եւ անապական: Երկրորդ՝ արագ եւ թեթեւ: Երրորդ՝ նուրբ եւ անընդդիմահար: Չորրորդ՝ պայծառ եւ մաքուր: Արդ, զսոսայ եցոյց Տէր մեր ի մարմնի իւրում յառաջ քան զխաչն: Զանապականութիւնն ի Վերնատունն, ուր բաշխեաց զմարմինն անապական: Եւ յարտ եւ անլերինն, զի ո՛չ կրեաց կիրք: Եւ զարագութիւնն ի վերա ծովուն, թեթեւացեալ եւ զնրբութիւնն ի կուսէ ծնեալ: Եւ պայծառակերպութիւնն ի լերինն Թաբօր: Եւ թէ ոք ասիցէ վասն է՞ր ասեմք յետ յարութեանն փառաւորեալ մարմնով: Ասեմք եթէ այսոսիկ ծածկապէս ունէր ի հոգին, անդստին յուրթենէ յարգանդին, այլ յետ յարութեանն երեւեցոյց ի մարմինն, որպէս ասէր առ աշակերտսն. «Շօշափեցէք զիս եւ փեսէք, զի ես նոյն եմ եւ ոչ փոխեալ»:

ՎԱՍՆ ՀԱՆԴԵՐՁԻ

Հարց. Վասն է՞ր հանդերձն պայծառացաւ, զի յարութեանն ո՛չ է հանդերձ:

Պատասխանի. Հանդերձն Քրիստոսի Դ. ինչ նշանակէ: Նախ՝ հանդերձ Քրիստոսի է ժողովուրդն իւր, ըստ նմա, զձեզ իբրեւ զհանդերձ զգեցայց ցուցանէ, թէ այսպէս պայծառացուցանեմ:



Երկրորդ՝ ասաց մարգարէիւն, թէ մեղք ձեր իբրեւ զձանձախարիթ, քան զձիւն սպիտակ արարից, եցոյց թէ այսպէս կարող եմ զձեզ ի մեղաց սրբել: Երրորդ՝ զմարմինս մեր նշանակէ. զի զիտացեն, թէ այն, որ փոխեաց զհանդերձն ի կերպ լուսոյ, կարող է եւ զմարմինս ամենայն մարդկան ի գերեզմանէ յարուցանել: Չորրորդ՝ հանդերձն զՍուրբ Գիրս եւ զԱւետարանն նշանակէ, որ լուսազարդեալ բանիւ պայծառանայ ի միտս հետեւողաց, ըստ նմա ծածկեցեր յիմաստնոց եւ յայտնեցեր տղայոց:

Հարց. Որպէ՞ս տեսին զիմանալի լոյսն զգալի աչօք:

Պատասխանի. Զօրացաւ տեսութիւնն նոցա, որպես սուրբն Ստեփաննոս ետես զերկինս բացեալ: Եւ Մկրտիչն ի Յորդանան ետես զերկինս ցելեալ: Եւ Եղիսէոս զհրեղէն կառսն Եղիայի: Եւ որպէս Մովսէս ի լերինն ետես, այսպէս եւ առաքեալքն զօրացան, որքան կարողութիւն է ի մարմնի տեսանել: Անդ անօր Բ. արեգակունք եղեն մինն ի յերկինս եւ մին ի Թաբօր եւս առաւել պայծառ քան զարեգակն եւ ապա երեւեր: Երկրորդ՝ զի անկան աշակերտքն յերկիր:

ՎԱՍՆ ՄԱՐԳԱՐԷԻՑ

Հարց. Վասն է՞ր ի բազում մարգարէիցն միայն զՄովսէս եւ զԵղիայ երբ:

Պատասխանի. Այսմ դնեն վարդապետք բազում պատճառս եւ մեք ժողովեսցուք ԻԶ. գլուխս:

Նախ՝ կարծէին զՔրիստոս մի մարգարէիցն գոլ, ոմանք զԵղիայ եւ զայլ ոք, վասն որոյ զգերագոյնս ի մարգարէսն, որ օրէնսդիր էր եւ հրեղէն կառօք վերացեալ, եբեր ի սպասաւորութիւն, զի յայտ լիցի տէրութիւնն նորա եւ ծառայութիւնն նոցա:

Երկրորդ՝ բամբասէին հրեայքն, թէ օրինազանց է եւ հայհոյիչ Աստուծոյ, զի զչաբաթս ոչ պահէ եւ զինքն Որդի Աստուծոյ կոչէ: Եբեր զՄովսէս օրինադիրն վկայ, թէ տէր է օրինանց եւ ո՛չ լուծիչ: Եւ Եղիայ, զի նախանձախնդիր էր փառացն Աստուծոյ, յամօթ արար զնա, թէ որդի է Աստուծոյ եւ ո՛չ հակառակ:

Երրորդ՝ զՄովսէս ի մեռելոց եւ զԵղիայ ի կենդանեաց երբ, զի ցուցցէ զինքն դատաւոր կենդանեաց եւ մեռելոց եւ յարութիւն:

Չորրորդ՝ զԵղիայ ի վեր ամբարձմանէ եւ զՄովսէս ի գերեզմանէ եւ եցոյց զինքն Տէր երկնաւորաց եւ երկրաւորաց:

Հինգերորդ՝ առաքեալքն զանգիտ էին ի չարչարանացն Քրիստոսի եւ ո՛չ կամէին զխաչ եւ զմահ Տեառն, եբեր զՄովսէս եւ զԵղիայ վասն նոցա, որ աղաչէին զՔրիստոս, զի փութով խաչեսցի յորմէ աշակերտքն մխիթարեցան:

Վեցերորդ՝ զարանց կատարելոց խնդրէր առաքինութիւն ի նոցանէ, զՄովսէս եւ զԵղիայ, որ յիւրեանց հասակն ցուցին զառաքինութիւն եւ հաճոյացան Աստուծոյ, եցոյց զի եւ նոքա յօժարեսցին:

Եւթներորդ՝ զի մի վհատեսցին տալ զանձինս իւրեանց ի չարաչարանս, որպէս նոքա: Ոմն ըստ եզիպտացին եւ ոմն ըստ աքայապ եւ յաղթեցին նոյնպէս եւ դուք յաղթեցէ՛ք ամենայն բռնաւորաց աշխարհի:

Ութերորդ՝ ուսուցանէ, թէ նոքա ապերախտ եւ անհնազանդ ժողովրդեան էին առաջնորդ եւ դուք՝ հլու եւ հնազանդ ազգին հեթանոսաց լինիցիք:

Իններորդ՝ համարձակութիւն տայ առաքելոցն, թէ ոմն ծանրայլեզու եւ նրբաձայն էր եւ ոմն շինական եւ անկիրթ դպրութեան եւ յաղթեցին զիմաստունս: Նոյնպէս եւ դուք յաղթեցէ՛ք ամենայն իմաստնոց աշխարհի:

Տասներորդ՝ մի՛ պատճառէ՛ք զաղքատութիւն, զի երկոքեան անինչք էին, զի Եղիայ քան զմաշկեան ինչ ո՛չ ունէր եւ Մովսէս զոսկերսն Յովսէփիւ բառքայր եւ դուք զմարմինն Բանին կրէ՛ք ըստ ձեզ եւ զչնորհս Հոգւոյն Սրբոյ:

Մետասաներորդ՝ եւ մի հոգայք վասն պիտոյից ձեր, զի մինն մանանայ ուտէր եւ միւսն ի ձեռաց ազոաւու կերակրէր:

Երկուտասաներորդ՝ մի պատճառէ՛ք զսքանչելիս զի նոքա ոչ առին զամենայն շնորհս նշանաց, զի թէպէտ Մովսէս զձովն պատառեաց, այլ Պետրոս ի վերայ ալեացն հետիոտս ընթացաւ եւ զլերինա փոփոխէր եւ զգեւս հանէր եւ ըստուերքն բազում զօրութիւնս կատարէր եւ թէպէտ Եղիայ մին մեռեալ յարոյց եւ առաքեալքն զբիւրս յարուցանէին եւ այն նախքան զխաչն:

Երեքտասաներորդ՝ զի զհեղութիւնն Աստուծոյ ի Մովսիսէ ուսցին եւ զվրէժ խնդրելն ի Եղիայէ:

Չորեքտասաներորդ՝ զի խնամակալ եւ սաստ լիցին ժողովրդեանն զխնամք մեղուցելոցն ի Մովսիսէ ուսեալ, որ ասէր, թէ «Թող, ապա



թէ ոչ եւ զիս ջնջեայ ի դպրութենէ» (հմմտ. Ելից ԼԲ. 32) եւ զսաստ անզեղ ժողովրդեանն <ի> յեղիայէ, զի զԶ. ամ եւ զԶ, ամիս սով էած վասն մեղաց նոցա:

Հնգետասաներորդ՝ զի փառօք էած զՄովսէս եւ զեղիայ զի ուսցին առաքեալքն, թէ յետ չարչարանացն պատրաստեալ են փառք նոցա:

Վեշտասաներորդ՝ զՄովսէս եւ զեղիայ եբեր թէ սոքա ի Հինքն են եւ դուք՝ նոր. առաւել եւս պահանջեմ ի ձէնջ, զի դուք նորոյս էք քարոզք, ըստ նմա, թէ ո՛չ առաւելուցու արդարութիւն ձեր քան զդպրացն որ մտանէք յարքայութիւնն Աստուծոյ, վասն որոյ յորժամ ինդրեցին առաքեալքն Հուր իջեցուցանել որպէս զեղիայ, սաստեաց նոցա, ոչ զիտէք, թէ որոյ Հոգւոյ էք, այսինքն՝ նոքա ի Հինքն զպատժելն ունէին եւ զբարկութիւնն, զի տղայաբարոյք էին ժողովուրդն եւ խրատելոյ արժանի: Իսկ դուք կատարելոցն էք օրէնսդիրք: Պարտ է ձեզ շնորհել ու անոխակալ լինել եւ քաղցրութեամբ ուսուցանել:

Եւթնեւտասաներորդ՝ ասեն վարդապետք, զի ցուցցէ զինքն քարոզել օրինօք, վասն որոյ եբեր զօրհնսդիրն եւ մարգարէիւք, որոց ի մէջ մարգարէիցն էր նախամեծարն Եղիայ:

Ութեւտասաներորդ՝ երկոքին սոքա յոյժ փափաքէին տեսանել զԱստուած: Մովսէս ասէր, թէ ցոյց ինձ գերեսս քո եւ Եղիայ Խ. օր գնաց ի Քորեբ, թէրեւս տեսցէ զնա եւ լուան, թէ անհնար է ըստ աստուածութեանն, վասն որոյ այսօր ածէ ի մէջ եւ զբաղձանս նոցա կատարէ: Զի զկամս երկիւղածաց իւրոց առնէ Տէրն:

Իննեւտասաներորդ՝ զՄովսէս եւ զեղիայ եբեր ի մէջ, զի ցուցցէ աշակերտացն, թէ նայ ինքն է սուրիջ օրինաց եւ առաքիչ մարգարէից եւ նորա Հրամանաւն ընթանան:

Քսաներորդ՝ Մովսէս ի մեռելոց եւ Եղիայ ի կենդանաց ցուցանէ, թէ յայնմ աւուր մեռեալքն յառաջագոյն յառնելոց են ըստ առաքելոյ եւ կենդանիքն առանց մեռանելոյ եւ ապականելոյ թեթեւացեալ ամպօք ընդ առաջ Տեառն վերանան յօդս:

Քսանեւառաջին՝ է ու այլ եւս տեսութիւն, զի էին անդ մարգարէք յառաջնոց եւ առաքեալք ի վերջնոց, ցուցանէ զի առաջինք եւ վերջինք սպասելով ակն ունին փրկութեանն Քրիստոսի, որպէս ժողովրդեանն որ առաջի եւ զկնի աղաղակէին՝ ուսաննայ: Փրկութիւն ի բարձունս:

Քսանեւերկրորդ՝ էին անդ մարգարէք եւ առաքեալք, որք խօսէին ցուցանէ զեկեղեցի այժմ բանիւք եւ կտակօք նոցա է Հաստատեալ եւ ամրացեալ:

Քսանեւերրորդ՝ երկուքն մարգարէ եւ Գ. առաքեալ, որ վկայք եղեն աստուածութեանն Քրիստոսի, զի ըստ օրինացն յերկուց եւ յերից վկայից Հաստատեսցի ամենայն բան:

Քսանեւչորրորդ՝ երեւեցան անդ կոյք որդիք Զեբեդեայ եւ Եղիայ եւ ողջախոհք Պետրոս եւ Մովսէս, զի եկեղեցի այժմ ունի կոյս եւ ողջախոհ եւ նմանապէս ի յարքայութեանն ընտրեսցին կոյսք եւ ողջախոհք:

Քսանեւհինգերորդ՝ Գ. դասք են որք փրկութեանն Քրիստոսի ակն ունին, այսինքն՝ Հրեշտակք ի յերկինս, եւ մարդիկ յերկրի եւ որք մեռան մարմնով եւ կենդանացան Հոգւով: Արդ Եղիայ յերկնից էջ, զի աւետեաւ, որ լիցի Հրեշտակաց եւ Մովսէս ի մեռելոցն զի աւետեսցէ Հոգւոցն: Եւ առաքեալքն ի մարդիկ ի յերկրի աւետարանեսցեն զփրկութիւնն Քրիստոսի: Եւ թէ վասն է՞ր Հրեշտակաց եւ Հոգւոցն մի՞ ոք աւետաւոր եւ մարդկան բազում: Նախ՝ զի զՀրեշտակք եւ Հոգիք անմարմին բնութիւնք են եւ անվրէպ տեսողք բանից եւ գործոց դիւրաւ Հաւատն եւ շարժին ի բարիս: Իսկ մարդիկ մարմին ունելով եւ ցանկութիւն գոգոխի ի նմին դժուարաւ Հաւատան կամ բնաւին իսկ ոչ: Դարձեալ անմարմնոցն՝ մինն ծանուցանէ բլրին, վասն զի միտք են ընդ ամենայն անցանելով: Իսկ մարդիկ զի ցուցեալք բազմաց պէտք են վկայից, զի առ ամենայն ոք երթիցեն եւ քարոզեսցեն:

Քսանեւվեցերորդ՝ որ ասէ Մովսէս եւ Եղիայ երեւեալ փառօք: Նախ՝ զայն ցուցանէ որ այժմ ծածկեալ են եւ աներեւոյթ ի մէնջ, ի գալստեանն Քրիստոսի երեւեսցին եւ յայտնի լիցին գործօք: Եւ զայն տեսեալ որդոցն Զեբեդեայ, խնդրէին նստեալ յաջմէ եւ յահեկէ, որպէս Մովսէս եւ Եղիայ: Դարձեալ, զի ոչ միայն ինքն: Ամէն: Այսքան վասն Մովսիսի եւ Եղիայի:

Հարց. Զի՞նչ է վկայութիւնն որ Մովսէս եւ Եղիայ վկայէին նմա: Պատասխանի. Վեց են ասացեալ վարդապետք: Նախ՝ այն որ ի ծերպս վիմին մտեալ Մովսէս ետես զյետոյսն Աստուծոյ ի Սինայ, որ յետոյս զմարդկութիւնն գուշակէր, զի յետոյ ժամանակի մարմնով երեւեցաւ: Արդ, վկայեաց Մովսէս, թէ նոյն Աստուածն է, որ ես տեսի ի լերինն Սինայ եւ լուսաւորեցան երեսք իմ, որպէս



զարեգակ եւ սայ նոյն է, որ այժմ մարմնով է պայծառացեալ: Եւ զնոյնս վկայէր Հեղիաս, որ ետես ի լերինն Քորեբայ ի սիք Հանդարտ՝ զանմարմինն Աստուած եւ այժմ մարմնով երեւի: Երկրորդ՝ վկայէր՝ սա է օրենսդիր Հնոյն, որ ի լերինն Սինեայ պատուիրեաց ինձ անմարմնապէս եւ, եկեալ այժմ մարմնով, նոր օրէնս դնէ, նոր ժողովրդեան իւրոյ: Երրորդ՝ վկայէր զօրինակացն, եթէ զամենայն նուէրս պատարագաց զոր մատուցի վասն սորա, սայ է ճշտմարտութիւնն, վասն որոյ աղերսէր ի մահ խաչի: Չորրորդ՝ վկայեաց, որ ասաց «Մարգարէ յարուցէ ձեզ Տէր իբրեւ զիս նմա լուիցիք» (Բ. Օր. ԺԸ. 15): Սայ է մարգարէն որպէս դուք կարծէք եւ Տէր մարգարէիցն որպէս ես վկայեմ: Հինգերորդ՝ վկայէր, որ ասաց «Տեսանիցէք զկեանս ձեր կախեալ զփայտէ, ի յորոյ յօրինակն ես պղնձի օձ արարի», որ կեցուցանէր զհարեալսն յօձից. սա է կեանքն եւ կենդանարարն, որ զհարեալս ի մահաբեր թունից վիշապին, կեցուցանէի ձեռն խաչին: Վեցերորդ՝ վկայէր վասն մահու խաչին, թէ կատարումն ամենայն օրինացն խաչն է: Եւ մարդեղութեան խորհուրդ քո վասն խաչին է եւ ազատութիւն մարդկան խաչիւն լինի: Եւ խոստումն ամենայն նահապետացն խաչիւն կատարի, վասն որոյ աղերսէր փութով ելանել ի խաչ եւ կատարեալ յերուսաղէմ:

Հարց. Ստոյգապէս Մովսէս եւ Եղիայ է՞ր, թէ՞ նմանութիւն նոցա:

Պատասխանի. Ոմանք ասեն, թէ հրեշտակ էր ի դէմս նոցա կերպարանեալ յաւրոյ: Եւ այս սուտ է, զի Աւետարանն Մովսէս եւ Եղիայ ասէ եւ ոչ նման նոցա: Սակայն Եղիայ իւր մարմնովն երեւացաւ: Իսկ Հոգին Մովսիսի ձեւացեալ յօղոյ: Եւ թէ իւր մարմնովն յարուցեալ ուսի սատանայ պատերազմ էր վասն Մովսիսիեան մարմնոյն: Եւ այս կատարելի է ամենագորին Աստուծոյ:

Հարց. Ո՞րպէս ճանաչեն առաքեալքն զՄովսէս եւ զԵղիայ:

Պատասխանի. Ասեն վարդապետք՝ Ժ. ծանօթութեամբ: Նախ՝ զի երեւացան մինն քաւղ արկեալ եւ միւն մաշկեակ զգեցեալ: Երկրորդ՝ մինն լուսաւորեալ դիմաւք եւ միւն հրեղէն կառօք, մինչ մերձեցան ի Քրիստոս եւ նուազեցան ի մեծի լուսոյն: Երրորդ՝ ի ձեռն Մովսիսի գաւազան եւ տախտակք եւ զ<յ>ուսովն Եղիայի մաշկեակ: Չորրորդ՝ զերեսն Մովսիսի պակաս ի հերացն եւ զԵղիայ թավարծի: Հինգերորդ՝ Մովսէս թօթովախօս լեզուաւ եւ Եղիայ՝ համարձակ: Վեցերորդ՝ պատկերք նոցա դրոշմեալ ի գիրս այն եւ

ճանաչեցին: Եւթներորդ՝ յիւրեանց իսկ լուան զանուանս՝ մեծարելով մի զմի. յերկրպագութիւն Քրիստոսի: Ութերորդ՝ ի Տեառնէ լուան յորժամ խօսէր ըստ նոսա: Իններորդ՝ կամ հոգւովն ծանեան, որպէս Յովհաննէս զփրկիչն ի մէջ բազմախուռն ամբոխին: Տասներորդ՝ եւ իսկայպէս զի օրինակ էր Հանդերձելոյն, որպէս անդ սուրբքն ճանաչեն զմիմեանս, նոյնպէս եւ աստ:

Պատասխանի եւր Պետրոս (Մարթ. ԺԷ. 4):

Հարց. Ու՞մ տայ պատասխանի. յայտ է, զի մարգարէիցն որք աղաչէին զՔրիստոս, փութով ելանել յերուսաղէմ եւ ելանել ի խաչ զի կատարեսցի փրկութիւն մարդկան: Եւ ի խոր խոց էր Պետրոս, յորժամ լսեր զմահ Տեառն վասն որոյ ասէ:

Բարիոք է մեզ ասար լինել (Մարթ. ԺԷ. 4):

Նախ՝ զի յայտնապէս չիշխէր հակառակել, զի մի պատժեսցի, որպէս յառաջն, բայց այլ բանիւք զնոյն ակնարկէր: Երկրորդ՝ տեղիքն անապատ եւ ապա հովս էր ամենայն խոսովութեանց: Երրորդ՝ օգն բարեխառն եւ տաղաւար շինէին կամ ամպ հովանի լինելոց էր: Չորրորդ՝ զի հանգուցեալ եմք աստ լսելօք ի հակառակաց դպրացն: Հինգերորդ՝ ի հոտոտելիս ունիմք բուրեալ զհոտ անուշ արքայութեանն: Վեցերորդ՝ զՔրիստոս այնպէս պայծառ փառօք տեսանէին զոր հրեայքն անարգեին: Եւթներորդ՝ ուրախ եղեն ընդ Մովսիսի եւ Եղիայի բնակելն: Ութերորդ՝ ցնծացան զի հեռացան ի կայիփայ եւ Հերովդէէ: Իններորդ՝ Եղիայ աստ է. հուր իջուցէ թշնամեացն եւ այրէ, որպէս զերկու յիսնապետսն: Եւ Մովսիսիւ մտանեմք յամպն եւ յիմանայ ոք թէ աստ եմք: Տասներորդ՝ զի անաշխատ կերիցեն Մովսէս մանանայ տա եւ Եղիայ ջուր անձրեւ յերկնից: Մանաւանդ թէ Քրիստոս հաց ու ձուկն: «Բարիոք մեզ ասար լինել»:

ՎԱՍՆ ՏԱՂԱՄԱՐԱՅՆ

«Արասցուք երիս փաղաւարս՝ քեզ եւ Մովսիսի եւ Եղիայի» (տնս Մարթ. ԺԷ. 4):

Ասէ Աւետարանն. «Զարիւրեալք էին եւ ոչ գիպէր զինչ խօսեմք» (տնս Մարթ. Թ. 5): Նախ՝ յերկեղ է մահուն, որ ունէր ի սրտի: Երկրորդ՝



յառաւել լուսոյն, որ թմրեցան տեսութեամբ եւ ոչ առողջ մտօք խօսէր:

Հարց. Զի՞նչ է առողջութիւն մտաց:

Պատասխանի. Այսինքն է՝ յերից, յորժամ տեսութիւն եւ յօժարութիւն եւ ուշն ի միասին լիցին առողջութիւն է մտաց, ապա թէ մինն ի սոցանէ պակաս է տկարութիւն մտաց: Եւ Պետրոսին միայն յօժարութիւնն էր եւ երկուքն պակաս, որ զՏէրն ընդ ծառայս համարէր: Եւ այս էր պատճառ մինչ զհոգին ոչ էին առեալ, անկատարք էին նախքան զխաչն: Եւ աստ լինի հաւատարիմ բան հոգիս յօժար է: Այսինքն մարգարէքն որ ի մահ աղաչէին եւ մարմինս տկար, այսինքն առաքեալքն, զի նախքան զխաչն զհոգին չէին առեալ: Այլ թմրութիւնն ոչ թէ տաղտկալի որպէս քուն լինէր աշակերտացն, այլ որպէս սէրովբէքն եւ քերովբէքն զմայլեալ էին տեսութեամբն Քրիստոսի եւ որպէս հիացաւ մարգարէն Դաւիթ եւ Պօղոս յափշտակեցաւ յերկինս եւ Պետրոս ի զարմացմանն ելեալ: Այսպէս եւ անդ ի Թարօր:

Հարց. Զի՞նչ է Գ. տաղաւարն:

Պատասխանի. Տասն կերպիւ են առեալ խորհուրդ: Նախ՝ երեք թուով զխորհուրդ Երրորդութեանն ցուցանէ, զի Բանն Աստուած տաղավարեցաւ ի մարմնի զոր զմիաւորութիւն բնութեանն ոչ տեսին երկինք եւ երկիր: Իսկ Հայր եւ Հոգի՝ որպէս ի տաճարի Մովսէս եւ յԵղիայ բնակեցան շնորհօք եւ ոչ միաւորեալ բնութեամբ: Երկրորդ՝ զհոգի եւ զմարմին եւ զմիտս մեր կազմեմք տաղաւար Աստուծոյ: Երրորդ՝ զբան զցասումն եւ զցանկութիւնս մեր պատրաստեսցուք: Չորրորդ՝ միտք եւ կամք եւ հանճարն: Հինգերորդ՝ հաւատն, յոյս եւ սէրն: Վեցերորդ՝ բարոճական, տնտեսական եւ քաղաքական կարգաւք: Եւթներորդ՝ բնական եւ գրաւոր եւ Աւետարանին օրինօք: Ութերորդ՝ Լ. Կ. եւ Ճ.աւոր արդեամբք: Իններորդ՝ Գ. յիսնակօք, որ ի բլուր ամն կարգացին առաքելքն: Տասներորդ՝ երեք որպիսութեամբ մեր, այսինքն՝ այժմու կենօք եւ յետ մահու եւ յարութեանն լինիմք բնակարան Աստուծոյ ըստ նմա եւ դու Հայր ի յիս զի եւ նոքա ի մեզ իցեն:

ՎԱՍՆ ԱՄՊՈՅՆ

Հարց. Վասն է՞ր ամպ հովանի եղեւ նոցա:

Պատասխանի. Վասն Ժ. պատճառի: Նախ՝ զի մարգարէն ասէ ամպ եւ մէգ շուրջ են Աստուծով աստ ցուցանէ, թէ ստոյգ ի մարգարէն Աստուած է դաւանեալ: Երկրորդ՝ Պետրոս ձեռագործ խորանի կարօտ կարծէր նա զանձեռագործ խորանն երբ ի լուսաւորութիւն մտաց նորա: Երրորդ՝ ի Յորդանան երրորդական անձնաւորութիւնն յայտնեցաւ: Նոյնպես եւ աստ որդին այլակերպեալ հայր վկայեալ հոգին ամպ լուսաւոր շրջապատեալ: Չորրորդ՝ «ամպ»ն բարձրէ ցուցանէ զբարձրութիւն անհամեմատ, որպէս ասէր կործանելն եղից զաթոռ իմ յամպս եւ եղէց նման բարձրանալոյն: Հինգերորդ՝ թեթեւ է Տէր նստեալ ի վերայ թեթեւ ամպոյ զի ընդինքեանս վերացուցանէ զմեզ: Վեցերորդ՝ արագ է, ասէ «եղ յամպս զգնացս իւր եւ շրջի նա ի վերայ թեաց հողմոց» (Գն՝ Սաղմ. ԸԳ. 3): Եւթներորդ՝ ծածկոյթ է ըստ նմա եղ խաւարն ծածկոյթ իւր: Ութերորդ ցաւը իջուցանէ եւ նա ետ զցօղ քաղցրութեան իւրոյ: Իններորդ՝ ամպօք վերացաւ ըստ այնմ կալաւ զնա յաչաց նոցա: Տասներորդ՝ ամպօքն եկեցէ դարձեալ ըստ այնմ որդի մարդոյ ընդ ամպս երկինից գայր: Այլեւ սուրբքն ամպօք ընդ առաջ Տեառն թռչին յօղս: Զայս ամենայն ցուցանէ ամպով երեւլն: Իսկ զի ասէ. «Ամպ մի լուսաւոր», նշանակէ զհոգին Սուրբ յատկացեալ ի բնական ամպոց: Երկուք: Նախ զի այս բազում ամպ է եւ այն մի: Երկրորդ՝ այս ցօղաւոր եւ այն լուսաւոր: Երրորդ՝ այս գիշերն ի լուսնոյ գոյանայ եւ յարեւոյ ցրուի եւ այն ի տիւն հովանավաւ, յայտ է զի օտար: Եւ Հոգին Սուրբ ամպ կոչի վասն երից պատճառաց ասացեալ: Իսկ մի: Նախ, զի որոշեսցի ի բազմաց: Երկրորդ՝ զի ոչ փոխի ի հայր կամ յորդի: Երրորդ՝ զի անբաժանելի մնայ յինքեան: Չորրորդ՝ զի մի արարէ բազմաց: Իսկ լուսաւոր: Նախ՝ զի լոյս է բնութեամբ: Երկրորդ՝ արարիչ լուսոյ ամենայնի: Երրորդ՝ լուսաւոր է զամենայն միտս իմանալեաց եւ զգալեաց: Իսկ հովանի: Նախ՝ ի տապոյ ջերմութենէ չարին զովացոյց ըստ որում ի տօթոյ չար արեգականն չորանան բոյսք: Երկրորդ՝ հովանի զի պահպանէ եւ հանգուցանէ ընդ թեւօքն իւր: Ի սմին աւուր ի տիպ շնորհաց Հոգւոյն: Զուր սրակեալ յերեսս զովանամք շնորհօք Սուրբ Հոգոյն:

ՎԱՍՆ ԶԱՅՆ ՆՕՐ

Հարց. Վասն է՞ր էր ձայն եղեւ յամպոյն:



Պատասխանի. Վասն Դ. պատճառի: Նախ՝ զի ցուցցէ, է՛ յերկնից յԱստուծոյ ձայնս եւ ոչ յայլուստեք: Երկրորդ՝ զի յորդոյ ուղեալ էին, այժմ ի հօրէ ուսանին եւ յետոյ ի Հոգւոյն Սրբոյ: Չորրորդ՝ որպէս ի հինն առ Մովսէս եւ առ Յոբ յամպոյն խօսեցաւ այսպէս ի նորս, այլ անդ մրրկեալ եւ միգապատ ամպով, որ զսպառնալիք ցուցանէր եւ աստ լուսաւոր, որ զուրախութիւն աւետարանէր:

Հարց. Զի՞նչ է բարբառն, որ ասէ. «Դա է որդի իմ սիրելի» (Մարթ. ԺԷ. 5):

Պատասխանի. Նախ՝ առ Պետրոս իմասցի, որ զանգիտէր մահուն Քրիստոսի: Եւ նախ մոռացաւ զբանս մարգարէիցն եւ օրինացն, որ վասն չարչարանացն Քրիստոսի: Երկրորդ՝ մոռացաւ զդաւանումն իւր որդի Աստուծոյ գոլ եւ կենդանի: Երրորդ՝ ընդդէմ եկաց Քրիստոսի եւ ասէր քաւ լիցի քեզ տէր մեռանել: Չորրորդ՝ ընդդէմ պատասխանէր Եղիայի եւ Մովսիսի: Աստ ասէր հայր. «Գոնեայ լու՛ր ինձ եւ մի տրամիր»: Նախ զի որդի է իմ եւ ամենագօր որպէս ես: Երկրորդ՝ զի որդի է իմ եւ ոչ ոք վայրապար մատնէ զորդի իւր ի մահ: Եւ այն զի սիրելի որդի: Նախ զի ոչ այնպէս սիրես դու որպէս ծնօղս սիրեմ: Երկրորդ՝ թէ զորդիդ սիրէս՝ զծնօղս վասն է՞ր ատես եւ թշնամանես: Զի ոչ եմ քան զԱբրահամ անգութ եւ տկար, որ նայ զորդին իւր ետ ի մահ եւ ես ոչ տամ վասն փրկութեան աշխարհի:

ԸՆԴ ՈՐ ՀԱՃԵՑԱԻ

Նախ՝ զի զովաւ լինի հաշտութիւն աշխարհի: Ասեն թէ յԱզամա հետէ հայր Աստուած ընդ մարդոյ ոչ խոսացաւ մինչ ի Յորդանան եւ ի Թաբօր: Զի որդովն հաշտեցաւ ընդ մարդկային բնութիւնս: Երկրորդ՝ զի համակամ է ինձ եւ համագործ: Ապա՝ «Դմայ լուարուք»: Նախ՝ զի կամի ի խաչ ելանել, մի ընդդէմ դառնայք: Երկրորդ՝ զոր ինչ խօսի ի կամաց իմոց բարբառի ունկն դիր լերունք: Դարձեալ դա է որդի իմ սիրելի զէ. գերազանցութիւն ցուցանէ առ որդի: նախ՝ որ ասէ դա զմիաւորութիւն բանին եւ մարմնոյն ցուցանէ անբաժանելի, զի ոչ ասէ դոքայ որ է Բ. անձն եւ ոչ ի դմայ, որ է Բ. բնութիւն: Երկրորդ՝ որ ասէ է որպէս ասաց ես եմ որ էն, այսինքն՝ մշտնջենաւոր եւ անփոփոխեալ մարմնով: Երրորդն՝ որդի, այսինքն՝ ի բնութենէ իմէ ծնեալ, նախքան զյաւիտեանս եւ

ժամանակաւ ծնեալ ի մօրէ նոյն որդի: Չորրորդ՝ իմ, այսինքն՝ համագոյակից իմ եւ ոչ կրտսեր եւ միաւորեալ մարմնովն փառակից ի մեղեալ: Հինգերորդ՝ որ ասէ սիրելի, զհամակամութիւնն ընդ իւր ցուցանէ, զի մի է կամք ու մի գործ, հօր եւ բանին մարմնացելոյ: Եւ սիրելի զի ոչ է ատելի, որպէս հինն Իսրայէլ: Վեցերորդն՝ հաճեցայ զիւր եւ զՀոգւոյն հաճութիւնն ասէ: Ի տնօրէնութիւնն որդ[ւ]ոյ: Եւթներորդ՝ դմայ լուարուք, որ հաւասար է իմ եւ ձեզ, զի Աստուած է մարդացեալ: Այլ եւ զվճիռ դատաստանին լուարուք:

Հարց. Վասն է՞ր կրկին վկայեաց հայր ի Յորդանան եւ ի Թաբօր: «Դայ է որդի իմ սիրելի»:

Պատասխանի. Նախ՝ ցուցանէ զի վկայեալն որդի Աստուծոյ է եւ մարդ միացեալ: Երկրորդ՝ զառաջինն լուաւ Յովհաննէս, զերկրորդն առ առաքեալքն: Երրորդ՝ զառաջինն լուան կենդանիք զերկրորդն՝ մեռեալքն: Իսկ առ մեզ: Նախ՝ զի մկրտելովն լինիմք սիրելիք եւ որդիք Աստուծոյ: Եւ երկրորդ՝ սրբութեամբ առաքինութեամբ հաճելիք եւ ընտրեալք նմա: Երկրորդ՝ զառաջին ձայնն ոչ լսեցին մարդիկ, զի ներգործութեամբ էր շնորհ եւ զերկրորդ՝ ի Թաբօր լուիցեն, զի խոստմամբ աւետարանէ: Երրորդ՝ առաջինն տայ մեզ զորդեգրութիւն շնորհաց, որ ի յայժմուս, երկրորդ՝ տայ զորդեգրութիւն փառաց, որի ի հանդերձեալն:

Հարց. Վասն է՞ր անդ հոգին աղաւնակերպ էջ եւ աստ ամպ լուսաւորիլ:

Պատասխանի. Նախ՝ զի անդ զանմեղութիւն մկրտելոցն նշանակէր եւ աստ զփառս յարուցելոցն: Երկրորդ՝ անդ զմարմին խոնարհութեան Քրիստոսի եկէր մարմնաւոր աղաւնին եւ աստ զփառս Աստուածութեանն ցուցանէր ամպ լուսաւոր:

Հարց. Վասն է՞ր անդ երկինք բացաւ եւ աստ՝ ոչ:

Պատասխանի. Նշանակեաց անդ թէ որք մկրտին մտցեն յարքայութիւնն երկնից: Եւ աստ նոյն ինքն է յարութիւն եւ արքայութիւն:

Հարց. Վասն է՞ր հրեշտակք ոչ սպասաւորեն, որպէս ի յայլ տնօրէնութիւնս:

Պատասխանի. Վասն Դ. պատճառի: Նախ՝ զի փառաւորեալ մարմնոյն Քրիստոսի, զփառս մարմնոյ մեր նշանակէ եւ ոչ զհրեշտակաց: Երկրորդ՝ որդեգրութիւնն մեր. ո՛չ ի ձեռն հրեշտակաց եղեւ, այլ Որդւով եւ Հոգւովն, վասն որոյ եւ ոչ ի մկրտութիւնն



հրեշտակք մերձեցան: Երրորդ՝ յայնժամ զփրկութիւն մարդկան հրեշտակք աւետեցին, այժմ զփրկութիւն հրեշտակաց մարդիկք: Չորրորդ՝ որպէս յանմարմնութեան մարդիկ ի հրեշտակաց ուսան, այսպէս ի մարդեղութիւնս մարդիկ հրեշտակաց ուսուցին, ըստ նմա յեկեղեց[ւ]ոյ ուսան զբազմապատիկ իմաստութիւնս:

Հարց. Վասն է՞ր անկանի ձայնէն, զի ահայ ի Յորդանան ու որոտումն առ խաչին լուան եւ ո՛չ երկեան:

Պատասխանի. Վասն Ը. պատճառի: Նախ՝ զի տեղին անապատ էր եւ ո՛չ ի մէջ խառնամբոխի որպէս ի Յորդանան: Երկրորդ՝ զի լեռն բարձր էր եւ անձայնահաս: Երրորդ՝ ծածուկ էր ի մարդկանէ: Չորրորդ՝ զի այլակերպս տեսին զՏէրն: Հինգերորդ՝ լոյսն սեռն եւ սաստիկ էր: Վեցերորդ՝ ամպն տարածեալ ի վերա: Եւթներորդ՝ ձայնն ահարկու էր: Ութերորդ՝ յանկարծակի:

Հարց. Վասն է՞ր ընթռնեաց եւ յոտն կացին:

Պատասխանի. Վասն Գ. պատճառի: Նախ՝ զի յերկիւղէն մի՛ մոռացին գտեսիլն. մինչդեռ ձայնն ի յականջն էր եւ հոտ ծաղկին յոնգունքն, այն որ ասաց. «Ե՛ս ծաղիկ դաշտաց, շուշան հովտաց» (Երգ Բ. 1) եւ տեսիլն յաչքն եւ բանքն, ի միտս մնաց: Երկրորդ՝ հօր ընկէց եւ ձայն եւ ձեռք որդոյն կանգնեաց, զի իմասցին թէ նա է զօրացուցիչ նոցա: Երրորդ՝ ցուցանէ թէ զանկեալ եւ զկործանեալ բնութիւնս նա յարուցէ խաչիւ եւ յարութեամբն իւրով: Չորրորդ՝ զի ահագին երեւմանն Աստուծոյ եւ ձայնին միջնորդութեամբն Քրիստոսի կարողանամք տեսանել ի հանդերձեալն:

Հարց. վասն էր տեսին զՅիսուս միայն:

Պատասխանի. Վասն Դ. պատճառի: Նախ՝ յորժամ վկայեցին Մովսէս եւ Եղիայ, դարձան ի տեղիս իւրեանց: Երկրորդ՝ զկարօտութիւնս իւրեանց լցին եւ դարձան: Երրորդ՝ փութացան աւետիս տալ հոգւոցն: Չորրորդ՝ զի բարբառն հօր ի Քրիստոս ձգեսցի եւ ոչ ի նոսա:

Հարց. Վասն է՞ր ասէ. «Մի ումեք ասէք գտեսիլդ»:

Պատասխանի. Վաս Ժ. պատճառի: Նախ՝ զի ո՛չ կամէր զմեծամեծ զսքանչելիսն յայտնեալ, զի ոչ կարէին տանել տղայաբարոյք գոլով: Երկրորդ՝ զի ո՛չ հաւատային թէ զՄովսէս եւ զԵղիայ երեք ի մեռելոց եւ կենդանեաց: Երրորդ՝ զի անարժանս համարէին զԳ. գծուծ արսն աստուածտեսութեանն եւ ամպոյ եւ ձայնի, որ ամենայն Իսրայէլ եւ Մովսէս հազիւ լսէին: Չորրորդ՝ թէ այսպիսի պայ-

ծառ երեւմունք եւ ձայն Աստուծոյ զի արդ լերին էր ծածուկ եւ ոչ ոք լսէր զահագին բարբառն: Հինգերորդ՝ զի չունէին ընդ ինքեան զՄովսէս եւ զԵղիայ վկայ բանիցն: Վեցերորդ՝ նա եւ ո՛չ ամենայն աշակերտքն էին տեսող եւ վկայ բանիցն, բայց միայն Գ.ն: Եւթներորդ՝ թէ այսպէս համբաւեալ էին եւ հաւատացեալ եւ յետոյ զնա ի խաչ տեսեալ բազում գայթակղութիւն եւ վնաս լինէր: Ութերորդ՝ զի կամեցաւ ի խաչին, նախ ի հայր աւանդել զպտուղ տնօրէնութեան իւրոյ: Եւ ապա՝ այլոց ուսուցանել ըստ նմա, հայր ի ձեռս քո աւանդեմ, այսինքն՝ զկատարումն տնօրէնութեանս: Իններորդ՝ կամեցաւ նախ հոգւոցն տեսանել զայնպիսի լոյսն եւ ապա մարմնաւորաց քարոզել: Տասներորդ՝ կամեցաւ զճշտմարտութիւնն իւր ցուցանել եւ ապա՝ զօրինակն ուսուցանել: Վասն որոյ ասէ. «Մինչև Որդի մարդոյ ի մեռելոց յարիցլ» (Մարտ. ԺԷ. 9): Եւ այս վասն Ժ. պատճառի: Նախ՝ զի զորոտումն լսիցեն եւ ապա հաւատասցեն: Երկրորդ՝ զի զհոգին որոտմամբ ընդունիցիք, եւ ամենեքեան համաձայնեսցին: Երրորդ՝ զի նշանք խաչելութեանն ձեզ զօրավիգն լիցին, որ երկիր շարժեցաւ. վեմքն պատառեցան եւ լուսաւորքն խաւարեցան եւ այլն: Չորրորդ՝ զի գայթակղութիւն խաչին բարձեալ լիցի յարութեամբն եւ հաւատասցեն: Հինգերորդ՝ դուք զօրացեալք ի Հոգւոյն, թէ ո՛չ հաւատան ձեզ, զմեռեալս յարուցանէք ի յանդիմանութիւն նոցա եւ ի փառս ձեզ: Վեցերորդ՝ յորժամ մեռեալք յառնեն հին եւ նոր եւ մտցեն ի քաղաքն. օգնեսցեն վկայութեանն ձեր: Եւթներորդ՝ հրեշտակն քարոզէ զյարութիւնն իմ, յայնժամ հաւատան, թէ որ զինքն յարոյց ի մեռելոց, կարող է եւ զՄովսէս յարուցանել: Ութերորդ՝ ասեն առ խաչին տեսցուք, թէ Եղիայ գայ ի փրկել զգայ այժմ, նախքան զբանս բերէ զԵղիայ եւ զայլս յառաքելոցն եւ ի մարգարէիցն վկայ, զի կարող է զԵղիայ եւ զբազումս բերել: Իններորդ՝ պատճառն ընդհանուր մարդկան է յարութիւնն Քրիստոսի. պարտ էր նախ պատճառին եւ ապա պատճառ ելեացն երեւել եւ յայնժամ դիւրահաւատն: Տասներորդ՝ յորժամ ամպօք վերանամ յերկինս, յայնժամ հաւատան, թէ կարող էր զԵղիայ յերկնից բերել եւ լուսափայլ ամպովք երեւել եւ ամպօք գայ միւսանգամ ու զընտրեալս իւր յափշտակել ամպօք յերկինս:

Հարց. Որքա՞ն միջոց է ի պայծառութենէն մինչեւ ի յարութիւնն:

Պատասխանի. Խ. օր: Եւ յայտէ ի չորից: Նախ՝ զի յետ Խ. աւուր յարութեանն հաստատեցին Տեառն եղբայրն ու առաքեալքն զՏօն



այլակերպութեանն: Երկրորդ՝ զի եւ անդ ի մինչ ի տօն վերացման խաչին Խ. օր հանդիպի: Երրորդ՝ ի վեցն աւգոստոսէ մինչ ի ԺԴ. սեպտեմբերի Խ. օր է: Չորրորդ՝ զի յետ սատակելոյ Նեոխն եւ Եղիայի եւ Ենովքայ վերանալոյն, մինչ յարութիւնն հասարակաց թուեն ոմանք Խ. աւուրս եւ ոմանք ԽԵ.: Եւ այս է պատճառն զի մինչ ի յուրբաթ խաչին ԽԷ., եւ Բ. օր ուրբաթին եւ՝ շաբաթն, եւ՝ կիրակէն եւ պատկեր օր այլակերպութեանն լինի ԽԵ.: Այսքան ի խորհուրդ այլակերպութեան Փրկչին:

Արդ երանելիք են առաքեալք, որք յարակից եղեն Քրիստոսի եւ տեսողք փառացն, բայց թէ եւ մեք կամիցեմք առաւել եւս տեսանեմք, զի նոքայ փոքր մի եւ կիսաբաց տեսին, զի ո՛չ կարէին տեսանել: Այլ որք արժանաւորին լիարժուր փառօքն հաւր, տեսանեն զՔրիստոս յայնժամ Մովսիսիւ եւ Եղիայիւ իսկ ի վերջինն հանդերձ բիւրս բիւրուց հրեշտակօք եւ Սէրովբէիւք: Եւ զոր այժմ ամպ էր յարկն, յանժամ երկինքն գալարեալ եւ փառքն Աստուծոյ յայտնի երեւեալ: Եւ ո՛չ ի լեռան երկրի, այլ յերկնիցն ի յիմանալին: Եւ ո՛չ ժամ մի, այլ միշտ: Ո՛չ միայն տեսանելովն, այլ եւ լինելովն պայծառքն զարեգակն ըստ նմա գա՛ս Աստուած ի մէջ աստուածացելոց: Ոչ որոտումն դողութեան, այլ բարբառ քաղցր թէ՛ եկա՛յք օրհնեալք ժառանգեցէ՛ք: Եւ զէմ ընդ զէմի Քրիստոսի խօսակից, զի դատաստանի է ժամ եւ հատուցման: Իսկ մեղաւորքն ո՛չ նոյնպիսիք, այլ երթայք ի հուրն եւ ծառայ չար եւ վատ: Եւ թէ կապեցէ՛ք զձեռս եւ զոտս եւ ո՛չ ունի հանդերձ հարսանեաց եւ տապարաւ կտրէ: Եւ զմասն ընդ կեղծաւորսն եւ զմնացեալսն յուռկանէն ընկենուլ ի բաց: Ոչ լինի անդ երեսօք կամ կաշառօք, ո՛չ հարուստ ու ո՛չ աղքատ, ո՛չ ծառայ եւ ո՛չ ազատ, ո՛չ իմաստուն եւ ո՛չ տգետ: Այլ ամենայն որ աստի կենացս է, անցանի եւ գօրծքն թազաւորէ, զի հատուցումն է ըստ գործոց եւ քննիչ եւ յանդիմանիչ նոյն ինքն արդար դատաւորն, որում արժանի լիցուք զերծանել յայնմ ամենայնէ եւ ուրախութեամբ տեսանել զնա աղօթիւք եւ բարեխօսութեամբ ամենայն սրբոց եւ նմայ փառք յաւիտեանս. ամէն:

ՎԱՍՆ ԵՂԻԱՅԻ ԵՒ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Հարց. Զի՞նչ է «Դպիրք ասն Եղիայի նախ պարպ է գալ» (Մարթ. ԺԷ. 10):

Պատասխանի. Դպիրքն այսպէս մեկն էին թիւր եւ համբաւեալ որպէս գալուստն Քրիստոսի, նոյնպէս եւ Եղիային, որպէս որք հարցինն զՅովհաննէս Եղիայ ես, թէ մարգարէն զոր Մովսէս ասաց: Եւ այս էր պատճառն, որ զԲ. գալուստն Քրիստոսի խառնէին եւ մի ասէին, եւ զԲ. կարապետն՝ մի, եւ զՔրիստոս ուրանալ տային:

Հարց. Ու՞ր ասացաւ Բ. կարապետն:

Պատասխանի. Վասն Յովհաննու, Եսայի բարբառոյ ասէ եւ Դաւիթ պատրաստեցից զճրագ օծելոյ իմոյ: Եւ Մաղաքիայ առաքելից զհրեշտակ իմ վասն Յովհաննու ասէ. Եւ առաքելից զԵղիայ Թեգբացի, որ հաստատեցէ զսիրտս հարց յորդիս, այսինքն՝ զմիտս հրէիցն ի բանս առաքելոցն, այս վասն Եղիայի ասէ:

Հարց. Վասն է՞ր զԵղիայ յայտնապէս զանուան յիշեն եւ ո՛չ զՅովհաննէս:

Պատասխանի. Որպէս առաջին գալուստն ծածուկ էր, նոյնպէս եւ կարապետն եւ վերջինն յայտնի, նոյնպէս եւ կարապետն:

Հարց. Որպէ՞ս նմանին եւ զանազանին սոքա:

Պատասխանի. Չորիւք զանազանին: Նախ՝ անուամբ: Երկրորդ՝ քաղաքաւ. Եղիայ թեգբացի եւ Յովհաննէս Հրէաստանի: Երրորդ՝ ազգաւ. Յովհաննէս Ղեւտացի եւ Եղիայ՝: Չորրորդ՝ ժամանակաւ. Յովհաննէս առաջին գալուստեանն եւ Եղիայ վերջին, որպէս ասէ՝ «Գուցէ եկեալ հարկանիցեմ զերկիր միանգամայն» (Մաղաք. Դ. 5), այսինքն՝ ահագին դատաստանաւն: Իսկ նմանին Ժ. կերպիւ. նախ՝ երկուքն կոյսք: Երկրորդ՝ յանապատի բնակեալ: Երրորդ՝ մաշկեակ զգեցեալ: Չորրորդ՝ մարգարէք: Հինգերորդ՝ կարապետք Քրիստոսի: Վեցերորդ՝ վկայեալ ի մարգարէից եւ՝ սայ, եւ՝ նայ: Եւ թներորդ՝ համարձակ քարոզեալ: Ութերորդ՝ երկուքն երեք ամ եւ կէս: Իններորդ՝ հրէիցն քարոզեն: Տասներորդ՝ սպանմամբ սրոյ. սայ ի Հերովդէէ եւ նա ի Նեոնէն վկայեալ: Ապա ճշմարիտ պատասխանեաց Քրիստոս, թէ Եղիայ եկն եւ գալոց է, ոչ միայն որ ի Թաբոր եկն, այլ զի Յովհաննէս եկն, Եղիայ գալոց է:

ՎԱՍՆ ԿԱՐԾԵԱԼ ՍԵԱՆՑՆ

Հարց. Զի՞նչ է կարծեալ սիւնքն:

<sup>1</sup> Ինչպէս այս, այնպէս էլ ՄՄ 5589 ձեռագրում (259ա) «Եղիայ» բառի կողքը տեղ է թողած՝ հավանաբար հետագայում ազգությունը լրացնելու համար:



Պատասխանի. Երեք աշակերտքն, որ ի լեռն ելին եւ եղեն աթոռք եւ վկայք Սուրբ Երրորդութեանն. նոքա են Գ. սիւնք եկեղեցոյ, որպէս խոհեմութիւն, արիութիւն եւ ողջախոհութիւն, եւ՛ հաւատ, եւ՛ յոյս, եւ՛ սէր, ի հոգիս մեր: Նոքայ ո՛չ էին անդ յորժամ այլ առաքեալքն ոչ կարացին բժշկել դիւահարն:

Մարկոս Թ. 1-12

ԲԱՐՍԵՂ ՄԱՇԿԵՒՈՐՅԻ

(Գլուխ Թ.)

Բան. Նարցին ցնա եւ ասեն. «Զի՞նչ է այն զոր դպիրքն ասեն՝ եթէ նախ Եղիայի պա՛րփ է գալ»: Նա պափասխանի եփ նոցա եւ ասէ. «Եղիա նախ եկեալ՝ յարդարեսցէ՛ զամենայն: Իսկ զիա՛րդ գրեալ է զորդոյ մարդոյ, զի բազում ինչ չարչարեսցի եւ անգոսնեցի: Այլ ես՝ ասե՛մ ձեզ, եթէ Եղիա եկն, եւ արարին ընդ նմա զինչ եւ կամեցան. որպէս եւ գրեալ է վասն նորա» (Մարկ. Թ. 10-12):

Մեկնութիւն. Պարտ եւ արժան էր ամենայն հաւատացելոց այնքան զիտող եւ ծանօթ լինել աստվածային գրոց՝ մինչ զի չլինե՛լ կարօտ յայլոց ուսանել, այլ միայն յԱստուծոյ եւ յաստուածային գրոց. ըստ այնմ որ ասէ՝ թէ եղիցին ամենեքեան ուսեալք յԱստուծոյ (հմմտ. Եսայի ԾԴ. 13): Զի որպէս ամենայն արուեստ ի ձեռն գործեացն իւրոց կատարեալ լինի, եւ առանց գործեացն՝ թէպէտ եւ կարի՛ հմուտ է արուեստաւորն, չկարէ՛ ինչ վճարել. այսպէս եւ որ քան զամենայն արուեստ մեծ է քրիստոնեութիւն՝ գործեօք իւրովք կարե՛ կատարիլ. եւ գործիք քրիստոնեութեան՝ ասացուածն աստուածաշունչ գիրքն են, զոր պարտ եւ պատշաճ էր ամենեցուն այնքան զիտել՝ մինչ զի առնել կարօտ յայլմէ ուսանել. զի անսուտ է բանն Քրիստոսի՝ որ ասաց, թէ խնդրեցէք՝ եւ գտջիք, բաղխեցէք՝ եւ բացցի (հմմտ. Մարթ. Զ. 7):

Այլ վասն զի բազումք զյոլով պատճառս ի՛ մէջ բերեն. այսինքն է, զորդիս սնուցանել՝ կանանց հոգալ՝ եւ թագաւորական հարկաց. սորին վասն չառնուն յանձն զայսպիսի աշխատութիւն: Վասնորոյ աղաչեմ, յորժամ զայլոց ասացեալսն լսիցէք՝ միտ դիք յօժարութեամբ, եւ գոնէ այնչափ խնամ տարջիք՝ որչափ ինչս ժողովելոյ.

թէպէտ եւ անպատեհ է զայս ասել՝ սակայն ա՛յնչափ սէր ցուցէ՛ք առ լսելութիւն բանին, եւ վասն այսորիկ բիւր չարեաց պատահեմք ի գրոց տգիտութենէ:

Զի զորօրինակ առանց լուսոյ ո՛չ ոք կարէ ուղիղ գնալ. սո՛յնպէս եւ որք ո՛չ հային ի ճառագայթս աստուածային գրոց՝ հանապազ մեղանչեն: Վասնորոյ բացցուք այսուհետեւ զաչս մտաց մերոց առ պայծառութիւն աւետարանական բանիս Մարկոսիս, որ թէպէտ յաշակերտաց կարգի գոլով՝ սակայն վերագո՛յն գտաւ քան զբազումս ի վարդապետաց, ըստ որում ասէ:

«Նարցին ցնա եւ ասեն. «Զի՞նչ է այն զոր դպիրքն ասեն՝ եթէ նախ Եղիայի պարփ է գալ»: Նա պափասխանի եփ նոցա եւ ասէ. «Եղիա նախ եկեալ՝ յարդարեսցէ զամենայն»» (Մարկ. Թ. 10-11):

Երկու՛ գալուստ ասեն աստուածային գիրք՝ Քրիստոսի, որպէս եւ է իսկ: Զմին՝ զանխուլ եւ ծածուկ, ըստ այնմ՝ «Իջցէ՛ որպէս զանձրն ի վերայ գեղման որպէս զգոլ գոլեալ յերկիր» (Մաղմ. ՆԱ. 6) եւ թէ՛ «երևեցաւ շնորհքն Աստուծոյ փրկիչ ամենայն մարդկան» (տէն Տիպ. Բ. 11). եւ «շնորհեաց մեզ զամենայն յանցանս մեր» (Կող. Բ. 13):

Իսկ զմիւսն՝ յայտնի եւ երևելի, ըստ այնմ թէ՛ «Աստուած մեր յայրնապէս եկեսցէ եւ հուր առաջի նորա բորբոքեսցի» (տէն Մաղմ. ԽԹ. 3). եւ թէ՛ «ակնկալցուք յայրնութենէ մեծին Աստուծոյ փրկչին Յիսուսի Քրիստոսի» (հմմտ Տիպ. Բ. 13), եւ «թէ յերկրորդումն առանց մեղաց յայրնեսցի» (Եբր. Թ. 28): Եվ առաջնոյն կարապետ եւ յառաջընթաց զմկրտիչն ասեն. ըստ այնմ՝ «Ձայն բարբառոյ յանապարհի, պարբաստարարէք զճանապարհ փեռան» (Մարթ. Գ. 3) եւ թէ՛ «ահա ես առաքեցիք զիրեշտակ իմ առաջի իմ որ հանդերձեսցէ զճանապարհս իմ» (հմմտ. Մարթ. ԺԱ. 10):

Որպէս եւ ասէր իսկ, թէ. «Արարէք պրոտ արժանի ապաշխարութեան» (հմմտ. Մարթ. Գ. 8), զի ահա եկն զառ յԱստուծոյ՝ որ բառնայ զմեղս աշխարհի (հմմտ. Յովհ. Ա. 29): Իսկ երկրորդին կարապետ եւ նախընթաց զԵղիա ասեն. ըստ այնմ թէ՛ «Ահա ես առաքեմ առ ձեզ զԵղիա Թեգրացի» (Մաղաք. Դ. 5): Սակայն դպիրքն գերկոսին ընդ միմեանս խառնակէին, եւ միայն գերկրորդ զալստենէն պատմէին ժողովրդեանն՝ եւ ասէին, թէ սա էր Քրիստոսն՝ ապա Եղիայի նախ պարտ էր գալ:

Յաղագս այսորիկ հարցանեն աշակերտքն ընդ Քրիստոս եւ ասեն. Զի՞նչ է այն զոր դպիրքն ասեն՝ եթէ նախ Եղիայի պարտ է գալ: Ոչ եթէ ի գրոց ինչ գիտէին՝ զի արք տգէտք եւ առանց դպրու-



թեան էին, այլ ի դպրացն լուեալ էին. զի տարածեալ էր բանն ի մէջ ժողովրդեանն, որպէս և Քրիստոսի գալստեանն համբաւն: Վասնորոյ և շամարտացին ասէր՝ թէ «Մեսիան գալոց է, նա պատմեացէ զամենայն» (հմմտ. Յովհ. Դ. 25): Եվ փարիսեցիքն զՅովհաննէս հարցանէին՝ միթէ Եղիա իցես դու, կամ մարգարէ՞ն (հմմտ. Յովհ. Ա. 21): Եվ զի ոչ կարէին աշակերտքն իմանալ զասացեալսն ի Քրիստոսէ, կամեցան ստուգել զճշմարիտն:

Նա զի և տեսին զՔրիստոս փառօք երևեալ ի լեբրինն, կարծեցին թէ՛ այս է փառքն երկրորդ գալստեան. սորին վասն ասեն, թէ այժմ եկիր դու փառօք՝ ընդէր կարապետ քո Եղիա ոչ երևի. և առավել զայս ասէին, զի տեսին զԵղիա ի բաց գնացեալ, որոց պատասխանի տա և ասէ. Եղիա նախ եկեալ յարդարեացէ զամենայն. յայտ է թէ յերկրորդ գալստեանն որպէս մարգարէն իսկ յայտ առնէ զի ասէ, թէ առաքեցից ձեզ զԵղիա թեզբացի՝ որ հաստատեացէ զսիրտ հարց առ որդիս, և զորդւոց առ հարս. զի մի եկեալ հարկանիցեմ զերկիր (հմմտ. Մաղաք. Դ. 5):

Եվ այս՝ երկրորդումն լինելոց էր, զի յառաջնումն ոչ եթէ ի հարկանել եկն, այլ ի բժշկել, «Ոչ եկի,- ասէ,- թէ դարեցայց գաշխարհ, այլ զի փրկեցից» (Յովհ. ԺԲ 47): Ուստի յայտ է թէ յերկրորդումն գալոց է թեզբացին յարդարելով զամենայն. այսինքն՝ ածցէ ի հաւանութի զհրեայսն՝ որ գտանիցին ի ժամանակին:

Այլ և յանդիմանեացէ զնեռն. որպէս ասէ Յովհաննէս ի յայտնութեան, և բազումս պատերազմեցի ընդ նմա, և յետ այնորիկ զանձն իւր դնէ վասն Քրիստոսի, վճարելով զմահն՝ զոր պարտի. թէպէտ յուր ժամանակս եկեաց մնաց անմահ: Ապա թէ ոչ են երկու գալուստ՝ այլ մի, որպէս դպիրքն ասեն, և այն՝ փառօք և պատուով: Իսկ զիւրդ գրեալ է զորդւոյ մարդւոյ, զի բազում ինչ չարչարեացի և անգոսնեացի: Քանզի զիրք ոչ միայն զփառացն Քրիստոսի պատմեն՝ այլ և զչարչարանացն. մանաւանդ թէ՛ նախ զչարչարանացն, և ապա զփառացն. որպէս գրէ Պետրոս (Կրն Ա. Պետր. Ա. 11): Եսայի ասէ. «Իբրև զոչխար ի սպանդ վարեցաւ» (Ես. ԾԳ. 7, հմմտ. Երեմ. ԺԱ. 19), Երեմիա՝ «Եկայք արկցուք փայր ի հաց մարմնոյ նորա» (Կրն Երեմ. ԺԱ. 19): Եվ Մովսէս, տեսանիցէք զկեանս ձեր կախեալ զփայտէ: Եվ Քրիստոս առ Կղեոպեանսն. «Ո՛վ անմիրք և հեղ-գափիրք,- ասէ,- ի հաւարալ ամենայնի՝ զոր խոսուցան մարգարէքն. ո՛չ զնոյնս պարս էր չարչարել Քրիստոսի, և մրանել ի փառս իւր» (Ղուկ. ԻԴ. 25): Եվ զի

երկու են գալուստքն, երկուց պարտ է լինել և նախընթացիցն և տես՝ զի չասաց լու թէ՛ չարչարեացի, այլ թէ՛ բազում ինչ չարչարեացի և անգոսնեացի:

Զի ոչ թէ իբրև զմի ոք ի սրբոցն չարչարեալ եղև Քրիստոս, այլ առաւել ևս քան զամենեսեան. զի ի սկզբանէ կենացն մինչ ի վախճան ի նախատինս և ի հալածանս եղև: Զի ի ծնանելն փախուցեալ եղև յԵզրիպտոս, և ի դառնալն նախատեալ լիներ զսամարացի և դիւահար կոչելով, գահավէժ առնէին, և վիմօք քարկոծել կամէին, նազովրացի նախատէին, և որդի հիւսան ասէին, և ընդ առաջնորդ դիւացն դաշնաւոր զնա համբաւէին, ի խաչ ևս հանին, և հայհոյէին՝ թէ որդի ես Աստուծոյ՝ էջ ի խաչէդ, և յետոյ մուրեցուցիչ զնա ասէին՝ և յաշակերտացն դողացեալ. վասն այսորիկ ասաց թէ՛ բազում ինչ չարչարեացի և անգոսնեացի: Այլ ես ասեմ ձեզ, եթէ Եղիա եկն, և արարին ընդ նմա զի՞նչ և կամեցան՝ որպէս և գրեալ է վասն նորա:

Եվ զի մերթ ասէ՝ «Եղիա գայ» և մերթ թէ՛ «Եղիա եկն». երկօքեան ճշմարիտ են. զի յորժամ ասիցէ թէ՛ «Եղիա գայ և յարդարէ զամենայն», զԵղիայէ իսկ ասէ: Իսկ յորժամ ասէ թէ՛ «Եղիա եկն», զՅովհաննէս կոչէ Եղիա՝ ըստ նոյնութեան գործոյն. զի որպէս նա՝ երկրորդ գալստեանն, նոյնպէս և սա՝ առաջնոյն եղև կարապետ. զի և մարգարէքն զամենայն ընտիր թագաւորսն՝ Դաւիթ կոչէին, և զհրէայսն՝ իշխան սողոմացւոց, և որդիս եթովպացւոց՝ ըստ գործոցն նոյնութեան:

Եվ ոչ վասն այսորիկ միայն կոչէ զնա Եղիա, այլ և զի ցուցցէ զնա համարձակութեամբն հաւասար Եղիայի. զի որպէս նա առ Աքայաբ և քուրմսն Բահաղու և անտառացն (Կրն Գ. Թագ. ԺԸ. 16-40): Այսպէս և Յովհաննէս առ Հերովդէս և զպիրսն, փարիսեցիսն:

Յաղագս որոյ և նախատէ զնոսա թէ՛ «Եղիա եկն», և ոչ ծանեան զնա՝ յետ այսքան յայտնի և երևելի գործոց, այլ արարին ընդ նմա զինչ և կամեցան. այսինքն՝ զի ի բանտ արկին, թշնամանեցին, սպանին՝ և բերին զգլուխն առաջի՝ սկտեղբ (Կրն Մաթթ. ԺԴ. 3-12, Մարկ. Զ. 14-29, Ղուկ. Թ. 7-9):

Աստ՝ գրէ Մատթեոս. «Յայնժամ ի միտ առին աշակերտքն՝ թէ վասն Յովհաննու Մկրտչի ասաց ցնոսա» (Մաթթ. ԺԷ. 13). թէպէտ դպիրքն չասացին զայս, սակայն ի կարգէ ասացելոցս Մարկոսի՝ վաղվաղակի առին ի միտ:



Որպէս և գրեալ է վասն նորա:

Ձայս՝ յաղագս Քրիստոսի ասէ. զի մի նոր ինչ և օտար համարեսցին զչարչարանսն, այլ կանուխ ժամանակօք յայտնեալ ի ձեռն գրոց մարգարէականաց՝ ըստ հրամանի մշտնջենաւորին Աստուծոյ, որ բաւական էր ի մխիթարութիւն նոցա, եթէ ոչ արտաքոյ կամացն հօր էր չարչարելն Քրիստոսի: Եվ զորօրինակ յաղագս Քրիստոսի գրեալ եղև ամենայն զինչ և կրելոց էր, եթէ՛ չարչարանքն և եթէ՛ փառքն և պատիւն, և ամենայնքն ճշմարտապէս եղեալ կատարեցաւ:

Այսպէս և հաւատացելոցս Քրիստոսի, զինչ և կրելոց էաք՝ ամենայնն գրեալ եղև՝ ասելով եթէ «Յաշխարհի ասար նեղութիւն ունիցիք» (Յովի. ԺԶ. 33), և թէ բազում նեղութեամբ պարտ է մտանել յայն հանգիստն (հմմտ. Գործք ԺԴ. 21): Յաղագս որոյ պարտիմք հայել յառաջնորդն հաւատոց և ի կատարիչն Յիսուս (հմմտ. Եբր. ԺԲ. 2) և հաստատիլ հաւատովք թէ՛ և վասն մեր գրեալքն լրումն առնելոց շնորհօքն Քրիստոսի:

Ղուկաս Թ. 29-36

ԻԳՆԱՏԻՈՍ ՍԵԲԼԵՌՆՅԻ

(Գլուխ Թ.)

Եւ յուրթորոյ աւուրն ընկրէ երիս յառաքելոց անփի եւ հանէ գնոսս ի գլուխ լերինն (հմմտ. Ղուկ. Թ. 28):

Յաւրինակ ութերորդի դարուն, յորում այս խորհուրդք զկատարումն առնուն: Իսկ Մատթէոս, զի զվեց աւուրսն, որ ի միջոցի անդ միայն կարգեաց եղ՝ ունի նա զվեցերորդի դարուն խորհուրդ՝ առաջին գալստեանն:

Արդ, ելեալ ի լերին անդ՝ կայ յաղաւթս: Եւ յանկարծակի փոխի գոյն երեսաց Նորա ի պայծառութիւն սասփիկ լուսոյ՝ լուսաւորագոյն, քան զարեգակն՝ յայնմիկ, զի գնորայն խախտէր ճառագայթս: Եւ էած, կացոյց ի լերին անդ զարեւոյթիւրն Մովսէս եւ զԵղիա՝ նախանձաւոր արինացն՝ ի յամալթ եւ ի յանդիմանութիւն նոցա, որ հակառակ զՆա արինացն համբաւէին գոլ (հմմտ. Ղուկ. Թ. 29-30):

Եւ յուսումն վարդապետութեան առաքելոցն՝ նման նոցա լինել և ի հաւատ փառաւոր յարութեանն՝ ըստ երեւելոյ նոցա: Զի կենդանիք եւ մեռեալք առհասարակ յայտնեսցին փառաւք, ըստ որում՝ Մովսէս եւ Եղիա: Արդ, յահաւորութենէ հրաշիցն՝ առաքելոցն ո՛չ զօրելով կալ ի հաստատութեան եւ, թմբբեալ, անկան յերկիր վասն արհաւիրացն եւ զարմանալի տեսեանն, եւ եհաս հոտ անմահութեան դրախտին եւ բուրեաց ի նոսա: Նորին աղագաւ Պետրոս զտաղաւարացն սկսանի խաւսել, զի ցանկացաւ հանապազորդ յայնպիսի փառսն տեսանել զՆա՝ հեռի յապստամբացն: Արդ, զայս ասաց, զի ափշեալ ոչ իմանայր զի՞նչ խաւսէր: Իսկ մարգարէիցն եկեալ աղաչէին, զի կատարեսցի զխորհուրդն, վասն որոյ եկեալ իսկ էր, զի պատառեսցէ զգիր պարտեացն Ադամայ: Եւ եղև այնուհետեւ մարգարէիցն եւ առաքելոցն ի մի միաւորութիւն՝ ըստ որում յեկեղեցիս միանալոց էին բանք մարգարէիցն մարգարէութեան, եւ առաքելոցն աւետարանութեան: Եցոյց նոցա այնուհետեւ անձեռագործ խորան, որ հովանի լինէր, եւ ստուէր ո՛չ առնէր: Լինի եւ ձայն բարբառոյ՝ ի Հաւրէ վկայեալ ի վերայ Որդւոյն՝ զՆա գոլ ընտրեալ, սիրելի, սերտ եւ ստոյգ Որդի: Յայս բարբառոյ զարհուրեալ աշակերտացն՝ զարկան յերկիր: Իսկ Յիսուս ձեռն տայ եւ կանգնէ, զոր ձայնն Հաւր ընկէց ի խոնարհ՝ ձեռն Որդւոյ կանգնեաց, կացոյց ի հաստատութեան: Արդ, եցոյց զփառս Իւր յառաջ քան զանարգանսն: Եւ պատուիրէ աշակերտացն, զի մի յայտնեսցեն զայն ի նմին ժամու, այլ՝ պահեսցեն իւրում ժամանակին յայտնութեան:

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

(Գլուխ Թ.)

Եւ եղև յեւ այսց բանից իբրև աւուրք ութ (Ղուկ. Թ. 28):

ԱՅԼ (սպ.) Որ ունի զխորհուրդ ութերորդի յաւիտենին մուտ, յորում հանգուցանէ զամենայն վաստակաւորս իւր, յետ հինգերորդի շրջագայ աւուրցս կենցաղոյս այսորիկ: Յանշրջելի եւ ի հաստատուն[ն], զոր Սողոմոն առակաւոր բանիւն ասէ, թէ՛ «Տոբ բաժին ի եւթնանց»՝ կենցաղոյս այսմիկ, «այլեւ ութից» (Ժող. ԺԱ. 2), այսինքն՝ հանդերձեալ յաւիտեանք: Զի աւրն այն վերջին ո՛չ ի գիշեր փոխի: Ըստ Զաքարիայի մարգարէի, թէ՛ «Եղիցի աւրն այն մի եւ Տէր մի



եւ անուն նորա մի»: Զի ո՛չ ոք Տէր կեցուցանէ զկուռս կա՛մ զմա՛մոնայս կա՛մ զայլ ինչ ախտ ցանկութեան: Որպէս ասէ առաքեալ, թէ՛ «Եղիցի Ասպուած ամենայն» (Ա. Կորնթ. ԺԵ. 28)՝ յաւիտեանս յաւիտեանից:

**ԿՐ Վասնզի [յ]ուլթերորդ դարուն զալոց է յաւուր միաշաբաթոջ, յորում արար սկիզբն արարածոց: Ի նմին աւուր զալոց է զգերեզմանս բանալ եւ նորոգել զմարդկութիւնս: Արդ՝ այս է խորհուրդ ուլթերորդ աւուրն, որ յայտնեաց զաստուածային փառացն երեւ ումն ի Թաբոր լերինն:**

**Առեալ զՊետրոս եւ զՅակոբոս եւ զՅովհաննէս** (Ղուկ. Թ. 28):

**ՍՏ** Զի ի ժամանակի չարչարանացն, յորժամ աղաւթէր զանցանել բաժակին առ ի մեր վարդապետութիւն, զերիսս զայս տանելոց էր: Զի, տեսանելով անդ զչարչարանաց իրս, ի միտ առցեն, եթէ սա է, զոր մարգարէքն քարոզէին զաստուածաբար երեւ ումն: Ապա, ուրեմն, կամաւորապէս եկն ի չարչարանս եւ ո՛չ ի Հարկէ:

**ԵՓ** Ընդէ՞ր ո՛չ տարաւ զամենայն աշակերտսն: Վասնզի ընդ նոսա էր Յուդայ աւտարացեալն յարքայութենէն, տանել ո՛չ էր արժանի եւ միայն թողուլ ո՛չ էր աւրէն: Զի մարդկան իբրեւ զկատարեալ Համարեալ էր վասն ընտրութեանն Քրիստոսի, որ ընտրեաց զնա, եւ ո՛չ էին յայտնեալ չարութիւն նորա: Բայց Քրիստոս զիտէր, եթէ նա է մատնիչ նորա:

**Ել ի լեառն կալ յաղաթս** (Ղուկ. Թ. 28):

**ՍՏ** Զի Պետրոս եւ Յակոբոս եւ Յովհաննէս արհամարհեցին զերեւելի աշխարհս: Վասն այսորիկ ելին ընդ Քրիստոսի ի լեառն, զի եւ զհրաշագոյն զփառս տեսին զԲանին Աստուծոյ:

**ՊՂ** Եհան զնոսա ի լեառն զնոր Կտակարանի պաշտանեայս՝ «Գրեալ արեւս ի սիրսս նոցա» (հմմտ. Երեմ. ԼԱ. 33)՝ ըստ մարգարէին, զի աւանդեացեն եկեղեցոյ, զոր տեսին եւ Հաստատեցին: Եւ զի Պետրոս դարձեալ լուիցէ, զոր Հայր խաւսեցաւ նովաւ: Ականջաւքն լուիցէ, զոր պատմեաց լեզուաւն եւ աչաւքն տեսցէ, զոր Հաւատայրն սրտիւ:

**Եհան զնոսա ի լեառնն** (հմմտ. Ղուկ. Թ. 28):

Հաստատել զվէմն, զոր Հայր եղ Հիմն Նոր Սիոնի, զծայր անկեան, զոր եղ Որդի [ի] Հիմն եկեղեցոյ: «Եհան ի լեառնն», զի զիցէ զվէմն ի

վերայ զլիսոյ նորա «Եթն աչեալ» (Զաք. Գ. 9)՝ ըստ Զաքարիայ մարգարէին՝ նշանակելով զչնորհս Սուրբ Հոգւոյն: Եւ զի մի՛ ոք զՀիմն քաղաքին երկնից, որ ի վերայ լերին[ն] շինելոց էր, կարասցէ քակել, եւ զի տեսցեն զփառս Որդոյն: Եւ վկայեսցէ Յովհաննէս, թէ՛ «Տեսա՛ք զփառս նորա իբրեւ զՈրդոյ Ասպուծոյ» (հմմտ. Յովհ. Ա. 14): Արդ՝ երեք սիւնքն եկեղեցոյ, յորոց վերայ Հանգչի Երրորդութիւնն եւ նախապատուե[ս]ցէ զվկայութիւն երիցն, քան զմիոյն Մովսիսի:

**Եւ եղեն փեսիլ երեսաց նորա այլակերպ** (Ղուկ. Թ. 29):

**ԿՐ** Զաստուածահրաշ երեւ ումն ցուցանէ, զի ծանիցեն, եթէ ո՛չ ի Հարկէ, այլ կամաւ կրէ զչարչարանս եւ զմահ, այլ եւ՝ վասն արարածոց փրկութեան: Եւ զի նոքա յանձն առցեն վասն նորա չարչարել՝ առ ի կեցուցանել զանձինս իւրեանց: Եւ դարձեալ. արեգակնակերպ երեւ ումն նշանակէր, եթէ նոյն պայծառութեամբ տեսանելոց եմք զնա, որպէս եւ են: Եւ նման նմա լինելոց եմք այսպիսի պայծառութեամբ [եւ] փառաւք:

**ՍՏ** Արդ՝ երեսքն փայլէին պայծառութեամբ, ահաւոր գեղեցկութեամբ տեսեան, զի սոսկալի Արեգակն արդարութեան այրել զգործս խաւարային զիշերոյ եւ պայծառացուցանել զգործ[ս] աստուածային տունջեան:

**Փոխեցաւ հանդերձ նորա սպիտակ փայլուն** (Ղուկ. Թ. 29):

**Եփ. (սպ.)** Զի զիտացեն, եթէ այն, որ փոխեաց զՀանդերձն իւր, նոյն է, որ կենդանացուցանէ զմարմին[ն] իւր, զոր զգեցեալն էր: Զի այն, որ ետ նմա զՀոգին եւ միացոյց ի փառս իւր անմատոյց, կարող է կեցուցանել զնա ի մահուանէ, յորմէ ամենայն մարմին ճաշակէր զնա:

**Սպ. Դարձեալ. Հանդերձն նշանակէր զառաքելական եւ զաւետարանական զիրս, որ աստուածաբանի եւ մեկնի ի միտս նոցա լուսազարդ բանիւք:**

**Եւ խաւսէին ընդ նմա Մովսէս եւ Եղիայ** (Ղուկ. Թ. 30):

**ԵՓ** Նոքա երկոքեանն չարչարեցան վասն Աստուծոյ: Վասն այնորիկ սիրելիքն միմեանց երեւեցան եւ սիրեցան ի Տեառնէ: Եւ Աստուած արար Հաւասարութիւն անուանց նոցա ի միում վայրի. «Յիշեցէք, ասէ, զարեւսն Մովսիսի ծառայի իմոյ» (Մաղաք. Դ. 4), եւ «Ահաա-



սիկ առաքեմ առ ձեզ գեղիայ Թեաքացի» (Մաղաք. Գ. 5): **Ձի Աստուած՝ զմինն ի բարձանց եւ զմինն ի խորոց, զի երկրորդեսցէ առաջի Շմաւոնի, եթէ սպասեն նորա մարդեղութեանն յերկնից հրեշտակք եւ յերկրի արդարք, եւ վկայեսցեն Մովսէս[ի] աւրինաւքն եւ Եղիայ[ի] մարգարէիւքն Քրիստոսի մարդեղութեանն: Եւ Տէրն՝ ասելով ցորդիսն Ջերեթեայ, թէ՛ «Որոց պարարաստեալ է ի Նաբէ ի[մ]մե» (Մաղաք. Ի. 23): Վասն այսորիկ երեւեցաւ Մովսէս ընդ աջմէ եւ Եղիայ ընդ ահեկէ: Այս, որ ծանոյց զինքն աշակերտացն, եւ ա՛ժ զՄովսէս աւրինադիր եւ զԵղիայ նախանձախնդիր աւրինացն՝ [ի] յանդիմանութիւն եւ յամաւթ հրէիցն, որ հակառակ Աստուծոյ եւ աւրինացն համարէին զնա գոյ, եւ յուսումն առաքելոցն եւ նման նոցա հաւատալ եւ լինել:**

**Երեւեալ փառաւք** (Ղուկ. Թ. 31):

**ՊՂ Ձի կենդանիք եւ մեռեալք առհասարակ յայտնելոց էին փառաւք յարքայութեանն՝ ըստ երանելոյն Մովսիսի եւ Եղիայի: Եւ զի ցուցցէ աշակերտաց իւրոց, եթէ ո՛չ միշտ ի վիշտս կայցեն, այլ անցանեն պատերազմունքն: Եւ նոքա փառաւք ճոխասցին յարքայութեանն: Եւ պատմեսցեն եկեղեցոյ, եթէ ո՛չ միայն Որդոյ են փառք յարքայութեանն, այլեւ զնոսա համապատիւս երեւեցոյց անդ, զի կոյսք եւ ողջախոհք ուրախ լինելոց են ի փառս աստուածայինս:**

**Արդ՝ եկեղեցի ունի զխորհուրդ արքայութեանն, որ ընդունի զկոյսս եւ զողջախոհս: Նման այսորիկ Մովսիսի՝ Պետրոս, եւ Եղիայի՝ որդիքն Ջերեթեայ:**

**Ասէին զելից նորա, զոր կապարելոց էր յերուսաղէմ** (Ղուկ. Թ. 31):

**ՈՂ. Վասն չարչարանացն եւ յարութեանն: Ձի [ի] միտ առցեն աշակերտքն եւ մի՛ ինչ աւտար յանկարծադէպ համարեսցին, այլ յառաջագոյն մարգարէիւք գուշակել զկամաւոր փրկագործութիւնն: Ըստ այնմ, թէ՛ «Նաւարարմացուցէ զքան ծառայից իրոց» (Խմմր. Գ. Թագ. Ա. 36): **Ձի աղերս արկանէին մարգարէքն զփրկութիւն աշխարհի աւարտել յերուսաղէմ, թէ՛ լցաւ բանք մարգարէիցն ի մարդեղութեան քո, կատարեսցի փրկութիւն մարդկան [ի] խաչելութեամբ քո:****

**ՊՂ Լսելի արար Մովսիսիւ եւ Եղիայիւ զփրկութիւն իւր, զի լսելոց էին զհայհոյութիւնն Աննայի եւ Կայիափայ: Եւ զի մարգարէքն եկեալ աղաչէին, զի եկեալ կատարեսցէ զխորհուրդն, վասն որոյ եկեալ իսկ էր:**

**ԻԳ Ձի պատանեսցէ զգիր պարտեացն Ադամայ: Եւ եղեւ միաւորութիւն մարգարէիցն եւ առաքելոցն, զի յեկեղեցիս միաբանելոց էին բանք մարգարէիցն եւ առաքելոցն եւ աւետարանչացն:**

**Իսկ Պետրոս եւ որ ընդ նմայն էին՝ ծանրացեալք ի քնոյ** (Ղուկ. Թ. 32):

**ՈՄ Քուն զծանրութիւն կոչէ, որ ի տեսեանն եղեւ նոցա, զոր աւրինակ՝ աչք, որ ի բազում լուսոյ այլայլին: Նոյնպէս եւ նոքա անդ կրէին, զի ո՛չ եթէ գիշեր [էր], այլ՝ տիւ: Բայց լուսոյն առաւելութիւնն ծանրացուցեալ նուաղեցուցանէր զաչացն զտկարութիւնն:**

**Զարթեան եւ փեսին զփառս նորա** (Ղուկ. Թ. 32):

**ԻԳ Եցոյց զփառսն յառաջ քան զանարգանսն:**

**Ծանրացեալք ի քնոյ անփի** (Ղուկ. Թ. 32):

**ՈՂ. Թմրութիւն աշակերտացն ո՛չ տաղտուկ ինչ եւ անախորժելի լինէր, յորմէ գերծանել ոք սիրէ եւ փախչել, այլ առաւել քաղցր եւ ախորժելի էր: Ձի որպէս սրբէիցն եւ քերթէիցն եւ հրաբուն զաւրացն, եւ որպէս Պետրոս ի զարմացման եղեալ, զանաւթն կտաւեայ տեսանելով, խաւսի ընդ Աստուծոյ: Եւ Պաւղոս յերրորդ երկինս համաբարձաւ եւ լսէր Բանս անճառս զԵրրորդութեանն զխորհուրդն: Եւ այժմ բազումք ի սրբոցն, եւ որք ըստ իւրաքանչիւր կարի աշխատութեամբ մաքրեն զխորհուրդս իւրեանց, եւ յաղաւթելն քաղցրանան միտք, մինչ ի թնդմանէ սրտին յորդեն արտասուքն: Եւ այս լինի ի ստեպ յիշելոյն զԱստուած, եւ մտացն աչաւք ի նա հայելով՝ ստանան: Որպէս նախավկայն սուրբն Ստեփաննոս աղաւթիւք զերկինս եբաց եւ տեսանէր զՈրդին Աստուծոյ ընդ աջմէ Հաւր Աստուծոյ եւ ապա՝ յանապական ուրախութեամբ լնոյր:**

**Ասէ Պետրոս ցՅիսուս. Բարիոք է մեզ ասփ լինել** (Ղուկ. Թ. 33):



**ԵՓ** Ետես զլեառն, զի հանգուցեալ էր ի հակառակութենէ դպրացն, եւ հաճոյ թուեցաւ բնակիլ ընդ Մովսիսի եւ ընդ Եղիայի: Եւ ուրախ եղեւ, զի հեռացաւ ի Հերովդէէ եւ [ի] Կայիափայ: Եւ բուրեաց հոտ անուշութեան դրախտին, եւ եհաս ի հոտոտելիս նորա եւ քաղցրացաւ նմա: Ետես նա զփառս նորա փոխանակ անարգանաց նորա, եւ ուրախ եղեւ յոյժ:

**ԿԲ** Կամ կասկածէր սակս հրէիցն, զի դեռեւս ո՛չ կատարելապէս իմանայր զՔրիստոսէ: Բարիոք էր անդ լինել եւ միշտ զՔրիստոս տեսանել: Յանկացաւ յանպիսի փառս տեսանել զՔրիստոս:

**Արասցուք երիս փաղաւարս. մի քեզ եւ մի Մովսիսի եւ մի Եղիայի** (Ղուկ. Թ. 33):

**ԵՓ** Զիա՞րդ գիտացին աշակերտքն զՄովսէս եւ զԵղիայ: Որպէս Յովհաննէս գիտաց զՏէր մեր, իբրեւ եկն առ նա, որպէս եւ ինքն ասաց, թէ՛ «Ես ո՛չ գիտէի զնա» (Յովհ. Ա. 31, 33): Արդ՝ Հոգին Սուրբ յայտնեաց ի բերան Շմաւոնի, զոր ինչ ո՛չ գիտէր նա:

**ՊՂ** Գիտութիւն մեծ բարբառեցաւ նա ի տգիտութեան իւրում, զի ծանեաւ զխորհուրդ Երրորդութեանն, զի աւր էր յայտնութեան Որդոյ՝ ընդ Հաւր պատուակից գոլով: Ո՛չ ծածկեցաւ Մովսէս եւ Եղիայ ի նոցանէ: Ծանեան երեքն զերեք անձինս աստուածութեանն, զի պատմեցեն զգալուստ նորա, թէ վասն է՞ր եղեւ:

**ՈՂ.** Մարգարէական հոգովն իմացան, զոր ի յարութեանն՝ ամենայն սուրբք եւ արդարք, որով ճանաչեն վերջինքս զառաջինքն:

**Ո՛չ գիտէր զինչ խաւսէր** (Ղուկ. Թ. 33):

**ՈԿ** Զի յահէն տազնապեալ էր եւ յահագին տեսնէն: Նաեւ այլ աւետարանիչքն ասեն, թէ ոչինչ առողջ մտաւք խաւսեցաք, քանզի յահէն ըմբռնեալ էր, քանզի զարհուրեցան եւ սոսկացան եւ այլ առաքեալքն:

**ԿԲ.** Վասնզի ի լուսոյ ճառագայթիցն ո՛չ գիտէր զինչ պարտէր խաւսել:

**Եկն ամպ եւ հովանի եղև ի վերայ նոցա** (Ղուկ. Թ. 34):

Զի ի միտ առցէ Շմաւոն, եթէ այս տեսչութիւն է եւ ձեռագործ շինուածոյ պէտս ո՛չ ունի:

**ՊՂ** Հոգին Սուրբ լուսափայլ ամպով երեւէր ի վերայ նոցա, եւ եցոյց նոցա զլոյս Հոգւոյն Սրբոյ: Զի պատմեցեն, եթէ լոյս ճշմարիտ է նա, որ լուսաւորէ զամենայն մարդ զեկեալսն յաշխարհ:

**ՍՏ** Արդ՝ փոխանակ երից տաղաւարացն՝ «ամպ» լուսաւոր «հովանի եղև նոցա»: Զի հանգուցէ եւ հանգչի, որ դայ յաւետարանս, յաւրէնս եւ ի մարգարէս: Իսկ ամպն, որպէս կարծեմ, Հոգին Սուրբ է: Զի ի համբառնալն առ Հայր լուսեղէն ամպաւք վերանայր, եւ ի միւս անգամ զալստեանն այնպէս գայ: Իսկ մարգարէիցն եւ առաքելոցն ընդ ամպովն լինելն նշանակէ զամենայն սուրբք եւ զարդարքն, որ ի գալստեանն ամպովք վերանան ընդառաջ Քրիստոսի եւ այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինին:

**Չայն եղև ամպոյն** (Ղուկ. Թ. 35):

**ՈԿ** Ինքն ո՛չ խաւսէր եւ ո՛չ Մովսէս եւ ո՛չ Եղիայ, այլ մեծն եւ արժանին հաւատարմութեան վկայն Հայր բարբառ արձակէր յամպոյն, քանզի այնպէս միշտ երեւ ի Աստուած: Ըստ այնմ, եթէ՛ «Ամպ եւ մէզ շուրջ գնովաւ» (Մաղմ. ՂԶ. 2) եւ այլուր, թէ՛ «Նաբեալ ի վերայ թթթեւ ամպոյ» (Ես. ԺԹ. 1): Եւ դարձեալ. եթէ՛ «Որ եղ յամպս զգնացս իւր» (Մաղմ. ԾԳ. 3), եւ Դանիէլ, եթէ՛ «Տեսի իբրև զՈրդի մարդոյ, զի գայր ի վերայ ամպոց» (հմմտ. Դանիէլ Է. 13): Եւ այլուր, եթէ՛ «Ամպն անջրպետեաց զնա յաչաց նոցա»: Վասն այնորիկ անզի գայր, զի հաւատասցեն, եթէ յԱստուծոյ գայ բարբառն:

**Դա՛ է Որդի իմ սիրելի ընտրեալն** (Ղուկ. Թ. 35):

**ՊՂ** Այսաւր Շմաւոն ի լերինն լուաւ, զոր Յովհաննէս լուաւ Յորդանան: Ո՛չ յանձն առնոյր Մկրտիչն, հակառակէր Պետրոս: Մինն՝ վասն երկի[ւ] զի արգելոյր զՋրով մկրտութիւնն, իսկ միւսն՝ վասն սիրոյ ջանայր խափանել զարիւն մկրտութեանն: Արդ՝ Յովհաննէս անսայր կատարել կամացն Յիսուսի, իսկ Պետրոս, որ թարգմանի վէմ, կայր կարծր, զոր մեծին Հաւր ձայնն հնազանդեցուցանէր: Յովհաննէս ի խոնարհ լսէր. «Դա՛ է Որդի իմ սիրելի» (Մաթթ. Գ. 17, ԺԷ. 5, Մարկ. Թ. 6), եւ զի ժողովրդարանին էր քարոզ, Շմաւոն ի լերինն ուսանի, զի եկեղեցոյ էր գլուխ եւ վարդապետ: Յովհաննէս ի խոնարհս տեսանէր զՀոգին Սուրբ, զի զմարմին խոնարհութեանն Յիսուսի մկրտէր, իսկ Պետրոս ի լերինն տեսանէր զՀոգին լուսափայլ



ամպով, զի ի Հաւրէ տեղակացի վասն արեան մկրտութեանն Յիսուսի եւ վասն փառաց աստուածութեան Որդոյն:

**ԻԳ** Ընտրեալն սիրելի, թերեւս՝ ստոյգ Որդի:

**Դմա լուարուք** (Ղուկ. Թ. 35):

Որպէս եթէ ի խաչ կամի ելանել, մի՛ ինչ ընդդէմ դառնայցէք: Եթէ այդպէս իցէ, որ այլու՞մ ձայնի լսէ, մահու մեռանիցի:

**ՊՂ** Զայնեաց Հայր ի լսելիս նորա, զի զգուշացի Շմաւոն ոչինչ խնդրել [ի] կամաց Հաւր եւ Որդոյ արտաքոյ, եւ որպէս թէ ասել Յիսուսի առ նա. «Անաս՝ գեթ Հաւր, Շմաւոն՝, որ բազում անգամ յառաջագոյն ասացի, թէ պարտ է ինձ չարչարել վասն ձեր: Դուք քաւեցիք Մովսէս եւ Եղիայ եւ ո՛չ ախորժեցիք»: Արդ՝ Հնազանդեայ Հաւր յասելն՝ «Դմա լուարուք»:

**Ընդ լինել բարբառոյն գփաւ Յիսուս միայն** (Ղուկ. Թ. 36):

**ՈՎ** Զի մի՛, յորժամ կարի ահն՝ զարհուրեցուցէ զնոսա, յիշատակ իրացն մերժեսցի: Վասն այնորիկ վաղվաղակի փարատէ զերկի[ւ]ղն: Եւ երեւէր ինքն միայն, զի յայտնի լիցի, եթէ ո՛չ վասն միոյ ուրուք նոցա եկն բարբառն յերկնից, այլ վասն միոյն Յիսուսի: Եւ իբրեւ բարբառն եկն, նոքա անհետ եղին, զի եթէ վասն միոյ ուրուք ի մարգարէիցն ասացեալ էր, ո՛չ ինքն միայն մնայր ի զատանել երկուցունցն ի Յիսուսէ: Եւ ի գալ ձայնին Հաւր՝ անհետ եղին Մովսէս եւ Եղիայ: Եւ արդ՝ ո՛չ էր պիտոյ, եթէ առաքեալք[ն] ուսցին վասն Որդոյ, զի կանխաւ ի Հաւրէ ստուգեալ էին: Այլ աստ ուսան աշակերտքն, զոր ո՛չ գիտէին, թէ վասն է՞ր եղեւ գալուստ նորա: Եւ մի՛ գայթաղեցին ի բանս նոցա, այլ ուշ ունիցին բարբառոյն Հաւր, եւ մի՛ խառնեցին խաւսք Տեառն ընդ ծառայիցն եւ պղտորեցին միտք նոցա: Կարծել վասն Մովսէսի եւ Եղիայի գասելն:

**ՍՏ** Եւ մի՛ մոռացին վասն ելիցն, որ լուան ի Հաւրէ եւ ի մարգարէից անտի, այսինքն՝ զԱւետարանս եւ զԱւրէնս եւ զՄարգարէս միաբանել վասն Քրիստոսի մարգեղութեանն եւ մի եղեն:

**Ո՛չ ումեք պապմեցին յաուրսն յայնոսիկ** (Ղուկ. Թ. 36):

**Եփ.** Քանզի գիտէր Յիսուս, եթէ ո՛չ հաւատան նոցա: Այլ որպէս զմոլորականս համարին զնոսա եւ ասէին, եթէ ուստի՞ գիտէք

դուք զԵղիայ, եւ զի ի Մովսէսի գերեզմանին վերայ ո՛չ ոք եհաս: Լինէր այնուհետեւ հայհոյութիւն: Վասն այնորիկ ասաց. «Մնացէր դուք» (հմմտ. Մարկ. ԺԴ. 34) մինչեւ ընդունիցիք զաւրութիւն: Զի, յորժամ պատմեսցեն եւ ո՛չ հաւատացեն, կեցուցիք զմեռեալս վասն զըստվութեան նոցա եւ վասն ձեր փառաց: Եւ դարձեալ. «մնացէր» մինչեւ պատառեսցին գերեզմանք, եւ ելցեն արդարքն հին եւ նոր եւ եկեսցեն յերուսաղէմ քաղաք թագաւորին մեծի: Ապա այնուհետեւ հաւատան նոքա, եթէ այն, որ յարոյց զմեռեալս, նոյն յարոյց զՄովսէս եւ զԵղիայ: Եւ ասէին. «Stagnó, tpe qw' Eghay hgn-ganet qra» (Մարկ. ԺԵ. 36): Եւ տեսին եկեալ ձայնիւ նորա արդարք բազումք ներքուստ ի դժոխոց: Զի թէ մեռեալք լուան եւ եկին, որչա՞փ եւս կենդանին Եղիայ:

**ԻԳ** Այլ պահեսցեն յիւրում ժամանակի յայտնութեանն եւ մի՛ տարածամ քարոզել զաստուածութիւն նորա, զի այս ժամանակ չարչարանաց է: Եւ ապա յայտնի տէրութիւն նորա եւ համարձակ բառնան զխաչ չարչարանաց նորա եւ քարոզեն զաստուածութիւն նորա:





## 24. ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ ԼՈՒՄՆՈՏ ԴԻՎՆԱՐԻՆ

Մաթթեոս ԺԷ. 14-21

### ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՅԻ

(Գլուխ Ժ.)

Եւ սաստեաց նմա Յիսուս եւ ել ի նմանէ դեւն (Մաթթ. ԺԷ. 17):  
Վասն զի գրեալ է, թէ սաստեաց լուսնահարին եւ ոչ դիւին,  
կարծեմ ի մեղաց էր դիպեալ պատուհասն, զի ընդունելով զսաս-  
տումն, աւզնեսցի յելանել դիւին:

Ամէն ասեմ ձեզ, եթէ ունիցիք հաւաքս քան զհաք մանանխոյ,  
ասէք լերինս այսմիկ՝ փոխեաց եւ փոխի (Մաթթ. ԺԷ. 19):

Քանզի նմանեցաւ արքայութիւնն երկնից հատոյ մանանխոյ,  
նմանեցաւ եւ գովելի հաւատ հատոյ մանանխոյ, իսկ որ միոյ  
իմիք նման են, եւ ինքեանց նմանին. ապա ուրեմն գովելի հաւատ  
նմանի արքայութեանն երկնից, հաւատ բոլորովիմբ հատոյ յիրա-  
ւի նմանեցաւ, զոր պարտ է երկրագործել, զի աճեցեալ եղիցի ծառ  
մեծ:

Եւ ոչ ինչ րկարասցի ձեզ (տե՛ն Մաթթ. ԺԷ. 20):

Որ հաւատայն ճշմարտութեամբ, նմա ոչինչ յէիցս անգաւ-  
րա[ս]ցի (s!) յաւգուտ իւր, այլ ամենայն գործակից լինի ի բարի:

### ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՒ ԵՓՐԵՄ

|| Իբրեւ եկն ի ժողովուրդն ասէ. մաթեաւ այր մի ի ծունր իջանէր  
եւ ասէր՝ Տէր ողորմեայ որդոյ իմոյ (Մաթթ. ԺԷ. 14):

Զայրս զայս կարի անհաւատութեան ախտացեալ ցուցանէ ջիր  
եւ այս ի բազում իրաց իսկ յայտ է: Նախ յայնմանէ զոր Քրիս-  
տոսն ասաց, թէ որ հաւատաւ նմա ամենայն, ինչ հնարաւոր գոյ եւ  
ի նմանէ իսկ, որ ասէրն թէ՛ աւզնեայ անհաւատութեանս իմոյ: Եւ  
դարձեալ յասելոյն առ զՔրիստոս, թէ հնար ինչ իցէ եւ թէ անհա-

ւատութիւն քո եղեն պատճառս չելանելոց դիւրին, զի աշակեր-  
տոցն լինիս մեղադիր: Ուստի եւ յայտ իսկ է, զի թէպէտ եւ ոմանք  
յաշակերտացն տկարացան, այլ ոչ ամենիքեան: Քանզի սիւնքն  
չէին անդ ուրէք՝ ի մաւտ: Տե՛ս եւ զմիտս եւս զտղգոհութիւն առն,  
զի առաջի ժողովրդոցն խոտէր զաշակերտսն:

Հապուցի, ասէ, զնայ առ աշակերտսն քո եւ ոչ կարացին բժշկել  
(հմմտ. Մաթթ. ԺԷ. 15):

Այլ ինքն ազատէ զաշակերտսն ի մեղադրութենէ եւ նմա կա-  
րի լինի մեղադիր: «Ո՛վ ազգ անհաւար եւ թիր. մինչ եւ ցերք իցեմ ընդ ձեզ»  
(Մաթթ. ԺԷ. 16): Ո՛չ ի նորա դէմս միայն ձգէ զբանն, այլ առ ամե-  
նայն հրէայան, քանզի թերեւս եւ գայթակղեն բազումք, որ անդն  
կային: Իսկ ասելովն մինչեւ «ցերք իցեմ ընդ ձեզ», թէ ախորժական է  
նմայ մահն իւր եւ ցանկալի եւ փափաքելի մեկնելն, որչափ ընդ  
նոսա շրջել ծանրագոյն թուէր նմայ: Ոչ միայն մեղադիր լինի, այ-  
լեւ ասէ, թէ՛ «Աձեք զնայ այսր եւ հարցանէ, թէ որչափ ժամանակք են»: Եւ  
ընդ աշակերտացն ինքն տայ իրաւունս եւ զնա ածէ ի յոյսն հեշ-  
տական եւ հաւատալ, թէ լինի նմա բուժել ի չարչարանաց եւ թոյլ  
տայ դիւին լլկել եւ ո՛չ ի ցոյցս ինչ ժողովրդոցն ձեւ արարեալ սաս-  
տեաց դիւին, այլ վասն Հաւրն: Զի յորժամ տեսանիցէ, թէ կոչելոյն  
միայն խոռվեցաւ դեւն, հաստատեսցի ի հաւատս վասն նշանին,  
որ լինիցի: Եւ քանզի ասաց թէ «ի մանկութենէ հետէ» եւ թէ հնար  
ինչ է՝ «աւզնե՛ա ինձ», ասէ, որ հաւատայցէ ամենայն հնար գոյ:  
Զի թէ հաւատասցէ որպէս պարտն է հաւատալ, եւ դու իսկ կարող  
ես բժշկել զնայ եւ ոչ միայն զնայ, այլ եւ բազումս, զայս իբրեւ  
ասաց դիւրեաց դիւահարն:

Իսկ այն, զի ասէ, «ով ազգ չար, թիր եւ անհաւար», վասն այնր զի  
յանդիմանեաց նայ զաշակերտս նորա, ոչ կարացին ասէ բժշկել  
զնայ, զի այսպէս կարծեաց վասն նոցա, թէ չեւ եւս են կատարեալ  
արուեստագիտութեամբ վարդապետին իւրոց: Հաս այս առ աշա-  
կերտսն եւ կացոյց զնոսա ի մէջ ծփանաց: Եկին ուսանել ի նմանէ,  
թէ վասն էր ոչ կարացաք բժշկել զնայ: Սայ, ասէն Բեեղզբուղ  
իշխանաւն դիւաց հանէ զդեւս, ասեն՝ այս աշակերտք ոչ են ուսել  
զարուեստ գիտութեան նորա: Իսկ ընդէ՞ր ոչ բժշկեցին զնայ, վասն  
այսորիկ՝ ո՞վ ազգ թիր:



ԿՂ Եւ դու մի մի այսմ եւեթ բարերարութեան միտ ղնիցես, այլ եւ այնմ եւս տեսչութեան, զի այնչափ ժամանակս ի նմա էր դեւն եւ ոչ տայր մեղանչել, զի թէ ոչ կարի իսկ վայելեալ էր առն յԱստուծոյ խնամսն ի վաղուց հետէ կորուսեալ էր զնայ: Քանզի եւ ասէր, իսկ թէ ի հուր արկանէ եւ ի ջուր ար այնչափ յանդգնէր նայել ի սպանանելն իսկ չածէր ակն. եթէ ոչ եւ ի մոլորութեանն սանձեալ էր զնայ Աստուած: Եւ զի՞ լուսնոտ իսկ կոչէ: Ընդ այն մի՛ խոռովիցին, զի հաւր դիւահարին էին բանքն: Եւ զիա՞րդ ասեն աւետարանիչն՝ ասիցէ ըստ բազմաց կարծեաց նոյնպէս եւ զանուանսն զնէ: Քանզի դեւն ըստ ընծայից լուսնին իմն խանձեալ հասանէ ի վերայ ընպունելոցն: Ոչ թէ լուսինն ինչ զայն գործիցէ՝ ա՛ւն, անդր ի բաց տար, այլ դեւն առ չար գործարանս կամ ի նոր ընծայսն կամ ի հինսն առ ի խաբել զմիտս անմտաց կարծեցուցանէ զայնպիսի կարծիս: Այլ չէ ճշմարիտ մի ոք հաւատասցէ, եւ զի հարցին աշակերտքն, թէ մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնայ, ինձ այսպէս թուի, թէ կասկածէին իմն, թէ կորուսին զշնորհսն, որ հաւատացան նոցա: Քանզի առին իշխանութիւն ի վերայ այսոց պղծոց: Վասն որոյ եւ առածինն իսկ մատուցեալ հարցանէին ո՛չ առ ամաչել ինչ, զի թէ գործն վճարեցաւ եւ նոքա յանդիմանացան: Առ աւելորդ էր այնուհետեւ ամալթն, այլ քանզի վասն անճառ եւ ծածուկ եւ մեծ իմն իրաց կամէին հարցանել՝ զի՞նչ ասիցէ Քրիստոս: Վասն անհաւատութեան ձերոյ ասէ, զի թէ՝

«Ունիցիք հաւաքս քան զհապն մանանխոյ, ասացջիք լերինս թէ փոխեաց եւ փոխեսցի» (հմմտ. Մարթ. ԺԷ. 19):

Ապայ թէ ասիցես ուր է, զի զլեռն ուրէք փոխեցին, ասեմ, թէ՛ եւս մեծսամեծս արարին, զի բիւրուց բիւրս մեռեալս յարուցին եւ թէ առ նոսա չեղեւ այնպիսի ինչ, ասն զի պէտք այնպիսիք չլինէին եւ այլազգ եւս, քան զի եւ ոչ Նայ իսկ ասաց, թէ փոփոխեսջիք, այլ թէ կամիք, կարող էք եւ զի չի փոփոխեցին, որ զի չէին կարող: Այլ քանզի ոչ կամեցան եւ ոչ պէտք ինչ այնպիսիք պահանջէին, բայց թերեւս եղեւ իսկ, այն եւ չգրեցաւ, քանզի ոչ զամենայն զոր արարին գրեցին: Հաւատս աստ զնշանացն միայն ասէ, եւ զմանանխոյ ճառէ, զի զանչափ զաւրութիւն իւր յայտ առնիցէ, զի թէ՛

պէտ անձամբ փոքր ինչ կարծիցի մանանխին, այլ զաւրութեամբ քան զբազում ինչ սաստիկ է: Զի ցուցանիցէ, թէ փոքր ինչ ի սերտ հաւատոց բազում զաւրութիւն ունի յանձին եւ ոչ այսչափ, այլ եւ զլերինս եւ այս աւելու եւ եւս յառաջ մատչի, չիցէ ինչ ասէ, որ ոչ հնազանդեսցի ձեզ: Տե՛ս աստ զհոգոյն զաւրութիւնն, զի զնոսա որքան զհատ մանանխոյ հաւատս չունին, այնպէս առ սակաւ սակաւ յորդեաց, զի աղբերք եւ գետք հաւատոց ի նոցանէ բխէին: [Ա.]յս ասէ ազգ ոչ ելանէ, թէ ոչ պահաւք եւ աղաւթիւք, զամենայն իսկ զդասուց դիւացն ասէ, եւ ոչ զլուսնականացն եւ տե՛ս զի արդ անդէն վաղվաղակի զպահոցն ճառս ի մէջ բերէ եւ մի ինչ զ[ը]անաւորիցն ասիցես, թէ ոմանք եւ առանց պահոց իսկ դեւս հանին սաստելովն միայն: Մի ոք կամ երկուք ուրէք հանին, այլ որ անգամ մի յայսպիսի չարչարանս մատնեալ իցէ, չէ հնար եթէ ի փափկութեան իցէ. եւ այնպիսի մոլորութենէ ազատանալ կարիցէ: Զի ընդ հաւատոցն եւ պահքն ոչ սակաւ նպաստ լինի ի զաւրութիւն, քանզի բազում ցածութիւն գանձ է եւ հրեշտակ ի մարդոյ յարդարէ եւ ընդ անմարմնական զաւրութիւնս պատերազմի եւ ոչ պահքն առանձին միայն, այլ հանդերձ աղաւթիւք լինել եւ նախ աղաւթքն պիտոյ են, զի որ յաղաւթսն կայցէ, որպէս պարտն է կալ եւ պահիցէ, ոչ զբազում իմիք կարաւտանա: Եւ զի ասէ՝ քեզ ասեմ խուլ եւ համր. զի յայտ արասցէ թէ նմայ ցասն զի Աստուած է մեկին է ամենայն ինչ, այլ զի արագ լսէր նմայ այսն պիղծ. խուլ եւ համր, քանզի մարդիքն հաւատացեալ եւ զի խորհեցաւ այսն դարձեալ միւսանգամ զառնայ կապեաց զնայ եւ ասէ. «Այլ մի եւս իշխէր դառնալ անդրէն»:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՅԻ  
(Գլուխ ԺԷ.)

Եւ իբրեւ եկին ի ժողովուրդն, մաքեաւ այր մի, ի ծունր իջանէր եւ ասէր. «Տէ՛ր, ողորմեաց որդւոյ իմում (Մարթ. ԺԷ. 14):

Թէպէտ ի լերինն զփառսն Տեառն աշակերտքն տեսին, սակայն զչարչարանսն լսելով վշտանային, վասն որոյ ի սքանչելիս դայ, զի մխիթարեսցին՝ իմացեալ, թէ ո՛չ ի հարկէ, այլ կամա՛ւ մեռանի.



քանզի միշտ զայս առնէ. յորժամ զչարչարանացն ճառէ եւ կամ զմեծագոյն իրաց, ի հրաշս մատչի. որպէս ասէ, թէ «իբրեւ եկին ի ժողովուրդն, մատեալ այր մի»: Կարի իմն անհաւատութեան ախտիւ վարակեալ թուի այրս այս. յայտ ի բանիցն Մարկոսի է. «Թէ կարող ես, օգնեա՛ մեզ, Տէր» (Մարկ. Թ. 21), եւ թէ՛ «Օգնեա՛ անհաւատութեանս իմոյ» (Մարկ. Թ. 23): Բայց ստիպեալ ի գլխոյ որդւոյն՝ զձեւ մաղթողի զգեցաւ. ոչ միայն բանիւ զվշտակցութիւնն խնդրէ, այլեւ երկրպագութեամբն ողորձէր եւ յիրաւի ասէր թէ՛ «Ողորմեա՛ որոյս իմոյ».

նախ՝ զի նա ի ցաւոցն տանջէր, եւ երկրորդ՝ զսէր եւ զհաւատ հիւանդին լաւագոյն կարծէր առ բժիշկն քան զիւրն:

Ձի լուսնորի եւ չարաչար հիւանդանայ, բազում անգամ անկանի ի հուր եւ երբէք՝ ի ջուր (Մարթ. ԺԷ. 14):

Տե՛ս աստ զչարութիւն զիւրն եւ զտեսչութիւն խնամոց Արարչին. զզիւրն՝ զի հնարեալ զայս չարն՝ ոչ միայն զայրն տանջէր, այլեւ զտեսողսն ի հիւանդութիւն մատնէր, զի յընծայութեան կամ ի պակասութեան լուսնի լկելով եւ ի հուր եւ ի ջուր ձգելով՝ զարարածս Աստուծոյ ի հայհոյութիւն բերէր, որպէս զի ի լուսնոյն ասէին կամ ի հրոյն եւ ի ջրոյն, եւ այսպէս հայհոյեալ՝ հոգւով հիւանդանային, եւ կամ զնոյն ինքն ի հուր եւ ի ջուր ձգեալ՝ մարմնով հեղձուցանէր: Իսկ տեսչութիւնն Աստուծոյ՝ այնու, զի յայն ժամանակս ոչ ակն ածէր սպանանել զնա, եթէ ոչ խնամօքն Աստուծոյ պահեալ էր այրն, քանզի միշտ ի հուր ձգէր եւ ի ջուր, բայց Աստուած ոչ տայր թոյլ նմին մեղանչել: Բայց թէ ասիցէ ոք՝ եթէ ոչ էր լուսնական, ընդէ՞ր «լուսնոտ» անուանեաց, եւ կամ աւետարանիչն է՞ր վասն գրեաց: Գիտասցէ, թէ ոչինչ է խռովութիւն ի տեղւոջս, քանզի զհօր զիւրազարի են բանքս, եւ աւետարանիչն ըստ բազմաց սովորութեան զանունն գրեաց. քանզի, որպէս ասացաք, ի նորանալ կամ ի հնանալ լուսնին շարժ լէր, որ չէ իսկ բնաւին ի լուսնոյն զայս կարծել, զոր մարդիկ սովորեալ այնպէս կոչէին: «Ձի լուսնորի, – ասէ, – եւ չարաչար հիւանդանայ». քանզի ծանր լկելովն ճնշեալ զմարմինն չարչարէր եւ անպախելագարեալ յապշութիւն ձգէր, որով մոլեալ զանձն հրոյ եւ ջրոյ տայր՝ երբեմն ի տան եւ երբեմն արտաքս:

Եւ մարտոցի զնա աշակերտացն Քոց, եւ ոչ կարացին բժշկել» (Մարթ. ԺԷ. 15):

Ի մի՛տ առ դարձեալ զնորա զժգոհութիւնն, թէ զիա՛րդ առաջի ժողովրդոցն խոտէր զաշակերտսն (թէպէտ Տէրն ազատէ զնոսա եւ կարի նմա մեղադիր լինի, քանզի կարծէր զնմանէ Բէեղզերուղաւ իշխանաւ դիւաց հանել զդեւս). իսկ աշակերտքն Քո չեւ եւս են տակաւին կատարեալ յարուեստ վարդապետութեան Քո, վասն այսորիկ ոչ կարացին հանել: Այլ նա թէպէտ զամենեսեան ազարտեաց, բայց ոմանք յաշակերտացն տկարացան, այլ ո՛չ ամենեքեան, քանզի սիւնքն չէին անդ ուրեք մօտ: Այլ քննելի է, թէ ընդէ՞ր ոչ կարացին հանել աշակերտքն. զի թէ ոք զանհաւատութիւնն հօրն ասիցէ պատճառ՝ զտանեմք ի Գիրս, զի սրբոցն սրբութիւնն միայն բաւական եղեւ հրաշս գործել, որպէս առ Եղիսէիւ, զի որք զմեռեալն տանէին եւ տեսեալ զհէնս ասորւոցն՝ փախեան, զի ոչ յարուցանել տանէին, այլ ի թաղել, իսկ մեռեալ մարմինն ոչ զգայր հաւատալ, բայց մարմնոյն Եղիսէի սրբութիւնն յարոյց զմեռեալն (հմմտ. Դ. Թագ. ԺԳ): Իսկ թէ որպէս ոմանք ասեն, թէ նախանձարեկ եղեալ էին առաքեալքն վասն ոչ լինելոյ ընդ երիսն ի լերինն Թաբորական, եւ ոչ յայս գայ յարմարական, եթէ հօր զիւրազարին լեալ էր հաւատոյ զօրութիւն, զի յերկուց կողմանց պարտ է լինել արժանաւորութիւն, որով հրաշք ներգործի: Բայց ինձ թուի, թէ նոքա ծուլացեալք էին, եւ սոքա՝ անհաւատութեամբ զգածեալք, վասն այսորիկ ոչ կարացին հանել, եւ այս յայտ ի կարգէս է, զի զերկոսինն յանդիմանէ:

Պապասխանի եր օրսու եւ ասէ. «Ո՛վ ազգ անհաւար եւ թիր, մինչեւ ցե՛րր իցեմ ընդ ձեզ, մինչեւ յե՛րր անսայցեմ ձեզ. ա՞՞ զնա առ Իս» (Մարթ. ԺԷ. 16):

Ո՛չ ի նորա դէմս միայն ձգէ զբանն, զի մի՛ վհատիցի, այլ առ ամենայն հրէայսն, զի թերեւս գայթաղեալ էին բազումք, որ անդն կային: «Ո՛վ ազգ», – ասէ. հիանայ ընդ անհաւատութիւնն, որպէս այլուր ասէր. «Ո՛վ անմիտք եւ հեղգասիրտք՝ ի հաւաքալ ամենայնի, գոր խօսեցան մարգարէքն» (Ղուկ. ԻԴ. 25), ոչ միայն հաւատալն թերի, այլեւ թիւրեալք ի գործոյ օրինացն՝ ըստ այնմ. «Ձի ազգ մի թիր են» (Բ. Օր. ԼԲ. 20) եւ որդիք անհաւանք: «Մինչեւ ցե՛րր իցեմ ընդ ձեզ, մինչեւ յե՛րր անսայցեմ ձեզ». ցասմամբ բարբառի, որպէս թէ ասել՝



այսչափ ժամանակս ընդ ձեզ եմ, եւ ո՛չ ուղղեցայք, այսուհետեւ ոչ ներեմ անհաւատութեան ձերոյ: Կամ թէ զմարգարէին ասէ. «Յագեալ եմ ձեօք» (Ես. Ա. 14) եւ տաղտկացեալ եմ ազգաւդ այդուրիկ, մինչ զի մեկուսանալն ի ձէնջ ախորժելի, եւ խաչ եւ չարչարանս կրել փափագելի է Ինձ, քան ընդ ձեզ շրջել եւ քաղաքակից ձերոյ թիւրութեանդ լինել: «Աձ, - ասէ, - զնա առ Իս». այսու ի յոյս հաշտական ածէ հաւատալ ի նա, թէ առնէ բուժումն չարչարանացն. զի թէ ոչ բժշկէր, եւ ոչ բնաւին իսկ կոչէր:

Եւ սաստեաց ի նա Յիսուս, եւ ել ի նմանէ դեմն, եւ բժշկեցաւ մանուկն ի ժամէն յայնմանէ (Մաթթ. ԺԷ. 17):

Ղուկաս ասէ. «Մինչդեռ մարտիրոս, գարկոյց զնա դեմն» (Ղուկ. Թ. 42), ո՛չ առ ի ցոյց՝ ժողովրդեանն առաջի թոյլ ետ լլկել եւ ապա սաստեաց, այլ վասն հօրն, զի ծանիցէ, թէ ի կոչելոյն այնպէս խռովեցաւ, հաստատեսցի ի հաւատս վասն նշանին, զոր բանիւ իբրեւ զԱստուած բժշկելոց էր՝ ըստ Մարկոսի թէ՛ «Ես քեզ ասեմ, խո՛ւ այս, ե՛լ ի դմանէ եւ այլ մի՛ մտանիցես ի դա» (հմմտ. Մարկ. Թ. 24): Քանզի խորհէր ընդ կրունկ դառնալ, ասաց զայս, որով յայտ արար, թէ եւ զխորհուրդս դիւաց ճանաչէ, եւ զոր ինչ խորհին մարդիկն՝ քաջ գիտէ, յայտ է թէ Աստուած է, որում խուլ այսք հնազանդէին, եւ մարդիկ բանականք հետեալ կային: «Բժշկեցաւ, - ասէ, - մանուկն ի ժամէն յայնմանէ». նախ հոգւով, զի վասն մեղաց էր հիւանդութիւնն, եւ ապա մարմնով ի չարչարանացն՝ յայնժամ եւ առ յապալ:

Յայնժամ մարեան աշակերտքն առանձինն եւ ասեմ ցՅիսուս. «Մեր ընդէ՛ր ոչ կարացար հանել զնա» (Մաթթ. ԺԷ. 18):

Ի ծուփ տարակուսի մատնեցան աշակերտքն, յորժամ ասաց այրն, թէ ոչ կարացին հանել. վասն այսորիկ յորժամ բժշկեաց, մատեան հարցանել զպատճառս անկարութեանն, քանզի կասկածէին, թէ գուցէ կորուսին զշնորհն, զոր հաւատացաւ նոցա՝ իշխանութիւն ի վերայ այսոց պղծոց: Իսկ առանձին հարցանելն՝ ո՛չ ամաչել ինչ. քանզի գործն վճարեալ էր եւ նոքա յանդիմանեալ, աւելորդ էր այնուհետեւ ամօթն. այլ վասն զի սովորութիւն էր նոցա՝ յորժամ զմեծամեծ իրաց հարցանէին, ի ծածուկ հարցանէին:

Եւ նա ասէ ցնոսա. «Վասն թերահաւարութեան ձերոյ (Մաթթ. ԺԷ. 19):

Ո՛չ այնչափ կշտամբէ զսոսա, որպէս զազգն հրէից, զի զնոսա «անհաւատս» եւ «թիւրս» կոչեաց, իսկ զսոսա «թերահաւատս» միայն, որպէս եւ երբեմն Պետրոսի ասէր. «Թերահաւար, ընդէ՛ր երկմպեցեր» (Մաթթ. ԺԴ. 31): Արդ՝ «թերահաւատ» զսոսա կոչէ վասն ծուլութեանն, որպէս ասացաւ, եւ տրտնջման, որպէս զի ցուցցէ, թէ գործոցն նուազութիւն եւ զհաւատն պակասեցուցանէ, զի ոչ հաւատայ, թէ զոր ինչ գործեմս՝ տեսանէ Աստուած, ուստի եւ ի սխալանս գայ եւ այնու ոչ ի վստահացելոցն միայն, այլեւ յառեալ պարզեւացն զրկի: Այլ սոքա ո՛չ ի բոլորն, այլ ի մասնաւորն յանցաւոր, վասն այսորիկ «թերահաւատ» ասաց, զորս ի վերայ բերէ:

Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ունիցիք հաւարս քան զհար մանանխոյ, ասասցիք լերինս այսմիկ՝ փոխեա՛ց աստի անդր, եւ փոխեսցի (Մաթթ. ԺԷ. 19):

«Հաւար» աստ զնշանացն միայն ասէ եւ ո՛չ զդաւանութեանն, զոր բոլոր եւ կատարեալ եւ առանց թերութեան ունել հրամայէ: Եւ այս ի ձեռն գործոցն լինի, զի յորժամ զգործքն լրմամբ ունիցի, եւ ի հաւատս անթերի գտանի: Կամ ա՛յլ ազգ. մանանխովն զանչափ զօրութիւնն Իւր ծանուցանէ, զի թէպէտ անձամբ փոքր ինչ կարծիցի մանանեին, սակայն զօրութեամբ քան զամենայն ինչ սաստիկ է. նոյնպէս փոքր ինչ ի սերտ եւ յանաղանդ հաւատոց բազում հրաշս կարէ գործել զօրութեամբ նորա, մինչ զի զլերինս փոփոխէ, որպէս ասաց: Բայց թէ ասիցէ ոք՝ ե՞րբ ուրեք լերինս փոխեսցին նոքա, եւ յայտ է, զի զայսպիսի հաւատ զդեցան, ասասցուք, թէ եւ ա՛յլ մեծամեծս արարին, եւ բիւր մեռեա՛լս յարուցին. եւ թէ զայս ոչ արարին, գոնեայ պէտքն ոչ պահանջեցին, եւ կամ թէ արարին, եւ ոչ գրեցաւ, որպէս այլք բազումք ի նշանացն: Եւ ա՛յլ ազգ. զի ոչ ասաց թէ՛ փոխեցէ՛ք զլերինս, այլ՝ թէ ասէք, լինի, եւ զի ո՛չ կամեցան՝ եւ ո՛չ ասացին:

Եւ դարձեալ՝ մանանելս ըստ որակին ազդօղ է, բայց յորժամ աղացեալ մանրի, առաւել տայ զզօրութիւն: Այսպէս եւ հաւատ բոլոր, թէպէտ յոյժ զօրաւոր է, բայց յորժամ բեկեալ սրտիւ եւ խոնարհ վարուք վարի, առաւել իմն հրաշս գործէ, որպէս գրեալ է ի վարս հարանց, թէ մատուցին այսահար մի ձերոյ միոյ բժշկել, եւ



նա սաստեաց ելանել ի նմանէ: Ասէ զիւսհարն ցծերն. «Հարցից զքեզ բան մի յԱւետարանէն, զոր թէ ասասցես, ելանեմ. ո՞րք իցեն օղիքն կամ այծիքն»: Ասէ ծերն. «Այծն ես եմ, զօղիսն ոչ գիտեմ», եւ իսկոյն ի խոնարհ բանից ծերոյն հալածեցաւ: Զոր եւ աստ Տէրն հրամայէ. թէ ունիցիք հաւատ հանդերձ խոնարհութեամբ, ասասջիք լերինդ: Թուի ինձ, թէ «լեառն» զլուսնական այսն կոչեաց, զոր Ինքն հանդերձ խոզիւքն ի ծովն հեղձոյց՝ ըստ այնմ թէ՛ «նուզեցան լերինք ի զօրութենէ նորա» (Մաղմ. ԽԵ. 4). արդ՝ զայս արարին բազում անգամ առաքեալքն, որպէս պատմի ի «Գործս առաքելոցն»:

Եւ ոչինչ անհնարին լինիցի ձեզ (Մարթ. ԺԷ. 19):

Եւս յառաջեցուցանէ. թէ ի մարդկանէ աստուածք լինիցիք, զի որ ինչ մարդկան անհնարինքն՝ Աստուծոյ հնարաւորք են, նմանապէս լինիցի եւ ձեզ: Տե՛ս աստ զՀոգւոյն զօրութիւն, զի որք հատոյ մանանխոյ չափ հաւատս ոչ ունէին նախ, այնքան յորդեաց, մինչ զի աղբերք եւ գետք հաւատոց ի նոցանէ բղխեցին՝ ըստ Տեառն թէ՛ «Որ հաւարայ յԻս, որպէս ասեն Գիրք, գետք յորովայնէ նորա բղխեցեն» (Յովհ. Է. 38), որք ոչ միայն ի ձեռն հաւատոցն հրաշս գործեցին, այլ եւ տկար մարմնով զպէսպէս կտտանս մահու յանձն առին. ա՛յս է «անհնարին»-ն, զորս նոքա հնարաւորս ցուցին:

Քայց այս ազգ ո՛չ իւրք ելանէ, եթէ ոչ աղօթիւք եւ պահօք» (Մարթ. ԺԷ. 20):

Ոչ միայն զլուսնականացն ասէ, այլեւ զամենայն բոլոր զիւսհար: Այլ զպահս եւ զաղօթս յիշելով՝ գիտութիւն իմն խորհրդական աւանդէ, թէ յորո՛ց պատճառաց այժմահարութիւն լինի: Քանզի յերկուց գոլով մարդ՝ ի հոգւոյ եւ ի մարմնոյ, արդ՝ որքան հոգւով ի ձեռն բանական պաշտաման աղօթից առ Աստուած միացեալ է եւ զմարմինն ժուժկալութեամբ պահոց հոգւոյն գործակից ունի, անկար է զիւսհար բնակութիւն զնա առնել, զի այսպիսիքս ոչ միայն յանձնէ հերքեն, այլեւ յայլոց հալածեն: Իսկ յորժամ հեռանայ յԱստուծոյ խօսակցութենէն եւ զանձն փափկութեան տայ, այնուհետեւ տեղի այսոցն լինի. որպէս ոք ի լուսոյ զանձն որոշեալ ի հարկէ խաւարաւ ըմբռնի, կամ յառողջութենէ զրկեալ՝ ընդ հիւանդութեամբ է, այսպէս եւ սա ի բարւոյն մերձաւորութենէ հե-

ռացեալ, որում Դաւիթ ըղձայ (հմմտ. Մաղմ. ՆԲ. 28), առ չարին կորստեամբ կայ: Եւ թէ ոմանք զերկիւղն եւ զցնորմունսն ասեն պատճառ, նոյն է եւ այս. զի որքան յԱստուած մերձ է, առանց երկիւղի է, եւ յորժամ ծուլութեամբ եւ մեղօք որոշի յԱստուծոյ, երկիւղիւ պակնուցու, որպէս ոք զի ի տեառնէ իւրմէ ապստամբէ եւ կամ յընկերէ զատուցանի, երկնչի եւ ի հակառակացն ըմբռնեալ լինի: Արդ՝ զայս դնէ պատճառ Տէր եւ ասէ. եթէ ոք աղօթօղ է եւ պահօղ, ո՛չ բնաւ ի նոցունց տիրեալ լինի, եւ թէ ոք պղերգութեամբ մատնի, դարձեալ նովին զինուք ազատիլ կարէ:

Իսկ եթէ ասիցէ ոք՝ ապա ընդէ՞ր բազումք ի սրբոցն առանց պահոց զրեւս հալածեցին, ասասցուք, թէ այն յԱստուծոյ զօրութենէն է, եւ մի կամ երկուք ուրեք պատահեցան, իսկ աստ յոյժ պահոց պնդութեան եւ աղօթից ձեռնտուութեան պէտք են բժշկողաց, մանաւանդ որք բժշկեալն լինին, որպէս զբազումս ի փորձոյ տեսաք արարեալ եւ ի չարէն բժշկութիւն գտեալ: Վասն զի պահք ցածութիւն յանձինս գանձէ, որ ընդդէմ է հպարտութեան, եւ հրեշտակ ի մարմնի յարդարէ, որով ընդ անմարմինսն պատերազմի եւ յաղթէ: Այսպէս եւ աղօթք յոյժ զօրաւոր են առ ի յօգնութիւն՝ ըստ առաքելոյ (հմմտ. Յակոբ. Ե. 16), քանզի ոչինչ է այլ աղօթք, բայց յաղթութիւն ի վերայ չարեաց, որպէս ուսոյց Տէրն աղօթել. «Փրկեա՛ զմեզ ի չարէն»:

Այսոքիկ ըստ տեղւոյն ասացան, բայց թէ եւ խորհուրդ ի բանէս պահանջես՝ այսպիսի է. «ժողով» անուանէ զբանականացս ազգ, իսկ զալ Աստուծոյ ի ժողովուրդն՝ զարարչութիւնն եւ զնախախնամութիւնն ասէ: Վասն որոյ յորժամ ընկալան զայն արդարքն, մատեան աղօթիւք ողորմութիւն խնդրել բնութեանս, որք որդիք էին նոցա եւ մոլորեալ յԱրարչէն՝ ի մանկութենէ պաշտէին զարարածս եւ ընդ տարերք աշխարհի ի ծառայութիւն կային, որպէս ասէ. «զի լուսնոտի եւ չարաչար հիւանդանայ»: Զի ոմանք զլուսին եւ այլք զհուր եւ կէսք զջուր պաշտէին, եւ այս բազմապատիկ հիւանդութիւն յոգիս նոցա տրամադրէր: Իսկ ասելն «մատուցի զնա աշակերտացն Քոց, եւ ոչ կարացին բժշկել»՝ զգարաց Օրինացն ասէ, որք ընթեռնուին զՕրէնս եւ ոչ կարէին արդարացուցանել զմարդիկ եւ ի դիւամոլ կռապաշտութեանցն ազատել: Վասն որոյ ասէ. «Ո՛վ ազգ անհաւատ եւ թիւր». յիրաւի՛ անհաւատ, զի ոչ պահեցին զաւանդ փառաց զրախտին, որ հաւատացաւ նոցա,



այլ թիւրեալ ի բանական ստեղծուածոյն՝ արտաքսելին օրինազանցութեամբն՝ ըստ մարգարէին թէ՛ «իբրև յորոն թիրելոյ» (Մաղմ. ԿԱ. 4), եւ Սողոմոն դարձեալ թէ՛ «Թիրեալն ոչ կարասցէ կայութիւն ընդունել» (հմմտ. Ժող. Ա. 15): Յետ որոյ ոչ եթող ի խնամոց, այլ պէսպէս այցելութեամբ ընդ մարդկան եղեւ եւ երկայնամտեաց, որպէս ասէ. «Մինչեւ ցե՞րբ իցեմ ընդ ձեզ, մինչեւ յե՞րբ անսայցեմ ձեզ, ած,— ասէ,— զնա առ Իս»: Այս զմարդկային բնութեանս զգեհուլն նշանակէ, որով հարկեալ յաղօթից արդարոցն՝ էած զմեզ առ Ինքն եւ սաստեալ կռապաշտութեանն՝ երարձ, որպէս ի սկիզբն ծննդեան յԵգիպտոս զնալով՝ փշրեաց զձեռագործս եգիպտացւոց Վէմն հատեալ առանց ձեռին (հմմ. Դան. Բ. 34):

«Եւ բժշկեցաւ մանուկն ի ժամէն յայնմանէ» (Մաթթ. ԺԷ. 17): Քանզի յորմէհետէ զգեցաւ զմարմին, բժշկեաց «զբնկումն դստեր ժողովրդեան Իմոյ» (հմմտ. Ես. I. 26): Յորմէ նախանձեալ աշակերտք հին Օրինացն, որք զիւրեանց արդարութիւնն կամէին կացուցանել եւ Օրինօքն արդարանալ մարմնոց ասէին, հարցանէին թէ՛ մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել զմարդիկ առ Աստուած՝ եւ բժշկել ի մեղաց, ասէ՛ վասն թերահաւատութեան ձերոյ: Արդ՝ թերահաւատութիւն է՝ նախ՝ զի զՀայր միայն գիտէին, եւ երկրորդ՝ զի Օրինօքն արդարանալ կարծէին, որպէս ասացաք, եւ այսու ոչ միայն զայլս, այլեւ ոչ անձանց օգնել կարէին. յայտ է՝ զի եւ ինքեանք պատարագաց քաւութեան կարօտանային: Վասն որոյ ասէ. «Թէ ունիցիք հաւատս իբրեւ զհատ մանանխոյ, զլիւրինս փոփոխեսջիք», այսինքն՝ ի Հայր եւ յՈրդի եւ ի Սուրբ Հոգին կատարեալ դաւանութիւն, զոր յԱւագանն ընդունիք, եւ ո՛չ ի գործոց, այլ ի լրոյ հաւատոցն արդարանայք (հմմտ. Գաղ. Բ. 16), որպէս գրէ Պօղոս. «Արդարացեալք ի հաւարոց անբի՛ խաղաղութիւն կայցոք առ Աստուած» (Ղոմ. Ե. 1), փոփոխէք զհպարտացեալ լիւրինսն եւ ժառանգէք զնոցա տեղին, եւ որ անհնարին թուի ձեզ երկնաքաղաքացի լինել, այսու օրինակաւ հնարաւոր լինի: Բայց զի մի՛ ի հաւատն միայն վստահացեալ՝ ծուլանայցեն, ասէ՛ մարդկայինս ազգ ո՛չ այլ իւրի կարէ ելանել յերկինս, եթէ ոչ աղօթիւք եւ պահօք, զի «հաւարք առանց գործոց մտեալ են» (Յակ. Բ. 20), իսկ հանդերձ գործովք կենդանի գոլ հաւատոյն՝ զմարմնեղէն բնութիւնս յերկինս բարձրացուցանէ, որպէս զԵղիա պահօղ եւ աղօթօղ (հմմտ. Դ. Թագ. Բ. 1-12):

## ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՅԻ

(Նիւգերորդ հապոր. գլուխ Ե.)

### ՎԱՍՆ ԴԻՄԱՐԻՆ

// Ո՛վ ազգ անհաւատ եւ թիւր: Որպէս եւ մարգարէն ասէր. ազգ չար եւ դառնացող: Վասն հեթանոսաց մեծ հաւատոյն զարմանայր եւ վասն հրէից անհաւատութեանն:

Հարց. վասն էր այսպէս մեղադիր լինի նոցա:

Պատասխանի. Նախ՝ զի այրն այն յանդիմանեաց զաշակերտսն առ Տէրն, թէ ոչ կարացին բժշկեալ: Երկրորդ՝ զի ամենայն ժողովքն գայթակղեալ էին որպէս հայրն: Զի այսպէս կարծէին թէ Քրիստոս արուեստիւ բժշկէ Բեեղզերուդաւ եւ աշակերտքն թերի են ուսեալ, վասն որոյ չկարացին բժշկեալ:

Հարց. Վասն է՞ր հարցանէր զժամանակն:

Պատասխանի. Զի իրաւունք տացէ աշակերտացն, զի բազում ժամանակացն դժուարաւ բժշկի, կամ ամենեւին ոչ: Իսկ «հուր եւ ջուր» ասելն ցուցանէ զխնամքն Քրիստոսի ի վերա նորա, նախքան զբժշկելն, որ սանցէր զչարն, զի մի՛ վնասեցէ զնա: Այսպէս մեղքն նոր մտեալ ի մեզ, զիւրաւ ելանէ, վասն որոյ պարտ է փութով թողուլ զմեղս: Ապա թէ սովորիմք յերկար ժամանակաց, դժուարացաւ թողումք կամ ամենեւին ոչ: Եւ հուր զբարկութիւնն ասէ, որ հանապազ ընթռնէ, եւ ջուր զգէջ ցանկութիւնն որ երբեմն:

Հարց. Զի՞նչ է լուսնոտն:

Պատասխանի. Ասացաք յառաջագոյն՝ դեւն սովորութիւն կալեալ, ի նոր ընծայիլ լուսնին կամի հինն լլկէ զմարդն: Եւ այսու եւս տուածքս չարեն: Երկրորդ՝ զի կարծեսցեն, թէ նայ արարիչ է եւ արարածոց իշխանութիւն ունի: Եւ երկուսն մոլորութիւն է եւ սուտ: Դարձեալ կայ որի յաճել լուսնին, ըղեղ զլսոյն անէ այլեւ մաղձքն եւ ըստ բերանն եւ ընդ քիթն թափի փրփրելով, գիտեն, թէ դիւահար է եւ ոչ է:

Հարց. Վասն է՞ր աշակերտքն հարցին:

Պատասխանի. Նախ՝ յորժամ լսեցին թէ արուեստիւ բժշկեն, նոքա խռովեցան: Երկրորդ՝ կարծէին թէ զիշխանութիւն բժշկութեանն կորուսին, զոր ետ նոցա: Նայ պատասխանի ետ, թէ անհաւատութիւնն է պատճառ:



Հարց. Ջի՞նչ է փրփրել դիւահարին:

Պատասխանի. Ջչորս մաղձն շարժէ դեւն. ի ցրտոյն դողայ եւ կրճտել զատամն եւ երեսն կապուտի, ի ջերմոյն բարկանայ եւ լսնանայ ի մաղասէն փրփրի եւ ի լերդէն արիւն ձգէ: Այլ լուսնոտն զըղիղն ընբռնէ եւ նշան բժշկութեան է, յորժամ առ սրբութիւնն մերձենայ շարժի որպէս սմայ եղեւ:

Հարց. Ջի՞նչ է «շարժիւաց»:

Պատասխանի. Այն՞որ ի ներքուստ շարժէ եւ դարձեալ, որ յայլմէ շարժի:

ՎԱՍՆ ԼԵՐԱՆՑ ՓՈԽԵԼՈՅ

Հարց. Ու՞ր փոփոխեցին առաքեալքն ի լերինք:

Պատասխանի. Նախ ասեն, թէ չեղեւ պետք զլերինս փոփոխելոյ, վասն այն ո՛չ փոխեցին: Երկրորդ՝ զի ոչ ասաց, թէ փոխեցէք, այլ թէ կամիք կարող էք եւ զի ոչ կամացն ոչ փոխեցին: Երրորդ՝ զի թէ փոխեցին եւս չգրեցաւ, որպէս բազումք ի սքանչելեաց: Չորրորդ՝ զմեծամեծ նշանս ասէ, որ ի վեր է քան զբնութիւնս եւ ծանր իբրեւ զլերինս փոխելոյ, որպէս զմեռեալս յարուցանել եւ այլն: Հինգերորդ՝ զդեւան է իմանալ որ լեռնացեալ էին հպարտութեամբ եւ կռօք բարձին եւ ընկեցին ի ծով, որպէս խոզքն, զոր արար Քրիստոս եւ ետ նոցա կարողութիւն: Վեցերորդ՝ մեծատանց ասէ, որ լեռնացեալ էին փարթամութեամբ, փոխեցին կրօնից ի կրաւնս:

ԱՅՍ ՉԱՐ ՈՉ ԻՒՒՔ ԵԼԱՆԷ, ԹԷ ՈՉ ՊԱՆՕՔ ԵՒ ԱՂՕԹԻՒՔ

Նախ՝ ցուցանէ զպատճառ դիւահարութեան, թէ յանհաւատութեանն է եւ ի փափկութենէ եւ ի ծուլութենէ աղօթից լինի: Երկրորդ՝ թէ պարտ է հանողին հաւատս անթերի ունել եւ պահօք եւ աղօթիւք արիանալ: Երրորդ՝ դիւահարին ասէ. պարտ է պահել զամենայն զգայութիւնս ի փափկութենէ իւրոց եւ աղօթիւք եւ հաւատովք ճգնել միշտ: Վասն որոյ ասէ կանոնք, թէ այնպիսեացն պարտ է թողուլ զամուսնութիւնս իւրեանց եւ հեռանալ ի մտոյ եւ գինոյ, վասն Դ. պատճառի: Նախ՝ զի այնոքիկ եղեն պատճառք պարտ է հատանել զնոսա: Երկրորդ՝ ի հաւատոց եւ յաղօթից եւ ի պահոց փախչին դեւք, զի զէն Քրիստոսի են եւ պահօք յաղօթից

փորձողին: Երրորդ՝ զի պահօք եւ աղօթիւք եւ հաւատովք զմարմինն եւ զհոգի եւ զմիտս պարսպենք, որպէս զրահ եւ սաղաւարտ: Չորրորդ՝ զի աղօթք զօրութիւն է հոգոյս եւ պահքն շուրջանակի զօր ցուցանէ զաղօթքն, որպէս խողովակ ամրացեալ զջուրն ի վեր հանէ: Եւ պահօք եւ աղօթիւք զաւրանայ հաւատն, որպէս ծուլութեամբն տկարանայ եւ նուազի:

Հարց. Ջի՞նչ է. «Ես ասեմ քեզ՝ ել ի դմանէ եւ մի մտցես»:

Պատասխանի. Յուանէ զինքն թէ Աստուած է եւ ամենեքեան միապէս արարածք նմա: Երկրորդ՝ զի դեւք առաւել հնազանդ են նմա քան զչար հաւատացեալք: Երրորդ՝ զի խորհէր միւսնազամ դառնալ ի նա վասն այն կապեաց եւ ասէ՝ մի՛ իշխեսցէս դառնալ անդրէն:

Մարկոս Թ. 13-28

ԲԱՐՍԵՂ ՄԱՇԿԵՒՈՐՅԻ

(Գլուխ Թ.)

[Բան.] Եւ եկեալ առ աշակերպս, փեսին ամբոյս շուրջ գնորօք, եւ զղպիրսն՝ զի վիճէին ընդ զնոսա (Մարկ. Թ. 13):

[Մեկնութիւն.] Տե՛ս, թէ որպէս ըստ արժանեաց բաժանէ եւ տայ զպարգեւսն. զի ոմանց ի վեր անդ զբարձրագոյնսն, եւ ոմանց ի ստորեւ զնուաստագոյնսն տնօրինէ. ի վեր ի լեռն աղօթէր եւ այլակերպէր (հմմտ. Մարթ. ԺԷ. 1-13, Մարկ. Թ. 1-12, Ղուկ. Թ. 28-36), եւ զխորհուրդ աստուածային թագաւորութեան՝ աշակերտացն յայտնէր. եւ ի ներքոյ՝ զժողովուրդն յանդիմանէ յանաւատութեան. ի վեր՝ անդ ձայնն հօր՝ որոց լսել կարէին, բանայ. ի ներքոյ հալածէ զչար հոգիսն: «Եւ եկեալ առ աշակերպսն, փեսին (ասէ) ամբոյս շուրջ գնորօք, եւ զղպիրսն՝ զի վիճէին ընդ նոսա»: Թէպէտ աւետարանիչս ոչ ասէ պատճառ վիճմանն, սակայն ի կարգէ գրելոցս յայտնեալ լինի եւ զի բամբասէին դպիրքն զՔրիստոս՝ թէ Բեհեզգերուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս (հմմտ. Մարթ. Թ. 34, Մարկ. Գ. 22, Ղուկ. ԺԱ. 15), յայինքն՝ կախարդութեամբ եւ հնարիւք բժժանաց. եւ յաղագս այսորիկ յորժամ տեսին թէ՛ ոչ կարացին աշակերտքն բժշկել զմանուկն, սկսան ասել ցհայր մանկանն թէ՛ այս աշակերտք նորա դեռեւս ոչ են ուսեալ զարուեստ կախարդութեան վարդապետին իւրեանց, ապա թէ



ոչ ընդէ՞ր ոչ կարացին բժշկել զմանուկն եւ վասն այսորիկ վիճէին ընդ միմեանս դպիրքն եւ աշակերտքն, զի աշակերտքն քաւէին ի վերայ Քրիստոսի՝ ասելով թէ առանց ամենայն բժժանաց կատարին ի Քրիստոսէ բժշկութիւնքն, եւ դպիրքն հակառակէին թէ՛ ոչ, այլ հնարաւք գործէ. ուստի եւ բազում յայսմ մարտից ժողովեցան առ նոսա:

[Բան.] Եւ վաղվաղակի ամենայն ժողովուրդն իբրեւ փեսին զնա՝ զարմացան, եւ ընդ առաջ ընթացեալ ողջոյն փային նմա (Մարկ. Թ. 14):

[Մեկնութիւն.] Տե՛ս, թէ որքա՞ն դպիրք եւ փարիսեցիք բամբասէին եւ նախատէին, կախարդ եւ դիւահար կոչեին. սակայն նա յաչս պարզամիտ ժողովրդեանն եւս քան զեւս սքանչելի եւ զարմանալի երեւեալ լիներ. ուստի յետ այսքան բամբասանաց իբրեւ տեսին զնա՝ զարմացան, եւ ամենեքեան ընդ առաջ ընթացեալ ի ծունկս անկանէին, եւ ողջոյն տային նմա սիրով եւ խոնարհութեամբ. եւ զայս մարգարէն յառաջագոյն գուշակեաց՝ ասելով թէ. «Ձոր օրինակ զարմասցին բազումք ի վերայ քո, այնպէս անարգեսցի բան քո ի չար եւ ի դառն մարդկանէ» (հմմտ. Եսայի ԾԲ. 14):

[Բան.] Եւ ընդ առաջ ընթացեալ ողջոյն փային նմա (Մարկ. Թ. 14):

[Մեկնութիւն.] Գիտեա՛, զի ոչ գոյ հանգիստ ի ներքոյ արեգական, զի յամենայն փոքունք նախանձին ընդ մեծամեծսն. եւ բարձրագոյն լերինս հարկանէ կայծակն: Ոմանք են՝ որք գան յեկեղեցին հաւատով վասն ուսման. եւ այլք գան հպարտութեամբ վասն վիճաբանութեան:

[Բան.] Եւ եհարց ցնոսա թէ զի՞նչ վիճէիք ընդ նոսա (Մարկ. Թ. 15):

[Մեկնութիւն.] Գիտէ՛ր, եւ հարցանէր, վասն զի՞ խորհուրդ սրտի մերոյ յայտնի բանիւ, եւ խոստովանութիւն ծնանի զփրկութիւն. ըստ այնմ՝ «Ասա դու նախ զանօրէնութիւնս՝ զի արդարասցիս» (Եսայի ԽԳ. 26):

[Բան.] Պապասխանի ետ մի ոմն ի ժողովրդենէն՝ եւ ասէ. վարդապետ՝ ածի գորդի իմ առ քեզ, զոր ունի այս համբ: Եւ ուր հասանէ

՝ զարկուցանէ զնա, եւ փրփրէ, եւ կրճալէ զապամունս իւր՝ եւ ցամաքի (Մարկ. Թ. 16-17):

[Մեկնութիւն.] Կարի իմն լիրբ եւ յանդուգն նկարագրէ զգեւս զայս, զի ասելովն՝ խուլ եւ համբ, ամենեւին անլուր եւ անողոքելի ցուցանէ. յաղագս որոյ եւ ուր հասանէր, այսինքն՝ պատահէր, զարկուցանէր զնա, եթէ ի հուր՝ եթէ ի ջուր, եւ եթէ ի գահից մղել. ուստի յայտ է, եթէ ոչ եւ ի մոլութեան իսկ սանձեալ էր զնա Աստուծոյ ի վաղուց հետէ կորուսեալ էր զմանուկն:

Փրփրէ եւ կրճատէ զատամունս իւր: Ըստ այնմ մեղաւորն տեսցէ եւ բարկասցի, զատամունս իւր կրճատեսցէ եւ հալեսցի, եւ ցանկութիւն մեղաւորաց կորիցէ, զի զոր ոչ կարացին աշակերտքն բժշկել՝ փրկիչն բժշկեաց: Մատթէոս՝ լուսնոտի ասէ. եւ երբեմն թէ բազում լուսնոտս բժշկեաց (Մարթ. Դ. 24):

Ոչ թէ լուսինն ինչ զայն գործիցե, քաւ լիցի, այլ դեւն, կամ ի նորընծայս կամ ի հինս առ ի խաբել զմիտս անմտաց, կարծեցուցանել՝ եթէ ի լուսնէն լինի այն: Ուստի զայնպիսի դիւահարս՝ լուսնոտ կոչեն տգէտք, այլ չէ ճշմարիտ, եւ մի ոք հաւատայցէ. զի յետոյ ասէ աւետարանիչս թէ՛ ել ի նմանէ դեւն:

Եւ ասացի ցաշակերտսն քո զի հանցեն, եւ ոչ կարացին հանել զնա:

[Բան.] Պապասխանի ետ նոցա եւ ասէ. «Ո՛վ ազգ անհաւար [մինչեւ յե՛րբ իցեմ ընդ ձեզ, մինչեւ ցերբ անսայցեմ ձեզ. ածէք զնա առ իս]»<sup>1</sup> (Մարկ. Թ. 18):

[Մեկնութիւն.] Եւ ըստ խոստովանութեան դիւին՝ եւս խոստագոյն տեսանեմք զայրս զայս, զի այնքան յանդգնի եւ խստանա՝ մինչ զի ոչ ամաչէ նախատել զաշակերտսն առ վարդապետին ի մէջ բազմութեան ժողովոյն, սակայն Քրիստոս ազատէ զաշակերտսն ի մեղաբուրութենէ եւ նմա կարի մեղադիր լինի:

«Ո՛վ (ասէ) ազգ անհաւար [մինչեւ յե՛րբ իցեմ ընդ ձեզ, մինչեւ ցերբ անսայցեմ ձեզ. ածէք զնա առ իս]»<sup>2</sup>:

Ուստի յայտ է թէ՛ իւր անհավատութիւն եւ դիւրութիւն եղեւ պատճառ չեւանելոյ դիւին. զի թէպէտ բազումք պարզմտութեամբ,

<sup>1</sup> Վերականգնված այս հատվածի փոխարեն տպագրում՝ (եւ թիր):  
<sup>2</sup> Տե՛ս նախորդ ծնթ.:



առանց հաւատոյ ընկալան զբժշկութիւն՝ որպէս ի սկիզբն աւետարանիս բազումք բժշկեցան՝ եւ ոչ պահանջեցան հաւատս: Նա՛ եւ որք ընկեցին զմեռեալն ի գերեզմանն Եղիսէի՝ առանց հաւատոյ կենդանացաւ (հմմտ. Դ. Թագ. ԺԳ. 21):

Իսկ թիւրութեամբ, այսինքն՝ փորձելով ոչ ոք ընկալաւ՝ զոր խնդրեաց. որպէս եւ փարիսեցիքն յորժամ փորձելով խնդրէին նշան յերկնից տեսանել՝ ոչ առին զոր խնդրեցին (տես Մատթ. ԺԲ 38, Մարկ. Ը. 11): Արդ, զի սա փորձելով մատոյց զորդին իւր առ աշակերտսն, թէ կարե՞ն բժշկել՝ եւ թէ ոչ, յաղագս այսորիկ ոչ բժշկեցաւ. զի միշտ այնոցիկ՝ որք բժշկեն, զբժշկութիւն վասն բժշկելոցն անպատշաճութենէ արգելեալ լինի, թէ ըստ մարմնոյ՝ եւ թէ ըստ հոգւոյ: Որպէս եւ այլ ուր ասէ աւետարանիչս վասն Քրիստոսի թէ՛ ոչ կարաց անդ առնել բժշկութիւն վասն անհաւատութեան նոցա (հմմտ. Մատթ. ԺԳ. 58):

«Ո՛վ ազգ անհաւար, [մինչեւ յե՛րբ իցեմ ընդ ձեզ, մինչեւ ցերբ անսայցեմ ձեզ. աժէք զնա առ իս]»<sup>1</sup>:

Եւ զի մի ի վհատութիւն ինչ արկանիցէ զայրն յաղագս բժշկութեան, ոչ ի նորա ինչ զէմս միայն խօսի զբանն՝ այլ առ ամենայն հրէայս, որպէս եւ մարգարէն ասէր. թէ ազգ մի թիւր են նոքա եւ որդիք անհաւատք (Բ. Օր. ԼԳ. 20): Մինչեւ յե՞րբ իցեմ ընդ ձեզ, մինչեւ ցե՞րբ անսայցեմ ձեզ:

Ոչ որպէս աշխատեալ ոք եւ ձանձրացեալ՝ ասիցէ զայս, որ ամենեւին զամենայն հնարս հնարէր մարգարէիւքն փրկել զնոսա եւ յանձն կալաւ մարդ լինել յաղագս նոցա, որպէս եւ ասէր իսկ. ո՛չ ուրեք առաքեցայ, այլ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի (հմմտ. Մատթ. ԺԵ. 24):

Եւ թէ՛ ո՛չ զհրեշտակաց բուռն եհար, այլ զգաւակէն Աբրահամու (հմմտ. Եբր. Բ. 16): Եւ էր վասն այսպէս ասիցէ, զի յերկեղ կամի ածել զնոսա եւ յորդորելի հաւատս զհեղգութիւն մտաց նոցա:

Ուստի ի վերայ էած թէ՛ աժէ՛ք զնա առ իս: Մինչեւ յե՞րբ իցեմ ընդ ձեզ, եւ անսայցեմ ձեզ:

Ապա ուրեմն ո՛չ բարկանայր մարդկան, այլ նենգութեան եւ հոգւոց պատրանաց եւ որպէս բժիշկ, որ զընդդէմն առնէ հիւանդին կամ որպէս հարք՝ քնքշենալով որդւոցն: Դարձեալ ցուցանէ,

թէ ախորժելի է նմա մահն իւր, եւ ցանկալի եւ փափագելի է մեկնելն ի նոցանէ եւ ո՛չ այնչափ ինչ ի խաչն ելանել, որչափ ընդ նոսա շրջել, ծանրագոյն թուի նմա: Աժէ՛ք զնա առ իս:

Յայտ է, թէ զմանուկն ասէ ածել եւ ո՛չ զդեւն, զի ցուցցէ, թէ թողեալ էր նա ի ձեռն սատանայի կամ վասն իւրոց մեղացն եւ կամ վասն ծնողացն իւրոց: Իսկ թողլոյն տեսակք բազումք են:

Նախ՝ յաղագս փորձելոյ զարդարս որպէս զՅոր. մի՛ այլ ազգ ասէ լեալ կարծէր առ քեզ, բայց զի արդար երեւեսցիս (Յոր. Խ. 3):

Երկրորդ՝ վասն հերձուած խօսիցն, ըստ այնմ, թէ նաւակոծեցան ի հաւատս Հիմէնոս եւ Աղէքսանդրոս, զորս մատնեցի սատանայի, զի խրատեսցին չհայհոյել (Ա. Տիմ. Ա. 20):

Երրորդ՝ յաղագս ինչ վրէժս պահանջելոյ, որպէս Սաւուղ, զի ո՛չ կատարեաց զհրամանն Աստուծոյ առ Ազագ թագաւոր, հարաւ ի յայտոյ եւ չարչարէր (հմմտ. Ա. Թագ. ԺԵ. 1-35):

Չորրորդ՝ սակս պոռնկութեան, վասն ի հանդերձեալ տանջանացն փրկելոյ, որպէս կորնթացի պոռնկեալն, մատնել ասէ՛ զայնպիսին սատանայի ի սատակումն մարմնոյ, զի ոգին ապրեսցի յօրն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի (Ա. Կոր. Ե. 5). եւ կամ վասն այլ պատճառաց, զոր ինքն միայն գիտէ: Եւ ըստ միոյ յայսց օրինակացս տանջեալ եղեւ մանուկն այն ի դիւէ, յաղագս այլոց ուղղութեան. զի բնաւորեալ է այս ի մարդիկ տեսանելով զայլս ի չարչարանսն՝ զարհուրիմք յԱստուծոյ եւ կարճեմք ի չարեաց:

[Բան.] Եւ ածին զնա առ նա. իրրեւ ետես զնա այսն, վաղվադակի շարժլեաց զնա, եւ անկեալ յերկիր թաւալէր եւ փրփրեայր (Մարկ. Թ. 19):

[Մեկնութիւն.] Եւ զի թոյլ ետ դիւին լլկել զմանուկն, ոչ առ ի ցոյցս ինչ առնել զսքանչելիսն, այլ վասն հօր մանկանն, զի յորժամ տեսանիցէ, թէ միայն ի տեսութենէն Քրիստոսի այնպէս խռովեցաւ դեւն, հաստատեսցի ի հաւատս վասն նշանին, որ լինիցի: Դարձեալ զի յետ մեղացն, զի յորժամ կամիցիմք դառնալ առ Աստուած, մեծապէս պատերազմին ընդ մեզ սատանայ եւ դեւքն զի կամ հանցեն ի մէնջ զչնորհքն, զոր առաք յԱստուծոյ կամ վրէժխնդիր լիցին ի մէնջ անարգանացն իւրեանց. եւ յաղագս այսորիկ որք մերձենան ի փրկութիւն. եւ ցանկան ի սիրելի կերակուրն զնել յորովայնս իւ-

<sup>1</sup> Տես նախորդ ծմբ.:



րեանց, ի ձեռն երկիւղի եւ վնասու ջանան խոռվեցուցանել զնոսա որպէս արարին Յորայ եւ այլոց բազմաց:

[Բան.] Եհարց զհայր նորա եւ ասէ. քանի՞ ժամանակք են, յորմէ հեպտ այդ եղև դմա (Մարկ. Թ. 20):

[Մեկնութիւն.] Ո՛չ հարցանէր որպէս անգէտ, այլ զի ցուցցէ զյերկարութիւն հիւանդութեան, որպէս զի յայտ արասցէ զառաւել զժուարութիւն բժշկութեան. զի ո՛չ զոյգ եւ հաւասար է զժամանակօք հնացեալ ցաւս բժշկել եւ զդեռեւս սկսեալն:

[Բան.] Եւ նա ասէ. ի մանկութենէ բազում անգամ ի հուր արկանէ եւ ի ջուր, զի կորուսցէ զդա (Մարկ. Թ. 21):

[Մեկնութիւն.] Ի մանկութենէ, այսինքն՝ զի մինչդեռ անմեղ էր եւ պարզամիտ իբրեւ զտղայ մանուկ Ադամ ի դրախտին, յայնժամ եհաս ի վերայ չարն սատանայ եւ սկսաւ նեղել եւ տագնապել զնա. զի գիտէր, թէ յորժամ ի կատարելութիւն հասցէ, այլ ո՛չ կարէր յաղթել զնա. յաղագս այսորիկ մինչդեռ տղայ էր, մարտեաւ ընդ նմա նենգութեամբ եւ խաբեաց եւ յաղթեաց նմա. որպէս եւ ասէ ի մանկութենէ: Բազում անգամ ի հուր արկանէ եւ ի ջուր: Զի յետ ի դրախտէն ելանելոյ աճեցոյց զչարն եւ բազմացոյց. զի ետ զմիմեանս սպանանել եւ աղտեղել պոռնկութեամբ, զոր հրովն նշանակէ. զի բարկութիւն, ուստի՝ սպանութիւն, եւ ցանկութիւն, ուստի՝ պոռնկութիւն, ջերմինք են եւ հրայինք: Այլ եւ յազահութիւն եւ ի հպարտութիւն, զոր ջրովն գուշակեաց ըստ այնմ, թէ «Ամենայն ուղիք ի ծով գնան, եւ ծով ո՛չ լնու» (Ժող. Ա. 7). եւ թէ՛ «բարձրացան ալիք նորա եւ ելին յերկինս» (Կեն Սաղմ. ԾԶ. 25-26):

Եւ ո՛չ այսու շատացաւ, այլ եւ զնոյն ախտքս իբրեւ զԱստուած ետ պաշտել. զի կէսք զպոռնկութիւն, եւ կէսք զբարկութիւն, եւ այլք զհուր, եւ ոմանք զջուր պաշտէին:

Եւ այնքան տկարացան, մինչ զի եւ զմանկունս իւրեանց դիւաց զոհէին. եւ զայս յայն սակա ջանայր եւ հնարէր, զի ի միջոյ ի բաց բարձցէ զմարդկութիւն եւ ամենեւիմբ ապականեսցէ. ըստ որում եւ ասէ, թէ՛ ի հուր արկանէ եւ ի ջուր, զի կորուսցէ զդա. զի այս էր կամքն սատանայի՝ անճետ եւ անզարմ առնել զազգս մարդկան:

Որպէս եւ մարգարէն խայտառակէ զխորհուրդս նորա, թէ ասէիք ի մտի քում «Նասից ի վերայ ամենայն փիեգերաց ձեռամբ իմով իբրեւ ի վերայ բունոյ, եւ ապականեցից զնոսա իբրեւ զձու մնացեալս, եւ ոչ որ իցէ, որ ապրիցէ

յինէն» (Կեն Եսայի Ժ. 14). յաղագս որոյ զհետ բերէ ասացելոցս: «Արդ՝ եթէ կարող ինչ ես, օգնեա՛ մեզ, րե՛ր, գթացեալ ի վերայ մեր: Տես, թէ որքան կապարեալ էր բորոպն, եւ որքան անկապար սա. զի նա ասէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել» (հմմտ. Մարթ. Ը. 2, Մարկ. Ա. 40, Ղուկ. Ե. 12). եւ սա ասէ. եթէ կայ ի քեզ կարողութիւն, օգնեա՛ մեզ, յաղագս որոյ զնա գովէր, իսկ զսա խոտէ եւ անարգէ:

[Բան.] Եւ Յիսուս ասէ ցնա. ասացէր՝ «Եթէ կարող ես, ամենայն ինչ հնարաւոր է այնմ, որ հաւաքայն» (Մարկ. Թ. 22):

[Մեկնութիւն.] Եթէ կարիցես ասէ՛ հաւատալ ամենայն իմիք հնար զոյ հաւատացելոյն եւ այս է, զոր ասեն, եթէ այնչափ է յինէն առաւելութիւն զաւրութիւն, զի եւ այլոց եւս հնարք են այնպիսի սքանչելիս գործել, զի թէ հաւատացես, որպէս պարտ իցե, եւ դու իսկ կարող լինիս բժշկել զնա եւ ոչ միայն զնա, այլեւ զբազումս եւս:

Եւ մի՛տ դիր քաղցրութեան Քրիստոսի, զի զայսչափ մեծութեան շնորհք այսպիսի դիւրաւ պարգեւել խոստանայ, այսինքն՝ հաւատովք, որ ամենայն ումեք կարելի է, տէրանց եւ ծառայից, զօրաւորաց եւ տկարաց, զի հաւատալ եւ հաւատալ միայն ի կամսն է:

[Բան.] Եւ (յաղագս այսորիկ) վաղվաղակի աղաղակեաց հայր մանկանն եւ ասէ (արքայաւոր) հաւաքամ, օգնեա՛ անհաւաքութեանս իմում (Կեն Մարկ. Թ. 23):

[Մեկնութիւն.] Այսու ցուցանէ, թէ մեր հաւատս ինքն ըստ ինքեան տկար է եւ թէ ոչ զօրացեալ լինի յօղնականութենէն Աստուծոյ, ոչ կարէ առնուլ զիրան, որում ցանկայ եւ լինի զօրացեալ յԱստուծոյ հաւատս մեր՝ զղջմամբ եւ արտասուօք, ըստ այնմ, թէ ըստ հաւատոց քոց եղիցի քեզ (հմմտ. Մարթ. Թ. 29) եւ թէ՛ «ողորմեսցի քեզ ձայնի աղաղակի քում. իբրեւ երես՝ լուս քեզ» (Եսայի Լ. 19):

[Բան.] Իբրեւ երես Յիսուս, եթէ կուրի ժողովուրդն ի վերայ, սաստեաց այսոյն պղծոյ (Մարկ. Թ. 24):

[Մեկնութիւն.] Զորօրինակ զարմանագործ արուեստաւոր կայ մնայ, մինչ ժողովի բազմութիւն, եւ ապա սկսանի առնել զգործս իւր. այսպէս եւ Քրիստոս եկաց մնաց, մինչեւ եկն կուտեցաւ բազմութիւնն, եւ ապա սկսաւ սաստել այսոյն պղծոյ եւ ասել:



Սաստուծոյ Աստուծոյ զամենակալ տէրութիւն եւ զանյաղթ իշխանութիւն Աստուծոյ ցուցանէ: Համրդ եւ խուլ այս, ես տամ քեզ հրաման, ե՛լ ի դմանէ: Տե՛ս, զի զի որպէս յառաջ մարգարէքն եւ յետոյ առաքեալքն աղօթիւք եւ խնդրուածովք, այլ որպէս թագաւոր, մանաւանդ որպէս զԱստուած: Եւ ասէ. տամ քեզ հրաման, զի հրամանքն Աստուծոյ գործ է: Ըստ այնմ ասաց եւ եղեն, հրամայեաց եւ հաստատեցան (տնն. Ծննդ. Ա.): Խուլ եւ մուռն զեւ, զոր ինչ ունէր մարդն՝ խուլ եւ մուռն զոլով ի դիւէն, զայն դիւին համարի, եւ բարի գործ է մարդոյն. զի մեղաւորն յորժամ թողու զմեղս, լսէ զհրամանն Աստուծոյ եւ խօսի զխոստովանութիւն: Եւ այլեւս՝ մի՛ մտանիցես ի դա: Այսու զթուլութենէ առնս այսորիկ յայտ արար, զոր իմացեալ դիւին, խորհեցաւ միւսանգամ դառնալ առ նա. կապեաց զնա եւ ասէ. այլ մի՛ եւս իշխել դառնալ ի դա: Եւ այս յայնժամ լիցի, եթէ փակէ զսիրտ իւր բեւեռով խոնարհութեանն եւ կնքէ զմիտս իւր շնորհօք եւ զօրութեամբ Աստուծոյ:

Յայլում վայրի բժշկեցելոյն սաստէ՝ ասելով. ահա ողջացար, այլ մի՛ մեղանչեր (Յովն. Ե. 14), իսկ աստ դիւին սաստէ, այլ ո՛չ եւս դառնալ անդրէն: Այս եւ մեր սովորութիւն է, զի երբեմն զնեղիչն եւ զյափշտակօղն կշտամբեմք եւ երբեմն զնեղեալն զգուշացուցանեմք ո՛չ տալ պատճառս յափշտակողին:

25. Եւ աղաղակեաց եւ յոյժ լլկեաց զնա եւ ել:

Եւ զի կարծեաց դեւն, թէ որպէս աշակերտքն չկարացին հանել զնա, այսպէս եւ ոչ Քրիստոս. յաղագս այսորիկ յորժամ յանդիման եղեւ Քրիստոսի, սկսաւ նեղել եւ տազնապել զմանուկն, որում թոյլ ետ Քրիստոս. նախ՝ զի երեւեսցի չարութիւն նորա՝ ժողովրդեանն եւ զի գիտասցեն, եթէ ո՛չ արուեստիւ, ինչ բժշկէ եւ ապա ծածոկ աստուածային զօրութեամբն սկսաւ տանջել զնա, մինչ զի աղաղակել եւ ի բաց փախչել: Եւ եղեւ պատանեակն իբրեւ զմեռեալ, մինչեւ բազմաց իսկ ասել, թէ մեռաւ:

Հաւատացելոցն ասէր Պօղոս, թէ մեռարուք, եւ կեանքն ձեր ծածկեալ են ընդ Քրիստոսի յԱստուած, իսկ յորժամ Քրիստոս յայտնեսցի կեանքն ձեր՝ յայնժամ եւ դուք ընդ նմա յայտնեսցիք փառօք (հմմտ. Կոր. Գ. 3-4): Ապա ուրեմն մեռելութիւն քրիստոնէից չէ՛ մահ, այլ նմանութիւն եւ կարծիք մահուէ:

[Բան.] Եւ Յիսուս կալաւ զձեռանէ նորա յարոյց զնա եւ կանգնեցաւ (Մարկ. Թ. 26):

[Մեկնութիւն.] Եւ եթէ պատճառ ցաւոցն դեւն ի ձայնէն միայն տազնապեալ ի բաց փախեալ, այժմ զի՞նչ հարկ էր զձեռանէ ունելն եւ յարուցանելն, եթէ ոչ, զի ցուցցէ զոյգ եւ հաւասար բանին զմարմինն գործով եւ զօրութեամբ, զի թէպէտ բնութեամբ այլ եւ այլ են, յորոց Քրիստոս, սակայն անձամբ մի եւ միացեալ՝ եւ գործով եւ զօրութեամբ: Որպէս ընդդէմ այսմ՝ յերրորդութիւնն տեսանի, զի անձամբ այլ եւ այլ, իսկ բնութեամբ եւ էութեամբ մի, նաեւ զի ցուցցէ զխոնարհութիւն իւր եւ զբազում հոգաբարձութիւն եւ զցաւակից մեզ լինելն, յաղագս այսորիկ ո՛չ միայն ձայնիւ, այլեւ ձեռամբ եւս յարուցանէ, զի եւ մեզ ուսուցցէ վշտակցաբար եւ խոնարհութեամբ սպասաւորել հաւատացեալ եղբարց, որք ի ցաւս ինչ իցեն:

Որպէս եւ Պօղոս գրէ վասն իւր, թէ զիս եւ որք ընդ իս էին, պաշտեցին ձեռքս այս եւ յայլում վայրի հաւատացելոցն ծառայ զինքն ասէր եւ զմեզ ասէ՝ ծառայս ձեզ վասն Քրիստոսի (հմմտ. Բ. Կոր. Դ. 5):

Յորդորակ 1

Եւ արդ գոհասցուք զԱստուծոյ, զի եւ մեք զերծաք եւ փրկեցաք ի բռնութենէ դիւացն եւ յորմէ ո՛չ կարացաք գործովք փրկել, փրկեցաք Քրիստոսի շնորհօքն եւ ձեռնտուութեամբն եւ ոչ աղօթիւք միայն գոհասցուք, այլ եւ գործովք: Եւ վասն զի թշնամանեցաք զԱստուած չար գործովք եւ ազգի ազգի մեղօք, զի չարեօք զայլ ոք այնպէս թշնամանել, որպէս Աստուած թշնամանի ի մէնջ մեղօքն: Եւ տե՛ս, պատկեր է մարդն Աստուծոյ, զի զպատկերն իւր ի մարդն եղ (Ծննդ. Ա. 26), ապա յորժամ զհոգիս մեր աղտեղեմք մեղօքն, ո՛չ զհոգիս մեր, այլ զԱստուած նախատեմք, որպէս գրէ Պօղոս, թէ որ անարգէ, ո՛չ զմարդ անարգէ, այլ զԱստուած, որ եղ զինքն ի ձեզ (հմմտ. Ա. Թես. Դ. 8), զի որպէս ոք զդրամն յաղբ ձգելով եւ կոխելով՝ ո՛չ զդրամն, այլ զպատկեր թագաւորին, որ էր ի դրամուն, նախատեաց: Այսպէս եւ որ զինքն մեղօքն աղբտեաց, ոչ զինքն, այլ զԱստուած նախատեաց, զի եւս չարահոտ, քան զամենայն աղբ եւ թարախ են մեղքն, զոր թէ կամիցիս գիտել՝ յետ գործելոյն զմեղս եւ զղջանալոյ, յայնժամ ամ զմտաւ զպոռնկութիւն եւ զայլսն ի մեղաց եւ ապա գիտասցես, թէ զինչ է, զի չիք ինչ պիղծ եւ զարշահոտ, քան զմեղս, որովք թշնամանեցաք



զԱստուած, եւ նա փոխանակ վրէժս պահանջելոյ, պատուեաց զմեզ. իսկ եթէ դարձեալ թշնամանեմք, աւելի եւս տանջիմք, զի թէ առաջին մեղքն այնքան ծանր էր եւ դժուարին, մինչ զի որդին Աստուծոյ մեռաւ, եւ ապա հաշտեցաք:

Իսկ թէ յետ մահուան որդւոյն Աստուծոյ եւ զմեզ հաշտեցուցանելոյն, դարձեալ թշնամանեմք մեղօքն. տե՛ս, թէ որքան պատժոց արժանի եմք:

Արդ՝ փախիցուք ի մօրէն մեղաց ի սատանայէ, իբրեւ յօձէ, զի իշխէ մերձենալ առ մեզ, եթէ մեք ոչ կամիմք, այլ որպէս օձ ի փուշ թաքչի, նոյնպէս եւ նա յերկրաւոր հեշտութիւնս եւ այնու խաբէ եւ պարտէ զմեզ, զի թէ չխաբուիմք, չկարէ նա զմեզ վնասել. որպէս եւ Պօղոս ասէ, թէ ջանացարուք կալ ընդդէմ հնարից սատանայի (տին Եփես. 2. 11): Տե՛ս չասաց ընդդէմ կռուոյն, զի ոչ եթէ յայտնի կռուի, այլ հնարիւք:

Եւ զինչ են հնարքն. պատրել եւ խելօք խաբել, որպէս եւ յարուեստսն խաբէութիւնք կազմին եւ ի բանս եւ ի գործս եւ ի կռիւս. յայսպիսի ինչ չդնէ զմեղսն յայտնի առաջի, այլ այլովք իրօք գունէ, զի ախորժելի զմեղքն ցուցցէ. որպէս առ Ադամ ասաց, թէ յուտելն զպտուղս, լինիք իբրեւ զԱստուածս, գիտել զբարի եւ զչար (Ծննդ. 9. 5), զոր թէ փոքր մի ընդդիմանամք, յայտնին խաբէութիւնք նորա եւ յաղթեմք նմա, զի յոյժ հեշտ եւ դիւրին է կռուիլն ընդ սատանայ, որպէս լուսոյ ընդ խաւար, եւ բարութեան ընդ չարութիւն, զի սատանայ խաւար եւ չարութիւն է, մեք թէ լոյս եւ բարի որ լինիմք, հալածեմք զնա, որպէս լոյսն հալածէ զխաւար եւ բարութիւնն զչարութիւն:

Իսկ թէ եւ մեք եւս խաւար լինիմք, այսինքն՝ չարք, խառնեալ միանամք ընդ նա եւ ըմբռնիմք ի նմանէ եւ զի մի այս լիցի, միշտ գոհասցուք զԱստուծոյ, որպէս եւ երկինք պատմեն զփառս Աստուծոյ (հմմտ. Սաղմ. ԺԸ. 2) եւ զի երկինքն ոչ եթէ ձայնիւ փառաւորէ զԱստուած, այլ զայս կերպարանօք իւրովք ի յօրհնութիւն շարժէ. սոյնպէս եւ որք զբարիս գործեն, աւելի եւս վասն նոցա այլք փառաւորեն զԱստուած: Զի յորժամ խրատեմք զչարս ի մարդկանէ, ոչ եթէ զերկինս ի մէջ բերեմք, այլ զմարդիկ, որ քան զգազանս չարք էին եւ յետոյ հաւասար հրեշտակաց եղեն, որովք զբազումս ի չարաց փոխեմք ի բարիս, զոր երկինքն այսչափ ժամանակս տեսանին եւ ոչ զոք շրջեցին ի չարեաց ի բարիս, ուստի յայտ է, թէ

մարդն յոյժ գեղեցիկ է, քան զերկինս եւ քան զամենայն զարդ երկնիցն, եւ եթէ քան զնոսա ի վայր գտցուք, զիարդ արժանի լիցուք արքայութեան, զի ահա այժմ ամենեքեան գործովք եւ բանիւք մերովք միշտ անարգեմք զԱստուած, զոր նոքա փառաւորեն:

Զի որ զբերան եւ կամ զականջ եւ թէ զորեւէ յանդամոց մարմնոյն անարգէ, Քրիստոսի է անարգանքն, զի որպէս զկնոջն անարգանքն այրն իւր համարի, զի իւր մարմին է, նոյնպէս եւ Քրիստոս զքրիստոնէին անարգանքն իւր համարի, զի իւր մարմին է. ըստ այնմ՝ թէ անդամք եմք յանդամոց նորա եւ մարմին ի մարնոյ նորա (հմմտ. Ա. Կորնթ. ԺԲ. 27), եւ որ զոսկերք մեռելոյ անարգէ, յայտ է, թէ հոգւոյն սրբոյ է անարգանքն այն, զի ընդ ոսկերս մեռելոյն շաղկալ է Հոգին Սուրբ ի գերեզմանին:

Նաեւ բազումք զհաւատն եւ զաւագանն եւ զհաղորդն եւ զխաչն եւ զսեղծօղն անարգեն, որ երես առ երես անարգողք են Աստուծոյ:

Եւ զարմանամ, թէ զիարդ ոչ իջանէ հուր յերկնից եւ այրէ ոչ միայն զնոսա, այլեւ զմեզ, որք ի լսելն զայսպիսի անարգանս Աստուծոյ, լռեմք եւ համբերեմք: Նա եւ որք զանհաւատս կամ զանասունս եւ զայս ի կենդանեաց եւ յոչ կենդանեաց անարգեն, զի կէսք զսարուածն եւ զփայտ եւ զքար, ընդ որ դիպին, անարգեն, անարգողք են եւ նոքա: Նաեւ չար գործովք՝ որովայնամոլութեամբ, արբեցութեամբ, շնութեամբ, ատելութեամբ եւ այլ ազգի ազգի մեղօք միշտ անարգեմք զԱստուած:

Եւ զայն մի՛ ասիցես, թէ չեմ անհաւատ եւ չեմ երկրպագեալ կռոց, այլ զայն ցոյց, թէ չես հնազանդեալ ախտիցն եւ զոր ինչ նոքա քեզ հրամայեն, չես գործով կատարել: Զի եւ կռապաշտքն վասն այսորիկ են պիղծք, զի զախտս մեր աստուածացուցին. զցանկութիւն Ափրոդիտէս կոչեցին, եւ զբարկութիւն՝ Արէս, իսկ զարբեցութիւն՝ Դիոնէսիոս, եւ զորովայնամոլութիւն Պղատոն, ուստի յայտ է, թէ եւ մեք եւս զայս առնեմք դառնագոյն պատժելոց եմք, քան զանհաւատսն, զի որ զիտէ եւ մեղիցէ, աւելի ասէ՝ տանջեսցի (հմմտ. Ղուկ. ԺԲ. 47):

Եւ որպէս որդի, որ անարգէ զհայրն, մերժի ի պատուոյն, իսկ եթէ ոք ի ծառայիցն դովէ, յիրաւի ի խնամս վայելէ: Այսպէս եւ արարածքս ի բազում փառս եւ ի պատիւս վայելեն, եւ մեք ի պատիժս մատնիմք եւ որչափ նախատինք է այս, յորժամ արարածքս,



որ վասն մեր եղեն, յազատութիւն փառաց Որդւոյն Աստուծոյ վայելեն, եւ զմեզ, որ որդիք Աստուծոյ եղաք, վասն բազում չարեացն մերոց, աւելի եւս վասն յիշոցացն ի գեհէնն յուղարկիմք: Եւ զի մի՛ այս լիցի, սուրբս եւ մաքուրս պահեսցուք զոգիս մեր որպէս եւ առաքն, իսկ թէ աղտեղիցիս, մի՛ յուսահատիր. եթէ իցեն ասէ, մեղք ձեր սեաւ, քան զմուր, քան զձիւն սպիտակ արարից. եւ թէ իցեն քան զարիւն կարմիր, քան զլոյս պայծառ առնեմ (հմմտ. Եսայի Ա. 18). զայս գիտելով՝ մի՛ տարակուսիր, զի թէպէտ եւ բիւր չարիս գործեցեր եւ զղջացիս, ընդունի Աստուած: Զի ոչ թէ ի դժոխս գնացեր, ուր չիք խոստովանութիւն եւ չեւ եւս է եկեալ փեսայն, եթէ ոք երկիցէ տալ քեզ փոխ յիւղոյն (տրն Մարթ. ԻԵ. 9):

Այլ բազումք են դեռ, որ վաճառեն զիւզն, մերկք, քաղցեալք, հիւանդք, եւ որք ի բանտսն բնակին. լի՛ց զպէտս նոցա, զի բազմասցի իւզն քո: Եւ արդ՝ մինչ չեւ է եկեալ առ քեզ, որ զհաշիւն առնիցէ, յառաջ քան զօրն զայն, արա՛ պարտուցն վճար եւ ասա՛ ցպարտականն քո, որ ունի զհարիւր մար ձիթոյ, թէ կայ զգիր քո, եւ արա՛ փոխանակ հարիւրին՝ յիսուն (հմմտ. Ղուկ. ԺԶ. 3-8), ապա եւ յինչսն եւ յայլն ամենայն նոյնպէս առնիջիր եւ քեզ եւ քո ազգականացդ ուսո՛ առնել զայս եւ մի՛ ծուլութեամբ զրկել ի թողութենէ, զի է հնար, թէ եւ ի վերջին շունչն եմք, հաճոյ լինել Աստուծոյ, ոչ այնպէս, մինչ առողջն էիր, սակայն գոյ հնար:

Մարթի եւ ի կտակէ անտի շահիլ՝ գրելով զՔրիստոս ընդ ժառանգաւորսն քո, իսկ եթէ դժուարիս ընդ այս, զմտաւ ած, զի նորա Հայրն զքեզ ժառանգակից նմա արար, եւ կարես կակղիլ. տո՛ւր նմա յընչիցդ, որ քեզ անպիտան է այժմ, եւ տա նա քեզ զարքայութիւն, որում դու կարի պէտս ունիս. հանդերձ այսու եւ միսիթար լինի մանկանցն քոց եւ վերակացու, թէ վշտաց ինչ դիպեացին՝ իբրեւ ժառանգակցաց:

Այլեւ զի դու առ նա գնալոց ես, եւ նա դատի զդատաստանս քո, բայց ոմանք այնչափ չարք եւ դառինք են, մինչ զի չունին որդիս եւ չգնեն զՔրիստոս իւրեանց ժառանգ, այլ այսմ անուան եւ այնմ յօժարութեամբ տան, քան Քրիստոսի յետ այսքան երախտեաց, զի բազումք ի մարդկանէ չեղեն արժանի կտակի, այլ յանկարծակի մեռան, իսկ քեզ ետ զազգականսն ճանաչել եւ խօսել, վասն ընչիցն՝ որպէս եւ կամէիր եւ գրեցեր ի կտակի եւ ընդդէմ կացեր հարցն սահմանի, զի նոքա կենդանւոյն վաճառէին զամենայն եւ

բերէին դնէին առ ոտս առաքելոցն (հմմտ. Գործք. Դ. 34), իսկ դու եւ ոչ յետ մահու զդոյն առնես:

Նաեւ են այլք, քան զասացեալս չարք, որ չկամին թէ ժառանգութիւն յայս երթիցէ, այլ կամէին, թէ գետինն բանայր եւ ծածկէր եւ ոչ զի զայս իւրեանց ընչիցն տեարս տեսցեն, որ կարի չար մտաց ծնունդ է այս, իսկ դու գրեա ի տիաթիկն, թէ զՔրիստոս կարգեմ ժառանգաւոր ընչիցն իմոց, պարտ էր քեզ մինչ կենդանի էիր, առնել զայդ եւ այն իսկ էր մեծ, զի ողորմութիւն մեծ այն էր՝ ի կենդանութեան առնել, իսկ թէ զայն ոչ կամեցար, գոնէ յետ մահու արա, զի թէպէտ եւ զփառսն ընդ գառինսն չկարես առնուլ, չէ փոքր եւ այն ի թիւ նոցա կարգիլ, որպէս զի մի կարգեսցիս ընդ ուլսն ի ձախմէն (հմմտ. Մարթ. ԻԵ. 41):

Տե՛ս, զի յորժամ ցաւք ինչ ի վերայ հասանիցեն եւ թէ այլ ինչ բարկութիւն Աստուծոյ, նա եւ զմահուանէ բազում անգամ ասեմք, թէ ընչիւք գնէր այս անուն այսչափ ինչս տայր եւ ապրէր եւ արդ՝ տե՛ս զսէրն Աստուծոյ, ոչ տայ քեզ զժամանակաւոր մահս գնոյ, այլ զյաւիտենականն: Ասա, եթէ ծախօղն փոքուն գին կտրէր, եւ զմեծն տայր, ո՞չ գոհանայիր զնմանէ, նոյնպէս եւ Աստուած գին կենաց խնդրէ ի քէն ողորմութիւն եւ չտայ զփոքրս զայս, այլ զյաւիտենականն, իսկ ապա թէ եւ զայս եւս չառնիցես, ո՞վ գերծուսցէ զքեզ ի դժոխոցն, եւ զո՞վ կոչեսցես քեզ օգնական. զԱբրահամ, այլ ոչ լսիցէ քեզ. զիմաստուն կուսա՞նսն, եւ ոչ նոքա, իսկ զհայրն եւ զմայրն, այլ եւ նոքա չեն անձանց տեսարք, թէ եւ յոյժ սուրբք իցեն:

Զայս ամենայն գիտացեալ, որ միայն կարող է փրկել զմեզ ի հրոյն, զնա աղաչեա բարի գործովք, եւս առաւել ողորմութեամբ, որովք եւ զյաւիտենական բարութիւնսն վայելեսցես շնորհօքն տեսան մերոյ Յիսուսի Քրիստոսի. ընդ որում Հօր եւ Հոգւոյն Սրբոյ վայելէ փառք, պատիւ եւ իշխանութիւն, այժմ եւ միշտ եւ յաւիտենանս յաւիտենից. ամեն:

[Բան.] Եւ իբրեւ եմուր նա ի փուն, աշակերտքն առանձինն հարցին ցնա. մեք ընդէ՛ր ոչ կարացար հանել զնա (Մարկ. Թ. 27):

[Մեկնութիւն.] Եւ զի առանձինն մատուցեալ՝ հարցանէին. ոչ առ ամաչել ինչ, զի մանուկն բժշկեցաւ եւ դպիրքն յամօթ եղեն, եւ չմնաց ինչ պատճառ ամօթոյ: Այլ զի առին իշխանութիւն ի վե-



րայ այսոց պղծոց, կարծէին, թէ կորուսին զշնորհսն, զոր ընկալան վասն այսորիկ առանձինն հարցին:

Իսկ Քրիստոս, զի ասաց առ այրն, որ հաւատայ ամենայն հնար գոյ նմա. առ սոսա ասէ ըստ Մատթէոսի, թէ վասն թերահաւատութեան ձերոյ (հմմտ. Մաթթ. ԺԷ. 19), զի եւ Յովհաննէս գրէ յայսմ տեղւոջ թէ՛ եւ եղբարքն իսկ չէին հավատացեալ ի նաեւ (հմմտ. Յովհ. Է. 5) Պետրոս մերթ երանէր, եւ մերթ պատուհասակոծ լինէր, եւ այլքն իբրեւ զանիմաստս պարսաւէին ի նմանէ. ի դէպ է, թէ բազում անգամ եւ տկարանային, զի յառաջ, քան զխաչն, թերակատարք էին: Հաւատ աստ զնշանացն ասէ, զի այլ է նշանագործութեան հաւատալ եւ այլ հաւատն աստուածութեան եւ տնօրինական գործոցն Քրիստոսի:

Մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա:

Դարձեալ, զի փութով գալոց էր առ նոսա Քրիստոս, որպէս եւ եղեւ իսկ. յաղագս այսորիկ եւ ոչ կարացին բժշկել, զի չէր բարւոք մերձ գոլով տեառն սքանչելագործել նոցա:

Աստի եւ յորժամ առաքեաց զնոսա երկուս երկուս գործէին:

[Բան.] Եւ ասէ զնոսա. այդ ազգ ոչ իւիք ելանէ, եթէ ոչ պահօք եւ աղօթիւք (Մարկ. Թ. 28):

[Մեկնութիւն.] Ոչ ասաց, թէ այս տեսակ դիւաց, այլ թէ ազգ, որ զամենայն իսկ տեսակ դասուց դիւացն յայտնէ եւ ոչ միայն զլուսնեկացն եւ զի մի ոք հեշտութեան տալով զինքն, միայն հաւատովք ի ձեռն սրբոց ակնկալցի բժշկութեան, յաղագս այսորիկ խրատէ, թէ յետ հաւատոցն եւ ի սուրբս ապաւինելոյն պարտ է եւ պահօք եւ աղօթիւք ճգնել եւ ապա փրկութիւն գտանել. թէպէտ եւ պատահեաց երբեմն սաստելով միայն հանել զգեւս, մի ոք կամ երկուք ուրեք, սակայն որ գամ մի յայնպիսի չարչարանս մատնեալ իցէ, չէ հնար, թէ ի փափկութեան իցէ եւ ազատանալ կարիցէ: Որպէս եւ ասէ իսկ. այդ ազգ ոչ իւիք ելանէ, եթէ ոչ պահօք եւ աղօթիւք: Զի որ պահէ, այնպիսուոյն պարտ է զփափկութիւնս ատել, զի չիք ինչ ախորժելի դիւին իբրեւ բարեկեցութիւն եւ զարեցութիւն, զի այն է ծնօղ ամենայն չարեաց, այն եւ զիսրայէլացիսն երբեմն ի կռապաշտութիւն ձգեաց եւ զսողոմայեցիսն ի չարագործութիւն, զի զինչ չար ոչ գործիցէ շատ ուտելն եւ արեցութիւն, զի քան զխոզ այլ գարշելի առնէ զմարդն, զի խոզն ի տղմի թաւալի եւ աղ-

բով կերակրի, իսկ այնպիսին եւս չար կերակրի: Զի ի խառնս չարս իմանայ, եւ անօրէն ցանկութիւնս. ամաչեմ ասել. զորչափ չարիս ի յարեցութենէն գործեն արք եւ կանայք, նոցին խղճի մտացն թողից, որ ստոյգ, քան զիս գիտեն: Զինչ գարշելի, քան զկին արբեալ կայցէ, զի որչափ տկար է, դիրաւ վնասի եւ այնպէս Աստուծոյ պարգեւքն նախատին յանմտաց, զի ի բազմաց լսեմ, թէ բնաւ մի գտցի գինի:

Ո յիմարութեան, այլք մեղանչեն եւ զԱստուծոյ պարգեւսն բամբասեն. ոչ եթէ գինին արար զչարիսն, այլ աւելի, քան զպէտան ըմպել:

Ասա, թէ մի՛ գտցի արեցութիւն. ապա թէ ասես՝ մի՛ գտցի գինի, փոքր փոքր յառաջ մատուցեալ, ասես՝ մի՛ գտցի երկաթ վասն սպանողաց, եւ մի՛ լիցի գիշեր վասն գողոց, եւ մի լոյս վասն զրպարտչաց, եւ մի կին վասն շնութեան, այլ մի՛ զայս ասիցես, զի սատանայական միտք են այս:

Գինի տուաւ վասն ցաւոց եւ ուրախութեան: Լո՛ւր Պօղոսի՝ սակաւիկ մի գինի խառնեսձի՛ր վասն ստէպ ստէպ քո ցաւոցդ (հմմտ. Ա. Տիմ. Ե. 23). եւ այն սուրբն, որ ի ցաւս էր, եւ չիշխեաց ըմպել գինի մինչ վարդապետն հրաման ետ. մեզ զիարդ լիցի թողութիւն, որք առանց հրամանի վարդապետի եւ յառողջութեան եւս արբենամք:

Յնա ասէր, թէ սակաւ մի՛ գինի ըմպէ վասն ցաւոցդ, եւ ցիրաբանչիւր ոք յարեցողացն ասէ, թէ սակաւ մի գինի ըմպէ վասն պոռնկութեանցդ: Եւ թէ վասն այնց չմեկնիցիս, գոնէ վասն տրամութեանցն, որ անտի լինին, զի գինի ասէ՝ ուրախ առնէ զսիրտ մարդոյ (հմմտ. Սաղմ. ԸԳ. 15). եւ զի՞նչ ուրախութիւն զխելքն կորուսանել եւ զամենայն շուրջ զիւրեւ գալ տեսանել: Նա եւ ոչ միայն յաւուրն, յորում արբենաս, կրես զվնաս արեցութեան, այլեւ յետ այնր աւուր: Զի որպէս ի ցածնուլ մրրկաց ծովուն, մնայ վնաս մրրկին. նոյնպէս եւ աստ մնացեալ թմբիր արեցութեան, լուծանէ զմարմինն, իսկ հոգին ի նորա լուծանիլն՝ բորբոքէ զմրրիկ ցանկութեան:

Եւ զոր օրինակ՝ անդ ընկեցիկ ի նաւէն զբեռինսն առնեն. նոյնպէս եւ աստ համարէ, թէ ամենայն բարուցեացն վատնումն լինի, թէ ցանկութիւն իցէ, թէ հեղութիւն, թե փտութիւն, զամենայն ընկենու ի չար ծովն արեցութեան: Այլ՝ կատարածն չէ զոյգ, զի անդ յետ զբեռինսն ձգելոյ՝ թեթեւ անայ նաւն, եւ աստ՝ եւս քան



զեւս ծանրանայ, զի յետ զբարիսն ի բաց ձգելոյ, ընդունի զսիկ եւ զաւազ արբեցութեան, զազգի ազգի մեղս հեշտութեանցն, աչօք, լսելօք եւ ամենայն զգայութեամբք մարմնոյ եւ հոգւոյ, որք ընկղմեն զնաւն եւ զնաւապետն եւ զնաւորդսն, այսինքն՝ զմարմինն եւ զմիտսն եւ զբարի խորհուրդսն:

Վասն որոյ աղաչեմ, փախիցո՛ւք յարբեցութենէն, զի մի՛ եւ մեզ սպառնասցի մարգարէն՝ որպէս եւ Բաբելոնի, թէ անդ ոգնիք եւ իշացուլք բնակեացեն (տէս. եւ. ԺԴ. 23) եւ դեւք կաքաւեսցեն. եւ արդարեւ իշացուլք են ոմանք ի մարդկանէ, զի որպէս իշացուլն յամենայն էչս մատակ, զոր տեսանէ, միապէս յարձակի. նոյնպէս եւ այնպիսիքն յամենայն կանայս ի սիրելիաց եւ յօտարաց, նաեւ յազգայինսն միապէս յարձակին ըստ չար կամացն իւրեանց, զոր պարտ է զայնպիսին իբրեւ զշուն կատաղի եւ զհասարակաց թշնամի ամենեցուն քարկոծ առնել եւ ի միջոյ ի բաց բառնալ զայրն եւ զկիրնն: Այդ ազգ (ասէ) ոչ իւրիք ելանէ, եթէ ոչ պահօք եւ աղօթիւք:

Յորդորակ

Գիտեա՛, զի պոռնկելն մարմնով հաղորդ է դիւահարութեան, որպէս ասէ մարգարէն, դիւով պոռնկութեան պոռնկեցան (հմմտ. Ուվսէ Դ. 12-18) յանապատին. զի նախ դեւն պոռնկութեան շաղաշարի ընդ հոգի եւ միտս մարդոյն եւ ապա մարմնովն կատարէ պոռնկութիւն, որպէս եւ եղեւ յանապատին, զի նախ ընդ դեւքն պոռնկեցան հոգւով եւ մտօք՝ երկրպագութեամբ կոռցն, ապա եւ մարմնով սկսան ի պոռնկել, ուստի ուսանիմք, եթէ չկարէ ոք պոռնկել մարմնով, եթէ ոչ նախ պոռնկեցի ընդ դեւն հոգւով: Եւ սոքա երկոքին դիւահարութիւն եւ պոռնկութիւն ի ձեռն պահոց եւ աղօթից բժշկին: Զի որպէս բազում են ցաւք մարմնոյ եւ ազգի ազգի, եւ ըստ ցաւոցն՝ եւ դեւք բազումք, այսպէս բազումք են եւ մեղքն եւ ազգի ազգիք, եւ ըստ մեղացն եւ ապաշխարութիւն այլ եւ այլ: Եւ որպէս ոչ բժշկէ միոյ ցաւոյն դեղն զմիւս ցաւն, զի ոչ բժշկէ զակն, այն, որ բժշկէ զկրունկն, այսպէս ոչ բժշկէ միոյ մեղացն ապաշխարանք զմիւս այլ մեղսն. ըստ որում եւ ասէ, թէ այս ազգ մեղք ոչ իւրիք բժշկի, բայց պահօք եւ աղօթիւք: Զի որպէս բժիշկն խրատ տայ եւ ասէ, թէ այս ինչ ցաւ այսու դեղով միայն լինի բժշկեալ, այսպէս

եւ Քրիստոս ասէ, թէ պոռնկութիւն եւ դիւահարութիւն պահօք եւ աղօթիւք միայն բժշկին:

Զի ի ձեռն պահոց չարչարի մարմինն եւ տկարանայ, եւ ոչ կարէ պոռնկիլ, թէ եւ կամի:

Զի գրեալ է, թէ այր մի վաւաշ սիրէր զկին մի գեղեցիկ եւ մեծազգի. եւ ասաց կնոջն՝ հաւանիլ նմա, իսկ կինն ասէ, եթէ կաս մնաս նօթի ընդ իս, մինչ կոչեմ զքեզ ի կերակուր, լինի զինչ եւ կամիս: Եւ նա ասէ՝ այո՛. եւ կինն պահեալ զերկուս աւուրս, նոյնպէս եւ այրն, եւ յերրորդ օրն պատրաստեաց կին կերակուր, էարկ եւ անկողինս պայծառս եւ կոչեաց զայրն եւ ասէ ցնա, զինչ կամիս. ելանե՞մք յանկողինն, եթէ կերակրիմք, իսկ այրն աղաղակեաց՝ չկամիմ զանկողինն, զի այժմ ատեցի զամենայն կանայս, որ աշխարհի, այլ կամիմ կերակրիլ, զի մի՛ մեռայց ի սովոյ:

Տեսեր ահա, զի մինչ էչր պահեալ, նեղէր յախտէն, իսկ յետ պահոցն, բժշկեալ եղեւ. ապա բարւոք ասացաւ՝ եթէ պոռնկութիւն բժշկի պահօք, իսկ փորձութիւն մտացն ի ձեռն աղօթից բժշկեալ լինի, եւ այսպէս ի ձեռն պահոցն եւ աղօթից թաղութիւն մեղաց ընդունիմք յԱստուծոյ, զի մեծ զօրութիւն ունին եւ աղօթք, մանաւանդ գիշերային աղօթքն:

Որպէս Պօղոս եւ Շիղայ ի գիշերի աղօթելով արձակեցին զկապանսն եւ բացին զբանտն (հմմտ. Գործք ԺԶ. 25-26):

Զնոյն արասցուք եւ մեք եւ բացցուք մեզ ոչ բանտ, այլ գերկինս: Եղիա փակեաց եւ եբաց գերկինս աղօթիւք (տէս Գ. Թագ. ԺԷ. 1, ԺԸ. 1-46). է եւ յերկինս խստադոյն կապանք, զոր կապիցէք, ասէ՛ յերկրի, եղիցի կապեալ յերկինս:

Եւ զի աղօթք զմեղս սրբեն, հաւանեցուցէ զմեզ այրի կինն, որ զանիրաւ զատաւորն աղաչէր (հմմտ. Մաթթ. ԺԸ. 18), եւ բարեկամն, որ ի մէջ գիշերի ստիպէրն եւ բաղխէր (տէս Ղուկ. ԺԱ. 1-8), հաւանեցուցէ զմեզ Կուռնէլիոս, աղօթք քո եւ ողորմութիւն ելին առաջի Աստուծոյ (տէս Ղուկ. ԺԱ. 5-8), այլեւ Պօղոս՝ ասելով, թէ ճշմարիտ այրին մենացեալ եւ յուսացեալ յԱստուած՝ կանխեալ յաղօթս ի տուէ եւ ի գիշերի (հմմտ. Գործք, Ժ. 4, 31) եւ եթէ այրի կինն պարտական է այսմ, յոյժ մանաւանդ արք եւ կանայք արամբիք: Արդ՝ խոնարհեա՛ ի ծունր, հեծեա՛, արտասուեա՛. յիշեա՛ զթագաւորն, զի ասէր, վաստակեցայ ես ի հեծութեան իմում, լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ, եւ արտասուօք իմովք զանկողինս իմ թացի (հմմտ.



Մաղմ. Զ. 7) եւ թէ ի մէջ գիշերի յառնէի խոստովանն լինել առ քեզ: Ոչ ես դու քան զԴաւիթ փարթամ եւ ի խրախուժեան որչափ եւ մեծատուն իցես. նա թէ եւ մանկունք քո իցեն, զարթո՛ւ եւ զնոսա, այլ եթէ տղայք իցեն եւ ոչ բաւեն տքնութեան, մինչեւ ի կատարումն միոյ եւ երկուց աղօթից կացցեն, եւ դարձեալ Հանգո զնոսա: Եւ եթէ այսպէս զարթիցես հոգևովդ եւ ոչ լոկ մարմնովդ, յետ այնպիսի արթնութեան լինիցի քեզ եւ ննջումն քաղցր, եւ երազքն՝ սխրալիք: Նա՛ թէ եւ բազում աղօթս ոչ կարես առնել, մի՛ արա՛ հսկելով եւ շատ է, թէպէտ եւ ոչ ի Հասարակ գիշերի, այլ մօտ առ նոյն իսկ առաւօտն փութա. ըստ այնմ, եթէ յիշէի զքեզ յանկողնի իմում, ընդ առաւօտս կանխեալ խօսէի ընդ քեզ (հմմտ. Մաղմ. ՃԺԸ. 62):

Ճրագն առ քեզ յար պայծառ լիցի, ոչ այս այրեալս եւ շիջեալ, այլ զի՞նչ. ճրագ ասէ՛ հն բանք քո ոտից իմոց, եւ լոյս տայ շաւղաց իմոց (Մաղմ. ԿԲ. 7):

Հրացո՛ւ ի ձեռն աղօթիցն զհոգիդ, եւ յորժամ տեսանիցես հրացեալ բաւականապէս աղօթիցն հրով ի բաց Հան, եւ տպաւորեա ի պատկեր զարմանալի, յոր եւ կամեսցիս դու քեզէն: Զի զոր օրինակ պղնձագործ զժանգոտեալ անօթ ի քրայ արկանէ եւ ուռամբք հարեալ պայծառացուցանէ. այսպէս եւ դու զժանգոտեալ մեղօք հոգի քո արկ ի քուրայն խոստովանութեան, եւ ապա իջո ի վերայ զուռն ի բարձանց, այսինքն՝ է բանն մեղադրանաց եւ յանդիմանութեան զքեզ, որով վերստին պայծառացի հոգիդ, զի հաւատա ինձ ոչ այնպէս հուրն զժանգն ի բաց մաքրել սովոր է, որպէս գիշերային աղօթք զմեղացն ժանգ հոգւոց մերոց:

Ընդէ՞ր արգեօք ինքն Քրիստոս ի լերինն զամենայն գիշերն Հանէր յաղօթս Աստուծոյ (Մաղմ. ՃԺԸ. 105). ո՞չ զի մեզ օրինակ լիցի: Զի որպէս բոյսք եւ տունկք պտղաբերք ի տուէ այրելով ի տապոյ արեգականն, գիշերային ցօղովն դարձեալ դալարանան. այսպէս զհոգի եւ զմիտս ձեր, զոր ի տուէ տապով մեղացն եւ ազգի ազգի Հարեօք կամայ եւ ակամայ տոչորեցէք, դարձեալ գիշերային աղօթից արտասուօք զովացուցէք. որպեսզի վերստին դալարացի. ապա թէ զցօղն զայն ոչ առցէ, կիզեալ լիցի ի տուէ, որ քաւ եւ մի լիցի:

Ասա ինձ, եթէ ի դժուարին ինչ իրս անկեալ լինէիր, զքանի՞ս աղաչէիր վասն այնր, եւ շնորհս Համարէիր միջնորդացն, իսկ այժմ

Աստուած պատրաստ է լսել զաղաչանս քո եւ շնորհս քեզ ունի, վասն զի աղաչես զնա. զի՞նչ է գտանել քան զայս մեծագոյն բարի: Որպէս դու ամբաստանես զբարեկամէն, յորժամ ոչ վստահանալով ի սէրն քո՛ զայլս աղաչօղս կալցի առ քեզ. այսպէս եւ առ մեզ առնէ Աստուած, զի Աստուած յայնժամ առաւել առնէ, յորժամ մեք փութամք եւ ոչ զայլս աղաչեմք միջնորդել:

Եւ զիրարդ իշխեմ ասէ, եթէ սխալեալ իցեմ. լռեա ի մեղացն եւ արտասուօք մատիր առ նա, ասա միայն ի խորոց սրտէ, եթէ մեղայ եւ ամենայն լուծեալ եղեւ. Ոչ այնպէս կամիս դու սրբել զմեզս քո, որպէս նա միշտ կամի սրբել զնոյն:

Եւ ստոյգ է այս, զի դու տքնել ոչ առնուս յանձն եւ ոչ զինչսն բաշխես, իսկ նա, զի թողցէ զմեզս մեր ի միածին ոչ խնայեաց, մարդասէր է միայն պատճառս նմա տացուք. եւ զայս խնդրէ, զի մի՛ մեք բնաւ անպիտանք լինիցիմք, զի թերեւս եւ առանց այսորիկ լուծանէր:

Այլ որպէս մեք առ մերոց ծառայիցն բազում իրս ստեղծանեմք, առ ի ճանաչել զսիրտս նոցա եւ սիրել զնոսա, նոյնպէս եւ նա վասն մերոյ փրկութեան առնէ:

Արդ՝ ճշմարտապէս կարդացուք առ նա (Մաղմ. ՃԵԴ. 18) ըստ մարգարէին կամօք եւ յօժարութեամբ (Հմմտ. Հուդիտ Դ.16), զի հեզ է եւ քաղցր, այլ եթէ դու ոչ կարդաս առ նա ճշմարտութեամբ, նա զիա՞րդ առնէ:

Եւ զի՞նչ է ճշմարտութեամբ աղօթելն, որպէս առ կազմեալսն ասեն, եթէ ճշմարիտ է, ոչ ունիս խարդախութիւն, նոյնպէս եւ աստ, որ ճշմարտապէս կարդայ առ նա, որպէս ցաւոտ առ բժիշկ ոչ լինի ի բաց կացեալ, մինչեւ առնուցու:

Իսկ որ վայրապար զնոյն սահման աղօթիցն միայն լնլով եւ ոչ ի խորոց սրտէ աղօթէ, զիա՞րդ առնուցու: Զի որպէս ցաւոտն ոչ միայն ասէ բժշկին, թէ ցաւոտ եմ, այլ փութայ ազատիլ ի ցաւոցն. այսպէս եւ դու մի միայն ասեր Աստուծոյ, թէ մեղաւոր եմ, այլեւ ցաւեցիր եւ փութա՛ ազատել զքեզ ի մեղացն, զի եթէ ցաւագնիս, փութաս, իսկ եթէ ոչ փութաս, յայտ է, թէ ոչ ցաւագնիս, եւ եթէ վասն քո փրկութեան ոչ ցաւագնիս, խաբեբայ ես, զի ոյ՞ ոք ասիցէ, եթէ ցաւիմ, եւ ոչ զամենայն ինչ առնիցէ, որպէս զի ազատեսցի:

Մեծ զէն են աղօթք առ ի փրկութիւն. եթէ դուք գիտէք, ասէ պարզեւս բարիս տալ որդւոց ձերոց. որչափ եւս Հայրն ձեր, որ



յերկինս է, տացէ բարիս այնոցիկ, որ խնդրեն զնա (հմմտ. Մարթ. Է. 11, Ղուկ. ԺԱ. 13):

Այսուհետեւ մատիցուք առ նա հաւատով եւ ընծայիւք, զորս եւ ախորժէ. եւ ո՞չք են այնք, չարեացն անյիշութիւն, ողորմութիւն եւ խոնարհութիւն: Եթէ այսպէս մատիցես, թէպէտ եւ մեղաւոր իցես, շահեսցիս, ապա թէպէտ եւ արդար իցես, եւ զանյիշաչարութիւն եւ զայլսն ոչ ունիցիս, ոչ ինչ շահիցիս:

Եւ զի Աստուած մեծ է, քան զմարդ. Եթէ դու ասիցես ցնա, նենգութիւն կրեցի եւ ոչ զչարեցայ վասն քո հրամանիդ, արդ եւ դու թող զմեզս իմ. յայնժամ եւ նա թողուցու, իսկ որ ոչ թողու ընկերին, եւ ոչ ինքն յԱստուծոյ գտցէ թողութիւն:

Արդ՝ մաքրեսցուք զհոգիս մեր ի չարայուշութենէ, եւ հսկելով աղօթեսցուք առ նա պահօք եւ ժուժկալութեամբ, զի արժանի լիցուք խոստացելոց բարեացն Քրիստոսիւ Յիսուսիւ՝ տերամբ մերով: Ընդ որում Հօր եւ Հոգւոյն Սրբոյ վայելէ փառք պատիւ եւ իշխանութիւն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

**ԻԳՆԱՏԻՈՍ ՍԵՒԼԵՌՆՅԻ**

(Գլուխ Թ.)

Ի ժամուն յայնմիկ, այր մի՛ լի անհաւարութեամբ, մեկուսի գտեալ զաշակերտսն, Էած առ նոսա զորդին իւր դիւահար (հմմտ. Ղուկ. Թ. 38):

Եւ աշակերտքն ոչ կարացին հանել զնա վասն անհաւատութեան հաւր մանկանն, զի իբրեւ առ կախարդս եկն առ նոսա եւ նոցա ոչ էր յայտնի անհաւատութիւն նորա: Իսկ Յիսուս, իբրեւ էջ ի լեառնէ անտի եւ եկն առ նոսա, ընդ առաջ եկեալ այրն՝ ամբաստան լինի զաշակերտացն, զի ոչ կարացին հանել, այլ՝ նա, որ զծածուկսն տեսանէ, ասէ. անհաւատութիւն քո է պատճառ, ընդէ՞ր չարախաւսես զաշակերտսն: Զայս լուեալ առնն՝ զայ ի հաւատս, աղաղակեալ ասէ. «Նաւարամ, Տէր, սոգնեա՛ ի մի՛ յիշեր զանհաւարութիւնս իմ» (Մարկ Թ. 23): Իսկ Յիսուս ետ հրաման՝ ամել զնա առաջի Իւր եւ թոյլ ետ զիւրին սաստկապէս շարժել զնա, եւ ապա՝ սաստեալ իշխանութեամբ, հալածական առնէ, զի տեսցեն եւ երկիցեն եւ զիտասցեն, թէ յորքան չար այսոց զերծոյց զնոսա, եւ ի միտ առեալ՝ մի մոռասցին զերախտիս բարերարութեան նորա:

Յայտնեաց այնուհետեւ զխորհուրդ չարչարանացն եւ ծածկէ, զի մի գիտասցեն, եւ վասն այնորիկ ասէ յառաջ, զի յետ լրմանն խորհրդոյն գիտասցեն, որով ունիցին զայլս ուսուցանել:

**ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ**

(Գլուխ Թ.)

Եւ ահա այր մի ի ժողովրդենէն աղաղակեաց ի ժամուն յայնմիկ (Ղուկ. Թ. 38):

**ԻԳ** Այր անհաւատութեամբ լի:

Նարցանէ ցնա Յիսուս. Քանի՞ ժամանակք են: Եւ նա ասէ. Ի մանկութենէ բազում անգամ ի հուր արկանէ, երբեմն ի ջուր, զի կորուսցէ գնա (հմմտ. Ղուկ. Թ. 39):

**ՈԿ** Եւ արդ՝ դու տե՛ս զբարերարութիւնն Աստուծոյ եւ զանչափ խնամակալութիւնն, զի այնչափ ժամանակս ի նոսա էր դեւն եւ ո՛չ տայր մեղանչել: Զի եթէ ո՛չ վայելեալ էր յԱստուծոյ խնաման այրն, ի վաղուց հետէ կորուսեալ էր զնա: Քանզի ասաց, եթէ՛ «Ի հուր արկանէ եւ ի ջուր», որ այնչափ յանդուգն էր: Նաեւ ի սպանանելոյ ո՛չ ակնածէր, եթէ ո՛չ սանձեալ էր զմոլեգնութիւն նորա:

Աղաչեցի զաշակերտսն քո, զի հանցեն, եւ ո՛չ կարացին Ղուկ. (Թ. 40):

**ԵՓ** Մեկուսի գտեալ զաշակերտսն, եւ աշակերտքն ո՛չ կարացին հանել վասն անհաւատութեան հաւր մանկանն: Զի իբրեւ առ կախարդս եկն առ նոսա, եւ նոցա ո՛չ էր յայտ անհաւատութիւն նորա: Կարծեաց, եթէ ո՛չ են կատարեալ յարուեստ գիտութեան վարդապետին իւրեանց: Ապա եթէ ո՛չ, ընդէ՞ր ո՛չ բժշկէին զնա: Եհաս բանս այս առ աշակերտսն, եւ կացոյց զնոսա ի մէջ ծփանաց:

Եւ Յիսուս ասաց. Ո՛վ ազգ անհաւար եւ թիւր (Ղուկ. Թ. 41):

**ԻԳ** Որ զծածուկսն տեսանէր: Ասէ. «Անհաւարութիւն քո է պարճառ, ընդէ՛ր մեղադրես աշակերտացն»:

**ՈԿ** Ո՛չ ի նորա դէմսն ձգէր զբանն, այլ առ ամենայն հրէայսն: Քանզի թերեւս զայթազղեալ էին ամենեքին, որ անդ կային:



Մինչև և ցե՛րք իցեմ ընդ ձեզ եւ անսայցեմ ձեզ (Ղուկ. Թ. 41):

*Յուզանէ, եթէ ախորժելի էր Քրիստոսի մահն իւր եւ ցանկալի էր նմա մեկնիլ ի նոցանէ: Եւ ծանրագոյն թուէր նմա շրջել ընդ նոսա, քան ի խաչ ելանել:*

Մինչդեռ մաքչէր, զարկոյց զնա դեւն եւ շարժեաց (Ղուկ. Թ. 42):

*Հրաման տայր զիւին լլկել զնա: Ո՛չ եթէ ի ցոյց ինչ ժողով-դեանն արար զայն, այլ վասն Հաւրն: Զի յորժամ տեսցէ, եթէ ի կոչելոյն միայն խռովեցաւ դեւն, եւ հաստատեսցի ի հաւատս վասն նշանին, որ լինելոց էր:*

Մասպեաց Յիսուս այսոյն պղծոյն եւ բժշկեաց զմանուկն (Ղուկ. Թ. 43):

**ԵՓ** Զի արագ լսէր նմա այսն պիղծ, քան զմարդիկ գալ ի հաւատս:

**ԻԳ** Հալածական առնէր զդեւն, զի տեսցեն եւ երկիցեն: Եւ զիտասցեն, եթէ յորքան չարեաց զերծոյց զնոսա, եւ մի՛ մոռացին զերախտիս բարերարութեան նորա:

Ասէ ցաշակերփսն իւր. Դի՛ք դուք ի միփս ձեր զքանս զայս, զի Որդի մարդոյ մաքնելոց է (Ղուկ. Թ. 44):

**ԻԳ.** Զի մի՛ ասիցեմք, եթէ ընդէ՞ր աստ ցանկ տուայտիմք: Յաղագս այնորիկ վասն չարչարանացն ճառէ, զի յորժամ լսեն, բնաւ ո՛չ կամիցին տեսանել զԵրուսաղէմ:



25. ՍԱՏԵՐ Ի ԲԵՐԱՆ ԶԿԱՆ

Մաքթէոս ԺԷ. 23-26

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՒ ԵՓՐԵՍ

Յորժամ եկին նորա ի Կապեոնաւում, մաքեան որք զերկորամեանն պահանջին՝ առ Պետրոս, եւ ասեն. Վարդապետն ձեր ո՛չ փայ զդիորարքմայն (հմմտ. Մաքթ. ԺԷ. 29-30):

Յորժամ զանդրանիկս եգիպտացւոց կոտորեաց Աստուած յայնժամ զղուտացւոց ազգն ընդ նոցա առ իւր: Զի քան զհրէիցն անդրանիկս պակասէր թիւց զեւտացւոցն: Փոխանակ ընդ պակասուիցն թւոց սիկղ մի արծաթոյ հրամա[յ]էր բերել եւ այլեւ ազգ անդ ի սովորութիւն կալաւ անդրանկաց Իսրայէլի զհարկս տալ: Եւ զի Քրիստոս անդրանիկ էր եւ զի գլուխ առաքելոցն զՊետրոս համարէին, առ նայ մատչէին: Թւի ինձ, թէ քաղաքի առ անձին իմն պահանջէին: Քանզի նորա քաղաք կարծէր Կապեոնաւում, եւ առ նայ չիշխէին մերձենալ, բայց առ Պետրոս: Եւ ոչ կարի սաստիկս, այլ՝ մեղմով: Քանզի աչ եթէ սաստէին, այլ հարցանէին, թէ «Վարդապետն ձեր ո՛չ հարկիցի զդիորարքմայն», որպէս նմայ պատշաճ ինչ էին կարծիք, այնմ չէին ինչ տեղեակ, այլ իբրեւ զմարդ համարէին, բայց սակաւ ինչ ակնածէին եւ պատուէին, վասն յառաջայգոյն գործոց նշանացն:

Զի՞նչ գործիցէ Պետրոս: «Այոյ» ասէ (տես Մաքթ. ԺԷ. 23): Նոցայ ասաց, թէ տայ զհարկն, բայց նմայ ինչ ի վեր չեհան: Թերեւս ակնածէր, վասն այնպիսի դոյզն իրաց ասել զՆայ: Վասն որոյ հեզն որ զամենայն ինչ ճարտար գիտէ յառաջ քան զնայ: «Զիարդ թուի քեզ, ասէ, Սիմովն. թագաւորք երկրի, յումմե՛ առնուն զհարկս այլովք հանդերձ» (հմմտ. Մաքթ. ԺԷ. 24): Զի մի կարծիցէ Պետրոս, թէ ի նոցանէ լ[ո]ւեալ ասիցէ, յառաջէ քան զՆայ եւ յայտ առնէ զնոյնն եւ համարձակութիւն (=համաձայնութիւն) տայ: Քանզի դանդաղէր ասել զՆայ: Այսպիսի է, զոր ասեն: Ազատ եմ, ասէ, ի հարկ տալոյ, զի թէ երկրիս թագաւորք իւրեանց որդ[ւ]ոցն չառնուն զհարկս, այլ յայնցանէ որ իշխիցենն: Որչափ եւս առաւել ինձ պարտ էր յայսպիսի հարկաց



ազատ գտանել: Քանզի եթէ երկրաւոր թագաւորի, այլ երկնաւորին որսի եմ եւ թագաւոր:

Այլ զի մի՛ գայթաղեցուցուք զնոսա, երթ ի ծովն՝ եւ ընդէ կարթ, եւ զառաջին ձկանն զրերանն բաց եւ գտանես սափեր. քոր զայն ընդ իմ եւ ընդ քո (հմմտ. և Մարթ. ԺԷ. 26):

Տե՛ս, զիա՞րդ հրամայէ տալ զհարկս եւ ո՛չ վայրապար ինչ հրամայէ տալ, այլ նախ ցուցանէ, թէ չէ հարկապարտ եւ ապա տայ: Զի միովն նոքա չգայթակղեսցին եւ միւսովն նոքա չվնասեսցին, զի ոչ թէ իբրու զպարտապան ոք ետ, այլ՝ զնոսա անմտութիւնն ածէ յուղղութիւ: Նայեւ տալովն իսկ ցուցանէ զանձին զաւրուութիւն, զի ո՛չ է քսակէ, այլ ի ծովէ: Իբրեւ զամենայնի Աստուած հրամայեաց տալ, որում երբեմն եւ սաստեաց իսկ եւ Պետրոս ի վերայ ալեացն ետ գնալ եւ եցոյց թէ Աստուծոյ միայն գործ է: Եւ աստ չէ փոքր ինչ սքանչելիսք: Այնպիսի պորոց զձուկն հանդերձ սատեովն արտաքս ածե: Եւ թէ յառաջ զայն ձուկն ունիցի, որ հարկս իցէ տալոյ եւ այն Աստուծոյ անճառ զաւրութենէ, որ եւ ծովուն եւս հրամա[յ]եաց հարկատու լինել եւ հնազանդ

Տոր նոցա, ասէ, ընդ իմ եւ ընդ քո: Տե՛ս զառաւել պատիւն եւ զանչափ խոնարհութիւն մտացն Պետրոսի, զի Մարկոս՝ աշակերտ նորա զայս ո՛չ գրեաց: Վասն զի բազում իմն ցուցանէր այսու զՊետրոսի պատիւն: Բայց զուրանալն ընդ այլսն (ա) եւ նայ գրեաց եւ որք պայծառագոյն ցուցանէին, զնայ յայնցանէ լռեաց: Ընդ իմ, ասէ, ընդ քո:

Քանզի եւ նայ անդրանիկ էր եւ որպէս սքանչացար ընդ Քրիստոսի զաւրութիւնն, նոյնպէս զարմացիր եւ ընդ աշակերտին հաւատս: Զի իրս մի այնպիսի յանձնէ առ վճարել, որ կարի իսկ զժ[ո]ւարինքն էին: Վասն որոյ եւ հատուցումն հաւատոցն զայն ետ, զի ընդ իւր յարեաց ի հարկս տալ:

Եւ զի ասէ՝ թագաւորք, յումմէ՛ առնուն գիարկս:

ԵՓ Քանզի պատճառս եկին գտանել ի վերայ նորա: Զի ոչ եթէ յամենեցունց պահանջէին, այլ՝ «վարդապետք քո», թերեւս ասեն՝ ո՛չ տացէ եւ ունիմք մեք զնայ իբրեւ զապստամբողի, եւ թէ տացէ, համարեալ լինի նայ իբրեւ զաւտար: Զի թէպէտ իբրեւ զաւտար համարեալ էին զեւտացիքն, սակայն քանզի տէր է ժառանգութիւն նոցա, իբրեւ որդիք են նոքայ եւ ոչ ոք պահանջէր զնոսա, զի թա-

գաւորն հրէիցն զքահանայսն ո՛չ պահանջէին: Արդ յայտ առնէ նայ Շմաւոնի, թէ պատճառս եկեալ խնդրեն զպիրքն եւ փարիսացիքն. փորձեալ զնայ, զի ոչ համարեցան զնա քահանայ: Բայց նայ ոչ ետ նոցա պատճառս, զինչ խնդրէինն, զի ի պահանջել անդ իւրեանց զնայ յայտ արասցեն, թէ աւտար է: Ուսոյց նմա, թէ զեւտացիքն ոչ տան յայնմիկ, զի աղքատ են: Եւ ասէ զի մի՛ դու գայթակղութիւն նոցա, այսինքն՝ զի մի յամաւթ արասցես զնոսա, յորժամ յայտնեսցես, թէ պատճառս կամին յաւղել: Գնա՛յ դու ի ծով եւ ընդեա՛յ անդ ցանց: Քանզի համարեցան նոքա զիս աւտար եւ ուսուցէ զնոսա ծովն: Քանզի ո՛չ եթէ քահանայ միայն եմ ես, այլ եւ թագաւոր եւ Որդի: Արդ եթ զու տուր իբրեւ զմի յաւտարաց եւ քանզի յանջն առ նայ Շմաւոն տալ իբրեւ առ նա զյանցանս երթալ ընդեանու ընդ նմայ, երթա[յ]ին եւ նոքա եւ իբրեւ եհան նայ զձուկն, որ ունէր զսատերն ի բերան իւրում: Զպատկերն արքայութեաւ զսրովեալ ամաչեցին ամբարտաւանքն, որ ոչ համարեցան զնա զեւտացի, զայն որում ծովն եւ ձուկննվակա[յ]եցին, եթէ թագաւոր է նայ եւ քահանայ:

### ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՅԻ

(Գլուխ ԺԷ.)

Իբրեւ եկին նոքա ի Կափառնաում, մարեան որք գերկորամեանն պահանջէին առ Պետրոս եւ ասեն. «Վարդապետն ձեր ո՛չ փայ գերկորամեանն», եւ նա ասէ՛ այո՛ (Մարթ. ԺԷ. 23):

Յորժամ զանդրանիկսն եգիպտացուոց կոտորեաց Աստուած եւ զիսրայէլացուոցն պահեաց, յայնժամ ասաց. «Իմ է ամենայն անդրանիկն իսրայէլացուոցն» (Թիւք Գ. 13), բայց յետոյ զթացեալ ի ծնողսն՝ փոխանակեաց ընդ ցեղին Ղեւեայ, եւ զի պակաս գտան զեւտացիքն քան զանդրանիկսն իսրայէլի, հրամայեաց տալ յամի զեւտացուոցն սիկդ մի արծաթոյ, որ է երկու դրամ, ամենայն անդրանիկացն իսրայէլացուոցն (հմմտ. Ելք ԺԲ, ԺԳ, ԻԲ, Թիւք Գ, Ը, ԺԸ.): Եւ զի Քրիստոս անդրանիկ էր՝ զիտէին, եկին պահանջել եւ ի նմանէ: Ո՛չ յայլում տեղուջ, այլ յորժամ ի Կափառնաում եկն, որ Իւր իսկ քաղաք կարծէր լինել, քանզի ըստ քաղաքի քաղաքի առանձինն պահանջէին, որպէս զաշխարհագիրն: Բայց ո՛չ առ Քրիստոս եկին, քանզի թէպէտ զպատշաճ կարծիս՝ որ զնմանէ, ոչ զիտէին, սակայն ի վար-



դապետական պատուոյն եւ ի հրաշիցն գործոց ակն ածէին, այլ առ Պետրոս մատեան իբր զգլխաւոր առաքելոցն, եւ զի ինքն իսկ անդրանիկ էր, եւ ասեն. «Վարդապետն ձեր ո՛չ հարկիցի գոյրաքմայն»: Ո՛չ սաստիւ, այլ մեղմով հարցանէին, եթէ ո՞չ տայ զերկղբամեանն, եւ նա ասէ՝ այո: Զի՞նչ գործէ զայս Պետրոս, քանզի ո՞րպէս գիտէր, թէ տալոց էր զհարկն, զի ասաց, թէ տայ, եւ Տեառն ոչ յայտնեաց: Ինձ թուի, թէ ակնածէր վասն այսպիսի դոյզն իրաց ասել ց՛նա եւ կամ կազել ընդ պահանջողսն, այլ կամեցաւ յանձնէ վճարել, վասն որոյ Հեզն, որ զամենայն ինչ գիտէ, յառաջէ եւ ասէ:

Եւ իբրեւ եմուր ի փուն, յառաջեաց քան զնա Յիսուս եւ ասէ. «Զիա՛րդ թուի քեզ, Սիմո՛ն, թագաւորք ազգաց յումմէ՛ առնուն զհարկս կամ զհասն՝ յորդո՛ց իւրեանց, թէ յօտարաց» (Մաթթ. ԺԷ. 24):

Թուի թէ եւ զՊետրոս կազդուրել կամի թէ՛ չէ՛ Ինձ արժան հարկս տալ, որպէս դու իրաւ համարեցար, վասն որոյ եւ զատաւոր զնա նստոյց. եւ զայս հաստատէ ոչ միայն հարցմամբն, այլեւ յառաջելովն քան զնորա ասելն եւ կամ զայլոյ ումեք ծանուցանել: Նաեւ համարձակութիւն տայ Պետրոսի ասել, քանզի դանդաղէր եւ ամաչէր յիրացն. «Զիա՛րդ թուի քեզ, թագաւորք ազգաց, – ասէ, – յումմէ՛ առնուցուն զհարկս, կամ քահանայք՝ զհասն», այսինքն՝ զի թէպէտ յստեղծմանն հաւասարք ստեղծան մարդիկ՝ ամենեքեան թագաւորք գործով, բայց յետ յանցմանն ոմանք բռնացեալ տիրեցին բազմաց եւ հարկս տան հարկանել, արդ՝ նոյն բռնաւորքն յումմէ՞ պահանջեն զհարկն՝ յորդո՞ց, թէ յօտարաց:

Եւ իբրեւ ասաց թէ՛ յօտարաց, ասէ ցնա Յիսուս. «Ապա ուրեմն ազապ են որդիքն (Մաթթ. ԺԷ. 25):

Քանզի եկին նոքա հարկս խնդրել, որպէս զի բարուրս գտանիցեն ի վերայ Նորա, որպէս զի թէ ոչ տացէ, ապստամբօղ զՆա յՕրինացն ասիցեն, եւ եթէ տացէ, համարիցին զՆա իբրեւ զօտար մի: Արդ՝ զսոցա կարծիս խափանեաց հարցմամբն, քանզի զանձնէ եցոյց, թէ չէ օտար, այլ ազատ է, եւ զնոցանէ առաւել անիրաւութիւն խորհին, քան զթագաւորս եւ զբռնաւորս ազգաց, զի թէ, որպէս ասացիր, նոքա յօտարաց, իսկ սոքա յազատաց, կարի իմն անիրաւք են, եւ Որդի եմ ո՛չ երկրաւոր թագաւորի, այլ երկնաւոր

րին: Եւ զարձեալ՝ զի զեւտացիք էին՝ որ զհասն պահանջէին, եկին փորձել զՆա. զի թէպէտ վարդապետ գիտէին, սակայն քահանայ ոչ կարծէին: Իսկ Տէրն յայտնապէս ո՛չ եցոյց զինքն քահանայ գոյ, այլ օրինակաւն ծանոյց. քանզի զեւտացիքն ոչ տան հարկս, զի ազատք էին, քանզի թագաւորք եբրայեցւոցն զքահանայսն ոչ հարկեցուցանէին, այլ ազատս պահէին: Ասաց եւ զինքն ազատս գոյ, որով եցոյց, թէ եւ քահանայ է: Եւ իբրեւ հաստատեաց զբանն զատաստանաւ, ապա ասէ.

Բայց զի մի՛ գայթազդեցուցուր զնոսա, երթ ի ծով եւ ընկեա կարթ, եւ զառաջին ձուկն, որ ելանիցէ, առ եւ բաց զբերան նորա, եւ զփանիցես սափեր. եւ զայն առեալ՝ փացես նոցա ընդ Իմ եւ ընդ քո» (Մաթթ. ԺԷ. 26):

Թէպէտ տայ զհարկն, բայց ո՛չ վայրապար հրամայէ տալ, այլ նախ ցուցանէ, թէ չէ պարտ տալ, եւ ապա տայ, զի միովն նոքա չգայթազդեցին, եւ միւսովն սոքա չվնասեցին. զի ո՛չ իբրեւ զպարտական տայ, այլ զի զնոցա անմտութիւնն անիցէ յուղղութիւն: Նաեւ տալովն զանճառ զօրութիւնն ծանոյց, զի ո՛չ ի քսակէ, այլ ի ծովէ իբրեւ զամենայնի Աստուած հրամայեաց տալ, որում եւ երբեմն սաստեաց իսկ (հմմտ. Մաթթ. Լ. 26), եւ Պետրոսի ի վերայ ալեացն ետ զնալ (հմմտ. Մաթթ. ԺԴ. 28-29): Նոյնպէս եւ աստ ի ծովէ տայ, եւ չէ փոքր սքանչելիք յայնպիսի խորոց զձուկն սատերաւն արտաքս անել, քանզի կրկին եւ երեքկին սքանչելիք է, զի ի ծովէ եւ ի ձկանէ եւ յառաջին ձկանէն, քանզի կարթն մին ըմբռնէ, որ ամենեւին զաստուածական զօրութիւնն յայտ առնէ, որ ծովուն եւս հրամայեաց հարկատու լինել եւ հնազանդ: «Մի՛ գայթազդեցուցուք զնոսա». այսինքն՝ բամբասել զմէնջ, թէ օրինազանցք են, քանզի յորում տեղուջ վասն այլոց եւ կամ վասն հոգեւորացն էր բանք, ոչինչ փոյթ առնէր գայթազդութեան նոցին, այլ ասէր. «Թո՛յլ փոք, կոյրք են, կուրաց առաջնորդ» (Մաթթ. ԺԵ. 14), իսկ յորժամ վասն անձինն եւ մարմնական իրաց՝ զգուշանայր յոյժ առ ի խրատ մեզ:

«Առեալ, – ասէ, – փացես նոցա ընդ Իմ եւ ընդ քո»: Քանզի եւ Պետրոս անդրանիկ էր, պատուէ զնա այսու: Բայց դու տես զխոնարհութիւն մտացն Պետրոսի եւ զկատարեալ հաւատս նորա եւ զարմացի՛ր ընդ խոնարհութիւնն. զի Մարկոս աշակերտ նորա ոչ գրեաց զայս, որ բարգաւաճանք էր նմա, իսկ զուրանալն եւ զայլսն գրեաց:



Իսկ ընդ հաւատս՝ զի իր այնպիսի յանձն էառ վճարել, որ կարի իսկ զժուարինք էին, վասն որոյ եւ հատուցումն հաւատոցն նորա զայն ետ, զի ընդ Իւր յարեաց ի տալ հարկին, եւ քանզի յանձնեաց նոցա, զի Պետրոս տացէ, իբրու առ նա զցանցս երթալ ընկենուլ, ընդ նմա երթային եւ նոքա, ոմանք իբր ի սքանչելիս, եւ կէսք առ ի յանգոսնել: Եւ իբրեւ եհան նա զձուկն, որ ունէր զսատերն ի բերանի իւրում, զոր ոմանք ստեղծեալ ասեն եւ այլք՝ զգրիչն արծաթի Սիմէոնի ծերոյ, որ թարգմանիչ էր զկնի Եօթանասնիցն ի Փարան կղզի յաւուրս Պողոմեայ արքայի առասպելին, պահեաց անհալ՝ նկարելով ի նմա պատկեր արքունի, որ նշանակէր զանմահ թագաւորութիւնն Քրիստոսի: Զայն յորժամ տեսին, ամաչեցին ամբարտաւանքն, որ ոչ համարեցան զՆա ղեւտացի, որում ծովն եւ ձուկն եւ արծաթն վկայեցին, թէ թագաւոր է Նա եւ քահանայ:

Եւ զարձեալ՝ «Առեալ՝ քացես նոցա ընդ Իմ եւ ընդ քո» ա՛յս է. զի սատերն կայսերական է, կայսե՛ր հատո, որպէս ասացն, իսկ զքեզ Ի՛նձ վասն տուր, որպէս զԻս վասն քո ետու, քանզի Իմս՝ քեզ միայն է, իսկ քոյդ՝ վասն Իմ սիրոյ եւ ի քո փառս: Իսկ առ ի միտս՝ ծով աշխարհս է, եւ կարթ՝ առաքելական քարոզութիւնն, եւ ձուկն՝ մարդիկ տղամասէրք, եւ արծաթ՝ բանին նշանակ, որ ի գալն ի հաւատս առաջին զայս ետուն, թէ Յիսուս է Որդի Աստուծոյ, եւ առաքեալքն՝ քարոզք Նորին, այս ընծայ եղեւ Աստուծոյ Հօր: Այլեւ տայ հարկս կամաւորապէս, որպէս զի զիս ի հարկից մեղացն ազատեսցէ, զի որպէս նուաստութեամբն բարձրացոյց եւ անարգութեամբն փառաւորեաց եւ մահուամբն կեցոյց, այսպէս եւ հարկս տալովն ի ծանրութենէ հարկացն Օրինացն եւ մեղացն զերծուցեալ ապրեցոյց, զի մի՛ այլ լուիցուք, ըստ Յորայ, զձայն հարկահանի (հմմտ. Յոր Գ. 18):

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՅԻ**

(Տինգերորդ հարոր Գլուխ Զ.)

**ՎԱՄՆ ԵՐԿԴՐԱՄԻՆ**

Հարց. Զի՞նչ է երկրբամեանն:  
Պատասխանի. Յորժամ զանդրանիկս եզիպտացւոցն կոտորեաց եւ ազատեաց զժողովուրդն, յայնժամի յանապատի ասաց. Իմ է

ամենայն անդրանիկն Իսրայէլի: Եւ զթացեալ ի ծնօղսն՝ փոխանակեաց ընդ ցեղին Ղեւեայ: Եւ զի պակասէին ղեւտացիքն քան զանդրանիկսն: Հրամայեաց Աստուած սկիզ մի արծաթոյ տալ ազգին Ղեւեաց: Եւ գիտէին, զի Քրիստոս անդրանիկ էր: Եւ Պետրոս՝ գլխաւոր աշակերտացն եւ անդրանիկ եւս: Վասն այն ի նմանէ խնդրէին, ո՛չ բռնութեամբ, այլ հարցմամբ եւ մեղմով:

Հարց. Որչա՞փ կշիռ է:

Պատասխանի. Երկրբամեան եւ սիկղ, եւ սատեր, եւ ղիդրաքմայ. մի են սոքա: Զի Ի. Ի. դանկ են իւրաքանչիւրքն, որ է Գ. մտղալ եւ Բ. դանկ: Այլ սիկղն կրկին է, մին, որ հասարակն է: Բժ. դանկան, որ է մտղալ Բ.: Իսկ սրբութեան սիկղն Ի. դանկ է, զոր յիւրաքանչիւր ամի սիկղ մի առնուին յանդրանկաց եւ այն քահանայապետին էր: Որպէս այժմ քահանայապետն առնու զսրբադրամն յիւրաքանչիւր տանց: Եւ այլազգիք առնուն զհարկ ջիզրային:

Հարց. Որքա՞ն խնդրէին:

Պատասխանի. Ոմանք իմանան, թէ մի անգամ խնդրէին, որպէս ի Պետրոսէ: Եւ ոմանք, թէ յամենայն ամի Ե. Ե. սիկղ, որպէս ի թիւքն ասէ: Ասեմք, թէ ոչ այսպէս, այլ զառաջինն խնդրէին Ե. սիկղ եւ այլ յամենայն ամի՝ մի՛ մի՛ սիկղ: Որոյ պատճառ է զի յանապատին խնդրեաց Ե. սիկղ մի անգամ, ըստ Ե. զգայութեանց, այլ յետոյ, խնայելով ի նոսա, յամենայն ամի մի՛ մի՛ սիկղ հրամայեցաւ:

Հարց. Վասն է՞ր ի Քրիստոսէ մի՛ անգամ:

Պատասխանի. Զի գիտէին՝ զնա յազգէն Ղեւեա լինել ի մի կողմանէ: Ոչ պահանջէին, այլ, այժմ ի պատճառս ընբռնելոց խնդրէին: Զի թէ ո՛չ տացէ, ասեն, ապստամբ է օրինացն եւ լուծիչ: Եւ թէ տայ, ասեն, օտար է՝ ի ղեւտաց[ւ]ոց: Եւ չէ օրէնս ուսոյց վարդապետ:

**Թագաւորք երկրի, ասէ, ազապ են ի հարկէ, եւ յորդ[ւ]ոց ոչ առնու այլ՝ յօփարէ** (հմմտ. Մարթ. ԺԷ. 24-25)

Ապա ուրեմն՝ ազատ եմ ի հարկէ: Վասն Գ. պատճառի: Նախ՝ զի Որդի եմ թագաւորի: Երկրորդ՝ եւ թագաւոր եմ: Երրորդ՝ երկնաւոր թագաւոր: Զորրորդ՝ տէր հարկաց նոցա:

**Այլ զի մի՛գայթազդեցուցուք [զնոսա]** (տին Մարթ. ԺԷ. 26):



Նախ՝ բանիւ ասաց, թէ ազատ են որդիքն: Երկրորդ՝ ի ծովու ետ եւ ոչ ի քսակէ: Երրորդ՝ նոր ստեղծ զձուկն եւ զսատերն: Չորրորդ՝ որ զառաջինն ասաց հասնել:

Հարց. Վասն է՞ր ի ծովէ եւ ո՛չ յերկրէ:

Պատասխանի. Վասն Դ. պատճառի: Նախ՝ զի երկրէ բազում էր տուեալ նշանս, որպէս զհացն կրկին: Երկրորդ՝ զի ինքեանք երթիցեն ի ծովն եւ հաւատասցեն: Երրորդ՝ զի տէր է երկրի եւ ծովու: Չորրորդ՝ զի այսպէս զմարդիկ ի ծովու կենցաղոյս եւ զհոգիսն ի դժոխոց հանիցէ:

Հարց. Վասն է՞ր զառաջին ձուկն:

Պատասխանի. Վասն Դ. պատճառի: Նախ՝ զի կամօք ցուցցէ եւ ոչ պատահամբ: Երկրորդ՝ զի նոր ստեղծաւ, պարտ էր առաջինն գոլ: Երրորդ՝ վասն անդրանկաց էր տալի: Չորրորդ՝ զի թագաւոր էր եւ քահանայ. նմայ տայր ծով եւ ձուկն զհարկն առաջին: Եւ որպէս կամաւ յաշխարհագիրն եմուտ, այսպէս եւ ի հարկն, եւ որպէս ազատ (ա) էր մահու, այսպէս եւ ի հարկէ:

ՎԱՍՆ ՍԱՏԵՐՆ

Հարց. Ձի՞նչ նշանակէր ձուկն եւ սատերն ի բերան:

Պատասխանի. Չորս ինչ: Նախ՝ զհոգիս մարդկան, որ պատկեր է Աստուծոյ, որպէս սատերն թագաւորին եւ ձուկն՝ մահն եւ դժոխք, որ եկուլ զնա: Եւ Քրիստոս կարթ եղեալ մասապատ մարմնով եհան ի դժոխոց: Երկրորդ՝ նշանակէ զյարութիւն մարմնոց մարդկան ի ձայն հրեշատկին: Երրորդ՝ մեղօք կլանի հոգին եւ խոտովանութեամբն ազատի: Չորրորդ՝ աստուածային բանք ի սուրբ գիրս թաքուցեալ եւ կարթիւ մտաց արտաքս հանի:

ՎԱՍՆ ՆԱԽԱՆՁՈՒ

Չորս յատկութիւն նախանձու ցուցին առաքեալքն: Նախ՝ ի բարիան տրամեցան: Երկրորդ՝ առ մեծութիւն պատուոյն Պետրոսի: Երրորդ՝ յորժամ ի մինն ժողովեցաւ պատիւն: Չորրորդ՝ ի վաղուց մթերեալ, այժմ բորբոքեցան:



26. ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ ԿՈՒՐԻՑ Ի ԵՐԻՔՈՎ

Մաթթեոս Ի. 29-34,

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՎ ԵՓՐԵՄ

Իբրեւ եկին նորայ Յերիքովէ, գնացին զհեպ Նորա ժողովուրդը քաղումք եւ բժշկեաց զամենեսեանս (հմմտ. Մաթթ. Ի. 29):

Տեսանե՞ս ուստի զայր յերուսաղէմ եւ ուր շրջել զայնժամ անդ զՅորդանան գետով, զոր եւ թուի ինձ թէ խնդրելոյ արժանի է, թէ վասն էր եւ զառաջինն իսկ ո՛չ ընդ այնու չոգաւ ի Գալիլեայ, այլ ընդ Սամարիայ: Բայց զայսոսիկ ուսումնասիրացն թողցուք եւ թէ ոք հաւաստեալ քննել կամիցի, գտցէ: Ձի Յովհաննու իսկ բարւոք ակնարկեալ է եւ զպատճառն եւս ցուցեալ, բայց մեք որ ինչ առաջիկայ զայսու լինիցիմք եւ միտ դիցուք կուրացն բարբառոյ, որ կարի լուսաւորագոյնք, քան զաշայսն էին, զի ոչ առաջնորդ ունէին եւ ոչ զնայ տեսանել կարէին, թէ ուր է: Սակայն գու՛ն գործել ջանային երթալ մերձենալ առ նայ եւ մեծաձայն բարբառ արձակէին: Թէպէտ եւ այլքն սաստէին, սակայն նոքայ աղաղակելոյ ո՛չ դադարէին, զի այնպիսի են ժուժկալացն ոգիք, որչափ եւ սոքա խափանեցէ: Եւս քան զեւս յորդորէին եւ Քրիստոս թոյլ տար զնոսա ըմբերանել: Ձի եւս առաւել նոցա յաւժարութիւնն երեւեսցի եւ ուսանիցիս, թէ արժանի էին վայելելոյ յերախտիսն, վասն այնորիկ ոչ հարցանէ, թէ հաւատայք որպէս ցբազումսն զի աղաղակելն եւ դիմելն ի վերայ բաւական էին առնել յայտնի ամենեցուն, զհաւատս նոցա: Ձի աստի իմանայցես սիրելի, թէպէտ եւ կարի արհամարք եւ խոտանք ինչ իցեմք եւ հաւատով մատչիցիմք առ Աստուած, անձամբ իսկ կարող եմք վճարել զինչ եւ խնդրիցեմք: Եւ արդ տես զնոսա զիարդ ոչ յառաքելոցն զոք ունէին, բարեխաւս, այլ եւ բազումք իսկ ըմբերանէին զնոսա: Եւ կարասցին վազել անցանել ըստ խափանիչսն եւ գալ մերձենալ առ Քրիստոս: Թէպէտ համարձակութիւն ինչ վարուց եւ ոչ մի ինչ վկայէ զնոցանէ աւետարանիչն, այլ բաւական եղեւ նոցա ամենայնի միայն յաւժարութիւնն, նոցին նախանձաւոր լիցուք եւ մեք, զի թէպէտ եւ յամիցէ տալ զպարգեւսն Աստուած: Եւ բազումք իցեն, որ ի բաց մերժիցեն, մի դադարեսցուք ի խնդրուա-



ծոց զի այնպէս եւս առաւել յաւժարութիւն նոցա, զի ո՛չ աղքատութիւն եւ ո՛չ կուրութիւնն եւ ո՛չ չլինելն լսելի եւ ո՛չ բազմութիւնն որ սաստէին կարացին արգելուլ զնոսա: Զի այնպէս իսկ են միտքն եւ ոգիքն ջերմ եւ աշխատեալք:

[Ե]կն լոյս աշխարհի, զի կուրաց տացէ տեսանել եւ թերահաւատից հաւատս: Եւ իբրեւ եկն եհաս առ կոյրան, աղաղակել սկսան եւ ասել՝ Յիսուս՝ որդի Դաւթի, ողորմեա՛ց մեզ: Եւ բարուք իմացան, թէ որդի է նայ Դաւթի, այնմ, որ արար զողորմութիւնն ի վերայ կուրաց եւ կաղացն Յրուսացւոց:

Արդ զի՞նչ կոչեաց զնոսա Յիսուս եւ ասէ. «Զի՛նչ կամիր, զի արարից ձեզ», ասեն զնայ. «Տէր զի բացցին այք մեր»: Եւ է՞ր վասն զնոսա հարցանիցէ, զի մի ոք կարծեսցէ, թէ նոքայ այլ իմն խնդրէին եւ նայ այլ ինչ տացէ: Քանզի սովոր իսկ է ամենայն ուրէք, նախ զառաքինութիւն բժշկելոցն յայտ առնել ամենեցուն, եւ ապա զբժշկութիւնն շնորհել, զի զայլս ի նոցա նախանձն ածիցէ եւ միւս եւս զի ցուցցէ, թէ արժանի էին վայելելոյ ի պարգեւսն զայս եւ քանանացի կնոջն արար եւ ձ.ապետին եւ տեռատեսին, մանաւանդ զարմանալի կինն, որ յառաջագոյն քան զհարցանելն Տեառնէ զբժշկութիւնն, բայց սակայն ոչ արար զնովաւ զանց, այլ յետ բժշկութեանն արար յայտնի ամենեցուն, զի այնպիսի իմն փոյթ անձին ունէր յայտնել զուղղութիւն մատուցելոցն, որպէս եւ սաստ իսկ, քանզի սասցին զոր, ինչ կամէինն: Գթացաւ եւ մերձեցաւ յաչս նոցա: Այն իսկ միայն էին պատճառ բժշկութեն, վասն որոյ եւ յաշխարհս իսկ եկեալ էր, այլ թէպէտ ողորմութիւն եւ շնորհք էին, սակայն զարժանիսն խնդրէր, եւ զի արժանի էին, յաղաղակելոյն եւ յամելոյն զպարգեւսն եւ չփապելոյն ի նմանէ յայտէ, որպէս եւ բազումք զի յետ երախտացեացն ապախտաւորք գտանէին, ոչ այնպիսիք եւ նոքայ, այլ եւ յառաջ քան զպարգեւսն ժուժկալք եւ յետ պարգեւացն մտադիւրք, քանզի զհետ իսկ երթային:

### ՅՈՎՆԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՅԻ

(Գլուխ Ի)

Եւ յեւանելն նոցա յերիբովէ՝ գնացին զհեփ Նորա ժողովուրդք քազումք (Մարթ. Ի 29):

Քննել արժան է, թէ ուստի՞ եկն յերիբով, որպէս ասէ Մարկոս թէ՛ «Գան յերիբով» (Մարկ. Ժ. 46), եւ կամ վասն է՞ր եկն: Ի հրէիցն խոյս տուեալ՝ առ զալիեացւոյքն շրջէր եւ ի զնալն անդ ո՛չ ընդ Երիբով անցանէր, այլ ընդ Սամարիա, որպէս զի զսամարուհին աշակերտեսցէ առ ջրհորովն (հմմտ. Յովհ. Դ. 4-30)՝ յօրինակ Եկեղեցւոյ մկրտութեամբ աւազանին: Իսկ յորժամ մերձեցաւ ժամանակ չարչարանացն եւ յերուսաղէմ ելանէր, նախ յերիբով գայ, զի զանկեալն ի ձեռս աւազակաց ողջացուցէ (հմմտ. Ղուկ. Ժ. 30-37), ուստի բազումս կոչէ ի ձեռն Զակքէի իրացն (հմմտ. Ղուկ. ԺԹ. 1-10), եւ զանհաւատսն խոշտանգէ, որք ոչ կամէին զթագաւորելն Նորա (հմմտ. Ղուկ. ԺԹ. 14), եւ ապա ելանէ անտի բազում հաւատացեալ ժողովրդովք:

Բայց զիտեւ արժան է եւ զայն, թէ յուժմէ՛ շինեալ եղեւ Երիբով, յորում մուտ եւ ել արար Տէր մեր: Արդ՝ յաղագս նորա այսպիսի ասի բան, թէ մի յորդուոցն Քամայ Քուակ անուն ծնաւ երիս որդիս՝ զԳայի, զԳաղա եւ զԵրիբոյ, որոց շինեալ զքաղաքս՝ եւ յիւրեանց անուն անուանեցին Գայի եւ Գաղա, իսկ Երիբոյ յետոյ շինէ զԵրիբով ամրագոյն մեքենայիւք, եօթնպարսպեան, եւ անգծելի երկաթոյ վիմօք, դիւրամուտ եւ դժուարելանելի, եւ անուանեաց զնա յիւր անուն Երիբով՝ ամենայն չարութեամբ լցեալ զնա՝ չար արբանեկօք եւ գործակցօք չարեաց: Եւ նշանակաբար՝ Երիբով է օրինակ դժոխոց, զոր քակեաց Յեսու եւ անէծ զվերստին շինողն նորա, եւ արհամարհեալ զայս օրէնս Ազան Բեթելացի Աբիրոնաւ անդրանկաւ եղ զհիմունս նորա, եւ զերծելով կրսերաւ կանգնեաց զզրուսս նորա (հմմտ. Յեսու Զ. 26), որպէս եւ սատանայ երկու ծննդովք իւրովք չարօք՝ Հպարտութեամբ եւ պոռնկութեամբ, շինեաց զդժոխս, զի զհպարտութիւնն հիմն եղ դժոխոցն եւ զպոռնկութիւնն՝ դուռն մտին նորա: Եւ որպէս ի գոչմանէ փողոյ քահանայիցն առ հասարակ կործանեցան պարիսպքն Երիբովի (հմմտ. Յեսու Զ.), այսպէս ի Փրկչին ձայնէ՝ որ ի վերայ խաչին, խախտեցան յատակք դժոխոց եւ փշրեցան զրուսք նորա՝ խոնարհութեամբն եւ կուսութեամբն: Որ եւ իջանելովն անդ բանական հոգւովն՝ զբանդեալ հոգիսն առ ինքն ձգեաց եւ եռօրեայ ելեալ անտի բազում ժողովրդովք՝ վերածեաց զնոսա ի կեանս՝ զոմանս մարմնով յարուցեալ զկնի Իւր՝ ըստ այնմ. «Բազումք մարմինք ննջեցելոց սրբոց յարեան» (Մարթ. ԻԷ. 52), եւ զկէսս ազատելով ի ծառայութենէ բանսարկուին: Այս է ասելն



թէ՛ «յելանելն նոցա յերիքով՛ գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք»:

**Եւ ահա կոյրք երկու նստելին առ ճանապարհան** (Մաթթ. Ի 30):

Մարկոս մի միայն ասէ թէ՛ «Որդի Տիմէի Բարսիմէոս կոյր նստէր յանցս ճանապարհի» (Մարկ. Ժ. 46): Արդ՝ որպէս ոմանք ասեն՝ երկու էին, եւ մին առաւելագոյն ունէր զկուրութիւն քան զընկերն, որ եւ աղաղակէր իսկ, զոր Մարկոս յիշէ (հմմտ. Մարկ. Ժ. 47): Իսկ Մատթէոս զերկոսեան ասէ, իսկ ոմանք այլ ասեն զայս եւ այլ զայն, եւ զոմն ի մուտն ասեն յերիքով բժշկել եւ զոմն ի յելն՝ ի նշանակ հրեշտակաց եւ մարդկան, եւ Երիքով՝ աշխարհի, եւ Երուսաղէմ՝ երկնի, զորս բժշկեաց Քրիստոս. զմարդիկ, որ երկու են՝ Հոգի եւ մարմին, յորժամ յաշխարհ էջ, լուսաւորեաց, իսկ զհրեշտական, յորժամ Համբարձաւ, գիտութեամբ խորհրդոյն զնոսա պայծառացոյց: Բայց մեք գտաք յասորի բարբառ, զի «Տիմէ»-ն կոյր լսի, իսկ «Բարտիմէ»-ն՝ որդի կուրի, զի «բար»-ն որդի ասէ, որ է այսպէս թէ՛ «նստէր յանցս ճանապարհին կոյր կուրի որդի», զոր Մատթէոս կրկին ասէ զկոյրն, քանզի կոյր էր՝ ի ծնէ կուրէ ծնեալ: Իսկ առ ճանապարհի նստելն՝ թերեւս վասն ողորմութեան, որպէս սովորութիւն է այսպիսեացս ի դրունս քաղաքաց նստել, որ օրինակէ զԱդամ Հանդերձ ծննդովք իւրովք, զի ի մարդոյ մարդ ծնաք եւ յախտաւորէն ախտաւոր եղաք՝ ըստ առաքելոյ թէ՛ «Որպէս հողեղենն, նոյնպէս հողեղենք» (Ա. Կոր. ԺԵ. 47), որ նստէր ի վերայ դրանց մահու: Քանզի այս է ճանապարհն, յոր ամենեքեան ընթանամք, առ որով եկեալ Տէրն՝ լուսաւորեաց զհոգին ի մեղաց եւ զմարմինն ի մահուանէ կեցոյց զԱդամայ եւ զծննդոց նորա. այս՝ ըստ Մարկոսի: Իսկ կոյրք երկու՝ ըստ Մատթէոսի, զհրէայս եւ զհեթանոսս ասէ, որք ի բնականն եւ ի գրաւորականն անտեսք էին, այլեւ հոգևով եւ մարմնով ախտացեալ եւ յիմարեալ՝ ի խաւար իբր ի լոյս շրջէին՝ ըստ այնմ թէ՛ «Զխաւարն լոյս կարծէին» (հմմտ. Ես. Ե. 20), զոր իմաստունն ասէ թէ՛ «Ի խաւար շրջի անզգամն» (հմմտ. Ժող. Բ. 14): Վասն որոյ ասէ, թէ՛ «նստէին առ ճանապարհաւն», այսինքն՝ ի կենցաղոյս ընթացս՝ յօրացեալք Հեշտութեամբ:

**Իբրեւ լուան, թէ Յիսուս անցանէ, աղաղակէին եւ ասեն.** «Ողորմեաց մեզ, Յիսուս, Որդի՛ Դաւթի» (Մաթթ. Ի 30):

Յայտ է թէ՛ յամբոխէն, որպէս ասէ Ղուկաս. «Լուան զանցանել ժողովրդեանն եւ հարցին, թէ զի՞նչ է այն, եւ պատմեցին նոցա, թէ Յիսուս նազորացի անցանէ. աղաղակեցին եւ ասեն. «Ողորմեաց մեզ, Յիսուս, Որդի՛ Դաւթի» (հմմտ. Ղուկ. ԺԸ. 36-38): Մի՛տ դիր կուրիցն բարբառոյ, որ կարի լուսաւորագոյն քան զազեայսն էին, զի ոչ առաջնորդ ունէին եւ ոչ տեսանել զՆա կարէին, սակայն գուն գործեալ՝ ջանային մերձենալ առ Նա, ուստի եւ մեծաձայն աղաղակէին թէ՛ «Ողորմեաց մեզ»: Բարուք իմացան, թէ Նա է Որդի Դաւթի, այն, որ արար զողորմութիւն ի վերայ կուրաց յերուսացոց (հմմտ. Բ. Թագ. Ե. 6-9)<sup>1</sup>. զայն յիշելով ի գութ ածէին զՓրկիչն՝ զնոյն ողորմութիւն առնել եւ նոցա ըստ նմանութեան Հօրն:

Իսկ մտաւոր տեսութեամբ՝ լուան, թէ Յիսուս անցանէ, կամ հոգիքն ի դժոխս, կամ հրէայք եւ հեթանոսք: Ուստի՞ լուան. յայտ է՝ ի մարգարէիցն նքա զայն ձայն թէ՛ «Նոր բորբոքեալ է ի բարկութենէ, այրիցէ եւ իջցէ մինչ ի դժոխս ներքինս» (հմմտ. Բ. Օր. ԼԲ. 22), եւ թէ՛ «Փրկեցեր զանձն իմ ի դժոխս ներքնոց» (Մաղմ. ԶԵ. 13). Իսկ հրէայք թէ՛ «Բղխեսցէ գաւազան յեսեսայ» (հմմտ. Ես. ԺԱ. 1), եւ՝ «Դո՛ւ, Բերթեհե՛մ, երկիր Յուդայ, ոչինչ կրսեր ես յիշխանս Յուդայ» (Մաթթ. Բ. 6, հմմտ. Միք. Ե. 2), եւ՝ «Յաթոն Դաւթի նսրցի, եւ զարքայութիւն նորա յաջողեցէ» (Ես. Թ. 7). եւ հրեշտակն թէ՛ «Նա փրկեցէ զժողովուրդ Իւր ի մեղաց իւրեանց» (Մաթթ. Ա. 21). եւ հեթանոսք թէ՛ «Ի նա յուսացին հեթանոսք» (Ես. ԺԱ. 10), եւ «Նա է ակնկալութիւն հեթանոսաց» (Ծննդ. ԽԹ. 10), եւ՝ «Տաց քեզ զհեթանոսս ի ժառանգութիւն...» (Մաղմ. Բ. 8), եւ՝ «Երու գրեզ յուխար ազգի եւ ի լոյս հեթանոսաց» (Ես. ԽԹ. 6):

Զայսոսիկ լուան ի մարգարէիցն, թէ անցանէ Յիսուս, որ թարգմանի «փրկիչ», մարդկաբար ընդ կենցաղս՝ ըստ այնմ թէ՛ «Յերկրի երեսցի եւ ընդ մարդկան շրջեսցի» (հմմտ. Բարուք Գ. 38): Աղաղակեցին առ Հասարակ հրէայք եւ հեթանոսք արդարոցն բերանով թէ՛ «Ողորմեաց մեզ, Յիսուս, Որդի՛ Դաւթի»: Ո՛չ վարձս խնդրեցին փոխադարձ բարեգործութեան, քանզի ոչ ունին, այլ ողորմութիւն ճրի եւ տուրք շնորհաց՝ ըստ այնմ. «Ողորմեա՛ ինձ, Աստուած, ըստ մեծի ողոր-

<sup>1</sup> Բերված օրինակը, երևում է, հմմտ. Բ. Թագ. Ե. 8 համարի գրաբարյան բնագրի սխալ ընթերցման կամ աստվածաշնչային ոչ ճշգրիտ բնագրից օգտվելու արդյունք է. Դավիթը ոչ թե գթաց հեբուսացի կույրերին ու կաղերին, այլ հակառակը սպանեց: Ծնք. Յովհաննէս Ծործորեցու հատորը կազմողի:

Նույն համարի վերջին միտքն այլ բան է ասում. «Կոյրք եւ կաղք մի մտցեն ի տուն Տեառն» - Ն. Թ.:



մութեան Քում» (Մաղմ. Ծ 3), *եւ թէ՛ «Ողորմեա՛ ինձ, Աստուած, զի կոխեաց զիս մարդ»* (Մաղմ. ԾԵ. 2), *քանզի Որդի Դաւթի Քո լինելդ ըստ երգմանն ոչ այլ ինչ է, քան թէ ողորմութիւն մեզ ընձեռել:*

Եւ ամբոխն սաստեաց նոցա, զի լռեսցեն, եւ նոքա ե՛ւս առաւել աղաղակէին եւ ասէին. «Տէ՛ր, ողորմեա՛ց մեզ, Որդի՛ Դաւթի» (Մաղթ. Ի. 31):

Կամ վասն նախանձու սաստէին, զի մի՛ բժշկեսցէ զնոսա՝ զոր բարեհամբաւէին, կամ պատիւ դնելոյ սակս դադարեցուցանէին, որպէս երբեմն զմանկտին (հմմտ. Մաղթ. ԺԹ. 13-15), բայց նոքա յեւս առաւել աղաղակելոյ ոչ կացին ի բաց, քանզի այնպիսիք են ժուժկալացն ոգիք. որչափ եւս խափանեսցէ ոք, եւս քան զեւս յորդորին: Եւ Քրիստոս թոյլ տայր զնոսա ըմբերանել, զի առաւել նոցա յօժարութիւնն երեւեսցի, եւ ուսանիցիս, թէ արժանի էին վայելելոյ յերախտիսն, վասն որոյ եւ ո՛չ հաւատս պահանջեաց ի նոցանէ, որպէս ի բազմաց, զի աղաղակելն եւ դիմելն ի վերայ՝ բաւական էր ցուցանել զհաւատս նոցա եւ զյօժարութիւնն: Ձի ոչ աղքատութիւնն եւ ոչ կուրուութիւնն եւ ոչ չլինելն լսել եւ ոչ բազմութիւնն որ սաստէր կամ վարուցն անհամարձակութիւն կարաց արգելուլ զնոսա, որպէս զի լցցի բանն թէ՛ «Եկն Լոյս յաշխարհ, զի կուրաց տեսանել փայլել» (հմմտ. Յովհ. Գ. 19, Ես. ԽԲ. 7): Ուստի ուսանիմք, զի թէպէտ կարի արհամարհք եւ խոտանք ինչ իցեմք, եթէ հաւատով մատչիցիմք առ Աստուած, անձամբ իսկ կարող եմք վճարել զինչ եւ խնդրիցեմք, եւ թէ յամիցէ Աստուած զպարգեւն, եւ կամ թէ ոք ի բաց մերժիցէ, մի՛ դադարեսցուք ի խնդրուածոց, զի այնպէս ե՛ւս առաւել հաւանեցուցանեմք զԱստուած, որպէս սոքա, զի «աղաղակէին եւ ասէին. «Տէ՛ր, ողորմեա՛ց մեզ»:

Ոչ միայն զաղաղակն ձայնիւ բարձրացուցին, այլեւ բանիւ պանծացուցին. «Տէ՛ր, — ասէին, — ողորմեա՛ց մեզ», զի զոր նախ որդի Դաւթի ասացաք, նոյն ինքն ես Տէր նորին, որ յաւէտ Արարչիդ վայել է ողորմութիւնն: Քանզի «Տէր» զմշտնջենաւոր աստուածութիւնն խոստովանէին, իսկ «Որդի Դաւթի»՝ զմարդեղութիւնն, վասն զի Յիսուս ոչ սոսկ մարդ է եւ ոչ յատուկ Աստուած, այլ Աստուած միացեալ ի մարմնի անճառապէս, եւ զի որպէս էրն, այնպէս դաւանեցին, վասն այսորիկ առին՝ զոր հայցեցին: Իսկ ըստ երկրորդ կարգին՝ ամբոխ իմա ինձ զբազմութիւն դիւացն, որք փոր-

ձութիւնս յարուցանէին ի վերայ սրբոցն, կամ զխուժանն հրէից, զի թերեւս ի նեղութենէն լռեալ դադարեսցեն ի պաղատանացն կամ հաւատալոյ ի Քրիստոս: Իսկ նոքա եւս առաւել աղաղակէին թէ՛ «Տէ՛ր, ի նեղութեան յիշեցաք» (Ես. ԻԶ. 16), *եւ թէ՛ «Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի»* (Մաղմ. ԺԷ. 7), *եւ՝ «Աղաղակեցին առ Տէր ի նեղութեան իրենաց, եւ ի վշպաց նոցա փրկեաց զնոսա»* (Մաղմ. ԸԶ. 6) *եւ «առաքեաց զբան Իր եւ բժշկեաց զնոսա»* (Մաղմ. ԸԶ. 20), *որ եկն եւ եղեւ Որդի Դաւթի ըստ խնդրոյ նոցա:*

Զպեղի առ Յիսուս, կոչեաց զնոսա եւ ասէ. «Ձի՞նչ կամիք, զի արարից ձեզ»: Ասեն ցՆա. «Տէ՛ր, զի բացցի՛ն աչք մեր» (Մաղթ. Ի 32-33):

Յորժամ ետես զթախանձանս նոցա, յօժարութեամբ սրտիւ զտեղի էառ եւ կոչեալ հարցանէ թէ՛ «Ձի՞նչ կամիք»՝ առ ի խրատ մեզ, զի մի՛ ի խնդրողացն խոյս տայցեմք, այլ զիղձս նոցա կատարիցեմք: Բայց է՞ր վասն հարցանէր. զի մի՛ ոք կարծիցէ, թէ նոքա այլ իմն խնդրէին, եւ Նա այլ ինչ տայցէ, քանզի եւ սովոր իսկ է ամենայն ուրեք նախ զառաքինութիւն բժշկելոցն յայտ առնել եւ ապա զբժշկութիւն շնորհել, զի զայլս ի նախանձ անիցէ, որպէս քանանացի կնոջն արար եւ հարիւրապետին (հմմտ. Մաղթ. ԺԵ. 22-28, Ը. 5-13), *եւ միւս եւս՝ զի ցուցցէ, թէ արժանի է պարգեւացն, զի «որ խնդրէ ոք՝ առնու», որպէս ասացն* (Մաղթ. Է. 8). *միանգամայն եւ ոչ զանձն յառաջեցուցանէ ի հրաշս, զի մի՛ վասն պարծանաց վարկանիցին կատարել զսքանչելիսն: Ասեն ցՆա. «Տէ՛ր, զի բացցի՛ն աչք մեր».* զի թէպէտ բազում իրաց կարօտ էին, բայց ընդ աղօտ յայլսն վայելէին, իսկ լուսոյ՝ եւ ո՛չ ընաւ. վասն այսորիկ զառաջին պարգեւն խնդրեցին՝ զգեղեցկութիւն էիցս, զլոյսն ասեմ պանծալի, որպէս կենդանի հրճուի ընդ գալուստ նորա՝ ոչ թէ լոյս ընձեռել, քանզի գոյր այն, այլ գործիք, որով ի լոյսն վայելեսցեն: Բայց ուստի՞ զիտէին զՆա լուսաւորիչ աչաց. կամ թէ ի համբաւոյ լռեալ էին, թէ զբազում կոյրս լուսաւորէ, որպէս զայն, որ ի Սելովամ առաքեաց (հմմտ. Յովհ. Թ.), կամ թէ ի հաւատոցն դաւանութենէ ազդումն իմն շնորհաց եղեւ ի նոսա, թէ Սա, որ եկն զհոգիս մարդկան պայծառացուցանել, կարող է եւ մարմնոյ աչաց լուսաւորութիւն շնորհել:



Իսկ առ ի միտս՝ գտեղի առնուլն Յիսուսի՝ կամ անդորրութիւն շնորհելն է փորձանաց արդարոցն, որով զփափագն անեցուցանէր, կամ ի լրումն ժամանակի գալն եւ առնուլն մարմին, քանզի տեղի ոչ այլ ինչ է, քան թէ մարմնոյ պատահումն, եւ առանց մարմնոյ ոչինչ է տեղի: Ապա ուրեմն տեղի առնուլ զմարմին զգեցնուլն նշանակէ, որով կոչեաց զամենեսեան ի փրկութիւն ըստ Յիսուսին ձայնի, կամ թէ յորժամ էջ յերկնից, զամս երեսուն լուեաց եւ ապա կոչեաց զհրէայս եւ զհեթանոսս, զորս եւ հարցանէ թէ՝ «Ձի՞նչ կամիք», եւ նոքա ասեն. «Ձի բացցին աչք մեր»: Այսմ ըղձից եւ Դաւիթ ըղձայ թէ՝ «Ձարթո՞ զաչս իմ, եւ նայեցայց ի սքանչելիս օրինաց Քոց» (Սաղմ. ճԺԸ. 18), քանզի մարմնական տրօք փարթամացեալ էր բնութիւնս եւ միայն աստուածգիտութեանն ցանկայր, որպէս զի բացցին առագաստ մտացն եւ քակեսցին ի սնտի կենացս, եւ դարձցին ի ճշմարիտ լուսոյն հայեցողութիւն:

Եւ գրացեալ Յիսուս՝ մերձեցաւ յաչս նոցա, եւ վաղվաղակի րեսին եւ գնացին զհետ Նորա ( Մարթ. Ի 34):

Գթութիւնն եղեւ պատճառ բժշկութեանն, վասն որոյ եւ յաշխարհ իսկ եկեալ էր, այլ թէպէտ զթած է՝ գրեալ է (հմմտ. Ա. Մն. I. 9, Սաղմ. ՆԷ. 38, ՁԵ. 15, ՃԺԱ. 4, Ղուկ. Զ. 36 և այլն), սակայն եւ արդար է՝ զարժանիսն խնդրէ, եւ զի արժանի էր՝ յայտ է յասացելոցն: Իսկ զի՞նչ այն թէ՝ «վաղվաղակի տեսին»: Յուցանէ, թէ ինքն է արարիչ բնութեանս, որ առանց աշխատանաց բանիւ զերկինս երկու լուսաւորօքն պայծառացոյց եւ զմարդն տեսող նոցին գործեաց, Նա դարձեալ զխանգարեալ աչս նոցին բանիւ միայն եւ հպամաբ յաչս՝ լուսաւորեաց, որք տեսին ոչ միայն զէքս, այլեւ զՆա «եւ գնացին զհետ Նորա»: Ձի ոչ եղեն որպէս զբազումս ապերախտ, մանաւանդ որպէս զհրէայսն, այլ սոքա որպէս յառաջ քան զպարգեւսն ժուժկալեալք էին, նոյնպէս եւ յետ պարգեւացն մտադիրք եղեն, վասն որոյ զկնի չոգան, զի բարեբանեսցեն. այլեւ զհետ Նորա ընթանալն զաշակերտելն ցուցանէ:

Այլ հոգեւոր տեսութեամբ այսպիսի է. քանզի ոչ այլ ինչ էր պատճառ մարդեղութեան Յիսուսի, եթէ ոչ՝ գութն արարչական, որ ստիպեաց մերձենալ եւ խառնիլ ի բնութիւնս մարդկան եւ բնակիլ ի մեզ՝ ըստ առաքելոյ թէ՝ «Բնակեալ Քրիստոսի ի ներքին մարդս ձեր՝ բանալ եւ յուսաորել զաչս սրբից անձեռագործ թլփապութեամբ» (հմմտ. Եփես.

Գ. 16-17, Ա. 18, Կող. Բ. 11), որք արագ հաւատացին ի Նա եւ ի Հայր Նորա՝ բեւեռմամբ սիրոյ, ընթանալով զհետ հոտոյ իւղոց Նորա (հմմտ. Երգ Ա. 2-3) ի մահ եւ ի չարչարանս եւ յերկինս՝ հրէայք եւ հեթանոսք, որք ի վաղնջուց հետէ հետեալ կային ի Նմանէ, որպէս զի աստ իմացիս զչաճ մարմնառութեան Բանին, որով արարածս զԱրարիչն ծանեալ:

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՅԻ**  
(Տինգերորդ հայրոր. գլուխ ԺԵ.)

**ՎԱՄՆ ԵՐԻՔՈՎԻ**

[Հարց.]Վասն է՞ր զառաջինն ի Սամարիայ գնաց ի Գալիլեա եւ զվերջինն յերիքով գայ:

Պատասխանի. Ջառաջինն ի Սամարիայ գնաց, որ հեթանոսք էին եւ աւուրս երկուս կալալ անդ, բազումք հաւատացին, ի յանդիմանութիւն հրէիցն, որ բազում ժամանակս ոչ հաւատային: Իսկ յերիքով գայ եւ ելանէ յերուսաղէմ, զի Երիքով նմանի մահու եւ դժոխոցն վեցիւք: Նախ՝ տեղեալն խոնարհ է քան զերուսաղէմ եւ մահ եւ դժոխք խոնարհի ստորեւ երկրի: Երկրորդ՝ զի յետոյ շինեցաւ, զի Քովակ անուն յորդոցն Քամայ ունէր Գ. որդի՝ Գայի, եւ Գաղ, եւ Երիքով: Եւ՛ Գայի, եւ՛ Գաղ յանուն իւրեանց շինեցին քաղաք՝ զԳայի եւ զԳաղգաղ: Եւ յետոյ Երիքով յիւր անունն շինեաց զԵրիքով: Որպէս յետոյ շինեաց սատանայ զմահ եւ զդժոխք. նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ: Երրորդ՝ անուան, զի Երիքով լուսին թարքմանի, որ է փոփոխական եւ գիշերոյ լոյս, այսպէս մահն եւ մեղքն փոփոխական է ըստ կամաց մարդկան եւ լոյս թուի ի խաւարելոց: Չորրորդ՝ շինուածոյն է. պարիսպ եւ անգծելի երկաթոյ դիւրամուտ եւ դժուարել: Եւ է. մահացու մեղքն պարիսպն դժոխոցն, որ հեշտութեամբ մտանեն եւ դժուարաւ ելանեն յապաշխարութիւն, զի անգծելի է սեւացելոցն մեղօք: Հինգերորդ՝ Յեսու քակեաց եւ անէծ զշինողսն: Եւ Քրիստոս աւերեաց զդժոխս եւ անէծ, որ շինէ մեղօք: Վեցերորդ՝ Ազան Բեթելացի հրամանաւ Աքայաբու շինեաց եւ պատժեցաւ Արեներաւ անդրանկաւ, արկ հիմունս եւ զերծելաւ կրտսերաւ կանգնեաց զդրունս, այսպէս որ շինէ մեղօք անդրանիկ հոգևով եւ մարմնով պատժեսցի ի հուրն: Եւ



այսպէս այն որ իջանէ յԵրուսաղէմէ յԵրիքով, նշանակէ զԱդամ, որ ել ի դրախտէն եւ էջ ի դժոխս՝ վիրաւորեալ մեղօք: Եւ Քրիստոս մկրտութեամբ բժշկեաց: Նախ՝ էջ ի դժոխս եւ ապա եհան յերկինս: Յայս միտս զայ յԵրիքով եւ ելանէ յԵրուսաղէմ բազում ժողով-րդովք, որ արձակեաց զհոգիսն ի դժոխոցն:

#### ՎԱՍՆ ԿՈՒՐԱՅՆ

Հարց. Վասն է՞ր Մատթէոս Բ. (սին Մաթթ. Ի 30), ասէ եւ Մարկոս մինն կոյր (սին Մարկ. Ժ. 46):

Պատասխանի. Երկու էին, այլ մինն սակաւ մի լոյս ունէր, որ նշանակէր զհրեայս եւ հեթանոսն, ամենեւիմբ կուրացեալ:

Հարց. Վասն է՞ր սաստէին:

Պատասխանի. Կամ վասն պատուոյ վարդապետին, որպէս զմանուկան արգելին, կամ չար բարուք, զի մի բժշկեսցին, եւ ցուցցի սքանչելիք:

Հարց. Վասն է՞ր առաւել աղաղակէին:

Պատասխանի. Զի գյօծարութիւն սրտին առաւել ցուցանէին, որով առին զոր խնդրէին: Նախ՝ ցուցանէ ի մեզ թէ ո՛չ է պարտ թողուլ պարապիլ ի խնդրուածոց, որպէս նոքա որ ժուժկալք են եւ առաքինիք, թէպէտ բազումք են, որ խափանեն եւս առաւել նոքա խնդրեսցեն: Երկրորդ՝ ցուցանէ, թէ որպէս կոյր լինիմք մեղօք եւ աղքատք բարուց, յորժամ հաւատովք խնդրեմք առնումք յԱստուծոյ:

Հարց. Զի՞նչ էր նոցա արգել:

Պատասխանի. Վեց ինչ: Նախ. կուրութիւն, երկրորդ՝ աղքատութիւն, երրորդ՝ անմիջնորդութիւն, Չորրորդ՝ անուղղութիւն, Հինգերորդ՝ սաստելն, Վեցերորդ՝ անլսելի լինելն: Նոյնպէս մեզ վեց ինչ է արգել աղօթից: Նախ թէ ոչ լսին խնդրուածքն, երկրորդ՝ չարք ի մարդկանէ, երրորդ՝ դեւք խաբողք, չորրորդ՝ հեշտութիւն մարմնոյ, հինգերորդ՝ տգիտութիւն մտաց: Վեցերորդ՝ աղքատութիւն եւ սէր ընչից: Այլ որք ջերմ են ի սէրն եւ աշխատասէր միտք ունի, անխափան հանապաղ աղօթեն:

Հարց. Որպէ՞ս լուսաւորեաց Քրիստոս:

Պատասխանի. Չորս է խաւար, այսինքն՝ անգիտութեան, ու անհաւատութեան, եւ մեղաց, եւ աչաց: Զչորեսին լուսաւորեաց

Քրիստոս: Զի քարոզութեամբն ի գիտութիւն էած եւ աստուած-պաշտութեամբն ի հաւատ զմեղս ջնջեաց եւ զաչս լուսաւորեաց ըստ օրինակի զգալի լուսոյս: Նախ՝ լուսաւորէ զօղս եւ ապա զաչս եւ ապա տեսանեմք զերեւելիսս եւ ապա տեսանեմք զնոյն ինքն զարեգակ:

«Տէր՝ որդի Դաւթի»: Նախ՝ է Աստուած մարդացեալ խոստովանին զՔրիստոս: Երկրորդ՝ զԴաւիթ յուշ ածեն, որ արար ողորմութիւն կուրացն եւ կաղացն եբուսացուց (սինս. Բ. Թագ. Ե. 8): Զտեղի առ Յիսուս, այսինքն՝ կանգնեցաւ, որ նշանակէ զլուսն Լ. ամաց եւ ապա քարոզեաց:

Հարց. Վասն է՞ր հարցանէր զկոյրսն:

Պատասխանի. Վասն Դ.(չոր)ից: Նախ՝ զի մի ասիցեն, թէ զայլ ինչ խնդրեսցին եւ զայլ ինչ ետ: Երկրորդ՝ զի զհաւատս նոցա յայտնեսցէ: Երրորդ՝ զի եւ այլք նոցա ցանկասցեն: Չորրորդ՝ ցուցանէ զի արժան էին պարգեւացն:

«Գթացաւ ի նոսա եւ բժշկեաց» (սին Մաթթ. Ի. 34):

Յուցանէ՝ թագաւորութեամբ բժշկեաց եւ վասն այն եկն յաշխարհ, որ զողորմութիւն եւ զչնորհս բաշխէր: Այլ թէպէտ ողորմութիւն է, այլ սակայն արժանաւորացն տայ, որպէս սոքա որ աղաղակեսցին եւ բժշկեցան եւ գնացին զհետ Քրիստոսի յԵրուսաղէմ, որ նշանակէր զհաւատացեալս, որ ընթացան զհետ Քրիստոսի ի վերինն Երուսաղէմ, ըստ այնմ, ուր եսն եմ, անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի: Այսքան առ այս:





## 27. ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ ԲԱՐՏԻՄԷՈՍ ԿՈՒՐԻՆ

Մարկոս Ժ. 46-52

### ԲԱՐՏԵՂ ՄԱՇԿԵՒՈՐՑԻ

(Գլուխ Ժ.)

Եւ գան յԵրիքով, եւ ընդ ելանելն նորա յԵրիքովէ աշակերտօքն եւ բազում ժողովրդովք, որդի Տիմեի Բարսիմէոս կոյր նսպէր մուրացիկ յանցս ճանապարհի (Մարկ. Ժ. 46):

Ջանազան եւ ազգի ազգի վիրօք վիրաւորեաց սատանայ զմարդկայինս ազգ յառաջ քան զգալուստն Քրիստոսի մարդեղութեամբն յաշխարհս:

Քանզի ոչ բաւականացաւ այնու, զի արտաքսեաց զնա ի կենացն վայրէ, եւ զանմահն ընդ մահուամբ էարկ, եւ զանապականն՝ ընդ ապականութեամբ, եւ զՏէրն՝ ընդ ծառայութեամբ:

Այլ յորժամ մերժեաց զնա ի դրախտէն եւ տարագրեաց զնա յանիծից եւ ի տրտմութեան հովիտս, այսինքն՝ յաշխարս յայս, բնակել պանդխտութեամբ. յայնժամ հետամուտ եղեալ նմա եւ ըստ չար ախորժակացն իւրոց յանխնայ խոցոտեաց զնա եւ կարեւելք վիրաւորեաց զնա յոտից մինչեւ ցգլուխ, այնքան, մինչ զի ոչ մնաց ի նմա նշխար եւ մասն ինչ կենդանութեան: Եւ այս ոչ միում ումեք դիպեցաւ եւ կամ երկուց, այլ ամենեցուն առ հասարակ՝ արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց, կուսից եւ երիտասարդաց. ըստ այնմ, թէ ամենայն գլուխ ի ցաւս, եւ ամենայն սիրտ ի տրտմութիւն, յոտից մինչեւ ցգլուխ չմնաց առողջութիւն (Եսայի Ա. 5): Քանզի յորժամ ետես սատանայ, եթէ դարձոյց զերեսս իւր ի նմանէ Աստուած եւ ի բաց էառ զխնամս իւր՝ յորում վայելէր մինչ ի դրախտին էր, յայնժամ համարձակ հանդերձ դիւօքն իւրովք յարձակեցաւ ի վերայ նորա եւ նախ զառաջնորդական զմիտսն խաւարեցուցին տգիտութեամբ, որ էր ճրագ մարմնոյն եւ լոյս հոգւոյն:

Որպէս գողք եւ աւազակք յորժամ գյորոմս հատանեն, նախ զճրագն որ ի տանն է, շիջուցանեն, եւ ապա զոր ինչ եւ կամին, համարձակ գործեն: Այսպէս եւ սատանայ նախ զլուսաւորութիւն

մտացն խաւարեցոյց եւ ապա զոր ինչ եւ կամէր, գործեաց. եւ այսպէս աճեցոյց եւ բազմացոյց զչարն ի բնութիւնս մեր:

Քանզի ոչ եթող կալ մնալ ի յառաջին յանցանսն, յոր էարկ զմարդն ի յանհնազանդութիւն հրամանացն Աստուծոյ, այլ եւ ի վերայ միմեանց յարոյց, եւ ընդ իրեարս մարտնչել կազմեաց, նախանձու եւ սպանութեամբք, մախանօք եւ ատելութեամբք, շուտութեամբ եւ գողութեամբ, եւ այլ ազգի ազգի չարեօք, որովք եւ առ իրեարս անիրաւք գտան մարդիկ, զորս ընդարձակս պատմեն ամենայն աստուածաշունչ տառք:

Ըստ որում ասէ Պողոս, թէ էաք երբեմն եւ մեք անմիտք անհաւանք, ծառայեալք ամենայն ցանկութեանց եւ պէսպէս անառակութեանց, չարութեամբ եւ նախանձու շրջէաք, ատեցեալք եւ զմիմեանս ատէաք (Տիմ. Գ, 3) եւ ըստ Սողոմոնի՝ ամենայնի ինչ խառնիրուռն, արիւն եւ սպանութիւն, անհաւատութիւն եւ երդմնաստութիւն, ոգւոց պղծութիւն եւ ամուսնութեանց անառակութիւն, շնութիւն եւ գիշութիւն (Կրն Իմաստ. ԺԴ, 25):

Եւ կարի իմն չար այն էր, ասէ, զի մինչ ի մէջ այսչափ պատերազմի անգիտութեան կային, զայնպիսի չարիս խաղաղութիւն անուանէին (Իմաստ. ԺԴ, 22):

Յետ որոյ ապա եւ Հնարագիտութիւն կռոցն, քանզի յորժամ զչարիսն, որ առ միմեանս, լցեալ կատարեցին, ապա եւ առ աստուածութիւնն դարձեալ զինքեանս ի մարտ կացուցին, որ էր յոյժ իմն չար, քան զառաջին: Զի յայնժամ միայն զհրամանն Աստուծոյ ետ արհամարհել, իսկ այժմ եւ բոլորովին զԱստուած ուրանալ ուսոյց, քանզի յաղագս այսորիկ ուսոյց զհնարագիտութիւնն կռոց, իբր թէ չիք Աստուած, որպէս եւ իսրայէլացիքն ասէին ցԱհարօն, արա մեզ Աստուածս, որ երթայցեն առաջի մեր, զի Մովսէսն այն, որ եհան զմեզ յերկրէն եգիպտացոց, ոչ գիտեմք, զի՞ եղեւ նմա (Կրն Ելք, ԼԲ, 23):

Եւ զի վերջին ամենայն չարեացն էր կռապաշտութիւնն. դարձեալ ասէ իմաստութիւն, եթէ պոռնկութիւնն եղեւ սկիզբն հնարագիտութեան կռոցն (Իմաստ. Իմաստ. ԺԴ, 12), զի ոչ էր ի սկզբանէ, այլ նորակրօնութիւնն մարդկան եմուտ ասէ յաշխարհս: Քանզի եւ այսպէս յամենայն տեղիս զսոյն տեսանեմք վճարեալ, զի յետ զմիմեանս արհամարհելոյն, ապա եւ յարհամարհութիւնն աստուածութեան գամք, ըստ որում եւ Կայէն յետ սպանանելոյն զՀաբել, ապա



եւ ընդդէմ դարձաւ Աստուծոյ՝ ասելով՝ մի թէ պահապա՞ն իցեմ ես եղբօրն իմոյ (տինս Ծննդ., Դ, 9) եւ հրէայքն յորժամ զմարդարէսն ատեցին եւ հալածեցին, ապա եւ զԱստուածն մարդ լեալ՝ խաչիւ դատապարտեցին:

Զի որ առ ընկերն չար գտանի, առ Աստուած բարի ոչ կարէ երեւիլ, որպէս ասէ եւ Յօհաննէս, եթէ ոք ասիցէ, եթէ սիրեմ զԱստուած, եւ զեղբայր իւր ատիցէ, սուտ է, զի որ ոչ սիրէ զեղբայրն, զոր տեսանէ, Զաստուած, զոր ոչն ետես, զիարդ կարիցէ սիրել (Ա. Յովհ., Դ, 20):

Եւ զի այսքան տկարացոյց եւ վիրաւորեաց սատանայ զմարդիկ մեղօքն, զոր առ միմեանս եւ առ Աստուած, յաղագս որոյ եւ Աստուած կամելով զմեզ յերկոցունցս ազատել, ետ օրէնս կրկինս ըստ չարեացն, զոր գործեցաք:

Քանզի երկու էին պնակիտքն, զոր ետ Մովսէսի, գրեալ ներքոյ եւ արտաքոյ զհրամանս օրինացն, միովն զառ Աստուածն Հնազանդութիւն ուսուցաներ եւ միւսովն՝ զբարեմիտ լինելն առ միմեանս (տինս Ելք. ԼԲ, 15-16):

Քանզի այսպէս էր գրեալ ի միում պնակտին, թէ Ես եմ տէր Աստուած քո, եւ մի՛ արասցես դու քեզ կուռս եւ մի՛ առնուցուս զանուն տեառն Աստուծոյ քո ի վերայ սնոտեաց եւ թէ յիշես ջիր զօրն շաբաթուց՝ սրբել զնա եւ թէ պատուեա զհայր քո եւ զմայր:

Իսկ ի միւսն, թէ մի՛ շնար, մի՛ սպանաներ, մի՛ գողանար, մի՛ սուտ վկայեր եւ մի՛ ցանկանայցես ամենայնի, որ ինչ ընկերի քում է (տինս Ելք. Ի, 1-17):

Եւ ոչ եթէ այսօրիկ միայն կոչին օրէնք, այլ եւ սոքա իբրեւ սեռք իմն եւ բոլոր ինչ բազումս ունելով ընդ ինքեանս տեսակս եւ մասունս, զորս գտանեմք ի գիրսն Մովսէսի եւ յայլոց մարգարէիցն, զի զսոսա զամենայն օրէնս կոչեն գիրք:

Եւ թէպէտ Աստուած այսքան հոգացաւ՝ օրինօքն օգնական լինել բնութեանս, սակայն մարդիկ եւ առ օրինօքն եւս քան զեւս յաճախեցին ի չարիս, ըստ այնմ, թէ որչափ օրէնքն ի ներքս մտին, յանցանքն բազմացան (Ռոմ., Ե, 20) եւ թէ պատճառս առին մեղքն պատուիրանաւն եւ գործեցին յիս զամենայն ցանկութիւնս (Ռոմ., Է, 8): Եւ այս, ոչ եթէ օրինացն ինչ մեղադրութիւն է, այլ նոցա, որք ոչ պահեցին զնոյն:

Որպէս թէ ոք զխրատ իմաստնոյն արհամարհելով եւ ապա վշտաց ինչ զիպեսցի եւ կամ զինուոր, որ զէնընկէց լինի եւ փախչի ի ճակատէն եւ ապա կարեւելք վիրաւորի. ոչ եթէ զխրատն բամբասեմք եւ զզէնսն, այլ զարհամարհօղսն եւ զի բաց ձգօղսն նոցին: Այսպէս եւ աստ՝ նոքա են պարսաւելիք, որք զօրէնսն արհամարհեցին եւ ի բացընկեցին, եւ ոչ կացին ի նմին: Եւ զորօրինակ զինուոր յորժամ ի բաց ընկենու զզէնսն, առաւել վնասեալ լինի. այսպէս եւ ազգ մարդկան յորժամ ի բաց ընկեցին զօրէնսն՝ կէսք զբնաւորականն եւ այլք զգրաւորականն, յայնամ առաւել պատժապարտք եղեն:

Զոր Պօղոս ընդարձակ պատմէ առ հռոմայեցիսն, եթէ հեթանոսք բնաւորական գիտութեամբն իմացան զԱստուած, ըստ որում եւ ասէ, եթէ գիտութիւնն Աստուծոյ յայտնի էր ի նոսա (տինս Ռոմ., Ա, 19-21):

Քանզի յեղելութենէ անտի մասնաւորացն՝ մարդկան եւ այլ կենդանեաց, եւ բուսոց եւ տնկոց, իմացան, թէ եւ բոլորն սոցունց եղական է, եւ եղականն սկսական, եւ ամենայն եղեալ եւ սկսեալ չուճեմնէ վեհագունէ յանեղէ եւ յանսկզբնէ գոյացեալ լինի, որովք գիտացին, թէ է Աստուած:

Եւ զի տարերք աշխարհիս այս բոլորքն եւ մասնականքն սիրեն ապականել զիրեարս, ըստ որում բանականն եւ անբան կենդանիք եւ բոյսք եւ տունկք իրերաց խանգարիչք. ջուր՝ հրոյ շիջուցիչ, եւ հուր՝ ջրոյ ցամաքեցուցիչ, հող՝ օդոյ, եւ հողմոյ ընդ զիմակ՝ եւ արգելիչ, եւ հողմ հողոյ հոսիչ եւ ցրուիչ:

Եւ որպէս տարերքս, նոյնպէս եւ ամենայնքն, յորոց սոքա, ուստի եւ ի հանապազօրդ մարտիցս եւ միշտ անլուծանելի մնալոյն գիտացին, թէ է արարածոցս եւ նախախնամիչ. եւ պէս ստուգեաց, եթէ գիտացին զԱստուած, ապա յանդիմանեալ կշտամբէ զանմտութիւն նոցա՝ ասելով, թէ փոխեցին զփառս անեղծին Աստուծոյ ի նմանութիւն պատկերի եղծանելոյ, մարդոյ եւ թռչնոց եւ չորքոտանեաց եւ սողնոց (Ռոմ., Ա, 23):

Տե՛ս՝ փոխեցին ասէ, որով յայտ է թէ ունէին զգիտութիւն Աստուծոյ, զի զոր ունի ոք, զայն փոխէ:

Այլ փոխելն լինի, երբեմն զյոռին ընդ լաւն, եւ երբեմն զլաւն ընդ յոռոյն, իսկ աստ զլաւն ընդ յոռոյն, եւ զպատուականն՝ ընդ անարգին եցոյց, եթէ փոխեցին: Եւ ոչ ըստ հաւատոցն միայն եցոյց



զնոսա խոտորեալս, այլեւ ըստ գործոցն. փոխեցին ասէ՛ զպէտս բնականս ի պէտս անբնականս (Տոմ. Ա. 26):

Միտ դի՛ր, զի եւ աստ փոխեցին ասէ, եւ այսպէս ընդարձակագոյնս ձաղեաց զնոսա խոտորեալս ի հաւատոցն, որ յԱստուած, եւ ի գործոցն բարեաց, որ առ միմեանս:

Յետ որոյ ձաղէ եւ զհրէյասն, թէ եւ նոքա, որ ի վերայ բնական գիտութեանն ընկալան եւ զօրէնսն, անարգեցին զԱստուած՝ անցանելով եւ զօրէնսն, զի զօրէնսն ոչ յաղագս գործելոյ զբարիս ինչ համարէին, այլ միայն սակս գիտելոյ, ըստ որում եւ եպերէր զնոսա՝ ասելով, որ ասես չչնալ, շնաս, եւ չգողանալ, գողանաս (Տոմ., Բ, 21-22):

Եւ զթլփատութիւն եւ զշաբաթանալն եւ զգոհքն եւ զայլսն ամենայն սրբութիւնս մարմնապէս իմն համարէին, եւ ոչ ըստ հոգււոյն, որպէս եւ էր օրինացն դիտաւորութիւն, զի վասն սրբութեան հոգւոյ տուեալ եղեւ:

Քանզի թլփատութիւնն յաղագս այնորիկ էր, զի զաւելորդս ցանկութեանց ի բաց հատցեն յինքեանց եւ շաբաթանալն, որպէս զի միշտ դատարկք գտցին ի չարեաց եւ զգոհսն, որպէս զի բոլորովմբ զինքեանս Աստուծոյ ընծայեացեն եւ մի՛ մեղացն, ըստ մարգարէին, կատարեա բարձրելոյն (Սաղմ., Խթ, 14) :

Ուստի զայս ոչ առնելով՝ արհամարհօղք գտան օրինադրին, զոր դարձեալ սոյն առաքեալ ի կատարածի այսր քննութեան ի վերայ ածէ, թէ դատապարտ եղեւ ամենայն աշխարհ Աստուծոյ (Տոմ., Գ, 19). այսինքն՝ Հեթանոսք եւ հրէյաք պատժապարտք են Աստուծոյ:

Հեթանոսք, զի ոչ զօրեցին բնաւորական ընտրողութեամբն եւ արարածովքս յարարչին ճշմարիտ պաշտօն ժամանել եւ ի գործ արդարութեան, իսկ հրէյաքն, զի ի գիր օրինացն միայն դեգերեալք, եւ այսու ի հոգեւ որ պաշտօնն ոչ վերացան, որովք երկոքին կողմանքն կարօտ մնացին ողորմութեան Աստուծոյ, ըստ որում եւ այլուր ասէ, թէ փակեաց Աստուած զամենեսին յանհաւատութեան, այսինքն՝ թէ յանդիմանեաց եւ եցոյց անհաւատս զամենեսեան, որպէս զի ամենեցուն ողորմեցի (Տոմ. ԺԱ. 32) :

Եւ յաղագս այսորիկ բանն Աստուած միածին որդին Աստուծոյ կամօք Հօր եւ հաճութեամբ Հոգւոյն Սրբոյ ել ի հայրական ծոցոյն եւ եկն ազատել զմեզ ի դատապարտութենէ անիծիցն, որ յԱդամայ եւ որ յօրինացն, որպէս եւ ասէ աւետարանիչս, թէ զայ յերի-

քով, այսինքն՝ թէ յերկնից ի յերկիր. ընդ որում եւ ինքն ասէր, թէ ելի ի Հօրէ եւ եկի յաշխար (Յովհ., ԺԶ, 28). ասէ եւ Երեմիա, թէ սա Աստուած մեր, ընդ որում ոչ համարեացի այլ. յետ այսորիկ յերկրի երեւեցաւ, այսինքն՝ յետ երեւմանն ի Սինա, դարձեալ յերկրի երեւեցաւ, ոչ որպէս անդ երկիւղիւ եւ արհաւիրօք, այլ յոյժ հեզութեամբ եւ քաղցրութեամբ մարդկապէս ընդ մարդկան շրջելով: Զի Երիքովն՝ երկիր քրտանց եւ անիծից թարգմանի, եւ կամ լուսին. առ որ յետ յանցանացն տարագրեցաւ մարդն, եւ լուաւ, թէ անիծեալ լիցի երկիր ի գործս քո (Յննդ. Գ. 17) եւ թէ գործեսցես զերկիր եւ ոչ տացէ քեզ զգորութիւն իւր:

Հաստատէ եւ զսոյն առական Քրիստոս՝ ասելով, թէ այր մի իջանէր յերուսաղէմէ յերիքով, որ է Ադամ, հալածելով ի դրախտէն եւ յերկիր գալով (տես՝ Առկ., Ժ, 30): Վասն որոյ եւ Քրիստոս յաղագս մեծ սիրոյն իւրոյ, զոր ունէր առ ստեղծուածս իւր, առ ազգս մարդկան, խոնարհեցաւ յերկնից եւ էջ յերկիր, եւ եղեւ մարդ՝ շրջելով ի վերայ երկրի, ազատելով զմարդիկ ի ծառայութենէն սատանայի, եւ ուսուցանելով գիտել եւ ճանաչել զԱստուած զլոյսն իմանալի եւ երկնաւոր: Սակայն որչափ մարմնովն ի վերայ երկրի շրջէր, զսակաւս ուսոյց եւ լուսաւորեաց, իսկ յետ խաչին մահու թաղմանն եւ յարութեանն եւ համբարձմանն յերկինս, զՀոգին Սուրբ առաքելով ի դասս առաքելոցն՝ զյոլովս եւ զբազումս լուսաւորեաց. ըստ որում եւ ասէ, թէ

Ել նա յերիքովէ ոչ միայն աշակերտքն, այլեւ բազում ժողովրդովք, զի ելանելով Քրիստոսի յերիքովէ, այսինքն՝ յերկրէ յերկինս, ամենայն հաւատացեալքն, որ ընտրեալք էին ի սկզբանէ աշխարհի, ընդ նմա հետեւեցան մտանել ի թագաւորութիւնն երկնից:

Քանզի վաղվաղակի ժողովուրդք հեթանոսաց, որ երկայն ժամանակաւ կոյր գոլով, այսինքն՝ յանհաւատութեան, լսելով զգալուստն Քրիստոսի՝ սկսան յուսալ ընդունել զլոյսն փրկութեան:

Նստէր մուրացիկ յանցս ճանապարհի:

Զի դեռ ոչ ճանաչէին զճանապարհն ճշմարտութեան, յաղագս այսորիկ հարցաքննէին մեծ ցանկութեամբ գալ ի յայն, որպէս կուռնելիոս, որ զԱստուած արտաքոյ օրինացն պաշտէր, անդադար աղաչելովն (տես՝ Գործք. Ժ, 1), զի զնա ինքն Աստուած լուսաւորեցէ:

Դարձեալ՝ օրինակի Երիքով եւ դժոխոցն, զի որպէս էջ Քրիստոս յերկիր, այսպէս էջ եւ ի դժոխս եւ զոր ինչ գործեաց յերկիր՝ խրա-



տելով եւ ուսուցանելով զմարդիկ, զսոյն գործեաց եւ ի դժոխս, զի որպէս մարմնով ի վերայ երկրի մարմնաւորացն քարոզեաց, այսպէս եւ բանական հոգւովն, որ ի դժոխս, հոգւոցն, որպէս գրէ Պետրոս՝ ասելով, որով եւ ոգւոցն, որ էին ի բանտին, երթեալ քարոզեաց երբեմն ապստամբելոցն (Ա. Պետր. Գ. 19 - 20):

Եւ այսպէս կործանեաց զդժոխս եւ առ յաւարի, զորս ի նմա, որպէս եւ Յեսուս կործանեաց զԵրիբով եւ առ յաւարի զգանձս նորա (Կրն Յեսու, Զ, 20-21):

Եւ զորորինակ Յեսու ձայնիւ եւ աղաղակաւ կործանեաց զԵրիբով՝ առանց ամենայն մեքենայից եւ պատերազմաց. այսպէս եւ Քրիստոս առանց ամենայն հնարից, միայն ձայնիւն եւ աղաղակաւն, որ ի վերայ խաչին, քակեաց զդժոխսն եւ եհան ընդ իւր զամենայն արգելեալսն, որ անդ որպէս եւ ասէ, թէ ել նա յԵրիբովէ, այսինքն՝ ի դժոխոցն, ոչ միայն աշակերտովքն, այսինքն՝ մարգարէիւքն եւ արդարովք, այլ եւ բազում ժողովրդովք, այսինքն՝ ամենայն ըմբռնելովքն, որ անդ:

Նաեւ լուսին մեկնի Երիբովն, որպէս ասացաւ, զոր յոյժ պատշաճ է յիշել ի ժամ չարչարանացն, յորում մերձենայրն, զի պակասութիւն մարմնովն Քրիստոսի ի չարչարանսն, լրումն է երկնաւորն Երուսաղէմի, զի բաժանելով յԵրիբովէ յԵրուսաղէմ, որ է տեսումն խաղաղութեան, մերձենայ:

Դարձեալ՝ Բարտիմէոս կոյրն նշանակէ զժողովուրդ չրէից, որ ի կատարած ի լուսաւորելոց են ի գալն Եղիայի. կոյր նստէր, զի որ ծառայ է, լսէ զգիրս եւ ոչ կատարէ գործով, ի վերայ ճանապարհին նստի եւ մուրայ, որպէս որ նստի ի սեղանն եւ քաղցէ:

Իբրեւ լուս, թէ Յիսուս Նազովրեցի է, սկսաւ աղաղակել եւ ասել. «Որդի Դաւթի Յիսուս, ողորմեաց ինձ»: (Մարկ. Ժ. 47)

Դուկաս ասէ, թէ իբրեւ լուսա զանցանել ժողովրդեանն, եհարց, թէ զի՞նչ իցէ այն, եւ թշնամիքն Քրիստոսի պատասխանեցին՝ Հեզնելով, թէ Յիսուս Նազովրեցի անցանէ, զոր իմացեալ կուրին, ոչ ասաց Նազովրեցի, այլ թէ որդի Դաւթի Յիսուս ողորմեաց ինձ (Կրն Ղուկ., ԺԸ, 35-37):

Եւ ասսփլին նմա բազումք, զի լռեսցէ, եւ նա առաւել եւս աղաղակէր. «Որդի Դաւթի ողորմեայ ինձ» (Մարկ. Ժ. 48):

Եւ միտ դիր, թէպէտ եւ այլքն սաստէին, սակայն նա յաղաղակելոյն ոչ դադարէր, զի այնպիսի է ժուժկալ հոգի, որչափ ոք խափանիցէ եւս քան զեւս յորդորի. եւ Քրիստոս թոյլ տայր ըմբերանել զնա, զի առաւել եւս նորա յօժարութիւնն երեւեսցի, եւ իմացի, թէ արժանի իսկ է շնորհաց:

Վասն որոյ եւ ոչ հարցանէ, եթէ հաւատա, իբրեւ զայլս, զի աղաղակն բաւական էր յայտնի առնել զհաւատս նորա:

Իբրեւ լուսա, թէ Յիսուս Նազովրեցի է:

Լուսն նախ ի մարգարէիցն Հեթանոսք զհամբաւն Քրիստոսի, թէ նա է ակնկալութիւն Հեթանոսաց (Ճննդ. Խմբ. 10) եւ թէ ի նա Հեթանոսք յուսացին (Եսայի ԺԱ. 10, Նոմ. ԺԵ. 12), ապա ստուգեցին եւ յառաքելոցն, եւ կամէին մասնաւորիլ շնորհացն Քրիստոսի, եւ սկսան աղաղակել առ նա եւ ասել, որդի Դաւթի Յիսուս, ողորմեաց մեզ:

Եւ սաստէին նոցա բազումք, զի լռեսցեն: Նախ՝ դեւքն եւ մեղքն ջանային լռեցուցանել զաղաղակ աղքատաց, որոց տէր լսող է. եւ ապա հրէայքն, եւ ապա կռապաշտ դատաւորքն եւ թագաւորքն ընդդէմ դառնային եւ հակառակէին դարձին Հեթանոսաց, ոչ աղաղակել առ Քրիստոս եւ խնդրել ի նմանէ մաքրիլ եւ լուսաւորիլ:

Սակայն նոքա, որք կարգեալ էին ի կեանսն յաւիտենից, ոչ լինէին զարհուրեալք ի բարկութենէ հակառակորդացն, այլ որչափ հալածեալ չարչարէին, նոքա եւս քան զեւս աղաղակէին որդի Դաւթի Յիսուս, ողորմեաց մեզ: Ողորմութիւն հայցէին, ճրի տուրք եւ շնորհս, այլ ոչ վարձս փոխարէն բարեգործութեան, զի Հեթանոսք վասն ողորմութեան փառաւոր առնեն զԱստուած, ասէ Պողոս (Նոմ. ԺԵ. 9), զի հրէայքն ունէին փոքր ինչ պատճառս երախտեաց՝ զթլփատիլն եւ զչաբաթանալն եւ զպատարագացն մատուցանել, իսկ Հեթանոսք ոչ ինչ եւս, յաղագս այսորիկ աղաղակեն, որպէս կիրն քանանացի (Կրն Մարք. ԺԵ. 22), եւ ասեն՝ ողորմեաց մեզ:

Որ Աստուծոյ միայն վայելէ, զի անձախելի է մեծութիւն նորա, մանաւանդ թէ ի տալն եւս քան զեւս բազմանայ:

Զփնդի առ Յիսուս եւ հրամայեաց կոչել զնա. կոչեն զկոյրն եւ ասեն ցնա. «Քաջալերեաց, արի, կոչէ զքեզ»: Եւ նորա ընկեցեալ զձորձս իւր, յարեաւ եկն առ Յիսուս: Պապասխանի եպ նմա Յիսուս եւ ասէ. «Զի՞նչ կամիս, թէ արարից քեզ» (Մարկ. Ժ. 49-50):



Եւ է՞ր վասն հարցանէ, զի մի ոք կարծիցէ, թէ նա այլ իմն խնդրէ, եւ նա այլ ինչ տայ, զի եւ սովոր է նախ զառաքինութիւն բժշկելոցն յայտնել, եւ ապա զբժշկութիւն շնորհել:

Նախ՝ զի ցուցցէ, թէ արժանի են շնորհաց եւ ապա՝ զի զայլս ի նոցա նախանձն անիցէ, զոր եւ քանանացւոյ կնոջն արար (Կրն՝ Մաւրթ. ԺԵ, 22) եւ հարիւրապետին (Կրն՝ Մաւրթ. Ը, 5, Ղուկ., Է, 2) եւ տեւաւտեսին (Կրն՝ Մաւրթ. Թ, 20), զնոյն եւ աստ գործեաց:

Զտեղի առ Յիսուս եւ հրամայեաց կոչել զնա:

Կարգ փրկելոցն յոյժ պատշաճ է, նախ լսել եւ յետ այնորիկ ձայն տալ եւ աղաղակել եւ զկնի ապա կոչիլ, յետ որոյ շարժիլ եւ գնալ:

Լուաք ի մարգարէիցն եւ աղաղակեմք ի ձեռն հաւատոյն, կոչեցաք ի ձեռն առաքելոցն եւ յառնեմք ի ձեռն ապաշխարութեան եւ մերկանամք զմեզս ի ձեռն աւաղանին եւ հարցանիմք կամօք:

Քաջալերեաց արի կոչէ զքեզ:

Աղաղակելով կոյրն տէրն կոչէ զնա. մինչդեռ ժողովուրդն հեթանոսաց ցանկային ճշմարիտ իմաստութեանն ի ձեռն սուրբ քարոզողացն զբան հաւատոյն ընկալան, զի նոքա յարուցին զկոյրն եւ քաջալերեցին զնալ առ նա, յուսալով ունել զփրկութիւն, այսինքն զպայծառութիւն լուսաւորութեան. ըստ Դաւթի, մատիք առ տէր եւ առէք զլոյս (Սաղմ. ԼԳ. 6) եւ ըստ Պողոսի, արի, որ ննջեսդ եւ լուսատու լիցի քեզ Քրիստոս (Եփես. Ե. 14):

Զտեղի առ Յիսուս եւ հրամայեաց կոչել զնա:

Ով մեծագոյն աւետեացս եւ բարձրագոյն պատուոյս, որ այժմս տուեալ լինի հեթանոսաց:

Զի զորօրինակ թագաւոր տարագրէ զոք ի սպասաւորացն իւրոց յինքենէ, այլեւ սաստէ իւրոցն ոչ հպիլ առ նա եւ ոչ խօսակից լինել նմա. եւ ապա անյիշաչար եղեալ առ նա, հրամայէ կոչել զնա:

Այսպէս եւ Քրիստոս ի սկզբան քարոզութեան իւրոյ տարագրեաց զհեթանոսս յինքենէ եւ յաշակերտացն իւրոց, ըստ այնմ, թէ ոչ առաքեաց առ հեթանոսս, այլ առ իսրայէլացիսն (հմմտ. Մաւրթ. ԺԵ. 24). սաստեաց եւ աշակերտացն, թէ ի ճանապարհս հեթանոսաց մի երթայցէք (Մաւրթ. Ժ 5), իսկ յորժամ զտեղի առ եւ կատարեցաւ գործք անօրէնութեանն, վարդապետութիւն, սքանչելիքն մահն խաչի, թաղումն եւ յարութիւնն. յայնժամ հրաման ետ աշակերտացն՝ ասելով, զնացէք այսուհետեւ՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս (Մաւրթ. ԻԵ. 19). որպէս եւ աստ ասէ:

Զտեղի առ Յիսուս եւ հրամայեաց կոչել զնա:

Այսինքն՝ յորժամ կատարեաց զամենայն տնօրինական զգործս իւր Քրիստոս, ապա հրաման ետ կոչել զհեթանոսս, զի յորժամ հրէայքն կրկին կրկին զկոչնականսն առաքեալ առ ինքեանս, զան հարին, կառափնատեցին եւ ունայն արձակեցին ի վերայ ծառայիցն եւ զորդին, որ տէր եւ ժառանգ էր ամենայնի (Կրն՝ Մաւրթ. ԻԱ. 33-46, Մարկ. ԺԲ. 1-12, Ղուկ. Ի. 9-19), եւ զնա խաչի դատապարտեցին, բարկացաւ նոցա եւ Աստուած Հայր, եւ հրաման ետ ծառայից իւրոց առաքելոցն՝ ելանել յանցս ճանապարհաց եւ ի հրապարակս քաղաքաց եւ կոչել զաղքատս եւ զխեղս, եւ զկաղս, եւ զկոյրս (Ղուկ. ԺԴ. 13). յաղագս որոյ այնոքիկ, որք ոչ իշխէին խօսիլ ընդ հեթանոսս, այժմ աւետատուք գտանին նոցա՝ ասելով:

Քաջալերեաց՝ արի կոչէ զքեզ:

Քաջալերեաց. այսինքն՝ խնդա եւ ուրախ լեր, արի, յայտ է, թէ ի զլորմանէ, որ լարծող մեղօքն գայթակղեաց եւ կործանեցաւ ընդ օձին յերկիր անկանելով. որ եւ զօրացեալ եղեւ ի հրամանէ կոչողին, որպէս եւ անդամալոյծն, ըստ որում եւ ասէ:

Յարեաւ եւ ընկեց զձորձս իւր, եկն առ Յիսուս:

Ընկենու ձորձոցն՝ ցուցանէ ի բաց ձգել զհոգս աշխարհիս, մանաւանդ թէ զմեղս եւ զանօրէնութիւնս, որ ծանր է, քան զամենայն անունս, թեթեւացուցանելով զզնացս մտացն, երթալ փութապէս առ տուողն լուսոյ, զի ըստ Սողոմոնի նմանեալ որթուց եղանց, վազելով ի վերայ լեռանց եւ խայտալով ի վերայ բլրոց (Կրն՝ Երգ Բ. 8-9), թողլով զամենայն հեշտութիւնս մարմնականս եւ եկն առ Յիսուս, զնա մեծ եւ պատուական համարելով, քան զամենայն, վասն որոյ Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. զին՞նչ կամիս, թէ արարից զքեզ:

Հայելով Յիսուս ի բարի կամսն եւ ըստ բարի ցանկութեան նոցա տայ զպարգեւսն. ըստ այնմ, տացէ քեզ Տէր ըստ սրտի քում եւ զամենայն խնդրուածս քո կատարեսցէ (Սաղմ. ԺԹ. 5) եւ թէ զամենայն, զոր ինչ խնդրէք, յաղօթս հաւատովք, առնուցուք (Մաւրթ. ԻԱ. 22):

Զին՞նչ կամիս, թէ արարից քեզ: Գիտէր, զինչ կամէր, այլ կամի, զի յիւրմէ լուիցէ, որով խրատէ զմեզ անդադար աղօթել, վասն որոյ եւ յայլ ուր ասէ, գիտէ հայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ յառաջ, քան զխնդրելն (Մաւրթ. Զ. 8), այլ կամի խնդրել յինքենէ:



**Զի՞նչ կամիս:**

Յայտնի ցուցանէ, զի ոչ հարկէ եւ ոչ բռնադատէ զոք Աստուած ակամայ կամօք ծառայել իւր, այլ կամօք եւ յօժարութեամբ, որպէս ասէ, եթէ ոք կամի իմ աշակերտ լինել (հմմտ. Մատթ. ԺԶ, 24, Մարկ., Ը, 34, Ղուկ., Թ, 23) եւ դարձեալ, թէ եթէ կամիս կատարեալ լինել (հմմտ. Մատթ. ԺԶ, 21, Մարկ. Ժ. 21). զի տէր եւ իշխան ստեղծ զմարդն, գործոց բարեաց եւ չարեաց, զի զոր կամի, զնոյնն եւ գործէ, յաղագս այտորիկ ասէ:

**Զի՞նչ կամիս, թէ արարից քեզ:**

Զորօրինակ՝ բարի եւ քաղցր տէր ասէ առ ծառայ իւր, զի՞նչ կամիս, որ առնեմ քեզ, կամիս կալ եւ ծառայել ինձ, եթէ կամիս զնալ եւ ծառայել այլոց. նոյնպէս եւ Քրիստոս ասէ, կամիս կալ առ իս եւ ծառայել ինձ, եթէ կամիս զնալ առ սատանայ եւ ծառայել նմա:

Արդ՝ զոր ինչ արարծես, զնոյն քեզ առնեմ, զի թէ կամիս առիս կալ եւ ծառայել ինձ բարի գործովք, բժշկեալ լիցիս ի ցաւոցդ եւ լուսաւորեսցիս հոգևով եւ մարմնով, իսկ եթէ սատանայի կամիս ծառայել մեղօք եւ անօրէնութեամբ, մնասցիս ի կուրուժիւնդ անբժշկելի յաղագս սորոյ:

**Ասէ ցնա կոյրն. ուրբունի, զի բացայց:**

Այսինքն՝ ոչ այլ ինչ խնդրեմ, քան թէ զբանալ աչաց իմոց եւ տեսանել զլոյս, զի կոյրն զհարստութիւն կարէ ունել, բայց ոչ կարէ տեսանել, զոր ունի: Այսու առակէ, զի մեք մի խնդրեսցուք սուտ զհարստութիւնս այլ զլոյս, զոր լոյս ետ հրեշտակաց, ըստ այնմ, թէ լուսատու ես դու սքանչելապէս լերանցն յաւիտենից (Մաղմ. ՏԵ. 5), զոր մեք հաւատովք կարեմք տեսանել, զի աստուածութեանն լուսոյ տեսող հաւատքն է, ուստի լուսաւորեալ կուրին:

**Եւ Յիսուս ասէ ցնա. երթ հաւապք քո կեցուցին զքեզ եւ վաղվաղակի բացաւ, եւ երթայր զհետ նորա ի ճանապարհին (Մարկ. Ժ. 52):**

Ուստի տեսանէր եւ զկնի հետեւէր, զի որ բարւոք լսէ, զնոյն եւ գործով կատարէ, եւ տես, զի ոչ ասաց նմա, եթէ հաւատք քո ետուն քեզ տեսանել, այլ թէ հաւատք քո կեցուցին զքեզ, զի յայտ արասցէ, եթէ նախ կեանս ետ նմա եւ ապա զբանալ աչացն, եւ վաղվաղակի բացաւ, որով եցոյց աստուածային զգործն, զի ոչ աղօթիւք եւ խնդրուածովք, այլ իշխանութեամբ երաց զաչս նորա, եւ ոչ յամելով, այլ ի նմին ժամու:

**Մատթէոս ասէ, թէ զթացաւ եւ բժշկեաց զնա (տես Մատթ. Ի. 34):**

Ուստի ուսանիմք, եթէ ոչ է ռիակալ Աստուած, եւ ոչ յիշէ զչարիս ումեք, զոր գործեալ է, յորժամ զղջանայ, եւ դիմէ առ Աստուած, այլ ընդունի եւ պատուէ, մանաւանդ, թէ եւ գիրկս արկեալ՝ համբուրէ:

Որպէս եցոյց առ անառակ որդին (տես Ղուկ. ԺԵ. 11-32) եւ առ կինն պոռնիկ (տես Ղուկ. Է. 37 - 42) եւ առ աւագակն, որ ի խաչին (տես Ղուկ. ԻԳ. 43) , զի ոչ գարշեցաւ եւ ոչ ի բաց դարձոյց զերեսս, այլ յառաջին պատիւն կարգեաց եւ ի մեղացն սրբեաց եւ դրախտին արժանացոյց:

**Եւ երթայր զհետ նորա ի ճանապարհին:**

Զհետ երթալն Քրիստոսի նմանելն է ի Քրիստոս, գործովք բարեաց, ըստ որում ասաց ինքն, եթէ ոք զիս պաշտեսցէ, զկնի իմ եկեսցէ (Յովհ. ԺԲ. 26). այսինքն՝ նման լիցի ինձ, որպէս աշակերտ, վարդապետի:

Ապա ուրեմն ընդ բարիսն ճանապարհորդեսցուք եւ մի ընդ չարիսն, որպէս զի այսպիսի ճանապարհաւ առ Աստուած ելանիցեմք, ըստ որում դարձեալ ասաց Քրիստոս, ես եմ ճանապարհ եւ ճամարտութիւն եւ կեանք (Յովհ. ԺԴ. 6):

Այս է ճանապարհն նեղ (տես Մատթ. Է. 13 - 14), որ տանի զմեզ ի վերինն Երուսաղէմ՝ ի կեանսն յաւիտենից, եւ առ Աստուած:

**ՅՈՐԴՈՐԱԿ**

Վասն որոյ պարտ է հանապազ զԱստուած յիշել եւ միշտ մտօք առ նա լինել, որպէս զի յամենայնի զինչ եւ զայցէ ի վերայ համբերեսցուք դիւրաւ:

Զի թէ ոք զսիրելին յիշիցէ, քրքրի սրտիւն եւ խնդայ յիշելովն, իսկ եթէ ոք զայն, որ ճշմարիտ սիրելին է մեր, ունիցի ի մտի եւ յիշիցէ, ոչ երբէք սգայ տրտմութեան իմիք, եւ ոչ յահէ ինչ երկնչի, եւ վասն այնորիկ երկնչիմք, զի Աստուծոյ երկիւղն չունիմք ի մտի, որպէս պարտ է ունել եւ չածեմք զնա մտաւ, ի դէպ ժամանակի ասասցի եւ առ մեզ, թէ մոռացար զիս, մոռացայց եւ ես զքեզ (հմմտ. Ովսէ. Դ. 6). եւ կրկին չարիք լինին, զի եւ մեք զնա մոռանամք, եւ նա՝ զմեզ:



Մեծ բարութիւն է յիշելն Աստուծոյ զմեզ, եւ մեծ յիշելն մեր զնա:

Եւ նոյնն յորդորէ զմեզ գործել զբարիս, վասն այսորիկ ասէ մարգարէն, թէ յիշեցի զքեզ յերկրէն Յորդանանու եւ ի Հերմօնէ լեռնէ փոքուէ (Սաղմ. ԽԱ. 7): Զայս ժողովուրդն մինչդեռ ի Բաբելոն էր, ասէր, եւ մեք Համարեսցուք, թէ ի Բաբելոն իցեմք, զի թէպէտ չեմք գերիք, այլ ի թշնամեաց միջի եմք, նաեւ բազումք ի նոցանէ, քան զգերեվարն իւրեանց զթագաւորն փառաւորք էին:

Որպէս Դանիէլ եւ երեք մանկունքն, զի գերեացն, գերեվարն երկիրպագանէր (Կեն Դան. Գ. 95), եւ այս նոցա ի միշտ յիշելոյն զԱստուած եւ ի խոնարհութենէն եղեւ, որպէս եւ ի Հնոցին ասէին, թէ յանձինս խոնարհս եւ Հոգւով բեկելով ընդունելի լիցուք:

Եւ Դանիէլ այնպէս Հեզ եւ խոնարհ էր, զի մինչ ի գուրն առիւծոց էր վասն Աստուծոյ եւ մարգարէն եբեր նմա զկերակուրն, ասէր, յիշեցեր զիս Աստուած (Դան. ԺԴ. 37): Տն'ս, զի անարժան Համարէր զինքն յիշատակի եւ լսելի լինելոյ, եւ մեք յորժամ փոքր ինչ նեղիմք, ոչ վասն Աստուծոյ, այլ վասն մեր մեղացն, եւ թէ փութով չլսէ յաղաչելն մեր, տրտնջեմք եւ բամբասեմք զԱստուած՝ ասելով, թէ սիրելի են քեզ անօրէնքն, քան զքրիստոնէքն, եւ լաւ են անհաւատքն, քան զհաւատացեալքս:

Արդարեւ մեծ միջոց կայ ընդ մեզ եւ ընդ նոսա, որչափ ընդ երկինս եւ ընդ երկիր, թէ եւ այլեւս աւելի կայցէ, քան զայս, զի նոքա յետ այնչափ սքանչելեաց, անարժանս Համարէին զինքեան, վասն որոյ ասէին, թէ յիշեցեր զմեզ Աստուած: Արդ՝ եւ մեք միշտ յիշեսցուք զԱստուած, զի ուրախացուք եւ երկիցուք ի նմանէ: Որ թէ եւ ի գերութեան իցեմք, քան զամենեսեանն պայծառագոյնք եմք, զի թէ երկիւղն Աստուծոյ մերձ կայցէ, չիք ինչ վիշք, որ մեզ ցաւեցուցանել կարէ:

Թէպէտ զազբատութիւն ասիցես, կամ զցաւս, կամ զգերութիւն եւ կամ զինչ եւ իցէ վիշտք, այլեւ նոյն իսկ գործակից լինի մեզ բարեաց, ըստ այնմ, բայց գիտեմք, թէ որք սիրենն զԱստուած, յանմենայնի գործակից լինի ի բարիս (Տոմ. Ը. 28): Վասն որոյ եթէ կամիմք ամենայն բարութեանց Հասանել միշտ յիշեսցուք զԱստուած եւ խնդրեսցուք զնա գտանել:

Զի որպէս այնոցիկ, որք խնդրեն զԱստուած ըստ Պողոսի, լինի պարզեւ ատու (Եբր. ԺԱ. 6), նոյնպէս եւ որոց ոչ խնդրեն, ոչ լինի,

յաւուր նեղութեան իմոյ զԱստուած խնդրեցի, ասէ ձեռօք իմովք ի գիշերի (Կեն Սաղմ. ՆՁ. 3) եւ ոչ խաբեցայ. գիշեր զմեղսն ասէ, որով խրատէ զմեզ, թէ եւ ի մեղս եմք, պարտիմք խնդրել զԱստուած, եւ թէ խնդրեցէք զՏէր եւ գտանիցէք զնա եւ զհարզ իցէ զաէրն խնդրել, որպէս զկորուսեալն խնդրեմք, զի թէ ոք որդի սիրելի կորուսցէ, յօտար աշխարհ գնայ, եւ ամենեսեան Հարցանէ, եւ ինչս խոստանայ եւ թէ գտանէ, սիրով ընդունի, զնոյն եւ վասն Աստուծոյ արասցուք, նա եւս աւելի:

Խնդրեցէք, ասէ, եւ գտանիցէք, յորժամ խնդրէ ոք զինչս, բազում Հոգս յանձին պարտի ունել, եւս աւելի զԱստուած, զի բազում ինչ խափան լինին մտացս մերոց, որպէս արեգակնս յայտնի է, եւ չունիմք պէտս խնդրելոյ զսա:

Իսկ թէ զմեզ ի խորխորատ թաքուցանեմք, դժուարաւ կարեմք տեսանել զնա, նոյնպէս եւ աստ, թէ ի խորս չար ցանկութեանցն զմեզ թաղեմք Հազիւ կարեմք յԱստուած Հայել, վասն որոյ փախիցուք ի չար ցանկութեանցն, զի տեսցուք զԱստուած:

Եւ զհարզ լիցի այս. Համբարձումն ձեռաց իմոց, ասէ, պատարագ երեկոյի (Կեն Սաղմ. ՃԽ. 2), այնպէս պարտ է եւ ձեզ միշտ առնել եւ թէ միշտ ոչ գոնէ ընդ երեկոյս եւ ընդ առաւօտս:

Եւ թէ զձեռսդ չկարես տարածել, տարածեա զմիտսդ եւ ի վեր, քան զերկինս Հասանես, անվնաս մնալով: Զի չէ այնպէս երկայնաձիգ սատանայ, թէ եւ ի բարձունս Հարել կարէ:

Զգել ձգէ զնետսն, քանզի լիրբ է, բայց ոչ կարէ Հարել զվերացեալն յերկրէ, իսկ որք ընդ երկիր քարշին, Հարեալ լինին նովաւ: Նետք սատանայի չար ցանկութիւնն է, որ Հուր եւ բոց բորբոքեալ, որով ամենեքեան գերեալ եմք ի սատանայէ, ոչ բռնութեամբ, այլ կամօք եւ յօժարութեամբ: Եւ փոխանակ խնդրելոյն զԱստուած, փախեաք յԱստուծոյ, եւ ի սատանայ ձեռս տուաք, եւ չիք ոք, որ սուգ առնու եւ յոգւոց Հանիցէ ընդ այն, զի ամենեքեան յառաջին զնացսն դարձաք:

Եւ որպէս յառաջ, քան զՔրիստոսի դալուստն փախչէաք յԱստուծոյ, նոյնպէս եւ այժմ: Փախչիլ յԱստուծոյ ոչ եթէ տեղեաց ի տեղիս իցէ, այլ մեղօքն, որպէս ասէ Դաւիթ, թէ որք Հեռացուցին մեղօքն զանձինս իւրեանց ի քէն, կորիցեն (Խմմբ. Սաղմ. ՆԲ. 27): Զի որ յԱստուծոյ Հեռանայ, որպէս ոչխարն ի Հովուէն, այլ ինչ, քան



թէ կորնչելոց է, եւ այլուր ոչ ապաքէն մեղքն ձեր որոշեն ընդ իս եւ ընդ ձեզ (տէն Եսայի ԾԹ. 2):

Եւ այսպէս մեղօք լինի հեռանալն, այլ տեղեօք չէ հնար, զի որպէս ի նմանէ, որ ամենայն ի ձեռին նորա են, փախչիլ կարիցէ, բայց մեղաւորն միայն փախչի, ըստ այնմ՝ փախչի մեղաւորն առանց ուրուք հալածելոց, եւ չիցէ՞ այս ողբոց արժանի:

Յո՛ փախչիս անմիտդ եւ յիմարդ, եթէ յԱստուծոյ փախչիս, զո ապաւէն առնիցես, եթէ ի լուսոյ փախչիս, ի՞նչ տեսանիցես, եթէ ի կենաց հեռանաս, ի՞նչ լիցիս կենդանի- փախիցուք ի թշնամւոյն փրկութեան մերոյ ի սատանայէ: Յորժամ մեղանչեմք- փախչիմք յաշխարհէ հեռի, իբրեւ անառակ որդին,- որ վատնեաց զինչսն հայրենիս եւ սովամահ լինէր (տէն Ղով. ԺԵ. 13):

Ունիմք եւ մեք ինչս հայրենիս, զազատելն զմեզ ի մեղաց, ետ մեզ եւ զՀոգին Սուրբ եւ զգօրութիւն գործել զբարիս, եթէ զայսորիկ ծախիցեմք, սովամահ լինիմք:

Չորորինակ՝ տապացեալքն մինչդեռ մաղձիւքն լլկիցին, չկարեն ինչ գործել, իսկ եթէ փարատիցէ ոք ի նոցանէ զայն եւ չգործեն ինչ ի ծուլութենէ իւրեանց լինի այն:

Նոյնպէս եւ առ մեզ, զի մեղացն տապով իբրեւ ի փողոց յաղբի ընկեցեալ կայաք եւ ընդ չարութեանն կեղով նեխեալք եւ հոտեալք, եւ սատանայ եկեալ հասեալ դիւօքն ծաղր առնէին եւ զոտս ի վերայ տրոփէին:

Եկն Աստուծոյ միածինն եւ յորժամ ասեմ, թէ եկն, մի փոփոխումն ինչ կարծիցես, որ զամենայն լնու, այլ ըստ մարդկութեանն ասեմ եկն, զի աստ մարմնով պատեալ էր եւ անդ առ հօր նստէր, լիով ի խոնարհ, լիով ի վեր, լիով ի մարմնի, լիով ի յամենայնի, զի չիք ասել զԱստուծոյ, թէ մասամբ ուրեք լինիցի:

Եկն առ իս, որ ատէի զնա, եւ փախչէի թշնամանելով, եւ ետես զիս որդնալից չար ցանկութեամբքն, նաեւ այտուցեալ էի, այսինքն՝ հպարտութեամբն եւ սովով սրայի, այսինքն՝ ազահութեամբն եւ աչաց կուրութեամբ, խլութեամբ եւ համրութեամբ, զի զփայտն եւ զքարն Աստուած համարէի:

Ետես զիս յայնչափ չարիս եւ չգարչեցաւ, այլ իբրեւ բժիշկ հնարագէտ կազմեաց դեղ: Եւ նախ ինքն ճաշակեաց, զի ընդ առաքինութիւնն յառաջ ինքն անց եւ ապա ետ մեզ:

Նախ՝ իբրեւ զմաղձադեղ ետ գաւազանն, որով փսխեցաք զժանգ մեղացն եւ ի բաց փախեալ ցատումն, ազահութիւնն, ցանկութիւնն եւ այլքն եւս: Գեղեցկացաւ եւ մարմինն, հոգւոյն շնորհօք, այնպիսի, զի եւ որդի Աստուծոյ արժանի եղեւ կոչիլ:

Վա՛յ ինձ, վա՛յ ինձ վա՛յ ինձ. որչափ գեղեցկութիւն շնորհեաց մեզ, եւ մեք զամենայն կորուսաք մեղօքն, զոր գործեցաք իբրեւ զորդին անառակ, նա եւս չար քան զնա եւ քան զայլս ի մեղաւորաց: Զի թէ գոյր ոք այժմ յեկեղեցիս, եւ զամենեսեան, որ աստ էին, ի հարց եւ ի փորձ արկանէր, եւ ոչ այժմ ինչ ասեմ, այլ ի զատկին իսկ, որ խոստովանեալ էին, եւ յետ հաղորդելոյն ի Քրիստոսի մարմնոյն եւ յարենէն, քննէր հաւաստեալ, այնպիսի հոգի ունելով, քննել զգործս ամենեցուն ստուգութեամբ, եւս չար ծանրագոյն զմեր չարիս, քան զհրէիցն գտանէր, ի հմայս եւ ի կախարդութիւնս, ի դիւթութիւնս եւ ի գարեբնկէցութիւնս եւ պոռնկացեալս եւ շնացեալս՝ չար, քան զնոցայն գտանէր:

Որչափ նախանձոտք եւ արբեցողք, որովայնամուք եւ գողք, եւ ազահք, ուր այսչափ մեղք գործին, որպիսի չարեաց չիցի պարտական ունել:

Եւ զի գիտիցէք, թէ պատիժս կրելոց եմք ընդ այնպիսիսն, լուարուք: Այր մի Աքար անուն իրս ինչ գողացաւ եւ բազումք վասն այնր իրաց ընդ նմա սատակեցան (տէն Յեսու, Է, 1-26), եւ այլք պոռնկեցան եւ քսանչորս հազար այր ընդ նոսա կորեան (տէն Թոնց ԻԵ. 1-9): Երկիցուք այսուհետեւ, զի գիտէ Աստուած եւ զարդարս ընդ մեղաւորս սպանանել, որպէս զԴանիէլ եւ զերիս մանկունսն (տէն Դան. Ա. 1-21) եւ զայլս, որպէս եւ այժմ ի պատերազմունս պատահէ, զի նոքա եւ զոր ինչ ունին մեղս, սրբեն եւ այլքն ոչ վասն այնորիկ, այլ վասն իւրեանց չար գործոցն:

Զգոյ՛ կացցուք անձանց, չտեսանիցէք զպատերազմունս շարժեալս Ո՞րչափ բիւրոց բիւրք տարան գերի եւ կան ի ծառայութիւն, չխրատիցիք այնու ամենայնիւ, եւ թէ գեհնին սպառնալեօք չխրատիցիմք, գոնէ այնու խրատեսցուք:

Նոքա ետուն վրէժս, եւ մեք եւս մեծամեծս տայցեմք, որք եւ ոչ նոցա աղետիւքն չխրատեցաք:

Վասն որոյ ընկալարուք զխրատ, զի մի իսպառ բարկացի տէր, եւ կորուսցէ զամենեսեան առ հասարակ, այլ խնամեսցէ զսակաւ ինչ մնացեալքս սիրով եւ գթութեամբ եւ աճեցուցէ եւ բազմա-



ցուսցէ առաւել, քան զչափն առաջին: Եւ տացէ մեզ դարձեալ տեսանել զաւերական եւ զանմարդարնական վերստին շինեալ եւ լցեալ բազում բնակչօք, մինչ զի ասիցեն, թէ նեղ է մեզ տեղիս, ընդարձակեսցուք:

Միայն դարձցուք առ Աստուած եւ խնդրեսցուք զնա ի բոլոր սրտէ եւ յամենայն կամաց եւ ի զօրութենէ:

Եւ որպէս զորդին անառակ ասասցուք, թէ Հայր մեղաք յերկինս եւ առաջի քոյ (հմմտ. Ղուկ. ԺԵ 21), զի յոյժ ցանկայ դարձին մերոյ եւ չունի ոխս վասն առաջին յանցանացն:

Դարձցուք անդրէն եւ իմասցուք զանարգութիւնն, յորում էաք, զի խոզս առնեն զմեզ մեղքն եւ չունս կատաղիս:

Նորոգեսցուք զանձինս եւ դարձցուք յառաջին գեղեցկութիւնն, զի եւ հանդերձելոց բարութեանցն հասանիցեմք Քրիստոսիւ Յիսուսիւ տէրամբ մերով:

Ընդ որում Հօր եւ Հոգւոյն Սրբոյ վայելէ փառք, պատիւ եւ իշխանութիւն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:



### 28. ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ ԿՈՒՐԻՅ ՅԵՐԻՔՈՎ

Ղուկաս ԺԸ. 35-43

ԻԳՆԱՏԻՈՍ ՍԵԼԷՆՈՆՅԻ

(Գլուխ ԺԸ.)

Եւ ի գնալն Նորա առ ճանապարհան, նստեալ կոյրք երկու (Ղուկ. ԺԸ. 35)

Յաւրինակ Հրէից եւ Հեթանոսաց, մնային աստուածային լուսոյն, որ ծագելոց էր, որոց նստէին ի խաւարի եւ ի ստուերս մահու:

Արդ, ի յանցանելն Հարցանեն, թէ ո՞վ իցէ: Եւ նախանձաւորքն փոքր կացուցանեն զնա, մախացեալ ընդ փառս Նորա. Նազաւրեցի, ասեն, զՆա: Մանեան եւ կոյրքն, զի յաջաղանք էին, վասն որոյ թողուն զատելեացն, եւ առնուն զմարգարէիցն եւ Տէր եւ Որդի Դաւթի աղաղակեն: Եւ նոցա զժկամակ առ այն լեալ՝ սաստէին, զի լռեսցեն: Իսկ նոքա ոչ ինչ գրէին զսաստելն նոցա՝ յաւրինակ հաւատացելոցն, որք ոչ ի սպառնալեացն երկեան եւ ոչ ի հարուածոց զանգիտեցին լռել ի քարոզելոյ զԱստուածութիւն Նորա: Իսկ Յիսուս, տեսեալ զպինդ հաւատս նոցա, զի անցանէին զխափանողաւքն՝ կացեալ կոչէ առ ինքն, Հարցանէ եւ զպարգեւս լուսոյն շնորհէ՝ յաւրինակ ներքին մարդոյն լուսաւորութեան:

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

(Գլուխ ԺԸ.)

Ի մտանել նորա յԵրիբով, կոյրք երկու նստէին առ ճանապարհան (Ղուկ ԺԸ. 35):

Յաւրինակ Հրէիցն եւ Հեթանոսաց մնային աստուածային լուսոյն, որ ծագելոց էր նստելոցս ի խաւարի եւ ի ստուերս մահու:

Իբրև լուան զանց[ան]ելն, հարցանէին, թէ ո՞վ իցէ (Ղուկ ԺԸ. 36): Եւ նախանձաւորքն փոքրկացուցանեն զփառս նորա մախանաւք:



**Նազաւրացի, ասեն, անցանէ** (Ղուկ ԺԸ. 37):

**Իգ.** *Ուխտաւոր թարգմանի: Եւ ծանեան կոյրք զաղաչանս նոցա:*

**Աղաղակեցին. Յիսուս, որդի՛ Դաւթի, ողորմ[եաց]** (Ղուկ ԺԸ. 38):

**ԵՓ Արդ՝** *եկն լոյսն յաշխարհ, զի կուրաց տեսանել տացէ եւ զթերահաւատսն հաստատեսցէ ի հաւատս ճշմարիտս Սուրբ Երրորդութեանն: Եւ ի հասանելն առ կոյրան՝ ետ նոցա աղաղակել:*

**Յիսուս, որդի՛ Դաւթի, ողորմեաց մեզ** (Ղուկ ԺԸ. 38):

*Բարիոք կոչեցին զնա որդի Դաւթի, այն, որ առեր զողորմութիւն ի վերայ կաղացն եւ կուրացն եւ գաւսացելոցն: Ըստ այնմ՝ «Եթէ, որ մաքիցէ սրով առ կաղս եւ կոյրս, արելի է անձին Դաւթի» (Բ. Թագ. Ե. 8): Զի բարեկամք էին նորա, որք ասէին. «Մի՛ մքցէ այսր Դաւթի» (Բ. Թագ. Ե. 6):*

**Որք առաջի երթային, սաստիւն, եւ նորա առաւել եւս աղաղակ[էին]** (ԺԸ. 39):

**Ոկ.** *Մեծածայն բարբառ արձակէին: Թէպէտեւ այլքն սաստէին, սակայն նոքա յաղաղակելոյն ո՛չ դադարէին: Զի այնպիսիք են ժուժկալացն հոգիքն. որչափ խափանեն՝ առաւել յորդորին:*

**ԻԳ.** *Յաւրինակ հաւատացելոցն, որք ո՛չ ի սպառնալեացն երկեան եւ ո՛չ ի հարուածոց զանգիտեցին լռել ի քարոզելոյ զաստուածութիւն նորա:*

**Եւ Յիսուս կոչեաց զնոսա եւ ասէ. Զի՛նչ կամիք, զի ար[արից]** (Ղուկ ԺԸ. 40-41):

**Ոկ.** *Զի մի՛ ասիցեն նախանձոտքն, եթէ նոք[ա] այլ ինչ խնդրեն եւ նա զայլ ինչ շնորհէ:*

**Եւ ասեն. Տէ՛ր, զի բացեն աչք մեր եւ տեսցուք** (Ղուկ ԺԸ. 41):

**Տէր՝** *զաստուածութիւն խոստովանէին եւ որդի Դաւթի՝ զմարդկութիւն բացայայտէին, վասն որոյ եւ ընդունին զհայցելին: Եւ մեք, թէ հաւատով մատչիմք առ Աստուած, զամենայնն առնումք: Տեսանե՞ս, զի եւ յառաքելոցն ո՛չ կալան բարեխաւս, զի եւ բազումք ըմբերանէին:*

**Եւ Յիսուս ասէ ցնա. Հաւատք քո կեցուցին զքեզ: Եւ առժամայն տեսանէր** (ԺԸ. 42-43):

*Այն իսկ էին պատճառք բժշկութեան, վասն որոյ յաշխարհս եկեալ էր:*

**ԻԳ.** *Աւրինակ ներքին մարդոյն լուսաւորութեան նշան արարեալ:*

**Երթայր զհեպ նորա եւ փառաւոր առնէր զԱստուած** (Ղուկ ԺԸ. 43):

**Ոկ.** *Եւ ո՛չ մեկնէին ի նմանէ, որպէս բազումք յետ երախտեացն ապերախտք գտան: Իսկ սոքա յառաջ քան զպարգեւս ժուժկալք, եւ յետ պարգեւացն՝ մտադիւրք, քանզի զհետ իսկ երթային՝ փառաւորելով զնշանագործն:*





**29. ԲԺՇԿՈՒԹԻՒՆ Ի ՏԱՃԱՐԻՆ**

Մաթթեոս ԻԱ. 14-16

**ՅՈՎՆԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՅԻ**

(Գլուխ ԻԱ.)

Եւ մափեան առ Նա կոյրք եւ կաղք ի Տաճարին, եւ բժշկեաց գնուսա (Մաթթ. ԻԱ. 14):

Առ ի հաւատ մարգարէութեանն լրման եւ տանն վրէժխնդրութեան ի նշանս գայ: Եւ դարձեալ՝ զիշխանութիւնն եւ զգորութիւնն ցուցանէ՝ առ ի մխիթարութիւն աշակերտացն, որք տրտմեալ էին վասն մահու Նորա, որով յայտ առնէ, թէ կամօք կրէ եւ ոչ թէ ի ցոյցս եւ ի մեծարանս անձին Իւրոյ գործիցէ գայն, քանզի բանիւ միայն զբազումս բժշկեաց: Եւ դարձեալ՝ ստուգէ, թէ ճշմարիտ ըստ մարմնոյ որդի Դաւթի է՝ ըստ օրհնութեան մանկանցն, վասն այսորիկ զթայ ի կաղս եւ ի կոյրս, որպէս եւ նա (Բ. Թագ. Թ. Ե. 6-9):

Իրրեւ փեսին քահանայապետքն եւ դպիրք գարանելիսն, զոր արար, եւ գմանկրին, որ աղաղակէին ի Տաճարին եւ ասէին. «Օրհնութիւն Որդոյ Դաւթի», բարկացան եւ ասեն ցՆա. «Լսե՛ս զինչ ասեն դոքա» (Մաթթ. ԻԱ. 15-16):

Քանզի կարի իմն դառն է ախտ նախանձուն, զի ոչ միայն գայլոց օգուտ, այլեւ զանձին սխալանս ոչ տայ տեսանել, որպէս սոքա. զի յորժամ տեսին զմարգարէութիւնսն կատարեալ, զՋաքարիային ասեմ եւ զԴաւթայն (Ջաք. Թ. 9, Սաղմ. Ը. 3, ՃԺԷ. 26), այլեւ զսքանչելիսն, որ առ կոյրս եւ կաղս եղեւ, ի բարկութիւն շարժեցան եւ հեղձամղձուկ լինէին, որոց պարտ էր գոնեայ յայսմանէ միայն զՆա ճանաչել: Իսկ նոքա ըմբոստանալով ընդ հակառակս ելանէին թէ՛ «Լսե՛ս զինչ ասեն դոքա», կամ թէ՛ ընդէ՞ր ներես զօրհնութիւն, որ Աստուծոյ վայել է, ի Քեզ ձգել, կամ թէ՛ դու զանձնդ Աստուած եւ Որդի Աստուծոյ ասես, իսկ դոքա, որ զօրութեամբն Աստուծոյ խօսեցան, այժմ որդի մարդոյ համբաւեն, վասն զի Դաւթ մարդ էր: Վասն որոյ եւ Տէր իմացեալ զմիտս նոցա, զի չարախօսել զմանկունսն հանդերձեալ էին, ի Դաւթայ մարգարէութեանցն յարգէ

զբանս մանկանցն: Բայց մանկտիս, որ աղաղակէին ի Տաճարին, թուի քառասնօրեայ անդրանիկքն գոլ, որ ըստ Օրինացն եկեալ էին ի Տաճարն՝ յանդիման լինել Տեառն (Ելքից ԺԳ. 2, 12, 15, Աւր. ԺԲ. 2-6), որք յորժամ տեսին զՅիսուս մտեալ ի Տաճարն, ծանեան զՆա Տէր Տաճարին եւ սկսան աղաղակել թէ՛ «Օրհնութիւն Որդոյ Դաւթի»: Իսկ Ղուկաս ասէ թէ՛ «Սաստեա աշակերտացն Քոց, զի լոնսցին», առ որս ասաց. «Թէ դոքա լոնսցին, քարինքդ աղաղակեցին» (Ղուկ. ԺԹ. 39, 40), որ եւ եղեւ իսկ, զի ի լոնել աշակերտացն՝ մանկունքն, որք անբան էին իբրեւ զքար, սկսան երգել ընդ հրեղէն զօրացն օրհնութիւն: Եւ դարձեալ՝ կատարեցաւ ի յարութեան, զի ի փախչել աշակերտացն եւ ի լոնել՝ պատառեցան վէճք, եւ շարժեցաւ երկիր, եւ բացաւ ինքնին կնքեալ գերեզմանն, եւ աղաղակեցին մեծաձայն հնչմամբ՝ Աստուած քարոզելով զխաչեալն եւ զյարուցեալն: Նաեւ զհեթանոսս գուշակէր, որպէս ասացաւ թէ՛ «Ի քարանցս յայցանէ կարող է Աստուած յարուցանել որդիս Աբրահամու» (Մաթթ. Գ. 9). որք կարկամեալ էին իբրեւ զքար անհաւատութեամբ՝ կակղացան ոռոգմամբ Աւագանին եւ եղեն փառաբանիչք Աստուծոյ:

Ասէ ցնոսա Յիսուս. «Այո՛: Չիցե՛ք ընթերցեալ ձեր եթ՛՝ «Ի բերանոյ փղայոց եւ սարնդիեցաց կափարեցեր զօրհնութիւն» (Մաթթ. ԻԱ. 16):

Յայտնի եւս իրացն հակառակ կային, վասն այսորիկ սաստիւ բարբառի զուղղութիւն՝ զտգիտութիւն նոցա յանդիմանելով թէ՛ «Չիցե՛ք ընթերցեալ ձեր»: Բայց բարուք ասաց թէ՛ «Ի բերանոյ». քանզի ոչ թէ ի մտաց նոցա ինչ էին բանքն, այլ Նորա զօրութեանն պարգեւ, որ պարզէր գտհաս եւ զխակ լեզու նոցին յօրհնաբանութիւն: Այլեւ ուսուցանէ, թէ բնութեանս Ինքն է արարիչ, որ երաց զբերանս մանկանցն՝ նշանակ առնելով հեթանոսաց, որք երբեմն տգէտք էին եւ տխմարք, եւ յանկարծակի հնչեցին զմեծամեծսն կատարեալ մտօք: Նաեւ առաքելոցն ի մխիթարութիւն տուաւ այս, քանզի կարծէին թէ՛ զիա՞րդ մեք տգէտքս կարիցեմք պատմել զքարոզութիւնն, կանխէին մանկտիս՝ հանէին զամենայն կասկածանս ի մտաց, թէ տալոց է եւ նոցա բան ի բերան, որպէս եւ զնոցայն յօրհնութիւն շարժեաց: Տես դարձեալ եւ զմիւս եւս սքանչելիս, զի առ ծնունդ եւ առ մահ Նորա անմեղ տղայք ընդելուզեալք էին առ միմեանս. զի Յովհաննէս ցնծաց յորովայնի



մօրն ընդ առաջ Նորա (հմմտ. Ղուկ. Ա. 41), եւ կոտորեցան մանկտին ի ծննդեան Նորա (հմմտ. Մաթթ. Բ. 16-18), եւ եղեն ողկոյզք Հարսանեաց Նորա, եւ աղաղակեն տղայք ստնդիայք յօրհնութիւնս Նորա ի ժամանակի անդ չարչարանաց Նորա, որք յայտնապէս ցուցանեն, թէ Աստուած է եւ Որդի Աստուծոյ, որ զօրհնութիւնս ընդունի՝ որպէս ի վերնոցն, այսպէս եւ ի ներքնոցս՝ մինչեւ ցբուն վերջինսն, որով կատարի օրհնութիւնն լրմամբ բոլոր եղականացս:

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՅԻ**

(Նինգերորդ հապոր. գլուխ ԺԷ.)

**Հարց. Ուստի՞ էին կոյրք եւ կաղք ի տաճարին:**

Պատասխանի. Կամ ժողովեալ էին ի պրոպատիկէ աւագանն, զի յորժամ ջուրն շարժէր, մկրտէին եւ բժշկէին, կամ մուրացիկ էին նստեալ ի դուռն տաճարին, կամ լուեալ ըստ Քրիստոսի, զկոյրսն եւ զկաղսն բժշկելն եւ զիշխանութիւնն ի տաճարն մուծանել: Զի օրէն էր նոցա, որ արատաւորքն մարմնով կաղ եւ կոյրքն ի տաճարն ոչ մտանէին:

**Վասն մանկտոյն**

**Հարց. Ուստի՞ էին մանկունքն ի տաճարին:**

Պատասխանի. Կամ վասն սրբութեան Խ. (քառասուն) օրեա բերեալք էին, կամ վասն թլփատութեան, կամ յորժամ դղրդեցաւ քաղաքն, մարքն զմանկունքն ի գիրկն առեալ ելին ընդ առաջ Քրիստոսի:

**Հարց. Վասն է՞ր մանկունքն աղաղակէին:**

Պատասխանի. Ասեն վարդապետք Ժ. պատճառս: Նախ՝ զի մարգարէութիւնն կատարեսցի ի բերանոց տղայոց. «կաբարեցեր զօրհնութիւն» (Մաթթ. ԻԱ 16): Երկրորդ՝ զի ցուցցէ թէ նորա զօրութեանն էր պարգեւք, որ յանկարծակի բացաւ բերան նոցա եւ ոչ ի մտաց նոցա էին բանքն, որպէս ասէ ի «բերանոց տղայոց [եւ սփրնդիեցաց կաբարեցեր զօրհնութիւն]» (Կրն Մաթթ. ԻԱ 16): Երրորդ՝ յաւրինակ Հեթանոսաց, որ տգետք էին մտօք, յանկարծակի Հնչեցին զօրհնութիւնս Աստուծոյ: Չորրորդ՝ ի յուսադրութիւն առաքելոցն ասացաք, թէ մի՛ Հոգայք, թէ զի՞նչ խօսեցիք, զի սոյնպէս տայ ձեզ բերան եւ իմաստութիւն

Հոգին սուրբ: Հինգերորդ՝ ի յանդիմանութիւն Հրէիցն տկարքն Հասակաւ զիմաստութիւն խօսէին եւ նոքա կատարեալ Հասակաւ մոլորէին եւ ոչ Հաւատային: Վեցերորդ՝ որպէս ի ծնունդն խայտէին մանկունքն, ոմանք յորովայնի որպէս Յովհաննէս եւ արեան Հեղմամբ, որպէս մանկունքն Բեթղէմի, սոյնպէս եւ ի մահն օրհնաբանէին ուրախացեալք վասն փրկութեան աշխարհի: Եւթներորդ՝ զի թագաւորէ, թէպէտ քահանայքն վասն նախանձու չփառաբանէին ի յանմեղ մանկանց եւ ի Հոգիախօս ձերոց ընդունի: Ութերորդ՝ ցուցանէ թէ Աստուած է եւ արարիչ ընութեանս, որպէս ետ մարդկան լեզու եւ խօսք սոյնպէս զանխօս լեզուս նոցա արձակեաց: Իններորդ՝ որպէս այնմ օրի ծնունդն Հրեշտակք նոր ձայնիւ նոր փառս երգէին սոյնպէս ի մահն ըստընդիայ մանկունք, նոր լեզուաւ փառաբանէին: Տասաներորդ՝ ցուցանէ, թէ որք զբարք եւ զանմեղութիւն տղայոց ստանան, նոքա լինին արժանի իջման Հոգւոյն եւ կանխասացութեան բարբառոյ: Այսքան առ այս:





### 30. ԱՆԻԾԵԱԼ ԹՁԵՆԻՆ

Մաթթեոս ԻԱ. 18-22

#### ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՅԻ

(Գլուխ ԺԱ.)

Եւ փեսեալ թզենի մի ի վերա[յ] ճանապարհին, եկն ի նա, եւ ոչինչ եզիպ, բայց միայն փերեւ (Մաթթ. ԻԱ. 19):

Թզենի՝ թլփատեալ ժողովուրդն, յոր եկն Քրիստոս քաղցեալ եւ ոչ եզիտ պտուղ, այլ միայն ցնորական կենդանութիւն, ուստի ի գալն նորա գաւսացան:

#### ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՎ ԵՓՐԵՄ

Եւ այգուցն իրրեւ դարձաւ ի քաղաքն քաղցեալ (Մաթթ. ԻԱ. 18):

Եւ զի՞ արդեւք այգուցն քաղցեալ, յորժամ կամէր թոյլ տայր մարմնոյն զգալ իւրում կարեացն:

Եփես, ասէ, թզենի մի առ ճանապարհաւն, եկն ի նայէ, ոչ ինչ եզիպ (հմմտ. Մաթթ. ԻԱ. 19):

Իսկ Մարկոս ասէ, թէ չէր իսկ ժամանակ պտղոյ (հմմտ. Մարկ. ԺԱ. 13) եւ վասն է՞ր անէծ զնայ: Թուի թէ վասն աշակերտացն, զի քաջալերեսցին, քանզի ամենայն ուրէք բարերարութիւնս եւեթ եցոյց եւ ո՛չ զոք պատժեաց: Պարտ եւ պատշաճ էր զպատժաւորական զաւրութիւն իւրոյ ցուցանել զհանդէս, զի մի ոք ասիցէ, թէ վասն զի ոչ կարաց զանձն ապրեցուցանել ըմպրոնեցաւ: [Ա]նէծ զթզենին զի բարեկամացն եղիցի նշան եւ թշնամեացն սքանչելիք եւ երկիւղ, զի աշակերտքն հաստատեսցին ի բանի անդ նորա եւ աւտարքն զարմասցին ընդ զաւրութիւն նորա: Քանզի զամենայն ինչ բարւոք գործեաց եւ մերձ ի չարչարել լինէր նայ որպէս կարծեցաւն իսկ, թէ վասն զի ոչ գոյր նմա զաւրութիւն ըմբռնեցաւ: Կանխեսցեցոյց ի ձեռն անշունչ տնկոյն, զոր զամաքեցոյց, եթէ կարող է նայել զխաչահանունսն բանիւ սատակել, որպէս աստ յայսմ վայրի զայս յայտնեաց վասն աստուածեղէն զաւրութեան

իւրոյ: Սատանայ կամեցաւ տուժել, եւ Տերն յայտնիս արկ ի վերայ նորա զտոյժս: Արդ, այն որ եկն առնուլ զտոյժս ծածուկս, ի մարդկութենէ անտի, յերիս տեղիս տոյժս յայտնիս արկ ի վերայ նորա՝ զգերեզմանս քակեաց եւ փշրեաց եւ զխողան ի ծովու անդ հեղձոյց եւ զթզենիցն յարմատոյ ցամաքեցոյց: Զի ի քակել գերեզմանացն հաւատացելոց պատառեսցին սիրտք անհաւատիցն եւ ի հեղձնուլ հրամակի խոցիսն հեղձցի մոլորութիւն ապստամբողացն եւ ի ցամաքել թզենոյն առանց յանցանաց աւերեսցի յերուսաղէմ վասն յանցնանաց իւրոց: Դարձեալ զի անէծ զթզենին, զի գրեալ է այսպէս՝ յորժամ հնձեաց դու զհունձս արտոյ քո, թող զափնիսն աղքատաց եւ յորժամ կթեցես զթզենիս քո նոյնպէս արասցես, իսկ տէր թզենոյն ոչ եղու ունկնդիր աւրինացն, այլ արհամարհեաց զնա, եկն տեր եզիտ, զի ոչ թողեալ էր ինմաճիւռ, անէծ զնայ զի մի կերիցէ ի նմանէ տէրն նորա, որպէս զի եւ նայ ոչ եթող սրբոց եւ այրեաց: Դարձեալ ասէ, թէ զոր աւրինակ գերգեսացիքն, զի եղին իւրեանց սահման զի մի ելցեն առ նայ: Հեղձոյց զխողան զի միտս նոցա զուարթացուցէ, զի ելցեն առ նայ ակամա կամս, այնպէս եւ տէր թզենոյն, եղ ի միտս իւրում զի մի ելցէ առ նայ ակամայ, զի յամենայնի զպատճառս կենաց մարդկութեանս կամի նայ:

Դարձեալ ասի, թէ ի ժամուն յորժամ մեղաւ Ադամ եւ մերկացաւ ի փառաց անտի, զոր զգեցեալ էր, տերեւով թզենոյ ծածկեաց զիւրն մերկութիւն: Եկն Տէր մեր եւ համբեր չարչարանաց վասն նորա, զի բժշկեսցէ զվերս հարուածոցն Ադամայ, զի եւ զհանդերձ փառաց մերկութեան նորա տացէ: Վասն այնորիկ ցամաքեցոյց թզենին, որպէս զի յայտ արասէ, թէ ոչ այնուհետեւ պիտոյ է տերեւ թզենոյ ի հանդերձս Ադամայ, քան զի դարձաւ նայ անդէն ի փառսն իւր յառաջինս: Եւ զի եկն ի թզենին, ոչ վասն քաղցի ինչ, այլ կարեւոր. վասն աշակերտոցն զարմանալոյ, թէպէտ եւ բազում իսկ նշանք ի վաղուցհետէ լեալ էին, այլ այն նոր իմն էր: Վասն որոյ եւ ոչ այլ ինչ տունկ, այլ որքան զամենայն դաւարագոյն էր, եցոյց զսքանչելիսն, զի այնու իսկ առաւել յայտնի լիցի զաւրութիւնն եւ ուսանիցից թէ վասն նոցա եղեւ այն, զի զնոսա ի քաջալերութիւն կրթեսցի եւ զի այսպէս է լուր յաջորդացն:

Դուք, ասէ, եւս մեծամեծս գործեցէք, թէ կամիք հաւատով եւ աղաւթիւք խիզախել, տեսանես, զի վասն նոցա եղեւ այն յամենայն, առ ի չզանգիտել եւ երկնչել ի նենգութեանց: Եւ կրկին ան-



գամ ասելովն, յորդորէ եւ պնտէ յաղաւթս, այլ ամբարտաւան եւ ուռուցեալ հրէայքն, քանզի զնշանսն պարսաւել չկարէին զվաճառականացն մերժելոյ ի տաճարէն զիրսն ի մէջ բերէին:

### ՅՈՎՏԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՅԻ

(Գլուխ ԻԱ.)

Եւ այգուցն իբրեւ դարձաւ անդրէն ի քաղաքն, քաղցեալ (Մաթթ. ԻԱ. 18):

Ոչ է կատարեալ արանց կամ վարդապետաց, այլ տղայոց եւ կամ անարգ անդէորդաց՝ տարածամ ճաշակել, այլ աստ կոչեաց յանսովոր ժամանակի, զի պատճառս տացէ աստուածագործ նշանացն կատարել: Եւ ա՛յլ ազգ. զի յորժամ կամէր, թոյլ տայր մարմնոյն զգալ իւրում կարեացն, որպէս առ փորձութեանն, զի մի՛ առաջօք, այլ ստուգապէս մարդ լեալ ծանիցի. կամ թէ՛ ո՛չ կերակրոյ պէտք էին, այլ հաւատոց եւ գործոց բարեաց միշտ քաղցնոյր: Եւ դարձեալ՝ «այգ» կամ զյարուլթիւնն ասէ, յորում քաղցեալ եւ եկեր ընդ աշակերտսն, որպէս զի զյարուլթիւնն ճշգրտեսցէ, եւ կամ զմիւսանգամ գալուստն, յորժամ դառնայ միւսանգամ յաշխարհ, յորում կարօտ լինի փրկութեանն հրէից:

Եւ րեսեալ թզենի մի ի վերայ ճանապարհին՝ եւ եկն ի նա եւ ոչինչ եգիպ ի նմա, բայց միայն րերեւ (Մաթթ. ԻԱ. 19):

Մարկոս ասէ, թէ՛ չէր ժամանակ պտղոյ (հմմտ. Մարկ. ԺԱ. 13), քանզի ի մարտի ամսեան՝ ծառոյ պտուղ ոչ գտանի, մանաւանդ թզենւոյ, այլ ի հոկտեմբերի: Ապա ընդէ՞ր եկն: Ո՛չ անգիտութեամբ Ամենատեսն չոգաւ առ ծառն, այլ որպէս Ադամայ ասացաւ. «Ո՛ր ես» (Ծննդ. Գ. 9), եւ Կայենի թէ՛ «Ո՛ր է եղբայր քո» (հմմտ. Ծննդ. Դ. 9), եւ քերցն Ղազարու թէ՛ «Ո՛ր եղիք գնա» (Յովի. ԺԱ. 34), նոյնպէս եւ աստ՝ զի ցուցցէ ճշմարիտ զԱդամայն առեալ անգիտութիւն, միանգամայն եւ ճանապարհ նշանացն արասցէ: Այլ օրինակաւ ոմանք զթզենին նշանակ հրէիցն ասեն, որ ի վերայ ճանապարհի Օրինացն տնկեալք էին, յորս եկն Քրիստոս խնդրելով պտուղ՝ ըստ Օրինացն գործս, եւ ոչ եգիտ, «բայց միայն տերեւ», այսինքն՝ կեղծաւորութիւն համայն եւ բարեձեւ աւանդութիւն զծերոցն, խտրութիւն կերակրոց եւ լուսցումն մարմնոց, եւ պահեստ շաքաթուց, այլեւ

զԱբրահամու որդիութիւնն եւ զԻսրայէլ անունն, յորմէ ոչինչ օգտեցան, քանզի եբարձ ի նոցանէ եւ տարագիր արար զնոսա:

Եւ դարձեալ՝ է թզենի մարդ տնկեալ ի ճանապարհի կենցաղոյս, որպէս զի տացէ Աստուծոյ հաւատս ուղիղս եւ գործս մաքուրս: Իսկ եթէ ոք ոչ տացէ պտուղս գործոց Տնկողին իւրոյ, յորժամ գայցէ յերկնից եւ ոչինչ յասացելոցս գտանէ ի նմա, միայն տերեւ սնտի յուսոյ, զի կարծէ, թէ Աստուած ողորմած է եւ ոչ տանջէ, եւ զի ժամանակն չէ պտղոյ, որպէս ասաց Մարկոս (հմմտ. Մարկ. ԺԱ. 13), «զի բանք եւ գործք լուեն յայնժամ՝ ըստ Գրոց, եւ փակի դուռն ողորմութեան՝ որպէս յիմար կուսիցն (հմմտ. Մաթթ. ԻԵ. 1-13), եւ տերեւ յուսոյն ոչ զերծուցանէ զնոսա ի պատժոց, այլ լսեն զահագին անէծս թէ՛» «Երթայք յինէն, անիծեալք, ոչ գիպեմ զձեզ» (հմմտ. Մաթթ. ԻԵ. 41), որպէս ասէ յաջորդս:

Եւ ասէ ցնա. «Մի՛ այսուիեպեւ ի քէն պտուղ եղիցի յաւիտեան», եւ առ ժամայն չորացաւ թզենին (Մաթթ. ԻԱ. 19):

Է՞ր վասն անէծ զթզենին՝ քննելի է: Թուի թէ՛ վասն աշակերտացն, զի քաջալերեսցին եւ հաստատեսցին ի բան Նորա, եւ օտարքն զարմասցին ընդ զօրութիւն Նորա: Քանզի զամենայն ինչ բարւոք գործեաց եւ ոչ զոք պատժեաց, պարտ էր եւ զպատժական զօրութեանն Իւրոյ ցուցանել զհանդէս, մանաւանդ մերձ առ խաչին, զի մի՛ ասիցեն, որպէս եւ կարծեցաւ իսկ, թէ՛ ոչ գոյր ի նմա զօրութիւն, վասն այնորիկ ըմբռնեցաւ: Կանխաւ ծանոյց զզօրութիւնն ո՛չ յայլ ինչ տունկ, այլ ի թզենին, որ առաւել ունէր զկանաչութիւնն, որպէս զի ցուցցէ, թէ՛ կարօղ է եւ զխաչահանունսն սատակել բանիւ, եթէ կամեսցի, վասն որոյ եւ ասէ թէ՛ «Իբրեւ տեսին աշակերտքն՝ զարմացան»: Եւ երկրորդ՝ եկն նա առնուլ գտոյժս ծածուկս ի մարդկութենէ անտի. յերիս տեղիս յայտնիս արկ ի վերայ նորա՝ զգերեզմանս քակեաց եւ փշրեաց (հմմտ. Մաթթ. ԻԷ. 51-52), եւ զխոզսն ի ծովու անդ հեղձոյց (Մաթթ. Ը. 30-32), եւ զթզենին յարմատոյ ցամաքեցոյց, զի ի քակել գերեզմանացն՝ պատառեսցին սիրտք անհաւատիցն, եւ ի հեղձնուլ երամակացն՝ հեղձցի մոլորութիւն ապստամբողացն, եւ ի ցամաքել թզենւոյն առանց յանցանաց՝ աւերեսցի Երուսաղէմ վասն յանցանաց իւրոց, որպէս եղեւն ի Տիտոսէ եւ ի Վեսպիանոսէ բնաջինջ աւերակ ամայի ի շինուածոց իւրոց:



Եւ երրորդ՝ վասն այնորիկ անէծ, զի գրեալ էր յՕրէնսն թէ՛ «Յորժամ Հնձեացես զՀունձս, թող զափնիս աղքատաց, եւ յորժամ կթեսցես զայգիս քո եւ զթղենիս քո, նո՛յնպէս արասցես» (հմմտ. Աւար. ԺԹ. 9-10), իսկ տէր թղենւոյն ոչ եղեւ ունկնդիր Օրինացն, այլ արհամարհեաց, եկն Տէր Օրինացն եւ անէծ զնա, զի մի՛ կերիցէ ի նմանէ տէր նորա, զի եւ նա ոչ եթող որբոց եւ այրեաց: Եւ չորրորդ՝ զոր օրինակ գերգեսացիքն եղին ի մտի, զի մի՛ ելցեն առ Նա, Հեղձոյց զխոզս նոցա, զի զուարթացուցէ զմիտս նոցա ելանել առ Նա յակամայ կամս, այնպէս եւ տէր թղենւոյն եղ ի մտի, զի մի՛ ելցէ առ Նա, ցամաքեցոյց զթղենին Նորա, զի ելցէ առ Նա ակամայ, վասն զի պատճառ կենաց մարդկութեանս ամենայն ուրեք կամէր Նա: Հինգերորդ՝ քանզի ի ժամուն յորժամ մեղաւ Ադամ՝ մերկացաւ ի փառացն զոր ունէր եւ ի տերեւոյ թզոյ արար իւր սփածանելիս, եկն մարմնով Տէր մեր յերկիր, անէծ զթղենին յօրինակ մեղացն Ադամայ եւ բեւեռամբն ի խաչին, որպէս զի յայտ արասցէ, թէ ոչ այնուհետեւ պիտոյ է տերեւ թղենւոյ ի Հանդերձս Ադամայ, քանզի զգեցաւ նա դարձեալ զփառս իւր առաջինս:

Վեցերորդ՝ եկն յերկնից Փրկիչն զկեանս մարդկան գտանել, զոր քաղցն յայտնէ, եւ եզիտ զլայն եւ զընդարձակ ճանապարհն յայտնեալ, եւ չոգաւ առ նա եւ ետես զնա սաղարթօք վարսաւորեալ, այսինքն՝ աղանդօք մեղաց ծաղկեալ, եւ ոչ ունէր պտուղ, զի ոչ էր ժամանակ: Քանզի զիա՞րդ կարէր մահն պտղաբերել ի գալն Քրիստոսի, զի թագաւորեաց յԱդամայ մինչ ի Մոսէս, այս է՝ յՕրէնսն, որոյ ասաց թէ՛ «Մի՛ եւս եղիցի ի քէն պտուղ յաւիտեան», այսինքն՝ նախ քան զիմ գալուստն պտղաբերեցեր զմահն, ահա Ե՛ս եկի՛ Յարութիւնս, արդ ի գալս Իմում մի՛ եւս եղիցի ի քէն պտուղ յաւիտեան. եւ վաղվաղակի գօսացաւ թղենին, եւ լցաւ զիրն թէ՛ «Ընկլաւ, մահ, յաղթութիւն քո» (հմմտ. Ա. Կոր. ԺԵ. 54, Ես. ԻԵ. 8):

Իբրեւ Կրիստոս աշակերտքն, զարմացան եւ ասեն թէ՛ «Զիա՞րդ վաղվաղակի ցամաքեցաւ թղենին» (Մարթ. ԻԱ. 20):

Որպէս ասացաք, թէ վասն սոցա արար, զի թէպէտ բազում նշանք տեսեալ էին, սակայն այս նոր իմն էր, վասն այնորիկ սքանչացան ոչ միայն ի չորանալն, այլեւ յարագ գօսանալն, եւ այն՝ բանիւ: Այսպէս եւ յետ սակաւ ժամանակի, մինչ զի աշակերտքն տակաւին կենդանի էին, տեսին աւերեալ զԵրուսաղէմ, եւ բարձեալ

զքահանայութիւնն, եւ խափանեալ զգոհն եւ զմարգարէութիւնն, եւ ցամաք յաստուածխօսութեանն օրինաց մնացին՝ վտարեալք ի ծառայութիւն, զոր տեսեալ աշակերտացն զբանն Տեառն Համայն եւ զառակն, զբանն թէ՛ «Ոչ մնացէ այդր բար ի բարի վերայ, որ ոչ քակվեսցի» (Մարթ. ԻԴ. 2), իսկ զառակն՝ զթղենւոյն իրաց, եւ ծանեան, թէ ի գլուխ ել ասացեալ եւ գործեալ ի Տեառնէ աւերման նոցա Հանգամանքն, ընդ որս եւ զարմացան իսկ: Եւ դարձեալ՝ յորժամ տեսին զՅիսուս յարուցեալ ի մեռելոց, զարմացան եւ ասեն, թէ զիա՞րդ վաղվաղակի բարձաւ զօրութիւն մահու ի մարմնոյ Նորա՛ ըստ այնմ թէ՛ «Գնաց ընդ միտս զարմացեալ, թէ զինչ եղեւ» (Ղուկ. ԻԴ. 12), առ ի լրումն մարգարէութեանն Յորայ թէ՛ «Զարմանք կալան զճշմարիտս ի վերայ այսցիկ» (Յոր ԺԷ. 8):

Պապասխանի եր Յիսուս եւ ասէ ցնոսա. «Ամէ՛ն ասեմ ձեզ. եթէ ունիցիք հաւաքս եւ ո՛չ երկմտիցէք, ոչ միայն զթղենւոյդ առնիցէք, այլ թէպէտ եւ լերինդ ասիցէք՝ բարձիր եւ անկիր ի ծով, եղիցի: Եւ զամենայն ինչ, զոր եւ խնդրիցէք յաղօթս հաւաքովք, առնուցուք» (Մարթ. ԻԱ. 21-22):

Տեսանե՞ս՝ զիա՞րդ վասն նոցա եղեւ այն, զի մի՛ զանգիտիցեն եւ երկնչիցին ի նենգութեանց, եւ ոչ միայն այս, այլ թէ եւ կատարեալ Հաւատով յաղօթս խիզախեսցին, Հանգոյն նմին եւ այլ եւս մեծամեծս գործեսցեն, այսինքն՝ ոչ միայն զմեղս թողցեն մարդկան, զոր թղենին առակէ, այլեւ զառաջնորդ մեղացն զլեառն Հպարտ եւ զմեծ՝ յանդուռն ընկղմեսցեն, որպէս Տէրն: Եւ զի կրկնէ թէ՛ «Զոր ինչ եւ խնդրէք՝ առնուցուք», առ ի Հաստատել զասացեալն՝ միանգամայն եւ յաղօթս յորդորէ Հաւատով, որք նպաստ լինին գործելեացն: Բայց Հաւատս աներկմիտս յո՞ ասաց ունել՝ Հայցելի է: Կամ թէ ի խնդրելն ոչ տարաբերել մտօք, թէ կատարէ՞ Աստուած զխնդրելին, թէ ոչ, կամ եթէ յինքն իբր յԱստուած եւ յՈրդի Աստուծոյ, թէպէտ ի չարչարանս խաչի եւ մահու տեսանիցէք զԻս եկեալ, մի՛ երկմտիցիք, ասէ, ի Հաւատալն: Եւ զի Հաւատն միայն չէ բաւական ի ներգործութիւն Հրաշխցն, յարէ եւ զաղօթսն, որ կատարումն է ամենայն գործոց բարեաց, զի Հաւատք ուղիղ եւ գործք մաքուր՝ ամենայն ուրեք եւ յամենայն իրս կատարեն զխնդրելին:



**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՑԻ**

(Նինգերորդ հապոր գլուխ ԺԸ.)

**ՎԱՍՆ ԹՁԵՆՈՅՆ**

**Այգուցն քաղցեալ** (տե՛ս Մարթ. ԻԱ. 18):

Երեք անպատշաճութիւն երեւի: Նախ՝ զի այգուցն քաղցեալ, զի բնական է ի Զ. ժամն քաղցնուլ: Երկրորդ՝ զի կրկին անգիտացաւ մին զպտուղն եւ միւսն զժամանակն, զի Նիսան եւ Մարտի ժամանակ ո՛չ է պտղի: Երրորդ՝ զի անմեղ անէծ զթղենին: Քաղցն է ցանկութեանն, անգիտանալն՝ բանին մասին, անիծանելն՝ ցաս(մասն): Առաջինն ցուցանէ, զի՞ կամաւ քաղցեալ, որպէս յորժամ Խ. օր պահեաց: Նոյնպէս եւ միջինն զի՞ կամաւ անգիտացաւ, որպէս Հայր սսէր զԱդամ՝ «Մը ես» (Ծննդ. Գ. 9), եւ զԿայեն՝ «Մը է եղբայր քո» (հմմտ. Ծննդ. Դ. 9): եւ զՄովսէս՝ «Ջի՛նչ է ի ձեռին քո» (տե՛ս Ելից Դ. 2): Իսկ վասն վերջնոյն բազում դնեն պատճառս վարդապետք, զոր ժողովեսցուք մեք ժԵ. գլուխս: Նախ՝ վասն աշակերացն, զի քաջալերեաց զնոսա, զի ունէին երկիւղ եւ տրտմութիւն, ովսաննայիւն զտրտմութիւնն մերժեաց եւ թղենեալն զերկիւղ հրէիցն փարատեաց: Երկրորդ՝ կրկին զօրութիւն է Աստուծոյ, այսինքն՝ արարչական եւ արքունական, որ է բարերարեալ, որ զբազումս արար եւ աստ պատժէ, զի մի ասիցեն, թէ ոչ կարաց զանձն փրկել ըմբռնեցաւ: Երրորդ պատճառաւ անէծ զթղենին, զի ազդումն աստուածութեան իւրոյ ետ ամենեցուն բարեկամացն նշան բերկութեան եւ թշնամեացն՝ երկիւղ: Աշակերտքն հաստատեցան եւ աւտարքն զարմացան: Չորրորդ՝ զի ցուցցէ զխոնարհութիւն եւ զքաղցրութիւն առ նենգաւորսն իւր, որ զանշունչ տունկն ցամաքեցոյց կարէր զնոսա սատակել: Հինգերորդ՝ որ կամէր բառնալ զպատիժ մարդկան Գ. ինչ պատժեաց, այսինքն՝ զվէմս փշրեալ, եւ զխոզսն հեղձեալ եւ զտունկն զօսացուցեալ: Զի վիմովն պատառեսցին սիրտք անհաւատից եւ խոզիւքն հեղձցին մոլար խաբէութիւք չարին եւ անմեղ տնկովն Երուսաղէմ զօսացի, վասն խաչի յանցանաց իւրոց ըստ որում ձայնն ի տաճարին՝ «Գնամք աստի, գնամք եւ այլ ոչ զառնամք», որպէս պատմէ Յօսեպոս: Վեցերորդ՝ օրէն էր հրէից, զայգի եւ զծառս ոչ առնէլ ճռաքաղ եւ թէ «գեզերս արտի քո մի քաղեսցես»: Եւ տէր ծառոյն, անարգեալ զօրէնս, արար ճռա-

քաղ, վասն վրէժխնդրութեանն աւրինացն անէծ զտունկն: Եւթներորդ՝ գերգեսացիքն կամ ոչ ելին առ Քրիստոս կոտորեաց զխոզսն եւ ակամայ եկին, սոյնպէս եւ Տէր յանդիմանեաց զտունկն եւ ի հարկէ եկն: Ութերորդ՝ զի յորժամ մեղաւ Ադամ եւ մերկացաւ ի փառաց եւ թղենեալ ծածկեաց զմերկութիւնն, եկն Տէրն եւ վճարեաց զպարտս նորա եւ չորացոյց զթղենին, զի ոչ է պիտոյ տերեւ նորա ծածկոյթ Ադամայ, զի դարձեալ նայ առաջին փառս իւր: Իններորդ՝ անէծ զթղենին ո՛չ վասն քաղցի, այլ վասն աշակերտացն զարմանալոյ, զի նոր իմն նշանն ի թղենին որ դալարագոյն է քան զամենայն տունկ, որպէս ասէ հետակայ, ոչ միայն թղենոյդ, այլ թէ լերինդ ասիցէք ելցի Տասներորդ՝ զի ցուցցէ թէ արարիչ է բնաւից, կարէ տնկել եւ խել: Մետասաներորդ՝ յօրինակ հրէիցն, որ զուարճ էին օրինացն ձեւով եւ դատարկ ի գործոց, վասն որոյ խլեաց զնոսա եւ չորացան յարմատոց: Երկոտասաներորդ՝ թղենին դառն եւ անիծաւ, սոյնպէս դառնացեալքն մեղօք չորացին եւ սատակեսցեն յերկրէն կենդանեաց, ի միջոյ արդարոց: Երեքտասաներորդ՝, յօրինակ կեղծաւորաց, որք միայն ունէին զձեւ առաքինոյ եւ զպտուղ զոր զկարի մեղաւորսն ընդմէջ կտրել հրամայէ, եւ զբաժինն ընդ կեղծաւորսն դնել, թէեւ ոմանք վասն սատանայի ասեն զայս կեղծաւոր: Չորէքտասաներորդ՝ ասեն թէ օձն արտաքոյ դրախտին ել ի ծառ թղենի եւ պատրեաց զԵւայ, անէծ զայնպիսի ենթակայ եւ պատճառ խաբեութեան մարդոյն: Հնգետասաներորդ՝ ասեն ոմանք, թէ պտուղն զոր կերաւ Ադամ, այդ էր, վասն այն Քրիստոս անէծ զի եղիւ պատճառ եւ առիթ անկման մերոյ ի դրախտէն, անէծ զնա, զի վերստին տալոց էր գերագոյն փառք քան զդրախտին:

Հարց. Որպէ՞ս չորացաւ:  
Պատասխանի. Նախ՝ ամենայն տունկ յերկար ժամանակաւ չորանայ, իսկ այս յանկարծակի: Երկրորդ՝ զի ի տերեւոյն եւ ի ստեղանցն թառամի, եւ սա յարմատոյն չորացաւ: Երրորդ՝ զի կեղեւն սպիտակացեալ որպէս զաստղ փայլէր, վասն որոյ զարմացան: Իսկ որ ասէ օրինակաւ լերին ի դէմս հպարտացեալ լերինն է իմանալ, որպէս ասացաւ յայն մասին ի<sup>1</sup> Համարն:

<sup>1</sup> Ո՛չ այս, ո՛չ 5589 ձեռագրում համարի թիվը նշված է:



ՎԱՍՆ ԽՆԴՐՈՅ

Հարց. Ձի՞նչ է հաւատով խնդրիցէք զամենայն:

Պատասխանի. Չորս ինչ հարկաւոր է խնդրոյն: Նախ՝ հաւատ աներկմիտս: Երկրորդ՝ գործք բարեաց: Երրորդ՝ աղօթք ստէպ ի մտաց: Չորրորդ՝ վասն բարեաց խնդիրք:

Մարկոս ԺԱ. 12-14

ԲԱՐՍԵՂ ՄԱՇԿԵԻՈՐՅԻ

(Գլուխ ԺԱ.)

[Բան.] Եւ ի վաղիւ անդր մինչդեռ ելանէին ի Բեթանիայ քաղցեալ: Եւ ետես թզենի մի ի բացուստ փերեալից եւ եկն թէ գրանիցէ, ինչ ի նմա. եւ իբրեւ եկն ի նմա ոչինչ եգիտ, բայց միայն փերեւ, զի ոչ իսկք էր ժամանակ պարոյ: Պատասխանի ետ եւ ասէ ցնա. մի եւս որ յաւիտեան ի քէն պարուղ կերիցէ եւ լսէին աշակերտքն նորա (Մարկ. ԺԱ. 12-14):

[Մեկնութիւն.] Քաղցնուլս աստ ըստ կարծեաց աշակերտացն էր, եւ ոչ եթե ստուգապէս քաղցեալ էր:

Եւ գիտելի է, զի առաւօտ էր. նա եւ թէ քաղցեալ էր, ու արգելոյր զնա ուտել եւ ապա զնալ, զի ի տունն Ղազարու՝ բարեկամին իւրոյ էր, ուստի յայտ է, թէ ըստ կարծեաց աշակերտացն գրեցաւ այս:

Եւ զոր օրինակ՝ այս ըստ կարծեաց նոցա էր, նոյնպէս եւ կարծելն թէ վասն այնորիկ անէծ, զի ոչ եգիտ ի նմա պտուղ, վայ անպտոյց:

Եւ է՞ր վասն անիծանիցէ, զի յամենայն ուրեք բարերարութիւն եւեթ եցոյց եւ ոչ զոք պատժեաց. պարտ էր եւ զպատժողական զօրութիւնն ցուցանել, վասն երկուց իրաց: Մի վասն աշակերտացն, զի իմասցին, եթէ ոչ ի տկարութենէ չարչարեցաւ, այլ կամօք իւրովք, եւ միւս՝ եւս՝ վասն հրէիցն, զի զղջասցին ընդ գործսն եւ ի միտ առցեն, զի եթէ կամեցեալ էր ի ժամ խաչին իւրոյ, չորացուցանէր զնոսա որպէս թզենին, այլ ոչ կամեցաւ զայս ի մարդիկ ցուցանել, զի մարդասէր էր: Դարձեալ՝ զի թէ ի մարդիկ ցուցեալ էր այս, ասէին փարիսեցիքն, թէ վասն մեղաց իւրեանց եղեւ այն եւ ոչ թէ ի զօրութենէ նորա, յաղագս այսորիկ ի տունկն եցոյց զսոյն երբեմն ի վէմս եւ յանասունս:

Ջսոյն յայտնէ եւ աւետարանիչն ասելով, եթէ չէր իսկ ժամանակ պտոյր, զի նիսան էր, յորժամ ծառքն պտկեն եւ ծաղկին եւ ոչ թէ պտուղ ինչ ունիցին: Որով յայտ է, թէ ոչ վասն քաղցի ինչ եկն անդր, այլ վասն աշակերտացն զարմանալոյ, վասն որոյ եւ ոչ յայլ ինչ տունկ, այլ ի թզենի, որ քան զամենայն դալարագոյն է:

Ձի թզենին յորժամ հատանի, վասն բազում դալարութեան իւրոյ ի բազում աւուրս, ապա ցամաքեալ լինի, վասն այսորիկ նովալ եցոյց զզօրութիւնն իւր: Եւ ըմբռնեցաւ, զի կամեցաւ որպէս եւ եկն նա յերկնից, զի հաճոյ եղեւ նմա: Դարձեալ՝ ասի, թէ յորժամ մերկացաւ Ադամ, ի փառացն, զոր զգեցեալ էր, տերեւով թզենւոյն զմերկութիւնն իւր ծածկեաց. եկն Քրիստոս ցամաքեցոյց զթզենին եւ մեռաւ վասն Ադամայ, զի յայտ արասցէ, թէ այլ եւս չէ պիտոյ նմա տերեւ թզենւոյն, զի զգեցաւ նա զփառս իւր առաջինս: Քաղցեալ ասէ:

Ձի ցուցցէ, թէ ճշմարտապէս մարդկային մարմին ունէր, դարձեալ որպէս քաղցեալն եւ ծարաւին ի խնդիր են կերակրոյ եւ ըմպելեաց, այսպէս եւ նա քաղցեալ եւ ծարաւի էր փրկութեան մարդկան եւ ի խնդիր ել փրկել զմարդն, որով կերակրեալ լինէր, որպէս ասաց առ աշակերտսն, թէ իմ կերակուր այն է, զի արարից զկամս առաքչին իմոյ (հմմտ. Յովհ. Դ. 34) եւ փրկեցից զմարդիկ, զոր եւ սամարացիքն ասէին, թէ սա է ճշմարիտ փրկիչն աշխարհաց (հմմտ. Յովհ. Դ. 42):

Արդ՝ քաղցեալ փրկութեան մարդկան. եւ ետես թզենի մի ի բացուստ տերեւալից: Որպէս խօսէր զխօսս իւր առակօք, այսպէս եւ զգործս գործէր առակօք: Ձի որպէս առակաւոր բանիւքն, զոր խօսէր, զայլ իրս յայտնէր, իբրեւ հին եւ նոր տիկքն, եւ գինին (տրնս Մարթ. Թ. 17, Մարկ. Բ. 22, Ղուկ. Ե. 37) եւ մանանեխն (տրնս Մարթ. ԺԳ. 31, Մարկ. Դ. 31, Ղուկ. ԺԳ. 19), եւ մարգարիտն (տրնս Մարթ. ԺԳ. 45), եւ խմորն (տրնս Ղուկ. ԺԳ. 21) եւ սերմնացանն (տրնս Մարթ. ԺԳ. 1, Մարկ., Դ. 1, Ղուկ. Ը. 4) եւ այլքն: Այսպէս եւ այժմ քաղցնուլս եւ գալն ի թզենին եւ չորացուցանելն, զայլ իրս գուշակէր:

Թզենին նշանակէ զժողովարանն հրէից, զգեցեալ եւ զարդարեալ պատուիրանօք մարդկան արտաքուստ ի ցոյցս մարդկան, իսկ ի ներքոյ տգեղ եւ աղտեղի, որով զպտուղն ուրանայ յամենայն ժամ:

Եւ իբրեւ եկն ի նմա ոչ ինչ եգիտ, բայց միայն տերեւ:



Արդ՝ որպէս ծառ զարդարեալ տերեւով ունայն ի պտղոյ, այսպէս եւ հրէայքն զարդարեալք էին ուսմամբք օրինացն եւ մարգարէիցն, ունայն ի գործոց բարեաց, որ է պտուղ գիտութեան, որպէս ասէ Պօղոս, դու, որ հրէայդ ես, յեցեալ ես յօրէնսն եւ պարծիս յԱստուած, եւ գիտես զկամս նորա, եւ ընտրես զլաւն եւ խրատեալ ես յօրինացն (հմմտ. Հռոմ. Բ. 17-18), որովք ոչինչ օգտելոց էին լոկ գիտութեամբ բարեացն, առանց գործովք զնոյն կատարելոյ, այլ որպէս ծառ մի անպտուղ հատանին եւ ի հուր արկանին: Քաղցեալ եւ ետես թղենի մի տերեւալից:

Այսինքն՝ ցանկանալով Քրիստոս փրկութեան մարդկային ազգի եւ տեսաւ զՀրէաստան, որ ունէր զբանս օրինացն եւ մարգարէիցն եւ խնդրէր ի նմանէ պտուղ բարեգործութեան դտանել՝ ուսուցանելով բանիւ եւ սքանչելագործելով եւ ոչ եգիտ, վասն որոյ դատեաց զնա յաւիտենական ամլութեամբ: Արդ, եւ դու եթէ ոչ կամիս լսել ի դատաստանին ի Քրիստոսէ, թէ երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենից, զի քաղցեալ եւ ոչ ետուք (հմմտ. Մաթթ. ԻԵ. 41) ինձ ուտել:

Տե՛ս զանձն քո, զի մի լինիցիս ծառ անպտուղ, իսկ աղքատ Քրիստոս եւ քաղցեալ զպտուղ ողորմութեան տուր:



### 31. ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ ԴԻՒԱՆԱՐԻՆ Ի ԿԱՓԱՌՆԱՅՈՒՄ

Ղուկաս Դ. 31-37

ԻԳՆԱՏԻՈՍ ՍԵՒԼԵՌՆՅԻ

(Գլուխ Դ.)

Եւ իջանէ անփի ի Կափառնաւում, ուսուցանէ իշխանութեամբ եւ զարմանան ընդ իմաստութիւն Նորա (Ղուկ. Դ. 31):

Ի միջոցի աստ է այն, զոր Մատթէոս գրեաց. «Տեսալ, ասէ, զժողովուրդն՝ ել ի լեառնն եւ նստաւ անդ եւ բացեալ զքերան Իւր ուսուցալը զնոսս» (Մաթթ Ե. 1): Յետ այսորիկ իջանէ ի Կափառնաւում: Ածեն առաջի Նորա գիւհար եւ Նա ծածուկ աստուածային զաւրութեամբն սկսաւ չարչարել զնա: Իսկ նա, որ ի լերին անդ զմեծութիւն աշխարհի եղ առաջի եւ հայցէր երկրպագութիւն եւ խոստանայր տալ զայն ի պարգեւս՝ այժմ տաղնապեալ, նեղեալ՝ աղաչէ իբրեւ զծառայ ոք՝ չարչարեալ ի Տեառնէ: Եւ Յիսուս ասէ՝ «պապանձեաց եւ ել». եւ նա առժամայն փախստական լինի, եւ զարմանան տեսողքն, զի ոչ, ըստ աւրինի արանց սրբոց, աղաւթիւք հալածէ զդեւս, այլ իշխանութեամբ, որպէս տէր ծառայի սաստէ:

ՄԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

(Գլուխ Դ.)

Էջ բնակեցաւ ի Կափառնաւումն, ինքն եւ մայր իւր եւ եղբարք իւր (հմմտ. Ղուկ. Դ. 31):

ԻԳՎ. Վասնզի կարի նախանձու չարութեամբ լի էին նազարացիքն: Վասն այնորիկ որոշեաց զիւրսն ի նոցանէ, զի ո՛չ էր ժամանակ չարչարանս կրել վասն նորա:

«Գայ ի Կափառնաւում ի սահմանս Զաբողոնի եւ Նեփթաղէմի» (Մաթթ. Դ. 13):

ՍՏ Զաբողոն թարգմանի բնակութիւն, իսկ Նեփթաղէմ՝ ընդարձակութիւն: Վասնզի ընդարձակեցան շնորհք վարդապետութեանն



Քրիստոսի, զի զմարգարէութիւնն կատարեսցէ եւ զվարդապետսն ամենայն աշխարհաց ժողովեսցէ, զի անդ շրջէին առ ծովակիրն: Որպէս ասաց Եսայի. «Երկիր Զարդոնի եւ Նեփթաղեմի՝ ճանապարհ յայնկոյս ծովուն, գալելէացոց հեթանոսաց: Եւ ժողովորդ, որ նարէիք ի խաւարի, րեսէք զլոյս մեծ» (Ղուկ. Ես. Թ. 1-2):

Եւ էր ի ժողովորդն այր մի ի դիւ պղծոյ, աղաղակեաց. Թուլացո՞, զի կայ մեր եւ քո Յիսուս Նազարացի: Եկիր կորուսանն՝ լ զմեզ (Ղուկ. Դ. 33-34):

Վասնզի Քրիստոս աստուածային զաւրութեամբն ի ծածուկ սկսաւ չարչարել զնա, իսկ նա, որ ի լերին[ն] անդ զմեծութիւն աշխարհի եդ առաջի եւ հայցէր երկրպագութիւն, այժմ տագնապեալ աղաղակէ իբրեւ զծառայ ոք չարչարեալ ի Տեառնէ:

Եւ Յիսուս ասէ. Պապանձեաց եւ ել (Ղուկ. Դ. 35):  
Եւ նա առժամայն փախստական լինի:

Եղեն զարմանալիք ի վերայ ամենեցուն (Ղուկ. Դ. 36):

Զի ո՛չ ըստ աւրինի արանց սրբոց աղաւթիւք հալածէր զգեւս, զի իշխանութեամբ սաստեաց այսոց պղծոց:



### 32. ՀՐԱՇԵԱԼԻ ԶԿՆՈՐՍՈՒԹԻՒՆ

Ղուկաս Ե. 1-11

#### ԻԳՆԱՏԻՈՍ ՍԵՒԼԵՌՆՅԻ

(Գալիս Ե.)

Արդ, ի խոնիլ զնովաւ ժողովրդոցն՝ եմուր Նա ի նաւ վասն բազմութեանն (հմմտ. Ղուկ. Ե. 1-3):

Զի ի թիկանց կուսէ ոք մի կացցէ, այլ ամենեքեան հանդէպ երեսաց Նորա կացցեն, զի մի տեղին գողասցի զբանն ի լսելեաց նոցա, այլ, յանդիման Նորա կացեալ, ամենայնին դիւրաւ լսաւդք լիցին: Արդ, զայն եթէ ուսուցանէր՝ գրեաց աւետարանիչն, բայց թէ զինչ խաւսեցաւ բնաւ ինչ ոչ գրեաց, զի ոչ էին բաւական գրել, նա՛ եւ ոչ աշխարհս բաւական էր տանել, ըստ Յովաննու:

Եւ լոեալ, ասէ, ի խաւսիցն՝ ասէ ցՄիմոն. «Խաղացո՞ խորսն եւ արկէք զգործիս ձեր յորս»: Եւ Միմոն ասէ. «Լարդապետ, զամենայն գիշերս աշխար եղեաք եւ ինչ ոչ կալաք, բայց վասն Քո բանիցդ արկցուք»: Իբրեւ ձգեցին՝ փակեցին ի ներքս բազմութիւն ձկանց եւ ակն արկէին ի միւս նաւն՝ գալ, աւգնել նոցա (հմմտ. Ղուկ. Ե. 4-6):

Աստ՝ Մատթէոս յայսպիսեաց աստի, ինչ ոչ գրեաց, այլ՝ սոսկ միայն զի գնայր ընդ եզր ծովուն եւ անտի կոչեաց զՊետրոս եւ զԱնդրէաս եւ զորդիսն Զեբեթեայ: Արդ, Մատթէոս վասն սքանչելեացն, զոր արար եւ բանիցն, զոր խաւսեցաւ՝ չարար ինչ փոյթ, բայց՝ զկարգ ժամանակին, ըստ որում եղեւ՝ այնպէս գրեաց: Իսկ Ղուկաս զժամանակին կարգ ոչ պահեաց, այլ՝ զուսուցանելն եւ զնշանսն, որով հաւանեցոյց զնոսա թողուլ զամենայն եւ երթալ զհետ Նորա, ստուգութեամբ գրեաց: Այլ զայն ասել կարի լաւագոյն է, զի Հոգւոյն է ամենայն, որ ետ գրել նոցա՝ որպէս կամեցաւ, զի անմեղութիւն աշակերտացն ցուցեալ լիցի եւ պատմութեանն ստուգութիւն: Արդ, գրեաց Ղուկաս զայս, յորում նկարեալ է խորհուրդ մարգարէիցն, վասն զի ասելն Սիմոնի. զամենայն գիշերս աշխատեցաք եւ ոչ ինչ կալաք՝ ահա յայտ է, զի գիշեր համարեալ է ժամանակ մարգարէիցն քարոզութեան, յորում աշխատեալք, ոչ



զոք զաւրեցին փրկել, եւ գիշեր էր, զի ոչ էր երեւեալ արեգակն ի բարձանց, որ լուսաւորէր զխաւարն: Իսկ աստ՝ վասն զի մերձ էր արեգակն եւ տիւ լուսաւոր, տայ հրաման աշակերտացն ոչ զանգիտել, այլ՝ արկանել ի ծովացեալ աշխարհս մեղաւք զուռկանս Բանին եւ լի ունել ամենայն բազմութեամբ մարդկան՝ մինչեւ այլում կարաւտանալ գործակցի, գալ աւգնել, ըստ այնմ. «Աղաչեցէք զփեր հնձոցն, զի հանցէ մշակս ի հունձս իւր» (Մաթթ Թ. 38): Արդ, այսպէս զաւրանայ խորհուրդ կողմանն հեթանոսաց: Նա՛ եւ Ինքն իսկ առական զնոյն եցոյց, «Նման է, ասէ, արքայութիւն երկնից ուռկանի արկելոյ ի ծով եւ յամենայն ազգաց ժողովելոյ» (Մաթթ. ԺԳ. 47): Աւրինակաւ բանիս վարեալ՝ այս չափ դատեալ եղեւ: Իսկ պարպատեալ՝ եցոյց զզաւրութիւն Իւր մեծ առ որսս ձկանցն, զի հաւատացեան, թէ յամենայնի բաւական է վճարել որպէս եւ կամի: Վասն որոյ տեսեալ Պետրոսի՝ ծանեալ զզաւրութիւնն, թէ ի վեր է քան զչափ մարդոյ արժանաւորութեան:

Եւ անկեալ առ ոքսն Յիսուսի, ասէ. «Տեր, ի բաց գնա յինէն, զի այր մեղաւոր եմ ես» (Ղուկ. Ե. 8):

Ամենուրեք տկարութիւն յանդիմանի, յորժամ զաւրաւորագոյնն մերձ իցէ, որպէս աչաց տկարութիւն յաղիմանի յարեգականն լուսոյ՝ եւ մարդկան ոգւոց մաքրութիւն՝ յաստուածայինսն մերձեալ, ըստ որում եւ Եսայիաս զփառսն Աստուծոյ տեսեալ եւ զսերովբէիցն սրբասացութիւնն լուեալ առ այնպիսի մաքրագոյնս հաւասարեալ, ասէ՝ «Վայ ինձ, զի ես այր փառապեալ եմ եւ պիղծ շրթունս ունիմ» (Եսայի Զ. 5): Այսպէս է տեսանել ամենայն ուրեք, առ որս Աստուած երեւեցաւ: Ըստ սմին եւ Պետրոս ասէ՝ ի բաց գնա յինէն, զի մեղաւոր եմ:

Քանզի ահ պարեաց գնա, վասն որսոյ ձկանց: Այլ Յիսուս բառնայ զերկիւղն, համարձակութիւն փայ. «Մի՛ երկնչիր, - ասէ,- յայսմ հեփտ զմարդիկ որսայցես ի կեանս» (հմմտ. Ղուկ. Ե. 9-10):

Ի փոքունք՝ նկարեաց զմեծն, եւ մարմնականն՝ զհոգեւորն, զի փոխանակ այնմիկ, որ էին որսորդք ձկանց՝ արար զնոսա լինել որսորդս մարդկան: Ոչ որսալովն ձգէ ի մահ եւ յապականութիւն, այլ ի մահուանէ՛ ի կեանս, եւ յաղտաղտուկ կորստական ջուրցն մեղաց եւ անհաւատութեան՝ ի հաւատս ուղիղս եւ ի վարս պարկեշտս: Արդ, անսան կոչողին եւ չառնեն ինչ փոյթ զուժեքէ, այլ զամե-

նայն ինչ առ ժամայն լքին եւ այնպէս՝ թափուր յամենայնէ, զնացին զհետ Նորա, զի լիցին որսորդք մարդկան՝ ըստ մարգարէին, որ ասէ. «Առաքեցից ի վերայ ձեր որսորդս եւ որսասցին զձեզ» (Երեմ. ԺԶ. 16): Իսկ արդ, յո՞րպիսի ինչ միտս առցուք զայս, զի ժողովեաց զդասս առաքելոցն յորսորդաց եւ է կնքեալ վկայութեամբ մարգարէիցն: Իսկ զառաջինսն զայնոսիկ, զորս արար մարգարէս եւ կարգեաց վերակացուս՝ յաճախ ի հովուաց ընտրեալ են, ըստ որում Մովսէս, Դաւիթ, Ամոփս: Ուստի եւ մեզ՝ վայրապար ընդ այս անցանել աւրէն ոչ է, այլ՝ կալ քննութեամբ ի վերայ տեսութեան խորհրդոյն եւ ունի այսպէս՝ ընտրեցան առաջինքն այնոքիկ ի հովուաց, որ զիւրեանցն արածեն զհաւտս զըռշմաւորս եւ ոչ զաւտարաց եւ աննշանս: Ըստ նմին եւ մարգարէքն՝ զիւրեանցն հովուեցին զժողովուրդ՝ զորդիսն Իսրայելի զըռշմեալս ի մարմինս իւրեանց: Իսկ որսորդք զաւտարս որսան եւ զվայրենիս, որով եւ առաքելոցն դասք ցուցեալ են, զի որսորդք եղեն՝ որսալ զաւտար եւ զվայրենամիտ հեթանոսս՝ ի կեանս: Յայս առցես ինձ եւ զմաքսաւորս՝ տիրել աւտարացն արտաքոյ անիրաւ բռնութեանն, ըստ այնմ. «Բերեմք զամենայն միտս ի հնազանդութիւն Բրիտանոսի» (Բ Կորնթ Ժ. 15):

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԳ

(Գլուխ Ե.)

Եղև ի խոնել զնովաւ ժողովրդոցն, եւ լսել զԲանն Աստուծոյ (Ղուկ. Ե. 1):

Այլ նոքա բազմանային եւ խոնէին զնովաւ յամենայն կողմանց, զի մի՛ զնասցէ ի նոցանէ: Զայս առնէին, զի հարան ի սէր նորա, եւ ընդ զաւրութիւն[ս]ն զարմացեալք կամէին միշտ տեսանել զսքանչելիս նորա եւ լսել զքաղցր բարբառ իմաստութեան նորա բանիցն: Ըստ առակողին՝ «Զայն փապրակի լսելի եղև յերկրի մերում» (Երգ Բ. 12):

Եմուպ ի նաւ մի, որ էր Սիմոնի (Ղուկ. Ե. 3):

Եփ. Երկու նաւքն՝ մինն թլփատութեան եւ մինն անթլփատութեան, էին աւրինակ: Եւ դարձեալ. զի մի՛ ի թիկանց կուսէ ոք եղիցի, այլ ամենեքին հանդէպ երեսաց նորա կայցեն առ ծովեզերին: Այլեւ զի մի՛ տեղին անլուր արասցէ զլսաւղսն:



**Նստալու եւ ուսուցանելը զժողովուրդն** (Ղուկ. Ե. 3):

Արդ՝ աւետարանիչքն, զի ո՛չ էին բաւական գրել, նաեւ՝ «Ո՛չ աշխարհս բաւական էր փանել» (Յովհ. ԻԱ. 25)՝ ըստ Յովհաննու:

Իբրեւ լռեաց ի խաւսելոյ, ասէ ցՍիմոն. Արկէք զգործիս ձեր յորս: Եւ Պետրոս ասէ. Զամենայն գիշերս աշխար եղաք եւ ո՛չ կալաք (Ղուկ. Ե. 4-5):

**ԵՓ** Խորհուրդ մարգարէիցն, որ գիշեր համարեցաւ քարոզութիւն նոցա, զի աշխատեալ

**ԻԳ** ո՛չ կարացին փրկել զոք: Եւ գիշեր, զի ո՛չ ծագեաց արեգակն ի բարձանց, որ լուսաւորելոց էր զաշխարհս ամենայն, որ էին ի խաւարի:

**Բայց վասն քո բանիցդ արկցուք զգործիս** (Ղուկ. Ե. 5):

Իսկ աստ մերձ էր Արեգակն: Եւ տիւ՝ լուսափայլ վարդապետութիւնն Քրիստոսի, հրաման տայ ո՛չ զանգիտել, այլ արկանել զուրկանս Բանին ի ծովացեալ աշխարհս մեղաւք:

Եւ փակեցին զբազմութիւնն ձկանցն: Եւ ակնարկէին որսակցացն աւզնել նոցա (Ղուկ. Ե. 6-7):

**ԵՓ** Խորհուրդ եւթանսուն եւ երկուցն, զի սակաւ էին նոքա յորս: Ըստ այնմ՝ «Աղաչեցէք զՏէր հնձոցն, զի հանցէ մշակ ի հունձս իւր» (Մատթ. Թ. 38):

**ԻԳ.** Եւ ինքն առակաւ զնոյն եցոյց. «Նմանեցաւ արքայութիւնն Աստուծոյ ուրեքն արկելոյ ի ծով եւ յամենայն ազգաց ժողովելոյ» (Մատթ. ԺԳ. 47): Այսպէս զաւրանայ կողմն հեթանոսաց:

Իբրեւ ետես Պետրոս, անկաւ առ ոքսն Յիսուսի. Տէր, ի բաց գնայ յինէն, զի այր մեղաւոր եմ ես (Ե. 8):

Ծանեաւ զգալութիւնն նորա ի վեր քան զբնութիւնն մարդկան: Ամենայն ուրեք մարդկան տկարութիւն յանդիմանի, որպէս աչացն առ արեգականն պայծառութիւնն եւ հոգոց մարդկան յաստուածայինսն մերձեցեալ: Որպէս Եսայի ետես զփառսն Աստուծոյ եւ զսերորէիցն զսրբացութիւնն, եւ ասէ. «Վայ ինձ, զի ես այր մեղաւոր եմ եւ պիղծ շրթունս ունիմ» (Ես. Զ. 5):

Եւ Յիսուս ցՍիմոն ասէ. Մի՛ երկնջիր, յայսմ հետք զմարդիկ որսացես (Ղուկ. Ե. 10):

**ՍԿ. (կր.)** Յաղագս այսորիկ որսորդքն մարդկան որսալով զնոսա, եւ կորզեալ ցանցիւքն վարդապետութեան ի ժանեաց կամակոր վիշապին, որ կամի զամենայն մարդ որսալ ի կորուստ իւր՝ ի հուրն յաւիտենական:

**Որսացես ի կեանս** (Ղուկ. Ե. 10):

**ԻԳ.** Ո՛չ որսալ ի մահ եւ յապականութիւն, այլ ի մահուանէ «ի կեանս», եւ յաղտաղտուկ կորստական ջուրց մեղացին՝ ի ջուրն կենդանի, որ խաղաղացուցանէ ի կեանսն յաւիտենականսն, որպէս ասաց Քրիստոս, եւ յանհաւատութենէ ի հաւատս ուղիղս եւ վարս պարկեշտս: Ըստ մարգարէին՝ «Առաքեցից ի վերայ ձեր որսորդս եւ որսայցեն զձեզ ի վերայ լերանց եւ բլրոց» (Երեմ. ԺԶ. 16):

**Հանեալ զնաւն ի ցամաքն՝ թողին զամենայնն եւ զնացին զհեպ Յիսուսի** (Ղուկ. Ե. 11):

**ՍՏ** Թողին զգործ անցաւոր լուսոյս եւ հետեւեցին ի մեծ եւ յիմանալի եւ յանստուեր լոյսն: Եւ դու միտ դիր հաւատոցն հնազանդութեան: Թէպէտեւ ի գործ[ս] արուեստին զբաղեալ էին, սակայն ո՛չ զանդաղեցան, եւ Յովհաննէս ո՛չ ասաց: Եւ վաղվաղակի յոժարեցան զնալ զհետ, որ ցուցանէ զառաքինութեան նոցա զհանդէս:

**ՄԱՏԹԷՈՍ ԶՈՒՂԱՅԵՅԻ**

[Պապասխանի ետ Սիմովն՝ եւ ասէ ցնա. Վարդապետ] զամենայն գիշերս աշխար եղաք, եւ ոչ[ինչ կալաք. բայց վասն քո բանիդ՝ արկցուք զգործիսս] (Ղուկ. Ե. 5):

Աստ նկարեալ է խորհուրդ մարգարէիցն, զի աշխատ եղեն եւ ոչ կարացին զոք փրկել: Եւ զի՞ ի գիշեր նմանեցուցանէ քարոզութիւնն մարգարէիցն: Եւ այս վասն բազում պատճառի: Նախ՝ զի գիշերն հեռի է յարեգակէն, վասն որոյ խաւար լինի, այսպէս եւ ի ժամանակէ մարգարէիցն հեռի էր Քրիստոս արեգակն, վասն որոյ քարոզութիւնն մարգարէիցն ոչ զոք լուսաւորեաց: Երկրորդ՝ զի ի գիշերն քուն լինին մարդիկ եւ ամենայն կենդանիք, այսպէս եւ ի ժամանակս մարգարէիցն ննջեալք էին ամենեքեան ի մեղս, ի սկզբնական եւ ի ներգործական: Նա թե եւ մարգարէքն իսկ թեպէտ չունէին ներգործական, սակայն զպարտս նախահօրն ամենեքեան ունէին յանձինս: Երրորդ՝ զի ի գիշերն առաւել գործի մեղք քան



ի տիւն, այսպէս եւ ի ժամանակս մարգարէիցն առաւելեալք էին ի մեղս, եւ զի ոչ ոք կարէր գործով արդարանալ, զի ամենեքեան պակաս գտանէին կատարել զօրէնս, այն է՝ առաւելութիւն մեղացն: Չորրորդ՝ զի ի գիշերի գազանք համարձակ շրջին, այսպէս եւ ժամանակ մարգարէիցն կռապաշտութիւնն համարձակեալ կայր ընդ ամենայն տիեզերս: Հինգերորդ՝ զի ի գիշերի ոչ ոք կարէ առնել վաստակ հասարակ, բայց առանձին հնարին ի տան ճրագով, այսպէս եւ մարգարէքն ոչ ինչ կարացին առնել բնութեանս, բայց առանձին սրբութեամբ զինքեանս արդարացուցին լուսով նուազ օրինացն: Վեցերորդ՝ զի ի սկսման գիշերոյն առաւելանայ խաւարն. մինչեւ ի մէջ գիշերոյն եւ անտի հետ նուազի եւ առաւելանայ լոյսն, զի մերձ ի յարեգակն, այսպէս եւ ի մեղանչելն Ադամայ եղեւ խաւար բնութեանս անմահ, եւ անաւրինեցան մարդիկ յոյժ մինչեւ ի Մովսէս. ըստ այնմ՝ «Թագաւորեաց մահ յԱդամայ մինչեւ ի Մովսէս» (Առ Նոմ. Ե. 14): Եւ անտի հետ աւգնականութեամբ ավրինացն սակաւ սակաւ ուսան զխորհուրդ լուսոյն մինչեւ մարգացաւ բանն: Եւթներորդ՝ զի աստեղք եւ լուսին ի գիշերի տան լոյս, բայց ոչ կարեն ստուգապէս առաջնորդ լինել մարդկան, այսպէս եւ օրէնք եւ մարգարէքն խրատէին՝ «Մի շնար, մի գողանար» (Ելից Ի 14-15) եւ այլն, բայց ոչ կարացին, զի տկարք էին եւ անզաւր: Ութերորդ՝ զի փութով անցանի գիշերն, այսպէս եւ այնքան ժամանակ փութով անցին, զի ոչ գոյր հանգիստ աստուածայինս: Իններորդ՝ զի յատուկ է ամենայն կենդանոյ ի լուսոյն գալն խնդալ եւ ի խաւարին՝ տրտմելն, այսպէս եւ այնքան ժամանակն տրտում էր մարդկային բնութիւն՝ մոլորեալ խաւարաւն անգիտութեան: Տասներորդ՝ զի ի սպառել գիշերոյն գայ արեգակն եւ լուսաւորէ, այսպէս եւ ի մերձեանալ ժամանակին գալոյ Բանին Աստուծոյ, աւարտ եղեւ ժամանակաց մարգարէիցն, եւ ծագեաց մեզ արեգակ պայծառ, որով կարեմք առնել զամենայն գործ արդարութեամբ, եւ արկանեմք զաշխատութիւնն մեր սրբութեամբ, ուստի լինի հասանել մեզ արքայութեան տեսուն վասն որոյ ասէ Պետրոս՝ «վասն թո բանիդ արկցուք [գգործիսս] (Ղուկաս, Ե. 5): Այսքան առ այս:

Հարց՝ Զի՞նչ է, որ ասէ՝ «Յայսմհետէ զմարդիկ որսասցես ի կեանս» (Ղուկ. Ե. 10):

Պատասխանի՝ Վասն զի առաքեալքն նմանեցան որսորդի ըստ բազում եղանակաց:

Նախ՝ զի որսորդն խայծ դնէ եւ ապա ըմբռնէ զորսն, այսպէս եւ առաքեալքն, խայծ եղին զսքանչելիսն եւ սրբութիւնսն եւ նոքա ըմբռնեցին զնոսա ի հաւատս: Երկրորդ՝ զի զոմանս նետիւ ըմբռնեն որսորդք, այսպէս եւ առաքեալքն, զի զոմանս բանիւ դարձուցին ի հաւատ քրիստոնեութեան: Երրորդ՝ զի որսորդն յոյժ աշխատի շրջելով զհետ որսոյն, այսպէս եւ առաքեալքն աշխատեցան շրջելով ընդ տիեզերս, ըստ այնմ «Առաքեցից ի նոսա որսորդս բազումս եւ որսայցեն զնոսա ի վերա բլրոց եւ լեռանց» (Կրն Երեմ. ԺԶ. 16): Չորրորդ՝ զի վայրիսն որս անէ, ո՛չ ընդանիսն, այսպէս եւ՝ առաքեալքն, զի վայրենացեալ ազգ հեթանոսաց, որսացին ի կեանս, եւ ոչ զԻսրայէլ, ըստ այնմ՝ «Աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս, եւ Պաւղոսս այսուհետեւ դառնամք ի հեթանոսս» (Կրն Գործք ԺԳ, 46): Հինգերորդ՝ զի ամենայն որսորդ, ոչ կարէ ըմբռնել, այսպէս եւ՝ ամենայն առաքեալքն քարոզեցին, բայց Պողոսի բանքն արդիւնաւոր եղեւ քան զամենայն: Նաեւ մեր առաքեալ Թադէոս, եւ ոչ մի ի մերոց ազգաց կարաց դարձուցանել որպէս Թումայի հնդիկս եւ այլն: Վեցերորդ՝ զի ոչ առնէ փոյթ որսորդն թէ այս մեծ է, կամ՝ այն փոքր, այլ զամենայն ըմբռնէ որոց եւ հասանէ, այսպէս եւ՝ առաքեալքն ոչ ընդրեցին զմեծատունս եւ զաղքատս կամ զծերս եւ զտղայս, այլ ամենեցուն յարգեցին զհաւատս: Եւթներորդ՝ զի զորս ի ծովու ըմբռնեն, հանեն ի բնական տեղացն որ է ջուրն, այսպէս եւ՝ առաքեալքն հանին զմարդիկ ի գիշական ախտից եւ ի կեանսն հաստատեցին, որ հեռի յաղտէ մեղաց: Ութերորդ՝ զի սովորութիւն է որսորդաց սակաւ սակաւ քարչել զձկունս ի ցամաք, զի թէ բռնութեամբ քարչէ, ոչ կարէ, այսպէս եւ՝ առաքեալքն սակաւ սակաւ խրատելով եւ խոնարհութեամբ ածին զմարդիկ ի հնազանդութիւն Քրիստոսի (հմմտ. Բ Կորնթ. Ժ. 5): Իններորդ՝ զի յորժամ ըմբռնէ որսն որսորդն, յայնժամ ըստ կամաց իւրոց շարժէ կենդանին, այսպէս եւ՝ առաքեալքն յորժամ դարձուցին զամենայն հեթանոսաց ազգս ըստ կամաց Տեառն գրեցին կանոնս, եւ նոքաւք վարեն զնոսա եւ ոչ եւս ըստ հեթանոսական սովորութեան զնան: Տասներորդ՝ զի պատահի որսորդ ի գազանն եւ սպաննէ զնոսա, այսպէս եւ ի քարոզել առաքելոցն ընդդէմ ազանքն կռապաշտքն եւ սպանին զնոսա: Բայց ոչ ամենայն իրաւք Հպի օրինակն առ ճշմարտութիւնն, զի ամենայն որսորդ տանի ի կենաց ի մահ, իսկ առաքեալքն որսացին ի մահուանէ ի կեանս զմարդիկ:



### 33. ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ԴԱՏԱՆԻՈՅՆ Ի ՆԱՅԻՆ

Ղուկաս Է. 11-17

#### ԻԳՆԱՏԻՈՍ ՍԵԻԼԵՌՆՅԻ

(Գլուխ Է.)

Եւ եղեւ ի վաղիւ անդր երթայր աշակերտաւքն ի քաղաք մի, որում անուն էր Նային (տես Ղուկ. Է. 11):

Ոչ կամէր Նա ի միում տեղւոջ լինել: Զի ոչ եկն Նա ի Հաւրէ բնակութիւն իւր խնդրել յերկրի, այլ շրջել եւ ուսուցանել եւ առ ինքն ժողովել եւ ընծայել Հաւր: Ըստ որում ի խոնիլ զնովաւ ժողովրդեանն եւ յարգելուլ, ասաց եւ այլոց քաղաքաց պարտ է ինձ աւետարանել, զի այն իսկ առաքեցայ: Էին ընդ նմա ժողովուրդ բազումք, զի վասն նշանացն, զոր տեսանէին եւ վարդապետութեանն, յորս վայելէին՝ ոչ կամէին բնաւ մեկնել ի նմանէ, վասն զի ոչ էին յայնցանէ, որ նախանձու չարութեանն հեղձեալք էին, այլ մարդիկք պարզք եւ առանց նենգութեան:

Իբրեւ մերձ եղեւ ի դուռն քաղաքին, եւ ահա եղանէր պարանի մի մեռեալ՝ որդի միամաւր մաւր իւրոյ, եւ նա էր այրի (տես Ղուկ. Է. 12):

Արդ, մերձ եղեալ աստ պատահէ մեծագոյնն սքանչելեաց, քան որ ի Կափառնաւում եղեւ զի աստ՝ ոչ կին ոք տապացեալ ազատի ի յախտէն եւ ոչ մանուկ մերձ ի մահ բժշկի, այլ պատանի մեռեալ, որոյ եւ մերձ էր ի գերեզման դնել եւ հողով ծածկել: Բարձեալ, ասէ, տանէին եւ էր միամաւր եւ մայր մեռելոյն էր այրի: Արժանի ողբոց էր մահն, վասն առոյգութեան Հասակին եւ զի նա՝ միայն էր մաւրն եւ ոչ գոյր այլ ոք նմա մխիթար՝ ոչ փոխանակ մեռելոյն եւ ոչ յոյս որդեծնութեան, զի այրի էր եւ պակասեալ ի զաւրութենէ ծնանելոյ: Դառնացեալ էր սգով եւ ամենայն բազմութիւն քաղաքին զհետ ելեալ աշխարհին զնա:

Իբրեւ ետես զնա Տէր՝ գթացաւ ի նա եւ ասէ. «Մի՛ լար» (Ղուկ. Է. 13):

Եւ մերձեցաւ ի դագաղսն եւ որ բարձեալն տանէին՝ առին: Ետես, ասէ, Տէր, գթացաւ ի նա: Եւ զիա՞րդ ոչ գթայր, որ ամենաբարին էր բնութեամբ, զի թէ որ չարքն էին՝ ողբային զնա՝ ո՞րչափ եւս առաւել, որ առատն էր պարգեւաւք՝ տայր նմա զխնամս գթութեանն՝ ոչ ողբալով ընդ նմա, այլ կենդանութեամբ պատանւոյն լուծանէ զտրամութիւնն եւ դադարեցուցանէ զարտասուսն, վասն որոյ ոչ յանկարծադէպ ինչ իրս առնէ, զի մի արհաւիրս առնիցէ տեսողացն, այլ նախ խաւսի ընդ մեռելոյն մաւր եւ ապա ձգեալ զձեռնն, դադարեցոյց ի գնալոյ, զի այնպէս ամենեքեան ուշ ունիցին՝ տեսանել, թէ զինչ կամիցի առնել:

Եւ ասէ, «Պարանի դու, քեզ ասեմ, արի՛»: Եւ կանգնեցաւ, նստաւ մեռեալն եւ սկսաւ խաւսել (Ղուկ. Է. 14):

Զոյգ՝ ընդ հրամանին եւ գործն վճարեալ լինէր, զի Նա է, վասն որոյ ասացեալ է. «Ասաց եւ եղեւ, հրամայեաց եւ հաստատեցաւ» (Մաղմ ՃԽԸ. 5): Արդ, նստաւ՝ Հեզ եւ Հանդարտ եւ սկսաւ խաւսել, զգաւն եւ մեղմ եւ ընդելական ձայնիւ, զի մի ամբոխեսցին վասն Նորա նշան գործոյն: Կամեցաւ, զի զյոյս յարութեանն Հաստատեցէ եւ զսարուկեցուցն խցցէ զբերանսն: Ասաց. «Եկեացէ ժամանակ, յորում ամենեքեան, որ ի գերեզմանս կացցեն՝ լուիցեն ծայնի Որդոյն Աստուծոյ եւ եկեացեն արքաքս» (Յովի Ե. 29): Արդ, զի հաւատարիմ լիցին ասացեալքն, տայ զառհաւատչեայն աստ՝ յարութեամբ պատանւոյն: Եւ Ղազար՝ այր կատարեալ, չորեքաւրեայ լցեալ ժահահոտութեամբ, ի գերեզմանէն յառնէ, եւ զայլս զորս յարոյց եւ՝ զիւրն յարութիւնն, զի ուսեալք մի անհաւատասցուք մերում յարութեանն: Իջուցանէ ի դագաղացն, զոր բարձեալ տանէին թաղել, եւ տայ մաւրն կենդանի, զի ինքն ոտիւքն դարձցի զհետ բազմութեանն ի քաղաք անդր:

Զայս տեսեալ բազմութեանն, ահ կալաւ զնոսա՝ վասն ոչ եւս այլ տեսանելոյն այսպիսի զարութիւն, երկեան եւ սկսան փառաւոր առնել զԱստուած» (հմմտ. Ղուկ. Է. 16):

Այսպիսի բնաւորեալ են նշանք, զի զամենայն միտս ըմբռնեալ ձգէ յինքն եւ ի հիացմանէն չունին այլ ինչ՝ խաւսել, բայց միայն փառս տալ Աստուծոյ եւ իմանալ, եթէ այցելութիւն աստուածեղէն է: Ասեն. «Մարգարէ ոմն մեծ յարուցեալ է ի միջի մերում» (Ղուկ. Է. 16): Թէպէտ եւ զպատշաճ կարծիսն վասն Նորա ոչ ծանեան, սակայն



ի դպրացն եւ ի փարիսեցւոցն չարաչար կարծեացն ազատք էին: Յաղագս որոյ ասէին՝ այց արար Աստուած ժողովրդեան իւրում ի բարութիւն, քանզի ծանեան եթէ նշան բարեաց է՝ զմեռեալս յարուցանել, զի են բազում նշանք, որ կորստեան նշանակիչք են, ըստ որում մարգարէին տուեալ ի կալն Րոբովամու եւ՝ զզոհելն ի վերայ բազնին, զպատառիլ սեղանւոյն եւ հեղուլ զարգանակ զոհիցն (հմմտ. Գ. Թագ ԺԳ.1-5), եւ՝ աւերածոյն Երուսաղէմի նշան երեւեալ առ չարչարանաւքն, եւ՝ յետ այսոցիկ կառք եւ երիվարք՝ ի վերոյ, քան զնոսա յաւդն խաղացեալ՝ նշան չարի նոցա եւ՝ որ ըստ այսմ կարգի: Վասն որոյ Դաւիթ մաղթէ Աստուծոյ՝ առնել առ նա նշան բարութեան եւ մի չարեաց ինչ:

Արդ, ծանեան ժողովուրդն այն, թէ բարեաց է նշանս այս եւ մեծ ոմն է, որ երեւեցաւ ի միջի նոցա՝ Փրկիչ լինել նոցա:

Եւ ել զրոյցս այս յամենայն Նրէաստան վասն Նորա եւ յամենայն կողմանս աշխարհին (Ղուկ. Է. 17):

Վասն զի մեծ էին սքանչելիքն, զի զմեռեալս յարուցանել կարի իմն զարմանալի եւ մեծ թուի յաչս մարդկան: Եւ զայս տեսեալ, առաւել համբաւեցին ընդ ամենայն աշխարհն: Եւ այնքան զաւրացաւ տիրել այս համբաւ՝ մինչեւ աշակերտքն Յովաննու, որ նախանձ ընդդէմ էին, ըմբռնեալ ի զաւրութենէ գործոյն, եկեալ պատմեն Յովաննու ի բանտի անդ: Ի Յովհաննու աւետարանչին՝ յորժամ եկեալ աշակերտացն Յովաննու ասեն. «Ռաբբի՛, որում վկայեցերն, աւանիկ մկրտել եւ բազումք գան առ Նա» (հմմտ. Յովի Գ. 26): Նա բազում բարձրագոյն եւ աստուածավայելուչ վկայութիւնս վասն Տեառն մերոյ խաւսեցաւ՝ եղ առաջի նոցա: Իսկ աստ՝ զնոսին առաքէ՝ գնալ, տեսանել եւ լսել ի նմանէ՝ հաւատալ եւ յարել ի Նա: Ի դէպ իսկ է եւ զայն ասել, թէ յետ հարցանելոյն եւ դառնալոյն առ Նա՝ բազումս ունէր Նա տալ վկայութիւն նոցա, զի մի բաժանեցին ի նմանէ:

Արդ, առաքէ հարցանել՝ այն, որ յառաջ քան զտեսանելն զիտէր զՆա, եւ ետես եւ վկայեաց, եթէ Նա է գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս յաշխարհէ:

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

(Գլուխ Է.)

Ի վաղիւն երթայր ի քաղաքն, որում անուն էր Նա[յ]ին (հմմտ. Ղուկ. Է. 11):

Եփ.(իգ.) Իբրեւ ո՛չ կամէր Յիսուս ի միում տեղոջ լինել: Զի ո՛չ եկն նա ի Հաւրէ բնակութիւն խնդրել յերկրի, այլ շրջել եւ ուսուցանել եւ առ ինքն ժողովել եւ ընծայել Աստուծոյ Հաւր: Որպէս եւ ինքն ասաց, թէ՛ «Եւ այլոց քաղաքաց պարս է ինձ աւերարանել, զի յայն իսկ առաքեցայ» (հմմտ. Ղուկ. Դ. 44):

Էին ընդ նմա աշակերտք իւր եւ ժողովուրդք բազում (տես Ղուկ. Է. 11):

Զի վասն նշանացն, զոր տեսանէին, եւ վարդապետութեան, յորս վայելէին, ո՛չ կամէին բնաւ մեկնել ի նմանէ: Վասնզի ո՛չ էին յայսցանէ, որ նախանձու չարութեան հեղձեալ էին, այլ՝ մարդք պարզամիտք եւ առանց նենգութեան:

Իբրեւ մերձ եղեն ի դուռն քաղաքին, ահա ելանէր պապանի մի մեռեալ, որդի միամաւր մաւր իւրոյ: Նա էր այրի (Ղուկ. Է. 12):

Արդ՝ մերձ եղեալ աստ՝ պատահէ մեծագոյն սքանչելեաց, քան որ ի Կափառնաւում: Աստ ո՛չ կին ոք տաղնապեալ յախտէն եւ ո՛չ մանուկ բժշկեալ մերձ ի մահ, այլ՝ պատանի մեռեալ եւ մերձ ի գերեզման, հողով ծածկեալ, եւ միամաւր: Արժանի ողբ էր նա վասն առո[յ]գութեան հասակին, զի նա միամաւր էր եւ ո՛չ գոյր նորա այլ որդի մխիթար փոխանակ մեռելոյն: Ո՛չ յոյս որդեծնութեան, զի այրի էր եւ ծեր, պակասեալ ի զաւրութենէ ծնանելոյ, դառնացեալ ոգով:

Իբրեւ երես գնա Յիսուս, գթացաւ ի նա եւ ասէ. «Մի՛ լար» (տես Ղուկ. Է. 13):

Ետես զաղիողորմն թշուառութեանն, եւ զկականումն ձայնին, եւ զտատանումն մատանցն, եւ զկրծիցն կոծումն, եւ զհոսումն արտասուաց, եւ զտուայտումն, եւ զտխրութիւն զիմացն, զոր տեսեալ աստուածային սիրով:



**Գթացալ** (Ղուկ. Է. 13):

Ձիա՞րդ ո՛չ գթայր ամենաբարի բնութեամբն: Ձի թէ չարքն ողբային զնա, որչա՞փ եւս առաւել ամենառատն պարգեւաւք զխնաման ցուցանէր: Լուծանէր զտրտմութիւն՝ զտրտմութիւն դաղարեցուցանէր եւ զարտասուսն:

**Եւ մաքուցեալ մերձեցալ ի դագաղսն, եւ որ բարձեալ բերէին՝ զպեղի առին** (Ղուկ. Է. 14):

Ո՛չ յանկարծադէմ ինչ իրս առնէր, զի մի՛ արհաւիրս արկանիցէ տեսողացն: Այլ նախ՝ խաւսի ընդ մաւր մեռելոյն եւ ապա՝ ձգեալ զձեռնն դաղարեցոյց ի գնալոյն, զի ամենեքին ուշ ունիցին տեսանել, թէ զի՞նչ կամիցի առնել:

**Ասէ. «Պապանի՛ դու, քեզ ասեմ»:** Կանգնեցալ, նստալ մեռեալն (տես՝ Ղուկ. Է. 14-15):

Յարուցանէր զորդին եւ շնորհէր նմա աստուածային սքանչելեաւք, զոյգ ընդ հրամանին եւ իրան կատարէին: Ձի նա էր, որ ասաց, եւ եղեն արարածք, հրամայեաց եւ հաստատեցան:

**Եւ սկսալ խաւսել** (Ղուկ. Է. 15):

Հեզ եւ հանդարտ խաւսէր եւ ընդելական ձայնիւ: Ձի մի՛ ամբոխեսցին վասն նորանշան գործելոյն, զի կամեցաւ Տէր զյոյս յարութեան հաստատել: Որպէս եւ ինքն ասաց. «Եկեացէ ժամանակ, յորժամ մեռեալք լուիցեն ձայնի նորա եւ եկեացեն արարաքս» (հմմտ. Յովհ. Ե. 28-29): Ձի հաւատարիմ լիցի ասացեալն, տայ առհաւատչեայ զյարութիւն պատանոյն: Եւ զՂազար այր կատարեալ չորեքաւրեայ լի ժահահոտութեամբ ի գերեզմանէն յարուցանէր, զի զսաղուկեցեաց խցցէ զբերանն, որ ո՛չ խոստովանին զյարութիւնն:

Ձի եւ մեք ուսեալք՝ հաւատասցուք մերում յարութեանն: Իջուցանէ ի դագ[ա]ղացն զպատանին, զի ինքնին ոտիւք երթայցէ զհետ բազմութեանն ի քաղաքն:

**Եւ ահ կալալ զամենեսին** (Ղուկ. Է. 16):

Այսպէս բնաւորեալ են նշանք, զի զամենայն միտս առ ինքն ըմբ[ռ]նեալ ձգէ:

**Փառաւոր առնէին զԱստուած** (Ղուկ. Է. 16):

Երկեան եւ սկսան տալ փառս Աստուծոյ: Ո՛չ այլ ինչ խաւսել, այլ միայն փառաւորել եւ իմանալ, եթէ այցելութիւն աստուածային է:

**Անն. Մարգարէ ոմն յարուցեալ է ի միջի մերում** (Ղուկ. Է. 16):

Թէպէտեւ զպատշաճ աստուածային մարդեղութեանն ո՛չ ծանեան, սակայն ի դպրացն եւ ի փարիսացոցն չար նախանձոյն ազատէին:

**Այց արար Աստուած ժողովրդեան իւրում ի բարութիւն** (Ղուկ. Է. 16):

Քանզի ծանեան, եթէ նշանք բարեաց է զմեռեալս յարուցանելն, զի այլ են նշանք կորստեան: Ըստ որում մարգարէն ետ Բորովամայ, յորժամ զոհէր առաջի ոսկի երնջոցն, պատառեցաւ սեղանն եւ հեղաւ արգանակ զոհին (տես՝ Գ. Թագ. ԺԳ. 1-5): Եւ Երուսաղեմի աւերածոյն նշան զհետ Քրիստոսի չարչարանացն՝ կառք եւ երիվարք ի վերայ Որդոյն վեր քան զնոսա խաղացեալ: Վասն որոյ Դաւիթ աղաւթէ. «ՅԱստուծոյ առնել նշան բարութեան եւ մի՛ չարեաց» (հմմտ. Սաղմ. 26. 17):

**Եւ ել զրոյց ի Նրեաստան եւ յամենայն կողմանս աշխարհին** (հմմտ. Ղուկ. Է. 17):

Վասնզի մեծ էին սքանչելիքն: Եւ կարի իմն զարմանալի թուի յաչս մարդկան զմ[եռեա]լս յարուցանել, զոր տեսեալ համբաւեցին բնաւ աշխարհին:

**ՄԱՏԹԷՈՍ ԶՈՒՂԱՅԵՅԻ**

Հարց. Վասն է՞ր առաւել եղկելի էր մահ միամօրն:  
Պատասխանի. Նախ՝ վասն առոյգութեան հասակին: Երկրորդ՝ զի նա միայն էր մօրն եւ այլ ոչ ունեւ մխիթարութիւն: Երրորդ՝ զի ոչ յայլ ոք յազգականացն ունեւ փոխանորդ որդոյն: Չորրորդ՝ զի չգոյր այլ յոյս որդեծնութեան: Հինգերորդ՝ զի ոչ ունեւ այլ յիշատակ յետ իւր անցմանն. վասն որոյ զթացաւ Տէր եւ յարոյց զնա: Յիմարութիւն տղային երկու կերպիւ երեւի. զի ըստ նոսա,



որք ոչ ունին պատճառ տրտմութեան, տրտմին, եւ ըստ նոսա, որք ոչ ունին ցնծութիւն, ուրախանան. նովին աւրինակաւ եւ հրէայքն էին ի գալն Յովհաննու ծիծաղէին զնովաւ, զի կոչեաց զնոսա յողբս եւ յապաշխարութիւնս՝ ասելով զեւ զոյ ի նմա: Իսկ յորժամ եկն Տէր մեր Յիսուս Քրիստոս եւ զնոսա կամեցաւ իբրեւ զմանկունս ժողովեալ յուրախութիւն յայնժամ տրտմեացն՝ ասելով՝ «Ահա այր կերող եւ արբեցող բարեկամ մաքսաւորաց եւ մեղաւորաց» (Մատթ. ԺԱ. 19, Ղուկ. Է. 34):



### 34. ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ ԿՆՈՋՆ ԿԱՐԿԱՄԵԱԼ

Ղուկաս ԺԳ. 10-17

ԻԳՆԱՏԻՈՍ ՍԵՒԼԵՌՆՅԻ

(Գլուխ ԺԳ.)

Եւ ուսուցանէր ի միում ի ժողովրդանոցացն ի շաբաթու (տեսն Ղուկ. ԺԳ. 10)

Ժողովարան՝ տեղի աղաւթից շինեցաւ նոցա յամենայն տեղիս, յորում ժողովեալ յաւուր շաբաթու պարապեալ ի գործոյ՝ լսէին զպատգամս մարգարէիցն եւ խնդրուածս առնէին: Վասն որոյ եւ անդ Յիսուս մտեալ՝ ուսուցանէր որպէս երբեմն առ Նազովրացիսն: Եւ ուսուցեալ որպէս աւրէն էր խրատել զնոսա, ապա գայ ի սքանչելիսն՝ վկայ բանիցն կացուցանել եւ կինն զայն տեսեալ, զոր չար այսոյն կորացուցեալ էր եւ ոչ տայր ի վեր հայել: Զի կարի չար պատերազմող եւ թշնամի է բնութեանս եւ վնասակար, ոչ միայն՝ ոգւոց, այլ եւ՝ մարմնոց: Եւ զի՞նչ, արդեւք առ այս զթածն Յիսուս՝ թէպէտ եւ յառաջ ոչ մատեաւ եւ հաւատս ոչ ընծայեաց, այլ՝ Որ եկն կեցուցանել՝ ոչ կարաց անտես առնել յայնքան չար դիւին ի ձեռս մատնեալ, վասն որոյ ասէ.

«Կին, դու՛ արձակեալ ես ի հիւանդութենէ քումմէ» (Ղուկ. ԺԳ. 12)

Արժանացոյց եւ ձեռն եւս զնել: Է ուրեք, ուր բանիւ վճարի, զոր ինչ կամի, եւ է, զի ձեռն զնէ: Եւ այս Իւր աստուածեղէն իմաստութեանն գործ է: Դնէ ձեռն աստ որպէս բորոտին, զի ցուցցէ, թէ ոչ գարշի Նա յումեքէ: Բժշկէ բանիւ եւ հրամանաւ ի բացուստ՝ որպէս զորդի թագաւորագինն, վասն որոյ ասաց. «Երթ, որդի քո կենդանի է» (Յովն Դ. 50), զի ցուցցէ, թէ յամենայնի բաւական է, որպէս եւ կամի կեցուցանել: Դնէ եւ աստ զձեռն եւ ասէ. «Արձակեալ ես ի հիւանդութենէ քումմէ» (Ղուկ. ԺԳ. 12) եւ զոյգ ընդ բանիցն՝ առ ժամայն ուղղեցաւ եւ փառաւոր առնէր զԱստուած: Քանզի այս բնութեանս մերոյ կիրք են, զի նեղեալ անձինք աւրհնեն եւ զոհանան զԱստուծոյ՝ գերծեալք ի վտանգից, ըստ այնմ. «Տէր, ի նեղութեան յիշեցաք զՔեզ»



(Եսայի ԻԶ. 16): Իսկ, որ ի հանդստեան են՝ դուն ուրեք թէ յիշեն զԱստուած կամ զոհանան: Յայսպիսեաց աստի հարկի Աստուած ածել զբարկութիւն, զի դարձցին եւ յիշեցեն, ըստ այնմ. «Յորժամ սպանանէր զնոսա՝ դառնային խնդրել զԱստուած» (հմմտ. Սաղմ ՆԷ. 34): Նկարեցաւ դարձեալ ի կինս յայս՝ հեթանոսաց փրկութիւն, որք կարկամեալք եւ ի խոնարհ ի վայր կորացեալք ի լծոյ անաւրէնութեանց եւ ի ծանրութենէ մեղացն բեռանց, որ ոչ էր հնար ի վեր յերկնից բարձրութիւնն հայել եւ զանտի կեանսն եւ զմեծ վայելչութիւն փառացն Աստուծոյ տեսանել, այլ՝ ախտաւոր աստի կենաւքս կաշկանդեալք՝ կային կորացեալք: Վասն որոյ զթացեալ ի մեզ Արարիչն բնութեանս, ուղղեաց՝ ի վեր հայել եւ զվերինսն նկատել, եւ զմերն գիտել տեղի բնակութեան եւ ճանաչել զմեր բարետոհմութիւնն:

**Յասեաւ, ասէ, ժողովրդապետն, թէ ընդէ՞ր ի շարաթու բժշկեաց** (Ղուկ. ԺԳ. 14)

Եւ ահա այս յայտ է, զի ոչ վասն շաբաթուն ցասեաւ, այլ վասն բժշկութեանն, որ զփառս Նորա յայտնեաց, զի ոչ էին այսպիսի հաւաստիք աւրինացն վասն շաբաթու, այլ բազում ինչ՝ որ փոքունք էին եւ առանց աշխատութեան գործէին եւ չհամարէին լուծումն շաբաթուն, որպէս աստ, զի զանասունսն արձակէին ի մարոյ՝ ջուր տալ եւ չհամարէին ինչ վնաս: Եւ արդ, զի՞նչ քան զբժշկութիւնս զայս զիւրին, զի ասաց բանիւ՝ արձակեալ ես, եւ արձակեցաւ՝ ընդ որ պարտ էր հիանալ եւ քան զաւրէնսդիրն ի վեր զՍա համարել, թէ եւ լուծանէր յաւրինացն: Այլ չար է նախանձ եւ ի կարի յանդգնութիւնս ածէ եւ որքան զմեծամեծսն տեսանէ, յայնժամ կատաղի եւ ոչ բերէ լուել: Ըստ որում եւ սա, որ զաւրէնս պահէր, ասէ.

**«Վեց ար է, յորս արժան է գործել՝ յայնս եկայք բժշկեցարուք»** (Ղուկ. ԺԳ. 14)

Իբրու թէ ինքն իցէ, որ բժշկեն: Ո՞վ յիմար դու, ո՞չ ապաքէն, որ զաւրագոյն է, քան զքեզ՝ նշանաւքն, զոր առնէ՝ պարտ է քեզ գիտել, թէ եւ իմաստուն է եւ գիտէ լաւագոյն, քան զքեզ զաւրինացն հաւաստիս: Այլ, որպէս ասացի, չար է նախանձն եւ որք նո՞վաւ վարակեալք են, չածեն ինչ ի պատշաճիցն զմտաւ, վասն որոյ եւ Յիսուս զսրովեալ յանդիմանէ զանմարդի բարս նոցա.

**«Կեղծաւորք, ասէ, զեզն եւ զէշ արձակէք եւ փանիք փալ ջուր»** (Ղուկ. ԺԳ. 15)

Կեղծաւորս կոչէ զնոսա, զի առ չարութեան խաւսէին եւ չէր ինչ նոցա փոյթ վասն շաբաթուն, եւ պատրուակ զշաբաթն առեալ իւրեանց նենգութեանն, վրէժխնդիր աւրինացն ձեւանան լինել: Վասն որոյ ունի զլեզուս նոցա, որք վասն անասնոցն կարեաց չգրեն ինչ զշաբաթսն եւ վասն մարդոյ, վասն որոյ եւ շաբաթն եղաւ զի հանգիցէ, կամին զի չարչարեցի եւ մի՛ բժշկեալ հանգիստ առցէ: Եւ այլ ուր ասէ՝ զանկեալ անասունն ի խորխորատ ի վեր հանէք, որ կարի աշխատութեան է եւ չէ ինչ փոյթ անդ վասն շաբաթուն, որչա՞փ եւս մեծ է մարդ, քան զանասուն: Զնոյն եւ աստ առնէ: Նախ՝ զանասունս եղ, որոց խնամարկէին արձակել եւ տալ ջուրն եւ ապա յաւելու՝ ձաղել զանագորոյն միտս նոցա: Ասէ.

**«Այս դուստր Աբրահամու էր, զոր կապեաց սափանայ ահաւադիկ ութուփասն ամ: Ո՞չ էր արժան արձակել ի կապանաց անտի ի շարաթու»** (Ղուկ. ԺԳ. 16)

Այսու ամենայնիւ աճեցուցանէ զնոցա անզգամութիւնն եւ զյաղթութիւն ստանայ, զի իրաւունք էին բժշկել զայնպիսի ոք ախտացեալ, նախ՝ զի դուստր էր նահապետին, որով ինքեանք իսկ պարծէին. «զաւակ Աբրահամու եմք»,- ասեն, եւ քանզի ասէին, թէ՛ «անարգէ գորդիս Աբրահամու»: Ահաւանիկ՝ նոքա անարգեն, եւ Յիսուս յարգէ: Եւ յիրաւի՝ զի ատէին զաղքատս եւ զախտաժէտս եւ զարչէին յայնպիսեացն եւ փրկութիւն նոցա չէր ինչ՝ առ նոսա: Իսկ նա, որ Արարիչ է բնութեանս եւ վասն այնորիկ եկն, զի ազատեցէ ի սատանայէ՝ չհայի յարտաքին տգեղութիւն եւ չգարչի, այլ ի բնութիւնն հայի եւ ողորմի զազրացեալ պատկերին, վասն որոյ պատիւ դնէ կնոջն եւ արժանի բժշկութեան համարի, ոչ այնու բնութեամբ, զոր ինքն տեսանէր, այլ զոր նոքա իմանային. «դուստր, ասէ, Աբրահամու էր», եւ ապա թէ՛ «կապեաց սափանայ», որ կարի մարդասիրութեան եւ մեծի զաւրութեան գործ էր՝ զըմբռնեալն ի սատանայէ արձակել եւ դարձեալ՝ այնքան ամաց չարչարեալ, որ եւ զգազանայինսն վայրագութեամբ խոնարհեցուցանէր ի խնամս: Այլ այս ամենայն չէր ինչ նոցա առ ատելութեանն, զոր ունէին առ նա եւ միայն՝ ի բանիցն ճշմարտութենէ յանդիմանեալք, զամաւթի հարեալ, լուեցին: Իսկ պարզամտի ժողովուրդն, որ առանց նախան-



ձու էին, ուրախ լինէին ի վերայ ամենայն փառաւորութեանցն, որ գործէին ի նմանէ: Ուստի դպիրքն վնասէին՝ ուսմիկքն շահ մեծ ունէին, քանզի զնշանսն տեսեալ եւ զբանսն լուեալ՝ հեղձնուին դպիրքն, իսկ ժողովուրդն, մեծաւ ցնծութեամբ, փառաւոր առնէին զԱստուած: Իբրեւ ուղղեաց զթիւրեալն եւ լուեցոյց զպատամբսն եւ ուրախ արար զխոնարհսն, ապա՝ նշանակէ բանիւն՝ ի հեթանոսս սփռել Աւետարանին եւ ընդ բնաւս տարածելոյ արքայութեան Նորա՝ աւրինակաւ մանանխոյ եւ խմորոյ, որ ձգէ ոստս, մինչեւ բաւական լինել ընդունել զվերնագնաց ոգիս իբրեւ զթուչունս եւ ձգել յինքն՝ խառնեալ եւ յիւրն փոխադրել բնութիւն:

**ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ**

(Գլուխ ԺԳ.)

Եւ ուսուցանէր ի միում ժողովրդանոցացն ի շաբաթու (տնս Ղուկ. ԺԳ. 10):

ԻԳ Ժողովրդարանն տեղի աղաւթից շինեալ, յոր ժողովեալ յաւուր շաբաթու ի գործոյ պարապեալ լսէին զպատգամս մարգարէիցն եւ խնդրուածս առնէին: Եւ Յիսուս մտեալ անդ՝ ուսուցանէր, որպէս երբեմն առ նազաւրացիսն, եւ խրատէր զնոսա, որպէս աւրէն էր: Ապա գայ ի սքանչելիսն՝ վկայաբանիցն կացուցանելով:

Եւ ահա կին մի, զոր ունէր այս հիւանդութիւն ամս ութուփասն, եւ ո՛չ կարէր ի վեր հայել (տնս Ղուկ. ԺԳ. 11):

Զի կարի չար պատերազմ է բնութեանս եւ թշնամի սատանայ ո՛չ միայն ոգոյ, այլեւ մարմնոյ:

Եւ Յիսուս փնտեալ զնա՝ ասէ. Կին դո՛ւ, արձակեալ ես ի հիւանդութենէդ (տնս Ղուկ. ԺԳ. 12):

Գթածն Յիսուս թէպէտեւ յառաջ ո՛չ մատեաւ եւ հաւատս ո՛չ ընծայեաց, ո՛չ կարաց անտես առնել ոգորմածն, որ յայնքան չար դիւին ձեռս մատնեալ էր:

Եւ եղ ձեռս ի վերայ (տնս Ղուկ. ԺԳ. 13):

Եւ այս իւրոյ աստուածային իմաստութեանն գործէ՝ դնել ձեռն աստ, որպէս բորոտին (տնս Մաթթ. Ը. 3), զի ցուցցէ, թէ ո՛չ գարշի յումեքէ բժիշկն: Եւ բանիւ ի բացուստ, որպէս որդի թագաւորագինն, որ ասաց. «Երթ, որդին քո կենդանի է» (Յովհ. Դ. 50): Զի ցուցցէ, թէ յամենայնի կարող է, թէ կամի կեցուցանել:

Եւ առժամայն ուղղեցաւ (Ղուկ. ԺԳ. 13):

Զոյգ ընդ բանիցն ընթացաւ առողջութիւն[ն]: Որպէս ասէ Եսայի. «Նա զգաս մեր բառնայ» (տնս Ես. ԾԳ. 4), եւ զհիւանդութիւնս մեր առողջացուցանէ: Եւ Մաղաքիա. «Ահա այր, եւ ծագումն անուն նորա» (Զաք. Զ. 12), եւ բժշկութիւն եւ կեանք ի լեզուի իւրում:

Փառաւոր առնէր զԱստուած (Ղուկ. ԺԳ. 13):

Քանզի այս բնութեան[ս] մերոյ կիրք են, զի նեղեալ անձինք եւ զերծեալք ի վտանգից աւրհնեն եւ գոհանան զԱստուծոյ: Ըստ այնմ. «Տէր, ի նեղութեան յիշեցաք զքեզ» (Եսայի ԻԶ. 16): Իսկ ի հանգստեան դուռնուրեք յիշեն զԱստուած կամ գոհանան: Ուստի հարկի Աստուած ածել զբարկութիւն, զի յիշեսցեն: Յորժամ սպանանէր զնոսա, դառնային եւ խնդրէին զԱստուած: Աւրինակ էր կինս այս հեթանոսաց փրկութեան, որք կարկամեալք էին եւ կորացեալք ի ծանր մեղաց բեռանց, որ ո՛չ էր հնար յերկնից բարձրութիւնն հայել եւ զփառն Աստուծոյ տեսանել: Վասն որոյ զթացեալ ի մեզ Արարիչն բնութեանս ուղղեսցի ի վեր՝ հայեալ ի մեր տեղի բնակութեանն:

Ժողովրդապետն ցասուցեալ, թէ՛ Ընդէ՛ր Յիսուս ի շաբաթու թժ[շկեաց] (տնս Ղուկ. ԺԳ. 14):

Ո՛չ վասն շաբաթուն ցասեալ, այլ վասն բժշկութեանն, որ զփառս նորա յայտնեաց: Եւ ո՛չ յաւրինացն այսպիսի էին հաւաստիք վասն շաբաթու: Եւ բազում ինչ, որ փոքունք էին, առանց աշխատութեան գործէին: Եւ ո՛չ կամէին լուծումն շաբաթու, զի արձակէին ի մարոյ զանասուն եւ զէշ տալ ջուր եւ ո՛չ համարէին վնաս: Եւ արդ՝ զի՞նչ դիւրին քան բանիւ արձակել ի հիւանդութենէ, ընդ որ պարտ էր հիանալ եւ քան զաւրէնսդիրն ի վեր համարել, թէ եւ զաւրէնսն լուծանէր: Այլ չար է նախանձն եւ կոյր, եւ ո՛չ տայ



հայել ի ճշմարտութիւնն: Եւ որքան մեծամեծս տեսանէ, առաւել կատաղի եւ ո՛չ կարէ լսել:

«Վեց ար Է, յորս արժան Է գործել, յայնս եկայք բժշկեցարուք» (Ղուկ. ԺԳ. 14):

Ո՞ք քանի էր կուրուցիւն մտաց նոցա, իբր թէ ինքն ունի իշխանութիւն ամենայն ցաւոց շնորհել առողջութիւն: Ո՛չ ապաքէն, որ զաւրաւոր է նշանաւք քան զքեզ, պարտ էր գիտել, թէ եւ իմաստուն է եւ գիտէ զամենայն հաւաստիս աւրինացն: Այլ որպէս ասացի չար է նախանձն եւ, որ ընդ նովաւ վարեալ են, չիմանան զպատշաճն:

Կեղծաւորք, զէշ եւ զեզն արձակէք փալ ջուր ի շարաթու (հմմտ. Ղուկ. ԺԳ. 15):

Կեղծաւորս կոչէ, զի չարութեամբ խաւսէին, եւ պատրուակ զշաբաթն իւրեանց չարութեանն առնէին՝ վրէժխնդիր աւրինացն ձեւանային լինել, եւ չէր նոցա փոյթ վասն շաբաթու: Վասն անասնոցն կարեաց չգրէին ինչ զշաբաթն եւ վասն մարդոյ, վասն որոյ զշաբաթն եղ Աստուած, զի հանգիցէ: Եւ նոքա կամէին, զի չարչարիցի եւ մի՛ բժշկեալ հանգիցէ: Եւ այլուր ասէ զանկեալ անասունն ի վեր հանէք, որ կարի աշխատութիւն է, որչա՞փ մեծ է մարդ քան զանասուն:

Ասէ. «Այս դուստր Արրահամու Է, որ կապեաց սափ(անայ) ութուփասն ամ, ո՛չ էր արժան արձակել ի շարաթու» (տես Ղուկ. ԺԳ. 16):

Յուցանէ զնոցա անզգամութիւնն եւ զսատանայի պարտութիւնն, զի իրաւունք էին բժշկել զայնպիսի ախտացեալն: Զի դուստր էր նահապետին, որով ինքեանք պարծէին. «Զաւակ Արրահամու եմք» (Յովհ. Ը. 33), եւ ասէին. «Անարգէ գորդիս Արրահամու Յիսուս»: Եւ, ահաւասիկ, եւ նոքա անարգեն, եւ Յիսուս յարգէ: Եւ հրէայքն ատէին զաղքատս եւ զախտաժէտս եւ զարչէին, եւ փրկութիւն նոցա անփոյթ էր առ նոսա: Իսկ նա Արարիչ էր բնութեանս եւ վասն այնորիկ եկն, զի ազատեսցէ ի սատանայէ: Ո՛չ հայէր յարտաքին տգեղութիւնն, այլ կարեկից լինէր բնութեանս եւ ողորմէր, որ այնքան ամաց չարչարեալ էր, որ եւ զգազանս խոնարհեցուցանէր ի խնամս:

Եւ զայս իբրեւ ասաց, յամաւթ լինէին ամենեքին (Ղուկ. ԺԳ. 17):  
Ի բանիցն ճշմարտութենէ յանդիմանեալք՝ զամաւթի հարեալ լուեցին:

Եւ ժողովուրդն ուրախ լինէր ի վերայ ամենայն փառաւորութեանցն, որ գործէին (տես Ղուկ. ԺԳ. 17):

Իսկ պարզամիտ ժողովուրդն, որ առանց նախանձու էին, ուրախ լինէին, եւ դպիրքն վնասէին, եւ զչարեալ՝ հերձ[ն]ուին, եւ ումիկն շահ մեծ ունէին՝ զնշանսն տեսանելով: Եւ զբանս վարդապետութեան լուեալ՝ ցնծութեամբ փառաւորէին զԱստուած:





### 35. ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ ԶՐԳՈՂԵԼՈՅՆ

Ղուկաս ԺԴ. 1-6

#### ԻԳՆԱՏԻՈՍ ՍԵՒԼԵՈՆՅԻ

(Գլուխ ԺԴ.)

Եւ եղեւ ի մփանելն Նորա ի փուն ուրումն իշխանացն փարիսեցւոցն ի շարաթու՝ ուրել հաց, եւ նոքա սպասէին Նմա, զի էր անդ այր մի քրգողեալ առաջի Նորա (փնն Ղուկ. ԺԴ. 1-2):

Թէպէտ եւ առնէին ուրեք-ուրեք փարիսեցիքն ընդունելութիւն Նմա, այլ ոչ կատարեալ սիրով եւ ազատ յախտից եւ առանց գայթակղութեան՝ որպէս Սիմոն, որ աղաչէր, զի կերիցէ ճաշ ընդ նմա եւ վասն կնոջն մեղաւորի, զի թոյլ ետ մերձենալ յոտս նորա՝ գայթակղէր: Եւ դարձեալ՝ միւս փարիսեցին, որ կոչեաց զՆա եւ զի ոչ մկրտեցաւ՝ տկարանայր՝ առ որ բազում առնէ բանս յանդիմանութեան: Այսպէս է տեսանել եւ աստ, կոչեն բարեկամաբար, սակայն սպասեն պատճառս հակառակութեան գտանել, եւ զի էր այրն ջրգողեալ, եւ նոքա գիտէին զՆա, զի կամս բարիս ունէր՝ առ աղքատս եւ առ ախտացեալս եւ անտես ոչ առնէր զայրն, վասն այնորիկ սպասէին: Զոր ակրինակ յորժամ զայրն, որոյ ձեռն գաւսացեալ էր, առաջի կացուցին եւ սպասէին, թէ բժշկեսցէ ի շաբաթու, զի չարախաւսեսցեն, այլ Նա, որ գիտէր զխորհուրդս նոցա՝ կանխաւ ժամանէ՝ ունել զլեզուս նոցա, որպէս անդ, զի ասէ՝ ցասուցեալ անագորոյն մտաց նոցա. զի՛նչ արժան է ի շարաթու՝ բարի՛ ինչ գործել, եթէ չար առնել, ոզի՛ մի ապրեցուցանել, եթէ՛ կորուսանել (Մարկ. Գ. 4) Եւ իբրեւ անպատասխանիս արար, ապա եւ գառողջութիւն ախտացելոյն շնորհէ, զնոյն եւ աստ առնէ. նախ հարցանէ ցնոսա, որ սպասէին՝ չարախաւս լինել. արժա՞ն է, ասէ, ի շաբաթու բժշկել, թէ՛ ոչ: Եւ իբրեւ չգոյր ինչ առ այն նոցա տալ պատասխանի, այլ ամաչեցեալ լռեցին. զի յորժամ վերին իմաստութիւնն խաւսի՝ խափանելի իմաստութիւնս այս՝ զի՞ արդ կարէ արդարանալ, ապա՝ բուռն հարեալ զառնէն՝ ազատեաց յախտէն: Ոչ ժամանակի կարաւտացեալ առ այն եւ ոչ զեղոց, այլ առժամայն բանիւ տուեալ գառողջու-

թիւնն՝ արձակեաց զնալ, որ նախ, քան զայն կարի ծանրացեալ էր ախտիւն եւ պակասեալ ի զնալոյ: Եւ փարիսեցիքն առ այն, ինչ ոչ համարձակեցան խաւսել, վասն զի յառաջագոյն հարցանելովն՝ լռեցոյց զնոսա: Արդ, թէպէտ եւ նոքա լռեցին, բայց Նա տակաւին եւս վկայս Անձին Իւրոյ ի գործոց նոցա կացուցանէ, զի մի բնաւ եւ ի միտս ինչ ունիցին ասել, վասն որոյ ասէ.

«Ո՞յր իցէ եզն կամ էշ եւ անկանիցի ի քրիոր եւ ո՞չ հանիցէ զնա ի շարաթու՝ մեծաւ աշխատութեամբ լուծեալ զշարաթն» (հմմտ. Ղուկ. ԺԴ. 5-6):

Իսկ Տէրն մեր առանց աշխատութեան զամենայն ինչ բանիւ վճարեաց, զի Նա է, վասն որոյ ի սաղմոսի անդ գրեալ է. «Ասաց եւ եղև, հրամայեաց եւ հասարարեցաւ» (հմմտ. Սաղմ. ՃեւԸ. 5):

#### ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

(Գլուխ ԺԴ.)

Եւ ի մփանել նորա ի փուն ուրեմն յիշխանաց փարիսացոցն ուրել հաց ի շարաթու (փնն Ղուկ. ԺԴ. 1):

ԻԳ Թէպէտ առնէին նմա ընդունելութիւն փարիսացիքն, այլ ո՛չ կատարեալ սիրով որպէս Սիմոնն, որ աղաչէր. «Զի կերիցէ ճաշ ընդ նմա» (Ղուկ. Է. 36, ԺԱ. 37), եւ վասն կնոջն մեղաւորի, որ մերձեցաւ յոտսն Յիսուսի, գայթակղէր (փնն Ղուկ. Է. 37-38), եւ միւս փարիսացիին, որ կոչեաց զնա. «Եւ զի Յիսուս ոչ մկրտեցաւ» (ԺԱ. 38): Տկարանայր փարիսացիին, որ յանդիմանեաց բազում բանիւք: Այսպէս կոչեմ բարեկամաբար (հմմտ. Ղուկ. ԺԴ. 10):

Եւ նոքա սպասէին նմա (Ղուկ. ԺԴ. 1):

Սպասեն պատճառս հակառակութեան գտանել, որպէս զայրն, որ ձեռնն գաւսացեալ էր, առաջի կացուցին եւ սպասէին, եթէ բժշկեսցէ ի շաբաթու, զի չարախաւսեսցեն զնմանէ (հմմտ. Մարթ. ԺԲ 10):

Էր անդ այր մի քրգողեալ առաջի նորա (Ղուկ. ԺԴ. 2):



Նոքա գիտէին զՅիսուս, զի կամս բարիս ունէր առ աղքատս եւ առ ախտացեալս: Եւ անտես ո՛չ առնէր զայրն, վասն այնորիկ սպասէին:

Եւ Յիսուս ասէ ցարինաւորսն եւ ցփարիսացիսն. «Արժա՞ն իցէ ի շարաթու բժշկել»: Եւ նոքա լռեցին (տես Ղուկ. ԺԴ. 3-4):

Այլ նա, որ գիտէ զխորհուրդս մարդկան, կանխաւ ունի զլեզուս նոցա: Որպէս անդ ասէր. «Զի՞նչ արժան է ի շարաթու, բարի՞ ինչ անել, եթե՛ չար գործել» (հմմտ. Ղուկ. Զ. 9, Մարկ. Գ. 4): Եւ անդ պատասխանի արար նոցա, եւ ասա զառողջութիւն ախտացելոյն շնորհեաց: Նոյնպէս եւ աստ առնէ: Նախ՝ Հարցանէ, թէ «արժան է ի շարաթու բժշկել», եթէ՛ ոչ: Եւ իբրեւ ո՛չ գոյր նոցա պատասխանի առ այն, «նոքա լռեցին»: Զի յորժամ վերին իմաստութիւնն խաւսի, խափանեալ իմաստութիւնս այս զիա՞րդ կարէ արդարանալ:

Բուռն հարեալ զնմանէ՝ բժշկեաց (Ղուկ. ԺԴ. 4):

Ո՛չ ժամանակի կարաւտացաւ եւ ո՛չ զեղոյ, այլ առժամայն բանիւ տուեալ զառողջութիւնն, զի նա ասաց եւ եղեւ, Հրամայեաց եւ Հաստատ[եցաւ]:

Եւ արձակեաց զնա զնալ (ԺԴ. 4):

Որ նախքան զայն կարի ծանրացեալ էր ախտիւն եւ պակասեալ ի գնալոյ:

Եւ ասէ ցնոսա. Ո՞յր ուրեք էշ կամ եզն անկանիցի ի ջրհոր, ո՛չ վաղվաղակի հանիցէ զնա յաւուր շարաթու: Եւ ո՛չ կարացին փալ պարասխանի առ այն (հմմտ. Ղուկ. ԺԴ. 5-6):

Փարիսեցիքն ոչինչ Համարձակեցան խաւսել, բայց նա տակաւին եւ վկայս անձին իւրոյ ի գրոց կացուցանէր, զի մի՛ բնաւ ի միասին ունիցին ասել:



### 36. ՄԱՔՐԻԼՆ ՏԱՍԻՅ ԲՈՐՈՏԻՅ

Ղուկաս ԺԷ. 11-19

#### ԻԳՆԱՏԻՈՍ ՍԵԻԼԵՌՆՅԻ

(Գլուխ ԺԷ.)

Եւ եղև մինչ երթայր յերուսաղէմ եւ անցանէր ընդ մէջ Սամարիայ եւ Գալիլեացոց (տես Ղուկ. ԺԷ. 11):

Այս վերջին գնալն է Նորա յերուսաղէմ: Մերձ առ այս է եւ յղելն առ Նա քերցն Ղազարու՝ վասն հիւանդանալոյն Ղազարու: Ի նոյն կարգի է նախ գնալն՝ յարուցանել զՂազար, վասն որոյ այսու ճանապարհաւ գայ յայն:

Եւ մինչդեռ մտնէր ի գեաղ ուրեմն՝ պարտեցան Նմա փասն բորոքը՝ կացեալք ի հեռասփանէ, բարձին զձայնս եւ եւ ասեն. «Յիսուս Վարդապետ, ողորմեա՛ց մեզ» (տես Ղուկ. ԺԷ. 12):

Ընդ առաջ եկեալ՝ բորոքն աղաչէին, զի սրբեսցին, սակայն մերձ առ Նա դալ ոչ Համարձակէին, քանզի կասկածէին, թէ գուցէ դժուարի ընդ այն եւ գարշի ի նոցանէ՝ վասն աւրինացն խտրութեան: Վասն զի գիտէին թէ Եղիսէոս զՆէեման ոչ կամեցաւ տեսանել թէպէտ եւ Յորդանանաւ սրբեաց զնա (հմմտ. Դ. Թագ Ե. 1-18, Ղուկ. Դ. 27): Արդ, այսպիսի կարծեաւք՝ ի հեռաստանէ կացեալ՝ աղաչէին: Եւ առ այս Յիսուս, ըստ նոցա կարծեաց, աւրինաւքն վարի, ասէ նոցա՝ գնալ, ցուցանել զանձինս քահանային՝ վասն զի այսպիսի էր աւրինացն պատուէր. «Մարդ ոք, ասէ, յորում երեսցի արած բորոքութեան մարիցէ առ քահանայն, եւ տեսեալ քահանային» (հմմտ. Ղուկ. ԺԳ. 9) եւ «սիս լսնագոյն իցէ կամ պաղպաջուն կամ զնսպագոյն եւ որ ըստ այսմ արինի բանք իցեն» (հմմտ. Ղուկ. ԺԳ. 3): Արդ, զի ցուցցէ, թէ պահէ Նա զաւրէնս զայս, ասէ:

«Երթայք ցուցէք զանձինս քահանայիցն»: Եւ եղև, իբրև զնացին, առժամայն բժշկեցան (հմմտ. Ղուկ. ԺԷ. 14):



Թէպէտ եւ ըստ սահմանի աւրինացն առ քահանայսն ասէ գնալ, սակայն աւրինաւքն ոչ սրբէ, այլ արտաքոյ աւրինաց՝ Իւր Աստուածային զաւրութեամբն: Քանզի աւրինացն այս էր պատուէր. «Եւ փեսեալ, ասէ, քահանային եւ ահա արած բորոքութեան է ըստ առաջին խրատուն պղծեսցէ զնա եւ քակեսցէ զհանդերձս նորա եւ գերծցէ զգլուխ նորա եւ կապեսցէ վերջոյ զբերան նորա եւ հանեն զնա արտաքոյ բանակին զաւուրս ութ եւ ապա կրկին փեսցէ զնա եւ թէ փոխեալ իցէ գոյն կամ թէ նոյն իցէ եւ որ ըստ այսմ կարգի սրբութեան իցէ լուացման եւ պարարագի, որում էր հասանել մաքրութեան» (հմմտ. Ղեւր. ԺԳ. 3): Եւ, արդ, այսպիսեաց ինչ ոչ առնէ, այլ ի գնալն, առժամայն սրբեցան եւ թերեւս առ քահանայսն ոչ ժամանեցին:

Մի ոմն ի նոցանէն, իբրև եպես, թէ բժշկեցաւ, դարձաւ անդրէն, ի ձայն մեծ փառաւոր առնէր զԱստուած, անկաւ ի վերայ երեսաց իւրոց առ ուրսն Նորա եւ գոհանայր զՆմանէ եւ ինքն էր սամարացի: Ասէ Յիսուս. «Ո՛չ փասն սոքա սրբեցան, իսկ արդ, ինունքն ու՛ր են»: Զի ոչ գրան դառնալ փալ փառս Աստուծոյ, բայց միայն՝ այլազգիս այս: Եւ ասէ ցնա. «Արի՛ եւ զնա՛, զի հաւաքք քո կեցուցին զքեզ» (հմմտ. Ղուկ. ԺԷ. 15-19):

Ամենայն ուրեք յայտնի է այս, զի հեթանոսք պատշաճ հաւատս ընծայեցին Տեառն մերոյ, քան զհրէայսն եւ հրէայքն յամենայնի ապախտաւորք գտան՝ որպէս առ մարգարէիւքն եւ առաւել եւս՝ առ Քրիստոսիւ: Վասն որոյ եւ աստ սամարացիս գոհանայ եւ փառաւոր առնէ զԱստուած, քանզի գիտէր, թէ Նովաւ այս զաւրութիւնք կատարին եւ ոչ՝ որպէս Հրէայքն, որք զիւաց համբաւէին զգործսն Աստուծոյ: Այլ սա, սամարացի գոլով եւ՝ բարեբարոյ, եկեալ անկաւ առ ոտսն Տեառն՝ շնորհապարտ լինել եւ գոհանալ զՆմանէ՛ վասն բարեգործելոյն առ նա: Եւ եցոյց ի յինքն զխորհուրդ փրկութեան ամենայն հեթանոսաց, զի սրբեալք մաքրեցան աւազանաւն յանաւրէնութեանց անտի՛ շնորհ ունին փրկողին Աստուծոյ, ըստ այնմ՝ «Ներանոսք վասն ողորմութեան, փառաւոր առնեն զԱստուած» (Նոոմ ԺԵ. 9): Իսկ ինունքն, որ ի հրէից անտի էին, ապերախտ գոլով, ոչ կամեցան գոհանալ, կամ փառս տալ Աստուծոյ: Նկարեցաւ եւ ի սոսա հրէիցն խորհուրդ, որք բազում խնամս գտեալ ի Նմանէ յանապատի անդ եւ յերկրին Քանանու եւ երախտամոռացք եղեալ՝ առ դեւս հաստատէին դաշինս՝ ըստ որում յայտնի է այս ի մարգարէից անտի, որք պախարակէին զանհաւատութիւնն Իսրայէլի: Բայց եւս

բազմապատիկ եղեւ սոցա ստամբակութիւնն առ Փրկչաւն՝ որպէս յայտնի է ամենայնի, որոց միտ գնեն խնամոցն առատութեան եւ նոցա անշնորհակալու լինելն եւ չար փոխարէն Նմա՛ ի ներքս բերել: Վասն որոյ եւ աստ, զարմացեալ ընդ նոսա, որ եւ ոչ ազատելն յայնպիսի ախտէ՛ բարեմիտս արար զնոսա, զի գոհացին զնմանէ կամ փառս Աստուծոյ հանցեն: Արդ, զսոցա անբարի լինելն՝ ընդ պարսաւանաւք եղեալ՝ յարգէ զայլազգին եւ քաջալերեալ՝ յղարկէ, ասէ՛

«Հաւաքք քո կեցուցին զքեզ» (Ղուկ. ԺԷ. 19, հմմտ. Մաւրթ. Թ. 22):

Զի ուսցին եւ այլք՝ այնպիսի հաւատս ընծայել Աստուծոյ, եւ նա հաստատեցի ի նոյն՝ իմացեալ, թէ գովելի իցէ:

#### ՄԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

(Գլուխ ԺԷ.)

Եւ եղև մինչ երթայր նա յերուսաղէմ, եւ անցանէր ընդ մէջ Մամարիայ զալիլեացոցն (փնս Ղուկ. ԺԷ. 11):

Այս վերջին գալն է նորա յերուսաղէմ, եւ մերձ առ այս է յղելն առ նա քերցն Ղազարու, զոր յարոյցն ի մեռելոց:

Մինչդեռ մտանէր ի գիւղ ուրեմն, պարահեցին նմա փասն բորոքք, որ կացին ի հեռաստանէ, բարձին զձայնս իւրեանց եւ ասեն. «Յիսուս վարդապետ, ողորմեա՛ց մեզ» (հմմտ. Ղուկ. ԺԷ. 12-13):

ԿՐ Ո՛չ իշխեցին մերձենալ, գալ առ նա, քանզի գիտէին, թէ Եղիսէ զՆ[է]եման ո՛չ կամեցաւ տեսանել, թէպէտ Յորդանանաւ սրբեցաւ (հմմտ. Դ. Թագ. Ե. 1-18, Ղուկ. Դ. 27):

Ասէ ցնոսա. «Երթայք ցուցէ՛ք զանձինս ձեր քահանայիցն» (Ղուկ. ԺԷ. 14):

Վասնզի այսպիսի էր աւրինացն պատուէր. «Մարդ որ, ասէ, յորում երեսացի արած բորոքութեան, մարիցէ առ քահանայն եւ քահանային փեսանելով» (հմմտ. Ղեւր. ԺԳ. 9), թէ «լսնագոյն իցէ կամ պաղպաջուն, կամ նարագոյն, զի ցուցցէ զինքն պահող արինացն» (հմմտ. Ղեւր. ԺԳ. 3), եւ զնոսա՛ բամբասող նորա:



Եւ իբրեւ գնացին, առժամայն բժշկեցան ի ճանապարհի (հմմտ. Ղուկ. ԺԷ. 14):

Եւ ո՛չ աղաւթիւքն սրբեցան, այլ աստուածային զաւրութեամբն: Արտաքոյ աւրինացն աւրինադիրն բժշկէր զնոսա, զի աւրինացն այս էր պատուէր. յորժամ քահանայն կրկին տեսանելովն ըստ առաջին կերպին մնայր բորոտն, քակէր զասխոթսն հանդերձին եւ գերծոյր զգլուխն, եւ կապէր ի վերջոյ զբերանն: Եւ հանէին զնա արտաքոյ բանակին ութ աւր: Եւ ապա երրորդ անգամ տեսանէին, թէ նոյն իցէ, թէ այլ կերպիւ, կամ սրբեալ իցէ, լուանայր եւ պատարագ մատչէր ըստ աւրինին:

ՍՏ Իսկ սրբութիւնս այս Յիսուսի էր գործ կարողին, որ ի գնալն՝ «առժամայն բժշկեցան»:

ԿԲ Քանզի [ի] խնդրել աշակերտացն յաւելումն հաւատոց: Տէրն յարդար էր զպատահումն նոցա ի նորասքանչ զարմացումն եւ ի հաստատութիւն հաւատոց առաքելոցն, թէ կամք նորա կատարէ զամենայն ինչ յերկինս եւ յերկրի:

Եւ ոմն ի նոցանէ իբրեւ եփես, թէ սրբեցաւ, անդրէն ի ձայն բարձր փառաւորէր զԱստուած: Անկաւ առ ոքս նորա եւ գոհանայր զՏեառնէ. եւ ինքն էր սամարացի (Ղուկ. ԺԷ. 15-16):

ԿԳ Իսկ սամարացոյն զարձուանն զհեթանոսաց ընդունելութիւն նշանակէ յառաքելոցն վարդապետութիւն[ն]:

ԻԳ Քանզի գիտէր նա, թէ նովաւ այս զաւրութիւնք կատարին: Սամարացի գոլով եւ բարբարոյ՝ տպացոյց յինքն զխորհուրդ փրկութեան ամենայն հեթանոսաց, զի սրբեցան աւազանաւն յանաւրէնութեանց շնորհաւքն Աստուծոյ: Ըստ այնմ՝ «Ներանոսք վասն ողորմութեան փառաւոր առնեն զԱստուած» (Նոմ. ԺԵ. 9):

Ասէ Յիսուս. «Ո՛չ սորա փասն սրբեցան, իսկ արդ՝ իննունքն ո՛ր են: Զի ո՛չ գրան դառնալ փալ փառս Աստուծոյ, բայց միայն այլազգիս այս» (քեն Ղուկ. ԺԷ. 17-18):

Որք ի հրէից աստի էին ապերախտք գոլով՝ ո՛չ կամեցան գոհանալ կամ տալ փառս Աստուծոյ: Նկարեցաւ ի նոսա հրէիցն խորհուրդն, որք զիւաց համբաւէին զգործս Աստուծոյ, որք, բազում խնամս գտեալ ի նմանէ, յանապատի անդ եւ յերկրին Քանանու: Եւ երախտամոռացք եղեալ՝ առ դեւս հաստատէին դաշինս: Եւ

յայտնի է այս ի մարգարէից անտի, որք պախարակէին զանհաւատութիւն[ն] Իսրայելի: Եւս բազմապատիկ եղեն նոցա ստամբակութիւնն Քրիստոսիւ, եւ անշնորհակալու եղեալք, որպէս յայտնի է ամենեցուն, որք միտ զնեն: Վասն որոյ զարմանայ ընդ նոսա, որք յայնպիսի ախտէ ազատեալք՝ բարեմիտ ո՛չ եղեն գոհանալով կամ փառս տալով:

Ասէ ցնա. «Արի՛ գնայ, հաւապք քո կեցուցին զ[քեզ]» (Ղուկ. ԺԷ. 19, հմմտ. Մարթ. Թ. 22):

Ամենայն ուրեք յայտնի է այս: Զի հեթանոսք՝ պատշաճ հաւատս ընծայէին Տեառն քան զհրէայսն, որք ապերախտք գտան առ Քրիստոսիւ որպէս առ մարգարէիւքն: Զի հեթանոսք հաւատովք ապրեցան, զի ուսցին եւ այլք այնպիսի հաւատս մատուցանել: Եւ նա հաստատե[ս]ցի ի նմին՝ իմացեալ, թէ գովելի են հաւատք:





**38. ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ ՈՒՆԿԱՆ  
ԾԱՌ-ԱՅԻՆ ՔԱՎԱՆԱՅԱՊԵՏԻ**

Ղուկաս ԻԲ. 49-51

**ԻԳՆԱՏԻՈՍ ՍԵԲԼԵՌՆՅԻ**

(Գլուխ ԻԲ.)

Արդ, իբրև փեսին աշակերտքն զամբոխ Նրեիցն եւ զհազարապետն՝ զինուորաւք դափաւորին, զոր առեալ ունէին ընդ իւրեանս՝ յաւգնականութիւնս. սթափեալք ի քնոյ անփի, զինեցան եւ խիզախեալք ասեն. «Կամի՞ս, զի հարցուք զդոսա» (հմմտ. Ղուկ. ԻԲ 49):

Իսկ Յիսուս արգելու զնոսա, զի ցուցցէ, թէ կամաւ մատնէ զԱնձնն սպանողացն եւ չունի Նա պէտս մարտակցութեան նոցա, վասն որոյ ասէ. «Կարադ եմ աղաչել զՆայր, զի առաքեսցէ այսք անլի քան զերկոստասան գունդս հրեշտակաց՝ ըստ թոյն նոցա» (Մատթ ԻԶ. 53): Եւ զայս ասացեալ՝ դադարեցուցանէ զյարձակումն աշակերտացն:

Իսկ Պետրոս, ոչ անսացեալ հրամանին, յառաջ մաքուցեալ, հարկանէ զծառայ քահանայապետին եւ հաւրանէ զունկն անլոր (հմմտ. Ղուկ. ԻԲ 50):

Զոր ոչ վայրապար պատահումն ասել աւրէն է, զի զծառայն եհար եւ ոչ՝ զայլ ոք, եւ զունկն եւ ոչ՝ զայլ ինչ յանդամոցն: Արդ, զայս առակեաց Մովսէս ի բանս իւր. «Զի ծառայ, ասէ, որ ոչ սիրէ զազաւորութիւն՝ ծակեսցեն զունկն նորա եւ եղիցի սպրուկ յախտեան» (հմմտ. Բ. Օր. ԺԵ. 15): Եւ, արդ, զի եկն Որդին Ազատիչ եւ ոչ կամեցան ազատել զանձինս ի ծառայութենէ անտի ի անիծիցն դատապարտութեան, այլ սիրեցին՝ կալ ի ծառայութեան մեղաց՝ նորին աղաղաւ հատաւ ունկնն այն, զի լիցին ծառայք յաւիտենից մեղացն: Բայց Յիսուս անդրէն հաստատէ՝ յաւրինակ այնոցիկ, որ յազգէ անտի հաւատալոց էին եւ ողջանալոց ի վիրաց անտի՝ անհաւատութեան իւրեանց՝ սաստէ եւ Պետրոսի, զի անդրէն ամփոփեսցէ զսուսերն եւ սպառնայ՝ վրիժապարտ մահու գոլ, որք յաւժարին կրել սուր (հմմտ. Մատթ ԻԶ. 52): Յանդիմանէ այսու բանիւ՝ ոչ զՊետրոս, այլ զնոսին,

որք զինու պատրաստութեամբ եկին՝ վասն արեան Նորա, յաղագս որոյ ասէ.

Իբրև ի վերայ աւազակի՞ այսպիսի պատրաստութեամբ զինու, բազմութեամբ զաւրականաց եկեալ էք (հմմտ. Ղուկ. ԻԲ. 52): Եւ մինչ էի ընդ ձեզ ի տաճարի անդ եւ ուսուցանէի՝ ընդէ՞ր ոչ արկիք յիս ձեռն (հմմտ. Ղուկ. ԻԲ. 53):

**ՄԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ**

(Գլուխ ԻԲ.)

Իբրև փեսին, որ զնովան էին, որ ինչ եղեւն (Ղուկ. ԻԲ 49):

ՍՏ Կալան զՅիսուս, զի ինքն կամեցաւ անկանել որպէս [զ]ճնճողուկ ի ձեռս որսորդացն: Զի թէպէտեւ զայրագնեալ էին մոլեգնաբար, բայց սակայն ո՛չ էին ձեռնհաս, թէ ինքն ո՛չ էր թոյլ տուեալ, զի մի՛ ազատեսցին յանհնարին տանջանացն: Զի զայնչափ զաւրութիւն եւ զհեղութիւն տեսին զՅիսուսի, եւ քան զամենայն զազանս դժնդակագոյն եղեն:

Ասեն ցնա. «Տէ՛ր, հարցուք զնոսա սրով» (Ղուկ. ԻԲ 49):

ԻԳ Աշակերտքն, սթափեալք ի քնոյ անտի, զինեցան եւ խիզախելով յորդորէին ի վրէժխնդրութիւն զվարդապետն:

Եհար մի ոմն ի նոցանէ զքահանայապետին ծառայն եւ ի բաց եհան զունկն նորա (Ղուկ. ԻԲ 50):

ՍՏ Արդ՝ սուրն, որ հանաւ, զի հաստատեսցի բանն Մովսիսի, թէ՛ «Ամենայն անձն, որ ոչ լուիցէ մարգարէին, այնմիկ սափակեսցի» (հմմտ. Բ Օր. ԺԸ. 19):

ԿՐ Աստուած ահաւոր նշանաւք ստացաւ զԻսրայէլ իւր ծառայս՝ ի բաց հանելով ի ծառայութենէ դիւաց: Եւ աւրէնս կարգէ. «Եթէ ոք կամիցի զծառայ իւր ազատել եւ ծառայն ո՛չ կամեսցի, առաջի ձերոց ժողովրդեանն ծակեսցեն զունկն նորա, զի եղիցի նմա ի ծառայութիւն նշանաւն մինչեւ յաւր մահուան իւրոյ» (հմմտ. Բ. Օր. ԺԵ. 15): Զի կամէր Տէ՛րն ի ձեռն խաչին ազատել զնոսա [ի] ծառայական կարգացն, եւ նոքա ո՛չ կամեցան զազատութիւնն: Ի ձեռն հատանելոյն Պետրոսի զունկն ծառայի քահանայապետին, որ էր անդամալոյծն, յուշ ածէ նոցա զտուեալ աւրէնսն, որ զծառայիցն նշանակէր կալ ի ծառայական կարգսն: Զոր այս յայտ արար,



«հապանելով զունկն ծառային», թէ ընդ նմին ի կարգ ծառայութեան մնալոց են, մինչեւ ի կարգ ժամանակաց իւրեանց անձնիշխան կամաւք՝ արհամարհելով զազատութիւն[ն], որ եկն պարզեւել նոցա:

**ՍՏ (Իգ.)** Զի քահանայապետին ծառայն էր առաջնորդ մոլորութեան գնդին բազմութեան, որ եւ ի Պիղատոսէ հռոմայեցիք էին զհետ մատնչին, եւ այլ եւս բազումք ի հրէիցն: Վասն այնորիկ քահանայապետին ծառայն եցոյց զկամս ւարինացն:

**Յիսուս ասէ. Թոյլ փութ մինչեւ ցայդ վայր (Ղուկ. ԻԲ 51):**

**Կր.** Որպէս թէ ասիցէ մինչեւ ցայդ վայր էր ւարինակն, զոր ւաւանդեցի ի հնումն: Եւ հատաւ ունկնն, որք կամեցան կալ ի ծառայութիւն մեղաց:

**ԵՓ** Զի յորժամ ցուցանեն զնախանձ Տեառն ի ձեռն սուսերին: Ուսոյց նոցա մի՛ զանձանց խնդրել վրէժ, այլ տալ զծնաւտն հարկանողին (տե՛ս Զ. 29), զոր մոռացաւ Շմաւոն վասն սիրոյն Տեառն՝ նմանեալ Մովսիսի, որ զՏեառն վրէժն խնդրեաց եւ յիւրն հեղացաւ:

**Մաքուցեալ յունկն՝ բժշկ[եաց] (Ղուկ. ԻԲ 51):**

**ԿՐ** Դարձեալ. ի տեղոջն իւրում հաստատեալ զունկնն: Զի որպէս հատանելովն զհետեալն յաւրինացն Մովսիսի գուշակեաց յազատութենէն, այսպէս եւ հաստատելովն զյետնոցն, որք յԻսրայելէ հաւատալոց էին ի Քրիստոս, ի ձեռն Ենովքայ եւ Եղիայի գուշակեաց: Զոր եւ Պաւղոս նշանակեաց՝ ասելով. «Մինչեւ լրումն հեթանոսաց մրցէ, եւ ասպա ամենայն Իսրայել կեցցէ» (Ղոմ. ԺԱ. 25-26): Դարձեալ. զհեղութիւն եւ զանոխակալութիւն եւ զիւր ներողութիւն յայտ առնէ նոցա եւ առնթեր խաչին զիւր զաւրութիւն ցուցանէ, թէ կամաւ գայ ի խաչն եւ ո՛չ ի հարկէ:

**ԵՓ Այլ քանզի Տէր մեր սահման էր արդարութեան եւ սկիզբն ողորմութեան, ամփոփեաց զսուրն արդարութեամբ ի տեղի իւր, եւ հաղորդ արար ողորմութեան՝ զունկնն ի տեղի իւր բժշկելով:**



## 38. ՆԱՐՍԱՆԻՔՆ Ի ԿԱՆԱ

Յովհաննէս Բ 1-11

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՍԻԲՆԵՅԻ

(Գովխ ԻԶ.)

Եւ յաւուրն երրորդի, հարսանիքն էին ի Կանա Գալիլեացոց. եւ անդ էր մայրն Յիսուսի: Կոչեցաւ եւ Յիսուս եւ աշակերտքն նորա ի հարսանիսն (Յովհ. Բ 1-2):

Երրորդ ւաւրն յորում ելն ի Գալիլեա, որ է վեցերորդ յաւրէն, յորմէ առաջին վկայութիւնն Յովհաննու եղեւ, յառաջին աւուրն ելանէր ի Գալիլեա, յերկրորդումն նախախնամութիւնն որ առ Նաթանա[յ] ել լինէր, յերրերդումն աւուրն հարսանիսն, յորում ուրախացուցանէր զկոչաւզսն. յերրորդումն աւուրն ել եւ Աբրահամ ի տեղին, զոր ասաց նմայ Աստուած եւ հայեցեալ ետես զնա. յերրորդ աւուրն չուեալ որդւոցն Իսրայելի եկին ի Մարա, ուր ջուրն դառն ի քաղցրութիւն փոփոխեցաւ. երիս աւուրս հրամայեաց Աստուած ժողովրդեանն ի կանանց մեկուսանալ. լսաւդացն զտասն պատգամսն, այլ եւ Ովսէէ մարգարէ ասէ. «Յետ երկուց աւուրց յաւուրն երրորդի յարիցուք» (Ովսէ Զ. 3). յերրորդ աւուրն եւ Յովնան թքանիւր ի գետին ցամաք. յերրորդ աւուրն եւ Փրկիչն յարեաւ անդրանիկ ի մեռելոց: Եւ ինձ թուի պատմութեանն ճշմարիտ գոլ, եթէ հարսանիք էին մարդկա[յ]ին, եւ փեսայ եւ հարսն երեւելի, կոչիլն Յիսուսի եւ աշակերտացն ճշմարիտ: Իսկ վերաբերեցին ոմանք այսպէս. Կանա թարգմանի ստացուած, եւ Գալիլեա՝ թաւալումն եւ շարժումն, լսի եւ փոփոխ բնակութիւն: Արդ, ես եթէ հնար է զամենայն միտսդ ասացեալ, որ ի շարժմանէ ի ճշմարտութիւն եւ ի հաստատութիւն փոփոխեցից: Հարսն ճշմարիտ կոչել եւ առնուլ ի հոգի իւր փեսա[յ] զԲանն Աստուծոյ՝ Քրիստոս, եւ աշակերտս՝ զաստուածային զաւրութիւնս: Եւ դարձեալ տեսցես եթէ փեսա[յ] է մովսէսական ւաւրէնն, հարսն՝ հոգին, որ ընդ ւարինաւքն Մովսէսի: Յոր հարսանիս կոչի Յիսուս եւ աշակերտքն, դեռ եւս ընդ հրէական ւարինաւքն ի Կանա, ի ստացուածին զոր ստացաւ Աստուած



զայտոսիկ, որք ընդ աւրինաւքն ասելով, ոչ սա ինքն է հայր քո, որ ըստացաւն զքեզ. արդ, եթէ փեսայն նշանակէ զաւրէնս մովսէսական, եւ հարսն՝ զհոգին ընդունակ աւրինացն, յիրաւի ասէ մայրն Քրիստոսի, Հոգին Սուրբ, եթէ զինի ոչ ունին քանզի աւրէնքն եւ մարգարէութիւնն մինչեւ ցՅովհաննէս. եւ ապա պակասեաց մարգարէական ուրախութիւնն. եւ կամ զայս նշանակէ, զի թէպէտ փեսայ ունէին զաւրէնսն, եւ հարսն զոգիդ ասացեալ, այլ ճշմարիտ միտս աւրինացն ոչ ունէին, որ ուրախացուցանեն եւ կեցուցանեն: Իսկ եկեալ Քրիստոսի, զՂուր, զգիրն, որ սպանանէր, ի զինի փոփոխեաց: Բայց տաճարապետն զո՞ արդեւք նշանակիցէ. զհոգի վարդապետական, որ կարէ իմանալ զմիտս եւ զաւրութիւն աւրինացն եւ մարգարէիցն:

**Ասէ ցնա Յիսուս.** «Զի՞ կայ իմ եւ քո, կին դու, չեւ է հասեալ ժամանակ իմ» (Յովհ. Բ. 4):

Մայրն զեկուցանել թուի հասեալ ժամանակ աստուածային շնորհացն, իսկ Յիսուս ասէր՝ կարծեցեալ ցասմամբ, եթէ դեռ եւս չէ հասեալ ժամանակն, բայց վասն կոչաւղացդ հատուցից շնորհս փոխանակ շնորհաց:

**Կային անդ թակոյկք կճեայք վեց ըսպ սրբութեանն Նրէից, որ քանէին չափանս երկու կամ երիս** (Յովհ. Բ. 6):

Վեց թիւդ կատարեալ է, վասն զի իւրոյ մասանցն հաւասար մասունք դորս. երեք՝ երկու, մի երեք՝ կես, երկու երկրորդ մասն, մի վեցերորդն, երեքն եւ երկու եւ մի շարադրեալ կատարեն զվեց թիւդ: Վասն որոյ եւ ի վեց աւուր պատմի լինել երեւելի աշխարհս՝ ցուցանելով զկատարելութիւն արարածոցս. քարեղէն ասէ վեց թակոյկք. քար երբեմն ի յետին իրս լսի, որպէս ի յասելն. «Եթէ խնդրիցէ հաց, միթէ քա՞ր տայցէ նմա» (Մաւրթ. Է. 9), եւ դարձեալ «ասայ, զի քարինս այս հաց լինիցին» (Մաւրթ. Դ. 3). ասի երբեմն եւ ի բարւոջ, որպէս զքարն, զոր արհամարհեցին շինաւղքն, եւ եղև ի գլուխ անկեանն (Մաւրթ. ԻԱ. 42, Մարկ. ԺԲ. 10, Առկ. Ի. 17, Ա. Պետ. Բ. 8). եւ ահա դնեմ ի Սիովն քար գայթակղութեան (Նոմմ. Թ. 33): Այսց այսպէս ասացելոց, այժմ զքարեղէնդ ի բարի իրս պարտ է համարել յազազս կրկնակի բարեգործութեանն Քրիստոսի: Զվեց թակոյկսդ նշանակեալ ոմն յառաջնոցն ասաց, զհինգ զգայութիւնսդ

եւ զմտածութիւնսդ, որ կառավարէ զդոսսա եւ կարգաւորէ: Նախկին յորովայնին ունայն էին զգայելիքդ եւ սիրտ, ի զգայութեան եւ ի մտածութեան, եւ ի զգայութենէ, ապա լցան ջրով, փոքրագոյն եւ տկարագոյն զգայութեամբք եւ խորհրդովք, եւ ապա երրորդ գինեաւ, աստուածական վարդապետութեամբ, որ ուրախացուցանէ զհոգիս մարդկան:

**Ըսպ սրբութեանն Նրէից, որ քանէր չափանս երկու կամ երիս** (Յովհ. Բ. 6):

Յազազս սրբութեանն աւրինադրութիւն երկական է եւ մարմնական, հոգեւոր եւ երկնային, որք վեհագոյնքն են զերկուսն միայն ընտրեն՝ զհոգեւորն եւ զերկնայինն, իսկ զմարմնականն ի բաց թողուն, համարելով անհնարին լինել արեան երնջուց եւ նոխազաց սրբել զմեղս, իսկ ոմանք եւ զմարմնականն ընդունին ի սրբութիւն, այսպիսիքս տանին չափս երիս. եւ առաջինքն, որ զմարմնականսն ոչ ընդունին, չափս երկուս:

**Ասէ ցնոսա Յիսուս.** «Լցէք զդոսսա քրով» (Յովհ. Բ. 9):

Ղուր նուագագոյն եւ խոնարհագոյն աւրինացն վարդապետութիւն, զինին վեհագոյն եւ մեծագոյն վարդապետութիւն, որ ուրախացուցանէ զհոգիս. այլ ասացի փոքր ի շատէ վերաբերութիւն հարսանեացն՝ փեսային եւ հարսինն, ջրոյն եւ գինոյն եւ տաճարապետին: Այլ եւ զայս գիտացես, զի ոմանք զատաճարապետքն, որ էր ընտանի եւ մերձաւոր փեսային եւ հաւատարիմ ի Յովհաննէս վերաբերեցին:

## ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

[ՎԱՍՆ ՆՇԱՆԱՅ]

Եւ «Ի վաղիս [անդր] կայր Յովհաննէս (Յովհ. Ա. 35), «Ի վաղիս [անդր] կամեցաւ ելանել ի Գալիլ[ե]ա»<sup>1</sup> (Յովհ. Ա. 43):

<sup>1</sup> Սուրբգրային այս եւ նախորդ մեջբերումները հետագայում ավելացված են արտաքին լուսանցում:



Այս երեք աւուրքս զկնի փորձութեանն յանապատէն դառնալոյն են եւ նոյն յաւուրն երրորդի հարսանիք էին Կղէովպեանց եղբաւրն Յովսեփայ, որ հայր Տեառն կոչեցաւ ի Կանաց գալիլեացւոց, որ արար զՂուր գինի: Սկիզբն նշանացն առնելով եւ յայտնեաց զփառս Իւր, վասն այնորիկ իբր եւ մատամբ ցուցանէ եւ զայս ար/ար սկիզբն նշանաց Յիսուս եւ հաւատասցին ի նա աշակերտք Նորա, որ եւ յերիս աւուրս յայս կոչեաց զՊետրոս, ե՛ւ զԱնդրեաս, ե՛ւ զՅակովբոս, եւ զՅովհաննէս, եւ զՓիլիպպոս, եւ զՆաթանայէլ: Սոքա ընդ Քրիստոսի հարսանիսն գոլով տեսին զաստուածազործ սքանչելիսն եւ հաւատացին ի նա, քանզի ծանեան, թէ սա է, որ յարարչութեանն բաժանեաց զՂուրս վերինս ի ջրոցն ներքնոց. զվերինն կառոյց ի վերայ հաստատութեան եւ ներքնոյն հրամայեաց մեծայաղթ զաւրութեամբ ժողովեալ ի ծով եւ յաւուրս Նոյի գնոյն Ղուր գործ ի տան ջանաց պատրաստեաց դարուն մեղուցելոյ եւ առ Մովսէսիւ յերկուս բնութիւնս բաժանեաց զՂուրն՝ եգիպտացւոցն արիւն եւ իսրայէլացւոցն ըմպելի քաղցրաճաշակ, ոմանց յընկճմունս եւ ոմանց ի կեանս. սա նա է, ասեն, որ այժմ գնոյն Ղուր ի գինի փոխեաց եւ ի հանդերձեալսն ունի իշխանութիւն դարձուցանել զՂուրն ի հրոյ բնութիւն ի մաքրումն եւ ի լուսաւորութիւն արդարոցն եւ ի կիզումն մեղաւորացն, զայս ամենայն մտաւ ածելով հաւատացինի նա աշակերտքն Նորա: Երկրորդ նշան թագաւորազինն որդին, որ ի դուռն մահու հասեալ էր, ի բացուստ ձայնիւ միայն ի կեանս դարձոյց եւ այլքն ամենայն, որ զկնի սորա պատմին, յայնմ ժամանակի էր, որ Յով[վ]հաննէս ընդ արձակի շրջէր եւ ապա եմուտ ի բանդ եւ ընդէ՞ր միայն չորք խաւսեցան / Աւետարան եւ ոչ աւելի կամ պակաս: Չորից նիւթոց նշանակ, որովք շինի աշխարհս եւ դարձեալ չորից գետոցդ, որ յԵղեմայ բղձեցին ոռոգել զերեսս երկրի:

### [ՆԱՐՄԱՆԻՔՆ Ի ԿԱՆԱՅ]

(Գլուխ Բ)

«Յաւուրն երրորդի»: Յերրորդ աւուրն Աբրահամ ելանէր ի տեղին որ ասացաւ նմայ յԱստուծոյ եւ հայեցեալ ետես զնա (հմմտ. Ծննդ. ԻԲ 4): Յերրորդ աւուրն չուեալ որդւոցն Իսրայէլի ի Մայիտ եւ ուր ջուրքն դառն ի քաղցրութիւն փոխեցան (հմմտ. Ելից ԺԵ. 22-

25): Յերիս աւուրս ի կանանց հրամայէ մեկուսի լինել լսողացն զպատգամս տեառն (հմմտ. Ելից ԺԹ. 15) եւ Ովսէ[է] մարգարէ. «Յաւուրն երրորդի յարիցուք եւ կացցուք առաջի նորա» (հմմտ. Ովս. Զ. 3), յերրորդ աւուր եւ Յունան ի կիտէն թքանի ի ցամաք (հմմտ. Յովհ. Բ 1-11), յերրորդ աւուր եւ Փրկիչն յարեաւ անդրանիկն մեռելոց (հմմտ. Մարթ. ԻԸ. 1-6, Մարկ. ԺԶ. 5-9, Դուկ. ԻԳ. 56- ԻԿ. 7, Յովհ. ԺԹ. 42-Ի 1-14): Հարսանիք էին ի Կանա գալիլեացւոց: Աւետարանչացն թողեալ. յիշէ Յովհաննէս, բայց ստոյգ յորում Նաթանայէլ երեւեցաւ, ի նմին աւուր էր հարսանիքն Կղէովպէայ եղբաւրն Յովսեփայ ի նոյն գաւառէ, ըստ Յովհաննու, երեք վաղիւ ասաց. երրորդ աւուր միում աւուր եկն ի հարսանիքն եւ Նաթանայէլ ի վկայութիւն՝ դու ես թագաւոր Իսրայէլի, հարսանիք եւ կոչի Յիսուս: Ինձ թուի, թէ ճշմարիտ գոլ, թէ հարսանիք էին մարդկան՝ փեսայ եւ հարսն երեւելի:

ՅՈՆ Հարսն ճշմարիտ կոչիլ եւ առնուլ ի հոգիս մեր եւ փեսայ՝ Բանն Աստուած, զի ինքն է փեսայ եկեղեցւոյ որպէս ցուցանէ Աւետարանն, թէ որ ունի հարսն, նա է փեսայ: Հարսն հաւատացելոց հոգիք գեղեցիկս ի ձեռն Աւետարանին /, ընդ որ միացան ընդ Քրիստոսի ի ձեռն մկրտութեանն շնորհաց:

ՍՏ Փեսայ՝ նշանակէ զաւրէնս, իսկ հարսն՝ զհոգիս հրէիցն ընդունակ աւրինացն: Եւ յիրաւի ասաց մայրն Յիսուսի Հոգւովն Սրբով՝ գինի ո՛չ ունին, զի աւրէնքն եւ մարգարէքն մինչեւ Յով[հ-]աննէս, ապա պակասեաց մարգարէական ուրախութիւն գինոյն, կամ զճշմարիտ միտս աւրինացն ոչ ունէին որ ուրախացուցանէ եւ կեցուցանէ: Իսկ եկեալ Քրիստոս զՂուր՝ զգիրն որ սպանանէր ի հոգեւոր ուրախութիւնն հոգոյն, անապական գինի փոխեաց ի Կանայ, որ ասի ստացուած եւ Գալիլիայ, թաւալումն եւ շարժումն եւ փոփոխ բնակութիւն: Արդ, ես, թէ հնար էր զամենայն միտս շարժման ի ճշմարտութիւն եւ ի հաստատութիւն փոփոխեցից Քրիստոսի վարդապետութեամբ ի Կանայ ի ստացուածի, զոր ստացաւ Աստուած զայնոսիկ, որ ընդ աւրինաւքն էին, սայ ինքն է Աստուած հայր քո, որ ստացաւ զքեզ:

«Անդ էր եւ մայրն Յիսուսի, կոչեցաւ եւ Յիսուս աշակերտաւրն ի հարսանիքսն» (Յովհ. Բ 1):



**ԵՓ** Կոչեցաւ եւ Յիսուս ընդ Հրաւիրեալսն եւ ոչ եկն ընդ նոսա, եկն մայրն Յիսուսի եւ աշակերտքն յառաջագոյ, զի պատուեսցեն զառաջագոյն զինին զյոռին, զի եկեսցէ Տէրն յետոյ եւ բերցէ զանոյշ զինին: Հրաւիրեցաւ ընդ նոսա, իբր թէ ոչ էր որոշեալ ի նոցանէ տեսեամբ երեսաց, արար նշան սքանչելի, զի մեկնեալ լիցի ի նոցանէ, թէ ոչ է նոցա հաւասար բնութեամբ իւրով: Զի յորժամ / կարծիս տացէ տեսիլ նորա թէ իբրեւ զնոսա իցէ եւ ուսուցէ զնոսա նշան սքանչելեաց նորա թէ մեծ է քան զնոսա:

Հրաւիրեաց փեսայն զի փեսայն Քրիստոս եւ Տէր երինից Հարսանեացն յերկրաւորաց ի մարդկան Հարսանիս եկն: Հրաւիրեցաւ ի բազմականն երկրաւոր, որ բացմեցուցանէր զմարդիկ աշխարհիս յարքայութիւն իւր, արկ նոցա աւժիտս, զի ուրախ եղեն ի նա եւ ոչ զարշեցաւ մեծութիւնն նորա յաղքատութենէ նոցա, որք զյոռի զինին ոչ ունէին անգամ ընդ կոչեցեալսն բաւական: Եւ եթէ ոչ էր հեղեալ, փոքր մի ի մեծութենէ իւր, մեծ արաւ եւ տրտում յառնէին անտի: Եւ Քրիստոս Հրաւիրեաց զնոսա ի Հարսանիս իւր եւ Հրաժարեցին, որ չափ յաճախեաց զուրախութիւնսն իւր ի բազմականս նոցա, այնչափ զարշեցան անձինք նոցա ի սեղանոյ նորա, որպէս Հարքն նոցա ի մանանայէն: Նոքա Հրաւիրեցին եւ եկն առ նոսա, եւ Նա Հրաւիրեաց եւ ո՛չ եկնին ի Հարսանիսն Յիսուսի: Նա պատուեաց զՀրաւիրակսն, եւ նոքա անարգամահ արարին զՀրաւիրակսն Յիսուսի: Նա ուրախ արար զբազմականս նոցա, եւ նոքա սպանին զծառայս նորա՝ զառաքեալսն:

**ՈՍԿ** Եկն ի Հարսանիսն, որ զԵւայ եւ զԱդամ ստեղծ եւ աւրհնեաց, նոյն եւ այժմ՝ պատուէ զՀարսանիս, կոչեալ ի Հարսանիքն Քրիստոս եւ աշակերտքն իւր՝ զաստուածային զաւրութիւնս նշանակէ:

**ՍՏ** Էջ նա ի պատերազմէ նահատակեալ ընկալան զնա Հարսանիքն ցնծալով յերրորդումն անտ, / զի յայտ արասցէ, թէ յետ մարտի պատերազմի յուրախութիւն մտանէն նահատակքն Քրիստոսի. թէպէտ իբր աւար Հրաւիրեցաւ, սակայն երեւեցաւ, եթէ տէր է Հարսանեացն, զի բանիւն իւր ելից զպակասութիւն Հարսանեացն, որ լցուցիչն է ամենայն պակասութեանց:

Եւ ի պակասել զինոյն ասէ, մայրն զՅիսուս. «Գինի ոչ ունին» (Յովհ. Բ 3):

**ԵՓ** Զի խորհեցաւ Մարիամ, թէ պատճառանաւք սքանչելեացն Յիսուսի փառք եւ պատիւ լինի նմա ի մէջ բազմականացն, զի սքանչելեացն, զոր առնելոց էր, տեղեակ էր մայրն, զամենայն ինչ, ասէ, պահէր ի մտի իւրում: Ասի, թէ երկեաւ Մարիամ, զի ի գալն Յիսուսի պահանջէին արք Հարսանեացն բերել զինի եւ անարգել քեզ, զի լսեն, թէ եկիր ի պակասել զինոյն նոցա, յետ առաքինութեան անապատին ի վատթարել զթշնամին, մուտ իբրեւ նահատակ առաքինի գործել զսքանչելիսն ի Հարսանիք անտ: Ընթացաւ Մարիամ լինել սպասաւոր կամաց Նորա՝ փոխանակ առաքելոցն. նոյնպէս եւ յետ յաղթութեան Նորա ի գժոխոց, իբրեւ ետես զնա մայրն, կամեցաւ իբրեւ մայր զգուել զնա:

**ՈՍԿ** Ուստի յուսացաւ Մարիամ Հանդիպել շնորհացն եւ ահա ոչ նախքան զայն աներեւոյթ զաւրութիւնն գործեաց ինչ, այլ ետես զմեծասքանչ զաւրութիւնն, որ ի ժամ մկրտութեանն կատարեցան ի վերայ նորա: Եւ զկնի այն զի յայտնեաց զինքն եւ յաւաքեաց զդասս աշակերտացն եւ այնուհետեւ յոյս ստացաւ նշանաց եւ զաւրութեանց:

**ՍՏ** Մաւրն զեկուցանել թուի ինձ, զՀասեալ ժամանակ աստուածային շնորհացն:

«Ասէ զնա Յիսուս. Զի՞ կա[յ] իմ եւ քո՝ կին դու, չեւ է հասեալ ժամանակ իմ» (Յովհ. Բ 4):

**ԵՓ** Այսինքն՝ ես ոչ բռնի երթամ ի վերայ, այլ նախ գտասցեն եթէ հատաւ զինին եւ խնդրեսցեն ամենեքեան ըմպել որպէս զի մեծասցին պարգեւք իմ յաչս նոցա:

Փութացաւ Մարիամ վասն այնորիկ ուսոյց նմա եւ ասաց Յիսուս՝ «Չեւ է Հասեալ ժամանակ իմ նշանաց», կամ «ժամանակ մահու», քանզի արբեալ էին նախանձու արեան մարգարէիցն, թէ բռնութեամբ ընկեցեալ էր զպարգեւս իւր ի վերայ նոցա, ո՛չ ապրեալ լինէր ի չարչարանաց նոցա, զի սկիզբն դեռ էր աւետարանութեան նորա:

«Չեւ հասեալ է ժամանակ իմ»:

Զի զխորհուրդ մաւրն կամեցաւ խափանել: Զի՞նչ չար ասաց, որ երկմտեցոյց զնա ի բանէ նորա, իբր սաստեաց մաւրն, որ յամենայնի հնազանդ գոլով: Վասն պարծանս ստանալոյ եւ ի ցոյցս տեսողացն Հայցէր Մարիամ զնշանսն, որ ոչ փոքր պարծանք էին: Վասն



այսր սաստկագոյն տայ զպատասխանին Յիսուս, զի ցուցէ, թէ ոչ ինչ գործէ նա առ ի պարծանս, այլ ի յաւգուտ լսողաց: Ներէ փոքր ինչ ի սպառել գինւոյն, զի ամենեցուն քաջայայտ լիցի նշանն, զի ոչ ամենեքեան գիտէին զպակասել գինոյն:

**ՍՏ** Իսկ Յիսուս ասէր կարծեցեալ ցասմամբ, թէ դեռեւս չէ հասեալ ժամանակ, բայց վասն կոչողացդ հատուցից շնորհս փոխանակ շնորհաց:

**Ասէ Մարիամ ցպասաւորսն, որ զինչ ասացէ ձեզ՝ [արասջիք] (Յովհ. Բ 5):**

**ԵՓ** Ուսաւ Մարիամ, թէ նշանս առնելոց է, անդ զի բարձցէ զկարծիսն որք ախտանային գինի ոչ գոյ:

**Անդ էին թակոյք կճեայք (Յովհ. Բ 6):**

**ՈՍ** Վասն զի սակաւ ունի ջուր Պաղիստինէ գետոյ կամ աղբերաց, քարեղէն էին թակոյկքն:

**ՍՏ** «Քար»՝ երբեմն յետին իրս լսի, որպէս ասաց Տէր, թէ «Խնդրէ հաց մի՞թէ քար փացէ նմա» (հմմտ. Մարթ. Է. 9) եւ սատանայ ասէր՝ «Ասայ՝ զի քարինքս այսոքիկ հաց լինիցին» (հմմտ. Մարթ. Դ. 3, Ղուկ. Դ. 3), ասի, թէ երբեմն եւ ի բարւոջ, քար զոր անարգեցին շինողքն նա եղեւ գլուխ անկեան (հմմտ. Մարթ. ԻԱ. 42) եւ «դնեմ ի Սիոն քար գայթակղութեան» (հմմտ. Նոմ. Ի 33):

Այժմ զքարեղէն անաւթդ ի բարի իրս պարտ է առնուլ, վասն կրկնակի բարեգործութեանն Քրիստոսի: «Աեց»՝ վեց թիւդ կատարեալ թիւ ասի վասն իւրոյ մասանցն, զի հաւասար է մասունքն Գ. Բ., Բ. Գ. կես երկրորդ մասն Ա. վեցերորդ նշան գրեալ կատարեն, մին թիւ համարոյ է, բայց ի համարն ոչ է՝ ըստ թուական արհեստիցն: Վասն որոյ ի վեց աւր պատմի լինել երեւելի աշխարհս ցուցանելով զկատարելութիւն արարածոցս զհինգ զգայութիւնդ եւ զմիտագ, որ կառավարէ զգոսսա եւ կարգաւորէ: Նա <ի> յորովայն մաւրն ունայն էին զգալիք սրտիդ եւ մտածութիւնք ի զգայութեանէ, ապա լցաւ ջրով, փոքրագոյն եւ տկար զգայութեամբք եւ խորհրդով եւ յետոյ մկրտութեամբ ծնեալ շնորհք հոգւոյն լցոյց: Երրորդ՝ «զինի»՝ աստուածական վարդապետութեամբն ուրախացուցանէ զհոգիս հաւատացելոց ի Քրիստոս: Ըստ սրբութեան հրէիցն ի նոսա արկ Տէր մեր Յիսուս զուսումն վարդապետութեան

իւրոյ, զի յայտ արասցէ թէ ըստ ճանապարհի աւրինացն եւ մարգարէիցն եկն Քրիստոս եւ փոխեաց զաւրենս ջրայինս յաստուածային նոր գինի վարդապետութեամբն իւրով: Որ տանէր չափ երկու կամ երեք: Չափս երկու, որք վեհագոյնքն են, զհոգեւորն եւ զերկնայինն ընտրեն միայն սրբութիւն եւ զմարմնական թողուն՝ համարելով անհնարին լինել արեան երբնջոց խոյից եւ նոխազաց սրբել զմեզս, իսկ չափս երեք՝ առաջինքն երկրականք եւ մարմնականք ընդունին սրբութիւն երբնջաւք եւ նոխազաւք:

**Ասէ ցնոսա Յիսուս՝ լցէք զթակոյկքդ ջրով մինչեւ ի վեր (Յովհ. Բ 7):**

Կարող էր, որպես յանապատին աճեցուցանել զհացն եւ զձուկնն, վասն զի սկիզբն նշանաց էր, յայտնագոյնս տնաւրինէ, զի դիւրընգալ այլոց նշանացն լիցին, կարող էր ի ձեռն նշանաւ հրամանացն լնուլ ինքնին, թակուկացն լինել կատարիչ բանի Նորա, այլ՝ հրամայէ նոցա լնուլ, զի լիցին ձեռք նոցա վկայ նշանացն, զի ցուցցէ, թէ ոչ ըստ իւրում կարողութեան առնէ զզաւրութիւն նշանացն, այլ ըստ նոցա աւգտի՝ ջուր խոնարհագոյն ի նուազ աւրինացն վարդապետութիւն, իսկ գինին վեհագոյն եւ աստուածագոյն վարդապետութիւնն Քրիստոսի, որ ուրախացուցանէ զհոգիս մարդկան, իբրեւ ճաշակեաց տաճարապետն զջուրն գինի ելեալ: Տաճարապետ, որ էր ընտանի եւ մերձաւոր փեսային Քրիստոսի, Յովհաննէս եւ յաւատարիմ տա/ճարապետ եւ զհոգի վարդապետական, որ կարող է իմանալ զմիտս եւ զզաւրութիւն մեկնութեան աւրինացն եւ մարգարէիցն:

**Ջջուրն զինի եղեալ:**

**ԵՓ** Ոչ արտաքս քան զարարածս ել նա, այլ որ ի ջուրց հաստտեաց գինի յորթս գնոյն եւ ոչ աւտար արարած եմոյժ անդր, այլ զառաջին արարածն փոխեաց, զի յայտ արասցէ, թէ նա ինքն է Տէրն նորա, զի ի վախճան կատարածի նոյն ինքն արարածք նորին հրամանաւն նորոգեալ լինին: Զի կամքն, որ շրջեցին արագ հրամանաւքն զջուրն գինի անոյշ, կարող է դարձուցանել ի վախճան կատարածի զամենայն արարածս: Յանապատում ճաշակս այն, որ հրամայեաց ապականիչ հրոյն եւ գգուիչ մանկանցն եղեւ երից, եդ եւ նա հրաման կորուսիչ հրոյն. եւ լինի նորոգիչ սրբոցն եւ



չարացն լինի տրտմեցուցիչ: Ընդէ՞ր Տէր զսկիզբն նշանացն զբնութիւն ջուրցն շրջեաց, զի յայտ արասցէ, թէ Աստուած է, որ շրջեաց զբնութիւն ջուրն ի մէջ թակուկացն, նոյն իսկ զբնութիւն իւր՝ յորովայնի կուսին: Եւ կատարած նշանաց իւրոց՝ գերեզմանս եբաց, զի յայտ արասցէ թէ ոչ գաւրանայ ի վերայ նորա ազահութիւն մահու, զի ջուրքն որ ի մէջ որթուն փոփոխեալ լինին եւ ի մէջ քարեղէն թակուկացն փոփոխեցան, խորհուրդ է մահու նորա, զի սքանչելապէս ի մէջ կուսին յղացաւ առանց առն: Ի ջուրց / անտի արար գինի, զի հաւանեցուցէ վասն ծնընդեան եւ յղութեան որպիսութեանն եւ թակոյկք ի վկայութիւն կուսին, որ ծնաւ զՅիսուս, յղացան թակոյկքն նորասքանչ զարմանալեալք ոչ սովորութեամբ, եւ ծնան գինի եւ այլ ոչ եւս: Յղացաւ կոյսն եւ ծնաւ զՅիսուս մի անգամ այլ ոչ եւս:

Ամենայն մարդ զանոյշ գինին յառաջագոյն ըմպէ (տես Յովհ. Բ 10):

Զի յայտ արասցէ, թէ առաջին գինին նշմարանք էին, զաւրիւնացն ասէ, որ ի ձեռն Մովսէսի տուան:

Եւ դու պահեցեր զանոյշ գինիդ (Յովհ. Բ 10): Փոխանակ նմանոյշ գինոյն, ետու քացախ եւ լեղի, Նա ընդելացոյց յառաջագոյն զբերանս նոցա ի ճաշակ անոյշ գինւոյ իւրոյ, զի պատրաստեցէ ածցէ զլսելիս նոցա ի ճաշակ քաղցր վարդապետութեանն իւրոյ: Եւ փոփոխմամբ ջրոյն ի գինի անոյշ, ըստ առման մարմնոյն ու փոփոխելոյ յանապական տաճար միութեան Բանին, Հրաշագործէ՝ ցուցանելով զփառս անճառս խորինս, որ ի ձեռն ջրոյ եւ հոգոյ կեանք աղբիւրացան եւ բնութիւնն բնութեանց յաղթեաց եւ ջրովք ջուրք ծածկեցան եւ զմարդիկ յանճառելիսն տարան, որք տեսին զսակաւն եւ հաստատեցան յիմանալիսն յանբաւ եւ յանճառսն, պահեցեր ի սպառումն ժամանակաց, յորում բանն Աստուած, խնամաւք եւ ողորմութեամբ իջեալ յերկիր, լցաւ տիեզերք գիտութեամբ եւ փառաւքն Քրիստոսի, եւ որ յԱզամ մեռեալքն էին, կենդանացան, ըստ ամանոցն աստի վերըստին ծննդեամբ ջրով վերացեալ ազգք մարդկան եւ յերկինս տարան մարմնովն Քրիստոսի, ուստի անապական գինին հեղաւ ի ցնծութիւն կենդանեաց եւ մեռելոց եւ յու-

րախութիւն հրեշտակաց եւ մարդկան եւ ի կամս հաւր եւ ի հաւանութիւն որդւոյ եւ ի բնակութիւն Սուրբ Հոգւոյն:

Զայս արար սկիզբն նշանաց Յիսուս [ի Կանա գալիլեացոց] (Յովհ. Բ 11):

Ընդէ՞ր սկիզբն նշանաց զջուրն ի գինի փոխարկեաց զի զցրտացեալ եւ լուծեալ ազգ մարդկան մտաւք առ ծանալթութիւն աստուածութեանն ի համեղագոյն եւ ջերմագոյնս յարդարեալ փոփոխեցէ, որակութիւնն զցանկութիւն առաքինութեան գտկարութիւնն գինոյ մարդկան արծարծել:

ՍՏ Սկիզբն բանից քոց ճշմարտութիւն եւ յաւիտեան են իրաւունք արդարութեան քոյ եւ սքանչելի են գործք քո եւ անձն իմ սիրեաց յոյժ գնոսա եւ յաւետ, զի սրբութեամբ սիրեցին զԲանն Աստուծոյ աշակերտքն եւ բուռն կամաւք կոչեցան ի վերուստ եւ զկնի գնացին սքանչելագործին Տեառն եւ հաստաւդին զէսս, զի սկիզբն գործոց նորա ճշմարտութիւն է եւ արդիւնաւորաց նորա գիտութիւն եւ բան նորա հոգի եւ կեանք եւ ի լեզուի իւր կրէ զողորմութիւն եւ զիրաւունս: «Զայս արար սկիզբն» զառաջագոյն ասացեալս կոչմամբ ի հանդէսն դիտական ի Կանա, որ ասի երկիր ստացուածոյ, ուստի ստացաւ զաշակերտսն ու նոքաւք զբոլոր աշխարհս ի խորհրդական հարսանիս տաճարին, ուր բազմեալքն յուրով եւ տէր / տաճարին, Բանն Աստուած եւ ստացողն բոլորից ի նոսա ուրախ էր եւ Տէր տաճարի սուրբ իւր եւ սուրբն ի մէջ սրբոց եւ Տէր յերկինս յաթոռ իւր:

ՈՍԿ «Գալիլեացոց»: Եւ Տէր նոյն ի Կանայ գալիլեացոց լիով յերկինս եւ բովանդակ յերկրի: Աստուած միացեալ ի մարդ, զանուն տեղոյն ի մէջ բերէ աւետարանիչն, զի ծանալթագոյն էր, զի անտի հետեւելոց էին ազգք: Մարգարէն ասէ՝ «երկիր Զարուովնի եւ Նեփթաղիմայ՝ Գալիլեա հեթանոսաց» (Խմբ. Եսայի Թ. 1), յայտնեաց զփառս իւր աստուածութեամբն զմարդկութիւնն միացեալ եւ հաւատացին աշակերտք իւր՝ որ ամէնահաւր եւ ամէնիշխան, բան եւ լոյս աշխարհի կեանք եւ ազատեցուցիչ, ստեղծող աշխարհի բոլորից եւ միաւորիչ առ միմեանս երկնի եւ երկրի:



Յեպ այսորիկ էջ [Յիսուս] կափառնաւում. ինքն եւ մայր իւր եւ եղբարք [իւր. եւ անդ լիներ ոչ բազում ինչ աւուրս] (Կրնս Յովհ. Բ 12):

Զառաջագոյն եղեալսն բանիւ ընդ այլսն Համարձակեալսն եւ զմնացեալսն ի նոցանէ երկրորդէ Յովհաննէս, որ է յետ երկրորդին Հարսանիսն, ապա զկնի այնորիկ զկարգսն Համառուտէ: «Եւ անդ լիներ»: Որ ամենայն ուրեք, որ յերկինս նստեր ընդ աջմէ Հաւր, որ լի են երկինք եւ երկիր փառաւք նորա, որ անսահման զաւրութեամբն ոչ փակի ընդ տեղեաւք անբաւանդակելի բանն Յիսուս Քրիստոս: Նոքաւք Հանդերձ, որում Հրեշտակք կային մերձ ընդ դոյզն որարն (՞), ի // Կափառնաւումն շրջէր, որում Հրեշտակապետք Հուպ էին շուրջ զնովաւ, որ յաթոռոցն փառաբանի ընդ ձկնորան, Տէրն տերանց ընդ ծառայսն որ ի տէրութեանց գոհաբանի արժանապէս, ընդ աղքատսն, որ ի պետութեանց պաշտի եւ իշխանութիւնքն սպասաւորեն եւ ք[ե]րովբէքն զարմանագրեն եւ ս[ե]րովբէքն թեւասքաւղեալ զգեմս եւ զոտս սրբաբանեն ընդ անյարկսն: «Ոչ բազում ինչ աւուրս», որ յաւիտենիցն էր ընդ Հաւր եւ ոչ ընդ սահմանաւ անկաւնի ժամանակաց, անբաւանդակ ելին Աստուած, բաւանդակեալն ի մարմնի, անհասականն Յիսուս Քրիստոս, որպէս զի կատարեսցէ զժամադրական փութով զանճառ տնաւրենութեանն խորհուրդ, ոչ բազում ժամանակս, զի առաջի կայր երեք ամքն նշանագործք եւ դիմեալ ընտանի փութով առ իրս խաչին եւ երեքաւրեայ լոյս պայծառ յարութեանն նախախնամող փոյթ եւ ոչ ի բազումս՝ ըստ Համբարձմանն եւ Հրաշալի գալստեանն ցոյցք:

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՅԻ**

(Առաջին հատոր. գլուխ Բ.)

**ՎԱՍՆ ՆԱՐՄԱՆԵԱՅ**

Բան. Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին (Յովհ. Բ 1):

Մեկնութիւն. Ասէ իմաստասէրն Արիստոտէլ. «Եւ Հինգ իրի Հետեւի ներգործութիւն, եւ ամենայն էութեան գոյ ներգործութիւն», սոյնպէս աւետարանիչս, յորժամ եցոյց զէութիւն Քրիստոսի, ծնանելով ի մաւրէ, այժմ ասէ զսքանչելագործութիւն Քրիստոսի, որով յայտնի աստուածային կարողութիւն, զի գործ սքանչելեաց զեր ի վերոյ են, քան զամենայն կարողութիւն արարածոցս,

եւ գործ սքանչելեացն Քրիստոսի ցուցանի չորս կերպիւ. Առաջին. ի ծնունդն, զոր արար Քրիստոս յղացմամբ եւ ծնանելովն ի Կուսէն: Երկրորդ. գործն, զոր արար Քրիստոս՝ շրջելով ի մէջ մարդկան: Երրորդ. գործն, զոր արար մեռանելովն: Չորրորդ. գործն, զոր ինչ արար՝ յառնելովն ի մեռելոց: Արդ, աւետարանիչս, զոր ինչ վասն ծննդեանն էր, ասաց, իսկ աստ ասէ զգործ սքանչելեացն, զոր արար Քրիստոս՝ շրջելովն ի վերայ երկրի: Եւ այսմ սքանչելեաց պատճառ էր պակասութիւն գինոյն ի Հարսանիսն, վասն որոյ նախ գրէ զՀարսանիսն եւ նախ ցուցանէ զժամանակն եւ զտեղին, որպէս ասէ. «Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին ի Կանա Փալիլեացոց» (Յովհ. Բ 1):

Մեկնութիւն. Թիւ աւուրցս յետ մկրտութեան եւ յետ փորձութեան, եւ յետ ամի միոյ է ստուգաբար տեսեալ: Եւ է առաջին աւր միջին վաղիւն, որ Անդրէաս եւ Յովհաննէս աշակերտեցան, երկրորդ աւրն վերջին վաղիւն, որ զՓիլիպպոս եւ զՆաթանայէլ կոչեաց, իսկ երրորդ աւր Հարսանեացն ի Կանա, որ էր քաղաք Նաթանայէլի:

Եւ աւրս այս երիւք պատիւ ունի. նախ՝ զի աւր է ծննդեան Տեառն: Երկրորդ. աւր է մկրտութեան յետ երեսուն ամի: Երրորդ. աւր է զՅուրն ի գինի փոխարկելոյն եւ սկիզբն նոր նշանաց, որպէս նոր էր ծնունդն եւ մկրտութիւն:

Դարձեալ ի միտս. առաջինն նշանակէ զծնունդն ի Հաւրէ նախքան զյաւիտեանս, ըստ որում. «Ընդ թեզ է սկիզբն աւուրն վայելչութեան» (Կրնս Մաղմ. ճԹ. 3): Երկրորդ. զծնունդն ի մաւրէ, որ եղեւ սրբութիւն մարդկան. «Չոր Նայր սրբեաց եւ առաքեաց» (Յովհ. Ժ. 36) ասէ: Երրորդն. զյարութիւն ի գերեզմանէ, զի այն էր աւր Հարսանեաց, որպէս եւ խաչն պսակեաց եւ փեսայութեան ասէ Սաղովմոն (հմմտ. Մաղմ. Ը. 6, Երր. Բ 9):

Այլ եւ վասն աւուրս այս գիտելի է ըստ տումարին, զի յուսուարի վեցը, որ է աւր ծննդեան Տեառն եւ մարտի յոթ եւ տասն, որ է առաջին աւր արարչութեան, որ ըստ եբրայեցւոցն ի մինն աւելեացն է, եւ ապրիլի եւթն, որ է աւր աւետեաց: Երեքեան աւրս այս ի մին պատկեր դիպի, որ նշանակէ զեռանձնեայ Աստուածութիւն, այլ լոյսն առաջին, ծնեալ ի Հաւրէ, էջ ի կոյսն եւ ծնաւ ի մաւրէ: Իսկ առ մեզ. առաջին՝ աւր է ծննդեան, երկրորդ՝ աւր մահուանն, երրորդ՝ աւր յարութեան մեր, որ է Հարսանեաց եւ գալստեան փեսային:



Դարձեալ՝ ի յայս միտս երեք աւր հարսանիք առնեմք ըստ մարմնոյ, իսկ հարսանիք, այսինքն՝ հաւանութեամբ փեսային եւ հարսին զյայտնի միաւորութիւն նշանակէ: Իսկ թէ ո՞ւմ էր հարսանիք, ասեն ուղղափառ վարդապետք, եթէ Շմաւոնի էր՝ որդւոյն Կղէովպայ, եղբււրն Յովսէփայ Աստուածազաւրն:

Եւ սուտ են, որ ասեն Յոհաննու գոյ: Եւ յայտ է ի չորից. նախ՝ ի ժամանակէն, որ ի յեռանդեան աւրն աշակերտեցաւ Քրիստոսի Անդրեաւ հանդերձ՝ ըստ Աւետարանին, այժմ զիա՞րդ առնէր հարսանիս: Երկրորդ. յայտ է ի պատմութեանցն, որ ասէ զհարսանիսն լինել Շմաւոնի եւ ոչ՝ Յոհաննու: Երրորդ. անպատշաճ էր, եթէ Տէրն աւրհնէր, եւ ոչ լինէր ծնունդ եւ աճումն: Չորրորդ. անյարմար էր աւրհնել զամուսնութիւն եւ խափանել զնա, որ միմեանց ընդդէմ երեւի՝ գործով խափանել եւ բանիւ հրամայեալ:

**ԹԷ ԲՐԻՍՏՈՍ Ի ՆԱՐԱՆԻՄՆ ԳՆԱՅ**

Հարցումն. Քրիստոս եւ Աստուածածինն վասն է՞ր զնացին ի հարսանիսն, զի անվայելուչ երեւի, զի թէ կրանաւոր ոք երթայ ի հարսանիս, անպատեհ է, մանաւանդ յորժամ կոյս լիցի, զի բազում անվայելուչ բանք լինին ի հարսանիս:

Պատասխանի. Ասեն վարդապետք՝ վասն հինգ պատճառի զնաց Տէր մեր ի հարսանիսն. նախ՝ զի ըստ աւրինացն Մովսիսի ամուսնութիւն առաւել պատիւ ունէր, քան զկուսութիւն: Երկրորդ. զի Յիսուս եւ մայր նորա գիտէին ճշմարիտ, զի ոչ կարէին մեղանչել: Երրորդ. զի յայն հարսանիսն ոչ գոյր այնպիսի խեղկատակութիւն, որպէս այժմ լինի, որոչ է առանց մեղաց: Չորրորդ. Քրիստոս զնաց ի հարսանիսն եւ աւրհնեաց՝ ցուցանելով, թէ սուրբ է ամուսնութիւն եւ ոչ՝ պիղծ, որպէս ոմանք ասացին: Հինգերորդ. զնաց Քրիստոս ի հարսանիսն՝ ցուցանելով, թէ նոյն ինքն է, որ ի զրախտին զԱդամ եւ զԵւայ աւրհնեաց եւ ասէ. «Աճեցէք եւ բազմացարուք եւ լցէք գերկիր» (Ծննդ. Ա. 28), նոյնպէս եւ աստ աւրհնեաց զաւրինաւոր կարգ ամուսնութեան:

Բան. «Ասէ մայրն ցՅիսուս» (Յովհ. Բ 3):

Մեկնութիւն. Նախ՝ զի պատճառ լիցի սքանչելեացն Քրիստոսի, ասէ. «Գինի ոչ ունին»: Երկրորդ. հայեցաւ ի կարիս նոցա եւ կամեցաւ բառնալ զպատճառս ամուսնոյն:

Հարց. Ուստի՞ յուսայր Մարիամ սքանչելիք լինել յորդւոյն, զի դեռ չէր արարեալ:

Պատասխանի. Ի վեց իրաց. նախ՝ յաւետեացն Գաբրիէլի, թէ Որդի է Աստուծոյ եւ զամենայն զոր ինչ կամի եւ առնէ: Երկրորդ. զի Հոգւոյն Սրբոյ բնակարան էր Մարիամ: Երրորդ. զի տեսեալ էր զայնքան հրաշս ի ծննդեանն, եւ զգալ մոգուցն եւ այլն: Չորրորդ. զի լուեալ զվկայութիւն Հաւր եւ Յովաննու, եւ զիջումն Հոգւոյն Սրբոյ յաւուր մկրտութեան: Հինգերորդ. յորժամ զաշակերտսն հաւաքէր, իմացաւ, թէ յայտնելոց է եւզփառս իւր: Վեցերորդ. զի ի նոյն ժամու եղեւ ազդումն ի նա:

**ԹԷ ԽԻՍՏ ՊԱՏԱՄԻՆԱՆԻ ԵՏ ՄԱԲՐՆ**

Բան. «Ձի՞ կայ իմ եւ քո, կին դու» (Յովհ. Բ 4):

Հարց. Սա, որ յամենայնի հնազանդ էր ծնողացն (հմմտ. Ղուկ. Բ 50), ասէ Ղուկաս, աստ վասն է՞ր սաստիւ պատասխանէ:

Պատասխանի. Ասեմք վասն բազում պատճառի. Նախ՝ զի պարծանս եւ փառս ստանալոյ խնդրեաց: Ասէ. «Իմ գործս ոչ է վասն փառասիրութեան, այլ՝ յազուր եւ ի փրկութիւն մարդկան»: Երկրորդ. զի զեռեւս ամենեւին ոչ էր պակասեալ զինին, վասն որոյ ոչ փափազէին եւ ոչ խնդրէին: Երրորդ. զի հրամայաբար ասաց զաւրէն մարց ի վերայ սոսկ որդւոց: Չորրորդ. զի բազումք էին անդ բազմեալ, բայց նա յառաջեաց, ասաց սաստկաբար, զի կամէր, թէ այլ ոք յաւտարացն խնդրեացէ: Հինգերորդ. զի դեռ չէր հասեալ ժամանակ սքանչելեացն, զի սքանչելիս առնէր առ ի հաստատել զվարդապետութիւն իւր եւ տակաւին ոչ էր քարոզեալ եւ վարդապետեալ յայտնապէս, վասն որոյ ասէ. «Չեւ է հասեալ ժամանակ իմ» (Յովհ. Բ 4): Վեցերորդ. զի յաւժարէր ի սքանչելիս առնելն եւ վասն այն եկն ի հարսանիս, այլ սաստելով ասէ. «Ձի՞ կայ իմ եւ քո», այսինքն՝ առ ի գիտել զպատշաճաւոր ժամանակն սքանչելեաց ոչ է հասարակ իմ եւ քո: Եւթներորդ. յորժամ սոսկ իմանաս եւ ոչ հարցմամբ: Ասէ. «Կայ իմ կարողութիւն սքանչելիս առնել, զի Աստուած եմ, այլ չէ ժամանակ»: Ութերորդ. ասէ. «Կայ իմ կարողութիւն ըստ Աստուածութեանս, որ ի Նարե, առնել զինչ եւ կամիմ, այլ մարմինս, որ ի քն ունիմ, զի՞նչ ունի կարողութիւն, գոր դու հրամայելով ասես»: Իններորդ. ասէ. «Կայ իմ կամք, որպէս ըստ Աստուածութեանս, որ ի Նարե առաքեցայ, զի զկամս նորա առնեմ, սոյնպէս արարից եւ գրոյդ, զի



սկիզբն մարդկութեանս իմ ի քէն է»: *Տասներորդ. սոսկ իմայ.* «Ձի՛ կայ իմ եւ քո, կին դու», *այսինքն՝ թէ ի միանալ բնութեամբ Աստուածութեանս եւ մարդկութեանս, որ անքակ մնայ բնութեամբ, կայ, զի արարից ի ժամանակի, այլ դու շուտափոյթ եղեր զաւրէն կնոջ:*

*Բան.* «Ոչ էր հասեալ ժամանակ նորա»:

*Հարց. Ձի՞նչ է.* «Ձեւ էր հասեալ ժամանակ նորա»:

*Պատասխանի.* Նախ՝ ոչ էր հասեալ ժամանակ սքանչելեաց, զի սքանչելիս առնէր առ ի հաստատել զիւր վարդապետութիւն, եւ դեռեւս ոչ էր քարոզեալ յայտնապէս: *Երկրորդ.* «Ձեւ է հասեալ ժամանակ իմ», *այսինքն՝ ժամանակ պատշաճաւոր առնել սքանչելիս, զոր Ես գիտեմ, եւ ոչ՝ դու, զի պակասութիւն գինւոյն դեռեւս ոչ էր յայտնեալ ամենեցուն, վասն որոյ եւ ոչ կարատէին:* *Երրորդ. ոմանք ասեն.* «Ոչ է հասեալ ժամանակ չարչարանաց իմ», *զի յայնժամ առ քեզ խոնարհիմ՝ կատարելով զկամս քո, այն է, որ ի խաչին յանձնեաց զնա ի սիրեցեալ աշակերտն:*

*Չորրորդ. ոմանք հերձուածողք ասեն, թէ գործն Քրիստոսի եւ այլ մարդկան կախեալ կան ի զաւրութիւնս աստեղաց: Եւ այս կարի սուտ է, զի ոչ միայն վասն Քրիստոսի, այլ եւ ամենայն մարդկան բանաւոր զաւրութիւն ոչ է կապեալ ընդ մարմնաւոր գործիս, վասն այն զաւրութիւնք աստեղաց ոչ ուղղակի ազդեն ի բանաւոր հոգիս, այլ միայն անուղղաբար, զի ազդելով ի մարմինն, միջնորդութեամբ մարմնոյն խոնարհեցուցանէ, զի մարդ բանականութեամբն կարէ հակառակիլ կամաց մարմնոյն, վասն որոյ ճարտար աստեղաբաշխք ասեն, թէ այր իմաստուն տիրէ աստեղաց, այսինքն՝ զի յորժամ հետեւի մարմնոյն կամաց, այլ բանական ընտրութեամբն տիրէ աստեղաց, վասն որոյ պարտ է սոյնպէս մեկնել.* «Ձեւ է հասեալ ժամանակ իմ», *այսինքն՝ պատշաճ ժամանակն առնելոյ սքանչելիս:*

*Հարց. Եթէ չէր ժամանակ սքանչելեաց, ապա վասն է՞ր արար:*

*Պատասխանի.* Թէպէտ ոչ էր ժամանակ սքանչելեացն, առ ի հաստատելոյ զքարոզութիւն, այլ արար վասն չորից. նախ՝ վասն աղաչանաց մաւրն: *Երկրորդ. վասն պիտոյից գինւոյն:* *Երրորդ. վասն ամալթոյ նոցին բառնալոյ:* *Չորրորդ. զաշակերտսն հաստատելոյ ի հաւատս ժամանակ եղեւ, որպէս թէ թագաւոր ոմն վասն յանցանաց կշտամբիցէ զմարդ եւ ազնուականք ոմանք աղաչեն զնա*

*ոչ պատուհասել, եւ թագաւորն ասէ.* «Դեռեւ ոչ է ժամանակ թողոյ նոցա զմեղանսն», *այլ վասն աղաչանաց նոցա թողու:*

Եւ այն, զի ասեն, թէ Աստուածածինն փառասիրութեամբ խնդրեաց առնել սքանչելիս, սուտ ասեն, զի փառասիրութիւն մահու չափ մեղք է, եւ Աստուածածին Կոյսն ոչ կարէր մեղանչել ո՛չ մահու չափ եւ ո՛չ ներելի: Եւ այս յայտ է նախ, զի փառք մեղացն այն է, որ միայն վասն անձին լինի, իսկ փառք սքանչելեացն էր փառք Քրիստոսի եւ փառք Հաւր նորա եւ Հոգւոյն, եւ փառք տեսողացն եւ փառք գործոյն սքանչելեաց, ապա ուրեմն ոչ էր մեղք: Դարձեալ՝ մեք յամենայն ժամ փառս տամք Քրիստոսի, եւ ոչ է մեղք: Եւ դարձեալ՝ Տէր զփառաւորիչս իւր փառաւոր է, եւ ոչ է մեղք, նոյնպէս եւ փառք Սրբոյ Կուսին վասն սքանչելեացն Քրիստոսի ոչ էր մեղք: Դարձեալ՝ պատասխանին Քրիստոսի առ մայրն թէպէտ անպատիւ երեւի, սակայն վեհագոյն պատուոյ եւ սիրոյ է նշան չորս պատճառաւ. նախ՝ զի որքան որդին կատարեալ է, այնքան եւ մայրն պատուել, եւ Քրիստոս կոպիտ պատասխանաւն եցոյց, թէ ոչ ունի առ մայրն մարմնական սէր, որ անկատար է, այլ միայն հոգեւոր սէր, որ պատուական է եւ կատարեալ: *Երկրորդ. եցոյց Քրիստոս զհաստատ եւ զկատարեալ սէրն Մարիամու, որ ոչ է մարդահաճոյ, եւ ոչ վասն խիստ պատասխանւոյն խռովէր, վասն այն համարձակ խաւսելովն պատուեաց զնա:* *Երրորդ. առ ի բառնալ զամենայն կարծիս փառասիրութեան ի սքանչելեաց իւրոց, զի թէ քաղցր պատասխան էր տուեալ, ասէին, թէ վասն մարմնական սիրոյն արար զսքանչելիսն:* *Չորրորդ պատճառ. առ ի ցուցանել ըստ հասարակ պատճառի եւ կարգի, թէ ոչ էր հասեալ ժամանակն սքանչելեաց, եւ այս մեծ պատիւ է մաւրն, զի Քրիստոս զոչ ժամանակն վասն պատուոյ մաւրն ժամանակ արար:*

*Բան.* «Ասէ մայրն ցապասաւորսն, որ զինչ ասիցէ [ձեզ], արասցիք» (Յովհ. Բ 5):

*Մեկնութիւն.* Նախ ցուցանէ, թէ գիտէր, որ առնելոց էր Քրիստոս սքանչելիս: *Երկրորդ. եւ զկերպ սքանչելեացն իմացաւ մասնաւորապէս, այսինքն՝ զի Քրիստոս ի յառնել սքանչելեացն Հրամայելոց էր ինչ սպասաւորացն, վասն որոյ ասաց մայրն.* «Չոր, ինչ ասիցէ ձեզ, արասցիք»:



## ՎԵՑ ԹՎԿՈՅԿՔ

Բան. «Անդ էին թակոկը կճեայք վեց» (Յովհ. Բ 6):

Մեկնութիւն. Յորժամ ճառեաց աւետարանիչս զպատճառ սքանչելեացն, որ էր պակասութիւն գինւոյն, այժմ ճառէ, թէ որպէ՞ս եղեւ, մինչ ասէ. «Անդ էին թակոկը կճեայք վեց»:

Մեկնութիւն. Կուճ մարմարն է, թակոյք ամանն է ջրոյ, որպէս կուժ կամ փարչ:

Բան. «Ըստ սրբութեան» (Յովհ. Բ 6):

Մեկնութիւն. Ասէ զայս, զի մի կարծեսցի գինի լինել ի նոսա, այլ վասն լուացման էր պատրաստեալ, զի գետք եւ աղբիւրք պակասէ ի Պաղեստինէ, որովք սրբէին գինքեանս ի հրապարակէ մտեալ կամ բռնալիբ լուանալ, եւ ջրհորոց ջուրն ոչ էր ի սրբութիւն, եւ թէ երբէք գինի լցեալ լինէր ի թակոյսն, ոչ էր պիտոյ այնմ գործոյ:

Բան. Տանէին մի-մի ի նոցանէ մարս երկուս (Յովհ. Բ 6):

Մեկնութիւն. Մարն չափոյ անուն է, որպէս մեք «փաս» ասեմք, եւ յոյնք՝ «սասարիաս»: Եւ է սաւսարիաւսն, այսինքն՝ մարն, երկու լիտր, ո՛չ առաւել մեծ եւ ո՛չ փոքր, այլ միջակ: Ասեն, թէ երկուքն ի նոցանէ տանէին մարս երկուս-երկուս, այսինքն՝ չորս-չորս լիտր եւ չորս թակոյկքն ի նոցանէ տանէին երեք-երեք մարս, որ է վեց-վեց լիտր, եւ լինի ամէնն վեցտասան մար եւ երեսուն եւ երկու լիտր:

Բան. Եւ ասէ. «Լցէք զթակոյկսդ ջրով» (Յովհ. Բ 7):

Մեկնութիւն. Եւ վասն է՞ր ասէ՝ լցէք ջրով, զի կարող էր հրամանաւ լնուլ զջուրն, որպէս յանապատին հրամանաւ զհացն աճեցոյց եւ այլն: Ասեմք վասն երեք պատճառի. նախ՝ զի ցուցցէ, թէ ոչ ըստ իւրում կարողութեան առնէր զսքանչելիսն, այլ ըստ մերում աւգտի: Երկրորդ. զի առաջին նշան էր, պարտ էր հաստատուն եւ յայտնի լինել, զի եւ այլոց նշանացն հաւատասցեն: Երրորդ. զի թէ զլացցին, ոտք եւ ձեռք իւրեանց յանդիմանեցեն զնոսա, որք բերին եւ արկին զջուրն:

Բան. Տաճարապետն (Յովհ. Բ 8):

Մեկնութիւն. Ոմանք զփեսեղբայրն ասեն, որք զհարսանիսն Շմաւոնի ասեն եւ զՅոհաննէս փեսեղբայր եւ տաճարապետ, իսկ Ոսկերեքանն ասէ, թէ քահանայ էր եւ ունէր իշխանութիւն ի տաճարին, վասն որոյ եւ «պետ» ասէ, իսկ խորհրդաբար ասեն տաճարապետ Վերրահամ, իսկ այլք՝ զՅոհաննէս: Անուշ գինի՝ նոր աւրէնքս եւ յոռի հնոյն ասէ:

## ԱՆՈՒՇ ԳԻՆԻՈՅՆ

Բան. Իբրեւ ճաշակեաց (Յովհ. Բ 9):

Մեկնութիւն. Նախ՝ զարմացաւ վասն ազնուութեան գինւոյն, եւ ոչ գիտէր, թէ զաւրութեամբն Քրիստոսի եղեալ էր: Դարձեալ՝ բնութիւն եւ զաւրութիւն, եւ համ, եւ հոտն գինւոյ էր փոխեալ, իսկ գոյնն ջրոյն, ուստի յայտ է յայնմանէ, որ իբրեւ ճաշակեաց, ապա գիտաց, թէ գինի է: Խաւսի ընդ փեսային տաճարապետն՝ յանդիմանելով. «Ամենայն մարդ» (Յովհ. Բ 10), այսինքն՝ որ զիտութեամբ վարի. «Ջանոյշ գինին յառաջագոյն» (Յովհ. Բ 10), այսինքն՝ ի սկիզբն կերակրոյն, զի յայնժամ ճաշակելիքն առաւել ճաշակէ զազնուութիւն գինւոյն եւ ոչ զկնի արբեցութեան, եւ յետոյ զյոռին, այսինքն՝ զանպիտանն ի ժամ արբեցութեան տան, որ ոչ կարեն զանազանել զլաւն ի վատէն, դու պահեցեր, որպէս թէ յիմարութեամբ արարեր: Եւ աստ պատասխանի ետ փեսայն տաճարապետին, բայց Աւետարանս համառաւտ անցանէ, միայն գրէ զփոխել ջրոյն: Յայսմանէ սովորեալ քրիստոնէից ի յրմպել գինւոյն «անոյշ» ասեմք միմեանց, որպէս տաճարապետն անոյշ գինի ասաց: Եւ զայս ասէ սուրբն Եւազրիոս. «Ամենախմբ գինի մի ըմպիցես, - այսինքն՝ կրաւնաւորացն կանոն է, - ապա թէ ըմպիցես, զԱրարիչն ստիմեացես», զայս աշխարհականաց ասէ:

Բան. Ջայս արար սկիզբն նշանաց (Յովհ. Բ 11):

Մեկնութիւն. Նշան, որ բանի լինի, եւ արուեստ, որ ձեռաք առնէր:

Բան. Եւ հաւաքացին [ի նա] աշակերտք նորա (Յովհ. Բ 11):

Մեկնութիւն. Անդրէաս եւ Յոհաննէս եւ այլքն յայնժամ հաւատացին, յորժամ եկին զհետ Նորա, այլ աստ առաւել հաստատեցան: Եւ գիտելի է, զի յորժամ աշակերտքն զհետ Յիսուսի կոչեցան ի



Հարսանիսն, զեռեւս ոչ էին աշակերտեալ նմա, այլ միայն Հաւատացեալ, որպէս ցուցաւ ի վերոյ, այլ աշակերտ կոչէ, զի աշակերտելոց էին, որպէս ասեմք. «Պաւղոս առաքեալ, ծնեալ ի Տարսոն», ոչ թէ առաքեալ ծնաւ, այլ իմանամք առաքեալ, յորժամ զայս ասեմք: Ոմանք թիւրեն զբանս զայս, թէ ոչ է սկիզբն ամենայն նշանաց Իւրոց, այլ միայն ի Գալիլեա էր առաջին:

Եւ սուտ են վասն երկու պատճառի. Նախ՝ զի ասաց Մկրտիչն, թէ՛ ես ոչ զիսկի գնա (Յովհ. Ա. 31), եւ դարձեալ ասէ. «Ի միջի ձերում կայ, զոր դուքն ոչ զիսկի» (Յովհ. Ա. 26): Արդ, եթէ սքանչելիս էր արարեալ, ոչ լինէր անծանալթ նոցա:

Երկրորդ. թէ սքանչելիս էր արարեալ մինչ ի մկրտութիւն, ապա ոչ էր պարտ կարապետ ունենալ եւ վկայ, զի սքանչելիքն բաւական էր ցուցանել, եւ մանաւանդ, զի տղայական Հասակին սքանչելիքն առաւել զարմանալի լինէր եւ յերկար ժամանակաւ:

Եւ գիտելի է, զի Քրիստոս սքանչելիք առնէր վասն երկու պատճառի. նախ՝ զի ցուցցէ զԱստուածութիւն իւր:

Երկրորդ. զի Հաստատեցէ զվարդապետութիւն իւր, որով զմարդիկ ածէր ի Հաւատոս: Արդ, վասն վարդապետութեան պարտ էր մնալ ի կատարեալ Հասակն, որ էր երեսնամեայ Հասակն, որպէս Յովսէփ երեսնամեայ ընկալաւ զտէրութիւն ի վերայ Եգիպտոսի, եւ Դաւիթ երեսնամեայ թագաւորեաց, եւ Եղեկիէլ երեսնամեայ մարգարէացաւ, սոյնպէս պարտ էր Քրիստոսի երեսնամեայ լինել եւ ապա յայտնապէս քարոզել: Նա եւ ոչ վայել էր յառաջ քան զերեսուն ամն սքանչելիս առնել՝ առ ի Հաստատել զվարդապետութիւն իւր: Երկրորդ. զի մինչ ի մկրտութիւն եցոյց զճշմարիտ մարդեղութիւն իւր, զի մի առ աշաւք կարծեսցեն, վասն որոյ ոչ էր պարտ առնել սքանչելիս, իսկ յետ մկրտութեան եցոյց զԱստուածութիւն իւր, վասն այն պարտ էր առնել սքանչելիս:

#### ՎԱՍՆ ՀԱՐՍԱՆԵԱՑ

Եւ աստ լինի վեց Հարց.

Նախ՝ թէ ընդէ՞ր ի Հարսանիսն արար զառաջին նշանս:

Պատասխանի. Նախ՝ զի աւրինակ տացէ մեր Հոգեւոր Հարսանեացն, զի ինքն էփեսայ անմահ եւ Հոգիք Հաւատացելոց՝ Հարսուռնք նմա, ըստ առաքելոյ. «Խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ

ի Քրիստոս եւ յեկեղեցի» (Եփես. Ե. 32), որ մկրտութեամբն զգեստ լինի մեզ եւ մարմնովն կերակուր եւ գլուխ անդամոցս եւ այլն:

Երկրորդ. այն, զի յետ փորձութեան յաղթելոյ գնաց ի Հարսանիսն: Յուցանէ, թէ որք յաղթեն փորձողին, ի Հարսանիսն յաւիտենական վայելեն եւ ուրախանան, իսկ Սրբոյ Կուսին գնալն աւրինակ է մեզ, զի որք սրբութեամբ եւ կուսութեամբ մնան ի կատարումն կենաց իւրեանց, արժանի լինին Հոգեւոր Հարսանեացն եւ արքայութեան երկնից:

#### ՎԱՍՆ ՅԱՏԿՈՒԹԵԱՆՑ ԳԻՆԻՈՅՆ

Երկրորդ Հարց. Վասն է՞ր զսկիզբն նշանացն ի ջուրն արար:

Պատասխանի. Նախ՝ յաւրինակ Հին աւրինացն, զի փոխելոց էր զսառնասառոյց աւրէնս, որ էր՝ ակն ընդ ակն եւ մահ ընդ մահու (հմմտ. Ելից ԻԱ. 24-25), ի նոր քաղցր վարդապետութիւնս, որ ասէ. «Լուծ իմ քաղցր է, եւ բեռն իմ՝ փոքրոգի» (Մատթ. ԺԱ. 30): Երկրորդ. ջրովն ցուցանէ զբնութիւնս մեր, զի ցրտացեալ էաք ի սիրոյն Աստուծոյ եւ լուծեալ Հոգևով եւ անհամ մտաւք, գէջ ախտիւք, իսկ զալստեամբն Քրիստոսի ջերմացոյց ի սէրն Աստուծոյ եւ քաղցր գործովք, որով տանի առ Աստուած:

Եւ այլ երկոտասան յատկութիւնս ունի գինին, որ յարմարի առ մեզ. նախ՝ զի ջուր է որթոյրակացեալ, քաղցրահամ է, անուշահոտ է, ջերմացնէ, զաւրացնէ, արբեցնէ, ուրախարար է, առողջարար է եւ պատճառ սիրոյ, ի բազում պտղոց ժողովի, ի Հնձանս ճմլի, պարզի եւ լինի գինի: Այսպէս ի ճշմարիտ որթոյն որակացաք եւ քաղցրացաք ի բարիս անուշահոտ վարուք եւ այլն:

Երրորդ Հարց. Ընդէ՞ր ի սկիզբն նշանացն զբնութիւն փոխեաց:

Պատասխանի. Նախ՝ զի ցուցցէ, թէ որպէս ըստ բնութեան կարգի է, որ ի մէջ որթոյն ջուրն ի գինի փոխարկի, իսկ որ ի մէջ թակուկացն շրջեցաւ, այն Աստուծոյ էր կարողութիւն, սոյնպէս եւ անսերմն յղութիւն, եւ անխախտ կուսութեամբ ծնունդն աստուածային է Հրաշք, եւ ի վեր, քան զբնութեան գործն: Եւ դարձեալ՝ վկայ լինել վերջին սքանչելեացն, այսինքն՝ յարութեան եւ յաղթութեան մահու, որ ոչ կարաց տիրել նմա: Եւ թէ ոք ասիցէ. «Ապա ջուրն ի գինի եղեալ աւրինակ է Քրիստոսի, որ Բանն մարմին եղեւ», ասեմք թէ՛ ոչ, զի թէպէտ որպէս Բանն մարմին եղեւ, եւ



մարդկային տեսակն ոչ փոխեցաւ, եւ ջուրն գինի եղեւ, եւ գոյնն ոչ փոխեցաւ, այսու նման է, այլ անդ միաւորութիւնն եղեւ, իսկ աստ՝ փոփոխումն, այսու չէ նման: Եւ թէ ասիցէ որ. «Ապա աւրինակ է, զի հացն եւ գինին փոխին ի մարմին եւ յարիւնն Քրիստոսի», ասեմք, թէ՛ ոչ, զի գոյացութիւն ջրոյն փոխեցաւ ի գոյացութիւն գինւոյ, եւ մնաց գոյնն, այնու նման է, այլ զի անդ համն եւ հոտն փոխեցաւ, եւ աստ՝ ոչ, այնու չէ նման:

Այս առ երրորդն:

**ԽՈՐՎԱՏԻՐԴ ՎԵՅԻՑՆ**

Հարց. Վասն է՞ր վեցն են թակոյկք:

Պատասխանի. Ասեմք, թէ չորս ինչ նշանակէ.

Նախ՝ զի վեց թիւն կատարեալ է, զի յիւր մասանցն բաղկանայ առ ի ցուցանել, թէ որ զմարդն ստեղծ ի վեցերորդ աւուրն եւ ի վեցերորդ ժամն յանցեալ, եւ Տէրն ի վեցերորդ դարն եկն ի վեցերորդ աւրն եւ ի վեցերորդ ժամն վերստին նորոգեաց զնա: Երկրորդ. վեց ի նմանութիւն վեցեկի շարժմանցն ի շարժումն գործոց բարեաց:

Երրորդ. ի յաւրինակ հինգ զգայութեանցս եւ միոյ մտացս, որ փոխելոց էր ի յիմացումն, ի տեսութիւնն եւ ի լսողութիւնն աստուածային աւրինացն, ե՛ւ զհոտոտումն, ե՛ւ զճաշակումն, ե՛ւ զշաւշափումն արդարութեան գործոց, ե՛ւ յիւրն նոր ուխտ փրկութեան մերոյ:

Չորրորդ. ի յաւրինակ վեցեկի շարժմանց ամենայն էից լինելութեան ասեմ, եւ յապականութեան, աճելութեան եւ նուազութեան, այլայլութեան, եւ ըստ տեղւոջ փոփոխման, զի փոխելոց էր զմեզ ի նորոգութիւնն:

Հինգերորդ. դարձեալ գիտելի է, զի վեց թակոյկքն աւրինակ էին միոյն Կուսի Աստուածածնի Մարիամու. Նախ՝ զի որպէս թակոյկքն առանց լնլոյ գինւոյ լցան գինով, սոյնպէս Կոյսն Մարիամ առանց սերման առն յղացաւ զՔրիստոս: Երկրորդ. զի որպէս թակոյկքն միանգամ ծնան զգինին եւ այլ ոչ եւս յաւել ծնանել, սոյնպէս եւ Մարիամ մի անգամ ծնաւ զէմմանուէլն եւ այլ ոչ եւս: Երրորդ. զի թակոյկքն ծնան ի տկարութենէ ի զաւրութիւնն եւ ի յանարգութենէ ի պատուականութիւնն, իսկ Քրիստոս զընդդէմ նոցին ի մեծութենէ:

ի նուազութիւնն, ի փառաց յանարգութիւնն, ի ծնունդն եւ յայլն ամենայն՝ ըստ առաքելոյ. «Չանձն ունայնացոյց, զկերպսն ծառայի էառ»:

Վեցերորդ հարց. Թէ վասն է՞ր զսկիզբն վարդապետութեան իւրոյ ի յաւազան սրբութեանցն արար:

Պատասխանի. Չի ցուցցէ, թէ ոչ է հակառակ հնոյն, այնու, որով զվարդապետութիւնն իւր ի նոցանէ սկսաւ:

Այս առաջին վկայութիւնն ի կարողութենէ, թէ Աստուած է Քրիստոս, յորում զջուրն ի գինի փոխեաց:

Այսքան առ այս:

**ՄԱՏԹԷՈՍ ԶՈՒՂԱՅԵՅԻ**

Եւ յաւուրն երրորդի, հարսանիք [էին ի Կանա գալիլեացոց եւ անդ էր մայրն Յիսուսի] (Յովհ. Բ 1):

Նախ պարտ է գիտել, թէ յորմէ հետէ Գ. օր թուէ: Գիտեալ է, զի յետ Խ.օրեա պահոցն եւ փորձութեան անապատին: Առաջին օր զմիջի վաղիւն ասէ, զոր էտես եւ վկայեաց Յովհաննէս, թէ՛ «անա գառն Աստուծոյ» (տես Յովհ. Ա. 29): Երկրորդ օր վերջի վաղիւն է, որ կոչեաց զՓիլիպոս եւ Փիլիպոս՝ զՆաթանայէլ եւ զեղբայր իւր: Իսկ երրորդ օր է այս, որ հարսանիք եղին: Լատինքն ասեն, թէ Յովհաննէս աւետարանչին էր հարսանիքն, բայց եթող եւ կուսութեամբ զկնի Քրիստոսի գնաց: Իսկ ուղղափառ վարդապետք ասեն, թէ Շմաւոնի էր՝ որդ[ւ]ոյն Կղէնովպեա՝ եղբօրն Յովսէփ աստուածաճօր:

«Եւ անդ էր մայրն [Յիսուսի]» Եւս այս ցուցանէ, թէ ի տունն էր Մարեամ կոյսն՝ ընդ ազգակցացն: Դարձեալ ցուցանէ եւս, զհետ պատվաւորացն մեծարեալ:

Կոչեցաւ եւ Յիսուս եւ աշակերտքն [նորա] ի հարսանիսն (տես Յովհ. Բ 2): Իսկ այս եւս խոնարհութիւնն ցուցանէ Քրիստոսի, զի դեռ չէր սքանչելիք ցուցեալ, բայց վասն մօրն զի անդ էր, կոչեցին եւ զնա: Իսկ աշակերտքն դեռ Անդրեաս եւ Փիլիպոս եւ Նաթանայէլ եւ Յովհաննէս էր:

Ասէ մայրն [ցՅիսուս]. Գինի՛ ոչ ունիմ [տես Յովհ. Բ 3]: Պարտ է խնդրեալ, թէ ուստի յուսայր Մարիամ սքանչելիք լինել յորդ[ւ]ոյն, զի դեռեւս ոչ էր արարեալ: [Նախ՝] գիտէր յաւետեացն Գաբրիէ-



լի, թէ որդի Աստուծոյ է եւ Բ.՝ զի Հոգւոյն Սրբոյն բնակարան էր: Երբորդ զի ետես զայնքան հրաշքն ի ծննդեան: Եւ չորրորդ զի լուաւ զմկրտութեան աւուրն զվկայութիւն Հօր եւ Հոգւոյն: Եւ հինկերորդ զի յորժամ աշակերտս հաւաքէր իմացաւ թէ յայտնելոց է զփառս իւր եւ կամ, վեցերորդն զի յայնժամն ազգումն եղեւ ի նա:

«Ջի՛ կայ իմ եւ քո՛ կին դու» (Յովհ. Բ 4): Եւ թէ վասն է՞ր սաստկաբար պատասխանեաց Յիսուս, զի յամենայնի հնազանդ գոլով: Եւ այս վասն բազում պատճառի: Նախ՝ զի ասէ Յոհան Ոսկեբերան, թէ ի պարծանս եւ ի փառասիրութիւն խնդրեաց վասն որոյ ասաց, զի մեծագործս ոչ վասն փառս որսալոյն է, բայց ոմանք զայս բանս ի վերայ Ոսկեբերանին թերութիւն դնեն: Երկրորդ զի դեռ ամէնեւին չէր հասեալ գինին: Երբորդ զի դեռ եւս ոչ փափաքէին գին[ւ]ոյ: Չորրորդ զի հրամայաբար ասէր՝ իբր զօրէն մարց, ի վերայ սոսկ որդ[ւ]ոց: Հինկերորդ զի շատ կա[յ]ին անդ բազմեալ, բայց նա յառաջեաց: Վեցերորդ զի մի՛ ասիցեն չարքն, թէ յառաջագոյն խորհեալ էին, թէ դու խնդրեա՛ եւ ես ցուցից նշան: Եւ դարձեալ է. երբորդ՝ մի հարցմամբ, այլ սոսկ իմանաս ասէ՛ կա[յ] իմ կարողութիւն սքանչելիք առնել, զի Աստուած եմ, այլ չէ ժամանակ: Ը. երբորդ՝ որպէս ասացաք, կա[յ] իմ կարողութիւն ըստ աստուածութեանս, որ ի Հօրէ է, այլ մարմինս, որ ի քէն ունիմ, զի՞նչ ունի կարողութիւն զոր դու հրամայելով ասես, զի մարմինս միայն է ի քէն: Թ. երբորդ՝ դարձեալ սոսկ իմացմամբ կա[յ], ասէ, իմ կամք, որպէս ըստ աստուածութեանս, որ ի Հօրէ առաքեցա, զի զկամս Նորա առնեմ, այսպէս արարից զքոյդ, զի սկիզբն մարդկութեանս իմ ի քէն է: Ժ. երբորդ՝ դարձեալ սոսկ իմա՛, զի կա[յ] իմ եւ քո է կին դու, այսինքն՝ թէ ի միանալ բնութեանս աստուածութեանս եւ մարդկութեանս անքակ միութեամբ կա[յ], զի արարից ի ժամանակի, այլ դու շոյտափոյթ եղեր զօրէն կանաց: ԺԱ.՝ դարձեալ ասաց սաստկաբար՝ զի այսու զհնազանդութիւն կուսին յայտնի արասցէ, զի ոչ ետ պատասխանի որդ[ւ]ոյ իւրոյն, առ այն, սաստկութեան բանն:

[Անդ էին թակոյկը կճեայք վեց՝ ըստ սրբութեանն հրէից] (Յովհ. Բ 6):

«Թակոյկը կճեայք»: Կուճ մարմարն ասի, թակոյք՝ աման ջրոյ, որպէս կուժ կամ փարչ:

«Ըստ սրբութեանն հրէից»: Ասէ զայս, զի մի՛ կարծեսցի գինի լինել ի նոսա, այլ վասն լուացմաննէ պատրաստեալ, զի գետ եւ աղբիւր սակաւ է ի Պաղէստինէ: Զի յորժամ գա[յ]ին ի հրապարակէ, լուանա[յ]ին զանձինս եւ ապա բազմէին, եւ եթէ երբէք գինի լցեալ լինէր, ո՛չ էր պիտոյ այնմ գործածելոյն:

«Տանէին մի մի ի նոցանէ» մարս երկուս [կամ երիս]» (Յովհ. Բ 6): Մարն չափս է անուն, զոր յո[յ]նք սօսարիօս ասեն: Եւ է սօսարիօսն Բ. լիտր, որ ո՛չ առաւել մեծ եւ ո՛չ փոքր, այլ միջակ: Ասեն, թէ երկուքն ի նոցանէ տանէին մարս Բ. Բ., այսինքն՝ Դ. Դ. լիտր եւ Դ. Դ. թակոյքն՝ Գ. Գ. մար, որ է Զ. Զ. լիտր, լինի ամեն ԼԲ. լիտր: / Եւ վասն է՞ր ասաց, թէ դուք լցէք, զի կարող էր, որ յանապատին լորամարզի ծովէ եւ մանանա[յ] յերկնից իջոյց (Ելից ԺԶ. 13-16) եւ ի միւս անապատին զբիւրսն ի սակաւ հացէ եւ ի ձկանցն կերակրեաց (հմմտ. Մատթ. ԺԴ. 13-21, ԺԵ. 32-39, Մարկ. Զ. 30-44, Ը. 1-9, Ղուկ. Թ. 10-17, Յովհ. Զ. 1-14): Այլ ասէ՛ զի զլասցին ոտքն իւրեանց եւ ձեռքն յանդիմանեսցեն, որ բերին եւ արկին ջուր: Տաճարապետ, ասեն ոմանք, թէ փեսա[յ] եղբօրն ասէ եւ որք ասեն Կղէովպա լինել զհարսանիսն. զՅովհաննէս աւետարանիչն ասեն տաճարապետ, իսկ Յոհաննես Ոսկեբերանն ասէ, թէ քահանայ էր եւ ունէր իշխանութիւն ի տաճարն: Վասն այն պետ ասէ: Իսկ խորհրդաբար ասեն զՅովհաննէս Մկրտիչ, իսկ այլք՝ զԱբրահամ: Անո[յ]չ գինի նոր օրէնքս է եւ յուրի, վասն հնոյն ասէ:

Եւ աստ հարցումն ինչ. Նախ՝ թէ վասն է՞ր ինքն Քրիստոս եւ կամ կոյսն մարիամ գնացին ի հարսանիսն:

Պատասխանի. Քրիստոս վասն գնաց, զի ցուցցէ, թէ նոյն Աստուածն եմ, որ զԱդամ եւ զԵւա յառաջն ի դրախտն օրհնեաց եւ այժմ օրհնէ զայս հարսանիս: Տե՛ս, զի սուտ ասեն, որք ասեն՝ Յովհաննէս աւետարանիչն լինել զհարսանիսն, զի անմարթէ յօրհնելն Քրիստոսի ոչ լինել ծնունդ, իսկ կուսին գնալն օրինակ է մեղ, զի որք կուսութեամբ եւ սրբութեամբ մնան, ի կատարումն իւրեանց արժանի լինին հոգեւոր հարսանեաց, այսինքն՝ արքայութեանն երկնից: Երկրորդ՝ վասն այն գնաց ի հարսանիսն Քրիստոս, զի նա ինքն է փեսա[յ] եւ հոգեւորք հաւատացելոց՝ հարսունք գեղե-



ցիկ: Եւ նա միանա ի հոգիս մեր, որպէս փեսա[յ] ըստ առաքելոյ՝ «Խորհուրդս այս մեծ, բայց ես ասեմ իսկ ի Քրիստոս, եւ յեկեղեցի» (Եփես. Ե. 32) եւ ինքն եղեւ մեզ սգեստ ըստ մկրտութեանն, ըստ այնմ, որք ի Քրիստոս մկրտեաց, զՔրիստոս զգեաց եւ եղեւ մեզ կերակուր կենաց մարմնով եւ արեամբն իւրով: Երրորդ՝ եւ թէ վասն է՞ր յետ փորձութեանն եւ յաղթելո[յ] զթշնամին, գնաց ի Հարսանիսն, զի ցուցցէ, թէ որք այնպիսի նահատակութեամբ յաղթեն փորձողին, վերջքն ի Հարսանիքն Հաւիտենից վայելեն եւ ուրախանան:

Երկրորդ Հարցումն. թէ վասն է՞ր Տէր մեր զսկիզբն նշանաց ի ջուրն արար: [Առաջին՝] զի ցուցցէ, թէ զցրտացեալսն յաստուածպաշտութենէ եւ զմեղօք տղմացեալ եւ զգիճացեալ ի միտս մարդկան փոխելոց է ի ջերմ սէր աստուածապաշտութեան եւ ի քաղցրորակ գործս արդարութեան, որով տեսանի Աստուած՝ որպէս զջուրն ցուրտ՝ ի գինի քաղցր եւ ջերմ: Բ. երրորդ՝ յօրինակ հին օրինացն, որ փոխելոց էր զսառնայսառոյց օրէնսն, որ էր «ակն ընդ ակն եւ մահ ընդ մահու» (հմմտ. Ելից ԻԱ. 24) ի նոր քաղցր վարդապետութիւնս, որ ասէ՝ «Առ իմ քաղցր [ե] եւ բեռ[ն ի]մ [փոքր]ոցի» (Մարթ. ԺԱ. 30):

Երրորդ Հարցումն. թէ վասն է՞ր Տէր մեր ի սկիզբն նշանաց զբնութիւնն փոխեաց: Չի ցուցցէ, թէ որպէս ըստ բնութեան կարգի է, որ ի մէջ որթոյն ջուրն ի գինի փոխարկի. իսկ որ ի մէջ թակոյկացն շրջեցաւ, Աստուծոյ էր կարողութիւն: Այսպէս եւ / անսերմ յղութիւնն եւ առանց խախտելոյ՝ կուսութեամբ ծնունդն աստուածային է հրաշք եւ ի վեր քան զբնութեան գործք: Եւ դարձեալ վկայ լինիցի վերջինս սքանչելեացն այսինքն՝ յարութեանն զի յաղթութիւն մահու ոչ կարէ տիրել նմա:

Չորրորդ [Հարցումն]. թէ վասն էր Չ. էին թակոյքն, զի Չ. թիւն կատարեալ է, զի յիւր մասանցն բաղկանա[յ]: [Ա.՝] զի ցուցանէ, թէ որ զմարդն ստեղծի Չ. երրորդ օրն, ի Չ. դարն եկեալ եւ վերըստին կատարեաց գնա: Դարձեալ Բ.՝ վասն այն Չ. ի նմանութիւն վեցեկի շարժմանց. մարդային բնութեանս, զի փոխելոց էր <ի> յանոպա[յ] շարժման գործոց բերեաց: Դարձեալ Գ.՝ վասն այն Չ. <ի> յօրինակն Ե. զգալութեան մերոյ եւ Ա. մտացս, որ փոխելոց էր <ի> յիմացումն, եւ ի տեսութիւն, եւ ի լսողութիւն աստուածային օրինացն եւ զհաստատումն եւ զճաշակումն եւ զշօշափումն արդա-

րութեան գործոց եւ յիւրն նոր ուխտ փրկութեան մերոյ<sup>1</sup>: Դարձեալ Դ.՝ վասն այն Չ. <ի> յօրինակ վեցեկի շարժմանց. ամենայն էից, լինելութեանց ասեմ եւ ապականութեանց ածելութեան եւ նուազութեան այլայլութեան եւ ըստ տեղո[յ] փոփոխման, զի փոփոխելոց էր ի նորոգութիւն: Դարձեալ՝ Չ. թակոյքն օրինակ էին միոյն կուսի. Ա.՝ զի որպէս թակոյքն առանց լնուլ ծնան գինի: Այսպէս կոյսն Մարեամ առանց սերման առն յղացաւ եւ ծնաւ զՔրիստոս: Բ. երրորդ՝ որպէս նոքա միանգամ ծնան եւ այլ ոչ եւս յաւելուն ծնանել: Այսպէս եւ Աստուածածինն՝ միանգամ զէմանուէլն եւ այլ ոչ եւս: Գ. երրորդ՝ զի թակոյքն ծնան ի տկարութենէ ի զօրութիւն եւ յանարգութենէ ի մեծութիւն: Իսկ Քրիստոս զընդդէմ նոցին ի մեծութենէ ի նուազութիւն, ի փառաց ի յանարգութիւն ծնաւ: Ըստ առաքելո[յ] զանձն ունայնացոյց եւ այլն (հմմտ. Փիլիպ. Բ 7):

Հինգերորդ<sup>2</sup>, Հարց՝ թէ վասն է՞ր զսկիզբն վարդապետութեան իւրոյ յաւազան սրբութեանց արար, զի ցուցանէ, թէ ոչ է Հակառակ հնոյն այնու որով զվարդապետութիւնն իւր ի նոցանէ սկսնու:

Չայս արար սկիզբն նշանաց [Յիսուս ի Կանա գալիլեացոց] (Յովհ. Բ 11): Ոմանք թիւրեմ զբանս զայս, թէ ոչ է այս սկիզբն ամենայն նշանաց իւրոց, այլ միայն ի Գալիլեա էր, այս առաջինն եւ բերեն կարծեաց իւրեանց վկայ զբանս այս, որ ասէ՝ զայս երկրորդ նշան արարեալ եկեալ ի Հրէաստանէ ի Գալիլեա եւ բազում նշան արար յԵրուսաղէմ եւ ապա գնաց ի Գալիլեա:



<sup>1</sup> Այս եւ նախորդ կետի հերթագայությունը գրչից սրբագրված է:

<sup>2</sup> Գրիչը վրիպմամբ գրել է վեցերորդ:



### 39. ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ ՈՐԴԻՈՅՆ ԹԱԳԱԻՈՐԱԶՆԻՆ

Յովհաննէս Դ. 43-54

#### ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

Եւ եպր երկուց աւուրց ել եւ գնաց ի Գալիլեա (Յովհ. Դ. 43):

Ո՛չ եմուտ ի Կափառնաւուժ, որ բնակութիւն էր: Վասն է՞ր ոչ գնայ ի Կափառնաւուժ, զի յաճախ արար անդ վարդապետութիւնս եւ ո՛չ հաւատացին վարդապետութեան նորա: Ասէ. «Մարգարէ յիւրում գաւառի պարիս չունի» (Յովհ. Դ. 44): Վասն զի ել ի Հրեաստանէ եւ ոչ մտանէ ի Կափառնաւուժ: Ձիք չար առաւել քան զնախանձ, եւ զչարակնութիւն եւ զնորա փառ՝ հպարտութիւն: Այս է որ զբիւր բարիսն յապականութիւն դարձուցանէ: Հրէայքն ի մարգարէիցն լուեալ եւ զգալուստն գիտէին եւ հալածէին եւ շամբտացիքն ընդուներն, այլեւ զՄովսէս քարկոծ կամէին առնել հրեայքն եւ եգիպտացիքն մատն Աստուծոյ կոչէին: Նաեւ զԵրեմիայ Անաթովթ ոչ ընկալաւ (հմմտ. Երեմ. ԺԱ. 21) եւ Նաբուգոդոնոսոր պատուէր իբրեւ մարգարէայ եւ զԵղիայ Թեղբացիքն եւ զԵղիսիոս Բեղեմէովք եւ Պաւղոս ի Կիկիկեայ ո՛չ քարոզեաց: Վասն որոյ ասէր Տէրն՝ «Վա՛յ քեզ Քորազի[ն], վա՛յ քեզ Կափառնաւուժ» (հմմտ. Մարթ. ԺԱ. 21):

Յորժամ եկն ի Գալիլեա, ընգալան գնա գալիլեացիքն (տեսն Յովհ. Բ 45):

Ձի գիտասցես զգալիլեացիսն ազնուագոյն գոլ, որ արհամարհեալ էին ի հրէիցն, ըստ այնմ որ Նաթանայէլն ասէր. թէ ի Նազարեթէ գալիլեացուց մարթիցէ բարւոյ իմիք լինել նմանապէս եւ հրէայքն ցնիկողիմոս ասէին, քննեա՛ եւ տե՛ս զի մարգարէ ի Գալիլեա ոչ յառնէ, վասն որոյ ցուցանէ յառաջագոյն լեալ եւ ազնուագոյնս զնոսա եւ յայտ առնէ եւ ոչ նշանաց հաւատան քան նշանաւք:

Եկն դարձեալ ի Կանայ գալիլեացուց ուր արար զջուրն գինի (տեսն Յովհ. Բ 46): Սորա յերուսաղեմացուցն եւ ի մեծամեծ նշանացն

որ անդ գործեցաւ, ընգալան զՔրիստոս ի Գալիլեա վասն նախանձուն հրէիցն եկն, բայց ի Կանայ գալիլեացուցն յառաջ կոչեցեալ եկն, վասն զի կրկին գայ: Թուի թէ զյառաջագոյն հաւատն, որ ի նշանացն եղեւ ի նոսա, եկն հաստատել զայն, զի ընդելացուցէ զնոսա ի բարիս ինքնակոչ գալստեամբն:

Անդ էր թագաւորազն մի (կամ յազգէ թագաւորացն կամ յորթագոքացն, կամ ի պատուէ իշխանացն զոր ունէին ի թագաւորացն), որոյ որդի նորա հիւանդ կայր ի Կափառնաւուժ (Յովհ. Բ 46):

Ոմանց այս թուեցաւ, թէ այն է, զոր Մատթէոսն ասաց (հմմտ. Մարթ. Ը. 5-13), բայց ո՛չ այս այն է, զի նա հրաժարէր ի տուն երթալ Քրիստոսի, իսկ սա զերթալն աղաչեաց, նա հանդիպեցաւ յորժամ մէջ ի լեռնէն եւ սա յորժամ դարձաւ ի սամարացուցն Յիսուս: Նորա որդին անդամալոյծ էր եւ սորա որդիս ջերմացեալ: Ասէ ցնոսա Յիսուս, եթէ ո՛չ նշանս տեսանք, ո՛չ հաւատայք. հաւատոյ էր գալն եւ աղաչելն եւ տեսանելն զայլ գործս սամարացուցն, զարմանալի առնէ զի առանց նշանաց հաւատացին կամ ըստ գտանէ զԿափառնաւուժն զիւր քաղաքն ուստի սայ էր: Ղուկաս ասէ զսմանէ, ասաց՝ հաւատամ Տէր, աւգնեա՛ թերահաւատութեանս իմոյ (հմմտ. Ղուկ. Ե. 17-26), թէպէտ հաւատաց, այլ որ բովանդակ, թէ դա է Քրիստոսն: Այլ զժամն հարցանէր եւ փութացուցանէր զփրկիչն, որ թերահաւատ ի նշան էր եւ ոչ հաւատացելոյ նա եւ ո՛չ իբրեւ զմիւսն, որ ասէր բանիւ ասայ եւ բժշկեսցի (տեսն Մարթ. Ը. 8, Ղուկ. Է. 7):

Ասէ ցնա թագաւորազնն. «Տէր, էջ մինչչեւ մեռեալ իցլ մանուկն իմ (Յովհ. Բ 49): Կարծէր թէ, ոչ կարէ յետ մահուն յարուցանել եւ վասն կարեացն որ ունէր հայցէր զբժշկութիւնն ու ո՛չ ըստ հաւատոցն, սակայն Տէրն ո՛չ արգելոյր գիտելով, զի յետոյ լինելոց էր ի տան նորա հաւատք: Եւ այսու յայտնէ, զի տեսանէ եւ նախքան զորդւոյն զհաւրն թերահաւատութիւն բժշկեաց, զի նշան ո՛չ հաւատացեալքն խնդրեն, այլ թանձրացեալքն դանդաղութեամբ եւ թերահաւատքն: Վասն որոյ ասէր Յիսուս զՓիլիպպոս թէ հաւատաս, թէ Հայր Յիս եւ ի Հայր, սակայն վասն գործոցն հաւատացէք:

Մինչդեռ իջանէր ընդառաջ եկին ծառայքն, աւետիս հտուն, թէ որդին քո կենդանի է եւ հարցանէր, ասնեն «Երէկ յեւթներորդ ժամուն եթող զնա ջերմնն»: Ձի ոչ դուզնաքեայ թաւթափեցաւ ի



ցաւոցն, այլ յանկարծակի ի կատարեալապէս եւ մի համարել այլ դառնալ ախտին, ո՛չ որպէս առ բժիշկն տեսանէ ոք, որ առ սակաւ սակաւ գալ յառողջութիւն, այլ ընդ հրամանին եւ կատարեալապէս դաւրանայր մանուկն, որպէսզի յայտնի լիցի տեսողացն աստուածային զաւրութեանն ցոյցք:

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԲԱՅԻ**

(Առաջին հարոր. գլուխ Դ)

**Բան. Եւ յեպ երկուց ատուրց ել անորի** (Յովհ. Դ. 43):

Մեկնութիւն. Ջիւրդ է, զի երկու աւր միայն զսամարացիսն դարձոյց եւ ի գաւառ Իւր զբազում աւուրս կացեալ զսակաւս դարձոյց:

**ՎԱՍՆ ՄԱՐԳԱՐԵԻՑ**

Ասէ, զի ինքն Յիսուս վկայեաց, թէ՛ «Մարգարէ ի գաւառի իւրում պարի ոչ ունի» (տեսն Յովհ. Դ. 44), եւ յայտնի է այս ի մարգարէիցն, զի Եղիա ոչ միայն ի Թեգբէ, այլ յամենայն Իսրայէլ ոչ ընկալան, վասն այն գնաց յերկիրն Սիզոնի ի գեղ մի Սարեփթա, առ կին մի այրի, զորոյ զորգին յարոյց (հմմտ. Գ. Թագ. ԺԷ): Ասեն ոմանք, թէ Յունան մարգարէն էր մանուկն այն: Սոյնպէս եւ ոչ զԵրեմիաս [Ան]թովթ ընկալաւ, եւ ոչ զԵղիսէէ, սոյնպէս եւ զՍամուէլ Հռամա ոչ ընկալաւ, սոյնպէս ժողովուրդն զՄովսէս չընկալաւ, սոյնպէս եւ հրէայքն զՔրիստոս չընկալան:

Եւ այս լինի վասն չորս պատճառի. նախ՝ վասն նախանձու ընկերացն, զի վասն ապականեալ բնութեանս բուսաւ ի մէջն նախանձ, որ ամենայն արուեստագէտ զհամարուեստս իւր ատէ, որպէս դարբին՝ զդարբին, եւ եղբայրն՝ զեղբայր, վարդապետ՝ զվարդապետ եւ այլն, զի նման եւ հաւասարն ատեն զմիմեանս եւ ոչ աննման եւ անհաւասարն: Երկրորդ. զի մինն ի միւսոյն յանդիմանի, իսկ առաւել մարգարէն յանդիմանէ զանկարգութիւնս այլոց, վասն այն ատեն գնա, ըստ այնմ՝ «Ատեցին զյանդիմանիչս ի դրունս իւրեանց» (տեսն Ամովս Ե. 10): Երրորդ. զի առաւել սիրեն զնոր իրս, քան զհին եւ զծանաւթն, որպէս ի կերակուրս է տեսանել, յորժամ բազում ուտէ՝ տաղտկանայ, եւ զոր առ ձեռն պատրաստ ունի մարդ, անարդ համարի եւ նուազ, թէպէտ պատուական իցէ:

Չորրորդ. վասն տղայութեան հասակին տեսանելոյն եւ գործոյն անմտութեան ուրանան զչնորհքն, որ յետոյ հանդիպեցան նմա:

Դարձեալ գիտելի է, զի Յիսուս դառնալով ի Գալիլեայ, ո՛չ գնաց ի Նազարեթ գաւառ իւր, զորոյ զպատճառն ցուցանէ Աւետարանն՝ ասելով. «Չի ինքն իսկ Յիսուս վկայեաց» (Յովհ. Դ. 44), այսինքն՝ նախ վկայեալ էր, որպէս Ղուկաս գրէ, թէ. «Մարգարէ յիւրում գաւառի պարի ոչ ունի» (Ղուկ. Դ. 24, Մարթ. ԺԳ. 57, Մարկ. Զ. 4), Քրիստոս այժմ ոչ գնաց ի Նազարեթ, զի նախ գնաց անդ եւ արհամարհեցաւ, յորժամ կամեցան զնա գահավէժ առնել, այլ չոգաւ ի միւս մասն գալիլեացւոց եւ անդ ընկալան զնա պատուով, որպէս ասէ:

**Բան. Այլ յորժամ եկն նա ի Գալիլեայ, ընկալան** (Յովհ. Դ. 45):

Մեկնութիւն. Այսինքն՝ հաւատալով զնա իբրեւ զՔրիստոս յԱստուծոյ առաքեալ ընդունելով:

**Բան. Զի փեսեալ էին զնշանսն, զոր արար յԵրուսաղէմ** (տեսն Յովհ. Դ. 45):

Մեկնութիւն. Յուցանէ, թէ ի մէջ նոցա ոչ արար նշանս, այլ յԵրուսաղէմ՝ ի տաւնին, յորժամ Նիկողիմոս վարդապետն հաւատաց, նոյնպէս եւ նոքա հաւատացին:

**Բան. Զի նոքա եկեալ էին ի փաւնն** (տեսն Յովհ. Դ. 46):

Մեկնութիւն. Որպէս ասացաք յառաջագոյն, թէ ամենայն հրէայքն պարտական էին գալ ի տաւնն յայն:

**ՈՐՔԱՆ Է ԳԱԼԻԼԵԱ**

Հարց. Քանի՞ է Գալիլիա:

Պատասխանի. Թուի, թէ երեք է. նախ՝ Գալիլիա լեառն, որ է մերձ յԵրուսաղէմ, ուր ժամադիր եղեւ նոցա Յիսուս: Երկրորդ. Գալիլիա հրէից, ուր Կանա գալիլեացւոցն էր եւ Նազարեթ, եւ

Կափառնայում մայրաքաղաք է նոցա: Երրորդ. Գալիլեա հեթանոսաց, որպէս ասէ Եսայի. «Որ նստէր ի խաւարի, լոյս ծագեաց» (հմմտ. Եսայի Թ. 2), կամ երկու կողմ է գալիլեացւոց երկիրն. մինն հրէից եւ մինն հեթանոսաց կոչի:

Հարց. Վասն է՞ր գալիլեացիքն արհամարհեալ էին ի մէջ նոցա:



Պատասխանի. Վասն երկուց. նախ՝ զի սահմանակիցք էին Հեթանոսաց եւ ծոյլք: Երկրորդ. զի ծեքական էր լեզուն, ըստ այնմ՝ «Լեզու քո յայտ առնեն զքեզ» (հմմտ. Մատթ. ԻԶ. 73):

**ՎԱՍՆ ԹԱԳԱՒՈՐԱԶՆԻՆ**

Բան. «Թագաւորազն մի» (Յովհ. Դ. 46):

Մեկնութիւն. Ձի ի ցեղէն Հերովդէի էր, կամ զի իշխանութիւն ինչ ունէր ի Հոռոմայեցոցն, զինչ եւ իցէ՝ Հեթանոս էր: Եւ վասն երեք պատճառի ոմանք նոյն ասեն զսա եւ զհարիւրապետն, զոր Մատթէոսն ասէ (հմմտ. Ը. 5-13). նախ՝ զի իշխան էին, երկրորդ՝ ի Կափառնայումն, երրորդ՝ Հեթանոս: Այլ ոչ է նոյն վասն վեց պատճառի, որպէս ասէ Ոսկեբերանն. նախ՝ զի նա հրաժարէր զերթալն Փրկչին ի տունն՝ ասէ. «Չեմ բաւական, այլ ասա բանիւ» (հմմտ. Մատթ. Ը. 8), վասն որոյ եւ գովեցաւ, իսկ սա զերթալն աղաչէր եւ ոչ չոգաւ, այլ յանդիմանեցաւ: Երկրորդ. նա ի Կափառնայումն հանդիպեցաւ, յորժամ էջ ի լեռնէն, իսկ սա՝ յորժամ դարձաւ ի սամարացոցն եւ եկն ի Գալիլեայ ի Կանայ: Երրորդ. վասն որակութեան ցաւոցն, զի աստ ջերմ ասէ եւ անդ՝ անդամալոյծ: Չորրորդ. վասն դիմաց հիւանդին. այն ծառայ էր, եւ այս՝ որդի: Հինգերորդ. վասն կերպի աղաչողացն՝ անդ. «Ձծերսն առաքեաց» (տն՝ Ղուկ. Է. 3), ասէ Ղուկաս, եւ աստ՝ ինքն եկն թագաւորազն: Վեցերորդ. ի պատուոյն, զի նա հարիւր ապետ էր, եւ սա՝ թագաւորազն: Ուրեմն յայտ է, զի այլ էր հարիւրապետն, զոր Մատթէոս եւ Ղուկաս յիշեն, եւ այլ՝ թագաւորազն, զոր Յոհաննէս յիշէ:

Բան. «Իբրեւ լուաւ, թէ Յիսուս եկեալ է ի Նրէասփանէ ի Գալիլեայ» (Յովհ. Դ. 47):

Մեկնութիւն. Յոլոսացաւ գալ առ նա եւ առնուլ զառողջութիւն որդւոյն, քանզի Քրիստոս յայլ գեւղ կեայր, այսինքն՝ ի Կանայ:

Բան. «Եւ աղաչէր, զի իջցէ եւ բնակեսցէ» (Յովհ. Դ. 47):

Մեկնութիւն. Քանզի Կափառնայում ի դաշտի եւ նուաստագոյն է տեղեալ քան զԿանայ:

**ՎԱՍՆ ՆԱԲԱՏՈՑ ԵՒ ՆՇԱՆԱՑ**

Բան. «Ասէ ցնա Յիսուս. Եթէ ոչ նշանս ինչ եւ արուեստս տեսանէք, ոչ հաւաքայք» (Յովհ. Դ. 48):

Մեկնութիւն. Ձի Աստուած կամի զմիտս հաւատացելոց յայնպիսի կատարեալ հաւատն հանել, զի մի կարաւտասցի սքանչելեաց, որպէս այժմ ի յեկեղեցի մարմնական սքանչելիք ոչ լինի վասն կատարեալ հաւատոց: Եւ զիտելի է, զի երեք կերպիւ է հաւատն. նախ՝ ի շնորհացն Աստուծոյ, յորժամ ծածկապէս զմիտս լուսաւորէ, որպէս մարգարէքն եւ առաքեալքն եւ Պետրոսի, որ դաւանեաց զՔրիստոս: Երկրորդ. ի ձեռն լրոյ, որպէս ասէ Պաւղոս. «Ձի թէ ոչ լուիցեն, ո՛չ հաւատասցեն» (հմմտ. Հռոմ. Ժ. 17): Երրորդ. սքանչելեաւք, յորժ ամ տեսանեն եւ հաւատան:

Արդ, ի կողմանէ հաւատոյն միեւնոյն է, զի ի ճշմարտութիւն հիմնաւորի, եթէ սքանչելեաւք, եւ եթէ Քրիստոսի լսելով, զի ի նոյն ճշմարտութենէն յառաջ գայ սքանչելիք եւ քարոզութիւնք եւ շնորհք, այլ ի կողմանէ հաւատացելոցն զանազանի, զի բռնութեամբ հաւատայ, որ սքանչելիք խնդրէ, քան որ բանիւն է:

**ՉԻ ՅԱՆԴԻՄԱՆԵԱՑ ԶԹԱԳԱՒՈՐԱԶՆ**

Իսկ աստ, որ սաստիւ յանդիմանէ զթագաւորազն վասն չորից. նախ՝ զի ոչ ունէր բոլոր եւ սերտ հաւատ առ Քրիստոս, որպէս ցուցանէ մեկնիչդ չորս կերպիւ: Երկրորդ. որպէս ասեն ոմանք, թէ՛ հաւատայր Քրիստոսի, զի ողջացուցանէր զորդին, սակայն այնպէս զիտէր, թէ ոչ առանց մարմնոյ մերձաւորութեամբ, վասն որոյ աղաչէր իջանել ի տունն: Երրորդ. յուսայր ի Քրիստոս առողջութիւն տալ որդւոյն, վասն որոյ ի հեռուստ եկն, այլ ոչ հաւատայր ի յարուցանել, թէ մեռեալ էր, վասն որոյ ասէ. «Էջ մինչ չեմ մտեալ իցէ մանուկն իմ»: Չորրորդ. զի բազում անգամ տեսեալ էին զնշանս եւ լուեալ եւ ոչ հաւատացեալ, վասն որոյ այժմ զսա եւ զհրէայսն ի միասին յանդիմանէ իբրեւ զոչ տեսեալ:

Բան. «Ե՛րթ, որդին քո կենդանի է» (Յովհ. Դ. 50):

Մեկնութիւն. Այսինքն՝ ողջացեալ է, զի ապրիւն իբրեւ զհիւանդ մերձ է ի մահ, որպէս զոչ ապրել, եւ թէ յորժամ թերի էր ի հա-



ւատն, վասն է՞ր բժշկեաց: Ասէ Ոսկէբերանն, զի ետես կանխատես զաւրութեամբն, զոր յետոյ լինելոց էր ի Հաւատոցն: Իսկ այլք ասեն, եթէ կրկին անգամ աղաչեաց եւ խոնարհութեամբ, վասն այն լուաւ: Զայն ցուցանէ, թէ Հանապազորդ խնդրելն լսելի առնէ զՀայցուածն, վասն որոյ ասէ. «Նաւաբաց այրն բանին, զոր ասաց նմա Յիսուս» (Յովհ. Դ. 50), այսինքն՝ զի կենդանի վասն առողջութեան ասաց: Եւ վասն երեք պատճառի Քրիստոս ոչ կամեցաւ իջանել ընդ նմա. նախ՝ առ ի ցուցանել, զի Քրիստոս բացեայ զոլով մարմնով, Աստուածութեամբն մերձ գոյր ընդ ամենայն տեղիս: Երկրորդ. ի ցուցանել զխոնարհութիւն իւր, զի ընդունայն Համարէր զմարմնաւոր ինչ սեւ զփառս աշխարհիս, զոր կարծէին ոմանք տալ նմա թագաւորագինն վասն որդւոյն առողջութեան: Երրորդ. յուսուց անել զմեզ, թէ ոչ է պարտ առնել սքանչելիս կամ այլ ինչ գործ աստուածային վասն երկիւղի եւ սիրոյ իշխանաց:

Բան. «Եւ մինչ դեռ իջանէր, ընդ առաջ եղեն [նմա] ծառայքն նորա» (Յովհ. Դ. 51):

Մեկնութիւն. Վասն կրկին պատճառի. նախ՝ զի ցուցցեն զմտերմութիւն իւրեանց եւ զուրախութիւն վասն առողջութեան տեսան որդւոյն: Երկրորդ. աւետիս տալ եւ ուրախացնել զտէրն իւրեանց, թէ մանուկն նորա կենդանի է:

Բան. «Նարցանէր ցնոսա վասն ժամուն, յորում բժշկեցաւ» (տնն Յովհ. Դ. 52):

Մեկնութիւն. Զայս կամէր իմանալ, թէ պէտ Համբաւէր առողջութիւն որդոյն, թէ պատահմամբ էր առողջութիւն որդւոյն, թէ ի սքանչելեացն Քրիստոսի, զի դեռ անկատար էր ի Հաւատն:

Բան. «Ասն ցնա. Երէկ, յերթերորդ ժամուն եթող գնա ջերմն» (Յովհ. Դ. 52):

Մեկնութիւն. Եւ այնու ծանեալ, թէ սքանչելեաւք էր առողջացեալ, որպէս ասէ.

Բան. «Գիտաց հայր նորա, թէ յայնմ ժամու, յորում ասաց Քրիստոս, առողջացաւ որդին» (տնն Յովհ. Դ. 53):

Մեկնութիւն. Գիտէր այրն զժամանակն եւ ի բանից ծառայիցն եւս ծանեալ, թէ մի եւ նոյն ժամն էր: Դարձեալ գիտելի է, թէ ծառայք նորա ի մէջ ճանապարհին պատահեցան նմա եւ այնու եւս ծանեալ, զի ի նոյն ժամանակի, յորժամ ել նա ի Քրիստոս է, եւ նորա ի տանէն ելեալք էին: Եւ չորսս այս ի նոյն եւթներորդ ժամուն եղեւ, այսինքն՝ Հրամանն Քրիստոսի եւ առողջութիւն մանկանն եւ կլանել թագաւորագինն ի Քրիստոսէ եւ ծառայքն ելին ի տանէն:

Բան. «Եւ հաւաբաց ինքն եւ ամենայն փուն իւր» (Յովհ. Դ. 53):

Մեկնութիւն. Այսինքն՝ կատարելագոյն Հաւատաց նա:

#### ՆԱԲԱՏ ԹԱԳԱՒՈՐԱԶՆԻՆ

Քանզի այն թագաւորագն երեք աստիճան Հաւատոյ ունէր զկնի միմեանց. նախ՝ զի սակաւ աղաչեաց զՔրիստոս ի տունն: Երկրորդ. բարձրագոյն, յորժամ Հաւատաց բանին Քրիստոսի եւ գնաց: Երրորդ. գերագոյն, յորժամ լուաւ ի ծառայիցն:

Եւ յայսմանէ գիտելի է, զի Հաւատն աստիճանք ունի, եւ ի սոցանէ էեւ այլ առաքինութիւնքն, որոց սկիզբն է Հաւատն, այսինքն՝ նախ՝ սկիզբն, երկրորդ՝ աճումն, երրորդ՝ կատարումն, որպէս Հաւատոցն, նոյնպէս յուսոյ, նոյնպէս սիրոյ եւ ամենայն առաքինութեանց:

#### ՎԱՍՆ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ

Իսկ որ ասէ մեկնիչն, թէ եթող գնա ջերմեւ այլ ոչ կարծիս ունէր ախտին. նախ սովորութիւն է՝ այսաւր թողու ջերմն եւ այլ վերստին դառնայ, իսկ մանուկն յանկարծակի առողջացաւ: Երկրորդ. բժիշկի՛ սակաւ-սակաւ տան զառողջութիւն, իսկ նա կատարեալ առողջացաւ, զի աստուածային զաւրութեան էր Հրաշագործութիւն: Եւ գիտելի է, զի Հիւանդութիւն եւ առողջութիւն մարմնոյ սակաւ-սակաւ աճեն, որպէս առաւաւտ եւ երեկոյ, եւ բժիշկ յորժամ զցաւն բուժէ ի ձեռն փահրէզի եւ շարբաթի, ի կատարեալ առողջութիւն տանի, նոյնպէս մեղք, որպէս խաւար սակաւ-սակաւ աճէ ի մարզն, ըստ այնմ. «Փոքր ի շատէ եղեւ կորուստն Իսրայէլի» (Խմնար.



Նոռմ. ԺԱ. 25), սոյնպէս արդարութիւն որպէս լոյս փոքր-փոքր աճէ, վասն այն քահանայքն ի խոստովանելն զախտ մեղացն բուժեն ի մարդոյն, իսկ ապաշխարութեամբ սակաւ-սակաւ զարդարութիւն շնորհեն:

Բան. «Ձայս դարձեալ երկրորդ նշանս արար Յիսուս» (Յովհ. Դ. 54):

Մեկնութիւն. Թո՛ղ զայլ տեղաց նշանսն, զի առաջին զջուրն ի գինի փոխեաց, եւ այս երկրորդ նշան է ի Կանայ գալիլեացւոց, որպէս ասէ:

Բան. «Եկեալ ի Նրէասփանէ ի Գալիլեայ» (Յովհ. Դ. 54):

Մեկնութիւն. Այսու ցուցանէ, թէ եւ յայլ տեղիս սքանչելիս արար: Եւ աստ կատարումն չորրորդ ծածկագիտութեան Քրիստոսի, զի անչափ է ամենայն ուրեք եւ սրտագէտ:

Առաջին. որ յայտնեաց զծածուկ սամարացի կնոջն վասն հինգ արանցն փոխելոյն: Երկրորդ. որ յայտնեաց զինքն նմա՝ ասելով. «Ես եմ, որ խաւսիմս ընդ քեզ» (Յովհ. Դ. 26): Երրորդ. որ նախագէտ եղեւ գալստեանն սամարացւոցն ի Հաւատս: Չորրորդ. աստ, որ յարոյց զորդի թագաւորազնինն ի բացուստ:

ԱՅԼԱԲԱՆՈՒԹԵԱՄԲ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Եւ զայս սքանչելիքս այլաբանութեամբ մեկնեն վարդապետք, զի առաջին սքանչելիքն ի Գալիլեա, յորում զջուրն գինի արար ի վեց թակուկացն: Նոյնպէս յառաջին գալն Քրիստոսի ի վեց դարուն զազգս Հեթանոսաց դարձոյց յԱստուած գիտութիւն, իսկ երկրորդ՝ գալոց է առողջացուցանել զորդի թագաւորազնինն, այսինքն՝ զժողովուրդս հրէից, որ որդի ասի Աբրահամու եւ մերձ ի մահ Հասեալ, յորժամ «Լրումն հեթանոսաց սրցե, յայնժամամենայն Իսրայել կեցցե» (Նոռմ. ԺԱ. 25-26): Եւ եւթներորդ ժամքն ջերման եւթն փոփոխմունք են ընդդէմ Եկեղեցւոյ Սրբոյ. առաջին՝ կիրք մեղացն է ի սատանայէ, որ ի պատկեր այլազգոյն Հերովդէի Հակառակի Եկեղեցւոյս Քրիստոսի: Երկրորդ կիրք. հրէայքն՝ Քրիստոսի եւ սուրբ առաքելոցն: Երրորդ. Հեթանոսք, կռապաշտք եւ չար թագաւորք, յորոց մարտիրոսացան բազումք: Չորրորդ արտաքին իմաստունք, որք ընդ-

դէմ խաւսեցան Քրիստոսի եւ Եկեղեցւոյ նորին: Հինգերորդ. հերձուածողացն դասք, որ յանմարմին էութիւն եւ ի մարդեղութիւն Հայհոյութիւն խաւսեցան: Վեցերորդ. այլազգիք, այժմ կարապետ նեռինն, Հակառակին Քրիստոսի եւ Եկեղեցւոյ նորին: Եւթներորդ. նոյն ինքն նեռն, որ ազգեցութեամբն սատանայի է, զոր Տէր Յիսուս զնա եւ զսոսա սատակեցէ հոգւով բերանոյ Իւրոյ: Եւ յայնժամ ամենայն հրէայք Հաւատասցեն ի Քրիստոս, եւ ամենայն լեզու խոստովան լիցի զԱստուծոյ:

Դարձեալ եւ այլ կերպիւ տեսանի որդի թագաւորազնինն, որ է ջերմոտ՝ նշանակէ զամենայն մեղաւորս: Եւ եւթ ժամ ջերմանն նշանակեն զեւթն գլխաւոր մեղս եւ կամ զարմատս նոցա:

Դարձեալ՝ առաջին ժամն է, որ փորձութիւն մեղաց մինչ ի սիրտ մարդոյն ժամանէ եւ Հաճութեամբ սրտին ընկալեալ լիցի: Երկրորդ ժամն՝ կատարեալ Հաւանումն մտաց: Երրորդ. արտաքին գործ մեղաց: Չորրորդ. Հանապազ սովորութիւն մեղաց: Հինգերորդ. է յայտնի ներգործութիւն մեղացն: Վեցերորդ. է պատճառ յաւելի եւ խնամ տանել վասն մեղաց, յորժամ յանդիմանի: Եւթներորդ. է խրատողաց Հալածումն եւ տարածումն մեղաց իւրոց յայլս: Եւ յորժամ յայս եհաս մերձ ի մահ, զի թէ ոչ ի Քրիստոսէ զարմանալի եւ անսովոր սքանչելեաւք բժշկի, մերձ է ի յաւիտենական մահն, յորոց փրկեցէ զմեզ Քրիստոս Աստուած՝ յոյսն մեր, եւ նմա փառք յաւիտեանս: Ամէն:

Եւ աստ աւարտումն առաջին Հատորի մեկնութեան Աւետարանիս Յոհաննու, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է արհեսալ յաւիտեանս. Ամէն:





### 40. ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ԱՆԴԱՄԱԼՈՅԻՆ ՊՐՈՌԱՏԻԿԵԻ ԱԲԱԶԱՆԻՆ

Յովհաննէս Ե. 1-18

#### ՄՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՅԻ

(Գլուխ ԻԸ.)

Յեպ այսորիկ գրանէ գնա Յիսուս ի քաճարին, եւ ասէ. «Ահա-  
ւաղիկ ողջացար, այլ մի՛ եւս մեղանչեր, զի մի՛ չար ինչ լիցի քեզ»  
(Յովհ. Ե. 14):

Յայսմանէ զիտասցես, զի զիպի ախտ մարմնոց, վասն մեղաց եւ  
յանցանաց լինի:

Եւ Յիսուս պարասխանի եպ նոցայ. «Նայր իմ մինչեւ ցայժմ գոր-  
ծէ, եւ ես գործեմ» (Յովհ. Ե. 17):

Ոչ երբէք դադարէ բոլորեցուն Աստուած բարեգործել եւ խնա-  
մել ամենեցունց, նոյնպէս եւ Որդի՝ Բանն Աստուած:

#### ՄԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

(Գլուխ Ե.)

Յետ այսորիկ տաւն էր հրէիցն եւ ել Յիսուս յերուսաղէմ, թուի  
թէ տաւն Պենտակոստէիցն էր, զոր յետ Ծ. աւուր գատկին տաւ-  
նէին կամ Տաղաւարահարացն: Զի յաճախ երթայր ի տաւնս նոցա  
Յիսուս եւ ուրախ էր ի տաւնս նոցա: Ելանէր փրկիչն վասն ազ-  
գացն ժողովելոցն ի տաւնն, զի նշանս արասցէ եւ վարդապետու-  
թեամբն զանարգագոյն ժողովրդեանն զաչս բացցէ եւ զականջս եւ  
յանդիմանէր զհրեայսն, որ հակառակ ասէին զնա Աստուծոյ:

Անդ էր յերուսաղէմ բեղեզգայ հինգ սրահ, այսինքն՝ աւա-  
զանքն: Զի՞նչ «բեղեզգայն» թարգմանի՞ «ողորմութեան իջումն»  
կամ «հանգիստ», յորս անկեալ դնէր բազմութիւն յոյժ կուրաց,  
կաղաց, որք ակն ունին ջուրցն յուզելոյ, ըստ հրամանին Աստուծոյ  
իջանէր հրեշտակն եւ շարժէր ջուրն եւ բժշկութիւն մարմնական

ախտիցն լինէր, որ նշանակէր զմեծասքանչ զաւրութիւն զշնորհաց  
աւագանին սրբութիւն մկրտութեամբ, որ լուանայր զմեղս աշխար-  
հի եւ զմեռելութիւն մարդկան վերստին ի կենդանութիւն փոխէր:  
Նախ զնշմարագիրն յառաջ բերեր եւ ապա զնկարն երփնագրեր  
ըստ այնմ աւրինակի: Նախ՝ զջուրն ի սրբութիւն մարմնոյ պղծու-  
թեան, որ գուշակէր զմաքրութիւն աւագանին եւ Հոգւոյն Սրբոյ,  
զի որպէս անդ ոչ ջուրն սրբեր, այլ հրեշտակին իջումն որ զջուրն  
սրբէր եւ շարժէր եւ ընդ նմին բժշկութիւն ի ներքս ծնուցանէր,  
նոյնպէս եւ աստ ո՛չ ջուր աւագանին այլ Հոգին Սուրբ՝ տէրն հրեշ-  
տակաց իջանէ ի ջուրն շնորհէ թողութիւն մեղաց եւ ո՛չ նուազ են  
շնորհքն, որպէս լոյս արեգականն, նոյնպէս եւ արդարութիւն եւ  
հոգւոյն ո՛չ նուազի շնորհք:

Որ ոչ հաւատան, թէ մկրտութիւն զմեղս թողու, զի թէ հաւա-  
տան նոքայ, թէ ի Սելովամ ջուրն ի հրեշտակեն շարժեալ բժշկեր  
զհիւանդութիւնսն, որչափ եւս Տէրն հրեշտակաց սպիտակացու-  
ցանէ մկրտութեամբ զհոգիս եւ զմարմին: Անդ էր այր մի, որոյ Լ.  
եւ Ը. ամ էր հիւանդութիւն նորայ:

ՈՍԿ Տէրն ո՛չ անգիտանայր զպատճառս ախտացելոյն, զի ամե-  
նեցուն յայտնի էր: Եւ յԼ. եւ Ը. ամին ո՛չ գտաւ աւգնականութիւն  
յուժեքէ, յամաւթ լիցին հրեայքն անողորմք:

Ասէ ցնա. «Կամի՞ս ողջ լինել» (Յովհ. Ե. 6):

Ճանապարհորդէր նմա խաւսելոյ զարթուցանելով զնա ի հա-  
ւատս:

Կամ ընդէ՞ր զամենեքումք անցանելով զերեսունեութամեայ  
անդամայոյժն բժշկել հարցանէր: Զի ուսուցէ զնորա համբերու-  
թիւնն բազմաց: Եւ ոչ ասաց նմա, թէ բժշկեցից զքեզ, զի ոչ զմեծն  
երեւեցուցանէր, զարմանալի էր հիւանդութիւն նորա, զի ամ յա-  
մէ յոյս եղեալ՝ ի գլուխ հանէր գտարին, ընդ նմին ո՛չ խափանէր  
ակնկալութիւնն. եւ նա զգաստ եւ արթուն կայր, զի աներեւոյթ  
յոյսն եւ նա ո՛չ յուսահատէր: Զի ոչ էր յայտ խոռովելոյ ջուրցն, իսկ  
կաղացն եւ խեղացն հնար էր գիտել եւ կոյրքն զիա՞րդ գիտէին:  
Յայլոց հիւանդացն խոռովելոյ յամաւթ առնէ այս զբազումս, որ Լ.  
եւ Ը. ամ զբերեալ կայր եւ ոչ հատանէր զյոյսն: Իսկ մեք Ժ. աւր  
աղաչեմք վասն միոյ իրիք եւ թէ ոչ առնումք, յուսահատ լինիմք:



Ասէ. «Տէր, ո՛չ գոք ունիմ, յորժամ ջուրն յուզիցին զի արկցէ զիս աւագանն» (Կրն՝ Յովհ. Ե. 7):

Կարծեաց նա, թէ ջուրքն միայն բժշկեն, վասն այնորիկ ասէ. «ո՛չ գոք ունիմ»: Ասէ Յիսուս. «Արի՛ առ գմահիճ քո եւ գնա՛» (Յովհ. Ե. 8): Մեղաւոր էր եւ անհաւատ, եւ վկայէ Տէրն ասելով՝ «այսուհետեւ մի՛ մեղանջեր» (Կրն՝ Յովհ. Ե. 14):

Մուտ արդարն Քրիստոս ի փողոցս Երուսաղէմի խնդրել հաւատս եւ ոչ եզրիտ բժշկեաց ողորմութեամբ զայրն զի մի գնացսն անտի շնորհքն դատարկք, յայտնեաց զգաւրութիւն իւր ասելով՝ «Առ գմահիճ քո եւ գնայ՛» (Յովհ. Ե. 8): Ո՛չ էր այն շատ գնալն, սքանչելիք էին եւ այն, թէ այն որ ոչ կարէր շրջել, յանկողինն յառնել վաղվաղակի եւ գնալ, այլ զի ցուցցէ, թէ կատարեալ առողջութիւն ետ նմա՝ բառնալով զմահիճսն ըստ անձինն:

Տե՛ս եւ զառնն հաւատս, որ եմուտ ըստ բանին Տեառն, եւ ոչ դանդաղեցաւ մատախոհ լինելով, զի արդ ի ձեռն միոյ բանի յարեաւ. «Բարձ գմահիճս քո»: Է՞ր վասն հրամայեաց առնուլ զմահիճն, զի արդիւնք հրամանացն երեւեսցի տեսողացն: Եւ յարեաւ առ զմահիճս եւ շրջէր: Այս ցուցանէ, թէ կատարեալ առողջութիւն ետ նմա միով աստուածային բանիւն եւ ո՛չ ըստ սովորութեան բժշկաց՝ առ սակաւ սակաւ: Զայսոսիկ յաճախագոյն ցուցանէր, յորժամ հրաման տայր մեռելոյ յարուցանելոյ ուտել, յայտնելով, թէ յառաջին յառողջութիւնն ի վեր էած:

Զի թէպէտ եւ նա լռեսցէ մահիճքն աղաղակեսցեն:

ՈՍԿ Եւ էր շարաթ արն, ասեն հրէայքն թէ շարաթ է եւ ո՛չ է պարպ առնուլ քեզ գմահիճսդ (հմմտ. Յովհ. Ե. 10): Պարտ էր սքանչանալ եւ հաւատալ եւ փառաւոր առնել զԱստուած:

ԵՓ Բայց հրէայքն իրրեւ փեսին, ասեն, ո՛վ ասաց քեզ առ գմահիճս քո (հմմտ. Յովհ. Ե. 12):

Ո՛վ կոյր անմիտք եւ խու՛լ անզգայք, զի՞ զմիւսն թողէք, որ բժշկեաց եւ զմիւսն հարցանէք՝ «ով եք քեզ առնուլ գմահիճսդ» (հմմտ. Յովհ. Ե. 12): Զի կամեցան նոքա ծածկել զբժշկութիւնն սքանչելի նորա եւ պատուհասել զայն, որ է՝ «Առ գմահիճս քո», իմաստութեամբ ետ զպատասխանին, թէ՛ «Որ բժշկեաց նա» (հմմտ. Յովհ. Ե. 11), զիտել զարժանն առաւել քան զձեզ:

ԵՓ Քանզի նոքա թիւր հարցին, սակայն բժշկեալ լուսաւոր ետ պատասխանին, ջատագով լինէր ճարտար որպէս ծառայ առաքելով ի բժշկէ անտի իմաստնոյ, վասն ուղղութեան թիւրեւոցն ի ճշմարտութենէ, որ յայտնապէս քարոզեաց զբժշկութիւնն նորա եւ կշտամբեալ յանդիմանեաց զուրացութիւնն նորա: Ասէ ցնոսա ո՛չ զայն զոր կամէին լսել, զայն, զոր խիթային հաւատալ:

«Նարցին՝ իսկ ո՛վ է այն, որ ասաց՝ առ գմահիճս քո» (Յովհ. Կրն՝ Ե. 12):

Զի զսքանչելիսն ոչ ախորժէին, սոսկ բանիւ հարցանէին, զի որ բարձեալ էր զմահիճսն, առաւել հաստատեր զնշան սքանչելեացն:

«Ասէ բժշկեալն՝ «ո՛չ գիտեմ», քանզի Յիսուս խոյս ետ ի փեղուջէն վասն ամբոխին» (Կրն՝ Յովհ. Ե. 13), զի մերձ կալն հակառակութիւն լիներ եւ ի բաց գնալովն առաւել հաստատէր վկայութիւնն:

«Յեք այսորիկ զփանէ գնա Յիսուս ի փաճարին եւ ասէ՝ Ողջացար, այլ մի եւս մեղանջեր» (Կրն՝ Յովհ. Ե. 14): Յորժամ բժշկեաց, ո՛չ ծանոյց զինքն վասն երկուց պատճառանաց, զի բժշկեալն ծանիցէ զբժիշկն յանդիմանութեամբն, սոսկ գողանալով զնշանսն յանգետ լինէին՝ ով է, որ ասաց: «Ասաց Յիսուս ախաւասիկ ողջացար, այլ մի մեղանջեր» (Յովհ. Ե. 14), ցուցանէ, թէ մեղքն էին պատճառ հիւանդութեանն, զի յորժամ միանգամ եւ երկիցս մեղանջեմք, խնամէ, ե՛ւ ներէ, ե՛ւ լռէ, ե՛ւ յորժամ հասանէ վտանգն փրկէ, ե՛ւ յորժամ ի նոյն ջերմն գտանիցեմք ի զալ փորձութեանցն, անփոյթ առնիցէ, ազատեցաք աւագանաւն, մի՛ դարձեալ ի նոյն գտանիցիմք: Առ հանդերձեալ դատաստանն արկնարկէ այսու, թէ յետ աւագանին ի մեղս դառնամք անապաշխար, ահագին տանջանքն յաւիտեանսն առաւել է, քան թէ աստի ցաւաւքս հիւանդ արար:

ԵՓ Գուցէ այլ ոք ոչ դիպեսցի քեզ ընդդէմ այնր, զի ասաց՝ «ո՛չ գոք ունիմ»: «Գնաց այրն եւ պարմեաց հրէիցն, թէ Յիսուս էր, որ բժշկեացն գնա» (հմմտ. Յովհ. Ե. 10-12):

ՈՍ Մի ոք կարծիցէ, թէ չարութեամբ զայն արար, այլ յոյժ սիրոյ ցոյցք էին, զի զերախտիսն կամեցաւ յայտնել: Ոմանք ի թարգմանչացն ասացին զնոյն լինել, զոր Մատթէոս ասէր, այլ ոչ ի դեպ



թուի, զի այն ի Կափառնաւում էր եւ այս յԵրուսաղէմ, զայն առնէր ի շաբաթու. «Վասն մարդոյ եղաւ շաբաթ եւ ոչ վասն Աստուծոյ» (հմմտ. Մարկ. Բ. 27), որ տուիչ է աւրինացն եւ տէր նորա:

ԵՓ Վկայէ կոյրն եւ հիւանդքն քարոզեն, թէ պահեաց Քրիստոս զամենայն աւրենսն եւ եցոյց եթե պահելի են, կարող էին եւ ելոյծ ի նոցանէ ի բարին, զի եցոյց, եթէ բարիքն իշխանութիւն ունին ի վերայ շաբաթուցն եւ բժշկութեամբն յայտ արար, թէ տէր է աւրինացն, այնու որ ունկնդիր լինին նմա արարածք եւ իշխանութիւն ունի ըստ Հաւր ի վերայ շաբաթու:

Յորժամ վարդապետել կամեր նախ նշանս ինչ գործեր զի Հաւատարիմ լիցի կամ նախ զվարդապետութիւնն ճառէր եւ զկնի նշանս առնէր, յորժամ կամէր վասն ասելոյն Հաստատել, թէ՛ «Ես եմ հացն կենաց իջեալ յերկնից» (հմմտ. Յովհ. Չ. 48, 51), նախ զնկանակն եւ զձկունսն աճեցոյց: «Հայր իմ մինչեւ զայժմ գործէ եւ ես գործեմ» (Յովհ. Ե. 17), որպէս Հայր հրաժարեցուցանէ զձեզ յաւուր շաբաթու եւ ինքն գործէ: Միշտ նախախնամելովն զարեգակն ծագէ ի շաբաթու, զլուսին եւ զաստեղս եւ զաւղս սփռէ, զգետս գնացուցանէ, զանճրեւս իջուցանէ, զպտուղս սնուցանէ, զշնչաւորս դարմանէ, զմանկունս յորովայնի մաւրն ստեղծանէ, զոգիս շողկապէ եւ աճեցուցանէ, այսպէս եւ ես ունիմ իշխանութիւն ի շաբաթու խնամել զազգս մարդկան: Զի թէ գործք եւ արարածք եւ հրեշտակք ո՛չ արգելուն ի սպասաւորութենէ պաշտամանց իւրեանց յաւուր շաբաթու եւ ծնանին եւ թլփատութիւն առնուն եւ բարձան աւրենք ի շաբաթու, թէ արարածք այսպէս որչափ եւս արարիչն, վասն այսորիկ «Որդի մարդոյ փեր է շաբաթու» (Մարկ. Բ. 28), բայց իբրեւ եկն ժողովուրդն, որ առնէր զկամս շաբաթուն բարձաւ շաբաթուն բռնութիւն, զի երեւեցի գործն կամաց ազատութեան: «Վասն այնորիկ առաել խնդրէին հրէայքն սպանանել զՅիսուս. զի հայր իւր կոչէր զԱստուած եւ հաւասար կոչէր զանձն Աստուծոյ» (փե՛ն Յովհ. Ե. 18): Հրէայքն թշնամի գոլով Քրիստոսի բանիցն՝ Հակառակ Հաւր զնա իմանային, սակայն զբնութիւնս յերկուս ո՛չ բաժանէին: Զի՞նչ յիմարք ապա այլ, որք քրիստոնեայք կոչին եւ յերկուս զմի Քրիստոս բաժանեն, զի թքանելով ի գետին եւ կաւարար կենսաբեր աջովն յայտ է, թէ ի մարմնէն իւրաքանչիւրն գոլով եւ հրաշագործ էր մարմնովն իբրեւ զԱստուած զէակցութիւն ցուցանել եւ զհաւասարութիւնն՝ ասելով. «Հայր իմ մինչեւ զայժմ գործէ, եւ ես գործեմ» (Յովհ. Ե. 17) եւ ոչ կարեն

ուրանալ զձեռնն, որ զկոյրն բժշկեաց կամ բարբառն Հաւասարութեան պայմանն եւ այնորիկ ճշմարտեն թէ անքակ է մարմինն ընդ բանին Աստուծոյ եւ անապական:

Իսկ «Հայր իմ մինչեւ զայժմ գործէ եւ ես գործեմ» (փե՛ն Յովհ. Ե. 17):

Ի դեմս աստուածային բնութեանն ճառեաց իսկ զայն ոչ կարէ որդի մարդոյ առնել յանձնէ եւ ոչ ինչ այլաւքն հանդերձ, զի ասաց՝ «գոր ինչ հայր գործէ, եւ ես գործեմ»: Վասն այնորիկ խնդրէին զնա սպանանել զի Հաւասար առնէ զինքն Աստուծոյ Հաւր եւ զշաբաթն լուծանէր: Վասն այնորիկ սուղ ինչ լուծանէր զնոցա բորբոքումն: Եւ խոնարհագոյն զիջանէ բանիւք քան զառաջինն, թէպէտ եւ յանմանէ հեռագոյն որք միւս ունին եւ զի արդ գայթազեցեն այսու կատարելագոյնքն, մի՞թէ ոչ կարէր որդի առնել զոր ոչ տեսաներ ի Հաւրէ, երբ Հայր զանդամալոյծ բժշկեաց կամ ի կերակուր եւ յրմպելիսն եւ յայլ տնաւրինականքն իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ եւ առնուլ զնա կամ զայն: «Ի՛հարկ ելի եւ եկի յաշխարհ եւ դարձեալ թողում զաշխարհս» (Յովհ. ԺՁ. 28): Ո՛վ յիմարք, զիարդ որդի ոչ կարէ առնել ինչ յինքենէ, ոչ ապաքէն հրեշտակք եւ մարդիկ եւ դեւք առնեն զոր ինչ կամին եւ հրաժարեն, ուստի ախորժենն ոչ եւ զիարդ որդի ոչ կարէ առնել ինչ: Բաւական է այս նոցա յանդիմանութիւն:

ՍՏ Որք չարախաւսեն զորդւոյ զտկարութիւն, ոչինչ առնէ որդի անման կամացն Հայր կամ գործոց. «Զի հայր սիրէ գորդի եւ զամենայն ինչ ցուցանէ նմա» (Յովհ. Ե. 20): Թէ Հայր ցուցանէ որդւոյ, ապա լուծանելով ո՛չ Հակառակ Աստուծոյ իցէ այլ գործակից է Աստուծոյ Հաւր եւ Հաստատուն եւ Հաւասար ունի զզաւրութիւն Հաւր: Եւ մեծամեծս ցուցանէ տեսանելոց էք մեծամեծ նշանս քան, որ այժմդ, որպէս Հայր յարուցանէ զմեռեալս եւ կենդանի առնէ: Հայր յարոյց զմեռեալն Եղիայիւ եւ Եղիսէիւ, նոյնպէս Որդի յարոյց զորդի այրւոյն եւ զՂազարոս եւ զբազումս ի ժամ խաչին եւ ի յարութեան աւրն զամենայն մեռեալս, ըստ այնմ եկեացէ ժամանակ, որ մեռեալք լսիցեն ձայն ի որդւոյն Աստուծոյ եւ կեդանացին: «Ոչ հայր դարի գոք, այլ զամենայն դարաստան ետ Որդոյ իւրում» (հմմտ. Յովհ. Ե. 22), ցուցանէ թէ որդի է դատաւոր եւ նորա է դատաստանն եւ ո՛չ Հաւր: Թէպէտ եւ մի են կամքն, այլ զի խոնարհագունաւքն զիշխանական զաւրութիւնսն բառնա զկարծիս եւ բարձրագունիւքն



զիշխանական զաւրութիւնսն ցուցանէ, իսկ հայրն անտեսանելի է բնութեամբ եւ ոչ առ մարմին, զի զԱստուած ոչ ոք ետես: Եթէ հոգի է Աստուած, ապա ուրեմն որ դատին պարտ է մարմնով տեսանելի դոլ մարմնաւորացս, վասն զի խոնարհեցաւ վասն մերոյ փրկութեան իսկ եւ իննամսեա բնակեցաւ յորովայնի կուսին եւ զմեր կիրս կրեաց բաց ի մեղաց: Դարձեալ վարդապետութեամբն եւ նշանաւքն զչարհարանս եւ զմահ կրելով եւ մեզ ցուցանելով: Դատի զուարցողսն եւ որք ո՛չ գնացին ըստ աւետարանականին եւ չիք անդ պատճառս:

**ԵՓ Միթէ** ոչ եկեալ եւ ուսուցեալ: Ետ ասելով, վասն մարմնոյն ասէ, ետ նմա կեանս եւ լուր առանց հակառակութեան, վկայէ մարգարէն, վասն նորարնութեամբ, ըստ այնմ իշխանութիւն նորա ի վերայ ուսոց իւրոց: Այսուհետեւ որ խնդրէ զվրէժ անձինն իւրոյ, զՏէրն եւ զդատաւորն արհամարհէ զտեսուչն ամենեցուն, զի ոչ գիտաց զայն որ առաւել է քան զինքն, մատուցանել առաջին նոցա զյանցանս: Վասն այնորիկ անուանեցաւ Քրիստոս դատաւոր, զի աշակերտքն զմիմեանս մի դատեսցեն, զի ի վաղճանին նա է դատելոց: Զի որք աստեն զանձանց իւրեանց զդատաստան մի պահանջեցեն Քրիստոս կոչեցաւ զլուիս, զի աշակերտք նորա իբրեւ զանդամք զմիմեանս արգահատեսցեն: Մարգարէն ասէ. «Տէր, դարի գոռոզովորդ իւր եւ թէ դարեւա՛ գիս, Տէ՛ր, ըսպ արդարութեան քո[ւմ]» (հմմտ. Մաղմ. ԼԴ. 23-24): Եւ ամենայն ուրեք զհայր զեկուցանէ Քրիստոս ասէ, թէ հայր առնէ վրէժխնդրութիւն այնոցիկ, որ գոչեն առ նա, եւ Պաւղոս ասէ, թէ «Անքն<ն>ին են դատաստանք նորա» (հմմտ. Նոմ. ԺԱ. 33): Առ այս կարճառաւտ եմք, վասն զի որդի ըստ կամաց հաւր ազգեցութեան դատի. վասն այնորիկ հայր ասի դատել:

**ԵՓ Արդ**, տե՛ս դու, թէ որչափ խիստ են դատաստանք մարդոյն այնմիկ, որ խնդրէ զվրէժս անձին իւրոյ արդարութեամբ: Անարգեաց նա զդատաւորն հասարակաց:

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՅԻ**  
**Վասն Պրոպագանդիկ արագանին**

Բան. «Եւ էր [յերուսաղէմ] ի Պրոպագանդիկ արագանին» (Յովհ. Ե. 2):

**Մեկնութիւն.** Զտեղիքն ասէ, ուր արար զսքանչելիս, որպէս ի Զատկին արար խարազան չուանեայ եւ եհան ի տաճարէն, իսկ այժմ ի պրոպագանդիկէն զբժշկութիւն առնէ, որ էր աւագան, եւ անձրեւային ջուրք իջեալ ժողովէին անդր, եւ քահանայքն յառաջագոյն անդ լուանային զմիս անասնոց եւ զփորոտիսն, եւ ապա լուանային միւսանգամ եւս յանաւթ ի սրահ քահանայիցն՝ մերձ տաճարին, եւ ապա տանէին յայրել կամ յեփել: Եւ թէպէտ այլ եւս անասունք բերէին անդ, այլ առաւել եւս ոչխար, եւ զմիսն ատէին ի լուացումն, վասն այն եւ աւագանս այս «յոջխարացն» ընկալաւ զանունն, զի պրոպագանդիկէն յունարէն ոջխարային լսի, եւ եբրայեցեբէն «Բեթեղա» ասի, որ է՝ տուն ոչխարաց: Եւ թէպէտ Յոհաննէս զԱւետարանս յունարէն գրեաց, բայց զսորա անունն եբրայեցի Բեթսայիդա նոյն է եւ Բեթհեղա՝ առ ի ծանուցանել զտեղին եւ յայտնի առնել: Իսկ Ոսկեբերանն «Ողորմութեան իջումն» ասէ, կամ՝ «հանգիստ», կարծեմ թէ այնպէս լսի ի յոյնքն, եւ կամ «գործոյն» ասէ, որ լինէին անդ հիւանդացն: Եւ սրահ ասի, զի ունէր զառ ինքն ծածկոյթ, թէպէտ եւ զորմունս ոչ ունէր, ի մին կողմանէ ունէր որմն զարտաքին պարիսպ տաճարին, եւ ի միւս կողմանէ սիւնքէին կանգնեալ եւ առ իքն ի վերայ սեանցն հաստատեալ:

Եւ սոյնպիսի հինգ սրահս անդ կառուցեալ էին, որպէս զի քահանայքն ընդ բազում տեղիսն իջցեն ի ջուրսն եւ լուացեն զմիս զոհիցն:  
Դարձեալ՝ զի սրահքն շինեալ էին վասն հանգստեան հիւանդաց, որպէս եւ ասէ:

Բան. «Յորս անկեալ դներ բազմութիւն յոյժ հիւանդաց, կուրաց, կաղաց, գաւսացելոց, որ ակն ունէին ջրոցն յուզելոյ» (Յովհ. Ե. 3):

**Մեկնութիւն.** Վասն կրկին պատճառի խտտածէտքն անդ ժողով էին. նախ՝ վասն ողորմութեան, զի աղքատք էին:

**Երկրորդ.** վասն ջրոյն շարժման, զի հրեշտակ Տեառն ըստ ժամանակին իջանէր յաւագանն եւ յուզէր զջուրն, եւ որ յառաջագոյն իջանէր յետ շարժման ջրոյն, առողջանայր ի հիւանդութենէն, յոր ինչ եւ ըմբռնեալ կայր ի ցաւս: Եւ այն, որ ասէ. «Ըստ ժամանակին», ցուցանէ, թէ սահմանաւ ի կարգեալ ժամանակն իջանէր, թէպէտ ոչ ասէ, թէ որքան ի տարւոջն կամ յամիսն: Եւ աստ լինի չորս հարց. Առաջին. Թէ վասն է՞ր այն լինէր:



Պատասխանի. Ասեմք, թէ վասն երեք պատճառի.

Նախ՝ զի Իսրայէլ յայնմ ժամանակի ոչ ունէր մարգարէս, զի բժշկէին զախտածէտքն, որպէս Եղիա եւ Եղիսէոս: Չայս նոցա ի սփոփումն եւ ի բժշկութիւն շնորհեաց Աստուած:

Երկրորդ. Ասեն ըստ պատմութեան, թէ անդ էր եղեալ փայտ խաչին Քրիստոսի, ըստ ոմանց, թէ Սողոմոն եղ, եւ այլք, թէ քահանայքն յետոյ եղին, զի ձգեալ էր ի դրան տաճարին, եւ վասն զարդուց փայտին այն, զի մերձ էր ժամանակ բեւեռել ի նմա Փրկչին մերոյ եւ Աստուծոյ, որպէս հարսն զի զարդարեն ի ժամ պսակելոյն, վասն այն իջանէր հրեշտակն եւ կատարէր զբժշկութիւն:

Երրորդ պատճառ. զի աւրինակ լինէր այն աւազանիս մերոյ, որպէս ցուցանեմք յառաջիկայսդ:

Երկրորդ հարց. Վասն է՞ր հրեշտակն իջեալ շարժէր զջուրն:

Պատասխանի. Վասն երկու պատճառի. նախ՝ զի այնու յայտնի լինէր իջումն հրեշտակին, եւ սքանչելիք բժշկութեան ոչ լինէր պատահամբ եւ ոչ բնական զաւրութեամբ ջրոյն, այլ զաւրութեամբն Աստուծոյ, որոյ հրամանաւն իջանէր հրեշտակն:

Երկրորդ. զի հրեշտակք այնու գիտէին, թէ երբ է ժամանակն իջանելոյն յաւազանն եւ բժշկելոյն:

Երրորդ հարց. Վասն է՞ր միայն յառաջագոյն իջեալն բժշկէր:

Պատասխանի. Վասն չորս պատճառի. նախ՝ զի այնու սքանչելիքն պատուական երեւէր, որ միոյն լինէր, քան հասարակ: Երկրորդ. զի ցուցցէ, թէ սքանչելիքն այն կամաւորապէս եւ ազատութեամբ լինէր, եւ ոչ՝ բնական զաւրութեամբ ջրոյն: Երրորդ. զի հիւանդք սպասեցեն աստուածային շնորհացն եւ առաւել հաճոյսցին Աստուծոյ:

Չորրորդ. զի պարտ էր բազմութիւն սքանչելեացն, զի լիցի ի յայտնութեան փառացն Քրիստոսի, եւ ոչ վայել էր յառաջագոյն եւ վասն այսմ պատճառի Յովաննէս Մկրտիչ ոչ արար սքանչելիս:

Այլեւ ըստ մտաց ցուցանէ երիս ինչ. նախ՝ զի յորժամ խափան լինէր բժշկութիւն հիւանդին խղճի մտացն, դատէր զինքեանս եւ ի բարին յաւժարէին: Երկրորդ. զի ցուցցէ, թէ սակաւք են ընտրեալք, եւ բազում՝ դատապարտեալք: Երրորդ. զի ցուցցէ, թէ սակաւք են, որ ի ջուր ապաշխարութեան իջանեն եւ սրբին ի մեղաց:

Չորրորդ հարց. Վասն է՞ր ամենայն հիւանդք ողջանային:

Պատասխանի. Նախ՝ զի ամենայն հիւանդք եկեսցեն, զի թէ մին ազգ հիւանդն բժշկէր, այլքն ոչ գային: Երկրորդ. զի ցուցցէ զաստուածային զաւրութիւն, զի ոչ երբէք գտանի մին դեղ, որ զամենայն ախտս բժշկէ: Երրորդ. ի ցուցանել զզաւրութիւն մկրտութեան սրբոյ աւազանին, որ սրբէ ոչ միայն զմի մեղս, այլ զամենայն:

ԹԷ ԱՐԻՆԱԿ Է ԱՎԱԶԱՆԻՍ

Այլ այժմ ասացուք, թէ որպէս է աւրինակ աւազանիս մերոյ:

Ասեմք, թէ չորս իրաւք.

Նախ՝ որպէս այն աւազան մաքրէր զմարմինն ի ցաւոց, սոյնպէս եւ մերս աւազան մաքրէ զհոգի եւ զմարմին ի սկզբնական եւ ի ներգործական մեղաց, որպէս մարմինն Աբգարու եւ Կոստանդիանոսի բժշկեցաւ:

Երկրորդ. որպէս անդ ոչ թէ ջուրն տայր զառողջութիւն, այլ հրեշտակին իջումն, նոյնպէս աստ ոչ միայն լոկ ջուրն սրբէ, այլ իջումն Հոգւոյն Սրբոյ:

Երրորդ. որպէս անդ զգալի շարժէր ջուրն, եւ ծածուկ զաւրութեամբ հիւանդքն ողջանային, սոյնպէս եւ աստ զգալի տարր ջրոյն հաստատեալ ի մարմինն, եւ ծածուկ զաւրութիւն բանին սրբէ զհոգին:

Չորրորդ. որպէս անդ միանգամ բժշկէր զիջանողն, եւ ոչ կրկնէր, նոյնպէս աստ մի՛ է մկրտութիւն եւ ոչ կրկին, ըստ Պաւղոսի. «Մի է Տէր, մի՛ հաւատ, եւ մի՛ մկրտութիւն» (Եփես. Դ. 5):

Եւ թէ ոք ասիցէ. «Թէական մկրտութեամբ մկրտեմ, զի թէ մկրտեալ է, ոչ է մկրտութիւն, եւ թէ ոչ է մկրտեալ, մկրտի»: Ասեմք՝ նմանէ արեւորդուց, որք երկիր պազանեն արեգականն թէականութեամբ. թէ դու ես աստուած՝ քեզ, եթէ ոչ, Աստուծոյ լիցի: Եւ զի՞նչ ասէ առաքեալ ի յերայեցուց, որք կրկին մկրտին. «Անձանց ի խաչ հանիցեն զՈրդին Աստուծոյ եւ դարձեալ խայտառակեն» (Խմմր. Եր Զ. 6):

Այս ըստ նմանութեան աւազանիս մերոյ, բայց զի աւրինակն անկատար է, քան զաւրինակեալն, որ է ճշմարտութիւն:



Տեսցուք եւ զայն եւս, զի վեց իրաւք բարձրագոյն է խորհուրդ նորոյս. նախ՝ զի անդ հրեշտակն իջանէր, որ ծառայ էր, եւ աստ՝ Տէրն հրեշտակաց: Երկրորդ. անդ մի ոմն սրբէր, եւ աստ՝ ամենայն աշխարհ: Երրորդ. անդ ողջութիւն միոյ ցաւոց, աստ՝ մաքրութիւն բոլորին, որպէս ցուցաւ: Չորրորդ. անդ երբէք ի տարին կամ յամիսնանգամ, աստ հանապազ սրբին, որք ոչ են մկրտեալք: Հինգերորդ. անդ միայն սոսկ փայտ խաչին եղեալ յաւազանն, աստ ճշմարիտ խաչն Քրիստոսի, եղեալ յաւազանն սուրբ, զի ի մահն Քրիստոսի մկրտիմք: Վեցերորդ. անդ ախտն արգիլիչ լինէր մկրտութեան, «մինչ ես դանդաղիմ, - ասէ, այսինքն՝ դեղեւիմ եւ սողամ, - այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ» (Յովհ. Ե. 7), իսկ աստ որք կամին, սրբին:

Այսքան առ այս:

#### Վասն անդամալուծին

Բան. «Եւ անդ էր այր մի, որոյ երեսուն եւ ութ ամ էր ի հիւանդութեան իւրում» (Յովհ. Ե. 5):

Մեկնութիւն. Յայտ է, զի վասն մեղաց յայնպիսի ախտն անկեալ կայր, եւ երեսուն եւ ութ ամ համբերութեամբ կրեաց զայն, այսինքն՝ դոճութեամբ տարաւ զայնքան ժամանակին հիւանդութեան, վասն որոյ եւ ողորմութեան արժանացաւ ի Քրիստոսէ: Յայսմանէ ոմանք ասեն վասն Յորայ, թէ երեսուն եւ ութ ամ եկաց ի փորձութիւն, զի որպէս նա համբերութեամբ տարաւ, եւ սա: Եւ որպէս ընդ նմա խաւսեցաւ յամպոյն եւ բժշկեաց զնա, սոյնպէս մարմնով ընդ սմա խաւսեցաւ եւ բժշկեաց զսա: Այլ որք ուղիղ իմացան, եւթ ամ ասացին զփորձութիւնքն Յորայ, որպէս ցուցաւ ի գիրս իւր:

Բան. «Ասէ ցնա. Կամի՞ս ողջ լինել» (Յովհ. Ե. 6):

Մեկնութիւն. Քրիստոս ոչ եհարց զնա վասն գիտութեան, այլ նախ ի յաւատարեցնել զցանկութիւն նորա, զի ընդունիցի զփրկութիւն Աստուծոյ: Երկրորդ. ճանապարհ տայ խաւսից, զի զարթուց է զնա ի հաւատոսն Քրիստոսի: Երրորդ. եհարց զնա, զի պատասխանելովն յայտնեցի կարիս հիւանդին:

Բան. «Եւ նա ասէ. “Տէ՛ր, ոչ գոր ունիմ, [թէ յորժամ ջուրքն յուզիցին], արկցէ զիս յաւազանն”» (Յովհ. Ե. 7):

Մեկնութիւն. Նախ՝ ցուցանէ զչափ տկարութեան:

Երկրորդ. զի անհոգաբարձու էր, որպէս թէ ասել. «Ես անկարեմ իջանել եւ զայլ ոք ոչ ունիմ զիս իջուցանել»: Զայս ասէր հիւանդն, զի տեսանէր զՅիսուս զաւրաւոր գոյ եւ յաջողակ առ ի յիջուցանել զնա յաւազանն, իսկ Քրիստոս վասն փոքր փափագմանն զմեծ պարգեւսն շնորհեաց նմա զկատարեալ առողջութիւն, որպէս ասէ ցնա.

Բան. «Արի՛, առ զմահիճս քո եւ գնա՛» (Յովհ. Ե. 8):

Մեկնութիւն. Շատ է ասել՝ արի՛, քան թէ՛ ողջացի՛ր, քանզի միտք բանիս այս է. այնպէս կատարեալ ողջ լիջի՛ր, մինչ զի իսկոյն կարացես գործ առողջութեան առնել:

Նախ՝ հարց. Վասն է՞ր ոչ խնդրեաց ի նմանէ հաւատ, որպէս ասաց երկու կուրին. «Հաւատա՞յք, եթէ կարող եմ առնել ձեզ զայդ» (Մատթ. Թ. 28):

Պատասխանի. Ասելի է, եթէ կոյրքն այն լուեալ էին զլուրն Քրիստոսի եւ ի համբաւէ զՅիսուս ճանաչէին, վասն որոյ պարտական էին հաւատալ ի նա, իսկ հիւանդս այս ոչ ճանաչէր զՅիսուս, վասն որոյ ոչ խնդրեաց ի նմանէ հաւատ:

Երկրորդ հարց. Վասն է՞ր ասաց. «Ա՛ռ զմահիճս քո»:

Պատասխանի. Վասն չորից. նախ՝ զի հրամանն արդիւնացեալ երեւեսցի, եւ մի՛ կարծեսցի առ աչաւք ինչ եւ ստույթեամբ եղեալ: Երկրորդ. վասն աւգտութեան առողջացելոյն, զի չունէր պատճառ մնալոյ, եւ ոչ ունէր պատճառ թողլոյ անդ զմահիճս իւր, զի աղքատ էր: Երրորդ. զի յառաջն իբրեւ զանդամայլոյժ էր, որ ոչ կարէր կանգնել եւ ոչ իր ինչ ձեռաւք բռնել, վասն այն ընդդէմ այսմ ասաց Քրիստոս. «Արի՛, առ զմահիճս քո եւ գնա՛»: Չորրորդ. զայն ցուցանէ, թէ կատարեալ յառաջին առողջութիւն էամ միով բանիւ, եւ ոչ որպէս բժիշկ սակաւ-սակաւ տան զառողջութիւն:

Նոյնպէս յարուցեալ մեռելոցն հրամայէր տալ նմա ուտել. մին՝ զի մի առ աչաւք երեւեսցի, եւ միւս՝ թէ ի կատարեալ առողջութիւն եհան զամենայն հիւանդն եւ զմեռեալս: Զայս ցուցանէ մեզ, զի յորժամ էջ Բանն Աստուած յարգանդի Կուսին, իսկոյն զբնութիւնս մեր միաւորելով Աստուած արար՝ անապական մարմնով եւ անմեղ



Հոգևով, որպէս էր նախքան զմեղանչելն ի դրախտին, եւ ոչ յետոյ ի մկրտութիւն կամ ի յարութիւն, որպէս ասեն ոմանք:

Բան. «Եւ առժամայն ողջացաւ, եւ յարեալ, առ զմահիճս իւր եւ շրջէր» (Գնն Յովհ. Ե. 9):

Մեկնութիւն. Բարևոք ասէ՛ առժամայն, զի աստուածային զաւրութիւն վասն անչափութեան իւրոյ վաղվաղակի ներգործէ, իսկ բնական զաւրութիւն ժամանակաւ ներգործէ:

Այս առաջին բանն, որ ցուցանէ ըստ գործոյն, թէ Աստուած է Քրիստոս:

**Վասն շաբաթոց**

Բան. «Եւ էր շաբաթ յաւուրն յայնմիկ» (Յովհ. Ե. 9):

Մեկնութիւն. Այս է առաջին լուծումն շաբաթուն, վասն որոյ ասեն, թէ երեսուն եւ ութ ամ հիւանդին շաբաթ ունի հազար ինը հարիւր ութսուն աւուրս: Եւ այնքան ամ ասեն յԱբրահամէ, որ զթլփատութիւն եւ զշաբաթս եւ զայլ աւրէնս հին հրամայեաց եւ աստ աւարտեաց:

Հարց. Վասն է՞ր Քրիստոս առաւել ի շաբաթու բժշկէր, քան ի յայլ աւուրս:

Պատասխանի. Վասն հինգ պատճառի.

Նախ՝ ի յայտնութիւն սքանչելեաց իւրոց եւ քարոզութեան, զի հրէայքն ի շաբաթ աւուրս առաւել ժողովէին ի սուրբ տեղիսն եւ սրբութեան պարապէին:

Երկրորդ. զի ցուցցէ զուղիղ միտսն աւրինացն Մովսիսի, զի արգելումն ի գործոց յաւուր շաբաթու ոչ էր պարտ իմանալ վասն աստուածային գործոյ կամ վասն հարկաւոր գործոց, զի կարէին զեզինս ի ջուր տանել եւ զգրաստ անկեալ ի ջրհորոյ հանել, եւ ի շաբաթի աւր զմանուկն թլփատել եւ զմեռեալն թաղել:

Երրորդ. պատշաճ էր Քրիստոսի բանիւ եւ գործով լուծանել զշաբաթս, զի տալոց էր նոր աւրէնս եւ վախճան հնոյն սկիզբն է նորոյս:

Չորրորդ. ցուցանէ, թէ ինքն է Տէր եւ իշխանութիւն ունի ի վերայ շաբաթու աւրինացն դնել եւ փոխել, ըստ այնմ. «Տէր է Որդի Մարդոյ եւ շաբաթու» (Մարկ. Բ 28):

Հինգերորդ. ուսուցանէ մեզ զհոգեւոր շաբաթս, զի պարտ է միշտ զգործս առաքինութեան գործել՝ թողլով զմարմնական շաբաթս:

Բան. «Ասեն հրէայքն [ցրժշկեալն]. “Շաբաթ է, եւ ոչ է արժան առնուլ [քեզ] զմահիճս [քո]”» (Յովհ. Ե. 10):

Մեկնութիւն. Սուտ ասեն նոքա, զի պատշաճ էր յաւուր շաբաթու զայնպիսի մարմնական գործ առնել, որք կարգեալ են յաստուածապաշտութիւն, առ ի պատիւ Աստուծոյ, որպէս քահանայքն ի տաճարին առնէին զգործ մարմնաւոր, այսինքն՝ զարդարելով զտաճարն, զոհելով զանասունս եւ լուանալով եւ վառելով զհուրն, եւ այլ սոյնպիսիս, որպէն ասէ ի Մատթէոս: Իսկ բառնալ զմահիճս էր գործ առ ի յայտնութիւն սքանչելեացն Աստուծոյ, իսկ ողջացեալն այլ իմն կերպիւ պատասխանեաց:

Բան. «Որ բժշկեացն [զիս], նա ասաց ցիս» (Յովհ. Ե. 11):

Մեկնութիւն. Որպէս թէ ասել. նա զիս աստուածային զաւրութեամբն ողջացոյց եւ նոյն զաւրութեամբն զայս ինձ հրամայեաց, եւ ես պարտական եմ նմա հնազանդել, քան ձեզ, եւ նա լաւ գիտէ, քան զձեզ:

Բան. «Նարցին ցնա [եւ ասեն]. “Ո՞վ է այրն”» (Յովհ. Ե. 12):

Մեկնութիւն. Իբրու ասել. չար է այրն այն, որ այնպէս ասաց ընդդէմ աւրինացն Մովսիսի: Եւ ողջացեալն կրկին բան ասաց վասն Քրիստոսի. մի՛ որ բժշկեաց, եւ մի՛ որ հրամայեաց առնուլ զմահիճս, բայց նոքա զմինն ասէին, որ ատելոյն էր, եւ զսքանչելիսն, որ ի պատիւ Քրիստոսի էր, ծածկէին:

Բան. «Եւ բժշկեալն ոչ գիպէր» (Յովհ. Ե. 13):

Մեկնութիւն. Զի բազում ամս ի հիւանդութեան էր, եւ ոչ գիտէր զՅիսուս, թէ ո՞վ ոք էր:

**Թէ Քրիստոս խոյս եր**

Բան. «Եւ Յիսուս խոյս եր վասն ամրոխին» (Յովհ. Ե. 13):



**Մեկնութիւն.** Վասն չորս պատճառի. նախ՝ զի վկայութիւն ողջացելոյն առաւել հաստատ լինէր, յորժամ Քրիստոս հեռու էր, քան ի մերձն: Երկրորդ. զի զհակառակութիւն հրէիցն զիջուսցէ, զի յորժամ ատեն զոր, ի տեսանելն առաւել զայրանան: Երրորդ. զի յորժամ ի բացեայ էր, սքանչելիքն Քրիստոսի առաւել յայտնեցան, զի քննէին ի միտս, թէպէտ ոչ հաւատային: Չորրորդ. ուսուցանէ մեզ զխոնարհութիւն, զի վասն ամբոխին, որ փառաւոր էին, խոյս ետ:

**Բան.** «Եւ գրանէ զնա [Յիսուս] ի փաճարին» (Յովհ. Ե. 14):

**Մեկնութիւն.** Զի բժշկեալն միշտ երթայր ի տաճարն, առ ի գոհանալ զԱստուծոյ վասն առողջութեան իւրոյ, եւ Քրիստոս եզիտ զնա, զի բժշկեսցէ զմիտս նորա, որպէս զմարմինն ողջացոյց:

**Հարց.** Վասն է՞ր ծանոյց զինքն նմա:

**Պատասխանի.** Ի դէմս ողջացելոյն վասն չորից. նախ՝ զի ծանից է բժշկեալն զբժիշկն: Երկրորդ. զի հատուցէ զգոհութիւն: Երրորդ. զի հաւատասցէ ի Քրիստոս: Չորրորդ. զի խրատեսցէ զնա մի մեղանչել:

Իսկ ի դիմաց հրէիցն. նախ՝ զի յանդիմանեսցէ զնոսա վասն նշանացն: Երկրորդ. զի տեսցեն զՆա, որ յանգէտս լինէին եւ հարցանէին:

**Բան.** «Ողջացար, մի՛ եւս մեղանչեր» (Յովհ. Ե. 14):

**Մեկնութիւն.** Երեք պատճառ ի դիմաց նմա. նախ՝ ցուցանէ, թէ վասն մեղաց էր պատահեալ հիւանդութիւն այն: Երկրորդ. զի մի մոռացի գերախտիքն ըստ կամաց հրէիցն: Երրորդ. զի զգոհութիւն եւ վերստին կրկնելն ի մեղս յոյժ ծանրացուցանէ զպատիժ մեղացն:

Ոմանք ասեն զառաջին ապտակն սա եհար, այլ եւ սուրբն Նարեկացին ասէ յիսունութերորդ ճառն երեք պատճառ ի դէմս մեր. նախ՝ յորժամ ի պատուհասէ գերծանիմք, այլ մի մեղից եմք: Երկրորդ. յետ մկրտութեան թէ մեղանչեմք, տանջանքն է անվախճան: Երրորդ. թէ յետ խոստովանութեան դարձեալ կրկնեմք, լինիցի յետինն մարդոյն չար քան զառաջինն, որպէս ասէր Տէր.

**Բան.** «Գնաց այրն եւ պաքմեաց հրէիցն» (Յովհ. Ե. 15):

**Մեկնութիւն.** Ոչ չարութեան, այլ սիրոյ է ցոյցք:

Եւ յայտ է ի չորից. նախ՝ զի ասէ. «Որ բժշկեացն զիս»: Երկրորդ. զի Քրիստոս զոր առողջացոյց մարմնով, առողջացոյց եւ մտաւք: Երրորդ. զի «Ախաասիկ ողջացար» ցուցանէ զբոլոր առողջութիւն հոգւոյն եւ մարմնոյն: Չորրորդ. վասն սորա ասէ Քրիստոս. «Ողջոյն իսկ մարդ բժշկեցի ի շարաթու» (Յովհ. Ե. 23):

Եւ այն, զի ասէ Քրիստոս պատուիրելով. «Մի՛ եւս մեղանչեր» (Յովհ. Ե. 14), ոչ այնքան վաղվաղակի անկանէր ի մեղս մատնութեան, վասն այն ասելի է, թէ բարի մտաւք ասաց նոցա, բայց հրէայքն չար մտաւք ընկալան, որպէս եւ զքարոզութիւն Քրիստոսի ի չար փոխարկէին:

**Բան.** «Վասն այնորիկ զՅիսուս հալածէին հրեայքն, զի զայն առնէր ի շարաթու» (Յովհ. Ե. 14):

**Մեկնութիւն.** Քանզի համարէին, զի այնու անցանէր զաւր էնսն Մովսէսի, թէպէտ սքանչելիքն Քրիստոսի ոչ է լուծումն աւրինացն Մովսէսի, զի հարկաւոր գործք եւ այնք, որք էին առ ի պատիւ Աստուծոյ, ոչ լուծանէին զշաբաթս, որպէս ցուցաւ ի վերոյ:

Եւ զի թարգմանիչ ասէ մեկնիչդ, գիտելի է, զի երեքն են թարգմանիչք. նախ՝ գրոյն, որպէս եւ թանասուներն: Երկրորդ. բանին, որպէս լեզուազէտք: Երրորդ. մտաց, որպէս մեկնիչք:

**Հարց.** Վասն է՞ր զայս եւ զայն անդամալոյծն մի ասեն:

**Պատասխանի.** Զի Եւսեբի ի ցանգն զհամաձայնութեան նշանն մի գրէ չորից գլխոյն, առ որս ասեմք, եթէ Եւսեբի ոչ զանդամալոյծն գրէ մի գոլ, այլ բժշկութիւն նոցա:

Եւ զի այլ է սա եւ այլ նա, յայտ է յերից. նախ՝ ի տեղւոյն, երկրորդ՝ ի ժամանակէն, երրորդ՝ ի բանից կարգէն:

**Զի Քրիստոս առնէր եւ ուսուցանէր**

Իսկ այն, որ ասէ Ոսկեբերանն վասն վարդապետութեան եւ նշանացն Տեառն. նախ՝ զի յաւզուտ նոցա առնէր երբեմն զմի, քան զմիւսն յառաջ: Երկրորդ. զի միմեանց վկայք լինիցին, այսինքն՝ քարոզութիւն նշանացն եւ նշանն քարոզութեան հաստատութիւն:

Իսկ առ մեզ՝ վարդապետացս, կրկին կերպիւ ունիմք. նախ՝ զբանս ճշմարիտ եւ զգործս բարիս: Երկրորդ. աշխատութիւն մտացն եւ ուսումն բանիցն է վկայ, եւ բանքն աշխատանացն:



Իսկ այլ վարդապետք ասեն, թէ նախ առնէր զնշանս եւ ապա քարոզէր, վասն զի բանական ճանաչումն մարդկան ի զգալեացս ասի յիմանալիսն, զի ամենայն ճանաչումն մեր ծնանի ի զգայարանացս, վասն այն սովորութիւն է աւետարանչիս, զի նախ ճառէ զսքանչելիս եւ ապա՝ զվարդապետութիւն:

Բան. «Նայր իմ մինչեւ ցայժմ գործէ, եւ ես գործեմ» (Յովհ. Ե. 17):  
Մեկնութիւն. Այս երկրորդն է, որ ի գործոյն ցուցանի, թէ Աստուած է Քրիստոս:

Հարց. «Զի՞նչ է, որ ասէ Մովսէս. «Նանգեալ Աստուած ի գործոց իւրոց» (հմմտ. Ծննդ. Բ 2), եւ աստ ասէ. Մինչեւ ցայժմ գործէ»:

Պատասխանի. Կրկին է գործն Աստուծոյ, այսինքն՝ ստեղծանել եւ նախախնամել: Արդ, ի ստեղծանելոյն Հանգեալ է, զի այլ նոր ինչ ոչ ստեղծանէ, այլ զեղեալն միշտ խնամէ: Դարձեալ՝ Հայր ասաց պահեալ զշաբաթս եւ ինքն գործէ, զայն տայ իմանալ, թէ արէնսդիրն ընդ արինաւք ոչ մտանէ, որպէս ասաց՝ մի՛ սպանաներ եւ մի՛ դատեր, եւ ինքն դատէ եւ սպանանէ, նոյնպէս եւ զշաբաթս իմասցիս: Դարձեալ՝ տե՛ս, յորժամ զաշակերտքն չարախաւս էին, թէ անցանեն զաւրէնս եւ ի շաբաթու Հասկ փշրեն, նա զԴաւիթ բերէ վկայ, զի մարդ էր, որպէս եւ առաքեալքն զծառայն ծառայակցաւն, իսկ յորժամ զՔրիստոս Հալածէին վասն գործոյ շաբաթուն, վկայ իւր բերէ զՀայր, զի Աստուած է Համազուգ Հաւր:

Վասն նախախնամութեան

Դարձեալ՝ Հայր իմ, որ Հրամայեաց պահել զշաբաթս, եւ ինքն գործէ միշտ՝ նախախնամելով զմարդիկ, որպէս յաւուր շաբաթու զարեգակն ծագէ, եւ զլուսին եւ զաստեղս եւ զայլս: Նոյնպէս եւ ես յաւուր շաբաթու գործեմ զգործս Հաւր իմոյ, զի Աստուած եմ:

Եւ զիտելի է, զի զլիսաւրէն չորս կարգ է նախախնամութեան Աստուծոյ. նախ՝ զտիւ եւ զգիշեր եւ զեղանակս տարւոյն փոփոխելով խնամէ: Երկրորդ. զկենդանեաց տեսակս ծննդեամբ խնամէ, շաբաթութեամբ երկնային մարմնոց: Երրորդ. զբնականս ի նոյնութեան պահէ եւ ի տեղի իւրեանց, որպէս զչորս տարերս. զքարինս, զգետս եւ զայլս: Չորրորդ. զբանականս խնամէ զանազան խրատով եւ պիտոյիւք եւ այլն:

Այսպէս եւ Քրիստոս չորիւք խնամէր զմարդիկ. նախ՝ քարոզելովն ի զիտութիւն ասէր: Երկրորդ. սքանչելեաւք ի Հաւատս բերէր: Երրորդ. զախտս մարմնոյն բժշկէր: Չորրորդ. զմեղս ի Հոգւոյն սրբէր:

Ընդդէմ բաժանողաց

Բան. «Վասն այնորիկ հրեայքն խնդրէին սպանանել զնա» (Իրն Յովհ. Ե. 18):

Մեկնութիւն. Այսինքն՝ խորհէին եւ կամէին:

Բան. «Զի ոչ միայն լուծանէր զշաբաթս, այլ եւ Նայր իւր կոչէր զԱստուած եւ հաւասար առնէր զանձն Աստուծոյ» (Յովհ. Ե. 18):

Մեկնութիւն. տե՛ս եւ զայս, զի հրէայքն Հակառակ Աստուծոյ եւ թշնամիք Համարէին զՔրիստոս ըստ իւրն բանին, թէ Հաւասար է Աստուծոյ, եւ վասն այն խնդրէին սպանանել, եւ սոքա անուամբ միայն քրիստոնեայք յերկուս բաժանեն զմի Քրիստոսն, որ քան զհրէայսն անարգ են եւ վատթարք, որպէս ցուցանէ մեկնիչդ յերկար աստուածաբանութեամբ ընդդէմ Քաղկեդոնի, որ յերկուս բնութիւնս բաժանեն եւ ընդդէմ Նեստորի, որ յերկուս բաժանեն:

Հարց. Ո՞րն է առաւել չար, որ զբնութիւն բաժանէ, թէ՞ որ զանձն:

Պատասխանի. Այն, որ զանձն բաժանէ, յայտնի չար է, եւ որ զբնութիւնս բաժանէ, ծածուկ չար: նախ՝ որ զբնութիւն բաժանէ եւ զկամս եւ զգործս, նա եւ զանձն բաժանէ: Երկրորդ. զի անձն առանց բնութեան միայն կոչումն է, վասն որոյ որ անձամբ ասէ միացեալ եւ ոչ՝ բնութեամբ, անուամբ ասէ միացեալ եւ ոչ՝ էութեամբ: Եւ տե՛ս, որ բաժանէ զմարմինն ի Բանէն, թէ՛ բնութեամբ եւ թէ՛ անձամբ, զմարմինն Աստուած ոչ խոստովանի: Եւ թէ Աստուած է միութեամբն, յայնժամ զաւրաւոր եւ տկար ոչ է, այլ միայն զաւրաւոր, եւ ոչ Հաւասար կամ անհաւասար, այլ միայն Հաւասար, եւ ոչ ապականացու եւ անապական, եւ ոչ Տէր եւ ծառայ, այլ Բանն Աստուած մարդացեալ մարմնովն է Տէր, եւ մարմնովն անապական, եւ մարմնովն Որդի Աստուծոյ, եւ մարմնովն Հաւասար Հաւր, որպէս յայտնապէս ցուցանի ի գիրս Հարցմանց:



ՄԱՏԹ-ԷՈՍ ԶՈՒՂԱՅԵՑԻ

«Յեպ այսորիկ փօն էր հրէից. եւ ել Յիսուս [յերուսաղէմ]» (Յովհ. Ե. 1):

Թէ վասն է՞ր միշտ ի տօնն երթայր: Առաջին՝ զի զփառս Աստուածութեան յայտնեսցէ ամենայն եկեղոցն եւ հաւատացեղոցն քարոզութեամբն: Բ.(երկրորդ)՝ պատուէ միշտ զտօնս զի մի հակառակ կարծիցեն: Գ.(երրորդ)՝ զի պարզամիտ եւ անարատ ժողովրդոցն տեսանել եւ լսել տայ զսքանչելիսն եւ զքարոզութիւնն:

«Պրորատիկէ» աւագանն «ոչխարա[յ]ին» կոչի ըստ յունաց ձայնին, զի շինեաց Սողոմոն զհինկ սրահն ի դուրս տաճարին, զի լուսացեն քահանայք զփորոտիս ողջակիզացն անդր եւ ապա տարցեն յայրումն: Սոյնպէս «բեթհեգտայն» ըստ եբրա[յ]եց[լ] ոցն «տուն ոչխարաց» ասի, վասն ասացեալ պատճառիդ իսկ Ոսկիաբերանն Յովհաննէս ողորմութեան իջումն ասէ կամ «հանգիստ», կարծեմ թէ այնպէս լսի ի յոյնքն: Վասն է՞ր ժողովէին անդ ախտայժէտքն. Ա.՝ վասն ողորմութեան, Բ. (երկրորդ)՝ վասն ջրոյն շարժման, զի ամենայն ամի իջանէր հրեշտակն եւ շարժէր զջուրն եւ որ յառաջ անկանէր ի ջուրն, առողջանայր ի միազգ ցաւոց: Թէ վասն է՞ր լինէր այն, ասեն վարդապետք՝ Ա. զի Իսրայէլ ոչ ունէր յայնմ ժամանակի մարգարէս, զի բժշկէին ախտաժեւտքն որպէս Եղիայիւ եւ Եղիսէիւ, զայս նոցա ի սփոփումն եւ ի բժշկութիւն շնորհաց նոցա Աստուած: Բ.(երկրորդ)՝ ասեն ըստ պատմութեան, թէ անդ էր փայտ խաչին Քրիստոսի եղեալ, ըստ ոմանց թէ Սողոմոն եդ եւ այլք, թէ յետո[յ] քահանայքն եդին, զի ձգեալ էր ի դուրս տաճարին եւ վասն զարդու փառաց փայտին այն, զի մերձեալ էր ժամանակ բեւեռեալ ի նմա փրկչին եւ Աստուծոյ, որպէս հարսն, զի զարդարեն ի ժամանակս պսակելոյն, վասն այն իջանէր հրեշտակն եւ կատարէր զբժշկութիւնն: Գ.(երրորդ)՝ զի օրինակ էր այն աւագանի մերոյ ըստ կրկին եղանակի. Ա.՝ զի որպէս այն աւագան մաքրէր զմարմնո[յ] առողջութիւն ի ցաւոց, այսպէս եւ մերս աւագան՝ մաքրէ զհոգիս եւ զմարմին ի սկզբնական եւ ի ներգործական մեղաց: Բ.(երկրորդ)՝ զի նայ ի ձեռն հրեշտակին իջման մաքրէր: Այսպէս եւ մերս՝ ո՛չ միայն լոկ ջուրն, այլ իջումն Հոգւոյն Սրբո[յ]ն]:

Նաեւ մերս բարձրագոյն ունի զխորհուրդ քան զայն: Ա.՝ զի անդ հրեշտակ իջանէր, որ էր ծառա[յ] եւ սպասաւոր: Իսկ աստ՝ Տէրն հրեշտակաց Բ.(երկրորդ)՝ զի անդ ախտքն արգել լինէր բժշկութեանն: «Մինչ ես դանդաղիմ (այսինքն՝ դեղեւիմ եւ սողամ), այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ»: Իսկ աստ՝ «որք կամին, սրբին»: Գ.(երրորդ)՝ զի անդ մի ոմն սրբէր եւ աստ՝ աշխարհս ամենայն: Դ.՝ անդ առողջ արար միո[յ] ցաւո[յ], աստ՝ մաքրութիւն բոլորին: Ե.(հինգերորդ)՝ անդ ի տարին Ա. օր, իսկ աստ՝ յամենայն աւուր հնար է, որք ոչ են մկրտեալ:

Թէ վասն է՞ր յաւուր շաբաթու բժշկէր Քրիստոս: Վասն Դ. պատճառի. Ա. զի ժողովուրդն յայնմ աւուր շաբաթանայր ի գործո[յ] եւ հաւաքէր ի տաճարն եւ առնէր սքանչելիս ի հաւատալ նոցա եւ փառաւորել զԱստուած: Բ.(երկրորդ)՝ զի ուսուցէ, թէ ի բարի գործոց ոչ է պարտ դատարկանալ, այլ ի չարէ, որպէս ասէր ինքն Յիսուս, թէ «Անգեալ ի խորխորատ էջ կամ եզն, ո՞չ ( հանիցէք կամ կապեալ անասնոց ո՞չ փանիք եւ փայք ջուր եւ խոր» (հմմտ. Մարթ. ԺԲ. 11): Գ.(երրորդ)՝ զի լուծանելոց էր զհինն եւ տալոց էր նոր օրէնս մեզ ի վերայ Հնոյն: Դ.(չորրորդ)՝ զի ցուցէ, թէ ինքն է Աստուած եւ ոչ հարկ օրէնք ի վերայ նորայ, զի «Շարաք վասն մարդոյ եղև եւ ոչ վասն Աստուծոյ» (հմմտ. Մարկ. Բ. 27): Վասն այն ասէր՝ Տէր է որդի մարդո[յ] եւ շաբաթու (հմմտ. Մարկ. Բ. 28): Եւ յորժամ հարցանէին եւ հալածէին զՅիսուս վասն գործոյ շաբաթուն (տնս Յովհ. Ե. 16): Պատասխանէր. «Նայր իմ մինչև ցայժմ գործէ, եւ ես գործեմ» (Յովհ. Ե. 17): Քանզի ո՛չ ասաց, թէ ոչ գործեմ, այլ թէ գործեմ որպէս Հայր իմ. «Զի Հայր իմ եդ ձեզ պահել զշաբաթս եւ ինքն միշտ նախախնամէ եւ յաւուր շաբաթու որպէս որ ծագէ զարեգակ եւ զլուսին եւ զաստեղս եւ զերկիրքն շրջեցուցանէ զանձրեւ, զձիւն հեղու, զաւղտ սփռէ հողմոց շարժել տա[յ], զետոց ընթանալ տա[յ], աղբերաց բըխել տա, զսերմանիք բուսուցանէ, զանասունս դարմանէ, զծնունդս յորովայնին ստեղծանէ, զհոգին եւ զմարմինն շաղկապէ եւ զայլ ամենայն արարածս նախախնամէ, այսպէս ասէ, եւ ես նախախնամեմ եւ առնեմ զգործս Հօր իմոյ, զի Աստուած եմ: Տե՛ս եւ զայս, զի յորժամ վասն աշակերտացն հրէայքն շարախօսէին առ Քրիստոս, թէ անցանեն զօրենքն, զի ի շաբաթու հասկ փշրէին (հմմտ. Մարթ. ԺԲ. 1, Մարկ. Բ. 23, Ղուկ. Զ. 1): Վկա եբեր զԴաւիթ, զի թէպէտ մարգարէ էր, թագաւոր եւ արդար, սակայն մարդ էր, որպէս առաքեալքն,



զծառայն ծառայակցացն վկա երեր, իսկ յորժամ զինքն զՔրիստոս հալածէին վասն գործոյ շարաթուն, զկա իւր զՀայր բերէր, վասն զի Աստուած էր՝ համազաւր Հաւր:

«Տայր իւր կոչէր զԱստուած, եւ հաւասար առնէր զանձն Աստուծոյ] (տնն Յովհ. Ե. 18): Տե՛ս եւ զայս հրէայքն հակառակ Քրիստոսի Աստուծոյ եւ թշնամիք, համարէին զՔրիստոս ըստ իւրոյ բանի, թէ հաւասար է Աստուծոյ եւ վասն այն խնդրէին սպանանել (տնն Յովհ. Ե. 18): Եւ սորա, որ անուամբ միայն ասին քրիստոնեայք, յերկուս բաժանեն զմի Քրիստոսն, որք քան զհրեայսն անարգ են եւ վատթարք:



41. ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ  
Ի ԾՆԷ ԿՈՒՐԻՆ

Յովհաննէս Թ. 1-41

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՅԻ

(Գլուխ I.)

Եւ յանցանելն ետես այր մի կոյր ի ծնէ, եւ հարցին ցնա աշակերտքն եւ ասեն. Վարդապետ, ո՞յր վնաս է, սորա՞, թէ հաւր եւ մաւր իւրոյ, զի կոյր ծնան (հմմտ. Յովհ. Թ. 1):

Աղանդ է յառաջին իմաստասիրացն, զի ասացին, եթէ հոգիք մարդկան յառաջագոյն քան զմարմինս եղեն, եւ յառաջագոյն քան զգեներուն զմարմինս յանցեան, որպէ[ս] եւ մեք զսատանայ ասեմք մեղանչել յԱստուած, եւ իւրաքանչիւր հոգի ըստ յանցանացն եւ ի մարմինս մտանէ եւ տանջի, որ սաստկապէս մեղաւ՝ ի խեղս եւ յարատաւորս եւ ի ցաւագնոտս, եւ ի նոյնպիսիսս մտանէ, զի առաւելագոյն տանջեսցի, իսկ որ չափաւորապէս յանցեաւ, ի յառողջ եւ յանարատ մարմինս, զի չափաւորապէս տանջեսցի: Զայս պատճառ ասեն արտաքինք կուրութեան մարմնոց, ցաւագնութեան եւ ալլոց արատոց, որ ի մարմինս լինի մարդկան. զայդ հեթանոսաց մանկունքն իմաստասիրացն, մանաւանդ թէ յիմարաց ցնորեցան խաբեալք ի սատանայէ: Իսկ Հրէայն՝ վասն զի միայն զրոյն ծառայէ, որ սպանանէ, յաղագս ասելոյն Մովսէսի՝ «Ես եմ Աստուած, որ հապուցանեմ զմեղս ճնողացն յորդիս, մինչեւ յերրորդ ազգս այնոցիկ, որք արեանն զիս» (հմմտ. Ելից, Ի. 5), արդ զայս ասացեալ Մովսէսի, կարծեցին, եթէ յաղագս յանցանաց հարց տանջին որդիք. վասն այսորիկ հարցին աշակերտքն զՔրիստոս՝ եթէ սա՞ մեղաւ, այսինքն՝ հոգի՞ սորայ մեղաւ, եւ զգեցաւ զայսպիսի մարմին, եթէ ծնա՞ւղք սորա մեղան, եւ սա տանջի, ըստ իմանալոյն Հրէից զգիրն միայն, եթէ մեղք հարցն յորդիսն անցանեն: Իսկ ասէ Սաղմոսերգուն (Սաղմ. ԸԸ. 14), յոր հանգչէր աշակերտն ուսեալ զգաղտնի գիտութեանն եւ զիմաստութեանն Քրիստոսի զխորհուրդս:



**ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ**

«Մինչդեռ անցանէր, երես կոյր ի ծնէ մի» (տե՛ս Յովհ. Թ. 1):

Յոյժ զչարացան հրէայքն ընդ փրկչին, յորժամ լուան, թէ «Յառաջ քան զլինելն Արրահամու եմ ես» (Յովհ. Ը. 58) եւ խորհեցան փութալ ի սպանումն: Ապա այնուհետեւ կենարարն յարդարեաց զկուրին պատահումնն, զի ամենեւին հարթ հաւասար զայտիցն եւ տեսանելեացն տեղիսն եւ դատարկ յամենայն կազմածոյ անաւթիցն, զի յորժամ աստուծային զաւրութեամբն զնա բժշկեսցէ, ցուցցէ զինքն ստեղծիչ Ադամայ: Ընդ է՞ր ոչ բանիւ բժշկէր որպէս զանդամւոյծն: Զի անդ ասաց «Արի, առ զմահիճս քո եւ զնա» (Յովհ. Ե. 8): Իսկ աստ թքանէր ի գետինն եւ կաւ արարեալ ծեփէ զաչս կուրին՝ նշանակելով զինքն գոլ արարիչ Ադամայ, որ զպակասութիւն ի բնութեանս Ադամայ նոյն ի նորին նիւթոյ գոյացուցանէ, ուստի զԱդամ ստեղծ եւ յայտ արասցէ այնու քան զԱբրահամ յառաջ գոլ:

Հարցին աշակերտք. «Ռաբբի, ո՞յր վնաս է, սմա՞, թէ՞ հաւր եւ մաւր իւրոյ» (տե՛ս Յովհ. Թ. 2):

Վասն է՞ր հարցին, զի յորժամ բժշկեաց զանդամւոյծն ասաց ցնա. «Առողջացար մի՛ մեղանչէր» (հմմտ. Յովհ. Ե. 14): Յայնմանէ կարծէին նոյնպէս լինել եւ ոչ գիտացին, թե վասն գործոյն Աստուծոյ, որ յայտնելոց էր ի նմա, եղեւ պատճառ կուրութիւն առնն:

«Ետես այր մի կոյր ի ծնէ»:

Զի ցուցցէ, թէ ո՛չ կոյրն մաղթեաց բժշկել զնա, այլ Յիսուս խորհեցաւ ի նա: Եւ աշակերտքն ի հայեցուածոյն գիտացին, թէ կամի բժշկել զնա, վասն որոյ հարցին, թէ՛ «Սորա՞ է վնաս, թէ՞ զինքն ասիցէ պատճառ կուրութեան իւրոց»:

«Հարցին զնա աշակերտքն եւ ասեն. “Ռաբբի, ո՞յր վնաս է, սորա՞, թե՛ հար եւ մար իւրոյ զի կոյր ծնա”» (Յովհ. Զ. 2): Զիւրաքանչիւր հոգի ըստ յանցանացն ասեն, ի մարմինն մտանէ եւ տանջէր, որ մեղաւ սաստկագոյն ի խեղս, յարատաւորս, ի ցաւագնոտս եւ ի նոյնպիսիս զի առաւելագոյն տանջիցի: Իսկ չափաւորապէս յանցեալ, յառողջ եւ յանարատ մարմինս, զի չափաւորապէս տանջեցին: Զայս պատճառս ասեն, արտաքին կուրութեան ի մարմնոյ ցաւագնութեան եւ այլոյ արատի, զայդ հեթանոսաց մանկունքն յիմաստասիրաց մանաւանդ թէ յիմարաց այսմ իրաց ցնորեցան: Իսկ հրեայն վասն զի միայն գրոյն ծառայէ, որ սպանանէ, յաղագս Մովսէսի ասելոյն՝ «Ես եմ Աստուծոյ, որ հարուցանեմ զմեղս ծնադաց, յորդիս մինչեւ յերրորդ

ազգս այնոցիկ, որ արեան զիս» (հմմտ. Ելից Ի. 5): Զայս ասացեալ Մովսէսի, կարծեն, թէ վասն տանջանաց հարցն տանջին որդիք: Յաղագս այնորիկ հարցին աշակերտքն՝ սա՞ մեղաւ, այսինքն՝ հոգի՞ սորա, զի զգեցաւ զայսպիսի մարմին, թէ՞ ծնաւդք սորա մեղան եւ սա տանջի: Ըստ իմանալոյ հրէից զգիրն միայն, թէ մեղք հարց յորդիս անցանեն: Ասիցեն աշակերտքն ցնա. «Զիարդ դորա է, զի՞ ոչ է մարդ մարդոյ մեղանչել նախքան զծնանելն, թէ՞ մաւր եւ հաւր դորա»: Իսկ թէ ասիցէ ծնաւդացն է վնաս, ասիցեն՝ «Դորա զի՞նչ մեղ է թէ ծնաւդքն յանցեան զպատուիրանան Աստուծոյ», որպէս Դաւիթ ասէ, «Որպէս արդար ես ի բանս քո եւ յաղթեսցես ի դատիլն քում» (տե՛ս Մաղմ. Ծ. 6): Մի արդեւ՞ք վասն այնորիկ մեղաւ Դաւիթ, որպէսզի արդարացուցէ զԱստուած ի դատաստանի, այլ զի կանխագէտ է Աստուած. ասաց զայս, թէ նախքան զմեղանչելն իմ տեսեր զիս եւ ոչ պատճեցեր:

**ՍՏ** Աղանդէ այս առաջին իմաստասիրացն, թէ հոգիք մարդկան յառաջ քան զմարմինս եղեն, եւ նախքան զգեհնուլ զմարմինս յանցեան, որպէս եւ մեք զսատանայ ասեմք մեղանչել յԱստուած: Իսկ պարտ է գործել զգործս Աստուծոյ: Զհաւասարութիւն առ հայր յայտնէ առնէ, զի Աստուծոյ գործ այն ի հողոյ մարմին զարդարել:

**ԵՓ** «Մինչդեռ սար կայ» (տե՛ս Յովհ. Թ. 4), այսինքն՝ մինչդեռ ընդ ձեզ եմ, զժամանակ մարդեղութեանն ասաց:

**ՈՍ** Զնշանս ասաց զհրաշագործ, որով հաւատան մարդիկ եւ հետեւին գործոց բարեաց, զի այս է ժամանակ գործելոյ մինչ կենդանի եմք:

«Գայ գիշեր յորում ոչ ոք կարէ գործել» (տե՛ս Յովհ. Թ. 4):

**ԵՓ** Իսկ յետ ամբառնորոյ որդոյն Աստուծոյ եւ դուք լոյս եք յաշխարհի. մտեք առ Աստուած եւ մութն լինի եւ խափանումն նշանաց վասն անհաւատութեան բազմաց կամ վախճանին գիշերէ ոչ ոք կարէ գործել:

«Մինչդեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշխարհի» (Յովհ. Թ. 5):

Որպէս արեգակն յորժամ ծագէ եւ իւրաքանչիւր ումէք առաջնորդէ ի լոյս, նոյնպէս եւ հաստատելոցն Քրիստոս, ոչ միայն զպակասութիւն անաւթոցն ստեղծագործէ, այլեւ տեսանող զաւրութիւն



չնորհէ, զի ցուցցէ զինքն հոգւոց եւ մարմնոց արարիչ եւ այսու հաստատէ զբանն իւր յառաջ քան զլինելն Արքահամու:

«Չայս իրրեւ ասաց եթուք ի գեփին՝ եւ արար կաւ» (Յովհ. Թ. 6):

ԵՓ Արար աչս ի կաւոյ անտի եւ ծագեաց լոյս ի հողոյ անտի որպէս ի սկզբանն հրամայեաց լուսոյ եւ ի խաւարէ անտի ծնաւ:

Նոյնպէս եւ յայսմ վայրի արար. ստեղծ կաւ, ելից զպակասութիւն ստեղծոյն, զի յայտարասցէ թէ այն, որ ելից զթերութիւն բնութեանն, նա արար զմարդն առաջին: Զի ոչ կամեցան հրէայքն հաւատալ, թէ յառաջ էր նա քան զԱրքահամ, հաւանեցոյց զնոսա գործովքն. զի ահաւասիկ զպակասութիւն մարմնոյ ելից ի հողոյն երկրէ: Զի կշտամբեսցէ զայնոսիկ, որք ասեն ի չորից կողմանց զմարդն զի ի մի տեղւոյ առ զհողն յերկրէ եւ կազմեաց զպակասութիւն անդամոցն: Զայս վասն աւգտութեան նոցա արար, քանզի նշանքն յորդորէին զնոսա հաւատալ: Հրէայքն, ասէ, նշան խնդրէին, ոչ ջրով արար կաւ, այլ ի թքոյ, զի մի հրէայքն ասասցեն, թէ ջուրն Սելովմայ շնորհեաց նմա բժշկութիւն եւ ոչ ի ձեռն հրամանի, այլ զնիւթն յարդարեաց:

ԵՓ Արդ թուքն, որ եղեւ բանալի աչաց փակելոյ եւ զբիբ աչաց, ջուրն բժշկեաց եւ ի մէջ ջուրց մերձեցոյց զսրբութիւն իւր առ պակասութիւն: Զի յորժամ թքիցեն ընդ երեսս նորա կշտամբեալ յանդիմանեսցէ զնոսա աչք կուրին, որ բացաւ թքով նորա:

«Ծեփեաց զկան ի վերայ աչաց կուրին» (Յովհ. Թ. 6):

Ի լրումն բաւանդակ գործարանաց, որք անտեսանելեացն, զի յորժամ հարցանելով երթայ ի մէջ մարդկան, թէ ուր է Սելովմա: Հարցցեն եւ նոքա զնա եւ ուսանիցին ի նմանէ, ասեն ցնա, երթ եւ գնացին այլք տեսանել, թէ արդարեւ բանայցեն աչք նորա, ձգեալ երթային յայտնապէս ահանինք զկնի կուրին, որ տեսանէր ի ներքոյ հոգւոյ աչաւք: Զգեալ տանէր ի ծածուկ կոյրն զաղանիսն, որ կուրացեալ էին ի ներքոյ:

«Ասէ ցնա. “Երթ լուս յաւագան[ի]ն Սելովմա[յ]”» (Կրնս Յովհ. Թ. 7):

Զի յորժամ առաջի ամենեցունց զաչս կուրին կաւով ծեփեաց եւ հրամայեց ի Սելովմա երթալ: Տե՛ս, թէ որքան սքանչումն զնոսա ունէր թէ զինչ արդեւք լինիցի, վասն որոյ բազումք զհետ կուրին չոգան՝ տեսանել զոր արար Յիսուս, զի այնպէս հռչակեցաւ գործն: Եւ նա յայն սակս ի Սելովմա առաքէր ի տեղի բժշկութեանն, քանզի նոքա հակառակ զնա աւրինացն ասէին: Եւ կուրին եւս առաւել էին հաւատք, յորժամ աչաւք ծեփելեաւք զնայր երկակի յոյս եւ կասկած ի մտի ունելով, զի ոչ թէ Սելովմա երաց զաչս կուրին, որպէս ջուրքն Յորդանանու սրբեցին զնէեման, այլ հրաման մարգարէին բժշկեաց (հմմտ. Դ. Թագ. Ե. 10-14): Նաեւ ջուրքն քաւութեան ոչ եթէ նոքա սրբեն այլ անուն երրորդութեանն, որ ի վերայ նորա լինին քաւիչք մեղաց մերոց: «Զիսրոյ բացան աչք քո: Եւ նա ասէ. Այր մի որում Յիսուսն ասեն, կաւ արար՝ եւ ծեփեաց զաչս իմ» (Կրնս Յովհ. Թ. 10-11): Լուացան զկաւն յաչաց անտի իւրոյ եւ երեւեցաւ նմա: Լուացին նոքա զկուրութիւն իւրեանցն սրտից, եւ երեւեցաւ լոյսն նոցա, զի յորժամ զաչս բանայր տէր մեր, յանժամ զկուրաց բազմաց բանայր ի ծածուկ եւ կոյրն շատատէս վաճառ եղեւ Տեառն մերոյ, զի նովաւ վարեցաւ Տէր մեր եւ զկոյր բազումս ի կուրութենէ սրտից բժշկեաց: Զի ծածկեալ էին ի փոքր բարբառ նորա, գանձք մեծամեծք եւ նկարեալ էր գործ բժշկութեան նորա խորհրդով, թէ որդի է նա արարչին: Որպէս զի մի ոք կարծիցէ արուեստ բժշկութեան, այլ առեալ զգաւրութիւն Աստուծոյ, յղեաց զնա լուանալ, , զի ցուցցէ, թէ ոչ երկմտեր վասն նորա բժշկութեան եւ հարցանելովն յերթալն քարոզեսցէ զիրսն եւ երեւեսցին նորա հաւատքն:

«Ածին առ փարիսեցիսն զնա, որ երբեմն կոյրն էր» (Յովհ. Թ. 13):

Զի ի նոցանէ լսիցեն զդատաստանն թէ զինչ պարտ է առնել, յորժամ գիտաց այրն, թէ հարութեան եւ նախանձու են հարցուածքն եւ կամէին պատճառս ինչ ի վերայ գտանել, ապա ոչ զանունն ասէ, այլ՝ «Կաւ եղ ի վերայ աչաց իմոց, - ասէ, - եւ լուացայ՝ եւ փեսանեմ» (Յովհ. Թ. 15): Եւ ոչ ճառեաց, թէ ի Սելովմա, ուրեմն հաստատուն ունէր ի մտի զերախտիքն եւ նոքա եւս կամէին պատճառս լսել ի յառնէն:

«Ասեն ոմանք ի փարիսեցոցն. Ոչ է այրն այն յԱսպուծոյ, զի զշարթաթս ոչ պահեաց» (Յովհ. Թ. 16):



Թողին զայն, որ բժշկեացն, եւ սկսան եպերել զկաւն առնել ի շաբաթու: Հարցին զնա ո՛չ ստուգութեամբ, այլ ասացին նմա իբրեւ զայն, որ երեսունեւութեամբ անդամալոյծն: «Ո՞վ հրամայեաց քեզ, ասեն, առնուլ զմահիւն քո» (հմմտ. Յովհ. Ե. 12) եւ ոչ ասացին, թէ՛ «Ո՞վ բժշկեաց զքեզ», նոյնպէս եւ յայսմ վայրի, որ առանց կաւոյն, նախանձեցան ընդ նմա ի ժամանակին իբրեւ բժշկեաց ի շաբաթու զայրն ջրգողեալ, ճայնիւ միայն, բանիւ պարզեցաւ նաեւ յըստակեցաւ: Արդ որ խաւսի՝ զշաբաթս լուծանէ՞, ըստ նոցա բանիցն, այո՛: Թէ՛ այս այդպէս իցէ, ո՞վ շատ ելոյծ զշաբաթս, փրկչի՞ն մեր, որ բժշկեաց, եթէ՞ նոքա, որ նախանձու խաւսեցան ի վերայ բարերարին իւրեանց: «Այլ նոքա ասեն, զիա՛րդ կարէ մարդ մեղաւոր՝ այսպիսի նշանս առնել» (տե՛ս Յովհ. Թ. 16): Պատահեցան ոմանք ի նոցանէ եւ կամէին ըմբերանել, զի վկայութիւն տացէ կոյրն, որ փորձ առեալ էին զաւրութեան նորա: «Ասեն ոմանք ցկոյրն. Դու զի՞ ասես վասն նորա [զի երաց զաչս քո]» (տե՛ս Յովհ. Թ. 17): Զի երկուս բաժանեցաւ ամբոխն, աւետարանիչն ցուցանելով վասն նորա, սակս որոց հերձուած լինէր ի մէջ նոցա, «զի երաց զաչս քո» ասել կամէին կախարդութեամբ արար որպէս այլու՞մ ժամանակի Բէեղզբեուղաւ հանէ դա զգեւս: Այլ որ զնոյն կարէին աստ ասել, այլ ասէին՝ զշաբաթս լուծանէ՛:»

«Եւ նա ասէ, եթէ մարգարէ է» (Յովհ. Թ. 17):

Տե՛ս զտնանգին իմաստութիւնն ի պատասխանոյն ոչ զարհուրեցաւ:

«Ոչ հաւարացին հրեայքն թէ կոյր էր եւ բացաւ, մինչեւ կոչեցին զծնաւդս բացելոյն» (տե՛ս Յովհ. Թ. 18):

Թերահաւատ էին, թէ չէր կոյր ի սկզբանէ, թէրեւս կարացեն պատճառ եւս գտանել, որով կարացեն սուտ առնել եւ ոչ կարէին ծածկել զմեծասքանչ նշանսն: Վասն այնորիկ ահամայ ցուցանէին զփառաւորեալն: «Հարցին զծնաւդսն, սա է որդին ձեր. զիա՛րդ տեսանէ: «Մեր ոչ գիտեմք. ցոյս իսկ հարցցուք լինքնին ի չափ հասեալ է» (տե՛ս Յովհ. Թ. 19, 21):

Վասն երկիւղին հրէից՝ կրկին հարցանեն եւ նա ասէ. «Այժմ ասացի ձեզ» (Յովհ. Թ. 27):

Տե՛ս զհամարձակութիւն կուրին: Տկար է ստութիւն առ ճշմարտութիւն, ոչ առ ուսանել հարցանէք, հեզնեաց եւ ձողկեաց զնո-

սա, վասն այսորիկ կամեցաւ մխիթարել զնա Տէր մեր եւ խաւսել ընդ նմա. «զի՞ կամիր միտանգամ լսել. մի՞թէ՛ եւ դուք կամիր աշակերտել նմա» (Յովհ. Թ. 27):

Գիտէր, եթէ չարութեամբ է քննութիւն նոցա, եցոյց նոցա զիւր յաւժարութիւն առ Քրիստոսի աշակերտութիւնն, իսկ զնոցայն կարճեաց զհարցուածն, զի յանդիմանութեամբ ետ զպատասխանին: «Գիտեմք զի Աստուած մեղաւորաց ոչ լսէ» (Յովհ. Թ. 31):

Որպէսզի ասիցէ, թէ ոչ ես միայն գիտեմ, այլ եւ՝ դուք եւ ամենայն ոք, վասն զի գիտէր, թէ Յիսուս էր, որ բժշկեաց զնա եւ զնոսա ըմբերանեաց եւ համարձակութեամբ խաւսէր:

«Յաւիտենից որ ոչ լուա՛ թէ բացան ասք կուրի ի ծնէ կոյր ծնելոյ» (տե՛ս Յովհ. Թ. 32):

Խորամանկքն իմացան, թէ զՔրիստոս խոստովանի, թէպէտ եւ ոչ յայտնապէս ասաց, թէ ոչ էր այրն այն յԱստուծոյ, ո՛չ կարէր առնել նշանս եւ ո՛չ հաւատացին, այլ պատասխանի իսկ ետուն: «Եւ մեղս ամենեւին ծնեալ ես, եւ վարդապետ լինիս մեզ» (տե՛ս Յովհ. Թ. 34):

ՅԱստուծոյ զնա խոստովանելովն յաղթեաց նոցա՝ ի մեղս հաստատեալ զնախանձն եւ զատելութիւն հրէիցն, հաստատեալ զանդառնալի չարութիւն նոցա նշանակեաց. «Եւ հանին զնա արտաքս» (Յովհ. Թ. 34): Յանձն առ ելանել ի տաճարեն եւ հաստատուն եկաց ի ճշմարտութեանն: Որչափ ապա եւ մեք որ այնչափ ժամանակ ի հաւատս կացեալ որ զանճառ խորհուրդս մեզ երեւեցոյց:

«Լուա Յիսուս եթէ հանին զնա արտաքս» (Յովհ. Թ. 35):

Վասն զի ոչ պարտեցաւ ի հրէիցն եւ ոչ զանգիտեաց, ապա յայտնէ կենարարն զինքն հարցանելով. «Դու՛ հաւարաւս յորդին Աստուծոյ» (Յովհ. Թ. 35): Որպէս ոմանց ի Հ[ը]էիցն ասաց. «Թէ ոչ էր այրն այն յԱստուծոյ, ոչ կարէր այնպիսի նշանս առնել» (հմմտ. Յովհ. Թ. 33): Նմին վասն եւ ոչ Տէրն ասաց, թէ հաւատաս յայն որ կաւով զաչս քո ձեփեաց, զի գիտէր զսրտի նորա ծածուկսն եւ տեսութեանն միայն ցանկայր՝ ասելով «Տէր, ով է եւ ոչ քննութեան կարաւտացաւ, այլ հաւատամ, ասէ, Տէր» (հմմտ. Յովհ. Թ. 38): Անդ գործոցն հաւատաց եւ աստ բանիցն զսերտ հաւատսն յայտնեաց, «Եւ երկիր եպագ նմա» (Յովհ. Թ. 38): Զերախտաւորութիւնն բացայայտեաց որ լուսաւորեացն զնա ցուցանելով զնորհակալութիւն երկիր պազանելով:



«Եւ ասէ Յիսուս. Ի դարաստանս եկի յաշխարհս յայս» (Յովհ. Թ. 39): Այնպէս դատեցան Հրէայքն Հանել արտաքս զնա ի տաճարէն վասն վկայութեանն զոր վկայեաց ի վերայ Քրիստոսի, զի ցուցցէ զինքն լինել դատաւոր ի վերայ նոցա, թէ որպէս զայրն Հանէք արտաքս ի տաճարէն, ելցէք եւ դուք յերկնից արքայութենէն. «զի որք ոչ րեսանեն՝ րեսցեն, եւ որք րեսանեն՝ կուրացին» (Յովհ. Թ. 39): Զի որպէս ի ձեռն մարդոյդ աչաց հոգւով լուսաւորեցար նոյնպէս զազգն Հեթանոսաց լուսաւորեցից հաւատովն որ յիս, զի դու պատկեր եղեր նոցա, այլ հրէիցն ո՛չ երեւի կշտամբութիւնն իւրեանց, թէ վասն աչաց կուրաց որ բացանն ասաց նոցա առ կոյրն, զի տեսին զնա մարմնապէս եւ առականիսն զի ոչ երեւէր նոցա հոգեպէս:

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՅԻ**  
**Վասն ի ծնէ կուրին**

Իններորդ գլուխ է ըստ կարգի եւ հինգերորդ ըստ հաւորի

Բան. «Եւ մինչդեռ անցանէր» (Յովհ. Թ. 1):

Մեկնութիւն. Նախ՝ Քրիստոս բանիւ եցոյց, թէ վարդապետութիւն նորա լուսաւորիչ է, աստ զսոյն ցուցանէ զգալի նշանաւ: Դարձեալ՝ յորժամ վարդապետեաց, թէ յառաջ քան զլինելն Աբրահամու եմ, այժմ գործով զնոյն Հաստատէ: Եւ գիտելի է, զի որ ոք հաւասարի Աստուծոյ, որպէս զԱստուած պաշտաւն ընդունելով՝ Աստուած է, իսկ Քրիստոս հաւասարի Աստուծոյ պաշտաւն ընդունելով, ապա ուրեմն Աստուած է Քրիստոս:

Եւ զի Քրիստոս հաւասար Աստուծոյ պաշտաւն ընկալաւ, ցուցանէ աստ չորս կերպիւ. նախ՝ որ զծնէ կոյրն լուսաւորեաց: Երկրորդ. զհաւատ նորին խնդրելով, յորժամ եհարց. «Դու հաւարաս յՈրդին Աստուծոյ» (Յովհ. Թ. 35): Երրորդ. աստուածային որդիութեամբն, որ Քրիստոս վասն ինքեան վկայեաց, թէ՛ Ես եմ: Չորրորդ. կուրին երկրպագութեամբ:

Իսկ այժմ սկիզբն առնէ առաջնոյն՝ ասելով. «Եւ մինչդեռ անցանէր [Եպրեա] այր մի կոյր» (Յովհ. Թ. 1): Եւ ճառս այս յերիս բաժանի. առաջին՝ նախադրութիւն առնէ վասն սքանչելեացն: Երկրորդ. զնէ զլինելութիւն սքանչելեացն, անդ. «Չայս իբրեւ ասաց, եթուք ի գեպիսն» (Յովհ. Թ. 6): Երրորդ. գրէ զստուգութիւն սքանչելեացն, անդ. «Իսկ դրացիքն, եւ որոց րեսեալ էր գնա» (Յովհ. Թ. 8):

Եւ-ն զառաջինն ասէ. «Մինչդեռ անցանէր», որպէս ասացաւ ի վախճան միւս գլխոյն. «Ել Յիսուս ի քաճարէն» (հմմտ. Յովհ. Ը. 59), եւ մինչդեռ ելեալ էր եւ անցանէր, ետես զկոյրս զայս, որ անդ նստէր, զի մուրացիկ էր եւ ողորմութիւն խնդրէր, որք ի տաճարն ընթանային:

Վասն աղքատաց

Լինի աստ կրկին հարց. Առաջին. վասն է՞ր կաղք եւ կոյրք նստէին մերձ տաճարին:

Պատասխանի. Վասն երից. նախ՝ զի անդ ողորմութիւն բազում լինի վասն գնացողացն: Երկրորդ. զի առ Դաւթիւ ասացաւ. «Կաղք եւ կոյրք մի մտցեն ի տուն Տեառն» (Բ Թագ. Ե. 8), յորժամ ընդդիմացան նմա յերուսացիքն: Երրորդ. յաւրինակ նորոյս, զի հոգւով կաղք եւ կոյրք արտաքսին յեկեղեցւոյ:

Երկրորդ հարց. Վասն է՞ր կաղք եւ կոյրք մուրացիկ լինին:

Պատասխանի. Վասն երից. նախ՝ զի պակասէ գործիքն, որով զպէտան գտանէ, վասն որոյ մուրայ եւ գտանէ: Երկրորդ. մեզ պարտ է զպակասութիւն ընկերին լնուլ, զի հաւասարեացուք, եւ յորժամ ոչ կարեմք զպակասութիւն մարմնոյն լնուլ, զընչիցն լնուցումք: Երրորդ. յաւրինակ հոգով աղքատաց, զի պարտ է միմեանց աւգնել ուսմամբ եւ գործով:

Բան. «Եպրեա կոյր մի ի ծնէ» (տես Յովհ. Թ. 1):

Մեկնութիւն. Յատուկ եւ մի էր կոյրս այս վասն չորից. նախ՝ զի ի ծնէ կոյր էր եւ ոչ յետոյ պատահմամբ: Երկրորդ. զի բոլոր գործարանք աչացն էր պակաս եւ ոչ մի մասն: Երրորդ. սա միայն ի փառս Աստուծոյ եղեւ: Չորրորդ. սա միայն բժշկեցաւ ի ծնէ կոյր:

Վասն աչաց եւ վասն զգայութեան աչաց

Եւ վասն զգայութեան աչաց երեք ինչ գիտելի է. Առաջին. գիտելի է, զի եւթն գործարանք են աչաց. նախ՝ երակն լուսոյ: Երկրորդ. պտուղն սեւ, զի մի վնասեցի լոյսն: Երրորդ. սպիտակն, որ է ճրագու հովէ եւ բարեխառնող հրոյն: Չորրորդ. փառն մզղնածեւ եւ թափանց: Հինգերորդ. բիբն, որ պահապանն է եւ սրբող փոշոյն: Վեցերորդ. արտեւանունքն, որ սրբէ զարտաւար



եւ ուղիղ տեսցէ: Եւ թնեւորդ. յաւնքն ի վերոյ, որ զքիրտն արգիլէ, եւ ապա կոկոնն ի մէջն, որ եմ տեսողական լոյսն՝ պահպանեալ ի նոցանէ:

Երկրորդ. գիտելի է, զի փոս է տեղիք աչացն, որպէս այլ զգայութեանցն. նախ՝ զի յարտաքին վնասուցն պահեսցին: Երկրորդ. զի տեւող լիցին եւ պատշաճ առ ի զգացումն:

Երրորդ. գիտելի է, զի զիրք աչաց ի վերոյ է քան զայլս. նախ՝ զի պատուական մասն է զվերին տեղին ընկալեալ, որպէս լուսաւորքն յերկինս: Երկրորդ. զի աչքն զհուրն զգայ, որ է վերնագոյն ի տարերս, ահանջ՝ զաւղն, որի ներքոյ, բերանն՝ զջուրն ըստ կարգի, եւ շաւշափելիքն՝ զհողն, որ ի ներքոյ է այլոցն:

Իսկ որ ասէ. «Եփես կոյր մի», նախ՝ զի ետես զսքանչելիսն, որ նովալ լինելոց էր: Երկրորդ. զթուլթեամբ ետես, զի բժշկելոց էր: Եւ աստ մարմնապէս կատարեցաւ բանն Քրիստոսի. «Որք ոչ րեսանեն, րեսցեն, եւ որք րեսանեն, կորացցին» (Յովհ. Թ. 39), թէպէտ հոգեպէս առ հրէայս եւ հեթանոսս իմասցի:

**Վասն հարցման աշակերտացն**

Բան. «Ռարբի, ո՞ր վնաս է» (Յովհ. Թ. 2):

Մեկնութիւն. Եւ աստ չորս ինչ հարցանելի է.

Նախ՝ վասն է՞ր հարցին աշակերտքն:

Պատասխանի. Նախ՝ զի զթուլթեամբ ետես Քրիստոս, իմացան զի բժշկելոց էր: Երկրորդ. զի թանձրամիտք էին նախքան զգալ Հոգւոյն Սրբոյ:

Երկրորդ հարց. Վասն է՞ր պատճառ կուրուլթեան զմեղքն հարցին:

Պատասխանի. Նախ՝ զի Տէրն անդամալուծին ասաց՝ «Մի՛ եւս մեղանչեր», իմացան թէեւ կուրուլթիւն սորա վասն մեղաց լինէր, կամ իւր, կամ վասն ծնողացն: Երկրորդ. զի լուեալ էին ի հրէիցն, թէ փորձուլթիւնք վասն մեղաց գայ, որպէս բարեկամքն Յոբայ ասացին (Յոբ. Ը. 3-4), վասն այն հարցանեն, թէ ո՞ր վնասու համար սա կոյր ծնաւ:

Երրորդ հարց. Զի՞նչ է կրկնաշաւիղ հարց:

Պատասխանի. Կրկին է հարց. նախ՝ ապացուցական, որպէս թէ՛ զի՞նչ է մարդ: Երկրորդ. տրամաբանական, որպէս թէ՛ աշխարհս

ապականացո՞ւ է, թէ անապական: Այս է կրկնադէմ հարց, որպէս այն ժամանակն ի ժամանակի է, թէ ոչ ժամանակի է: Իսկ պատասխանին Քրիստոսի յերկուց դիմացն հեռացոյց եւ զերրորդն ասաց:

Չորրորդ հարց. Զի՞նչ է պատճառ սոյնպիսի անկատար եւ խեղ ծնանելոյս:

Պատասխանի. Չորս ինչ. նախ՝ մեղք ծնողացն, զի երբեմն պատուհասէ զծնողս ի զաւակս իւրեանց ծննդեամբ եւ մահուամբ: Երկրորդ. անպատշաճութիւն նիւթոյ մաւրն: Երրորդ. զի սերմ առն ոչ լինի զաւրաւոր ի ձեւացուցանել զմարմին մանկանն: Չորրորդ. ասեն՝ անյարմար ժամանակն: Եւ սոքա են պատճառ սերման ցորենոյ վասն բուսոց, եւ թէպէտ սոյնպիսի պատահմունք վերաբերին առ ստեղծեալ բնութիւնս, սակայն սոքա ներգործին նախախնամութեամբն Աստուծոյ, իսկ այս կուրիս վերաբերի առ աստուածային զաւրութիւն, որպէս ասէ.

Բան. «Այլ զի յայտնի լինին գործքն Աստուծոյ ի դմա» (Յովհ. Թ. 3):

Մեկնութիւն. Այսինքն՝ առ ի յայտնել զգործ աստուածային կարողութեան, իմաստութեան եւ ողորմութեան: Իսկ որ մեկնիչդ ասէ վասն կուրին եւ գործոցն Աստուծոյ, երեք մտաւք իմասցիս. նախ՝ սոյնպէս, թէ զաւրութիւն Աստուծոյ ոչ եղեւ պատճառ կուրութեան նորա, այլ կուրութիւն եղեւ պատճառ զաւրութեան Քրիստոսի: Երկրորդ. թոյլ տալն եղեւ պատճառ կուրութեան եւ կամելն պատճառ սքանչելեացն: Երրորդ. զիտութիւն նախ էր քան զկուրութիւն, այլ ի գործոցն Քրիստոսի եղեւ լուսաւորութիւն:

Բան. «Եւ ինձ պարտ է գործել զգործս» (Յովհ. Թ. 4):

Մեկնութիւն. Պարտն ոչ ցուցանէ, թէ հարկիւ եւ բռնութեամբ ինչ առնէ, այլ զմիակամութիւն ընդ Հաւր ցուցանէ կատարեալ զլնուլն, ասէ, պակասութեան ստեղծուածոյն, եւ գործել զգործակցութիւն եւ զհաւասարութիւն ընդ Հաւր:

**Նոգեպէս ար եւ գիշեր**

Բան. «Մինչ ար կայ» (Յովհ. Թ. 4):



Մեկնութիւն. Աւր կոչի ժամանակ մարդեղութեան Քրիստոսի ի վերայ երկրի վասն չորից. նախ՝ որպէս մերձաւորութիւն արեգականն տեւէ ի վերայ երկրի՝ աւր եւ տիւ կոչի, նոյնպէս մարմնով երեւելն Քրիստոսի արար աւր եւ լոյս շնորհաց: Երկրորդ. արեգակն չորս փոփոխմամբ կատարէ զաւր, նոյնպէս արեգակ արդարութեան՝ Քրիստոս. նախ՝ ծնաւ ի կուսէն, երկրորդ՝ մկրտեցաւ, երրորդ՝ քարոզեաց, չորրորդ՝ չարչարեցաւ եւ ապա համբարձաւ:

Երրորդ. երկոտասան ժամ է աւուր եւ երկոտասան առաքեալքն Քրիստոսի: Չորրորդ. աւրն ունի առաւաւտ եւ երեկոյ, եւ ծնեալ ի Հաւրէ Բանն յերեկոյացեալ ժամանակի մարդ եղեւ:

Բան. «Գայ գիշեր» (Յովհ. Թ. 4):

Մեկնութիւն. Իսկ գիշեր յետ համբառնալոյն եղեւ մեզ, թէպէտ խորհրդաբար ընդ մեզ է մինչ ի կատարած աշխարհի: Եւ սուրբքն անուամբն Քրիստոսի սքանչելիս կատարեն, այլ մարմնոյ երեւմամբ եւ զգալի բանիւ ոչ ուսուցանէ մեզ, սոյնպէս առաջի աւր Քրիստոս կոչեցաւ: Երկրորդ. աւրս այս նշանակ է զժամանակ ընտրելոցն, որ ի սկզբանէ աշխարհի մինչ ի վախճան, Իսկ գիշեր է դատաստանն մեղաւորաց վասն պակասութեան լուսոյն Աստուծոյ եւ տանջանաց դժոխոցն: Երրորդ. աւր է իւրաքանչիւր կեանք մարդոյ, եւ գիշեր է մահ նոցա, զի որպէս ի գիշերի ոչ ոք կարէ գործել, նոյնպէս յետ մահու ոչ ոք կարէ գործել բարիս, զի ոչ կարէ հաւատալ եւ ոչ ապաշխարել եւ այլն. «Զի ահա ժամանակ ընդունելի եւ աւր փրկութեան» (Բ Կորնթ. Զ. 2), ասէ առաքեալ: Եւ սոյնպէս բացայայտի, զի ի կեանս կարէ մարդ ապաշխարել եւ զբարիս գործել ինքեամբ եւ այլով, եւ յետ մահու հոգին ոչ կարէ քաւել ինքեամբ, զի անցեալ է ժամանակն եւ փոխեալ որպիսութիւն իւր, այլ ի ձեռն այլոց կարէ ողորմութիւն գտանել յԱստուծոյ, որպէս ի ձեռն Սուրբ Եկեղեցւոյ եւ Պատարագաց, եւ յետ յարութեան ո՛չ ինքեամբ, եւ ո՛չ այլով, ո՛չ կարէ ապաշխարել, այլ դատապարտիլ: Չորրորդ. աւր եւ լոյս կոչի բարի գործք, ըստ այնմ. «Այնպէս լուսաւորեսցի լոյս ձեր առաջի մարդկան» (Մատթ. Ե. 16), իսկ գիշեր կոչի մեղքն, զի ի մէջ մեղաց գոլով ոչ ոք կարէ զբարիս գործել:

Այս չորս կերպիւս կոչի աւր եւ գիշեր հոգեպէս:

Բան. «Լոյս եմ աշխարհի» (Յովհ. Թ. 5):

Մեկնութիւն. Վասն վեցից ասէ. նախ՝ զի զբոլորս լուսաւորէ եւ ոչ զմասն: Երկրորդ. զի լոյս է բնութեամբ եւ ոչ լուսաւորեալ, որպէս առաքեալքն: Երրորդ. զի միշտ պատրաստ է լուսաւորել զմարդիկ, որքան կենդանի իցեմք: Չորրորդ. զի կրկին լուսաւոր է, այսինքն՝ վարդապետութեամբ եւ սքանչելեաւք: Հինգերորդ. զխաւար մեղաց եւ անգիտութեան փարատէ: Վեցերորդ. ի գործս բարիս առաջնորդէ, որպէս յայտ է ի մեկնչէր:

Վասն թրոյն եւ կաւոյն

Բան. «Եթոյր ի գեպինեւ արար կաւ ի թրոյն» (Յովհ. Թ. 6):

Մեկնութիւն. Եւ ի վերայ այսմ բանի չորս ինչ հարցանելի է.

Առաջին. Զի՞նչ նշանակէ թուք եւ կաւն:

Պատասխանի. Չորս ինչ. նախ՝ ցուցանէ զինքն Արարիչ գոլ Ադամայ, որ ի կաւոյ ստեղծեաց: Երկրորդ. տեսողն մասն նշանակէ զհոգին Ադամայ եւ այլ գործարանք աչացն՝ զմարմինն, զի եւթ մասն է մարմնոյն, այսինքն՝ ոսկր, ջիլ, երակ, արիւն, միս, մորթ, մազն անզգայ ծածկոյթ: Երրորդ. թուքն զբանն ցուցանէ, որ ել ի բերանոյ Հաւր եւ էջ յերկիր եւ զհողեղէն մարմինս մեր խառնեալ միացոյց ընդ իւրում Աստուածութեան: Չորրորդ. որպէս ասէ մեկնիչը. «Յառաջ քան զլինելն Աբրահամու եմ ես», որ է Բանն միաւորեալ մարմնովն՝ անեղ եւ անսկիզբն, Միածին Որդին Աստուծոյ:

Երկրորդ հարց. Վասն է՞ր ոչ ասաց բանիւ միայն, որպէս անդամալուծին եւ Ղազարու եւ յայլսն:

Պատասխանի. Նախ՝ նոր էր նշանս եւ նոր կերպիւ կամեցաւ առնել: Երկրորդ. զի անդ, որ բանիւ հրամայէր, ցուցանէր զհոգին իւր Աստուած գոլ, եւ աստ՝ զմարմինն, զի թուքն ի մարմնոյն է եւ մատամբ կազմեաց, յորմէ աստուածային զաւրութեամբն լուսաւորեցաւ ակն, ապա թէ ոչ, կաւն ըստ ինքեան թանձր է եւ կուրացուցիչ առաւել, քան թէ սրբիչ, որպէս ասէ Ոսկեբերանն:

Երրորդ հարց. Վասն է՞ր ձեփեաց զաչքն:

Պատասխանի. Աչք զսահման բովանդակ գործարանացն ասէ: Եւ ձեփեաց վասն երեք պատճառի. նախ՝ զի կուրութիւն սորա յայտնի էր, սոյնպէս լուսաւորելն առաւել սքանչելեաւք երեւեսցի: Երկրորդ. ցուցանէ, թէ Քրիստոս էր ձեւացուցիչ ամենայն մարմնոց, զի ի մէջ կենդանեաց պատուական է մարմին մարդոյս, եւ ի



մարդկային մարմնոյս գլուխն է պատուական, եւ ի գլուխն աչքն է ազնուականմասն: Եւ զպատուականն նորոգելով եցոյց, զի նորոգիչ էր ամենայն մարմնոց: Երրորդ պատճառ ցուցանէ, թէ ընդունելով զգալի նիւթ ի խորհրդոց եկեղեցւոյ, միտք մեր լուսաւորի շնորհաւքն Աստուծոյ:

Չորրորդ հարց. Վասն է՞ր ոչ ջրով զանցոյց:

Պատասխանի. Ասէ մեկնիչդ, զի հանդերձեալ էր զկոյրն ի Սելովամ առաքել, զի մի ասիցեն հրէայքն, թէ ի ջրոյն էր բժշկութիւն եւ ոչ՝ ի Քրիստոսէ:

#### Վասն Սելովամայ

Բան. «Ե՛րթ, լուա՛ յաւազանին Սելովամայ» (Յովհ. Թ. 7):

Մեկնութիւն. Սելովամայ այս է աղբիւր ի ստորոտ լերինն Սիոնի, զոր նախ Բեթհեզդայ կոչեաց:

Եւ վասն չորս պատճառի անդ առաքեաց. նախ՝ զի յայտնի լինէր սքանչելիքն, որպէս ասէ մեկնիչդ: Երկրորդ. ի պատիւ զոհից հնոյ աւրինացն, զոր լուանային յաւազանս յայս: Երրորդ. ի հնազանդութիւն եւ ի հաստատութիւն հաւատոյ եւ յուսոյ կուրի:

Չորրորդ. ասէ Ոսկեբերանն. «Սելովամն թարգմանի առաքեալ, ցուցանէ զՔրիստոս, որ ի Հաւրէ առաքեցաւ լուացումն մեղաւորաց, զի «նա է աղբիւր յայտնեալ ի տանն Դաւթի առ ի լուացումն մեղաւորին եւ տեռատեսին» (Կեն Զարար. ԺԳ. 1), որպէս ասէ Զաքարիա ի երեքտասաներորդ [գլուխն]:

Բան. «Չոգաւ, լուացաւ, [եկն] եւ փեսանէր» (Յովհ. Թ. 7):

Մեկնութիւն. Զայս ցուցանէ, թէ ոչ լուսաւորեցաւ միայն կաւովն: Եւ յայտ է, զի յորժամ եդ զկաւն, ոչ լուսաւորեցաւ, եւ ոչ լուսաւորեցաւ միայն ջրովն, եւ յայտ է, զի բազում անգամ լուացեալ էր եւ ոչ լուսաւորեալ: Ապա յայտ է, զի լուսաւորեցաւ զաւրութեամբն Քրիստոսի ի ձեռն կաւոյն եւ ջրոյն: Արդ, նախ կաւն ի թքոյ եւ ի հողոյ խառնեալ նշանակէ զհաւատն Քրիստոսի ներմարդկութեամբն միացեալ, իսկ ջուրն՝ զմկրտութիւն: Զայն ցուցանէ, թէ հաւատն առանց մկրտութեան ոչ փրկէ, եթէ կարէ մկրտիլ, եւ մկրտութիւն առանց հաւատոց ոչ փրկէ: Երկրորդ. կաւ զգործնականն նշանակէ, եւ ջուր՝ զտեսական իմաստութիւն, եւ սո-

քա մինն առանց միւսոյն անկատարք են ի փրկութիւն: Եւ զիտելի է, զի ոմանք ասեն, թէ կաւն ոչ բարձաւ յաչացն, այլ յակն փոխեցաւ ընդ լուանալ ջրոյն:

Յորժամ ասաց վասն սքանչելեացն, իսկ այժմ ճառէ զյայտնութիւն այսմ սքանչելեաց:

Բան. «Իսկ դրացիրն՝ եւ որոց փեսեալն [էր]» (Յովհ. Թ. 8):

Մեկնութիւն. Աստ երեք բան հարցանէ ժողովուրդն: Առաջին՝ զանձն լուսաւորելոյն: Երկրորդ՝ զկերպ լուսաւորելոյն: Երրորդ՝ զլուսաւորիչն:

Վասն առաջնոյն ասէ.

Ոմանք ասեն, թէ սա է նա, որ բարեկամքն էին Քրիստոսի, եւ հակառակքն ասէին՝ ո՛չ է նա:

Եւ հակառակին սոքա վասն երեք պատճառի. նախ՝ զի ժխտողք էին, երկրորդ՝ զի զարմացեալ էին, երրորդ՝ զի զնա ոչ ճանաչէին, զի մարդն ճանաչի յերեսացն եւ նորայն փոխեալ էր:

Եւ մուրացիկ ասէին վասն երկր. նախ՝ զի բազում անգամ տեսեալ էին, երկրորդ՝ զի յայտնի լիցի մեծութիւն սքանչելեացն, երրորդ՝ զի արժանի էր գթալոյ, զի կոյր էր եւ տնանկ:

Բան. «Եւ ինքն ասէր, թէ ես եմ» (Յովհ. Թ. 9):

Մեկնութիւն. Նախ՝ զտարակոյս նոցա բառնայ: Երկրորդ. զոհութեամբ պատմէ զբարերարութիւն Աստուծոյ: Երկրորդ. հարցանեն զկերպ լուսաւորելոյն, յորժամ ասեն.

Բան. «Զիա՛րդ բացան աչք քո» (Յովհ. Թ. 10):

Մեկնութիւն. Այսինքն՝ որպէ՞ս լուսաւորեցար:

Նա պատասխանի ետ.

Բան. «Այր մի, որում Յիսուսն ասեն» (Յովհ. Թ. 11):

Մեկնութիւն. Որպէս անդ «ոյր մի» ասաց, աստ «այր մի» ասէ վասն չորից. նախ՝ զի նա միայն էր Աստուած մարդացեալ, երկրորդ՝ նա միայն էր յանապական կուսէ, երրորդ՝ նա միայն էր անմեղ, չորրորդ՝ նա միայն էր Փրկիչ մարդկան:

Բան. «Որում Յիսուսն ասէին» (Յովհ. Թ. 11):



Մեկնութիւն. Թէպէտ չէր տեսեալ, այլ նախ լուեալ էր զանունն, երկրորդ՝ ի ձայնէն ճանաչեաց:

Բան. «Կաւ արար եւ ծեփեաց» (Յովհ. Թ. 11):

Մեկնութիւն. Կոյրս այս ստուգութեամբ պատմէ զոր զիտէ, զի ծանեալ յորժամ շաւշափելով զկաւն ի վերայ աչացն եղիր, եւ զի տեղիքն ցամաք էր, վասն այն ծանեալ, թէ Քրիստոս զայն կաւ արար, բայց ո՛չ ծանեալ, թէ ի թքոյ էր, թէ ի ջրոյ, վասն որոյ չասաց՝ արար կաւ ի թքոյ: Ապա զհնազանդութեամբ գնալն ասէ եւ զլուսաւորելն, իսկ նոքա կատաղեալք էին, զոր տեսեալ եւ լսեալ էին: Ի կուրէն հարցանեն ոչ վասն հաւատալոյ, այլ զնշանս արհամարհելոյ:

Երրորդ. հարցանեն զլուսաւորիչն.

Բան. «Ո՛ւր է նա» (Յովհ. Թ. 12):

Մեկնութիւն. Ոմանք արհամարհելով խնդրէին, եւ ոմանք՝ ոչ:

Բան. «Ատ ցնոսա՛ ոչ գիտեմ» (Յովհ. Թ. 12):

Մեկնութիւն. Զի յորժամ չոգաւ ի Սելով եւ դարձաւ, ոչ եգիտ զՔրիստոս ի տեղին յայն: Զայս եւ առ անդամալոյծն արար, յորժամ բժշկեաց վասն չորս պատճառի. նախ՝ զի մի գովեսցի: Երկրորդ. զի հրաշքն հուշակեսցի: Երրորդ. զի չարութիւն հակառակացն մեղմասցի: Չորրորդ. զի զմեզ ուսուցէ այնպէս առնել: Ոմանք այլաբանութեամբ ասեն. կոյրս այս նշանակէ զզասս ընտրելոցն, որ ի սկզբնական ծննդենէ կոյրք են յաստուածայինսն եւ ընդ թշուառութեամբ եւ աղքատութեամբ են յայսմ աշխարհի, իսկ Քրիստոս անցանելով ընդ ճանապարհ կենցաղոյս ետես գթութեամբ ի նոսա եւ նոքա ի Քրիստոսէ ընկալան զփրկական տեսութիւն:

Բան. «Ածեն առ փարիսեցիսն զնա» (Յովհ. Թ. 13):

Մեկնութիւն. Նախ՝ վասն քննելոյ, զի դպիրք էին: Երկրորդ՝ զի ուրասցի լուսաւորեալն զճշմարտութիւն: Երրորդ. զի ցուցցեն յանցող աւրինացն զՔրիստոս, որպէս ասէ.

Բան. «Եւ էր շարաթ, յորում զկան արար Յիսուս» (Յովհ. Թ. 14):

Մեկնութիւն. Յորժամ զանդամալոյծն բժշկեաց, նոյնպէս շարաթ էր, եւ այլքն յայտնի է ի մեկնչէդ:

Բան. «Ոչ է այրն այն յԱստուծոյ, զի զշարաթս ոչ պահէ» (Յովհ. Թ. 16):

Մեկնութիւն. Սոքա սուտ ասէին. նախ՝ զի զործ մարմնաւոր, որ ի փառս Աստուծոյ էր, կարէր լինել ի շարաթու: Երկրորդ. զի քահանայքն թլփատէին ի շարաթու եւ անմեղք էին, որպէս ցուցաւ ի վերոյ ի հինգերորդ գլուխն:

Բան. «Զիա՛րդ կարէ մարդ մեղաւոր այդպիսի նշանս առնել» (Յովհ. Թ. 16):

Մեկնութիւն. Սոքա կամէին մեծացուցանել զՔրիստոս, իբրու ասել. «Անհնար է մեղաւոր առն սոյնպիսի նշանս առնել», իսկ ընդդէմ բարեկամացն Քրիստոսի առարկի, որպէս ասէ Մատթէոս. «Տէ՛ր, յանուն քո դեւս հանաք եւ զաւրութիւն արարաք, եւ

Քրիստոս պատասխանէ. “Ոչ գիտեմ զձեզ, ի բաց կացեք, ոյք գործեք զանարեւոթիւն”» (հմմտ. Մատթ. է 21-23):

Ասեն վարդապետք, թէ սքանչելիքն զործ է ի վեր քան զբնութիւն, վասն այն միայն յԱստուծոյ լինի սքանչելիք, առ ի վկայել, թէ ի վեր է քան զբնական ճանաչումն մարդոյ: Եւ կրկին է սքանչելիք, զի երբեմն լինի առ ի վկայել զճշմարտութիւն վարդապետութեան ինչ, որ ի վեր է քան զիմացումն մեր: Եւ պարտ է, զի վարդապետութիւն այն ճշմարիտ լինի, զի Աստուած ոչ կարէ լինել վկայ ստութեան, այլ ոչ է պարտ, թէ ուսուցանողն այն բարի լինի, զի սքանչելիքն այն ոչ վկայէ զբարութիւն վարդապետին, այլ զճշմարտութիւն վարդապետութեան, եւ սոյնպէս չարք ոմանք քարոզողք ուղղափառ վարդապետութեան սքանչելիս արարին վասն հաստատութեան ուղղափառ հաւատոյ, եւ սոյնպէս իմանի բանն, որ ի Մատթէոս գրեալ է: Երկրորդ կերպիւ լինի սքանչելիք առ ի վկայել եւ ցուցանել զբարութիւն վարդապետին, եւ յայնժամ պարտ է, զի վարդապետն այն բարութիւն ունիցի, զի Աստուած ոչ կարէ վկայել ստութեան, եւ սոյնպէս լինէին սքանչելիք Քրիստոսի, որպէս ասէր. «Գործքն, զոր ես առնեմ [յանուն հար իմոյ, նոքին] վկայեն վասն իմ» (Յովհ. Ժ 25), զի Որդի եմ Աստուծոյ: Եւ սոյնպէս աստ ասէ. «Զիա՛րդ կարէ մարդ մեղաւոր նշանս առնել», իբրու թէ ասել՝



Աստուած սքանչելեաւք վկայէ զբարութիւնս մեր զճշմարտութիւն վարդապետութեան, վասն այն անհնար է, զի նա մեղաւոր լիցի:

Բան. «Ասն դարձեալ ցկոյրն. “Դու զի՞ ասես վասն նորա, զի երաց զաչս քո”» (Յովհ. Թ 17):

Մեկնութիւն. Զայս ոչ հարցին հակառակքն Քրիստոսի, զի ստուգապէս կարծէին, որն զլուսաւորչին զճշմարտութիւն պատասխանի տայր, որպէս ասէ.

Բան. «Եւ նա ասէ, թէ մարգարէ է» (Յովհ. Թ 17):

Մեկնութիւն. Ոչ խոստովանեցաւ իբր զհասարակ մարգարէ, որպէս Եսայի, Երեմիա եւ այլն, այլ եզակի մարգարէ կոչէ, որպէս Մովսէս ասէ յԵրկրորդ Աւրէնքն. «Մարգարէ յարուցէ ձեզ Տէր յեղբարց ձերոց» (Կրն Բ Օր. ԺԼ 15), սակայն ոչ հաւատայր զնա դեռեւս Որդի Աստուծոյ:

Հարց. Վասն է՞ր աւետարանիչս մանրամասն եւ ստուգութեամբ պահէ զամենայն բան:

Պատասխան. Յերեք դէմս աւգուտ է. նախ՝ ի դէմս Փրկչին, որ ցուցանէ զբարերարելն նոցա: Երկրորդ. զներել թշնամեաց: Երկրորդ. ի դէմս հրէիցն. նախ՝ ցուցանէ զանհաւատութիւն նոցա: Երկրորդ. զչար հատուցանելն: Երրորդ. առ մեզ. նախ՝ զի ուսցուք ի Քրիստոսէ: Երկրորդ. մի՛ նմանեցուք չարութեան հրէիցն: Եւ այժմ, թէ որպէ՞ս հարցին զձեռոյս նորա.

Բան. «Սա՞ է որդին ձեր, եւ զի կոյր ծնաւ, եւ զիա՞րդ փեսանէ» (Յովհ. Թ 19):

Մեկնութիւն. Ոչ հարցանեն, զի ուսցին, այլ զի հայհոյեցեն, զի ստուգապէս գիտէին զկոյրն լուսաւորեալ, եւ լուսաւորիչ զՔրիստոս, որպէս յայտ է ի մեկնիչդ: Արդ, երիս բանս հարցանեն. նախ՝ վասն անձին որդւոյ նոցա. «Սա՞ է որդին ձեր»: Երկրորդ. վասն կերպի ծնանելոյն. «Զորմէ ասէիք, թէ կոյր ծնաւ», որպէս թէ ասել սուտ ասէիք, թէ կոյր ծնաւ, զի ուրացին զայն, զի խեղութիւն որդւոցն ի ծննդենէ ամաւթ առնէ ծնողացն, քան թէ յետոյ պատահի: Երրորդ. հարցանեն, թէ կոյր էր, զիա՞րդ լուսաւորեցաւ, ասեն՝ զիա՞րդ տեսանէ:

Բան. «Պատասխանի ետուն ծնողքն» (Յովհ. Թ 20):

Մեկնութիւն. Երկու բանի պատասխանի ետուն զճշմարտանասելով, զի ասացին, թէ՛ «Սա է որդին մեր, եւ զի կոյր ծնաւ» (Յովհ. Թ. 20), իսկ երրորդին, թէ՛ որպէ՞ս տեսանէ, ոչ իշխեցին պատասխանել, այլ յաւժարէին ի վկայելն, վասն որոյ ասեն.

Բան. «Զդա իսկ հարցէք, [ինքն] ի չափ հասեալ է, ինքն խաւսեցի վասն իւր» (Կրն Յովհ. Թ 21):

Մեկնութիւն. Որպէս ասել, թէ ինքդ բարւոք զիտէ պատմել քան զմեզ, զի երեց ոմանց բանն հաւատալի է. նախ՝ որ ի չափ հասեալ լինի: Երկրորդ. որ ճշմարտախաւս լինի, զի բանն եւ իրն հաւասարի: Երրորդ. որ բարի լինի կամաւքն: Իսկ ընդդէմ սոցա՝ անկատարից եւ ստախաւսից եւ չարակամաց բանք եւ վկայութիւնք ոչ է հաւատալի:

Բան. «Զայս ասացին ծնողքն [նորա], զի երկնչէին ի հրէիցն» (Յովհ. Թ 22):

Մեկնութիւն. Այսինքն՝ փարիսեցւոց եւ ի քահանայապետից, որք զլուխ եւ առաջնորդք էին, եւ զպատճառ երկիւղին ասէ. Բան. «Քանզի ուխտ եղեալ էին» (Յովհ. Թ 22):

Մեկնութիւն. Այսինքն՝ ահ եւ սպառնալիք կամ նզովք եւ բանադրանք՝ ի բաց կալ ի ժողովարանէն, որ էր յոյժ նախատինք նոցա, վասն այն Նիկողիմոս ի գիշերի եկն առ Քրիստոս: Եւ յետ խաչին այլ իմն յաւելին զչար ուխտն, որ ի հայրենեացն եւս զրկէին, եւ հաւատացեալքն առ ոտս առաքելոցն ժողովէին, որպէս յայտ է ի Գործքն, եւ ապա այլ իմն հնարին՝ ածել զնա յուրացութիւն:

Բան. «Դարձեալ [կրկին անգամ] կոչեցին զայրն» (Յովհ. Թ 24):

Մեկնութիւն. Աստ նախ ցուցանէ, թէ ջանան ուրացնել ի ճշմարտութենէն: Երկրորդ. ցուցանէ, թէ որպէ՞ս դատապարտեցին զնա, անդ. «Նոքա հայհոյեմ եւ ասեն. «Պո՞ւ լիջիք նմա աշակերպ»» (Կրն Յովհ. Թ 28): Երրորդ. ցուցանէ, թէ Քրիստոս որպէ՞ս ընկալաւ զնա, անդ. «Լուա Յիսուս, եթէ հանին զնա արարաքս» (Յովհ. Թ 35): Եւ զառաջինն ասէ. «Դարձեալ կոչեցին զնա եւ ասեն» (Յովհ. Թ 24):

Բան. «Տուր փառս Աստուծոյ» (Յովհ. Թ 24):



**Մեկնութիւն.** Կամէին խաբէութեամբ եւ սիրով ուրանալ տալ. «Տոբ փառս Աստուծոյ». նախ՝ խոստովան լեր զճշմարտութիւն, զի կախարդութեամբ լուսաւորեցար եւ ոչ զաւրութեամբ Աստուծոյ: Երկրորդ. Աստուծոյ տուր փառք եւ ի նմանէ հրաժարեա՛:

**Բան.** «Մեք գիտեմք, զի [այրն այն] մեղաւոր է» (Յովհ. Թ 24):

**Մեկնութիւն.** Այսինքն՝ մեք բազումք եմք, այլ եւ գիտունք, որ վկայեմք վասն մեղաց նմա, եւ դու տգէտ եւ մի, որպէս ասէ մեկնիչդ: Հանգոյն այսմ եւ երկարնակք ասեն, թէ մեք բազումք եմք եւ իմաստունք եւ Հայք՝ մին ազգ եւ տգէտք, եւ սոցա պատասխանին տե՛ս ի գիրս Հարցմանց հատորն, համարն:

**Բան.** «Եւ նա ասէ. “Թէ մեղաւոր է՝ ես ոչ գիտեմ”» (Յովհ. Թ 25):

**Մեկնութիւն.** Ոչ երկիւղի է բանս, այլ իմաստութեան. նախ՝ զչարութիւն նոցա այսպանէ, իբր թէ դուք ասէք, թէ մեղաւոր է: Երկրորդ. զխոստովանութիւն իւր ասէ՝ ես ոչ գիտեմ զնա մեղաւոր, եւ ոչ ասեմ: Երրորդ. զսրբութիւն նորա գործով գիտեմ, զի այս լուսաւորութիւնս գործ Աստուծոյ է եւ ոչ մարդոյ մեղաւորի կամ կախարդի: Դարձեալ հարցանեն զնա վասն կերպի լուսաւորութեան.

**Բան.** «Զի՛նչ արար քեզ, զիա՛րդ երաց զաչս քո» (Յովհ. Թ 26):

**Մեկնութիւն.** Նախ՝ ըստ Ոսկեբերանին. մի՞թէ կախարդութեամբ արար զայդ: Երկրորդ. բազում հարցումն նշան նախանձու է, զի ունայն ցուցանեն զսքանչելիսն: Երրորդ. եւ զայլս տկարացուցանեն ի հաւատս: Չորրորդ. զի թէ այլ եւ այլ խաւսեցի եւ այնու սուտ առնեն զվկայութիւն նորա, որպէս ասէ մեկնիչդ:

**Բան.** «Ասացի ձեզ, եւ ո՛չ լուարուք» (Յովհ. Թ 27):

**Մեկնութիւն.** Նախ՝ զկերպ բժշկութեան ասացի, թէ կաւ արար: Երկրորդ. զկերպ վկայութեան ասացի, թէ մարգարէ է: Երրորդ. վասն սրբութեան նորա ասացի, թէ լուսաւորեաց զիս:

**Բան.** «Մի՛թէ եւ դուք կամիք աշակերտել նմա» (Յովհ. Թ 27):

**Մեկնութիւն.** Նախ բարկութեաբ խաւսի ընդդէմ խոստութեան նոցա: Երկրորդ. ասէ Ոսկեբերանն. «Համարձակ խաւսի, զի յաղթեալ էր նոցա, իբր թէ ասել. «Զոր ինչ ասեմ, ո՛չ առնոյք ի միտ, վասն այն

այլ ոչ առնեմ պատասխանի ձեզ, զի բազում անգամ հարցանէք ոչ վասն ուսանելոյ, այլ վասն հակառակելոյ»: Եւ սոյնպէս զաւրաւոր է ճշմարտութիւն, եթէ առ մինն լինի եւ առ տկարն եւ առ տգէտն, զաւրացուցանէ եւ իմաստուն եւ յաղթող բազմաց [զարձուցանէ]: Իսկ ընդդէմ նմա ստութիւն տկար եւ թոյլ է, եթէ առ բազումս լինի եւ զաւրաւորս եւ իմաստունս, տկարացուցանէ զնոսա, որպէս ասացաւ»: Այժմ ասէ, թէ որպէս փարիսեցիքն դատապարտեցին զնա.

**Բան.** «Նորա հայիոյէին» (Յովհ. Թ 28):

**Մեկնութիւն.** Այսինքն՝ անիծանէին:

**Բան.** «Դու լիջի՛ր նմա աշակերտ» (Յովհ. Թ 28):

**Մեկնութիւն.** Այս ոչ էր նորա անէծք, այլ՝ աւրհնութիւն: Յայսմանէ երկու ինչ գիտելի է. նախ՝ որ զբարիսն անիծանէ, աւրհնութիւն է նմա, այլ անիծողին է վնաս. «Որպէս հաւ թռչի ի բունոյ իւրմէ եւ անդրէն դադարի, նոյնպէս եւ անէծք անզգամին», ասէ Սողոմոն: Երկրորդ. գիտելի է, որ զչարսն աւրհնէ, անէծք է չարին, այլ աւրհնողին է աւգուտ, վասն այն ասէ Տէր. «Աւրհնեցէք զանիծիչս ձեր» (Մաթթ. Ե 44, Ղուկ. Չ 28), եւ այլն: «Դու լիջի՛ր նմա աշակերտ». նախ՝ զի իմացան զյաւժարութիւն նորա ի հաւատսն Քրիստոսի: Երկրորդ. դու լեր աղանդաւորին եւ աւրինացն յանցողին աշակերտ, մեք աւրինադրին եմք աշակերտ եւ ոչ աւրինաղանցին: Հանգոյն այսմ եւ Փիլոն ասէ. «Որ ողորմեսցի Մովսիսի աւրինադրի, ողորմեսցի եւ Փիլոնի աւրինապահի»:

**Բան.** «Մեք Մովսիսի աշակերտք եմք» (Յովհ. Թ 29):

**Մեկնութիւն.** Սոքա Մովսիսի աշակերտք էին միայն ըստ անուան եւ ոչ ըստ իրին. նախ՝ զի գործոց նորա ոչ հետեւին, զի ուրանան զնշանսն Քրիստոսի եւ կամին սպանանել զնա: Երկրորդ. զի Գրոց նորա ոչ հաւատան, որպէս ասէր. «Թէ հաւաքայիք դուք Մովսիսի, հաւաքայիք եւ ինձ» (Կրն Յովհ. Ե 46): Ապա ասէ զպատճառ ոչ հաւատալոյն Քրիստոսի.

**Բան.** «Մեք գիտեմք, զի ընդ Մովսիսի խաւսեցաւ Աստուած, զսա ոչ գիտեմք [ուստի է]» (Յովհ. Թ 29):



**Մեկնութիւն.** տե՛ս զանմտութիւն, որպէս ասէ մեկնիչդ. նախ՝ ի պատմութեանց զիտելն հաւատան եւ զականատեսն Քրիստոս ուրանան: Երկրորդ. «Ոչ գիտեմք ուստի իցէ», ոչ զայն ասեն, թէ յորմէ՞ աշխարհէ, կամ յազգէ իցէ, զի զայն յառաջագոյն ասացին. «Ձսա գիտեմք ուստի իցէ» (հմմտ. Յովհ. Թ 24), բայց զայն ասեն՝ չգիտեմք, թէ յԱստուծո՞յ իցէ առաքեալ ստուգապէս, այլ զՄովսէս գիտեմք (հմմտ. Յովհ. Թ 29): Երրորդ. ասեն. «Ոչ գիտեմք», այսինքն՝ ոչ կարեմք թողուլ զՄովսէս եւ սմա լսել, զի սա Մովսիսի հակառակ երեւի, զի նախ լուսաւորեալն յանդիմանէ զխստասրտութիւն նոցա:

**Բան.** «Այդ իսկ են սքանչելիք» (Յովհ. Թ 30):

**Մեկնութիւն.** Եւ երեք կերպ են սքանչելեաց. այսինքն՝ ի բանն, ի գործն եւ յիրն: Այն, որ ի բանն է սքանչելիք, ի վեր է քան զիմացումն: Որ ի գործն է սքանչելիք, ի վեր է քան զսովորութիւն: Որ յիրն է սքանչելիք, ի վեր է քան զբնութիւն: Եւ ամենայն սքանչելիք հաւատով տեսանի, եւ զի սովորութիւն էր հրէիցն նշան խնդրել, որպէս ասէ Պաւղոս. «Հրէայք նշան խնդրեն» (Ա Կորնթ. Ա 22), նախ՝ այդ իսկ են սքանչելիք, որ տեսանէք զիս լուսաւորեալ եւ ոչ հաւատայք: Երկրորդ. այդ են սքանչելիք, զի դուք ոչ գիտէք, զի թէ գիտէիք, ոչ էր սքանչելիք: Երրորդ. այդ են սքանչելիք, զի դուք գիտունք զմեծատունն ոչ գիտէք, եւ ես գիտացի գործով, որ զիմ աչս եբաց:

**Բան.** «Գիտեմք, զի Աստուած մեղաւորաց ոչ լսէ» (Յովհ. Թ 31):

**Մեկնութիւն.** Այսինքն՝ Աստուած ոչ առնէ սքանչելիք առ ի վկայել բարութեան ի վերայ չարեաց, զի ընդ նմա սուտ վկայ լինէր, որ անհնար է, այլ թէ երբեմն սքանչելիք առնէ վասն մեղաւորին, ոչ առնէ վասն նորա չարութեան, այլ վասն իւրոյ մարդասիրութեան, բայց վասն բարեաց սքանչելիք առնէ՝ վկայելով ճշմարիտ վարդապետութեան եւ վասն բարութեան նոցա, որպէս ասէ.

**Բան.** «Բայց թէ աստուածապաշտ որ իցէ եւ զկամս նորա առնիցէ» (Յովհ. Թ 31):

**Մեկնութիւն.** Կրկին մասունք են բարութեան, այսինքն՝ ներքին եւ արտաքին: Վասն առաջնոյն ասէ. «Թէ աստուածապաշտ որ իցէ», այսինքն՝ հաւատով եւ սիրով ի հանճարն եւ ի կամսն: Վասն երկ-

րորդին ասէ. «Ձի զկամս նորա առնիցէ», այսինքն՝ զհրամայեալսն կատարելով: Եւ այնպիսոյ առն լսէ Աստուած եւ յայտնէ զսրբութիւն նորա վասն շինութեան եկեղեցւոյ:

**Հարց.** Որպէ՞ս ասէ, թէ Աստուած մեղաւորաց ոչ լսէ, զի մաքսաւորին լուաւ, եւ անառակին:

**Պատասխան.** Ասեն վարդապետք. նախ՝ զի Աստուած մեղաւորաց ոչ լսէ, այլ զղջացեալն ոչ է մեղաւոր, իսկ մաքսաւորն եւ անառակն զղջացեալք էին, այսինքն՝ հեռացեալք ի չարեաց եւ մերձեցեալք ի բարին: Երկրորդ. ասեն՝ Աստուած ոչ տայ իշխանութիւն մեղաւորաց առնել սքանչելիս վասն բարութեան նոցա, այլ վասն պատուոյ անուանն Քրիստոսի եւ վասն փրկութեան ընտրելոց, որպէս չար քրիստոնեայք եւ հերձուածողք բանին Քրիստոսի եւ խորհրդովք եկեղեցւոյ առնեն սքանչելիս: Եւ դարձեալ ասեն, թէ այլ կերպիւ կախարդք եւ այլ կերպիւ չար քրիստոնեայք, եւ այլ կերպիւ բարի քրիստոնեայք սքանչելիս առնեն, զի կախարդք սքանչելիս առնեն ծածկաբար միութեամբն ընդ սատանայ, թէպէտ ոչ են սքանչելիք, այլ զարմանալիք եւ անսովոր իրք, իսկ բարի քրիստոնեայք սքանչելիս առնեն առ ասարակ արդարութեամբ, եւ չար քրիստոնեայք սքանչելիս առնեն նշանաւ արդարութեան, որպէս աշակերտքն ասէին. «Տէ՛ր, տեսաք զոմն, զի յանուն քո դեւս հանէր եւ զկնի մեր ոչ շրջէր» (Մարկ. Թ. 37):

#### Վասն յաւիտեանց

**Բան.** «Ի յաւիտենից ոչ որ լուաւ» (Յովհ. Թ 32):

**Մեկնութիւն.** Չորս են յաւիտեանք. նախ՝ որ ոչ սկիզբն ունի եւ ոչ կատարած, որպէս յարածգականն: Երկրորդ. որ սկիզբն ունի եւ կատարած, որպէս ժամանակն: Երրորդ. որ ոչ ունի սկիզբն, այլ կատարած, որպէս սկզբնականն: Չորրորդ. որ սկիզբն ունի եւ ոչ կատարած, որպէս մշտնջենաւորն: Արդ, որ ասէ. «Ի յաւիտենից ոչ որ լուաւ», ժամանակականն ասէ զյառաջին դարսն, զի իւրաքանչիւր դարք յաւիտեան կոչին:

**Բան.** «Ի ծնէ կոյր ծնելոյ» (Յովհ. Թ 32):

**Մեկնութիւն.** Չորիւք որոշի ի ծնէ կոյրն. նախ՝ զի բնական է կոյրն եւ այլք պատահամբ: Երկրորդ. զի անտես է լուսոյ, իսկ



այլք զրկեալք: Երրորդ. զի բովանդակ է սխալեալ եւ այլոցն՝ մասն: Չորրորդ. զի ոչ բուժի դեղաւք, այլ նոր ստեղծանելոյ կարաւտի: Եւ չորիւք ցուցանէ մեկնիչդ, զի Որդի Աստուծոյ ասէ.

Բան. «Եթէ ոչ յԱստուծոյ էր այրն» (Յովհ. Թ. 33):

Մեկնութիւն. Նախ՝ զի Որդի Աստուծոյ էր, երկրորդ՝ սիրելի Աստուծոյ, երրորդ՝ յԱստուծոյ եկեալ, չորրորդ՝ ի քարոզելն բազում էր լուեալ:

Բան. «Ի մեղս իսկ ծնեալ ես» (Յովհ. Թ. 34):

Մեկնութիւն. Նախ՝ անարգութեամբ ասէին: Երկրորդ. սուտ ասեն, զի անմեղ ծնանին մանկունք եւ յետոյ մեղանչեն: Երրորդ. սկզբնական մեղաւք ասեն, եւ այս հասարակաց է: Չորրորդ. շնութեան որդիք եւ զայս թլփատութիւն ի հինն եւ մկրտութիւն ի նորս սրբէ: Հինգերորդ. կարծէին, թէ վասն մեղաց էր կոյր ծնեալ: Վեցերորդ. կարծեն, ըստ բարեկամացն Յոբայ, զի ամենայն նեղութիւն եւ հիւանդութիւն վասն մեղաց լինի: Եւ յայցանէ Քրիստոս անմեղ երեւեցոյց յասելն. «Ոչ դորա վնաս է» (Յովհ. Թ. 3), եւ այլն: Ապա ուրեմն ցասմամբ եւ անարգութեամբ ասեն, եւ ոչ միայն բանիւ, այլ եւ գործով, որպէս զկնի ասէ.

Բան. «Եւ հանին զնա արքարս» (Յովհ. Թ. 34):

Մեկնութիւն. Այսինքն՝ բանադրանաւք ի բաց կտրեցին ի ժողովրդենէն: Եւ այս վասն չորս պատճառի. նախ՝ զի զՔրիստոս քարոզեաց: Երկրորդ. զի ասաց ի յաւիտեանց ոչ ոք լուաւ եւ արար այնպիսի նշան: Երրորդ. զի առաւել զայրացան: Չորրորդ. զի մի յանդիմանեաց զնոսա: Իսկ ասելն.

Բան. «Եւ դու վարդապետ լինիս մեզ» (Յովհ. Թ. 34):

Մեկնութիւն. Իբրու ասել. «Դու՛ տգէտ եւ մեղաւոր, վարդապետ լինիս մեզ»: Եւ այս սուտ է, զի զճշմարտութիւն ո ոք եւ պատմեցէ, ընդունելի է:

Թէ ընկալաւ զնա Քրիստոս

Բան. «Լուաւ Յիսուս, եթէ հանին զնա» (Յովհ. Թ. 35):

Մեկնութիւն. Թէպէտ Քրիստոս զամենայն ինչ զիտէ նախքան զլինելն, այլ կամեցաւ զգալի ունկամբ լսել:

Բան. «Եւ Իբրեւ եգիպ զնա» (Յովհ. Թ. 35):

Մեկնութիւն. Ոչ պատահմամբ, այլ խնդրելով է: Եւ վասն չորս պատճառի երեւեցոյց Քրիստոս զինքն նմա. նախ՝ վասն զի հրէայքն ի բաց մերժեցին, Քրիստոս ընկալաւ զնա: Երկրորդ. զի հաստատուն եկաց եւ ոչ զանգիտեաց ի հակառակացն: Երրորդ. զի գոհանայր զերախտագործէն: Չորրորդ. զի կամեցաւ որպէս զմարմինն, եւ զհոգին լուսաւորել: Եւ վեց իրաւք համեմատէ բացումն կուրին եւ առողջութիւն անդամայուծին. նախ՝ զի այն շաբաթ էր աւրն, եւ աստ շաբաթ ասէ: Երկրորդ. անդ բոլոր անդամն էր լուծեալ, եւ աստ բոլոր աչքն խաւարեալ: Երրորդ. մերձ ի Պրոպատիկէն, եւ աստ՝ ի Սելովամ առաքեաց: Չորրորդ. անդ ասաց. «Նայր իմ մինչեւ ցայժմ գործէ, եւ ես գործեմ» (Յովհ. Ե 17) եւ աստ. «Պարտ է ինձ գործել զգործս Աստուծոյ» (հմմտ. Յովհ. Թ. 4): Հինգերորդ. անդ՝ յետ նշանին խոյս ետ (հմմտ. Յովհ. Ե 13), եւ աստ՝ զնաց ի տեղոջէն: Վեցերորդ. զնա եգիտ ի տաճարին եւ ասէ՛ մի՛ եւս մեղանչեր (Յովհ. Ե 14), եւ աստ ասէ. «Դու հաւարա՛ս յՈրդին Աստուծոյ» (Յովհ. Թ. 35), զի զբոլոր մարդն բժշկեցէ:

#### Վասն հաւաքոց

Բան. «Դու հաւաքա՛ս յՈրդին Աստուծոյ» (Յովհ. Թ. 35):

Մեկնութիւն. Վասն երկու պատճառի հարցանէ. նախ՝ զի տացէ պատճառ խնդրելոյ, թէ ո՞վ է Որդին Աստուծոյ: Երկրորդ. զի արտաբերեալ բանիւ վկայեցէ, որպէս զնոր մկրտեալն հարցանեմք, թէ՛ հաւատա՞ս ի Քրիստոս: Եւ ոչ ասաց՝ դու հաւատա՞ս յիս, այլ յՈրդին Աստուծոյ՝ առ ի բառնալ զփառասիրութեան ախտ: Այլ եւ ոչ ասաց՝ հաւատա՞ս յայն, որ կաւով զաչս քո ծեփեաց, զի զիտէր զծածուկ սրտի նորա հաստատուն գոլ, այլ, թէ՛ յՈրդին Աստուծոյ, վասն որոյ ընդ հրէայսն հակառակէր: Պատասխանի ետ յաւժարութեամբ.

Բան. «Տէր, ո՞վ է, զի հաւաքացից ի նա» (Յովհ. Թ. 36):

Մեկնութիւն. Նախ՝ այր մի եւ մարգարէ եւ յԱստուծոյ վկայեաց, եւ այժմ Տէր դաւանեաց: «Ո՞վ է» երկու գիծն ձայնաւոր եւ անձայն



ցուցանէ յերկուց բնութեանց միացեալ զՔրիստոս եւ Է՛յաւիտենից, զի անսկիւրն է աստուածութեամբ եւ անվախճան՝ մարդկութեամբ: Եւ երեք դէմք է հաւատալոյն, այսինքն՝ հաւատալ զնա, եւ հաւատալ նմա, եւ հաւատալ ի նա: Արդ, հաւատալ զնա լեզուաւ է, եւ հաւատալ նմա, այսինքն՝ բանից նորա, իսկ հաւատալ ի նա, այսինքն՝ սրտիւ հաւատալ եւ սիրով կապիլ ի նա, վասն այն ասեմք ի դաւանութիւն. «Հաւատամք ի մի Աստուած եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս եւ ի Հոգին Սուրբ»:

Այս ըստ մասին տեսութիւն, եւ ըստ բոլորին վասն երկց ասէ. «Տէ՛ր, ո՞վ է». նախ՝ հարցանէ, զի զՔրիստոս ոչ ճանաչէր ըստ կերպարանին: Երկրորդ. զփափագումն սրտին ցուցանէ: Երրորդ. զի տեսութեան միայն սպասէր եւ ոչ քննութեան կամ ուսման, որպէս յայտ է ի մեկնչէր:

Բան. «Եւ փեսեր զնա եւ որ խաւսի ընդ քեզ, նա է» (Յովհ. Թ 37):

Մեկնութիւն. Զորմէ հարցէրն, թէ՛ ո՞վ է, սա է, զոր տեսանես եւ որ խաւսի ընդ քեզ:

Եւ վասն հինգ պատճառի ի միասին դնէ տեսանել եւ լսել. նախ՝ զի մի զայլ ոք կարծիցէ ի տեսողացն, այլ անվրէպ զնա, որ խաւսի: Երկրորդ. զի ի մարմին եւ ի հոգին իւր կրեսցէ զուրախութիւն տեսլեամբ եւ լսելեալք: Երրորդ. զի մարմնովն եւ հոգևովն հաւատասցէ զնա Որդի Աստուծոյ գոլ: Զորրորդ. զմարմինն Քրիստոսի Աստուած ետես եւ զՀոգին Աստուած եւ այնու որոշեցաւ ի հրէիցն, որ զնա սոսկ մարդ տեսանէին: Հինգերորդ. զնա եւ նա է, զմիութիւն ցուցանէ անբաժանելի մարդկութեան եւ Աստուածութեան, այսինքն. «Մի անձն եւ միաւորեալ մի բնութիւն Բանին մարդացելոյ», որպէս ասէ սուրբն Կիւրեղ եւ Աթանաս, զի ոչ ասաց զնոսա, որ ցուցանէ երկու անձն ըստ նեստորի, եւ ոչ ասաց՝ ի նմա, որ ցուցանէ երկու բնութիւն ըստ Քաղկեդոնի:

Եւ նա առժամայն հաւատաց, որպէս ասէ.

Բան. «Նաւաբա՛ւմ, Տէ՛ր» (Յովհ. Թ 38):

Մեկնութիւն. Երեք ինչ ցուցանէ. նախ՝ ներկայական է՝ հաւատամ, զի անդ ի գործոցն հաւատաց եւ աստ ի բանիցն: Երկրորդ, զի սրտին է հաւատալն, եւ բերանոյն՝ խոստովանել, որպէս ասէ առաքեալ. «Սրտիւ հաւատալ յարդարութիւն եւ բերանով խոստովանիք

ի փրկութիւն» (Տոմ. Ժ 10): Երրորդ. զերեւելիզ մարմին Տէր եւ Աստուած հաւատամ ըստ Թուժայի (հմմտ. Յովհ. Ի.26-29), որ ետես եւ հաւատաց:

Բան. «Եւ երկիր եպագ նմա» (Յովհ. Թ 38):

Մեկնութիւն. Նախ՝ հաւատալն հոգևոյն է, եւ երկրպագութիւն՝ մարմնոյն: Երկրորդ. մինն տեսական է, եւ մինն՝ գործնական: Երրորդ. հաւատալն բանին եւ երկրպագութիւն մարմնովն շնորհակալութիւն մատոյց: Զորրորդ. զՔրիստոս ճշմարիտ Աստուած մարդացեալ խոստովանեցաւ, վասն այն երկիր եպագ իբր Աստուծոյ:

Եւ աստ կատարեցաւ չորիւք հաւասարութեամբ, թէ Աստուած է Քրիստոս. նախ՝ որ զծնէ կոյրն լուսաւորեաց: Երկրորդ. յորժամ ասաց. «Դու հաւաբա՛ւմ յՈրդին Աստուծոյ» (Յովհ. Թ 35): Երրորդ. որ վասն ինքեան վկայեաց, թէ՛ ես եմ Որդին Աստուծոյ: Զորրորդ. կուրին երկրպագութեամբ, որ նմա երկիր եպագ, եւ ոչ նոցա:

Եւ մեք ընդ կուրին լուսաւորեալք երկիր պագանեմք միոյ եւ անբաժանելի միաւորութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ ընդ Հաւր իւրում եւ սուրբ Հոգևոյն: Ամէն:

#### Վասն դաբաստանի

Բան. «Ի դաբաստան եկի յաշխարհս յայս» (Յովհ. Թ 39):

Մեկնութիւն. Դատաստանն ցուցանէ զքննութիւն եւ զտեղիք, զի «դատ»-ելն քննելն է եւ «աստան»՝ ատեանն եւ տեղիք, որպէս ասեմք՝ Հայաստան:

Եւ ի վերայ այսմ բանի երեք ինչ հարցանելի է.

Առաջին. Վասն է՞ր յայսմ աշխարհիս դատէ:

Պատասխան. Վասն չորս պատճառի. նախ՝ զի աստ գործեմք զբարիս եւ զչարս, վասն այն աստ դատիմք: Երկրորդ. զի դատաստան լինի ի հասարակ տեղիս եւ աշխարհս այս հասարակ է ամենեցուն: Երրորդ. զի միջին տեղիք է սա, այսինքն՝ արքայութեան երկնից եւ դժոխոց: Զորրորդ. զի չորս իր հարկաւոր է դատաստանին, այսինքն՝ նախ դատաւորն, երկրորդ՝ տեղիքն, երրորդ՝ դատեցեալքն, չորրորդ՝ վկայք, եւ սոքա ամենեքեան աստ են, վասն այն դատաւորն աստ գայ եւ դատէ:



**Երկրորդ Հարց.** *Ընդէ՞ր է նախ ասաց.* «Ոչ առաքեցայ ի դարել գաշխարհս, այլ փրկել» (Յովհ. Գ 17), *իսկ այժմ ասէ.* «Ի դարաստրան եկի յաշխարհս» (Յովհ. Թ 39):

**Պատասխան.** *Կրկին կերպիւ լինի դատաստան. նախ՝ դատաստան որոշման: Երկրորդ. դատաստան հատուցման: Արդ, յառաջին գալստեանն՝ Քրիստոս արար դատաստան որոշման հաւատացելոց յանհաւատից, որպէս ասէր. «Ոչ եկի առնել խաղաղութիւն, այլ սուր եւ բաժին»* (տես Մարթ. Ժ 34), *իսկ զդատաստան հատուցման առնէ ի հանդերձեալն՝ յերկրորդ գալստեանն, որ զոմանս դատաստարտէ եւ զոմանս վարձատրէ, իսկ որ ասէ ի դատաստանս, եւ ոչ միայն ի դատաստան, նախ՝ ցուցանէ զմերձաւորն, երկրորդ՝ զբազմաւորն, երրորդ՝ զնշանաւորն, չորրորդ՝ զյայտնին:*

**Երրորդ Հարց.** *Զի՞նչ է.* «Որք ոչն փեսանեն, փեսցեն, որք փեսանեն, կուրացին» (Յովհ. Թ 39):

**Պատասխան.** *Բազում է տեսութիւն, եւ ասեմք տասն կերպիւ. նախ՝ որպէս հանին հրէայքն զլուսաւորեալն ի տաճարէն, նոյնպէս եւ Քրիստոս եհան զնոսա ի տաճարէն, նախ՝ յաւրինակէն եւ ապա ի ճշմարտէն, այսինքն՝ նախ՝ չուանեայ խարազանաւն եւ ապա ի ձեռն Տիտոսի: Երկրորդ. մարմնապէս կոյրն լուսաւորեցաւ, եւ աչքն հրէից առազաստեալ ծածկեցաւ, որ կամէին զքարինսն ձգել: Երրորդ. կոյրն մարմնով եւ հաւատով լուսաւորեցաւ՝ յաւրինակ հեթանոսաց ազգի: Չորրորդ. ազգն հրէից կուրացաւ, որ աստուածատես կոչէին, եւ ազգն հեթանոսաց լուսաւորեցաւ, որ նստէին ի խաւարի, որպէս յայտ է ի մեկնիչդ: Հինգերորդ. սատանայ կուրացաւ, զի ոչ ծանեալ զտնաւրէնութիւն Քրիստոսի, որպէս ասէ Յոր. «Ոչ ետես զնա ակն անդեղ» (Յոր ԻԸ. 7), եւ ազգ մարդկան ետես եւ փրկեցաւ: Վեցերորդ. հոգիքն ի դժոխս խաւարեալ լուսաւորեցան, որպէս քարոզեց Քրիստոս. «Որք ի կապանսդ էք, ելէ՛ք, եւ որք ի խաւարի, յայտնեցարուք», եւ զեւք կուրացան եւ կապեցան, ըստ այնմ. «Որ զիզարս կապեաց» (հմմտ. Ղուկ. Ա 52): Եւթներորդ. դպիրքն եւ իմաստունքն տգիտացան եւ առաքեալքն պարզամիտք իմաստնացան, ըստ այնմ. «Ծանծկեցար յիմ աստուոց եւ յայրնեցար փղայոց» (տես Մարթ. ԺԱ 25): Ութերորդ. հերձուածողք ըստ մտաց քննութեան իւրեանց կուրացան եւ ուղղափառք հաւատով լուսաւորեցան, ըստ այնմ. «Յիմարեցոյց Աստուած զիմաստութիւն աշխարհիս այսորիկ, եւ յիմարութեամբ քարոզութեան ապրեցոյց*

*զհաւատացեալս»* (տես Ա Կորնթ. Ա 20-21): *Իններորդ. ասէ Սիմէոն. «Սա է նշան հալառակութեան»* (տես Ղուկ. Բ 34), *այսինքն՝ ոմանց կանգնումն եւ ոմանց գլորումն, վէ՛մ հաստատութեան եւ քար գայթակղութեան, այսինքն՝ հաւատացելոց եւ անհաւատից:*

**Տասներորդ.** *ի դատաստանին, որ աստ երեւելի մեծութեան են եւ հպարտութեան, անդ խաւարեացին, եւ որք աստ՝ ի խոնարհութեան եւ տնանկութեան, անդ տեսցեն զփառս եւ լուսաւորեացին:*

**Բան.** «Լուսն ոմանք ի փարիսեցոցն» (Յովհ. Թ 40):

**Մեկնութիւն.** *Ոմանք, որ չարագոյնք էին, նոքա էին, որ զլուսաւորեալն արտաքսեցին ի տաճարէն:*

**Բան.** «Մի՞թէ եւ մեր կոյրք իցեմք» (Յովհ. Թ 40):

**Մեկնութիւն.** *Թանձրամիտն եւ հերձուածողն ըստ մտաց իւրոց փոխէ զբարի բանս ի չար, որպէս հիւանդ ոք զկերակուրն ի մաղձ փոխէ, եւ ձի զյստակ ջուր ըմպելով ապականէ ի փորի իւրում:*

**Բան.** «Թէ կոյրք էիք, ոչ էր ձեր մեղ» (տես Յովհ. Թ 41):

**Մեկնութիւն.** *Նոցա բանիւն զնոսին յանդիմանէ: Չորս է իմացումն. նախ՝ թէ ոչ էիք տեսեալ զգործս իմ, ունէի՞ք ինչ պատճառ չհաւատալոյ յիս: Երկրորդ. թէ ոչ գիտէիք զԳիրս եւ զմարգարէութիւնս վասն իմ, այնքան չունէիք մեղք, որպէս այժմդ ունիք: Երրորդ. թէ զձեզ կոյր համարէիք, ոչ ունէիք մեղս, զի առ բժիշկն երթայիք եւ հաւատայիք: Չորրորդ. կոյր զտգէտն ասէ, որպէս մանուկ, զի անգիտութեամբ մեղանչելն փոքր է քան զգիտութեամբ, որ դան սաստիկ առնու:*

*Դարձեալ՝ ըստ մարմնոյ կոյրն անմեղ է ի ցանկութենէ մեղաց, այլ եւ ի նախանձու եւ յատելութեանց, զի ոչ տեսանէ:*

**Բան.** «Արդ, ասէք, թէ փեսանեմք, եւ մեղքն ձեր [ի ձեզ] հասարարեալ են» (տես Յովհ. Թ 41):

**Մեկնութիւն.** *Այսինքն՝ առաւել ծանունք են, զի տեսէք զիս եւ ոչ հաւատացէք, կամ անդեղջ եւ անդարձ էք ի մեղս ձեր: Եւ գիտելի է, զի կոյր կոչի մեղաւորն եւ անհաւատ, եւ ասեմք վասն տասն պատճառի. նախ՝ զի կոյրն ոչ ինչ տեսանէ ամենեւին, սոյնպէս եւ մեղաւորն ոչ ինչ իմանայ յաստուածայնոցն: Երկրորդ. զի է կոյր, որ բնական է, որպէս ի ծնէ կոյրն, եւ է, որ պատահմամբ, սոյնպէս է մեղաւոր, որ բնականապէս յիմար է, այսինքն՝ անհաւատն, որպէս այլազգիք, որ անխտիր գործեն զմեղս, եւ է որ յետոյ պատահմամբ, որպէս քրիստոնեայք յետ աւագանին ծննդեանն: Երրորդ. զի է*



կոյր, որ սուր է մտաւք եւ շարժի որպէս աչքաւոր, սոյնպէս եւ է մեղաւոր, որ ճարտարապէս իբրեւ զարդար կայ, սակայն մեղաւոր է, որպէս հրէյայքն յայնժամ: Չորրորդ. կոյր կոչի, որ բնական լոյսն պակասեալ է յաչացն, սոյնպէս եւ մեղաւոր կոյր կոչի, վասն զի խիղճ մտացն բարձեալ է ի նմանէ: Հինգերորդ. զի զկոյրն եթէ ոք հարկանէ, ոչ գիտէ, թէ ով է, սոյնպէս եւ մեղաւորն ոչ գիտէ, թէ յո՞ր չարիս ձգէ զնա սատանայ: Վեցերորդ. զի ոմն կիսամասնեայ է կոյր, սոյնպէս եւ ոմն սակաւ մեղս ունի: Եւթներորդ. զի ոմն բորոտ է աչքն, թէպէտ լոյս ունի, սոյնպէս եւ ոմանք Հերձուածողք են եւ ոչ ունին զկատարեալ հաւատն եւ կոչին մեղաւորք: Ութերորդ. զի կոյրն գիտէ ստուգիւ, որ ոչ տեսանէ, սոյնպէս եւ մեղաւորք ոմանք գիտեն, զի մեղաւք լցեալ են, վասն այն զղջանան: Իններորդ. զի անհնար է թազել կուրուիթեան, սոյնպէս անհնար է մեղացն ոչ բերել պատիժ, թէ՛ աստ, թէ՛ անդ: Տասներորդ. զի զժուարաւ բռնկի կոյրն, սոյնպէս եւ զժուարաւ ելանէ ոք ի մեղաց, մի՞թէ՛ իմաստուն բժիշկ լինիցի, վասն այն ասէ Տէր. «Թէ ասէք, թէ փեսանեմք, եւ մեղքն ձեր ի ձեզ հասարարեալ են» (Յովհ. Թ. 41):

**ՄԱՏԹԷՈՍ ԶՈՒՂԱՅԵՅԻ**

(«Ո՞յր վնասէ, սորա՞ թէ հօր եւ լսօր իւրոյ՝ զի կոյր ծնալ») (Կրնս Յովհ. Թ. 2):

Վասն Գ. պատճառի հարցանէին: Ա.՝ զի տեսին զՏէրն որ կամէր սքանչելիս առնել ի կոյրն, վասն որո[յ] հարցնէին զպատճառ կուրանալոյն: Բ.՝ զի Տէրն եցոյց առ անդամալոյծն, թէ մեղքն է պատճառ հիւանդութեան, վասն որոյ հարցին, թէ ի սորա մեղացն է այս կուրութիւնս, թէ ի ծնողացն: Գ. Կամեցան զճշմարիտն իմանալ, թէ է՞ր լինի կուրութիւն, իսկ Տէրն յայտնեաց զպատճառն, թէ ո՛չ է վասն մեղաց: Ա.՝ զի մարդ նախքան զծնանելն ո՛չ գործէ մեղք, իսկ կոյրն ի ծնէ էր: Բ.՝ զի թէ ծնողքն էին մեղուցեալ, ինքնեանց արժան էր կուրանալ, քան թէ զաւակին: Վասն որո[յ] յայտ է, թէ վասն փառացն Աստուծոյ էր եղեալ այնպէս, այսինքն՝ զի գործն Աստուծոյ ի նմա երեւեսցի:

«Մինչ օր կա[յ]» (Յովհ. Թ. 4) Հինկ երեւի օր: Ա. օր, ասէ, զյայտ՝ նուրթիւնն իւր մինչ ի մահ համբարձումն, յորում արար զքսան-

չելիս: Բ. օր, ասի, ընտրելեաց ժամանակն, որք տեւեցին յաշխարհի, արարին սքանչելագործութիւն: Գ. օր, ասի, այսինքն՝ որքան մարդիք կենդանի են, արժան է առնել սքանչելագործութիւն: Դ. օր, ասի, բարեգործութեան ժամանակն, զի նա է ճշմարիտ օր: Ե. օր՝ զայս կեանքս, ասէ, յորում կարէ ոք արդիւանաւոր գործս առնել:

«Գայ գիշեր՝ յորում [մ ոչոք կարէ գործել]» (Կրնս Յովհ. Թ. 4):

Այսինքն՝ ամենեցուն սոցա հակառակն. Ա.՝ յորժամ համբառնամ, ասէ, ո՛չ եւս առնեմ, ասէ, զգալապէս զսքանչելիս: Բ.՝ «գա[յ] գիշեր», այսինքն՝ ժամն է, յորում ո՛չ եւս իցէն ընտրեալք, որք առնիցեն զօրութիւնս: Գ.՝ «գա[յ] գիշեր», այսինքն՝ [ժամ է] մեռեալութեան մարդկան, յորում ոչ կարեն գործել: Դ.՝ մեղաց օրն, յորում մեղանչէ ոք. գիշեր, ասի, զի ոչ է ի համարի աւուրց: Ե.՝ գա[յ] գիշեր զատաստանին, զի մարմնաւոր ժամանակացս նա՛յ գիշեր ասի, զի ոչ կարէ առնել գործ մարմնական:

«Եթուք [ի գեպին]՝ եւ արար կալ ի թքոյն» (Կրնս Յովհ. Թ. 4):

Վասն է՞ր արար կալ ի թքոյն: Ա.՝ զի ցուցցէ, թէ ճշմարիտ մարդ է եղեալ: Բ.՝ ըստ Ոսկեբերանին՝ զի ցուցցէ զառաւելութիւն զօրութեանն, զի կաւն կուրացուցիչ է աչաց եւ նա նովաւ առողջացոյց, որ է գործ աստուածային զօրութեանն: Գ.՝ զի նախ ասաց Տէրն, թէ «յառաջ քան զլինելն Աբրահամու եւ Ես» (Յովհ. Լ. 58) եւ ո՛չ հաւատացին: Վասն որոյ ի կաւոյն ստեղծեաց զաչս կուրին՝ ցուցանելով, թէ այն Աստուածն եմ, որ զԱդամ ի կաւոյն ստեղծի: Դ.՝ զի որպէս թուքն ընդ կաւն խառնեալ լուսաւորեաց զաչս կուրին, այսպէս եցոյց խորհրդարար զմիաւորութիւն Բանին ընդ մարդկութեանս, որով լուսաւորեցաւ խաւարեալ հոգիս մեր: Ե.՝ զի թուքն ընդ կաւոյն միաւորեալ եցոյց, թէ համաստուածային բարութեանն միաւորեալ ի մտածութիւն մեր, որ երկրայքարչ էաք եւ է պատճառ լուսաւորութեան մտաց մեր Քրիստոս:

Իսկ թէ վասն էր զկաւն եդ ի վերայ աչաց կուրին, վասն Գ. պատճառի: Ա.՝ զի կուրութիւն նորա յայտնի էր ի քաղաքն, վասն որոյ ի վերայ աչացն եդ, զի առաւել յայտնի գիտացեն, թէ ի կաւոյն ստեղծաւ աչքն: Բ.՝ առ ի ցուցանել, թէ Քրիստոս էր ձեւացուցանող աչացն ի սկզբանէ աշխարհի: Գ.՝ զի զազնուագոյնս ի



սգայարանացն բժշկելով ցուցանէ մեզ, թէ զմիտք մարդկան «ես լուսաւորեմ», որ գերագոյն է ի մարդկան:

Իսկ թէ վասն է՞ր ի Սէլովամ առաքեաց եւ զի՞ Սէլով[ամ]ն աղբիւր էր, որ բխէր ի ստորոտն Սիոնի եւ յայնմ աղբերէ ջուր գայր յաւազանս յայս: Եւ այս վասն Դ. պատճառի: Նախ՝ առ ի պատիւ զոհից Հնոյն, զոր լուանա[յ]ին յաւազանս յայս: Բ.՝ առ ի յայտնութիւն այսմ սքանչելեացս, զի յորժամ անցանէ կոյրն ընդ մէջ քաղաքին, այնու հրատարակեսցի սքանչելիքն: Գ.՝ առ ի ցուցանել զհնազանդութիւն կուրին որ հաւատաց եւ գնաց ի լուանալ: Դ.՝ ըստ Ոսկերերանին՝ ցուցանել այսու խորհրդաբար, թէ Քրիստոս առաքեցաւ ի Հօրէ ի լուացումն մեղաց մերոց, որպէս ասէ Զաքարիա, «Աղբիւր յայտնեալ ի տուն Դաւթի» (տե՛ս Զաք. ԺԳ. 1): Ե.՝ զի ցուցցէ մեզ, թէ ո՛չ է պարտ հաւատ առանց մկրտութեան, զի հաւատ առանց մկրտութեան ո՛չ փրկէ, որպէս ասաց Տէրն: Զ.՝ զի Սէլովամ տեղի բժշկութեան էր եւ նոքա զՏէրն հակառակ օրինացն կարծէին վասն որոյ անդ առաքեաց զի բարձցէ զկարծիս նոցա:

«Գիւրեմ[ք] զի Աստուած՝ մեղաւորաց ոչ լսէ» (տե՛ս Յովհ. Թ. 31): Աստ է տարակոյս, թէ Աստուած մեղաւորաց ո՛չ լսէ, ուրեմն մեղաւորք ո՛չ կարեն արդարանալ եւ զի՞ մաքսաւորին լսեաց Աստուած եւ պոռնիկ կնոջն եւ այլոց: Պատասխանի. Աստուած յայնժամն լսէ մեղաւորին, յորժամ զղջանա ի մեղացն եւ դառնայ, իսկ ի մեղս կալով եւ ազաչելով ո՛չ լսէ: Ըստ այնմ, զի՞ է ձեզ բողոքել ինձ եւ ոչ լսել, վասն զի ի մեղքն էին. «զի որ ոչս րեսանեն՝ րես[ցեն], եւ որ[ք] րես[անենն]՝ կուրացին» (տե՛ս Յովհ. Թ. 39): Առաջին՝ «կոյր», զի խոնարհս եւ զաղքատս ասէ, որ ըստ մարմնոյ ասին, զնոսա լուսաւորեաց գիտութեամբ աստուածա[յ]ին: Իսկ «լուսատեսք» զհպարտս ասէ, զոր կուրացոյց ի ձեռն սքանչելեացն: Բ.՝ «կոյր»՝ զառաքեալսն ասէ, որք պարզամիտք էին ի Քրիստոսէ լուսաւորացն, իսկ «լուսատեսք»՝ զքահանայսն եւ զգլխիրսն ասէ, որ կուրացան յաւիտենականապէս: Երրորդ՝ «կոյրք»՝ զհեթանոսքն ասէ, որք հաւատով լուսաւորեցան յիւրում գալստեան: Իսկ «լուսատեսք»՝ զհրէիցն ասէ, որք կարծէին զինքեանս հաւատացեալս:

«Եթէ կոյրք էիք՝ ոչ էր ձեր [մեղ]. այլ զի աս[էք]՝ թէ րեսանեմք, եւ մեղքն ձեր ի ձեզ հաստարեալ են» (տե՛ս Յովհ. Թ. 41): Զի կոյր կոչի մեղաւորն եւ անհաւատն: Եւ այս վասն բազում պատճառի:

Առաջին՝ զի կոյրն ոչինչ տեսանէ ամենեւին, այսպէս եւ մեղաւորն ոչինչ իմանա յաստուածայնոցն: Երկրորդ՝ զի է կոյր որ բնական է ի ծնընդենէ եւ է, որ ի պատահմանէ, այսպէս եւ մեղաւոր, որ բնակապէս յիմար է, այսինքն՝ անհաւատն եւ անխտիր գործէ մեղաւորքն որպէս այլազգիքն եւ է, որ յետոյ պատահմամբ, որպէս քրիստոն[ե]այք յետ աւագանին ծնընդեանն: Երրորդ՝ զի է կոյր, որ սուր է մտօք եւ շարժի որպէս աչքաւոր: Այսպէս եւ մեղաւոր, որ ճարտարապէս որպէս զարդար կայ, սակայն մեղաւոր է, որպէս հրէայքն յայնժամն: Չորրորդ՝ կոյր կոչի, վասն զի բնական լոյսն պակասեալ է <ի> յաչացն, այսպէս եւ մեղաւորն կոյր կոչի, վասն զի խղճմտանքն բարձրեալ է ի նմանէ: Ե.(հինգերորդ)՝ զի զկոյրն եթէ հարկանէ ոք՝ ոչ գիտէ ով ոք է, այսպէս եւ մեղաւորն, թէ յո՞ր չարիս ձգէ զնայ սատանայ, ոչ գիտէ զչարն զայն: Վեցերորդ՝ զի ոմն կիսամասնեա է կոյր, այսպէս ոմն սակաւ մեղս ունի: Էլթն[ե-րորդ]՝ զի ոմն բժտէ աչքն, թէպէտ լոյս ունի, այսպէս եւ ոմանք հերձուածողք են եւ ոչ ունին զկատարեալ հաւատն եւ կոչին մեղաւորք: Ը.(ութերորդ)՝ զի կոյրն գիտէ ստուգիւ, որ ոչ տեսանէ, այսպէս եւ մեղաւորք ոմանք գիտեն, զի մեղօք լցեալ են, վասն որոյ զղջանան: Իններորդ, զի անհնար է թաքչել կուրութեանն, այսպէս անհնար է մեղացն ոչ բերել պատիժ, թէ աստ, թէ անդ: Ժ.(տասներորդ)՝ զի դժուարաւ բժշկի կոյրն, այսպէս եւ դժուարաւ ոք ելանէ ի մեղաց, մի՞թէ իմաստուն բժիշկ լինի: Վասն որոյ ասէ Տէրն, «թէ ասեք րեսանեմք եւ մեղքն ձեր ի ձեզ հաստարեալ են» (տե՛ս Յովհ. Թ. 41):





## 42. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՂԱԶԱՐՈՒ

Յովհաննէս ԺԱ. 1-44

## ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

(Գլոխ ԺԱ.)

«Էր ոմն հիւանդ Ղազարոս» (Յովհ. ԺԱ. 1):

ՈՍ Բազումք ի մարդկանէ յորժամ տեսանեն զի սուրբք եւ Հաճոյք Աստուծոյ չարչարեալ լինին կամ Հիւանդանան կամ ի տնանկութիւնս կան նոքա գայթակղին ո՛չ գիտելով, թէ բարեկամք Աստուծոյ որ յայսպիսի փորձանս կան, առաւել պայծառանան փառաւք, որպէս Յոր: Եւ առաքեալքն եւ նմանք նոցա: Զի եւ Ղազար ի բարեկամացն Աստուծոյ էր եւ ի սիրելեացն, այլեւ Ղազարոս ըստ երբայեցոցն լեզուին ի մերս «աւգնական» եւ «լասի» թարգմանելով եւ Հիւանդութիւն նորա ըստ իմանալի տեսութեան զմեղսն ասէ զազգի մարդկան եւ մեռանելն զմեղացն զմահն ըստ այնմ մահ մեղաւորին չարէ:

«Ի Բեթանիայ» Բեթանիայ տունս գոյ, աշխարհի ամենայնի է աւրինակաւ ըստ յանցանացն Աղամայ նմանութեան: Եւ նմա սգակից լինին ամենայն արարածք, որպէս առաքեալ ասէ, ամենայն արարածք Հեծեն եւ երկնեն եւ ողբան մինչեւ ցայժմ զանկանելն Աղամայ ի փառաց դրախտէն վայելչութեան եւ ի կենդանութենէն եւ աւրինակաւ Ղազարու՝ արձակեցաք ի կապանաց մահու մեղաց եւ դժոխոց եւ ընդ Քրիստոսի յարուցեալք՝ նորոգեցաք եւ անմահացաք:

«Ի գեղջէ»: Սովորութիւն է պատմագրաց եւ աւետարանաց որպէս զիրսն բացայայտեն յայսպէս եւ զտեղին ցուցանեն՝ առ ի Հաւատարիմ լինել բանիցն ասացելոց:

«Մարեմու եւ Մարթայի»: Է՞ր վասն կանանցն եւ ո՛չ Ղազարու զգեղջն կոչէ: Թէպէտ եւ Հասարակաց էր տեղին մանաւանդ Ղազարու քան քերցն, այլ կենդանեացն ի դեպ էր զտեղին կոչել քան մեռելոյն: «Մարիամն» լուսաւորի, ասի, որ լուսաւորեցաւ տէրունական լուսովն եւ եկաւորութեամբն: «Մարթայի» Մարթայ տէրունական ասի՝ Տէրն եկաւորութեամբն բերկրեալ, որոյ եղբայրն

Հիւանդն էր: Եղբայր զՀարազատութիւնն յայտնէ զքերցն, վասն սոցա թուի ասացեալն վասն այսորիկ աւրիորդք սիրեցին զքեզ Տէր եւ ձգեցին առ ինքեանս առ ի յաւգնել եղբաւրն վտանգելոյ:

«Այս այն Մարիամ էր, որ ամ զՏէրն իւղով» (Յովհ. ԺԱ. 2) ո՛չ ասէ զոր երեք աւետարանիչքն յիշեն, զի նոքա կանայք պոռնիկք էին, իսկ սա՝ սուրբ եւ յընդունելութիւնն Քրիստոսի պատրաստ, զոր Ղուկաս ասէ, թէ եկն Մարիամն նստաւ առ ոտսն Յիսուսի (տրնս Ղուկ. Է. 38), այսինքնէ իբրեւ Հաստատուն երկրի վերայ: Ոտքն այն որ կնոջն մեղաւորի թողութիւն շնորհաց մեղաց եւ կապեաց թագանձինն մտանել յարքայութիւն անդրանկանն, իսկ այս Մարիամ մասն բարի ընդրեաց զի յաւիտեան ի նմանէ մի լիցի Հանեալ որպէս ասաց Քրիստոս:

ՈՍԿ «Եւ ջընջէր հերովն, որոյ եղբայրն Ղազարոս հիւանդ էր» (տրնս Յովհ. ԺԱ. 2): Իսկ աւծանելն զոտսն Տեառն վասն սիրոյն առաւելութեան ըստ երախտագործութեան եղբաւրն, իսկ «հերովն ջընջելոյն», զի ո՛չ ունեւ պատուական քան զգլուխն, որով սպասաւորէր կենսաբեր ոտիցն:

«Առաքեցին առ նա բորքն նորա» (Յովհ. ԺԱ. 3), որ գուշակէր զգասս մարգարէիցն, ընդէ՞ր ոչ թողին զՀիւանդն որպէս Հարիւրապետն եւ թագաւորագնն, այլ բանիւք յղեն, վստահութեամբն յուսացեալ եւ ջերմ բարէկամութեամբն յանհոգս էին, նաեւ տկար կանայք ի սուգ մտեալ տրտմութեամբ: Այլեւ վասն այսորիկ ո՛չ դիպեցոյց Տէր մեր ի ժամ մահուն Ղազարու զանձն ի գեղ անդր, զի մի՛ ասիցեն Հրէայքն թէ ուխտ ինչ արարին ի միջի իւրեանց: Տէր անհաւաստիկ զոր սիրէիր Հիւանդացեալ է, թէպէտ եւ դեռեւս ո՛չ ունէին կատարեալ Հաւատս, սակայն սիրոյն յիշատակաւն խորհէին ձգել զնա ի գութ եղբաւրն իւրեանց իբրեւ լուաւ Յիսուս լուաւ զգոյժ Հիւանդին, թոյլ ետ մահուն իշխել նմա եւ մեռուցանել: Այն Հիւանդութիւնն չէ՛ առ ի մահ: Յուցանէ, թէ այն Հիւանդութիւնն ոչ ունի իշխանութիւն մահացուցանել զնա, բայց սու՛ղ ինչ ժամանակ, զի քարոզեսցէ զփառսն Աստուծոյ: Ի Հեռաստանէ կալաւ գերակա Հիւանդին եւ մանր զննեաց ճշմարիտ, դարձեալ որպէս Տէր ինքն իշխանութեամբ զարթուցանէ զծառայ իւր: Ի քուն լինելն մարդիկն ոտնհար լինէին, զի՞ սիրելոյն ո՛չ կարաց, ասեն, աւգնել:



Իսկ յընդուստուցանելն զմեռեալն, որ է նմա ղիւրագոյն քան ի բնոյ:

**ԵՓ Աստուած փառաւորի Հայրական փառսն իւր եւ որդի ցնծացեալ բերկրի ի յերկրաւորաց՝ Հանգոյն վերնոցն Աստուած խոստովանեալ. բարբառ Տեառն Հաւասար է միմեանց, որ առ կոյրն սասցաւ, ո՛չ դորայ է մեղ եւ ո՛չ ընդանեաց իւրոց, այլ զի յայտնի լիցին գործքն Աստուծոյ ի դմա: Եւ.** «հիւանդութեանն Ղազարու, ասէ, այն հիւանդութիւնն ոչ է առ ի մահ, այլ վասն փառացն Աստուծոյ, զի փառաւոր լիցի որդի Աստուծոյ այնոսիկ» (Կրն Յովհ. ԺԱ. 4): «Այլ վասն փառացն Աստուծոյ», թուի ինձ թէ ի Հայր ձգէ զբանն, որպէս յաղաւթելն ի վերայ գերեզմանին վասն ժողովրդեան հրէիցն որք հակառակ Հաւր զնա կարծէին եւ ապա առ ընթեր դնէ զիւրն, որ աստուածային հրամանաւն կոչեցեալն զմեռեալն՝ զՀաւր եւ զիւր կամսն եւ զփառակցութիւնն յայտնելով նա եւ զփառաւորութիւնն, որ ի ծերոց եւ ի տղայոց յառաջ գուշակեաց: «Առաքեցին առ նա թորքն Ղազարու» (Կրն Յովհ. ԺԱ. 2) բազում աղերսանաւք սիրոյ յղեցին եւ մեծաւ թախանձանաւք աղաչէին, հաւատային, թէ նա է յարութիւն մեռելոց, բայց մարդկաբար փութային մինչդեռ հիւանդն ո՛չ էր վճարեալ ի կենաց, զի ղիւրավնասելի է մարմին եւ յաճախ սայթաքէ, քան յառողջութեան կայ, զի ոգի որ ելանէ այլ ոչ եւս դառնայ, զի շարժող հոգին գնաց, մարմինն ապականի, եւ գոյութիւն մարմնոյն ի բնութիւն տարբրաց փոխի: Ընդէ՞ր քորքն Ղազարու ալեկոծէին ի միտս իւրեանց, իբր յԱստուած հաւատացին եւ որպէս բժիշկ ճշմարիտ ի հիւանդ կոչէին: «Եւ սիրէր Յիսուս՝ զՄարիամ, եւ զՄարթայ եւ զՂազար» (Կրն Յովհ. ԺԱ. 5): Ըստ առակողին, որ ասէ ի դէմս Քրիստոսի՝ «Ես, որ զիս սիրեն, սիրեմ, եւ բաշխեմ պարգեւս բարեկամաց ինոց» (Կրն Մատթ. 1-4): Զի մինչ Տեառն յեզրիպտոս իջանէր, սոքա յառաջ ժամանակաւ գնացեալ էին յԱդրիանուպոլիս քաղաքի: Եւ սիրով բազում բնաւորեալ զբարձոյն բոլորից զսկզբնակիցն Հաւր զմիածինն բարձին ուսովք եւ կրեցին բազկաւք զկրողն ամենայնի բանիւ զաւրութեան իւրոյ: Եւ ի դառնալն յեզրիպտոսէ Տեառն եւ սոքա ընդ Յովսեփայ եւ ընդ կուսին Մարիամու եկին ի Բեթանիայ, իբրեւ լուաւ, թէ հիւանդացեալ է: Յիսուս ո՛չ ետ պատասխանի, ոչ երթալ եւ բժշկել եւ ոչ չէրթալ ու անփոյթ առնն: Զանուն հիւանդին ասացին եւ զփառացն անուն լուան եւ գնացին տրտմութեամբ զտեղի առ աւուրս երկուս, թոյլ ետ աւագակին մտանել ի տուն սիրելոյն եւ խոռովու-

թիւն եւ ապականութիւն գործել: Գոռոզացաւ մահ եւ զկամս իւր կատարեաց: Կամ երկուս աւուրս գալստեանն ժամանակն, որ առ նախահարսն բայցայայտէ կամ վասն յանդգնութեան մուլէգնոտ հրէիցն, զի հրապարակատես եւ աշխարհալուր լիցի մահն ի Բեթանիայ: Եւ ասէ Յիսուս ցաշակերտսն՝ եկայք երթիցուք ի Հրէաստան. եկն եւ անդ երկիւղ մահուն չարաչար տագնապեցոյց զաշակերտսն, քան զքորսն Ղազարու: «Զի՞ այդչափ զարհուրեալ էք եւ դողայք ապաքէն ելանելոց էք ի մարմնոյդ», որ լուայք ի Տեառնէ, մի՛ երկնչիք յայնցանէ, որ սպանանեն զմարմին եւ զհոգին ո՛չ կարեն սպանանել: Դայ զհոգի եւ զմարմին ապրեցուցանէ աստ եւ ի հանդերձեալն, քանզի ոչ իսկ էր սովորութիւն Յիսուսի ծանուցեալ զտեղին յոր երթալոց լինէր: Այլ ուր չարչարանք են, անդ երթայր բժիշկն առ քարկոծիչսն երթամ ես զի փոխանակ քարավէժ առնելոյն, եղիցին նոքա թարգմանիչք, զի բազումք հաւատացին ի նա անդ: «Տէր, ասեն, հրէայքն խնդրէին գրեգ սպանանել եւ դու դարձեալ անդ երթաւս» (Կրն Յովհ. ԺԱ. 8): Զաշակերտսն այսր եւ անդր տարաբերէր ոչ կամեցաւ զխորհուրդն յայտնել նոցա, զի տեսին զնշան յարութեանն եւ ոչ հաւատացին, զերկոտասանամեա աղջիկն՝ զգուստրն Յայրոսի յարոյց, զորդի այր[ւ]ոյն ի Նային քաղաքի, որ զմի մեռեալ կարող է յարուցանել նա եւ զամենայն ննջեցեալսն: Իսկ թէ զայլոց մահ հալածական արար առաւել եւս զձերդ, ի Թափովր լեւրինն ի Հաւրէ լուայք՝ «դայ է Որդի իմ սիրելի դմա լուարուք» (Կրն Մարթ. ԺԷ. 5, Մարկ. Թ. 6, Ղուկ. Թ. 35), իսկ դուք, փոխանակ լսելոյ, հրամանատու լինիք՝ մի՛ երթար: Ի՞մ թէ զՂազարու խորհուրդն յայտնեալ էր ո՛չ հաւատայիք վասն ձեր տկարութեան մտացդ:

Իսկ Յիսուս ասէ «երկուրասան ժամ է արն» (Յովհ. ԺԱ. 9): Զբոլոր աւրն յայտնէ, զի աւր Տէրն է, որով խաւար կռապաշտութեան լուծանի, որք նովաւ գնան: «Այրն» ըստ եբրայեցոց բառիցն «լոյս» ասի, եւ Քրիստոս է լոյս, որ լուսաւոր առնէ զամենայն հաւատացեալս իւր:

**ԵՓ «Մի երկնչիք դուք ի քարկոծելոյ, իբրու ես ընդ ձեզ եմ, սակայն ոք ի ձէնջ ընդ իս եւ փոխանակ իմ ո՛չ չարչարի, այլ հասցէ ձեզ խաւար չարչարանաւք լի, յորժամ ի ձենջ վերանամ առ Հայր եւ թողում զձեզ, զի առջիք զպսակն լուսոյ փառաց, որպէս պսակեցայ ես եւ ապա վերացայ»:**

**ՈՍԿ «Որ գնա ի տունջեան ո՛չ գայթակգղի: Որչափ եւս առաւել ձեր ընդ իս գոլով, որ լոյս եմ աշխարհի, մի զմարմնոյն աչացդ**



լոյս դիմասցիս, որ է երկիւղ մարդկան եւ ամենայն կենդանեաց, որ տկարքն են դողան ի հզարաբազունիցն, այլ ես զհաւատոյ լուսոյ հոգոյն աչացն ասեմ, որ է միտքն որ զառ յապայն առ ժամայն տեսանէ, որ զայն տեսութիւն յոգւոջն ոչ ունի, թէ եւ ի մէջաւրեա գնա գայթաղի եւ խաւար հանապազ ընդ նմայ է»: Սակաւ մի կրթեաց զմիտս նոցա եւ ընդ բանիւ արկ զաշակերտսն մինչ չեւ մեռեալ ի խաչելն եւ ոչ ի ջեալ ի գերեզման, զայս կամեցեալ առաւակաւոր աւրինակի ուսուցանել առաքելոցն, թէ մինչ կատարի ամն աւետեաց, որ նա ինքն է մայրն ամաց, ոչ գայթակղին հրէայք ի սպանման անդ նորա, այն որ ի նմա թագաւորելոց էր խաւարն ի վերայ Սիոնի:

«Ղազար բարեկամ մեր ննջեաց, երթամ զարթուցանել» (Կրն Յովհ. ԺԱ. 11): Իբրեւ տղայոց կաթն ջամբես, մայրաբար ծնանիս եւ դայեկաբար սնուցանես զտգիտութիւն նոցա քո իմաստութեամբ ծածկես զնա: Բ. աւուր ճանապարհաւ հեռի Բեթանիայ, միթէ յանապակն ըմպելեաց թմբբեալ իցէ եւ կամ ո՛րք զԴ. տիւ եւ զԴ. գիշեր ննջիցէ քնով, քորք նորա ընդէ՞ր ոչ զարթուցանեն: Զոր ինչ տեսանէին նոյնպես գիտէին գառինքն անմեղ առաքեալքն սուրբք եւ զոր ինչ լսէին նմին եւ հաւատային եւ Աստուածային խորհրդոցն հասու լինել ոչ կարէին: Արդ յայտնեաց զգնալն ի Բեթանիայ եւ ո՛չ յԵրուսաղէմ զի գերկիւղն ի մտաց նոցա փարատեսցէ, այլ «զարթուցանել» ասելով զխնամս նորա առ Ղազարոսն էր յայտնէր անմտութիւն երակն ունել երկու աւուրքք զնացք երթալ զարթուցանել զնա ի քնոյ, կարծեցին առակ ինչ որպէս բազում անգամ խաւսէր:

«Ասեն աշակերտքն Նորա. թէ ննջեաց՝ ապա ապրի» (Կրն Յովհ. ԺԱ. 12): Բազում հիւանդք ննջեն եւ ո՛չ ապրին, եւ իցեն, որ ննջեն եւ ապրին, ո՛ր փաղաքշանք ախմարացն զծածկատեսն կամեին սփոփել գիտէին աշակերտքն, թէ Տէր սիրէ Ղազար անդ անմեղ եւ ո՛չ կամէին թէ հասցէ ի վիշտ անդ ընդանեաց նորա, այլ զննջելն առողջութենէ նշան կարծէին, ո՛չ շտապէ երթալոյ թէ ննջեալ է:

«Յայնժամ ասէ ցնոսա [Յիսուս]՝ յայտնապէս. Ղազար մեռաւ» (Կրն Յովհ. ԺԱ. 14): Տէր մեր մեկնեաց զծածուկ խորհուրդն զի մի

յանկարծակի ընդոստիցեն ճշելով կամ կոծելով: Ամենայն բժիշկ յառաջագոյն մինչչեւ մեռեալ իցէ մարդւոյն աշխատին յոմանս ի դեղոցն, իսկ բժիշկն Ղազարոյ մեռանել թողոյր զի ի մահու անդ ցուցցէ զզաւրութիւն քաջութեան իւրոյ ի նա:

ՈՍ Որպէս առաքեալ ասէ մեռաք որով ընթանեալն եաք մարդկան ազգ, այսինքն՝ աւրինաւք մահու զի փոխելոց էին Քրիստոսիւ յանմահութիւն յարութեամբ Ղազարու, որ էր դադափար հանդերձելոցս: «ես ուրախ եմ վասն ձեր, զի դուք հաւաքասօրք, թէ ես չէի անդ» (Կրն Յովհ. ԺԱ. 15): Պատիպատ խաւսք որ ոչ կարէին ի վերայ հասանել իրին: Մահու անուռ եւ ուրախութիւն ի լսելիս նոցա հոչակեցաւ եւ զարմացեալ ո՛չ կարէին հասու լինել վասն երկշաւիղ բանիցն: Բայց երկչոտն թովմաս տեղեակ առնէ զմեղ վասն տխմարութեան նոցա. «ոչ ի պարծանս ինչ յարուցանեմ զնա, այլ վասն ձեր հաւատոցն հաստատութեան ուրախ եմ զի առջիք զչափ իմոյ զաւրութեանս»:

ԵՓ Թէ ուրախ էր, ընդ է՞ր ելաց նա իբրեւ չոգաւ անդ, բայց տե՛ս դու զի մինչ զայս վայր մերձաւորք նորա որ չափ ինչ հեռի էին ի նմանէ եւ ի կատարեալ հաւատոց:

ՈՍ Ասէ թովմաս՝ եկայք եւ մեք ընդ նմա մեռուք: Սա երթայ զմեռեալն յարուցանել եւ մեք կենդանիքս մատնիմք ի մահ, քանզի տարակուսեալ էին յայսմ տեղւոջ երկրագործ մշակացն դիւրագոյն է զկորդացեալ երկիրն կակղել քան գիտնոցն զտգէտսն հաւանեցուցանել, մշակն սակաւ աշխատի յամեհի երկիրն եւ բազում պտղոց ակն ունի, իսկ զմարդ տգետ կուրութեամբ մտաց ափշեալ Աստուծոյ միայն է կարողութիւն ի գիտութիւն ածել: Ո՞րչափ թերահաւատութիւնն զաւրանայր յամենայն կողմանց ուրախութիւնն յաճախէր, զի հայրենի զաւրութեամբն հզաւր գործեաց եւ զբոլորից թերահաւատութիւնն հաստատեաց փարատելով, դարձեալ ստուգեալ էին թէ երթան ընդ նմա քարկոծ լինին, վասն այնորիկ մխիթարեաց զնոսա եւ քաջալերեաց եւ եբարձ ի նոցանէ գերկիւղն:

«Եկն Յիսուս եւ եգիտ զՂազար չորեքարեայ ի գերեզմանի, մերձ էր Բեթանիա յԵրուսաղէմ» (Կրն Յովհ. ԺԱ. 17-18), մերձ էր գեղն յԵրուսաղէմ, ու սուգն էր ուրախութիւն եւ խաղաղութիւն:

«Ասպարիսաւք հնգեպասան»:



**ՄՍ.** Ասպարեզն Բ. մղոն ճանապարհ է մինչեւ յԵրուսաղէմ, որ ի ծննդենէն կրկնապատիկն մինչեւ ի խաչն Հինգէշարժ զգայութեամբ, տեսանելեալք լսելեալք, հոտոտելեալք, ճաշակելեօք, շօշափելեօք, զոր միացոյց Քրիստոս ըստ իւրում էութեանն եւ համբարձաւ յերկինս ընդ նմին յարոյց եւ ընդ նմին նստոյց յաթոռ փառաց ընդ հաւր: «Եկն Յիսուս եզիտ զՂազար չորէքաւրեա ի գերեզմանի»

**ՈՄԿ** եւ Յիսուս հանդարտագոյն գնայր զի մի մարդկան այնպէս երեւեսցի ինքնայաւժար ի վերայ նշանացն ընթացեալ: Զի ճշմարտասցի թէ զբոյս բարուց մարդկան զգեցեալ էր նա: «Եւ բազումք ի հրէիցն եկեալ էին առ Մարթա եւ Մարիամ» (Յովհ. ԺԱ. 19): Իսկ գալն նոցա աստուածային տեսչութեամբն իմանի գոյ, զի տեսողքն զուարճասցին աստուածագործ նշանաւքն, զի ոմանք աւգտեցան հաստատելով հաւատովք ի Քրիստոս խարսխեալք, զի արդ եկին, զի հրէիցն ուխտ եզեալ էր, թէ ոք խոստովանեսցի գնա Քրիստոս ի բաց կացցէ ի ժողովրդենէ, կամ վասն տազնապի տրտմութեանն կամ ազնուականք էին Մարիամեանքն եւ աշառեցին կամ այնք էին, յորում ոչ գոյր խորամանկութիւն, զի բազումք էին, որ հաւատացին: Զի մխիթարեսցեն զնոսա: Ազարակն քաղաքացեալ էր եւ քաղաքն ազարակացեալ. զի բոլոր քաղաքն եկեալ էր ի վիշտն:

Զի մերում բնութեանս սովորութիւն է, զբաւթ սիրեմք զայոց լսել եւ մտանել ի տուն սգոյ քան յուրախութեան, ոմն ի լկտիութիւն, կեսք յոտնհարութիւն եւ յոլովք ի շատախաւսութիւն, սակաւք կցորդին տրտմութեան, զի ամենայն մխիթարիչք անձամբ տրտմութեան լինեն, զի տրտում զտրտում ո՛չ մխիթարէ, եւ ոչ՝ սգաւոր զսգաւոր: Մին ասէ՝ «Մի՛ տրտմիր, եղբայր իմ՛, տղայ մեռաւ», եւ այլք եւս ըստ իւրաքանչիւր զտարածամ մահն պատմեն եւ զսիրտն բեկանեն եւ զաղիսն գալարեն:

«Մարթայ իբրեւ լուաւ, թէ Յիսուս գայ ընդառաջ գնաց» (Յովհ. ԺԱ. 19):

**ՄՍ** Մարթայ յառաջընթաց լինի ըստ աւրինացն եւ մարգարէիցն աւրինակաւ որ գուշակեալ ցուցին զՔրիստոս փրկիչ աշխարհի: Եռայր սէրն Մարթայի քան զՄարիամուն, զի յառաջագոյն իբրեւ եկն Յիսուս Քրիստոս, Մարթայ կայր ի սպասուե նմա՝ ասելով զՏէրն. «Ասա՛ քեզք իմոյ զի աւգնեսցէ ինձ»: Եւ երկրորդ անգամ

իբրեւ եկն ի կեցուցանել զՂազար, անտի ընթացաւ ընդառաջ ելանել:

«Մարիամ նստէր անտէն ի փան» (Յովհ. ԺԱ. 19):

**ՄՍ** Մինն եղեւ իբրեւ զբան բերանոյ, եւ միուսն՝ իբրեւ զսիրտ շտեմարանի խորհրդոց. սիրտն ի տեղւոջն հաստատուն կաց եւ բանն յառաջ ընթացաւ պատմելով զպաղատանս սգալից սրտի: Ի լսելիս այնորիկ, որ կարող էր բառնալ զտխրութիւն ի տանէ սիրողացն իր:

«Ասէ Մարթա ցՅիսուս. Տէր՝ եթէ ասպ լինալ էիր, չէր մեռեալ եղբայրն իմ» (պնս Յովհ. ԺԱ. 21):

**ՈՍ** Մարգարէացաւ Մարթայ, զի թէ որ ընդունի զմարգարէ, զվարձս մարգարէի առցէ: Իսկ որ զԱստուած ընդունի՝ զաստուածային փառսն ժառանգեսցէ: Դարձեալ, ուր կենդանութիւն է անդ՝ մահ ո՛չ մտանէ: Տէրն բազում անգամ մտեալ ի տունն Մարթայի եւ Մարիամու, եւ մահն ի գեղջէն հալածական լինէր, թող թէ ի տանէն, զի ուր՝ իմաստութիւն, անդ՝ հոգեւոր սէր աստուածային, հաւատք ճշմարիտ եւ մարգարէութիւն ստոյգ, այլեւ մի է շարժողն նոցա՝ Աստուած: Զի որպէս արուեստաւորն միով բերանով փչէ յերգւովնն եւ բազում փողքն՝ ոմն սոսկ, ոմն՝ թաւ, եւ ոմն թանձրագոյն տա եւ մի ձայն ասի, նոյնպէս Մարթայ, եւ՛ Մարիամ, եւ՛ Ղազար, եւ՛ որք ի տանն նոցա, մի հաւատք էին ամենեցուն, մի սէրս սիրեցին զՔրիստոս մի հոգեւոր իմաստութիւն ամենեցուն:

**ԵՓ** Քանզի յղեցին առ նա եւ ոչ կամեցաւ գալ: Գիտացին թէ, այս է կամք Տեառն, զի մեռցի Ղազար, զի ոչ ինքն եկն եւ ոչ առաքեաց, թէ բժշկեսցի, քանզի լուեալ էր նոցա յառաքելոցն: Թէ յորժամ ննջեաց Յիսուս զարթեան ալիքն ի քնոյն ի ժամանակի մինչ ոչ էր ընդ նոսա, զի խռովեցան ալիք ծովուն, խաւսեցան մարդկապէս, թէ ուր լոյս է, ո՛չ մտանէ խաւար եւ ուր կեանք է, ո՛չ համարձակի մահ:

«Արդ գիպեմ, թէ գոր ինչ խնդրեսցես յԱսպուծոյ, փացէ քեզ Ասպուած» (Յովհ. ԺԱ. 22):

Մարգարէացաւ կինն, ոչ զմի մեռելոյ յարութիւն, այլ զղարուցն կարող ես յարուցանել՝ կամակցութեամբ Հաւր եւ Հոգւոյն: Եւ



Տէրն ասէր. «Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հաւրէ, այլ զմիտս լսողացն հաստատէր, եւ ոչ ոք գիտէ զհայր, բայց Որդի եւ ոչ զՈրդի ոք ճանաչէ, բայց միայն Հայր»: Այս բան զմիակամութիւն եւ զմիբնութիւն ցուցանէ եւ ո՛չ երիցութիւն կամ կրսերութիւն, քանզի Քրիստոս հաճեցաւ ընդ հաւատս Մարթայի եւ ասէ Տէրն. «Ամենայն, որ հաւարայ յիս, ինքն է պարգեւարո» (հմմտ. Յովհ. ԺԱ 26): Ի նմանէ է պարգեւըն, բայց պարտ էր խնդրել:

«Աւէ ցնա Յիսուս. Յարիցէ եղբայրն քո» (Յովհ. ԺԱ. 23): Տէրն յայտնեաց նմա զառաջին յարութիւն եղբաւրն իւրոյ եւ զվերջին, ոչ են պէտք աղաչանաց եւ ոչ կարծիք հարուածոց, որպէս ոմանց թուի. «Աւէ ցնա Մարթայ. Գիտեմ, զի յարիցէ ի յարութեան՝ յաւուրն յեպրոսմ» (Յովհ. ԺԱ. 24):

Երկնից դրունքն բացան կնոջն, եւ զլոյսն անստուէր ետեսաչաւքն եւ յանմատոյց տեղին եհաս եւ Զեբեդեայ որդւոյն հաւասարեաց՝ ոչ զՔրիստոսի մարմնական լանջաւքն անկաւ, այլ Աստուծոյ իմաստութեամբն զաւրացաւ, զբանն կենաց շաւղափեաց եւ յաստուածային կեանսն փոխեցաւ, մտաց աչքն բացան եւ լուսաւորեցաւ ներքին մարդն, եկն արտասուաւք եւ զնաց ծաղու, եւ վշտացեալն բերկրեցաւ եւ զուարթացաւ գոյն երեսացն: Լուաւ յոյս յարութեան մինչ չեւ յարուցեալ զեղբայրն ետես զյարուցիչն մեռելոց: «Աւէ ցնա Յիսուս. Ես իսկ եմ յարութիւն եւ կեանք» (տեսն Յովհ. ԺԱ. 25): Եղիայ յարոյց մեռեալ եւ դարձեալ մեռան, Եղիսէէ՝ երկուս: Ես յարուցանեմ եւ անմահ առնեմ յաւիտեան ի հասարակաց յարութեանն. «որ հաւարայ յիս, թէպէր եւ մեռանի՝ կենդանի է» (տեսն Յովհ. ԺԱ. 25): Որպէս իմաստոյ տեսանելոց ես այժմ, ասէ, այսպէս յիս հաւատացեալքն ոչ մեռանին յաւիտենական մահուամբն, իսկ ի յարութեան անդ մեռելոցն մեռանին կենդանիքն մեղաւք կամ թէ անհաւատքն եւ ամպարիչտքն ի Քրիստոս: Ասաց անդ մեծամեծս բանիւք եւ կնքեաց զործովք:

«Եւ որ կենդանին է եւ հաւարայ յիս մի, ասէ, մեռցի յաւիտեան» (Յովհ. ԺԱ. 26): Եւ որ հաւատան այժմ, ասէ, յիս կենդանիքս ի մահուանն իւրեանց մնան յաւիտենիցն կենդանութեամբն եւ յանսպառ յաւիտեան ձեռն մահու ո՛չ տիրէ ի վերայ նոցա: Բայց ոմանք վասն կատարածի աշխարհի ասեն զայս, թէ այնոքիկ, որ կենդանի

են մարմնով եւ ի գալուստն հասանեն ո՛չ մեռանին, որպէս եւ առաքեալ ասէ, որ «Կենդանիք մնացեալ իցեն ի գալստեանն Տեառն, ո՛չ ննջեցեն» (հմմտ. Թեաաղ. Դ. 14): Հաւատա՛ս այսուիկ յոյժ բարձրագոյն ճառեաց փրկիչն եւ վասն այնորիկ վարձս վարդապետութեան խնդրեաց ի նմանէ զոր լուաւ, զի թէպէտ երկչաւեղ էր բանն, սակայն յուսայր Մարթայ:

«Աւէ ցնա. Այո Տէր. ես հաւարացի, եթէ դու ես Քրիստոսն լորդի Աստուծոյ, որ գալոց էիր յաշխարհ» (տեսն Յովհ. ԺԱ. 27): Զմարգարէիցն բան հաւատարմացոյց որպէս շամարտացի կինն, որ ասաց յորժամ մեսիայն գայ նա պատմեցէ մեզ զամենայն, ասաց զկուսական ծնունդն եւ ակնարկեաց զերկրորդ գալուստն եւ զմեծամեծս Տեառն լուաւ եւ զամենայն տնաւրենութիւնն տեղեկացաւ եկն իբրեւ մարդ տրտում եւ զնաց որպէս հրեշտակ յԱստուծոյ ուրախացեալ եւ «կոչեաց զքոյր իւր լոնելայն» (տեսն Յովհ. ԺԱ. 28): Աշակերտեաց զքոյրն իւր ի նոյն վարդապետութիւն հեշտակամ զիւրահաւան ակնարկելով միայն վասն հրէիցն, զի քոյրն զնոյն մաղթանս արկցէ՝ ի գութ ածելով զՔրիստոս վասն եղբաւրն կենդանութեան.

«Աւէ. Վարդապետն եկեալ է՝ եւ խնդրէ զքեզ» (տեսն Յովհ. ԺԱ. 28):

Արդարեւ ճշմարիտ վարդապետ առանց ալիփափետաց ուսուցանէ եւ զամենայն պետս դպրութեան կատարէ, ասաց վարդապետ եւ ինքն եմուտ ի կարգ աշակերտաց: Մարիամ իբրեւ լուաւ յարեալ եւ եկն առ Յիսուս ի նոյն տեղի եւ նոյն ուրախութիւն առ մի ուսուցիչ զոմն ի ծածուկ եւ զոմն յայտնի ձգեաց զերկոսեանն ի սգաւոր աշխարհէս յանտրտում ուրախութիւնն երկնից: Մարիամ ի նոցանէ մերժեցաւ եւ եկն առ այն որ յառաջն ճանաչէր, ասելով, թէ որ զբազում մեզս իմ եթող, կարող է եւ զծանրութիւն սգոյս փարատել:

Եւ «չեւ ես էր եկեալ Յիսուս ի գեղն. այլ էր անդր]էն ի փեղոջն՝ ուր ընդառաջ եղեւ նմա Մարթայ» (տեսն Յովհ. ԺԱ. 30):

Է՞ր վասն արգելոյր զինքն եւ ոչ փութապէս գայ ի գերեզմանն, զի համբաւ գալստեան նորա հասանելով ատեան զործիցէ ժողովրդեանն եւ ամենեքեան ճեպեցին ի տեսանել զաստուածագործ նշանն:



**ՍՏ** Իսկ Յիսուս Հանդարտագոյն գնայր զի մի այնպէս մարդկան երեւեսցի ինքնայաւժար ի վերաց նշանադործութեանցն ընթերցեալ: Իսկ հրէայքն, որ եկեալ էին միտիթարեալ զնոսա (հմմտ. Յովհ. ԺԱ. 31), ինքեանք թափուր էին մնացեալք յերկնային միտիթարութեանցն ոգևով թախծեալ նստէին ի տան յառաջին յարտասուս շաղեալ եւ նովին տրտմութեամբ

«Իբրեւ փեսին զՄարիամ թէ յարեաւ եւ գնաց, գնացին եւ նոքա զհեպ» (տե՛ս Յովհ. ԺԱ. 31):

Ոչ առ ի յարութեանն տեսութիւն այլ ի գերեզման, զի որում տուեալ է յաւելցի եւ որում չէ տուեալ ու զոր ունի Հանցեն ի նմանէ: Ո՛չ առ ազահութեան տուողին, այլ վասն անարժանութեան ունողին, որպէս առ առաքեալովքն եւ Յուդայիւ տեսանի: «Վամարէին թէ ի գերեզմանն երթայ՝ զի լացցէ անդ» (Յովհ. ԺԱ. 31):

**ՈՍԿ** Զի Հանապազ գերեզմանասէրք էին ոչ միայն զմարդիկ մեռեալ լային, այլեւ զսուտ Աստուածս ասէին մեռեալ, որպէս զԵզեկիէլ մարգարէ ասէ, «նստեալ լային զԹամուզ» (հմմտ. Եղեկ. Ը. 14): Անկաւ Մարիամ առ ոտսն Յիսուսի (հմմտ. Յովհ. ԺԱ. 32): Տե՛ս զՀամբերութիւն նորա. յորժամ ետես զՅիսուս, ոչ ճիշ եբարձ՝ ի յողբս շարժելով զՅիսուս, զոր բոյս բարուցն խնդրէ, յորժամ ի ծանաւթից զոք տեսանեն, սգաւորքն կոծին, այլ զՎարդապետն փառաւորեաց եւ Հաւատաց: Եւ ասէր. «Տէր՝ եթէ աստ լեալ էիր, եղբայրն իմ չէր մեռեալ» (Յովհ. ԺԱ. 21): Միոյ դպրոցի մանկունք զմի լեզու խաւսին միաբան եւ ըստ Վարդապետին կամացն յորդորեալ խաւսին միաբան յուսումն աստուածային նոյնպէս երկու քորքն ի մի որս կենդանիքն ըմբռնեցան, զմի սիրեցին զՏէր ի միոյ աղբիւրէ արբին զՋուրն կենդանի, տեսին զԱստուած մարմնացեալ եւ Հաւատացին ի Տէրն բոլորից: Թուի թէ խոնարհեալ էին յառաջագոյն ածեալ զՅիսուս <ի> յեղբաւրն կենդանութիւն մի բարբառ էր երկուցն վասն մերձաւոր մեռելոյն ասել՝ «Ո՛վ Տէր, եթէ ոչ էիր անտես արարեալ զազգս մարդկան, ոչ մեռանէին զմեղացն զմահն», զի «մեղաք մեք եւ դու բարկացար» (Հմմտ. Եսայի ԿԴ. 5), ասէ մարգարէն, մի պարկեշտութիւն վարոց եւ սքանչելի խրատուց:

«Յիսուս իբրեւ ետես զնա զի լայր եւ որք ընդ նմա հրէայքն լային» (Հմմտ. Յովհ. ԺԱ. 33), յաշխատեալ մարմնոց բղխեն քրտունք եւ ի զայրագին սրտէ աչք հեղուն արտասուք ի վերայ մեռելոյ

եւ կենդանոյ սիրելի[ւ]ոյ, որի հեռաստանէ եկեսցէ, ետես Մարիամ զՅիսուս եւ երկունքն եղբաւրն զթոյն ստիպէին զնա յիշատակաւ մեռելոյն, այլ ոչ ճչեաց՝ ըստ աշխարհիս կարգաց, այլ արտասուեաց ցածութեամբ առաջի ողորմածին՝ այնչափ աղիողորմ տեսլեամբ, մինչ զի զամենայն լացոյց բարձրակական:

**ԵՓ** Թէ նստէիր դու առ ոտս նորա որպէս Մարիամ, լսէիր դու զմեծամեծս Աստուծոյ, որում ամենայն ինչ զիւրին է:

«Խոռովեցաւ Յիսուս յոգի իւր» (տե՛ս Յովհ. ԺԱ. 33): Իբր թէ ամենայն զաւրութեամբ տրտմեցաւ եւ ոչ մոնչալով ասաց կիսաբան: Տրտմակից ի վերայ սիրելւոյն՝ եղեւ կցորդ սգոյ նոցա, զի լիցին մարդիկ յԱստուծոյ միտիթարեալ կամ մոնչեաց ի վերայ սատանայի, որպէս առիւծ ի վերայ որսոյ: Ոչ կարէին շարժել զնա տրտմակիցքն որպէս զմեզ յաղթահարեն մարմնոյ շարժունք, զի աստուածային բնութիւնն անախտ է եւ անտրտում: Այլ խոռովելն նշանակէ, թէ հրաման ետ տրտմութեանն գալ: Եւ զարտաւսրն կամաւորաբար հեղուլ ցուցանէ, թէ յորժամ կամէր զիջանէր ի բնական կիրս մարմնոյն՝ յայտնելով զճշմարիտ մարդեղութիւնն: Զի թէպէտ Աստուած միացաւ ի մարմնի, այլ ոչ ետ մարմնոյն շարժել, այլ յորժամ թոյլ տայր զիջանէր ի կերակուրս եւ յըմպելիս եւ ի քուն եւ յորժամ կամէր գեր ի վերոյ պահէր զինքն աստուածային միութեամբ, զոր աւրինակ մարդ որ ամենայն բնութիւն թաղեալ կա ի նմա եւ մի ի նոցանէ յորժամ ախորժէ ի տեղուջ իւրում ծագէ նոյնպէս եւ Տէր մեր՝ զքաղցն առ Հացն եւ զարտաւսրն առ սիրելին. զի Հաւատարիմ լիցի թէ ճշմարիտ մարմին է առ նա: Վասն այսորիկ լաց, եւ յայտնեաց զՀաւատսն Մարիամու եւ Մարթայի, զի երկրպագէին նմա եւ խոստովան եղեն ի նա առաջի այնոցիկ որ ոչ Հաւատացին ի նա: Հոսանք անձրեւաց առատաբեր առնեն զանդս եւ յորդարտասուք ի գութ ածեն զԱստուած:

Ասէ. «Ուր եղիք գնա», ասէ՝ «Տէր, եկ եւ փնս» (տե՛ս Յովհ. ԺԱ. 34):

**ՈՍ** Ոչ անգիտութեամբ, այլ որպէս Հայրն, որ հարցանէր՝ «Ու՞ր ես, Աղամ» (հմմտ. Ծննդ. Գ. 9), զԿայեն՝ «Ու՞ր է Աբել՝ եղբայր քո» (տե՛ս Ծննդ. Գ. 9) եւ ցՄովսէս՝ «Զի՞նչ է այդ ի ձեռին քում» (տե՛ս Ելից Դ. 2): Խնդրէր արարիչն զիւր մարդն, որ ըստ պատկերի Աստուծոյ արար զնա, եւ չարն նախանձեցաւ ընդ բարիսն Աղամայ եւ ընկեց յերանելի կենացն: Տէրն եկեալ որսայր զմարդկային փրկութիւն: Արդ ասա ինձ՝ «Ո՛վ Տէր, ի Բեթանիայ է», մինչեւ ի Բեթաբրիայ եւթանասուն



եւ երկու մղոնք են, յայնչափ հեռաստանէ զիտացէր զմահն Ղազարու: Եւ ի մաւտ եկեալ ի կամրջիդ անգիտանաս, զի եղիք դուք, եւ ես կենդանի առնեմ զնա, դադաղաւք տարայք եւ ես ձայնիւ յարուցանեմ զնա, ապա զի՞ արդ հարցանես տէր՝ ասէ՛ աստուածային հրաշս գործելոց եմ ի տեղւոջս յայս, գոնեա զրկեսցին մարդիկ եւ երկու կողմանց զգուշանամ հոգւոց եւ մարմնոց վասն զի Աստուած էր մարմնացեալ. այլ զի ինքեանք ցուցցեն եւ վկայ լիցին տեղւոյն եւ մեռելոյն, որք թաղեցինն, գայ ի տեղւն եւ շարժէ զվէմն:

«Արքասուեաց Յիսուս» (Յովհ. ԺԱ. 35):

Մարմնոյն ոչ միայն աչք արտասուեն, այլ բոլոր մարմինն տրտմազանկք լինի, որով Տէրն իսկ վարեցաւ, բազում անգամ յաշխարհի մինչեւ ի նոսա սգոյն պէտս զի զազգակցութիւնն ի մեր վշտակցութիւնս ցուցցէ: Եւ դարձեալ՝ սահման եղ վարդապետութեամբ այնքան արտասուել հաւատացելոց, որք յոյս յարութեան ունին: Եւ դարձեալ, տեսանելով զմեռեալ, պարտ է արտասուել ի վերայ մարդոյն, որ ի սկզբանէ զմահ ժառանգեցոյց, մերում բնութեանս: Կամ թէ եւ ի վերայ հրէիցն անհաւատութեան լայր, որ յետս կալոց էին յԱստուածագործ նշանացն եւ դեհենժառանգ լիւնելոց էին:

ԵՓ Լաց նա, զի յայտ արասցէ թէ մեռաւ, զի բացցէ նոցա դուռն ասելոյ, թէ սա՛ որ է բաց զաչս կուրին, կարէ եւ զսա յարուցանել, որ եւ խոստովանեն ակամայ:

Ասեն հրէայքն, տեսանէք, որչափ սիրէր զնա, զի արտասուեաց ի վերայ: Կեսքն ասէին, ոչ կարէ սա որ երաց զաչս կուրին, առնել զի եւ սա մի՛ մեռցի:

ՈՍԿ Դուք սովոր էք հայհոյել՝ որ զծովն բաժանեաց եւ մանանայիւ եւ լորամարգիւ զձեզ Խ. ամ կերակրեաց յանապատին եւ այլ բազում նշանս արար, դուք հայհոյեցէք եւ ոչ գոհացայք զԱստուծոյ եւ անասնոց փոխանակեցէք զնա, եւ զՄովսէս երզմամբ ուրացայք, որ ընդ ծովն ճանապարհ արար եւ զբոլոր ժողովուրդն ի փարաւոնէ եւ ի սրոյն նորա ապրեցոյց, մի՞թէ շնորհակալ եղայք, զի եւ վասն միոյ կուրի շնորհակալ լինիցիք: Հոգի կուրին կենդանի էր եւ շարժէր զմարմինն եւ աչքն մեռեալ էր, եւ հոգին ի մեռեալ մարմինն բնակէր, իսկ լոյս արեգականն ի մեռեալ աչք ո՛չ բնա-

կէ, թէ զմեռեալ կենդանացոյց զաչք եւ զլոյսն հրաժարեալ՝ անդրեն դարձոյց, ապա եւ զբոլոր մարմինն Ղազարու կարէ կենդանի առնել: Բայց դուք ի կամս ձեր յաճախեցեք հայհոյել թերեւս ի նմին տեղւոջդ ամաչէք, յորժամ բազումք ի ձենջ փառաւորեն զիմ աստուածութիւնս՝ ի վերայ մեծ սքանչելեացն, զոր տեսանելոց եք:

ԵՓ Իսկ նոքա, որ ինչ ընդդէմ աստուածութեան նորա էր ասէին կատակելով, զի թէ լաց նա, յայտ արար թէ, ոչ կամեացաւ ընդ հրէիցն անհաւատութեամբ մեռանելն, արդ ո՛չ բռնադատեաց զմահն, որպէս զաստուած, այլ թոյլ ետ մահուն տիրել ի վերայ Ղազարու: Արդ, իբրեւ ցուցին նոքա զայսպն կատականաց իւրեանց, դարձաւ նա ցուցանել զաստուածային զաւրութիւնն իւր:

ՈՍԿ Յիսուս դարձեալ խռովեացաւ զայրացեալ միտս իւր: Արդ, որ ասաց՝ խռովեցոյց զանձն իւր, յայտնէ բանն, թէ՛ կոչելով յինքն զարտաւսրն եւ ապա սաստեաց բնութեանն դադարել ի շարժմանէ տրտմութեանն, զոր կոչելով խռովեցոյց իբրեւ զայն, որ ասաց յաւետարանին Մատթէոսի. «Մինչեւ յե՞րբ իցեմ ընդ ձեզ եւ անսայցեմ ձեզ» (հմմտ. Մարթ. ԺԷ. 16) եւ որպէս զայն, որ ասաց ձանձրացաւ անձն իմ ազգաւն այնմիկ, որ փորձեցին զիս տասն անգամ եւ սոքա ի. անգամ (հմմտ. Երբ. Գ. 9-10): Գայ ի գերեզմանն եւ էր այր մի եւ վեմ մի եղեալ ի վերայ նորա:

ՈՍ Սովորութիւն էր առաջնոցն ամրացուցանել զգերեզմանն, վասն զի հեռի էր ի նոցանէ յարութեան յոյսն. զայս կեանս համարէին եւ զայն՝ դառնութիւն մահու, եւ յիշատակ մեռելոցն զշիրիմն համարէին եւ զանուն մեռելոյն ի վերայ գերեզմանին փորագրէին: Մովսէս թոյլ տայ, թէ եղբայր ումեք մեռանիցի անորդի, առն զկինն եղբաւրն եւ յարուցանէր զաւակ յանուն մեռելոյն վասն ժառանգութեան երկրին վիճակի. կամ վեմն կափարիչ նշանակէ զսատանայ, որ ի վերայ դժոխոցն փակեալ էր զողբիսն եւ ունել ընդ իւրով իշխանութեամբն պահէր:

Արդ, եկն «Եւ ասէ Յիսուս. “Ի բաց արարեք զվեմդ”» (Յովհ. ԺԱ. 39):

Ի բերանոյ յՈրմէ երկիր դողայ, եւ վեմք հալին, վասն փոքր ի վիմիդ աւգնակա՞ն խնդրես ի տկար մարդկանէ: «Ո՛չ այդպէս, ասէ, այլ վկայ կոչեմ յարութեան: Դուք առեք զքարդ ի վերեւ հայեցարուք ի գերեզմանդ աչաւք, աչք ձեր վկայ լիցին եւ թիկունք ծանրութեան վիմիդ եւ հոտ նխոյդ յըռնագացդ որ մաւտ կայք ամենեքեան»: Զի Յիսուս գիտէր զնոցա չարանախանձ սովորութիւնն:



Զի՞նչ -պէտք էին բառնալ զվեմն, Որոյ հրամանաւ փոխեցին զժոխք զմեռեալս, չթաւալէ՞ր արդեաւք վեմն, այլ վասն ժխտող հրէիցն, զի թէ զսքանչելիսն ուրանան, ձեռք նոցա յանդիմանեսցեն զնոցա թերահաւատութիւնն: Կամ վեմն զծանրալուծն սատանայ պահակն մեղացն, որ արգելեալ պահէր ընդ մահու իշխանութեամբ զմեղաւորս, տէր բառնայ զվեմն, զբռնակալութիւն մեղացն զի մարդիկ դիւրաւ յարիցեն յանգամանէ, մեղան զկնի Քրիստոսի գալստեանն: Այն որ կեցոյց զմեռեալս եւ դարձոյց անդրեն զշունչն, կարէ բանալ զգերեզանս եւ ի բաց առնուլ զվեմն, որ ասաց զաշակերտացն, «թէ ունիք հաւատս քան զհատ մանանխոյ, ասասլիք լերինդ փոխեաց եւ փոխեցիք» (հմմտ. Մարթ. ԺԷ. 19):, յերեսաց ձերոց զվեմն մի՛ ի գերեզմանիդ բերանոյ ո՛չ կարէ փոխել բանիւ, կարող իսկ էր այն, որ ձայն իւր մինչդեռ ի խաչին էր, զվեմն եւ զգերեզմանս պատառեաց քան զի բարեկամ նորա էր Ղազար:

Ասէ՛ «Դուք բացէք եւ հարցի հոպ նեխոյն ընդ երեսս ձեր»: Ասէ Մարթայ քոյր մեռելոյն՝ «Արդ հոպեալ իցէ» (տն՝ Յովհ. ԺԱ. 39):

ՈՍԿ Զնախաստեղծին բերեր զաւրինակ մեռելութիւնն եւ նեխութիւնն, ըստ մարգարէին. «Նեխեցան եւ փրեցան վերք ին» (Մաղմ. ԼԷ. 6) եւ այլ մարգարէք ամբաստան լինին վասն ազգի մարդկան, զմեղացն ժահահոտութիւն բացայայտեն ըստ իւրաքանչիւր բանի, զի ամենայն արարածք առ հասարակ նեխեալ էր եւ մարդկան հոտ նեխոյ գայ ի մեռելոյ: Իսկ Աստուծոյ ի մեղաց, իսկ Տեառն յիւր անոյշահոտութենէն համեմեաց զանհամութիւն մարդկան, մշակին ո՛չ գոյ հոտ ի նեխոյ սերմանեացն, զի միտք իւր լի են խնդութեամբ եւ պարարեալ են խելքն ի հոտոյ անդւոյ իւրոյ, որպէս եւ Սահակ ասէր վասն Յակովբայ ի գեմս Քրիստոսի, հոտ որդւոյ իմոյ որպէս անդւոյ լիոյ զոր աւրհնեաց Տէր, քանզի չորէքաւրեայ զչորեքնիւթեան բնութիւն մարդկան թուի ինձ թէ եւ զչորեքեզերեան աշխարհս նշանակելով զի ամենեքեան մեղան եւ նուազեալէն ի փառացն Աստուծոյ: Նաեւ զբազմաւրեայ բնութիւնս մեր ընդ չորեքաւրային յարոյց Քրիստոս ի մեղացն ապականեալ մեռելութեանց:

«Ասէ Յիսուս, թէ հաւաքացես՝ փեսցես զփառսն Աստուծոյ» (տն՝ Յովհ. ԺԱ. 40): Ով Մարթայ, այտի բուսանելոց են անապական

կեանք մարդկան, միայն հաւատայ յԱստուած եւ հարկանի քեզ հոտ անոյշ կենդանւոյ եւ զփառսն Աստուծոյ տեսանես եւ պապանձին բերանք հայհոյչաց հերձուածողացն յորժամ զչորեքաւրեա[յ] ] մեռեալդ կենդանի տեսցեն ի հրապարակս: Դայ է աղն անուշացուցիչ ամենայն հարեալ մարմնոյն եւ լոյս եղայ թափանցիկ կուրացեալ աչաց եւ ձայն է խլացեալ ականջաց. զոր գործաւք առ եղբաւրն քում տեսանես եւ մտաւք զփառս Աստուծոյ ճանաչելով:

«Իրրել ի վեր աօին զվեմն» (Յովհ. ԺԱ. 41): Մինչչեւ զվեմն ի վեր առեալ էր, Ղազար յարուցեալ էր ի գերեզմանէդ: Ոչ է արժան ասել գերեզման, այլ յարութիւն անուանել:

«Յիսուս ամբարձ գաչս իւր ի վեր՝ յերկինս» (տն՝ Յովհ. ԺԱ. 41): Յիսուս մինչչեւ գաչս յերկինս համբարձեալ էր զՀայր տեսանէր:

Եւ ասէ. «Նայր՝ գոհանամ զքէն, զի լուար ինձ» (Յովհ. ԺԱ. 41): «Հայր իմ բնութեամբ, գոհանամ զքէն», ասէ, զի ծածկեցէր զայս յիմաստնոց եւ ի դիտնոց եւ յայտնեցեր տղայոց անմեղաց, մինչչեւ ձայնիւ կարդացեալ Հայր լսեր նմա, յամենայն ժամ լսես ինձ: Ամաչեսցէ թէ՛ ոգորիտոն եւ նմանք նոցա, որ ասեն՝ ոմն կարդայր եւ ոմն լսէր, ահա բան, լի յիմարութեամբ: Ո՛վ անիրաւ, ի տան քահանայապետին յարոյց զգուստրն նորա ի մեռելոց եւ ո՛չ զՀայր աղաչեաց եւ ոչ յերկինս հայեցաւ եւ կամ կարդաց առ նա: «Միայն հայեցաւ ի մեռեալն եւ ասէ. «Տալիթայ, կու՛մի՛՝ աղջիկ, դու արի՛ կաց: Եւ յարեաւ կանգնեցաւ իրրել գողջ (հմմտ. Մարկ. Ե. 41-2): Նոյնպէս եւ ի Նային քաղաքի, ուր բազում ամբոխ էր եւ ոչ ոք զնա թախանձեաց եւ ոչ առ Հայր կարդաց ձեռն միայն ձգեաց ի դազաղն եւ մեռեալն կենդանացաւ (հմմտ. Ղուկ. 13-15): Նոյնպէս եւ յայլ նշանագործութիւնսն, ուր անձամբ առնէր զաստուածային ցուցանէր, եւ ուր զՀայր աղաչէր, զսիրելութիւն եւ զմիակամութիւն ցուցանէր, քան զի երանելի է բնութիւն Սուրբ Երրորդութեանն բնութիւն անսահմանելի միապէս յերեսեան անձինսն ի Հայր եւ յՈրդի եւ ի Սուրբ Հոգին: Իսկ յատկութիւն առ անձնաւորութիւն յիւրաքանչիւր երեսս բաժանին եւ դէմս քան զի բնութիւն երիցն այս է՝ Տէր Աստուած ամենակալ, ամենախնամ, արարիչ, անիմանալի, անպարագրելի, անորակ, անքանակ, անուր, աներբ, ո՛չ սկսեալ եւ

<sup>1</sup> ձեռագրում՝ լումի



դադարեալ: Իսկ առ անձնաւորութիւն Հաւր՝ ծնաւդ եւ պատճառք անսկիզբն ո՛չ սկսեալ յուեքէ, առաքող, ոչ ծնեալ յուեքէ եւ ոչ արարեալ կամ յինքենէ կամ յայմէ ուեքէ: Իսկ Որդոյ անձնաւորութիւն՝ որդի, բան, ծնունդ, լոյս, կերպարան, իմաստութիւն, ճառագայթ, պատկեր, կնիք, նկարագիր: Իսկ Հոգւոյն Սրբոյ անձնաւորութիւն՝ բխումն ճշմարիտ, մխիթարիչ, նորոգող, ուղիղ, բարի: Ի Հաւրէ են Որդի եւ Հոգին Սուրբ, այլ ոչ կոչին եղբարք եւ ո՛չ որդիք երկոքեանն, զոր աւրինակ յԱզամայ են Սէթ եւ Եւայ, այլ ո՛չ եղբարք եւ ոչ որդիք երկոքեանն, քանզի Հայր ծնող է եւ որդի ծնունդ եւ Հոգին Սուրբ ելող է եւ նստի որդի ընդ աջմէ Հաւր եւ Հոգին Սուրբ ընդ աջմէ որդի[ւ]ոյ: Քանզի ի Ճ. եւ Թ. Սաղմոսին ասէ. «Ասաց Տէր ցՏէր իմ, նիսար ընդ աջմէ իմմէ» (Սաղմ. ԸԹ. 1): Հայր ընդ որդւոյ եւ ընդ Հոգի[ւ]ոյն Սրբոյ ասէ. Արդ ոչ մեծ եւ ոչ փոքր ի Սուրբ Երբորդութիւնն երեւի, զի մեծ եւ փոքր, ծանր եւ թեթեւ, շատ եւ սակաւ ժամք եւ ժամանակ բաւանդակ են: Իսկ ուր ո՛չ ժամք եւ ո՛չ ժամանակք եւ ո՛չ չափք, ո՛չ կշիռ մերձեանայ յանբաւելի բնութիւնն, անդ ոչ նկարի փոքր եւ մեծ: Կամեցայ զՀայր մեծ ասել որպէս զծնաւդ եւ զպատճառ, այլ երկեայ նոյն ինքն ի Հաւրէ, զի մի տկար գսկիզբնն արարից եւ թշնամանեցից մեծարանաւքն, քանզի ո՛չ են փառք Հաւր, թէ որ յինքենէ են, փոքրագոյն են քան զնայ, քանզի այս տկարութիւն գործի ո՛չ կարել իւր Հաւասար որդի ծնանել կամ հոգի բղխիչ, այլ վայել էր նորա հրաշափառ զաւրութեանն, զի որ ի նորա բնութենէն ինքեան փառակից գոլով ճանաչին: Արդ, Հայր ոչ ծնունդ է եւ ոչ ելող եւ Որդի՝ ո՛չ ծնաւդ եւ ո՛չ ելող եւ Հոգին Սուրբ՝ ո՛չ ծնաւդ է եւ ո՛չ ծնունդ, այլ զելորութիւն ունի:

Յնծայ Հայր ընդ փառս Որդւոյ եւ զուարճանայ որդի ընդ պատիւ Հոգի[ւ]ոյն եւ փառաւորէ Հոգի զՀայր եւ զՈրդին, զի ի նոցունց էութենէ է առնու եւ նորա կերտէ զարարածս յորմէ ամենայն եղեւ յերկինս եւ յերկրի, երեւելիք եւ աներեւոյթք զգալիք իմանալիք մարմինք եւ անմարմինք: Արդ, զայս դաւանութիւն ՅԺԸ.իցն որ ի Նիկիայ եւ ՃԾ.իցն, որի ի Կոստանդնուպալիս եւ յՄ.իցն որ յԵփեսոս ընկալան հարք ի մեծէն Գրիգորէ եւ ի Սրբոյն Ռատակիսէ եւ յերջանկէն Սահակայ: Վասն ժողովրդեանն առնեմ, ինքն մեկնէ զբանն իւր. զի Աստուած ո՛չ հայի յիւր պատիւն որչափ ի մեր փրկութիւնս, զի յորժամ զինքն Հաւասար Աստուծոյ առնէր եւ

զմեղս թողոյր եւ նոքա հայհոյիչ եւ դիւահար կոչէին, զի շուրջ զնովաւ կային, զոյ Հաւր հաւասար եւ յարուցիչ մեռելոց ընկալցին: Զի հաւատասցեն, թէ դու առաքեցիր զիս, թէ Հաւր հակառակ գոյ զիս ասէք եւ հայհոյիչ, մի՛ լիցի գործակից եւ հակառակիս, զքեզ հայր կոչեմ ի գործակցութիւն եւ հաւատացելոցս ի հաստատութիւն եւ հաւատիցն ի յանդիմանութիւն, զի ընդ անբաւելի մեղաւք կապեալ են որ յանբաժանելի բնութիւն բաժին արկանեն ի մարդկանէ հայհոյին եւ յԱստուծոյ դատապարտին եւ ջնջին ի զպրութենէ կենացն յաւիտենից:

«Ձայս իբրեւ ասաց Յիսուս, ի ձայն բարձր աղաղակեաց» (Յովհ. ԺԱ. 43): Զի զամենեցուն զլսելիս եւ զտեսանելիս առ ինքն ձգեսցէ: Հեռի կաց ի գերեզմանէն երկոյտասանի կանգուն ոչ մերձեանալով ի մեռեալն՝ կատարելով զհրամանս աւրինացն: Փոխանակ ձեռինն զձայնն սաստկացոյց, ձայնն եմուտ գերեզմանն, կալաւ զձեռանէ որպէս հրեշտակն զվարսից Ամպակումայ մարգարէին (հմմտ. Ղան. ԺԴ. 35) ձայն Քրիստոսի աստուածային զաւրութեամբն ի ձեռաց բանսարկուին վերածեալ զհոգին կապելով ընդ լուծեալ մարմնոյն, ոչ ձեռաւք ստեղծանէ կենդանիս, որպէս ի սկզբանն, այլ սոսկ ձայնիւ եւ անուամբ կոչէ եւս սարսափմամբ երազապէս ելանէ: Եւ ձայնն եղեւ որոտումն երկնաւոր, զի ի մեռելոցս ոչ ազդէ զգայութիւն ի հնչումն ձայնից, զի նոցա ազդեաց յԱստուածային հրամանէ ձայնն ի լսելիքն իւրեանց, որք անդ կային եւ յայտնի երեւեսցի, թէ ի նորա հրամանէն եկն արտաքս մեռեալն: Դարձեալ ըստ մարդկան սովորութեան ի բացուստ կալով ձայնիւ կոչէ ընդելականաւն մատակարարէր, զի թէ մի հատն բուսանի վաղվաղակի, ապա եւ ամենեցուն է ակնկալութիւն յարութեան եւ հոտն ներսոյն դարձաւ ի հոտ անոյշութեան առ մեռեալն եւ ի դուրս եկեալ կենդանի:

«Ղազարէ՛ եկ արդարս» (Յովհ. ԺԱ. 43):

Բազում մեռեալք զնին ի գերեզմանի, բայց աստ միոյն պետք էին կոչելոյ արտաքս: Թէ առանց անուան ասացեալ էր, ո՞ գիտէր ի մեռելոցն, թէ ով է եւ զայր արտաքս, վասն այնորիկ անուամբ բարբառի՝ «Ղազար, եկ արդարս», բազում Ղազարք էին անդ, իսկ ակնարկումն Յիսուսի զմինն կոչեաց, որ Մարիամու եւ Մարթայի եղբայրդ ես, զոր ես սիրեմ, վասն որոյ եւ զիս աղաչանաւք



կոչեցին, առաջժամ դու միայն եկ եւ քեւ այլոցդ յոյս լիցի, թէ ոչ յանուանէ կոչէր զՂազար, զաւրութիւն ձայնին Քրիստոսի, զամենայն գերեզմանս քակէր: Ժամանակ է սերմանեաց եւ ժամանակ է հնձելոց (հմմտ. Ժող. Գ. 1-8): Դեռ սերմանին, եւ բոյսք բուսանին եւ պտուղք ատքանան, եւ Յիսուս ոչ այլոց անուամբ կոչէ զմեռեալն, որ գունակ եւ մարգարէքն յանուն Տեառն Աստուծոյ կամ առաքեալքն յանուն Յիսուսի Քրիստոսի, զի նոքա ծառայք եւ սատար ինքնազաւր իշխանական ձայնիւ տա հրաման՝ եկ արտաքս: Ուսուցին մարդիկ, թէ ոգին կենդանի է եւ անմահ եւ զգայական եւ ի մարմնոյ հոգւոց յոյժ հեռի: Աստանաւր լուծանէ աստուածաբար զմահու իշխանութիւն: Եւ զրմբռնեալսն ի նմանէ հոգւով եւ մարմնով վերածէ կենդանի ըստ զաւրութեան այնմ, որ ասաց՝ «հանցեն ջուրք գեռուն շնչոյն կենդանեաց» (տե՛ս Ծննդ. Ա. 20), որ ասաց եւ եղեն, նոյն ձայնատու եղեւ եւ գերեզմանն:

#### «Արտասուեաց Յիսուս»

Արտասուեաց Տէր ի վերայ Ղազարու, զի ցուցցէ, թէ ոչ կարէ յարուցանել զմեռեալն եւ իբրեւ կարծեցին նոքա այսպէս, յայտնեաց Տէր զծածուկ կատակութիւն նոցա: Արդ, եղեն արտասուք նորա իբր զանձրեւ եւ Ղազար իբրեւ եւ զցորեան, եւ գերեզմանն իբրեւ զերկիր, ետ Յիսուս զձայն իւր իբրեւ զորոտումն եւ խռովեցաւ մահ ի ձայնէ այնմիկ: Ոստեաւ Ղազար իբր զցորեան՝ ե՛լ մեռեալն եւ երկիր եպագ Տեառն իւրում կենարարի: Արդ, խայտառակեցաւ մահ եւ ազահութիւն իւր: Դարձեալ յետ չորք աւուր զի դարձոյց անդեն զմեռեալն, զի զիտասցեն եթէ դիւրին է յետ երից աւուրց թողուլ զնա, զոր բերան նորա ձայնիւ էհան զչորեքաւրեայն: Ծշմարիտ է խոստումն նորա, թէ ինքն յետ երից աւուրց ելանէ ի մեռելոց՝ կենդանի յարուցեալ ուրախարար զՄարիամ եւ զՄարթայ եւ խայտառակեաց զգոթսս եւ զազահութիւն նորա, զի ոչ կարէ զաւրել ի վերայ Քրիստոսի: Ասաց յետ երից աւուրց յառնեմ, զի թէ դժուարին թուի այս նոցա, հայեացին նոքա ընդ չորեքաւրեայն, որ յարեաւ: Ղազարու յարութիւնն չորեքաւրեա, զիւր երեքաւրեայ յարութիւնն հաւատարիմ առնէ, զի ի չորրորդ աւուրն հոգեղէն մասն ի հոգ զառնայ եւ ջուրն յաւիշկ եւ հուրն ի նիւթ հրոյ եւ աւզն ցնդի յաւզոյ բնութիւն եւ այսպէս չորք տարրն ի չորք աւրն լուծանի:

**ՄԱՍԲ** Դարձեալ զի ի լուել մարդոյն ի պատուիրանապահութենէն Աստուծոյ, լուէր եւ աստուածագործ հրաշք յերկրէ եւ մերկանայր մարդ յաստուածատուր փառացն եւ մեռաւ Ղազար յերկրային կենացս: Արդ, անդ Աստուած լուէր զթողուլ մեղացն, վասն ոչ պահելոյ զպատուիրանն, իսկ աստ վասն զաւրէնսն Աստուծոյ պահելոյ զՂազար ձայնիւ կենագործէր ի գերեզմանէն:

Եւ ել մեռեալն ոտիւք կապելովք եւ ձեռաւք երիզապնդաւք եւ երեսաւքն վարչամակ պատաւք:

**ՈՍ** Ո՛չ զարշեցոյց եւ ոչ զնացոյց ըստ սովորութեան մարդկան, զի կապեալ էր կապանաւք եւ պատեալ պատանաւք: Արդ, որպէս հրեշտակն զԱմբակում հացիւն եւ թանիւն եւ բոլոր կերակրովն կոռին տարաւ ի Բաբելոն, զի երագ է բանն Աստուծոյ քան զհրեշտակս երկնից եւ ըստ արագութեան առաւել հզաւր (հմմտ. Դան. ԺԴ. 32-33): Հրեշտակն առեալ զվարսիցն զբաւանդակ մարմինն տարաւ ընդ իւր (հմմտ. Դան. ԺԴ. 35): Եւ Յիսուս ձայնիւ միայն յական թաւթափել ա՛ծ զհոգին ի հեռաստանէ եւ միացոյց ընդ լուծեալ մարմնոյն եւ ընդոստոյց յանդընդային քնոյն առանց փոխելոյ եւ այլայլելոյ, ու կամք Տեառն կամեցան Ղազար վաղվաղակի անդ գտաւ եւ կտաւեղէն պատանն ոչ կարաց արգելուլ գտերունեան հրամանն: Լուծանէր զիւր կարգն կատարելով զհրամանս արարչին եւ մահ ծառայաբար հնազանդ էր Տեառն հրամանին:

**ԵՓ** Ասէ գնոսա Յիսուս. «Լուծէք զաւ եւ թողէք երթալ» (Յովհ. ԺԱ. 44): Լուծէք զդա դուք ինքնին որ կապեցէ՛ք զնա, որ պատեցիքդ քակեցէ՛ք եւ որ պատեցիքդ, կողոպտեցէ՛ք, զի ծանիջիք զգործս ձեռաց ձերոց:

**ՈՍ** Մի՛ զարշիք ոչ գոյ հոտ նեխոյ, մի՛ խորշիք ըստ աւրինացն, ոչ մեռեալ, այլ կենդանի է, տեսէ՛ք ձեր նշանաւքդ, ծանէրուք ձեռաւք ձերովք զոր պատեցէ՛ք, զխփեալ բերանդ բացէ՛ք եւ դուք եղերուք ընդ այլ վկայսն վասն մահու նորայ, ամենեքեան վայելեցէ՛ք ի յարութեանդ, զոր տեսեքդ, մի մրգով ճանաչի պտուղ բոլոր երկրին (հմմտ. Մարթ. ԺԲ 33, Լուկ. Զ. 44), մասնաւոր առ ժամայս եւ աւետիք առ յապայ: Ընդէ՛ր հրամայէ լուծանել պատողացն, զի անամաւթ էին եւ միշտ եղծանել ջանային զճշմարիտ նշանն: Վասն որոյ զձեռս եւ զհոտոտելիսն եւ զաչսն կացուցանէ նոցա զատախազ եւ վկայ:



**ՄԱՄԲ** ի նախնուձն ի բարերարութենէն լուէր Աստուած, վասն Ադամայ լուելոյ ի պատուիրանապահութենէն եւ յերկրորդումն վասն Ղազարու քրիստոսասիրութեանն նորոգէ յանշնչութենէն եւ ի գերեզմանէն յարուցանէ եւ ի մահասգեստ ծածկութից կտաւապատուութեանցն արձակէ այս աւր զառաջին մարդոյն կապանս անիծիցն լուծանէ եւ մահու դատապարտութիւն եւ զմեղացն առաւելութիւն ոչ բաւէ արգելուլ զհրաման Տեառն եւ յիւր աստուածախառն մարմինն զյանցանս մեր կորգէ եւ որպէս պարտաւոր փոխանակ յանցաւոր մարդոյն դատապարտի մահուամբ խաչի անպարտականն մահու Աստուծոյ բանն եւ անպարտն զպարտաւոր բնութիւնս մերկացուցանէ առաջի Հաւրն ամենակալի:

«Բագումք ի հրէիցն՝ որ եկեալ էին առ Մարեմանց, իբրեւ տեսին զոր արարն՝ հաւաքացին ի նա» (տեսն Յովհ. ԺԱ. 45):

Ոմանք Հաւատացին մեծասքանչ նշանացն, թէպէտ եւ յետոյ ուրացան որք զայլս սգաւորս եկեալ էին մխիթարել զանձինս անտրտում ուրախութեամբն մխիթարեցին եւ այլոցն աւետիս ի քաղաքն տարան:

«Ոմանք, - ասէ, - ի նոցանէ գնացին առ փարիսեցիս, եւ պարմեցին նոցա զոր արարն Յիսուս» (Յովհ. ԺԱ. 46):

Իսկ որպէս ոմանք ի դիւաց մոլեալք գնացին առ սադուկեցիսն եւ ասէին, թէ Հաւատացին բազումք արդ աճապարեցէք առ ի լուսնոցանել զնոքա սքանչ նշանացն զաւրութիւն: Հայր զայ ի հաճութիւն որդի աղաչող Հոգին Սուրբ բարեխաւս, յորժամ բոլոր պտուղ աշխարհիս բովանդակեսցին առանց մեր կոչել, Տէր բոլորիցս Հայրենի սկզբնատիպ փառաւք եւ զաւրութեամբ եւ արարող հոգւովն եւ բազմութեամբ հրեշտակաւքն ձայնիւ անձեռագործ փողովն յերկնից յերկիր եկեալ: Աթոռք անկանին, ատեանք ուղղին դպրութիւնք հրաչիցն բանին, ձայնք կենդանիք հնչին, երկինք գալարին, լուսաւորք թաւթափին, երկիր դողորդի, վեմք պատառին, գերեզմանք բանին, մեռեալք յառնեն, յայնժամ զՂազար ընդդէմ մեզ յարուցեալ տեսանի եւ վերինք եւ ներքինք միաբանին եւ խառնքն որոշին եւ համառաւտքն սահմանին, արդարոցն կողմն վերաբերին հանապազ ընդ Տեառն լինելով ի վերայ անոյշ աւդոց անմահից: Կակուղ եւ փափուկ գարշապարաւք անմահական մարդոց ի պարս հրեշտակաց միաւորեալ:

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՅԻ**

(Նորին հաւաքումն Երրորդ հապորի մեկնութեան Աւետարանի գլուխ ԺԱ.)

Բան. «Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս ի Բեթանիայ» (Յովհ. ԺԱ. 1):

Մեկնութիւն. Այս մետասան զլուխ է ըստ կարգի եւ առաջին ըստ հատորի, զոր ի վերայ այսմ բանի վեց իրս գիտելի է:

Առաջին. գիտելի է զկարգն, զի նախ եցոյց աւետարանիչս զոյ ի Քրիստոս զաւրութիւն կենդանարար, եւ զայն եցոյց ի բանէն Քրիստոսի, ըստ այնմ, որ ասաց. «Ես եմ դուռն եւ հովիւ եւ որ լսէ ինձ, տամ նոցա զկեանս» (հմմտ. Յովհ. Ժ. 9,11,27-28), իսկ աստ ցուցանէ զնոյն գործով նշանաց, որպէս յարոյց զՂազար ի գերեզմանէն, վասն այն ճառէ. «Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս» եւ այլն:

Երկրորդ. գիտելի է, զի որ ոք Հաւասարի Աստուծոյ զթութեամբ, Աստուած է, իսկ Քրիստոս Հաւասարի Աստուծոյ զթութեամբ, ապա ուրեմն Քրիստոս Աստուած է:

Եւ զթութիւն Քրիստոսի երեւի չորս կերպիւ. նախ՝ գալստեամբն ի Բեթանիայ վասն Ղազարու: Երկրորդ. Մարթայի եւ Մարիամու բանիւ, որպէս ասէին. «Տէր, եթէ աստ լնալ էիր, եղբայրն իմ չէր մեռեալ» (Յովհ. ԺԱ. 21): Երրորդ. վասն արտասուացն Քրիստոսի, որ ելաց ի վերայ Ղազարու (հմմտ. Յովհ. ԺԱ. 35): Չորրորդ. ընդունելութեամբ մահու վասն փրկութեան մարդկան ըստ մարգարէութեան Կայիափայ, որ ի զլուխս այս յիշէ:

Երրորդ. գիտելի է, զի աստ երեք իրք ճառի. նախ՝ Ղազարու հիւանդութիւն անբժշկելի: Երկրորդ. մահ նորա ստուգեալ ցուցանի, անդ. «Իբրեւ լուս, թէ հիւանդացեալ է» (տեսն Յովհ. ԺԱ. 6): Երրորդ. յարութիւն նորա ճառի, անդ՝ «Յիսուս իբրեւ տես գնա, զի լայր» (Յովհ. ԺԱ. 33): Դարձեալ՝ առաջին մասն յերկուս բաժանի, զի նախ հիւանդութիւն նորա ճառի, որպէս ասէ. «Էր ոմն հիւանդ Ղազարոս» (Յովհ. ԺԱ. 1): Երկրորդ. հիւանդութիւն նորա Քրիստոսի պատմի, անդ. «Առաքեցին առ նա քորքն նորա» (Յովհ. ԺԱ. 3):

**Թէ քանի «Եւ» կայ ի սուրբ Գիրս**

Չորրորդ. գիտելի է, զի եւ-ն ի Սուրբ Գիրս յերիս տեղուղ գնի. նախ ի սկիզբն բանի, ըստ այնմ. «Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր սոյնպէս» (Մատթ. Ա. 18): Երկրորդ. ի մէջն, ըստ այնմ. «Բարի առնէ Տէր բարեաց եւ այնոցիկ, ոյք [ուղիղ են սրտիւք]» (Մատթ. ՃԻԴ. 4):



Երրորդ. ի վերջոյ, ըստ այնմ. «Տէր թագաւոր յաւիտեանս յաւիտեանից եւ եւս» (Մաղմ. Թ. 16), եւ ամենայն ուրեք երկու դէմս նշանակէ, նոյնպէս «եւս» այս երկու դէմս նշանակէ, այսինքն՝ զհիւանդութեան, զի է, որ առողջանայ եւ է, որ մեռանի: Իսկ այս հիւանդութիւնս ոմն էր, այսինքն՝ առանձնակի յերկուցն, զի ոչ առողջանայ եւ ոչ մեռանի, որպէս այլք, մինչ ի կատարածի աւրն, այլ միջակ է երկուցն:

Հինգերորդ. գիտելի է ըստ այլաբանութեան, ոմն զքնութիւն մարդկան ասէ, զի առանձին է ի մէջ իմանալեաց եւ զգալեաց: Նիւանդ՝ զմեղացն, Ղազարոս՝ աւգնեալ, Բեթանիա՝ տուն սգոյ, Մարիամ՝ մխիթարել կամ լուսաւորել, Մարթա՝ տէրունի, Յիսուս՝ Փրկիչ: Այս մեկնաբանութեամբս իմանի, զի մարդկային բնութիւնս հիւանդացեալ էր եւ մեղաւք մեռեալ ի տան աշխարհիս սգոյ, եկն Փրկիչն եւ տէրունական գալստեամբն աւգնեաց մեզ, եւ մխիթարեաց, եւ լուսաւորեաց, եւ փրկեաց ի մահուանէ:

#### Վասն նեղութեան սրբոյն

Վեցերորդ. գիտելի է, զի ոմանք երկբային յիմարութեամբ, տեսանելով զսիրելիսն Քրիստոսի ի փորձանս եւ ի նեղութիւնս անկեալ, զոր լինի վասն հինգ պատճառի. նախ՝ զի կատարեսցի բանն Քրիստոսի, որ ասաց. «Երանի է ձեզ, յորժամ նախատեսցեն

եւ հալածեսցեն» (Կրն Մաղթ. Ե. 11) եւ թէ՛ «Դուք չէք յաշխարհէ» (հմմտ. Յովհ. ԺԷ. 16), վասն այսորիկ ոչ սիրեն զձեզ եւ այլն: Երկրորդ. որպէս պատերազմ ի վերայ ամուր դղեկի լինի եւ ոչ ի դիւր դաշտի, սոյնպէս սատանայ միշտ ընդ արիագոյնս պատերազմի, որք ամրացեալ են հաւատով եւ գործով: Երրորդ. թէ փոշետեսակ սխալանս իցէ մարդ գոլով, այնու մաքրեսցի, որպէս զարծաթ ի մէջ բովի: Չորրորդ. զի որ այլոց քարոզէ թողուլ զհեշտութիւն աշխարհիս, պարտ է եւ ինքն նոյնպիսի լինել: Հինգերորդ. զի զյոյսն հաստատուն ունիցի, թէ որպէս սիրելոյն Ղազարու պարգեւեաց կեանս, նոյնպէս եւ մեզ պարգեւեսցէ զկեանսն յաւիտենից:

Այսքան առ այս:

Ջտեղին Բեթանիա յիշէ վասն ստուգութեան պատմութեան.

Բան. «Ի գեղջէ Մարիամայ» (Յովհ. ԺԱ. 1):

Մեկնութիւն. Վասն երկու պատճառի զգեղն քերցն ասէ. նախ՝ ըստ Ոսկերբերանին. «Զի նոքա կենդանիք էին, պատշաճ էր նոցա քան մեռելոցն կոչել», իսկ այլք ասեն, թէ հարսնութեան պոռոյգ էր նոցա տուեալ, այսինքն՝ բաժինք փեսային: Դարձեալ՝ զայն ցուցանէ, թէ յայնմ դեղ բնակեալ կային երկոքին քորքն՝ Մարիամ եւ Մարթա, ուր հիւանդ կայր Ղազարոս՝ եղբայր նոցա, եւ չէր ըստ հասարակ հիւանդաց, այլ անբուժելի ախտիւ ըմբռնեալ:

#### Վասն մարիամանց եւ աւծանող կանանց

Բան. «Այս այն Մարիամ էր, որ ամ զՏէրն խղով եւ ջնջեաց գոբս նորա հերով խրով» (Յովհ. ԺԱ. 2):

Մեկնութիւն. Բազում կանայք կոչէին Մարիամ, վասն այն զանազանէ զսա յայլոցն, զի վեց Մարիամ յիշէ Աւետարանն. նախ՝ Աստուածածին կոյսն: Երկրորդ. Մարիամ Կղէովպայն, որ էր մաւրաքոյր Տիրամաւրն: Երրորդ. Մարիամ Յաճիբայ փոքրիկ անն եւ Սիմոնի մայրն, որ էր կինն Յովսէփայ: Չորրորդ. քոյրն Ղազարու: Հինգերորդ եւ վեցերորդ՝ Մարիամ մագդաղենացիքն:

Իսկ աւծանելն զՔրիստոս չորս ինչ ցուցանէ. նախ՝ զկատարեալ սէրն, որ ունէր առ Քրիստոս: Երկրորդ. անհամեմատ երախտեացն շնորհակալ լինէր: Երրորդ. խոնարհութեամբ երկիր պագանէր՝ զգլուխն եղեալ ի վերայ զարշապարին: Չորրորդ. զի քան զամենայն արտաքին հանդերձս պատուական էր հերն ի գլխոյն աճեալ:

Բայց տարակոյս է ի մէջ ամենայն ազգաց վարդապետաց, վասն աւծանող կանանց չորս կերպիւ. նախ՝ զի ոմանք յառաջին վարդապետացն երեքն ասեն աւծանող Քրիստոսի՝ այլ եւ այլ կանայս. այլ զՄատթէոսին եւ այլ՝ զՄարկոսին, քանզի նոքա երկու աւուրք յառաջ ասացին քան զՋատիկն լինել, եւ այլ զՅոհաննուն, զի վեց աւուրք յառաջ էր, եւ այլ զՂուկասուն, վասն զի յառաջ էր ժամանակաւ եւ կին պոռնիկ:

Երկրորդ. ոմանք ասեն, որպէս Ոսկերբերանն. «Երկու, - ասեն, - լինել զկանայսն, այլ զերեք աւետարանչացն, որ ի տունն Սիմոնի, եւ այլ զՅոհաննուն ասէ, զի սա կին պարկեշտ, եւ այն՝ մեղաւոր»:

Երրորդ. ոմանք, որպէս Իգնատիոս վարդապետն Հայոց ազգիս մեր, ընդգիմանայ այսմ կերպիւ ինչ. «Զի այն, որ Մատթէոս եւ Մարկոս եւ Յոհաննէս ասեն, մի՛ է, - ասէ, - վասն ժամանակին եւ խաւսից երիցն, եւ այլ ասէ զՂուկասուն վասն չորից. նախ՝ զի ի



տան փարիսեցւոյն, երկրորդ՝ կին պոռնիկ, երրորդ՝ ոչ մերձ ի չար-  
չարանս, չորրորդ՝ ոմանք, որպէս լատինացիք, «մի» ասեն աւծա-  
նող, զոր չորեքին յիշեն, բայց երկու անգամ. մին այն, զոր Ղու-  
կաս յիշէ եւ այժմ ասեն, թէ Յոհան ցոյց տայ աւծմանն առաջնոյ,  
որ մեղաւքն թողաւ եւ երկու անգամ էաւծ նոյն Մարիամ՝ քոյրն  
Ղազարու, մերձ ի չարչարանս շնորհամատոյց լինէր վասն յարու-  
թեան եղբաւրն»:

Բան. «Առաքեցին առ նա քորքն» (Յովհ. ԺԱ. 3):

Մեկնութիւն. Եւ ընդէ՞ր ոչ ինքեանք զնացին, որպէս Հարիւրա-  
պետն եւ թագաւորացն:

Ասեմք վասն երեք պատճառի. նախ՝ վասն ջերմեռանդ ընդունե-  
լութեան: Երկրորդ. զի ոչ էր աւրէն սգաւոր կանանց ի դուրս ելա-  
նել, զի թէպէտ չէր մեռեալ, այլ ի մահ էր խոնարհեալ: Երրորդ. զի  
ոչ էին ամենեւին կատարեալ ի հաւատս, որպէս եւ ոչ

առաքեալքն նախ քան զիջումն Հոգւոյն Արքայ:

Բան. «Չոր դուն սիրէիր, հիւանդացեալ է» (Յովհ. ԺԱ. 3):

Մեկնութիւն. Վասն է՞ր ոչ աղաչեն գալ Քրիստոսի:

Ասեմք վասն երեք պատճառի. նախ՝ վասն մեծութեան պատ-  
ւոյն, ոչ հարկիւ ասեն, թէ՛ եկ, այլ զգացուցանեն: Երկրորդ. զի մի  
եւ նոքա լինիցին պատճառք յարութեան, այլ կամքն Քրիստոսի:  
Երրորդ պատճառ. զի ոչ է պարտ զբարեկամն աղաչել, այլ միայն  
յուշ ածել զբանն: Եւ տե՛ս զիմաստութիւն նոցա, զի սիրովն Քրիս-  
տոսի զնա ի գութ շարժեն:

### Վասն հիւանդութեան

Եւ աստ լինի չորս հարց. առաջին՝ զի՞նչ է հիւանդութիւն:

Պատասխանի. Սահման զնեն վարդապետք, եթէ հիւանդու-  
թիւն է անչափութիւն տարբերաց: Եւ յայտ է, որպէս չափաւորն  
առողջութիւն է, նոյնպէս անչափն՝ հիւանդութիւն: Դարձեալ՝ հի-  
ւանդութիւն է նուազութիւն առողջութեան, որպէս առողջութիւն  
նուազութիւն է հիւանդութեան: Եւ դարձեալ՝ հիւանդութիւն է  
փոփոխումն որակութեան, եւ այս նոյն է, զի առողջութիւն եւ հի-  
ւանդութիւն որակութիւնք են փոփոխականք:

Երկրորդ հարց. Քանի՞ է յեղանակ հիւանդութեան:

Պատասխանի. Կրկին, այսինքն՝ Հոգեւոր եւ մարմնաւոր: Հոգե-  
ւոր, որպէս մեղք, զի ասէ Դաւիթ. «Ողորմեա՛ ինձ Տէր, զի հիւանդ

եմ ես» (Մաղմ. Զ. 3), եւ մարմնաւոր ցաւք մարմնոյն զանազան, որ-  
պէս ցուցաւ ի մեկնութիւն Մատթէոսի երկրորդ հատորն երրորդ  
համարն:

Երրորդ հարց. Զի՞նչ է պատճառ հիւանդութեան:

Պատասխանի. Չորս ինչ. նախ՝ ներքին խառնուած որակացն՝  
յաւելուած եւ պակասութիւն: Երկրորդ. արտաքին տարերց ստա-  
հակութիւն: Երրորդ. յղփութիւն կերակրոց եւ կամ նուազութիւն:  
Չորրորդ. նախախնամութիւն Աստուծոյ, որ տայ ոմանց հիւան-  
դութիւն:

Չորրորդ հարց. Վասն է՞ր նախ հիւանդութիւն է եւ ապա մահ:

Պատասխանի. Վասն չորս պատճառի. նախ՝ զի հիւանդութիւն է  
ի մէջ մահու եւ կենաց, որպէս կամուրջն ի վերայ եզերաց գետոյն:  
Երկրորդ. զի հիւանդութիւն է նշան եւ կարապետ մահու, զի պատ-  
րաստեսցուք զմեղ, որպէս ալիքն ծերութեան է նշան եւ ձիւնն՝  
ձմեռան: Երրորդ. հիւանդութիւն ի ներքս եմուտ ընդ մեղացն եւ է  
առհաւատչեայ տանջանաց: Չորրորդ. հիւանդութիւն զառողջու-  
թիւն քակտէ, եւ մահն՝ զկեանքն, զի որոշման Հոգւոյն թմրութիւն  
առնէ:

Ապա զկնի ճառէ զպատասխանին Քրիստոսի:

Բան. «Երբև լուս Յիսուս, ասէ. «Այն հիւանդութիւն չէ ի մահ»» (Յովհ. ԺԱ. 4):

Մեկնութիւն. Քրիստոս ասաց զայս առ այրն, որ առաքեալ էին  
եւ միջնորդութեամբ նորա ասացառաքողացն զնա: Եւ վասն այսմ  
բանի ժպրհեցան ոմանք, թէ Ղազարոս ոչ մեռաւ:

Եւ չորս է իմացումն բանիս. նախ՝ պարտ է իմանալ, որ ասէ. «Այն  
հիւանդութիւն չէ ի մահ», այսինքն՝ ոչ է ի մահ, որ մնայ մինչ ի հասա-  
րակաց յարութիւն, այլ վերաբերի մինչ ի սքանչելի յարութիւն:

Երկրորդ. որպէս վասն կուրին ասաց. «Ոչ դորա եւ ոչ հար եւ մար  
լիւրոյ վնաս է, այլ վասն փառացն Աստուծոյ» (Կրն Յովհ. Թ. 3), նոյնպէս եւ  
աստ ասէ մահն Ղազարու վասն փառացն Աստուծոյ է՝ Հաւր եւ  
Որդւոյ նորա:

Երրորդ. ասէ Ոսկերեբանն. «Զի՞ ոչ ցուցանէ զպատճառ հիւան-  
դութեան, այլ պատահումն, զի Քրիստոս ոչ հիւանդացոյց զնա, զի  
յետոյ յարուցէ, այլ ի բնական ախտիցն հիւանդացաւ եւ մեռաւ,  
իսկ Քրիստոս զհիւանդութիւն զայն ի փառս Աստուծոյ կարգեաց  
յարութեամբն»:



Չորրորդ. ասեն ոմանք, թէ Հիւանդութիւն այն կրկին կարգ ունէր. մին բնական, ըստ ինքեան յատուկ պատճառաւն, եւ այնպէս կարգեալ էր առ ի մահ, եւ միւս սահման ունէր արտաքոյ բնութեան կարգի՝ ի թոյլ տալոյ կամացն Աստուծոյ առ ի յայտնել զկարողութիւն եւ զփառսն Աստուծոյ: Եւ կամք աստ ոչ ասեմ զպատճառ ներգործական կամացն, այլ զթոյլտուութեան կամսն, քանզի թոյլ ետ նմա Հիւանդանալ եւ մեռանիլ:

Դարձեալ՝ որպէս ասէ մեկնիչդ. վասն փառացն Աստուծոյ չորս իմն ցուցանէ. նախ՝ զՎայր ասէ եւ ապա զՈրդի (հմմտ. Յովհ. ԺԱ. 4), վասն Համոզելոյ զչար նախանձ հրէիցն, որք հակառակ կարծէին, որպէս եւ իգերեզմանն նախ աղաւթեաց առ Հայր եւ ապա յարոյց (հմմտ. Յովհ. ԺԱ. 41-42): Երկրորդ. զի գործակից եւ փառակից Հաւր ցուցանէ զՈրդին: Երրորդ. զի վասն յարութեան Համբաւոյ ծերքն եւ տղայքն աւրհնութիւնս երգէին: Չորրորդ. որպէս ի խաչին եղեն մեծամեծ սքանչելիք վկայք Աստուածութեան Քրիստոսի, նոյնպէս մի ի մեծ սքանչելեացն էր, այո՛, ի վկայութիւն փառացն Աստուծոյ:

Բան. «Եւ սիրէր Յիսուս զՄարիամ եւ զՄարթայ» (Յովհ. ԺԱ. 5):

Մեկնութիւն. Ըստ Ոսկերեբանին, զի փոյթ էին, այսինքն՝ առաքինիք եւ ջերմ ի սէրն Քրիստոսի, յաւրինակ, զի որք սիրեն զՔրիստոս, սիրին եւ նոքա ի Քրիստոսէ, որպէս ասէ Սողոմոն. «Ես, որք սիրենն զիս, սիրեմ» (տէն Առակ. Ը. 17), իսկ այլք ասեն, թէ Հայր սոցա դահճապետ էր եւ վասն փախստեայ կալանաւորի ումեմն թագաւորն զամենայն ինչս նորա յափշտակեաց, իսկ Հայրն առեալ զնոսա զնաց յԵգիպտոս ի քաղաք մի Լիկոպալիս անուն:

Նոյն եւ Յովսէփ եւ Մարիամ Հանդերձ մանկամբն փախեալ ի Հերովդէէ անդ բնակեցան ի միասին եւ ընդ ելք էին եւ սննդակից միմեանց:

Բան. «Իբրև լուս, թէ հիւանդացեալ է» (Յովհ. ԺԱ. 6):

Մեկնութիւն. Յեկելոցն լուսաւ:

Բան. «Ջրեղի կալա [անդէն], ուր էրն» (Յովհ. ԺԱ. 6):

Մեկնութիւն. Յայն կոյս Յորդանանու էր, ուր զառաջինն մկրտէր Յովհաննէս: Եւ յամեաց երկու աւր. նախ՝ զի ցուցցէ, թէ կամաւ եւ գիտութեամբ յամեաց: Երկրորդ. զի Համբաւեսցի մահ նորա, թէ ստուգապէս մեռաւ եւ թաղեցաւ: Երրորդ. զի մի ուրասցին հրէայքն եւ կամ կախարդութեամբ կարծեսցեն: Չորրորդ. զի չորեքաւրեայ լիցի յարութիւն:

Չկնի ճառէ զՂազարու մահուն զյայտնութիւն:

Բան. «Ապա յետ այնորիկ ասէ ցնոսա» (Յովհ. ԺԱ. 7):

Մեկնութիւն. Աստ երեք իր ցուցանէ. նախ՝ Քրիստոս զկամս իւր յայտնէ երթալոյ ի Հրէաստան: Երկրորդ. զպատճառն ասէ, անդ. «Չայս իբրև ասաց» (Յովհ. ԺԱ. 11): Երրորդ. ի տեղին Հասանէ, անդ. «Եկն Յիսուս, եգիպ զնա» (Յովհ. ԺԱ. 17): Վասն առաջնոյն ասէ. «Ապա յետ այնորիկ» (Յովհ. ԺԱ. 7), այսինքն՝ զկնի երկուց աւուրցն:

Բան. «Եկայք երթիցուք [միսանգամ] ի Նրէաստան» (Յովհ. ԺԱ. 7):

Մեկնութիւն. Գիտելի է, զի չորս բանիւ կամի Քրիստոս զերկիւղ աշակերտացն ցուցանել, այլ եւ զկասկածն բառնալ ի նոցանէ. նախ՝ որ ասէ. «Երթիցուք ի Նրէաստան», երկրորդ. «Որ զնայ ի քունջեան» (հմմտ. Յովհ. ԺԱ. 9), երրորդ. «Ղազարոս ննջեաց» (հմմտ. Յովհ. ԺԱ. 11), չորրորդ. «Ղազարոս մեռաւ, եւ ես ուրախ եմ [վասն ձեր]» (Յովհ. ԺԱ. 15):

Եւ զառաջինն ասէ. «Եկայք երթիցուք ի Նրէաստան» (տէն Յովհ. ԺԱ. 7):

Հարց. Վասն է՞ր այժմ զտեղին ասէ, զի ոչ ասէր յամենայն ժամ, ուր եւ երթային:

Պատասխանի. Վասն չորից. նախ՝ զի մի յափշեալ ինչ կարծեսցեն զՔրիստոսէ վասն վաղվաղակի դառնալոյն անդրէն, այլ զպատճառն իմասցին: Երկրորդ. զի զերկիւղ նոցա փարատեսցէ, զի որ մահացելոյն կեանս տամ, կարող եմ զկենդանիքս ի բունութենէ հրէիցն զերծուցանել: Երրորդ. զոր դուք կարծէք քարկոծող ինձ, նոքա լինելոց են քարոզող ինձ եւ վկայ՝ աւետարանչիս, թէ՛ «Բագումք հաւարացին ի նա» (Յովհ. Բ 23): Չորրորդ. յիշէ զՀրէաստան քան զԲեթանիայ, զի Հաստատուն եւ արի կազմեսցէ զնոսա, զի ասեն վարդապետք, թէ փոքր ինչ վնասեն որոգայթք յառաջադիտակ լեալք:

Ապա յայտնեն աշակերտքն զերկիւղն իւրեանց.

Բան. «Այժմ ես խնդրէիմ զքեզ [իրեայքն] քարկոծ առնել» (Յովհ. ԺԱ. 8):

Մեկնութիւն. Ասեն զայս վասն կասկածանաց եւ երկիւղի, իբր թէ երթալ ի Հրէաստան ոչ է բարւոք Քեզ եւ մեզ, եւ յիշեն զքարկոծումն, որ անցեալ ճառին ասացաւ, թէ՛ «Դու մարդ ես եւ զանձն քո Աստուած [առնես]» (Յովհ. Ժ. 33): Դարձեալ՝ բառնայ զերկիւղ նոցա:

Բան. «Ընդ երկուրսսան ժամ է յաւոր» (Յովհ. ԺԱ. 9):

Մեկնութիւն. Նախ ասէ. «Թէպէտ յամենայն ժամ կամէին զիս քարկոծ առնել, սակայն այժմ ոչ առնեն, զի ըստ փոփոխման ժամանակի կարէ փոփոխիլ մարդկային կամք»: Երկրորդ. ասէ, զի մի



երկիցեն, որպէս գիշերային ժամն լոյսն պակասէ եւ որոգայթն ոչ տեսանի, վասն այն երկնչի, իսկ տիւն դիւրին է տեսանել զորոգայթն եւ զգուշանալ, նոյնպէս՝ «Լոյս եմ աշխարհի (հմմտ. Յովհ. Ը. 12), ոչ է պարտ ձեզ երկնչել, որովհետեւ ընդ իս կայք», - որպէս ասէ:

Բան. «Եթէ որ գնայ ի քուրնջեան, ոչ գայթակղի» (Յովհ. ԺԱ. 9):

Մեկնութիւն. Այսինքն՝ ո՛չ գթի, ո՛չ վնասի եւ ո՛չ երկնչի: Սուրբ Գիրք զՔրիստոս արեգակ արգարութեան կոչեն, զի որպէս զգալի արեգակնս մերձ լինել տիւ առնէ, սոյնպէս գալուստն

Քրիստոսի յաշխարհս գտիւ շնորհաց արար, եւ առաքեալքն ի լոյս շնորհացն ընթանային հաւատով եւ վարուք, վասն այն ոչ է պարտ երկնչել: Տե՛ս, զի լոյսն ի Քրիստոսէ առ մեզ ճառագայթեալ հաւատքն է եւ սուրբ վարքն:

Բան. «Եւ որ գնայ ի գիշերի, գայթակղի» (Յովհ. ԺԱ. 10):

Մեկնութիւն. Նախ քան զգալն Քրիստոսի խաւար մեղաց էր եւ անհաւատութեան, եւ այժմ որք չունին զհաւատն Քրիստոսի, ի խաւարի են: Աստուտ ցուցանէ Քրիստոս՝ որքան ինքն յաշխարհի էր, աշակերտացն ոչ լինէր մեծ հալածումն, բայց յետոյ լինելոց էր, եւ յայտ է, յորժամ Քրիստոս ըմբռնեցաւ, զաշակերտքն փրկեաց՝ ասելով. «Թէ զիս խնդրէք, թոյլ քուք դոցա երթալ» (տե՛ս Յովհ. ԺԸ. 8), բայց զկնի մահուանն Քրիստոսի միշտ ի հալածանս կացին ի հրէից եւ ի հեթանոսաց, որպէս երկոքին Յակոբոսքն սպանին եւ այլքն ցրուեցան:

Հարց. Ընդէ՞ր յիշէ Քրիստոս երկոտասան ժամ աւուրս, զի բաւական էր ասել՝ մի՛ երկնչիք, այժմ տիւ է:

Պատասխանի. Վասն չորս պատճառի. նախ՝ աւր կոչէ զինքն եւ ժամք՝ զերկոտասան առաքեալքն, զի նոքաւ լուսաւորեաց զմեզ:

Երկրորդ. միտք, որպէս աւրն ոչ մթանայ մինչեւ կատարին երկոտասան ժամքն, սոյնպէս եւ ես ոչ վերանամ յաշխարհէ մահուամբ մինչ ի կէտ ժամանակին, որ հաստատեալ է եւ դեռեւս կայ ժամ մի կամ կէս, որպէս աւուրն, թէպէտ երիկուն կոչի:

Երրորդ. միտք ցուցանէ, թէ ամենայն ընթացք եկեղեցւոյ երկոտասան թուով կատարի:

Եւ այս վեց կերպիւ է. նախ՝ երկոտասանք էին առաքեալքն: Երկրորդ. երկոտասան ազգ հաւատացելոց: Երրորդ. երկոտասան աստիճանք հաւատոյն: Չորրորդ. երկոտասան գիր է աստուածային առաքինութեանց, այսինքն՝ հաւատ, յոյս, սէր: Հինգերորդ.

երկոտասան գիր երեք անձանցն, որ է՝ Հայր, Որդի, Հոգի: Վեցերորդ. երկոտասան գիր միոյ բնութեան, այսինքն՝ Երրորդութիւն:

Չորրորդ միտք, որպէս ասէ մեկնիչդ, զի աւրն պատկեր է տարւոյն վեց կերպիւ. նախ՝ զի աւր եւ տարի յարեգակնէ կատարի, որպէս ամիս՝ ի լուսնէ, եւ շաբաթ՝ ի մոլորակաց: Երկրորդ. որպէս աւրն չորս ժամք փոխին, եւ տարին՝ չորս եղանակ: Երրորդ. որպէս աւրն՝ երկոտասան ժամք, եւ տարին՝ երկոտասան ամիսք: Չորրորդ. որպէս ժամն երեսուն մասն է, եւ ամիսն՝ երեսուն աւր: Հինգերորդ. որպէս աւրն երեք հարիւր վաթսուհինգ մասն է, եւ տարին երեք հարիւր վաթսուհինգ աւր է: Վեցերորդ. որպէս աւրն թէպէտ յաւելու եւ նուազէ, այլ բոլոր սահմանն երկոտասան ժամ է, սոյնպէս եւ տարին թէպէտ շարժի, այլ բոլոր սահմանն երկոտասան ամիս է առանց յաւելուածոյ եւ պակասութեան, եւ դիւրին է այս, որ ոք կամի առ Քրիստոս տեսանել խորհրդաբար:

Արդ, յորժամ եբարձ զպատճառ երկիւղի աշակերտացն, այժմ ասէ զպատճառ երթալոյն ի Հրէաստան վասն յարուցանելոյ զՂազարոս:

Բան. «Ղազարոս՝ բարեկամ մեր, ննջեաց» (Յովհ. ԺԱ. 11):

Մեկնութիւն. Չորս իր ցուցանէ. նախ՝ զերկիւղն բառնայ յաշակերտացն՝ ասելով. «Ո՛չ յերուսաղէմ եւ ո՛չ ի Հրէաստան երթամ, այլ ի Բեթանիայ, եւ ոչ ի տրամարանել, այլ ի կեցուցանել»:

Երկրորդ. բարեկամ ասէ զՂազար իբրեւ եգական սիրեցեալ եւ սիրող, ապա հարկ է գնալն:

Երրորդ. զայս ասաց յառաջագոյն, զի յորժամ յարուցէ, իմասցին, թէ գիտէր կանխաւ:

Չորրորդ. զմահն Ղազարու նինջ կոչէ վասն երեք պատճառի. նախ՝ զի շուտ յառնելոց էր: Երկրորդ. զարթոցից ասէ, զի դիւրին է Քրիստոսի մեռեալ մի յարուցանել, քան մարդոյ զայլ ոմն ի քնոյ զարթուցանել: Երրորդ պատճառ. զի հոմանունք են, զի սոյնպէս սահմանին սոքա. «Մահ է քուն յաւիտենական, եւ քուն է մահ ժամանակեայ: Բայց առաքեալքն ոչ մնացին առանց երկիւղի եւ ոչ կամէին, թէ Քրիստոս անդ երթայ, որպէս ասեն:

Բան. «Տէ՛ր, եթէ ննջեաց, ապա ապրի» (Յովհ. ԺԱ. 12):

Մեկնութիւն. Ապա կամ նախդիր բառ է կամ «յետոյ» լաի:

Եւ չորս է իմացումն. նախ՝ եթէ ննջեաց, ապա զարթչի եւ յառնէ, եւ ոչ է մեզ ճեպել անդ վասն զարթուցանելոյ զնա: Եւ զայս



ասէին, զի կարճեսցեն զգնալն: Երկրորդ. ըստ Ոսկէբերանին քուն հիւանդաց նշան է մարմնոյ առողջութեան նոցա եւ ոչ է պարտ երթալ եւ զարթուցանել զնա: Երրորդ. մարգարէաբար ասեն, թէ ննջեաց ի մահ, ապրի յարութեամբն: Չորրորդ. ի հասարակ յարութիւն է, զի նախ մեռանին եւ ապա յառնեն, որպէս ասէ Պաւղոս յառաջին Կորնթացիս. «Դու զոր սերմանես, ոչ բուսանի, եթէ ոչ նախ մեռանի» (Կորնթ. ԺԵ. 36):

Բան. «Նոցա այսպէս թուցաւ, թէ վասն ննջելոյ քնոյ ասէ» (Յովհ. ԺԱ. 13):

Մեկնութիւն. Ոսկէբերանն ասէ. «Մեծ յիմարութիւն է կարծել, թէ զայսքան ճանապարհս տանի վասն ի քնոյ զարթուցանելոյ զօմն», այլ ոմանք ասեն, թէ առակ իմացան զբանն Քրիստոսի, զի սովոր էր առակաւ խաւսիլ, վասն այն ոչ գիտացին, թէ որպիսի՞ մտաւք ասէր, զի զարթուցից զնա: Իսկ այլք ասեն, զի նինջս զայս թմբութիւն կարծեցին, որպէս յաւուրս Երեմիայի գերութեամբն Իսրայէլի, եւ որպէս յետոյ մանկանցն Եփեսոսի: Բայց մեք ասեմք, թէ թանձրամիտք էին յայնժամ առաքեալքն եւ յոյժ երկնչէին, վասն որոյ թիւր իմացան զբանն Քրիստոսի: Զկնի յայտնապէս ցուցանէ զմեռանելն Ղազարու:

Բան. «Ղազարոս մեռաւ, եւ ես ուրախ եմ վասն ձեր» (Յովհ. ԺԱ. 15):

Մեկնութիւն. Եւ այս եւս զերկիւղն նոցա բառնայ, որպէս թէ՛ դուք մի՛ երկնչիք, երթամք անդ յարուցանել զնա: Եւ կրկին է ուրախութիւն աստ. նախ՝ ուրախ էր ի մահն Ղազարու ոչ ըստ ինքեան, այլ վասն առաքելոցն, զի հաստատեսցին ի հաւատս: Երկրորդ. ուրախ էր, զի չէր անդ, նախ՝ զի մի կարծեսցեն առ աշաւք եւ խաբէութեամբ ինչ լինել: Երրորդ. զի թէ անդ էր լեալ, ոչ էր մահացեալ Ղազար եւ ոչ յարուցեալ, զի անպատշաճ էր մերձ յաղբերն կենաց իշխել մահու: Եւ չէր անդ, զմարմնոյն ասէ, այլ Աստուածութեամբն յամենայն տեղիս է Քրիստոս: Տե՛ս, զի յորժամ զնինջն յիշեաց, ասաց, թէ զարթուցանեմ, իսկ յորժամ ասաց, թէ մեռաւ, ո՛չ ասաց, թէ յարուցանեմ՝ աւրինակ տալով, զի մի նախքան զգործն մեծարանեսցուք:

Այժմ ճառէ զպատասխանին միոյ առաքելոյն:

Բան. «Ասէ Թովմաս՝ անուանեալն երկուորեակ» (Յովհ. ԺԱ. 16):

Մեկնութիւն. Այսինքն՝ երկու եղբարք ի միասին էին ծնեալք՝ Թովմաս եւ զՓիլիպպոս ասեն:

Բան. «Ան եկայք» (Յովհ. ԺԱ. 16):

Մեկնութիւն. «Ան» բառն երբեմն նախդիր է, որ ոչինչ նշանակէ, որպէս աստ, զի բառ է երկրի, որպէս սերաստացիք «կա՛ճ» ասեն եւ Կարնոյ քաղաքացիքն «տի՛», արճիշեցիք՝ «անէ՛», իսկ բզնունիք, որ է խլաթցիք, «ա՛ւն» ասեն ամենայն բանի, իսկ երբեմն մի լսի աւնն, որպէս՝ ա՛ւն եւ ա՛ւն արասցէ ինձ Տէր, այսինքն՝ մի՛ եւ մի՛:

Բան. «Եկայք, զի եւ մեր ընդ նմա մեռուք» (Յովհ. ԺԱ. 16):

Մեկնութիւն. Այսինքն՝ ընդ Ղազարու կամ ընդ Քրիստոսի: Ըստ Ոսկէբերանին երկմտութեան եւ թերութեան է խաւսք, իբր թէ Ղազար մեռաւ, զմեզ այլ տայ սպանանել հրէիցն: Իսկ ոմանք ասեն, թէ ակնառութեան է բանս, իբր թէ յորդորէ զաշակերտակիցսն ի սոյն, որպէս ասել. «Լաւ է մեզ ընդ Քրիստոսի մեռանել, քան առանց նորա ապրել»: Այլ Ոսկէբերանին է ճշմարիտ. նախ՝ զի երկիւղն, զոր ունէին առաքեալքն, որ ասէին. «Ռաբբի, այժմ ես խնդրեմք [հրեայքն] զքեզ քարկոծ առնել» (Յովհ. ԺԱ. 8), դեռեւս չէր բարձեալ ի սրտէն Թովմայի:

Երկրորդ. զի եւ Թովմաս զյարութիւն Քրիստոսի դժուար հաւատաց, քան զայլ առաքեալսն եւ համարձակութիւն էր այս նմա. նախ՝ զի ընդ նմա միայն չասաց Քրիստոս: Երկրորդ. զի այլ ծերագոյն եւ սիրելի աշակերտք էին, յառաջեաց քան զնոսս:

Հարց. Ապա ընդէ՞ր ոչ յանդիմանեաց Քրիստոս:

Պատասխանի. Նախ՝ զի առաջին վտանգն հրաւիրէր երթալ, թէպէտ վերջինն երկիւղի էր: Երկրորդ. զի յետոյ քան զամենեսեան գերագոյն լինելոց էր: Եւ տե՛ս զմեծ գաւրութիւն խաչին, զի որ այժմ ընդ Քրիստոսի ի Բեթանիայ երկնչի երթալ, յետ խաչին յամենայն տեղիս միայն ընթանայր քարոզել զՔրիստոս ի մէջ սպանողացն:

#### Վասն չորր ատուրն

Բան. «Եկն Յիսուս. եզիպ գնա չորեքարեայ ի [զերեզմանի]» (Յովհ. ԺԱ. 17):

Մեկնութիւն. Եւ զի ասացաւ ի վերոյ, եթէ զթութեամբն ցուցանի, զի Քրիստոս Աստուած է: Եւ է առաջին զթութիւն այս, որ վասն Ղազարու եկն ի Բեթանիայ: Յորժամ ասէ եկն, ո՛չ ի գերեզմանն դալ ասէ եւ ո՛չ ի Բեթանիայ, այլ մերձ եղեւ: Եւ յորժամ ասէ՛ եզիպ, ո՛չ եթէ չոգաւ ի գերեզմանն, այլ յայլոց պատմութենէ լուաւ, թէ չորք ար է, զի մեռաւ, թէպէտ այլ կերպիւ զսոյն գիտէր:

Եւ աստ լինի կրկին հարց.

Հարց առաջին. Թէ որպէ՞ս է չորեքարեայ:



Պատասխանի. նախ՝ ոմանք ասեն, թէ սոյնպէս թուին չորք աւր, յորժամ հրաւիրակքն եկին առ Քրիստոս երկու աւր անդ մնացին եւ զկնի արձակելոյն զնոսա երկուս եւս աւրս անդէն մնաց: Եւ այս սուտ է եւ ընդդէմ Աւետարանին, զի թէ սոյնպէս էր, պարտ էր ասել, թէ չորս աւր գտեղի էառ Յիսուս: Երկրորդ. ոմանք ասեն, որպէս մեկնիչդ, թէ երկու աւր անդէն մնաց ի վերայ մահուանն Ղազարու եւ երկաւրեայ ճանապարհն, եւ յորժամ եկն, չորեքաւրեայ էր: Երրորդ. ոմանք ասեն, թէ այրն, որ առաքեցին ի տանէն, յորժամ զմին մասն աւուրն կատարեաց, մեռաւ Ղազար, եւ զկնի այնմ Քրիստոս երկու աւր եկաց ի տեղին, ուր կայր եւ ապա ի չորրորդ աւրն գնաց ի Բեթանիայ: Թէ կատարեալ էր աւրն եւ թէ յեւթներորդ ժամն եհաս եւ յարոյց, վասն այն ի Ղազարու տաւնին յեւթներորդ ժամ աւուրն Պատարագ մատչի, զի ի նմին ժամու յարոյց զՂազար: Եւ պատշաճ էր մեռանելն Ղազարու նախքան զհասանել հրաւիրակին առ Քրիստոս եւ յառաջ քան զպատմելն զհիւանդութիւն Ղազարու, զի թէ Քրիստոս լուեալ էր զհիւանդութիւն Ղազարու եւ զաղաչանս քերցն, կարէին ասել անկարող կամ անգուժ զՔրիստոս, թէ չէր գնացեալ մինչ կենդանին էր Ղազարոս, իսկ յորժամ մեռեալ էր, սոյնպիսի կարծիք ոչ անկանի ի սիրտ մարդկան:

Այս առաջին հարց:

Երկրորդ հարց. վասն է՞ր չորեքաւրեայ յարոյց:

Պատասխանի. նախ՝ ասեն ոմանք, եթէ ցաւ ինչ կայ, որ այժմ սխալախ կոչեն, որ թուի, թէ մեռաւ, սակայն մինչ ի չորրորդ աւրն ոչ մեռանի, վասն այն չորեքաւրեայ յարոյց, զի թէ կենդանի եւս եղեալ էր անդ, յայտնապէս աւուրս մեռեալ լինէր: Դարձեալ՝ ի կէտ բաժանման հոգւոյն մարմինն շարժի յապականութիւն, այլ ի չորրորդ աւրն բոլոր լուծանին եւ քակտին տարերք, որպէս ասեն քորքն. «Նովեալ է, քանզի չորեքաւրեայ է» (հմմտ. Յովհ. ԺԱ. 39):

Դարձեալ ասէ մեկնիչդ չորս պատճառ. նախ՝ ընդդէմ կարծեաց ժխտողացն, որք առ աչաւք եւ կախարդութեամբ եւ դիւական ասէին, զի սոքա ի նոյն ժամն ձեւանան եւ ոչ ի հարիւր ժամս: Երկրորդ. զի հրաչքն մեծ եւ յայտնի լիցի: Երրորդ. զի գործող նշանին հզաւրագոյն ցուցցի: Չորրորդ. զի աւգտակար հաւատացելոցն լիցի:

#### Վասն ասպարիզաց

Բան. «Եւ էր Բեթանիայ մերձ յերուսաղէմ հնգեքսասան ասպարիս արք» (Կրն Յովհ. ԺԱ. 18-19):

Մեկնութիւն. վասն կրկին պատճառի զայս ասէ. նախ՝ զհեռաւորութիւն տեղւոյն ցուցանէ երկու աւուր ճանապարհ գոլ յայնկոյս Յորդանանու, ուր էր նախ: Երկրորդ. զմերձաւորութիւնս Երուսաղէմի, վասն որոյ բազումք եկեալ էին ի սուգն: Եւ սուտ են, որ կարծեն զհնգետասան ասպարէզն յայնկոյս Յորդանանու լինել մինչ ի Բեթանիայ, այլ ի Բեթանիոյ մինչ յերուսաղէմ է թիւ ասպարիզացն, եւ ութ ասպարէզն միլայմի է, այսինքն՝ մղոն մի, եւ երկու մղոնն մին ֆարսանկ է, եւ սոյնպէս Բեթանիա հեռի էր յերուսաղէմէ ֆարսանկ մի, պակաս մին ասպարէզ: Եւ վասն ասպարիզաց ասացաւ յերկրորդ հատորն, համարն:

Բան. «Բազումք ի հրէիցն [անսրի] եկեալ էին [առ Մարթա եւ Մարիամ], զի միսիթարեացն» (Յովհ. ԺԱ. 19):

Մեկնութիւն. Աստ խնդրէ Ոսկերեքանն, թէ հրէայքն որպէ՞ս մխիթարէին զսիրելիսն Քրիստոսի, զի դաշն եղեալ էր, թէ ոք խոստովանեցի զնա Քրիստոս, ի բաց ելցէ ի ժողովրդենէն:

Եւ նոյն ինքն պատասխանէ վասն երից. նախ՝ զի մեծ տագնապ եւ սրտմտութիւն եհաս: Երկրորդ. կամ զի մեծ ազգիք էին, պատուէին զնոսա: Երրորդ. կամ որք եկին, ոչ էին ի չարաց եւ ի հալածչացն Քրիստոսի, այլ բարեգոյնք էին, զի թէպէտ բազումք ի հրէիցն հալածէին զՔրիստոս, սակայն բազումք հաւատային, եւ ոմանք միջակ իմն երեւէին:

Եւ եկին վասն երկու պատճառի. նախ՝ մխիթարել զնոսա, երկրորդ՝ ի տեսանել զհրաչքն ի խնամոցն Աստուծոյ, որպէս ասէ մեկնիչդ: Այսուհետեւ զկնի ցուցանէ, թէ որպէ՞ս զՔրիստոս ընկալան ի Բեթանիայ, նախ՝ Մարթա եւ ապա՝ Մարիամ:

Բան. «Մարթա իբրև լուս, զնաց» (հմմտ. Յովհ. ԺԱ. 20):

Մեկնութիւն. Ոմանք ասեն, թէ Մարթա էր աւագ քոյրն, նախ՝ զի նմա ազգեցին զգալ վարդապետին: Երկրորդ. զի Մարթա ի դուրս էր եւ հոգայր զպէտսն, եւ Մարիամ նստէր ի տանն՝ առ ի շահել զհրէայսն: Եւ յորժամ լուաւ Մարթա, միայն փութացաւ ընդ առաջ ել եւ պատուեաց զՔրիստոս եւ խաւսեցաւ վասն եղբաւրն, եւ յորժամ լուաւ զքաղցր լուր յարութեան եղբաւրն, ապա կոչեաց զքոյրն:

Աւուրն թեր նմին ցուցանի հաւատն Մարթայի, թէպէտ ոչ կատարեալ:



**Բան.** «Տէր, եթէ ասք լեալ էիր, ոչ էր մեռեալ եղբայրն իմ» (Կրն Յովհ. ԺԱ. 21-22):

**Մեկնութիւն.** Այսու յայտնի է, զի ստուգապէս հաւատայր, թէ մերձեալ էր Քրիստոս, ոչ էր մեռեալ եղբայրն, այլ ոմանք ասեն, թէ կարծէր, թէ ի բացեայ գոլով ոչ կարէր փրկել, այլ բնաբանս զայս ոչ ցուցանէ, այլ զայն, թէ աստ էիր եղեալ, թախանձէաք զքեզ, եւ դու ոչ թողուիր մեռանել եղբաւրն: Ասեն զայս մարդկաւրէն, թէ ուր լոյս է, ոչ է անդ խաւար, եւ ուր կեանքն, ոչ մահ:

**Բան.** «Այլ եարդ զիպեմ, [թէ] գոր ինչ խնդրեսցես [Աստուծոյ], քացէ քեզ Աստուծ» (Յովհ. ԺԱ. 22):

**Մեկնութիւն.** Խաւարի աստ զՔրիստոսէ որպէս յառաքինի մարդոյ, կամ մարգարէէ, զի աղաչանաւք յարուցէ, զի դեռ եւս ոչ գիտէր զնա ճշմարիտ Աստուած, զի թէ զնա Աստուած հաւատայր, ոչ էր պարտ ասել, թէ՛ գոր ինչ խնդրեսցես, այլ թէ՛ գոր ինչ հրամայեսցես:

Առընթեր սմին խոստանայ Քրիստոս զյարութիւնն եղբաւրն:

**Բան.** «Ասէ ցնա Յիսուս. “Յարիցէ եղբայրն քո”» (Յովհ. ԺԱ. 23):

**Մեկնութիւն.** Ասելն քաղցրութեամբ է եւ պատասխանին ընդդիմութեամբ: Ասացաւ ի վերոյ, թէ զթութեամբն ցուցանի, զի Աստուած է Քրիստոս, եւ է այս երկրորդ զթութիւնն, որ ասէ առ Մարթա, եթէ՛ «յարիցէ եղբայրն քո»: Ոչ ասէ զերբն. նախ՛ զթերի կարծիսն Մարթայի խախտէ եւ ի հաւատս ճշմարիտս հաստատէ, որպէս ասէ:

**Բան.** «Ասէ ցնա Մարթա. “Գիպեմ, զի յարիցէ ի յարութեան՝ յաւորն յեպնում”» (Յովհ. ԺԱ. 24):

**Մեկնութիւն.** Եւ ուստի՞ գիտէր զյետին յարութիւնն: Ըստ Ոսկեբերանին բազում անգամ լուեալ էր ի Քրիստոսէ, եւ ասէ: Իսկ ըստ այլոց. զի փարիսեցիքն հաւատային յարութեան, եւ սա ի նոցանէ էր, իսկ սաղուկեցիքն միայն ուրանային զյարութիւնն եւ զհրեշտակս, եւ զհոգիս անմահ գոյ:

**Բան.** «Ես իսկ եմ յարութիւնն եւ կեանք» (Յովհ. ԺԱ. 25):

**Մեկնութիւն.** Զինքն ցուցանէ Քրիստոս՝ պատճառ եւ տուող յարութեան, եւ այս կրկին կերպիւ. նախ՛ զի յարութիւնն Քրիստոսի է պատճառ մերոյ յարութեան: Երկրորդ. զի հասարակաց յարութիւնն լինելոց է զաւրութեամբն Քրիստոսի, որպէս ասաց ինքն. «Եկեսցէ ժամանակ, որ ի գերեզմանս [կայցեն], լուիցեն ձայնի նորա եւ եկեսցեն արարաքս» (Կրն Յովհ. Ե. 28-29), եւ առաքեալ ասէ, եթէ՛ «Ի ձայն հրեշտակապետի

եւ ի փող Աստուծոյ իջցէ [յերկնից], եւ մեռեալք ի Քրիստոս յարիցեն» (Կրն Ա. Թեսաղ. Դ. 15), եւ Քրիստոս կեանք է ըստ բնութեան եւ ամենեցուն պատճառ է կենդանութեան եւ կարող գոյ կենդանացուցանել զմեռեալս, զի այնպիսի է բնութեամբն, որ պատճառ է ամենեցուն, որ ստանան հաղորդակցութեամբն, որպէս ասէ:

**Բան.** «Որ հաւարայ յիս, թէպէր եւ մեռանի, կեցցէ» (Յովհ. ԺԱ. 25):

**Մեկնութիւն.** Զբնական մահն ասէ:

**Բան.** «Եւ [ամենայն], որ կենդանի է եւ հաւարայ յիս, մի՛ մեռցի» (Յովհ. ԺԱ. 26):

**Մեկնութիւն.** Զյաւիտենական կենացն ասէ, եւ որպէս մեկնիչդ ասէ. «Որ հաւատայ յիս, թէ ես եմ յարութիւնն եւ կեանք», որպէս ի հայելուջ տեսցէ զյարութիւնն իւր ի Ղազարոս:

Եւ այս չորս կերպիւ. նախ՛ որպէս Ղազար նոյն հոգևով եւ մարմնով կենդանացաւ: Երկրորդ. որպէս ձայնիւն Քրիստոսի կենդանացաւ: Երրորդ. Ղազարոս անապական հոգևով եւ մարմնով յարեաւ: Չորրորդ. Ղազարու հոգին ոչ կարաց սատանայ կամ դժոխք արգելուլ, եւ ոչ մարմինն՝ մահ եւ ապականութիւն, եւ ոչ զերեզմանն արգել, նոյնպէս եւ ամենայն հաւատացելոցն ի Քրիստոս:

Դարձեալ՝ ասեն վարդապետք, թէ զանազան է «Հաւատալ Քրիստոսի» եւ «Հաւատալ զՔրիստոս» եւ «Հաւատալ ի Քրիստոս»: «Հաւատալ Քրիստոսի» է հաւատալ ճշմարիտ գոյ բանիցն Քրիստոսի, եւ «Հաւատալ զՔրիստոս» է հաւատալ զնա ճշմարիտ Քրիստոս: Եւ այս երկու կերպիւ կարեն հաւատալ չարք՝ ի մարդկանէ եւ սատանայ եւս, իսկ «Հաւատալ ի Քրիստոս» է զնա վերագոյն բարի համարել, եւ Աստուած յամենայնի մարդացեալ եւ եզական սիրով առ նա փութալ: Եւ այնպէս միայն հաւատան բարի մարդիկ, եւ որ այնպէս հաւատան, թէպէտ մարմնով մեռանին, սակայն կեցցեն փառաց յարութեամբն հոգևոյ եւ մարմնոյ:

Դարձեալ՝ բանս, որ ասէ, եթէ՛ «Կենդանի իցէ, մի՛ մեռցի» (հմմտ. Յովհ. ԺԱ. 26), ոմանք կարծեցին, թէ ի կատարածի, որ ի գալստեանն Քրիստոսի կենդանիքն մի մեռցին մահուամբ մարմնոյ, եւ զնեն զառաքելոյ բանն ի Կողոսացիս, թէ. «Ոչ ժամանեմք ննջեցելոցն» (Կրն Թեսաղ. Դ. 14), զորոյ զվնասն ոչ իմանան: Նախ՛ զհարկիւ մեռանելն ամենայն մարդոյ, որպէս զնախահայրն Ադամ ըստ մարգարէին. «Ո՞վ է մարդ, որ կեցցէ եւ ոչ տեսցէ զմահ» (Մաղմ. 2Ը. 49): Երկրորդ. զի Քրիստոս մեռաւ, եւ որք մահու նորա ոչ կցորդին եւ ոչ



փառացն հաղորդին ըստ առաքելոյ: Արդ, որ ասէ աստ կենդանի- նախ՝ որ այժմ գործով արդարութեան կենդանի իցեն: Երկրորդ. որ ի ժամանակս նեոինն հաւատով կենդանի մնան:

Բան. «Նաւարա՛ն այամիկ» (Յովհ. ԺԱ. 26):

Մեկնութիւն. Ոչ հարցանէ զնա վասն անգիտութեան, այլ վասն չորից հարցանէ. նախ՝ զի յայտնի լիցի, թէ վասն հաւատոցն արժա- նացաւ պարգեւացն Աստուծոյ: Երկրորդ. ոչ հարցանէ վասն հասա- րակաց յարութեան, զի նախ խոստովանեցաւ, այլ զի հաւատասցէ առանձին յարութեան եղբաւրն: Երրորդ. որպէս ասէ մեկնիչդ, մե- ծամեծս խաւսեցաւ վասն Ինքեան, զոր նա ոչ գիտէր եւ զայն կա- մի, զի հաւատասցէ նա: Չորրորդ. որպէս ասէ Պաւղոս ի Հռոմայե- ցիս. «Սրտիւ հաւատալ յարդարութիւն եւ բերանով խոստովանել զփրկութիւն գործէ» (հմմտ. Հռոմ. Ժ. 10), վասն այն բերանով խոստո- վանիլ տայ նմա: Յայս միտս յորժամ զերախայն մկրտէ քահանայն, հարցանէ խոստովանիլ բերանով տղային:

Բան. «Ասէ ցնա Մարթա. “Այո՛, Տէր, ես հաւարացի, թէ դու ես Քրիստոսն՝ Որդի Աստուծոյ, որ յաշխարհ գալոց էիր”» (Յովհ. ԺԱ. 27):

Մեկնութիւն. Ըստ Ոսկեբերանին՝ զայլ հարցեալ եւ զայլ պա- տասխանէր. հարցանէր վասն հաւատալոյ յարութեան, իսկ նա զՔրիստոս խոստովանէր, վասն զի սգաւոր էր, եւ միտքն՝ չփոթեալ ի տրտմութենէն: Իսկ այլ վարդապետք ասեն, թէ յարմար է պա- տասխանին հարցմանն, զի Քրիստոս ասաց. «Ես եմ յարութիւն եւ հա- տարացեալքն յիս ոչ մեռանին» (հմմտ. Յովհ. ԺԱ. 25-26), եւ զի Քրիստոսիւ լինելոց էր այս յարութիւն եւ կեանս, նա դաւանեաց, թէ՛ «Դու ես Քրիստոսն՝ Որդի Աստուծոյ» եւ այլն:

**Վասն դաւանութեան**

Եւ աստ լինի կրկին հարց.

Առաջին. Թէ զի՞նչ դաւանեաց Մարթա:

Պատասխանի. Ասեմք, եթէ չորք իրս դաւանեաց ի Քրիստոս. նախ՝ զանբաժան միութիւն Քրիստոսի՝ ասելով. «Դու ես»: Երկրորդ. խոստովանի ի Քրիստոս քահանայութիւն եւ թագաւորութիւն՝ ասելով. «Քրիստոսն», որ է աւծեալ, եւ աւծումն թագաւորացն եւ քահանայիցն էր: Երրորդ. խոստովանի Աստուած գոլ զՔրիստոս՝ ասելով. «Որդին Աստուծոյ», այսինքն՝ բնութեամբ Որդի Աստուծոյ, զի եզական ասէ: Չորրորդ. խոստովանի ճշմարիտ մարդ եղեալ՝ ասե-

լով. «Որ յաշխարհ եկիր», զի գալն ոչ զտեղւոյ փոփոխումն յայտնէ, այլ զմարմին լինելն:

Երկրորդ հարց. Պետրոս զնոյնս դաւանեաց եւ երանեցաւ, եւ ըն- դէ՞ր սա ոչ երանեցաւ:

Պատասխանի. Ոմանք ասեն, թէ Պետրոս նախ խոստովանեցաւ, վասն որոյ երանեցաւ: Ասեմք, թէ ոչ էայդպէս, զի եւ Նաթանա- յէլ նախ դաւանեաց եւ ոչ երանեցաւ, եւ Թովմայի ասաց Տէրն. «Երանի, որք ոչ տեսցեն եւ հաւատասցեն յետոյ» (հմմտ. Յովհ. Ի. 29), այլ այս է, զի Պետրոս զՔրիստոս Աստուած մարդացեալ խոստո- վանեցաւ եւ բնութեամբ Որդի Աստուծոյ, որպէս աւետարանիչն ասէ. «Բանն մարմին եղև» (Յովհ. Ա. 14), իսկ սոքա՝ մարդ շնորհաւք աստուածացեալ եւ փառաւորեալ խոստովանեցան, վասն որոյ ոչ երանեցան, ապա ուրեմն յայտնի եղև, զի Նաթանայէլ եւ Մարթա, որ զմիութիւն խոստովանեցան, որպէս Պետրոս, եւ մարդ փառա- ւորեալ, ոչ երանեցան, որպէս եւ Նեստոր ասաց՝ սոսկ մարդ շնոր- հաւք փառաւորեալ, ապա քանի՞ առաւել մերժին յերանութենէն, որք երկուս բնութիւնս որոշեն զՔրիստոս եւ սոսկ մարդ դաւանեն, որպէս Հայհոյիչք մարդեղութեան Քրիստոսի եւ ուրացողք:

Այսքան առ այս:

Բան. «Չայս իբրև ասաց, [զնաց] կոչեաց զքոյր իւր լոկեայն» (Յովհ. ԺԱ. 28):

Մեկնութիւն. Ոչ ամենեւին լռելով, այլ խոնարհ եւ ծածուկ խաւ- սելով. «Ասէ. “Վարդապետն եկեալ է”» (Յովհ. ԺԱ. 28):

Եւ այս վասն երեք պատճառի. նախ՝ վասն երկիւղին հրէից, որ անդ էին, ոմանք լինէին ի հակառակիցն: Երկրորդ. համարէր, թէ Քրիստոս առանց ամբոխի խաւսի ընդ Մարիամու: Երրորդ. կար- ծէր, թէ առանց ամբոխի աղաչեսցէ վասն եղբաւրն:

Բան. «Վարդապետն եկեալ է եւ կոչէ զքեզ» (Յովհ. ԺԱ. 28):

Մեկնութիւն. Եւ ոչ երեւի, թէ կոչեաց զՔրիստոս: Ասեն ոմանք, եթէ վասն կարճութեան ոչ յիշէ աւետարանիչս, թէ՛ ո՞ր կամ ե՞րբ, կամ որպէ՞ս հրամայեաց կոչել, սակայն հաւատալի է, թէ Քրիս- տոս կոչեաց, զի Մարթա սուտ ոչ ասէր: Դարձեալ՝ ասեն ոմանք, թէ Մարթա ասաց՝ կոչէ զքեզ, եւ ոչ ասաց սուտ, զի գալն Քրիստոսի կոչումն էր Մարիամու, զի պարտ էր ընդառաջ ելանել նմա, եւ ասէ՛ կոչէ զքեզ, այսինքն՝ հարկ է գալ քեզ: Եւ տե՛ս զխոնարհութիւն



սորա որպէս զՄարթային, զի ոչ փառասիրեաց զնալ Քրիստոսի վասն սգոյն, որպէս այժմ ունին սգաւորք, խնդրեն մեծարանս ի մերձաւորաց:

Բան. «Իբրև լուա, յարեա վաղվաղակի եւ եկն» (Յովհ. ԺԱ. 29):

Մեկնութիւն. Զմեծ սէրն նշանակէ Մարիամու, որ ունէր առ Քրիստոս:

Բան. «Այլ եր անդէն ի փեղոցն» (Յովհ. ԺԱ. 29):

Մեկնութիւն. Քրիստոս անդէն մնայր Մարիամու եւ Մարթայի նախ՝ զի ընդ նոսա տեսանիցէ զգերեզմանն: Երկրորդ. ասէ Ոսկէբերանն. «Անդէն մնաց, զի ոչ կամէր նշանս առնել վասն փառասիրութեան, այլ վասն աղաչանաց այլոց եւ հաստատել զայլս ի հաւատս»: Երրորդ. լինի եւ այն, թէ ոմանք ընդ նմա խաւսէին, եւ Մարիամ, եւ Մարթա արագեցին եւ անդ գտան զնա: Բայց մեկնիչդ չորս պատճառսդնէ անդէն մնալոյն, եւ գեղեցիկ են:

Բան. «Իսկ հրեայքն, որ էին ընդ նմա, գնացին եւ նորա» (Կրնս Յովհ. ԺԱ. 31):

Մեկնութիւն. Սոքա ոչ էին լուեալ զբանն Մարթայի առ Մարիամ, վասն այն համարեցան, թէ յանկարծ ի գթոյն շարժեցաւ երթալ ի գերեզմանն, եւ նոքա զկնի գնացին, զի մխիթարեսցեն զնա:

Բան. «Անկաւ առ ուրս նորա» (Յովհ. ԺԱ. 32):

Մեկնութիւն. Մեծագոյն է հաւատ սորա, քան զՄարթային, եւ յայտ է յերից. նախ՝ զի ոչ զանգիտեաց ի հրէիցն:

Երկրորդ. զի անկաւ առ ոտս նորա:

Երրորդ. զի արտասուաւք խնդրէր, բայց պակաս խաւսեցաւ քան զՄարթա. նախ՝ զի արտասուքն խափանէին զնա ի խաւսելոյ: Երկրորդ. զի Յիսուս ոչ ետ երկար պատասխանի, որպէս Մարթայի վասն հրէից ժողովրդեանն, այլ զնոյն բանն կրկնեաց զքեռն, զի ի միասին խորհեալ էին զայն:

Առընթեր այսմ զնէ եւ զՂազարու յարութիւն, յորժամ ասէ.

Բան. «Յիսուս իբրև եպես գնա, զի լայր» (Յովհ. ԺԱ. 33):

Մեկնութիւն. Աստ նախ ճառի յարութիւն Ղազարու: Երկրորդ. ճառի գործ ինչ պատճառեալ յայնմ յարութենէն, անդ. «Բազումք ի հրէիցն [անդի] եկեալ էին առ [Մարթայ եւ] Մարիամ» (Յովհ. ԺԱ. 19): Իսկ առաջին մասն յերիս բաժանի մասունս, զի նախ ցուցանի սէրն Քրիստոսի առ Ղազարոս՝ նշանաւ եւ բանիւ եւ գործով: Երկրորդ. տրտունջ հրէիցն, անդ. «Ասէին հրեայքն. “Տեսք ո՞րչափ սիրեր գնա”» (Յովհ. ԺԱ. 36): Երրորդ. յարութիւն Ղազարու, անդ. «Յիսուս, դարձեալ զայրացեալ ի միւրս իւր, գայ ի գերեզմանն» (Կրնս Յովհ. ԺԱ. 38):

Առաջին մասն ցուցանի սէրն Քրիստոսի առ Ղազար երիս կերպիւ. Առաջին. սէրն նշանաւ ցուցանի, որպէս ասէ աւետարանիչս. «Յիսուս իբրև եպես, զի լայր, եւ որ ընդ նմա հրեայքն լային» (Կրնս Յովհ. ԺԱ. 33):

Բան. «Խոռովեցաւ հոգի իւր իբրև զայրացեալ» (Յովհ. ԺԱ. 33):

Մեկնութիւն. Կոզի ասելով ընդդէմ Ապողինարիէ, որ ասաց, թէ Բանն մարմին միայն է առ՝ առանց հոգւոյ: Իսկ զայրանալն ի ցասմանէ է. արդ, զայրացաւ Յիսուս ընդդէմ սատանայի, որոյ փորձութեամբն եմուտ մահ յաշխարհ, եւ Քրիստոս իբրև ի մաւտոյ ընկճելոց էր զնա: Իսկ խոռովեալ ասի, այսինքն՝ տրտմեալ վասն զթոյն, որ ի վերայ Ղազարու եւ քերց նորա: Եւ խոռովեցաւ ասելն իբր թէ կոչեաց զտրտութիւն, զի առեցեալ բնութիւն ոչ էր իբրև զմեզ ի ներքոյ ակամայ կրից, այլ ազատ էր ի հարկէ կրից եւ կամաւ կրէր զամենայն, որպէս յայտ է ի մեկնիչդ: Այլ վասն կրիցն նախ գիտելի է, զի բարկութիւն եւ տրտմութիւն եւ այլ այնպիսիք ոչ ասին ի Քրիստոս իբրու մեղք, այլ իբրու առաքինութիւնք: Եւ վասն այն ի մեզ մեղք են սոքա, զի նախքան զընտրութիւն բանին լինին եւ յետոյ խափանեն զընաւորութիւն մեր, իսկ ի Քրիստոս կիրքս այսոքիկ ընտրութեամբ եւ գիտութեամբ բանին լինէին, այլ եւ ոչ կարէր խափանել զբանական մասն, որ միացեալ էր ի Բանն Աստուած, վասն այն առաքինութիւնք են սոքա ի Քրիստոս:

Դարձեալ գիտելի է, զի են ի մեզ մասունք հոգեկան, որ հնազանդեն բանին, որպէս ցասումն եւ ցանկութիւն, եւ են, որ անհնազանդ, որպէս բնականքն, այսինքն՝ քաղց եւ ծարաւ եւ այլն:

Արդ, սոքա ամենեքեան հնազանդք են ի Քրիստոս բանական մասինն, եւ նա Տէր՝ ի վերայ սոցա, վասն որոյ զոր ինչ կրէր Քրիստոս՝ քաղց եւ ծարաւ եւ տրտմեալ եւ այլն, կամաւ եւ իշխնութեամբ կրէր:

Եւ սոյնպէս չորիւք զանազանի կիրք մեր ի Տեառնէ. նախ՝ նոր այն՝ առաքինութիւն միշտ, իսկ ի մեզ՝ մոլորութիւն երբեմն: Երկրորդ. նորայն՝ գիտութեամբ, իսկ մերս՝ անգիտութեամբ: Երրորդ. նորայն՝ կամաւոր, իսկ մերս՝ հարկաւոր: Զորրորդ. նա Տէր եւ իշխան ի վերայ կրիցն, իսկ մեք՝ ծառայք եւ ընդ իշխանութեամբ:

Իսկ աստ տրտմեցաւ Քրիստոս վասն կրկին պատճառի. նախ՝ զի ծանիցեն զճշմարիտ մարդանալն: Երկրորդ. զի եւ նոքա տեսանելով զնա տրտմիցին եւ արտասուեսցեն, զի արժանի լիցին ուրախութեան, որ յարութեամբն Ղազարու:



Այս առաջին սէրն Ղազարու, որ նշանաւ է:

Երկրորդ. սէրն ցուցանի բանիւ, յորժամ ասէ.

Բան. «Ո՛ր եղիք գնա: Ասեն ցնա. «Տէր, եկ եւ փես»» (Յովհ. ԺԱ. 34):

Մեկնութիւն. Ոչ էր այս տգիտութիւն ի Քրիստոս վասն երկու պատճառի. նախ՝ զի եւ Հայրն Հարցանէր. «Ո՛ր ես, Ադամ» (փեն Ծննդ. Գ. 9), եւ ցԿայէն. «Ո՛ր է Աբէլ եղբայրն քո» (փեն Ծննդ. Դ. 9)՝ պատճառ խաւսից նոցա տալով: Երկրորդ. զի ի բացեայ գոլով զմահն գիտէր, զի ա՞րդ ի գեւղն եկեալ՝ զգերեզմանն անգիտանայր:

Այլ աստ վասն չորից Հարցանէր. նախ՝ զի ցուցցէ, թէ ճշմարիտ մարդ եղեւ: Երկրորդ. զի մի կարծիցեն յառաջագոյն գնացեալ նմա ի գերեզմանն եւ պահեալ անդ կենդանի մարդ: Երրորդ. զի Հանդարտ եւ Հաստատ արասցէ զնշանն: Չորրորդ. զի ինքեանք վկայ եւ քարոզ լիցին յարութեան:

Այս բանիւ սէրն:

Երրորդ. գործով ցուցանի սէրն Քրիստոսի առ Ղազարոս, յորժամ ասէ.

Բան. «Եւ արարատեաց Յիսուս» (Յովհ. ԺԱ. 35):

Մեկնութիւն. Ի գթոյն շարժեալ եւ արտասուեաց, յորժամ ետես զգերեզմանն: Ասացաւ ի վերոյ, թէ գթութեամբն ցուցանի, թէ Աստուած է Քրիստոս, եւ է այս երրորդ գթութիւն, որ արտասուեաց ի վերայ Ղազարու:

Եւ վասն վեց պատճառի արտասուեաց Յիսուս. նախ՝ զի ցուցցէ, թէ եզական սիրով սիրէ՞ Ղազար, վասն այն յատուկ նշան սիրոյ ցուցանէ: Երկրորդ. զի ցուցցէ Հաւաստեալ զճշմարիտ մարդեղութիւն, զի որպէս վնաս է ուրանալ զԱստուածութիւն, նոյնպէս վնաս է ուրանալ զմարդկութիւն: Երրորդ. զի չափ եւ սահման եզ արտասուաց, որք Հաւատան յարութեան մեռելոց: Չորրորդ. զի աւերինակ ետ մեզ ամենայն մարդոյ տեսանել զմեռեալն ի դի, ողբալ զմեղքն մեր, որ ժառանգեցոյց մեզ զմահաբեր երկիրս: Հինգերորդ. արտասուեաց ի վերայ ազգին Հրէից, որ անհաւատութեամբն մեռանելոց էին զյաւիտենից մահն: Իսկ վեցերորդ. արտասուեաց Յիսուս, զի այնու յայտնեաց զկարծիս նոցա, թէ ոչ է կարող յարուցանել, որպէս ասացին:

Զկնի ճառէ զտրտունջ Հրէիցն, զի յորժամ տեսին զՔրիստոս յայնպիսի կիրս բերեալ, զայն Հաւաքաբանէին, թէ մահն Ղազարու

էր ամենեւին ընդդէմ կամացն Քրիստոսի, զի տրտմութիւն է ախտ, որ լինի յանախորժ կրից յոչ կամելեաց, վասն այն ասեն.

Բան. «Տեսք ո՛րչափ սիրէր գնա» (Յովհ. ԺԱ. 36):

Մեկնութիւն. Զի արտասուելն Քրիստոսի նշան է սիրոյ, եւ թէ ունէր կարողութիւն, վասն բազում սիրոյն փրկէր զնա ի մահուանէ, իսկ զի ոչ կարէ, վասն այն արտասուէ: Եւ այսու կամէին եւ զբժշկութիւն ի ծնէ կուրին ի դերեւս Հանել:

Բան. «Ո՛չ կարէր սա, որ երաց զաչս կուրին, առնել զի եւ սա մի՛ մնոցի» (Յովհ. ԺԱ. 37):

Մեկնութիւն. Իբր թէ ասել, թէ զայս ոչ կարէ, ապա յայտնի է, զի զայն ոչ արար, սոքա գերկուսն ուրանային, իբր թէ ո՛չ զկոյրն լուսաւորեաց եւ ո՛չ զսա առողջացնել կարէ, սոքա ոչ մնացին ժամանակին, այլ նախքան զժամանակն դատէին, զի առաւել է զմեռեալն յարուցանել, քան զՀիւանդն առողջացնել:

Իսկ զկնի ճառէ զՂազարու յարութիւն:

Բան. «Յիսուս, դարձեալ զայրացեալ [ընդ միսս իւր], զայ ի գերեզմանն» (Յովհ. ԺԱ. 38):

Մեկնութիւն. Զայն ասէ այժմ զայրացեալ, որ զտրտմութիւն ի բաց վարեաց յանձնէ, զի առնելոց էր սքանչելիս: Եւ այլք ասեն, թէ զայրացաւ վասն չարութեան Հրէիցն, որք զսքանչելիս նորա բամբասէին: Եւ այնպիսի զայրացումն կամ ցասումն առաքինութիւն ասի, զի որպէս գործ առաքինութեան է ուրախակցիլ բարեաց, նոյնպէս առաքինութիւն է զայրանալ ընդդէմ Հարեաց:

Բան. «Եւ եր այր մի, եւ վեմ մի եղեալ ի [վերայ նորա]» (Յովհ. ԺԱ. 38):

Մեկնութիւն. Աստ Հինգ ինչ ճառէր վասն յարութեան Ղազարու եւ վասն ստուգութեան մեծ սքանչելեացն.

Առաջին է գերեզմանին զծագրութիւն, որ էր այր մի ի վիմէ փորեալ եւ խոր, զի բազում մարմինք կարէին անդ դնիլ, զի սահման էր յազգն Իսրայէլի՝ յերկիրն Երուսաղէմի, զի իւրաքանչիւր ազգ եւ ընտանիք կտրէին զգերեզմանս իւրեանց ի քարէ: Այնպէս էր եւ գերեզմանն Ղազարու, եւ ի վերուստ փակեալ կայր մեծագոյն վիմով, որով յայտնի ճշմարիտ մահն Ղազարու:

Երկրորդ. ճառէ զստուգութիւն սքանչելեացն, յորժամ ասէ.

Բան. «Ի բաց արարէք զվեմ» (Յովհ. ԺԱ. 39):

Մեկնութիւն. Նա, որ զմեռեալն ճայնիւ միայն յարոյց, ո՛չ տկարանայր ի բաց դնելով զվեմն, այլ ըստ Ոսկերերանին՝ արար զայս,



զի մի ասիցեն, որպէս վասն լուսաւորեալ կուրին, թէ՛ ո՛չ է սա նա, այլ նման է նորա, զի յորժամ զլասցին ոտքն, որ ընթացան, ձեռքն, որ ի վեր առին, ռնգունքն, որ զհոտն էառ, վկայ լիցին Ղազարու յարութեան եւ յանդիմանեացն զնոսա: Եւ դարձեալ՝ տեսանելով զմեռեալն ի գերեզմանին կողմանեալ եւ զժահահոտութիւն սպա- կանեալ մարմնոյն, ցուցանէր, թէ նա է:

Եւ քանզի ոչ երբէք պատահեալ էր, որ չորեքաւրեայն յառն էր ի մեռելոց, վասն այն ասէ.

Բան. «Ասէ Մարթա. «Արդ հոսեալ է, քանզի չորեքաւրեայ է» (տէս Թովհ. ԺԱ. 39):

Մեկնութիւն. Ոչ թէ կարծեալք ինչ ասաց զայս, այլ զի աւրէն էր նոցա յերկրորդ աւրն գնալ եւ աւծանել զմեռեալն եւ մինչ ի յեւթներորդ աւրն գնալ ի գերեզմանն, եւ գիտէր, որ հոտեալ էր: Դարձեալ ի կէտ բաժանման հոգւոյն շարժի մարմինն ի հոտիլ, եւ մինչ ի չորրորդ աւրն քակտին չորս տարերքն, որպէս ասացաւ ի վերոյ: Դարձեալ՝ չորս աւր եթող ի գերեզմանի, զի այնու անյու- սութիւն նոցա յայտնէր, եւ այնու սէր եւ կարողութիւն Քրիստոսի առաւել յայտնէր:

Իսկ բանն Մարթայի, թէ՛ չորեքաւրեայ է եւ հոսեալ, չորս կերպիւ մեկնեն վարդապետք. նախ՝ ասեն, թէ՛ ոչ երբէք էր լուեալ ի Սուրբ Գիրս, թէ՛ չորեքաւրեայ մեռեալ յառնէ: Երկրորդ. ասեն թէ՛ յուսա- հատութեամբ ասաց: Երրորդ. ասեն, թէ՛ զարմացեալ էր: Չորրորդ. ասեն, թէ՛ մասնաւոր յուսացեալ էր եւ մասնաւոր յուսահատեալ, զի հայելով ի կարողութիւն Քրիստոսի յուսայր եւ հայելով յեր- կարութիւն մահուն՝ յուսահատէր: Եւ նոյնպէս անկարաւտ ունէր զհաւատն, զի մի եւ նոյն զաւրութեան գործ է յարուցանել զնոր մեռեալս եւ զչորեքաւրեայն, վասն այն զթերութիւն նորա յանդի- մանեաց Քրիստոս:

Բան. «Ո՛չ ասացի քեզ, [ե]թէ հաւարացես, քեցես զփառսն Աստուծոյ» (Թովհ. ԺԱ. 40):

Մեկնութիւն. Այսինքն՝ զփառաւոր զաւրութիւն Աստուծոյ ի յարութեան եղբաւրն քո: Եւ թէ՛ ո՞ր ասաց զայս Քրիստոս, ոմանք ասեն այն է. «Ես եմ յարութիւն եւ կեանք եւ թէ հաւարաս յայսմիկ» (հմմր. Թովհ. ԺԱ. 25), եւ ոմանք ասեն, թէ՛ այլ բազում բանս խաւսեցաւ Քրիստոս ընդ նմա, որք ոչ են գրեալ, յորոց մի է եւ այս:

Եւ յորժամ Քրիստոս երարձ զպակասութիւն հաւատոյ եւ յու- սոյն Մարթայի, ապա կատարեն զհրամայեալն ի Քրիստոսէ, որպէս ասէ.

**Վասն աղաթից**

Բան. «Եւ իբրեւ ի վեր առին զվեմն» (Թովհ. ԺԱ. 41):

Մեկնութիւն. Երրորդ՝ ճառէ զստուգութիւն սքանչելեացն, որ էր աղաւթքն Քրիստոսի ի յարութիւն Ղազարու:

Բան. «Յիսուս ամբարձ զաչս իրի վեր» (Թովհ. ԺԱ. 41):

Մեկնութիւն. Վասն երեք պատճառի. նախ՝ զի ցուցցէ, թէ պարտ է աղաւթողին արտաքին նշան ինչ հանգաւոր ցուցանել: Երկրորդ. զի ուսուցցէ, թէ պարտ է աղաւթողին զմիտքն յերկինս ի վեր առ Աստուած ունել, զի ասեն վարդապետք, թէ աղաւթք է ամբար- ձումն մտաց առ Աստուած: Երրորդ. ցուցանէ, թէ ի նմանէ առա- քեցայ, եւ զամենայն ինչ ի նմանէ ունիմ:

Բան. «Նայր, գոհանամ զքէն, զի լուար ինձ» (Թովհ. ԺԱ. 41):

Մեկնութիւն. Ամենայն խնդրող նախ առնու եւ ապա գոհանայ, իսկ Քրիստոս յառաջ գոհացաւ վասն երեք պատճառի. նախ՝ վասն անցելոյն գոհանայ, զի ի սկզբանէ յղացմանն իւրոյ Աստուած Հայր լուաւ նմա, զոր կամեցաւ: Երկրորդ. զի ստոյգ գիտէր զլի- նելոցն եւ ոչ ունէր երկբայութիւն ի խնդրելն: Երրորդ. ընդ մեզ աւրինակաւ իմաստք, զի մեծատունք առաւել յաւժարին ի տալ, յորժամ զառաւել պարգեւսն յիշխեցեն, թէպէտ նա ի վեր է, քան զամենայն աւրինակս, վասն այն ասէ.

Բան. «Զի լուար ինձ, եւ ես գիպէի, զի յամենայն ժամ լսես ինձ» (Թովհ. ԺԱ. 42):

Մեկնութիւն. Քանզի բանական կամքն միշտ միաւորեալ էր ի կամսն Հաւր Աստուծոյ, վասն այն Աստուած միշտ լսէր նմա, այլ գիտելի է, զի բանական կամքն Քրիստոսի խոնարհեալ առ զգայա- կան մասն, յորժամ կամեցաւ անցանել ի նմանէ բաժակ չարչա- րանացն, եւ այնպիսի կամացն ոչ միշտ լուաւ աստուածային կա- մաւքն: Իսկ ըստ Ոսկեբերանին այս է մեկնութիւն աղաւթիցն, որ նուաաս կարծէ գոլ, քան զՀայր. «Ամենայն ուրեք ցուցանէ Քրիս- տոս զգալուստն ոչ վասն փառաց ինչ ի մարդկանէ, այլ վասն փրկութեան մարդկան լինել, եւ այնչափ զմեծամեծսն բարբառէր, մինչ զմարդիկ ի հաւատսն հնազանդէր»:

«Եւ հիւսու զնոսա ի միասին»:



**Լուծմունք.** Այսինքն՝ զբարձրագոյն եւ զխոնարհագոյնքն միոյ զիմացն ցուցանէր, եւ ստեղծանելն գործելն է: Եւ դարձեալ, յորժամ զաստուածայինսն գործէր, ընդ նմին եւ զմարդկայինսն, եւ յորժամ զմարդկայինս եւ զտկարս, ընդ նմին եւ զաստուածայինսն զաւրաւորսն, զի յորժամ ծնաւ ի կուսէն, որ մարդկութեան էր, աստղ ի յերկնից երեւեցոյց զԱստուածութիւն նորա, եւ յորժամ խաչեցաւ, լուսաւորքն խաւարեցան, նոյնպէս աստ. յորժամ կամեցաւ յարուցանել զՂազար, որ Աստուծոյ զաւրութեան էր գործ, նախ տրտմեցաւ եւ ելաց եւ աղաւթեաց, զի ցուցցէ, թէ նոյն Աստուածն մարդ էր, եւ նոյն մարդն՝ Աստուած:

- Բան. «Առեալ նա ի մէջ նոցա կանխէր»:
- Լուծմունք.** Այսինքն՝ ի մէջ տկարագունիցն:
- Բան. «Եւ ոչ զնոյն բովանդակ բարբառի»:
- Լուծմունք.** Զտկարութիւն, այլ եւ զբարձրութիւն խաւսի վասն վերջնոցս:
- Բան. «Եւ ոչ դարձեալ զնոյն լռէ»:
- Լուծմունք.** Այլ խաւսի զխոնարհս, զի մի՛ գայթակղեսցին յայնժամ, զի որ կատարեալք են մտաւք ի հաւատս, մին բանն բաւական է նոցա հաստատութեան, ասէ, եւ այլն յայտնի է:

**ԹՒՒ ՎԱՍՆ Է՛Ր ԱՂԱՐԹԵԱԿ ՔՐԻՍՏՈՍ**

Նախ գիտելի է, զի աղաւթելն Քրիստոսի ոչ պատշաճի ընդ Աստուածութեան, այլ ընդ մարդկութեան, զի աստուածութեամբն Հաւր եւ Հոգւոյն հաւասար է եւ մարդկութեամբն մեզ է հաւասար: Դարձեալ՝ Արիոս ասէր Բանին աղաւթել, զի արարած ասէր զԲանն: Արդ, ընդ մեզ հաւասար աղաւթէ Քրիստոս եւ ընդ Հաւր հաւասար ընդունի զաղաւթս, որպէս այն, որ ինքն պատարագէ եւ ինքն ընդունի զպատարագն, նոյնպէս եւ զաղաւթելն իմացիս:

Իսկ աստ վասն բազում պատճառի աղաւթեաց. նախ՝ զի մի՛ կարծիցի յայլմէ աստուծոյ, այլ ի Հաւրէ Աստուծոյ առաքեալ: Երկրորդ. զի մի՛ կարծեսցեն հակառակ Աստուծոյ Հաւր: Երրորդ. զի մի՛ ասիցեն լուծիչ աւրինացն: Չորրորդ. զի շիջուցէ զնախանձ հրէիցն: Հինգերորդ. զի մի՛ կարծեսցեն, թէ Բեեղզբուղաւ առնէ զսքանչելիսն: Վեցերորդ. զի մի Աստուած էր յաւրէնս գրեալ (հմմտ. Ելից Ի 3), վասն այն աղաւթէ, զի մի՛ երկու Աստուած կարծեսցեն: Եւ թներորդ. վասն խոնարհութեան մարմին զգենլոյն, որպէս ասաց

Ոսկերեանն: Ութերորդ. զի մեզ ուսուցէ զաղաւթս եւ զխոնարհութիւն ունել: Իններորդ. զի Հաւր Աստուածութիւն յայտնի էր ի մէջ նոցա, յայնժամ եւ Որդւոյն ի ծածուկ: Տասներորդ. զի կամաւ Հաւր էր, որով ցուցանի միակամութիւն ընդ Հաւր:

Ո՛վ չարափառ, եթէ զայս շունչ յաղաւթելոյն ընկալաւ Ղազար, իսկ զի՞նչ այն, զոր առանց աղաւթելոյ իշխանութեամբ յարուցանէր զՈրդի այրոյն (հմմտ. Ղուկ. Է. 11-17) եւ զդուստր քահանայապետին (հմմտ. Ղուկ. Ը. 40-56) եւ զսաստել ծովուն (հմմտ. Մարկ. Գ. 35-41) եւ զայլ ամենայն բժշկութիւնսն, զոր կատարէր հրամայելով եւ ոչ՝ աղաւթելով: Այլ դու տես զլուրն ի Քրիստոսէ եւ իմա զպատճառն, զի ասէ. «Լասն ժողովրդեանս, որ շուրջ կան, առնեմ, զի հաւարացեն, թէ դու առաքեցեր զիս» (Յովհ. ԺԱ. 42):

Դարձեալ՝ զիպեմ, ցուցանէ զհաւասար գիտութիւն ընդ Հաւր, ըստ այնմ. «Որպէս զիպե՛ զիս Նայր, զիպեմ եւ ես զՆայր» (Յովհ. Ժ. 15): Դարձեալ՝ լուար եւ լսես, զկամաց կատարելն ասէ, զի մի է կամքն Հաւր եւ Որդւոյ: Եւ դարձեալ չորրորդ պատճառ եւ պիտանի միտք, զի լուար եւ լսես զանցեալ եւ զապագայն ասէ, իսկ այժմ ասէ առնեմ, ինքնիշխանութեամբ եւ աստուածաբար:

Յետ այսաւրիկ ճառէ զՉորրորդ կերպ ստուգութեան սքանչելեացն, որ է կոչումն Ղազարու:

**ՎԱՍՆ ԾԱՅՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ**

Բան. «Զայս իբրև ասաց Յիսուս, ի ձայն մեծ աղաղակեաց եւ ասէ» (Յովհ. ԺԱ. 43):

- Մեկնութիւն. Եւ աստ լինի երկու հարց.
- Առաջին. Թէ զի՞նչ է աղաղակն:
- Պատասխանի. Աղաղակն երեք կերպիւ իմանի. նախ՝ բազմախուռն ձայնք ամբոխից աղաղակ կոչի: Երկրորդ. ձայն եւ բան եւ բարձր իղձք սրտին խառնեալ աղաղակ կոչի: Երրորդ. ուժգին ձայնն աղաղակ կոչի: Իսկ աստ ոչ առաջինն, այլ երկուքն յարմարին, զի ձայնն՝ ի մարմնոյն, եւ բանն՝ ի մտացն, եւ աստուածային զաւրութիւն խառնեալ ի նոսա: Այլ եւ ուժգին եւ բարձր ձայնեաց, վասն այն ասէ. «Ի ձայն մեծ աղաղակեաց»:

Երկրորդ հարց. Վասն է՞ր ձայնիւ աղաղակեաց, զի մեռեալն ոչ զգայ զձայնն:



Պատասխանի. Ասեմք վասն տասն պատճառի. նախ՝ որպէս այլ ուրեք առնէր սքանչելիս կամաւք կամ բանիւ, կամ ձեռաւք, կամ մատամբ, կամ թքով եւ այլով: Եւ աստ ձայնիւն յարոյց զՂազար, զի Աստուած էր մարմինն եւ Աստուծոյ էր ձայնն, որ ի մարմնոյն: Երկրորդ. զի մի կարծիցեն, թէ կախարդութեամբ ինչ ասիցէ բան: Երրորդ. զի լսիցեն ամենայն ժողովուրդն եւ իմասցին ի նմանէ լինել զյարութիւն: Չորրորդ. զի ի ձայնէն ծանիցեն զաստուածային զաւրութիւն Իւր, զի ոչ որպէս մարգարէքն անուամբն Աստուծոյ, եւ ոչ որպէս առաքեալքն անուամբն Քրիստոսի յարուցանէին: Հինգերորդ. զի բարձցէ զկարծիսն, որք ասեն զհոգիս զաւղեալ ի գերեզմանս, եցոյց, թէ ի հեռուստ է, այսինքն՝ ի դժոխս, կոչէ դառնալ ի մարմինն: Վեցերորդ. զի բարձցէ զմոլորութիւն, որք ասեն զհոգիսն մեռեալ ընդ մարմնոյն, եցոյց, թէ կենդանի են հոգիքն եւ ի զգայութեան: Եւթներորդ. զի վստահէր յանձն Իւր եւ աներկբայ գիտէր, զի լինելոց էին հրաշքն: Ութերորդ. զի մեր ընտել սովորութեամբն տնաւրինէ՝ ի բացուստ ձայնելով: Իններորդ. զի սաստիւ գոչմամբն Յիսուսի ահաբեկ եղեալ բարապանք դժոխոցն եւ արձակեցին զհոգին յարգելեալ բանտէն: Տասներորդ. հնչումն ձայնին իջեալ ի յայր գերեզմանին եւ զապականեալ մարմինն նորոգեալ կենդանացոյց, եւ որպէս բանն ոչ մասամբ, այլ բոլոր բաժանի յամենեցուն սիրտն, նոյնպէս ձայնն Քրիստոսի բոլորն էր առ հոգին Ղազարու եւ առ մարմինն ի գերեզմանի եւ յամենեցունց լսելիսն:

Բան. «Ղազարէ, արի՛, եկ արարաք» (Յովհ. ԺԱ. 44):

Մեկնութիւն. Չորս բառ է. մինն անուն եւ երեքն հրամայական բայ:

Ղազարէ՛ Ղազարոս, որպէս Ստեփաննէ՛ Ստեփաննոս: Եւ է վեց գիր կամ եւթն, որպէս Յիսուս Քրիստոս վեց եւ եւթ գրով գրոշմի: Իսկ որ ասէ՛ արի, մարմնոյն ասէ, որ անկեալ էր մահուամբ, եւ հոգին էր հեռացեալ, արարաք՝ մարմինն ի գերեզմանէն եւ հոգին ի դժոխոցն: Եւ տե՛ս, զի ոչ ասաց, թէ Հայր յարո՛ գոս, կամ՝ յանուն Հաւր արի՛, այլ Ինքն իշխանաբար հրամայէ մեռելոյն իբրեւ կենդանի խաւսելով:

Եւ աստ լինի կրկին հարց.

Առաջին. Վասն է՞ր ի ձայնելն մի միայն Ղազար ել, զի բազում Ղազարք էին անդ:

Պատասխանի. Նախ՝ զի միաւոր ձայնեաց. Ղազարէ, արի՛, եկ, եւ ոչ բազմաւոր՝ Ղազարք, արի՛ք, եկա՛յք: Երկրորդ. զի ակնարկութիւն աստուածային առ մինն եղեւ եւ ոչ առ բազումս:

Երկրորդ հարց. Վասն է՞ր զՂազար կենդանացոյց եւ ոչ զայլս:

Պատասխանի. Զի մեծատունն զՂազար խնդրեաց ի մեռելոց յարուցանել, զի հաւատասցեն եղբարքն (հմմտ. Ղուկ. ԺԶ. 19-31), վասն այն փոխանակ Ղազար աղքատին յարոյց զՂազար սիրելին, եւ ոչ հաւատացին նոքա:

Զկնի այսմ գնէ զհինգերորդ ստուգութիւն սքանչելեացն:

Բան. «Եւ ել մեռեալս վաղվաղակի ուրիշ կապելովք եւ ձեռաքն երիզապնդար եւ երեսար վարշամակապարար» (տե՛ս Յովհ. ԺԱ. 44):

Չորս էր պատանք ազգին հրէից, այսինքն՝ վարշամակ գլխոյ եւ ձեռացն եւ ոտիցն եւ բոլոր մարմնոյն, սոյնպէս զՔրիստոս պատեցին ըստ աւրինացն հրէից, սոյնպէս եւ առ մեզ մին պատանքն զչորեսին մասն պատէ: Իսկ ասելն՝ երիզապիւղ, այն է, որով պատեալէր կտաւեայ շառափոկաւք, զի ստուգաբանութեամբ ասէ. էր զնա պնդեալ, կամ՝ որիշապնդաւք: Եւ կրկին իրս նշանակէ. նախ՝ զի կապեալ է մեռեալն յամենայն գործոյ զգայութեանց: Երկրորդ. զի նախահայրն մեր ոտիւք գնաց ի ծառն եւ ձեռաւքն եհատ զպտուղն եւ բերանովն եկեր, վասն այն զայն մասունսն կապեմք պատկառելով:

Եւ աստ լինի կրկին հարց.

Առաջին. Թէ զի՞նչ նշանակէ պատանք մեռելոյն:

Պատասխանի. Կոչի պատանք, զի պատեալ է եւ կապեալ զամենայն զգայարանսն եւ ոչ ինչ կարէ գործել՝ ո՛չ չար եւ ո՛չ բարի, եւ զի կտաւն յերկրէ է եւ արուեստիւ գործեալ, ցուցանէ, թէ զոր ինչ գործեաց ոք յերկրի, զնոյն զգենու եւ զարդարի: Եւ զայլ արարողութիւն մեռելոյն գիտ ի Հարցմունքն, տասներորդ գլուխն չորրորդ համարն:

Երկրորդ հարց. Վասն է՞ր Փրկիչն առանց պատանաց յարեալ, եւ Ղազար՝ պատանաւք:

Պատասխանի. Նախ՝ վասն ստոյգ յարութեան երկոցունց, զի պատանք Փրկչին ցուցանէր, թէ ստուգապէս յարուցեալ է եւ ոչ գողացեալ, եւ պատանք Ղազարու ցուցանէ, թէ ստուգապէս Ղազարն է եւ ոչ այլ ոք նման նմա, որպէս ասէ մեկնիչդ:



Դարձեալ՝ խորհրդաւոր է, զի Քրիստոս յարեալ ի կեանս անմահ, ոչ էրպիտոյ պատանք նմա, որպէս եւ ոչ մեզ ի հանդերձեալն, իսկ Ղազար՝ ի կեանս ժամանակեայ, պիտոյ էր նմա ունել պատանս եւ ծածկոյթ մարմնոյ: Եւ բարւոք ասէ. «Եւ վաղվաղակի», զի զաւրու- թիւն Աստուծոյ ի նոյն վայրկենի եւ յանմասն ըոպէի ներգործէ զհրաշս:

Եւ աստ երեք հրաշք ի միասին եղեւ. նախ՝ զի ընդ ասել ձայ- նին՝ յարեալ: Երկրորդ. նոյն մարմնովն, որ եղաւ ի գերեզմանի, յարեալ: Երրորդ. կապեալ ոտիւք եւ երեսաւք եկն առ Քրիստոս, վասն այն հրամայեաց.

Բան. «Լուծէք զդա եւ թողէք երթալ» (Յովհ. ԺԱ. 44):

Մեկնութիւն. Երկու ինչ ցուցանէ. նախ՝ ըստ Ոսկեբերանին, զի լուծանելովն զպատանս եւ շաւշափելով ծանիցեն, թէ նա է, որ մե- ոաւ եւ յարեալն իսկ: Դարձեալ՝ զայս հրամայեաց Քրիստոս առ ի պատուել զպաշտաւնեայս Իւր:

Իսկ զի հրամայեաց Քրիստոս թոյլ տալ նմա երթալ, վասն երկու պատճառի. առաջին է ըստ Ոսկեբերանին՝ վասն խոնարհութեան, զի ոչ հրամայէ ընդ իւր շրջել եւ յայտնել զփառսն Քրիստոսի: Երկրորդ. զի ցուցցէ, թէ ճշմարիտ յարուցեալ է եւ ոչ առ աշաւք: Եւ այս յայտ է ի կենդանական գործոյն, որ էր շրջելն եւ ուտել, եւ որպէս ասէ ի սոյն Աւետարանիս, թէ՛ «Ղազար մի էր ի բազմե- լոցն, որք ուտէինն» (Հմմտ. Յովհ. ԺԲ 2): Եւ դարձեալ այսու եցոյց, թէ ոչ միայն յարուցեալ էր ի կենդանութիւն, այլ ի կատարեալ զաւրութիւն մարմնոյն:

**Թէ զինչ նշանակէր յարութիւն Ղազարու**

Մեկնութիւն. Եւ գիտելի է, զի չորս նշանակութիւն ունի լու- ծումն եւ արձակումն Ղազարու.

Առաջին. նշանակէր զԱզամ ի կապից դժոխոցն արձակել զալս- տեամբն Քրիստոսի, զի զգէմք եւ զբնութիւն Ազամայ ունէր Ղա- զարոս, որպէս ցուցաւ ի բանն, որ ասացաւ. «Եւ էր ոմն հիւանդ Ղազա- րոս» (Յովհ. ԺԱ. 1):

Երկրորդ. դարձեալ նշանակէ, զի որ ոք մեռանի հոգևով ի մեզս եւ կապէ զգործն նորա սատանայ, իսկ յորժամ յառնէ ի մեռելոց, արձակի կապն սատանայի, որով կարացցէ փոխանակ չարին բարի առնել:

Երրորդ. դարձեալ նշանակէ յարութեան մերում, որք ազատիմք յայնժամ յամենայն կրից մարմնոյ, որք աստ ըմբռնեալ տանջեն եւ կորուսանեն զհոգիս մեր:

Չորրորդ. դարձեալ ասեն այլ վարդապետք. Ղազարոս այս նշա- նակէ զայր մեղաւոր, զի Ղազարն թարգմանի ազնետալ ի Տեսունէ, եւ յայնժամ աւզնեալ է այր ի Տեսունէ, յորժամ յԱստուծոյ շնորհս ինչ ընդունի: Եւ սա հիւանդանայ փորձութեամբ մեղաց, առանց կատարեալ հաւանութեան, եւ յորժամ հաւանի, յայնժամ մեռեալ ասի:

Եւ չորս աւր ի գերեզմանի մնայ վասն չորս ընթացից մահու չափ մեղացն. առաջին է ներքին հաւանումն կամացն: Երկրորդ է արտաքին գործ մեղացն: Երրորդն՝ սովորութիւն ի մեզս: Չորրորդն է խստասրտութիւն, որ անգեղջ մնայ: Իսկ յարութիւն Ղազարու, որ եղեւ միայն ի Քրիստոսէ, նշանակէ զհեղումն շնորհաց ի հոգի մեղաւորին, իսկ լուծումն կապանացն, որ եղեւ սպասաւորութեամբ աշակերտացն, նշանակէ զքահանայական արձակումն, որ մեղա- ւորն ազատի յամենայն մեղաց իւրոց: Եւ այս լինի, յորժամ դայ ի մկրտութիւն կամ ի խոստովանութիւն մեղաց, զի մկրտութեամբն ազատիմք ի սկզբնականեւ յամենայն ներգործական մեղաց, որպէս յայտ է ի չափ հասեալսն, նոյնպէս եւ որ զղջմամբ խոստովանի եւ ապաշխարէ, ազատի յամենայն գործոց մեղաց եւ ի պատժոցն: Եւ որպէս նախ յարեալ Ղազար ի մեռելոց եւ ապա արձակեցաւ, սոյնպէս պարտ է մեղաւորին նախ յառնել զղջմամբ եւ խոստովա- նութեամբ, եւ ապա քահանայն արձակէ ի մեղաց զղջացեալն եւ զխոստովանեալն, որ եւ զմեզ արձակեսցէ Քրիստոս յամենայն կա- պից մեղաց մերոց: Ամէն:

**ՄԱՏԹԷՈՍ ԶՈՒՂԱՅԵՅԻ**

«Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս [ի Բեթանիայ, ի գեղջէ Մարեմայ եւ Մարթայի քեռ նորա]» (տրն Յովհ. ԺԱ. 1):

Եւ այս յերկուս ղէմս նշանակէ, այսինքն՝ զհիւանդութեան, զի է որ առողջանա եւ է որ մեռանի: Իսկ այս հիւանդութիւնս ոմն էր, այսինքն՝ առանձնակի է յերկուցն, զի ո՛չ առողջանայ եւ ո՛չ մե- ռանի, որպէս այլք մինչ ի կատարածին օրն, այլ միջակ է երկուցն: «Ոմն» զբնութիւն մարդկան ասէ, «հիւանդութիւն»՝ մեղացն, «Ղա- զարոս»՝ աւզնեալ, «Բեթանիա[յ]»՝ տուն սգոյ, «Մարիամ»՝ մխի-



Թարեւ կամ լուսաւորել, «Մարթայ»՝ տերունի, «Յիսուսն»՝ փրկիչ: Այս՝ մեկնութեամբ Սիմոնի: Զի մարդկային բնութիւնս հիւանդացեալ եւ մեռեալ մեղօք էր, ի տուն աշխարհիս սգոյ: Եկն փրկիչն եւ տերունական դալստեամբն օգնեաց մեզ եւ մխիթարեալ լուսաւորեաց եւ փրկեաց ի մահուանէ: Դարձեալ ոմանք երկբա[յ]ին յիմարութեամբ՝ տեսանելով զսիրելիսն Քրիստոսի ի փորձանս եւ ի նեղութիւնս անկեալ: Զոր լինի վասն Ե. պատճառի: Առաջինն՝ զի կատարեսցի բանն Քրիստոսի, որ ասաց. «Երանի է ձեզ, յորժամ նախապիցն զձեզ եւ հալածեսցն» (Մարթ. Ե. 11, հմմտ. Ղուկ. Զ. 22) եւ թէ՛ «դուք չէք յաշխարհէ, վասն այնորիկ ո՛չ սիրէր զձեզ, եւ աշխարհ զիւրն սիրէր» (հմմտ. Յովհ. ԺԵ. 19): Երկրորդ՝ զի պատերազմ ամուր դղեկի լինի եւ ոչ որ ի դիւր դաշտի, այսպէս սատանայ միշտ ընդ արիագոյնսն ամրացեալ հաւատով եւ գործով պատերազմի: Երրորդ՝ զի որ այլոց քարոզէ թողուլ զհեշտութիւն աշխարհիս, պարտ է եւ ինքեանք սպի լինել: Զորրորդ՝ զի թէ փոշտեսակ սխալանացս իցեմդ, այնու մաքրեսցի, որպէս զարծաթ ի մէջ բովի: Հինգերորդ՝ զի զյոյսն հաստատուն ունիցի, թէ որպէս սիրելոյն Ղազարու պարգեւեաց կենդանութիւն, այսպէս եւ համբերողացն պարգեւէ զյաւիտենական կեանս: Զտեղին Բեթանիա յիշէ, վասն ստուգութեան պատմութեանն:

«Ի գեղջէ Մարեմայ եւ Մարթայի» (Յովհ. ԺԱ. 1): Եւ թէ վասն է՞ր ասէ, զգեղն ք[ու]երցն քան թէ եղբօրն: Ըստ Ոսկեբերանին՝ զի նոքա կենդանիք էին, պատշաճէր նոցա քան մեռելոյն, իսկ այլք ասեն, թէ հարսնութեան նոցա պռոյք էր տվեալ, այսինքն՝ բա(ա)ժինք փեսային:

«Այս այն Մարիամ էր որ ամ զՏէրն իւղով, եւ ջրնջեաց զոպս նորա հերով իւրով» (Յովհ. ԺԱ. 2): «Հերովն ջնջէր»: Նախ՝ ոչինչ ի վեր իւր պատուական համարեցաւ քան զհերն: Երկրորդ՝ զի զգլուխն եղ ի վերայ սուրբ զարշապարին, որ զխոնարհութեամբ կատարեալ սէրն ցուցանէր: Բայց է տարակոյս ի մէջ ազգաց վարդապետաց, վասն օժողաց կանացս ոմանք Գ. ասեն օժող Քրիստոսի, այլ եւ այլ կանայս: Այլ զՄատթէոսին եւ ը[զ]Մարկոսին, քանզի նոքա Բ. աւուրբք յառաջ ասեն քան զատիկն, եւ այլ՝ զՅովհաննու, վասն զի Զ. աւուրբք յառաջ էր եւ այլ՝ Ղուկաս, վասն զի յառաջ էր ժամանակաւ եւ կինն պոռնիկ: Իսկ ոմանք Բ. ասեն լինել զկանայքն, որպէս՝ Ոսկեբերան: Այլ՝ զԳ. աւետարանչացն, որ ի տունն Սիմոնի,

եւ այլ՝ զՅովհաննիսի: Զի սայ կին պարկեշտ էր եւ այն՝ պոռնիկ: Իսկ Իգնատիոս վարդապետն հայոց՝ ըստ դիմանայ այսմ կերպիւ ինչ, զի այն, որ Մատթէոս եւ Յովհաննէս ասեն, մի է՝ վասն ժամանակին եւ խօսից եղելոց եւ այլ՝ ասէ Ղուկասուն, զի ի տան փարիսեցոյն էր եւ կինն պոռնիկ եւ ոչ մերձ ի չարչարանսն եւ այլ էր պատասխանին Քրիստոսի: Իսկ լատինացիքն մի է, ասեն օժանող, զոր չորէք կին յիշեն, բայց Բ. անգամ. Ա. այն զոր Ղուկաս յիշէ եւ այժմ ասեն, թէ յՀովհաննէս ցոյց տա այժմ օժմանն առաջին, որ մեղքն թողու եւ Բ. անգամ օժ նոյն Մարիամ քոյրն Ղազարու մերձ ի չարչարանսն շնորհամատոյց լինէր վասն յարութեան եղբօրն:

«Առաքեցին [առ նա] քոյրքն [նորա]» (Յովհ. ԺԱ. 3): Եւ ընդէ՞ր ոչ ինքեանք գնացին, որպէս Ճ. ապետն եւ թագաւորագն: Առաջ վասն ջերմեռանդ ընդունելութեանն: Երկրորդ՝ զի ոչ էր սգաւոր կանաց օրէն ի դուրս ելանել, թէպէտ չէր մեռեալ, այլ ի մահ խոնարհեալ: Երրորդ՝ զի ոչ էին ամենեւինիմբք կատարեալ ի հաւատս, որպէս եւ ոչ առաքեալ նախքան զիջումն Հոգւոյն Սրբո[յն]:

«[Տէր ահաւասիկ] զոր դուն սիրէիր՝ հիւանդացեալ է» (Յովհ. ԺԱ. 3): Եւ վասն է՞ր աղաչեն գալ Քրիստոսի: Առաջին՝ վասն մեծութեան պատուին, ոչ հարկիւ ասեն, թէ՛ եկ, այլ միայն զգացուցսանեն: Երկրորդ՝ զի մի նոքա լիցին պատճառ յարութեան, այլ կամքն Քրիստոսի:

«Եւ սիրէր Յիսուս՝ զՂազար, եւ զՄարիամ, եւ զՄարթա» (Կրն Յովհ. ԺԱ. 3): Ըստ Ոսկեբերանին՝ զի փոյթ, այսինքն՝ առաքինիք եւ ջերմ էին ի սէրն Քրիստոսի, յօրինակ՝ զի որք սիրեն զՔրիստոս, սիրին եւ նոքա ի Քրիստոսէ: Իսկ այլք ասեն, թէ հայր սոցա դահճապետ էր, եւ վասն փախստեանն կալանաւորի ումեմն թագաւորն զամենայն ինչս նորա յափշտակեաց, իսկ հայրն, առեալ զնոսա, գնաց յԵգիպտոս՝ ի քաղաք մի Լիկուպօլիս անուն, նոյնպէս եւ Յովսէփ եւ Մարիամ՝ հանդերձ մանկամբն, փախստեամբն ի Հերովդէէ, անդ բնակեցան ի միասին եւ ընդելք էին եւ սնընդակից միմեանց:

«Իբրեւ լուա, ասէ՛ այն հիւանդութիւնն չէ» (հմմտ. Յովհ. ԺԱ. 6-14):



Յայսմ բանէ ժպրհեցան ոմանք, թէ ոչ ստուգապէս մեռաւ Ղազար: Ո՛չ է այնպէս զայս ասաց, վասն Դ. պատճառի: Նախ՝ թէ ո՛չ է ի մահ, այսինքն՝ այնպէս որք մինչ ի կատարած ոչ յառնեն: Երկրորդ՝ է՛ մահ, վասն փառացն Աստուծոյ Հօր եւ Որդւոյ նորա եւ զի նախ զՀայր ասէ, եւ զկնի՝ զՈրդին, վասն համոզելք[յ], զչար նախանձ եւ զնենգութիւն հրէիցն, որք կարծէին հակառակ Աստուծոյ: Յայս միտս եւ ի գերեզմանն նախ առ Հայր աղօթեաց եւ ապա յարոյց զՂազար: Եւ ոչ թէ վասն այն, թէ յարութեամբ փառաւորեսցի Քրիստոս, հիւանդացոյց զնա եւ մեռոյց: Քաւ լիցի, այլ մահ նորա բնական մահն էր, այլ յայտնիչ փառաց յարութիւնն էր: Երրորդ՝ զի վասն յարութեան համբաւոյս այս ժողովրդեանն յառաջեաց Օվսաննա եւ օրհնութիւն մատուցանէին: Դ.՝ զի վասն հաւատոյ ի յարութեանն Քրիստոսի եղեն սքանչելիք, այսինքն՝ լուսաւորաց խաւարումն եւ վիմաց պատառումն եւ այլն: Նոյնպէս մի ի մեծամեծ սքանչելեացն էր այս ի վկայութիւն փառացն Աստուծոյ:

«Եկաց աւուրս երկուս» (հմմտ. Յովհ. ԺԱ. 6): Զի համբաւեսցի մահ նորա, թէ ստուգապէս մեռաւ եւ թաղեցաւ եւ չորէքօրեա լինիցի:

Յիսուս ասէ՝ «եկայք երթիցուք [միասնգամ] ի Նրեասրան» (տնս Յովհ. ԺԱ. 7): Եւ վասն էր այժմ ասէ զուղիղն, զի ոչ ասէր յամենայն ժամ ուր եւ երթային: Առաջին՝ զի մի ափշեալ ինչ կարծիցեն զՔրիստոս, վասն վաղվաղակի դառնալոյն անդրէն, այլ զպատճառն իմասցին: Երկրորդ՝ զի գերկիւղ նոցա փարատեսցէ, թէ որ մահացելոցն կեանս տամ, կարող եմ զկենդանիքս ի բռնութենէս հրէիցն զերծուցանել: Երրորդ՝ զի զորս դուք կարծէք քարկոծող ինձ լինելոց են նոքա քարոզ ինձ եւ վկայէ աւետարանիչն, թէ բազումք հաւատացին ի նա (Յովհ. Դ. 39, 41, Ը. 30 եւն):

«Ոչ երկոգրասա՞ն ժամ է յաւուր. եթէ որ [զնայ] ի փուրնջեան՝ ոչ զայթագողի» (տնս Յովհ. ԺԱ. 9): Առաջին՝ այն է, զի օրինակ տա[յ] յազէ նոցա անկասկած լինել, եթէ նոցա որք զգալի արեգական լուսով չըջին, ոչ վնասին, որչափ դուք ընդ ձեզ ունելով զիմանալի արեգակս, որ լուսաւորեմ զամենայն հեթանոսս: Երկրորդ՝ զի մահն պատիժ է խաւարային գործոցն, այսինքն՝ մեղացն, իսկ մեք անխեղձ եմք յայսպիսի մտաց զի գործ լուսաւոր ունիմք, ոչ երկնչիմք: Երրորդ՝ «օր» զինքն ասէ եւ ԲԺ.(երկոտաս)ան ժամ՝ զառա-

քեալ: Զորրորդ՝ միտք եւ գեղեցիք, զի որպէս օրն ո՛չ մթանայ մինչ կատարին ԲԺ. ժամք: Այսպէս եւ ոչ ինձ է վերանալ յաշխարհէս մահուամբ, մինչ ի նոյն կէտն ժամանակի, որ հաստատեալ է, եւ դեռեւս չէ մերձեալ ժամանակն, այլ կայ դեռ եւս իբրեւ ժամ մի եւ կամ կէս, որպէս աւուրն թէպէտ եւ իրիկունն կոչի:

«Ղազարոս բարեկամ մեր ննջեաց, այլ երթամ զի [զարթուցից զնա] (Յովհ. ԺԱ. 11): Ինչ զմահն ասէ, զի հոմանունք են: Զի այսպէս սահմանին սոքա. մահ է քուն յաւիտենական եւ քուն է մահ ժամանակաւոր: «Բարեկամ» ասէ, զի ցուցանէ հարկ գոլ զգնալն: Եւ զայս ասաց յառաջագոյն, զի յորժամ յարուցէ, իմասցին, թէ զիտէր կնախաւ:

«[Եթէ] ննջեաց՝ ապայ ապրի» (Յովհ. ԺԱ. 12): Այսինքն՝ զարթչի եւ յառնէ եւ ոչ եմ ճեպեալ անդ, վասն զարթուցման ասէին զայս, զի կարճեսցեն զգալն:

«Յիսուս վասն մահուն նորա ասէր. նոցա այսպէս [թուեցաւ]՝ թէ վասն ննջելոյ [քնոյ ասէր] (տնս Յովհ. ԺԱ. 3): Ոսկերեբան ասէ՝ մեծ յիմարութիւն է կարծել, թէ զայսքան ճանապարհս տանի վասն ի քնոյ զարթուցանելոյ զոմն, այլ նոքա առակ իմացան զբանն, որպէս սովորութիւն էր Քրիստոսի, վաս որոյ կրկնեն անգիտութեամբ, թէ յայտնեսցէ Քրիստոս: Իսկ ըստ այլոց զնինջող այս թմբութիւն կարծեսցին, որպէս յետոյ մանգանցն Եփեսոսի եւ որպէս յաւուրս Երեմիայի գերութեամբն ի Իսրայելի:

«Ղազարոս մեռաւ, եւ ես ուրախ եմ վասն ձեր, [զի դուք հաւաքաւորք ինձ,] զի ես չէի անդ» (տնս Յովհ. ԺԱ. 14-15): Ուրախ եմ, ասէ, Քրիստոս: Առաջին՝ վասն ձերոյ՝ «հաւատասջիք ինձ»: Եւ Բ.(երկրորդ)՝ զի ես չէի անդ, զի մի կարծիցեն առաջօք եւ խաբէութեամբ ինչ լինել: Տե՛ս՝ զի յորժամ զնինջն յիշեաց, ասաց, թէ զարթուցանեմ, իսկ յորժամ ասաց, թէ մեռաւ, ո՛չ ասաց, թէ՛ յարուցանեմ, օրինակ տայ մեզ, զի մի՛ նախքան զգործն մեծաբանեսցուք:

«Ասէ Թովմաս՝ անուանեալն երկուորեակ՝ [ցաշակերփակիցսն]» (տնս Յովհ. ԺԱ. 16): Այսինքն՝ զի Բ. եղբարք ի միասին էին ծնեալ:



«Օն, եկայք եւ մեր» (Յովհ. ԺԱ. 16): «Օն» բառն երբեմն նախդիր է, որ ոչինչ նշանակէ՝ որպէս աստ, զի բառ է երկրի, որպէս սեբաստացիք «կաճ» ասեն եւ Կարնոյ քաղաքացիք՝ «փի», արծիւցիք՝ «անէ», իսկ խլաթեցիք, որ է Բզնունիք, «Օ» ասեն յամենայն բանի: Իսկ երբեմն մի՛ լսի «օն», որպէս՝ ««օն եւ օն արասցէ ինձ Տէր» եւ օն եւ օն» յաւելցի, այսինքն՝ «մի եւ մի»:

«[Զի] ընդ նմա մեռցուր» (տրն Յովհ. ԺԱ. 16): Ընդ ու՞մ, այսինքն՝ կա՛մ ընդ Քրիստոսի, կա՛մ ընդ Ղազարու:

Ասէ Ոսկերբրան՝ թէ երկրայութեան եւ թերութեան էր խօսք, որպէս թէ՛ Ղազար մեռաւ, զմեզ այլ տանի սպանանել տա[յ] հրէիցն: Համարձակութիւն էր այս: Ա.՝ զի ընդ նայ միայն չասաց Քրիստոս: Բ.՝ զի այլ ծերագոյնք եւ սիրելի աշակերտք էին յառաջեաց քան զնոսա: Եւ ընդ է՛ր ոչ յանդիմանեաց Քրիստոս: Ա.՝ զի առաջին վանկն հրաւիրէր երթալ, թէպէտ վերջին՝ երկուրդի էր: Բ.՝ զի յետոյ քան զամենեսեան գերագոյն լինելոց էր: Եւ տե՛ս զմեծ զօրութիւն խաչին, զի որ այժմ ընդ Քրիստոսի ի Բեթանիա երկնչի երթալ յետ խաչին յամենայն տեղիս միայն ընթանայր, քարոզեալ Քրիստոս յամենայն տեղիս ի մէջ անապատի, իսկ այլք ասեն՝ թէ ակնառուութեան էր բանս, իբր թէ վասն սիրոյ Քրիստոսի ասաց, ըստ սիրելոյն մեռանել: Այլ ի բնաբանէն չէ՛ հաստատուն, վասն այն պարտիմք հետեւեալ կարծեացն Ոսկերբրանին:

«[Եկն Յիսուս]՝ եգիպ գնա չորեքարեայ ի գերեզմանի» (տրն Յովհ. ԺԱ. 17): Գտանել ոչ ի գերեզմանն գալն ասէ, այլ յերկիրն ի լրոյ: Թէ որպէս չորեքօրեա լինէր մեռեալն: Մինչ Եժ. (Հնգետաս) ան ասպարեզ էր ճանապարհն: Այս է, զի է. ասպարեզն Ա. մղոն է, որ լինի Բ. մղոն եւ Ա. ասպարեզ: Արդ ի յառաջին օրն մինչ առաքեցաւ խնդրակն եւ զնաց Ա. ասպարեզն, մեռաւ Ղազար: Բ. օր այլ եկաց Քրիստոս անդ, որ լինի Գ. օր եւ ի չորրորդումն եկն ի Բեթանիա: Իսկ այլք, որ ասեն քան զԺԵ. ասպարեզ հեռի գոլ գտեղին ի յայնկոյս Յորդանանու, այսպէս ասեն, թէ յորժամ խնդրակն հասաւ առ Քրիստոս, յայն ժամու մեռաւ Ղազար եւ եկաց Քրիստոսի ի վերայ մահուանդ Բ. օր եւ Բ. օր ի ճանապարհ, որ ի Դ. օրն հասանի Բեթանիա: Եւ թէ էր վասն չորեքօրեա, զի է՛ ցաւ զոր այժմ սխալաւ հ կոչեն, որ թուի, թէ մեռաւ: Սակայն մինչ ի Դ. օրն ո՛չ մեռանի, չորեքօրեա յարոյց, զի յայնմ կարծեաց ժխտող ազգին ազատիցի:

«Էր Բեթ[անիա] մերձ յերուսաղէմ, [իրրեւ] ասպ[արիսաւր հնգե-  
րասան]» (տրն Յովհ. ԺԱ. 18): Ըստ կարծեացն Անայի, թէ զկետն յայս մէջս զնես, ցուցանէ, թէ Բեթանիայ մերձ էր յերուսաղէմ, բայց ի տեղեացն, ուր Քրիստոս էր, Եժ. ասպարեզ էր: Իսկ ըստ այլոց՝ ի Բեթանիայու յերուսաղէմ է ԺԵ. ասպարեզ: Եւ ասէ զայս աւետարանիչն, զի ցուցցէ, թէ ստուգապէս մեռեալ էր եւ համբաւեալ, եւ յերուսաղէմ եւս զնացեալ էին ի սուք, զի մերձէր յերուսաղէմ այսքան այսպիսօք:

«Բագումք ի հրէից [անփի] եկեալ էին [առ Մարթա եւ Մարիամ], զի մխիթարեսցեն [զնոսա վասն եղբարն]» (Յովհ. ԺԱ. 19): Որպէս իշխէին զալ առ սիրելիսն Քրիստոսի, զի դաշն եղեալ էին, թէ որք խոստովանի զնայ Քրիստոս, ելցէ ի ժողովրդենէն: Ա. վասն զի տազնապ եւ տրտմութիւն եհաս: Բ.՝ վասն մեծագոլութեանն զնացին: Գ.՝ կամ որք զնացին ո՛չ էին չարեացն:

«Մարթա ընդառաջ զնաց» (հմմտ. Յովհ. ԺԱ. 20): Ոմանք ասեն, թէ Մարթա էր աւագ քոյրն, զի վասն այն սմա ասացին զգալ վարդապետին եւ սա ի դուրս էր եւ հոգայր զպէտս վասն աւագութեանն: Միայն զնաց, զի խօսեսցի վասն եղբօրն եւ յորժամ լսեաց զքաղցր լուրն Քրիստոսի վասն եղբօրն, կոչեաց ապա եւ զքոյրն:

«[Տէր]՝ եթէ աստ լեալ էիր, [եղբայրն իմ չէր մեռեալ]» (տրն Յովհ. ԺԱ. 21): Սէր թէ աստ էիր եղեալ, թախանձեաք զքեզ եւ դու ո՛չ թողէիր մեռանել եղբօրն, համարեցաւ թէ վասն այն ոչ եկն Քրիստոս, թէ կամէր զմահ նորա: Ասեն զայս մարդկաւրեն, թէ ուր լոյս է, ոչ է անդ խաւար եւ ուր կեանք, ոչ մահ:

«Գիպեմ, թէ զոր ինչ խնդրեսցես [յԱսպրուծոյ՝ փացէ քեզ Ասպրուած] » (տրն Յովհ. ԺԱ. 22): Տե՛ս զի ոչ հաւատաց որպէս պարտն էր կարող գոլ յարուցանելոյ ինքնին զօրութեամբ, այլ որպէս մարդ ընդիր կամ մարգարէ, զի աղաչանօք յարուցէ:

Ատ [ցնա] Յիսուս. «Յարիցէ եղբայրն [քո]» (տրն Յովհ. ԺԱ. 23): Զի խախտեսցի զկարծիքն Մարթա[յ]ի, թէ՛ ոչ աղաչելով յարուցանեմ, այլ իմ կարողութեամբ:



[Ասէ ցնա Մարթա.] «Գիտեմ զի յարիցէ ի յարութեան՝ յաւուրն [յեփնում]» (տե՛ս Յովհ. ԺԱ. 24): *Եւ ուստի գիտէր զյետին յարութիւնն: Ըստ Ոսկեբերանին՝ ի Քրիստոսէ բազում անգամ լուեալ էր, ասէ: Իսկ ըստ այլոց՝ զի փարիսեցիքն հաւատային յարութեան եւ սայ ի նոցանէ էր, զի միայն սաղուկեցիքն չհաւատային:*

[Ասէ ցնա Յիսուս.] «Ես եմ յարութիւն եւ կեանք. [որ հաւարայ յիս, թէպէտ եւ մեռանի՝ կեցցէ]» (Յովհ. ԺԱ. 25): *Զինքն ցուցանէ տուող յարութեանն աղբերն կենաց, այսինքն՝ որպէս ինքն. «Եկեցէ ժամանակ [յորում] ամենեքեան, որ ի գերեզմանս [կայցեն.] լուիցեն Որդոյ եւ եկեացն արարաքս (տե՛ս Յովհ. Ե. 28-29):*

*Եւ առաքեալ Պաւղոս, թէ՛ «ի ձայն իրեշարակապետի, եւ ի փող Աստուծոյ իջանէ յերկնից. եւ մեռելք ի Քրիստոս [յարիցեն յառաջագոյն]» (տե՛ս Առ Թեսաղոնիկեցիս, Ա., Դ. 15):*

«Որ հաւարայ յիս, թէպէտ եւ մեռանի՝ [կեցցէ]» (տե՛ս Յովհ. ԺԱ. 25): *Զբնական մահն ասէ:*

«Եւ [ամենայն] որ կենդանի է՝ եւ հաւարայ [յիս], մի մեռցի ի յաւիտեան» (տե՛ս Յովհ. ԺԱ. 26): *Զյաւիտեանական կենացն ասէ: Արդ՝ զանազան է «հաւատալ Քրիստոսի» եւ «հաւատալ զՔրիստոս» եւ «հաւատալ ի Քրիստոս»: «Հաւատալ Քրիստոսի» է հաւատալ բանիցն Քրիստոսի եւ «հաւատալ զՔրիստոս» է հաւատալ ճշմարիտ Քրիստոս, եւ յայս կերպս հաւատան չարք ի մարդկանէ եւ սատանայ եւս, իսկ «հաւատալ ի Քրիստոս» է հաւատալ զՔրիստոս գերազոյն Աստուծո մարդացեալ եւ եզական սիրով առ նա փութալ: Այս է կատարեալ հաւատ եւ որք այս կերպիւս հաւատան մի՛ մեռցին յաւիտեան: Դարձեալ յայսմանէ, որ ասէ կենդանի իցէ մի՛ մեռցի, ոմանք կարծեցին, թէ կենդանիքն, որ ի կատարածին ի զայստեանն Քրիստոսի ո՛չ մեռանին մահուամբ, եւ դնեն զառաքելոյ բանն, թէ ո՛չ ժամանեմք ննջեցելոցն: Զորոյ վնասն ո՛չ իմանա: Առաջն զի հարկ է ամենայն մարդոյ մեռանիլ, որպէս զնախահայրն Ադամ ըստ մարգարէին՝ «Ո՛վ է մարդ, որ կեցցէ եւ ո՛չ տեսցէ զմահ» (Մաղմ. 2Ը. 49): Երկրորդ՝ զի եւ Քրիստոս մեռաւ եւ որք մահու նորա ոչ կցորդին եւ ոչ փառաց նորա հաղորդին ըստ առաքելոյն: Արդ ասէ զայս կենդանութիւնս. առաջին՝ որ այժմ գործով արդարութեան կենդանի իցեն, Բ.(երկրորդ)՝ որ ի ժամանակս Նեոնին հաւատով կենդանի մնան:*

«Նաւարա՛ս այսմիկ» (Յովհ. ԺԱ. 26): *Ո՛չ թէ չգիտէր եւ հարցանէ, այլ զի յայտնի լիցի, թէ վասն հաւատոցն արժանացաւ պարգեւացն:*

«Ես հաւարացի՝ [ե]թէ դու ես Քրիստոսն [որդի Աստուծոյ], որ յաշխարհ [գալոց էիր]» (Յովհ. ԺԱ. 27):

*Ըստ Ոսկեբերանին՝ զայլ հարցանէր եւ զայլ պատասխանի առնէ. հարցանէր վասն հաւատալո[յ] յարութեանն, իսկ նայ զՔրիստոս խոստովանէր, վասն զի սգաւոր էր եւ միտքն շփոթեալ ի տրտմութենէն, իսկ ըստ այլոց յարմարէր պատասխանին հարցմանն, զի ասաց, թէ՛ ես եմ յարութիւն եւ հաւատացեալքն յիս ոչ մեռանին: Եւ զի Քրիստոսիւ լինելոց էր այս յարութիւն եւ կեանքս, նայ դաւանեաց, թէ՛ դո՛ւ ես: Գիտելի է, զի վասն հասարակաց յարութեան յառաջագոյն ասաց, այժմ, որ հարցանէ խնդրէ հաւատ վասն եղբօրն յարութեանն: Դարձեալ գիտելի է, զի Մարթա Գ. իրս դաւանեաց ի Քրիստոս: Առաջինն՝ թագաւորութիւն եւ քահանայութիւն, որ ասաց՝ «Դու ես Քրիստոսն», որ է օծեալն, օծումն թագաւորաց եւ քահանայից էր: Երկրորդ՝ դաւանեաց զնա Աստուծո ըստ բնութեան, որ ասաց՝ «Որդի Աստուծոյ», զի որդին զչօր բնութիւնն ունի: Երրորդ՝ հաւատաց ճշմարիտ մարդացեալ, որ ասաց, թէ՛ «որ յաշխարհ գալոց էիր», զի գալն ո՛չ գտեղոյն ինչ փոփոխումն յայտնէ Աստուծոյ, այլ զմարմինն սգեհուլն ի մէնջ:*

«Կոչեաց [զՄարիամ՝] զքոյր [իւր] լոելեայն» (տե՛ս Յովհ. ԺԱ. 28): *Ո՛չ ամէնեւեմբ լուելով, այլ ծածկաբար խօսելով: Առաջին՝ վասն հրէիցն, որ անդ էին եւ Բ.(երկրորդ)՝ զի եւ նայ զայցէ եւ ծածկաբար լսիցէ ի Քրիստոս, որպէս ինքն:*

«Վարդապետն եկեալ է՝ եւ կոչէ զքեզ» (Յովհ. ԺԱ. 28): *Եւ ո՛չ երեւի, թէ կոչեաց Քրիստոս: Ասեմք, նախ, թէ վասն կարծութեան ո՛չ յիշէ աւետարանիչն: Եւ Բ.(երկրորդ)՝ թէ «վարդապետ եկեալ է եւ կոչէ զքեզ», այսինքն՝ հարկ է գալ քեզ: Եւ տե՛ս զխոնարհութիւն սորա, որպէս զՄարթային, զի ո՛չ փառատրեաց զնալ Քրիստոսի վասն սգոյն որպէս այժմ ունին սգաւորք, խնդրել մեծարանս ի մերձաւորացն: Իսկ զհաւատն առաւել ունի քան զՄարթան: Առաջինն՝ զի հրէիցն ո՛չ զանգեցեաց: Երկրորդ՝ զի անկաւ առ ոտս նորա, եւ*



զնոյն բանն կրկնեաց զքեռն, զի ի միասի խորհեալ էին զայն, իսկ Յիսուս ո՛չ ետ պատասխանի, վասն հրէից ժողովմանն:

«Խոռովեցաւ յոգի իւր [իբրև] զայրացեալ» (Յովհ. ԺԱ. 33): Արդ՝ զայրանալն ի ցասմանէ է, արդ՝ զայրացաւ Քրիստոս ի վերայ սատանայի, որ զբնութիւնս մարդկան ծառայեցոյց եւ ի մահ զրաւեաց, իսկ զի, ասէ, խրոռովեցաւ, իբր թէ կոչեաց զտրտմութիւն, զի առեցեալ բնութիւնն ոչ էր իբր զմեզ ի ներքոյ ակամայ կրից, այսինքն՝ ի քաղցր եւ ի ծարաւ ի նինջ, ի տրտմութիւն: Այլ յորժամ կամէր զիջանէր ի նոսա կամաւ: Իսկ տրտմեցաւ աստ: Առաջ, զի ծանիցեն զճշմարտապէս մարդանալն: Բ.(երկրորդ)՝ զի եւ նոքա տեսանելով զնա տրտմեցին եւ արտասուեցեն, զի արժանաւորեցին ուրախութեան, որ յարութեամբն Ղազարու:

«Ո՛ր եղիք զնա» (Յովհ. ԺԱ. 34):

Ո՛չ թէ տգիտութիւն էր այս, զի եւ հայր հարցանէր՝ «Ո՛ր ես, Ադամ» (Ծննդ. Գ. 9), եւ զԿայեն՝ «Ո՛ր է Աբել՝ եղբայր քո» (Ծննդ. Դ. 9), եւ ցՄովսէս, զինչ է այդ ի ձեռին քում (Կրն Ելից Դ. 2), այլ վասն պատճառս տալոյ խօսից նոցա: Իսկ Քրիստոս զի հարցանէր: Առաջին՝ զի մի կարծիցեն յառաջագոյն զնալ նմա ի գերեզմանն եւ պահել անդ կենդանի մարդ, եւ Բ.(երկրորդ)՝ զի ցուցանէ, թէ ճշմարտապէս մարդ է եղեալ, եւ զի ի բացեալ լինելով զմահն զիտէր, զի արդ ի գեւղս եկեալ զգերեզման հանգիստանէր:

«Եւ արքասուեաց Յիսուս» (Յովհ. ԺԱ. 35):

Առաջին՝ զի ցուցցէ հաւաստեալ զճշմարիտ մարդեղութիւնն, զի որպէս վնաս է ուրանալ զաստուածութիւնն, սոյնպէս վնաս է ուրանալ զմարդկութիւնն: Երկրորդ՝ զի չափ եւ սահման եղարտասուեաց հաւատացելոց յարուցեան մեռելոց: Երրորդ՝ զի օրինակ ետ մեզ ամենայն մարդոյ ի տեսանել զմեռեալն ի զի, ողբամք զանգումն մեր եւ որ ժառանգեցոյց մեզ զմահաբեր երկիրս: Չորրորդ՝ արտասուեաց ի վերայ ազգին հրէից, որ մեռանելոց էին զյաւիտենական մահուանն: Իսկ Ե.(հինգերորդ)՝ արտասուեաց, Յիսուս, զի այնու յայտնեացէ զկարծիս նոցա, թէ ո՛չ է կարող յարուցանելոյ, որպէս ասացին:

[Ասէին իրեայքն.] «Տեսէք՝ ո՞րչափ սիրէր [զնա]» (Կրն Ծովհ. ԺԱ. 36):

Կէսքն զայս ասէին, իբր թէ ունէր կարողութիւն՝ վասն բազում սիրելոյն յարուցանէր զնա, իսկ զի ո՛չ կարէ՝ վասն այն արտասուէ: Իսկ կէսքն այլեւս չարութեամբ ձգէին զբանն:

«[Կէսքն ի նոցանէ ասէին.] Ո՛չ կարէր սայ, որ երաց զաչս կուրին, առնել զի եւ [սա՝ մի մեոցի]» (Յովհ. ԺԱ. 37): Սոքա զԲ.սն ուրանային՝ իբր թէ ո՛չ զկոյրն լուսաւորեաց եւ ո՛չ սա յարուցանել կարող է:

«Յիսուս դարձեալ զայրացեալ [ընդ] միփս [իւր], զա[յ] ի գերեզմանն» (Կրն Ծովհ. ԺԱ. 38): Զայն ասէ այժմ զայրացեալ, որ զտրտմութիւն ի բաց վարեաց յանձնէ, զի առնելոց էր սքանչելիս:

«Եւ էր այր մի, եւ վէմ մի եղեալ ի վերայ [նորա]» (Կրն Ծովհ. ԺԱ. 38):

Սահմանէր յազգն Իսրայէլի յերկիրն Երուսաղէմի, զի իւրաքանչիւր ազգ ընդանիք կարէին զգերեզմանս իւրեանց ի քարէ եւ կափարիչ վէմ մի դնէին դուռն գերեզմանին: Այսպէս եւ սոքա հայրենի ունէին զգերեզմանատունն:

[Եւ ասէ Յիսուս]. «Ի բաց արարէք զվէմդ» (Յովհ. ԺԱ. 39):

Նայ, որ ձայնիւ միայն յարոյց զապականեալ մարմինն, ո՛չ թէ տկարանայր ի բաց դնելոյ զվէմն, այլ նոցա ժխտողացն հրամայէ բանալ, զի թէ զլասցին ոտքն, որ ընթացան, ձեռքն, որ ի վեր առին, ըռունգնքն, որ զհոտէ առ, վկայ լիցին Ղազարու յարութեանն եւ յանդիմանեցին զնոսա:

Ասէ [ցնա] Մարթա՝ [քոյր մեռելոյն]. «Տէր՝ արդ հոփեալ [իցէ]. քանզի չորեքարեայ է» (Կրն Ծովհ. ԺԱ. 39): Ո՛չ թէ կարծեօք ինչ ասաց զայս: Այլ զի օրէն էր նոցա յերրորդ օրն զնալ եւ օձանել զմեռեալն եւ մինչեւ է. օրն գալ ի գերեզմանն եւ գիտէր որ հոտեալ էր:

[Ասէ ցնա Յիսուս.] «Ո՛չ ասացի քեզ՝ եթէ հաւաքացես, քեզս զփառսն Աստուծոյ» (Յովհ. ԺԱ. 40):



Եւ ու՞ր ասաց Քրիստոս զայս, այն է, որ ասաց՝ ես եմ յարութիւն եւ կեանք հաւատաս այսմիկ:

«Յիսուս ամբարձ զաչս իւր ի վեր» (Յովհ. ԺԱ. 41):

Վասն Գ. պատճառի: Առաջին՝ զի պարտ է աղօթողին յանկաւոր նշան ինչ ցուցանել: Երկրորդ՝ զի ուսուցիմք, թէ պարտ է աղօթողին, զմիտքն յամենայն սրաղմանց աշխարհի քակել եւ խոկումն միայն առ աստուածայինս ունել: Երրորդ՝ զի ցուցցէ, թէ ի նմանէ առաքեացայ եւ զամենայն ինչ ի նմանէ ունիմ:

«[Եւ ասէ.] Նայր, գոհանամ զքէն զի լուար ինձ» (տե՛ս Յովհ. ԺԱ. 41):

Ամենայն խնդրող նախ առնու եւ ապայ գոհանայ, իսկ Քրիստոս յառաջ գոհացաւ, վասն Գ. պատճառի: Առաջին՝ զի ցուցցէ, թէ հաւասար է իւր կամքն ընդ Հօրն եւ չունի երկբայութիւն ի խնդրելն: Երկրորդ՝ զի վասն անցելոցն գոհանայր, զի լուեալ էր Հայր ի սկզբանէ ծնընդեանն իւրոյ ամենայն ուրէք, յԱւետարանս, լսել եւ ուսանել զկամաց կատարեալն ասէ: Երրորդ՝ ըստ մեզս օրինակաւ իմացուք, զի եւ մեծատունք ի գոհանալն վասն առաքելոցն դիւրաւ լսեն եւ զապայ գայիցն խնդրեն, թէպէտ նայ ի վեր է քան զամենայն օրինակս, իսկ ըստ Ոսկեբերանին՝ այս է մեկնութիւն աղօթիցս, որով նուաստ կարծի գոյ, քան զՀայր: Ամենայն ուրեք ցուցանէ Քրիստոս զգալուստն իւր ո՛չ վասն փառաց ինչ մարդկանէ, այլ վասն փրկութեան մարդկան լինել: Արդ՝ յորժամ զբարձրագոյնսն ասէր, որպէս Հայր յԻս եւ Ես ի Հայր եւ թէ որպէս զիտէ զԻս Հայր, զիտեմ եւ Ես զՀայր, եւ որպէս թէ Հայր յարուցանէ զմեռեալ եւ կենդանի, նոյնպէս եւ Որդի զորս կամ կենդանի առնէ, ասէին՝ դեւ գոյ ի նմա եւ մոլեգնի, զի բնաւ լսէք նմա, իսկ յորժամ զնուաստագոյնսն խօսէր, որպէս թէ պատուէր առ ի Հօրէ, եւ թէ զոր լսեմքն դատիմ եւ թէ ես յանձնէ ո՛չ ինչ կարեմ առնել եւ այլ սոյնպէսիս ի լսելն զայսոսիկ, ասէ աւետարանն՝ բազումք հաւատացին ի նայ (Յովհ. Դ. 39, 41, Ը. 30 եւն): Արդ՝ եթէ բարձրագոյնն ապստամբել տա՛ եւ նուաստագոյնքն հաւանել տա՛ ժողովրդեանն, ո՞վ այնպէս կոյր իցէ մտօք եւ ոչ իմանալ, թէ ասէր զխոնարհայգոյնսն վասն հաւատարմութեան նոցա եւ զայս ի բազմում տեղիս: Եւ ասէր զմեծամեծսն վասն հաւատացելոցս՝ հաւատալ՝ զնայ գոյ որդի Աստուծոյ: Եւ զայն ի սակաւ տեղիս, զի բաւական

է, որք հաւատս ունին: Իսկ աստանաւր, զի աղօթէ, ունի բազում պատճառ: Առաջին՝ զի մի՛ կարծիցեն յայլմէ աստուծոյ, այլ ի Հօրէ առաքեալ: Երկրորդ՝ զի մի՛ կարծիցեն հակառակ գոյ Հօր: Երրորդ՝ զի մի՛ ասիցեն լուծիչ օրինաց: Չորրորդ՝ զի շիջուցէ զնախանձ հրէիցն: Ե.(հինգերորդ)դ՝, զի մի՛ Աստուած էր, յօրէնսն գրեալ, առնէ զայս, զի մի երկուս Աստուածս կարծիցեն: Զ.(վեցերորդ)դ՝ վասն խոնարհութեան մարմին զգենլոյն եւ զմեզ ուսուցանէ ունել ի խոնարհութիւն: Է.(եւթերորդ)դ՝ զի Հօր աստուածութիւնն յայտնի էր ի մէջ նոցա եւ Որդ[ւ]ոյն ի ծածուկ դեռեւս յայնժամ: Ը.(ութերորդ)դ՝ կամաւ Հօր էր, որով ցուցանի միակամութիւնն ընդ Հօր, ով չարափառք է, թէ զայս չունչ յաղօթելոյն ընկալաւ Դազար, իսկ զինչ այն որ առանց աղօթելոյ իշխանութեամբ յարուցանէր, զորդի այր[ւ]ոյն եւ զդուստր քահանայապետին, եւ զսաստելն ծովու եւ այլ ամենայն բշչկութեանցն, զոր կատարէր հրամանով եւ ո՛չ աղօթելով: Այլ դու տե՛ս զլուրն ի Քրիստոսէ եւ իմա՛ զպատճառն, զի ասէ. «վասն ժողովրդեանս, որ շուրջ կան առնեմ, զի հաւաքացեն, թէ դու առաքեցեր զիս» (Յովհ. ԺԱ. 42):

«Եւ ես գիպի՛ զի յամենայն ժամ լսես ինձ. (Յովհ. ԺԱ. 42):

Դարձեալ երկրորդ պատճառ եւս պիտանի, որ ասէ, թէ զի լուարն եւ լսեսն՝ զանցեալն եւ զապագայն ասէ, սիկ այժմ ասէ՝ առնեմ ինքնիշխանութեամբ եւ աստուծայբար:

«Չայս իբրեւ ասաց, ի ձայն բարձր աղաղակեաց» (տե՛ս Յովհ. ԺԱ. 43): Թէ վասն է՞ր աղաղակեաց, զի մեռելոց ո՛չ է զգացումն ուժգին ձայնի: Այս է պատճառն: Առաջին՝ զի լուիցեն ամենայն ժողովուրդքն եւ իմացին ի նմանէ լինել զյարութիւնն: Երկրորդ՝ զի մի կարծիցեն կախարդութեամբ ինչ ասել բան: Երրորդ՝ զի ի ձայնէն ծանիցեն զաստուածային զօրութիւնն իւր, զի մարգարէքն անուամբն Աստուծոյ եւ ո՛չ առաքեալքն անուամբն Քրիստոսի յարուցանէին: Չորրորդ՝ զի հերքեցէ զմոլորութիւնն, որ ասէին ի գերեզմանին զօղեալ եւ մեռեալ զհոգին ընդ մարմնոյն, ցուցանէ, թէ հեռաւոր էր եւ կենդանի Ե. (հինգերորդ)դ՝ սաստիւ գոչմամբն Յիսուսի ահաբեկեալ բարապանք դժոխոցն եւ արձակեցին զհոգին յարգելեալ բանտէն:



«Ղազարէ՛, արի՛ եկ՛ արքարս» (Յովհ. ԺԱ. 43):

Տե՛ս զի ոչ ասաց՝ Հայր, հարո[յ] զսայ եւ կամ յանուն Հօր յարի, այլ ինքն իշխանաբար հրամայէ մեռելոյն իբր կենդանի խօսելով: Առաջին՝ վասն ամենակարող զօրութեանն, զի ո՛չ էր յերկբայս վասն մահուան, այլ որպէս կենդան[ւ]ո[յ], ասէր գով: Եւ երկրորդ՝ վասն հոգոյն, որ կենդանի էր եւ դարձեալ գիտելի է, թէ ընդէ՞ր ի ձայնելն միայն Ղազար ել, զի բազում Ղազարք էին անդ: Այս է, զի ձայնն աստուածային եւ ակնարկութիւն նորա առ, որ եղեւ, նայ եկն:

«[Եւ ել մեռեալն ուրիւք կապելովք, եւ ձեռաւրն]՝ երիզապընդաւք, [եւ երեսաւրն՝ վարշամակապարաւք]» (տե՛ս Յովհ. ԺԱ. 44):

Զի՞նչ է երիզայպինդ: Լէր կտաւեայ շառայփողօք, զի ստուգարանութեամբ ասէ, թէ «Էրիզայպինդեալ»:

«Լուծէք զդա՛ եւ թողէք [երթա]» (նույն տեղում): Զի ձեռքն, որ լուծանեն եւ ռնդունքն, որ հոտոտին, վկա լիցին: Դարձեալ արձակել զձեռն Ղազարու, նշանակէր արձակել զԱդամի դժոխոցն կապից, զի դէմք բնութեանս ունէր Ղազար: Դարձեալ ըստ մտաց, զի որք որ մեռանի մեղօք, կապէ զգործն սատանայն: Իսկ յորժամ յառնէ ի մեղաց, արձակի կապն սատանայի, որով կարասցէ փոխանակ չարին՝ բարի առնել: Դարձեալ նշանակէր յարութեան մերում, որք ազատիմք յայնժամ ի կրից մարմնոյ, որք աստ ընբռնել եւ պահանջէ կորուսանել զ[հ]ոգիս մեր:

«Բազումք ի հրէիցն՝ որ եկեալ էին առ Մարեմանս, [իբրեւ տեւսին զոր արարն՝ հաւաքացիս ի նա]» (Յովհ. ԺԱ. 45):

Զինչ նորա ազգա[յ]ինք կային, ի նորա անուանէն մարեմնք կոչէին, որպէս յիսրայէլէ՛ իսրայելեանք:

«Եւ ոմանք ի նոցանէ գնացին [առ փարիսեցիս, եւ պարմեցիս նոցա զոր արարն Յիսուս]» (տե՛ս Յովհ. ԺԱ. 46): Ի հաւատացելոցն էին, որք գնացին պատմել, զի համարէին, թէ որպէս մեք տեսաք եւ հաւատացաք եւ նոքա լուեալ հաւատացին, զի վասն չարախօսութեան գնացին:



### 43. ԵՐԿՐՈՐԴ ՆՐԱՇԱԼԻ ՁԿՆՈՐՍՈՒԹԻՒՆՆ

Յովհաննէս ԻԱ. 1-14

ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ

Յեւր այսորիկ յայտնեաց զանձն իւր աշակերտացն իւրոց՝ առ ծովագերրն Տիրերեալ[յ] (Յովհ. ԻԱ. 1): Ինձ թուի, թէ յետ յարութեանն, ոչ միշտ առ նոսա լինէր Տէրն, որպէս նախքան զխաչն: Եւ յայտ է յասելոյն, թէ դարձեալ յայտնեաց զանձն իւր աշակերտացն, որպէս թէ ասիցէ յետ մտանելոյն առ նոսա փակեալ դրամբքն, ոչ այլուրէք յայտնեցաւ մինչեւ յայն տեղի ծովուն, այլեւ զայն ակնարկէ, թէ եւ ոչ նոյնպիսի ի նմա մարմնականքն կրէին որպէս նախքան զխաչն, զի ոչ էին պետք կրից չարչարանաց յետ խաչին, այլ միայն զաշակերտսն հաստատել ի հաւատս յարութեան:

Եւ յայտնեաց այսպէս: Էին ի միասին Սիմոն Պետրոս, եւ Թովմաս, եւ Նաթանայել եւ որդիքն Զերեթեայ, եւ այլք երկու յաշակերտացն (տե՛ս Յովհ. ԻԱ. 1-2):

Զինչ առնէր զաւուրս քառասունս, որ կա ի պրակս առաքելոցն՝ յայտնելով նոցա ճառէր վասն արքայութեան Աստուծոյ: Քանզի աշխատեալք էին եւ խոովեալք եղելովքն անդէն եւ հանդերձեալ էին առ մեծամեծ վաստակս ելանել, յաղագս հանդերձելոց իրացն զնոսա արծարծէր բանիւք: Զի յերկար ժամանակաւն տեսութեամբն եւ յերկրի երեւմամբն մի՛ առ աչաւք տեսիլ կարծիցեն զյայտնելն Քրիստոսի, որ զաշակերտսն հաստատէր եւ ընդէ՞ր ոչ նախքան զայն ոչ երեւեցան աշակերտքն համարձակապէս շրջել, զի դեռեւս ի հրէիցն կասկածանացն զաւղեալ նստէին ի Վերնատանն: Իսկ իբրեւ տեսին զՏէրն եւ հաստատեցան ի հաւատս, եւ բարձաւ երկիւղն հրէից, ելին յայտնապէս ի Վերնատանէն, յորում թաքուցեալ էին, ցուցանէ, թէ ոչ կարէին տեսանել, եթէ ո՛չ էր զիջեալ, վասն զի ոչ Տէրն գոյր հանապազ առ նոսա ե՛ւ ոչ զհոգին էր տուեալ ե՛ւ ոչ ձեռնադրեալ հանդիպէին գործել, զի բնական արուեստիւն վարէին:



«Ասէ ցնոսա Միսնն Պեպրոս՝ երթամ ձուկն որսալ: Ասեն. Գամբ եւ մենք» (տն՝ Յովհ. ԻԱ. 3):

Պետրոս գլուխ աշակերտացն, եւ նոքա անդամք նմա: Զի ըստ կամաց գլխոյն շարժին ամենայն անդամքն ի գործս եւ յորժամ գլուխն ասաց՝ երթամ ձուկն որսալ, զինչ այլ լսէր, քան թէ գամբ մեք զկնի քո: Ոչ ինչ ունելով գործ՝ ի ձկնորսութիւն պարապէին, եւ այլ աշակերտքն երթային զհետ վասն կապակցելոյ ընդ միմեանս:

«Գնացին եւ մտին ի նաւ, եւ յայնմ գիշերի կալան՝ եւ ոչ ինչ» (Յովհ. ԻԱ. 3):

Առնէին զայս ի գիշերի վասն ահի հրէիցն՝ ծածկաբար. աւրինակ էր մարգարէիցն, որ այնքան աշխատեալք էին երբեմն եւ ոչ զոք կարացին ունել ի մարդկանէ ի հաւատս կամ ի գործս բարիս, որք գիշացեալ էին մեղաւք, որպէս ի ծովու ձկունք ընկղմեալք ի տիղմ չար գործոց եւ ստուերացեալք խաւարաւ միշտ ի ստուերս մահու նստէին խաւարին մեղացն գնացիւք:

«Իբրեւ այգ եղև՝ կայր Յիսուս յեգր ծովուն» (Յովհ. ԻԱ. 4):

Եկն Տէրն, իբրեւ զառաւաւտ ծագելով ի ստուերածածկեալ աշխարհս զանազան մեղաւք, լուսաւորել զբնութիւն մարդկան, զի նա իսկ էր արեգակն արդարութեան, որ լուսաւորեաց զամենայն մարդ, որ գալոց են յաշխարհս ի ձեռն աշակերտացն իւրոց աստուածային հրամանաւն իւրով, որ զաւրացոյց զնոսա որսալ զազգս մարդկան. աւետարանին ուսկանաւն առ ինքն զնոսա ձգելով ի հաւատս ճշմարիտս:

Եւ «ոչ ծանեան աշակերտքն, թէ Յիսուս իցէ» (Յովհ. ԻԱ. 4):

Վասն զի նախ զնշանսն կամի ցուցանել եւ ապա զանձն ծանուցանել, զի այն աւգտակար էր նոցա եւ զաւրաւոր առ ի հաւատս:

«Ասէ ցնոսա. Ունի՞ք ինչ ուտելոյ, մանկունք» (տն՝ Յովհ. ԻԱ. 4):

է՞ր վասն զնոսա մանկունս կոչէ եւ ահա ոմանք ի նոցանէ ծերազոյնք էին, քանզի նախկի զնոսա յառաքելութիւն վիճակեցոյց զայն եւ եթ ասաց հրաժարել ի ձկնորսութենէ, զի եղիցին որսորդք մարդկան, դնէ աստանաւր զյիշատակս կանխասաց բանիցն զոր

ասաց: Մարդկաւրէն խաւսի, որպէս հանդիպիլ նախատել զթշուառացեալսն, զի դեռեւս ձկունս որսալով՝ մանկանց ուրեմն ունիք միտս եւ ո՛չ զկատարելոց, զի ես զձեզ մարդկան ասացի լինել որսորդս, զիա՞րդ զտղայական մտաց բուռն հարկանէք որսալ ձկունս:

«Ասէ ցնոսա. Արկէք յաջակողմն նաւիդ եւ գրանէք» (տն՝ Յովհ. ԻԱ. 6):

Զի յայտ արասցէ, թէ ոչ պատահամբ ըմբռնեցան ձկունքն որ զամենայն գիշերն աշխատեալ ո՛չ ինչ կալան, այլ նորա՛ իսկ աստուածային հրամանացն էր գործն, զի ընդ աջմէ ցուցանելոց էր զարդարսն, ի վերջին աւուրն ահաւոր բեմին եւ զմեղուցեալսն ընդ ահեկէ, յաջակողմեան պատրաստեաց՝ զորսն եւ Դաւթի յառաջ գուշակեաց՝ «Կեցցէ զշխոյ ընդ աջմէ քումմէ» (հմմտ. Սաղմ. ԽԴ. 10):

«Եւ ոչ կարէին ձգել ի բազմութենէ ձկանցն» (տն՝ Յովհ. ԻԱ. 6):

Զի ուսկանաւ Աւետարանին զբազմութիւն ազգացն գուշակէր, զորս ածելոց էր ի հաւատս ճշմարտութեան: Այսպէս եւ յաւինակին գուշակելով:

Ասէ աշակերտն այն զոր սիրէրն Յիսուս՝ [ցՊեպրոս]. «Տէ՛ր է այն» (տն՝ Յովհ. ԻԱ. 7): Որպեսզի ասիցէ, թէ ոչ այլ ազգ, քան եթէ նորա հրամանին էր գործն, այլ ոչ եթէ ի ձեռն տեսանելոյն ինչ ծանեաւ զՏէրն:

«Միսնն Պեպրոս իբրեւ լուս, թէ Տէր է այն, արկաւ գիրեաւ [զ] սփածանելին՝ քանզի մերկ էր, եւ ընկեց զինքն ի ծովն» (տն՝ Յովհ. ԻԱ. 7):

Յորժամ լուսն ի Յովհաննէ, եթէ Տէր է, եւ ինքն ըստ բանին Յովհաննու զնոյն ասաց, ոչինչ յետ այնորիկ եկաց մնաց փոյթ ինչ ունելով սիրով, զոր գործերն, այլ արագապէս չողաւ առ Տէրն՝ յայտնելով զանչափ ջերմութիւն սիրոյն, զոր ունէր, որ ոչ կարաց մնալ ծուծել, որ եւ այս Պետրոսի եռանդնոտ սիրոյն որ առ տէրն յայտ առնէ, որ այնքան ի մաւտ կալով նաւին ոչ ինչ փոքր ծուծկալեաց նաւաւն գալ առ Տէրն, այլ ընկեց զինքն ի ծովն, որ ոչ ի խորութենէ ջրոյն ինչ զարհուրեցաւ: Ով սաստկագոյն սէր յոյժ անբաւ որ զայն գործէր:



«Այլ աշակերտքն նաւան իսկ գային, քանզի չէին հեռի ի ցամաքէն. այլ իբրեւ երկերիւր կանկնաւ, քարշէին զգործի[ս]ն հանդերձ ձկամբն (տն՛ս Յովհ. ԻԱ. 8):

Որպէս մեք առ Քրիստոս կոչեցաք եւ յարքայութիւն նորա հրաւիրեցաք աշակերտաւքն, այնպէս եւ ուռկանն հանդերձ որսովն առ Տէրն քաշել, լինել որք Աւետարանաւն կոչեցան ի հաւատս, ոչ ըստ մտաց իմացման եւ ոչ ըստ տեսանելոյ աչաց հաւատացին ի խաչելեալն Աստուած, այլ ի ձեռն աստուծահրաւէր հրաշագործութեան աշակերտաց հաւատացին այլ ի ձեռն նշանին եղելոց:

«Մանկունք՝ մի՞թէ՛ ունի՞ք ինչ ուրելոյ» (Յովհ. ԻԱ. 5):

Որպէս մեք ի ձեռն Աւետարանին մեղուցեալքս ի տղայական անմեղութիւն փոփոխիմք՝ վիճակաւ մկրտութեանն շնորհի, այսպէս եւ նոքա, ըստ փոփոխման շնորհին զոր ընդունելոց էին ի Տեառնէ, մանկունք կոչեցան:

«Քանզի չէին հեռի ի ցամաքէն» (Յովհ. ԻԱ. 8):

Որպէս Աւետարանին աշակերտքն ոմանք մերկք ի մարմնական Հեշտութեանցն հանդիպին նմա, իսկ ոմանք զմարմնական աւրինակս կրեալք ճշմարտապէս հանդիպին նմա: Այսպէս աշակերտքն. ոմանք մերկք եւ ոմանք զգեցեալ եկին առ Նա: «Ջամենայն գիշերս աշխատ եղաք»: Որպէս Աւետարանիս հաւատացեալքս ընդունին զվարձս առաքինութեան, որ յառաջագոյն վաստակեցին, այնպէս եւ նոքա աշխատեցան զգիշերն ամենայն:

«Իբրեւ ելին ի ցամաքն, տեսանեն կրակեւրդ կայծականց, եւ ձուկն ի վերայ, եւ հաց» (տն՛ս Յովհ. ԻԱ. 9):

Քանզի յառաջագոյն ասաց՝ մի՞թէ՛ ունիցիք ինչ ուտելո[յ], զի մի կարծիցեն թէ պէտս ինչ ունելոյ կերակրոյ ասաց զայն զնոսա: Ջի հաց եւ ձուկն առընթեր լինելով աստի թերեւս իմասցին ոչ վասն կերակրոյ ինչ տենչանաց զայն ասել, այլ այլ իմն այնուակնարկէ, որպէս աւետարանինս աշակերտքն հրաւիրեցան յարքայութիւնն ի պատրաստեալ բարիսն, այնպէս եւ նոքա պատրաստագոյն գտին զկերակուրն զհացն եւ զձուկնն ընդ էր ոչ յառաջագոյն այնպիսի ինչ երեւեցոյց հաց եւ ձուկն ժողովրդեանն հրամանաւ ինչ եղեալ այլ զոր ունէին աճեցոյց, վասն զի թերեւս այն

վարդապետութեան եւ տանաւրէնութեան էր ժամանակ: Իսկ այս զաստուածայինսն յայտնապէս յայտնեաց, զի այս հրամանին նորա եղեւ գործ յանգոյից եւ որպէս կրակետղն ցամաքեցուցանող է եւ տանջող, որ ցամաքեցոյց զղաւղեալսն, այսպէս կիզուն, որք ոչ հաւատացին աւետարանական քարոզութեանն, այլ զիջութեամբ չարաչար գործովք վարեցան:

«Ասէ ցնոսա Յիսուս. Բերէք ինձ ի ձկանցդ՝ զոր դուք կալարուք այժմիկ» (տն՛ս Յովհ. ԻԱ. 10): Քանզի նախ զձուկնն եւ զհացն եցոյց նոցա եւ յայտ արար, թե ոչ վասն կերակրոցն կարաւտ գոլով, այլ զի ծանիջիք զչափ զաւրութեան իմոյ. «Բերէք ի ձկանց ձերոց»:

«Եմուպ Պեփրոս, եւ ձգէր զգործին ի ցամաքն՝ լի մեծամեծ ձկամ[ր]ք» (տն՛ս Յովհ. ԻԱ. 11):

Այսպէս եւ յաւրինակէն գուշակեալ եղեւ պատմութիւնն մեծամեծ ձկանց եւ ոչ մանուկնն խառնելով, զի այնպիսի չունէր ծովն: Վասն զի որք ի Քրիստոս հաւատացին, չի՛ք խտիր, ոչ հրէի եւ ոչ հեթանոսի, այլ ամենեքեան մի են ի Քրիստոս աւագանին ծնունդք, որ մատուցանի Սիրոն լեառն եւ ի քաղաք Աստուծոյ մերոյ ի միասին, այսպէս միաձեւք եւ միատեսակք էին որսոցն բազմութիւնք: ՃԾԳ. (Հարիւր եւ յիսուն եւ երեք) որպէսզի աւետարանական ուռկանն եւ ժողովումն որ նոյն ի ձեռն մկրտութեան լինելոց էր յանուն Երրորդութեանն Հաւր եւ Որդւոյ, եւ Սուրբ Հոգւոյն: Այսպէս եւ թիւ որսոց ուռկանին խորհրդականք էին, երից յիսուն եւ երեք առանձնականութեամբ, քանզի երեք յիսնեակքն զերից ազգացն զբազմութեան մեղաց ջնջումն գուշակեաց, որք ըստ շնորհաց Աւետարանին լինելոց էին: Իսկ երեք առանձնականութիւնքն յատկաբար երեք անձնեան Երրորդութեանն նշանակ է, որով ազատութիւն եւ իմաստութիւն մեզ պարգեւի, այնչափ, ինչ կայր եւ ոչ պատառեցաւ գործին: Ընդ որս Աւետարանիչն սքանչանայ ընդ աւետարանական ուռկանն, որ անեղծանելի կայ մնա մինչ ի կատարած, ըստ Բանին, թէ՛ ես ընդ ձեզ եմ: Այսպէս եւ ուռկանն ոչ պատառեցաւ, յինքն բերելով զայնքան բազմութիւն ձկանցն, զի այն աստուածային հրամանին եւ զաւրութեանն էր նշանակ:



«Ասէ ցնոսա Յիսուս. Եկայք ճաշեցէք: Եւ ոչ ոք յաշակերտացն իշխէր հարցանել՝ [թէ դու ո՞վ ես,] զի գիտէին թէ Տէրն է (փն՛ս 3ովի. ԻԱ. 12):

Զի՞նչ պետք էին հարցանել, թէ դու ո՞վ ես, այլ յայտնանէ յայտնի թէ, հրաշափառագոյն եւ սոսկալի էրեւմամբ տեսանէին զՏէրն, զի թէպէտ եւ ճանաչէին, թէ Տէրն է, այլ ոչ ոք իշխէր հարցանել, թէ զիս՞րդ կամ որպիսի՞ ինչ իցէ, այսպիսի ահագին երեւման տեսիլդ Աւետարանիս հաւատացեալք ծանուցեալ անհասանելին, անքննելի, կա մնա իշխանութիւն աստուածութեան նորա: Այսպէս եւ ոչ աշակերտքն յորժամ ծանեան զՏէրն իշխեցին հարցանել, թէ՛ դու ո՞վ ես:

«Գայ Յիսուս՝ եւ առնու զհացն՝ եւ փա[յ] նոցա, նոյնպէս եւ զձուկնն (3ովի. 13):

է՞ր վասն ինքն բաշխէ զհացն եւ զձուկնն նոցա, զի բարձէին նոցանէ զկասկածանս՝ երեւութաբար եւ առաջաւորք լինելոյ երեւմանն: Թէպէտ Յովհաննէս Աւետարանիչն ինչ ոչ ասաց զնոյն Տէրն թէ ճաշակեաց, սակայն Ղուկաս ասաց (2ա) թէ հաղորդեցաւ ընդ նոսա հացիւ, թէպէտ զնշանսն եւ զերեւումն ոչ պատմեաց (փն՛ս Ղուկ. ԻԳ. 36-44): Եւ այսու յայտ առնէ զպատիւ նոցա, թէ յետ սքանչելի նշանացն խոնարհեցաւ ի նոսա եւ արժանաւոր արար բաշխել նոցա ի տէրունական ձեռացն հացն եւ ձկուկնն: Եւ որպէս գալուստն յետին ժամանակին, մերձ էր առ կատարածն, այսպէս եւ աշակերտքն ի ծովուն գոլով ի մաւտուստ գտանէին կերակրեալք ի Տեառնէ:

«Զայս երիցս անգամ երեւեցաւ Յիսուս աշակերտացն յարուցեալ ի մեռելոց» (3ովի. ԻԱ. 14):

**ՄԱՏԹԷՈՍ ԶՈՒՂԱՅԵՑԻ**

«Յայնմ զիշերի կալան՝ եւ ոչ ինչ» (3ովի. ԻԱ. 3):

Թէ ընդէ՞ր ի գիշերի որսային ի ձկուկնս եւ այս վասն Գ. պատճառի: Առաջին՝ ըստ Ոսկերերանի՝ թէ է տուէ ոչ համարձակէին որսալ: Երկրորդ՝ ըստ ոմանց՝ զի ուռկանաւ որսալ առաւելալ ի դէպ է ի գիշերի քան ի տուէ, որպէս կարթիւ տուէ, քան ի գիշերի: Եր-

րորդ՝ զի զմարմնաւոր հոգեւորին պարապեցեն, սակայն կալան եւ ոչ ինչ: Չորրորդ՝ ըստ խորհրդոյ, զի գիշեր էր միտք նոցա, զի դեռ ո՛չ էր իջեալ Հոգին Սուրբ, որով լուսաւորէին, վասն որոյ ոչինչ կալան քարոզութեամբ իւրեանց ի մարդկանէ:

«Իրրեւ այգ եղեւ՝ կայր Յիսուս յեզր ծովուն, [րայց ոչ ծանեան աշակերտքն թէ Յիսուս իցէ]» (3ովի. ԻԱ. 4):

Յայդու երեւեցաւ Քրիստոս վասն Գ. պատճառի: Առաջին՝ զի առաւտոն յոյժ յարմարի նորոգման փառաց յարութեանն: Երկրորդ՝ զի զկնի աշխատութեան գիշերոյն, սքանչելիքն հաճոյացին: Երրորդ՝ զի առաւտուն այլ կերպ երեւի մարդոյն: Վասն որոյ ո՛չ իմացան, թէ Տէրն է: Չորրորդ՝ պատճառ, զի նա երեւէր ի կերպ առն, որ կամի ձուկն գնել եւ այնպիսին ընդ այդն դայ եւ վասն սոյն պատճառի եհարց:

«[Մանկունք, մի՞թէ]ունիք ինչ ուրելոյ» (3ովի. ԻԱ. 5):

Իսկ զի՞ «մանկունք» կոչէ զնոսա: Վասն Գ. պատճառի: Առաջին՝ Հնազանդութեան եւ նուաստութեան նոցա: Երկրորդ՝ կոչէ վասն ամբուութեան նոցա, զոր մանկութեանն կոչի: Երրորդ՝ վասն անգիտութեանց, ասէ մանկունք: Չորրորդ՝ վասն զօրութեան նոցա ասէ:

Իսկ զի՞ յաջակողմ նաւին ետ արկանել զուռկանն (Հմմտ. Յովհ. ԻԱ. 6): Առաջին՝ առ ի նշան յարութեանն իւրոյ, զի յաջ էր: Երրորդ՝ զի ուսցէ զբան ուռկանի նոցա տալ, որ լսենն, ընդայնմ ձեզ ասեմ, որ լսէքդ:

«Տեսին կրակեղ կայծականց» (3ովի. ԻԱ. 3): Գործելիքն հարցեալք էին, զոր կայծականց ասէ, եւ ձուկն առ ի խորովել եւ հացն արտաքոյ կայծականցն մերձ եղեալ: Եւ զայս Քրիստոս նոր ստեղծ աստուածային զօրութեամբն՝ վասն Գ. պատճառի: Առաջ վասն նշանակելոյ զսէր իւր: Երկրորդ՝ առ ի հաստատել զնոսա ի հաւատալ յարութեանն, ի ձեռն սքանչելեաց: Երրորդ՝ առ ի ցուցանել խորհուրդ ինչ, զոր ասասցուք, այսինքն թէ՛ կարող եմ յամենայն ժամս նոր ստեղծագործութիւն առնել: Չորրորդ՝ զի ցուցանէ, թէ նոյն Աստուածն եմ, որ յանապատին զժողովուրդն կերակրեցի: Ե.(Հինգերորդ)՝ առ ի ցուցանել խորհրատէս, թէ նոյն եմ, որ յոչնչէ



առնեմ զամենայն: Իսկ ողջութիւն ունկանին, ունի խորհուրդ, զի եկեղեցի ընտրելոց զկնի յարութեան հասարակաց, ո՛չ կրէ հերձուած ինչ եւ բաժանումն որպէս կրեաց եւ կրէ ի կեանս յայս, զի ի նախկին ձկնորսութիւն, զոր պատմէ Ղուկաս, պատառեալ լինէին գործիքն(տրնս Ղուկ. ԻԴ. 6-44), բայց աստ՝ ոչ:

Իսկ ըստ այլայբանութեան՝ «է. աշակերտքս» այս նշանակեն զընթանուր առաջնորդքս, որ յէ. ժամանակ կենացս ընթանան, իսկ «գիշերն» նշանակէ զհակառակութիւն անհաւատիցն, յամենայն ժամ, իսկ «տիւն» նշանակէ զյայտնութիւն լուսոյն Քրիստոսի, որ ամէ առ ի յորսալ: Եւ «գործիքն» նշանակ է վարդապետութեան: Իսկ «ՃԾԳ.» (հարիւր եւ յիսուն եւ երեք) ձուկն նշանակէ զընտրեալսն: Եւ դարձեալ զի ՃԾԳ. ի ժէ. բաղկանայ, որ ի միոյն սկսեալ այսպէս՝ Ա. Բ., որ լինի Գ. եւ Գ., որ լինի Զ. եւ Դ., որ լինի Ժ. եւ Ե., որ լինի ԺԵ. եւ Զ., որ լինի ԻԱ: Եւ սոյնպէս մինչեւ ժէ.ն լինի ՃԾԳ., որ նշանակէ Ժ. զհին օրէնսն, որ սպանանէ իսկ, իսկ «է.» զՀոգւոյն Սրբոյ շնորհսն, որ կեցուցանէ, որպէս ասէ Պաւղոս (հմմտ. Բ. Կոր. Գ. 6) եւ դարձեալ «ՃԾ.» նշանակէ զառատաբար բաշխումն Հոգւոյն Սրբոյ եւ կամ բարի գործոց, որք ըստ է. աւուրց կենցաղոյս ընթանան, իսկ միութիւնն, որ կատարէ զԾ.ն նշանակէ զժողովումն եւ զվերաբերումն ամենայն գործոց, առ մի վերին բարին: Եւ «Գ.» յիսներորդ նշանակէ զԳ. ընթացս եկեղեցոյ, որք յԳ. ժամանակս Ա. ի մէջ կռապաշտացն, Բ. ի մէ ի ժամանակս հաւասար քրիստոնէութեան, եւ Գ. ի ժամանակս Նեոիւնն: Իսկ Գ.ն, որ ի վերա ՃԾ.են, նշանակէ զԳ. ամ հալածանաց Նեոիւնն:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրիստոսի հրաշքերի և բժշկությունների հայ միջնադարյան մեկնությունները .....5

Բժշկութիւնք ի Գալիլեա (Մատթ. Դ. 23 -25, Ղուկ. Զ. 17-19).....17

Բժշկութիւն բորոտին ի Գալիլիա (Մատթ. Ը. 1-4, Մարկ. Ա. 40-45, Ղուկ. Ե. 12-16) ..... 23

Բժշկութիւն ծառային հարիւրապետին (Մատթ. Ը. 5-13, Ղուկ. Է. 1-10)..... 37

Բժշկութիւն գոքանչին Պետրոսի (Մատթ. Ը. 14-15, Մարկ. Ա. 29-31. Ղուկ. Դ. 38-40) ..... 61

Բժշկութիւնք ի Կափառնաում (Մատթ. Ը. 16-18, Մարկ. Ա. 32-34, Ղուկ. Դ. 41-42)..... 65

Հանդարտումն ալեկոծութեան (Մատթ. Ը. 23-27, Մարկ. Դ. 35-41, Ղուկ. Ը. 22-25)..... 68

Բժշկութիւնն դիւահարաց ի Գերգեսա (Մատթ. Ը. 28-34, Մարկ. Ե. 1-20, Ղուկ. Ը. 26-39)..... 78

Բժշկութիւնն անդամալոյծին ի Կափառնաում (Մատթ. Թ. 1-8, Մարկ. Բ. 1-12, Ղուկ. Ե. 17-26) ..... 94

Յարութիւնն դստերն Յայրոսի (Մատթ. Թ. 18-20, 23-26, Մարկ. Ե. 21-24, 35-43, Ղուկ. Ը. 40-42, 49-56) ..... 110

Բժշկութիւնն տեռատես կնոջն (Մատթ. Թ. 20-22, Մարկ. Ե. 25-34, Ղուկ. Ը. 43-48)..... 121

Բժշկութիւնն երկուց կուրից (Մատթ. Թ. 27-31) ..... 129

Բժշկութիւնն համեր դիւահարին (Մատթ. Թ. 32-34) ..... 135

Բժշկութիւնք զանազանք (Մատթ. Թ. 35-38, Մարկ. Զ. 53-56)..... 139



Բժշկութիւնն գոսացեալին ի Կափառնայում (Մատթ. Ժբ. 9-16, Մարկ. Գ. 1-6, Ղուկ. Զ. 6-12).....	145
Բժշկութիւնն համեր կուրի դիահարին (Մատթ. ԺԲ. 22-30, Մարկ. 3. 22 -30, Ղուկ. ԺԱ. 14 -23).....	153
Առաջին բազմացումն նկանակաց և ձկանց. Կերակրումն հինգ հազարի (Մատթ. ԺԴ. 13-21, Մարկ. Զ. 30-44, Ղուկ. Թ. 10-17, Յովհ. Զ. 1-14).....	168
Նաազնացութիւնն առաքելոց (Մատթ. ԺԴ. 22-33, Մարկ. Զ. 45-52, Յովհ. Զ. 16-21).....	207
Բժշկութիւնք ի Գեննեսարէթ (Մատթ. Ժդ. 34-36, Մարկ. Զ. 53 -56).....	220
Հաւատք կնոջն քանանացոյ և բժշկութիւնն դստեր նորին (Մատթ. ԺԵ. 21-28, Մարկ. Է. 24-30).....	222
Բժշկութիւնք ի Դեկապոլիս (Մատթ. ԺԵ. 29-31, Մարկ. Է. 31-37).....	234
Երկրորդ բազմացումն նկանակաց և ձկանց. Կերակրումն չորս հազարի (Մատթ. ԺԵ. 32-39, Մարկ. Ը. 1-9).....	237
Հայցումն նշանից (Մատթ. ԺԶ. 1-4 Մարկ. Ը. 11-13, Ղուկ. ԺԲ. 54 -56).....	245
Այլակերպութիւնն Յիսուսի (Մատթ. ԺԷ. 1-13, Մարկ. Թ. 1-12 Ղուկ. Թ. 28-36).....	254
Բժշկութիւնն լուսնոտ դիահարին (Մատթ. ԺԷ. 14-21, Մարկ. Թ. 13-28, Ղուկ. Թ. 37-44).....	318
Սատեր ի բերան ձկան (Մատթ. ԺԷ. 23-26).....	353
Բժշկութիւնն կուրից ի Երիքով Մատթ. Ի. 29-34.....	361
Բժշկութիւնն Բարտիմէոս կուրին (Մարկոս Ժ. 46-52).....	372
Բժշկութիւնն կուրից ի Երիքով (Ղուկ. ԺԸ. 35-43).....	389
Բժշկութիւնք ի տաճարին (Մատթ. ԻԱ. 14-16).....	392
Անիծեալ թզենին (Մատթ. ԻԱ. 18-22, Մարկ. ԺԱ. 12-14).....	396
Բժշկութիւնն դիահարին ի Կափառնաւում (Մարկ. Ա. 21-28, Ղուկ. Դ. 31-37).....	407
Հրաշալի ձկնորսութիւն (Ղուկ. Ե. 1-11).....	409

Յարութիւնն պատանայն ի Նային (Ղուկ. Է. 11-17).....	416
Բժշկութիւնն կնոջն կարկամեալ (Ղուկ. ԺԳ. 10-17).....	423
Բժշկութիւնն ջրգողելոյն (Ղուկ. ԺԴ. 1-6).....	430
Մաքրին տասից բորոտից (Ղուկ. ԺԷ. 11-19).....	433
Բժշկութիւնն ունկան ծառային քահանայապետի (Ղուկ. ԻԲ. 49-51).....	438
Հարսանիքն ի Կանա (Յովհ. Բ. 1-11).....	441
Բժշկութիւնն որդոյն թագաւորագնին (Յովհ. Դ. 43-54).....	468
Բժշկութիւն անդամալոյծին Պրորատիկեի աազանին (Յովհ. Ե. 1-18).....	478
Բժշկութիւնն ի ծնէ կուրին (Յովհ. Թ. 1-41).....	499
Յարութիւնն Ղազարու (Յովհ. Ժա. 1-44).....	532
Երկրորդ հրաշալի ձկնորսութիւնն (Յովհ. ԻԱ. 1-14).....	595



ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՐԵՍՏՈՄԱՏԻԱ

**ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇՔՆԵՐԻ ԵՎ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:**

Կազմող՝ Նաիրա Թամամյան  
Խմբագիր՝ Գևորգ Տեր-Վարդանյան

Հրատարակչական խորհրդի  
նախագահ և բաժնի տնօրեն՝ Նաթան Արք. Հովհաննիսյան  
Հրատարակչական խորհրդի  
անդամներ՝ Ա. Մադոյան, Պ. Հովհաննիսյան,  
Գ. Տեր-Վարդանյան  
Սրբագրիչ՝ Ա. Գրիգորյան  
Էջադրումը՝ Ղևոնդ քահանա Մայիլյանի

ՄԱՅՐ ԱԹՈՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
Ս. ԷԶՄԻԱԾԻՆ - 2013

Թուղթ՝ օֆսետը 70x100, 1/16  
Ծավալ՝ 38,0 տպ. մամուլ, կազմը կոշտ,  
Տպաքանակը՝ 300:



ՄԱՅՐ ԱԹՈՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ